



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*



ՆԻԹԵՐ

Հ. Յ. ԳԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄԻԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ե. ՀԱՏՈՐ

Խմբագիր՝ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

**ՓՈԽԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ**

**«ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» մատենաշարի հրատարակութիւնը կը կատարուի Հ. Յ. Դ. Քիւրոյի որոշումով:**

**Ք**սանընկինգ տարիներու ընդմիջումէ ետք, Հ.Յ.Դ. Քիւրոյի որոշումով ահա կը վերսկսի «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար» շարքի վաւերագրերու հրատարակութիւնը: Արդարեւ անոր վերջին՝ չորրորդ հատորի տպագրութեան թուականը 1982 է:

**Հատորը կը ձօնուի Հրաչ Տասնապետեանի յիշատակին:**

Երկարամեայ այս ընդհատումը ունի անշուշտ իր պատճառները. նախ լիբանանեան քաղաքացիական պատերազմը, որ ֆիզիքապէս անկարելի դարձուցած էր Հ.Յ.Դ. արխիւներուն օգտագործումը՝ պարզապէս անոր համար, որ ամէնօրեայ ոմբակոծումներէ, հրդեհներէ եւ այլ բազմաթիւ վտանգներէ փրկելու համար, ուրիշ պատմական եւ մշակութային արժէք ներկայացնող առարկաներու կարգին, արխիւային այդ նիւթերը եւս տեղափոխուած էին Պէյրութէն դուրս ապահով թաքստոց, ուր փականքի տակ պիտի մնային անոնք տարիներ շարունակ: Երկրորդ գլխաւոր պատճառը՝ «Նիւթեր»ը հրատարակութեան պատրաստող խմբագիր ընկերոջ՝ Հրաչ Տասնապետեանի առողջական աննախանձելի վիճակն էր, որ հետզհետէ վատթարանալով անկարելի դարձուց գործին վերսկսումը: Եւ ասիկա՝ հակառակ այն իրողութեան, որ հանգուցեալ ընկերոջ բուն փափաքն էր իր կեանքի վերջին տարիներուն աւարտած տեսնել շարքին գէթ հինգերորդ հատորը՝ ամբողջացուցած ըլլալու համար Հ.Յ.Դ. Գործող Ընդհ. Ժողովին վաւերագրերու լոյս ընծայումը: Այդ նպատակով ալ, եւ ի հեճուկս հետըզհետէ տկարացող իր ուժերուն, ան սկսած էր ներկայ հատորի պատրաստութեան համար նիւթեր հաւաքել, դասաւորել եւ համակարգիչի վրայ շարել տալ: Գրած էր նոյնպէս ներածական բաժինը (տեսնել կողքին): Վաղահաս մահը (2001, Մարտ 16) դժբախտաբար անկատար թողուց, ինչպէս ըսուեցաւ, արդէն երկար տարիներէ ի վեր ընդհատուած այս մատենաշարին հրատարակութիւնը:

Կը մնայ հոս ըստ արժանւոյն գնահատել Հ. Տասնապետեանի բերած երախտաշատ նպաստը Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան բազմակողմանի ուսումնասիրութեան: Մեծ է այդ նպաստը նախ եւ առաջ նախորդ չորս հատորներու վաւերագրերու հաւաքման, խմբագրութեան եւ հրատարակութեան գործին մէջ: Մեծ է վաստակաշատ՝ իր հեղինակած կամ խմբագրած մենագրական եւ համադրական բնոյթի գործերով՝ նուիրուած ընդհանրապէս Դաշնակցութեան հիմնադիր Երրորդութեան եւ միւս դէմքերուն ու երեւոյթներուն, որոնց ճամբով ան գիտէր այնքան ցայտուն կերպով երեւան բերել Դաշնակցութիւնն ու դաշնակցական տիպարը բնորոշող ամէնէն էական յատկանիշները.

Տեղն է այստեղ՝ իր յիշատակը յարգելու համար, վարձքը կատար ըսելու իրեն, վարձքը կատար ըստ ամենայնի:

**Ներկայ հատորի տպագրութիւնը կը կատարուի նուիրատուութեամբ Տէր եւ Տիկին ԳԱԲՐԻԷԼ եւ ԱՆԺԷԼ ՉԵՄՊԵՐՃԵԱՆՆԵՐՈՒ:**

Ա.

\*  
\*\*

«Նիւթեր Հ.Յ.Դ. Պատմութեան համար»ի ներկայ Ե. հատորով կ'աւարտի Զորրորդ Ընդհ. Ժողովին յատկացւած բաժինը, որ այս ձեւով մատենաշարին մէջ գրուած կ'ըլլայ երեք ծաւալուն գիրքեր:

Ընթերցողը կամ ուսումնասիրողը պիտի նշմարէ, որ բացի Ընդհանուր Ժողովի թղթածրարի բովանդակած նիւթերէն, որոնցմէ զանց առնուած են միայն կողմնակի բնոյթ ունեցող եւ մասնաւոր շահեկանութենէ զուրկ մանրամասնութիւններ, այս հատորին համար մենք լայնօրէն օգտուած ենք նաեւ Հ.Յ.Դ. արխիւներու մէջ պահպանուած փաստաթուղթերէն: Այս վերջինները անհամեմատ առատ են եւ, ժամանակի ընթացքին, կուսակցական գործունէութեան ծաւալման զուգահեռ, աւելի ամբողջական տեսք կը ստանան: Արդարեւ մինչ առաջին տարիներու անցուդարձերուն վերաբերող նիւթերը բաղդատարար սակաւ են, թերի կամ անհաւասար, 90ական թուականներու երկրորդ կէսէն ակներեւ կը դառնայ արդէն, որ կանոնաւոր ընթացքով կազմակերպական շրջաններու գրութիւնները կը կեդրոնացան ժընէ՝ Արեւմտեան Բիւրոյի կամ, միեւնոյնն է, «Դրօշակ»ի խմբագրութեան մօտ, ուր եւ ժամանակի ընթացքին կը կուտակուի պատկառելի քանակութեամբ արխիւային նիւթ:

Արխիւներու այդ ամբողջութիւնը, որ ցարդ չպեղում կը մնայ մեծագոյն մասով, հսկայական նիւթ կը հայթայթէ իրրեւ սկզբնաղբիւր ոչ միայն Դաշնակցութեան, այլեւ Հայոց նորագոյն պատմութեան ամբողջական ուսումնասիրութեան համար, որովհետեւ կազմակերպական, քաղաքական, գաղափարական կամ մարտական ստանաւորութեան համար, որովհետեւ կազմակերպական, քաղաքական, գաղափարական կամ մարտական բնոյթի փաստաթուղթերու կողքին, հոն ամբարուած կը գտնենք Հայաստանին եւ հայ ժողովուրդին վերաբերող տեղագրական, ազգագրական, վիճակագրական, մշակութային ու այլ բազմահազար վաւերագրեր:

Հետեւաբար, բացի Ընդհ. Ժողովի թղթածրարէն, զոր գրեթէ ամբողջութեամբ տուած ենք ինչպէս ըսուեցաւ, լայն չափերով մենք օգտուած ենք նոյնպէս Հ.Յ.Դ. արխիւներու պահեստէն եւ այդ՝ հետեւեալ պարագաներու տակ:—

ա - Երբ որոշակի ցուցմունք կայ Ընդհ. Ժողովի ատենագրութեանց մէջ, որ, օրինակի համար Թիֆլիսի կամ Վասպուրականի տեղեկագիրը կարդացուած է եւ անոր շուրջ բնարկում կատարուած, բայց եւ այնպէս մեզի անձանօք պատճառներով ան կը պակսի թղթածրարէն: Բախտաւորութիւն է այս պարագային այդպիսիք կամ անոնց մէկ պատճէնը գտնել արխիւներուն մէջ:

բ - Երբ Շրջանային ժողովներու արձանագրութեանց մէջ յիշատակուած է, որ տուեալ գրութիւնը — տեղեկագիր, ատենագրութիւն, նամակ, բանաձեւ եւայլն, սահմանուած է Ընդհ. Ժողովին:

գ - Երբ կազմակերպական շրջանի մը թղթածրարը վտիտ է եւ անբաւարար ամբողջական պատկերը տալու խնդրոյ առարկայ է. Կոմիտեային գործունէութեան:

Վերոյիշեալ նկատումներէն մեկնելով եւ Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ կատարած մեր պրպտումներով, յաջողած ենք երեսնաչորս Ընդհ. Ժողովի թղթածրարէն պակսող բազմաթիւ փաստաթուղթեր, որոցմով լրացուցած ենք յատկապէս՝ Ոսկանապատ-Պաքուի, Մրգաստան-Երեւանի, Զրաբերդ-Կարսի, Նաւահանգիստ-Պաքումի, Լեռնավայր-Կիլիկիոյ եւ Եգիպտոսի նիւթերը: Միեւնոյն ձեւով կազմուած է Երրորդ եւ Զորրորդ Ընդհանուր Ժողովներու միջեւ ինկող 1904-1907 տարիներու վերաբերող անցուդարձերուն բաժինը:— Ընդհ. Ժողովին, Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներուն ուղղուած նամակներ, Կովկասեան Նախագիծ, Միհրանական եւ Անջատական շարժումներ — Անդրանիկ Պալքաններու մէջ եւ Պոլկարիոյ զին. դպրոցը, հայ-թաթարական ընդհարումները: Ասոնց մասին գոյութիւն ունեցող առատ եւ, բնականաբար անտիպ փաստաթուղթերը հարկ դարձուցին առանձին գլուխ մը յատկացնել անոնց (XXV):

Վերջապէս, անհրաժեշտ համարեցինք յաւելումական գլուխ մը (XXIV) յատկացնել կազմակերպական այն շրջաններուն, որոնց իսկական տեղը այս մատենաշարի նախորդ չորրորդ հատորն էր. բայց որովհետեւ անոնց մէկ մասին դիմաց ոչինչ կամ գրեթէ ոչինչ կար (ինչպէս Թիֆլիս եւ Վասպուրական), եւ կամ տրուած նի-

Բ.

թը անբաւարար էր (Վարաբաղ եւ Գանձակ), մենք այդ պակասը յաջողեցանք զգալի չափով մը դարմանել արխիւներէն քաղուած նոր եւ յաւելումական վաւերագրութեամբ:

Հատորին վերջին եւ ամէնէն ընդարձակ գլուխը (XXVI) ունի դատական նկարագիր: Մեծ ու փոքր դատական գործերու թղթածրարէն ընտրեցինք մեծագոյնն ու ցնցիչը,— Յուցական մարմնի նախաձեռնած Սուլթան Համիտ Բ-ի վիժած մահափորձին քննութիւնը, որ տեղի ունեցաւ Ընդհ. Ժողովի ընթացքին եւ անոր առջեւ:

Չանց առած ենք դատական միւս երկրորդական հարցերը (Վարդո եւայլն), որոնց մասին բազմիցս անդրադարձ կայ Ընդհ. Ժողովի ատենագրութեան, քննարկումներուն, ինչպէս նաեւ կազմակերպական շրջաններու արձանագրութեանց մէջ (տեսնել «Նիւթեր»ու Գ. եւ Դ. հատորները): Այդքանը ու տակաւին Միհրանական շարժման մասին այս հատորով մեր տուած նիւթերը բաւարար նկատելով, ծանրացած ենք Յուցականի եւ, Քրիստափորի տարաբախտ մահէն ետք, անոր զվարտար պատասխանատուութիւնը ստանձնած Սաֆոյի (Մարտիրոս Մարգարեան) դատին վրայ: Տուած ենք այդ նպատակով կազմուած մեծ թղթածրարին հիմնական նկատուած բոլոր փաստաթուղթերը, բացի, անշուշտ, Յուցական մարմնի տեղեկագրէն եւ Քրիստափոր Միքայէլեանի ձեռքով գրուած նոյն մարմնի «Փորձական Կանոնագիր»էն, որոնք տպուած են արդէն «Նիւթեր»ու Դ. հատորին մէջ (էջ 195-223):

\*  
\*\*

Հատորին մէջ ներկայացուած մեծ ու փոքր փաստաթուղթերու ընդհանուր գումարը կը մօտենայ 200ի, ճնշիչ մեծամասնութեամբ առաջին անգամ լոյս ընծայուած: Հազուադէպ բացառութիւնները նշուած են ծանօթագրութեամբ եւ անպայման վերստուգման ենթարկուած՝ բնագիր օրինակներու հետ բաղդատութեամբ:

Վստահօրէն մեծագոյն հետաքրքրութեամբ պիտի կարդացուին Քրիստափոր Միքայէլեանի, Ռոստոմի, Միւռն Չաւարեանի, Արմէն Գարոյի, Նիկոլ Աղբալեանի, Աւետիք Իսահակեանի, Անդրանիկի, Սեպուհի, Նիկոլ Դումանի, Խահաասրի Վարդանի, Սեւքարեցի Սաքոյի եւ շատ մը ուրիշ անունի դաշնակցական գործիչներու եւ մարտիկներու գրչին պատկանող նամակներն ու գրութիւնները:

Իւրաքանչիւր գլուխի, յաճախ նաեւ ենթաբաժիններու սկիզբը, դրուած է հակիրճ ներածական մը՝ կազմակերպական տունեալ շրջանին, ներկայացուած հարցին եւ օգտագործուած փաստաթուղթերուն մասին հարկ տեսնուած ծանօթութիւնը տալու համար:

Ծանօթագրութիւններով բացատրուած կամ վերծանուած են, ըստ կարելւոյն, բնագիրներուն մէջ գործածուած ծածկագրերը (շիֆրէ), ծածկանունները, տեղանունները, օտար բառերը, մութ ու դժուարիմաց խօսքերը եւայլն:

Վերջապէս, Ընդհ. Ժողովի թղթածրարէն դուրս, այլ խօսքով արխիւներէն վերցուած փաստաթուղթերուն վերեւ, իրրեւ կանոն, նշած ենք Պոսթընի Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ անոնց տրուած թուահամարը (Փաստ. № ...):

ԵՐՈՒՆՈՒ ՓԱՄՊՈՒՔԵԱՆ

Գ.



### ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉՈՐՐՈՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԷՆ

ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի ներկայ՝ հինգերորդ հատորով, կ'առաջադրենք իր լրումին հասցնել Հ. 3. Գաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովի (1907, Վիեննա) նիստերու եւ յարակից փաստաթուղթերու հրատարակութիւնը:

Նախորդ՝ չորրորդ հատորի ներածականին մէջ (ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉՈՐՐՈՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԷՆ - Ա.) նշած ենք արդէն Չորրորդ Ընդհանուր Ժողովէն մնացած վաւերաթուղթերու առատութիւնը, շատ փոփոխական ըստ թղթածրարի, եւ յայտնած՝ որ «կազմակերպական բազմաթիւ շրջաններու վերաբերեալ գրութիւնները (Ոսկանապատ, Մրգաստան, Քար, Ջրաբերդ, Ծովափ, Նաւահանգիստ, Բարձրաբերդ, Ոսկեհանք եւն.), ինչպէս նաեւ դատական թուղթեր (Յուցական Մարմնի եւ Վարդոյի խնդրին վերաբերեալ), պիտի տրուին ՆԻՒԹԵՐու յաջորդ՝ հինգերորդ հատորով»): Չենք կրկնել բազմիցս նշուած կարեւորութիւնը արխիւային իւրաքանչիւր վաւերաթուղթի, երկար ու մանրամասն տեղեկագիր մը ըլլայ ան թէ թղթի մը վրայ հապճեպով արձանագրուած անհատական կարծիք մը, Հ. 3. Գաշնակցութեան տուեալ ժամանակաշրջանի գործունէութեան (այս պարագային 1904-1906 եռամեակի), ինչպէս նաեւ անոր գործիչներու մտածողութեան, տեսակետներու համակարգին, եւ դէպքերու ու դէմքերու ժամանակակից արժեւորման մեր ամբողջական եւ անկողմնակալ ծանօթացման իրրեւ մեկնակէտ:

Ի զօրու կը մնան նաեւ մեր որդեգրած սկզբունքները՝ յարգելու, ի մասնաւորի, բնագիրներու լեզուն ու ոճը, ի հարկին կատարելով միայն ուղղագրական-քերականական սրբագրութիւններ՝ նոյնացման մտահոգութեամբ: Անփոփոխ եւ ամբողջական կերպով վերարտադրելու նաեւ զանազան վաւերաթուղթերը, իրենց պարունակած հաստատումներու եւ արտայայտած տեսակետներու երբեմն խայտարակտ ալյազա-

նութեամբ: Այս բոլորը կարելի յստակութեամբ բացատրած ենք արդէն ՆԻՒԹԵՐու չորրորդ հատորի ներածականին մէջ<sup>\*)</sup>: Ինչպէս ըրած ենք ասկէ առաջ ալ, ուղղակիւն փակագիծներու մէջ [...] կու տանք կըրճատ ձեւով գրուած կարգ մը բառերու ամբողջացումներ, մոռցուած հաւանական բառեր կամ վանկեր, ինչպէս նաեւ հարցման նշան կամ վերարտադրութեան այլ տարբերակ մը՝ դժուար ընթեռնելի բառերու կամ անուններու պարագային: Ընթացիկ (կոր) փակագծերը, իրրեւ կանոն, մաս կը կազմեն բնագրին:

\*  
\*\*

Ներկայ հատորը կը պարունակէ յաջորդական հետեւեալ բաժինները.

Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ, որ շարունակութիւնը կը կազմէ ՆԻՒԹԵՐու չորրորդ հատորի համապատասխան բաժնին եւ կը գրաւէ հինգերորդ հատորի կարեւորագոյն մասը եւս: Նախորդ հատորով տրուած վերջին շրջանը՝ Նալբանդը՝ (Նոր Նախիջեւան) կազմակերպական միաւորներու շարքին մէջ տասներեքերորդն էր (XIII): Ուստի ներկայ հատորի համապատասխան շարքը բացող Ոսկանապատը (Ազրպէյճան՝ բացի Քանձակէն ու Ղարաբաղէն, եւ Անդկասպեան երկիր, Կեդրոնական Կոմիտէի նստավայր ունենալով Բագուն կամ, արեւմըտեան արտագրութեամբ ու հնչումով, Պաքուն) կը կազմէ կազմակերպական տասնչորսերորդ շրջանը (XIV):

Ոսկանապատին կը հետեւին, միշտ համաձայն Ընդհանուր Ժողովի նիստերուն ընթացքին տեղեկագիրներու ընթերցման կամ պատգամաւորներու զեկուցման կարգին (տե՛ս ՆԻՒԹԵՐ, Գ. հատոր, էջ 349-352), Քարը (Ալեքսանդրապոլի շրջան), Մրգաստանը (Երեսանի Կ. Կոմիտէութիւն), Ոսկեհանքը (Իզմիր),

Բարձրաբերդը (Էրզրում), Տերսիմը, Ջրաբերդը (Կարս), Նաւահանգիստը (Պաքուն) եւ Ծովափը (Տրապիզոն): Առանձին թղթածրարի մը մէջ ամփոփուած կը գտնենք Հ. 3. Գաշնակցութեան Կիլիկիոյ բայց մանաւանդ Եգիպտոսի գործունէութեան վերաբերեալ նամակներ եւ այլ փաստաթուղթեր, գորս կու տանք իրրեւ այս բաժնին վերջին՝ քսաներեքերորդ գլուխ (XXIII): Այս ձեւով կ'աւարտի կազմակերպական շրջաններու վերաբերեալ թղթածրարներուն պարունակած վաւերաթուղթերու հրատարակութիւնը:

Բ.- ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ԳՐԱՒՈՐ ԱՌԱՋԱԿՆԵՐ Բաժնով կու տանք ամէնէն շահեկանները Ընդհանուր Ժողովին կամ Բիւրոներուն ուղղուած մօտ յիսնեակ մը նամակներու, որոնք տեղ գտած չեն կազմակերպական թղթածրարներուն մէջ, այլ դասաւորուած առանձին: Անոնցմէ ոմանք ուղղակի եւ բացաւայտ առնչութիւն ունին Չորրորդ Ընդհանուր Ժողովի օրակարգի կէտերուն հետ, ուրիշներ կը թուին պարագայարար (կամ մեզի անծանօթ մնացող կապակցութեամբ մը) տեղ գտած ըլլալ Հ.3.Գ. Արխիւի ա՛յս թղթածրարներուն մէջ:

Գ.- ՓԱՏՍԱԹՈՒՂԹԵՐ Հ.3.Գ. ՉՈՐՐՈՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳԱՏԱԿԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐԷՆ Բաժինը, կրնար ըլլալ նոյնքան եւ անելի ծաւալուն՝ որքան ներկայ ամբողջ հատորը: Բազմաթիւ թղթածրարներ կը վերաբերին բացառապէս Յուցական Մարմնի տեղեկագրին<sup>\*)</sup> եւ, ընդհանրապէս Մուլթանի ահաբեկման գործի բննարկման միայն. առանձին ու հաստ թղթածրար մը յատկացուած է Վարդոյի (Վարդ Պատրիկեան) հարցի բննութեան եւ եզրակացութեան: Ընտրովի՝ հրատարակութեան պիտի տանք դատական այդ թղթածրարներու ամէնէն յատկանշական եւ խնդրոյ առարկայ հարցը ամէնէն անելի ճշգրտօրէն պարզաբանող վաւերաթուղթերը:

<sup>\*)</sup> Շեղադր. - Հանգուցեալ Հրայ Տասնապետեանի այս Ներածականով նախաբեռնուած «Կազմակերպական շրջաններ» բաժնին հիմնական մասը պահած ենք անփոփոխ, անոր կցելով յաւելումական գլուխ մը՝ ամբողջացնելու համար Չորրորդ հատորին մէջ պակտող Թիֆլիսի, Վասպուրականի, Ղարաբաղի, Քանչակի եւ կարգ մը այլ շրջաններու յարուկ հոն պակտող վաւերագրեր: Միւս կողմէ, Գարականէն զեղչած ենք Վարդոյի դարին վերաբերող թղթածրարը, որուն բովանդակութեան ծանօթանալու համար ընթերցողը կը յղենք «Նիստեր»ու Գ. եւ Դ. հատորներուն: Մնացեալին համար փեւսել հարորի վերջաւորութեան Նիստերու ցանկը: Ե. Փ.

Այս ձեւով, ՆԻՒԹԵՐ Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ շարքի երեք հատորներով (Գ., Դ., եւ Ե. հատորներ), լոյս ընծայած կ'ըլլանք ամբողջութիւնը Հ. 3. Գաշնակցութեան ամէնէն կարեւոր համագումարներէն՝ Չորրորդ Ընդհանուր Ժողովէն մնացած արխիւային գրեթէ բոլոր փաստաթուղթերուն: Գէթ անոնց՝ որոնք, իրրեւ այդպիսին ի մի հաւաքուած, Հ. 3. Գ. Արխիւին մէջ պահուած են առանձին՝ «Չորրորդ Ընդհանուր Ժողովի Նիստեր» ընդհանուր խորագրին տակ: Ափսո՛ս որ, հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան կարեւոր մէկ հանգրուանին ծանօթացման նպաստող հարուստ այս ժողովածուին մէջ, կը պակսին տեղեկագիրները Արեւելեան քիւրդի, ինչպէս նաեւ Լեռնավայրի (Կիլիկիա), Վիշապի (Պոլիս), Շամի (Վասպուրական) եւ Մեծ Քաղաքի (Թիֆլիս) նման կարեւոր մարմիններու եւ շրջաններու: Թերեւս ի սպառ կորսուած են անոնք: Բայց կըրնա՛յ ըլլալ նաեւ, որ, պարագաներու բերումով, տեղ գրտած ըլլան արխիւային այլ հաւաքածոներու մէջ, Հաստան թէ այլուր: Վերջին պարագային կը մնայ մաղթել, որ օր մը հրատարակութեան տրուին իրենց կարգին, անելի համապարփակ դարձնելու համար մեր ծանօթացումը 1904-1906 եռամեակի ազգային-հասարակական կացութեան եւ Հայ Յեղափոխական Գաշնակցութեան գործունէութեան մասին<sup>\*)</sup>:

#### ՀՐԱՉ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

<sup>\*)</sup> Նիստեր Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Գ. հատոր, էջ 3:  
<sup>\*\*</sup>) Նոյն, էջ 4:  
<sup>\*\*\*</sup>) Նոյն, էջ 194-223:

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ

(Շարունակութիւն «Նիւթեր»-ու 4րդ հասկոյի համապատասխան բաժնին\*)

### XIV

#### ՈՍԿԱՆԱՊԱՏ – ՊԱՔՈՒԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Ոսկանապատի Կեդր. Կոմիտեութիւնը կը տարածուէր աշխարհագրական ընդարձակ շրջանի մը վրայ կեդրոն ունենալով Պաքուն (Քազու): Անոր հիմնական մասը կը կազմէր ներկայ Ազրայձանի տարածքը, բացառութեամբ Քանձակ-Էլիզավեթպոլ քաղաքին եւ շրջակայքին, ուր կազմակերպուած էր Այգեստանի Կեդր. Կոմիտեութիւնը, մինչ Ղարաբաղն ու Չանգեզուրը միասնաբար կը ներկայացնէին Ապառաժի Կ. Կոմիտեութիւնը: Այլապէս Ոսկանապատի կազմակերպական ցանցը կը տարածուէր շատ անկի հեռուները, մինչեւ Գերբենդ հիւսիսի մէջ եւ յատկապէս դեպի արեւելք Անդրկասպեան երկիրները, այժմու Թիւրքմենիստանն ու Իւզբեկըստանը:

Սարուստանի (կուսակցական ծածկանունը Կովկասի եւ Ռուսաստանի) Կեդր. Կոմիտեութեանց համակարգին մէջ Ոսկանապատի մարմինը ծանօթ էր նաեւ «Հ. Յ. Ղ. IV Կենտրոնական Կոմիտե» անունով: Համակարգում մը, որ չէր համապատասխանէր անշուշտ շրջաններու յարաբերական կարեւորութեան քանի՜ Մեծ Քաղաքին (Թիֆլիս) հաւասար ու երբեմն անկէ առաջ, Պաքուն կը հանդիսանար կովկասահայ ղեկավարութեան հիմնական կեդրոններէն եւ դաշնակցական գործիչներու առաջնակարգ դարբնոցներէն մէկը: Հ. Յ. Ղաշնակցութեան հիմնադրութեան առաջին օրերէն ինն գտնուած ու գործած էին Քարսեղ Մելիք Գրիգորեանի (Ղարա-Մելիք), Բժ. Միք. Չալեանի, Լեւոն Թադէոսեանի եւ Ստեփան Տէր Մկրտիչեանի նման նուիրեալներ: Յեղափոխական այդ սթնոյտքին մէջ հետզհետէ կազմաւորուած եւ ասպարէզ նետուած էին Գարեգին Խաժակ, Նիկոլ Գուման, Բժ. Քրիստափոր Օհանեան, Յարութիւն Շահրիկեան, Տիգրան Բեգզադեան, Աբրահամ Գիւլխանդանեան եւ շատ ուրիշներ: Քանի մը սերունդներու պատկանող այս դէմքերէն շատեր ղեկավար դիրքերու վրայ էին, Ոսկանապատի շրջանին մէջ, հայ-քաթարական կռիւներու ընթացքին եւ անկէ ետք:

Չորրորդ Ընդհ. Ժողովին Ոսկանապատի շրջանը կը ներկայացնէր Լեւոն Թադէոսեանը (Չոփուտեան, Պապաշա):

\* Ցե՛ս «Նիւթեր Դ. Յ. Ղաշնակցութեան Պատմութեան Գամար» Դ. հատորի էջ 44ի ներածականը եւ անկէ ետք:

\*  
\* \*

Ոսկանապատի թղթածրարը կը պարունակէ հետեւեալ վաւերաթուղթերը.-

1.- «Տեղեկագիր Հ. Յ. Դ.եան Չորրորդ Կենտր. Կոմիտէի, 1904 թ.» գրուած սեւ մելանով պատգամաւոր Լեւոն Թաղեւտեանի ձեռագրով, 48 էջերէ բաղկացած 25x20 սմ. չափի անգիծ տետրակի մը 41 էջերուն վրայ (բուն տեղեկագիր՝ էջ 1-32 եւ յաւելումներ՝ էջ 40-48. պարապ ձգուած էջերուն վրայ կան մատիտով անկարեւոր նոթագրութիւններ): Կցուած կը գտնենք «Հ. Յ. Դաշնակցութեան Ոսկանապատի 2րդ կոմիտէի դրամական խմբերի ցուցակը առ 1 Հոկտեմբեր 1904»: Տետրակի կողքին վրայ, ներսի կողմը, կը գտնենք հետեւեալ արձանագրութիւնը.- «Ոսկանապատի Կենտր. Կ.ի անդամներ էին 1) Նիկոլ, 2) Շահրիկեան, 3) Ա. Գիլսանդանեան, 4) Տ. Բէզզադեան, 5) Բժ. Օհանեան, 6) Տ. Աղամալեան (Մուշեղ), 7) Գրիգ. Աղաջանեան, 8 ... (անուն չկայ), 9) Բժ. Տէր Թովմասեան, 10) Լեւ. Թաղեւտեան»: Զեռագիրը տարբեր է. ըստ երեւոյթին յետագայ յաւելում մըն է, հաւանաբար Արք. Գիլսանդանեանի կողմէ:

2.- «Արձանագրութիւններ Ոսկանապատի IV Կենտ. Կ.ի շրջանի Երջանային Ժողովի» (20 նիստ, 19 Նոյեմբեր 1906 - 8 Դեկտեմբեր 1907 թ.), մաքրագրուած, մանուշակագոյն խմորատիպ, նամակի մեծ չափի (28x22 սմ.) գծաւոր երկրորդ թուղթի վրայ (իրարու կցուած), 82 էջ, զոյգ օրինակով: Առաջինին էջին վերը մակագրուած է.- պատճեն (Ընդհանուր Ժողովին), ստորագրութիւն չի կրեր, բայց կնքուած է «Հ. Յ. Դ. IV Կենտրոնական Կոմիտէ» կարմիր կնիքով: Երկրորդ օրինակը առանց կնիքի է, բայց նիստերու վերջաւորութեան, ոչ միշտ կանոնաւորութեամբ, կը կրէ ստորագրութիւններ: Այս օրինակը Հ. Յ. Դ. Պոսթընի արխիւին մէջ ունի 327-1 թուահամարը:

3.- Հ. Յ. Դաշն. Չորրորդ Կենտ. Կոմիտէի 7 Յունուար 1906 թ.ի N<sup>02</sup> Երջաբերականը (տպագիր 1 էջ) եւ նոյն մարմնի 1906 Դեկտ.ի (օրաթիւր կը պակսի) N<sup>0</sup> 29 Երջաբերական-նամակը մակագրուած «Արեւելեան Բիւրոյին եւ 9-ի Յանձն(խախումբ)ին», մանուշակագոյն խմորատիպ, 1 էջ:

4.- «Երիտասարդ դաշնակցականներ»-ու կողմէ «Հ. Յ. Դ. Ոսկանապատի Կենտրոնական Կոմիտէին» ուղղուած անվտանգութեան գիր մը, անթուակիր, նամակի փոքր չափի (21x13.5 սմ.) գծաւոր թուղթի վրայ, սեւ մելանով, մէկ էջ եւ մէկուկէս տող: Կարմիր մատիտով մակագրուած է «Իւանին»:

Թղթածրարին մէջ կը գտնենք տակաւին «Ոսկանապատի պատգամաւորից» (Երջանային Ժողովի որոշումներից) խորագրուած արտագրութիւնը Երջանային Ժողովի 24 Նոյ. 1906 թ. ԺԱ նիստի արձանագրութեան մէջ տեղ գտած երկու բանաձեւերուն՝ (մեծամասնութեան եւ փոքրամասնութեան) Տաճկահայ դատի եւ Կովկասեան գործունէութեան հետապնդման մասին: Գրուած է Լեւոն Թաղեւտեանի (Չոփուտեան, Պապաշա) ձեռագրով, նամակի երկար թուղթի վրայ (34x 21 սմ.), սեւ մելանով, մէկուկէս էջ: Առանձին չենք տար, կրկնութենէ խուսափելու համար:

Ընդհ. Ժողովի թղթածրարին մէջ պահպանուած վերոյիշեալ նիւթերուն կողքին կարեւոր համարեցինք հրատարակութեան տալ շարք մը այլ փաստաթուղթեր՝ վերցուած Հ. Յ. Դ. Պոսթընի կեդրոնական արխիւէն եւ առընչուած, բնականաբար, Ոսկանապատի կազմակերպական կեանքին եւ գործունէութեան: Մէկ մասը Կ. Կոմիտէի շրջաբերականներ են. մեծագոյն մասը սակայն կը վերաբերի կոմիտէական շրջաններու բանաձեւուած կարծիքներուն: Ուշագրաւ են յատկապէս Թուրանի Երջանային Ժողովին արձանագրութիւնները: Ոսկանապատի Կ. Կոմիտէութեան պատկանող Թուրանը, շուրջ տասնեակ մը կոմիտէներով եւ ենթակոմիտէներով, կը գործէր Անդրկասպեան ընդարձակածաւալ երկրամասի մը մէջ, որուն սահմանները կը հասնէին մինչեւ Չինաստան: 1906 թ. Մայիս 26ին գումարուած Թուրանի Երջ. Ժողովը հաւանաբար առաջինն էր իր տեսակին մէջ հետաւոր այդ տարածքներուն մէջ ցրուած հայութիւնը առաւել կազմակերպելու նպատակով:

Արխիւային այս փաստաթուղթերը կու տանք իրենց ժամանակագրական կարգով:

Ե. Փ.

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ

1904 թ. Յուլիսից մինչեւ 1906 թ. Դեկտ. 31

1.- Ոսկանապատի շրջանը իւր տերիտորիայով՝ այնպիսի մի ահագին տարածութիւն է կազմում, որին կարող է նախանձել ամէն մի եւրոպական պետութիւն, բայց մի յեղափոխական կոուակցութեան համար, որը գործում է միայն հայ ժողովրդի մէջ՝ դրանից աւելի անբարեպատեհ հանգամանք դժուար կարելի է երեւակայել. որովհետեւ հայերը այդ ահագին տարածութեան վրայ ցրուած են ինչպէս օազիսները անապատում եւ կազմում են մի չնչին թիւ՝ 135-140 հազար միայն.

2.- Ոսկանապատի շրջանի մէջ մտնում են Ոսկանապատ քաղաքը իւր շրջականերով, Բալխախանի, Սեւ ու Սպիտակ) քաղաքները եւ Բիբի) էյբաթը՝

3.- Ապա Գանձակի նահանգից Նուխի իւր 44 գիւղերով, Ջաքաթալա քաղաքը, Բազլայ նահանգից Շամախին՝ իւր 24 գիւղերով, Գէօկչայը, իւր 23 գիւղերով, Դաղստանի շրջանից Պետրովսկ եւ Դերբենտ քաղաքները, Հաշտարխան) նահանգից Հաշտարխան) քաղաքը, ապա ամբողջ անդրկասպեան երկիրը՝ սկսած Կասպից ծովի ափերից մինչեւ Ջինաստանի եւ Աղուանստանի սահմանները, ուր գտնւում են հայեր հետեւեալ տեղերում՝ Կրասնովոդսկ, Ղզըլ-արվատ, Ախաբադ, Կուշկա, Բուխարա, Մերվ, Սամարղանդ, Տաշկենտ, Անտի-ժան, Ջարջու եւ Նոր Մարգելան քաղաքները եւ գիւղաքաղաքները: - Բոլոր յիշած տեղերում կազմակերպութիւնը ունի մարմիններ եւ խմբեր: Ընդհանուր հայ ազգաբնակչութեան թիւը այդ ահագին տարածութեան վրայ - ընդամէնը 130էն մինչեւ 135 հազար է:

|                     |                |
|---------------------|----------------|
| Բազու               | 38.000         |
| Բիբի) էյբաթ         | 2.000          |
| Սեւ եւ Սպիտակ քաղաք | 15.000         |
| Բալխախանի           | 8.000 (10.000) |

|                     |                |
|---------------------|----------------|
| Ջաքաթալա            | 2.240          |
| Նուխի               | 5.750          |
| Նուխի - 44 գիւղ-    | 25.200         |
| Արէշի - 6 գիւղ -    | 1.000          |
| Շամախի              | 1.730          |
| Շամախի 24 գիւղ      | 14.530         |
| Գէօկչայ             | 390            |
| Գէօկչայ 22 գիւղ     | 14.380         |
| Դերբենտ             | 1.880          |
| Պետրովսկ            | 680            |
| Հաշտարխան           | 1.000          |
| Անդրկասպեան երկրում | 8.000 - 10.000 |
| գումար, մօտ         | 130-135 հազար  |

4. Կազմակերպական մասը.- Կենտ. կոմ. էն այս երեքամեայ շրջանում ընտրուելիս է եղել միշտ հինգ հոգուց եւ 2 փոխանդամից: Վերջինները ոչ միայն փոխարինում էին բացակայ անդամներին, այլ նոյնիսկ կազմի լրիւ ժամանակն էլ ձայնի իրաւունքով նրանք մասնակցում էին Կեդր.ի աշխատանքներին: Այդ երեք տարուայ ընթացքում եղել են անդամներ՝ 1- Դուրան, 2- Նիթրա, 3- Աբրամովիչ, 4- Բէզ, 5- Միխիթար, 6- Մուշեղ, 7- Մաշտոցեան, 8- Ասլան, 9- Գուլթանեան եւ 10- Չոփուտեան: Այդ տասն հոգուց երեքը շարունակաբար վերընտրուելիս են եղել (Նիթրա, Մուշեղ եւ Չոփուտեան)՝

5.- Մեր շրջանում ներկայումս ունենք 2 կոմիտէ եւ 27 ենթակոմիտէ եւ 4 կ[արմիր] խաչ. (904 թ. երկրորդ կիսամեակում ունէինք 3 կոմիտէ եւ 21 ենթակոմիտէ. 905 թ. առաջին կիսամեակի ընթացքում ունեցանք 4 կոմիտէ 32 ենթակոմիտէ եւ 8 կարմիր խաչ): - Սկզբում Կ. կոմ.ի հետ անմիջական յարաբերութիւնների մէջ էին գտնւում միայն կոմիտէները, բայց շուտով ստիպուած

- 1.- Դողային տարածքով:
- 2.- Բազուի թաղամասերը կամ արուարձանները. վերջինը Բիբի էյբաթ:
- 3.- Տեղեկագիրը քովանդակող տետրակի կողքին վրայ կը գտնենք հետեւեալ արձանագրութիւնը, որ կը բացայայտ, բացի թիւ 8էն, Կ. կոմիտէի անդամներուն ինքնութիւնը: «Ոսկանապատ»ի Կեդր. Կ.ի անդամներն էին.
  - 1.- Նիկոլ [Դուրան]

- 2.- [Յարութիւն] Շահրիկեան
- 3.- [Սիւրահան] Գիլսանդանեան
- 4.- [Սիգրան] Բէզզադեան
- 5.- Բժ. [Զրիստափոր] Օհանեան
- 6.- Տ. Աղամալեան (Մուշեղ)
- 7.- Գրիգ. Աղաջանեան
- 8.- \_\_\_\_\_
- 9.- Բժ. Տէր-Թովմասեան
- 10.- Լեւոն Թաղեւտեան [Պապաշա]

եղանք գիջել ենթակոմիտեների շատերի բողոքին եւ պահանջին ու կապել անմիջապէս մեզ հետ: Ենթակոմիտեների մէջ կան մի քանիսը, որոնք ցենզի տեսակէտից կարող էին վերածուել կոմիտեների, բայց անհրաժեշտ ինտելիգենտ ուժերի բացակայութեան պատճառով ստիպուած ենք եղել նրանց ենթակոմիտեական կազմով թողնել:

Եղած մարմինների մէջ, եթէ նրանք լրիւ լինէին իրանց կազմով, անդամների թիւը պիտի հասնէր 150ի: Բայց ումանց բացակայութեան, իսկ միւսների հրաժարման պատճառով՝ բոլոր այդ 30 մարմինների (1 Կեդր. կոմ., 2 կոմ. եւ 27 ենթակոմիտե) մէջ աշխատող ընկերների թիւը հասնում է 134-ի միայն:

Կարծում ենք կարելի է իմանալ թէ մեր այդ պաշտօնական գործիչները ինչ խաւերի, ինչ դասակարգերից դուրս եկած անհատներ են. այդ նպատակով մենք ստորեւ տուած ենք հետեւեալ վիճակագրական աղիւսակը:

Շահագործող դասակարգից կամ աշխատատեղերից

|                          |        |
|--------------------------|--------|
| 1. Բանուորներ            | 8 հոգի |
| 2. Արհեստաւորներ         | 16     |
| 3. Գործակատարներ         | 37     |
| 4. Հողագործներ           | 4      |
| 5. Ինտելիգենտ ծառայողներ | 9      |

Գումար՝ 73 հոգի կամ 64.5%<sup>4</sup>

Շահագործող տարրերից

|                     |    |
|---------------------|----|
| 6. Մանրավաճառ       | 15 |
| 7. Վաճառական        | 7  |
| 8. Կապալառու        | 2  |
| 9. Կալուածատէր      | 9  |
| 10. Գործարանատէր    | 2  |
| 11. Հիւրանոցատէր    | 1  |
| 12. Արհեստանոցի տէր | 3  |
| 13. Կառավարիչներ    | 4  |
| 14. Լուսանկարիչ     | 1  |
| 15. Քահանայ         | 4  |

Գումար՝ 42 հոգի կամ 31.3%<sup>5</sup>

Ազատ պրոֆեսիայի մարդիկ

|                 |    |
|-----------------|----|
| 16. Բժիշկներ    | 3  |
| 17. Գիւղատնտես  | 1  |
| 18. Ուսուցիչներ | 11 |
| 19. Վարժուհի    | 1  |

|             |   |
|-------------|---|
| 20. Ուսանող | 1 |
| 21. Տիկիներ | 2 |

Գումար՝ 19 հոգի կամ 14.2%

- 1) Եւրոպական դերձակների միութիւն
- 2) Ասիական դերձակների միութիւն
- 3) Գործակատարների միութիւն
- 4) Կօշկակարների միութիւն
- 5) Հիւսնների միութիւն
- 6) Քարտաշների միութիւն

Մօտ 600 հոգի

Կազմակերպուած խմբեր կան շրջանում մօտ 270 հատ, 4-500 անդամներով: Երջանի հեռուոր մասերում եւ գիւղերում ենթակոմիտեներից եւ խմբերից շատերը քայքայուած վիճակի մէջ են եւ եթէ պրոպագանդի գործի վրայ լուրջ ուշադրութիւն չդարձուի, կազմակերպուած խմբերի մեծագոյն մասը ոչ միայն կը կազմալուծուի, այլ եւ նրանց մի մասը կը գրաւուեն Սոց. Դեմոկրատիայից, միւս մասը Հնչակեաններից, որոնք — մանաւանդ առաջինները — առանց դրան էլ մեծ ճիգեր են գործ դնում իրանց կողմը թեքելու բանուորներին:

Վերջին թուական տեղեկութիւնները վերաբերում են այն վիճակին, որի մէջ գտնուում են մեր մարմինները եւ խմբերը ներկայումս: Մինչեւ հայ-թաթարական ընդհարումը, կազմակերպուած խմբերի թիւը անհամեմատ աւելի էր, քան այժմ: Հայ-թաթարական ընդհարման վտանգը տասնեակ գիւղեր Դաշնակցութեան թեւի տակ մտցրեց եւ այդ գիւղացիները մինչեւ օրս էլ իրանց դաշնակցական են համարում. այնպէս որ եթէ այդպիսիներին էլ դաշնակցական անունը տանք — թիւը տասնեակ հազարների կարող է հասնել:

Կ. Կոմիտէի անդամներից ոչ մէկը չկայ ներկայումս, որ անձնական գործերից ազատ՝ կուսակցութեան տրամադրութեան դրած լինի իրան. հին ընկերներից մէկը միայն համաձայնել է (որ պաշտօնապէս ընտրուած չէ) ազատ լինել եւ քաղաքի կոմիտէի մէջ նոյնպէս մի հոգի կայ. բայց ընդհանրապէս ասելով՝ շրջանի մէջ՝ մանաւանդ գործարանական մասում այնքան գործ-աշխատանք կայ կատարելու, որ եթէ ներկայ ուժերը տասն անգամ բազմապատկուեն՝ դարձեալ հազիւ կարող կը լինեն գործերը լրիւ վարելու:

Բանուորական Բիւրօ. — Հայ-թաթարական ընդհարումներից յետոյ օտար Ֆիրմաների կողմից արտայայտուեց թշնամական վերաբերմունք դէպի հայ տար-

4.- Նշուած թիւերու ճիշդ գումարը 74 է:  
5.- » » » » 48 է:

րը: — Առաջարկներ հայ բանուորներ չպահելու: Հայ կապիտալիստների ցանկութիւնը՝ հայ բանուորներ ունենալ: — Հայ բանուորութեան ցրուելը գործարաններից եւ նաւթահանքերից: Վտանգ աշխատանքի շուկայի հայ բանուորների ձեռքից դուրս գալուն: — Սկզբնական ծրագիրը Բանուորական Բիւրոյի — բոլոր հայ ֆիրմաները պարտաւորուած են մեզից բանուորներ վերցնել, վճարելով այդ նպատակով ամէն մի բանուորի համար ամսական մի գումար՝ մօտ 50 կոպէկ (տարեկանը 6 ռուբլի) մի հոգու համար): Բանուորների պահանջները եւ գործադուլները Բ. Բիւրոյի միջոցով: — Ստացուած գումարով բանուորական գրադարաններ եւ կասսա, տներ (եկող եւ անգործ բանուորների համար): Այդ ծրագիրը չիրականացաւ ուժեր, աշխատողներ չկային: — Բայց Բանուորական Բիւրոն Օգոստոսի դէպքերին մեծ օժանդակութիւն ցոյց տուեց ահաբեկուած բանուորութեան: Գնացին գաւառները, կրկին յետ եկան եւ տեղաւորուեցան. նիւթական պահանջները կապիտալիստներից Բիւրոյի միջոցով կարգադրուեցան<sup>6</sup>:

Ոսկա(նա)յատը որպէս բանուորական կենտրոն. — միայն Բալխանի 30-35 հազարի էր հասնում մինչեւ դէպքերը. — քաղաքում մօտ 10.000, Բ. էյբաթում մօտ 3.500-4000 — ընդամէնը այդ շրջանում՝ մօտ 50-55 հազար աշխատող մասսա կայ:

|   |             |
|---|-------------|
| Իսկ Բալխանու հայ բանուորներ — 6000ի մօտ |             |
| Բ. էյբաթ                                | 1200        |
| Սեւ քաղաք                               | 800         |
| [Սպիտակ] քաղաք                          | 1500 — 2000 |

Գումար՝ 9-10 հազար

Ինքնապաշտպանութեան գործը Ոսկանապատում.

— Անպատրաստ էինք բոլորովին. մինչեւ այդ ինչ ձեռք էինք բերում՝ Երկրի համար էր: Փետրուար 8ին (905 թ.ին) յանկարծակիի եկանք. ունէինք միայն 13-14 երկարներ եւ 20ի չափ կարճեր, չնչին քանակութեամբ ծայրերով: Այն էլ մեծ մասը պահած էր թուրքական թաղում եւ առաջին օրը օգտուել անկարելի եղաւ: — Դումանի մարտական տաղանդը եւ ժողովրդի մէջ եղած գէնքից օգտուելը: Կառավարչական պրովոկացիան եւ իշխան Նակաշիճէն: Ռուս քահանայ Իւնէրկին(?) եւ թուրք մոլլաներ, թուրք ոստիկաններ<sup>6</sup>:

Այս ընդհարման ժամանակ հայերից ընկան մօտ 130 հոգի, իսկ թուրքերից մօտ 70 հոգի:

Որոշումն գէնք հայթայթելու: 25նքի Ֆոնդ կազմուել միտքը եւ իրականացնելը: 42.000 ռ. — 2իֆոնդ<sup>7</sup> — Դումանը այդ գործի մէջ:

Օգոստոսեան դէպքերը. — 2իւքարչի ինքնապաշտպանութեան հարցը Նուխուայ, Շամախու եւ Գեօկչայի

գաւառներում: Սիւննիների եւ շիանների թշնամութիւնը իբրեւ պատճառ ընդհարումներ առաջ չգալուն: Փորձեր շիանների կողմից Նուխում եւ Շամախում եւ Դերբենտում ջարդ սկսելու եւ դրա ապարդիւն անցնելը:

Մառայողի վրայ ատրճանակ արձակելը իբրեւ պատրուակ կամ մի թուրք պրովոկատորի ատրճանակ արձակելը եւ վրէժ կանչելը հայերի դէմ: Բալխանիի եւ Բ. էյբաթի անպատրաստ վիճակը եւ մարտական ղեկավարի բացակայութիւնը: Ռազմամթերքի պակասութիւնը չէր, որից պարտուեց Բալխանին, ուր մեծ քանակութեամբ կար:

Ռազմաթերքի մօտաւոր քանակը գանազան տեղերում.

Կազմակ. գէնք քաղաքում — մօտ 160 (մի մասը փչացած՝ մաւզ[եր] կարծերն էլ մօտ 40 հատ իբրեւ երկար)

|                       |        |
|-----------------------|--------|
| Բալխանի մօտ           | 50 հատ |
| Բ. էյբաթ              | 40 հատ |
| Մ[եւ եւ Սպիտակ քաղաք] | 3 հատ  |
| Նուխի                 | 10-12  |
| Շամախի                | 30     |
| Գէօկչայ               | 20     |
| Դերբենտ               | 5      |
| Ասխաբադ               | 15     |
| Մերվ                  | 15     |
| Կրասնով               | 10     |

Մօտաւ. 385 հատ

Թուրքը տալիս եմ յիշողութեամբ (մօտաւորական). թղթերը Կ. Կ.ից դեռ ստացուած չեն:

Ինքնապաշտպանութեան զինուորների թիւը (վարձկան) մի ժամանակ հասաւ 400-ի, որ ահագին նիւթական ծախս էր նստում: Առաջ վճարում էինք իւրաքանչիւրի ամսական 18 ռ. եւ հազուատը. իսկ յետոյ՝ 21 ռ. առանց հազուատի:

Դրամական հարցը (եկամուտներ եւ ծախսեր). — Ցաւելով պիտի յայտնեմ, որ այս հարցի առթիւ իմ տուած տեղեկութիւնները լրիւ չեն կարող լինել, որով-

6.- Նշուած կարգ մը պարբերութիւնները գրուած են «Իննազարկան» ձեւով. ըստ երեւոյթից ցոյցեր են, որոնց ցիւք յատենի ժողովոյ պիտի զարգացնէր տեղեկագիր կարդացողը:

7.- «Ձիմուորական ֆոնդ», հայ-թաթարական ընդհարումներուն առիթով ստեղծուած յատուկ մարմիններ Դաշնակցութեան ռազմաթերք հայթայթելու համար:





թէ ոչ մի հսկողութիւն (կոնտրոլ) չէ ունեցել. այդ թող- նրա՞ծ է եղել իւրաքանչիւր տեղական մարմնին, որ սա- կայն նոյնպէս բաւականին անտարբեր են գտնուել դէ- պի այդ գործը:

Այս այսպէս լինելուց յետոյ թող չզարմանան ընկեր- ները, եթէ ասեմ, որ մենք մասամբ հոգացել ենք պրո- պագանդ անել թուրք բանուորութեան մէջ, օգտուելով այն սարտ(?) երիտասարդից, որ գործում էր Ասխաբա- տի շրջանում եւ որը վտանգուած լինելով՝ մեր ընկերնե- ռի աջակցութեամբ ապաստանել էր մեր քաղաքը: Նրան 40 ու ռոնիկ նշանակեցինք մինչեւ մի պաշտօն գտնելը եւ նա սկսաւ աշխատել Բալխիսանի: Համոզմունքներով էս. էո. էր: — Նա գործեց այնտեղ 5-6 ամիս, բայց շու- տով դարձեալ վտանգուեց եւ ստիպուած եղաւ հեռա- նալ Հիւս. Կովկաս: Կազմակերպեց սիւննի մահմեդա- կաններին մի քանի խմբեր եւ շատ հաւատքով գործում էր մինչեւ վտանգուելը: — Շխաներին չէր մօտենում — գտնելով որ նրանց վրայ առ այժմ ափսոս է քանք թա- փելը. նա նրանց համարում էր յառաջադիմութեան անընդունակ տարր:

Երկու տարի է, որ հիմնել ենք մի փոքրիկ տպարան, որ մեծ դիւրութիւն է տալիս թուղցիկներ եւ գրքոյկներ հրատարակելուն: Հրատարակել ենք թուղցիկներ մօտ 80-85 հատ, որից մօտ 10 հատը էս. էո. ներքինը՝ թուղ 40-42 հազար օրինակ, Կարմիր հարիւրեակի համար 4-5 թուղցիկ՝ թուղով 4-5 հազար օր.: Մեր թուղցիկների թիւը հասնում է մօտ 70-75-ի՝ տպագրուած մօտ 110 հա- զար օրինակ (երկու տարուայ ընթացքում): Տպագրել ենք մարմինների ամսական հաշիւները, նամակների համար քլանկներ<sup>9</sup>, Կ[արմիր] խաչի համար անդորրա- տետրներ եւ այլն:—

Հրատարակած գրքոյկների մեծ մասը եղել են ար- տատպումներ.

- 1) «Արեւելները բարեւում են ձեզ» եւ «Դէպի Երկիր» (Դրօշակից) 2000 օրինակ
- 2) Ներքին կանոնադրութիւն 1000 օրինակ
- 3) Կարմիր խաչի կանոնադրութիւն 1000 օրինակ
- 4) Կազմակերպական կանոններ 1200 օրինակ
- 5) Կովկասեան նախագիծ հայերէն 2000 օրինակ
- 6) Կովկասեան նախագիծ ռուսերէն 1200 օրինակ
- 7) Վէրների «Հասարակութեան ապագան» 3000 օրի- նակ

Գումար 11.400 օրինակ  
(Եւ գուցէ էլի 1 կամ 2 հատ, որ ես այժմ չեմ յիշում):

Այդ գրքոյկները տպագրում էինք յատկապէս մեր մարմինների համար: Բայց երբ պահանջ լինում էր նա- եւ միւս Կենտր. Կոմիտէներից, նրանց եւս բաժին էինք հանում:

Բացի մեր հրատարակութիւնները Արեւմտեան Բիւ-

րոյից ստացել ենք Դրօշակ եւ նրա ու Եւրոպական Ու- սանոդ. Միութեան հրատարակութիւնները. կարող կը լինէի այս բոլորի մասին ամենաճիշդ թուեր տալ ձեզ, բայց դժբախտաբար ընկերներիցս մինչեւ այժմ ես դեռ չեմ ստացել խնդրածս տեղեկութիւնները եւ նիւթերը:

Արեւելեան Բիւրոյից ստացել ենք նրանց մօտ 30 հրատարակութիւնները: Իւրաքանչիւր գրքոյկից ստա- ցել ենք միջին հաշուով մօտ 500 օրինակ. մեր շրջանը մտած է այդ հրատարակութիւններից մի տարուայ ըն- թացքում մօտ 15-18 հազար օրինակ, որ մեր յեղափոխա- կան գործունէութեան մէջ մի եզակի եւ չափազանց ու- ռախալի երեւոյթ է: Արեւելեան Բիւրոն իւր հրատարա- կութիւնները ուղարկում է մեզ վերադիր վճարով: Մենք ստանալուց յետոյ նոյնպէս վերադիր փոստով ու- դարկում ենք մեր մարմիններին, որոնք եւ գրքերը տա- րածում են նշանակուած գնով նախ խմբերում եւ ապա դրսի ընթերցող հասարակութեան մէջ:

Պրոպագանդայական — տպարանի հիմնելը — հրա- տարակչական եւ դրանց հետ կապուած մանր ու մուկը ծախսերը կազմում են այս երեք տարուայ ընթացքում մօտ 6.900 ու. եթէ դրանից դուրս գայ տպարանի հիմնե- լու ծախսը որ միանուազ ծախս — 1.900 ու., պրոպագան- դի համար ծախսուած է մօտ 5.000 ուրբլի, երեք տա- րում միջին հաշուով տարեկան մօտ 1.650 ու., որ կազ- մում է մեր տարեկան բիւջէի (չհաշուած ինքնապաշտ- պանութեան անուսով հաւաքուած գումարները — մեր տարեկան բիւջէի կարելի է հաշուել 35-40 հազար ու.) մի քսաներորդից էլ պակաս... իսկ եթէ վերջին երեք տարուայ ամբողջ մեր մուտքի համեմատութեամբ դենք այդ գումարը, միջին հաշուով 134 հազար տարե- կան, նա կը կազմի մի 80երորդականը միայն... այս թուերը այնքան պերճախօս են, որ աւելորդ է մի խօսք անգամ աւելացնելը:

Չանագան հոսանքների մասին խօսել աւելորդ եմ համարում, որովհետեւ պիտի ասեմ համարեա թէ նոյնն է, ինչ որ այստեղ ասել են միւս պատգամաւորները իրանց տեղեկագրերում, որովհետեւ երեւոյթը միեւ- նոյնն է եւ մեզ մօտ:

Միհրանական շարժումը միայն մեզ մօտ հող չգտաւ եւ եթէ կան այդ ուղղութեան համակրողներ՝ անհատ- ներ են միայն, որոնք իրանց գոյութիւնը ոչնչով չեն ար- տայայտել մինչեւ օրս:

Գրակառուութեան փոխադրութեան հարցը եւս քիչ հոգս չէ պատճառել: Մինչեւ 905 թ. այնքան անկանոն եւ այնքան ուշ էին ստացւում Դրօշակը եւ միւս գրքերը, որ երբեմն տեւում էին ամիսներ: Մի գիծ, մի ճանա- պարհ միայն ունէինք, որից օգտուում էին նաեւ հնչակ-

9.- Տպագիր պաշտօնական թուղք:

եանները, որոնք մի երկու անգամ շնորհիւ իրանց անդ- գուշութեան եւ անտակտութեան վտանգել էին այդ գի- ծը: Բաւական չէր գրականութիւնը սահմանից անցկաց- նել Ռուսաստան. յաճախ աւելի դժուար էր լինում այդ- տեղից մինչեւ Ռուսաստան ուղարկելը<sup>10</sup>: Սահմանա- գծի մեր ընկերները իրանց զգուշութիւնը երբեմն հաս- ցնում էին դատարպարտելի անհոգութեան, — գրքերը կամ Դրօշակները հողի տակ թաքցնում եւ պահում էին այնքան, որ դուրս հանելուց յետոյ այլեւս անհնար էր լինում ձեռք տալը. խոնաւութիւնից այնպէս փթած էին լինում, որ թուղթը ինքը իրան երբերում, թափուում էր... Այս անհոգութեան մէջ ինչ բաժին ունէին Վրէժստա- նի<sup>11</sup> կամ Ռուսաստանի ընկերները — մինչեւ այժմ էլ մենք դժուարացել ենք որոշելը, թէ եւ բազմաթիւ ան- գամ Ռուսաստանից ընկերներ են ուղարկուել յատկա- պէս փոխադրութեան գործը կանոնաւորելու նպատա- կով: Այսքանը գիտեմ միայն, որ եթէ որեւէ մէկը ուզե- նար անհոգութեան համար մրցանակ տալ, պիտի կանգ առնէր, առանց գիտնալով թէ նախապատուութիւնը որին տայ՝ Վրէժստանցո՞ւն թէ Ռուսաստանցո՞ւն:

905 թ. սկզբում հաստատուեց Գիլանի եւ Պորտար- տուրի<sup>12</sup> ընկերների ջանքերով մի նոր գիծ եւ որով գրա- կանութիւնը սկսուեց ոչ միայն կանոնաւոր կերպով ստացուել - այլ այնքան շուտ, որ նախկին տարիներում դեռ չէինք տեսել. նոյն ամսուայ Դրօշակը նոյն ամսի վերջին ստացւում էր: Բայց այդ շարունակուեց մինչեւ հայ-թուրքական ընդհարումները — մինչեւ Օգոստոս- նրանից յետոյ հաղորդակցութիւնը դադարեց մի քանի ամսով. իսկ յետոյ պարսից կառավարութիւնը արգելք եղաւ եւ կապուցները կրակը նետուեցին. մինչեւ այժմ էլ դեռ փոխադրութիւնը կանոնաւորուած չէ. ստացւում է շատ չնչին քանակութեամբ եւ այն էլ շնորհիւ մերոնց ճարպիկութեան:

Ստացուած գրականութիւնը — նայած քանակու- թեան — մենք էլ մեր հերթին ուղարկում էինք մի մասը Արեւելեան Բիւրոյին, մի մասը Ապառաժին եւ մի մասն էլ ժլատին եւ Նալբանտին<sup>13</sup> — իսկ յաճախ այնքան քիչ էր լինում, որ շրջանին իսկ բաւականութիւն չէր տա- լիս:

Յարաբերութիւններ այլ յեղափոխական կուսակցու- թիւնների հետ. —

Ռուսաստանի շրջանում գործող կուսակցութիւն- ներն են Սոցիալ դեմոկրատները, Ս. դեմոկրատների հայ եւ թուրք Ֆրակցիաները (Հիւմմէթ), Սոցիալ ռեվոլյու- ցիոնէրներ (թրքական Իտտիֆազ - Կարմիր հարիւր- եակ), Հնչակեաններ եւ վերջին տարումս «անարխիստ- ներ» կոչուածների մի խմբակ: — Այս կուսակցութիւն- ների մէջ ամէնից շատ տարածուածը եւ համեմատա- բար ուժեղը Սոցիալ դեմոկրատիան է, որի հետ թէ եւ մենք աշխատել ենք գործնական խնդիրներում համե-

րաչիս գործակցելու, բայց այդ շատ քիչ անգամ է յաջո- ղել: Սկզբներում, օրինակ 904 թուին, նրանք համեմա- տաբար աւելի տանելի վերաբերմունք էին արտայայ- տում դէպի Դաշնակցութիւնը, իսկ վերջին տարին կա- տարեալ թշնամական դիրք են բռնել դէպի մեզ: Դաշ- նակցութիւնը որչափ աւելի ուժեղանում եւ ժողովրդա- կանութիւն ձեռք բերում կամ նրա գործունէութեան եւ ուղղութեան մէջ որչափ աւելի էին տեսնում սոցիալիս- տական ոգի, այնքան աւելի էին թշնամանում: Բայց ընդհանուր առմամբ՝ նրանք իրենց փոխադարձ յարա- բերութիւնների մէջ դէպի մեզ երբեք անկեղծ չեն եղել: Մի ձգտումն նրանց մէջ բոլոր հանգամանքներում շատ պարզ կերպով արտայայտուել է — շահագործել Դաշ- նակցութիւնը ինչպէս եւ ինչ պայմաններում էլ լինի: Այսպէս օրինակ 905 թ. հոկտեմբերեան դէպքերին հար- կաւոր համարուեց կուսակցութիւններից մի ժամանա- կաւոր խորհուրդ կազմել, խորհուրդակցելու թէ սպաս- ւելիք դէպքերի դիմաց ինչ ուղղութեամբ գործեն: Դեռ ոչ մի գործի չձեռնարկած՝ նրանք պատճառաբանելով որ իրանց ուժերը զինելու գումար չունին՝ առաջարկե- ցին մեզ, որ մեզնից մէկը իրանց հետ միասին ման գան փող հաւաքելու: Երբ խնդրեցինք ցուցակը այն անձերի, որոնց դիմելու են — նրանք ներկայացրին մի ցուցակ, որի մէջ հայերը բռնում էին գրեթէ 70%: Մենք չհամա- ձայնեցինք, որովհետեւ այդ միեւնոյն հայերից նոր ար- դէն ստացել էինք եւ էլի շարունակում էինք ստանալ. առաջարկեցինք, որ իրանք առանց մեզ դիմեն հանգա- նակութեան: Նրանք յայտնեցին, որ առանց մեզ չեն ձեռնարկել հանգանակութեան, որովհետեւ ոչինչ յաջո- ղութիւն չեն ունենալ: — 905 Հոկտեմբերի այն պայման- ներում, երբ ամէն բոլոր սպասուում էր խուլիգանական արշաւանք, Ս. դ[եմոկրատ]-ները ժողովրդական մի- տինգ էին նշանակել եւ գործադուլ յայտարարել: — մենք այդ բանին հակառակ էինք, որովհետեւ փաստերը ար- դէն պարզ ապացուցել էին, որ ամէն սլաք, ամէն գնդակ ուղղուած էր լինում հային. կոտորուողը միայն հայն էր լինում, հրդեհուող եւ թալանուողը՝ հայի տնե- րը: Մենք յայտարարեցինք հայ ազգաբնակչութեան — մանաւանդ մեր խմբերին՝ չմասնակցել. եւ նրանց մը- տադրութիւնը վիժեց: Յետոյ իմացանք, որ նրանք դե- կավարուել են այս մտքով: — Եթէ խառնակութիւն ա- ռաջ բերեն եւ զօրքերը միջամտեն, դաշնակցականները ուզեն-չուզեն պէտք է իրանց զինուորներին դուրս բերեն

10.- Գարցը կը վերաբերի կուսակցական հրատարակու- թիւններու եւ յատկապէս «Դրօշակ»ի Ատրպատական (Վրէժս- տան) Կովկաս գաղտնի փոխադրութեան:

11.- Պարսկական Ատրպատական:

12.- Պարսկական Ատրպատական Կովկաս՝ հրատարա- կութեանց անցումի կէտեր:

13.- Ապառաժը Դարաբաղը է, ժլատը՝ Դիւս. Կովկաս, Նալ- բանտը՝ Նոր Նախիջեւան:

եւ կռուեն: Դա կը լինի մի յեղափոխական ակտ, որին եւ նրանք ձգտում էին հասնել մեր արիւնով, մեր ուժերով:

905 թ. — մի քանի ամիս առաջ, Ս. դեմոկրատները, որ մի քանի ժամանակից ի վեր սկսել էին կարծել թէ ողջ Ռուսաստանում միայն մի կուսակցութիւն կայ եւ բոլոր միւս կուսակցութիւնները գոյութիւնը պարզապէս արհամարհում էին, տիկտատորական պարզ մի հակումն արտայայտեցին: Յայտարարեցին ընդհանուր քաղաքական գործադուլ առանց մեզ հետ խորհրդակցելու այն առթիւ, որ Նոբելի եւ Ռոտշիլտի բանուորներին քշում էին Ռուսաստան: Միանգամ ընդ միշտ դժբանց դիկտատորական ձգտումներին վերջ տալու համար — որոշեցինք դրանց դաս տալ: մեր խմբերին յայտարարեցինք, որ այդ գործադուլին Դաշնակցութիւնը չէ մասնակցելու (ասենք ժամանակ էլ չէր մնացել որեւէ մի կարգադրութիւն անելու նոյնիսկ այն դէպքում, եթէ ուզէինք դուրս գալ): Հետեւեալ օրը նրանք խայտառակութիւն չունեցաւ: Այդ բանից նրանք խիստ կատաղեցին, բայց մի շաբաթից յետոյ՝ ստիպուած եղան գալ եւ պաշտօնապէս դիմել մեզ եւ խորհրդակցել մի նոր քաղաքական գործադուլ առաջ բերելու Հոկտեմբերի դէպքերին բռնուած նաւաստիների համար, որոնց պէտք է գինուորական-դաշտային դատարանի յանձնէին: Եւ գործադուլը հիանալի կերպով յաջողուեց: Տպաւորութիւնը տեղական կառավարութեան վրայ [մեծ էր]:

Մի կամ երկու անգամ միասին թուղցիկներ ենք յայտարարել, որի տակ ստորագրել են նաեւ միւս կուսակցութիւնները: — Վերջին մեր թուղցիկով, միջ-կուսակցական դատի ենք կանչում Ս. դեմոկրատներին, նրանց վիժեցրած գործադուլի համար:

Մի քանի խօսք նաեւ միւս կուսակցութիւնների մասին: Սոցիալ դեմոկրատների հայ եւ թուրք Ֆրակցիաները (Հիւմմէթ), Սոցիալ ռեվոլյուցիոնէրներ, թուրքական իտտիֆազը (Կարմիր հարիւրեակ), Հնչակեաններ եւ անարխիստներ:

Ընկերական կամ միջնորդ դատարան.- դատավարութիւնը մեր շրջանում սկզբից հէնց չենք ընդունել, իսկ Ռայոնական ժողովի որոշումից յետոյ, պաշտօնապէս յայտարարել ենք. չնայած դրան՝ գաւառում, գանազան տեղերում դատավարութիւնը գոյութիւն է ունեցել: — Մենք աշխատել ենք տարածել ընկերական կամ միջնորդ դատարանի սկզբունքը, որ գործարանային շրջանում աւելի հող է գտնում, քան գաւառներում:

Կազմակերպական դատավարութիւն տեղի է ունեցել մի

- 1) Խմբապետի եւ նրա օգնական գինուորի (գողութիւն — բ. երկու Բալաբէգ).
- 2) Մի խմբապետի, որ իւր գինուորին է սպանել Գիրք

գիւղում (Յովակիմ).

- 3) Ա. կոմիտէի գանձապահին, որի վրայ 2.400 ռ. փող է մնացել:
- 4) Դուման ենթակոմիտէի երկու անդամի վերաբերութեամբ, որոնք հրաժարեցուած էին կոմիտէից:
- 5) Վահէի դէպքը (Շրջան. ժողովից նրա պատգամաւորութեան մերժուելը):

Տեղոր.-

1) Իշխան Նակաշիճէի, հայ-թուրքական ընդհարումների համար առանձին եռանդով աշխատող պրոպագանդիստներին: Գրաւոր յայտարարուած:

2) Ահարոնեան, պատրաստի շորերի խանութպան, որ սրիկաներից մի խմբակ կազմած՝ Դաշնակցութեան անունով փողեր էր հաւաքում (գրաւոր դիմումներ անելով): Անյաջող անցաւ՝ վիրաւորուեց, բայց կրկին առողջացաւ: Գրաւոր յայտարարուած:

3) Ռուսական բանակի մի հայ գինուոր, որ անդրկասպիան երկրում մատնել էր մեր տղաներին գէնք դուրս բերելու եւ որոնք այդ մատնութեամբ բռնուեցին թէ իրանք, թէ գէնքերը:

4) Մի ժանտարմ, որ կայարանում բռնել էր տալիս մեր գէնքերը (յայտարարուած է):

5) Ոստիկանապետի օգնական ազնետի<sup>14</sup>, որ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ հրէջի դեր էր խաղում: Այրուող տան մէջ գտնուող հայերին (երեխաներով եւ կանանցով) արգելում էր իր ոստիկաններով դուրս գալու: Պատահական կերպով խառնուում է գործի մէջ եւ ազատում թշուառներին (27 հոգի կարծեմ): Կատարողը Կարմիր հարիւրեակից էր, որ եւ յայտարարել են իրանց անունով:

6) Սոցիալ ռեվոլյուցիոնէրների մէջ խաբեբայութեամբ իբրեւ յեղափոխական մտած Պետրովին, որի մատնութեամբ բռնուեցին եւ ոչ միայն ռուս յեղափոխականներ, այլեւ Մ. Ք. -ի<sup>15</sup> մեր ընկերներից մէկը: — Սոցիալ ռեվոլյուցիոնէրների խնդրանք — աջակցել նրանց այդ գործում — մեր տեւորիստները ակտը կատարեցին՝ բայց նրանք յայտարարեցին իբրեւ իրանցը՝ մեր համաձայնութեամբ:

7) Մի փորձ № 1 լրտեսին ահաբեկելու, որ անյաջող անցաւ. չվիրաւորուեց նոյնիսկ:

\* \* \*

Վերջացնում եմ տեղեկագիրս հետեւեալ փոքրիկ նկատողութեամբ: Թէ ժողովներում եւ թէ դուրսը —

14.- Գործակալ:  
15.- Թիֆլիս:

ընկերները լրջութեամբ թէ կատակով նկատողութիւն են արել այն երեւոյթի առթիւ, որ Կովկասից եկած պատգամաւորները իրանց տեղեկագիրը պատրաստ չեն բերել եւ այստեղ են գրում եւ դրա մէջ ընկերները շատ իրաւացի կարպով գտնում են որոշ անպատեհութիւն եւ անյարմարութիւն: Այստեղ շուտափոյթ կազմուած տեղեկագրերը լինում են բնական կերպով շատ թերի եւ զուրկ բաւական հակա մանրամասնութիւններից, որոնք կարեւոր են մի տեղեկագրի մէջ, որոշ շրջանի մասին մի պարզ գաղափար կազմելու համար: — Այս տարի մեր Բիւրոն [Ընդհանուր] ժողովին քննուելիք հարցերի ցուցակը ուղարկելով իւր մարմիններին, չէ պարտաւորեցնում գրաւոր տեղեկագիր ներկայացնելը, այլ գրում է, որ ցանկալի է այդպէս անել: — Այդ պատճառով էլ Ոսկանապատը բաւականացել է միայն Շրջանային ժողովի արձանագրութիւնները ուղարկելով՝ Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար:

Ուստի եւ կարեւոր եմ համարում, որ մեր ներկայ ժողովը այժմեանից պարտաւորութիւն դնի դաշնակցական մարմինների վրայ ամէն մի Ընդհանուր ժողովին գրաւոր տեղեկագիր ներկայացնելու: Մտցնել կուսակցութեան մէջ այդ պահանջը եւ եթէ կը լինեն մարմիններ, որոնք անփոյթ կը գտնուեն այդ պահանջի առաջ, նրանց կողմից եկած պատգամաւորներին զրկել Ընդհանուր ժողովում ձայնի իրաւունքից, թողնելով նրանց միայն խորհրդակցական իրաւունք:

ԶՈՓՈՒՌԵԱՆ<sup>16</sup>

Կազմուած է Ընդհանուր ժողովի ժամանակ, Վիեննայում: (Շարունակութիւնը տես 40րդ երեսից):

Կազմալուծուած մարմինների մասին.-

906 թ. Կենտրոնական Կոմիտէն հարկադրուած է եղել իւր մարմիններից երկուսին կազմալուծուած յայտարարել:

1) Դուման ենթակոմիտէն եւ 2) Քաղաքի կոմիտէն: Առաջինը նրա համար, որ Ոսկանապատի Շրջանային ժողովի որոշման հակառակուեց. իսկ երկրորդը, որովհետեւ անդամներից մէկի զեղծման պատճառով միւսները հրաժարական տուեցին: — Երկու դէպքի մասին էլ մանրամասն տեղեկութիւններ կարող եմ տալ, եթէ ժողովի համար հետաքրքիր է: (Դուման ենթակոմիտէն ուղարկել էր Շրջանային ժողովին երկու պատգամաւոր. դրանցից մէկը Վահէն էր, որ ժողովից մերժուեց իբրեւ պատգամաւոր ընտրուելը: — Որոշուեց նրա փոխարէն ուրիշ մարդ ընտրել. տեղական ենթակոմիտէն ընդդիմացաւ եւ խանգարեց դրան: — Գանձապահ Ուտիսի հաշիւների քննութիւնից երեւաց որ 2.400 ռ. է պակասում:

Սեր բանուորները.-

Մեզ մօտ եւրոպական մտքով պրոլետարիատ<sup>17</sup> գոյութիւն չունի կամ համարեա գոյութիւն չունի: Հայ բանուորը թէկուզ շատ չնչին, բայց անպատճառ մի կտոր հող կամ խրճիթ ունի գաւառում, որի հետ կապուած է նա: Եւ այդ է պատճառը, որ բանուորութեան ահագին մեծամասնութիւնը գործարաններում կամ նաւթահանքերում ամբողջ տարին չէ բոլորում. գարնանային կամ ամառնային աշխատանքները վերսկսուելուց՝ նրանց մեծամասնութիւնը վերադառնում է գիւղը՝ դաշտային աշխատանքներին մասնակցելու, բացառութեամբ այն տարրի, որը իւր բացակայ աշխատաւորի օգնութեան կարիք չի գգում: Այս միջանկեալ ծանօթութիւնը կարեւոր էր տալ հետեւեալ եզակի, բայց բնորոշ փաստը հասկնալու համար: 905 թ. Բալխանի Միրզոյեանների նաւթահանքերի երկաթէ խողովակներ պատրաստող արհեստանոցում բանուորները գործադուլ արեցին: Պատճառը այս էր: Արհեստանոցը իւր բոլոր գործիքներով նաւթահանքերի վարչութեան սեփականութիւնն է կազմում: Ամէն ամիս նաւթահանքերին համար հարկաւոր են մեծ քանակութեան երկաթէ խողովակներ. դրանց պատրաստելու համար նաւթահանքերի վարչութիւնը պայմանաւորուած է մի քոնթրաքթով<sup>18</sup> հետ՝ իւրաքանչիւր պատրաստած խողովակի համար պարտաւորուելով վճարել որոշեալ գինը: Այնուհետեւ նաւթահանքի վարչութիւնը այլեւս գործ չունի, թէ իւր արհեստանոցում քանի հոգի են բանում, ինչ աշխատավարձ են ստանում, քանի ժամ են գործում եւ այլն: Նա պահանջում է իրեն հարկաւոր խողովակների քանակութիւնը միայն որոշեալ ժամանակին տալ: Բայց գործի այդ կերպ դրուած լինելուց բանուորները ահագին նիւթական կորուստ էին ունենում: Բանուորի ձեռքով պատրաստուած իւրաքանչիւր խողովակի համար քոնթրաքթին նաւթահանքերի վարչութիւնից տեղում ստանում է 2 ռուբլի, բայց բանուորին վճարում է 1 ռ. 20 կ., մինչեւ 1 ռ. 50 կ.:

Բանուորները պահանջեցին որ քոնթրաքթին մէջտեղից վերցուի եւ իրանք վարձուին ուղղակի վարչութիւնից: Ըստ երեւոյթի վարչութեան համար էլ այդ ձեւը ընտրու ակտի նկատուէր, որովհետեւ բանուորները համաձայն էին ստանալ քոնթրաքթու ստացածից մի քիչ աւելի կամ գրեթէ նոյնքան, միայն թէ գործ չունենային քոնթրաքթու հետ: Բայց այդ միայն արտաքուստ է այդպէս երեւում. վարչութիւնը գիտէ, որ եթէ բանուորը քոնթրաքթու հետ է կապուած, ինքը նրա հիւանդու-

16.- Լեւոն Թադեւսեան, այլապէս ծանօթ «Պապաշա» անունով (Քրիստափորի քրոջ որդին). Բագուի Կ. Կ.ի Գերկայացուցիչն էր Վիեննայի (4րդ.) Ընդհանուր ժողովին:  
17.- Բանուորութիւն, բանուորական դասակարգ:  
18.- Կապալառու:

Թեան, վնասուելու կամ մահուան դէպքերում ոչինչ գործ չունի նրա հետ: Բացի այդ՝ պայմանին համաձայնելով՝ նա պէտք է արհեստանոցի համար նոր վարչութիւն նշանակի եւ ուրեմն նոր ծախսեր՝ այսպիսով միջին հաշուով իւրաքանչիւր խողովակի պատրաստելը իրան պիտի նստի եթէ ոչ աւելի թանգ, գուցէ դարձեալ նոյնը, միայն աւելորդ գլխացաւանք իրա վրայ ընդունելով: Ահա այս իսկ պատճառներով՝ նախահանգի վարչութիւնը մերժում է բանուորների պահանջը եւ առաջարկում, որ բանուորները միանան եւ իրանցից մի մարմին կազմելով, ինչպէս մի արտել, արհեստանոցը վերցնեն իրանց այն պայմանով, որ ժամանակի ընթացքում դարձնեն իրանց սեփականութիւնը: Մի փոքրիկ նմուշ կոլլեկտիվիստական ձեռնարկի, որի վրայ, ի տեղ է ասել, մենք բոլորովին ուշադրութիւն չենք դարձրել, բայց որը ըստ իս մեր ապագայ գործունէութեան մէջ հարկաւոր է որ մեծ տեղ գրակէ:

Բանուորները երկար ու բարակ խորհրդածութիւնից յետոյ մերժած են: Այդ գործադուլը վիժեց առանց մի հետեւանքի (կարծեմ չնչին յաւելումն արեց քոնթրաթիւն իւրաքանչիւր շինած խողովակի վարկագնի վրայ): Նոյնը կրկնուեց այս տարի — աւելի մեծ չափերով՝ ինչ հետեւանքներ է ունեցել — ես չգիտեմ՝ գործադուլը դեռ շարունակուե՞լ էր:

Խմբերի եւ ցրանց մէջ մասնակցողների քիււ-

|                                   |                   |
|-----------------------------------|-------------------|
| Քաղաքում 35 խումբ                 | 360 հոգի          |
| Քաղաքում 6 արհեստակցական միութիւն | 600 հոգի          |
| Եղել է 195 խումբ                  | 1600 հոգի         |
| Բալախանի 40 խումբ                 | 800 հոգի          |
| Եղել է 80 խումբ                   | 1500 հոգի         |
| Բ. էյբաթ                          | 36 խումբ 900 հոգի |
| Սեւ քաղաք                         | 25 խումբ 350 հոգի |
| Եղել է 35 խումբ                   | 600 հոգի          |
| Պահակ                             | 20 խումբ 200 հոգի |
| Անդրապատ                          | 25 խումբ 250 հոգի |
| Տաշկենտ                           | 17 խումբ 250 հոգի |
| Մերվ                              | 8 խումբ 75 հոգի   |
| Սամարխանտ                         | 9 խումբ 125 հոգի  |
| Անտիժան                           | 10 խումբ 150 հոգի |
| Կրասնով[ոդսկ]                     | 8 խումբ 100 հոգի  |
| Դերբենտ                           | 5 խումբ 50 հոգի   |
| Գէօկչայ                           | 6 խումբ 7 հոգի    |
| Չաքաթ[ալա]                        | 5 խումբ 45 հոգի   |
| Շամախի                            | 7 խումբ 100 հոգի  |
| Աստրախան                          | 7 խումբ 65 հոգի   |

Ղզլ-արվատ 2 խումբ 20 հոգի  
Մօտ 285 խումբ,  
6 արհեստակցական միութիւն — 4510 հոգի

Գործաւորական շրջան

Կենտր. Կոմ. 2 բժիշկ  
2 ուսուցիչ  
3 ինտելիգենտ ծառայող

Քաղաքի կոմիտեի եւ Ենթակոմիտեներ  
7 գործակատար 5 բանուոր  
1 առամնաբոյժ 1 արհեստանոցի տէր  
1 լուսանկարիչ 1 ուսուցիչ  
1 ուսանող 1 առեւտրական  
4 արհեստաւոր 1 գործարանատէր

Բալախ[անի] կոմիտեի եւ Ենթակոմիտեներ  
2 բանուոր  
7 արհեստաւոր  
8 գործակատար

Սեւ քաղաք  
1 արհեստաւոր  
2 գործակատար  
2 ինտելիգենտ ծառայող

Դուման Ենթակոմիտե  
Պահակ  
1 գործակատար  
2 արհեստաւոր  
2 ուսուցիչ  
1 գործակատար  
1 գրաշար  
1 բանուոր

Գումար 60, որից 45ը աշխատաւոր դասից է, 11ը՝ ազատ պրոֆ[եսիայի] կամ ինտելիգենտ ուժերից եւ 4-ը շահագործող դասակարգից, կամ եթէ արտայայտենք տոկոսով՝ աշխատաւոր դաս 75%, ինտելիգենտ 17%, եւ շահագործող 8%:

Գաւառական շրջան

Ծաղկաձոր  
Անարատ  
2 հողագործ  
1 արհեստաւոր  
1 վարժուհի  
1 տիկին (հին գործիչ)  
2 վաճառական

1 գիւղական կալուածատէր  
2 գործակատար  
1 վաճառական  
1 կալուածատէր  
2 վաճառական  
1 ուսուցիչ  
1 գիւղ. կալուածատէր  
1 ուսուցիչ  
1 քահանայ  
1 գիւղացի

Գումար 19 հոգի, որից 6 հոգի աշխատաւոր դասակարգից, 9 հոգի շահագործող դասակարգից եւ 4 հոգի ինտելիգենտներ. կամ տոկոսներով՝ 1) 31.6% 2) 47.3% 3) 21.1%:

Անորկասպեան կամ հեռաւոր շրջան

Անդրաբաղ  
7 տիկին, 1 հիւրանոցատէր  
1 արհեստա[նոցի] գործարանատէր  
7 գործակատար

Դեթում  
1 արհեստանոցի տէր  
1 կապալառու  
1 խոշոր վաճառական  
1 գործակատար  
1 կապիտալիստ

Քանդուած քաղաք  
1 գիւղատնտես  
1 կառավար.  
3 մանր առեւտրական

Կարմիր ջուր  
1 կապալառու  
2 կոնտրատի  
1 կառավարիչ  
2 գործակատար

Ծառաստան  
1 քահանայ  
1 գործարանատէր  
1 կառավարիչ  
2 գործակատար

Բանրակ (Ձարջոու)  
Լան մաղ (Մարգ[ելան])  
Ոսկեմայր  
Փաքար[?]

3 առեւտրական  
3 առեւտրական  
1 ուսուցիչ  
1 քահանայ  
1 վաճառական  
3 վաճառական  
1 ուսուցիչ  
1 գործակատար

Գումար՝ 44 հոգի, որից 14 հոգի աշխատաւոր դասից (31.8%), 26 հոգի շահագործող դասից կամ 59% եւ 4 հոգի կամ 9.2% ինտելիգենտները:

Այս թուերը մեր կարծիքով խիստ խրատական են: Հարստահարուող, շահագործուող ժողովրդի, աշխատաւոր մասսայի շահերը պաշտպանող մի կուսակցութեան պաշտօնական մարմինների 31.2%-ը կամ համարեա մի երրորդը կազմուած է այն տարրերից, որի դէմ նա կուռում է յանուն ժողովրդի շահերի: — Երեւոյթը ինքն ըստ ինքեան խիստ անմխիթարական է մեր կուսակցութեան համար: Եթէ նոյնանման վիճակագրական տեղեկութիւններ ունենայինք մեր միւս կենտ. Կոմիտէների շրջաններից — եւ որ գլխաւորն է — ներկայացուէին ամէն անգամ ընդհանուր ժողովին, մեզ համար հեշտ կը լինէր եզրակացնել, թէ որպիսի արագութեամբ կամ ինչ քայլով շահագործող դասակարգի ներկայացուցիչները նուազում են մեր վարչական մարմիններից: Դաշնակցական տարրի գիտակցութեան զարգացման նշանացոյցերից մէկն էլ այդ կը լինէր:

*Գործարար*  
ՉՈՓՈՒՌԵԱՆ





## Ա 2.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ IV ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

(Պատրճէն Ընդհանուր Ժողովին)

Ա. Նիստ Նոյեմբերի 13, 1906 թ.

Ոսկանապատի Կենտր. Կոմ.ի շրջանում գտնուող կոմիտէների եւ կոմիտէական իրաւունք վայելող ենթակոմիտէների ընդհանուր թիւ կազմող քսան շրջանից ներկայ էին միայն տասը շրջանից տասներկու պատգամաւոր:

Ժողովը բացուեց նախագահութեամբ Կենտր. Կոմիտէի անդամ ընկեր Չոփուռեանի — քարտուղար՝ Թորոս: Պատգամաւորների լիազօրութիւնների քննութեանը անցնելով կարգացուեց ամէն մէկի ներկայացրած փաստաթղթերը: Այդ վաւերացրեց երեւաց, որ մի քանի տեղերի ընտրութիւնները կատարուել էին ո՛չ թէ տեղական դաշնակցականների կողմից, նրանց թուի համեմատութեամբ, այլ մարմինների կողմից: Ուստի ընկերներն առաջարկեցին որ նախ որոշուի թէ՛ այն տեղերում, ուր տեղական եւ քաղաքական պայմանների շնորհիւ անհնար է եղել դաշնակցական անդամներին համախմբելը եւ ընտրութիւն կատարելը, պէ՛տք է մարմինների կողմից կատարուած ընտրութիւնները ընդունել, եւ երկրորդ՝ եթէ նոյնիսկ մարմիններից ոմանք իրենց գոյութեան raison d'être-ը<sup>19</sup> կորցրել են, հարկաւոր է նրանց ընտրութիւնները միւսների շարքում վաւերական համարել: Այդ մասին թեր եւ դէմ առարկութիւններից յետոյ, ժողովը ընդունեց ընկեր Ն.ի առաջարկը: Տեղական ճշտող պայմանները ի նկատի ունենալ եւ ըստ այնմ հաշտեցնել օրէնքի ոգոյն հետ եւ որպէսզի այդ հնարաւոր լինի անել, ամէն մի պատգամաւորի համար առանձին որոշում կայացնել, հիմնուելով վաւերացրեցի եւ պատգամաւորի տուած բերանացի բացատրութիւնների վրայ: Ուստի ժողովը անցաւ առանձին-առանձին քննութեան: Լսելով «Անարատ»<sup>20</sup> պատգամաւորի բերանացի բացատրութիւնը, որ այնտեղ 70ից աւել դաշնակցական անդամներ չկան եւ թէ այդ թիւը չի համապատասխանում Բիւրոյի շրջաբերականում յիշուած 100 նուազագոյն թուին, 2 ձայնի դէմ 5 ձայնով որոշեց նրան խորհրդակցական ձայն տալ:

«Կարմիր-ժայռ»ի կողմից ոչ մի ընտրական վաւերացրեցի չկար, միայն մի հեռագիր կար որով առաջարկուում էր ընկեր Չոփուռեանի ներկայացուցիչ լինել: Ընկեր Չոփուռեանը յայտնեց, որ այնտեղ 100 նուազագոյն դաշնակցականների թիւ չկայ, ուստի ժողովը մերժեց նրա պատգամաւորութիւնը: «II Կոմիտէի» շրջանի երկու պատգամաւորների ընտրութիւնը աւելի քան 800 դաշնակցական անդամներ ներկայացնող 32 խմբերի ներկայացուցիչների կողմից կատարուած լինելը ստուգելով, օրինական համարուեց նրանց ընտրութիւնը: Նոյնպէս «Պահակ»ի պատգամաւորի ընտրութիւնը մօտ 200 դաշնակցական անդամները ներկայացնող 25 ներկայացուցիչների կողմից ընտրուած լինելը ստուգեց եւ վաւերացուեց: «I Կոմիտէի» շրջանի երկու պատգամաւորների ընտրութիւնը կատարուած լինելով 4 ենթակոմիտէի անդամների, 59 խմբապետների եւ արհեստակցական միութիւնների բիւրոների կողմից, որոնք ներկայացնում են աւելի քան 800 անդամ, վաւերական համարուեց: «Ճաղկածոր»ի պատգամաւորը ընտրուել է միայն մի խմբի կողմից որի անդամների թիւը նուազագոյն օրինական թուին համապատասխան չէ: Պատգամաւորը ասում է որ իւր շրջանում համախմբում կատարել անհնար էր բազմաթիւ մատնութիւնների շնորհիւ, վստահութիւնը վերացել է միմիանց վերաբերմամբ: Ժողովը 2ի դէմ 7 ձայնով խորհրդակցական ձայն տուաւ նրան: Թէեւ «Քանդուած քաղաք»ի ներկայացուցիչի վկայաթղթի բովանդակութիւնը միայն տեղա-

19.- Բնագրին մէջ ֆրանսերէն. - գոյութեան իմաստը:  
20.- Դժուար է առանձին առանձին եւ ճշգրտօրէն տեղադրել արձանագրութեան մէջ կուսակցական ծածկանունով յիշատակուած այս վայրերը: Որոշ կերպով կարելի է ըսել, որ I, II եւ III կոմիտէները կը գտնուէին Ոսկանապատի կեդրոն Պաքուի շրջանին մէջ, Վարանդա՝ Ղարաբաղի, իսկ Անդրապատը, Փախտան, Կարմիր Ձուրը, Բամբակը, Լան-Մաղը, Ոսկեմայրը, Պաշարուած Քաղաքը, Օտոսաստանը, Գեթուստանը եւ Սահմանաբերող Անդրկասպեան (այժմու թուրքմենիստանի եւ Ուզպէկստանի) տարածքներու: Գործող կոմիտէները եւ ենթակոմիտէները էին:

Բ. Նիստ Նոյեմբեր 14ին, 1906 թ.

կան մարմնի կողմից էր, բայց լսելով պատգամաւորի բացատրութիւնը եւ վկայութիւնը՝ թէ ընտրութիւնը կատարուել է 150 անդամ ունեցող 34 ներկայացուցիչների կողմից, ժողովը 3ի դէմ 5 ձայնով որոշեց ընդունել նրա պատգամաւորութիւնը վճռողական ձայնով: «III Կոմիտէի» վաւերացրեց օրինական լինելով միաձայն վաւերացուեց: «Նախատակ»ի շրջանինը նոյնպէս: Վերջացնելով լիազօրութիւնների քննութիւնը եւ վաւերացումը, երեւաց որ միայն 9 վճռող ձայնով պատգամաւոր կայ, որը պակաս է օրինական թուից: Բայց որովհետեւ ժողովը հրաւիրուած էր Հոկտեմբեր 28ին եւ պատգամաւորների չգալու պատճառով յետաձգուած Նոյեմբեր 10ին, որոշուեց այդ թիւը օրինական եւ ժողովը բացուած համարել: Ապա ընկեր Ն. հարց է դնում, թէ կարո՞ղ են ժողովին մասնակցել խորհրդակցական ձայնով դրսի ընկերներ կամ մարմինների անդամներ եւ ուրիշ գործիչներ: Պատգամաւորներից ոմանք ցանկալի են համարում թոյլատրել այդպիսիներին: Բայց ընկեր Ն. հիմնուելով Կենտ. Կոմիտէի այս մասին ունեցած հայեացքների վրայ՝ բացատրում է: Նախ որ առաջնորդում պատգամաւորի ընտրութիւնը կատարուում էր միայն մարմինների կողմից առանց ժողովներ անելու, իսկ այժմ բոլոր հարցերը ոչ միայն ծանօթ են մարմիններին, այլ եւ մարմնի շրջանին: Երկրորդ՝ հարցերի մասին պատգամաւորը պիտի յայտնէ ոչ թէ իր, այլ իր շրջանի կարծիքները, գոնէ տեսականապէս այդպէս ենք ընդունում: Առաջ պատգամաւորի անձնական կարծիքներով չսահմանափակուելու համար հրաւիրում էին կողմնակի ընկերներ, իսկ այժմ այդ անհրաժեշտութիւնը տեսականապէս գոյութիւն չունի: Երրորդ՝ խտրութիւն դնել ցանկացողների մէջ եւ որոշել թէ ով նրանցից իրաւունք ունի մասնակցելու՝ անհնար է, որովհետեւ այդ դժգոհութիւն կ'առաջացնի: Չորրորդ՝ խտրութիւն չդնելով՝ այնպիսի մի բազմութիւն կը հաւաքուի, որ ժողովի զբաղմունքները եւ գոյութիւնը կը վտանգուեն: Միայն թէ ցանկալի լինելով կարելու հարցերում ձեռնհաս ընկերների կարծիքը լսել, կարելի է հետեւել Ընդհանուր ժողովի յատուկ կանոնադրութեանը եւ ամէն մի հարցի համար առանձին որոշում կայացնել հրաւիրելիք ընկերների վերաբերմամբ: Ժողովը փակուեց, որոշելով օրակարգի վերաբերմամբ առաջնորդուել Բիւրոյի հարցացուցակով:

Ներկայ էին 9 պատգամաւոր: Նահատակի պատգամաւորը կանչուած լինելով իր շրջանից կարելու գործով՝ բացակայ էր: Ներկայ էր եւ մի պատգամաւոր խորհրդակցական ձայնով: Նիստը բացուեց նախագահութեամբ ընկեր Չոփուռեանի եւ քարտուղարութեամբ Թորոսի:

Պատգամաւորներից մէկը հարց է տալիս թէ ինչո՞ւ «Դուսան» ենթակոմիտէի պատգամաւորները ներկայ չեն: մի՞թէ նրանք ընտրուած չեն: Նախագահը բացատրում է որ զեկուցումը ընտրութեան վերաբերմամբ ստացուած է ժողովից միայն քիչ առաջ եւ հետեւապէս անհնար էր ընտրուած պատգամաւորներին այս ժողովին հրաւիրել: բացի այդ ունեցած տեղեկութիւններից երեւում է, որ ընտրութիւնների մէջ անկանոնութիւն է տեղի ունեցել: Ժողովը թեր ու դէմ կարծիքներից յետոյ որոշում է հետեւեալ նիստին հրաւիրել նրանց եւ քննել նրանց լիազօրութիւնները: Ժողովը անցնում է օրակարգի հարցերին: Ժողովի զբաղմունքի առարկան է հարցացուցակի առաջին գլուխը «Տեղեկագիր մարմինների»: Կարծիքների փոխանակութիւնից պարզուում է, որ պատգամաւորներից շատերը չեն բերած իրանց մարմինների ոչ գրաւոր եւ ոչ էլ բերանացի տեղեկագիրը:— Ժողովը որոշում է՝ այն պատգամաւորները, որոնք չեն բերած իրենց մարմինների տեղեկագիրը, կարող են իրենց անձնական տպաւորութիւնների եւ տեղեկութիւնների վրայ հիմնուած տեղեկագիր ներկայացնել բերանացի: միաժամանակ ժողովը պարտաւորեցնում է Կենտր. Կոմիտէին դիմել շրջանի մարմիններին եւ խնդրել նրանց իրանց պաշտօնական գրաւոր տեղեկագիրը հասցնել Շրջանային ժողովին: Ուստի քննում է մարմինների տեղեկագրի Ա. կէտը:

1) «Ժողովրդի տնտեսական կացութիւնը եւ նրա անդրադարձումը յեղափոխական շարժումների վրայ»: II շրջանի կոմիտէի 2 պատգամաւորների զեկուցումներից երեւաց, որ շրջանի տնտեսութիւնը տագնապալից դրութեան մէջ է գտնուում, որ հետեւանք է ոչ թէ այդ շրջանի պայմանների, այլ ուրիշ շրջանների տնտեսութեան քայքայման: Յեղափոխութիւնը եւ դասակարգային կռիւը հնարաւորութիւն տուին այդ շրջանների բանուորներին իրենց տնտեսական դրութիւնը մեծ չափերով բարելաւելու: բայց շնորհիւ հայ-թուրքական ընդհարումների՝ հայ զիւղացիութեան տնտեսութիւնը քայքայուեց եւ ահա բանուորները ստիպուում են մեծ չափերով օգնել իրենց ընտանիքներին գիւղում, որոնք նրանց են սպասում իրենց փրկութիւնը: միւս կողմից նոյն հայ-թուրքական ընդհարումները մեծ քանակութեամբ բանուոր գիւղացիներ չարտեցին արդիւնաբերական շրջանները, եւ անգործների թիւը այժմ հսկայական չափերի է հասել: Վերել յիշած 2 հանգամանքները

|                 |                          |
|-----------------|--------------------------|
| Նախագահ         | Չոփուռեան                |
| Քարտուղար       | Թորոս (I կոմ-ից)         |
| Պատգամաւորներ՝  | I կոմ-էի Լեւոնիկ         |
|                 | II կոմիտէ Սահակ, Վահան   |
|                 | III կոմ-էի շրջանից Արսէն |
| Պահակ ենթ-ի     | Կրակ                     |
| Քանդուած քաղաքի | Միքայէլ                  |
| Հիթումի         | Մելիք                    |

ստիպում են գործ ունեցող բանուորներին պինդ կպչել իրենց գործին. նրանց յեղափոխական եւ դասակարգային ձգտումները այդպիսով կաշկանդուում են: Չնայած որ նրանք իրենց տնտեսական դրուժեան քայքայման պատճառը տեսնում են կառավարութեան մէջ, այնուամենայնիւ մասսաները իրենց այդ դրուժիկներից դուրս գալու համար դեռ չեն գիտակցում պարզ կերպով յեղափոխական ճանապարհի անհրաժեշտութիւնը, ի բաց առեալ ի հարկէ գիտակից տարրերը: Մասսաները ի հարկէ Յեղափոխութեան համակողմներ են, բայց կողմնակից չեն ակտիւ մասնակցութեան, այն պատճառաբանութեամբ որ այդ իրենց զրկում է գործից: Գործադուլները նոյն պատճառներին շնորհիւ կամ համակրանք չեն գտնում բանուորների մէջ կամ կատարում են որոշ ճնշման տակ. գործատէրը զիջում է շատ անգամ ենթադրելով բռնի ուժի արտայայտութիւններ: 11 կոմիտէի պատգամաւորի զեկուցումից (անձնական) երեւաց որ ժողովուրդը վերապահութեամբ եւ արհեստաւորական եւ մանր վաճառականական շրջանները թերահաւատութեամբ են վերաբերուած դէպի Յեղափոխութիւնը, մասսան տեսնում է թէ ինչպէ՛ս իր տնտեսութիւնը արագութեամբ ընկնում է, եւ Յեղափոխութեանը մինչեւ այժմ չէ յաջողում նրան այդ դրուժիկից ազատել: Ղեկնումնաւոր ներկայացուցիչ «Մեյլըր» զեկուցանում որ աշխատաւոր ժողովրդի վերաբերմունքը դէպի յեղափոխական շարժումները համակրական են. մինչեւ շարժումները նրանց տնտեսական դրուժիկներ վատ էր, նա իրաւագուրկ էր, Յեղափոխութիւնը դուրս բերեց որոշ չափով նրան այդ դրուժիկից. նա կարողանում է այժմ դասակարգային կռիւ մղել, այդ կռիւը կազմակերպելու մէջ Դաշնակցութիւնը առաջապահի դեր կատարեց:

Քանդուած քաղաքի ներկայացուցիչի ասելով նրա շրջանի դաշնակցականները կազմում են սակաւակիւ զինուորներ, մշակներ եւ բանուորներ, բայց նրանց թիւը ընդհանուր ազգաբնակչութեան մէջ, քիչ տոկոս է կազմում: Յեղափոխութիւնը նրանց դրուժեան վրայ առանձին ազդեցութիւն չէ ունեցել, եւ նրանք էլ յեղափոխական որեւէ գործ առանձին ի հարկէ չեն կարող անել. նրանց վերաբերմունքը դէպի յեղափոխութիւնը համակրական է:

Ծաղկածորի պատգամաւորը հետեւեալ կերպ է նկարագրում իր շրջանի տնտեսական դրուժիկները: Այնտեղ քաղաքում կայ մօտ 47 մետաքսի գործարան, որոնք պատկանում են հայի կամ թուրքի: Այդտեղ բանում են 5000 բանուոր, որոնցից 500ը հայ են. ամէն հասակի եւ սեռի բանուորներ կան, որոնք ստանում են միջին թուով օրական յիսուն կոպէկ եւ աշխատում են 12-14 ժամ. շնորհիւ տգիտութեան, նրանք գոհ են իրենց դրուժիկներից եւ թուրքերը<sup>21</sup> աւելի, քան հայերը: Մասնաւորապէս հայերը չեն ցանկանում աշխատանքի ժա-

մերը քննել, վախենալով որ թուրք աւագակաբարոյ տարրը ազատ երեկոյան ժամերը գողութեամբ կը գրադուի: Հայերին առանձին կազմակերպելը յաջողութիւն չի կարող գտնել, որովհետեւ 2 տարրերի շահերը կապուած են իրար հետ, եւ հայերի թիւը չնչին է. բացի այդ, ընդհարումից վախենում են: Այդ պատճառով թէ՛ եւ հայ տարրի համակրանքը Յեղափոխութեան կողմն է, բայց առանց թուրքերի համերաշխութեան՝ ոչինչ չի կարելի անել: Վերջերս թուրքերի մէջ էլ է սկսուել դժգոհութիւն կառավարութեան դէմ, շնորհիւ նաեւնկազմակերպուած յեղափոխական կռիւ մղելու ցանկութիւնը բացակայում է. բացի այդ ինտելիգենտ ուժերը բացակայում են: Առեւտուրը սոսկալի կերպով ընկած է. աւագակութիւնը չըջակայքում անպակաս է. երբ նրանց թիւը շատանում է, գիւղերը կտրուում են քաղաքից եւ զրկոււմ ապրուստի միջոցներից եւ այդ պատճառով պահանջ են գգում մի ուժեղ զսպող ուժի: Գիւղերը համեմատաբար սակաւահող չեն, տալիս են բէկերին՝ բերքից միայն 1 կամ 2% մասը. նրանց տնտեսական դրուժիկներ վատ չէ, տները օրինակ գետնափոր չեն: Յեղափոխական տրամադրութիւն ունեն, ազգայնական զգացմունքը զարգացած է. ցանկանում են կազմակերպուել. յաճախ նրանք միայն տաճկահայերի ազատագրութիւնն են յեղափոխական գործ համարում:

1 կոմիտէի շրջանի մասին եղած զեկուցումներից երեւաց, որ աշխատաւորների տնտեսական դրուժիկները զգալապէս դէպի լաւն է գնացել շնորհիւ դասակարգային կռուի եւ Յեղափոխութեան, բայց դարձեալ շնորհիւ դրսից եկած աշխատաւոր ձեռքերի մեծ քանակութեամբ բանուորների դրուժիկներ տագնապալից է. արդիւնաբերութեան կանգ առնելու շնորհիւ մանաւանդ հայ Ֆիրմաներում բանուորներին ամէն ըստ սպառնում է գործազրկութիւն: Այդ բանը ցաւ չէ պատճառում հայ գործատէրին, որովհետեւ նրանք նայում են հայ բանուորի վրայ իբրեւ մի անհանգիստ յեղափոխական տարրի: Յեղափոխական տրամադրութիւնը գիտակից շրջաններում բարձր է: Գործադուլները որ կազմակերպոււմ է Դ.ը, յաջող ելք են ունենում: Ինչ վերաբերում է մասսաներին՝ շնորհիւ նրան, որ նրանք անգիտակից են եւ նրանց տնտեսութիւնը գիւղում ներկայումս քայքայուած դրուժեան մէջ է գտնուում, նրանք ստիպուած են աշխատանքի մասին մտածել, եւ ակտիւ յեղափոխական տրամադրութիւն չեն ցոյց տալիս. թէկուզ նրանք տեսնում են մուկ կերպով, որ կառավարութիւնն է իրանց թշուառութեան պատճառը, բայց ինքնուրոյն մտածողութեամբ չեն եկել այն համոզմունքին, որ միայն Յեղափոխութիւնը կարող է

21.- Բնագրին մէջ թիւը ձեւով. վերածած ենք թուրք-ի, ինչպէս այժմ ընդունուած է արեւելահայերէնի մէջ:

փրկել իրանց տնտեսութիւնը: Լինելով հետեւող՝ մասսան կողմնակից չէ յանդուգն գործողութիւններին, երբ լինում են միայն հայ տարրերի կողմից. նրանք կը ցանկանային յեղափոխական Ռուսաստանի միայն արձագանք լինել:

Նախագահ  
Քարտուղար  
Պատգամաւորներ՝

Չոփուռեան  
Թորոս  
Քանդուած քաղաքի՝ Միքայէլ  
III Կ.ի շրջանի՝ Արսէն  
II կոմիտէ՝ Վահան, Սահակ  
Հեթումի՝ Մելիք  
I կոմիտէ՝ Լեւոնիկ

Գ. Նիստ Նոյեմբերի 15ին. 1906 թիւ

Կայացաւ ներկայութեամբ 6 պատգամաւորների եւ 1 խորհրդատու պատգամաւորի: Բացակայ էին Պահակի պատգամաւորը եւ II կոմիտէի պատգամաւորներից մէկը: Եկել էին նոր պատգամաւորներ՝ Կարմիր-ջրի կողմից մէկը, Փախտայի շրջանից մէկը եւ Դումանի շրջանից երկուքը: Նախագահ՝ Չոփուռեան: Ժողովը անցնելով նոր ներկայացող պատգամաւորների լիազօրութիւնների քննութեանը, ստուգեց նրանց վկայաթղթերը: Հիմնուելով Կարմիր-ջրի պատգամաւորի վկայաթղթերի եւ նրա բերանացի բացատրութեան վրայ՝ որ նա ընտրուած է 8 խմբի կողմից, որոնց ընդհանուր թիւը հասնում է 58 անդամի որը օրինական նուազագոյն թիւից պակաս է, ժողովը համաձայն իւր նախկին որոշման՝ նրան տուեց խորհրդակցական ձայնի իրաւունք: Ի նկատի ունենալով որ Փախտայի պատգամաւորը նշանակուած է հեռագրով, ժողովը համաձայն իւր նախկին որոշման տուեց նրան խորհրդակցական ձայնի իրաւունք մինչեւ վաւերաթղթեր ստացուելը: Դումանի պատգամաւորի բացատրութիւնից երեւաց, որ ընտրութիւնը կայացել է 38 խմբերի պատգամաւորների կողմից եւ որ խմբերի անդամների ընդհանուր թիւը անցնում է 800ից: Պարզուեց, որ Դումանի պատգամաւորներից Վահէն՝ որ միանգամայն պաշտօնական պրոպագանդիստ է եղել, եւ միեւնոյն ժամանակ մարմնի խորհրդատու անդամը, հակառակ լինելով Տ[ահակ]հայկական դատի եւ Կովկասեան գործունէութեան մի կուսակցութեան ծրագրի մէջ մնալուն, այդ մտքով կարծիքների փոխանակութիւն է արել ոչ միայն գիտակից շրջանների մէջ, այլ եւ առիթը ներկայացած դէպքում նաեւ բանուորական խմբերի շրջանում: Նա յայտնեց. «Վերջին երեք նախընտրողական ժողովներում, որ կազմուած էր բանուորական խմբերի ներկայացուցիչներից, եւ խօսել եմ տ[ահակ]հայ եւ կովկասահայ

խնդիրների անջատման մասին: Եթէ բանուորական անգիտակից մասսաների մէջ, նոյն մտքերը եւ չեմ քարոզել, ոչ թէ նրա համար է, որ դա համարում եմ հակաժողովրդային մի քայլ, այլ որովհետեւ առիթ չեմ ունեցել: Ես կամենում եմ անկեղծ լինել. վաղը եթէ առիթը ներկայանայ, նոյն մտքերը եւ կը քարոզեմ եւ մասսաների մէջ»: Ժողովականներից շատերը նկատել էին, որ պաշտօնական դասախօսի կողմից, որ միաժամանակ ենթակոմիտէի խորհրդակից անդամ է, այդպիսի պրոպագանդը հակաժողովրդային մի քայլ է. մի ուրիշ ընկեր աւելացրեց, որ այդ առնուակը՝ կուսակցական դիսցիպլինայի հակառակ ընթացք է: Վահէն — «Այդ տեսակէտից դիսցիպլինային եւ մի առանձին նշանակութիւն չեմ տալիս»: Ժողովը առաջարկեց նրան այդ հակասական ուղղութիւնից հրաժարուել եւ անգիտակից մասսաների մէջ ինքնուրոյն եւ միակողմանի պրոպագանդ չանել: Նա մերժեց ընդունել ժողովի այդ առաջարկը: Ժողովը ի նկատի ունէր, որ թէեւ դաշնակցական անհատներ իրաւունք ունին կազմակերպութեան Մրագրի փոփոխութիւն առաջարկել Ընդհանուր Ժողովին, եւ թէեւ այդ առաջարկուելիք փոփոխութեան համար գիտակից շրջաններում թեր եւ դէմ կարծիքների փոխանակութիւն կարող են անել, բայց առաջարկուելիք ծրագրային փոփոխութիւնը նախ քան Ընդհանուր Ժողովից ընդունուելը, չեն կարող կեանքի մէջ իրագործել. իսկ պրոպագանդը մի որեւէ Մրագրի կեանքի մէջ իրագործելու աշխատանքն է: Ժողովականները այն միտքն յայտնեցին, որ մի դաշնակցական, մանաւանդ մարմնի անդամակից եւ պրոպագանդիստ, եթէ պրոպագանդիստի գործը մղում է հակառակ գոյութիւն ունեցող Մրագրի, նա ուրեմն հրաժարոււմ է այժմեանից դիսցիպլինայի եւ Մրագրի պահանջներին ենթարկուելուց, որը միեւնոյն է թէ հրաժարոււմ է կազմակերպութեան անդամակցելուց, ուրեմն նոյն կազմակերպութեան մէջ ընտրող եւ ընտրելի լինելու իրաւունքից: Այս բոլորը ի նկատի ունենալով՝ ժողովը երկուքի դէմ չորս ձայնով որոշեց բեկանել նրա ընտրութիւնը եւ նոր ընտրութիւն կայացնել տալ:

Նախագահ  
Քարտուղար  
Պատգամաւորներ՝

Չոփուռեան  
Թորոս  
Սահակ,  
Մաճկալ,  
Միքայէլ,  
Մելիք,  
Լեւոնիկ,  
Արսէն

*Չոփուռեան*  
*Թորոս*  
*Սահակ*  
*Մաճկալ*  
*Միքայէլ*  
*Մելիք*  
*Լեւոնիկ*  
*Արսէն*

բեր է դէպի սոցիալական գաղափարները: Դաշնակցականների մէջ կան անհատներ, որոնք չեն ընդունում կովկասեան նախագիծը:

Անդրապատի պատգամաւոր.- Անդրապատում գտնուող մարմինները հետեւալներն են. երկու ենթակոմիտէ կայ՝ բաղկացած 10 հոգուց, որոնք հետեւեալ պրոֆեսիաներին են պատկանում,- մէկը տիկին է, մէկը հիւրանոցատէր, իսկ մէկը՝ արհեստաւոր գործատէր, մնացած եօթը՝ գործակատարներ: Դրանցից երկուրդը եւ գործակատարներից մէկը վերընտրուած են: Կոմիտէն կազմալուծուած է: Ընտրողները կազմում են գլխաւորապէս արհեստաւորներ, գործակատարներ, բանուորներ, եւ մի աննշան թիւ մանր խանութպաններ:

III կոմիտէի պատգամաւոր.- Կոմիտէն լուծուած է. ենթակոմիտէն հինգ հոգուց է բաղկացած. մէկը արհեստաւոր, երկուքը գործակատար եւ երկուքը հսկողներ լաբորատորիայում. ընտրողները բանուորներ եւ խանութպաններ են:

Դումանի պատգամաւոր.- Ենթակոմիտէն բաղկացած է երեք հոգուց: Մէկը գործակատար, երկուքը արհեստաւոր. ընտրողները բոլորը բանուորներ են:

Չեթումեանի պատգամաւոր.- Մի ենթակոմիտէ բաղկացած հինգ հոգուց. մէկ արհեստանոցի տէր, մէկ կապալառու, մէկ խոշոր վաճառական, մէկ գործակատար, մէկ կապիտալիստ: Դաշնակցութիւնը մեծ ծաւալ ունի արհեստաւորների եւ գինուորների շրջանում:

Քանդուած քաղաքի ցերեպայտուցի.- Մի ենթակոմիտէ՝ հինգ հոգուց. մէկ գիւղատնտես, մէկ կառավարիչ, երեք մանր առեւտրականներ. Դաշնակցութիւնը ծաւալուած է գինուորների, արհեստաւորների եւ մանր վաճառականների շրջանում:

Կարմիր-ջրի պատգամաւոր.- Մէկ ենթակոմիտէ՝ հինգ հոգուց, մէկ կապալառու (խոշոր), երկու կոնտուրչիկ, մէկ կառավարիչ, մէկ գործակատար: Դաշնակցութիւնը ծաւալուած է մանր վաճառականների մէջ:

Ծառաստան.- Մէկ ենթակոմիտէ՝ հինգ հոգուց, մէկ հոգեւորական, մէկ գործարանատէր, մէկ կառավարիչ, երկու գործակատար: Դաշնակցութիւնը ծաւալուած է մանր առեւտրականների եւ գործակատարների մէջ:

Բամբակ.- Մարմնի երեք անդամն էլ առեւտրականներ են, իսկ ընտրողները գինուորներ եւ առեւտրականներ: Լան-մաղ ենթակոմիտէի երեք անդամն էլ առեւտրականներ են, նոյնպէս եւ ընտրողները:

Ժողովը անցաւ հրդէ կէտին՝ «Աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան համար առաջ եկած մարմինները, նրանց ծաւալը եւ գործունէութիւնը»:

III կոմիտէի պատգամաւոր.- Մեր շրջանում կայ մէկ բանուորական բիւրօ անգործ բանուորներին գործ հայթայթելու համար. նա բաղկացած է չորս անդամից՝

երկուքը կոմիտէի անդամներ եւ երկուքը հրաւիրուած. բիւրօյի գործունէութեան շրջանը ամբողջ Բալախանին է. նա օրական 70-100 բանուորի գործ է մատակարարում: Բանուորների դասակարգի շահերը պաշտպանելը իր վրայ է վերցրած կոմիտէն:

I կոմիտէի շրջան.- Այդ շրջանում գոյութիւն ունին 7 արհեստակցական դաշնակցական միութիւններ. եւրոպական դերձակների, ասիական դերձակների, կօշկակարների, գործակատարների, կոնդիտէրների<sup>22</sup>, բաղնիսի ծառայողների եւ քարտաշների: Միութիւնների անդամների ընդհանուր թիւը հասնում է 800ի: Ամէն մի միութիւն ունի իր բիւրօն, որ վարում է նրա գործերը: Վերջին ժամանակները նկատելի էր, որ անկուսակցական միութիւնների անդամները անցնում էին կուսակցական միութիւնների մէջ: Յանկալի է որ Շրջանային Ժողովը որոշի, թէ արհեստակցական միութիւնների կողմից ընտրութիւնների ժամանակ ի՞նչ համեմատութեամբ պատգամաւորներ պիտի ընտրուեն: Անցեալ տարի գոյութիւն ունէր մի բանուորական բիւրօ, որը ստանում էր Ֆիրմաներից՝ Օգոստոսեան եւ Հոկտեմբերեան դէպքերից վնասուած բանուորների կորուստների արժէքը կամ 2-3 ամսուայ ուժիկները: Բանուորները ցրուելուց յետոյ, երբ գործերը նորից սկսուեցին, այդ բիւրօն մարդիկ ուղարկեց գաւառները եւ հայ բանուորներին բերել տուեց, որպէսզի Ֆիրմաների մէջ օտար բանուորները նրան տեղը չբռնեն: Բացի այդ բանակցութիւններ էր կատարում Ֆիրմաների հետ բանուորներին տեղաւորելու համար:

Անդրապատի շրջան.- Այդտեղ կայ գործակատարների մի կուսակցական արհեստակցական միութիւն, որը նոր է կազմուած եւ ունի մօտ 90-100 անդամ: Մ[ոցիալ] դ[եմոկրատներ]ի ջանքերը անկուսակցական արհեստակցական միութիւն կազմելու համար, ոչ մի յաջողութիւն չգտաւ:

Չեթումեանի շրջան.- Արհեստաւոր հիւսնները տրամադրութիւն են ցոյց տալիս արհեստակցական միութիւն կազմելու, մասնաւորապէս իրենց շահերը կապալառուներից պաշտպանելու համար:

Ժողովը անցաւ հրդէ կէտին՝ «Կազմակերպութիւնից դուրս գտնուող խաւերի պահանջները դէպի կազմակերպութիւնը եւ նրանց ստանձնած պարտականութիւնները».- Այդ կէտի վերաբերմամբ մշակուեց մի ընդհանուր ռեզոլյուցիա<sup>23</sup> հետեւեալ բովանդակութեամբ: Կազմակերպութիւնից դուրս գտնուող բոլորուս դասակարգը ատում է մեզ. նրանք կարծում էին որ Դաշնակցութիւնը պիտի լինի մի գուտ ազգային կուսակցութիւն, կանգնած միայն ինքնապաշտպանութեան հողի վրայ, որը պիտի պաշտպանէ բոլոր դասակարգերի շահերը

22.- Արդեօ՞ք շոգեկառքի վարիչ:  
23.- Որոշում, բանաձեւ:

հաւասարապէս: Այդ դժգոհութեան պատճառներից առաջինը այն է, որ Դաշնակցութիւնը դասակարգային եւ յեղափոխական կուռ է մղում եւ երկրորդը՝ որ ինքնապաշտպանութեան շրջանում հարուստ եւ ապահովուած դասակարգերից մեծ գումարներ պահանջեց ժողովրդին պաշտպանելու համար: Առհասարակ ժողովուրդը նայում էր Դաշնակցութեան վրայ իբրեւ մի կառավարող ոյժի, որը նրան պիտի դուրս բերէր ներկայ անարխիական դրութիւնից եւ կանոնաւորէր նրա ներքին կեանքը: Օրինակ, մինչեւ այժմ աշխատաւոր դասակարգը ցանկանում է, որ Դաշնակցութիւնը դատական գործերով պարապի: Կազմակերպութիւնից դուրս գտնուող եւ ուրիշ կուսակցութիւնների մէջ գտնուող բանուորների մեծ մասը սկզբում գտնուել են Դաշնակցութեան մէջ: Նրանց հեռանալը մեր կազմակերպութիւնից մասամբ մեր պրոպագանդայի թուլութեան պատճառով է եղել: Ժողովը փակուեց ժամը տասներկուսին գիշերուայ:

|                |                      |
|----------------|----------------------|
| Նախագահ        | Նիթրա <sup>24</sup>  |
| Քարտուղար      | Թորոս                |
| Պատգամաւորներ՝ | I Կոմ-ից Լեւոնիկ     |
|                | II » Սահակ           |
|                | III » Արսէն          |
|                | Դումանից Մաճկալ      |
|                | Հեթումից Մելիք       |
|                | Քանդ. քաղ-ից Միքայէլ |

2. Գիստ Նոյեմբերի 18ին, 1906 թ.

Ժողովը բացուեց նախագահութեամբ Նիթրայի եւ քարտուղարութեամբ Թորոսի. ներկայ էին 7 պատգամաւորներ, բացակայ էին «Դումանի» մի եւ քաղաքի մի պատգամաւորը: Ներկայ էին նաեւ 5 խորհրդատու ձայնով պատգամաւորներ:

Օրակարգն էր հարցացուցակի I բաժնի Թրդ կէտը.- «Ռուսահայ մարմինների վերաբերմունքը դէպի տաճկահայ դատը».- Ներկայ պատգամաւորներից ոչ մէկը իրեն ձեռնհաս չհամարեց զեկուցում տալու այն մասին, թէ ի՞նչ գործունէութիւն են ունեցել Ռուսապատի շրջանի մարմինները տաճկահայ դատի վերաբերմամբ, որովհետեւ բացի բերանացի պրոպագանդայից այդ շրջանի տեղական մարմինները ոչ-մի անմիջական կամ կողմնակի կապ չեն ունեցել Տաճկահայաստանի հետ: Այդ պատգամաւորները առաջարկեցին Կենտրոնական կոմիտէին ընդհանուր տեղեկութիւններ ալ իրենց գործունէութեան մասին վերջին երեք տարում:

Նախագահը հիմնուած իւր պաշտօնական եւ ոչ պաշտօնական տեղեկութիւնների վրայ, ամփոփել եւ ընդհանուր գծերով պատկերացրեց հետեւեալը:  
«Երկրի գործունէութեան հետ անմիջական կապ ու-

նեն Կենտրոնական կոմիտէներից Մրգաստանը ու Զրաբերդը<sup>25</sup> եւ գլխաւորապէս Արեւելեան Բիւրօն: Դրանցից յետոյ, Երկրի գործունէութեան համար գլխաւոր աջակիցներն են եղել Ռսկանապատը եւ Նաւահանգիստը<sup>26</sup>: Առհասարակ Երկրի համար մեր գլխաւոր գործունէութիւնն է եղել, նախ պրոպագանդը, եւ ապա դրամական օժանդակութիւնը: Բայց Կ. Կոմիտէի կողմից Բիւրօյին փոխադրուած գումարների ո՛ւր եւ ի՞նչ քանակութեամբ, որպիսի՞ համեմատական բաշխումով ծախսուելու տեղեկութիւն չենք կարողանում ունենալ մինչեւ հաշիւների Ընդհանուր Ժողովի կողմից քննելու հաստատուելը, որովհետեւ Բիւրօնները եւ պատասխանատու մարմինները իրենց հաշիւտուութիւնը ներկայացնում են Ընդհանուր Ժողովին: Ճիշտ է, որ Բիւրօնները օրէնքով պարտաւոր են կարելու տեղեկութիւններ պարբերաբար Կենտրոնական կոմիտէներին յայտնել, որպէսզի նրանք էլ իրենց շրջանի մարմիններին հաղորդել կարողանան, բայց այդ պարտականութիւնը շատ թերի կերպով է կատարուում, կեանքի արգելաւորութեան շնորհիւ: Վերջին երկու տարուայ մէջ կովկասի ընդհարումների ասպարէզ դառնալը եւ ինքնապաշտպանութեան բացառիկ դրութիւնը ամենաբընական եւ ամենախոշոր արգելքն է եղել մեզ համար զբաղուել առհասարակ տաճկահայ դատով, բայց եւ այնպէս միջամտական է ասել, որ երկրի խաղաղ նախապատաստութեան համար գուցէ ո՛չ մի ժամանակ այնքան զինամիթերք եւ դրամական օժանդակութիւն չէր հասցուած, որքան այդ վերջին երկու տարուայ ընթացքում:

Ռսկանապատը աշխատաւոր դասակարգի, երիտասարդութեան եւ կապիտալիստական ձեռնարկների կենտրոն լինելով, կարելի է ասել որ Երկրին գործիչներ, ղեկավարներ կամ մարտիկներ, ռազմամիթերք եւ նիւթական աջակցութիւն հայթայթելու մէջ ամենակարելու մասնակցութիւն է ունեցել, թէ եւ այդ այժմ թուերով եւ ստատիստիկական տեղեկութիւններով հաստատել անհնար է: Ընկերներից Արսոն առաջարկում է զեկուցում տալ աւելի մանրամասն կերպով, թէ Ռսկանապատի Կենտրոնական կոմիտէն որպիսի չափով է օժանդակել Երկրին թէ դրամական եւ թէ ռազմական տեսակէտից վերջին երեք տարուայ ընթացքում:

Նախագահը բացատրում է, որ Ռսկանապատի Կենտրոնական կոմիտէն անմիջական կապ չունենալով Երկրի հետ, չի կարող այժմեանից իր օժանդակութեան չափը որոշ կերպով իմանալ: Այդ կարելի է իմանալ Բիւրօյի Ընդհանուր Ժողովում տուած զեկուցումներից:

Ժողովը, ի նկատի ունենալով որ Ռսկանապատի պատգամաւորը պարտաւոր է Ընդհանուր Ժողովից

24.- Յարութիւն Ետրիկեան:  
25.- Յաջորդաբար Երեւանի եւ Կարսի, Պաքուի եւ Պաթուհի Կ. Կոմիտէութիւնները:



յետոյ Շրջ(անային) Ժողովին զեկուցում տալ Ընդհանուր Ժողովի պարապմունքների մասին, բաւարար գտաւ նախագահի բացատրութիւնը եւ անցաւ տեղեկագրի Դրդ կէտին՝ «Ամփոփ զեկուցում բոլոր դաշնակցական մարմինների գործունէութեան՝ յեղափոխական ձեռնարկներ, պրոպագանդա, ինքնապաշտպանութեան միջոցներ եւ ժողովրդի զինումն, յարաբերութիւններ եւ համերաշխ գործակցութիւն այլ ազգային եւ յեղափոխական կուսակցութիւնների հետ»:-

II կոմիտէի շրջանի պատգամաւոր Ս. ն զեկուցեց որ գործադուլներ ամէնից առաջ սկսեցին Ոսկանապատում 1903 թուականին, որոնք զուտ տնտեսական հողի վրայ էին դրուած: Սկզբից գործադուլները ոչ մի կուսակցութեան կողմից չէին կազմակերպուած, այդ Ս. Դ.-կան<sup>26</sup> իտէալներով տողորուած անհատների գործն էին, որոնց, սակայն ամենամեծ եւ ամենաուժեղ թուով մասնակցողները հայեր էին եւ դրանցից դաշնակցականներ: Բայց Ս. Դ.-րի կուսակցութիւնը յետոյ շահագործեց այդ գործադուլները իբրեւ իր կազմակերպած գործ. վրայ հասաւ կալուածների գրաւումը: Սկզբում հայ ժողովուրդը շուարած մնաց. բայց ահա գաւառներում սկսեցին դիմադրութիւններ ցոյց տալ. Ոսկանապատ քաղաքը այդ դիմադրութիւնը աւելի ուժեղ կերպով ցոյց տուեց եւ Դաշնակցութիւնը օգտուեց ժողովրդի դժգոհ եւ դիմադրական տրամադրութիւնից՝ նրան կազմակերպելու գործում: Այդ ժամանակ Ռուսաստանի ամէն կողմում առաջանում էին ընդհանուր շարժումներ: Ս. Դ.-րը մղում էին դասակարգային կռուի ուժեղ պրոպագանդ եւ չէին կամենում Դաշնակցութեան կարեւորութիւն տալ: Դաշնակցութիւնն էլ սկսեց այդ հողի վրայ գործել, պրոպագանդի եւ ակտիւ գործի անցնելու, որովհետեւ բոլոր տեղի ունեցած ցոյցերում եւ գործադուլներում հայերը միշտ առաջնակարգ տեղն էին բռնում, ուստի, մինչեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը ակտիւ մասնակցութիւն ցոյց չտար, ոչ մի ցոյցի եւ գործադուլի յաջողութիւնը չէր ապահովուում: Այդ բանը Ս. Դ.-ներին հաճելի չէր, եւ այդ պատճառով էլ նրանք սկսեցին թշնամաբար վերաբերուել դէպի Դաշնակցութիւնը: Առաջ եկան թուրք-հայկական ընդհարումները, Դաշնակցութեան ինքնապաշտպանութեան գործի կազմակերպելը եւ ղեկավարելը: Այդ ընդհարումների պատճառ եւ հետեւանք եղող հանգամանքները ստիպում էին Դաշնակցութեանը քաղաքական ցոյցերի եւ գործադուլների մէջ գգոյ լինել. բանուորական պահանջների համար Դաշնակցութիւնը աշխատում էր Ֆիրմաների հետ բանակցութիւններով բաւարարութիւն ստանալ, եւ միայն ծայրայեղ դէպքերում դիմել էր տալիս գործադուլներին: Առհասարակ պրոպագանդի գործը թոյլ է դրուում Դաշնակցութեան կողմից բաւական թուով եւ համապատասխան պրոպագանդիստ չունենալու պատճառով:

II կոմիտէի շրջանում 1905 թուին եղել են Յը, իսկ 1906 թուին Չը: 1905 Փետրուարի դէպքերին ինքնապաշտպանութեան համար ոչ մի պատրաստի ոյժ չի եղել, բայց նրանից յետոյ, զինաւորման գործը ուժեղ կերպով առաջ է տարուել: Թէեւ Օգոստոսին 800ի չափ ատրճանակներ եւ հրացաններ եղել են, գլխաւոր կարգադրիչ եւ ռազմական ղեկավար չլինելու պատճառով, կռիւը սկսուելուց մի երկու օր սպասողական դիրք պահելուց յետոյ, համարեա առանց կռուի դիրքապահները եւ ժողովուրդը դիրքերը թողին եւ հեռացան նաւթահանքերի շրջանից: Այժմ թէ Դաշնակցութիւնը եւ թէ Ֆիրմաները իրենց զէնքերը ունեն. Դաշնակցութեան յանձնարարութեամբ Ֆիրմաները պահում են հայ պահապաններ, որոնք ինքնապաշտպանութեան նախկին զինուորներից են: Կարելի է ասել, որ ինքնապաշտպանութիւնը այժմ աւելի լաւ հիմքերի վրայ է դրած նամանաւանդ շնորհիւ նրան, որ Ֆիրմաները սկսել են իրենց հանքերի սահմանները պարիսպներով շրջապատել. բայց կենսական մթերքների պակասութիւնը այն մեծ վտանգն է, որը կարող է բոլոր մնացած միջոցները գործի հաւասարեցնել: Ս. Դ.-րը չեն ցանկանում ճանաչել Դաշնակցութիւնը իբրեւ սոցիալական կուսակցութիւն, բայց ստիպուած են լինում կարեւոր պարագաներում մեզ հետ համաձայնութեան մէջ մտնել: Հայ Ս. Դ.-րը եւ հնչակեանները համարեա չկան, եւ թէ կան, այնքան քիչ են, որ ուշադրութիւն չեն գրաւում: Նկատելի է որ Ս. Դ.-ի շարքերում գտնուող հայերը աւելի են անհաշտ դէպի Դաշնակցութիւնը քան ռուսները: - Տեղական թուրքերը լաւ զինուած են, եւ թէեւ նրանց մէջ գոյութիւն ունեցող մի քանի կուսակցութիւնների անուններն են գրուում, եւ երբեմն մեր Կ. Կ.-ի թուրքիկների տակ ստորագրութիւններ էլ կարող ենք, բայց կեանքի մէջ մենք նրանց ոչ մի տեղ չենք տեսնում: Տնտեսական բնաւորութիւն կրող հարցերում՝ շնորհիւ Դաշնակցութեան յաջող միջամտութիւններին, թուրք բանուորութիւնը համերաշխ է երեւում հայերի հետ, եւ որովհետեւ տեղական ղոչինները<sup>27</sup> տնտեսական շահերը նաւթահանքերի աշխատանքի անընդհատ շարունակութիւնն է պահանջում, ուստի եւ նրանց կողմից ընդհարումների տրամադրութիւն չի երեւում:

Ժողովը առաջարկեց որ ընկեր նախագահը ընդհանուր գծերով պատկերացնի Դաշնակցութեան քաղաքական գործունէութիւնը Ոսկանապատի շրջանում, եւ ապա միւս պատգամաւորները իրենց լրացուցիչ տեղեկութիւնները յայտնեն, եթէ ունեն:

26.- Սոցիալ-դեմոկրատներ, սոցիալ-դեմոկրատական:  
27.- Թրքերէն դոչ բառը կը նշանակէ խոյ: Դոչի անուցով ծագոթ էին այն թուրք-թաթար երիտասարդները, որոնք իբրեւ վարձկան կը ծառայէին մեծ կալուածատերերու կամ գործարանատերերու կողմէ իրենց հաստատութեան պաշտպանութեան համար:

Նախագահ.- Մեր մարմիններից ոչ ոք չի կարող պնդել որ նա ունեցել է վերջին Չ/Յ տարուայ ընթացքում ծրագրուած քաղաքական եւ զուտ յեղափոխական ձեռնարկներ, եթէ չհաշուենք բազմաթիւ քաղաքական ահաբեկումները, որոնք ի դէպ ասել, կազմում են Անդրկովկասում կատարուած ահաբեկումների մի մեծ տոկոսը: Նոյնիսկ այն ըմբոստացումը, որը տեղի ունեցաւ կալուածների գրաւման ժամանակ, չի կարելի համարել զուտ յեղափոխական երեւոյթ, թէեւ նոյն կալուածների գրաւումը եղաւ պատճառ ժողովրդի յեղափոխական տրամադրութեան զարթնելուն եւ նրա Դաշնակցութեան շուրջը համախմբուելուն: Սկիզբներում մեր մարմինների գործը եղել է միայն պրոպագանդ: Այդ միջոցներին էր, որ ռուս Ս. Դ.-րը աշխատում էին յաճախակի գործադուլներ սարքել, բայց միայն տնտեսական հողի վրայ. նրանք չէին ցանկանում միայն քաղաքական ըմբոստացման գիտակցութիւնը ներշնչել, դրա համար նպաստաւոր հող չգտնելով, այլ կամենում էին դասակարգային կռուի անուան տակ սարքած գործադուլներով երկրում շփոթութիւն առաջացնել, եւ դրանով քաղաքական կռուի դուռ բաց անել: Մեր եւ նրանց ( քների տարբերութիւնը կայանում էր նրանում, որ մենք նպատակաւորմար էինք համարում մասսայի մէջ միաժամանակ զարգացնել եւ դասակարգային եւ քաղաքական կռուի գիտակցութիւնը, նոյնիսկ առաջնութիւնը տալով քաղաքական կռուին, որովհետեւ համոզուած էինք, որ առանց քաղաքական տարրական իրաւունքներ ձեռք բերելու՝ դասակարգային ոչ մի կռուի յաջողութիւնը ապահովել անկարելի է, իսկ դասակարգային կռուի անուան առաջ բերուած քաղաքական ընդհարումները մեր կարծիքով վտանգաւոր էին այն տեսակէտից, որ կարող էին դեմոկրաիքացիա<sup>28</sup> մտցնել բանուորական շարքերում: Ամենաուժեղ կուսակցութիւնը ռուս Ս. Դ.-իան էր, որը արհամարհելով բոլոր միւս կուսակցութիւններին, աշխատում էր միայնակ հրապարակին տէր դառնալ: Այնուամենայնիւ մենք միշտ աշխատում էինք համերաշխ լինել: Եթէ միայն իրագործուէր այդ համերաշխութիւնը, մենք մըտածում էինք կազմել այնպիսի ծրագիրներ, որոնք կ'ապահովէին յեղափոխութեան յաջողութիւնը, բայց Ս. Դ.-րը ղեկավարում էին նեղ կուսակցական միտումներով, իսկ սոցիալ յեղափոխականները անոյժ էին: Այդ ժամանակ էր որ կառավարութիւնը ինքը գրադեցրած լինելով իր գործերը Հեռաւոր Արեւելքի կռուում, յաջողեցրեց առաջ բերել հայ-թուրքական ընդհարումները, որոնք սպառնում էին Անդրկովկասի հայութեան բնաջնջմանը: Այդ ընհանուր վտանգի հանդէպ մենք ստիպուած էինք մի կողմ թողնել իսկական յեղափոխական ակտիւ ծրագիրները եւ նուիրուել ինքնապաշտպանութեան գործին: Մեզ յաջողուեց, ինչպէս ամէն տեղ նոյնպէս եւ այստեղ լայն չափերով զինել հայ ժողովուրդը,

բազմաթիւ դժուարութիւններով կազմակերպել, զէնք, զինամթերք ձեռք բերելու, փոխադրելու գործը, եւ ձեռք բերել համապատասխան նիւթական միջոցներ: Գուցէ մենք մեղաւոր ենք որ ժամանակին չկարողացանք գուշակել հայ-թուրքական ընդհարումների հաւանականութիւնը, եւ չունենալով հարկաւոր պատրաստութիւնը՝ Փետրուարեան դէպքերին յանկարծակիի եկանք, բայց նրանից յետոյ եղած տենդագին աշխատանքը իր մխիթարական հետեւանքներով մոռացնել տուաւ Փետրուարեան դէպքը: Սակայն Օգոստոսի դէպքերի ժամանակ, մի քանի տեղեր ինչպէս «Դուժման»ի եւ «II կոմիտէ»ի շրջանը, չնայած որ բաւարար կերպով զինուած էին, հմուտ ղեկավար չունենալու պատճառով փախուստի մի կատարեալ արշաւանք կատարեցին: Քաղաքում եւ գաւառներում մարտական յաջողութիւնը միշտ մեր կողմն է եղել: Այդ յաջողութիւնը պարտական ենք մեր մարտական խմբերին, որոնք սակայն, մեծ մասամբ կազմուած լինելով անգիտակից տարրերից, ստեղծեցին մի զինուորական կաստա<sup>29</sup>, որը եղաւ բազմաթիւ չարիքների աղբիւր, շնորհիւ վայրենի ինստիտուտների<sup>30</sup> զարթնելուն զինուորների մէջ: Մենք միշտ աշխատել ենք բոլոր կուսակցութիւնների հետ համերաշխ լինել, բայց մեր այդ անկեղծ ցանկութեանը արձագանգ են տուել միայն էս-էներները<sup>31</sup>, որոնք սակայն անոյժ լինելով դրական օգուտներ չեն տուել:

Ռուս Ս. Դ.-րը միշտ աշխատել են օգտուել, երբ անհրաժեշտ է եղել Դաշնակցութեան ոյժերից եւ նոյնիսկ հայ ժողովրդին հասած չարիքից. այդ նրանք ապացուցեցին Փետրուարին եւ Օգոստոսին այստեղ եւ նոյնիսկ հայ ժողովրդին ըմբոստացման օրերում. մենք առաջարկել ենք միջկուսակցական մարմին ստեղծել քաղաքական ցոյցեր ու գործադուլներ ղեկավարելու համար. նոյն միջկուսակցական մարմինը մենք ցանկացել ենք իրականացնել խուլիգանական<sup>32</sup> յարձակումների դէմ տուել զանազան պատճառաբանութիւններով ու արդարացումներով:

Նախագահ  
Քարտուղար  
Պատգամաւորներ՝  
Նիթրա  
Թորոս  
Լեւոնիկ, Մելիք, Արսէն

28.- Բարոյալքում:  
29.- Արտօնեալ փակ դասակարգ:  
30.- Բնագոյներ:  
31.- Սոցիալիստ-յեղափոխականներ:  
32.- Փողոցային ստահակութիւն:

Է. Նիստ Նոյեմբերի 1906 թ.

Ժողովը բացուեց նախագահութեամբ Նիթրայի եւ քարտուղարութեամբ Թորոսի: Ներկայ էին 8 պատգամաւորներ, եւ խորհրդակցական ձայնով 2 հոգի: Բացակայ էին II կոմիտէի 1 պատգամաւորը, Պահակի մէկը եւ III կոմիտէից մէկը:

Ժողովի սկզբում ընկեր նախագահը յայտնեց, որ Երջանային Ժողովիս որոշման համաձայն՝ Կենտրոնական Կոմիտէն առաջարկել էր «Դուման» ենթակոմիտէին նրանց մի պատգամաւորի բեկանուած ընտրութեան փոխարէն՝ նոր ընտրութիւն կատարել: Ահա այդ նոր ընտրութեան կանոնաւոր ընթացքին հսկելու համար՝ Կենտրոնական Կոմիտէի կողմից գնացել էր ընկեր Լեւոնիկը, որի գրաւոր զեկուցումից պարզուեց, որ «Դուման» ենթակոմիտէի անդամներից երկուսը՝ աղմկայի միջադէպերով՝ արգելք են հանդիսացել ընտրութիւններին:

Ժողովը որոշեց յայտարարել Կենտրոնական Կոմիտէին թէ՛ որոշուած ընտրութիւնը կատարել տալու համար եւ թէ՛ ենթակոմիտէի վարմունքի մասին քննութիւն կատարելուց յետոյ՝ իրագործել օրինական տրամադրութիւնները: Այդ որոշումը անցաւ մէկի դէմ հինգ ձայնով: Այնուհետեւ ժողովը շարունակեց լսել լրացուցիչ տեղեկութիւններ տեղեկագրի Դրէ կէտի մասին:

Յետոյնեանի պատգամաւոր.- Այդ շրջանում յեղափոխական ձեռնարկներ չեն եղել, իսկ Դաշնակցութեան պրոպագանդան շատ թոյլ է եղել: Ինքնապաշտպանութեան կարիքը միայն Անդրապատում է զգացուել եւ այդտեղ էլ Ժողովրդի գինումը հնարաւորութեան սահմաններում կատարուել է, բայց վերջիվերջոյ յաջողուել է խուսափել հայ թրքական ընդհարումներից: Մի ժամանակ վտանգ կար հրէական եւ հայկական պոզորումների<sup>33</sup>. վտանգի առաջն առնելու համար, Ս. Դ.-ը, Ս. Յ.-ը եւ Դաշնակցութիւնը միացած ոյթերով հսկում էին քաղաքը խուլիզաններից: Ի միջի այլոց Ս. Դ.-ը այդ դէպքի ժամանակ իրենց խոստացած 75 գինուած կամաւորների փոխարէն դուրս բերին 9 հոգի, Ս. Յ.-ը 50ի փոխարէն 17 հոգի, հրեաները խոստացած 25ից 3 հոգի, իսկ Դաշնակցութիւնը իր խոստացած 40 հոգին դուրս բերաւ լիովին: Թուերը լաւ չեմ յիշում, բայց մօտաւորապէս այդքան պիտի լինի: Ուրիշ դէպքում էլ, ցոյցերի թէ որեւէ վտանգի ժամանակ, Դաշնակցութիւնը միացել է միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ, բայց միշտ նկատելի է որ Ս. Դ.-իան կամ աշխատել է արհամարհել մեզ, կամ մեր ուժը շահագործել է:

Ծաղկածորի պատգամաւոր.- Յեղափոխական ձեռնարկ չի եղել, իսկ պրոպագանդան թոյլ է եղել: Ինքնապաշտպանութեան կարիք եղել է եւ գինումը թէեւ թոյլ կերպով, բայց կատարուել է: Ընդհարումներից խուսա-

փել յաջողուեց այն պատճառով, որ այդ շրջանում ապրող սիւննի թուրքերը ինչպէս եւ ուրիշ տեղեր, տրամադրութիւն ցոյց չտուեցին հայերի հետ ընդհարուելու: Ձէնքերի դիրքից-դիրք տեղափոխութեան ժամանակ մեզ օգնում էին փոքրաթիւ հայ Ս. Դ.-ը, որոնք կազմուած են խանութպաններից եւ վաճառականներից:

Դումանի պատգամաւոր.- Յեղափոխական ձեռնարկ չի եղել: Ձինումը կատարուել է բաւարար չափով. կուրների ժամանակ նոյն դէպքն է պատահել ղեկավար չլինելու պատճառով, ինչ որ II կոմիտէի շրջանում:

III կոմիտէի պատգամաւոր.- 1) Յեղափոխական ձեռնարկ չի եղել, եթէ չհաշուենք մի 2-3 ցոյցերը: 2) կալաւծների գրաւումից սկսած մինչեւ 1906 թիւի ամառը պրոպագանդը մեր շրջանում ուժեղ է եղել, դրանից յետոյ մարմինների ասելով պրոպագանդիստները գնացել են գաւառները: Մարմին անդամներից էլ ոչ ոք չէր յաճարում խմբերը եւ այդ պատճառով էլ շատ խմբեր քայքայուեցին, եւ մինչեւ այսօր շրջանը գուրկ է դասախօսից: 3) Ինքնապաշտպանութեան համար գինումը այնքան ուժեղ է կատարուել որ կարելի է ասել, այժմ հայ չկայ, որ գէնք չունենայ: Մեր շրջանը ազատ է մնացել ընդհարումներից, այնպէս որ ժողովրդի մէջ դժգոհութիւն չկայ ինքնապաշտպանութեան կազմի դէմ, որովհետեւ նա գործունէութիւն չի ունեցել: 4) Մեր շրջանում Դաշնակցութիւնը միշտ աշխատել է համերաշխ գործել միւս յեղափոխական կազմակերպութիւնների հետ:

Անդրապատի պատգամաւոր.- Մեր շրջանում յեղափոխական ձեռնարկ չի եղել, բայց միշտ առիթ ենք ունեցել միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ այս կամ այն յեղափոխական գործերի ժամանակ բանակցութեան մէջ մտնել: Պէտք է ասել, որ մի առանձին արհամարհանքով էին վերաբերում դէպի մեզ Ս. Դ.-ը բայց եւ միշտ մեր ուժերի կարիքը զգալով, համաձայնում էին մեզ հետ: Մի միջադէպ, որ մեծ վրդովմունք առաջ բերեց մեր շրջանի ընկերների մէջ, Ս. Դ.-ի անտակտ վարմունքն էր. երբ մենք ձեռնարկել էինք պրոֆեսիոնալ միութիւն կազմելու եւ այդ առթիւ ժողով էինք գումարել, Ս. Դ.-ի ղեկավար ուժերից 3ը չնայած որ յայտարարած էինք որ կուսակցական ժողով է, ցանկանում էին բռնի կերպով մտնել եւ խանգարել: Մեզ յաջողուեց յետ կանգնեցնել նրանց բռնած դիրքից եւ մտադրութիւնից, պարզապէս առարկելով, որ ձեր վարմունքը դատապարտելի ենք համարում, մեզ իրաւունք վերապահելով թէ լրագրութեան նիւթ դարձնել եւ թէ միջկուսակցական դատարանի դիմել: Չունենալով կանոնաւոր շրջիկ՝ մեր շրջանը, չնայած տնտեսական եւ քաղաքական կուռի հող ունենալուն, գուրկ է մնում յեղափոխական ձեռնարկներից. միւս կողմից ու-

33.- Ձարդերու:

նեցած մասսան, որը կազմում է թէ խմբեր եւ պրոֆեսիոնալ միութիւններ, քայքայման կը հասնի. պրոպագանդայի գործը ուժեղացնելը միակ միջոցն է կանոնաւոր ընթացք տալու գործերին:

Նախագահ Նիթրա  
Քարտուղար Թորոս  
Պատգամաւորներ՝ Մելիք,  
III շրջան — Արսէն

Ը. Նիստ 20 Նոյեմբերի, 1906 թիւ

Նիստը բացուեց նախագահութեամբ Չոփուռեանի եւ քարտուղարութեամբ Թորոսի, եւ ներկայ էին 9 պատգամաւոր եւ 3 խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւոր:

Ժողովը անցաւ հարցացուցակի Տեղեկագրի մասի ծրէ կէտին «Կազմակերպութեան եկամուտների աղբիւրները ներկայումս եւ ապագայում»: Այդ կէտի վերաբերմամբ բոլոր պատգամաւորների զեկուցումներից բրեւաց, որ կազմակերպութեան սովորական եկամուտները անցեալում կազմել են անդամավճարները, հանգանակութիւնները, նուէրները, երեկոյթները եւ ներկայացումները:

II կոմիտէի պատգամաւոր.- Այն կարծիքն է յայտնում, որ ներկայումս կազմակերպութեան եկամուտները նուազում են եւ ապագայում աւելի պիտի նուազեն, որովհետեւ բուրժուա դասակարգը մերժում է օժանդակելուց, ատելով մեր գործունէութիւնը. քաղաքական պայմանների շնորհիւ դժուարանում է երեկոյթներ եւ ներկայացումներ կազմելը. իսկ բանուորները դժուարանում են անդամավճարներ տալ շնորհիւ տընտեսական քայքայման: Ժողովը որոշեց թողնել առայժմ կազմակերպութեան եկամուտների մասին խորհել եւ անցնել դորան այն ժամանակ երբ դրուած կը լինի քննութեան հարցացուցակի VII մասը՝ «Դումանի կարգ»: Այնուհետեւ ժողովը անցաւ 9րդ կէտին: «Ղաշտուութիւն դրամական եւ ռազմական»: Այդ կէտի մասին մարմինները տեղեկագրեր ներկայացրած չլինելով ժողովը որոշեց վերադառնալ այդ կէտին, երբ կը ստացեն մարմինների գրաւոր տեղեկագրերը: Նոյն որոշումը կայացաւ Քրէ կէտի մասին («Առաջիկայ բիւրջը եւ մտից»)- Մինչեւ հարցացուցակի միւս հարցերին անցնելը, տեղեկագրին վերաբերեալ զեկուցումները լսելուց յետոյ, Երջանային Ժողովը անցաւ 2 արտակարգ նիստ, 20 եւ 21 Նոյեմբերին, Արեւելեան Բիւրոյի մի անյետաձգելի շրջաբերականի վերաբերմամբ: Սոյն շրջաբերականով Արեւելեան Բիւրոն առաջարկում էր, որ Ոսկանապատի շրջանը արտայայտի իր կարծիքը այն հարցի

վերաբերմամբ, թէ ինչ ծրագրով պիտի գործէ Դաշնակցութիւնը (պլատֆորմ) ընտրութիւնների ժամանակ եւ առաջիկայ պետական դումայում: Այդ հարցի վերաբերմամբ բացի Կենտրոնական Կոմիտէից, որի անդամներից քանիսը միշտ ներկայ էին լինում Երջանային Ժողովի նիստերին, հրաւիրուած եւ ներկայ էին նաեւ դրսի ձեռնհաս ընկերներից վեց հոգի: - Այդ ժողովների ընթացքում ընկերների մեծ մասը այն կարծիքն էր յայտնում, որ առաջիկայ Դումայից որեւէ օրգանական<sup>34</sup> աշխատանք չպիտի սպասել յօգուտ ժողովրդի, որովհետեւ ներկայ ռեժիմը այդ անհնարին է դարձնում եւ քանի որ մենք չպիտի գնանք Դումա օրգանական աշխատանք կատարելու, մեր նպատակը պիտի լինի Դումայի միջոցով եւս գիտակցութիւն մտցնել ժողովրդական մասսաների մէջ եւ կազմակերպել նրանց ապագայ յեղափոխութեան համար. այդ իսկ պատճառաւ մենք կարիք չունենք եւ չպիտի կրճատենք մեր պլատֆորման<sup>35</sup>, որպէսզի ժողովրդի մէջ չմթացնենք այն գիտակցութիւնը որ նա ունի Դաշնակցութեան վերաբերմամբ, այլ ապագայ նախընտրական պայքարում եւս մեր պլատֆորման պիտի համաձայն լինի մեր minimum<sup>36</sup> ծրագրի պահանջներին, որը միակ գրաւականն է յեղափոխական տրամադրութեան արմատաւորուելուն մասսաների մէջ: Այդ ընկերներից Լեւոնը այն կարծիքն էր յայտնում, որ մենք առաջիկայ ընտրութիւններին ընթացքում եւ ոչ մի դէպքում չպիտի բլոկ կազմենք հայ կադետների հետ, առաջինը այն պատճառով, որ հայ կադետները չափով ամենաեռանդուն ագիտացիան են մղում Դաշնակցութեան դէմ, ոչ մի խտրութիւն չընկնելով միջոցների մէջ եւ երկրորդը, որ հայ աշխատաւոր մասսան դեռ նոր-նոր է ըմբռնում լիբերալիզմի եւ սոցիալիզմի մէջ գոյութիւն ունեցող գանազանութիւնը, եւ բլոկ կազմելով կադետների եւ մանաւանդ հայ կադետների հետ մենք կը մեռնենք այդ գիտակցութիւնը: Մենք պէտք է պահանջենք ճամբողջ հողը, եւ ամբողջ ազատութիւնը»: - Ընկեր Ն.-ը նոյն համոզմունքը յայտնելով, որ առաջիկայ Դուման ներկայ քաղաքական պայմաններում ոչ մի օգտակար աշխատանք չի կարող կատարել, այն միտքն է յայտնում, որ մեր աշխատանքը Դումայում մի նպատակ պիտի ունենայ, առաջ բերել յեղափոխական թէ այլ միջոցով Մահմանդիւր Ժողով, ա՛յդ ուղղութեամբ մենք պիտի տանենք նաեւ նախընտրական ագիտացիան, ա՛յդ պիտի լինի մեր պլատֆորմը:

Ընկեր Թ.-ն այն կարծիքն է յայտնում որ հիմակուանից պնդել՝ արդեօք Դուման օրգանական աշխատանք կ'ունենա՞ր թէ ոչ, անկարելի է. նա առաջարկում է մշա-

34.- Գործածուած է կեցուցական, արդիւնաւոր իմաստով:  
35.- Գործուցութեան քաղաքական, տնտեսական, ընկերային ծրագիր:  
36.- Նուազագոյն:

կել մի պլատֆորմ, որը կը լինի մեր minimum ծրագրի minimum-ը, նրա բացատրությունները երեւաց որ պահանջների այդ minimum-ը հաւասար է կատետական ծրագրի maximum<sup>37</sup> պահանջներին: Ընկեր Ք.-ն ի նկատի ունէր որ այդ պլատֆորմով մենք կարող ենք բլոկ կազմել նոյնիսկ կադետական կուսակցութեան հետ, երբ եւ որտեղ այդ հարկը պահանջէ: Այդ միտմամբ պահանջները մենք պիտի աշխատենք իրականացնել առաջիկայ Դումայում եւ այդ պահանջները ոչ մի քայլ չպիտի վայր իջնենք: - Ժողովը երկարատեւ թեր ու դէմ կարծիքները լսելուց յետոյ մշակեց հետեւեալ բանաձեւը, որ եւ ընդունուեց ճշող մեծամասնութիւնից:

Նախընտրական ազխտացիայի ժամանակ Դաշնակցութիւնը դուրս է գալիս իր սեփական պլատֆորմով որ կազմում է նրա minimum ծրագիրը: Այն ընտրողական շրջաններում, ուր ընտրութիւնների ժամանակ հաւանականութիւն կայ, որ պատգամաւորը կարող է ընտրուել պահանջողական կամ յետադիմական տարրերից, պիտի համաձայնութեան գալ ուրիշ ձախակողմեան-յեղափոխական կազմակերպութիւնների հետ, իսկ ծայրայեղ պայմաններում՝ նոյնիսկ դիմադրական<sup>38</sup> դեմոկրատական տարրերի հետ: Որովհետեւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը չի սպասում առաջիկայ Դումայից օրգանական աշխատանքի, մեր պատգամաւորի գործը պիտի լինի Դումայում արծարծել մեր minimum պահանջները եւ թոյլ չտալ որեւէ կոմպրոմիս<sup>39</sup> կամ համաձայնութիւն դիմադրական տարրերի եւ ներկայ կառավարութեան մէջ: Եթէ Դումայում դիմադրական եւ յեղափոխական տարրերը փոքրամասնութիւն կազմեն, մեր պատգամաւորները օբստրուկցիայի<sup>40</sup> միջոցով - պիտի խանգարեն Դումայի գործունէութիւնը: Առհասարակ մեր պատգամաւորները պիտի աչքի առաջ ունենան օգտուել յարմար մոմենտներից (յեղափոխական տեսակէտից) Դուման ցրուել տալու համար:

Նախագահ  
Քարտուղար  
Պատգամաւորներ՝  
III շրջան - Արսէն  
Զոփուռեան  
Թորոս  
Մելիք,  
III շրջան - Արսէն

**Թ. Գիստ 22 Երեւանի, 1906 թ. եւ 23ին Գթ**

Ժողովը բացուեց նախագահութեամբ Ք.-ի եւ քարտուղարութեամբ Թորոսի: Ներկայ էին 7 պատգամաւոր եւ 4 խորհրդակցական ձայնով պատգամաւորներ: Բացակայ էին Դումանի եւ Պահակի պատգամաւորները: Ժողովին ներկայ էին բացի Կենտ. Կոմ.ի 3 անդամներից, դրսի ձեռնհաս ընկերներից 5 հոգի:

Օրակարգի հարցն էր հարցաքննարկի II մասը «Տաճկահայ խնդիր».- Մակայն շրջանային ժողովը պատգա-

մաւորների արտայայտած ցանկութեան հիման վրայ, որոշեց նախքան այդ հարցին անցնելը, որոշել մի ուրիշ հարց:

«Պէ՛տք է արդեօք Դաշնակցութիւնը ինչպէս մինչեւ հիմա, շարունակէ ակտիւ գործունէութիւն ունենալ թէ Ռուսաստանում եւ թէ Տաճկահայաստանում»: Այդ հարցի վերաբերմամբ կարծիքների փոխանակութիւնը տեւեց մինեւ ժողովի վերջը:

Հետեւեալ, Ժ.րդ. նիստը կայացած 23ին, որին մասնակցում էին 7 պատգամաւոր, 3 խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւոր, 2 ընկեր Կենտ. Կոմ.ի կողմից եւ 5 դրսի ընկերներ, զբաղուեց նոյն հարցի լուսաբանութեամբ: Բանաձեւերի ներկայացնելը եւ քննելը որոշուեց թողնել հետեւեալ նիստին:

Նախագահ -  
Քարտուղար Թորոս  
Պատգամաւորներ՝ Մելիք,  
III շրջան - Արսէն

**Ժ. Գիստ 24 Երեւանի, 1906 թ.**

Ժողովը բացուեց նախագահութեամբ Ն[իթրայ]ի եւ քարտուղարութեամբ Թորոսի: Ներկայ էին 8 պատգամաւոր եւ 3 խորհրդակցական ձայնով պատգամաւոր բացակայ էր Պահակի պատգամաւորը: Ժողովին ներկայ էին նաեւ բացի Կենտ. Կոմ.ի 2 ընկերներից, նաեւ դրսի ընկերներ:

Ժողովին ներկայացուեց 2 բանաձեւ:

**Ընկեր Լեւոնի բանաձեւը.**

1) Ի նկատի ունենալով որ տաճկահայ իրականութիւնը թէ սոցիալական, թէ տնտեսական եւ թէ քաղաքական տեսակէտով տարբերուում է կովկասահայ իրականութիւնից: 2) Ի նկատի ունենալով որ տաճկահայ դատը ազգային եւ քաղաքական դատ է եւ պիտի տարուի տաճկահայ ժողովրդի գրեթէ բոլոր խաւերի միջոցով, մինչդեռ Կովկասի գործը աշխատաւորական է, դասակարգային եւ սոցիալիստական, 3) Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ դատերը տեղի ունեն երկու տարբեր պետութիւնների մէջ: 4) Ի նկատի ունենալով, որ թէ տաճկահայ ազատագրական դատը եւ թէ կովկասահայ աշխատաւորական դատը պիտի դրուեն միջազգայնօրէն այդ պետութիւններից իւրաքանչիւրի մէջ: 5)

37.- Առաւելագոյն:  
38.- Ընդդիմադիր:  
39.- Փոխադրում:  
40.- Խափանում, խանգարում:

Ի նկատի ունենալով, որ կովկասահայ աշխատաւորների օժանդակութիւնը տաճկահայ ազատագրութեանը չի կարող պարտադիր լինել, այլ կը լինի միայն մեզ համար կամաւոր: Մենք պահանջում ենք զատոււմ այդ երկու դատերի եւ նրանց յանձնումը երկու բաժան կուսակցութիւնների, ըստ որում Դաշնակցութիւնը պիտի լինի տաճկահայ ազատագրութեան համար մարտնչող կազմակերպութիւնը:

**Ընկեր Թ[որոս]ի առաջարկը.-**

Ի նկատի ունենալով, որ Դաշնակցութիւնը, իբր սոցիալիստական կուսակցութիւն, ընդունակ է գործել այն վայրերում, ուր որ գոյութիւն ունի աշխատաւոր մասսա: 2) Ի նկատի ունենալով, որ Կովկասում ամբողջ Հայ ժողովուրդը կամ բոլոր ժողովուրդները սկսած աշխատաւոր դասակարգից մինչեւ հարուստը թէեւ շահագրգռուած են ներկայ բունակալութեան տապալմամբ, բայց իրենց այդ ձգտումը տարբեր դասակարգերը արտայայտում են տարբեր ձեւերով: 3) Ի նկատի ունենալով որ բուրժուազիան իր ձգտումը չի կարող արտայայտել բուն յեղափոխական միջոցով, եւ Դաշնակցութիւնը իբրեւ յեղափոխական կազմակերպութիւն կարող է համախմբել իր շուրջը աշխատաւորներին իբր միակ յեղափոխական տարրի: 4) Ի նկատի ունենալով, որ ապագայ ազատ Տաճկաստանի կամ Տաճկահայաստանի կառավարական ձեւերը որոշելու համար պիտի ունենայ առաջուայ գոյութիւնը, աշխատանքի շահերը պաշտպանող մի կուսակցութիւն 5) Ի նկատի ունենալով որ, ռուսահայ ժողովրդի մէջ խիստ կերպով զարգացած է ազգային զգացմունքը եւ տաճկահայերին օգնելու ցանկութիւնը, եւ եթէ Դաշնակցութիւնը այդ զգացմունքը կանոնաւոր ընթացքի մէջ չընէ, կեղեքող եւ մութ տարրերը շահագործելով ժողովրդի այդ զգացմունքը կը կրթէ մասսաների մէջ շովինիստական ձգտումները ի վնաս աշխատաւոր դասակարգի շահերի: 6) Ի նկատի ունենալով, որ Դաշնակցութեան կովկասեան գործունէութիւնը եւ նրա գտումն չի կարող խանգարել Տաճկահայաստանի գործունէութիւնը, որովհետեւ Կովկասում Դաշնակցութեան մէջ նրա գաղափարները չդաւանող էլեմենտները մտել են տեղական պայմանների եւ տակտիկային սխալների շնորհիւ: Այս բոլորը ի նկատի ունենալով ընդունում ենք, Դաշնակցութիւնը մի է, որովհետեւ նա ունի մի աշխարհահայացք եւ այն սկզբունքները, որ նա ցանկանում է իրագործել կեանքի մէջ, հող ունեն Տաճկաստանում եւ թէ Ռուսաստանում: Դաշնակցութիւնը ընդգրկում է Տաճկաստանում եւ Ռուսաստանում Հայ աշխատաւոր ժողովրդի թէ՛ քաղաքական եւ թէ սոցիալիստական դատը: - Այս երկու բանաձեւերը պատգամաւորները քուէարկեցին ոչ թէ իբրեւ պաշտօնական ներկայացուցիչներ, այլ սոսկ իբրեւ դաշնակցականներ. հետեւապէս

ժողովին ներկայ եղող բոլոր ընկերները այս հարցում ձայնի իրաւունք ունէին: 1) Բանաձեւը ստացաւ 4 ձայն-որից 2ը պատգամաւոր եւ մէկ խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւոր: 2րդ բանաձեւը ստացաւ 11 ձայն որից 8ը պատգամաւոր. 1 խորհրդակցական պատգամաւոր ձեռնպահ մնաց:

Այնուհետեւ ժողովը քննեց պատգամաւորների իրենց ընտրողական շրջաններից բերած պաշտօնական մեծամասնութեան եւ փոքրամասնութեան կարծիքները, այդ միեւնոյն հարցի վերաբերմամբ:

Պատգամաւորների այդ հարցի մասին մեծ մասամբ արած զեկուցումներից բերանացի, երեւաց, որ բոլոր շրջաններում ընտրողների եւ առհասարակ դաշնակցական մասսաների ճշող մեծամասնութիւնը միութեան կողմն է: Միաժամանակ միութեան կողմնակիցների մեծամասնութիւնը պահանջում է, որ Դաշնակցութիւնը ունենայ ակտիւ գործունէութիւն Ռուսաստանում, զտուի իր աշխարհայեացքին անհամապատասխան տարրերից, եւ երեւան գայ իբրեւ աշխատաւոր դասակարգի պաշտպանը:

Նախագահ  
Քարտուղար  
Պատգամաւորներ՝  
III շրջան - Արսէն  
Նիթրա  
Թորոս  
Մելիք,  
III շրջան - Արսէն

**Ժ. Գիստ 27 Երեւանի, 1906 թ.**

Ժողովը բացուեց նախագահութեամբ Զոփուռեանի եւ քարտուղարութեամբ Թորոսի: Ներկայ էին 7 պատգամաւոր եւ 2 խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւորներ. բացակայ էին Պահակի պատգամաւորը եւ II կոմիտէի մէկ պատգամաւորը՝ Վ.-ն: 7րդ եւ 8րդ ժողովի արձանագրութիւնները կարդացուելուց յետոյ, ժողովը անցաւ հարցաքննարկի IIրդ մասին «Տաճկահայ խնդիր».- Պարզուեց որ երկրորդ մասի 1, 2, 4 եւ 5րդ կէտերը վերաբերում են բացառապէս Երկրի ներքին դրութեանը, որի մասին կարող են տեղեակ լինել եւ այդ հիման վրայ ապագայի ծրագիրը կազմել միայն Երկրում Տ[աճկա]հայաստանում գոյութիւն ունեցող մարմինները. հետեւաբար այդ կէտերը համարելով իբրեւ այս Երջանային ժողովի ձեռնհասութեան շրջանից դուրս գտնուող, որոշեց չպատասխանել նրանց: - Թէեւ 3րդ եւ 8րդ կէտերը նոյնպէս Տաճկաստանի առնչութիւն ունէին, բայց որովհետեւ նրանք շօշափում էին այն պայմանները որ գոյութիւն ունեն Տաճկաստանից դուրս, եւրոպական պետութիւնների մէջ, ժողովը հարկաւոր համարեց այդ կէտերի մասին իր կարծիքը յայտ-



նել, միացնելով երկու կէտերը մի կէտի մէջ (երրորդ կէտը՝ «Որ քաղաքական պայմանները եւ նրանց հաւանական ազդեցութիւնը Հայկական Դատի վրայ», եւ Յրդ կէտը՝ «քաղաքական դիպլոմատիկական քայլեր»)։ - Այդ հարցերի շուրջը պատգամաւորները ընդհանրապէս հետեւալ կարծիքն էին յայտնում. - քաղաքական պայմանները եւ մանաւանդ թուրք ժողովրդի տրամադրութիւնը թուրքիայում, որքան այդ մեզ յայտնի է փոփոխութեան են ենթարկուել վերջերս ի նպաստ ընդհանուր յեղափոխութեան։ Մինչեւ այժմ թուրքիայում գոյութիւն ունէին առանձին ազգերի ապստամբութիւններ. այժմ Ռուսական յեղափոխութեան ազդեցութեան տակ թուրք է թէ առաջ է գալիս նոյնպէս թուրքիայում ընդհանուր կազմակերպուած քաղաքական կռուի հնարաւորութիւնը։ Այժմ կարծես թէ հնարաւոր է դառնում աւելի սերտ կապեր հաստատել այլազգի դժգոհ տարրերի հետ եւ աւելի յաջող հետեւանքներ ստանալ. ապագայում այդ կապերը պիտի աշխատել աւելի եւ աւելի զարգացնել եւ համերաշխութեամբ գործել։ Ռուսաստանի յեղափոխութիւնը հնարաւոր է դարձնում վաղուայ ազատ Ռուսաստանի ծնունդը, որը պիտի ներգործող դեր ունենայ ի նպաստ Տաճկաստանի ազատութեան եւ նամանաւանդ Հայկական Դատի վերաբերմամբ։

Ուրիշ եւրոպական պետութիւնների մէջ գոյութիւն ունեցող քաղաքական պայմանները նոյնպէս թեքում են դէպի դեմոկրատիզմը եւ հետեւապէս նոյնպէս փոփոխուում են ի նպաստ Հայկական Դատին։ Բայց եւ այնպէս մեր ապագայ յեղափոխական քայլերը Տ[աճկաստա]նում չպիտի միայն պայմանաւորուեն եւրոպական պետութիւնների միջամտութեան հաւանականութեամբ, որովհետեւ այդպիսի յոյսերը կարող են դժբախտ հետեւանքներ ունենալ։ Եթէ յեղափոխութիւնը ուժգին թափ ստանայ Տ[աճկաստա]նում, անկախ նոյնիսկ այն բանից թէ ի՞նչ քաղաքական պայմաններ գոյութիւն ունեն Եւրոպայում, եւրոպական պետութիւնները ստիպուած պիտի լինեն միջամտելու, իրենց իսկ շահերից դրդուած։ Բացի դորանից պատգամաւորներին ումանք այն կարծիքն էին յայտնում, որ անցեալում այն յոյսերը, որ մենք ունեցել ենք Եւրոպայի միջամտութեան վերաբերմամբ, եւ որոնք չեն իրագործուել, չա՛տ անգամ վնասել են տաճկահայ ժողովրդին։ Յատկապէս դիպլոմատիկական քայլերի վերաբերմամբ, ընկեր թորոսն այն կարծիքն է յայտնում, որ այդ դիպլոմատիկական քայլերը չունենալով յեղափոխական բնաւորութիւն եւ չօչափելի հետեւանք հայ ժողովրդի ազատութեան, նպաստաւոր չեն յեղափոխական Դաշնակցութեան պրեստիժի<sup>41</sup> համար։

Ընկեր Ն.-ը առարկում է թէ դիպլոմատիկական միջամտութիւն առաջացնելու գաղափարը երբեք չէ նրկատուել իբրեւ յեղափոխական ակտ կամ կռուի միջոց։

Չպիտի մոռանալ՝ անկախ Տաճկահայաստանի հարցից աւելի ճիշդը նախքան այդ հարցի հրապարակ գալը, գոյութիւն ունի Արեւելեան հարցը, որը ուրիշ բան չի նշանակի բայց եթէ պետութիւնների Տաճկաստանում քաղաքական եւ տնտեսական նուաճման մրցումը։ Արեւելեան հարցը դարերի պատմութիւն ունի. Տ[աճկաստա]նի մարտիրոս ժողովուրդներից ո՛չ մինը այս կամ այն չափով իւր ազատագրութիւնը չէ ունեցել առանց պետութիւնների միջամտութեան. որովհետեւ Արեւելեան հարցի պատմական իրողութիւնները առաջացրել են այնպիսի պայմաններ, որոնք ստեղծել են միջազգային դաշնագրութիւններ, եւ շնորհիւ այդ պայմանների, դաշնագրութիւնների Տ[աճկաստա]նը հնարաւորութիւն չունի ինքնուրոյն որեւէ կարգադրութիւն անելու իր երկրի մէջ առանց պետութիւնների միջամտութեան եւ հաւանութեան։ Ռ[ուսաստա]նի ժողովուրդների ազատագրութեան հարցը զուտ ներքին հարց է, այնտեղ ժողովուրդների այս կամ այն քայլ անելը իրենց ձգտումներից է կախուած, որովհետեւ ռուսական պետութիւնը դեռ այնքան չէ ընկել եւ պետութիւնների հովանաւորութեան չէ ենթարկուել, դաշնագրերով չէ կաշկանդուել, բայց այնտեղ բոլորովին տարբեր է իրականութիւնը։ Բոլոր ազատագրուած ժողովուրդների ձգտումների դէմ պետութիւնները միշտ անհամակիր են վերաբերուել, յանուն իրանց մրցող շահերի պաշտպանութեան՝ միշտ Տ[աճկաստա]նի անձեռնմխելիութիւնն են պաշտպանել, բայց եւ միշտ էլ անդամահատել են Տաճկաստանը։ Կոմպրոմիսներ<sup>39</sup> են սարքել եւ տեղի տալով ժողովուրդների յամառ շարժումներին, ստեղծել են նրանց ազատագրութեան այս կամ այն կռիւր, այսինքն, իրենց վտանգուող շահերը եթէ լաւազոյն ձեւով չեն կարողացել պաշտպանել, վատթարագոյն ձեւը համակերպուելու, կոմպրոմիս անելու ստիպուել են։ Տաճկահայկական հարցը չէ կարող բացառութիւն կազմել Արեւելեան հարցի այդ անխուսափելի պայմաններից եւ մեր յեղափոխական տակտիկական գծուել է մինչեւ այժմ մեր երկրից դուրս, այսինքն հայաբնակ գաւառներից դուրս եւրոպական շահերի կենտրոնացած վայրերում այնպիսի գործողութիւններով՝ որով ամէնից աւելի հարուած ստանային պատութիւնների շահերը եւ ստիպուած լինէին միջամտելու եւ կոմպրոմիսների մէջ մտնելու։ Այդ ձեւի գործողութեան մենք անուանել ենք ցուցական գործողութիւն, որը սակայն մեր տակտիկայի յենակէտը չի եղել, այլ ընդունուել է իբրեւ արձագանգ Երկրի յեղափոխական շարժումների։

Յեղափոխական տակտիկայի, գործողութիւնից դուրս մենք ունեցել ենք յաճախ դիմումներ թէ պետութիւններին եւ թէ եւրոպական հասարակաց կարծիքին պետութիւնների բռնելիք դիրքի որոշման մէջ ազդե-

41.- Վարկի։

ցութիւն գործ դնելու համար, որը եթէ ոչ միշտ՝ գէթ երբեմն իւր օգտակար արդիւնքը ունեցել է. ճիշդ է, այդպիսի դիմումներ առնական պրեստիժի համապատասխան չեն, բայց մի ժողովուրդ՝ որ հնարաւորութիւն չունի ոտի կանգնելու իւր մարդկային տարրական իրաւունքները պաշտպանելու համար, մի յեղափոխական կազմակերպութիւն, որ կազմակերպուած ըմբոստացումը, դիմագրաւումը իրագործելու հնարաւորութիւնը, նախապատրաստութիւնը չէ ունեցել, եւ այդ ժողովրդին խողխողում են անգէն ու անպաշտպան, այդ կազմակերպութեանը անզուգական հերոսներին սպանդանոցներում են յօշոտում, այդպիսի պայմաններում, թոյլի, անճարակի բնագրական ճիշդ ու աղաղակն է, որ դուրս է պրծնում կրճերից, ծով շարժում է որ պլլում է թէկուզ օձին՝ մի ելք, մի փրկութիւն գտնելու յոյսով։ Անպատուաբեր է այդ շարժումը, բայց բնական ու անխուսափելի չարիք է։

Այնուհետեւ ժողովը անցաւ հարցացուցակի IIIրդ «Կովկասահայ խնդիր» մասին։ Ա. կէտի վերաբերմամբ ժողովը որոշեց, որ սա բովանդակում է իր մէջ պատմական կատարուած փաստերի մի տեսութիւն, որը պարզ է բոլորի համար. ուստի ժողովը անցաւ անմիջապէս 2րդ կէտին «Ինքնապաշտպանութեան գործը Կովկասում».- Այդ կէտի վերաբերմամբ պատգամաւորները հետեւեալ կարծիքներն էին յայտնում. - Ինքնապաշտպանութեան գործը իր վրայ վերցնելով Դաշնակցութիւնը հնարաւորութիւն տուեց համարեա ամբողջ հայ ժողովրդին իր լաւ եւ վատ յատկութիւններով, իր խաւար ու մութ տարրերով եւ իրար թշնամի դասակարգելով, մտնել կազմակերպութեան մէջ կամ իրեն դաշնակցական համարել եւ այդ բանը կուսակցութեան համար մի շարք բացասական եւ ծանր հետեւանքներ ունեցաւ։ Կազմակերպութեան մաքրութեան տեսակէտից այդ խոշոր սխալ էր, բայց անցեալի համար նա՛ շատ անգամ մի անհրաժեշտ չարիք էր ինքնապաշտպանութեան եւ յաջողութեան տեսակէտից։ Չնայած այդ բոլոր բացասական երեւոյթներին Դաշնակցութիւնը կարողացաւ պատմական մի հսկայական ծառայութիւն մատուցանել հայ ժողովրդին, ազատելով նրան վերահաս վրտանգից։ Դաշնակցութիւնը աշխատել է եւ ապագայում եւս աւելի պիտի աշխատէ ժողովրդին ինքնուրոյն կերպով վարել [տալ] ինքնապաշտպանութեան գործը. այն ժամանակ ամէն դաշնակցական պիտի մասնակցէ ինքնապաշտպանութեան գործին, իբրեւ հասարակութեան մի անդամ, աւելի եւս հարկ եղած դէպքում Դաշնակցութիւնը կարող է օգնել ինքնապաշտպանութեանը իր մարտական խմբերով։ Եթէ ինքնապաշտպանութեան կարիքը զգացուեց մօտ ապագայում, երբ ժողովուրդը ինքը դեռ ձեռնհաս չի լինել ղեկավարել գործը, Դաշնակցութիւնը պիտի տայ նրան ղեկավարներ, կազմակերպէ ինքնապաշտպանութեան խմբեր, չտալով սա-

կայն նրանց երբեք իրաւունք դաշնակցական խումբ, կամ դաշնակցական զինուոր կոչուելու։

Նախագահ Գոփուռեան  
Քարտուղար Թորոս  
Պատգամաւորներ՝ Մելիք,  
III շրջ. - Արսէն

ԺԳ. Սիստ Երեւանի 29. 1906 թ.

Ժողովը բացուեց նախագահութեամբ ընկեր Լեւոնիկի եւ քարտուղարութեամբ Թորոսի։ Ներկայ էին 8 պատգամաւոր եւ 2 խորհրդակցական ձայնով պատգամաւորներ. բացակայ էր Պահակի պատգամաւորը։

Ժողովին ներկայացաւ Ալազանի կողմից նոր եկած պատգամաւորը։ Ժողովը ի նկատի ունենալով, որ ընկերը նամակով էր պատգամաւոր նշանակուած եւ կատարուած ընտրութիւնների օրինական լինելու մասին ոչ մի վաւերացում չէր, որոշեց նրան խորհրդակցական ձայն տալ մինչեւ վկայաթղթերի ստանալը։ Այնուհետեւ ժողովը անցաւ «Կովկասահայ խնդիր» մասի 3րդ կէտին։ «Սեր ուղղութիւնը եւ բռնելիք դիրքը ընդհանուր յեղափոխական շարժման մէջ, ինչպէս եւ մեր ունեցալիք յարաբերութիւնները միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ»։ Այդ կէտը բազմակողմանի լուսաբանելուց յետոյ ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան. - Հայ աշխատաւոր ժողովրդի շահերը եւ ազատութիւնը պահանջում է որ Դաշնակցութիւնը ակտիւ մասնակցութիւն ունենայ Ռուսական յեղափոխութեան մէջ. այդ մենք կտրականապէս ընդունել ենք արդէն։ Դրժբախտաբար ռուս բիւրոկրատիան<sup>42</sup> որոգայթներ լարելով յեղափոխական շարժման դէմ, յաջողացրեց թուրք հայկական ընդհարումները, եւ Դաշնակցութիւնը, իբրեւ միակ կուսակցութիւնը որի համար թանգ էր հայ ժողովրդի գոյութիւնը, ստիպուած եղաւ առժամանակ մի կողմ թողնել մասսաներին կազմակերպելը ընդհանուր Ռուսական յեղափոխութեանը մասնակցելու համար եւ զբաղուել ինքնապաշտպանութեամբ ընդդէմ բիւրոկրատիայի հայ ժողովուրդի դէմ հանած հորդաների։ Մեր մարմինները մանաւանդ գաւառներում չեն պատրաստել մինչեւ այժմ աչքի ընկնող մասսաները կրթուած ձեւով Դաշնակցութեան սկզբունքներով [որ] գիտակից լինէր այդ սկզբունքներին։ Բնական է որ ապագայում մեր գործունէութիւնը այդ ուղղութեամբ պիտի լինի։ Մեր ուղղութիւնը Ռ[ուսաստա]նի յեղափոխութեան վերաբերմամբ բնորոշում է արդէն մեր Կովկասեան Գործունէութեան Նախագծով։ Մենք գործում ենք հայկական միջավայրում. մենք հայ ժողովրդի

42.- Դիւանակալութիւնը։

ազգային ինքնորոշման նախանձախնդիր եւ հայ աշխատաւոր ժողովրդի դասակարգային շահերը պաշտպանող կուսակցութիւն ենք: Մենք ձգտում ենք աշխատաւոր ժողովուրդի քաղաքական եւ տնտեսական լիակատար ազատութեանը: Այդ նպատակը իրագործելու համար մենք ձգտում ենք գործադրելու յեղափոխական տակտիկա: Սակայն Ռ[ուսաստան]ում որեւէ մի կուսակցութիւն, նամանականդ մի այնպիսին՝ որը սահմանափակուում է ազգային միջավայրով, չի կարող մէն մեծ նակ յեղափոխութիւն առաջ բերել եւ յաղթանակել: Յեղափոխութեան յաջողութեան համար, անհրաժեշտ է բոլոր ազգերի յեղափոխական սոցիալիստական կուսակցութիւնների համերաշխ գործակցութիւնը: Այդ համերաշխութիւնը պահանջում է նոյնպէս աշխատաւոր ժողովրդի շահերը, որովհետեւ նրա դասակարգային կռիւլը իր հուսկամբ միջազգային է: Դաշնակցութիւնը պիտի ամենասերտ կապեր հաստատէ նամանականդ Սոցիալ[իստ] Յեղափոխական կուսակցութեան հետ, որը մեզ ամէնից աւելի է նմանում, թէ իր աշխարհայեացքով եւ թէ իր տակտիկայով: Դժբախտաբար սոցիալիստական կուսակցութիւններից Ս. Դ.-եան միանգամայն եւ թշնամական դիրք է բռնած դէպի մեզ, նա միշտ կամ խուսափել է մեր համերաշխութեան առաջարկներից, կամ շահագործել է մեր ոչժը յօգուտ իր նեղ կուսակցական շահերի: Այդ ծագում է նրա որոշ դժգոհմանը հանդէպ եւ մասնաւորապէս վրացական Ս. Դ.-ի ունեցած շովինիստական զգացմունքներից: Մենք բաց անելով նրա մեր դէմ վարած իդէան, պայքարի բացասական կողմերը, պիտի վրիպենք [ստիպենք?] նրան համոզուել, որ յեղափոխութեան յաջողութիւնը պահանջում է բոլոր յեղափոխական կուսակցութիւններից հրաժարուել դիկտատորական ձգտումներից: Հայ-թուրքական կռիւնները ցոյց տուին որ քանի դեռ թրքական մասսան կը գտնուի տգիտութեան մէջ եւ չի ըմբռնել իր շահերը, յեղափոխութիւնը ջլատուած կը մնայ Անդրկովկասում եւ նոյնիսկ մեր ունեցած թէ քաղաքական եւ թէ տնտեսական կռիւլը մեր այդ ժողովուրդի աչքում կը պատկերացնի իբր իրեն դէմ ուղղած մի ազգային կռիւ, շնորհիւ մոռթ եւ յեղափոխական թշնամի ուժերի:

Այդ պատճառով մենք պիտի ոչ մի ջանք չխնայենք բաց անել թուրք ժողովրդի աչքերը, եւ ցոյց տալ նրան իսկական թշնամին:

Ընկերներից ոմանք գործնական առաջարկներ արին, որ օրինակ, կազմակերպութիւնը նիւթապէս ապահովէ այն թուրք կամ այլազգի տարրերին, որոնք այդ ուղղութեամբ կը գործեն թուրքական միջավայրում: Ուրիշները առաջարկում են որ մենք պրոպագանդայի միջոցով՝ տարածենք այլազգիների մէջ սոցիալ յեղափոխական գաղափարները, որպէսզի այդ

տարրերը խմբուեն այն կազմակերպութեան շուրջը որ ամէնից մօտ է մեզ:

Ժողովը անցաւ Թրդ կէտին, «Աշխատաւոր ժողովրդի կազմակերպութիւնը եւ մեր ստացած հետեւանքները»: Ի նկատի ունենալով, որ այդ հարցի պատասխանը տրուած է տեղեկագրի մէջ, ժողովը որոշեց հետեւալ երկու հարցերի վերաբերմամբ հրահրել դրսի ձեռնհաս ընկերներին, - Դուժման, Արամայիս, Լեւոն, Արտաշէս, Արսէն:

Նախագահ —  
Քարտուղար Թորոս  
Պատգամաւորներ՝ III շրջ. — Արսէն

**Ժ. Գիստ Նոյեմբերի 30, 1906 թ.**

Ժողովը բացուեց նախագահութեամբ ընկեր Լեւոնիկի եւ քարտուղարութեամբ Թորոսի: Ներկայ էին 7 պատգամաւոր եւ 4 խորհրդակցական ձայնով պատգամաւորներ: Բացակայ էին Դուժմանի եւ Պահակի պատգամաւորները: Ժողովին ներկայ էին բացի Կենտ. Կոմ.ի 3 անդամներից, դրսի ընկերներից 4 հոգի: Որոնք են Լեւոն, Արտաշէս, Արամայիս եւ Արսէն՝ բոլորը խորհրդակցական ձայնով:

Ժողովը անցաւ IIIրդ մասի Ծրդ կէտին «Դաշնակցութեան դերը քաղաքական-հասարակական այլ ասպարտզներում»:

Ժողովը որոշեց բնորոշել Դաշնակցութեան դերը հետեւեալ հասարակական հարցերում: 1) Եկեղեցական հարց, 2) Կրթական դպրոցական հարց, 3) Եկեղեցական-կալուածական խնդիր, 4) Համայնական հասարակութիւնների մէջ մեր ունենալիք մասնակցութիւնը: Այդ հարցերի վերաբերմամբ երկար թեր եւ դէմ կարծիքներից յետոյ առաջարկուեցին 2 բանաձեւեր:

**Ընկեր Լեւոնի բանաձեւը.-**

Հ. Յ. Դ.-ը, իբր աշխատաւոր ժողովրդի սոցիալիստական եւ յեղափոխական կազմակերպութիւն, ձգտում է հիմնելու զուտ աշխատաւորական հիմնարկութիւններ առանց որեւէ կոմպրոմիսի մէջ մտնելու շահագործող եւ իշխող տարրերի հետ: որեւէ մասնակցութիւն եկեղեցական հիմնարկութիւնների եւ այնպիսի հաստատութիւնների մէջ, որոնք եկեղեցու հովանաւորութեան տակ են գտնուում, Դաշնակցութիւնը ունենալ չի կարող, որովհետեւ լուսաւորչական եկեղեցին հայ կղերի եւ կեղեքիչների դասակարգային հիմնարկութիւն է: Հ. Յ. Դ.-ը պիտի խլէ եկեղեցու բոլոր դպրոցական հիմնարկները:

43.- Բարացած վարդապետական:

կութիւնները, եւ միանգամայն վերացնելով եկեղեցու ազդեցութիւնը դարձնէ նրան[ց] ժողովրդական եւ հակակեղեցական:

**Ընկեր Ս.-ի բանաձեւը.-**

Մեր Ծրագրով եւ Նախագծով գծուած եւ ամփոփուած են մեր քաղաքական ու սոցիալիստական աշխարհայեացքները եւ նպատակը, որոնք ձգտում ենք մենք, եւ աշխատելու ենք մտցնել կեանքի մէջ: Ուրեմն պարզ է, որ հարցը նպատակ, ծրագիր կազմելու, մեր աշխարհայեացքը պարզելու մասին չէ, այլ այն թէ ազգային՝ որպիսին են եկեղեցական, եկեղեցական-կալուածական, կրթական եւ ընդհանուր համայնական, որպիսին են տեղական ինքնավարութիւններ եւ համայնական հիմնարկութիւնների վերաբերմամբ, ընթացիկ կեանքում եւ վերաբերմունք պէտք է ունենանք: Այդ բոլորի վերաբերմամբ Հ. Յ. Դ.-ը չի կարող անտարբեր մնալ, ամէն մի առիթից օգտուելով իր աշխարհայեացքները ընթացիկ կեանքում դրանց մէջ մտցնելու համար, պէտք է իր ազդեցիկան ու պրոպագանդը անի, ու մասնակցի իւր ուժերի այն համաչափութեամբ՝ որով իւր ուժերը կուլ չզնան ու յեղափոխական գործը չտուժի:

Այս երկու բանաձեւերը դարձեալ ժողովի քննութեան առարկայ դարձան: Երկար թեր ու դէմ կարծիքներից յետոյ ժողովը, ի նկատի ունենալով ժամանակի ու լինելը որոշեց հետեւեալ ժողովում բանաձեւները փոփոխութեան ենթարկելուց յետոյ քուէարկութեան դնել:

Նախագահ —  
Քարտուղար Թորոս  
Պատգամաւորներ՝ III շրջ. — Արսէն

**Ժ. Գիստ Նոյեմբերի 31, 1906 թ.**

Ներկայ էին 8 պատգամաւոր եւ 3 խորհրդակցական ձայնով: Բացակայ էին Դուժմանի, Պահակի եւ II կոմիտէի մէկ պատգամաւորը, նոյնպէս Ալազանի պատգամաւորը՝ խորհրդակցական ձայնով:

Ժողովը բացուեց նախագահութեամբ ընկեր Նիթրայի եւ քարտուղարութեամբ Գուրգէնի: Քուէարկութեան դրուեց նախորդ ժողովում քննուած հարցացուցակի IIIրդ բաժնի Ծրդ կէտի վերաբերմամբ կազմուած 2 բանաձեւերը: 1) Բանաձեւը «Հայ Յեղ. Դ.-ը յենուելով իր Ծրագրի վրայ՝ ձգտում է խլել բոլոր կրթական հիմնարկութիւնները եկեղեցուց եւ յանձնել այն ժողովրդին»: Հ. Յ. Դ.-ը մասնակցում է բոլոր հասարակական հիմնարկութիւններին, լինին նրանք կրթական թէ համայնական: միեւնոյն ժամանակ մասնակցել ուժերի այն համաչափութեամբ, որ մեր զուտ ծրագրային գոր-

ծունէութիւնը այդ ուժերի բացակայութեամբ չտուժէ»: Այս բանաձեւը անցաւ 2-ի դէմ 4 ձայնով: 2) Բանաձեւը.- «Որեւէ մասնակցութիւն եկեղեցական հիմնարկութիւնների եւ այնպիսի հաստատութիւնների մէջ, որոնք եկեղեցու հովանաւորութեան տակ են գտնուում, Դաշնակցութիւնը ունենալ չի կարող, որովհետեւ լուսաւորչական եկեղեցին հայ կղերի եւ կեղեքիչների դասակարգային հիմնարկութիւն է»: Այս բանաձեւը մերժուեց 4 ձայնով ընդդէմ 2-ի:

Ժողովը անցաւ հարցացուցակի IV բաժնի 1. կէտին: այդ խնդիրը որոշուեց թողնել աւելի բազմամարդ նիստում քննելու: Նոյն բաժնի 2րդ եւ 3րդ կէտերը ժողովը իր ձեռնհասութիւնից դուրս համարելով հրաժարուեց նրանց մասին որոշ կարծիք յայտնել: V բաժնում նշանակուած խնդիրների բարդութիւնը եւ մեծ կարեւորութիւնը ի նկատի առնելով, մասնաւորապէս Կովկասեան նախագիծը՝ որոշուեց ընտրել ձեռնհաս ընկերներից մի մասնաժողով, որ պիտի զբաղուի այդ խնդիրներին վերաբերեալ հարցերի կարգադրութեամբ՝ ժողովիս քննութեան ներկայացնելու համար: Այնուհետեւ ժողովը անցաւ VI բաժնին «պրոպագանդա» որի առաջին կէտն է «Դրօշակ եւ այլ կիսապաշտօնական թերթեր»:

Դրօշակի վերաբերմամբ ընկերներից մէկը յայտնում է այն կարծիքը, որ միանգամայն անհետաքրքիր կը լինի այսուհետեւ նրա առաքումը Կովկաս, որովհետեւ Դրօշակը նուիրուած է բացառապէս տաճկահայ դատին: Բացի այդ՝ Դրօշակի մէջ եղած Տաճկահայաստանի վերաբերմամբ տեղեկութիւնները կարդում ենք եւ մեր կիսապաշտօնական անուանուած «Երկիր» թերթում, որոնք աւելի թարմ են լինում: Այդ առթիւ թեր եւ դէմ կարծիքներ են լինում, նախագահը բացատրում է, թէ չնայած, որ Դրօշակը 1900ից ի վեր միմիայն տաճկահայ դատով չի զբաղուած եղել, այլ նա զբաղուել է եւ ռուսահայ հարցով, բացի այդ իբրեւ միակ պաշտօնական օրգանը, նոյնքան հետաքրքիր պիտի լինի մեզ համար, որքան եւ տաճկահայերի համար, թէ տեղեկութիւնների վերաբերմամբ եւ թէ տեսական հարցերի տեսակէտից, ուրեմն չընդունել նրա ներմուծումը Կովկաս՝ չենք կարող: Բայց ցանկալի է նրա բովանդակութեան մէջ մտցնել սիստեմ եւ բարեփոխութիւն, ճոխութիւն, այնպէս որ Դրօշակը իբրեւ ամբողջ կազմակերպութեան պաշտօնական օրգանը, բովանդակի իւր մէջ զուտ յեղափոխական սոցիալական աշխարհայեացքների տեսական մաս,- տեղեկութիւններ, եւ քաղաքական տեսական մաս, պիտի եւ այլն: Կիսապաշտօնական թերթերին գալով. առաջարկութիւններ եղան Կովկասի կենտրոնական վարչերում մի կամ երկու կիսապաշտօնաթերթեր ունենալ, ինչպէս եւ 1 ռուսերէն թերթ, միջկուսակցային հարցերին եւ վէճերին նուիրուած: Նախագահը առաջարկում է սկզբունքով ընդունել, որ կուսակցութեան կովկասեան բաժնի համար լինի մի ընդհա-



նուր օրգան, որի կիսապաշտօնականութիւնը կայանում է նրանում, որ տեղական քաղաքական պայմանների շնորհիւ ճակատումը չի կարելի յայտարարել «Օրգան Հ. Յ. Դ. եան»: Եւ որպէսզի այդ օրգանի ուղղութիւնը անձնական հայեացքներով չլինի, յեղափոխական օրգանի բարձրութիւնից չընկնի, ինչպէս «Երկիր» է, նրա ուղղութիւնը գծի, սահմանի կովկասեան Երջանային ժողովը<sup>44</sup> որ եւ ընտրի պատասխանատու խմբագրութիւնը, իսկ Արեւելեան Բիւրոն հսկի նրա ուղղութեանը: Նոյնը եւ ռուսերէն լեզուով թերթի համար, որի կարիքը զգացում է: Բացի դրանից եւ զուտ տեղական կուսակցական շահերին ու հարցերին նուիրուած, մի մի թերթ ունենալ, ամէն մի կենտ. կոմ. ի շրջանում, որի խմբագրութիւնը եւ ուղղութիւնը կ'ընտրի ու կ'որոշի կենտ. կոմ. ի Երջանային ժողովը: Ի հարկէ գաւառական թերթերի այս առաջարկը կ'իրագործուի այն շրջաններում, ուր հնարաւոր կը լինի: Ժողովը միաձայն ընդունեց այս առաջարկը:

Նախագահը կարդում է երկրորդ կէտը՝ «Կուսակցական այլ գրականութիւն»: Ժողովը միաձայն անվիճելի ընդունելով՝ որ մեր գրական պաշարը եւ մատակարարումը շատ աղքատ ու չնչին է եղել, որ միայն վերջերս «Յառաջի գրադարանի» աղքատիկ պրոչիւրները մի քիչ սկսեցին դուրս գալ, որոնց տարածելու գործը շատ թոյլ է տարւում մարմինների կողմից, անհրաժեշտ համարւեց ինքնուրոյն եւ թարգմանական գրականութիւնը ճոխացնելու, մասսայի գիտակցութեանը համար բաւականաչափ պաշար կարենալ հասցնելու համար յատուկ մի մարմին ստեղծել, որը նուիրուած կը լինի միմիայն այդ գործին, որ պատասխանատու կը լինի իր գործունէութեան համար: իսկ գրականութիւնը մասսայի մէջ տարածելու համար շրջուն գրավաճառներ ունենալ, տեղական մարմինների հսկողութեան եւ իրաւասութեան տակ դրուած, եւ որպէսզի այս անհրաժեշտ պահանջներին հնարաւոր լինի բաւականութիւն տալ՝ մարմինների եկամտային ծախքի գոյութիւն ունեցող որոշ տոկոսը ջնջել, որին փոխարինել միայն այն սկզբունքը, թէ մարմինները տեղական ծախքերը դուրս գալուց յետոյ՝ մնացորդ եկամուտը փոխադրում են Բիւրոյի սնտուկը: Անցնելով 3րդ կէտին, այն է, «բանուորական եւ գիւղացիական պրոպագանդը», ժողովը առանց վէճի նոյնպէս գտաւ, որ այդ գործն էլ չափազանց թոյլ ու անհետետեղական է դրուած նախապատրաստել պրոպագանդիստներ չունենալու պատճառով: Ուստի ժողովը անհրաժեշտ է համարում հիմնել պրոպագանդիստներ պատրաստելու յատուկ կուրսեր, ինչպէս Թիֆլիսում նախափորձը արդէն կատարուած է, բայց այդ գործը պատահականութեան չենթարկել, այլ պարտաւորիչ անելով, դրա համար յատուկ մի մարմին ստեղծել եւ նախահաշուով յատուկ գումար սահմանել: ինչպէս պէտք է արուի այդ իրականութեան համար —

սահմանել պրոպագանդիստների ցենզ, եւ առանց ցենզի ոչ-ոքի պրոպագանդիստի դեր չտալ: ու այդպիսով թէ պրոպագանդը գիտական, որոշ աշխարհայեացքի, սիստեմի վրայ դնել, եւ թէ պրոպագանդիստների ցանցով պատել գաւառները: հակառակ պարագայում անհնար կը լինի պահպանել կուսակցութեան գոյութիւնը եւ մեր յենակէտը կազմող պրոպագանդայի գիտակցութիւնը բարձրացնելով հասնել սոցիալ քաղաքական ակտիւ գործունէութեան:

Ընդունելով եւ արտասահմանեան պրոպագանդի կարեւոր գործը որ ոչ միայն տաճկահայերի, այլ եւ Ռուսաստանի քաղաքական կեանքի վրայ որոշ ազդեցութիւն թողնում է, Ֆրանսերէն «Պրո Արմէնիա» ի նրման անգլերէն ու գերմաներէն օրգաններ ունենալու ցանկութիւնը յայտնելով, վերջնական որոշումը թողւեց Ընդհանուր ժողովի հայեցողութեանը:

|                |                    |
|----------------|--------------------|
| Նախագահ        | Նիթրա              |
| Քարտուղար      | Գուրգէն            |
| Պատգամաւորներ՝ | III շրջ. ի — Արսէն |

**ԺԶ. Միստ Դեկտեմբերի 2ին, 1906 թ.**

Ժողովը բացուեց նախագահութեամբ ընկեր Ն. ի եւ քարտուղարութեամբ Թ. ի: Ներկայ էին 7 պագամաւոր եւ 3 խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւոր: Բացակայ էին Պահակի եւ Քանդուած քաղաքի պատգամաւորները: Ժողովին ներկայ էին նաեւ բացի Կ. Կ. ի 2 ընկերներից, դրսի ընկերներից 1 հոգի:

Ժողովը անցաւ հարցաքննարկի IV մասի Ա. կէտի քննութեանը: «Տաճկահայ եւ կովկասահայ խնդիրների ներքին կապը գործունէութեան եւ կազմակերպական տեսակետից»:

Այդ հարցը բոլոր ներկայ եղող ընկերների կողմից լուսաբանուելուց յետոյ առաջարկուեցին հետեւեալ բանաձեւերը: Ընկեր Թ. ի առաջարկը 1) Դ. ը հիմնուած է կազմակերպական տեսակետից ապակենտրոնացման սիստեմի վրայ, որը հնարաւորութիւն է տալիս տաճկահայ եւ ռուսահայ կազմակերպութիւնների լիակատար ինքնավարութիւն տակտիկի եւ կազմակերպական տեսակետից: 2) Դ. եան տաճկահայ եւ ռուսահայ մարմինները կապուած են ընդհանուր աշխարհայեացքով եւ սոցիալական քաղաքական նպատակով, Ընդհանուր ժողովով եւ փոխադարձ օժանդակութեամբ: 3) Ընդհ. ժողովը զբաղւում է կուսակցութեան աշխարհայեացքը, նրա քաղաքական-սոցիալական նպատակը եւ այդ

44.- Բազմաթիւ Կեդրոնական Կոմիտեներու շրջաններու հաւաքական այդ ժողովները կը կոչուէին Ռայոնական ժողովներ:

նպատակին հասնելու համար գործադրելիք տակտիկայի տեսական մասի ծրագրելովը եւ նրա փոփոխելովը: 4) Ընդհանուր ժողովը զբաղւում է տաճկահայ եւ ռուսահայ կազմակերպութիւնների անցեալ գործունէութեան քննութեամբը: 5) Ընդհանուր ժողովը ուրուագծում է փոխադարձ օժանդակութեան ձեւերը եւ չափը: 6) Կազմակերպական հարցերի եւ գործնական տակտիկի վերաբերմամբ, տաճկահայ եւ ռուսահայ մարմինները վայելում են Մրագրի սահմաններում կատարելա ինքնավարութիւն. այդ հարցերը որոշուում են նոյն երկրների գործիչների Ռայոնական ժողովներում: Ընդհանուր ժողովը այդ հարցերի վերաբերմամբ պիտի անպայման ղեկավարուի ամէն մի Ռայոնական ժողովի իր երկրի համար ներկայացրած գործունէութեան տակտիկի ծրագրով: 7) Արեւելեան Բիւրոն գործադրիչ մարմին է միայն Ռուսաստանի վերաբերմամբ: 8) Արեւելեան Բիւրոյին կից կամ նրանից կազմուում է Տաճկաստանի պայմանների ծանօթ մի մասնաժողով, որը հսկում է Ընդհանուր ժողովում որոշուած օժանդակութեան կանոնաւոր ընթացքին:

**ԸՆԿԵՐ Ն[իթրայի] առաջարկը.**

Որովհետեւ հարցը դրուած է գործունէութեան եւ կազմակերպական տեսակետից կովկասահայ եւ տաճկահայ գործունէութեան կամ խնդիրների ներքին կապի մասին, ուստի եւ մեր որոշումները պէտք է լինին այդ սահմաններում: Մենք ունինք արդէն մեր որոշումը ու առաջարկը թէ ինչո՞ւմն է կայանում թէ Տաճկաստանում եւ թէ կովկասում մեր քաղաքական ու սոցիալական աշխարհայեացքը, նպատակը, որոնց հասնելու համար գծած ունինք նաեւ, իբրեւ յեղափոխական կազմակերպութեան, մեր ընդհանուր տակտիկան թէ Տաճկաստանի եւ թէ կովկասի համար: Մեր կազմակերպութեան համար արդէն ունինք անվիճելի սիստեմ՝ ապակենտրոնացումը որը անփոփոխելի ենք ընդունում մեր գործունէութեան երկու վայրերումն էլ: Մենք ընդունում ենք որ Հ. Յ. Դ. ը մի եւ անբաժան է: Ղեկավարելով այս սկզբունքներով ու հայեացքներով մենք ընդունում ենք որ 1) Ընդհանուր ժողովը կուսակցութեան միութիւնը արտայայտող բարձրագոյն մարմինը եւ ընդհանուր կազմակերպութիւնը ներկայացնող ներկայացուցչական ժողովն է: 2) Ուստի, Ընդհ. ժողովը ո՛չ միայն Հ. Յ. Դ. եան սահմանադիր ժողովն է՝ ուր ծրագրւում կամ փոփոխութեան է ենթարկւում կազմակերպութեան քաղաքական ու սոցիալական աշխարհայեացքը, նպատակը եւ յեղափոխական ընդհանուր տակտիկան, այլ եւ բարձրագոյն հեղինակութիւնն է կազմակերպութեան բոլոր մարմինների, այլ եւ վերաքննիչն ու վերջնական հաստատող մարմինը ժամանակաւոր տակտիկայի եւ բիւրջէի, որ մշակուած է մի Ընդհանուր ժողովից մինչեւ միւս Ընդհանուր ժողովի

գումարման ժամանակամիջոցի համար հետագայ 4րդ, 5րդ եւ 6րդ յօդուածների կարգով: 3) Ընդհանուր ժողովի իրաւասութեան սահմանի մէջ է նաեւ լընտրութիւնը? Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոնների, պաշտօնական օրգանների խմբագրութիւնների եւ Պատասխանատու Մարմինների: 4) Թէ Տաճկահայաստանում եւ թէ կովկասում գոյութիւն ունեցող եւ կամ գոյութիւն ունենալիք ամէն մի կենտ. կոմ. է իւր շրջանի Երջանային ժողովն ունի՝ որի իրաւասութեան սահմանի մէջ է մտնում իւրաքանչիւրի տեղական պայմանների համապատասխան տակտիկան եւ բիւրջէն որոշել: 5) Թէ Տաճկահայաստանում եւ թէ կովկասում Կ. Կ. ի շրջանային ներկայացուցիչներից բաղկացած կովկասեան եւ Տաճկահայաստանի առանձին առանձին Ընդհանուր Երջանային ժողովները նախագծում են իրենց շրջանի յատուկ տակտիկան ու բիւրջէն եւ առաջարկում են ի հաստատութիւն Ընդհանուր ժողովին: 6) Ընդհանուր ժողովը այդ կարգի վերաքննութեան եւ որոշման պարագայում պիտի անպայման ղեկավարուի այդ երկու երկրների Երջանային ժողովների յայտնած տեղական պայմաններով եւ առաջադրած պահանջներով: 7) Տաճկահայաստանի, Մեծ եւ Փոքր Հայքի ու Կիլիկիայի տարածութիւնները եւ տեղական առանձնապատկութիւնները աչքի առաջ ունենալով, կարելի է Տաճկահայաստանի համար երկու գլխաւոր Երջանային ժողովներ սահմանել, որոնց աշխարհագրական սահմանները կ'որոշէ Ընդհանուր ժողովը: 8) Եթէ տեղական պայմանները անհնար ցոյց տան Տաճկահայաստանի համար մի կամ երկու Ընդհանուր Երջանային ժողովի հիմնարկութիւնը, Ընդհանուր ժողովին է թողնուում որոշել դրան փոխարինող մարմինը: 9) Երկու Բ. ների իրաւասութեան եւ աշխարհագրական սահմանները մտնում են ըստ առաջնոյն, որոնք վարչական ոչ մի կարգադրիչ իրաւունք չունին, եւ որոնց պարտականութիւնն է հրակել եւ հետեւել Երջանային եւ Ընդհանուր ժողովների որոշումների գործադրութիւնը, լինել միջնորդ յարաբերութիւնների, կատարող բաշխումը ընդհանուր մուտքի: 10) Որովհետեւ երկու Բիւրոնների աշխարհագրական սահմանի մէջ մտնում են եւ երկու երկրների մասեր, ուստի եւ դրանք ընտրւում են երկու երկրների Ընդհանուր Երջանային ժողովից առաջարկուած թեկնածուներից եւ Ընդհանուր ժողովի կողմից: 11) Տաճկահայաստանի Երջանային ժողովի թեկնածուներից ընտրուածները Տաճկահայաստանի, իսկ կովկասեան Երջանային ժողովի թեկնածուներից ընտրուածները կովկասեան բաժնի գործունէութեան աշխատանքը պիտի ստանձնեն իրենց պատկանած Բիւրոյական կազմի մէջ, պահելով սակայն ամէն մէկ Բիւրոյի ամբողջական կազմի միութիւնը եւ կարեւոր ու պատասխանատու հարցերի որոշման պարագայում ձայների հաւասար իրաւունքը: 12) Երկու երկրների սահմանի վրայ գըտ-

նրաձ մարմինները՝ միմիանց օժանդակող հարցերի, գործերի եւ ձեռնարկների համար պարտաւոր են անպայման փոխադարձ համաձայնութիւն կայացնել: 13) Տեղական խոշոր քաղաքական շարժումների, կռուի եւ ապստամբութեան պարագաներում երկու երկրների Շրջանային Ընդհանուր Ժողովները վայելում են Ընդհանուր Ժողովի իրաւունք կազմակերպութեան Ընդհանուր Ժողովին (համարատու) լինելու պայմանով: Առաջին առաջարկը ստացաւ 2 ձայն, երկրորդը՝ 6 ձայն:

Նախագահ Նիթրա  
Քարտուղար Թորոս  
Պատգամաւորներ՝ III Շրջ. — Արսէն

ժժ. Միտ 3 Դեկտեմբեր, 1906 թ.

Ժողովը բացուեց նախագահութեամբ ընկեր Նիթրայի եւ քարտուղարութեամբ ընկ. Թ. Ի: Ներկայ էին 7 պատգամաւոր եւ 2 խորհրդակցական ձայն ունեցող պատգամաւոր: Ժողովին ներկայ էին նաեւ բացի Կենտկոմ. Ի 2 ընկերներից, դրսի ընկերներից 2 հոգի:

Ժողովի գրադուռների առարկան էր հարցադրուցակի VIIրդ բաժինը «Դրամական հարց»: Քննելով այդ բաժնի Ա. կէտը, - «Եկամուտներ», - ժողովը եկաւ այն եզրակացութեան որ ապագայում եւս կազմակերպութեան եկամուտները պիտի լինին անդամավճարները, հանգանակութիւնները, երեկոյթները եւ այլն, ինչպէս անցելու: Անդամավճարների վերաբերմամբ պարզուեց որ, անցելու դրամական օժանդակ խմբերը իրաւունք ունենալով մասնակցել Դաշնակցական մարմինների ընտրութիւններին եւ ձայն ունենալով ամէն մի կուսակցական հարցի վերաբերմամբ, մտցրել են Դաշնակցութեան մէջ այնպիսի տարրեր, որոնք իրենց հայեացքներով կամ դրուժեամբ չեն կարող Դաշնակցութեան Մրազիրը կեանքի մէջ իրագործել: Ապագայում կազմակերպութիւնը այդպիսի տարրերից զտելու համար Շրջանային Ժողովը որոշեց - Այնպիսի անհատները կամ խմբերը, որոնք համակրելով Դաշնակցութեան որեւէ գործը՝ նիւթապէս օժանդակում են կազմակերպութեանը, բայց իրենց կեանքով չեն իրագործում կեանքի մէջ Դաշնակցութեան Մրազիրը, չեն ճանաչում կազմակերպութեան կողմից իբր դաշնակցականներ, եւ հետեւապէս ընտրող եւ ընտրելի լինելու իրաւունքը չունեն: (Այս որոշումը չէ վերաբերում Դաշնակցութեան բազիսը<sup>45</sup> կազմող աշխատաւոր մասսաներին): Այնուհետեւ Ժողովը անցաւ այն հարցին, թէ ո՞վ ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը ունի:

1) Ընկեր Թ. առաջարկում է. - Ի նկատի ունենալով որ Դաշնակցութեան բազիսը կազմող աշխատաւոր մասսաները մեծ մասամբ անգիտակից են եւ թէեւ կազ-

մակերպութիւնը նրանցից խմբեր է կազմում, բայց այն նպատակով որ նրանց ապագայում գիտակցութեան բերի՝ խմբերի անդամները իրաւունք ունեն միայն Դաշնակցութեան Մրազիրին գիտակից ներկայացուցիչներ ընտրել: Ներկայացուցիչները ընտրում են ենթակոմիտէ եւ կոմիտէ, իսկ կոմիտէների ներկայացուցիչները ընտրում են Կենտ. Կոմիտէ:

2) Ընկեր Ս. նոյն վերոյիշեալ պատճառները ի նկատի ունենալով առաջարկում է, որ կուսակցական հարցում ձայն ունենան այսինքն ընտրող եւ ընտրելի լինեն միայն գիտակից ճանաչուած դաշնակցական անհատները:

3) Ընկեր Զ. առաջարկում է՝ խմբի անդամները անխտիր իրաւունք ունին ընտրելու եւ ներկայացուցիչներ եւ ենթակոմիտէ: Կոմիտէն ընտրում են խմբի ներկայացուցիչները, իսկ Կենտրոնական Կոմիտէն ընտրում են կոմիտէների ներկայացուցիչները: Ա. առաջարկը ստացաւ 1 ձայն, երկրորդը 3, երրորդը նոյնպէս 3 ձայն:

Այնուհետեւ դրուեց Ընդհանուր Ժողովի համար ընտրուելիք պատգամաւորի հարցը: Առաջարկուեցին 3 թեկնածուներ՝ Լեւոն, Նիթրա եւ Զոփուռեան: Առաջին երկուքը թեկնածութիւնից հրաժարուեցին եւ Զոփուռեանը ընտրուեց 6 ձայնով 1 ձեռնպահութեամբ:

Նախագահ Նիթրա  
Քարտուղար Թորոս  
Պատգամաւորներ՝ III Շրջ. — Արսէն

ժժ. Եւ ժժ. Միտ Դեկտ. 5իւ եւ 6իւ, 1906 թ.

Դեկտեմբեր 5ին ներկայ էին 5 ձայն ունեցող՝ եւ 2 խորհրդակցական պատգամաւորներ եւ դրսից հրաւիրուած 4 ընկերներ:

Դեկտեմբերի 6ին ներկայ էին 4 ձայն ունեցող եւ 2 խորհրդակցական ձայնով պատգամաւորներ ու դրսից հրաւիրուած 4 ընկերներ:

Որովհետեւ ձայն ունեցող պատգամաւորների 9 թրււից կէսից պակաս էին Դեկտեմբեր 6ին նիստին ներկայ եղողները, եւ այդ նիստը շարունակութիւն էր 5ին Դեկտեմբեր նիստին, ու այդ վերջին նիստի եզրակացութիւնը պատգամաւորների կողմից քուէարկելու համար օրինական մեծամասնութիւն չկար, ուստի Ժողովի այդ նիստերը անպաշտօն համարուելով, որոշուեց ներկայ եղողների մեծամասնութեան եւ փոքրամասնութեան հայեացքները արձանագրել իբրեւ մեր գոյութիւն ունեցող հայեացքների:

Այդ Ժողովներում օրակարգն էր Դաշնակցութեան Կովկասեան Գործունէութեան Նախագիծը: Յաջորդա-

բար նախագահում էր ընկեր Նիթրան: Կարդացուեց նախ խորհրդից ընդունած նախագծի ներածութիւնը եւ ապա ամբողջ բովանդակութիւնը, որից յետոյ սկսուեցին քննադատութիւնները եւ կարծիքների փոխանակութիւնը: Ոմանք այն կարծիքն էին յայտնում՝ որ ներածութիւնը չի բովանդակում սոցիալիստական եւ քաղաքական, որոշ պատմա-փիլիսոփայական աշխարհահայեացք, եւ նախագծի բովանդակութիւնը չէ բաժանուած նոյնպիսի սիստեմական դասաւորութեան, որպիսին է, օրինակ, Ռ. Յ. կուսակցութեան ծրագիրը, որով նախագիծը մի խառնուրդ է ներկայացնում ազգայնական, Ս. Դ[եմոկրատա]կան, Ս. Յ[եղափոխական] մտածողութիւնների:

Ընկեր Ն. եւ ուրիշները առարկում էին, որ անտեղի է այդ քննադատութիւնը, որովհետեւ նախագիծը Հ. Յ. Դ. եան իբրեւ Սոց[իալ] Թ[եղափոխ]ական կուսակցութեան ընդհանուր ծրագիրը չէ, եւ հետեւաբար, իբրեւ այդպիսին չէր կարող ծրագրային պատմափիլիսոփայական ներածութիւնը բովանդակել: Նախագիծը չէ մեր այն ծրագիրը որ գծում է մեր նպատակը եւ նրան հասնելու համար մեր ընդհանուր տակտիկան, այսինքն նրա պատակին հասնելու համար գործ դրուելիք միջոցները, այլ այդ ներածութիւնը պատմութիւնն է Հ. Յ. Դ. եան Կովկասում ակտիւ գործունէութիւն ստանձնելու ու պարտաւորացնող պայմանների եւ հանգամանքների, իսկ նախագծի ընդհանուր բովանդակութիւնն է այն նուազագոյն պահանջները՝ որոնք կարող են բխուել մեր ընդհանուր Մրագրից, այն նուազագոյն պատճիւրմը, որը մենք կարող էինք դնել Անդրկովկասեան Դեմոկրատիական Ֆեդերատիւ քաղաքական կեանքի մէջ օրէնսդրելու եւ իրագործելու համար, որից յետոյ մենք կը կարողանայինք անցնել մեր էական, սոցիալիստական պահանջներին, ապագայ ընկերվարական շէնքը հիմնելու համար:

Ճիշտ է, որ նախագծի դասաւորութեան մէջ անկանոնութիւն կայ, բայց այդ անկանոնութեան մէջ մասնակցութիւն ունեն հէնց իրենք քննադատողները, եւ պէտք է աչքի առաջ ունենալ այն հապճեպ մոմենտը՝ երբ կուսակցութիւնները, Ռուսական յեղափոխութեան նախօրեակին, հապճեպով կազմում էին նախագծեր Ռուսաստանում եւ ծայրերում յեղափոխութեան մտքը նելիք կարգերի համար: Արդ, այն օրից ցարդ ընդհանուր յեղափոխութիւնը ունեցաւ բազմաթիւ երեսներ, անակնկալներ եւ մենք օրուայ դրութեան առաջ կանգնած, զոնէ տեսականապէս՝ ենթադրում ենք, հնարաւորութիւն ունենք աւելի բազմակողմանի, աւելի սառնարիւնութեամբ, աւելի փորձառութեամբ քննել եւ ասել մեր նախագծային նուազագոյն պահանջները. - առաջադրուած քաղաքական եւ կուլտուրական կողմը որքան համապատասխան է մեր ծրագրին ու սկզբունքներին, այնքան համապատասխան են շրջապատող պայ-

մաններին ու կեանքի զարգացման ու բարելաւման աստիճանին: Ուստի մեր քննադատութիւնը անհրաժեշտօրէն պէտք է կատարել այն սահմաններում, կատարելով այդ թէ առաջադրուած քաղաքական ֆեդերատիւ կողմի(?)<sup>46</sup> ընդհանուր եւ մասնակի տրամադրութիւններին եւ թէ սոցիալական, կուլտուրական, վարչական պետական յարաբերութիւնների սահմանող յօդուածներին: Համաձայն այս առաջարկի, Ժողովը սահմանաւորեց իւր նախագծային քննութիւնը:

Ընկեր Լ. նկատեց, նախ, որ ֆեդերատիւ քաղաքական կազմի նախագծում գծուած մանրամասնութիւնները անժամանակ ու աւելորդ են, որովհետեւ չի կարելի նախատեսել եւ նախորոշել թէ այդ մանրամասնութիւնները որքան համապատասխան կը լինին իւր ժամանակի պայմաններին ու պահանջներին: Երկրորդ՝ նկատեց՝ որ աշխատաւոր դասակարգի շարժերում մանր արհեստաւորներին եւս ընդունելը անհամապատասխան է աշխատաւոր դասակարգի ըմբռնումին: Երրորդ առաջարկում էր, եթէ ոչ առաջնութիւն տալ հողային աստիճանական համայնացումին, գէթ միատեսակ առաւելութիւն եւ կարելորութիւն տալ գիւղացիութեան համագործակցական ձեռնարկներին ու ընկերակցութիւններին, որոնք զարգացնելով գիւղացիութեան համայնական ձգտումները՝ պիտի կազմեն սաղմը եւ նախապատրաստեն ապագայ ընկերվարական հասարակութեանը[sic]:

Ժողովը նախ անցաւ մանր արհեստաւորների հարցին. մեծամասնութիւնը գտնում էր, որ մանր արհեստաւոր ասելով ըմբռնում է այն կարգի արհեստաւորներին, որոնք ունեն իրանց կապիտալը, թէկուզ ամենանուազագոյն չափով, որոնք ունեն մէկ կամ աւելի արհեստաւորներ օրավարձով, որոնք ձգտում են դէպի խոշոր գործարանատիրութիւնը, որոնք պարունակելով իրանց մէջ աշխատաւորի աշխատանքը շահագործելու սիստեմը եւ դէպի խոշոր շահագործման ձգտումը աննպաստ տարր են ներկայացնում սոցիալիզմի իրականացմանը, որ այդ կարգի մանր արհեստաւորութեան տնտեսութեան արդիւնաբերութեան զարգացման օրէնքով՝ ենթակայ խոշոր ինդուստրիական նրաւճման, դատապարտուած է անհետանալու եւ օրավարձով աշխատաւոր, պրոլետարիատ լինելու, որ այդ կարգի մանր արհեստաւորների շահերը իւր օրավարձով, աշխատաւորի շահերի հետ հաշտեցնել ու պաշտպանելը անհնար է, որ այդ դասակարգի անհետացումը պահանջում է նոյնիսկ սոցիալական տնտեսական յառաջադիմութեան շահերը, ուստի եւ չի կարելի նրան ընդունել սոցիալական կուսակցութեան պաշտպանելիք աշխատաւոր դասակարգի շարժերում եւ իբրեւ այդպի-

46.-Պէտք է ըլլայ հաւանաբար ֆեդերատիւ (դաշնակցային) կազմը:

սին, պիտի ջնջել մեր կուսակցութեան յենուելիք աշխատաւոր դասակարգի բազիսի շարքից:

Փոքրամասնութիւնը առարկում էր՝ որ հայկական գաւառական կեանքում գոյութիւն ունեցող մանր արհեստաւորութիւնը չի կարելի նմանցնել արդիւնաբերական կենտրոնների, քաղաքների մանր արհեստաւորութեանը, որ հայկական-գաւառական կեանքում գոյութիւն ունեցող խեղճուկ մանր արհեստաւորութեան շահերը համարեա չեն գանազանուում իւր աշխատեցրած օրավարձով աշխատաւորի շահերից՝ 2 կողմերի աշխատանքի ու վարձատրութեան չափերը աննկատելի գանազանութեան պայմանների մէջ գտնուելով, որ այդ կարգի մանր արհեստաւորութիւնը, իւր իսկ անհետացման ենթակայ պայմանների եւ օրէնքի շնորհիւ ընդունակ է՝ ոչ թէ սոցիալական կարգերի դէմ գնալու, այլ ընդհակառակը, համագործակցական կարգերին հակասելու, ուստի եւ իբրեւ այդպիսին, կարելի կը լինէր առաջնորդել իւր աշխատաւոր, օրավարձով արհեստաւորի հետ գործակցութեան, եւ այդպիսով երկու կողմերի շահերը միացնելով պաշտպանել հաւասարապէս բոլորին՝ ինչպէս այդ արուելու է սեփականագործի եւ մանր սեփականատէր գիւղացիութեան վերաբերմամբ, որով եւ հայկական գաւառական կեանքի մանր արհեստաւորութիւնը աշխատաւորների բազիսի շարքերում իբրեւ իւր իսկ տնտեսական դրութեան ազդեցութեամբ, ապագայ ընկերվարական հասարակութեան համակիր [է], ընդունակ եւ նախապատրաստ: Մանր սեփականատէր գիւղացիութեան եւ մանր արհեստաւորութեան համեմատութեան դէմ առարկուեց, որ գիւղացիութեան սեփականութիւնը, կտոր հողի ուրիշի աշխատանքը շահագործող կապիտալը չէ, եւ եթէ գտնուում են գիւղացիութեան մէջ եւս օրավարձով աշխատեցնող գիւղացիներ, նախ՝ որ դրանք բացառութիւններ են եւ ճորձ՝ որ դրանք աւելի շուտ մի տեղի գիւղացիութեան միւս տեղի գիւղացիութեան տեղական պայմանների պահանջի համեմատութեամբ աշխատանքի փոխանակութիւններ եւ պակասի լրացումներ են եւ ոչ՝ իսկական կապիտալիստական շահագործումներ: Այդպիսին հասկացում են մանուֆակտուրային ինդուստրիական կեանքի շահագործումը շահագործող կապիտալի սեփականատէր արհեստաւորի կողմից[sic]:

Յայտնուեց նաեւ այն միտքը՝ որ, եթէ հայկական կեանքի մանր տնտեսաւորութիւնը ընդունուում է, որ անխուսափելիորէն ենթակայ է՝ նոյնիսկ տնտեսական պայմանների շնորհիւ, անհետացման, եւ եթէ նա տեղի տալով պիտի միանայ ջնջին տարբերութեամբ իւր վիճակակից օրավարձով արհեստաւորին, ապա ուրեմն, չարժէ իբրեւ դասակարգ առանձնապէս պաշտպանելու եւ բազիս ընդունելու, այլ ընդհակառակը, մտնելով օրավարձով արհեստաւորի շարքերում իբրեւ՝ շահագործընդ արհեստաւորութիւն միայն կարելի կը լինի

պաշտպանել եւ յենակէտ ընդունել:

Հարցը լուսաբանուած համարելով, վիճաբանութիւնը փոխուեց եւ պարզուեց որ ներկաներից մեծամասնութեան հայեացքների դէմ մնում է մի ընկեր, իսկ մի երկրորդը ձեռնպահ:

Ապա անցնելով գիւղացիութեան համայնագործութեան վերաբերեալ առաջարկին, ժողովը առանց վիճաբանութեան համակիր գտնուեց այդ տեսակ գործունէութեան, եւ գտաւ որ մեր կազմակերպութեան կովկասեան գործունէութեան անմիջական տակտիկայի մէջ կարելի է կարեւորագոյն տեղը տալ անկախ Ֆեդերատիւ քաղաքական-պետական կողմի<sup>46</sup> ծրագրին: Ընկեր Ն. առաջարկեց նոյն ուղղութիւնը ընդունել ոչ միայն գիւղացիութեան վերաբերմամբ, այլ առհասարակ բոլոր աշխատաւոր դասակարգին նոյն ուղղութեամբ առաջնորդելու համար: Այս առաջարկը եւս ընդունուեց առանց վիճաբանութեան:

Գալով Ֆեդերացիայի հարցին, ժողովը միայն անվիճելի էր համարում քաղաքական-Ֆեդերատիւ կազմը, համապատասխան մեր կուսակցական ապակենտրոնացման սկզբունքին, որ մի կողմից նպաստում է ազգերի, ժողովուրդների ինքնուրոյն սոցիալական-քաղաքական զարգացման եւ միւս կողմից ազգերի, համայնքների եւ անհատների համերաշխութեան եւ իրական հաւասարութեան: Ընդունուեց պահանջել ինչպէս Անդրկովկասի, ընդհանուր Ռուսաստանից անբաժան, եւ նրա հետ ինքնավարական հիմքով կապուած Ֆեդերացիան՝ նոյնպէս եւ Անդրկովկասը բաժանուած իւր մէջ ազգաբնակչութեան ցեղային ու կուլտուրական առանձնայատկութիւնների, տերիտորիական մասնիկների՝ կանտոնների, որոնք ներքին կատարեալ ինքնավարութեամբ միանում եւ կազմում են Անդրկովկասեան Ֆեդերացիան: Ընդունելով այս պետական-քաղաքական ձեւը, աւելորդ համարուեց ինչպէս Անդրկովկասեան Ֆեդերացիայի ընդհանուր Ռ(ուսաստան)ի հետ, նոյնպէս եւ Անդրկովկասեան Ֆեդերացիան կազմող ինքնավար հատուածների միմիանց հետ ունենալիք ներքին կապի ու յարաբերութիւնների, փոխադարձ պարտաւորութիւնների եւ իրաւունքների մանրամասնութիւնները այժմեանից գծել եւ նախագծի մէջ մտցրնել, թողնելով այդ կարգի մանրամասնութիւնների որոշելը Ֆեդերացիայի իրագործման հնարաւորութիւնը եղած ժամանակի պայմանների եւ պահանջների թելադրութեանը:

Նպատակայարմար համարուեց առաջարկել Ընդհանուր Ժողովին՝ կազմակերպութեան ընդհանուր Մրագիրը վերախմբագրելիս՝ ամփոփել իւր մէջ պարզ ու յստակ կերպով նախնական Մրագրի ընկերվարական սկզբունքը ըստ յեղափոխական-ընկերվարական աշխարհայեացքի, որի իրականացման հասնել թէկուզ հեռաւոր ապագայում, մեր նպատակն է, որոշ կերպով

յայտարարի մեր միակ յենուելիք դասակարգի աշխատաւոր տարրը լինելը, եւ պարբերաբար կովկասեան Շրջանային Ժողովից գրուած ու նախորդ Ընդհանուր Ժողովից եւ Խորհրդից բխած որոշումները միացնել նոյն սկզբունքին եւ նպատակի վրայ հիմնուած: Նախ, դասաւորել պատմա-փիլիսոփայական աշխարհայեացքի ներածութեամբ, եւ ապա ազրարային, բանուորական եւ քաղաքական մասերով, որոնք կը լինին կազմակերպութեան ընդհանուր Մրագիրը անխտիր Տաճկաստանի եւ կովկասի համար: Նոյնպէս նպատակայարմար համարուեց առաջարկել, որ կովկասեան Ֆեդերացիայի - թէ իբրեւ Ռուսաստանի անբաժան մասը եւ թէ իւր ներքին Ֆեդերացիայի համար պետական-քաղաքական կազմը գծող յողուածները - առանձին մաս ունենան եւ չմտնեն կազմակերպութեան ընդհանուր Մրագրի եւ անմիջական տակտիկայի որոշող բաժինների մէջ:

Բացի այդ, ընդունելով հանդերձ որ հողերի համայնացումը արդէն մեր Մրագրի եւ նպատակի հակառակ մասն է կազմում, իսկ աստիճանական համայնացումը նուազագոյն պահանջներից մինն է, եւ համարելով որ աստիճանական համայնացումը ժամանակի եւ շրջապատող պայմաններից առաջացող բնական բխումն է հողերի համայնացումի սկզբունքից ու նպատակից, 2 ճայնի դէմ 10 ճայնով աւելորդ նկատուեց կովկասեան գործունէութեան տակտիկական-ծրագրի մէջ առանձնապէս յիշել եւ մտցնելը:

|                |                  |
|----------------|------------------|
| Նախագահ        | Նիթրա            |
| Քարտուղար      | Թորոս            |
| Պատգամաւորներ՝ | III Շրջ. — Արսէն |

Ժ. Ժ. [Ի.] Սիսու 8 Դեկտեմբերի. 1906 թ.

Ներկայ էին 4 պատգամաւորներ եւ 3 խորհրդակցական ճայնով պատգամաւորներ, կենտրոնական կոմիտէի 3 անդամներ եւ դրսից հրաւիրուած ընկերներ: Պատգամաւորների մեծամասնութիւնը ներկայ չլինելու պատճառով նիստը դարձեալ անպաշտօն համարուեց:

Օրակարգի հարցն էր պրոֆեսիոնալ<sup>47</sup> միութիւնների կուսակցական եւ անկուսակցական կազմակերպելու խնդիրը: Հրաւիրուած ընկերներից Լ.-նը պրոֆեսիոնալ միութիւնների կուսակցական լինելու դէմ բերում էր հետեւեալ առարկութիւնները, 1) Որ կուսակցական միութիւններին պէտք է տալ իտալիայում եւ Ֆրանսայում իրագործող սենդիկալիզմի կազմակերպութիւնը, որոնք անկուսակցական են, եւ չարժէ. սենդիկալիզմի միութիւնները ոչ միայն հնարաւորութիւն են որոնում գանազան քաղաքներում, գիւղերում գտնուող անգործ մնացած աշխատակիցներին գործ, կամ պահանջ եղող աշխատաւորները հասցնելով պահանջներին

բնականութիւն տալ, գանազան տեղերի գործի, աշխատանքի եւ աշխատաւորների թուր համեմատութեամբ հաւասարութիւն պահանջել, այլ եւ գրադարանների, յատուկ կուրսերի, ցուցահանդէսների միջոցով կրթում եւ նախապատրաստում են աշխատաւորներին ամենալուրջ գիտական եւ բազմա-մասնագիտական զարգացմամբ արդիւնաբերութեան ձեռնհաս համագործակցութիւնը [sic]: 2) Որ կուսակցականութիւնը կը խանգարի միութիւնների անդամների եւ միութեան անդամակցութիւնից դուրս մնացած միեւնոյն պրոֆեսիայի պատկանող միւս արհեստակիցների մէջ այն ցանկալի համերաշխութիւնը, որ անհրաժեշտ է զարգացնել ոչ միայն առ հասարակ աշխատաւոր դասակարգերի մէջ, այլ միեւնոյն պրոֆեսիայի պատկանողների շահերի միօրինակութիւնը պահանջում է այդ շահերը հաւաքաբար պաշտպանել: 3) Որ ոչ մի արգելք չի կարող լինել որ ոչ կուսակցական պրոֆեսիոնալ միութեան անդամները պատկանեն այս կամ այն քաղաքական կուսակցութիւնների եւ իրանց կուսակցական պարտաւորութիւնները կատարեն միութեան շահերի պաշտպանութիւնից ու կեանքից դուրս: 4) Հ. Յ. Գ. ընդունելով ազգային կուսակցութիւն, իւր կազմակերպելիք պրոֆեսիոնալ միութիւնների մէջ պիտի մտնեն հայ եւ ոչ հայ աշխատաւորներ, որով ակամայից խրտրութիւն է առաջանալու միեւնոյն պրոֆեսիայի պատկանող հայ եւ ոչ հայ անդամների մէջ, որը պիտի խանգարի շահերի հաւաքական պաշտպանութիւնը եւ համերաշխութիւնը: 5) Գերմանական անկուսակցական պրոֆեսիոնալ միութիւններն անգամ՝ որոնք գերմանական Սոցիալ Դեմոկրատական կուսակցութեան կուսակցութեան վնասակար լինելուն: 6) Հէնց կուսակցական համերաշխութիւնն պահանջում է, որ միեւնոյն պրոֆեսիոնալ միութեան մէջ գտնուող եւ անհատապէս Ս. Գ., Էս. Է. Է., Հ. Յ. Գ. եւ [այլ] կուսակցութիւններին պատկանող անդամները միութեան անկուսակցական լինելուն շնորհիւ իրենց շահերի համերաշխ գիտակցութիւնը եւ պաշտպանութիւնը ունենան: 7) Այդ ամէնը աչքի առաջ ունենալով, անտեղի է համարուում աշխատաւորների շահերի պաշտպանութիւնը եւ քաղաքական կուսակցական գործը միեւնոյն կուսակցութեան գործունէութեան մէջ մտցնելը: Պատգամաւոր ընկերներից Թ. աւելացրեց, որ պրոֆեսիոնալ միութիւնները կուսակցական լինելով նրանք ստիպուած պիտի լինեն իրանց անդամավճարների մի մասը յատկացնել կուսակցութեան կասսային եւ միայն մի մասը միութեան օգտին, իսկ այդ կը նուազեցնի միութիւնների շահերի պաշտպան-

47. - Արհեստի, գրադուսի, ասպարտի հետ կապուած:



նույն բանն արժեքը: Ընկեր Պ., Հակառակելով, գտնում էր որ սինդիկատի ձևերը եւ կազմը չի կարող պրոֆ. անկուսակցականութեան մի ապացոյց լինել, որովհետեւ եթէ դրանք որեւէ այլ կուսակցական անունը չեն կրում, հէնց ինքը՝ սինդիկատի մի կուսակցութիւն, մի որոշ ուղղութեան ամփոփումը ու ղեկավարը լինելով, սինդիկատի մի մասն էր յօդուածը ամբողջ սինդիկատի կուսակցութեան կուսակցական միութիւնները պիտի ենթադրել: Բայց եթէ մի քաղաքական սոցիալիստական կուսակցութիւն՝ որպիսին է Հ. Յ. Դաշնակցութիւնը, նախաձեռնութիւն է վերցնելու պրոֆեսիոնալ միութիւն կազմելու, կամ եթէ մեր կուսակցութիւնը իւր դրօշի տակ մտած աշխատաւոր դասակարգի շահերը պաշտպանելու համար նրանց պիտի կազմակերպի պրոֆեսիոնալ դասաւորութեամբ, անվիճելի է որ դրանց շահերի պաշտպանութիւնը կապուած է քաղաքական պայմանների հետ, ուստի եւ քաղաքական աննպաստ պայմանների դէմ՝ հէնց միութիւնների շահերի պաշտպանութեան տեսակէտով, միութիւնները պէտք է քաղաքական կուսակցութեան, իսկ այդ կուսակցութեան տանջելու համար պէտք է առաջնորդուեն ու ղեկավարուեն կուսակցութեան տակտիկայով եւ հայեացքներով, եւ այդ ունենալու համար, բնականաբար, պէտք է լինին կուսակցական. հակառակ պարագայում եթէ իրանք իրանց եւ զանազան պրոպագանդաների շնորհիւ քաղաքական կուսակցութեանը կ'ունենան, այնուամենայնիւ այդ կուսակցութեան անուղի, անտակտ ու անղեկավար մնալով կը վտանգուի, եւ դա միեւնոյնն է թէ նրանց պրոֆեսիոնալ շահերը չեն պաշտպանուի կուսակցութեանը: Այս հակառակութեան դէմ ընկեր Լ.ն պաշտպանուելով առարկում էր թէ օրէնսդրութիւնը միայն կեանքի մէջ մտցուած իրականութիւնը վաւերացնում եւ ուժեղացնում է, եւ դասակարգային բանաւորական ամէն մի շարժում դէպի սոցիալիզմը տանելով, նրանց այդ շարժումներով կեանքի մէջ մտցուած իրականութիւնը օրէնսդրութեամբ վաւերացնել եւ ուժեղացնել տալու համար պրոֆեսիոնալ միութիւնները պէտք է չունին կուսակցական լինելու, այդ օրէնսդրական ակտը նրանք հնարաւորութիւն կ'ունենան առանց կուսակցութեան անուղղակի միջոցներով կատարել տալ:

Ընկեր Ն. պարզեց, որ ընկեր Լ.ի առարկութիւնները հետեւողական են իւր դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը ունեցած վերաբերմունքին, եւ հայեացքներին, ուստի եւ նրա առարկութիւնները պիտի քննադատել այդ իսկ ելակէտից եւ ըստ այնմ գնահատել. նա սկզբից եւեթ պարզ ու որոշ առաջադրել է որ Հ. Յ. Դաշնակցութիւնը կողկասում ակտիւ գործունէութիւն չունենայ եւ միայն մնայ Տաճկահայաստանի ազատագրութեան նշանակութեամբ մի ազգային քաղաքական կուսակցութիւն, իսկ եթէ անհնար է նրա կողկասեան գործունէութիւնը

ժամանակաւորապէս դադարեցնել, գոնէ սահմանափակել այստեղ եւ միայն Տաճկահայաստանի դատի ի նպաստ, առանց դասակարգային կուսակցութեան նրա՝ Դաշնակցութեան կողկասեան գործունէութեան ծրագրի մէջ մտցնելու: Այդ իբրեւ հետեւողական եւ անկեղծ անձնութիւններ, նրա բոլոր առաջադրութիւնները միեւնոյն սկզբնական առաջադրութեան նպատակը ունեն, այն է՝ անհնարութիւն մտցնել Դաշնակցութեան իբրեւ սոցիալիստական կուսակցութեան գործունէութիւնը. ուստի եւ այդ կարգին ու նպատակին է պատկանում պրոֆեսիոնալ միութիւնների կուսակցական լինելու դէմ առարկութիւնները, առարկութիւններ՝ որոնք թէեւ իբրեւ ապացոյց եւ ի պաշտպանութիւն անկուսակցականութեան մեկնուած են, բայց հէնց ինքը նոյն արգումենտները՝ կարող էր բերել կուսակցականութեան ի պաշտպանութիւն: Որովհետեւ, նախ որ, իտալական եւ ֆրանսիական սինդիկատի կազմի նկարագրութիւնը ապացուցանում է պրոֆեսիոնալ միութիւնների գոյութեան, կազմակերպութեան անհրաժեշտութիւնը աւելի զարգացած, աւելի լայնացրած, աւելի ընդարձակուած մեթոտով, քան գերմանական է, իսկ պրոֆեսիոնալ միութիւնների գոյութեան, կազմակերպելու անհրաժեշտութիւնը ընդունելուց յետոյ՝ նրանց կատարելագործման ցանկալի լինելու մասին ոչ ոք չի առարկի, բայց այդ կատարելագործումը ինչ ձևով պիտի լինի առանձին ուսումնասիրութեան հարց է եւ դա երբեք չի կարող հակասել պրոֆեսիոնալ միութիւնները կազմակերպելու կարեւորութիւնը: 2) Եթէ պրոֆեսիոնալ միութիւնները կազմակերպելու անհրաժեշտութիւնը անվիճելի ընդունուած է նոյնիսկ ընդդիմադիր կողմից, հարց է ծագում թէ պէ՞տք է այդ միութիւնները կուսակցական լինեն: Դրանց կուսակցական լինելու անհրաժեշտութիւնը ծագում է հէնց ընդդիմադիրների արգումենտներով:

1) Մենք ընդունել ենք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը է եւ պիտի լինի սոցիալիստական մի կուսակցութիւն, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը թէ՛ Տաճկաստանում եւ թէ՛ կողկասում ներկայացել է եւ պիտի ներկայանայ իբրեւ սոցիալիստական կուսակցութիւն եւ իբրեւ այդպիսին պիտի գործէ հաւասարապէս երկու կողմերում էլ, որ մեր կուսակցութեան յենուելիք տարրը պիտի լինի հայ աշխատաւոր դասակարգը, հետեւաբար ստանձնել է եւ պիտի ստանձնի պաշտպանել հայ աշխատաւոր դասակարգի շահերը: 2) Մենք ընդունել ենք որ Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրեւ սոցիալիստական կուսակցութիւն ստանձնել է եւ ստանձնելու է թէ՛ տաճկահայերի եւ թէ՛ կողկասահայերի քաղաքական դատը՝ հէնց հայ աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան եւ ապագայ ընկերվարական հասարակութեան կազմին

48. Պատճառաբանութիւնները:

հասնելու նպատակի տեսակէտից: 3) Մեր ընդդիմախօսները ուրիշ առիթով հասկացել են որ ոչ մի սոցիալիստական կուսակցութիւն չի կարող առանց քաղաքական կուսակցութեան շահերը պաշտպանելու նպատակին հասնել: Արդ, պարզ է որ դասակարգային շահերի պաշտպանութիւնը եւ քաղաքական կուսակցութիւնը միեւնոյն կուսակցութեան, այդ կուսակցութիւնը լինի Հ. Յ. Դաշնակցութիւնը թէ՛ մի այլ սոցիալիստական կուսակցութիւն, գործունէութեան ու ծրագրի մէջ: 4) Բոլոր սոցիալական կուսակցութիւնները բաժանուած են իրանց մէջ սոցիալական-փիլիսոփայական որոշ վարդապետութիւններից, այս կամ այն վարդապետութեան յարելով եւ այդ վարդապետութիւնից բխած որոշ տակտիկաների միմիանցից զանազանելով: Տարրական ճշմարտութիւն է, ուրեմն, որ ամէն մէկ կուսակցութեան գործունէութիւնը եւ իւր յենուած աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութիւնը, քաղաքական կուսակցութեանը եւ իւր առանձնապատկեր փիլիսոփայական աշխարհայեացքների թելադրած տակտիկայի համաձայն, որով ինքն ըստ ինքեան անխուսափելիորէն առաջ է գալիս զանազան կուսակցութիւնների գործունէութեան եղանակի մէջ այնպիսի տարբերութիւններ՝ որոնք երբեմն միմիանց դէմ են գրնում: 5) Հ. Յ. Դաշնակցութիւնը, համաձայն իւր ծրագրի եւ գոյնի, գործելով կողկասում, իւր գործունէութեան մի հակա մասը պիտի կայանայ նրանում՝ որ կազմակերպի իւր յենուած տարրը եղող եւ իւր պրոպագանդայով իրան յարող հայ աշխատաւոր մասսայի հատուածները, մի կողմից նրանց գիտակցութիւնը զարգացնելով եւ շահերը պաշտպանելով, եւ միւս կողմից հէնց շահերի պաշտպանութեան թելադրած քաղաքական կուսակցութեան մղելու եւ մղել տալու համար: Այդ միեւնոյն բանը պիտի անեն անշուշտ ամէն մի կուսակցութիւն իրան յարող տարրի վերաբերմամբ: Արդ, եթէ մի կուսակցութիւն աշխատաւորական դասակարգի ուրոյն դասակարգերը կազմակերպում է, այդ կազմակերպած տարրերի մէջ պիտի մտցնէ եւ իրագործէ իւր ծրագրային աշխարհայեացքն ու տակտիկան. այդպէս էլ Հ. Յ. Դաշնակցութիւնը կազմակերպելով իրեն յարող հայ աշխատաւոր դասակարգերը, նրանց պրոֆեսիոնալ շահերի լաւագոյն պաշտպանութեան համար ընդդիմադիրների կողմից անվիճելի ընդունուած միութիւններ է կազմում. կազմելով այդ միութիւնները նրանց շահերի պաշտպանութեան համար, մտցնում է նրանց մէջ իւր ծրագրային աշխարհայեացքն ու տակտիկան: Դա ինքն ըստ ինքեան կուսակցականութիւնն է. առանց նրա կը մնայ եւ առանց որոշ աշխարհայեացքի, առանց տակտիկայի, եւ հետեւաբար գուրկ ներդաշնակ ուղղութիւնից 6) Գերմանական սոցիալ դեմոկրատների եւ այնտեղի ոչ կուսակցական պրոֆեսիոնալ միութիւնների յա-

րաբերութիւնը ապացուցանում է այդ միութիւնների ոչ թէ անկուսակցական լինելու անհրաժեշտութիւնը, այլ ընդհակառակը, որովհետեւ, ինչպէս Ռուսաստանի սոցիալ դեմոկրատական կուսակցութիւնը, նոյնպէս եւ գերմանական, փոխանակ իրանց ծրագրով եւ տակտիկայով ղեկավարուող եւ կուսակցութեան յարուող պրոֆ. միութիւններ ունենալու ձգտելու, այնտեղ ձգտել են եւ այստեղ ձգտում են անխտիր, նոյնիսկ կուսակցութեան չպատկանող տարրերից, նոյնիսկ չէզոքներից կազմել անկուսակցականութիւն պատրուակի տակ միութիւններ, որպէսզի դրանց քարշ տան իրենց յետեւից իբրեւ իրանց բանակը. իսկ այդ անկուսակցական միութիւնները այժմ չկամենալով ոչխարային գործիք լինել, առաջադրում են այնպիսի աշխարհայեացքներ եւ տակտիկաներ՝ որոնք չեն համապատասխանում սոցիալ դեմոկրատական հայեացքներին եւ շնորհիւ դրան այժմ գերմանական Սոցիալ Դեմոկրատիան ըմբռնելով իւր սխալը այժմ չկամենալով ոչխարային գործիք լինել, առաջադրում է այնպիսի աշխարհայեացքներ եւ տակտիկաներ, որոնք չեն համապատասխանում Ս. Դ. Կան հայեացքներին եւ շնորհիւ դրան այժմ Ս. Դ. Կան ըմբռնելով իւր սխալը, ի դէմս կուսակցութեան, յարձակուելով անկուսակցականների վրայ արդէն միութիւնների կուսակցական լինելու անհրաժեշտութիւնն է քարոզում: 7) Մենք ընդունել ենք աշխատաւորի շահերի համար մի խոշոր սկզբունքային տակտիկա, այն է, կեանքի մէջ մտցնել համագործակցութեան, կողպերատիւի սխտեմը, թէ՛ գիւղացիութեան եւ թէ՛ միւս աշխատաւոր դասակարգերի մէջ: Այդ սխտեմի կիրառութիւնը առաւել եւս պիտի մտցնել պրոֆ. միութիւնների մէջ, իսկ այդ սխտեմը, բացի կուսակցութիւնների մէջ գոյութիւն ունեցող այլ տակտիկական եւ ծրագրային տարբերութիւններից, հապէս տարբերում է Սոցիալ Դեմոկրատիայի տակտիկայից, որոնք հակառակում են այդ սխտեմին, իբրեւ դասակարգային գիտակցութիւնը միմեկնորոգ եւ անհատական սեփականութեան ձգտումը քաջալերող միջոց: Արդ, սրանից պարզ է, որ ինչքան էլ ենթադրենք թէ բանուորական ամէն մի շարժում կը տանի դէպի սոցիալիզմը, որ աշխատաւորների շահերը, ինչ կուսակցութեան եւ եւ ազգի էլ պատկանեն, համերաշխ ու համաձայն են, բայց այդ շահերը պաշտպանելու ձեւերը եւ ճանապարհները տարբերում են ըստ կուսակցութեան. ուստի եւ ամէն մի կուսակցութիւն պիտի կազմակերպէ իրեն յարող աշխատաւոր տարրն ըստ նորա պրոֆեսիայի եւ ըստ իւր ծրագրի ու տակտիկայի: Համերաշխութիւնը՝ տակտիկական տեսակէտով, պիտի փնտռել ոչ թէ միութիւնները կազմող անդամների զանազան կուսակցութիւնների պատկանելու հնարաւորութեան բաբելոնական խառնուրդի մէջ, այլ միապաղաղ, մի դաւանանքով, մի տակտիկայով կազմուած զանազան կու-

սակցութիւնների պատկանող միութիւնների մէջ, որոնք ինքնուրոյն գոյներով հանդերձ ընդհանուր շահերի պահանջած որոշ պարագաներում կարող են միացած, դաշնակցած գործել, ինչպէս այդ անհնար չէ համարուում քաղաքական կուռի որոշ պարագաներում զանազան կուսակցութիւնների համար: Հակառակ պարագայում, ենթադրենք մի անկուսակցական պրոֆեսիոնալ միութիւն, որը բաղկանում է ենթադրենք 50 հոգուց որոնք կուսակցութիւնների անխտիր պրոպագանդի շնորհիւ բաժանուած են մի քանի կուսակցութիւնների, 15ը Սոցիալիստ Յեղափոխականների, 15ը Սոցիալ Դեմոկրատների եւ 10ը Հ. Յ. Դաշնակցութեան ու 10ն էլ 2 թուրք կուսակցութիւնների, եւ սրանցից ամէն մինը առաջադրում է իւր կուսակցութեան թելադրած տակտիկան: Այդ պարագայում միութիւնը լինելով անկուսակցական, միշտ պիտի տարուբերի զանազան կողմ եւ երբեք չպիտի կարողանայ ներդաշնակորէն իւր շահերը պաշտպանել:

Այս ամէնը ապացուցանում են, որ ոչ մի արգումենտ չի կարող պաշտպանել պրոֆեսիոնալ միութիւնների անկուսակցականութիւնը: Ներկաների ստուար մեծամասնութիւնը ձայնակցում էր միութիւնների կուսակցական լինելու կողմը:

Նախագահ  
Քարտուղար  
Պատգամաւորներ

**Ա 3.- Հ. Յ. Դ. ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**

Երիտասարդ դաշնակցականների Նախահանքի շրջանի եւ Քաղաքի խառն ժողովը քննութեան առնելով Ձեր պահանջը գէնքերի վերաբերմամբ, յանգեց հետեւեալ եզրակացութիւններին.

- 1) Երիտասարդ դաշնակցական անհատների եւ խմբերի տրամադրութեան տակ գտնուող գէնքերի մասին բանակցութիւնների մէջ մտել Դաշնակցութեան Ընդհանուր ժողովից յետոյ Արեւելեան Բիւրոյի հետ, որովհետեւ տեղական կենտրոնական կոմիտէն երիտասարդ դաշնակցականների վստահութիւնը չի վայելում եւ ոչ մի տեսակէտով:
- 2) Այդ բանակցութիւնների ժամանակ չչեղուել լեզուական պարզեց եւ առիթ չտալ որեւէ ընդհարումի դեռ այնքան անգիտակից հայ աշխատաւորութեան մէջ եւ չձգտել նոյն ճանապարհով զինական բաժին ձեռք բերելու Հ. Յ. Դաշնակցութիւնից:

Փաստ. 327-3

**Բ 1.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԱՆԻ<sup>49</sup> ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ**

1906 թ. Մայիսի 26ին Անդր-Արաղում

Մէկ անկի առումներով հետաքրքրական է Հ. Յ. Դ. արխիւներում մէջ պահուած այս փաստաթուղթը, որ յստակ գաղափար մը կու տայ Ոսկանապատ-Քազուի Կ. Կոմիտէութեան մաս կազմող անդրկասպեան հեռաւոր այս տարածքներում մէջ Դաշնակցութեան ստեղծած կազմակերպական լայն ցանցին մասին: Հետաքրքրական եւ ուսանելի միաժամանակ քննութեան դրուած հարցերու այլազանութեան եւ Թուրանի Շրջ. ժողովին կողմէ անոնց տրուած բանական եւ առողջ լուծումներու տեսակետով:

Ոսկանապատի IV Կ. Կ. ի ներկայացուցիչ ընկ. Պարթեւի հրահրով Թուրանի զանազան տեղերից տեղաեկած ներկայացուցիչները սկսեցին Շրջանային ժողովի նիստերը: Առաջին ժողովին ներկայ էին ներկայացուցիչներ՝ Ոսկեմայրի-Մարաղեցի, Անդր-Աբաղի - Ղափլան, Փախթայի - Շանթ, Պաշարուած քաղաքի - Օտար, Մառաստանի եւ Հեթումի - Ալամդար, Բամբակի - Իտկոս, Լան-Մաղի-Ջրաբերդցի, Կարմիր ջրի - Գուրգէն եւ Սահմանաբերդի - Բաբա, նաեւ Անդր-Աբաղի մեր ընկերներից մի քանիսը: Նիստերին նախագահում էր ընկ. Պարթեւը: Այնուհետեւ առաջարկուեցին քննութեան հետեւեալ հարցերը:

- 1) Ռազմամթերք գնելու եւ տեղափոխելու հարցը.
- 2) Դատավարութիւն.
- 3) Պատիժ.
- 4) Պետական Դոմային մասնակցելու խնդիրը.
- 5) Դասակարգային խնդիրը Թուրանի շրջանում.
- 6) Յենգի հարցը.
- 7) Շրջանի մարմինների յարաբերութեան խնդիրը.
- 8) Շրջիկներ պահելու խնդիրը.
- 9) Յեղափոխական գրականութիւն ունենալու խնդիրը.
- 10) Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի տեղային ազգային հիմնարկութիւնները.
- 11) Հանգանակութեան խնդիր.
- 12) Ինստանցիաների<sup>50</sup> խնդիրը մարմինների մէջ Թուրանի շրջանում եւ վերստուգութիւն մարմինների գործունէութեան եւ հաշիւների.
- 13) Կարմիր խաչ.
- 14) Մարտական խմբերի եւ ինքնապաշտպանութեան խնդիրը.
- 15) Թուրանի մարմինների յարաբերութիւնը հայ զինուորների հետ.
- 16) Տաճկահայկական հարցը.

- 17) Գաղթականութեան հարցը Թուրանում.
- 18) Յարաբերութիւն ուրիշ կուսակցութիւնների հետ.
- 19) Պաղատելիւն պահպանելու խնդիրը հարեւան ազգութիւնների հետ.
- 20) Գաղտնապահութեան խնդիրը.

**I - Ուազմամթերք գնելու եւ տեղափոխելու հարցը**

Շրջանային ժողովը քննելով վերջին ռայոնական ժողովի կարգադրութիւնը, որով գէնք հայթայթելու առանձին մարմիններ են հիմնուում ամէն տեղ, Թուրանի համար կայացրեց հետեւեալ որոշումը.-

ա) Դաշնակցութեան տեղական մարմինները կազմակերպում են իրենց պատասխանատուութեան տակ գէնք հայթայթող մարմին, որը անմիջապէս ենթարկւում է տեղական մարմինի եւ նրա միջոցով յարաբերութիւն է ունենում կենտրոնական գէնքի Ֆոնդի հետ:-

բ) Ի նկատի ունենալով Թուրանի կենտրոնից հեռու լինելը, բոլորովին նպատակայարմար չէ, որ տեղական մարմինը գէնքի վարչութեանը փող հարկաւոր եղած դէպքում, ամէն անգամ դիմի կենտր. Ֆոնդին, այլ ինքը փոխարինաբար յատկացնում է պահանջեալ գումարը գէնքի վարչութեանը եւ անմիջապէս տեղեկացնում կենտր. Ֆոնդին:-

գ) գէնք տեղափոխելու պարտականութիւնը ընկնում է տեղական մարմինների վրայ եւ որոշուում է խնդրել կենտրոնին դադարեցնել Թուրան մարդիկ ուղարկելը գէնք տեղափոխելու համար:-

դ) Մասնաւոր անձանց գէնք գնելը կատարուում է տեղական մարմին-

49.- Թուրանի շրջանը կ'ընդգրկէր անդրկասպեան շրջանները, գլխաւորաբար ներկայի Թիւրքմէնիստանի, Իւզբէկիստանի, Ղազախստանի երկրամասերը:  
50.- Մարմիններու նուիրապետական կարգերու:

ների միջոցով կամ գիտություններով: Այս որոշումը ինդերում է կենտրոնին՝ աշխատել պարտավորական դարձրել բոլոր մարմինների համար կովկասում: Ե) Դիմել կենտրոն: Ֆոնդին պարբերաբար տեղեկացնելու գէնքերի եւ ծայրերի գների մակարդակը - գ) Տեղական մարմինները պիտի աշխատեն կազմակերպել հայ գինոկորութիւնը եւ նրանց միջոցով սերտ կապեր հաստատել օտարազգի գինոկորութիւնի հետ այլազգիներին միջերգ վաճառելուն խոչընդոտ հանդիսանալու համար: Է) Միջերգներ ի փոխադրութեան համար որոշուեց հրահանգել տեղական մարմիններին օգտուել բոլոր կարելի միջոցներով յարմարուելով տեղական պայմանների հետ եւ գործ դնելով մեծ գգուչութիւն եւ լրջութիւն: Այն որոշումները, որոնք գերադասելի են, որոշուած եւ բերանացի կերպով յայտնուած են ներկայացուցիչներին տեղական մարմիններին հաղորդելու համար:

II - Դատավարութիւն

Շրջանային ժողովը, քննելով դատավարական հարցը, եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է ընդունել այն դատավարական գործերը, որոնք վերաբերում են աշխատաւոր դասակարգերի շահերի պաշտպանութեան, իսկ մնացեալ դատավարական գործերը, բացի խոշոր հասարակական բնակորութիւն ունեցող խնդիրներից, վերջացնել միջնորդ դատարանի միջոցով:

III - Պատիժ

Ընդունելով դատավարութեան անհրաժեշտութիւնը, Շրջանային ժողովը ստիպուած է պատիժներ նշանակել: Այդ պատիժներն են - յանդիմանութիւն, տուգանք, աքսոր, բոյկոտ, որոնք պէտք է աշխատել իրագործել չլիմելով բռնի միջոցներով: Բոյկոտի եւ աքսորի վճիռ արձակել ծայրայեղ դէպքում եւ այդ հարեւան մարմինների հաւանութեամբ:

IV - Պետական Դումային մասնակցելու հարցը

Շրջանային ժողովը՝ ռայոնական ժողովի Դումայի վերաբերեալ վճիռ քննելու ժամանակ, կարծիքները երկուսի բաժանուեցին. մեծամասնութիւն, այն է՝ Մառաստանի, Հեթումի, Բամբակի, Լան-Մաղի, Անդր-Աբաղի, Ոսկեմայրի եւ Սահմանաբերդի ներկայացուցիչները գտան, որ պրոպագանդայի տեսակէտից Դաշնակցութիւնը պիտի իւր ներկայացուցիչները ուղարկէր Դումայ՝ արծարծելու հայկական հարցը, սակայն պաշտօնապէս յարգելով ռայոնական ժողովի վճիռը ինքն էլ ստիպուած է ի վնաս՝ տեղական շահերի դիսցրպլինարի<sup>51</sup> տեսակէտից, չմասնակցել Թուրանի ընտրութիւն-

ներին, իսկ Փախթայի, Պաշարուած քաղաքի եւ Կարմիր ջրի ներկայացուցիչները գտան Ռայոնական ժողովի որոշումը միանգամայն նպատակայարմար եւ վայել նրա քաղաքական բարձր կոչման, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Դաշնակցութեան, իբրեւ մի յեղափոխական ծայրայեղ կուսակցութեան, պատիւ էջը բերել մասնակցել այն ներկայացուցչական ժողովին, որը տրուած է Ռուսաստանի քաղաքացիներին ներկայ բռնակալ կառավարութիւնից իբրեւ ողորմութիւն եւ կազմուած է նոյն կառավարութեան ղեկավարութեամբ:

V եւ VI - Դասակարգային խնդիր եւ գնդի հարց

Շրջանային ժողովը որոշեց համարել իւր շրջանում գտնուող աշխատաւոր մասսան իբր յենակէտ իւր գործունէութեան եւ աշխատել կազմակերպել նրան, հնարաւորութիւն տալու համար կազմակերպուած ձեւով պաշտպանելու իւր շահերը: Մնացած խաւերի համար ընդունում է ռայոնական ժողովի որոշումը ցենզի մասին:

VII եւ XII - Շրջանի մարմինների յարաբերութեան ինստանցիաների եւ մարմինների գործունէութիւնը վերստուգելու խնդիրներ

ա. Կարելի է համարուեց, որ շրջանների բոլոր մարմինները ճանաչեն իրար նրանց կեղծ անուններով նամակագրութեան եւ այլ գրաւոր յարաբերութեանց համար. անմիջապէս տրուեցին իրար իրենց հասցէները եւ կեղծ անունները: Բ. Շ. Ժ. կարելի է համարեց որոշել, որ Լան-Մաղի, Պաշարուած քաղաքի եւ Բամբակի ենթակումիտները եւ այդ շրջանի գանազան տեղերի խումբերը պիտի կապուած լինեն Մառաստանի ենթ.ի հետ փողային եւ միջերգների հաշիւներով, իսկ ընկ. Ալամդարը պիտի ճանաչուի իբրեւ կումիտական լիազօր այդ շրջանի համար. Քանդուած քաղաքի եւ Հեթումի ենթ.ները անմիջապէս կապ ունենալով IV Կ. Կ.-ի հետ<sup>52</sup>, նոյնպէս ճանաչում են Ալամդարին իբրեւ հաւասար ընկեր ձայնի իրաւունքով: - գ. Ալազը, Դարիան եւ առհասարակ Հզօր Գետի<sup>53</sup> վրայ գտնուած միւս տեղերը համարում են մի շրջան, որի համար Շրջ. Ժ-ը որոշում է խնդրել Ալազի ընկ. Խաղին, որպէսզի նա իւր պաշտօնավարութեան շրջանում կազմակերպէ խմբեր եւ զարկ տայ կազմակերպութեան գործին, նաեւ տալ նրան ձայնի հաւասար իրաւունք մասնակցելու համար Դարիայի

ենթ.-ի գործերում: Իսկ Դարիան ժամանակաւոր կերպով համարում է Անդր-Աբաղի ենթակումիտէ:- դ. Փախթան, Սահմանաբերդը, Փայտաշէնը, Մայրաշէնը, Թուրանիկը եւ այդ շրջանի գանազան տեղերի խմբերը կազմում են Անդր-Աբաղի կումիտէ:- զ. Ժողովը նպատակայարմար գտաւ առաջարկելու Կ. Կ-ին Ջիկիլլիարը միացնելու Կարմիր-ջրի հետ, որը Բլեջանի հետ կազմում է Կարմիր-ջրի ենթակումիտէ:- է. Շրջ. Ժ-ը կարելի է համարեց որոշել դիմելու Կ. Կ-ին, որպէսզի նա իւր ազդեցիկ ընկերներից մէկին չորս ամիսը մի անգամ ուղարկէ այցելելու Թուրանի շրջանը եւ գործի յաջողութեանը զարկ տալու, նաեւ մարմինների գործունէութիւնն ու հաշիւները ստուգելու:

VIII եւ X - Շրջանի պահելու խնդիր եւ Դաշնակցութեան վերաբերումը ռեպրեստայիւն ազգային հիմնարկութիւններ

Շ. Ժ.-ը որոշեց սկզբունքով՝ խուսափել ռոճկով շրջիկներ պահելուց եւ աշխատել ամէն կերպ գանազան պաշտօնների համար, մանաւանդ հասարակական բնակորութիւն ունեցող, հրաւիրել մեր ընկերներից, այդ տեսակէտով պարտաւորեցրեց՝ ա. Կարմիր-ջրին Սեպտեմբերին ուսուցիչներ հրաւիրել ծխական դպրոցի համար մերոնցից:- բ. Ոսկեմայրին՝ կամ մասնաւոր դասերի համար ուսուցիչ հրաւիրել եւ կամ Մարաղեցու վրայ բարոյական պարտք դնել պարապել խմբերի հետ, որին պէտք է աջակցէ Անդր-Աբաղը:- գ. Անդր-Աբաղը պիտի աշխատէ հոգաբարձութիւնը մերոնցից ընտրել տալ եւ հրաւիրէ բոլոր նոր ուսուցիչները մերոնցից, իսկ շրջիկ պահելու համար աշխատէ չժանրաբեռնել տեղական դրամարկը:- դ. Նոյնը եւ Փախթայի ու Ալազի համար, որոնք պիտի հրաւիրեն նոր ուսուցիչները մերոնցից:- ե. Մառաստանի շրջանում (որ է Լան-Մաղ եւ Բամբակ), Հեթումում եւ Քանդուած քաղաքում անհրաժեշտ է համարուում ունենալ շրջիկներ եւ տեղական մարմինների ու Ալամդարի վրայ պարտք է դրուում հոգ տանել այդ մասին:- զ. Շրջ. Ժ-ը գտնելով, որ շրջանում պակասում են ինտելիգենտ ոյժեր, որոշեց դիմել Կ. Կ-ին, խնդրելով աչքի առաջ ունենալ կազմակերպելու կովկասում մի Բիւրօ, որին կարելի լինէր դիմել կարելի դէպքերում դաշնակցական ուսուցիչներ հրաւիրելու ծխական դպրոցների համար:- է. Շրջ. Ժ-ը առաջարկում է բոլոր տեղական մարմիններին, որ աշխատեն ծխական հոգաբարձութիւններ ընտրել մեր ընկերներից, որպէսզի մօտ ապագայում կարելի լինի ունենալ մի ընդհանուր ուսումնարանական տեսուչ մեր ընկերներից:- ը. Ի նկատի ունենալով, որ Թուրանի հայ գաղութներում զարգացած է մի ձգտումն անպատճառ ունենալու տասնեակ հազարներ արծեցող եկեղեցիներ, Շրջանային ժողովը [որոշեց] ամէն կերպ պրոպագանդ

անել ժողովրդին յետ պահելու այդ զուր եւ անտեղի ծախքերից եւ համարել նրան բաւականանալ քչով. միւս կողմից նպատակ ուսումնարանների եւ միւս աւելի կենսական հիմնարկութիւնների թիւն աւելացնելուն:

IX - Յեղափոխական գրականութիւն ունենալու խնդիր

Ի նկատի ունենալով որ խոշոր տեղերում պակասում են յեղափոխական գրքեր եւ այլ գրականութիւն, Շրջ. ժողովը որոշեց համեստ կերպով նկատողութիւն անել կենտրոնին նրա անուշադրութեան համար դէպի այդ գործը, որի շնորհիւ միայն չունինք այսօր գիտակից դաշնակցական մասսաներ եւ պահանջել մեր յեղափոխական անցեալի ամբողջ պատմութիւնը, տպագրել սպառած հրատարակութիւնները, նաեւ նորերը տեղաւորակելու համար մեծ քանակութեամբ: Շ. Ժ-ն պարտաւորեցնում է բոլոր մարմիններին ձեռք բերել այդ հրատարակութիւնները:

XI - Հանգանակութեան խնդիր

Շ. Ժ-ն կարելի է համարում իւր շրջանի բոլոր աչքի ընկնող անտարբեր ունեւորներից որոշ գումարներ առնել, նաեւ ընդհանուր հանգանակութեան դիմել ըստ չափու կարողութեան այն անհատներից, որոնք զգալի չափով էին նպատակ գործին:

XIII - Կարմիր Խաչ

Շ. Ժ-ն կարելի է համարում հրահանգելու տեղական մարմիններին ամէն կերպ աջակցելու Կարմիր Խաչի կազմակերպութեան եւ գործունէութեան ընդլայնացման զարկ տալու, նաեւ ամէն կերպ արծարծելու հասարակութեան մէջ կանանց իրաւունքների խնդիրը: Շ. Ժ-ն քննելով Անդր-Աբաղի Կարմիր Խաչի վարչութեան ներկայացուցչուհու առաջարկութիւնը, կարելի գտաւ ապագայում համագումար հրաւիրել շրջանի Կարմիր Խաչի մարմիններին:

XIV - Մարտական խմբերի եւ հիմնապաշտպանութեան հարցը

Ռորոշուեց հրահանգել տեղական մարմիններին չկազմակերպել այդպիսի խմբեր, այլ լայն պրոպագանդայի միջոցով արծարծել մարտական խմբերի բարձր գաղափարական նշանակութիւնը եւ եթէ ինքնաբերաբար առաջ կը գան եւ կը կազմակերպուեն կամ կազմակերպուելու ցանկութիւն կը յայտնեն այդպիսի խմբեր, ամէն կերպ բարոյական (եւ ոչ նիւթական) աջակցու-

51.- Կարգապահութիւն  
52.- Այսինքն՝ Ոսկանապատ - Բազուի Կ. Կոմիտէ:  
53.- Դաւանաքար Ամուղարի գետն է:

թիւն ցոյց տալ նրանց կազմակերպուելու եւ տեղ հասնելու:

Ինքնապաշտպանութեան համար ժողովը գտաւ, որ չի կարելի աչքաթող անել այդ հարցը, այլ պէտք է ամէն ջանք գործ դնել զինելու տեղական հասարակութիւնը անխտիր եւ նրանցից կազմակերպել ինքնապաշտպանութեան կանոնաւոր խմբեր, իսկ կազմակերպութեան տրամադրութեան տակ գտնուող զէնքերից նախ երկարները (որոնց գաւառներում մեծ կարիք կայ) ուղարկել կենտրոնին, իսկ մնացածները մօտիկ ապագայում վաճառելով տեղական հասարակութեան, փոխարէնը ձեռք բերել գաւառներում հարկաւոր զէնքեր եւ նոյնպէս ճանապարհել:

**XV – Թուրանի մարմինների լաւաբերութիւնը հայ գինուորների հետ**

Տեղական մարմինները պարտաւոր են կազմակերպել հայ գինուորներին այնպէս, ինչպէս միւս խմբերը, որով նրանք եւս կարողանան մասնակցել ընդհանուր գործունէութեան, նաեւ ընտրութիւններին, հաւասար ձայնով:

**XVI – Տաճակահայկական հարցը**

Թուրանի Ե. Ժ-ն քննելով տաճակահայկական հարցը, եկաւ այն եզրակացութեան, որ Դաշնակցութիւնը, ինչպէս առաջ, նոյնպէս եւ այժմ, պարտաւոր է անպայման զբաղուել տաճակահայկական հարցով, չնայելով, որ ներկայումս նրա առաջ դրուած է կովկասահայ ինքնապաշտպանութեան խնդիրը:

**XVII – Գաղթականութեան հարցը Թուրանում**

Ի նկատի ունենալով, որ գաղթականութիւնը մի մեծ չարիք է ներկայացնում ազգութեան ամբողջութեան

| Նախագահ Ժողովի       | Պարթեւ    |
|----------------------|-----------|
| Ներկայացուցիչներ՝    |           |
| Կարմիր-Ջրի           | Գուրգէն   |
| Ոսկեմայրի            | Մարաղեցի  |
| Անդր-Աբաղի           | Ղափլան    |
| Փախթայի              | Շանթ      |
| Պաշարուած քաղաքի     | Օտար      |
| Մառաստանի եւ Հեթումի |           |
| Ալամդարի տեղ Կարէն   |           |
| Բամբակի              | Իտկոս     |
| Լան-Մաղի             | Ջրաբերդցի |
| Սահմանաբերդի         | Բաբա      |

համար, Ե. Ժ-ն որոշեց լայն պրոպագանդայի միջոցով ազդել գաղթողների վրայ, ցոյց տալ գաղթելու վնասի չափը, կարելի չափով այդ վնասակար շարժումը կրճատել եւ ապագայում բոլորովին դադարեցնել:

**XVIII – Յարաբերութիւն ուրիշ կուսակցութիւնների հետ**

Ե. Ժ-ն կարեւոր է համարում պաշտօնական յարաբերութեան մէջ մտնել տեղական օտար կազմակերպութիւնների հետ:

**XIX – Խաղաղութիւն պահպանելու խնդիրը հարեւան ազգութիւնների հետ**

Պէտք է ամէն կերպ աշխատել հաշտ ապրելու հարեւան բոլոր ազգութիւնների հետ, միաժամանակ պատրաստ լինելով արժանի դասը տալու իւր դէմ ոտնձգութիւն անողին:

**XV – Գաղտնապահութեան խնդիրը**

Ի նկատի ունենալով, որ Թուրանում մեր ընկերների մէջ գաղտնապահութիւնը շատ թոյլ է շնորհիւ սովորութիւն դարձած բերանբացութեան, Ե. Ժ-ն որոշեց ուշ դարձնել այդ վնասակար երեւոյթի վրայ եւ մարմիններին պարտաւորեցնել յիշեցնելու շարունակ ընկերներին, որ պէտք է գաղտնապահ լինել, իսկ այն դէպքերում երբ կը նկատուի գաղտնապահութեան խախտումն, մեղաւորին պատասխանատուութեան ենթարկել:

Շրջանային ժողովը կարեւոր է համարում Թուրանի շրջանային ժողովները պարբերական դարձնել, ուստի այժմեանից որոշում է հետեւեալ ժողովի ժամանակը գալ տարուայ բոլոր տեղերի մարմինների ընտրութիւններից անմիջապէս յետոյ:

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

*Պարտաւոր եմ ձեզ հետեւելու:*

Փաստ. 327-9

**Բ 2.- ՍԵՒ ԵՒ ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՆԵՐԻ 16 ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐՈՒ ԲԱՆԱՉԵՒԸ**

Մենք, Սեւ եւ Սպիտակ քաղաքների Հայ Յեղ. Դաշնակցութեան պատկանող 228 անդամների 16 ներկայացուցիչներս սոյն թուի Նոյեմբերի 7ի ժողովում մեր ներկայացուցիչ Արսէն Համբարձումեանին, որը մեր կողմից պէտք է ներկայ լինի Ոսկանապատի Շրջանային ժողովին՝ միաձայն տուինք հետեւեալ մանտաթը.

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը պէտք է այսուհետեւ էլ գործէ -որքան շրջապատող պայմանները թոյլ կը տան - ազգային-քաղաքական եւ դասակարգային-սոցիալական հողի վրայ թէ այստեղ կովկասում եւ թէ Տաճկահայաստանում, իսկ եթէ ուժերը կը ներեն եւ պայմանները թոյլ կը տան - նոյնիսկ այն տեղերում էլ, որտեղ Հայ ազգաբնակչութիւն կը գտնուի:

III ԿՈՄ. Շրջան

Փաստ. 327-10

**Բ 3.- ԼԻԱՆՈՉՈՎԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԴԱՇՆ. ԲԱՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԲԱՆԱՉԵՒԸ**

Լիանոզովի գործարանի դաշնակցական Հայ բանուորները գումարելով ընդհանուր ժողով յայտնեցին իրանց կարծիքները Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան մասին:

I Գործել միայն կովկասում. ժողովը չընդունեց միաձայն:

II Գործել միայն Տաճկաստանում. ժողովը չընդունեց միաձայն:

III Գործել կովկասում եւ Տաճկաստանում, եւ ընդհանրապէս ճնշուած եւ հարստահարուած հայերի համար:

IV Պաշտպանել բանուորական, տնտեսական եւ դասակարգային շահերը:

V Մղել քաղաքական կռիւ: Երրորդ, չորրորդ եւ հինգերորդ կէտերը ժողովը միաձայն ընդունեց:

Ծանօթ խմբեան - կը հետեւի 64 անունները կազմուած ցանկ մը, որու աւարտին արձանագրուած է՝

Շատ բանուորների անգրագիտութեան պատճառով, բանուորների անունները ու ազգանունները ցուցակազրեց մէկ բանուոր, ժողովի համաձայնութեամբ:

Փաստ. 327-11

**Բ 4.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԱՐՄԻՐ ԺԱՅՈՒ**

Կարմիր Ժայռը կազմակերպուել է 1905 թուից միայն. այս երկու տարում շատ քիչ գործ է կարողացել անել, շնորհիւ այն բանի, որ մօտ տարիուկէս զբաղուած էր միայն ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու: Բացի այդ եղել են դասախօսութիւններ, ընթերցանութիւններ անդամների ինքնազարգացողութիւնը ընդլայնելու եւ գիտակցութեան հասցնելու: Կազմուած է քարտաշների արհեստակցական միութիւն 35-40 անդամով:

Հ. ՆԱԼԵԱՆ[?]

22 Նոյ. Կարմիր Ժայռ

Փաստ. 327-12

**Բ 5.- ԿԱՐՄԻՐ ԺԱՅՈՒ ԿԱՐԾԻՔԸ**

Եթէ ընդունուի «Նախագիծը» անփոփոխ, դրանով կը վնասուի տաճկահայ դատը, որովհետեւ դասակարգային կռիւ յայտարարելով, մեզանից հեռանալու է բուրժուազիան, հետեւապէս նիւթականապէս մեր կազմակերպութիւնը տուժելու է. իսկ առանց նիւթականի շատ չնչին օգուտ կարող ենք հասցնել տաճկահայ դատին: Իսկ մեզ համար թէ՛ անհրաժեշտութիւն է տաճկահայ դատը եւ թէ՛ կովկասեան գործունէութիւնը: Եթէ կարելի է գտնել մի հնար, որ այդ երկու կարեւոր խնդիրները համաձայնացնել մի կուսակցութեան մէջ, իսկ եթէ այդ անհնար է, թող բաժանուի երկու մասի. ով ցանկանում է մնայ կրկին Դաշնակցութեան հին կազմութեան մէջ. իսկ կովկասում հիմնուի մի նոր կուսակցութիւն նոր անունով ռուս սոցիալ-յեղափոխականների ծրագիրը ընդունելով, աւելցնելով դրա վրայ, իբրեւ պարտաւորեցուցիչ օրէնք, որ ամէն պրոֆեսիոնալ միութիւն եւ խմբեր իր եկամտի 50% յատկացնի տաճկահայ դատին. բացի այդ, ամէն կերպ աշխատել նիւթական օգնութիւն հասցնել Դաշնակցութեան (ներկայացումներ, վիճակախաղ եւ այլն) եւ միշտ սերտ յարաբերութիւն պահպանել նրա հետ:

Պատգամաւոր ԱԹՕ

Ստացուեց Հոկտ. 30ին [ստորագր.] Չոփուռեան



Փաստ. 327-13

**Բ 6.- ԲԱԼԱՍԱՆԻԻ 42 ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԵՐՈՒ ԲԱՆԱԶԵՐԸ**

**I Բանաձև - 13 ծայնով**

Առաջ տանել տնտեսական կռիւը, կազմակերպելով հայ աշխատաւոր մասսան զուտ սոցիալիստական հողի վրայ: Կովկասեան հայ աշխատաւոր մասսայի ներկայացնող Դ-ը տաճկահայկական ազատագրութեան օժանդակում է դրամական նպաստներով. նպաստի գործը տանելու, ինչպէս եւ ոչ աշխատաւոր խաւերի հետ յարաբերութեան մէջ մտնելու համար Դ-ը ստեղծում է մի ուրոյն մարմին: Միաժամանակ իբրեւ անշեղ սկզբունք ընդունում է որ տաճկահայ դատի նախաձեռնութիւնը եւ ղեկը բնիկ տաճկահայ ժողովրդի գործն է:

**II Բանաձև - 5 ծայն**

Որովհետեւ Դ-ը տաճկահայ դատի համար է ստեղծուել, նա անշեղ պէտք է ընթանայ իւր դերով. իսկ որովհետեւ կովկասումն էլ կարիք է զգացում յեղափոխական գործունէութեան, այդ գործի համար ստեղծել մի մարմին (Դ-եան թեւի տակ), որ տանի կովկասեան յեղափոխութեան գործը:

**III Բանաձև - 24 ծայնով**

Այժմեան Հ. Յ. Դ-ը ծնունդ է կովկասեան այժմեան իրականութեան, որը մինչեւ այժմ կապուած է եղել տաճկահայ շարժման հետ: Ի նկատի ունենալով որ այժմեան պայմանները բոլորովին այլ են, որ կովկասում տիրում է մի այլ հոսանք, այդ դասակարգային կռուի անհրաժեշտութիւնն է, որ այժմեանից եւեթ մենք պարտաւոր ենք մաքրել մեր շարքերը աւելորդ էլեմենտներից<sup>54</sup>, կազմակերպելով Դ-եան դրօշի տակ միայն աշխատաւոր մասսային, որ տաճկահայ շարժումը ազգային է, իսկ կովկասեանը դասակարգային, որ տաճկահայկական շարժումը տաճկահայերի գործն է, Բալխանիի ռայոնական ժողովը որոշում է. այստեղի աշխատաւոր մասսայի կազմակերպութեան Դ-ը պարտաւոր է համարում օգնել տաճկահայոց դատին էլ եւ օգնել այնքան, որքան որ կարող է եւ պարտաւոր է մի կազմակերպութիւն, որ կանգնած է զուտ դասակարգային հողի վրայ:

(Բանուորակ[ան] 42 խմբերի ներկայացուցիչների ժողովում) 900[?] բանուորաների ներկայացուցիչներ

54.- Տարրերն:

**Բ 7.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՍԿԱՆԱՊԱՏԻ 2-ԲԳ ԿՈՄԻՏԵԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՄԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԱՌ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1904 Թ.**

|                    | Անդամների թիւը | Անդամավճար քանակութ. |
|--------------------|----------------|----------------------|
| 1. «Դրօշակ»        | 30             | 25 ռուբլի            |
| 2. «Նոր Սերունդ»   | 25             | 15                   |
| 3. «Շերօ-Չաթօ»     | 30             | 20                   |
| 4. «Երկաթ»         | 30             | 25                   |
| 5. «Թուման ա.»     | 17             | 9                    |
| 6. «Թուման բ.»     | 18             | 5                    |
| 7. «Վան»           | 20             | 7                    |
| 8. «Որոտն ա.»      | 15             | 8                    |
| 9. «Որոտն բ.»      | 10             | 4                    |
| 10. «Մուրազ ա.»    | 25             | 15                   |
| 11. «Մուրազ բ.»    | 10             | 6                    |
| 12. «Կարկուտ»      | 30             | 10                   |
| 13. «Միփան»        | 12             | 5                    |
| 14. «Ոստանիկ»      | 15             | 10                   |
| 15. «Մուշ»         | 20             | 5                    |
|                    | <b>307</b>     | <b>169</b>           |
| 16. «Վազգէն»       | 22             | 25                   |
| 17. «Անի»          | 13             | 4                    |
| 18. «Վազր»         | 30             | 35                   |
| 19. «Հրայր ա.»     | 10             | 5                    |
| 20. «Հրայր բ.»     | 12             | 10                   |
| 21. «Կեանքի առիթ»  | 17             | 13                   |
| 22. «Վրէժխնդիր»    | 22             | 15                   |
| 23. «Ճորա-պահակ»   | 18             | 25                   |
| 24. «Մհերի դուռ»   | 22             | 20                   |
| 25. «Դաւիթ բէկ ա.» | 20             | 10                   |
| 26. «Դաւիթ բէկ բ.» | 40             | 10                   |
| 27. «Ուխտաւոր»     | 22             | 10                   |
| 28. «Ռաշիդ»        | 10             | 15                   |
| 29. «Կատարի»       | 10             | 5                    |
| 30. «Աբովեան»      | 12             | 10                   |
| 31. «Մերուկ»       | 11             | 5                    |
| 32. «Փայլակ»       | 20             | 5                    |
| 33. «Անյաղթ»       | 40             | 20                   |
|                    | <b>351</b>     | <b>242</b>           |
| 34. «Անբախտ»       | 18             | 10                   |
| 35. «Ներկայ-րոպէ»  | 25             | 40                   |
| 36. «Թաթուլ»       | 10             | 3                    |

Փաստ. 324-54

**Գ 1.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ**

|                 |             |            |
|-----------------|-------------|------------|
| 37. «Անդրանիկ»  | 15          | 20         |
| 38. «Մաղիկ»     | 30          | 15         |
| 39. «Կոկոն»     | 10          | 5          |
| 40. «Աղբիւր»    | 10          | 5          |
| 41. «Արձագանգ»  | 15          | 10         |
| 42. «Բարկէն»    | 10          | 4          |
| 43. «Բարդող»    | 20          | 25         |
| 44. «Արաքս»     | 30          | 12         |
| 45. «Արցախ»     | 16          | 4          |
| 46. «Մովակ»     | 13          | 5          |
| 47. «Միթիար     |             |            |
| Սպարապետ»       | 13          | 3          |
| 48. «Երիտասարդ» | 12          | 7          |
| 49. «Դուին»     | 11          | 15         |
| 50. «Սասուն»    | 15          | 12         |
| 51. «Աբրօ»      | 20          | 12         |
|                 | <b>203</b>  | <b>207</b> |
| 52. «Գողթան»    | 25          | 20         |
| 53. «Նովրուզ»   | 15          | 7          |
| 54. «Նոր լոյս»  | 10          | 5          |
| 55. «Սէր»       | 20          | 15         |
| 56. «Վրէժ»      | 20          | 7          |
| 57. «Ալիշան»    | 20          | 25         |
| 58. «Կայծակ     |             |            |
| Վաղարշակ»       | 15          | 5          |
| 59. «Մասիս»     | 15          | 12         |
| 60. «Մրրիկ»     | 20          | 5          |
| 61. «Անտոք»     | 20          | 15         |
|                 | <b>180</b>  | <b>116</b> |
| Ընդհ. գումար    | <b>1131</b> | <b>734</b> |

Բազուեցի Դանիէլ-Բէկեանցի ծառայողներից խաչատուր խաչատրեան անուն երիտասարդը, որ անդամակցում էր I Կոմիտէի շրջանի «Բարկէն-Միւնիք» խմբին, թոյլ էր տուել իրան իւրացնել փորձելու մի գումար՝ որ մոռացութեամբ թողուել էր իւր ծառայած գրասենեակում, եւ փողը վերադարձնելու ու յանցանքը խոստովանուելու ստիպուեց միայն այն ժամանակ՝ երբ Հ. Յ. Դ-եան տեղական ոստիկանապետը ձերբակալեց նրան:

Յեղափոխական կազմակերպութեանը պատկանող ամէն անհատ պէտք է ամենամաքուր բարոյականութեամբ ղեկավարուի կեանքի մէջ. հակառակ պարագայում՝ յեղափոխութիւնը յեղափոխականներով կ'արտաւորուի: Այս իսկ տեսակէտով անհրաժեշտ է խստութեամբ վերաբերուել մեր ընկերական շրջանի մէջ բարքերի մաքրութիւնը անաղարտ պահելուն:

Հայ Յեղ. Դաշնակցութեան Ոսկանապատի Դատաստանական մարմինը աչքի առաջ ունենալով յիշեալ խաչատրեանցի զղջման արտայայտութիւնները՝ բաւականացել է առաջին անգամի համար քսան օր բանտարկութեան ենթարկել եւ վեց ամսով հեռացնել Ոսկանապատի Հ. Յ. Դաշնակցութեան շրջանից պահելով նոյնքան ժամանակ ոստիկանական հսկողութեան տակ:

Վեց ամսեայ պայմանաժամը լրանալուց յետոյ կազմակերպութեան անդամակցելու թոյլտուութիւնը պայմանաւորում է եթէ դատապարտեալը նոյն ժամանակամիջոցում ցոյց կը տայ մաքուր վարք եւ իսկական զղջում:

Դատաստանական մարմնի այս վճիռը հաղորդելով մեր շրջանի բոլոր մարմիններին, յանձնարարում ենք, որ մինչեւ նոր որոշմամբ վերընդունուելը, թոյլ չտրուի յիշեալ դատապարտեալին որեւէ առնչութիւն եւ մասնակցութիւն ունենալ Հայ Յեղ. Դաշնակցութեան հետ:

Հ. Յ. ԴԱՇ.  
ԶՈՐՐՈՐԴ ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷ

1905 թ. Օգոստոսի 15  
Ոսկանապատ



Գ 2.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հ. Յ. Դաշն. Ոսկանապատի շրջանի մարմիններին,

Հ. Յ. Դաշնակցութեան Բագու քաղաքի ինքնապաշտպանութեան նախկին շրջանապատ՝ շամախեցի Բալաբէզ Գասպարեանը եւ նոյն շրջանի նախկին զինւորներից Բալաբէզ Գէորգեան (Երեւան. ն.Վ. Դարաչիւ-չազ գիւղացի) 1905 թ. Դեկտեմբեր 31-ին Հ. Յ. Դաշնակցութեան տեղական Դատաստանական Մարմնի կողմից մեղաւոր ճանաչուելով դատապարտուեցին:

Բալաբէզ Գասպարեանը մեղաւոր ճանաչուեց, որովհետեւ

- 1.- Իրբեւ զէնք կամ ռազմամթերք կարծուած կապոցները գրաւելով՝ նրանց մէջ գտնուած թանկագին իրեղէնները թաքցրել եւ իւրացրել է:
- 2.- Դէպի թալանը եւ կողոպուտը, որ կազմակերպութեանս կողմից խստիւ արգիւտուած է, նա չափազանց թոյլ է վերաբերուել, առանց աշխատելու այդ յանցաւոր երեւոյթի դէմ միջոցներ ձեռք առնելու:
- 3.- Ինքնապաշտպանութեան գործի համար միայն կոչուած զինուորներին ծառայեցրել է իւր սեփական գործերի համար:

Բալաբէզ Գէորգեանը մեղաւոր ճանաչուեց, որովհետեւ

Աջակցելով Բ. Գասպարեանին յիշեալ իրեղէնները թաքցնելու եւ իւրացնելու գործում, այդ իրեղէնների մի մասը նրանից ստանալով՝ իւրացրել է ինքը:

Ուստի եւ Բ. Գասպարեանը

- 1.- Աքսորուում է Ոսկանապատի կենտր. կոմիտէի ամբողջ շրջանից մի տարի ժամանակով:
- 2.- Ձրկուում է ընդ միշտ Ոսկանապատի ամբողջ շրջանի դաշնակցական մարմիններին կամ խմբերին մասնակցելու իրաւունքից:
- 3.- Բացի այդ առաջարկուելու է կազմակերպութեանս առաջիկայ Ընդհանուր Ժողովին կամ Խորհրդուն յիշեալ Բ. Գասպարեանին Հ. Յ. Դաշնակցութիւնից արտաքսելու ընդ միշտ:

Բալաբէզ Գէորգեանը

- 1.- Ենթարկուում է բանտարկութեան 2 ամիս ժամանակով:
- 2.- Կրում է նաեւ Բ. Գասպարեանի համար 2-րդ եւ 3-րդ կէտերում որոշուած պատիժները:

Հ. Յ. ԴԱՇՆ.  
ՉՈՐՐՈՐԴ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

Յունուարի 7, N° 2, 1906 թ.  
Հ. Յ. Դաշն. IV Կ. Կ-ի տպարան

Գ 3.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ընկերներին,  
Ոսկանապատի վերջերս կազմալուծուած տեղական մարմնի անդամներից Ուտիսը (Ն. Կ. Յ.)՝ որ միեւնոյն ժամանակ մարմնի գանձապահն էր եղած, այս տարւայ Սեպտեմբեր ամսի մօտաւորապէս կէսից սկսած, համարեա մէկ ու կէս ամսուայ ընթացքում մարմնի հասոյթներից զեղծման է ենթարկել մօտ 2.374 ռ.-ի մի գումար:

- Նա այդ զեղծումի համար դատապարտուեց.
- 1.- Պակսած դրամը վերադարձնելու համար տալ նրան պայմանաժամ մինչեւ Մարտի 31-ը 1907 թ.
- 2.- Արտաքսել Դաշնակցութիւնից IV կենտրոնական կոմիտէի շրջանում:
- 3.- Դաշնակցութիւնից արտաքսելու համար առաջարկել առաջիկայ Ընդհանուր Ժողովին:
- 4.- Եթէ նշանակած պայմանաժամին պակասած գումարը չվերադարձնի, այն դէպքում այդ մասին առանձին որոշում կայացնել:
- 5.- Վճուի այս ամբողջութիւնը յայտարարել:

Հ. Յ. Դ.  
IV ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Դեկտեմբեր 1906 թ.

XV

ՔԱՐ – ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Քարի Կեդր. Կոմիտեւորինը կը բովանդակէր արդի Հայաստանի Հանրապետութեան հիւսիսային գօտին՝ Ալեքսանդրապոլ-Գիւմրիի քաղաքային շրջանէն մինչեւ Ղարաքիլիսէ-Վանաձոր եւ Դիլիջան տարածուող հայաեռոք երկրամասը:

Քարը անմիջական յարաբերութեան մէջ կը գտնուէր Կարսի (Ջրաբերդ) եւ Երեւանի (Մրգաստան) կեդր. կոմիտեւորինց հետ, որոնք միասնաբար, իբրեւ սահմանամերձ գօտի, կը կազմակերպէին զէնք հայթայթելու, քաքստոցներու մէջ պահելու եւ դէպի Երկիր փոխադրութեան վտանգաւոր գործերը: Այս ինչպէս նաեւ մարտական խումբեր կազմելու եւ սահմանը անցնելու աշխատանքները համակարգելու նպատակով, 1904 թ. Ապրիլ 5-12ին Քիւրդյէն Սիւնն Չաւարեանի եւ երեք շրջաններու գործիչներու մասնակցութեամբ գումարած ժողովներու ընթացքին տրուած էին հիմնական որոշումներ (տե՛ս «Նիւթեր»-ու Բ. հատոր, էջ 195): Ծանօթ է նոյն օրերուն Քարի շրջանին մէջ Ալեքսանդրապոլի ռուսական գօրանոցին զինապահեստին խորհրդաւոր կողոպուտը, որուն շնորհիւ հսկայական քանակութեամբ զինամթերք ապահովուեցաւ թէ՛ Երկիր ուղարկելու եւ թէ՛ Կովկասի հայ-քաքարական կոիւներուն օգտագործուելու համար: Յանդուգն այդ գործողութիւնը տեղի ունեցաւ Քարի եւ Ջրաբերդի Հ. Յ. Դ. կազմակերպութեանց սերտ գործակցութեամբ:

\*  
\*\*

Ընդհ. Ժողովին «Քար»ի թղթածրարը կը բաղկանայ հետեւեալ գրութիւններէն.-

- 1.- Հ. Յ. Դ. V կենտրոն. Կոմիտէի «Քարի» 1904-1906ի տեղեկագիրը. մեծադիր, (34 x 20.5 սմ.) երկթերթ եւ գծաւոր 16 էջեր. գրութիւնը սեւ մելանով է եւ ստորագրուած՝ «Քարի Կենտ. Կոմիտէի պատգամաւոր՝ Հայ-Գուսան»: Հայ-Գուսանը ծածկանունն է Աւետիք Իսահակեանի: Չեռագիրը եւ ապահովաբար տեղեկագրի շարադրութիւնը նոյնպէս կը պատկանին իրեն:
- 2.- Քարի Շրջ. Ժողովի արձանագրութիւնը. 2 նիստեր գումարուած 1906 թ. Գեկտ. 10 եւ 11ին: Գրուած է սեւ մելանով մեծ չափի (35 x 22 սմ.) երկթերթ եւ անգիծ 8 էջերու վրայ եւ ստորագրուած ժողովին մասնակիցներուն կողմէ: Շրջանային այս ժողովը պատգամաւոր ընտրած էր Արմէն Գարոն, բայց Ընդհ. Ժողովին Քարէն ներկայ է Ա. Իսահակեան (տես փաստաթուղթ No 358-6):
- 3.- Քարի բանաձեռ. փոքրադիր (23 x 14 սմ.), երկթերթ, գրութիւնը կը գրուէ էջին կէտը: Ստորագրութիւնը՝ «պատգամաւոր Քարի շրջանի՝ Հայ-Գուսան»: Չեռագիրը եւս կը պատկանի Ա. Իսահակեանի:
- 4.- Տեղեկագիր 1907 թ. սեւ մելանով գրուած մեծ չափի (35 x 22 սմ.) երկթերթ եւ անգիծ մօտ 4 էջերու վրայ եւ ստորագրուած՝ Տիգրանեան: Տեղեկագրի թուականը՝ 1907, 5 Գեկտեմբեր, ապացոյց է որ ան սահմանուած պէտք է ըլլար Թիֆլիսի մէջ նոյն ամսուան վերջաւորութեան կայանալիք Կովկասի Ռայոնական Ժողովին, բայց եւ այնպէս կը գտնուի Գործող Ընդհ. Ժողովի թղթածրարին մէջ:

Ե. Փ.

### Ա 1.- ՔԱՐԻ ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԵԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

(1904 - 1906)

1903 թուին եկեղեցական կալուածքների գրաւումը երկրաշարժի պէս ազդեց եւ փոթորկեց կովկասահային, նրա բոլոր խաւերին եւ դասակարգերին. մինչեւ այդ ժամանակուայ ոտնձգութիւնները հայութեան դէմ ռուս կառավարութեան կողմից հայկական մեծ մասսաների համար անցել էին աննշմարելի սեւ ամպերի պէս...

Ինչպէս յայտնի է ըմբոստացման ազդանշանը տուեց Քարը, որից տարածուեց Կովկասի բոլոր անկիւնները, եւ առաջին տեւորը մի ստորաժնիկի՝ դէմ պատահեց Քարում. այդ ակտը այն ժամանակի աչքում մի մեծ յանդերձութիւն էր համարուում:

Կալուածների գրաւումը եւ նրա հետ կապուած ոգեւորիչ եւ գեղեցիկ ցոյցերը յուզեցին, արթնացրին ինքնուրուէր ժողովուրդին եւ մի անօրինակ շարժման մէջ դրին նրան. այդ օրերում ժողովուրդի տենչանքն էր եւ օրուայ լոզունգը — կազմակերպուել ռուս հայաջինջ բիւրոկրատիայի դէմ եւ միայն կազմակերպուել. եւ Քարի կենտրոնական Կոմիտէն ընդառաջ գնաց ներքեւից բխող հրամայողական պահանջին եւ եռանդազին ձեռնամուխ եղաւ ժողովուրդին կազմակերպելու:

Ժողովուրդը խմբերով ու մասսաներով, իր բոլոր խաւերով, հարուստ թէ աղքատ, գաւառը ամբողջ գիւղերով իրար յետեւից մտնում էին Դաշնակցութեան դրօշակի տակ. կազմակերպուելու այդ տենդային շրջանում ժողովուրդի կողմից համարեա ոչ մի խոչընդոտ չէր հանդէս գալիս. կազմակերպուելու տրամադրութիւնը վարակել էր բոլոր տարրերին, բաց չէին մնում եւ շրջանի եղիւնները եւ ռուսադաւան հայերը: Միակ խոչընդոտը կամ մրցակիցը Քարի շրջանում հանդիսանում էր Հնչակեան կուսակցութիւնը, որը համեմատաբար միւս շրջաններին՝ Քարում բաւական զօրեղ էր գլխացաւանք պատճառելու համար: Իսկապէս Քարն էր Կովկասի նրանց բոյնը, կենտրոնական զօրեղ պունկտը<sup>3</sup>. բայց չնայելով դրան Դաշնակցութեան առաջ նա անկարող էր, հետեւելով քայլ առ քայլ Հ. Յ. Դաշնակցութեան գործելակերպին՝ չուեննայով ստեղծագործական ո՛չ մի ոյժ: Նրա մրցակցութիւնը մի մասշտաբ<sup>4</sup> էր Դաշնակցութեան ոյժը եւ հմայքը չափելու համար. նրա շարքե-

րը լցուած էին գլխաւորապէս Դաշնակցութիւնից արտաքսուած, դատուած անհատներով, վիրաւորուած ինքնասիրութիւններով:

Կազմակերպութեան ձեւը.- Դաշնակցութեան մէջ կիրառուած ձեւով էր կազմուած Քարի շրջանը մինչեւ 1906 թիւը, ուր տեղի տուեց նոր ձեւի,- արհեստակցական միութիւնների. հարեւանցիօրէն անցնենք մինչ այդ ժամանակեայ ձեւի մասին: Քարի շրջանը կազմում էր մի կենտրոնական Կոմիտէ, որը ղեկավարում էր ամբողջ շրջանի բոլոր գործերը:

Նա բաղկացած էր վեց կոմիտէներից, մի կենտրոնական դատաստանական մարմնից, եւ ութը շրջանային դատարաններից եւ մի գրադարանական մարմնից: Կոմիտէները հետեւեալներն էին 1) Կարմիր Խաչի, որը ունէր իր խմբերը կանանցից կազմուած. II) Քարի քաղաքի կոմիտէ, որին ենթարկուում էին քաղաքի խմբերը: III) Գեղական-շրջանային կոմիտէ, որը նստում էր քաղաքում, որին ենթարկուում էին Շիրակի գիւղերը. IV) Անտառապատի-Մեծ Ղարաքիլիսան՝ կազմուած աւանի խմբերից եւ գիւղերից. V) Շամուտ-Դիլիջան՝ վերոյիշեալի պէս եւ VI) Թմբուկ-Ախալքալաք, որը ունէր երկու մեծ ենթակոմիտէներ՝ բազմաթիւ խմբեր եւ գիւղեր: Կարմիր Խաչը ինքնավար էր, ունէր իր մասերը բոլոր կոմիտէական շրջաններում, միայն որոշ խնդիրներում ենթարկուում էր կենտրոնական Կոմիտէին եւ հաշիւներ կայացնում:

Դատաստանական մարմինները անկախ էին, կենտրոնական Կոմիտէն միայն գործադիր իշխանութիւն էր: Անկախ էր եւ գրադարանական մարմինը, բայց այդ բոլորի հաշիւները ներկայացուում էին կենտրոնական Կոմիտէին:

Խմբերը լինում էին դրամական եւ մարտական դրամական խմբերը կազմուած էին խառը, ամէն շրջ-

- 1.- Պահակ:
- 2.- Թոյլ, անտարբեր:
- 3.- Կէտը:
- 4.- Աստիճանաչափ:

ջաններից, խաւերից եւ դասակարգերից. միմիայն բարոյական ցենզ էր պահանջուում, այն էլ վերջը բաց՝ ի թող արուեստ. խմբերը լինում էին մօտ 15-20-30 անդամներից, որոնք ամսական անդամավճարներ էին տալիս իրենց խմբապետներին. վերջինս էր յարաբերութիւն պահպանում խմբի եւ կոմիտէների հետ, կուսակցութեան որոշումները խմբին յայտնում, հաշիւները պահում, հսկում անդամների վարքի վրայ. խումբը ունէր իր փոքրիկ գրադարանը. տալիս էր երեկոյթ խմբի օգտին. խմբերից կազմուում էր խմբական ժողովներ:

Նոյնն էր եւ Կարմիր Խաչի խմբերը:

Գիւղերը ենթակոմիտէներ էին կոչուում. գիւղական ենթակոմիտէն ընտրուած գիւղից՝ 3-5 հոգի, որոշ կոմպետենցիայով՝ վարում էին գիւղի գործերը, անդամավճարներ հաւաքում, կուսակցութեան որոշումները յայտնում, եւ դատեր վարում:

Մարտական խմբերը կազմուած էին միմիայն երիտասարդներից՝ գինավարժութեան համար:

Այս ձեւով Քարի կենտ. Կոմիտէն 1904-1905 նշանաւոր թուականներում աճեց ու հասաւ իր բարձունքին. նա այդ շրջանում ունէր 208 գիւղ եւ մօտ 300 խումբ. մարդ չկար, որ խմբի մէջ չլինէր. քաղաքներում չէզոք մարդ չկար բառին իսկական մտքով. սկսած քաղաքի յայտնի բուրժուաներից մինչեւ վերջին ժամկոչը, եւ բոջանները, եւ գորողութիւնները՝ բոլորը խմբերի մէջ էին, նոյնիսկ երեխաներ. իսկ գիւղերը բոլոր բովանդակ մարդկային բնակիչներով՝ ծեր ու երեխայ, կին ու մայր, կազմակերպուած էին եւ եղիւնները եւ ռուսադաւան հայերը: Այդպիսի ապագասակարգային եւ համագային կազմակերպման գլխաւոր պատճառը ոչ թէ այն էր որ չգիտէին, որ գոյութիւն ունի մի ազգի մէջ հակամարտ շահերով դասակարգեր, այլ այն էր որ գոյութիւն ունի մի մեծ, համայնապարփակ շահ, որի առաջ փերեզակային էին անհատների եւ խաւերի շահերը, մի մեծ շահ, որը հորիզոններից հորիզոն սփռուող դրօշակի պէս՝ տարածուել էր ամբողջ եւ ամբողջ հայութեան գլխին,- այդ ազգի, ցեղի գոյութեան, տեսակի կուրն էր ինքնութեան, կուլտուրայի, պատմութեան, հոգու հայրենիքի եւ լեզուի համար ընդդէմ ռուսացման եւ բնաջնջման: Դաշնակցութիւնը Թուրքիոյ հայերի ազատագրման կուրս էր դուրս եկել Սուլթանի արսողութիւնի՝ դէմ, որի մէջ շահագրգռուած էր հայութիւնը ամբողջապէս իր բոլոր դասակարգերով. եւ ապա ռուս կառավարութեան վերջին տարիների հայերի դէմ յարուցած հալածանքների պատճառով նոյնպէս, թէ եւ ստիպուած, մղուած կեանքի երկաթէ իմպերատիւններով՝ - դուրս էր եկել պայքարելու ինքնապաշտպանութեան հողի վրայ հայութիւնը պաշտպանելու: Այդ ժամանակուայ իդէոլոգիան<sup>5</sup> հայրենասիրական-անդասակարգային, համագային էր, այդ իդէոլոգիան էր, որ փրկեց հայութեանը թաթարական հեղեղներից. այն ժա-

մանակուայ լօզունգներն էին՝ հայրենիք, լեզու, ազգային անհատականութիւն, ազգի պատիւ. լօզունգներ, որոնք հրեղէն մրրիկների պէս այրում էին ըմբոստ ոգիներին եւ թեւաւորում դէպի հերոսացման լեռնաբարձունքները:

Այդ իդէոլոգիայից առաջնորդուած Դաշնակցութեան սակաւաթիւ շրջիկները-պրոպագանդիստները, որոնք լինում էին հայ դպրոցներից աւարտած կամ կիսաւարտ տղերք, ժողովուրդի մարդիկ եւ աշուղներ, շրջում էին գիւղերը, նկարագրում էին Թուրքիոյ հայերի դժոխային իրականութիւնը, հրոսակային կուրսները, Սուլթանի հայաջինջ ռեժիմը, ռուս կառավարութեան հալածանքները եւ մեկնում ռուսացման քաղաքականութիւնը, ոգեւորում էին ժողովուրդին, եւ նրա բոլոր խաւերին հրաւիրում միութեան, միանալու՝ միացած դիմագրաւելու համերաշխ-բռնակալներին...

Դատավարութիւն 1904-05 թ.- Ամբողջ Կ. Կոմիտէութեան շրջանում միակ բարձր դատաստանական ինստանցիան<sup>10</sup> եւ վճռաբեկ ատեանը կենտրոնական դատարանն էր՝ կազմուած իրաւաբաններից. նրան ենթարկուում էին միւս մարմինները՝ որոշ իրաւասական սահմաններով, մինչեւ վերջին միաւորը՝ գիւղական ենթակոմիտէն: Ի հարկէ չկար կոտեքս<sup>11</sup>, այլ միայն խիղճ եւ սովորութիւնների օրէնքը. եւ չնայելով որ շրջանիս բոլոր խղճմտանքով մարդիկն էին որպէս թէ ընտրուած դատաւորներ, բայց զարհուրելի ինկվիզիցիական ակտեր<sup>12</sup> տեղի ունեցան, որոնք մեծ մասով ժողովուրդին դուր էին գալիս: Ի հարկէ եղան եւ շատ արդար վճիռներ, հիացմունք պատճառող եւ ռուսական շրջաններում: 20-30 տարուայ վիճելի գործեր մաքրուեցին. ընդունում էին եւ քաղաքական եւ քրէական գործեր. կային բանտ, աքսոր, տուգանք, մարմնական պատիժներ, նոյնիսկ եղան եւ կատարուում էին կենտրոնական դատարանից անկախ՝ նրա ենթակայ մարմինների կամայականութեամբ:

Սկզբում դեռ որ դատաւորների մէջ չէին մտել գիւղի ազդեցիկները, բուռնցքները - դատը լինում էր արդար, որին դիմում էին եւ թուրքերը, եղիւնները, բայց երբ ժամանակով դատաւորների աթոռների վրայ նստեցին գիւղի ջոջերը՝ արդարութիւնը մարաւ, եւ իշ-

- 5.- Չեռնիասութեամբ, լիագորութեամբ:
- 6.- Ոստիկանական պաշտօնեայ (ներկայիս ոչ գործածական):
- 7.- Բացարձակ մեծատիրութեամբ:
- 8.- Գրամայականներով:
- 9.- Գաղափարաբանութիւնը, գաղափարախօսութիւնը:
- 10.- Ատեանը, իրաւասու մարմինը:
- 11.- Օրէնսգիրք:
- 12.- Միջին դարերու կրօնա-իւրաւատաքնական հալածանքները յիշեցնող արարքներ:

խեց թափափայլանութիւնը,- անձնական շահեր, կաշառք, հին վրէժի լուծում. դատաւոր լինել՝ նշանակաւորում էր Սուլթան լինել: Այդպիսով, երբ դատավարութիւնը այլասերուեց (ծեծի տակ մարդ մեռաւ, կնոջ ըստ պանել դաւաճանութեան համար), 1905 թ. Սեպտեմբերի Երջանային Ժողովը ընդմիջտ վերացրեց դատավարութիւնը:

Գրադարանական մարմինը.- Իսկապէս շատ քիչ գործ տեսաւ, չնայելով, որ թէ անդամներով էր հարուստ եւ թէ գրքերով. նա բացեց միայն մի քանի գիւղական գրադարաններ. Ժամանակի ալեկոծումները կուտուրական մթնոլորտ չէին ստեղծում:

Պրոպագանդան.- 1904 թ. եւ 1905 թ.ին տարուել է անբաւարար ուժերով. միշտ պրոպագանդիստների սով է եղել. շատ եւ շատ անգամ դիմումներ է եղել ուսանողներին եւ ինտելիգենտ մարդկանց գաւառում շրջնու պրոպագանդի համար, բայց յարգելի պարոնները աւելի լաւ են համարել մեծ քաղաքներում եւ կուրորտներում<sup>13</sup> Փրագաբանելու<sup>14</sup>, քան զրկանքներով լի՝ Ժողովրդական միջավայրում. եւ այդպիսով պրոպագանդան մնացել է թերուսներին: Չնայելով որ ունեցել ենք շրջիկների համար ընտիր գրքեր լեզալ եւ ոչ լեզալ<sup>15</sup> ուսուցիչներ, բայց վերջիններս չեն կարողացել օգտուել լեզու չիմանալու պատճառով, եւ սննդուել են մանանայ դարձած «Իրօչակ»ով եւ նրա հատ ու կտոր բրոչիւրներով: Մէկ-մէկ երեւացել են պատրաստուած պրոպագանդիստներ, մի երկու դասախօսութիւններ արել սոցիալական-տնտեսական հարցերի մասին, ուսուց յեղափոխութեան, նրա պահանջների եւ ուրիշ խնդիրների, թուրք-հայկական ընդհարման բնոյթի մասին եւ զնահատուել են: Չնայելով, որ եղել են կենտ. կոմիտէի կազմի մէջ մի երկու գարգացած տղերք, բայց նրանք էլ այնքան են ծանրաբեռնուած եղել կազմակերպական-տեխնիկական գործերով, որ Ժամանակ չէին ունեցել նոյնիսկ հաց ուտելու: Բայց եւ այնպէս կենտ. կոմիտէին իր կարողացածի չափ բազմաթիւ երեկոյթներով եւ թատրոնական ներկայացումներով քաղաքներում եւ գիւղերում արծարծել է յեղափոխութեան գաղափարը, տարածել է գրքեր եւ թուղցիկներ:

Տպարանական գործում Քարի շրջանը քիչ գործ չէ կատարել, շնորհիւ այն հանգամանքի, որ մեր ընկերների մէջ ունէինք տպարանատէրեր՝ անվախ կերպով տպուում էին այդտեղ ամբողջ կազմակերպութեան անդորրագրերը, ցուցակները, թուղցիկներ, երբեմն գրքոյկներ. տպագրուել են եւ էս-էռների թուղցիկներից եւ գրքոյկներից՝ ուսուցիչներ:

Կարմիր-խաչը 1904-05 թուերին, որի կոմիտէները

կազմուած էին քաղաքի գործուներայ եւ անուանի կանանցով, շնորհակալութեան արժանի գործուներով ընկերները. նա բազմաթիւ բանտարկեալների եւ աքսորեալների նպաստներ հասցրեց, կուտում ընկածների ընտանիքներին ամիսներով կամ միանուագ օժանդակութիւններ տալով. Երկիր գնացող խմբերին նոյնպէս նա էր տալիս հագուստեղէններ, եւ այլ պարագաներ, աւրուած գիւղերին նպաստ էր ուղարկում՝ փող, սրնուներ, հագուստ, աւերածութիւններից Քարում պատրաստուածներին կերակրում, ու հագցնում. նա Հին-Նախիջեւանի կոտորածից անմիջապէս յետոյ ուղարկեց մի բժշկական խումբ՝ կազմուած մի բժիշկից, երկու օգնականից, երկու օրիորդից՝ հոգալով բոլոր ծախսերը: Իր կասսայից<sup>16</sup> փողեր էր ուղարկում միւս բոլոր կարիքաւոր շրջաններին:

Տնօրնութիւնը 1904-05 շրջանում քիչ են եղել. սպանուել է մի վաշխառու մատնիչ. մի հայ քահանայ՝ յունադաւաւութիւն քարոզող. մի երկու մատնիչներ, տեւորի են տրուել օսմանցի ջանքեղարներ<sup>17</sup> եւ մի չէյի՝ որոնք եկել էին Քար գէնք տանելու Թուրքիա, թուով 4 հոգի. անյաջող տեւորի տրուեց քաղաքի փոխ գաւառապետը: Քարը բարեբախտաբար թէ ուրիշ պատճառներով միշտ ունեցել է խաղաղասէր գաւառապետներ եւ պրիստաւներ<sup>18</sup>, նոյնիսկ ժանդարմներ: Ոստիկանութիւնը միշտ կենտ. կոմիտէի ձեռքում է եղել. իսկ գորողովոյնը<sup>19</sup> կազմակերպուած էին, մանր ժանդարմները չնչին դրամներով կաշառուած. բայց անշուշտ մեծ դեր է կատարել ոստիկանների վրայ եւ տեւորի վախը (ի հարկէ խօսքս ունեցիս)<sup>20</sup> շրջանին է վերաբերում): Համառուական յեղափոխութեան փայլուն օրերում կառավարութիւն, ոստիկանութիւն չկար - կենտ. կոմիտէն էր կառավարութիւնը. 1905 թ. ոստիկանութիւնը նրա պատում էր նոյնիսկ Դաշնակցութեանը, փողոցի կրուները, գողութիւնները, կարգ ու խաղաղութիւնը, գիւղերապահութիւնը նա բաց աչքով յանձնել էր Դ.՝ վարելու, պատժելու, հսկելու: Իրեն դիմողներին նա ցոյց էր ալիս Դաշնակցութեան դիւանի դուռը. եղան օրեր մեծ գործադուլի Ժամանակ Հոկտեմբերի եւ նրանից յետոյ մինչեւ Վիդզէ-Դուրնովեան<sup>20</sup> ունեցիան, կ. կոմիտէն էր միայն ու միայն քաղաքի տէրը. գաւառապետը

- 13.- Օղափոխութեան առողջարար վայրերու, բուժարաններու մէջ:
- 14.- Ճոռոմաբանելու:
- 15.- Օրինական եւ ոչ օրինական:
- 16.- Դրամարկէն:
- 17.- Ապստամբներ, չեթներ:
- 18.- Ոստիկանական պաշտօնեաներ:
- 19.- Յետադիմութեան:
- 20.- Վիդզէ եւ Դուրնովո, ցարական Ռուսիոյ նախարարներ, որոնք 1905-6 թուականներուն դաժանօրէն ճնշեցին ազատական շարժումը:

խորհրդակցում էր կազմի անդամների հետ. գորքի հրամանատարը կ. կոմիտէին էր դիմում շաքար եւ նաֆթ ստանալու գորքի համար... մեծ եւ ստորին ոստիկանները յարգանքով էին բարեւում կ. կոմիտէի անդամներին եւ շոյում նրանց...

Ոսկի ամպի պէս անցան ազատութեան այդ օրերը...

Քարի քաղաքը գլխաւորապէս եւ շրջանը մասամբ միշտ անդաւաճան եւ միշտ սրտացաւ է եղել Թուրքիոյ հայերի համար. նոյնիսկ ունեցիսայի լքման օրերում, այնտեղ վառ էր յեղափոխութեան օճախը՝ Ժողովուրդի սիրտը. եւ մեր տարագիր եղբայրները, կուներից եւ հալածանքներից վաստակած Ֆետային միշտ տաքացել են այնտեղ եւ հանգստացել: Քարը միշտ մի բազա է եղել բոլոր Երկիր թուրք խմբերի համար. այնտեղ են հաւաքուել, գինուել, հագնուել ու ճամբայ ընկել. Քարին այդ մասում միայն կարող է հասնել Ջրաբերդը<sup>21</sup>:

1904 թ.ին Երկիր անցան կայծակ-Վաղարշակի<sup>22</sup> եւ դժբախտ Թումանի<sup>23</sup> խմբերը, որոնց եւ գէնքերի, եւ ծայրերի, եւ դաշնայնների, եւ պաղտոնտաշներ<sup>24</sup>, եւ հագուստների եւ այլ եւ այլ իրերի 90% Քարն է հոգացել: Ջոր ու գիւղեր աշխատել են կարմիր Խաչի անդամները, շորեր կարել, գուլպայ գործել եւ այլն, իսկ կ. կոմիտէի ընկերները, իրենց գլուխ ունենալով անմոռանալի Վաղոյին (Գուրգէն), անդադար աշխատում էին խմբերի կարիքները հոգալու, խումբը պատրաստելու. իսկ խումբ պատրաստելը մի դժուարին գործ է՝ խորին կոնսպիրացիա<sup>25</sup> եւ մեծ եռանդ:

Կայծակի եւ Թումանի խմբերում Քարից մասնակցեցին բաւական չափով ընտիր տղերք, որոնք բոլորն էլ ընկան. դրանց մէջ նշանաւորներն էին՝ կ. կոմիտէի եռանդուն եւ անձուէր անդամ Վաղարշակ (Վաղօ, Գուրգէն) Մինասեան, Մարտիրոս Ստեփանեան, եւ քաղաքին յայտնի Արշակը, Խեչոն եւ ուրիշները:

Երբ թաթարական արիւնոտ մղձաւանջը նորից նստեց կովկասի վրայ եւ գէնքը դարձաւ փրկութեան սիմբոլը՝ այդ օրերում Քարը նոյնպէս բաժին էր հանում Երկիրն ուղարկութեամբ: 1906-ին Քարը այնքան մը թերք էր տեղափոխել Երկիր, որ առանձնապէս շնորհակալութեան թերթի արժանացաւ Շամի<sup>26</sup> կողմից:

Դողային-ագարալ(ային) խնդիրներում Քարը ունեցաւ իր պայմաններին յատուկ գործուներով: Քարի շրջանում միայն թմբուկում<sup>27</sup> կայ մեծ հողատիրութիւն՝ եկեղեցական եւ բէկական. այնտեղ նոր էր սկսուել յօգուտ աշխատաւոր գիւղացիների մի փոքր շարժում, երբ թմբուկը միացաւ Մեծ-Քաղաքին<sup>28</sup>: Իսկ միւս շրջաններում չկայ հողատիրութիւն եւ ոչ էլ արքունական կամ ուղեւորի<sup>29</sup> հողեր. հողը համայնական է. ուստի այնտեղ միակ բանաւոր գործուներով էր այն էր, որ հողը արդար բաժանուէր գիւղացիների մէջ. եւ այդ տե-

սակէտով կ. կոմիտէն բազմաթիւ հողաբաժնական ակտեր կատարեց յօգուտ աղքատ, հողագուրկ գիւղացիների: Թէպէտ պետական օրէնքով իւրաքանչիւր գիւղացի պիտի ունենայ հաւասարաչափ հողաբաժին, բայց գանազան ճանապարհներով գիւղի բուռնցքների ձեռքն են անցել մեծ եւ լաւ հողերը, իսկ խեղճերը կամ ոչինչ չեն ունեցել կամ ունեցել են շատ անպիտան հողեր. կ. կոմիտէն արդար բաժանեց հողերը. բոլորը ստացան հող եւ ամէն տեսակից. բնականապէս այս քայլը կատարեցրեց գիւղի բուռնցքներին, որոնք Դեան գորեղ օրերում եւ կառավարութեան թոյլ օրերում լուցին, բայց երբ եկաւ 1906 թիւը եւ երեւցաւ գիւղում նորից կազակ ու մտրակ ու ստրաժնիկ, սկսուեցին բողոքներ աղաների կողմից, մատնութիւններ, գիւղերում ընդհարումներ գիւղացիների մէջ. բայց կ. կոմիտէն 1906-ին ուսուցիչ սխաններով<sup>30</sup> խեղդեց բուռնցքներին. տուգանքներ առաւ, ծեծեց, սպառնաց մահուամբ. բայց գիւղի աղան դեռ սպասում է, որ մի օր ի սպառ կը ջնջուի Դաշնակցութիւնը եւ նա նորից տէր կը դառնայ հողերին...

Գուցէ տեղին է ասել, որ Դեանը շատ է աշխատել գիւղերում եւ քաղաքում վերացնելու վաշխառութիւնը. նա շատ անգամ է պատժել վաշխառուներին. հարիւրաւոր մուրհակներ է ոչնչացրել կ. կոմիտէն: Դաշնակցութիւնը մեծ ջանքեր է գործ դրել գիւղերում խոտեր ու դէզեր վառելու վնասակար-վրէժիւնդական սովորութեան դէմ, հարեցողութեան, խումարի եւայլլն... իսկապէս եղան շրջաններ, որ գիւղերում այլեւս գողութիւն, խումար, խմիչք եւ հրդեհումներ չկային: Յաջողութեամբ նա նոյնը արել է եւ քաղաքներում: Քարի ահագին շրջանի, որը ամենահայաշատ գաւառն է երկրագնդի վրայ, վերջին տարիների պատմութիւնը իսկապէս Դաշնակցութեան պատմութիւնն է. նա թափանցել է լոյսի պէս շրջանի ամբողջ կեանքի, նրա խաւերի, ծախքերի, խորշերի, բոլոր բջիջների մէջ. նա եղել է ամէն ինչ ընդգրկող մթնոլորտը:

3. 3. Դաշնակցութեան յարաբերութիւնը դէպի միւս կուսակցութիւնները.- Հնչակեան կուսակցութիւնը ամբողջ կովկասում միայն Քարի շրջանումն է եղել համեմատաբար գորեղ. նա իր ծաղկած օրերում ունէր մօտ 18 գիւղ եւ 40ի մօտ՝ խմբեր. այդ գիւղերը հիմա մեծ մա-

- 21.- Կարսի շրջանը:
- 22.- Բուճ աճուճով Բաղտասարեան Վաղարշակ:
- 23.- Թուման Թումանց:
- 24.- Փամփշտակալներու:
- 25.- Ընդատակեայ դաւադրական գործ:
- 26.- Վան-Վասպուրականի կ. կոմիտէ:
- 27.- Ախալքալաքի շրջան:
- 28.- Թիֆլիս:
- 29.- Իշխանական, աւատատիրական:
- 30.- Պատժական միջոցներով:

սով իրենց դաշնակցական են զգում, իսկ խմբերը լուծ-  
 ւած են. շատ անհամ կռիւներ են տեղի ունեցել նրանց եւ  
 մեր մէջ. նրանց ղեկավարները քաղաքիս ատուած եւ  
 տիրացու տղաներից են կազմուած եղել, որոնք գազազ-  
 ւած են մեր ուժից՝ միշտ բանը քիչ է մնացած եղել, որ  
 արիւնի հասցնէին. բայց դաշնակցական Կ. Կոմիտէն  
 միշտ վեհանձն է եղել եւ միշտ տարել է. փորձեր են եղել  
 համերաշխութեան՝ բայց միշտ դաւել ու խաբել են...  
 Վերջ ի վերջոյ արիւն հոսեց:

Այդ պատահեց հետեւեալ կերպով. Զրաբերդի Կ. Կո-  
 միտէն տեւորի էր տուել Հնչակեան բաշխողով խմբա-  
 պետ Զարգանդին. Հնչակեանները դրան պատասխանել  
 էին Կենտ. Կոմիտէի մի անդամին սպանելով. փոխա-  
 դարձ մի երկու դէպքեր էլ եղան, եւ հանգստացաւ:  
 Բայց Զարգանդի հեռաւոր ընկերները լսելով շտապե-  
 ցին Բաթումից գալ՝ ոմանց ասելով Հնչակեան մարմնի  
 հաւանութեամբ Քար եւ Զրաբերդ՝ վրէժ հանելու  
 նրանք Քարումն էին երբ Հոկտեմբերի 19-ին յայտնի  
 եղաւ Հոկտեմբերեան հռչակաւոր մանիֆեստը. քաղա-  
 քը ընկաւ մեծ ուրախութեան մէջ, իւրաքանչիւր կու-  
 սակցութիւն իր դրօշակներով հանդէս եկաւ. այդ միջո-  
 ցին Հնչակեան զինուորները - Զարգանդի ընկերները -  
 հարցնում են մի դաշնակցականի՝ քաղաքի զինուորի,  
 թէ ի՞նչ կուսակցութեան ես պատկանում, երբ պատաս-  
 խան են ստանում, որ դաշնակցական է՝ հայհոյելով  
 ասում են՝ դուք ինչո՞ւ էք ուրախանում, սա մեր յաղ-  
 թութիւնն է. երբ մեր զինուորը նորից պատասխանում  
 է՝ այդ ժամանակ ատրճանակ են արձակում նրա վրայ,  
 եւ առհասարակ աջ ու ձախ հարուածելով ժողովրդի  
 մէջ, սպանում է այդ զինուորը, մի երեխայ եւ մի յայտ-  
 նի ընտանիքից տիկին: Ժողովուրդը յուզում է, ուզում  
 է բռնել, նրանք փախնում-մտնում են մի Հնչակեանի  
 խանութ. եւ փակում են դուռը. ժողովուրդը շրջապա-  
 տում է խանութը, գնդակահարութիւններ են տեղի ու-  
 նենում, սպանում է խանութի ներսում 2 Հնչակեան  
 զինուոր, ջարդում են դուռը, խանութը ակերում են, եւ  
 ուզում են մնացածներին տեղն ու տեղը սպանել, բայց  
 մեր Կ. Կ-ի ընկերները թոյլ չեն տալիս եւ յանձնում են  
 կառավարութեանը: Դաշնակցութեան զինուորները եւ  
 խմբերը զրգուտած այդ դէպքից եւ նրա մէջ Հնչակեան  
 մարմնի մատը տեսնելով՝ զրոհ են տալիս նրանց ղեկա-  
 վարների տները որ սպանեն՝ բայց մեր Կ. Կ-ի ընկերնե-  
 րը գնում են կանգնում Հնչակեանների դրան շեմքերի  
 վրայ՝ թոյլ չտալով ներս խուժելու. եթէ բաց թողնէին  
 խմբերին ու զինուորներին՝ այդ երկու օրը ո՞չ մի հըն-  
 չակեան չէր մնայ Քարում: Հնչակեան ղեկավարները ի-  
 րենց գլուխը ազատելու համար յայտնեցին, որ իրենք  
 դէմ էին այդ ամէնին, բայց իրենց զինուորները՝ թրքա-  
 հայ լինելով՝ որոշել են սպանել պատահող ուսանա-  
 լին... ակելի զրգուտեց ժողովուրդը. Վեհափառ Կաթո-  
 ղիկոսը այդ օրը նոյնպէս Քարումն էր, նրա ներկայու-

թիւնը, ուրիշների միջամտութիւնը եւ այլ հանգամանք-  
 ներ վերջ ի վերջոյ հանգստացրին ժողովուրդին... Դաշ-  
 նակցութեան եւ Հնչակեանների մի խառը ժողով եղաւ  
 Առաջնորդարանում, ուր գնացել էր մեր մի ներկայա-  
 ցուցիչը, կային եւ քաղաքայիններ, վարդապետ, եպիս-  
 կոպոս, ուր ձեռաց թիւմել են մի խայտառակ թուղցիկ,  
 ստորագրուած երկու կուսակցութիւնների կողմից.  
 այդ արդար գայրոյթ առաջադրեց թրքահայերի մէջ.  
 վերջը Կ. Կոմիտէն մի կոնտր-թուղցիկով ուղղեց իր  
 սխալը: Այս արդիւնք էր զրգուտած ջղերի եւ ամբոխա-  
 յին տրամադրութեան:

Սոցիալ-դեմոկրատներ 1904-1905 թ. չկային Քարում,  
 այժմ կան - հին Հնչակեաններէն. էլի նոյն ջուրը, նոյն  
 ջրաղացը:

էս-էսներ քաղաքում չկան, կան միայն զօրքի մէջ, ո-  
 րոնց մենք շատ ենք օգնել. թուղցիկներ եւ գրքոյկներ  
 տպելով, փող հայթայթել, փախստականների պահել,  
 փախցնել. նրանք էլ մեզ են օգնել բերդից գէնք կորզե-  
 լու խնդրում:

Մոռացայ ասել, որ սոց-դեմոկրատներ՝ վրացիներ  
 կան երկաթուղում, դէպոյում<sup>31</sup>. մենք նրանց հետ այն-  
 քան սերտ կապեր չունենք. բայց գործադուլի ժամա-  
 նակ օգնել ենք փող տալով, եւ բանտարկեալներին նոյն-  
 պէս փող տալով, նրանց ընտանիքներին նոյնպէս:

Դրամական նպաստ տուել ենք եւ պոստ-հեռագրի  
 գործադուլ անողներին. այդ բոլորը մի երկու-երեք հա-  
 զար ուղբու կը հասնի:

Քարի շրջանի վերաբերմունքը դէպի ոռու յեղափո-  
 խութիւնը.- Այն համոզումն էր իշխում Քարի շրջանում,  
 որ հայ իրականութիւնը՝ դժոխք դարձած թաթարական  
 անմիտ յարձակումներից, մեզ հնարաւորութիւն չի  
 տալիս անմիջապէս դուրս գալ յեղափոխական առաջին  
 շարքերում, ինչպէս առաջ էինք, որպէս աւան-գարը<sup>32</sup>.  
 մենք ընկանք յետին շարքում - որպէս յետնապահ՝  
 պաշտպանելու յետեւից յեղափոխական բանակը թրքա-  
 կան ռէակցիայի, կովկասեան վանդէից<sup>33</sup>: Մենք ասում  
 էինք՝ որ կուտել թուրքերի դէմ՝ դա հոմանիշ է կուտել  
 կառավարութեան դէմ...:

Բայց իսկապէս Քարի շրջանում թրքական ո՞չ մի  
 վտանգ չկար. ամենաապահով գաւառն էր, թուրքերն  
 էին այստեղ վախենում. բայց Կ. Կոմիտէն շարունակ  
 նրանց հաւաստիացնում էր, որ ոչինչ չի պատահի  
 նրանց նկատմամբ. եւ Կոմիտէն միշտ ժողովուրդին խա-  
 ղաղութեան է հրաւիրել եւ պաշտպանել է թուրքերին:  
 Քարում թուրքերը գոհ են Դաշնակցութիւնից: Եթէ  
 չպատահէր Զանդի-Թափայի խայտառակ դէպքը, ուր

31.- Պահեստանոցի մէջ:  
 32.- Յառաջապահ:  
 33.- Կրիժառակաց գործողութիւններու շարք:

հարբած եւ բաշխողով խումբը կոտորեց 20 անգէն  
 թուրքերի՝ հակառակ հայ գիւղացիների թախանձան-  
 քին: Այդ դէպքը ստուեր գցեց մեր վրայ. մեր տակտի-  
 կան էր հայաշատ գաւառում հովանաւորել թուրքերին՝  
 իրեւ օրինակ ուրիշ տեղերի թուրքերին:

Քարի շրջանի դերը հայ-թրքական ընդհարումների  
 արիւնոտ օրերում եզակի էր. ռազմամթերք եւ ռազմիկ-  
 ներ հայթայթելը, մանաւանդ առաջին խնդրում միշտ  
 առաջնութիւնը Քարին է պատկանում. մթերք հայթայ-  
 թելու մէջ քոյր կոմիտէների մէջ նա միշտ առաջնա-  
 կարգ տեղ է գրաւել տարիներից ի վեր՝ շնորհիւ այն  
 հանգամանքի, որ ոռու կառավարութիւնը ունի այն-  
 տեղ գէնքի եւ ռազմամթերքի նշանաւոր պահեստ-  
 բերդ: Զանազան միջոցներով եւ ձեւերով մեր ընկերնե-  
 րը շարունակ եւ մինչեւ այսօր գէնք եւ ռազմամթերք են  
 հանել եւ ստացել: Յայտնի է բոլորին այն նշանաւոր  
 դէպքը, որ տեղի ունեցաւ 1904 թ. սկիզբներին. Կ. Կոմի-  
 տէն պահեստից հանեց մօտ մի միլիոն բերդանի ծայրեր.  
 մի պատկառելի քանակ, որ զարմացրեց կառավարու-  
 թեանը, հեռագրերի եւ լրագրական յօդուածների նիւթ  
 եղաւ, երկար ու բարակ քննութիւնների եւ խուզարկու-  
 թիւնների, բայց ոչինչ չընկաւ կառավարութեան ձեռ-  
 քը, ոչ ոք չբռնուեց, եւ նրա համար մինչեւ այսօր այդ  
 դէպքը մնաց միստերիում<sup>34</sup>, լեգենդա<sup>35</sup>:

Այդ մեծ քանակը եւ նրան անընդհատ հետեւող մե-  
 ծաքանակ ռազմամթերքը ողողեց ամբողջ Կովկասը, եւ  
 հնարաւորութիւն տուեց Հ. Յ. Դաշնակցութեանը ար-  
 ճիճով հեղեղել թաթարական խելագար վոհմանները:

Ընդհարումների օրերում ամէն տեղերից ձեռք էին  
 մեկնում Քար եւ լիքը վերադառնում. միայն 1905 թուի  
 ընթացքում Քարը միւս ռայոնների համար՝ չհաշուած  
 1904 թուի ձեռք բերածը, ուղարկել է նոր ձեռք բերած  
 մօտ կէս միլիոն ամէն տեսակի ծայրեր. իսկ հրացան-  
 ներ՝ մոսինի, բերդանի մօտ 700. սրանք այն թուերն են,  
 որ Կ. Կոմիտէն ինքն է գնել տեղն ու տեղը ոռու զինուո-  
 րականների միջոցով, կամ ձեռք բերել այլ միջոցներով,  
 յափշտակել եւ այլն. կամ ուղարկել է միւս շրջաններին  
 կամ ծախել գէնքի համար գլուխ պատուող, Քար թափ-  
 ւող ժողովուրդին. չհաշուած այն ռազմամթիւ հարիւրա-  
 ւոր դէպքերը, երբ Կովկասի ամէն անկիւններից Քար  
 վազող գիւղացիներին եւ քաղաքացիներին ամէն կերպ  
 աջակցել է գէնք եւ զինամթերք գնելու, ձեռք բերելու:  
 Այդ ժամանակ ուրիշ շրջաններում ժողովուրդի մէջ այն  
 էր խօսուում, որպէս թէ Քարի ոռուաց բերդը Հ. Յ. Դաշ-  
 նակցութեանն է պատկանում: Այդպիսով տասնեակ  
 հազարաւոր ծայրեր եւ ռազմամթիւ հրացաններ է ու-  
 ղարկել Քարը եւ Բագու, եւ Շուշի, Գանձակ, Թիֆլիս,  
 եւ Լոռի, Ղազախ, Երեւան, Սուրմալի, էջմիածին, Աբա-  
 րան, Բայազիդ, Դարալագեազ, Նախիջևան, Ղափան,  
 Զանգեզուր...:

Հազարաւոր գիւղիներ<sup>36</sup>, տասնեակ փթերով վառօդ  
 եւ խմոր եւ հազարաւոր փթերով արճիճ է ուղարկուել  
 վերոյիշեալ վայրերը: Ունենք եւ ուռմբի գործարան,  
 որը պատրաստածը ուղարկում էր իր շրջանից ուռուս:  
 Քարից են գնացել այդ վայրերը հարիւրաւոր եւ հազա-  
 րաւոր պաղրոնտաշներ<sup>24</sup>, թամբեր, կօշիկներ, Կարմիր  
 խաչի շնորհիւ հագուստներ, գուլպաներ, վիրակապ  
 եւ այլն. եւ այս ամէնը՝ գէնք, մթերք, եւ այլ պարագա-  
 ները բոլորը էժան, ցած գներով... Այդ թուին այնքան  
 մեծ էր Քարի Կ. Կոմիտէի գործունէութիւնը, որ նրա  
 տարեկան մուտքը հասաւ 70.000-ից նոյնիսկ աւել...:

Չբաւականանալով տեղում ձեռք բերածներին, մենք  
 Կ. Կոմիտէի [մի] ընկերի ղրկեցինք Ռուսաստան գէնք՝  
 գլխաւորապէս ատրճանակ բերելու, որը եւ յաջողու-  
 թեամբ տարաւ:

Չնայելով, որ մեր շրջանը ապահով էր՝ բայց եւ այն-  
 պէս մենք հոգ տարանք զիւղերը եւ քաղաքը զինելու, եւ  
 բաւականաչափ զինուեց. իւրաքանչիւր գիւղ այժմ ունի  
 մօտ 15-20, 30 գէնք՝ որի գումարը հասնում է 8-7000 հա-  
 զարի...: Գիւղացիները զգալով, որ վտանգ չկայ՝ գէնքե-  
 րի մի մասը իրենք ծախում էին ուրիշ շրջանի գիւղացի-  
 ներին, կամ տանում էին ուրիշ վայրեր ծախելու. երեւի  
 հիմա գիւղերում գէնք շատ քիչ կայ:

Կ. Կոմիտէն 1905 թ[ուին] ունէր երկու զինուորա-  
 կան խմբեր թուով մօտ 80 հոգուց՝ երկուսը միասին.  
 մէկը գործում էր Թմբուկում՝ Չլտրի եւ Ղարախաչի  
 թուրքերի հանդէպ, մէկը Ալագեազի փէշերում. առա-  
 ջին խումբը շուտ վերջացրինք կարիք չլինելու համար,  
 չնայելով մի երկու թուրք ակազակներ՝ տաժանակրից  
 փախած սպանեց, բայց երկրորդ խումբը քանդեց Ու-  
 շին... այդ խումբը միեւնոյն ժամանակ զինատար էր.  
 նա էր տեղափոխում ռազմամթերք Քարից Երեւան: Եւ  
 երբ այդ խումբը Զանդի-Թափայի աղէտը կատարեց՝  
 նրան լուծեց Կ. Կոմիտէն:

Քարից մեր հաշուով եւ գէնքով մի խումբ ղրկեցինք  
 Երեւան, որ մասնակցեց այնտեղի մայիսեան մեծ ընդ-  
 հարումին եւ հռչակուեց: Այնուհետեւ մենք միշտ  
 տղերք ենք ղրկել զանազան վայրեր, որոնք չեն խայտա-  
 ռակել մեր անունը. մեր տղաներից մի քանիսը սպան-  
 ւեցին, ինչպէս օրինակ՝ Գանձակում Արամ Մաղիկեա-  
 նը, Զանգեզուրում Ստեփանեանի խմբի հետ երիտա-  
 սարդ Վահագն Պարունակեանը՝ Կենտ. Կոմիտէի մեր  
 ընկերի եղբայրը:

Քարում ունէինք «խուզարկու» կոչուած զինուորա-  
 կան խումբ, որ շրջում էր գիւղեր եւ ցերեկ - բռնելու այն  
 թուրքերին, որ գալիս էին ուրիշ տեղերից Քար գէնք  
 տանելու. պատահեցին յաջող դէպքեր. նոյն խումբը

34.- Խորհրդաւոր, մութ մէջ մնացած դէպք:  
 35.- Առասպել:  
 36.- Պարկուճ, փամփուշտի մետաղեայ պատեան:



պաշտպանում էր քաղաքի խաղաղութիւնը՝ գողերից եւ փող կորզողներէրից...

Այժմ բոլոր խմբերը վերացուած են: 1906 թուին զէնք եւ զինամթերք ձեռք բերելու գործը յանձնուեց Զիֆոնի Քարում նոր մուծուած մարմիննա յաջողութեամբ տարել է գործը եւ մեծ քանակով զէնք ու մթերք է ձեռք բերել:

Ինչպէս յայտնի է 1904-1905 թուերին Դաշնակցութեան կազմակերպութեան ձեռք անդասակարգային, համազգային էր՝ որոշ պատմական պատճառների վերայ հիմնուած. Դաշնակցութիւնը ամբողջ հայ ժողովուրդն էր: Բայց 1905 թ. յեղափոխական եւ գրաքննական շղթաներից կիսանկախ մամուլը, եւ դէպքերով հարուստ կեանքը կամաց-կամաց քայքայում էին այդ բազմատարր զանգուածը: Վրայ հասաւ 1905 թ. Օգոստոսին կալուածների եւ դպրոցների իրաւունքների վերադարձումը, եւ դրանով առաջին մեծ հարուածը տրուեց Դաշնակցութեան մինչ այդ ժամանակեայ կազմակերպչական ձեւին: Բուրժուական տարրերը, որոնցով վարարուած էին մեր շարքերը, սկսեցին կռիւր վերացած համարել, առարկելով՝ որ իբրեւ ազգութիւն մենք ապահով ենք հիմա, իսկ որպէս ռուս քաղաքացի կռուելու յետոյ դէմ առհասարակ՝ թէ՛ մեր պարտքն է, բայց մեր ուժերից վեր է. երբ Ռուսիան կ'ազատազրուի՝ մենք էլ կ'օգտուենք. ռուս մուժիկն է ստեղծել ռուս արտոյիւտիզմը՝ թո՛ղ նա էլ խորտակէ...

Այդպէս էին մտածում ու խօսում, բայց դեռ չէին հեռացել Դաշնակցութիւնից, որովհետեւ դեռ թաթարական կռիւները իր ուժի մէջ էին, եւ ինքնապաշտպանութեան կարիքը կար, որին ի հարկէ գուցէ ամէնից շատ ունեւորներն էին շահագրգռուած:

Այդ դէպքից յետոյ (կալուածների վերադարձման), Քարը ունեցաւ մի Շրջանային ժողով, ուր դրուեց եւ քննութեան «կովկասեան Գործունէութեան Նախագիծը»: Արդեօք դա մի անակնկալ էր ժողովի համար, թէ նախապատրաստական պրոպագանդի բացակայումն էր, թաթարների մղձաւանջն էր, թէ կալուածների վերադարձը, որով շահուեց ժողովրդի սիրտը - համարեա միաձայն տապալուեց «Նախագիծը», հետեւեալ բանաձեւով մօտաւորապէս [.] Դաշնակցութիւնը տաճկահայկական դատի համար ստեղծուած կուսակցութիւն է. մենք իրաւունք չունենք նա մեզ համար դարձնել. նա պէտք է մնայ նոյնը՝ համազգային, ապադասակարգային թուրքոյ հայերի համար. եթէ նա այստեղ գործել է ինքնապաշտպանութեան հողի վրայ՝ դա եղել է ստիպւած. սրանից յետոյ, եթէ կովկասահայր ուզում է այստեղ գործունէութիւն ունենալ՝ թող իրեն համար իր պայմանների յատուկ նորը կազմէ, կամ իւրաքանչիւր անհատ թող լուծուի իր աշխարհայեացքին յարմար կուսակցութիւնների մէջ. մօտաւորապէս այն, ինչ ասում են մեր երիտասարդները:

Պէտք է նկատել, որ սա կոմիտէի կարծիքն էր, որը ընդունեց մեր շրջանի պատգամաւորների ժողովը<sup>38</sup>, որը յետոյ ուրիշ տեսակ մեկնուեց եւ հակասոցիալիստական գոյն տուեց...: Այդ կատարուեց Սեպտեմբերի վերջերին...:

Անցան մի քանի օր՝ եւ Հոկտեմբերեան մանիֆեստը եկաւ. ժողովրդի տրամադրութիւնը փոխուեց, մի մասինը դէպի աջ, միւսինը՝ ձախ:

Այլ թեքուողները՝ մանր եւ մեր քաղաքի մտքով խոշոր բուրժուաները վերացած համարեցին ամէն ինչ, յեղափոխութիւնը՝ վերջացած. եւ հեռացան Դաշնակցութիւնից... իսկ ձախ թեքուողները, արհեստաւորներ եւ ուրիշ տարրեր, մութ կերպով դիմեցին դէպի դասակարգային-անտեսական կռիւր, դէպի Նախագիծը...

Անցաւ մի քանի ամիս - եւ մեր շարքերում այլեւս չկան հակաՆախագծային(ներ). վերջին Շրջանային ժողովի մանդատը պաշտօնապէս նոյնն է ապացուցում.

1906-ին սկսուեց(ին) քանդուած նախկին խմբերի տեղ պրոֆեսիոնալ միութիւնները, որոնք խազէիններին<sup>39</sup> մէջ գայրոյթ, սպառնալիք, զինուած դիմադրութիւններ առաջացրին. բայց վերջ ի վերջոյ տեղի տուեցին, եւ կազմուեցին մի շարք այդ տիպի միութիւններ:

Ներկայումս Քարում կայ մի Կ. Կոմիտէ, որը վարում է շրջանի գործերը, ունի ուսուցիչներուց կազմուած պրոպագանդական խմբակ: Ի հարկէ չկայ այն հրգոր Դաշնակցութիւնը, բայց մնում են դեռ մասսաները՝ քաղաքում եւ գիւղերում՝ աւելի գտուած, աւելի հոմոֆէն<sup>40</sup>, աւելի բիւրեղացած եւ բուռն համակրանքով դէպի վաղեմի կուռքը. ապացոյց դրան՝ Կենտ. ժողովի (էջմիածնի) եւ Պետական Դումայի պատգամաւորների ընտրութիւնը, որոնց առաջի 7-ից 6-ը մեր թեկնածուներն էին, եւ երկրորդի 10-ից 9:

Այժմ բոլորը սրտատրոփ սպասում են Ընդհանուր ժողովի որոշմունքներին, որը պիտի, նրանց յոյսով, ընդգծէ ժողովրդի զարգացման ընթացքի ուղին:

**ՔԱՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՊԱՏՏՎԱՄԱՒՈՐ՝ ՀԱՅ ԳՈՒՍԱՆ<sup>41</sup>**

37.- Բացարձակատիրութիւն, միաինծան իշխանութիւն:  
38.- Բնագրից մէջ «որը ընդունեց մեր գիւղացիներից եւ քրուսներից կազմուած ժողովը». սեւ մատիտով ջնջուածի տեղ գրուած է՝ «որը ընդունեց մեր շրջանի պատգամաւորների ժողովը»:  
39.- Գործատր, «աղա»:  
40.- Միատարր:  
41.- Հայ-Գուսանը Աւետիք Իսահակեանն է: Ձեկոյցը գրուած է իր ձեռագրով: Նոյնպէս նաեւ Քարի քանաձեւը:

**Ա 2.- ՔԱՐԻ ԲԱՆԱՉԵՒԸ**

*Քարի բանախոս:*

1906 թ. Դեկտեմբերի 10-ին կայացաւ Քարի Շրջանային ժողովը, ուր ներկայ էին շրջաններից եւ մարմիններից 19 պատուիրակ. այդ ժողովում միաձայն ընդունել է հետեւեալ բանաձեւը.-

- «Հ. Յ. Դաշնակցութեան նպատակը պէտք է լինի աշխատաւոր դասակարգի շահերը պաշտպանելը եւ ո՛չ թէ ամբողջ հայութեան»:

Պատգամաւոր Քարի շրջանի՝  
**ՀԱՅ ԳՈՒՍԱՆ**

*Կարտու ԲԻ ՂՈՂՈՒՄ՝  
Ինչ-Գուսանը.*

**Ա 3.- ՔԱՐԻ 1906 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ**

**ԱՆՍՍ**

1906 թ. Դեկտեմբերի 10-ին կայացաւ Հ. Յ. Դաշնակցութեան Քարի շրջանի պատուիրակների Շրջանային ժողովը, նախագահութեամբ ընկեր Գաբրիէլ: Ժողովի սկզբում քննուեց պատուիրակների փաստաթղթերը, որից պարզուեց, որ շրջանից եկել էին հետեւեալ պատուիրակները, Քարի Կենտրոնական Կոմիտէի հրաւերի համաձայն, Ընդհանուր ժողովի համար պատգամաւոր ընտրելու:

I շրջանից Սլաք եւ Կայծակ (Ալ. Թով., Գ. Չախ.) ընտրողական արձանագրութեամբ.

II շրջանից Մելիք եւ Բեւեռ (Մ. Պոզ. եւ Ս. Նալ.) ընտրողական արձանագրութեամբ.

III շրջանից Տիւան եւ Երկաթ (Մ. Թադ. եւ Ս. Յակ.) ընտրողական արձանագրութեամբ.

IV շրջանի ա. բաժնից) Տոմիչ եւ Անվեհեր (Մ. Նալ. եւ Բ. Մելք.) ընտրողական արձանագրութեամբ.

IV շրջանի բ. բաժնից) Չաւէն՝ առանց ընտրողական արձանագրութեան.

Թուուցիկ խմբից (Ք. շրջանի) Վարդան. Քաղաքի ընկերներից Գաբրիէլ, Թադէ եւ Մաթէ. Կարմիր Սաչից Փոթորիկ Զիֆոնի կողմից Կարպովիչ Քարի Կենտրոնական Կոմիտէ - Հրայր եւ Թորգոմ Քաղաքի արհեստակցական միութիւններից՝ Հայ Թափառական, Բանուոր եւ Ռաշիդ:

Բոլոր ընտրողական արձանագրութիւն ունեցող պատուիրակները ճանաչուեցին վաւերական:

IV շրջանի բ. բաժնի պատուիրակին ընդունեցին Ժա-

մանակաւորապէս մինչեւ վաւերացումը ներկայացնելու իսկ քաղաքի կողմից եկած Թուուցիկ խմբի, Կարմիր Սաչի, Զիֆոնի, Քաղաքի ընկերներից եւ քաղաքի արհեստակցական միութիւնների ներկայացուցիչները Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչի վկայութեամբ՝ ժողովի կողմից ընդունուեցին վաւերական:

Ժողովում իւրաքանչիւր շրջանի պատուիրակ բերանացի յայտնեց իւր շրջանի ժողովրդի եւ ընկերների կարծիքներն ու տրամադրութիւնը հետեւեալ հարցերի վերաբերմամբ, բացի IV շրջանի պատուիրակներից, որոնք գրաւոր ներկայացրին ժողովին իրենց շրջանի ընկերների կողմից մշակուած ստորեւ յիշուած հարցերը:

I շրջանի պատուիրակները յայտնեցին՝ «իրանց շրջանի ընկերները պահանջում են 1904-1906 թ. մանրամասն հաշուետուութիւն».

II շրջանի պատուիրակները շեշտեցին նոյն հաշուետուութեան մասին եւ աւելացրին հետեւեալ կէտերը ապրոպագանդա. բ. հողային հարց եւ հողաբաժանութիւն. գ. դատաւարութիւն. դ. տեւոր:

III շրջանի պատուիրակները առաջարկեցին ա. պրոպագանդա բ. դպրոցների անհրաժեշտութիւն. գ. գիւղական ախտերի տարածուելու դէմ միջոցներ ձեռք առնել (հարեցողութիւն, պոռնկութիւն, դուժմար, գողութիւն, եւ այլն). դ. զինման անհրաժեշտութիւն. ե. դատաւարութիւն. գ. գիւղական կառավարչական դատաւորների վերայ հակողութիւն. է. տեւոր. ը. հողաբաժանութիւն. թ. կռիւ գիւղական վաշխառուների դէմ:

Դ. շրջանի ա. բաժնի պատուիրակները առաջարկեցին հետեւեալ հարցերը «հաշուետուութիւն եւ հողային հարց (հողաբաժանութիւն)»:

Դ. շրջանի բ. բաժնի պատուիրակը առաջարկեց, «Հաշուետուութիւն եւ կովկասեան Նախագծի մերժում»:

Ե. Անտառապատի<sup>42</sup> պատուիրակները առաջարկեցին՝ պրոպագանդա, դատավարութեան անհրաժեշտութիւն եւ հաշուետուութիւն:

Թուուցիկ խումբի ներկայացուցիչը առաջարկեց ժողովին ուշադրութիւն առնել հետեւեալ կարեւոր հարցերը. «Ուսումնարաններ, պրոպագանդա, կառավարչական պաշտօնեաների կաշառակերութեան եւ կեղեքման դէմ միջոցներ ձեռք առնելը եւ տեւոր»:

Արհեստակցական երկաթուղային միութեան ներկայացուցիչը առաջարկեց հետեւեալ հարցերը. «Երկաթուղային արհեստակցական միութիւնը դնել կանոնաւոր հիմքերի վրայ եւ կապ հաստատել միւս արհեստակցական միութիւնների հետ. պրոպագանդա կովկասեան Նախագծի բացատրութեան մասին, անմիջական աջակցութիւն կենտրոնական կոմիտէի կողմից. գինուորական կազմի գտումն, քաղաքական տեւոր. կանոնաւոր Հաշուետուութիւն, անաչառ վերաբերմունք դէպի գործը եւ դէպի ընկերները եւ պարտադիր ուսում»:

Քաղաքի արհեստակցական միութիւնների ներկայացուցիչը վերոյիշեալ հարցերի վերայ աւելացրեց. «Քանի որ մեր արհեստակցական միութիւնները կուսակցական են եւ Դաշնակցութեան դրօշակի տակ, ուստի անհրաժեշտ է որ կենտրոնական կոմիտէն աջակցէ եւ հովանաւորէ. հակառակ դէպքում նոքա կարող են կամ քայքայուել կամ անկուսակցական հողի վրայ մտնել, որ ցանկալի չէ իրանց համար»:

Կարմիր Խաչի ներկայացուցիչը յայտնեց, որ Կարմիր Խաչը ընդունում է կովկասեան գործունէութեան համաձայն, արդէն գոյութիւն ունեցող կովկասեան Նախագիծը. Նախքան այդ հարցերի քննութեան անցնելը նախագահը հարց դրեց թէ քաղաքի երեք ընկերներին վճռողական ձայնի իրաւունք տա՞լ, թէ ոչ որովհետեւ նոքա եկել են խորհրդակցական ձայնով. այդ հարցը որոշուեց դրական մտքով ընդդէմ մէկի: Ժողովին մասնակցում էին 22 պատուիրակ եւ ներկայացուցիչ վճռողական ձայնի իրաւունքով եւ մի ընկեր խորհրդակցական ձայնով:

Շրջանից բերուած կարծիքները ամփոփուեց հետեւեալ կէտերում.

1. Դատավարութիւն. 2. տեւոր. 3. կաշառակերութեան դէմ միջոցներ. 4. հաշուետուութիւն. 5. կուլ գիւղական ախտերի դէմ. 6. հողային հարց (հողաբաժանութիւն). 7. պրոպագանդ. 8. անմիջական աջակցութիւն արհեստակցական միութիւններին. 9. կովկասեան գործունէութիւն. 10. պարտադիր ուսում. 11. գինուորական մարմնի գտումն. 12. գինումն. 13. կազմակերպչական մարմինների գտումն. 14. միջոցներ դրամական գեղծումների դէմ: Այս վերոյիշեալ հարցերից ընդուն-

ւեցին, առանց վիճարանութեան, հետեւեալ հարցերը — հաշուետուութիւն, պրոպագանդա, պարտադիր ուսում, իսկ կաշառակերութեան եւ գիւղական ախտերի տարածման դէմ կուլուելը միաձայն մերժուեց որպէս կուսակցական գործունէութեան հետ առնչութիւն չունեցող հարցեր:

Պատուիրակների դրած հարցերից նախ դատավարութիւնը քննութեան առարկայ դարձաւ: Դատավարութեան պաշտպանները բերին հետեւեալ պատճառաբանութիւնները.—

1) Հ. Յ. Դաշնակցութիւնը դատավարութիւնը պէտք է ընդունէ փոքրիկ ու որոշ չափերով՝ եւ ոչ քրէական յանցանքների համար՝ յատկապէս զանազան ախտերի (գողութիւն, հարբեցողութիւն, դումար եւ պոռնկութիւն) դէմ կուլուելու նպատակով:

2) Դատավարութիւնը անհրաժեշտ է նաեւ այն տեղերում, ուր հայը ապրում է թուրքերի մէջ. թուրք դատաւորները չեն կարող անաչառ լինել եւ դժուար թէ շատ դէպքերում արդարութեան պաշտպան հանդիսանան:

3) Դատավարութիւն ընդունելու օրից հայ ժողովուրդը, նոյնիսկ յեղափոխական մասը, աւելի կապուեց յեղափոխութեան հետ. մինչդեռ նրա վերացման օրից յեղափոխական ժողովուրդը սառեց եւ երես դարձրեց յեղափոխութիւնից. ուստի դատավարութիւնը անհրաժեշտ է պահել նոյն պատճառով, որ նա կապում եւ միացնում է ժողովուրդին յեղափոխութեան հետ: Դատավարութեան հակառակորդները մէջ բերին հետեւեալ պատճառաբանութիւնները.

1) Քանի Հ. Յ. Դաշնակցութիւնը չէր զբաղւում դատավարութեամբ, այն ժամանակ նորա գինուորը ճանաչուած էր իսկապէս հերոս ու նահատակ, նրա ամէն մի պաշտօնեան ընդունւում էր բարեկամ ու պաշտպան եւ յեղափոխական եւ ոչ յեղափոխական ժողովուրդի կողմից. պատկերը բոլորովին փոխուեց այն օրից, երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը սկսեց զբաղուել դատավարութեամբ, երբ արդէն գոտ յեղափոխական գործերը գրեթէ մի կողմ մնացին, գործողները կլանուեցին դատերով ու ոստիկանական գործերով, երբ գինուորը իր մտրակով ներկայացաւ յեղափոխական կամ ոչ յեղափոխական ժողովուրդին՝ այս կամ այն վճիռն անցկացնող, ահա այն ժամանակուանից յեղափոխութեան կազմի ու ժողովուրդի միջեւ բացուեց մի անդունդ, առաջ եկաւ թշնամութիւն դէպի յեղափոխական գործը: Յեղափոխութիւնը որ կոչուած էր հարստահարուածներին ու հալածուածներին պաշտպանելու, հէնց ինքը ակամալից դարձաւ հալածող ու հարստահարող. յեղափոխական մասսան սկսեց անիծել յեղափոխական գինուորին ու պաշտօնեային եւ նրանցից խորշերով խորշում ու փախչում էր նաեւ յեղափոխութիւնից: Դատավարութիւնը

42.- Անտառապատը Մեծ Ղարաքիլիսան է, այժմ Վանաձոր:

մէկն էր, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը զցեց մի անել վիճակի մէջ եւ նոյնիսկ տարաւ դէպի քայքայումն ու կորուստը:

2) Դատավարական բարդ գործերը կատարելու համար մենք պատրաստի ոյժեր չենք ունեցել եւ չունինք. թերի ու վատ դատավարութիւնը աւելի վնասներ, դժգոհութիւններ եւ անարդարութիւններ կ'առաջացնեն քան օգուտ:

3) Եթէ նոյնիսկ պատրաստի մարդիկ էլ լինին, դարձեալ դատավարութիւնը ընդունելը վնասակար է գոտ յեղափոխական գործերը առաջ տանելուն. համարեա մեր ունեցած առանց այն էլ քիչ ու գիտակից ոյժերը ստիպուած կը լինեն մանր մունր դատավարական գործերով զբաղուել աչքաթող անելով ներկայ յեղափոխական մոմենտին<sup>43</sup> յարմար քայլերը եւ իսկական չարիքներ առաջացնող բուն պատճառներն ու աղբիւրները: Ահա սա միանգամայն վնասակար է շահագործող մասսային եւ դէմ է յեղափոխական նպատակին:

Այս վիճաբանութիւնից եւ հարցը պարզաբանելուց յետոյ քուէարկութեան դրուելով ստացուեց հետեւեալ արդիւնքը - 7 ձայն կողմնակից էին սահմանափակ դատավարութեան, 13 ձայն հակառակ, իսկ 2-ը մնացին ձեռնպահ:

Երկրորդ հարցը դրուեց կովկասեան գործունէութեան մասին. յայտնուեցին թեր եւ դէմ կարծիքներ եւ լուսաբանուեց թէ առհասարակ ինչ գործունէութիւն պէտք է ընդունէ Դաշնակցութիւնը կովկասում. իսկ վերջնական որոշման համար առաջարկուեց միւս ժողովում կարդալ եւ քննել այժմ գոյութիւն ունեցող կովկասեան Գործունէութեան Նախագիծը:

Պատուիրակներից մէկը ցանկութիւն յայտնեց, որ դատավարութեան փոխարէն ժողովուրդի լայն խաւերում տարածուի «միջնորդ դատարանի» գաղափարը: Ժողովականներից մեծ մասը այն կարծիքն էր, որ դա լինի պարտաւորական յեղափոխական մարմինների համար, իսկ միւս մասը ընդունեց կամովին աջակցութիւն ցոյց տալ միջնորդ դատարանի գաղափարը տարածուելուն ժողովուրդի մէջ՝ անկախ կուսակցութիւնից:

Նիստը փակուեց գիշերուան ժամը 1-ին:

|                 |                              |
|-----------------|------------------------------|
| Նախագահ ժողովի՝ | Գագիկ Թարէ Թորգոմ Հրայր Մաթէ |
| Քարտուղար՝      | «Հայ-Թափառական» Թաշիդ Սահակ  |

II Նիստ

1908 թ. Դեկտեմբերի 11-ին կայացաւ Հ. Յ. Դաշնակցութեան Քարի շրջանի պատուիրակների Շրջանային երկրորդ ժողովը<sup>44</sup> նախագահութեամբ ընկեր Գագիկի:

Նախ կարդացուեց նախկին ժողովի<sup>44</sup> արձանագրութիւնը եւ հաստատուեց, ապա ստուգուեց պատուիրակների ցանկը, որից երեւաց, որ ժողովից բացակայում են Անտառապատի երկու պատուիրակները յարգելի պատճառով եւ II շրջանի մի պատուիրակը անյայտ պատճառով:

IV շրջանի բ. բաժնի պատուիրակի մասին հարց բարձրացուեց, թէ նա վճռողական ձայնի իրաւունքով օգտուելու է թէ ոչ, քանի որ փաստաթուղթ չունի. ժողովը վճռեց — նա կարող է մասնակցել խորհրդակցական ձայնով:

Նոր պատուիրակներ եկել էին 1) Շամուտի<sup>45</sup> կոմիտէի կողմից ընկեր Բաբգէնը արձանագրութեան պատճէնով, որ առաջարկեց ժողովին իր կողմից հետեւեալ հարցերը ա. գտումն կուսակցութեան. բ. պրոպագանդա. գ. սերտ յարաբերութիւն մարմինների եւ շրջանի մէջ:

Քարի մարտական մարմնի ներկայացուցիչ՝ ընկեր Հայկը ժողովին ներկայացրեց մի գրութիւն 8 կէտերից բաղկացած որոնք հետեւեալներն էին.—

- 1) Տաճկահայաստանի դատի անհրաժեշտութիւն եւ կովկասեան գործունէութեան կարեւորութիւն.
- 2) Քաղաքական տեւոր.
- 3) Զիֆոնի հաշիւը կոմիսսիայի<sup>46</sup> միջոցով.
- 4) Ժողովուրդի բարոյական եւ պարտաճանաչ վերաբերմունք դէպի գինուորը.
- 5) Զինուորական դիսցիպլինա.
- 6) Պրոպագանդա գինուորների մէջ եւ գինուորական ուսումն.
- 7) Լուրջ կերպով մտածել գինուորի ապրուստի մասին.
- 8) Դատավարութիւն հողային հարցերի եւ յեղափոխական բնոյթ կրող դատերի:

Նոյնպէս եկել էր աշակերտական միութեան կողմից խորհրդակցական ձայնով մի ներկայացուցիչ, այնպէս որ այս ժողովին մասնակցում էին վճռողական ձայնի իրաւունքով 19 պատուիրակ, իսկ 5 ընկերներ խորհրդակցական ձայնով:

Կարդացուեց կովկասեան Գործունէութեան Նախագիծը եւ երկար վիճաբանութիւններից յետոյ միաձայն ընդունուեց հետեւեալ բանաձեւը. «Գ. Յ. Դաշնակցու-

43.- Պահից:  
 44.- «Ժողով» բառը հոս գործածուած է Միստ իմաստով:  
 45.- Շամուտը Դիլիջանի ժածկանոցն է:  
 46.- Յանձնախումբի:

թեան նպատակը պետք է լինի աշխատաւոր դասակարգի շահերը պաշտպանելը եւ ոչ թէ ամբողջ հայութեան»:

Այս բանաձեւը ընդունելուց յետոյ աւելորդ համարւեց Նախագծի իւրաքանչիւր կէտը առանձին առանձին քննելը ժողովում. այդ թողնուեց առանձին մասնաժողովին, որի համար ընտրուեցին 8 ընկերներ:

Նոյն ժողովում տրուեց հետեւեալ հարցը - թէ Դաշնակցութիւնը պէ՞տք է պաշտպանէ տաճկահայ դատը թէ ոչ. այդ հարցը ընդունուեց դրական մտքով 18 ձայնով ընդդէմ մի ձայնի:

Ընդհանուր ժողովի պատգամաւորութեան համար առաջարկուեցին հետեւեալ անձնաւորութիւնները՝ Արմէն Կարոյի եւ Զօրեանի<sup>47</sup> թեկնածութիւնները որոնցից մէկը ընտրուեց 13 ձայնով, իսկ Թ-ը մնացին ձեռնապահ:

1) Նոյն մասնաժողովին յանձնուեց Երջանային ժողովի արձանագրութիւնների խմբագրելը, լրագորութիւն տալով քաղաքում գտնուող պատուիրակներին պատրաստի արձանագրութիւնները ստորագրելու:

Ծանօթութիւն.- Մասնաժողովը արձանագրութիւնները խմբագրելու ժամանակ՝ գալով այս բանաձեւին. «Հ. Յ. Դաշնակցութեան նպատակը պէտք է լինի աշխատաւոր դասակարգի շահերը պաշտպանելը եւ ոչ թէ ամբողջ հայութեան», բաժանուեց երկու տեսակ կարծիքների. մի մասը, որոնց հետ եւ Երջանային պատուիրակների ժողովի նախագահը, յիշում էր, որ արձանագրութեան յիշեալ բանաձեւի մէջ բաց է թողնուած «հայ» բառը - եւ ուրեմն բանաձեւը պէտք է գրուած լինէր այսպէս «Հ. Յ. Դաշնակցութեան նպատակը պէտք է լինի հայ աշխատաւոր դասակարգի շահերը պաշտպանելը...»: իսկ միւս մասը պնդում էր արձանագրութեան բանաձեւի ճշդութեան վրայ:

|                 |       |        |
|-----------------|-------|--------|
| Նախագահ ժողովի՝ | Գագիկ | Հրայր  |
|                 | Թադէ  | Թորգոմ |
|                 | Մաթէ  | Ռաշիդ  |
| «Հայ-թափառական» | Հայկ  | Սահակ  |
| Քարտուղար՝      | Սահակ |        |

Ընդհանուր ժողովի համար պատգամաւոր ընտրուած է Արմէն Կարոյն:

Ծանօթ.- Պատգամաւորի անունը առանձին է գրուում, որովհետեւ Երջանային պատուիրակների ժողովը որոշեց պատգամաւորի անունը գաղտնի պահել:

|                           |       |
|---------------------------|-------|
| Ժողովի նախագահ՝           | Գագիկ |
| Ստուգող մասնաժողովի անդամ | Հայկ  |
| Քարտուղար՝                | Սահակ |

Հ. Յ. Դ. Փաստ. 358-6

Մ.

Կենդրոնական Կոմիտէ

Ա 4.- ՆԱՄԱԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

1907, Յունուար 2

Արեւելեան Բիւրոյին. Ընկերներ,

Քարի Երջանային ժողովը Ընդ. ժողովի համար պատգամաւոր ընտրեց Արմէն-Գարոյին, որ եւ պաշտօնապէս յայտնուեց իրան, բայց մի քանի օրից պատասխան ստացանք, որ իրանից անկախ պատճառներով եւ Մեծ Քաղաքի ընկերների որոշումով անկարող է գնալ Ընդ. ժողովին. ուստի եւ յայտնում է, որ մի այլ մարդ ընտրենք. բայց որովհետեւ այժմ արդէն ուշ է եւ Երջանային ժողովը գումարելը անհնար, ուստի մենք մեր կողմից կը ցանկանայինք մեր պատգամաւորը լինէր Ընդ. ժողովին Հայ-Գուսանը, որով եւ Երջանային ժողովին հակառակ գնացած չէինք լինի, որովհետեւ, որպէս ընտրեալի Հայ-Գուսանի թեկնածութիւնը դրուեց Երջանային ժողովում եւ ստացաւ 18 ձայն: Ուստի ցանկալի է որ իրան յայտնէք եւ հարկ եղածը տնօրինէք կը յայտնենք եւ մենք:

Ի դիմաց Գ. Կ. Կ. ԽէճՉ

[Կնիք]

Յ. Գ. Ռայոնական ժողովի համար կ'ուղարկենք պատգամաւորը իր ժամանակին:

Նոյն

47.- Սովորաբար կը գրենք «Արմէն Գարո»: Ենթական մասնակցած չէ 4րդ Ընդ. ժողովին, ուր պատգամաւորներու ցանկին վրայ, իբրեւ Քարի Գերկայացուցիչ, կը գտնենք Ա. Իսահակեանի անունը - «Հայ Գուսան» (տեսնել փաստաթուղթ 358-6): Ոոստոմը իբրեւ Արեւելեան Բիւրոյի Գերկայացուցիչ կը գտնենք 4րդ Ընդ. ժողովին:

Ա 5.- ՏԵՂԵԿԱԳԻՐ 1907 թ.

Այս տարեշրջանում յեղափոխական գործը չունեցաւ ցանկալի յաջողութիւն, որի պատճառները մի կողմից պէտք է որոնել ընդհանուր ուժակցիւն<sup>48</sup> եւ համատարած աղքատութեան մէջ, իսկ միւս կողմից այն հանգամանքի մէջ, որ մեր դաշնակցական մասսաները ուժեղ կերպով կապուած էին մեր հին գործունէութեան հետ եւ ոչ մի կերպ չէին կարող հաշտուել դասակարգային շերտաւորման ու կռուի հետ: Հարկաւոր էր ջանք ու ճիգ, երկար աշխատանք եւ ժամանակ՝ մասսաների մէջ տարածելու նոր մտքերը... Ուժեղ ընդդիմադրութիւնը, որ հետեւանք էր գլխաւորապէս այլանդակօրէն ընդունուած հասկացողութիւնների, կամաց-կամաց տեղի տուեց եւ գործը նորմալ ընթացք ստացաւ:

Գործի յաջողութեանը մասամբ վնասեց եւ այն տխուր հանգամանքը, որ Կենտրոնական Կոմիտէի անդամներից մէկը (Խէչոն) շատ վատ էր պահում իրան Ղարաքիլիս(այ)ում, Դիլիջանում եւ այլ գիւղերում, եւ վերջը նախկին Կ. Կոմիտէի անդամ Ֆելիքսի եւ մի շարք դաշնակցական գիւղերների հետ միասին մի շանտաժիտական<sup>49</sup> խումբ կազմելով մաքսիմալիստների անուան տակ, առեւանգեց վաճառական է. Բաղ...ին: Դէպքը ճշդ տպաւորութիւն թողեց ինչպէս դաշնակցականների, նոյնպէս ամբողջ ժողովրդի վրայ: Դաշնակցութիւնը միջամտեց. Բիւրոյի ներկայացուցիչը նախնական քննութիւն կատարեց եւ ապա Բիւրոյի կարգադրութեամբ կազմուեց մի դատական ատեան՝ բաղկացած Քարի երկու ներկայացուցիչներից, Մրգաստանի եւ Մեծ Քաղաքի մի մի ներկայացուցիչներից եւ Բիւրոյի ներկայացուցիչի նախագահութեամբ՝ մանրամասն կերպով մի անգամ էլ քննութեան ենթարկեց մեղսակիցներին եւ տուեց իր վճիռը, որ ժամանակին տպուեց թերթի մէջ:

Թէ վերոյիշեալ պայմանները - ուժակցիւն եւ դեմոքրալիզացիա<sup>50</sup> - եւ թէ մի քանի ապիկար դաշնակցականների տուած վատ օրինակները ժողովրդի մէջ որոշ չափով թուլացրին հաւատը եւ վստահութիւնը դէպի յեղափոխական գործը: Այսպիսի պայմաններում գործը չէր կարող մեծ յաջողութիւն գտնել: Յամենայնդէպս կազմը արաւ, ինչքան կարող էր:

Այժմ քաղաքում ունենք 11 պրոֆ. միութիւններ<sup>51</sup> զանազան արհեստների բանուորներից, որոնց թիւը հասնում է 500-800ի: Մեր արհեստակցական միութիւնների անդամները մեծաւ մասամբ անգիտակից են ինչպէս իրենց դասակարգային շահերին, այնպէս էլ ընդ-

հանուր յեղափոխական գործերին: Շատերը առօրեայ տնտեսական-կուլտական հարցերից հեռու չեն մտածում: Դրանց մէջ խիստ պակասում է յեղափոխական ոգին եւ իդէալիզմը: Ըստ կարելու այն աշխատում ենք ոյժ տալ պրոպագանդին եւ կապել նրանց մեզ հետ աւելի յեղափոխական կապերով: Անդամավճարները ինչ-ինչ պատճառներով ձգձգում էին. ումանք հաւաքել էին անդամավճարները, բայց յապաղում էին տալ կազմակերպութեան 50%ը: Կ. Կոմիտէն ստիպուած եղաւ ժամանակ նշանակել մինչեւ Դեկտեմբերի 22ը, որից յետոյ չվճարող պրոֆեսիոնալ միութիւնները պէտք է գրկուէին ձայնի իրաւունքից Երջանային ժողովում: Մինչեւ Դեկտեմբերի 22ը գրեթէ բոլոր միութիւնները Կ. Կոմիտէին յանձնեցին իրանց ապառիկ անդամավճարները:

«Յառաջ» գրադարանի գրքերը տարածուած էին գլխաւորապէս ինտելիգենտ պրոֆ. միութիւնների շրջանում: Մեծամասնութիւնը դժբախտաբար ոչ կարողում է եւ ոչ հասկանում այդ գրքերի բովանդակութիւնը:

Այս տարուայ ընթացքում մօտ 5 գործադուլ է եղել եւ բոլորն էլ յաջող ելք են ունեցել: Ամէնից երկար տեւող գործադուլը հացթուխների բանուորներինն էր, որ տեւեց մօտ 20 օր: Միութիւններն ունեն իրանց վարչութիւնները, վերջիններս ընտրում են Խորհուրդ 5 անդամից բաղկացած: Խորհուրդի նիստերին մասնակցում է Կ. Կոմիտէի անդամներից մէկը: Բոլոր բանուորական պահանջները քննուած են ոչ միայն տեղական միութեան այլ եւ Խորհուրդի մէջ: Լուրջ խնդիրների դէպքում հրաւիրում է միութիւնների ներկայացուցչական ժողով: Միութիւնների կողմից յաճախ լինում են չափազանցուած ու չմտածուած պահանջներ, բայց փոխադարձ խորհրդակցութիւններից յետոյ Կ. Կոմիտէն յաջողուել է որոշ սիստեմի տակ դնել պահանջները եւ բերել համաձայնութեան:

Բացի պրոֆ. միութիւնները, քաղաքում ունենք 3 քաղաքական խմբեր բաղկացած 80 անդամից: Այս խմբերը կազմուած են երկու սեռի ազատ պրոֆեսիոնալի<sup>52</sup> պատկանող անհատներից: Նրանց մէջ ինտելիգենտ տարրը խոշոր տեղ է բռնում: Ունենալով իր տրամադ-

48.- Տեղատուութիւն, հակայեղափոխութիւն:  
49.- Դրան կորագելու կամ այլ նպատակով սպառնալիք ի գործ դնող:  
50.- Բարոյալքում:  
51.- Արհեստակցական միութիւններ:  
52.- Ազատ ասպարէզի:

րութեան տակ քաղաքական խմբերը, պրոֆ. միութիւնները եւ ժողովրդի համակրանքը, կազմը կարողանում է դեր խաղալ հասարակական գործերում եւ տարածել իր ազդեցութիւնը բոլոր ազգային կուլտուրական հիմնարկութիւններին վրայ:

Այժմ գանձ գիւղերին: Գաւառում ունենք 50 գիւղացիական միութիւններ - դրանց մէջ ի հարկէ չեն մտնում ամէն տեսակի շահագործողները: Իւրաքանչիւր կազմակերպուած գիւղ ունի իր վարչութիւնը, իսկ վարչութիւնները որոշ շրջանում ունեն խորհուրդ, որ եւ կապ է պահպանում կենտկոմիտէի հետ: Այդ միութիւնները դեռ եւս նոր են, անգիտակից: Կազմը դրանց վրայ նայում է իբրեւ մի զանգուածի, պոտենցիալ<sup>53</sup> յեղափոխական ոյժի վրայ, որը ապագայում կարող է ակտիւ ոյժ ներկայացնել: Ըստ այնմ որեւէ կոնսպիրատիւ<sup>54</sup> ձեռնարկ չէ սկսուած: Կենտրոնական կոմիտէի եւ գիւղական միութիւնների ջանքերով այս տարուայ ընթացքում 8 գիւղերում հողաբաժանութիւն է արուել:

Տարուայ ընթացքում կատարուել է երեք տեղորմատնիչները վերաբերմամբ: Երեքն էլ յաջող են անցել, տեղորիստները ազատ են:

Ուրիշ կուսակցութիւններ գրեթէ չկան: Մի երկու խումբ ունեն ռուս սոցիալ-դեմոկրատականները: Ոչ մի ակտիւ գործ չեն կատարում, ժողովրդի մէջ համակրանք չունեն: Սոցիալ յեղափոխական խմբեր չկան. կան երկու հատ գործիչներ, սրանց հետ լաւ յարեբրութիւններ ունենք:

Զօրքի հետ առաջները յարաբերութիւն ունէինք, առ այժմ այդ կապը կտրուած է: Զօրքը գտնուում է ընդունելի<sup>55</sup> տակ եւ նոյնիսկ մեր վաղեմի բարեկամները խոյս են տալիս:

Հին գինուորները արձակուած են պաշտօնից. միայն

2 գինուոր ունենք մեր տրամադրութեան տակ, որոնք սուրհանդակի պաշտօն են կատարում: Ծախքերը ըստ կարելույն աշխատում ենք կրճատել՝ հասցնելով նրանց անհրաժեշտ միջիմուռի: Այս տարի միայն սկսուեց մարտական խմբերի կազմակերպութիւնը: Ունենք մի մարզիկ եւ դպրոց: Սկզբներում այդտեղ սովորում էին մեր մարմինների մէջ գտնուած անդամներից շատերը, բայց այժմ մնացին միայն 14 հոգի: Դպրոցում անցնում են գինուորական թէորիաները: Գործնական աշխատանք դեռ եւս չէ սկսուած:

Ժողովուրդը, ինչպէս ասացինք, չունի առաջուայ հաւատը դէպի յեղափոխութիւնը ընդհանրապէս եւ դէպի Դաշնակցութիւնը մասնաւորապէս, բայց եւ այնպէս Դաշնակցութիւնը միակ կուսակցութիւնն է եւ ունի մեծ հմայք:

Ի դիմաց Կենտ. կոմիտէի ՏԻԳՐԱՆՆԱՆ

1907 թ. 5 Դեկտեմբերի, Քար

53.- Ներուժ, կարողականութիւն ունեցող:  
54.- Գաղտնի, դաւադրական բնոյթի:  
55.- ճշում, հալածանք:

XVI

ՄՐԳԱՍՏԱՆ – ԵՐԵՒԱՆԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Մրգաստանի կեդր. Կոմիտեի Կ'ընդգրկելը Երեւանեան նահանգի ընդարձակ շրջանը, ներառեալ Նախիջեւանը եւ Իգտիրի ու Սուրմալուի գաւառները: Այնքան ընդարձակ եւ հայաշատ՝ որ բազմիցս հարց բարձրացած էր զայն բաժնելու 2-3 Կ. Կոմիտեի մասին, հոն գործող մօտ 30 կոմիտեի մասին եւ ենթակոմիտեի մասին բազմաբնոյթ գործունէութիւնը առաւել արդիւնաւորութեամբ ղեկավարելու համար:

Իբրեւ սահմանամերձ շրջան, Կարսի նման եւ անոր հետ, ծանր եւ պատասխանատու դեր վիճակուած էր Մրգաստանին՝ կազմակերպելու համար Երկիր մեկնող մարտական խումբերուն անցքը, ինչպէս նաեւ դէպի Վասպուրական, Տարօն եւ Մասուն գէնք-զինամթերք փոխադրութեան ապահով ուղիներու որոնումը:

Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհ. Ժողովէն ետք հազիւ անցած եկեղեցապատկան կալուածներու գրաման առթած ժողովրդական յուզումները, համառուական առաջին յեղափոխութեան թուրքոսիին մէջ, Անդրկովկասը բռնկեցաւ հայ-թաթարական արիւնոտ կռիւներով: Զարմանալի չէ, հետեւաբար, որ Մրգաստանի դաշնակցական կազմակերպութիւնը 1905-6 տարիներուն ամբողջովին կլանուած ըլլայ հայութեան ինքնապաշտպանութեան գործով: Արեւելեան Բիւրոյի հրահանգով Երեւանեան նահանգի զինուորական ընդհ. հրամանատար կարգուած Նիկոլ Դումանը, կողքին ունենալով մարտական անցեալով հարուստ հոյլ մը խմբապետներ (Մեւ քարեցի Սաքօ, Սեբաստացի Սուրատ, Սեպուհ, Սէլսո Պօղոս, Կորիւն, Կոտոյի Հաճի, Կայծակ Առաքել, Ալան, Դաշնակցական Խեչօ, Քեռի, եւ այլն), կարճ ժամանակուան մէջ կազմակերպեց ինքնապաշտպանութեան ճակատները եւ հատու հարուածներով ջախջախեց նախադրական թուրք-թաթարական զինեալ խուժանները:

Ինչ խօսք, որ այս յաղթանակներով ի դերեւ պիտի հանուէին ցարական իշխանութեանց ծրագիրները, իսկ միւս կողմէ արտակարգ կերպով պիտի բարձրանար Դաշնակցութեան հմայքը:

\*\*\*

Հակառակ անոր որ Հ. Յ. Դ. Գորրորդ Ընդհ. Ժողովի ընթացքին կարդացուած եւ քննարկուած է Մրգաստանի տեղեկագիրը (տես «Նիւթեր»-ու Գ. հատոր, էջ 99) անկէ հետք չենք գտներ թղթածրարին մէջ: Այլապէս նաեւ աղքատ է այս վերջինին Մրգաստանի յատկացուած բաժինը, որ կը պարունակէ հետեւեալ երկու հակիրճ գրութիւնները միայն.-

1.- «Մրգաստանի շրջանի Ռայոնական Ժողովի բանաձեւեր». թուականը՝ Դեկտեմբեր 1904 թ., որ յայտնաբար սխալ է. տպագիր 190-ի կողքին մատիտով գրուած 4-ը պէտք է վերաբերի Դեկտեմբերին, իսկ տարեթիւր պէտք է ըլլայ 1906: Գրուած է նամակի սովորական չափի (28 x 22 սմ.) երկթերթ եւ գծաւոր 6 էջերու վրայ, եւ ստորագրուած՝ Տաշրեան եւ Դարվիշ:

2.- «Հովտի» շրջանի խորհրդատոյի մը արձանագրութիւնը. նախորդին չափով երկթերթ եւ գծաւոր 2 եւ կէս էջ. ստորագրութիւններէն առաջինը անընթեռնելի է, երկրորդը՝ Կոս: Թուականը՝ 22 Դեկտ. 1907, ինչ որ կը նշանակէ թէ յիշեալ ժողովը կայացած է Ընդհ. Ժողովի փակումէն եօթուկէս ամիս ետք:

Ինչպէս կը տեսնուի, Մրգաստանի նման կարեւոր շրջանի մը համար խիստ անբաւարար միւս կը պարունակէ Ընդհ. Ժողովին թղթածրարը: Պոսթընի Հ. Յ. Դ. կեդրոնական արխիւներուն մէջ կատարած մեր պրպտումները, յատկապէս 1905-6 տարիներուն համար, երեսան հանեցին շարք մը կարեւոր փաստաթուղթեր, որոնց հրատարակութեամբ կը կարծենք գէթ մասամբ լրացուցած ըլլալ թղթածրարին պակասը եւ, այդ ձեւով, աւելի ամբողջական մէկ պատկերը տալ Մրգաստանի կազմակերպութեան ծաւալուն գործունէութեան:

Այդ փաստաթուղթերը կը ներկայացնեն իրենց թուականի կարգով եւ Հ. Յ. Դ. արխիւի համապատասխան թուակարգի նշումով:

Ե. Փ.



### Ա 1.- ՄՐԳԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱԶԵԻԵՐ

Գեղարքունիքի 1904 թ.<sup>1</sup> [?]

1.- Մրագրի յառաջաբանում ազրարային հարցը աւելի զարգացնել եւ գիտական հիմունքների վրայ դնել:

2.- Ընդունել նախագծի բոլոր կէտերը աննշան փոփոխութեամբ. նախագծում պակասած կէտերը լրացնել Ս. յեղափոխականների ծրագրից, որի մասին յանձնարարուած է պատգամաւորին բերանացի զեկուցանել:

3.- Ի՞նչ միջոցներով պիտի կռուեն աշխատաւոր մասսաները բուրժուաների հետ:

Կազմակերպելով պրոֆեսիոնալ եւ գիւղացիական միութիւններ, ընկերակցութիւններ (բնագրին մէջ ռուսերէն՝ կոոպերացիա) եւ այլն, կազմելով նրանց համար կանոնագրեր:

4. Առաջարկուեց խորհրդակցութեան հետեւեալ հարցը՝

Ի նկատի ունենալով ծրագրերի նոյնանմանութիւնը եւ ընդհանուր նպատակը, արդե՞ք օգտակար եւ ձեռնարկելի լինի միանալ Ս. Յեղափոխ. խ. հետ եւ գործել մի ընդհանուր դրօշակի տակ, միեւնոյն ժամանակ պահպանելով կուսակցութեան ատոնոմիան եւ ինքնուրոյնութիւնը տեղական հարցերի մէջ տեղական պայմանների եւ ոյժերի համապատասխան:

Ձայների փոքրամասնութիւնը գտնուած էր որ այդ հարցը խորհրդակցութեան ենթարկուի այժմ, իսկ մեծամասնութեանը կարծիքն էր, որ այդ հարցի լուծման մէջ մեծ նշանակութիւն ունի Դաշնակցութեան Տաճկահայաստանում եւ Ռուսահայաստանում միացած կամ երկու մասերի բաժանուած գործունէութիւնը:

Բայց որովհետեւ այդ հարցը ժողովից անկախ պատճառներով չենթարկուեց աւելի լայն խորհրդակցութեան, այդ պատճառով էլ N 4 առաջարկն մնաց բաց:

Այնուամենայնիւ ներկայ եղողների մի քանիսի կարծիքով ընդհանուր տրամադրութիւնը թեքուած էր Դաշնակցութեան համերաշխ գործունէութեան Ս. Յեղ. խ. հետ օրգանական աշխատանքների մէջ:

5.- Տաճկահայոց հարցի վերաբերմամբ ընդունուեց հետեւեալը՝

1) Միացած գործունէութիւն Տաճկահայաստանի միւս բոլոր ազգաբնակչութեան հետ:

2) Նախապարաստութիւն Տաճկահայաստանում ընդհանուր յեղափոխութեան:

3) Քաղաքական կազմը ֆեդերատիւ հիմունքներով:

4) Եւրոպայում միշտ վառ պահել հայոց հարցի վերաբերմամբ հետաքրքրութիւն, որպէսզի յարմար դէպքում կարելի լինի լուծել հարցը յօգուտ Տաճկահայաստանում ապրող բոլոր ազգաբնակչութեան:

5) Ազրարային հարցը Տաճկահայաստանում եւ Ռուսաստանում իրանց դրութեամբ բոլորովին նման են, այդ պատճառով էլ երկու վայրերում էլ գործունէութիւնը պիտի լինի միեւնոյն ծրագրով:

Ինչ վերաբերում է ծրագրեր կեանքի մէջ իրագործելու միջոցներին, նրանք պիտի իրագործուին տեղական պայմանների համաձայն եւ տեղական կազմակերպութիւնների ցուցմունքներով:

#### Փոքրամասնութեան կարծիք.

6) Ազրարային հարցի դրութիւնը միանգամայն նոյնն է ինչպէս որ է Ռուսահայաստանում, այդ պատճառով տնտեսականի վերաբերմամբ ծրագրեր պիտի լինի Տաճկահայաստանում եւ Ռուսահայաստանում միեւնոյնը:

Բայց երկու երկրներում պիտի գործեն ինքնուրոյն իրարից բոլորովին անկախ կազմակերպութիւններ:

Փաստ. 297-7

### Ա 2.- ՆԱՍԱԿ ԸՆԿ. ՅԱԿՈՔԻՆ

Մրգաստան, 14 Դեկտ. 1906 թ.

Ընկեր Յակովբ<sup>2</sup>,

Ընդհանուր ժողովում՝ մեր կողմից դրուելիք հարցերի թւում, մոռացանք յանձնարարել մի խոշոր առաջարկութիւն, որը թէեւ մի քիչ ուշ, բայց եւ այնպէս խնդրում ենք մեր կողմից այժմ մտցնել ժողովի օրակարգի մէջ:

Ի նկատի ունենալով պաշտելի Քրիստափոր Միքայէլեանի խոշոր երախտիքը Հայ Յեղ. Դաշնակցութեան աշխարհածաւալ նշանակութեան նկատմամբ, ի նկատի ունենալով նրա բարոյական կարտինալ<sup>3</sup> հեղինակութիւնը ամբողջ կազմակերպութեան վրայ մի կողմից եւ նրա անփառունակ եղեռնական մահը միւս կողմից, մենք առաջարկում ենք հետեւեալը:-

1.- Դաշնակցութեան պատկառելի հրամանատարի սրբազան յիշատակը յարգելու համար ոտքի կանգնել...

2.- Նրա քաղցր յիշատակը յաւերժացնելու համար յայտարարել ամբողջ կազմակերպութեան մէջ ընդհանուր ներումն բոլոր աքսորեալներին<sup>4</sup> նկատմամբ...

3.- Նրա անուանը պատշաճ մի փառաւոր արձան կանգնեցնելու նպատակով հաւաքուած դրամները ի մի գումարել եւ յատուկ մասնաժողովի ձեռքով արագացնել այդ գործը:

Յատուկ այդ նպատակի համար Մրգաստանում եւս հանգանակուել է մէկ հարիւր երեսուն երեք ռուբլիի չափ մի գումար: Միեւնոյն նպատակով, որքան մենք յիշում ենք, ուրիշ վայրերում եւս կան հաւաքուած գումարներ:

Հայ Յեղ. Դաշնակցութեան Մրգաստանի կենտր. կոմիտէի կողմից՝

*Քրիստափոր Միքայէլեան*

ՅԱՐ-ՀԱՏ<sup>5</sup>

7) Դաշնակցութեան երկու կուսակցութիւնների բաժանման հարցը, Տաճկահայաստանում առանձին Ռուսահայաստանում առանձին, շնորհիւ Ֆիդիքական անկարելիութեան, հարցը ենթարկել լայն վիճաբանութեան, որոշուեց՝

Իւրաքանչիւր ներկայացուցչի թէ անձնական (եւ թէ) համոզմունքի եւ թէ իւր շրջանից կամ կոմիտէից բերած գրաւոր կարծիքների հիման վրայ, հարցը չենթարկել վիճաբանութեան, այլ ուղղակի քուէարկել:

Քուէարկութեան արդիւնքն եղաւ հետեւեալը՝ 17-ը ձայնից 2-ը կողմնակից էր կազմակերպութեան երկու մասի բաժանուելուն. 1 ձայն - կողմնակից էր Ֆրակցիայի. 1 ձայն - (շրջանից) Տաճկահայաստանին օգնելու միայն դրամով: Իսկ 13 ձայն կողմնակից էր լիովին անբաժան գործունէութեան:

8) Ժողովի հինգերորդ նիստը խանգարուեց ոստիկանութեան անսպասելի միջամտութեամբ, որի շնորհիւ բոլոր տոկումներն ոչնչացրուեց. այդ պատճառով, ուղարկուած պատգամաւորը պիտի բերանացի զեկուցանի այն հարցերի եւ որոշումների մասին, որոնք ընդհատուած են ժողովի նիստերում:

Իսկ վերել բերուած բանաձեւերը կազմուած են\* յիշողութեան օգնութեամբ առանձին նիստում 7-ը տարբեր համոզմունքների պատկանող ձայնով:

9.- Վեցերորդ նիստում 11 ձայների ներկայութեամբ եւ 8 ներփակեալ գաւառական ձայներով կատարուեց պատգամաւորի ընտրութիւն որտեղ միաձայն ընտրուեց ընկեր Յակովբ<sup>2</sup>:

\* Եօթներորդ նիստում, որտեղ մասնակցում էին ընդամէնը եօթը ձայն - 17 ձայնի փոխարէն:

Այդ բանաձեւերի յիշողութեան օգնութեամբ վերարտադրուելուն մասնակցում էին իբրեւ տարբեր ուղղութեան ձայները:

Մանօթութիւն. - 8-րդ կէտում, ուղղուած է 7-րդ տողից յետոյ պէտք է կարդալ եւ հաւատալ:

Մրգաստանի կենտ. կոմիտէի կողմից՝  
**ՏԱՇՐԵԱՆ  
ԴԱՐՎԻՇ**

1.- Բացի Թիֆլիս կայացած Կովկասեան Մարտ-Ապրիլ ռայոնական ժողովէն, որուն բնականաբար մասնակից էր նաեւ Մրգաստան իր պատգամաւորներով, 1906ի ընթացքին Մրգաստան-Երեւանի 4. Կոմիտէութեան մէջ գումարուած են մէկ անկի «նայոնական», անկի ճիշդը Երջանային ժողովներ. այսպէս ունիք Մայիս 21 - 27ին կայացած Մրգաստանի ռայոնական ժողովի որոշումները փոխանցող շրջաբերական մը (տես փաստ. 297-87), նոյն տարուան Օգոստոս 25ին հրատարակուած ռայոնական ժողովի Երջաբերականը՝ Կեդր. Կոմիտէ ընտրելու համար (տես փաստ. 297-83) եւ, վերջապէս, Գ. Գ. Զորրորդ Ընդ. ժողովի օրակարգին քննութեան համար գումարուածը:

Ներկայացուած բանաձեւերը կը վերաբերին այս վերջին ժողովին: Փաստաբուրդին վրայ մատուցող գրուած այս բուս-

կանը յայտնապէս սխալ է, որովհետեւ մէկ անկի բանաձեւեր կը վերաբերին Կովկասեան Նախագծին, որ, ինչպէս յայտնի է, որդեգրուեցաւ Գ. 3. Դաշնակցութեան Խորհուրդին կողմէ 1905ի Ապրիլ-Մայիս ամիսներուն: Գետեւաբար ռայոնական այս ժողովը գումարուած պէտք է ըլլայ 1906ի վերջին ամիսներուն, հաւանաբար Դեկտեմբեր 4ին, իրեն նախապատրաստութիւն Զորրորդ Ընդ. ժողովին, որ պիտի սկսէր 1907 թ. Փետրուարի 22ին: Այս իրողութեան անփոփոխ փաստ պէտք է համարել այն, որ թէ՛ փաստաբուրդը եւ թէ՛ Մրգաստանի պատգամաւոր թ. 3. Զարեան կը վկայեն, թէ Երջանայինի նիստերուն հինգերորդ օրը ոստիկանութեան անակնկալ միջամտութեամբ ժողովը խանգարուած է (տեսնել «Նիւթեր»-ու 9. հատոր, էջ 99-100) եւ պատճառ եղած որ գրաւոր փաստաբուրդերը փճացուին:

2.- Բժ. 3. Զարեան, որ Երջ. ժողովի կողմէ ընտրուած է պատգամաւոր Գ. Ընդհանուր ժողովին:  
3.- Առաջնակարգ:  
4.- Խօսքը կը վերաբերի Դաշնակցական կամ ոչ այն բոլոր անհատներուն, որոնք կուսակցական պատիժի ենթարկուելով կը հեռացուէին կազմակերպական այդ շրջանէն:  
5.- Ֆար-Պատ կուսակցական ծածկանունը է 4. Կ.ի անդամ Աարդիս Օհանջանեանի:

Փաստ. 293-52

**Բ 1.- ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ**

**Հայ Յեղ. Դաշնակցութեան Մրգաստանի  
Կ. Կոմիտէի ռայոնում գտնուած  
բոլոր շրջանային կոմիտէներին**

**ԸՆԿԵՐՆԵՐ,**

Այս 1905 թուի Դեկտեմբերի 24-ին Մրգաստանում կայանալու է Մրգաստանի Կ. Կոմիտէի ռայոնական ժողովը: Ուստի Կ. Կոմիտէն շտապում է հրաւիրել իւր շրջանի բոլոր կոմիտէներին ու շահագրութիւնը ներքեւում զետեղուած հարցերի վերայ ռայոնական ժողովում քննելու համար: Շրջանային կոմիտէները պարտաւորուած են իրանց ներկայացուցիչների միջոցաւ ներկայացնել այդ հարցերի լրիւ եւ բազմակողմանի պատասխանները: Ընտրուած ներկայացուցիչը բերելու է նաեւ իւր շրջանի դրամական բոլոր հաշիւները շրջանային ժողովից մի քանի օր առաջ, որպէսզի Կ. Կոմիտէն միջոց ունենայ այդ բոլոր տեղեկութիւնները ի մի ամփոփել եւ ստուգուած դրամական հաշիւները ռայոնական ժողովին ներկայացնել:

**ՔՆՆՈՒԵԼԻՔ ՀԱՐՑԵՐԸ**

**Ա.  
Հայ-թուրքական լաղաբերութիւնները**

- 1) Ներկայացնել ճիշտ տեղեկագիր ձեռք շրջանի բոլոր գիւղերի ունեցած գէնքերի եւ ռազմամթերքների մասին մեր տուած ցուցակի համաձայն:
- 2) Ձեր շրջանում քանի՞ թուրք կամ քիւրտ գիւղեր կայ. ամէն մի գիւղ քանի տուն ունի. (գրել եւ բերել գիւղերի անունները):
- 3) Ձեր շրջանի թուրք կամ քիւրտ գիւղերը մօտաւորապէս որքան զինուորական եւ ռազմական ոյժ ունին հայերի համեմատութեամբ:
- 4) Ձեր շրջանի ո՞ր թուրք կամ քիւրտ գիւղերը աչքի են ընկնում իբրեւ անհանգիստ գիւղեր:
- 5) Ձեր շրջանի ո՞ր թուրք կամ քիւրտ գիւղերը եռանդուն յարաբերութիւն եւ կապ են պահպանում Պարսկաստանի եւ Տաճկաստանի մահմեդական ազգաբնակութեան հետ. ի՞նչ ճանապարհով, ո՞ր ցեղերի հետ եւ տարուայ ո՞ր ժամանակներում:
- 6) Վերջին տասն ամսուայ ընթացքում պատահած դէպքերը ձեր շրջանում իրանց պակասաւոր եւ առաւել կողմերով եւ հետեւանքներով:

- 7) Գրել հայ եւ թուրք գիւղերի ընդհարումներին, թաւաններին (ոչխարի, տաւարի եւ զանազան մթերքների), սպանուածների, անյայտացածների եւ վնասների մօտաւոր չափը:
- 8) Իմանալ, թէ հայերն ու թուրքերը ի՞նչպէս են տրամադրուած դէպի իրար. ցանկանում են խաղաղութիւն, թէ լարուած են փոխադարձ վրէժխնդրութեամբ:
- 9) Տալ մանրամասն եւ լրիւ տեղեկութիւններ ձեր շրջանի այս տարուայ բերքի եւ ցանածի մասին. այլ խօսքով՝ ո՞րքան հայ կայ եւ ո՞րքան է ցանածը:
- 10) Ձեր շրջանում ի՞նչպէս են վերաբերուած դէպի ներկայ շարժումը կամ դէպի հայերը ռուս եւ սրանց օֆիցերները, կազակները եւ սրանց օֆիցերները, պոլիցիական թէ ռուս եւ թէ օտարազգի ծառայողները:
- 11) Ի՞նչ համախմբումներ են նկատուում թուրքերի մէջ եւ յատկապէս ո՞ր գիւղում:
- 12) Ո՞ր գիւղերում են գտնուում զօրքերը, ո՞ր տեսակի եւ ո՞րքան:
- 13) Ի՞նչպէս են վերաբերուած զօրքերը եւ նրանց գլխաւորները դէպի թուրքերը. նոյնպէս եւ պոլիցիան եւ օտարազգիք:

**Բ.  
Դատավարութիւն**

- 1) Ժողովրդի կարծիքը դատավարութեան մասին իւր բոլոր պատճառաբանութիւններով. ժողովուրդը ուզո՞ւմ է դատավարութիւն թէ ոչ:
- 2) Դատավարութեան օգտակար եւ վնասակար կողմերը. դատավարութեան անցեալի փորձերը:
- 3) Դատավարութիւնը նպաստո՞ւմ է յեղափոխութեան թէ՞ խանգարում:
- 4) Դատավարութիւնը տանելու համար կան արդեօք տեղական պատրաստի պարտաճանաչ, բարեխիղճ, ձեռնհաս ոյժեր թէ կրթութեան եւ թէ բարոյականութեան տեսակէտից:
- 5) Դատավարութեան համար առանձին մարմիններ անհրաժեշտ են, թէ թողնել կոմիտէներին եւ ենթակոմիտէներին:

**Գ.  
Կոմիտէ եւ Ենթակոմիտէ**

- 1) Ձեր շրջանում կոմիտէները եւ ենթակոմիտէները ի՞նչ յաջողութիւններ եւ անյաջողութիւններ են ունեցել եւ դոցա գլխաւոր պատճառաբանութիւնները փաստերով:
- 2) Շրջանային կոմիտէի կազմի մէջ մի անդամի ազատ լինելու անհրաժեշտութիւնը, որպէսզի այդ ազատ անդամը շարունակ հետաքրքրուի յեղափոխական գործերով եւ շրջանի հրատապ հարցերով ու կարիքներով:

- 3) 1905 թուի շրջանային կոմիտէի եւ ենթակոմիտէների գործունէութեան մանրամասն տեղեկագիրը եւ հաշիւը:
- 4) Տեղեկագիրը ձեր շրջանի գիւղերի (կեղծ անուններով), իմբերի, սոցա անդամների եւ ենթակոմիտէների թուի մասին մի առանձին կանոնաւոր ցուցակով:
- 5) Նախահաշիւ շրջանի եկամուտի մի տարուայ ընթացքում: Խմբերի դիմաց դնել մի ամսուայ վճարի քանակը:
- 6) Կոմիտէների դրամական հաշուետուութեան մասին:

**Դ.  
Շոքիւնտի հարցը**

- 1) Շրջիկների մասին մանրամասն տեղեկութիւններ մշակել, թէ արդեօք նոքա ի՞նչ օգուտներ են տուել եւ ինչ չափով. (փաստեր):
- Առաջարկելով այս հարցերը, Մրգաստանի Կ. Կոմիտէն առաջարկում է լուրջ ուշադրութիւն դարձնել նոցա վերայ. նախօրօք քննութեան ենթարկել եւ բազմակողմանի կերպով ծանօթանալ ու պատրաստուել, որպէսզի ներկայացուցիչը ընդհանուրի կողմից պատրաստուած գայ եւ յայտնի ամբողջ ձեռք կազմի ընդհանուր կարծիքը եւ ներկայացնի ձեռք ամբողջ շրջանի մի

ամբողջ տարուայ գործունէութիւնը:  
Սորա հետ միասին Մրգ[աստանի] Կ. Կոմիտէն խրատիւ պատուիրում է, որ մինչեւ ներկայացուցչի գալը մաքրուած լինին ձեր շրջանների բոլոր ապառիկները եւ հաշիւները:

Մրգաստանի Կենտր. Կոմիտէի կողմից՝  
**ԱՇ ՈՒՂՅ**

Դեկտ. 1905 թ.  
Մրգաստան

Յ.Գ. Խնդրում ենք ձեզ մօտ մնացած չգրուած կտրօնները ձեր ներկայացուցչի հետ ուղարկէք մեզ, որովհետեւ 1906 թ.ի հաշուակալութիւնը այլ ձեւով է տարուելու:<sup>7</sup>

Նոյն

6.- Բուճ անուճով Սահակ Յովնանեան:  
7.- Յետ գրութեանը ձեռագրով աւելցուած է Շրջաբերակաւոր տպագիր օրինակի միայն:

Փաստ. 294-35

Բ 2.-

*Արժեքատարալի կե. արքայական կառավարչի  
չրզանային (ուպոնական) Ինքով.*

1905 թ. Դեկտ. 26 - 1906 թ. Յունուար 3ի տեսչության, 15 նիստերով գումարաւած Մրգաստան-Երևան Երջանային  
ժողովի արձանագրութիւնը կը գրաւէ 23 մեծադիր էջեր, գրուած, ձեռագիրներէն դատելով, 3-4 տարրեր քարտուղարներու  
կողմէ, որոնցմէ, երեւի իբրև օգնական բուն ատենադպիրներուն, կը յիշատակուին պ. Գասպարը եւ պ. Ա.ը:  
Հայ-բարբարական կամ հայ-թրքական ընդհարումներու տար օրերուն կայացած այս ժողովին մասնակիցներուն  
տեսնմին անուանացանկը չէ տրուած: Յիշուած են անոնք, որ հոն են իրենց յատուկ հանգամանքին բերումով՝ իրաւաստ  
կամ խորհրդակցական ձայնի իրաւունքով:  
Արձանագրութեան մէջ յիշատակուած Քարաբերդը, Ապլէքքանը, Արարատը, Ազատ Դաշտը, Բարձր Տեղը, Մրբավայրը  
եւայլն ծածկանուններ են Մրգաստանի կազմակերպական տարրեր շրջաններու, որոնց մէկ մասին գէթ ճշգրիտ տեղագր  
ութեան կը կարօտի յատուկ ուսումնասիրութեան: Նայմն է պարագան նաեւ ծածկանունով ներկայացուած շարք մը անձնա  
նորութիւններու ինքնութեան բացայայտման:

**ԼԻՍ III**

1905 թ. 26 Դեկտեմբերի. 6.5 ժամ

Ժողովի առաջին խնդիրն էր ձայների բաշխումը.  
Բացի ձայնաւոր պատգամաւորներից ժողովը ձայն  
տուեց նաեւ՝

1. Երեւանի ինքնապաշտպանութեան քաղաքային  
խորհրդի ներկայացուցչին,
2. Քարաբերդի<sup>8</sup> զինուորական շտաբի<sup>9</sup> ներկայա-  
ցուցչին,
3. Զ. խմբապետների ներկայացուցչին,
4. Պ. Պ. Մուրատին եւ Սեպուհին<sup>10</sup>,
5. Ընկ. Թեմուր-բէգին, իբրեւ ներկայացուցիչ նոր  
կազմած Արեւան-Ձոր շրջանի, որ իւր կողմից առանձին  
ներկայացուցիչ չունէր,
6. Կոմսին<sup>11</sup> իբրեւ երկրին ծանօթ գործչի:
7. Պորհրդատու ձայներով իրանց խնդրի համաձայն  
ժողովի որոշմամբ ներկայ գտնուելու թոյլատուութիւն  
ստացան՝ Պ. Պ. Մուշեղեան, Ղազարեան, Միհրան<sup>12</sup>,  
Քաղաքի կողմից երկու խորհրդատու ներկայացուցիչ,  
Բոյրագ<sup>13</sup> մարտական խմբի բոլոր անդամները, շրջան-

ներից եկած գործիչ ուսուցիչները, ուսանողները, Կար-  
միր Նաչի վարչ(ութեան) անդամները, աշակերտական  
միութեան չորս անդամները, Քաղաքի 7 ենթակոմիտէ-  
ներից մի մի ներկայացուցիչ, զինուորական խմբապետ-  
ները:

**ԼԻՍ IV**

27 Դեկտեմբերի. առ. 9.5 ժ.

Նախագահը ժողովին ներկայացրեց Պ. Բէգզադէի  
զրութիւնը, որով նա ժողովի ուշադրութիւնն էր հրա-  
ւիրում Կ[ոմիտէի] կազմից իրան հեռացնելու մասին եւ  
առաջարկում էր գործը քննել: Ժողովը օրակարգով  
զբաղուելու համար որոշեց յետաձգել այդ խնդիրը իւր  
այս ռայոնական ժողովներից մէկում քննելու, զուտ  
պատգամաւորական ժողովում, որ լինելու է նախ քան  
ընտրութիւնները:

Ժողովը որոշեց Ապլէքքամի Կ[ոմիտէի] անդամին  
խորհրդատու ձայնով թոյլ տալ ներկայ գտնուելու ժո-  
ղովին իրանց ներկայացուցիչ զեկուցման կարելու բա-  
ցատրութիւններ տալու համար:

Ժողովը լսեց շրջաններից եկած պատգամաւորների

- 8.- Քարաբերդ՝ Մրգաստանի կոմիտէներէն Նախիջեւանի  
կուսակցական ծածկանունն է:
- 9.- Ձիւնուորական ղեկավար մարմին:
- 10.- Սեբաստացի Մուրատ եւ ապագայ ծանօթ գորավար  
Սեպուհ (Արշակ Ներսեսեան), որոնք հայ-թրքական ընդհարում-  
ներու շրջանին կը գտնուէին Արեւելեան Յայաստան եւ կը ղե-  
կավարէին Նախիջեւանի եւ Ձանգեզուրի մէջ մղուող կռիւները:
- 11.- Վահան Փափագեան, որ 1905ի սկիզբը Վանէն անցած  
էր Անդրկովկաս եւ կը գործէր Երեւանի շրջանին մէջ:

- 12.- Ծանօթ խմբապետ Սիիրանն է, որ քիչ անց Կովկաս-  
եան Նախագծի դէմ դրօշակ պարգած պիտի ղեկավարէր «ան-  
ջատողական» կոչուող շարժումը, բոլորովին գործիք դառնա-  
լով ցարական գաղտնի գործակալութեանց ձեռքը:
- 13.- Բոյրագ կը կոչուէր երիտասարդ դաշնակցականներ  
կազմուած մարտական այն խումբը, որ իր քաջութեամբ եւ  
յանդգնութեամբ հռչակուած էր երեւանեան շրջանին մէջ: Շա-  
տերու կարգին անոր շարքերուն մաս կազմած էր նաեւ Դրաս-  
տամատ Կանայեան (Դրօ):

մանրամասն զեկուցումները թէ գրաւոր եւ թէ բանա-  
ւոր հայ-թրքական յարաբերութիւնների մասին. (զե-  
կուցումների մանրամասնութիւնների մասին տես շրո-  
ջանների գրաւոր բացատրութիւնները):

Այս ժողովում Բարձր-Տեղի<sup>14</sup> ներկայացուցիչ ընկեր  
Նալիֆան պատմեց իրանց շրջանի հայ-թրքական յարա-  
բերութիւնների մասին ընդհանրապէս եւ Ուշի[ի] դէպ-  
քի մասին մասնաւորապէս (այս մասին տես նոյն ընկե-  
րոջ ընդարձակ զեկուցումը, որ ուղարկուած է Կ. Կոմի-  
տէին):

**ԼԻՍ V**

27 Դեկտ. երեկ[ոյեան] 5 ժ.

Ժողովը լսեց շրջանի պատգամաւորների միւս մասի  
զեկուցումը դարձեալ հայ-թրքական յարաբերութիւն-  
ների մասին: Այս մասին ժողովը բացատրութիւններ  
ստացաւ շրջաններում գտնուած զ[ինուորական] խմ-  
բապետներից:

**ԼԻՍ VI**

28 Դեկտեմբերի 10 ժամին առաւօտեան

Ժողովը լսեց շրջանից եկած միւս ներկայացուցիչնե-  
րի զեկուցումը դարձեալ հայ-թրքական յարաբերու-  
թիւնների մասին: Հայոց Ձորի ընդհանուր խմբապետ  
Հայրի<sup>15</sup> մանրամասն պատմեց Հորս գիւղի արշաւան-  
քը: Ընկեր Դոււմանը՝ զինուորական Լիազօրը կարդաց  
երկրորդ կիսամեակի զինուորական դրութեան մասին  
իւր գրաւոր զեկուցումը, որի մէջ առանձին ուշք էր  
դարձրել հայ-թրքական յարաբերութիւնների վրայ:  
Ընկ. Դոււմանը առաջարկեց զինուորների դրութիւնը  
բարուեցնելու համար մի քանի խնդիրներ, որոնց լուծելը  
ռայոնական ժողովը թողեց հետեւեալ նիստին:

Ընկ. Միհրանը<sup>12</sup> կարդաց այս առթիւ իւր կազմած  
զեկուցումը, որով նախ կանգ առաւ ներկայ զինուորա-  
կան դրութեան աննախանձելի վիճակի վրայ, ինչպէս  
ինքն էր անուանում եւ ապա տուեց իւր ծրագիրը ապա-  
գայ գործունէութեան համար՝ բարուեցնելու համար  
այժմեան «միապետական անտանելի դրութիւնը»:  
Նմբապետների մէջ այս առթիւ նկատուեց ընդհանուր  
դժգոհութիւն, որ պաճառ եղաւ կարճատեւ աղմուկի:

**ԼԻՍ VII**

29 Դեկտեմբերի, 11 ժ. առաւօտեան

Ռայոնական ժողովը լսեց Պ. Սեպուհի բանաւոր զե-  
կուցումը Վրէժստանի<sup>16</sup> (Պարսկաստան) մասին, որից  
երեւաց որ այնտեղի դրութիւնը համեմատաբար անվը-  
տանգ է այն պատճառով, որ պետութիւնը շատ հաշտ է

վերաբերում դէպի հայ ժողովուրդը իբրեւ իւր երկրի  
միակ քաղաքակիրթ եւ աշխատաւոր ժողովուրդի:

Կարդացուեց ընկ. Միհրանի նամակը, որով նա հրա-  
ժարում էր ռայոնական ժողովում իրան տուած խոր-  
հրդատու ձայնից ամսիս 28-ի նիստում պատահած  
միջնադէպի պատճառով:

Ընկ. Դոււմանը առաջարկեց հրաւիրել ընկ. Միհրա-  
նին նորից ժողով իւր հարցերին բացատրութիւններ  
տալու եւ ստանալու համար: Թեր եւ դէմ կարծիքներից  
յետոյ ժողովը որոշեց թիւրիմացութիւններին վերջ տա-  
լու համար հրաւիրել ընկ. Միհրանին այդ նպատակով,  
միանգամայն ընդունելով, որ եթէ նա մերժի բացատ-  
րութիւն տալու եւ բացատրութիւն ստանալու իւր հար-  
ցերին, ժողովը յետ վերցրած կը համարէ նորա ասածնե-  
րը իբրեւ ամբաստանութիւն եւ կը մտցնէ արձանագ-  
րութեան մէջ:

Այս ժողովը անցաւ ընկ. Դոււմանի անցեալ նիստում  
առաջարկած այն հարցերին, որոնք անմիջապէս կապ  
ունէին քաղաքացիական մասի հետ:

1. Ընկ. Դոււմանը առաջարկեց, որ զինուորական  
կաստա<sup>18</sup> ստեղծելուց խոյս տալու համար ռայոնական  
ժողովը ուշք դարձնէ ինքնապաշտպանութեան համար  
— կազմակերպել տեղական ոյժերը, որոնք մշտապէս  
կապուած կը մնան իրանց ծննդավայրի հետ եւ այդպի-  
սով կ'առնուի դասակարգային բաժանման առաջը:

Ժողովը ցանկալի համարեց այդ առաջարկը եւ ծը-  
րագրեց մօտիկ ապագայում հասնել այդ նպատակին՝  
ընդունելով միայն, որ տեղական ոյժերը կազմակերպե-  
լու եւ ղեկավարելու համար անհրաժեշտ է մի փորձը-  
ւած խմբապետ ունենալ կամ տեղացի եւ կամ դրսից ե-  
կած:

2. Ստեղծել գորանոցային կեանք դրսից եկած հայ-  
դուկների համար ամբողջ ծախքը վերցնելով Դաշնակ-  
ցութեան վրայ: Ընկ. Դոււմանը ի նկատի ունենալով մի  
շարք փորձեր անյարմար եւ վնասակար է համարում  
հայդուկներին բաժանել ընտանիքներում: Ոչ գորանո-  
ցային կեանքը անյարմար է համարում մանաւանդ այն  
պատճառով, որ բացի ընտանեկան անյարմարութիւն-  
ներից եւ դժգոհութիւններից, զինուորը կախուած է լի-  
նում հասարակութիւնից, ենթարկուած է պատահար<sup>19</sup>

14.- Բարձր-Տեղը կուսակցական ծածկանունն է հաւանա-  
բար Ապարանի շրջանին: Անոր կից Աշտարակի շրջանին մէջ  
կը գտնուէր Ուշի թրքաբնակ գիւղը, ուր նոյն տարուան (1905)  
Յունիսի 4ին հայերը ուժեղ յարձակում գործելով ջախջախիչ  
յարթոնակ տարած եւ փախուտի մատնած էին հոն  
կեղոնացած բազմահարիւր թուրք եւ քիւրտ իրաւակները:

- 15.- Ամենայն հաւանականութեամբ՝ Տարօնի անուանի ֆե-  
տայի եւ խմբապետ Կոտոյի Յաճին:
- 16.- Վրէժ կամ Վրէժստան՝ Պարսկաստանի Գ. Յ. Դ. Կ. Կոմի-  
տութեան ծածկանունը:
- 18.- Արտօնեալ փակ դասակարգ:
- 19.- Գիշը՝ պատահական:

անձնաւորութիւնները, որոնք պահուած են իրանց տնե-  
րում եւ ի չարն են գործ դնում նոցա ոչ ոք եւ տեղիք են  
տալիս ընդհանուր Հասարակական դժգոհութեան: Քա-  
րաբերդի շտաբի ներկայացուցիչները յայտնեցին, որ  
կեանքի բնական բերմունքով այնտեղ արդէն սկսուել է  
զօրանոցային կեանքը եւ աւելի յարմարութիւններ է  
տուել, քան ընտանիքներում բաժանելը:

Ժողովը ի նկատի ունենալով վերոյիշեալ առաջար-  
կութիւնները, որոշեց ընդունել եւ կազմակերպել հայ-  
դուկների համար զօրանոցային կեանք:

Ընդունելով զօրանոցային կեանքը ժողովը քննու-  
թեան նիւթ դարձրեց զինուորների (պահելու)-կերակ-  
րելու հարցը: Ոմանք առաջարկում էին ժողովրդից զին-  
ւորական տուրքից զատ վերցնել դրամական օժանդա-  
կութիւն եւ հոգալ զինուորների առօրեայ պէտքերը:  
Միւսները առաջարկում էին վերցնել օժանդակութիւն  
կրճատելով ներկայումս գոյութիւն ունեցող զինուոր-  
ական տուրքը: Ընկ. Դումանը առարկեց, թէ զինուոր-  
ական տուրքը զինուորների ընդհանուր ծախսն է (ճա-  
նապարհի, ծխախոտի, հագուստի, բժշկական եւ այլն),  
որ մօտ 50000 ու. հազիւ լրանայ: Կազմակերպութիւնը  
այդքան մեծ ծախս առանց այդ տուրքի հոգալ անկա-  
րող է: Արարատի շրջ. ներկայացուցիչը առաջարկեց Ժո-  
ղովրդի մէջ մտցնել ծխերի կանոնաւոր բաժանումն  
ընդհանրապէս, աղքատ դասակարգը ազատել այդ  
տուրքից, իսկ մնացածներից ստանալ ըստ կարողու-  
թեան: Առարկուեցաւ, որ զինուորական տուրքը ընդ-  
հանուր է նաեւ ոչ դաշնակցականների համար: Թեր եւ  
դէմ կարծիքներից յետոյ ժողովը որոշեց քննարկել հե-  
տեւեալ բանաձեւերը. ա. Հաւաքել մթերքներ,

բ. Հաւաքել մթերքներ կամ փող՝ նայելով տեղի յար-  
մարութիւններին՝ պահելով նաեւ զինուորական սովոր-  
ական տուրքը:

Երկրորդ բանաձեւն անցաւ 23 ձայնով եւ համար-  
ւեցաւ որոշում:

**ՆԻՍՏ VI**  
**29 ԴԵԿ. ԵՐԵԿ. 6 Ժ.**

Ժողովը շարունակեց զբաղուել ընկ. Դումանի հար-  
ցերի մշակութեամբ:

Ընկ. Դումանը առաջարկեց՝ զինուորներին ազատել  
ոստիկանական ծառայութիւններից: դրա շարժառիթն  
այն էր, որ զինուորները ի կատար ածելով քաղաքա-  
ցիական մարմինների որոշումները, ընդհանուր դժգո-  
հութեան եւ տրտուներէ պատճառ են դառնում, մինչդեռ  
վճիռ տուողները մի կողմ քաշուած են մնում. պատ-  
ժուողը պէտք է ճանաչի պատժողին ընդհանուր թիւրի-  
մացութիւնների տեղիք չտալու համար: Զինուորներին  
պէտք է ազատել ոստիկանական ծառայութիւններից  
նաեւ այն պատճառով, որ նոցա միջոցաւ քաղաքացիա-

կան մարմնի անբարեխիղճ անդամները գործ են դնում  
իրանց նպատակները. իսկ զինուորները կատարելով մի  
որոշում կամ մի չարիք ընդունակ են դառնում կատա-  
րել առանց հրամանի նաեւ ուրիշ չարիքներ: Այդ բոլոր-  
րի արմատը կտրելու համար պէտք է ազատել նրանց  
ոստիկանական ծառայութիւններից եւ պահել միայն  
իրբեւ ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ ոչ-  
ժերի: Իսկ դրա փոխարէն առաջարկուում է, որ Կ. Կոմի-  
տէն կամ կոմիտէները իրանց որոշումները իրագործե-  
լու համար, ձեռքի տակ ունենան կամ թուղցիկ մի  
խումբ եւ կամ տեղական գործադիր մարմին, որին հա-  
կառակ էին շատերը նոր ծախսեր առաջ գալու պատճա-  
ռով: Սորա հետ կապում էին նաեւ տեղական բազմա-  
թիւ անյարմարութիւններ: Խնդրի քննութիւնը ստա-  
ցաւ աւելի լայն ծաւալ. առաջարկուեց, որ ընդունելով  
այս դրութիւնը մենք ստեղծուած ենք հակառակ մեր  
ցանկութեան եւ մեր որոշման զինուորական մի կաս-  
տա, որ բազմաթիւ անախորժութիւնների եւ թիւրիմա-  
ցութիւնների տեղիք կը տայ: Խնդիրը մնաց հետեւեալ  
ժողովին:

**ՆԻՍՏ VII**  
**ԴԵԿ. 30 ԱՊՐԱՍՈՒՄ. 11 Ժ.**

Ընկ. Խանզադէն ժողովի ուշադրութիւնը հրաւիրեց  
Մարգարիտի Կ. Կոմիտէի վերջին օրերս ստացած կով-  
կասեան Ընդհանուր Ռայոնական Ժողովի արձանագ-  
րութեան վրայ, որտեղ ասուած է, որ իւրաքանչիւր քա-  
ղաքացիական մարմին կից կազմուում է համապատաս-  
խան զինուորական մարմին (Բիւրոյին կից զինուորա-  
կան Բիւրօ, Կ. Կ. [ին] կից կենտրոնական զինուորական  
մարմին եւ այլն), ուստի խոյս տալու համար արդէն ո-  
րոշուած մարմինների մէջ կաստայականութիւն ստեղ-  
ծելուց ընկ. Խանզադէն առաջարկում է հարցը լուծել  
փոխադարձ համաձայնութեամբ, թէ եւ վերոյիշեալ ու-  
յոնական ժողովի արձանագրութեան մէջ չեղտուած է,  
որ զինուորական մարմինները անմիջական կապ ունեն  
եւ ենթարկուում են աւելի բարձր զինուորական մար-  
միններին: Միջին ճանապարհ բռնելու համար ընկ.  
Խանզադէն առաջարկում է շրջանային ժողովին ընդու-  
նել հետեւեալ բանաձեւը.

Որեւէ քաղաքացիական վարչական որոշում եթէ  
գործադրուելու է զինուորական ոչ ժողով, կատարուի Կ.  
Կոմիտէի եւ զինուորական շտաբի՞ փոխադարձ համա-  
ձայնութեամբ եւ վերջինի կարգադրութեամբ կամ որե-  
ւէ շրջանում շրջանային կոմիտէի եւ շրջ. շտաբի համա-  
ձայնութեամբ իրանց համար որոշուած իրաւասու-  
թեան սահմաններում. իսկ որտեղ չկայ զինուորական  
համապատասխան շտաբ, տեղական պատասխանատու  
խմբապետի համաձայնութեամբ:  
Առաջարկելով այս բանաձեւը ընկ. Խանզադէն իւր

բացատրութիւնների մէջ յայտնեց այն միտքը, որ քա-  
ղաքացիական մարմիններին (Կ. Կոմ. եւ Շրջ. Կոմ.) վե-  
րապահուում են բոլոր այն իրաւունքները, որոնք նախա-  
տեսուած են Հայ Յեղափ. Դաշնակցութեան օրէնս-  
դրութեան մէջ:

Եղան թեր եւ դէմ կարծիքներ բանաձեւի մասին եւ  
ժողովը եկաւ այն եզրակացութեան, թէ՛ որովհետեւ  
մեզ համար մուտք էին կովկասեան Ռայոնական Ժողո-  
վի այն վերոյիշեալ որոշման մի քանի կէտերը՝ պէտք է  
առկախ թողնել այս խնդիրը, պահել մինչեւ այժմ գո-  
յութիւն ունեցող ձեւը, իսկ ապագայ որոշումների եւ  
փոփոխութիւնների համար դիմել Բիւրոյին եւ բացատ-  
րութիւն պահանջել Ռայոնական Ընդհանուր Ժողովի  
որոշման մուտք կէտերի համար: Ժողովականներին ի-  
րանց ցանկութեան համաձայն առաջարկուեց կազմել  
իրանց սեփական բանաձեւերը, ներկայացնել Մրգաս-  
տանի ռայոնական ժողովին, որ մշակելուց յետոյ  
կենտր. Կոմիտէի միջոցաւ կը ներկայացնէ Բիւրոյին  
կամ կովկասեան Ընդհանուր Ժողովին ի հայեցողու-  
թիւն:

Ժողովը լսեց ընկեր Միհրանի գրաւոր բացատրու-  
թիւնը իւր հրաժարականի մասին. բայց որովհետեւ Ժո-  
ղովը կամենում էր իւր որոշման համաձայն լսել նրա-  
նից բերանացի մանրամասն բացատրութիւն, վճռեց նո-  
րից հրաւիրել բացատրութեան համար եւ գրեց նրա նա-  
խագահի եւ քարտուղարի ստորագրութեամբ մի հրա-  
ւէր մեր նախկին որոշումը յայտնելով նորան: Ժողովը  
կարդաց Կարապետ Մարգարեանի խնդիրը զինուորա-  
կան-ընկերական դատի ենթարկուած ահաբեկուած  
զինուոր Մելքոնի մասին: Լսեց դէպքի մանրամասն  
պատմութիւնը եւ ընկեր Դումանի բացատրութիւնը եւ  
բաւականացաւ դորանով, միայն յայտնեց խոր դժգո-  
հութիւնը սպանման ժամանակ կատարած մի քանի ա-  
ւելորդ ձեւականութիւնների նկատմամբ, ինչպէս օրի-  
նակ խմբական զայլով<sup>20</sup> եւ մահուան սարսափը նկա-  
րելու առթիւ, որ եղել է առանց լիազօրի գիտութեան:

**ՆԻՍՏ (Ը) VIII**  
**31 ԴԵԿՏԵՄԵՐԻ ԱՊՐԱՍՈՒՄ 10 Ժ.**

Ժողովը զբաղուեց ընկ. Դումանի հարցերի շարու-  
նակութեամբ:

Ընկ. Դումանը առաջարկում է կազմել զինուորա-  
կան գլխաւոր շտաբ Մրգաստանում եւ ճիւղեր (մօտա-  
ւորապէս 15) շրջաններում եւ առաջարկեց ժողովին  
տալ թեկնածուների անուններ: Ժողովը համաձայնու-  
թիւն յայտնեց եւ որոշեց այդ հարցով զբաղուել օրա-  
կարգի հարցերի կարգով: Ընկ. Դումանի ծրագիրն է՝  
որ զինուորական շտաբները կազմուած լինեն երեքա-  
կան անդամներից, որոնցից մէկը կը լինի շտաբի գլխա-

ւորը (նաչալնիկ շտաբա), շրջաններում շտաբի գլխաւոր-  
ը կը լինի պատասխանատու շրջանային խմբապետը.  
որոշումները կը լինեն ձայնի առաւելութեամբ:

Կարդացուեց Մրգաստանի Կ. Կոմիտէի գործունէութեան տեղեկագիրը՝ սկսած 1904 թ. Հոկտեմբեր 4-ից  
մինչեւ 1905 թ. ներկայ ռայոնական ժողովը: Եղան նկա-  
տողութիւններ եւ բացատրութիւններ:

**ՆԻՍՏ Թ. IX**  
**31 ԴԵԿՏ. ԵՐԵԿ. 5 Ժ.**

Կենտրոնական Կոմիտէի տեղեկագրի մասին նկա-  
տողութիւններ անելու ժամանակ շրջանային ժողովը  
նկատեց, որ մի քանի շրջաններում, մասնաւորապէս  
Վայոց Ձորում կատարուել են ինքնագլուխ տեւորներ.  
Կենտ. Կոմիտէի ներկայացուցիչները յայտնեցին, որ  
այդ գործը քննութեան տակ է եւ շրջ. կոմիտէն պա-  
տասխանատուութեան տակ է ինկած մինչեւ գործի  
քննութեան վերջանալը: Ռայոնական Ժողովը ի նկատի  
ունենալով այս հանգամանքը, իւր կողմից որոշեց հե-  
տեւեալը. շրջաններում կատարուել են մի քանի ահաբե-  
կումներ կոմիտէի [եր] կարգադրութեամբ, առանց Կ.  
Կոմիտէի գիտութեան եւ հաստատութիւնն ստանալու,  
որոնց յանցաւորները տակաւին մնում են անպատիժ:  
Պարտաւորեցնել Կ. Կոմիտէին՝ ամենակարճ միջոցում  
մանրամասն քննութեան ենթարկել գործը եւ յանցա-  
ւորներին տալ արժանաւոր պատիժ, որի մասին անմի-  
ջապէս շրջաբերականով յայտարարել Մրգաստանի  
շրջանի բոլոր դաշնակցականներին ի գիտութիւն: Ա-  
պագայի նկատմամբ պարտաւորեցնել Կ. Կոմիտէին, որ  
համանման դէպքերում անյապաղ երեւան հանէ յան-  
ցաւորները եւ ենթարկէ նրանց արժանի պատիժ, հակա-  
ռակ դէպքում Կ. Կոմիտէն կը ճանաչուի պատասխա-  
նատու ապագայ ռայոնական ժողովի առաջ:

Քաղաքի ներկայացուցիչներից մէկը յիշեցրեց ժողո-  
վականներին, որ անցեալներում քաղաքիս ենթակոմի-  
տէները պահանջել են Կ. Կոմիտէից ստուգելու նրանց  
հաշիւը, որի համար ընտրուած է եղել քննիչ յանձնաժո-  
ղով. սակայն մինչեւ օրս անկատար է մնացել:

**Դատավարուութիւն**

Ժողովը լսեց բոլոր պատգամաւորների շրջանից բե-  
րած դատավարութեան վերաբերեալ որոշումները,  
որից երեւաց, որ բոլոր շրջանները, առանց բացառու-  
թեան, ուզում են դատավարութիւն, որովհետեւ Ժողո-  
վուրդը պահանջ է զգում, որ յեղափոխութիւնը իբրեւ  
արդարադատութեան պաշտպան իւր ձեռքն առնի Ժո-

20.- Ֆրանսերէն salve pante՛ն՝ համազարկ իմաստով:



դովրդի կեանքի առօրեայ բոլոր պահանջները եւ կարիքները: Ներկայացուցիչներն յայտնում են, որ դատավարութիւնը բացի այդ օգուտից ժողովրդին սերտ կերպով կապում է յեղափոխութեան հետ: Դատավարութիւնը սկզբունքով միաձայն ընդունուելուց յետոյ առաջարկեցին մի քանի բանաձեւեր դատավարութեան սահմանների մասին:

ա. Դատավարութիւնը ընդունել սկզբունքով, իբրեւ ժողովուրդի ճշունած դասի իրաւունքները պահպանող եւ ժողովրդին յեղափոխութեան հետ կապող մի միջոց: Անցաւ միաձայն:

բ. Դատավարութիւնը ընդունել ընդարձակ չափով ժողովրդական ամէն մի պահանջին բաւարարութիւն տալու համար եւ դորա համար ստեղծել առանձին մարմիններ՝ մասնագէտ մարդկանցից յեղափոխական պաշտօնական մարմինների կից սոցա հսկողութեան տակ:

Ոմանք առաջարկում էին բանաձեւի վերջին կէտերը փոխել՝ թէ դատավարական այդ մարմինները լինեն բոլորովին անկախ իրանց գործունէութեան մէջ յեղափոխական մարմիններից:

գ. Դատավարութիւնը ընդունել միայն սահմանափակ շրջանում, որոնց համար մեր եղած ոյժերը կարող են բաւականութիւն տալ առանց նոր մարմիններ ստեղծելու:

դ. Դատավարութիւնը դիւրացնելու համար գիւղերը բաժանել թաղական մասերի, թաղականներից ըստըրւած դատական մարմին կազմել, որոնք ընկերական դատով պարզեն գործի էութիւնը եւ ազդեն գոյութիւն ունեցող պետական դատարանի վրայ, վճիռը տալ կամ գործը քննել՝ համաձայն վերոյիշեալ թաղական դատարանի զեկուցման:

ԼԻՍՍ X

1906 թ. 1 Յունուարի առաւօտ 11ժ.

Ժողովը քննեց վերոյիշեալ առարկութիւնները եւ բանաձեւերը, աւելացնելով սրանց վրայ մի նոր բանաձեւ եւս:

Չժխտելով դատավարութեան բարոյական մեծ դերը, միանգամայն ներկայումս անկարող լինելով վարել դատավարութիւնը իր բարդ մտքով՝ առաջարկուում է հիմնել ժողովրդական երդուեալ-հաշտարար դատարաններ կից դաշնակցական մարմիններին եւ նրա հովանաւորութեան ու հսկողութեան ներքոյ. երդուեալ-հաշտարար դատարանները քաղաքացիական եւ քրէական ծանրակշիռ խնդիրներից խոյս տալով պիտի վարեն ընթացիկ թեթեւ դատեր եւ այնպիսի գործեր, որոնք պահանջում են կտրուկ եւ արագ լուծում ազգային եւ հասարակական տեսակէտից սպառնալի ծաւալ չստանալու համար: Դժգոհ կողմերին իրաւունք է տրուում

շրջանային բարձր ինստանցիաների<sup>21</sup> դիմելու:

կ. Կոմ-ի այս առաջարկը ընդունուեց միաձայն եւ ընտրուեց երեք հոգուց բաղկացած մի յանձնաժողով դատավարութեան սահմանները որոշելու համար, որ եւ պիտի ներկայացնեն ներկայ Շրջանային Ժողովի նիստեցից մէկուում:

Ժողովը որոշեց պարտաւորեցնել իւրաքանչիւր պատգամաւորի գաւառ վերադառնալուց յետոյ անմիջապէս ձեռնարկել մեր առժամանակեայ ներքին կանոնադրութեան իւրաքանչիւր կէտերի քննութիւնը եւ կոմիտէների քննութեան արդիւնքը մինչեւ այս Փետրուարի 1-ը ներկայացնել Կ. Կոմիտէին:

Պրոպագանդա եւ շոքիկներ.

Բոլոր ժողովականների կողմից նկատուեց, որ շրջաններում յեղափոխութիւնը չի ունենում յաջողութիւն այն պատճառով, որ պրոպագանդայի գործը կանոնաւոր հիմերի վրայ դրուած չէ: Ընդունելով պրոպագանդայի այս աչքի ընկնող պակասութիւնը եւ անհրաժեշտութիւնը յեղափոխական գործում եւ մասնաւորապէս Մրգաստանի նման մի վտանգուած ուսյոնում, առաջարկուեցաւ պրոպագանդան դնել կանոնաւոր հիմքերի վրայ, ունենալ դրա համար առանձին շրջիկներ, որոնք աչքի ընկնէին իրանց օրինաւոր վարք ու բարքով եւ պատրաստութեամբ: Շրջաններում թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար նոցա մէջ մտցնել մի ընդհանուր ուղղութեան մի օրինակութիւն յեղափոխական առանձին շիւրայի<sup>22</sup> միջոցաւ եւ քննել ու աչալուրջ հետեւել նոցա շրջաններում ունեցած գործունէութեան:

Թեր ու դէմ կարծիքներից յետոյ ժողովը ընդունեց հետեւեալ բանաձեւը.

Կ. Կոմիտէի անդամներից մէկի ղեկավարութեամբ կազմել մի մարմին, որ բացառապէս զբաղուի բանաւոր եւ գրաւոր պրոպագանդայով: Այդ մարմնի մէջ հրաւիրուում են ձեռնհաս անձինք, որոնք ընդունակ են ծրագրային նուրբ հարցերն ըմբռնելու: Այս մարմինը աշխատի պրոպագանդային ընդհանուր եւ որոշ ուղղութիւն տալ, առանձնապէս աջակցելով դասակարգային ինքնագիտակցութեանը, ընդունակ մարդկանցից շրջիկներ պատրաստել, ընդունակ դասախօսներ հրաւիրել կամ մշտապէս ունենալ. առանձին ուշ դարձնել գրաւոր պրոպագանդայի վրայ, որի համար մարմնի տրամադրութեան տակ դնել տպարանը: Դաշնակցութեան ընդհանուր ուղղութիւնը շօշափող հրատարակութիւնները պէտք է հաստատուին Կ. Կոմիտէի կողմից, որ պատասխանատու է այդ մարմնի գործունէու-

21.- Ատեանցներու:  
22.- Դպրոցի. հոս գործածուած է ուղղութեան իմաստով:

թեան համար: Կենտրոնական Կոմիտէն եկամուտի որոշ տոկոսը յատկացնելու է պրոպագանդային:

Դրուեց աշխատանքի բաժանման հարցը եւ սկզբունքով ընդունուեց: Այս հարցի քննութեամբ ուսյոնական ժողովը կը զբաղուի:

Ընտրուեց յանձնաժողով Կ. Կոմիտէի հաշիւները քննելու համար:

ԼԻՍՍ XI

1 Յունուարի երեկ. 5 ժ.

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ գինուորական ձայն ունեցող պատգամաւորները համարուում են ձեռնպահ՝ գինուորական ժողովի մասնակցելու պատճառով, որ գուզընթացաբար տեղի ունէր քաղաքում, ժողովը որոշեց նոցա բացակայութեամբ նիստերը օրինաւոր համարել եւ նոցա բացակայութեան պատճառը յարգելի ընդունել, մասնաւորապէս որ ձայների 2/3-ը կայ:

Կոմիտէ եւ Եմթակոմիտէ

Մրգաստանի ժողովը լսեց շրջաններից եկած պատգամաւորների զեկուցումները (թէ գրաւոր եւ թէ բանաւոր), որից երեւաց ամբողջ ուսյոնի պատկերը: Ընդհանուր դիտողութիւններից երեւաց, որ ենթակոմիտէները եւ կոմիտէները իրանց ունեցած յաջողութիւնների հետ միասին ունեցել են նաեւ անյաջողութիւններ: Անյաջողութիւնների պատճառ են եղել ընդհանրապէս հակայեղափոխական շարժումները (ինչպէս օրինակ խումբական կազմակերպուած գողութիւններ), դատավարական անյաջողութիւնները, կոմիտէների ազատ անդամ չունենալը, գործին նուիրուած մարդկանց պակասութիւնը, անդամների ծուլութիւնը, անձնական հաշիւները եւ փոխադարձ անհամաձայնութիւնները եւ այսպիսի մի շարք պատճառներ: Նկատուեցաւ նոյնպէս, որ մի քանի շրջանում սովորական են դարձել ծեծը, բռնութիւնը եւ այլ տեսակի հակայեղափոխական միջոցներ: Ռայոնական ժողովը այս առթիւ հրաւիրուում է ամէնքի ուշադրութիւնը՝ խոյս տալ այդպիսի անյարմարութիւններից եւ անհեռատես ձեռնարկութիւններից: Ընդհակառակը աշխատել յեղափոխական ոգին գործեցանել շրջաններում՝ խօսքի եւ համոզմունքի միջոցով: Յեղափոխութիւնը սուրբ գործ է՝ հիմնուած կամքի, խղճի եւ համոզմունքի վրայ, ուրեմն եւ այդ սկզբունքով էլ պէտք է առաջնորդուի:

Ժողովը լսեց նաեւ Մրգաստանի տեղական կոմիտէի հին կազմի գործունէութեան քննութիւնը մասնաժողովի արձանագրութեամբ<sup>23</sup>:

ԼԻՍՍ XII

Յունուար 2-ին, առաւօտեան

Կանոնի խաչի մասին

Կարմիր խաչի վարչութեան անդամներից մէկը հարց տուեց գաւառական պատգամաւորներին, թէ որտե՞ղ եւ որքա՞ն կանանց խմբեր կան եւ որքան յարմարութիւն, հնարաւորութիւն կայ միացնել նրանց Երեւանի Կարմիր խաչի հետ. յայտնեց, որ Կարմիր խաչի հետ միացել են արդէն Ազատ Դաշտում 20 խումբ, Արարատում 18, Լճափում 10 (մօտաւորապէս): Բացատրեց, որ Կարմիր խաչը մինչեւ այժմ զբաղուել է բանտարկեալներին, հայրուկներին օգնելով, իսկ խմբակները զբաղուել են մեծ մասամբ ինքնազարգացմամբ:

Մի քանիսը անհրաժեշտ էին գտնուում, որ կանայք իրաւունք ունենային եւ զուտ դաշնակցական խմբակներում գտնուելու, որ կազմակերպուէին երկսեռ խմբակներ. որովհետեւ այդ միջոցով միայն հնարաւոր է նրանց մտցնել ակտիւ յեղափոխական գործունէութեան մէջ, իսկական յեղափոխական դարձնել. իսկ այդ անհրաժեշտ է, քանի որ, ինչ էլ կ'ուզի լինի, մայրերն են սերունդ կրթում, ստրկամիտ կանայք իրենց արտասուքներով, այսպէս թէ այնպէս արգելք են հանդիսանում ամուսինների յեղափոխական գործունէութեան. միեւնոյն ժամանակ կանանց ներկայութիւնը ժողովներում տղամարդկանց աւելի աշխոյժ կը տայ, նոր եռանդ կը ներշնչի. երկսեռ խմբակներ հնարաւոր է կազմել, քանի որ գիւղերում կանայք եւ տղամարդիկ միասին աշխատում են, միասին պարում են, իսկ քաղաքում դեռ մի քանի տարի սրանից առաջ գոյութիւն ունէին երկսեռ խմբակներ: Միւսներն ասում էին, որ երկսեռ խմբակները մեծ անյարմարութիւններ ունին, որովհետեւ գիւղերում դեռ հասունացած չեն, նոյնիսկ մեղք են համարում կնոջ յեղափոխութեան մէջ մասնակցելը. գիւղերում, ճիշտ է, կանայք եւ տղամարդիկ միասին աշխատում ու պարում են, բայց հասարակական գործում կանայք երբեք չեն մասնակցում, տղամարդիկ արհամարհանքով են նայում կանանց մտքերի վրայ, նրանց կարծիքով «կնոջ մազը երկար է խելքը կարճ». ոմանք էլ երկսեռ խմբակները անպատակաւ յարմար էին գտնում այն տեսակէտից, որ կանայք ինքնուրոյն գործունէութիւն չեն կարող ցոյց տալ, երբ տղամարդկանց հետ միասին կը լինեն, ամէն գործ կը գցեն տղամարդկանց վրայ, իրենք ոչինչ չեն անի: Կարմիր խաչի վարչութեան մէկ անդամուհին ասում էր, որ Կարմիր խաչի գոյութիւնը ներկայ հանգամանքներում անհրաժեշտ է. եթէ մենք թոյլ տանք կանանց մասնակցել զուտ դաշնակցա-

23.- Արձանագրութեան տետրակի 21րդ էջի վերեւ գրուած է. «ժողովի քարտուղարն է եղել պ. Ա.: Ազգամուտը գրուած է ցնցուած է:

կան խմբակներում, Կ. Խաչի ոյթերը կը ջլատուեն, որովհետեւ մեծ տրամադրութիւն է նկատուում կանանց մէջ՝ Կ. Խաչից անցնել գուտ դաշնակցական խմբակները:

Պ. Կոմսը եւ ուրիշները շեշտում էին այն բանի վրայ, որ Կարմիր Խաչի վարչութեան վրայ ծանրացել է շարունակ Կենտր. Կոմիտէի օպեկան<sup>24</sup>, (Կենտր. Կոմիտէի Կարմիր Խաչի վարչութեան մէջ), որը վնասել է կանանց ինքնուրոյնութեանը. պէտք է ազատել նրանց այդ օպեկայից, որպէսզի նրանց մէջ յառաջ գան ինքնուրոյն, ռիսկով<sup>25</sup> յեղափոխականներ, որոնց թիւը [պէտք է] ամէն տեսակ ջանքով մեծացնել. պէտք է վերաբուժութեան կուրսեր<sup>26</sup> ստեղծել, գթութեան քոյրեր պատրաստելու համար:

Այս հարցի լուծումը յետաձգուեց, որովհետեւ Կ. Խաչի վարչութեան դրած գրաւոր հարցերը գտնուում էին Կ. Խաչի ներկայացուցչու մօտ, որը ժողովում ներկայ էր:

**Հայ-թորական ընդհարումների պատճառները եւ մեր տակտիկան**

Կոմս. Նախիջեւանում խաները հակահայկական շարժման գլուխն են անցել, բայց դժուար է որոշել, արդեօք հեղինակներն են նրանք, թէ գործիք. յամենայն դէպս նրանք շարժումը դրել են համախառնական հողի վրայ եւ կալուածատիրական ձգտումներ ունեն. որ իսկապէս համախառնական, նեղ ազգային ուղղութիւն ունի նրանց շարժումը՝ ապացուցուում է նրանով, որ բռնուել են զանազան տեղերում պրոպագանդիստ-մոլլաներ: Կառավարութիւնը ղեկավարում է թուրքերին, գտն է պաշտօնեաների համակրանքը նրանց կողմն է, թէեւ թուրքերը խաբում են կառավարութեանը: Հայ-թորական ընդհարումների առաջն առնել շատ դժուար է, եթէ կառավարութիւնը չփոխի իր վերաբերմունքը:

Կարծ. Համախառնական շարժում անպայման կայ եւ այդ շարժման գլուխը ինքը Սուլթանն է: Նրա համար հայկական հարցը մեծ նշանակութիւն ունի. Կովկասի հայկական ջարդերով նա ուզում է խեղդել տաճկահայերի շարժումը, նա ուզում է որ կովկասահայերը չօգնեն տաճկահայերին: Որ նրանք խոչոր ծրագրուած գործ ունեն՝ երեւում է նրանից, որ մենք չենք կարող մրցել նրանց հետ զէնք գնելու. նրանք միլիոններ են ծախսում միանգամից զէնքի վրայ, առանց ուշադրութիւն դարձնելու արժէքի վրայ: Մենք երկաթեայ տրամաբանութիւն պէտք է ունենանք. պէտք է դրանց վախացնել, որ հրաժարուեն իրենց մտադրութիւնից, ուրիշ հնար չկայ:

Մնացականներ. Հայը երբեք թուրքին չի հաւատացել եւ չի էլ կարող հաւատալ, որովհետեւ թուրքը ամբողջ դարերի ընթացքում կողոպտել է հային: Թուրքը թուրքին յանձնի ասում է՝ «ես թո՛ւ հայն եմ, որ կողոպտես»: Այժմ հայերը տնտեսապէս յառաջադիմում են, ի-

րենց ձեռքն են գցում կալուածներն ու առուտուրը, շընորհիւ յեղափոխութեան դիմադրում՝ թուրքերի կամայականութիւններին, վրէժխնդիր են լինում, գլուխ են բարձրացրել իրենց նախկին իշխանների, թուրքերի դէմ. բնականաբար թուրք բէգերը չեն կարող հաշտուել այդ նոր դրութեան հետ. նրանք հաւասար չափով կեղեքում են թէ՛ հայ եւ թէ՛ թուրք աշխատուորին, բայց օգտուելով թուրքերի ֆանատիկութեամբ<sup>27</sup>, աւազակային խմբեր են կազմում եւ ուզում են իրենց հին իշխանութիւնը վերականգնել, Կովկասը իրենց ձեռքը գրցել, իսկ դրա համար հայերի թիւը նուազեցնել:

Բաքուի դէպքը չէր կարող արձագանգ գտնել եւ մեծ ծաւալ ստանալ, եթէ թուրքերը ֆանատիկոս չլինէին եւ հայերը կազմակերպուած չլինէին:

Արմաւիրի ներկայացուցիչ. Համախառնական շարժում կայ. ապացոյց դրան այն, որ հարեւան թուրքերից մէկը ցոյց է տուել իրան մէկ թուրքիկ, որով հրաւիրում են հայերին կոտորել:

Քարաբեքը<sup>28</sup> ներկ. Նախիջեւանում թուրքերը թուով շատ են եւ տնտեսապէս աւելի բարձր են հայերից, հետեւապէս կոտորածները տնտեսական շարժառիթ ունենալ չէին կարող. նրանք սկզբում հրապուրում էին թալանով, իսկ այժմ թասիրի<sup>29</sup> հարց է առաջ եկել: Վերջին տարիների ընթացքում թուրք երիտասարդների մէջ նկատուում էր համախառնական շարժում, թելադրուած հեռուից, ապացոյց — Կենդանիներն<sup>30</sup> ուղղած նրա բարեկամի նամակը, որը յաջողուել է ձեռք բերել, եւ որի մէջ ասուած է «Սոյա մնչտա Տուրքիա, Տուրքիա, Տուրքիա»<sup>30</sup> այս շարժումը քաղաքական բնաւորութիւն է կրում. մինչեւ այժմ չէին սկսում, որովհետեւ վախենում էին կառավարութիւնից, որը ուժեղ էր: Խաղաղութիւնը շուտ վերականգնուել չի կարող. մեզ մեծ վտանգ է սպառնում, այդ պատճառով ուժեղ կերպով պէտք է զինել ժողովուրդին:

Արարատի ներկայացուցիչ (Անցորդ). «Կովկասեան վէրքերից»<sup>31</sup> պարզ երեւում է, որ Սուլթանի եւ Ցարի մէջ դաշինք գոյութիւն ունի հայերի դէմ. դեռ 98

24.- Իմաստը անժամօք օտար բառ: Կրնայ ունենալ ներկայացուցիչի իմաստ:  
25.- Դոս՝ յամրուգն, խիզախ իմաստով:  
26.- Դասընթացներ:  
27.- Սոլեռանդուքիւն:  
28.- Պատիւ, յարգ, վարկ:  
29.- Դայատեաց ռուս պաշտօնեայ, որ կը հրահրէր թաքաւորը քարոզելու համար հայերը: Շատերու կարգին այս մէկն ալ Նիկոլ Դումանի կարգադրութեամբ պիտի ահաբեկուէր Պաթուհի մէջ, դէպի Ռուսաստան փախուստի ճամբուն վրայ:  
30.- Բնագրին մէջ ռուսատառ. «Իմ երազանք՝ Թուրքիա, Թուրքիա, Թուրքիա»:  
31.- Ցարական վարչակարգի հայախալած քաղաքականութիւնը ծաղկող է. Ակնունքի ծանօթ յօդուածաշարքը, որ նախ 1899-ին սկսեալ «Դոշակ»ի թիւերուն մէջ, ապա առանձին հատորով լոյս տեսաւ:

թուականից Բօգոսլաւսկին ասում էր, որ թուրքերին պատրաստում է հայերի դէմ. հետեւաբար շարժումը քաղաքական բնաւորութիւն ունի:

Գրիչ. Այդ բոլոր պատճառներին պէտք է աւելացնել եւ պատմական թշնամութիւնը, ցեղական ատելութիւնը, որ մեր արեան մէջ կայ:

Ագատ-Դաշտի ներկ. Կոտորածների գլխաւոր պատճառը կառավարութիւնն է. նա տեսաւ կալուածների գրաւման ժամանակ, որ հայերը դիմադրում են իրեն եւ ուզելով խեղդել հայերի ըմբոստութիւնը, թուրքերին արձակեց հայերի վրայ:

Բարձր-Տեղի<sup>14</sup> ներկ. Ինչպէս մեր եւ հայ-կաթոլիկների մէջ փոխադարձ թշնամութիւն կայ, այնպէս էլ մահմեդական ցեղերի, շիաների եւ սիւննիների մէջ եւ դեռ աւելի ուժեղ, այնպէս որ համախառնականութիւն չի կարող լինել: Սա գուտ քաղաքական շարժում է, որովհետեւ թուրքը չի կարողանում հաշտուել այն մտքի հետ, որ մի ժամանակ այս երկիրը իրան էր պատկանում, իսկ այժմ ոչ. վերջին ժամանակներս հայերը ուժեղացել են, իսկ կառավարութիւնը թուլացել եւ նրանք սկսեցին այս շարժումը, եթէ կառավարութիւնը զսպի նրանց, այդ քաղաքական ցանկութիւնները կը մնան միայն բէգերի մէջ:

Աթաբա. Տնտեսական պատճառ չի կարող լինել, որովհետեւ հողերի մեծ մասը թուրքերին է պատկանում. հայկական կոտորածների, ինչպէս եւ հրէական ու միւս ջարդերի սկզբնապատճառը ռուս բիւրոկրատիան է, որը նպատակ ունի քնջել բոլոր ըմբոստ յեղափոխական տարրերին գործիք դարձնելով իր ձեռքում մութ ամբոխին. հայ-թորական ընդհարումները կը վերանան, երբ կը փոխուի կառավարութեան ուղղութիւնը, ուրեմն մենք պէտք է աջակցենք մեր իսկական թշնամու տապալուելուն:

Նախագահ (Աաթ). Մասնաւոր խօսակցութիւնների մէջ թուրքերը միշտ խաբում են, այդ պատճառով շատ էլ չպէտք է հաւատալ թուրքերի ցուցմունքներին այս կամ այն հարցի մասին: Շիաներին եւ սիւննիներին միացնելու նպատակով թուրքերի մէջ մի յառաջադիմական շարժում է յառաջ եկել. գիւղերում սիւննիները խորը ատում են շիաներին, իսկ քաղաքներում երիտասարդ հոսանքը քարոզում է վերացնել այդ 2 ցեղերի մէջ եղած տարբերութիւնը. սակայն այդ յառաջադիմական շարժումը ժամանակի ընթացքում յետադիմական, համախառնական է դառնում, ինչպէս համասլաւոնականը, համազերմանականը եւ այլն լուսաւոր երկրներում: Համախառնականութեան պրոպագանդիստներ նկատ-

ւել են Բուլղարիայում նոյնիսկ: Մի ծպտեալ թղթակցի թիւրիմացութեամբ Թագիւելը հրաւիրում է իր մօտ եւ աշխատում է համոզել նրան համախառնականութիւն քարոզել ամէն տեղ, գնալ Հնդկաստան. ասել է, որ թուրքերի առաջ մի քար կայ, որը պէտք է մի կողմ գլորել նախեւառաջ, դա հայերն են: Տնտեսական պատճառ էլ կայ. անցեալում ընդարձակ հողերի, ամբողջ երկրի տէրերն են եղել խաները, իսկ այժմ հայերը աւելի լաւ են ապրում թուրքերից, օրէնքները աւելի մեծ արտօնութիւններ են տալիս հայ գիւղացիներին. խաները իրենց տնտեսական-տիրապետական շահերից դրդուած ոգեւորում են թուրքերին համախառնական գաղափարով: Որոշ դեր է խաղում նաեւ թուրք ժողովուրդի թալանի բռնազղը: Բիւրոկրատիան մի միջոց է եւ ոչ թէ պատճառ. նա միայն ոյթ է տուել այդ շարժմանը. նա կարծես թէ ասում է թուրքերին - դուք ջարդէք հայերին, մենք էլ ձեզ կը ջարդենք: Մեր տակտիկան երկաթեայ պէտք է լինի, մինչեւ որ մենք չվերցնենք մեր առաջից այդ քարը, չենք կարող կռուել կառավարութեան դէմ:

Դուման. (ժողովի սկզբում չկար).- Հայ-թորական ընդհարումների պատճառների մասին խօսելն աւելորդ է, որովհետեւ, նախ մենք չենք կարող ճիշտ եզրակացութեան գալ մեր ձեռքի տակ ընդարձակ փաստեր չունենալու պատճառով եւ երկրորդ, որ ոչ մի նշանակութիւն չունի մեզ համար, թէ ի՞նչն է եղել ընդհարումների պատճառը. եթէ նոյնիսկ պարզենք, որ ընդհարումների պատճառը եղել է համախառնականութիւնը, կամ բիւրոկրատիան, եւ այլն, պատճառները վերացնել չենք կարող. երբ պատերազմը յայտարարուած է, չեն խօսում նրա ծագման պատճառների մասին: Պէտք է խօսել գլխաւորապէս տակտիկայի մասին, որի ընդհանուր ուղղութիւնը պէտք է կայանայ թշնամու ոյթերը ջլատելու եւ մեր ոյթերը ընդարձակելու մէջ, ինչպէս օրինակ՝ չէզոքացնել կռուից սիւննիներին, քրդերին, եզիդներին, կոզակներին, ռուս գիւղերներին եւ այլն, եթէ չի յաջողուի մեր կողմը գրաւել նրանց:

Առաջարկուեց 2 բանաձեւ պատճառների մասին.- 1) հայ-թորական ընդհարումների սկզբնապատճառը բիւրոկրատիան է, որին ժամանակի ընթացքում համախառնականութիւնը եւ այլ վերոյիշեալ պատճառները (քուէարկուելիս ստացաւ 8 ձայն). 2) Հայ-թորական ընդհարումների հիմնական պատճառը համախառնականութիւնն է, որին աջակցում են բիւրոկրատիան եւ այլ պատճառները (11 ձայն). (ձայների մեծամասնութեամբ ոչ մէկ բանաձեւն էլ չանցաւ):

Տակտիկայի վերաբերեալ Դումանը առաջարկեց հետեւեալ բանաձեւը, որը միաձայն ընդունուեց.-

«Ռայոնական ժողովը կռիւր թուրքերը դէմ համարում է անմիտ. եւ շուտափոյթ խաղաղութիւնը անհրաժեշտ: Այդ նպատակի կարելի է հասնիլ, եթէ մենք մի

ձեռքում ունենանք խաղաղութեան ձիթենի, իսկ միւսում չոմախ<sup>32</sup>, որ հարկաւոր դէպքում փոխարինի չաղ-դող ձիթենուն»:

XIII նիստը տես պ. Գասպարի թուղթը<sup>33</sup>.-

XIII ՆԻՍ

2 Յունուարի երեկ. 6.5 Ժ.

Կ. Խաչի ներկայացուցիչը առաջարկեց ժողովին իրենց ծրագրի մի քանի կէտերը քննութեան առնել եւ յաւելումներ անել, որի համար կարողացուց ամբողջ կանոնադրութիւնը, որ բաղկացած էր չորս գլխաւոր մասերից:

Առաջին մասը - Նպատակը ամբողջապէս թողնուց առանց փոփոխութեան:

Երկրորդ մասն է «Միջոցները», որի մէջ փոփոխութեան առնուց բացառիկ ծախսերի վերաբերեալ մի կէտը, որ կոմիտէի առանձին որոշումով էր լինում. այժմ Կ. կոմիտէն այդպիսի դէպքերում պարտաւոր է մանրամասն տեղեկութիւն տալ:

Յ-րդ մասի կազմի ծանօթ 1-ի միջից ջնջում է պատաւար բառը եւ բոլոր անդամներին այսուհետեւ երկու մասի պէտք է բաժանել. մշտական եւ իսկական:

Կ. Խաչի վարչութեան ներկայացուցիչը առաջարկեց ժողովին Կ. Խ. վարչութեան անդամների նոր ընտրութիւնների ժամանակ հին վարչութեան արժանաւոր անդամուհիներից առնուազը երկուսը ընդհանուր ժողովի կողմից վերընտրուէին:

Այս առաջարկն ընդունուեց:

Մրազրի Ծ-րդ կէտն այսպէս սրբազրուեց. «վարչութիւնը իր միջից ընտրում է նախագահ, գանձապահ եւ քարտուղար:

Երբ կարողացուց կանոնադրութեան 4-րդ կէտը - գործունէութիւնը, այս մասում Ռայոնական ժողովը կարելի էր համարեց աւելացնել հետեւեալը.- Կարմիր Խաչի կենտրոնական վարչութեան անդամուհիներից մէկը իբրեւ խորհրդատու անդամ կարող է ներկայ լինել նոր շրջանի Կ. կոմիտէի ոչ կոնսպիրատիւ<sup>34</sup> հարցերի ժողովներում:

Փոփոխութեան ենթարկուեց գործունէութեան 16-րդ կէտը եւ վերջնականապէս այսպէս խմբագրուեց. Ընդհանուր ժողովի համաձայնութեամբ. ժողովում է տեղեկութիւններ իւր շրջանի վտանգուածների մասին թէ՛ Դաշնակցութեան տեղական մարմնի միջոցով եւ թէ՛ ինքնուրոյն եւ օգնում է նրանց Դաշնակցութեան մարմնի եւ Կ. Խաչի վարչութեան փոխադարձ համաձայնութեամբ:

17-րդ կէտն եւս փոփոխուելով այսպէս խմբագրուեց. Կ. Խաչի կենտ. վարչութիւնը իր եկամուտի 1/20

մասը 3 ամիսը մի անգամ հաշիւների հետ միասին պէտք է ներկայացնէ Դաշնակցական Բիւրոյին:

Ժողովի ընդունեց հետեւեալ նոր կէտերը.

ա. Երեւանի Կարմիր Խաչի վարչութիւնը իր շրջանի մասնաճիւղերի համար պէտք է համարուի կենտրոնական Կ. Խաչի վարչութիւն:

բ. կենտ. Կ. Խ. վարչութիւնը լինելու է անկախ, այսինքն նա իրաւունք ունի գրագրութիւն վարել միւս շրջանների Կ. Խաչերի վարչութիւնների հետ, առանց Կ. կոմ.ի թոյլատուութեան մի միայն այդ մասին գեկուցանելով ի տեղեկութիւն:

գ. Կ. Խ. վարչութիւնը անհրաժեշտ դէպքերում պէտք է Կ. կոմ. հետ խառն ժողովներ ունենայ:

դ. Կ. Խ. վարչութիւնը իրաւունք ունի իր եկամտից որոշ գումար յատկացնել շրջկուհիներ ունենալու համար:

ե. Ըստ կանոնադրութեան՝ շրջանի Կ. Խ. վարչութիւնները իրաւունք ունեն իրենց մուտքից մի միայն 2% ծախս անել առանց թոյլատուութեան. բայց՝ ի նկատի ունենալով, որ շատ դէպքերում այդ տոկոսից աւելի ծախսի անհրաժեշտութիւն է գզացում, ուստի իրաւունք է տրուում այդ վարչութիւններին իրանց պատասխանատուութեամբ հոգալ այդ ծախսերը եւ հաշիւ ներկայացնել Կ. Խաչի կենտ. վարչութեան, որը քննութեան ենթարկելուց եւ անհրաժեշտ գտնելուց յետոյ միայն կ'ընդունէ աւելի արած ծախսերը:

Կ. Խաչի Կ. վարչութիւնը իր գործունէութեան անհրաժեշտ կէտերից մէկը պէտք է համարէ գթութեան քոյրերի խմբեր կազմակերպելու գործը:

Այս բոլորից յետոյ նախագահը յայտնեց, որ այժմ քննուելու է ընկեր Բէգզադէի բողոքը Կ. կոմիտէի դէմ, սակայն ինչ ինչ պատճառներով Կ. կոմ. [ի] անգամներ անկարող են ներկայ լինել այս ժողովին, այդ պատճառով էլ պէտք է յետաձգուի: Ժողովը այդ քննութիւնը թողեց հետեւեալ նիստին:

Ապա նախագահն անցաւ պ. Միհրանի գործին. առաջարկուեց կարդալ նամակը .....<sup>35</sup>:

32.- Մահակ:  
33.- Պ. Գասպարը վարած է XIII Գիստի քարտուղարութիւնը: Արձանագրութիւններու տեստակիւն մէջ ան կը գտնուի XIV-էն ետք: Շարունակականութիւնը պահելու համար՝ զայն կուտանք իր տեղին:  
34.- Գաղտնի. ոչ կոնսպիրատիւ՝ ոչ գաղտնի:  
35.- Կետերով բաց ձգուած տեղը ամենայն հաւանականութեամբ պէտք է իմանալ ընդունած նամակի ընթերցումը, որով ալ աւարտած կ'երեւի XIII Գիստը:

ՆԻՍ XIV

3 Յունուարի առաւօտ.

Այս անգամ նախագահելու պատճառով անկարող եղաւ արձանագրել նիստը. քարտուղար մնաց պ. Խանթաբը (?) (Տես արձանագրութեան տետրը)<sup>36</sup>:

ՆԻՍ XIV

3 Յունուարի առաւօտեան 10-ին

Ռայոնական ժողովը համաձայն իւր II նիստի որոշման զբաղուել ընկեր Դոմանի եւ ընկեր Բէգզադէի մէջ պատահած ընդհարման գործով, որ տեղի է ունեցել առաւել եւ կենտրոնական կոմիտէն այդ առթիւ իւր մի թուղթով կազմից դուրս է արել ընկեր Բէգզադէին եւ այդ բանը յայտարարել կոմիտէներին, ենթակոմիտէներին եւ դաշնակցական բոլոր ընկերներին:

Արժարժելով այս խնդիրը ընկեր Բէգզադէն գրաւոր կերպով ընկեր Շիրականցու միջոցաւ Ռայոնական ժողովին առաջարկել է հետեւեալ հարցերը.

I. Համարո՞ւմ է նրան Ռայոնական ժողովը Կ. կոմիտէի անդամ թէ՞ ոչ:

II. Ենթարկել լուրջ քննութեան իր եւ պ. Դոմանի մէջ տեղի ունեցած ընդհարման գործը եւ այն դէպքում, երբ Ռայոնական ժողովը նրան արդար կը ճանաչի, մի թուղթով յայտարարել դրա մասին ի գիտութիւն բոլոր շրջաններին:

Ժողովը կարելի էր համարեց հրաւիրել Բէգզադէին իւր բացատրութիւնները տալու համար. Հրաւիրուեցան նաեւ պաշտօնապէս Կ. կոմիտէի անդամները, որոնք ամառը այստեղ են եղել եւ ստորագրել են Բէգզատէին հեռացնելու որոշման տակ:

Ընկեր Բէգզադէն յայտնեց, որ իւր խնդիրը գտնուում է նաեւ Արեւելեան Բիւրոյի մօտ: Ռայոնական ժողովում հարց ծագեց որովհետեւ այդ խնդիրը գտնուում է նաեւ Արեւելեան Բիւրոյի մօտ, որ գուցէ արդէն իսկ որոշումն ունի այդ խնդրի առթիւ. արդեօք որքան յարմար է առանց այդ մասին հաստատ տեղեկութիւն ունենալու զբաղուել այդ խնդրի քննութեամբ: Ռայոնական ժողովը ձայների մեծամասնութեամբ անհրաժեշտ համարեց զբաղուել այդ հարցով, համարելով իւր իրաւասութեան սահմաններում կատարուած մի դէպք, որ իւր անմիջական լուծումը պէտք է ստանայ իւր Ռայոնական ժողովում: Ընկեր Բէգզադէն պատմեց իւր եւ պ. Դոմանի ընդհարումը մի քանի խօսքով, որից երեւաց, որ նա վիրաւորել է Դոմանին, որովհետեւ վերջինս իրան էր վիրաւորել: Մի կողմ թողնելով իւր եւ Դոմանի խնդիրը, որ Բէգզադէն համարում էր անձնական մի գործ, նա խնդրում է Ռայոնական ժողովին զբաղուել այն հարցով թէ՛ որքան իրաւունք ունէր Կ. կոմիտէն

այդպիսի մի խնդրի առթիւ իրան հեռացնել Կ. կոմիտէի կազմից: Եղան նաեւ առարկողներ, որ եթէ մեր կանոնադրութեան մէջ նախատեսուած է արտաքսման խնդիրը ընկերական շրջանից կանոնադրութեան 127 կէտով՝ թէ՛ «ծանր յանցանքի եւ զեղծումի պարագային՝ ամէն մարմին իր մէջէն կ'արտաքսէ յանցաւոր կամ զեղծարար անդամը, զգուշութեան համար իսկոյն տեղեկացնելով իր անմիջական բարձր մարմնին», սակայն ընկեր Բէգզադէն չի կատարել այնպիսի մի զեղծում, որ կարելի լինէր դատել վերոյիշեալ օրէնքով, ուրեմն եւ Կ. կոմիտէի որոշումը եղել է եթէ ոչ սխալ, գոնէ շատ եւ շատ խիստ:

Կ. կոմիտէի որոշման մասնակցող անդամները առարկեցին, որ Դոմանի եւ Բէգզադէի փոխադարձ վիրաւորանքները այն աստիճան սուր կերպարանք ստացան, որ սպասուում էր սարսափելի մի գործ, արիւնահեղութիւն, որովհետեւ ընկեր Դոմանը իւր վիրաւորանքի համար մեծամարտի էր հրաւիրել Բէգզադէին. խոյս տալու համար այդպիսի մի ծանր եւ անխորժ դէպքից, մանաւանդ, մեղաւոր ճանաչելով Բէգզադէին, որոշեցին միաձայն, որ Բէգզադէն Դոմանից ներողութիւն խնդրի եւ գործը խաղաղութեամբ վերջանայ: Բէգզադէն չենթարկուեց այդ որոշման եւ Կ. կոմիտէն իւր թիւրուցիկով նրան կազմից հեռացած յայտարարեց:

Ռայոնական ժողովը հակառակ երկու ձայնի կայացրեց հետեւեալ որոշումը. «Որովհետեւ Բէգզադէն չի ենթարկուել Կ. կոմիտէի ներողութիւն խնդրելու վրձուին, Կ. կոմիտէն իրաւունք ունէր նրան հեռացնել իւր կազմից»:

Ռայոնական ժողովի թոյլատուութեամբ արձանագրութեան մէջ ենք մտցնում քաղաքի ներկայացուցիչ պ. Ալեքովիսի կարծիքը.

«Դոմանի եւ Բէգզադէի ընդհարումը եւ վերջինիս բողոքը Կ. կոմիտէի դէմ քննելիս պարզուեց, որ Դոմանը վաղուց նախապաշարուած է եղել դէպի Բէգզադէն եւ մինչեւ այդ ընհարումը նոցա մէջ յաճախակի թեթեւ ընդհարումներ եւ հայեացքների տարբերութիւններ եղել են, մանաւանդ գիւնուորական լիազօրութեան վերաբերեալ: Օգոստոսի 27-ի նիստում Դոմանը ուզեցել է կծու, քողարկուած վիրաւորական կատակով խայթել Բէգզադէին եւ փոխադարձ կտրուկ վիրաւորանք է ստացել: Զփխտելով Դոմանի բարձր արժանաւորութիւնները, միեւնոյն ժամանակ չի կարելի չղատապարտել նորա այն վարմունքը, որ նա արդարութիւնը վերականգնելու նպատակով դիմել է հնադարեան բարբարոս միջոցի՝ մեծամարտի է հրաւիրել եւ սպառնացել է մերժման դէպքում սպանել իւր յեղափոխական ընկերոջը, եւ հրաժարուել է ընկերական դատից, հակառակ

36.- Արդարեւ XIV Գիստը, որ գետնդուած է XI-ի արձանագրութեան տեղ եւ XV-էն առաջ, կը սկսի տարբեր ձեռագրով:

մեր ծրագրի, որ պահանջում է ընկերական դատով վերջացնել ընկերների մէջ պատահած թիրիմացութիւնները: Կ. Կոմիտէի անդամները ոչ մի միջոց ձեռք չէին առել կռուող ընկերներին հաշտեցնելու, վիրաւորուած կողմին բաւարարութիւն տալու եւ ապագայ բարդութիւնների առաջն առնելու: Բէգզադէից պահանջել են ներողութիւն խնդրել առանց սակայն պաշտօնապէս գործը քննելու. եւ երբ նա մերժել է ներողութիւն խնդրել, պահանջելով ընկերական դատ, Կ. Կոմիտէի անդամները արիւնահեղութիւնից խուսափելու համար հակառակ կազմակերպական կանոնադրութեան 127 յօդուածի արտաքսել են իրանց ընկերոջը, երբ նա ոչ գեղծում է գործել եւ ոչ մի ծանր յանցանք: Կ. Կոմիտէն արտաքսելուց յետոյ իրաւունք ունէր միայն իրան անմիջական բարձր մարմին՝ Բիւրոյին յայտնել եւ ոչ թէ Կ. Կոմիտէներին, կոմիտէներին, ենթակոմիտէներին եւ դաշնակցական բոլոր ընկերներին: Հարկաւոր է թուցիկով յայտարարել, որ նախ՝ Բէգզադէն Դումանին անտեղի չի հասցրել վիրաւորանքը, եւ երկրորդ, որ նա ոչ մի ծանր յանցանք չի գործել եւ ի գուր է հեռացուել Կ. Կոմիտէի կազմից»:

Թուցիկի մասին, որով Կ. Կոմիտէն հեռացրել էր Բէգզադէին, Ռայոնական Ժողովը եկաւ այս եզրակացութեան. «Ռայոնական Ժողովը ապօրինի է համարում Կ. Կոմիտէի այդ թուցիկը, որով հեռացուած է ընկեր Բեգզադէն. բայց որովհետեւ թուցիկը արդէն յայտարարուած է, մի նոր թուցիկով յայտնել, որ Բէգզադէն հեռացուած է ոչ թէ Դումանին վիրաւորանք հասցնելու համար, ինչպէս ասուած է այդ թուցիկի մէջ, այլ Կ. Կոմիտէի միաձայն որոշման չենթարկուելու համար»:

XV Ժողով

3 Յունուարի երեկ. 7 Ժ.

Ժողովի սկզբին կատարուեց նախ եւ առաջ մի բանաձեւ անցեալ ժողովի նիստի վերաբերեալ: Այդ բանաձեւն հետեւեալն էր. 1908 թ. Յունուարի 3-ի Մրգաստանի Շրջանային Ժողովը լսելով Կ. Կոմիտէի եւ նոյն մարմնի անդամ պ. Բէգզադէի բանաւոր բացատրութիւնները՝ գտնելով որ Կ. Կոմիտէի այդ գործի առթիւ թողած թուցիկ շրջաբերականով հեռացնելու պատճառը սխալ է յայտարարուած, որոշեց յայտնել առանձին շրջաբերականով ի գիտութիւն շրջանի բոլոր կոմիտէներին եւ ենթակոմիտէներին, որ պ. Դումանին անձնական վիրաւորանք հասցնելու համար Կ. Կոմիտէն պահանջել է պ. Բէգզադէին ներողութիւն խնդրել եւ վերջինս չյարգելով Կ. Կոմիտէի միաձայն պահանջը տեղի է տուել այդ շրջաբերականի հրատարակմանը:

Ապա ժողովը լսեց պ. Ալուզի կարդացած միամեայ Հաշիւը, որ վերաբերում էր Մրգաստանի Կենտ. Կոմի-

տէի 1904 թ. Դեկտեմբ. 9-ից մինչեւ 1905 թ. Դեկտեմբերի վերջերի ժամանակամիջոցին:

Վերջը հաշիւները վերստուգող յանձնաժողովը յայտնեց իր քննութեան արդիւնքը, որ եւ առաջ ենք բերում: ա. 1902 թ. սկսած մինչեւ անցեալ 1905 թ. Բիւրոյի ուղարկած կտրօնները մնում են Կ. Կոմիտէի մօտ առանց ստուգուելու Բիւրոյի կողմից, չնայած որ Կ. Կոմիտէի կողմից հաշիւները փակուած են եւ կտրօնները մնում են մինչեւ օրս էլ Կ. Կոմիտէի գանձարանի մէջ:

բ. Անհրաժեշտ է անպատճառ ունենալ հաշիւների տակ վերստուգող յանձնաժողովի վաւերացումը, որ պէսզի կազմը վերընտրուած ժամանակը կասկածներ չառաջանան:

գ. Կտրօնները մեծաւ մասամբ շրջաններից անկանոն են ստացուած եւ այդ պատճառով կրկնակի աշխատանք է պատճառում Կ. Կոմիտէին եւ կասկածներ է առաջացնում շրջանի կոմիտէների մասին՝ օր. արտուծի(?) եւ այլն...

դ. Շրջանային կոմիտէները պէտք է հսկեն գանձապահների վրայ եւ առանձին արձանագրութիւն կազմեն ամէն մի անկանոն գրուած կտրօնների համար, իսկ մուտքի համար ամէն մի ամիս հաշիւը Մրգաստան ուղարկելիս՝ ուղարկ(են) եւ կազմի ստորագրութեամբ մուտքի եւ ելքի արձանագրութիւնները կտրօնների հետ:

ե. Անցեալ 1904 թ. Դեկտ. 9-ին ընտրուած յանձնաժողովը չէ քննել, ոչ մի հաշիւ, որի համար բարդուել է աւելի եւս հաշիւ տեսնելու գործը:

զ. Կ. Կոմիտէն ելքի բոլոր տեսակը մի տեսքում է ամփոփել, որը պէտք է ջոկել իւրաքանչիւր տեսակն առանձին տեսքերում. օր. փոխադրուած փողերի գումարն առանձին տեսքում, ռազմամթերքի եւ զէնքերի համար դուրս գնացած դրամը առանձին, կազմակերպական ծախքերն առանձին, զինուորական ծախքն առանձին եւ այլն:

Վերստուգող յանձնաժողովը այս եւ շատ ուրիշ թերութիւններ էր նկատել:

Կ. Կոմ. միւս անգամ Կ. Գալուստը՝ յարգելի պատճառով անկարող լինելով ամբողջ շրջանի ռազմամթերքի մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդել, տուեց թեթեւ ծանօթութիւն թէ բաժանած զէնքերի մասին, որոնց մեծ մասի փողն ստացուել է եւ թէ փամփուշտների, որոնց մասին շատ շրջաններից դեռ մինչեւ այժմ եւ ոչ մի հաշիւ չի ներկայացրած:

Շրջանային Ժողովը պարտաւորեցրեց պատգամաւորներին - շրջանները վերադառնալու ամէն մինչեւ ներկայ տարուայ Փետրուարի մէկը վերջացնել շրջաններում բաժանած փամփուշտների հաշիւը եւ ներկայացնել Կ. Կոմիտէին:

37.- Գալուստ Ալոյեան, ծանօթ Դարվիշ ծածկանունով:

Քարաբերդից՝ պ. Կոմսը շատ հակիրճ կերպով ծանօթացրեց ժողովականներին իրենց շրջանի եւ իրենց գործունէութեան հետ՝ կարդալով իր կազմած տեղեկագիրը:

Կենտրոնական Կոմ. 1905 թ. ամբողջ տարուայ հաշիւների ստուգութեան գործը յանձնուեց մի առանձին մարմնի՝ հետեւեալ անձինքներից՝ Օհանջանեան Ն., Բեանտարեան Արշ. եւ Գալստեան Յովհ[աննէս]:

Շրջանային Ժողովի անունով տրուած մի շարք բողոքներ ժողովը որոշեց յանձնել Կ. Կոմիտէի նոր կազմին՝ ի քննութիւն. այդ խնդիրներն էին՝ 1) Սրբավայրից՝<sup>38</sup> պ. Արայիկինը, 2) Ռուբէնինը, 3) Վայոց Ձորի շրջանի կոմիտէինը եւ 4) Վայոց Ձորի ներկայացուցչինը:

Ժողովը բոլոր օրակարգի հարցերի մասին իր որոշումները տալուց յետոյ՝ դիմեց ընտրութեանը: նախ կազմուեց թեկնածուների մի ցանկ, որոնցից ձայնից

Փաստ. 297-35

Գ 1.- Հ. Յ. Գ. ՄՐԳԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԲՈԼՈՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ

1906 Մարտ-Ապրիլ ամիսներուն կայացած Հ. Յ. Գ. Արեւիկեան մարմիններու Ռայոնական Ժողովէն (տես «Նիւրն»-ու Բ. հատոր, բ. տպագրութիւն, էջ 258-324) անմիջապէս ետք, Մայիս 21-27ին կը գումարուի Մրգաստան-Երեւանի Ռայոնական, աւելի ճիշդ է ըսել Շրջանային Ժողովը, որուն որոշումներէն քաղուածքներ հրատարակուած են ամսագրին շրջաբերականով (փաստ. 297/87):

Հայ-քաթարական ընդհարումներու տաք այս շրջանին աջակողմեան եւ ձախակողմեան մտայնութեանց բախումը, երիտասարդութեան մէկ կարեւոր հատուածի տուած առաջնահերթ կարեւորութիւնը կովկասահայութիւնը յուզող առաւելարար քաղաքական, սոցիալական եւ ընկերային խնդիրներուն, բնականաբար տագնապ պիտի յառաջացնէին յատկապէս մարտական այն շրջանակներուն մէջ, որոնք Հ. Յ. Գաշնակցութիւնը ստեղծուած կը համարէին քաթարաբար, ինչպէս այն ատեն սովոր էին ըսելու՝ Տաճկա-

մեծամասնութեամբ ընտրուեցին:

1) Շելկովնիկեան՝ 31 ձայնով, 2) Կոմս՝ 28 ձայնով, 3) Տիգրանեան 27 ձայնով, 4) Չիլիկարեան 27 ձայնով, 5) Ալոյեան Գ. 27 ձայնով, 6) Սարգիս<sup>39</sup> 28 ձայնով. մնացածները կէսից պակաս ստացած լինելով չընտրուած համարուեցին (նոյնիսկ անձնափոխանորդ: Երկրորդ անգամ անձնափոխանորդ ընտրեցին՝ 23 ձայնով ընտրուեց Օհանեան եւ 18 ձայնով Օհանջանեան Ռ.:

Ժողովի վերջը Շրջանային Ժողովը իր շնորհակալութիւնն յայտնեց Կ. Կոմիտէի նախկին կազմին եւ ապա պ. Դումանին, որ կարողացել են այդպէս առաջ տանել Մրգաստանի Դաշնակցութեան գործը:

38.- Վաղարշապատ, Էջմիածին:  
39.- Սարգիս Օհանջանեան, ծանօթ՝ Ֆար-Ղատ ծածկանունով:

Սրանով Մրգաստանի Կ. Կոմիտէն հրաւիրում է իր շրջանում գտնուած բոլոր կոմիտէներին, որ սովորականի նման իրանց միջից անդամներ ընտրեն եւ մինչեւ Մայիսի 18-ին ուղարկեն Մրգաստան մի քանի կարեւոր, այնպէս տաճկերի հարցերի մասին խորհրդակցելու եւ որոշումներ կայացնելու:

- Պարագման նիւթեր լինելու են.
- 1) Կ. Կոմիտէի պակաս անդամների փոխարէն լրացուցիչ ընտրութիւններ անել.
- 2) Կարուածատիրական, համայնական հողերի, նրանց բաժանման եւ այլ մի քանի հարցերի մասին խորհրդակցելու եւ տեղեկութիւններ տալու:
- Սնդրուում է նմանապէս, որ ձեր շրջանի հաշիւներն, աչքի ընկնող անհրաժեշտ հարցերը ներկայացնել եւ խորհրդակցութեան նիւթ դարձնել:

ՄՐԳԱՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵ

Մայիսի 1906 թ.



Փաստ. 297-76

**Գ 2.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ<sup>1</sup>**

Մրգաստանի Շրջանային ժողովը թուով 14 հոգի, խորհրդակցութեան առնելով Ընդհանուր ժողովի զբաղմունքների օրակարգը՝ հետեւեալ եզրակացութեան յանգաւ.

Օրակարգի առաջին բաժինը, ձեւական եւ գուտ գեկուցում-տեղեկութիւն համարելով, անցաւ միւս բաժինների հական կէտերին այն չափով, որչափով դրանք կապ ունին Մրգաստանի եւ կովկասեան ռայոնական գործի հետ:

**I Կուսակցութեան վերաբերմունքը դէպի քարեգործական-կուլտուրական ընկերութիւնները**

Ի նկատի ունենալով, որ բոլոր կուլտուրական-բարեգործական ընկերութիւն կոչուածները, նախ հանդիսանում են բազմազոյն տարբեր-տարբեր աշխարհայեացքի ու տեսակէտի, տարբեր դասակարգի եւ տարբեր շահերով ու ձգտումներով շահագրգռուած անձնաւորութիւններից.

Երկրորդ, որ դրանց յառաջադրածը մի բուրժուական, ոչ աշխատաւորական պայխատիւ<sup>2</sup> է.

Երրորդ, որ նրանք իրենց ամբողջ գործունէութեամբ, միեւնոյն ժամանակ, աշխատաւոր տարր են թէ քաղաքում եւ թէ մանաւանդ գիւղում, ծուլութիւն եւ օտարախնամութիւն են սովորեցնում՝ որոշեց բացասական վերաբերմունք ցոյց տալ դէպի այդ ընկերութիւնները եւ մասսաների շարքում ձգտել բարձրացնել նրանց ինքնօգնութեան, ինիցիատիւ<sup>3</sup> եւ սեփական ոյժերով եւ սեփական միջոցներով առաջ գնալու ձգտումը:

**II Վերաբերմունք դէպի մամուլն ու օրականութիւնը**

Ի նկատի ունենալով, որ որոշ հրատարակութիւններ, որոնք դեմոկրատ-լիբերալ բնաւորութիւն ունեն, իրենց արած աշխատանքով, այսպէս կամ այնպէս քարոզիչ են հանդիսանում այն գաղափարների, որոնց տարածելով շահագրգռուած ենք մենք — հաշտ վերաբերմունք ունենալ դէպի նրանց եւ աշխատել նրանց շրջանակներից տարածել մեր տեսակէտներն ու նպատակները:

**III Մեր վերաբերմունքը դէպի քարոզողական գործը**

Ի նկատի ունենալով, որ դպրոցներն ուղղակի թէ անուղղակի կերպով հանդիսանում են մեր գաղափարների տարածողը, հիմնաւորողը եւ արմատացնողը, ուստի կազմակերպութիւնն անպայման շահագրգռուած

լինելով, աշխատելու է ամէն կերպ աջակցել դպրոցական գործին եւ նրանց կառավարչութիւնն յանձնել գիտակից, աշխատաւորական, յառաջադէմ եւ իրազեկ<sup>4</sup> անձնաւորութիւններից կազմուած մարմինների ձեռքը:

**IV Մեր վերաբերմունքը դէպի կաթողիկոսի ընտրութիւնը**

Ի նկատի ունենալով, որ եկեղեցու կազմակերպութեան այդ գլուխը հանդիսանում է հակաաշխատաւորական դիրքի ու մտածողութեան մի դասակարգի ներկայացուցիչ.

Երկրորդ, որ սոց[իալիստական] կուսակցութեան ամէն կերպ հակասում է գնալու այդ եւ նման դասակարգերի տեւողական կեանքին ու դիրքին.

Երրորդ, որ կաթողիկոսի ընտրութեան մասնակցութիւնը, իւր պրակտիկ բնաւորութեամբ հակասում է մեր աշխատաւորութեանը քարոզածներին եւ՝

Չորրորդ, որ մասնակցութեամբ գալիս ենք փակելու աշխատաւորութեան աչքերը եւ նրա[ն] մօտեցնել հոգեւորական կազմակերպութեանը եւ սրա քարոզած գաղափարներին, որոնք ինչպէս վերեւ արտայայտուեց՝ հակասում են սոցիալիստական հասկացողութեանն ու ձգտումներին, ոչ մի կերպ չմասնակցել կաթողիկոսական ընտրութիւններին, թէ որպէս կուսակցութիւն եւ թէ որպէս անհատ:

**V Մեր դիրքը դէպի ռուս կառավարութիւնը եւ ռուս կուսակցութիւնները**

Ի նկատի ունենալով, որ քաղաքական վերջին մթնոլորտը եւ իրերի յատուկ դասաւորութիւնը հասարակական տարրերին, երկու մեծ հատուածների է բաժանում, որ աջակողմեան բանակը շատ մօտիկ ապագայում տէր եւ տնօրէն պիտի դառնայ բովանդակ Ռուսաստանին եւ

- 1.- Արձանագրութիւն խորագիրը կրող այս փաստաթուղթը (պատճեն) կը բաղկանայ 14 փոքրադիր ձեռագիր էջերէ, թուական չունի. էջն գլուխը գրուած է Մրգաստան: Պոսթընի 7. 3. 7. արխիւի ցուցակը 297-76 փաստաթուղթին դիմաց առանց ամսաթիւի կը նշէ. Արձանագրութիւն Մրգաստանի Երջ. ժողովի, թուական՝ 1906: 297-87 թուահամարով ունիցք տպագիր շրջաբերականի ձեւով «7. 3. 7. Մրգաստանի Ռայոնական ժողովի որոշումները» (կայացած 1906 թ. Մայիսի 21ից մինչեւ 27ը): Արդեօ՞ք խօսքը կը վերաբերի միեւնոյն ժողովին: Յամեւայն դէպս, յաջորդաբար կու տանք անթուակիր ու անստորագիր այդ նամակը եւ 4. 4.ի տպագիր շրջաբերականը:
- 2.- Ժամանակաւոր դարձան, քողարկում:
- 3.- Նախածեռութիւն:
- 4.- Բնագրին մէջ երագիկ:

նոյնիսկ պետական մեխանիզմին:

Երկրորդ, որ այդ առաջարկը իր դէմ ունենալու է բոլոր ընդդիմադիր տարրերին առանց ազգի, կրօնի եւ կուսակցութեան խտրութեան.

Երրորդ, որ դրա հետ նաեւ այլ պայմանների շնորհիւ, կարող ենք սպասել ռուսական յեղափոխութեան պոռթկումին ինչ գոյնի էլ լինի նա.

Չորրորդ, որ այդ պոռթկումը բնական հետեւանք է վերջին ժամանակի գորեղ ռեակցիայի<sup>5</sup> արդիւնք ընդհանուր հայածանքների, որոնք մեր վերաբերմամբ աւելի գորեղ անդրադարձում ունին որպէս ծայրագաւառներ, որպէս օտարազգի եւ որպէս կովկասում աչքի ընկնող յեղափոխական տարրի, ռուսի հակադէմ շարժում ստեղծել կառավարութեան ոտնձգութիւնների դէմ:

Այս նպատակով Մրգաստանի Շրջանային ժողովը կարելու է համարում, անպայման համախոհ եւ հարազատ վերաբերմունք ցոյց տալ դէպի Ռուսաստանի միւս կուսակցութիւնները, մանաւանդ աշխատաւորական կուսակցութիւնները, եւ հրաւիրել միւս կուսակցութիւնների մի կոնֆերանս<sup>6</sup> մշակելու ընդհանուր տակտիկ<sup>7</sup> ու գործունէութեան եղանակ եւ ստեղծել բոլոր կուսակցութիւնների միջկուսակցական մի մարմին՝ դեկավարելու (համար) քաղաքական հայածանքների դէմ ձեռնարկելիք կարելու քաղաքական կոխը:

Միւս կողմից ներկայ պակայ պայմաններումն ընդհանրութեան արժանի համարելով գիտակից, իսկական յեղափոխական միտք, ուղեղ ունեցող տարրերին, մանաւանդ ինտելիգենտ<sup>8</sup> տարրին, Շրջանային ժողովը կարելու է համարում ամէնից առաջ սերտ կազմակերպութեան մէջ դնել ինտելիգենտ, գիտակից եւ անձնուրաց տարրին՝ հակընդդէմ շարժումը աւելի գիտակից ու անվհատ առաջ մղելու համար:

**VI Մեր աշխատաւորական դասակարգային գործունէութիւնը**

Շրջանային ժողովը միանգամայն կարելու է համարում դասակարգային կոխը իր ամբողջ բովանդակութեամբ, համաձայն մեր հիմնական տեսակէտի աշխարհայեացքի՝ թէ բանուորութեան, թէ արհեստաւորութեան եւ թէ գիւղացիութեան շարքերում, սակայն հիմնուելով ընկերների մի շարք տուած ուշադրութեան արժանի բացասական տեղեկութիւնների վրայ, որոնք վերաբերում են կազմակերպութեան մէջ մտնող տարրերի անորոշ գոյնին, կարելու է համարում ամէն կերպ աշխատել ինչպէս Ընդհանուր ժողովի այնպէս էլ մեր կազմակերպութեան մէջ մտնող տարրերի մանրամասն ուսումնասիրութիւնն առաջ մղելու, որպիսի աշխատանքը դիւրութիւն կը տայ առաջ քաշել իսկական աշխատաւոր տարրեր:

բ. Բոլոր տեսակի՝ արհեստակցական, բանուորա-

կան, գիւղացիական եւ կոոպերատիւ<sup>9</sup> միութիւնների համար առանց յետաձգելու մշակել մի-մի կանոնադրութեան նախագիծ, որի մէջ ըստ տեղի պայմանների կարելու փոփոխութիւններ մտցնելու իրաւունքը վերապահել շրջանների մարմիններին.

գ. Բոլոր տեսակի միութիւններն լինելու են անպայման կուսակցական, ի նկատի ունենալով ոչ թէ նրանց տնտեսական-սենդիկալիստական բնաւորութիւնն կըրող պայքարը, այլ նրանց քաղաքական իդէալները, որոնք չափազանց խոր տարբերութիւններ ունեն իրականութեան մէջ, որպիսի հանգամանքը այդ միութիւններին մղելու է անշուշտ որոշ կուսակցութեան շարքը:

**VII Մեր դիրքը Պարսկաստանի վերաբերմամբ**

Ի նկատի ունենալով, որ Պարսկաստանի մէջ ազատ կարգեր ունենալով շահագրգռուած է նաեւ այնտեղի հայ հատուածը.

Երկրորդ, որ Պարսկաստանի ազատ կարգերը ապահովելու են մեր ճանապարհը, տաճկական ռեակցիայի ժամանակ դէպի Երկիր:

Երրորդ, որ կռիւր բռնակալութեան դէմ Պարսկաստանում գրաւելու է ազգերի համերաշխութիւն Երասխի միւս ափում.

Չորրորդ, որ Պարսկաստանի շարժումը բնական ճանապարհով ազդելու է նաեւ Ռուսաստանի բնակչութեան հոսանքների մտքի ու հոգի վրայ:

Հինգերորդ, որ Պարսկաստանի շարժման մէջ ոյժերի կատարեալ մարզումն է տեղի ունենում, եւ իր որոշ պատմական-քաղաքագիտական տեսակէտներից գուցէ եւ ամբողջական շարժումն է հանդիսանում Ռուսաստանի դէմ:

Մրգաստանի Շրջանային ժողովը, կարելու է համարում, որ այն ակտիւ մասնակցութիւնը, որ ունէր կազմակերպութիւնը Պարսկաստանի յեղափոխութեան մէջ, շարունակել նոյնութեամբ ըստ պահանջին ձեռք-ձեռքի տուած տեղի յեղափոխական տարրերի հետ:

**VIII Շրջանների բաժանումը**

Ի նկատի ունենալով, որ վերջին ձգտումները շրջանների նոր բաժանման վերաբերմամբ, գուրկ է ունէր հողից եւ միւս կողմից հակասում է մեր ապակենտրոնական ֆեդերատիւ իդէալին, ժողովը խիստ բողոքում է այդ ձգտման դէմ եւ կարելու է համարում նկատել, որ

- 5.- Յետադիմութեան:
- 6.- Յամաժողով, համագումար:
- 7.- Մարտավարութիւն:
- 8.- Մտաւորական:
- 9.- Յամագործակցական:

եթէ նախկին բաժանման սահմաններում բաժանում էլ տեղի ունենայ, այդ դէպքը լինի մեծ ռայոնների վերաբերմամբ, ոչ թէ դէպի կենտրոնացումը մղուելով, այլ ընդհակառակը դէպի ապակենտրոնացումը ձգտելով:

**IX Բիւրոների տեղափոխութիւնը**

Այս խնդրի վերաբերմամբ, ժողովը թողնում է իր ներկայացուցչին, իր կողմից միայն խորհրդակցութեան առնելով Արեւմ. Բիւրոյի հետ կապուած «Դրօշակ» ի հրատարակութեան տեղի մասին:

Շրջանային ժողովը գտնում է, որ «Դրօշակ»ը պէտք է լինի միակ պաշտօնական օրգանը, ոչ այս հատուածի շրջանում եւ ոչ էլ այն հատուածի շրջանում, որպէսզի կարողանայ իր վեհաժողովը պահել ընդհանուրի համար, եւ մանաւանդ Եւրոպայի համար:

Այդ պատճառով Շրջանային ժողովը կարելու է գտնում, «Դրօշակ»ը թողնել իր տեղում, հրատարակել խիստ պաշտօնականի սահմանում երկու շաբաթը մէկ, պարզաբանելով բազմաթիւ տեսական կուսակցական հարցեր կամ շաբաթը մէկ կամ երկու շաբաթը մէկ հրատարակել՝ «կուսակցական տեղեկութիւնը»<sup>10</sup> անուան տակ յաւելուած: Կանոնաւորել թերթի առաքումը, որը ներկայումս օգտակար է կատարել Տաճկաստանի վրայով տեղափոխութեան ծախքեր համեմատական սիւտեմով ձգել կենտ. Կոմիտէների վրայ. պարտաւորեցնել բոլոր ընկերներին բաժանորդագրուել:

**X Կիսապաշտօնական թերթի վերաբերմամբ**

Շրջանային ժողովը կարելու է գտնում կամ ունենալ պաշտօնական թերթ, թէ ծախքի եւ թէ բովանդակութեան տեսակէտից, կուսակցութեան նախաձեռնու-

թեամբ եւ ղեկավարութեամբ որպիսի դէպքում խմբագիրը ընտրել մօտիկ ընկերներից, որոնք անձնագրահովութիւն կ'ունենան մի քանի ամիս բանտ նստել տնտեսելով կուսակցութեան հազարները: Կամ թերթերը թողնել կուսակցական ընկերների սեփական նախաձեռնութեան եւ պատասխանատուութեան տակ կարիք եղած դէպքում նիւթական օժանդակութիւն տալով, այն էլ փոխարինութեան պայմանով:

XI Սիւտեմատիք դասընթացներ հիմնել բիւրոյական ռայոնների կենտրոնում. իւրաքանչիւր Կ. Կոմիտէի շրջաններից հրաւիրել ընդունակ պրոպագանդայի գործին յարմար մարդիկ պատրաստելու, որոնց ծախքը կըրելու են Կ. Կոմիտէների մարմինները:

XII Ունենալ հրապարակային դասախօսութիւններ ըստ կարելոյն շատ, որի համար աւելի քան հմուտ ընկերների շրջագայութիւնը մղել դէպի գաւառները:

XIII Իւրաքանչիւր Կ. Կոմիտէի մարմինը կանոնաւոր դրութեան մէջ դնել, եւ դրանց մէջ պարտաւորական անել աշխատանքի բաժանումը:

XIV Շրջանային ժողովը առաջարկում է չտարուել մի հատուածով, կատարել ոյժերի կանոնաւոր եւ համեմատական բաշխում, արտաքին կազմակերպութիւնից չկախուած պատճառների հարկադրութեան դէպքում էլ գոնէ ոյժերի փոխանակութիւն կատարել, որպէսզի գործը ամէն տեղ կարելի լինի որոշ աստիճանի վրայ պահել:

10.- Բնագրից մէջ ուսատառ:

Փաստ. 297-87

**Գ 3.- ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

(Կայացած 1906 թ. Մայիսի 21-ից մինչեւ 27-ը)

**1. Պրոպագանդա**

Կենտրոնական Կոմիտէն շրջանում եղած ձեռնհաս մարդկանցից կազմում է Պրոպագանդայի կենտրոնական Մարմինը, որը պրոպագանդային վերաբերեալ հարցերում օժտուած պէտք է լինի լայն իրաւունքներով. պրոպագանդայի մարմնի տրամադրութեան տակ ռայոնական ժողովը (իսկ մինչեւ հետեւեալ ռայոնական ժողովի բիւջէ հաստատելը — կենտրոնական Կոմիտէն) ղեկում է մի որոշ գումար պրոպագանդայի կարիքների համար: Պրոպագանդայի Մարմինն է վերապահուում:-

1) Բանաւոր եւ գրաւոր պրոպագանդա մղել Դաշնակցութեան հիմնական ծրագրի եւ Կովկասեան գործունէութեան նախագծի սկզբունքները ժողովրդակա-նացնելու համար. շարունակ շեշտել, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր հութեամբ եւ գործունէութեամբ հայ աշխատաւոր ժողովրդի տնտեսական եւ քաղաքական շահերը պաշտպանող մի կուսակցութիւն է եւ որ հայ աշխատաւոր ժողովրդի շահերը պահանջում են ապահովել հայի ազգային եւ քաղաքական գոյութիւնը:

2) Շրջաններում գրադարաններ հիմնել. եւ

3) Աշխատաւոր ժողովրդի տնտեսական եւ սոցիալական դրութիւնը հետազօտել (ստատիստիկական տեղեկութիւններ հաւաքել) ուսումնասիրութեան համար:

**2. Չտանց խնդիր**

Շրջիկների եւ գրաւոր հրատարակութիւնների միջոցով զօրեղ պրոպագանդա մղել վերոյիշեալ սկզբունքները (§ 1.) ժողովրդականացնելու համար եւ գտել մեր շարքերը այն բոլոր տարրերից, որոնք իրենց համոզմունքներով ու գործերով անհամապատասխան են Դաշնակցութեան յիշեալ սկզբունքներին: Յետագայ ընտրութիւնների ժամանակ պէտք է աշխատել ընտրել տալ յեղափոխական ջիղ ունեցող մարդկանց, որոնք ընդունակ կը լինեն պաշտպանելու աշխատաւոր ժողովրդի շահերը: Ընտրութիւնները կայացնել .....

**3. Մրգաստանի ռայոնը բաժանելու հարցը**

Որովհետեւ Մրգաստանի մէկ կենտր. Կոմիտէի համար անհնարին է դարձել ղեկավարել գործը շրջանի մե-

ծութեան եւ գործերի բարդութեան պատճառով, եւ որովհետեւ մի քանի կոմիտէական շրջաններ շատ հեռու են ընկած կենտրոնական քաղաքից, սկզբունքով ցանկալի համարուեց բաժանել Մրգաստանի ռայոնը 2 կամ 3 կենտրոնական կոմիտէներով: Կենտրոնական Կոմիտէն, մինչեւ հետեւեալ ռայոնական ժողովը, հնարաւորութիւն եղած դէպքում, կարող է, ըստ իր հայեցողութեան նոր կենտրոնական կոմիտէներ կազմել եւ հաստատել տալ նրանց պատշաճաւոր կարգով:

**4. Բիւջէ**

Ռայոնական ժողովը իր իրաւունքը համարելով հաստատել կենտր. կոմիտէի ու շրջանային կոմիտէների եւ եւ մուտքի նախահաշիւը, յանձնարարեց կենտր. կոմիտէին հետեւեալ ռայոնական ժողովին ներկայացնել թէ կենտր. կոմիտէի եւ թէ կոմիտէների վերջին 3 տարուայ դրամական մանրամասն հաշիւները եւ հետեւեալ տարուայ նախահաշիւը: Նախկին տարիների եւ եւ մուտքի հաշիւների հիման վրայ ռայոնական ժողովը կը հաստատի հետեւեալ տարուայ եւ եւ մուտքի նախահաշիւը:

Մինչեւ որ ապագայ ռայոնական ժողովը կը հաստատի կոմիտէների նախահաշիւը, շրջանային կոմիտէները իրաւունք պիտի ունենան ծախսելու իրանց եկամուտի 2 տոկոսը. իսկ դրանից աւելի ծախսելու համար, պէտք է ստանալ կենտր. Կոմիտէի թոյլտուութիւնը:

**5. Պատրաստութիւններ Ընդի. ժողովի համար**

Որպէսզի Մրգաստանի ներկայացուցիչը մօտ ապագայում կայանալիք Դաշնակցութեան ընդհանուր ժողովին կարողանայ ներկայացնել ամբողջ շրջանի կարծիքները, կենտրոնական կոմիտէն պէտք է ամենաքիչը 2 ամիս առաջ ուղարկի Ընդհանուր ժողովում դրուելիք հարցերի ցուցակը բոլոր կոմիտէներին: Կոմիտէները իրենց շրջանների ընկերների հետ պէտք է խորհրդակցեն այդ հարցերի մասին եւ իրենց շրջանների կարծիքները ներկայացնեն Մրգաստանի Ռայոնական ժողովին, որը պիտի հրաւիրուի Ընդհանուր ժողովից գոնէ 3 շաբաթ առաջ: Մրգաստանի Ռայոնական ժողովը այդ շրջանային կարծիքները մշակելուց յետոյ իր ընտրած ներկայացուցիչ հետ կ'ուղարկի Ընդհանուր ժողով:

6. Երջանային տեսուչներ

Փաստ. 297-19

Յանկայի համարուեց, որ ամէն մի շրջանային կոմիտէի, կամ մի քանի կոմիտէների գործերին որոշ ուղղութիւն տալու եւ մարմինների յեղափոխական գործունէութեան վրայ հսկելու համար կենտրոնական կոմիտէն ուղարկի տեսուչներ, որոնք պիտի մասնակցեն կոմիտէի ժողովներին մէկ ձայնի իրաւունքով:

7. Կոմիտէների հաշուետուութեան մասին.

Պարտաւորութիւն դրուեց շրջանային կոմիտէների վրայ գոնէ 2 ամիսը մէկ անգամ մանրամասն տեղեկագիր ուղարկել կենտրոնական կոմիտէին իրենց եւ խումբերի յեղափոխական գործունէութեան ու նիւթական հաշիւների մասին:

8. Մի քանի խոշոր դատերի մասին.

.....  
.....  
.....

Այս որոշումներով պէտք է ղեկավարուեն մեր շրջանում գտնուած բոլոր դաշնակցական մարմիններն ու ընկերները:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ՄՐԳԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

14 Յունիսի 1908 թ. Մրգաստան

Հ. Յ. Դաշ. տպարան

Գ 4.- ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

11 Յունիս, 08. Մրգաստան

Սիր[ելիք] (Մ[եծ] Քաղաք)<sup>11</sup>

Բացի այն, որ ներկայ դժբախտ պայ[մա]ններում չենք կարող ապրել «թարմ երիտասարդութեան» ստեղծած դասակարգային մթնոլորտում, ինքս էլ հիւանդ եմ եւ պէտք է զնամ բժշկուելու: Թէ մէկի եւ թէ միւսի համար ես մի քանի շաբաթ առաջ արդէն յայտնել եմ այստեղի Շրջանային ժողովին եւ ապա նորակազմ կենտրոնական կոմիտէին ու խնդրել որ շուտով կազմակերպեն նոր շտաբ<sup>12</sup> մեզ փոխարինելու նպատակով: Մինչ այժմ այդ ուղղութեամբ ոչինչ չի արուած այստեղ եւ գուցէ մտածում են, թէ ինչ կայ որ, եթէ յարմար մարդիկ չեն գտնուի մեզ փոխարինող, մենք էլ ստիպուած կը լինինք մնալու եւ այդպիսով կը վերջանայ ամէն ինչ: Մա ենթադրական է, ի հարկէ, բայց իրականը այն է, որ թէ՛ Բորիսը<sup>13</sup> եւ թէ՛ ես վճռականապէս հեռանում ենք ամենաուշը ամսիս 22-ին: Անհրաժեշտ է շուտափոյթ ուղարկել կամ Մրգաստանում գտնել մէկ, կամ մի քանի մարդ մեզ փոխարինելու համար մինչեւ ամսիս 18-17ը, որպէսզի նրանք ժամանակ ու հնարաւորութիւն ունենան գործերը ստանձնելու, նախքան ամսիս 22-ը:

ԴՈՒՄԱՆ

Յ. Գ. Եթէ մինչեւ ամսիս 22-ը գործերը ստանձնող չլինի, ես կը հեռանամ առանձ յանձնելու. եւ չեմ կարողանում գտնել մի այնպիսի կոմբինացիա<sup>14</sup> (ներկայ պայմաններն ի նկատի ունենալով՝ ի հարկէ), որը ինձ հնարաւորութիւն տար մնալու:

Նոյն

11.- Մեծ Քաղաքը Թիֆլիսն է. Նիկոլ Դումանի ցամակը ուղղուած է Արեւելեան Բիւրոյին:  
12.- Զինուորական ղեկավար մարմին:  
13.- Բուն անունը Սմբատ Խաչատրեան, դաշնակցական հին գործիչներն:  
14.- Դասաւորում:

Փաստ. 297-1

Գ 5.- Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

Փաստ. 297-25

Գ 6.- ՆԱՄԱԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

Ընկերներ!

Կենտրոնական կոմիտէի ամսիս 8-ի նիստում ընկեր Դումանը նորից կատեգորիկ<sup>15</sup> կերպով յայտնեց, որ մի քանի օրից յետոյ գնալու է այստեղից եւ նրա հետ գնալու են մի շարք խմբապետներ, իսկ այդ խմբապետների հետ եւ նրանց հետ կապուած զինուորներ: Նրա գնալու պատճառը, իր խօսքերի համաձայն, կայանում է նրանում, որ Մրգաստանի Ռայոնական ժողովը զտման խնդիր է դրել մէջտեղ, որը նրա կարծիքով վաղաժամ է: Մենք երկար ժամանակ աշխատում էինք համոզել, որ հայ-թրքական ընդհարումների ժամանակ զտման խնդրի մասին խօսք չի կարող լինել, որ նրա հեռանալը վտանգի կարող է ենթարկել Մրգաստանի ամբողջ շրջանը: Մեր բոլոր թախանձանքները մնացին անհետեւանք:

Այժմ խնդրում ենք անմիջապէս Դումանին փոխարինող մի մարդ ուղարկել, որպէսզի մինչեւ Դումանի գնալը կարողանայ կազմակերպել մեր շրջանի ինքնապաշտպանութեան գործը: Դումանը մատնացոյց է աւելում ընկեր Ռոստոմին եւ Վարդանի<sup>16</sup> եւ Սաքոյի<sup>17</sup> վրայ իրեն փոխարինելու համար: Խնդրում ենք լուրջ ու շարունակելի դարձնել այս հարցի վրայ, որովհետեւ, եթէ մարդ չուղարկէք, միեւնոյն բանն է, մենք անգոր ենք եւ չենք կարող ինքնապաշտպանութեան գործը կազմակերպել, շրջանը պէտք է մնայ իր ճակատագրին այսպիսի տագնապալից մոմենտում<sup>18</sup>:

Հ. Յ. Դ. ՄՐԳԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Յ. Գ. Ինքնապաշտպանութեան վրայ ահագին գումարներ են ծախսուում. այժմ փող չկայ. խնդրում ենք փող փոխադրել, որքան կարող էք:

ՄՐԱՐԱ ԱԼԵՔՎԻՍ ԱՐՄԷՆ ԱՐՏԱԿ ՆԻԳԵՑԻ-ԶԱԻԷՆ

Յունիսի 9-ին 1908 թ. Մրգաստան

15.- Վճռական, կտրական:  
16.- Խանասորի Վարդանն է. բուն անունով Սարգիս Մեհարեան:  
17.- Սեւ Քարեցի Սաքո. բուն անունով Սարգիս Սարիբէկ Յովհաննեան:  
18.- Պահու մը:

Մրգաստանի շրջանում վերջին ամիսները տեղի ունեցած փոփոխութիւնները — ներքին անհամաձայնութիւններ, կենտրոնական կոմիտէի նոր ընտրութիւնը եւ այլն...- առաջ են բերել մեր շրջանի համար մի շատ ծանրակշիռ խնդիր: Մի կողմից այդ՝ միւս կողմից հայ-թրքական նոր, սիստեմատիկ բնաւորութիւն ստացած ընդհարումները մեր շրջանը դարձրել են ինքնապաշտպանութեան տեսակէտից մի շատ վտանգաւոր վայր... Իբրեւ Մրգաստանի շրջանի հանգամանքներին շատ լաւ ծանօթ, Դաշնակցութեան պրեստիժին<sup>19</sup> նախանձախընդիր, մենք ընկերաբար խնդրում ենք Ա[րեւելեան] Բիւրոյից անհրաժեշտ եւ շուտափոյթ միջոցներ ձեռք առնել, որպէսզի մեր շրջանի ինքնապաշտպանութեան ամբողջ գործի կազմակերպող եւ ղեկավար Դումանը մնայ իր պոստումում<sup>20</sup> եւ Հեռանայ Մրգաստանի շրջանից ինչպէս ինքը որոշել է եւ իր որոշումը արդէն կենտրոնական կոմիտէին յայտնել է հեռանալու վերջնական ժամանակամիջոցը նշանակելով մինչեւ Յունիսի 22-ը:

Աւելորդ ենք համարում մանրամասն բացատրել այն պատճառները, որոնք դրդել են Դումանին մի այդպիսի աննպաստ որոշում կայացնել եւ միւս կողմից՝ մեզ համար լոյսի նման պարզ է թէ ի՛նչ ծանր հետեւանքներ կ'ունենայ ինքնապաշտպանութեան գործը մեզանում, եթէ Դումանը հեռանայ մեզնից եւ Ա[րեւելեան] Բիւրոն ժամանակին չառնէ դրա առաջ[ը]:

Կրկնում ենք, մենք, իբրեւ հին դաշնակցականներ, մեր երկրի պայմաններին լաւ ծանօթ, բարոյական պարտք ենք համարում տեղեկացնել Բիւրոյիդ Դումանի մեր շրջանում մնալու անհրաժեշտութեան մասին, հակառակ դէպքում ծանր հետեւանքների ամբողջ պատասխանատուութիւնը թո՛ղ ընկնի այն մարդկանց վրա, որոնք հնար ունէին Դումանին պահելու Մրգաստանի շրջանում եւ չարեցին<sup>21</sup>:

ԲԺ. ՏՐՏՈՒՄ(.....) ԶՈՒՄՇՈՒԴ Պ. .... ՖԱՐ-ՀԱՏ

12 Յունիս 1908 թ. Մրգաստան

19.- Գեղիմակութեան, վարկին:  
20.- Պաշտօն:  
21.- Նամակը ստորագրած են՝ Բժ. Տրտում, Էմմանուէլ, Տումշուղ (որ Սարտիմ Տր Գալուստեանն է), Պ. ....(անընթեռնելի), Դարվիշ (որ Ալոյեան Գալուստն է), Ֆար-հատ (որ Սարգիս Օհանջանեանն է):

Փաստ. 297-2

Փաստ. 297-3

Գ 7.- ՆԱՄԱԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Մեծ Քաղաք

Հ. Յ. Դ. Քարաբերդի<sup>22</sup> Կոմիտեի և Չին. Մարմին 1906 թ. Յունիսի 16

Վերջին ժամանակներս Մրգաստանում կայացած Ռայոնական Ժողովից յետոյ՝ լսում ենք ինչ որ ներքին դժգոհութիւնների պատճառով հեռանում է Մրգաստանից գինուոր (ական) խորհրդի անդամ Դոմանի:

Աչքի առաջ ունենալով, որ միմիայն եւ միմիայն Դոմանի խիստ տակտիկան, աշխուրջ հսկողութիւնը եւ գինուորական հմտութիւնն էր, որ ամբողջ Մրգաստանի ինքնապաշտանութիւնը ուժեղացրեց, հայ բնակչութեան կեանքն ու գոյքը գալիք վտանգներից փրկեց, ի նկատի ունենալով՝ որ Կովկասում համեմատաբար ամենախաղաղ դրութիւնը միմիայն Մրգաստանի շրջանում է տիրում այդ էլ շնորհիւ միայն Դոմանի խիստ հսկողութեան ընդհանուր գինուորական-ուսումնական գործին՝ եւ վերջապէս ի նկատի ունենալով որ նրա հեռանալով շատ չարիքներ կ'առաջանան՝

մենք, Քարաբերդի ընկերներս, մեր խորին շնորհակալութիւնը յայտնելով հանդերձ Դոմանին, խնդրում ենք ձեզ ամէն կերպ արգելք լինել Դոմանի հեռանալուն Մրգաստանից:

Հակառակ դէպքում նրա հեռանալով եւ մեր միջի ռազմագէտ-գինուորական ղեկավարների պակասութեան պատճառով մանր-մունր առիթներից նոր թաւաններ եւ կոտորածներ կ'առաջանան Մրգաստանի ընդհանուր շրջանում, որոնց պատասխանատուութիւնը մեծ չափերով կ'ընկնի ձեզ վրայ:

Անդամք }

ՄԵՐՈՒԿ ԿՐԱԿ ԱՍԼԱՆ ՌՈՒՄՐ ՍԱՌՈՒԿԵԱՆ

21 Յունիսի 1906 թ. Մրգաստան

Չինուոր. Մ[արմնի] անդ[ամներ] }

Հ. ՊԵՏՐՈՍԵԱՆ ԳԵՈՐԳ ԷՏԻԳԱՐԵԱՆ

Գ 8.- Հ. Յ. Դ. ԱՐ. ԲԻՒՐՈՅԻ ԸՆԿԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Երբ մենք վերջին ժամանակներս ամէն կերպ բողոքում էինք Դաշնակցութեան մէջ տիրող ճահճային մթնոլորտի դէմ, երբ մեր մէջ սպառնալից զանազան ոչ-յեղափոխական տարրեր կարծես հետզհետէ տիրապետող դեր էին ստանձնում, մենք լի հաւատով դէպի յեղափոխութեան լուսաւոր ապագան, կուռում էինք այդ խոչընդոտների դէմ եւ բարոյական-գաղափարական այդ կուռում մենք յաղթեցինք. մենք հաւատացած ենք, որ ապագայում էլ նոյն հողի վրայ Դաշնակցութեան նուիրական սկզբունքները կարող կը լինէինք պաշտպանել:

Բայց այսօր պատկերը փոխուել է. թիւրիմացութեամբ յեղափոխական կոչուող, գաղափարազուրկ ամբողջ փոխարէն մեր դէմն են կանգնել մի շարք «հին» կոչուող «գործիչներ», որոնք միջոցների մէջ խտրութիւն չընկնելով եւ ինտրիգներ լարելով, կանգ չեն առնում ամենատեղ անուանարկութիւնների առաջ ժողովրդի խաւար մասսաների մէջ. նրանք ամբողջ թափով կուռում են մեր դէմ յեղափոխականին անվայել, անմաքուր միջոցներով եւ... մենք գործի յաջողութեան համար, հրաժարուում ենք, չկամենալով այսպիսի ծանր ընկերներում կուռել նրանց դէմ նրանց միջոցներով եւ աւելի սուր ինտրիգների տեղիք տալ: Մեր հրաժարականի պատճառաբանութիւնը մենք կը յայտնենք մեզ ընտրողներին:

Հ. Յ. Դ. Մրգաստանի Կենտրոնական Կոմիտէի անդամներ

ԳՐԻԳՈՐ-ՕՆԻԿ ՆԻԳԵՑԻ-ՉԱԽԷՆ ԱՐՍԷՆ ԱԼԵԿՎԻՍ

22.- Քարաբերդը կուս. ժածկանունն է Նախիջեւանի, որ կոմիտեի կողքին հայ-թաթարական ընդհարումներու օրերուն ստեղծուած էր յատուկ գինուորական մարմին:

Փաստ. 297-83

Փաստ. 297-5

Գ 9.- ՇՐՋԱՔԵՐԱԿԱՆ

Գ 10.- ՆԱՄԱԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ] ԲԻՒՐՈՅԻՆ

Խնդրում ենք մեր ռայոնի շրջանային կոմիտէներին ուղարկել իրենց ներկայացուցիչներին Մրգաստանի ռայոնական ժողովի, որը սկսուելու է Օգոստոսի 25-ին:

Ռայոնական ժողովը Մրգաստանի Կենտրոնական Կոմիտէի ընտրութիւն պիտի կայացնի:

Ներկայացուցիչները պէտք է իրանց հետ բերեն.-

- 1) Դրամական եւ գէնքերի հաշիւները.
- 2) Շրջանի տեղեկագիրը.
- 3) Շրջանի բոլոր գիւղերի կարծիքները հետեւեալ հարցերի մասին.

ա) Ներկայ յեղափոխական ժամանակամիջոցում կառավարութեանը հարկ եւ գինուոր չտալու մասին.

բ) Շրջանի գիւղացիութեան հողագրկութեան եւ սակաւահողութեան չափի մասին.

գ) Պետական, կալուածատիրական եւ վանական հողերի գրաւման մասին յօգուտ սակաւահող եւ հողագուրկ գիւղացիութեան.

դ) Վաշխառութեան եւ առհասարակ տնտեսական կեղեքման դէմ կուռելու միջոցների մասին.

ե) Ի՞նչ հարցեր պէտք է մտցնել ռայոնական ժողովի օրակարգի մէջ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ՄՐԳԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Յ Օգոստոսի 1906 թ. Մրգաստան

Հ. Յ. Դաշ. տպարան.

Հայ Յեղ. Դաշնակցութեան Մրգաստանի Կենտրոնական Կոմիտեի 8 Հոկտ. 1906թ.

Ընկերներ, Թէ ընկերների հետ, թէ նամակներով եւ թէ նոյնիսկ հեռագիրներով մեր մի շարք ապարդիւն դիմումները ո՛չ մի հետեւանքի չհասցրեց: Այդ աստիճանի անտարբերութիւն... Գոնէ երկտողով միամտացնէիք մեզ, որ ձեր ընկերական աջակցութեան վրայ յոյս դնելը աւելորդ է: Եւ մենք՝ ճարներս կտրած հրաւիրեցինք մեր ներքին ոչ-ժերից երկու ընկեր՝ Օշին-Սարկաւազ, Ուսանող-Չաւէն, իբր ազատ անդամներ. դրանց հետ միասին, իրանց թեթեւ աջակցութիւնը խոստացան հին ընկերներից մի քանիսը: Ահա այդ ձեռով միայն հնար եղաւ ժամանակաւորապէս կազմել թէ Կենտրոնական եւ թէ ինքնապաշտպանութեան Մարմիններ, մինչեւ առաջիկայ ռայոնական ժողովը:

«Մշակի» եւ ընկ(երակցութեան) խայտառակ գրոհը, նրա եւ նրա նմանների ամէնօրեայ անամօթ վայրահաջութիւնները, նրանց անպատիժ արշաւանքները Դաշնակցութեան հասցէին, ինչպէս ամէն տեղ նոյնպէս եւ մեզանում, տատանուող հոգիների մէջ որոշ շփոթ է առաջ բերել: Հոգու խորքերում հակա-յեղափոխական իսկ ժամանակի հովերի եւ այլ ազդեցութիւնների դրոշմով թքով կպցրած դաշնակցական տարրերը, «Մշակի» անպատկառ գրութիւններից երես առաձ, զգալի խոչընդոտ են հանդիսանում մեր յեղ[ափոխական] գործին:

Մի կողմից այդ, միւս կողմից դաւաճան թերթի էջերում տպագրուած մատնութիւնները շատ հեռուն են գնում. երեւի հեռու չէ այն օրը, երբ մի գեղեցիկ օր թղթատարը կը բերի մեզ «Մշակի» կեղտոտ էջերում տպագրուած բոլոր յեղ. ընկերների անուանացուցակը, կազմակերպութեան գէնքերի, ռազմամթերքի եւ այլն ստացուածքի պահեստների տեղը եւ այլ կոնսպիրատիւ<sup>23</sup> գործերի գաղտնիքները... Այո՛, «Մշակի» բռնած ճանապարհը դրան էլ կը հասնի: Ինչո՞ւ... Որովհետեւ այդ կործանիչ ընթացքի առաջն առնող չկայ, որովհետեւ ամէն կեղտ ու մուր Դաշնակցութեան երեսը քողովից հաշիւ պահանջող չկայ, կանգնեցնող, դաւաճան ձեռքը բռնող չկայ: Մինչեւ ե՛րբ... վերջ լինելու է սրա թէ... յաւիտենական է:

23.- Ընդատակեայ:



Յայտնելով մեր խորին զայրոյթը այդ առթիւ, մենք պահանջում ենք Արեւելեան Բիւրոյից — իբրեւ Դաշնակցութեան պրեստիժին նախանձախնդիր բարձր ինստանցիայից<sup>24</sup> որ Բիւրոն ամենակարճ ժամանակամիջոցում շատ կտրուկ միջոցներ ձեռք առնի վերջ դնելու այդ անպատկառ հայհոյանքին: Եւ եթէ կարիք կայ մէկ շաբաթուայ ընթացքում՝ Սարուստանի<sup>25</sup> կենտրոնում խորհրդակցական արտակարգ ժողով հրահրելու այդ խնդրի առթիւ վճռական քայլեր առնելու: Բաւական է. ժամանակն է սանձը քաշելու այդ պարոններին:

Այդ՝ օրուայ այրող, անյետաձգելի խնդիրը կտրուկ կերպով դնելով Արեւելեան Բիւրոյի առաջ, Մրգաստանի կենտրոն. (Կոմիտէի կենտրոն) կազմը եւ ընկերները պահանջում են — կամ անմիջապէս բաւարարութիւն տալ մեզ, կամ թողնել, որ Մրգաստանը իր նախաձեռնութեամբ եւ պատասխանատուութեամբ մաքրի այն արատը, այն սեւ բիծը, որ անամօթութեամբ դրել են Դաշնակցութեան պատկառելի եւ անբիծ անուան ու պրեստիժի վրայ մի սանձարձակ վրձմակ:

Յանուն Դաշնակցութեան անպատուած պրեստիժի, մենք ընկերաբար խնդրում ենք հերթական հարց դարձնել այս ձեռք առաջին իսկ նիստում եւ ամենակարճ ժամանակամիջոցում որոշ պատասխան տալ մեզ:

Մենք անհամբեր սպասում ենք նաեւ հիմապետ Միւրանի<sup>26</sup> շահատակութիւնների վերջնական հետեւանքին:

- Բիւրոն մեզնից «Զինուորական դիկտատուրա» եւ այն թուղիկ էր ուղել Սմբատի մօտ եղած. յայտնում ենք ձեզ, որ Սմբատը այժմ մեր շրջանում չէ. հաւանական է կամ Զրաբերդ, կամ Նաւահանգիստ<sup>27</sup> լինի:

- Հնչակեանների միջադէպի համար կազմուած միջնորդ դատարանը, դեռ չի վերջացրել իր աշխատանքը. վերջացնելուց յետոյ, նրանց ամփոփ կարծիքը եւ որոշումը կ'ուղարկենք ձեզ: Յոյս ունենք շուտով վերջ տալու դրան:

- Մեր շրջանում - Զաքար Զանփոլատեանի վրայ կատարած տեւորի մասին, խնդրում ենք որոշ պատճառաբանուած թուղիկով թող յայտարարի համապատասխան մարմինը, որի որոշումով տեղի է ունեցել այդ: Այդ բանը մենք գտնում ենք շատ անհրաժեշտ, որոշ հանգամանքներ ի նկատի ունենալով: Մեր ժողովուրդը անհամբեր սպասում է դրան: Կարող էք սեւագրութիւնը ուղարկել մեզ, մենք ինքներս կը տպագրենք եւ կը տարածենք. հանգստացնող տպաւորութիւն կը թողնի այդ:

- Թուրքահայերի՝ Քարում<sup>28</sup> կայանալիք համագումարի մասին մենք արդէն արել ենք հարկաւոր կարգադրութիւնը, թէեւ քիչ կասկածելի է դրա յաջողութեան մասին նրա համար, որ մենք ուշ ստացանք այդ կարգադրութիւնը եւ մեր ներքին խառն ու անկանոն

դրութեան պատճառով, ինքներս էլ ժամանակից ուշ արեցինք մեր շրջանի դիմումը: Նոյն բանն էլ կարելի է ասել եւ մեր Շրջանային ժողովի շուտ գումարուելու մասին. դրա պատճառներն էլ շատ են. բայց ամենագլխաւորը էլի շրջանիս խառնաշփոթ դրութիւնը եւ մեր օրինական կազմի բացակայութիւնն էր: Յոյս ունենք այդ հրաւէրը քիչ յետոյ ուղարկելու նոյնպէս կասկածելով՝ որ յաջողութիւն կ'ունենանք:

Այս բոլորից յետոյ, գալիս ենք խնդրելու Արեւելեան Բիւրոյից, որ Մրգաստանի այս նեղ, կրիտիքական<sup>29</sup> օրերին, ընկերներ, օգնութեան հասէք մեզ փոխարինաբար մի գումարով մինչեւ 3-5 հազար ռուբլի, որը մեծ յոյս ունենք մինչեւ առաջիկայ Յունուար ամիսը վերադարձնելու: Չենք ուզում ծանրանալ այն աննրպաստ հանգամանքների վրայ, որ ստեղծեցին մեր շրջանում խօսք<sup>30</sup> որի շնորհիւ, ժամանակաւորապէս ցամաքեցին բոլոր աղբիւրները. դրա պատճառները շատ խորն են: Այսքանը կ'ասենք, որ մենք բոլորովին յուսահատուած չենք, որ ամենակարճ ժամանակամիջոցում, մեր ընկերների տենդային գործունէութիւնը յաջողութեամբ պիտի պսակուի եւ մենք որեւէ 2-3 ամսուայ ընթացքում, մեծ յոյս ունենք, վերադարձնել Դաշնակցութեան իւր՝ ժամանակաւորապէս կորցրած վարկը: Այդ ուղղութեամբ արդէն աշխատանքներն սկսած են: Մեզ անհրաժեշտ է այդ գումարը ընթացիկ, անյետաձգելի կարիքների համար, որպէսզի հնար ունենանք գաւառներից ամենախեղճերին - Դարալագեագ, Նախիջեւան, Շարուր, Սուրմալու — օգնութեան հասնելու, մինչեւ կազդուրուին, եւ մեզ էլ միջոց տան նախկին տարիների նման: Բաւեր չենք գտնում արտայայտելու այն ծովկարիքը, որի մէջ թաղուած ենք եւ միակ էլքը ձեզնից այդ գումարը խնդրելն է. այլապէս մեզ մնում է երկու բան. կամ բոլորովին ձեռք քաշել ամէն բանից, լիկվիտացիա անել<sup>31</sup> Դաշնակցութիւնը Մրգաստանում, կամ դիմել ստիպողական միջոցներով փող հաւաքելուն - դրանցից որին էք համաձայն - պատասխանէք մեզ:

Մեծ յոյս ունենք, որ գոնէ այս անգամ, մեր ներկայ նամակում շօշափած հարցերի - որոնց մենք շատ կարեւոր եւ վճռական նշանակութիւն ենք տալիս — որոշ պատասխանը չէք զլանալ շուտով, առանց ուշացնելու տալ. որովհետեւ շատ բան է կախուած դրանցից: Հաւատում ենք, որ ձեր ընկերական խրախուսիչ աջակցութիւնը չէք զլանալ մեզ:

- 24.- Ատեան:
- 25.- Ռուսիոյ եւ Կովկասի:
- 26.- Ջրաբերդը Կարսն է, Նաւահանգիսը՝ Պաթումը:
- 27.- Քարը կուս. ժածկամուտն է Ալեքսանդրապոլի:
- 28.- Ճգնաժամային,
- 29.- Քառս:
- 30.- Լուծարքի ենթարկել, կազմալուծել:

Ընկերական բարեւերով՝ [Ստորագրութիւններ]  
 ՍԱՐԿ. ԿՄԱՆՈՒՅԼ  
 ՏՈՄՍՈՆ ՍՈՒՐԷՆ  
 ՇԱՀԷՆ[?] ԹԵՐԿԵԻԱՆՑԻ[?]  
 ԴԱՐՎԻՇ

Ազրարային եւ դասակարգային խնդիրների վերաբերմամբ, խնդրում ենք որոշել մեր բռնելիք տակտիկան: Խնդրում ենք շուտ գրել մեզ:

Յ. Գ. Ընկեր Ֆար-Հատի տրամադրութեան տակ եղած 10,000-ը, արդէն մաշուել է: Այդ գումարից՝ զինուորական-ինքնապաշտպանութեան գործի վրայ չորս ամսուայ ընթացքում ծախսուել է մօտաւորապէս 3440 ռուբլի. Զիֆոնին<sup>31</sup> տրուած է փոխարինաբար 2160 ռ. կենտրոնականին՝ 400 ռ., Մ[եծ] Քաղաքին հեռագրով՝ Մուրատին՝ 500ռ., Դարալագեագ եւ Նախիջեւան՝ 500-ական, Հոկտ. 1-ից մինչեւ 8-ը, նորից՝ տեղում զինուորական եւ զլխաւորապէս ճանապարհածախք եւ հագուստ տղերանց-380, նորից Նախիջեւանին՝ 200 ռ. տեղ. կոմիտէական ծախք 140 ռուբլի: Այստեղի մնալուն տղերանց ձեռուայ հագուստ պատուիրուած է մօտաւորապէս 7-800 ռուբլի: Այնպէս որ մինչեւ ձեզնից պատասխան ստանալը չա՛տ հաւանական է, որ այլեւս ո՛չ մի կոպէկ չի լինի:

Որովհետեւ մենք ոյժերի կարիք ունենք եւ մեզանում գտնուում է Պ. Սարկ. Չուբարը, խնդրում ենք մեզ որոշ գրել - կարող ենք ընդունել նրան մեր յարկի մէջ - եթէ որեւէ առարկութիւն կայ, խնդրում ենք պատճառաբանուած մի բան գրել մեզ - ընդունել թէ չընդունել: Ի սէր Աստուծոյ, միայն շուտ գրել: Արեւելեան Բիւրոյի թողթը Շխալի<sup>32</sup> մասին, նամակը վերջացնելուց յետոյ ենք ստացել:

**Դ.- ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հայ Յեղ. Դաշնակցութեան ՄՐԳԱՍՏԱՆԻ ԿԵՆՏ. Կոմիտէի շրջանում գտնուած բոլոր կոմիտէներին, ենթակոմիտէներին, առանձին մարմիններին, խմբակներին եւ գործակալներին:

Փաստ. 293-47

**Դ 1.- ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ**

Ի նկատի ունենալով այն սարսափելի բարդութիւնները, խոշոր թիւրիմացութիւններն ու դժգոհութիւնները, որոնք առաջ են եկել մեր գաւառական դաշնակցական մարմինների ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ գործերի մէջ խառնուելուց, ի նկատի ունենալով՝ որ դատավարական գործը լինելով չափազանց բարդ, ծանրակշիռ, պատասխանատու, ի նկատի ունենալով մեր ընկերների ահագին զբաղմունքները, գործերի առատութիւնը, դատերը վարելու նկատմամբ ձեռնհաս մարդկանց սակաւութիւնը, ի նկատի ունենալով հայ-թրքական անմիտ կռիւները, որը ահագին ժամանակ եւ էներգիա է խլում դաշնակցական մարմիններից ու անհատներից - այդ բոլոր կարեւորագոյն հանգամանքներն ի նկատի ունենալով՝ Մրգաստանի կենտրոն. Կոմիտէն իր Հոկտեմբեր 3-ի նիստում ՈՐՈՇԵՑ.

**ՅԱՅՏԱՐԱՐԵԼ ՄՐԳԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԵԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՈԼՈՐ ԻՐԱԿԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՈՐ ԱՅՍՈՒՆԵՏԵԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԵՆԹԱԿՈՄԻՏԵՆԵՐԻՑ, ԿՈՄԻՏԵՆԵՐԻՑ ՈՉ ՄԷԿԸ ԻՐԱԿՈՒՆՔ ՉՈՒՆԵՆԱՅ ԶԲԱՂՈՒԵԼ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՆՉԵՒ ԱՌԱՋԻԿԱՅ ՌԱՅՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ:**

Իսկ ինչ վերաբերում է արդէն սկսած եւ կիսատ մնացած դատերին, [Կ.] Կոմիտէն առաջարկում է դրանցից կարեւորագոյններով անմիջապէս զբաղուել եւ ըստ կարելույն շուտ վերջացնել, իսկ անկարեւորները դադարեցնել ընդմիջտ:

Օգտուելով առիթից մի աւելորդ անգամ էլ յայտարարում ենք, որ Դաշնակցութեան ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ Վարչութիւններին - կոմիտէ, ենթակոմիտէ - արգելուում է որեւէ յարաբերութեան մէջ մտնել զինուորական-մարտական խմբերի եւ խմբապետների հետ դատերը վարելու նկատմամբ, առանց կենտրոն. Կոմիտէի գիտութեան. եւ ընդհակառակը, ոչ մի զինուորական-մարտական խմբի խմբապետ կամ անդամ իրաւունք չունի միջամտելու կոմիտէների կամ ենթակոմիտէների գործերի մէջ, առանց Զինուորական Մարմնի գիտութեան:

Հայ Յեղ. Դաշ. ՄՐԳԱՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵ  
 4 Հոկտ. 1905 թ.  
 Մրգաստան  
 Մրգաս. կենտր. Կոմիտէական ազատ տպարան

- 31.- Զիֆոն՝ զինուորական ֆոնդ: Այս անունով յայտնի դարձաւ այն մարմինը՝ որ ստեղծուեցաւ 1905ին կովկասահայութեան ինքնապաշտպանութեան համար: Իր պարտականութիւնն էր զննել ու զինամթերք հայթայթել կոուղ մարտիկներին:
- 32.- Շղիս Ալի, խմբապետ Միհրանի հետեւորդներն, որ յետագային ահաբեկուեցաւ:

Փաստ. 293-53

Դ 2.- ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ

Հայ Յեղ. Դաշնակցութեան Մրգաստանի Կ. Կոմիտէի ռայոնում գտնուած բոլոր շրջանային կոմիտէներին եւ ենթակոմիտէներին:

Ընկերներ

Սրա հետ ուղարկում ենք հասարակական վճռի օրինակներ — իւրաքանչիւր գիւղի համար մի օրինակ եւ մի օրինակ էլ առանձին ձեռք ամբողջ շրջանի ներկայացուցչական ժողովի որոշման համար:

Երեւանի նահանգի հայ ազգի շահերը պաշտպանելու համար կառավարութեան բոլոր հիմնարկութիւններում սկսած ամենաստորինից մինչեւ ամենաբարձրինը. այս Դեկտեմբեր ամսի 20-ին գաւառական ներկայացուցիչները ընտրելու են մէկ «ԲԻԻՐՕ» 5-7 հոգուց բաղկացած, որը կոչուելու է «Երեւանեան Գահանգի հայ ազգաբնակութեան ներկայացուցչական խաղաղարար Բիւրօ»:

Հայ ազգի ամէն մի կարեւոր, խոշոր եւ աչքի ընկնող գործերի համար կարելի է դիմել այդ մարմնին խորհրդով եւ բաւարարութիւն ստանալ: Օրինակ. երբ հայ ազգը ուզում է դիմել մի խոշոր գործով՝ կայսրին, կամ նախարարներին, փոխարքային, գեներալ-նահանգապետին, նահանգապետին եւ այլն. կամ երբ մի աչքի ընկնող գործ հարկաւոր կը լինի լրագրութեան միջոցաւ յայտնելի գիտութիւն բոլորի. հայ-թուրքական յարաբերութիւնների խիստ լարուելիս, ժողովրդին զինելու համար, էկզէկուցիաները<sup>33</sup> վերացնելու համար եւ այլն. այդ բոլոր դէպքերում պէտք է դիմել այդ մարմնին, կամ այդ մարմինը ինքը միջոցների կը դիմի, որ հայ ազգը խաղաղ կեանք վարի:

Ահա այս նպատակով ընտրուում է ամբողջ նահանգի համար «ԲԻԻՐՕՆ» Երեւանում: Ընտրութեան համար գաւառների (կամ շրջանների) ներկայացուցիչները գալու են Երեւան Դեկտեմբերի 20-ին - բերելով իրանց հետ իրանց գաւառում կամ շրջանում կազմած բոլոր հասարակական վճիռները իբրեւ փաստաթղթեր:

Կարող են ընտրուել եւ կոմիտէների անդամներից եւ ժողովրդից, նայելով թէ ում կ'ընտրեն ներկայացուցիչները: Թէ գիւղերի եւ թէ գաւառական ներկայացուցիչները պէտք է ունենան եւ մէկ անձնափոխանորդ (կանդիտատ): Որքան շուտ եւ կանոնաւոր կատարուին ձեռք շրջանի ընտրութիւնները - այնքան լաւ:

Մրգաս. Կ. Կոմիտէի կողմից՝ ԱՇՈՒՂ<sup>34</sup>

Փաստ. 297-106

Դ 3.- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Երեւանի Քաղաքային Կոմիտէն սորանով յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան, որ ամսոյս 14-ից **ՆԱՅԹԸ** պէտք է ծախուի  
Փուլթը - 1 ու. 70 կոպ.  
Ֆուլտը - 5 կոպ.

Հ. Յ. Դ. ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԷ

13 Յունուարի 1906 թ. Երեւան

Փաստ. 297-104

Դ 4.- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ռուսաստանի դեկտեմբերեան ընդհանուր գործադուլի օրերին, երբ ճանապարհները փակուել էին եւ տեղիս վաճառականները, օգտուելով հանգամանքից, խիստ բարձրացրին անհրաժեշտ մթերքների գները նոյնիսկ այնպիսի ապրանքների վրայ, որոնք շատ վաղուց էին ստացուած, Հ. Յ. Դաշնակցութիւնը սակագին նշանակեց մի քանի անհրաժեշտ մթերքների վրայ, վաճառականների շահագործումներին վերջ տալու նպատակով:

Այժմ, երբ ճանապարհները բացուել են եւ ապրանքները անարգել կերպով ներմուծւում են քաղաքը, ոչ մի պատճառ չկայ հազուադէպ ժամանակների (ընդհանուր գործադուլի) թանկացած գները պահպանելու: Այդ պատճառով Հ. Յ. Դ. Մրգաստանի Քաղաքային Կոմիտէն վերացնում է ցախի, նաֆթի, շաքարի, մոմի եւ լուցկու նշանակած սակագինը, թողնելով որ վաճառականները ազատ մրցման (կոնկուրենցիայի) միջոցով իջեցնեն գները եւ վաճառեն ապրանքները սովորական նորմալ գներով:

33.- Մարմնական պատիժներ. աւելի յաճախ կը գործածւէր քաղաքացիներու եւ գիւղացիներու տուճերուն մէջ զինուորականներ տեղաւորելու իմաստով:  
34.- Բուն անունը Սահակ Յովնանեան:

Փաստ. 299-46

Դ 5.- ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Համաձայն Դ.-ը Ընդհ. Ժողովի որոշման գաւառներում եւ քաղաքներում Հ. Յ. Դաշնակցութիւնը շարունակում է իր գործունէութիւնը տնտեսական եւ քաղաքական հողի վրայ, պաշտպանելով աշխատաւոր ժողովրդի բովանդակ — տնտեսական-դասակարգային, ազգային-կուլտուրական եւ մարդկային քաղաքական — շահերը:

Այս տեսակէտից նպատակաշարժար է համարուած վերակազմել եղած մարմինները՝ գիւղացիական, արհեստակցական, քաղաքական եւ այլ միութիւնների ու մարմինների, որոնք ունենալու են իրենց տեղական վարչութիւնները եւ շրջանային խորհուրդները համապատասխան կոմիտէներով, կապուած Կ. Կոմիտէի հետ — ուստի Կ. Կոմիտէս յայտնում է Մրգաստանի շրջանի հասարակութեան, որ այսուհետեւ լուծուած է համարում մինչեւ այժմ գոյութիւն ունեցող բոլոր կոմիտէական եւ ենթակոմիտէական կազմերը եւ խմբերը, որոնք ներկայացնելու են իրենց բոլոր հաշիւները:

Նոր մարմինները կազմակերպելու պաշտօնով ուղարկուում են շրջան Կ. Կոմիտէիս վստահութիւնը վայելող ընկերներ, Կ. Կոմիտէի պաշտօնական վկայականով, որոնց միայն հասարակութիւնը պարտաւոր է հաւատալ եւ չզլանալ իր բարոյական անվերջութիւնը, ի նպաստ յեղ(ափոխութեան) գործին: Իսկ եթէ մեր շրջանի զանազան մասերում գտնուին այնպիսի մարմիններ կամ անհատներ, որոնք չհպատակուելով Ընդհ. Ժողովի որոշման, ուզեն շարունակել իրենց ապօրինի գոյութիւնը եւ խոչընդոտ հանդիսանալ յեղ. գործին, այդպիսիները պատասխանատու պիտի մնան կազմակերպութեան առաջ:

Հ. Յ. Դ. ՄՐԳԱՍՏԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԷ

24 Յուլիսի 1907

Ե.- 1907 Թ.Ի ԾՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Փաստ. 299-43

Ե 1.- 1907 Թ. ՅՈՒՆԻՍ 6-12

Մրգաստանի շրջանից հաւաքուած Դաշնակցական գործօն ընկերներս լսելով եւ քննելով Հ. Յ. Դ. IV Ընդհանուր Ժողովի մասին արուած զեկուցումն, եկանք հետեւեալ եզրակացութեան.-

Ի նկատի ունենալով՝

Ա. որ Դաշնակցութեան IV Ընդհանուր Ժողովը հաւատարիմ մնալով իր հիմնական ծրագրի էական կէտերին՝ առաջնորդուելու է ընկերվարական սկզբունքով եւ ընթանալու է յեղափոխութեան ուղիով:

Բ. Որ պաշտպանելու է Հայ Ժողովրդի աշխատաւոր, կեղեքուած դասի տնտեսական, քաղաքական, ազգային եւ կուլտուրական շահերը:

Գ. Ձգտելու է հարեւան ազգերի, մանաւանդ նրանց ճնշուած դասակարգերի հետ, համերաշխութեան եւ համագործակցութեան:

Դ. Աչքի առաջ ունենալով տաճկահայի աւելի ճնշուած ու կեղեքուած դրութիւնը եւ մի շարք այլ հիմնական պատճառներ, որոնց մասին չեշտել է Ընդհանուր Ժողովը,-\*) մերժել է անջատման առաջարկը:

Ընկերներս յայտնում ենք մեր գոհունակութիւնը եւ կատարեալ համերաշխութեամբ անցնում ենք գործի, համաձայն Դաշնակցութեան ծրագրի եւ մեր շրջանի տեղական պայմաններին:

Ապա անցնելով Մրգաստանի շրջանի գիւղական ազգաբնակչութեան մէջ ունենալիք գործունէութեան, Ընկերական Խորհուրդը քննութեան ենթարկեց մի քանի հասունացած հարցեր եւ եկաւ հետեւեալ եզրակացութեան.

I. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ

Ի նկատի ունենալով, որ Հայ գիւղացիութեան ներկայ տնտեսական ծայրայեղ չքաւորութիւնը հետեւանք է, ինչպէս ընդհանուր քաղաքական աննպաստ կարգերի, նոյնպէս եւ սակաւահողութեան եւ աւատական կալուածատիրութեան կերպարանափոխուած դրութեան, որոշում է. Ա) Ամէն հնարաւոր միջոցներով ձգտել լայնացնել գիւղական համայնքների հողերի տարածութիւնը ի հաշիւ պետական ազատ հողերի, անտառների, արօտների եւ մասնաւոր կալուածների: Բ) Խոշոր կալուածատիրութեան դէմ կռուելու համար՝ կազմակերպուած գիւղացիական միութիւնների միջոցաւ՝ հետզհետէ իջեցնել հողավարձի չափը եւ այդպիսով ներշնչելով գիւղացւոց՝ հողի համայնացման սկզբունքը,

պատրաստել նրանց, յարմար ըուպէին գրաւելու ամբողջ հողը եւ դառնալ այդ հողերի կատարեալ տէրը: Գ) կալուածատիրական «Ախչա» հողերից սեփականատէրերին թողնել միմիայն այն կտորները, որոնց մշակում է կալուածատէրը իր ընտանիքով, կամ նոյնիսկ մի քանի բանուորների օգնութեամբ: Դ) Պետական համայնական գիւղերում մտցնել հողաբաժանումն՝ գիւղում աշխատող շնչերի համեմատ, մասնաւոր անհատներին համայնքին վերադարձնելով այն հողերը, որոնք իւրացրած են ապօրինի միջոցներով:

II. ՀԱՐԿԱՅԻՆ ՍԻՍԵՄԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆ

Ի նկատի առնելով, որ հարկերի արդի դրութիւնը քայքայում է ազգաբնակչութիւնը, թէ նրա տնտեսական ուժին անհամապատասխան ծանրութեամբ եւ թէ իր դասաւորման ձեւերով, որով հարկերը ծանրանում են գլխաւորապէս ամենաչքաւոր դասերի վերայ, որոշուց.

Ա.) Բոլոր միջոցներով ձգտել իջեցնել հողային, ակցիզի<sup>35</sup> եւ այլ հարկերի քանակութիւնը: Բ.) Մտցնել հարկային պրոգրէսիւ<sup>36</sup> սխտեմ, կամ ըստ կարողութեան եւ կամ ըստ եկամտի, աշխատելով հարկի ենթարկել կարողութեան բոլոր ճիւղերը (հող, անասուն, կապիտալ, ելն.), միաժամանակ բոլորովին ազատելով հարկից ամենաչքաւոր դասը: Գ.) Վերացնել օլամն ու բէկարը<sup>37</sup> եւ փոխարինել նրանց դրամական տուրքով, ըստ կարողութեան:

III. ՎԱՇԽԱՌՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԿՌՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Վաշխառութիւնն ու բարձր տոկոսը ընդունելով որպէս անխուսափելի հետեւանք ժողովրդի մեծամասնութեան:

\*) Տես Դրօշակ, համար 5, Անջատման առաջարկը: Ընդհ. Ժողովի որոշումներից:

35.- Պետական անուղակի տուրք՝ մեծ սպառում ունեցող արտադրութիւնը վրայ:  
36.- Առաջատուական. եկամտի աճին հետ տուրքերու համեմատական բարձրացում:  
37.- Կալուածատէրերու կողմէ գիւղացիներուն պարտադրուած գանազան անվճար աշխատանքներ:

թեան ծայրայեղ աղքատութեան եւ կարիքի մեծութեան, եւ ի նկատի առնելով, որ փոխատու-խնայողական բանկերի մուտքը գիւղերում՝ թէեւ միանգամայն չի ազատում ամբողջ չքաւոր դասը վաշխառուական շահագործումից, սակայն որոշ չափով իջեցնում է տոկոսի աստիճանը, որոշուց. Վաշխառութեան դէմ կռուելու միջոցներից ամենագործնականը համարել փոխատու-խնայողական բանկերի հաստատումը՝ յարմարեցնելով նրանց կանոնադրութիւնը չքաւոր դասի շահերին:

IV. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ընդունելով առհասարակ համագործակցական, արդիւնաբերական եւ սպառողական ձեռնարկների օգտակարութիւնը թէ տնտեսական եւ թէ բարոյական կողմից, բայց եւ ի նկատի առնելով այն դժուարութիւններն ու բարդութիւնները, որ ներկայացնում են այդպիսի նոր ձեռնարկները, որոշուց. Ա.) Սկզբում այդ ձեռնարկներից սկսել այնպիսիները, որոնք իրենց բնոյթով պարզ են եւ չեն ներկայացնում բարդութիւններ (օր. դաշտային մասերում - ալիւրի պահեստ, բամբակի մեքենայ, լեռնային մասերում - հացահատիկների շտեմարաններ, գիւղատնտեսական գործիքների պահեստներ ելն.): Բ.) Ուժերը չցրելու համար իւրաքանչիւր շրջանում ձեռնարկել մէկ կամ երկու գործ եւ սկսելիս ի նկատի առնել եղած ուժերի ձեռնհասութիւնը:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ

Ա.) Այդ նպատակներին հասնելու համար Ընկերական Խորհուրդը անհրաժեշտ է համարում հիմնել Գիւղացիական Միութիւններ իւրաքանչիւր գիւղում՝ շաղկապելով միեւնոյն շրջանի միութիւնները Շրջանային Խորհուրդի միջոցով, որը կապ կ'ունենայ կենտրոնական մարմնի հետ: Բ.) Միութիւնները կազմակերպել տեղացի կամ դրսեցի ընկերների միջոցաւ, հիմք ունենալով գիւղի ամենաչքաւոր տարրերը եւ հետզհետէ լայնացնելով այդ շրջանը գիւղի ճնշուած դասի հասունութեան զարգացման հետ միասին: Գ.) Թէ գիւղական եւ թէ Շրջանային Մարմինները ինքնուրոյն եւ ազատ են իրենց ներքին գործերում. եւ այլեւայլ ինքիւրներ իրականացնում են միայն ժողովրդի լայն մասսաների գիտակցութիւնից ու համաձայնութիւնից յետոյ: Դ.) Հայ գիւղացիների հետ կազմակերպել նաեւ հարեւան ազգութիւններ եւ ամրապնդել նրանց հարեւանական-ընկերական կապերով Հայ գիւղացիութեան հետ: Ե.) Միութիւնները կազմակերպւում են Դաշնակցութեան դրօշակի տակ, որը միակն է համապատասխանում Հայ աշխատաւոր դասի թէ տնտեսական եւ թէ ազգային

պահանջներին, եւ որի դաւանած քաղաքական ֆեդերատիւ ծրագիրը միայն կարող է ապահովել բոլոր ազգութիւններին «քաղաքական հաւասարութիւն» եւ «համերաշխ գործակցութիւն»: Զ.) Գիւղացիական Միութիւնների անդամների անդամավճարի քանակը թէ տեղական միութիւնների պէտքերի եւ թէ ընդհանուր կուսակցական պէտքերի համար որոշում են իրենք՝ Մարմինները:

VI. ԳԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԵՐ

Շրջանային Ընկերական Խորհուրդը որոշեց ուժ տալ քաղաքական խմբերի կազմութեան. հետեւապէս.

Դաշնակցական այն անհատները (երկու սեռից), որոնք չեն մտնում արհեստակցական եւ այլ միութիւններին մէջ եւ ապրում են ազատ պրոֆեսիայով<sup>38</sup> կամ այլ միջոցներով, այդպիսիներից կազմում են քաղաքական խմբերը: Մրանց հիմնական նպատակն է. Ա.) Պրոպագանդ մղել եւ ապա քաղաքային կամ այլ հիմնարկութիւնների միջոցաւ քայլ առ քայլ իրականացնել Դաշնակցութեան ծրագրի այս կամ այն կէտերը կեանքի մէջ:

Որոշուց նմանապէս. Համայնական եւ Շրջանային Խորհուրդների մանրամասն քննութեան աւարկայ դարձնել ինչպէս վերը նշանակուած հարցերը, նոյնպէս եւ աւելի քիչ լուսաբանուած ներքին գաղթականութեան խնդիրը, ջրի հարցը, արօտների կարգաւորման հարցը եւայլն:

Կանգ առնելով այս կոնկրէտ<sup>39</sup> անելիքների վրայ, ընկերները երբեք աչքաթող չպիտի անեն, որ վերը նշանակուած ձեռնարկները անկարող են յանգել լուրջ եւ դրական հետեւանքների, մինչեւ որ բոլոր ճնշուածների միահամուռ ջանքերով տապալուած չեն լինի արդի բիւրոկրատիական<sup>40</sup> կարգերը: Մեզ հետ միասին ժողովրդական լայն խաւերը եւս պիտի գիտակցեն, որ միմիայն ժողովրդապետութիւնը, ազգային հաւասարութիւնը եւ ապակենտրոնական-դաշնակցական կարգերը կարող են ապահովել անհատի եւ հասարակութեան բարեկեցութիւնն ու յառաջադիմութիւնը:

Հ. Յ. Դ. ՄՐԳԱՍՏԱՆԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

38.- Գործի ասպարէզ:  
39.- Իրական, առարկայական:  
40.- Վարչարարական. պաշտօնեաներու կողմէ կիրարկուող դանդաղ, ձեւապաշտական եւ ոչ արդիւնաւոր գործելակերպ:

Ե 2.- ՀՈՎՏԻ ՇՐՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Հովտի Շրջանային Կոմիտէի նախաձեռնութեամբ կայացաւ դաշնակցական ընկերների խորհրդաժողով, քննութեան առնելու առաջիկայ Ռ[այոնական] ժողովում քննուելիք հարցերը:

Ժողովին ներկայացուեց Մրգաստանի Կ[ենտրոնական] Կ[ոմիտէ]ից ստացուած Ռ[այոնական] ժողովի օրակարգը:

Տեղի ունեցաւ 3 ժողով XII Թ, 16 եւ 20ին<sup>41</sup>. մասնակցում էին տասնու եօթ ընկերներ:

1.- Հովտի շրջանի դրամական ու ռազմամթերքի մանրամասն հաշիւը առ 1 Դեկտեմբեր 907 թ. նոյնպէս եւ մօտաւոր տեղեկագիր կ'ուղարկէ Շրջանային Կ[ոմիտէ]ին:

2.- Աչքի առաջ ունենալով վերջերս յեղափոխութեան անյաջող ձեռնարկները, ժողովրդի տրամադրութիւնը, անգործ բանուորների շարքերը եւ բիւրոկրատիայի ու ժողովրդի, անհրաժեշտ է, որ ներկայ մոմենտում բոլոր յեղ[ափոխական] կուսակցութիւնները, նոյնպէս եւ Դ[աշնակցութիւն]ը, խոյս տան յեղ. խոչոր ձեռնարկներից (մեծ գործադուլներ եւ յեղ. ցոյցեր): Դաշ[նակցութիւն]ութիւնը միջոցներ ձեռք առնելը միւս կուսակցութիւններին այդպէս տրամադրելով՝ ընդունելով, որ ներկայ շրջանը միայն կազմակերպչական շրջան է: Իսկ հակառակ դէպքում, եթէ միւսների կողմից յայտարարուեց ընդ. Ռուս. յեղափոխութիւն, այդ դէպքում Դ[աշնակցութիւն]ը անկասկած, հակառակ իւր ցանկութեան, մասնակցում է այդ շարժմանը:

Ի նկատի ունենալով ներկայ քաղաքական մոմենտը, որոշուեց արհեստակցական ու գիւղացիական միութիւնների գործունէութիւնը տանել համաչափ քայլերով, աչքի առաջ ունենալով յաջողութեան շանսերը:

3.- Դ[աշնակցութիւն]ը Տաճկաստանում պէտք է լինի կատարեալ զինուած կուսակցութիւն, առանձին ուղղորդութիւն դարձնելով եւ ոչ մարտական մասսայի կազմակերպութեան վերայ: Աշխատել ամէն կերպ համերաշխ գործունէութիւն ստեղծել միւս ազգութիւնների հետ ու յարմար ժամանակին ապստամբութեան դրօշակ բարձրացնել: Ուղղորդ կերպով հետեւել Տաճկաստանի շուրջը տիրող ընդհանուր քաղաքականութեանը:

4.- Քննաբար վերաբերուել Պարսկական յեղափո-

խութեանը ու մեծ գգուշութեամբ գործել:

5.- Ցանկալի է, չդաւաճանելով մեր յեղափոխական հոգուն, համերաշխ գործել միւս ազգութիւնների հետ:

6.- Աշխատել դպրոցները դարձնել ժողովրդական, ոչ կուսակցական հովանաւորութեան տակ առնելով:

Կաթողիկոսութեան ընտրութեան համար տրուած հարցերին՝ մասնակցել պաշտօնապէս եւ ոչ պաշտօնապէս, չպատասխանուեց, որովհետեւ երկու դէպքումն էլ հակառակ է մեր ծրագրի ոգուն: Խորհրդաժողովը աչքի առաջ ունենալով, որ Դ[աշնակցութիւն]եան մասսայի մէջ այս հարցը թիւրիմացութիւնների տեղիք կարող է տալ, առաջարկում է Բիւրոյին մինչեւ ընտրութիւնները մեր մասսային տեղեկացնել ծրագրի այդ կէտի հետ:

7.- Գտնելով, որ ներկայ Ռուսաստանում կատարուող գողութիւնները ու դրամաշորթութիւնները հետեւանք են համայն Ռուսաստանում տիրող աննորմալ դրութեան, Դ[աշնակցութիւն]ը աշխատէ բարոյապէս կուռել այդ շարիքի դէմ, ակտիւ պաշտպանութիւն ցոյց տալով միայն իւր մասսային:

Ծանօթ.- 1.- Բաց թողուած հարցերի մի մասը խորհրդաժողովը գտնելով զուտ տեղական, իսկ միւս մասը բացառապէս մի քանի շրջանների ու Ռ[այոնական] ժողովին քննուելիք - ժողովը քննութեան առաւ այդ հարցերը միայն, առանց բանաձեւումներ առաջարկելու:

2.- Այս արձանագրութիւնը պէտք է ուղարկուէր Մրգաստանի ներկայացուցչին, բայց ժամանակի սղութեան պատճառով ուղարկուում է Ռ[այոնական] ժողովին յանձնելու՝ մեր շրջանի ընկեր Կուոյի ձեռքով:

Ի դիմաց ընկերների՝  
ՂԱ ... (?)  
ԿՌՕ<sup>42</sup>

22 XII 07 թիւ, Հովտ

41.- Դեկտեմբերի 9, 16 եւ 20ին:  
42.- Առաջին ստորագրութիւնը անընթեռնելի է. երկրորդ Կո՞ Տր 3ակորեանն է:

XVII

ՈՍԿԵՀԱՆՔ - ԻԶՄԻՐԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Ոսկեհանքը Իզմիրի (հին կոչումով Չմիւնիա) շրջանն է, ուր 90ական թուականներէն Հ. Յ. Դաշնակցութիւնը մուտք գործած էր եւ Իզմիր քաղաքին շրջակայ գաւառական կեդրոններուն մէջ (Մանիսա, Էտեմիշ, Աֆիոն Գարախիսար եւայլն) կազմակերպութիւն առաջ բերած: Կազմակերպական գործով հոն գտնուած էին Գարեգին Խաժակ, Մարտին Մուրատեան, Հրաչ (Թիրեաքեան):

Այսուհանդերձ Զորրոդ Ընդհ. Ժողովի թղթածրարին մէջ Ոսկեհանքի նիւթերը կազմակերպական բնոյթ չեն կրեր: Անոնք բացառաբար կը վերաբերին Յուցականի գործունէութեան:

Երրորդ Ընդհ. Ժողովի որոշումով, Ապտիւ Համիտի մահափորձին զուգահեռ եւ Հայկական Հարցի նկատմամբ եւրոպական մեծ պետութեանց անտարբերութիւնը խզելու նպատակով, պիտի ձեռնարկուէին խափանարական բնոյթի շարք մը արարքներ նաեւ Իզմիրի մէջ, որ Օսմանեան կայսրութեան երկրորդ մեծ կեդրոնն էր իր մեծ նաւահանգիստով եւ միջազգային դրամատուններով եւ այլ հաստատութիւններով: Հոս, թէւ նախապատրաստական աշխատանքները առաջ տարուած էին, բայց Մուլթանի մահափորձին ձախող ընթացքը, այլեւ Ոսկեհանքի դաւադրական ծրագրին որոշ ծալքերուն բացայայտումը, - հետեւանք գաղտնապահութեան պակասի եւ կարգ մը այլ անգոյշութեանց, պատճառ եղան նաեւ Իզմիրի ձեռնարկին վիժումին: Այս ձախողութիւնները կորստաբեր հետեւանքներ ունեցան Ոսկեհանքին համար. ընդհանուր հալածանք, մեծ թիւով դաշնակցականներու (նաեւ այդպիսին համարուողներու) ձերբակալութիւն, բանտարկութիւն, փախստականներ, բնակարաններու եւ թաքստոցներու խուզարկում, եւայլն: Այնպէս որ կազմալուծուեցաւ, գէթ ժամանակաւորապէս, նաեւ Ոսկեհանքի կուսակցական գործունէութիւնը:

\* \* \*

Զորրոդ Ընդհ. Ժողովի Ոսկեհանքի բաժնի թղթածրարը, ինչպէս ըսուեցաւ, կը պարունակէ բացառաբար Յուցականի վերաբերող նիւթեր: Հոս կու տանք Ընդհ. Ժողովին առնչուող եւ առաւել կամ նուազ չափով կազմակերպական բնոյթ ներկայացնող գրութիւնները:

1.- Տեղեկագիր Ոսկեհանքի, 1905 Օգոստոսէն մինչեւ 1906 Դեկտ.: Կը գրաւէ սովորական չափի տետրակի մը 49 էջերը. ստորագրութիւններ՝ Նահապետ, Խիզախ (Փանոսեան Հրանտ), կարմիր կնիք՝ Հ. Յ. Դաշնակցութեան Չմիւնիայի կոմիտէ:

(Կը տրուի զգալի յապաւումներով՝ խուսափելու համար ոչ շահեկան մանրամասնութիւններէ եւ կրկնութիւններէ):

2.- Կոստի Համբարձումեանի նամակը, գրուած Վառնայէն 12/15 Օգոստոսին (հաւանաբար 1905 թ.). մեծ չափի երկթերթ 6 էջ:

3.- «Դրօշակ»ի խմբագրութեան. Վիեննայէն Ընդհանուր Ժողովի Դիւանին կողմէ 1907 Փետրուար 25ին ուղղուած «Դրօշակ»ի խմբագրութեան, որ Ընդհ. Ժողովի գումարման ամիսներուն արտաքին աշխարհի հետ կապի միջոց էր:

4.- Ոսկեհանքի Ժամանակաւոր Մարմնի նամակը, գրուած Իզմիրէն 1907 Փետր. 19ին, ստացուած 18 Մարտին: Մեծ չափի գծաւոր երկթերթ թուղթի 4 էջ: Կնիք՝ Հ. Յ. Դ. Չմիւնիայի կոմիտէ. ստորագրութիւն՝ Խիզախ:

5.- Ոսկեհանքի Յուցական Կոմիտէի ընկերներու նամակը Ընդհ. Ժողովին, գրուած Եգիպտոսէն 10 Մարտ 1907ին, 1 էջ: Ստորագրութիւններ՝ Սուրէն, Անդրանիկ:



Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ՈՍԿԵՀԱՆՔԻ

1905 Օգոստոսէն մինչև 1906 Դեկտեմբեր (Համառոտ մի հայեացք մօզաւոր անցնալի վրայ)

1905 Սեպտեմբեր ամսոյն մէջ՝ խիստ հսկողութիւնները կը շարունակուէին, եւ դեռ այն ատեն ձերբակալութիւններու խոր տպաւորութիւնները անհետացած չլինելուն՝ ազատ մնացող ընկերների իւրաքանչիւրը իր տան մէջ անցկացնում էր օրուայ պարապութեան համարեա բոլոր ժամերը: Զերբակալուողների կողմից եղած մատնութիւնները այնքան վատ ազդած էին տեղական ժողովրդի վրայ, որ ոչ մէկը չէր վստահում իր նմանին: Ատելութիւն ու սարսափ կար ամէն կողմ: Եթէ նոյն ժամանակներում արիւնահեղութիւն կամ կոտորած լինէր, այնքան չպիտի սարսափեցնէր հայ բնակչութեան եւ մեր ընկերներին՝ որքան էր մատնութեան սարսափը:

Ձախողուածքի ծագման օրերում տեղական ընկերներից մի քանիներ ցանկութիւն էին յայտնել արտասահման ելնելու, բայց տեղական մարմնի կողմէ — տեղական ուժերը ձեռքէ չհանելու համար — տրուած որոշման համաձայն տեղացի այն ընկերները՝ որոնց վրտանգուկը անխուսափելի չէր նկատուեր, տեղս մնացին: Հետզհետէ սպառնացող վտանգին ենթակայ կարգ մը ընկերներ, արտասահման փախչելու հնարաւորութիւն չլինելուն՝ ձերբակալուեցան: Այդ միջոցին ունեցանք տեղոյս մէջ երեք վտանգուած ընկերներ — դրամի չգոյութեան առաջ անօգնական եւ փախչելու կարօտ ընկերներ — որոնց վիճակին դարման տարուելու համար մեր ընկեր կարոն 14 օսմ. ոսկի նուիրեց. այս դրամը անմիջապէս տրամադրուեցաւ վտանգուած երկու ընկերներին՝ «Վուամին ու Խենթին», բայց զանոնք արտասահման հանելու միջոցները եւս ձեռքէ ելած լինելուն, կարճ ժամանակամիջոցի մէջ անոնք եւս ձերբակալուեցան. նոյն օրը երկու ընկերներ եւս բանտարկուեցան, որոնք այժմ իրենց բանտարկութեան բաժինը լրացուցած եւ արձակուած լինելուն, արտասահման ելան. այժմ այս վերջինները (երկու եղբայր) Ալեքսանդրի կը գտնուին. իսկ առաջինները իրենց ողորմելի խոստովանութեանց հետեւանքով հարիւր մէկ տարուան դատաւարտուեցան: Ըսինք թէ երկու ընկերներու վտանգուելուն պատճառը փախուստի միջոցներուն չբոյլութիւնն էր: Իրօք թէ պէտեւ սկիզբները փախուստի բոլոր միջոցներուն հսկողութեան տակ առնուելովը

հնարաւոր չէր փախուստի դիմել, բայց քանի մը շաբաթ յետոյ դարձեալ գոյութիւն ունեցան, միայն թէ աւելի սուղ գինով, որուն բաւականութիւն տալու համար մեզ նիւթական միջոցներ պակսելուն՝ բանտարկուած ընկեր ձակատին դիմեցինք: Խոստովանելու ծագած օրերուն տեղական մարմնի ընկերները տեղէս մեկնելու ժամանակ ձակատին 60 օսմ. ոսկի յանձնած էին տեղական պէտքերու գործածելու համար. յետոյ ձակատը եւս բանտարկուելով իր մօտ պահած այդ դրամը, առանց նոյն միջոցին բանտարկեալ ընկերներու ստիպողական պէտքերը հոգալու, եւ առանց իր մօտ եղած դրամի մասին ծանօթութիւն տալու, եւ վերջապէս ազատ մնացող ընկերներու կողմից իրեն եղած դրամական դիմումներուն բաւարարութիւն տալու: Ահա այդ պատճառաւ բանտարկուեցան Վուամը եւ հետեւաբար վերոյիշեալ երկու եղբայրները:

Մատնութիւններու տեսակէտով Նալբանդեան երկու եղբայրներուն հաւասարող ձակատը երկար մնաց իր նոյն դիրքին մէջ, երեւի ընկերների բանտարկուելուն պատճառ լինելով հանդերձ ստորնաքաշ մերկացումներ ըրաւ՝ նոյնիսկ առանց տանջանքի ենթարկուելու. իր գաղափարակից ընկերին՝ «Պալսամոյին» կորուստեան մատնեց. տանջանքների մէջ կեղծքուղ ընկերներին՝ կաշառքով տանջանքէ ազատելու հնարաւորութեանց տակ անգամ, սանթիմ մը չտրամադրեց իրեն յանձնուած դրամէն, նա այդ միջոցներին իր անձնական պէտքերը հոգաց եւ շատ վերջը սկսաւ դուրս հանել իր մօտ պահած դրամները. այժմ մեր այս մեկնաբանութիւնը կարելի է ստուգել բանտարկութենէ ազատուած եւ արտասահման եղած ընկերներէն: Ահա այսպէս ձակատի պարսաւելի տրամադրութեան հետեւանքով, տանջանքներու ենթակայ մի քանի ընկերներ՝ կառավարութեան առաջ խոստովանեցան ինքզինքնին եւ նոյնպէս իրարու անկարգապահական տկարութեամբը փոխանակած գաղտնիքները, եւ այս վերջիններու բանտարկին խոստովանութիւնները այնքան պախարակելի չեն որպիսին են Նալբանդեան երկու եղբայրները եւ ձակատը: Վերոյիշեալ իրողութեանց պատմութիւնը վերջացնելէ առաջ պէտք կը զգանք ըսել որ թէ պէտեւ բանտարկութեան ճնշումներու տակ խոստովանութիւններ եւ

մերկացումներ եղան, բայց եւ այնպէս դրանք ընկերների չար տրամադրութեան մի արդիւնք է. նրանց խոստովանութիւնները հետեւանք են տկարութեան եւ անփորձ անխելահասութեան: Որքան ալ պախարակելի նկատուին տեղոյս բանտարկեալ ընկերների խոստովանութիւնները, սա ճշմարիտ է որ նրանց շատերը դէպի գործը եւ ազգային դատին համար օգտակար լինելու տրամադրութեամբը մինչ այն կէտ աշխատելով նրապատեցին գործին առանց մի փոքրիկ ձախողուածք մը յառաջ բերելու. բայց աստի գործունէութեանց վիժելուն սկզբնապատճառը չեղան. մեր այդ վերջին ըսածին վրայ պնդելով կ'աւելցնենք թէ տեղոյս այսօրինակ ձախողուածքներու ենթակայ լինելը եւս Վիշապի՝ ընկերներու մի սխալ ընթացքին արդիւնքը կարելի է համարել:

Տեղոյս բանտարկեալ ընկերներու գրեթէ բոլորին խոստովանութիւնները, անհաստեւութեան եւ անկարգապահութեան արդիւնք պէտք է համարել:

Ներկայիս այս երկու տկարութիւնները բուժելու համար պէտք է մեր շրջանի պրոպագանդի գործին բաւական ատեն հոգ տանել: Մեր շրջանի հայաբնակ վայրերուն մէջ պրոպագանդ տարածելու, կազմակերպութիւն յառաջ բերելու համար, պէտք է տեղէս դէպի այդ վայրերը խելահաս ընկերներ ուղարկուին: Լեռնադաշտի եւ Հուր Երկաթի՝ մէջ ընկերներ ունինք. կարելու է անոնց ընթացքին մօտէն հսկելու համար այդ վայրերը եւս ընկերներ ուղարկել եւ ապահովել դրկուած ընկերներու նիւթական վիճակը...:

Տեղական ձախողուածքէն յետոյ մեր վիճակը.

1905 Սեպտ. ամսոյն խոստովանութիւններու շարունակութեան եւ ձերբակալութիւններու դադրած միջոցին, մեր երկու ընկերուհիները՝ Սուսան եւ Քոյր, իրարու հետ նախկին յարաբերութիւնները կը շարունակէին, երբ կը ստանան նամակ մը արտասահման ելած ընկեր Անդրանիկէն<sup>3</sup>, որ ձակատի ձերբակալուելուն անտեղեակ եւ սրանից որեւէ նամակ մը ստացած չլինելուն դիմած էր երկու ընկերուհիներուն թղթակցութեան, հետեւաբար մեր ընկերուհիները [կը] սկսին կանոնաւոր կերպով թղթակցիլ ընկեր Անդրանիկի հետ: Նոյն ատենները մեր ընկեր Վազգէնը իր 21 օրուայ բանտարկութենէն արձակուելով, կը փնտռէ ու կը գտնէ ընկերուհիներին, եւ անոնց հետ միանալով ընկեր Անդրանիկին կը տեղեկագրեն բանտարկեաների կարօտ վիճակը, ձակատին դրամ տալ մերժելը, եւ դուրսի վտանգուած ընկերով մը կարօտ կացութեան մէջ լինելը: Յիշեալ նամակը ուղարկելէն մի քանի օր յետոյ վտանգուած ընկերը՝ «Վուամը» ձերբակալուեցաւ, եւ անկէ յետոյ յիշեալ երեք ընկերակիցները ընկեր Անդրանիկէն դրկուած 500 Փրանք կը ստանան: Այս 500 Փրանքը Վազգէնը փոսթէն գանձելով իր մօտ կը պահէ եւ հարկ տեսնուած ժամանակ բան-

տարկեալներու պէտքին համար կը սկսի ծախսել: Հոս հարկ կը համարենք մեր պատմութիւնը ընդհատել եւ քիչ յետոյ շարունակելու համար՝ ուրիշ մի կէտի մասին խօսիլ:

Լեռնադաշտը մեր ընկերական շրջաններէն մին է. խոստովանութիւններու ծագումէն քանի մ'օր առաջ հոն տեղէս ուղարկուեցաւ 25 մառազերական ատրճանակ, իրենց մասնաւորուած փամփուշտներով. եւ յետոյ ընկեր Անդրանիկը Վուամին հետ ուղեւորուեցաւ...

1905 Դեկտեմբերի սկիզբին ընկեր Անդրանիկէ ստացուած նամակի մը համեմատ 500 Փրանքի հաշիւը կը պահանջուէր, մանրամասն եւ օրագրական ձեւով: Սոյն գումարը փոստէն Վազգէնը գանձած եւ իր ձեռօք ծախսած լինելուն համար, մեր կողմէ եւս հաշիւ պահանջուեցաւ Վազգէնէն, սա եւս այդ ծախսերուն հաշիւ չբռնած եւ ինչ ծախսեր ըրած լինելը մոռցած ըլլալը առարկելով՝ վերջապէս խոստացաւ հաշիւ պատրասել եւ ներկայացնել մեզ: Մի քանի օր յետոյ Վազգէն իր անձնական գործին համար իր ծննդավայրը ուղեւորուելուն հետեւանքով թէ եւ ուշացուց 500 Փրանքի հաշիւը, սակայն նրա այս յետաձգումէն եւս չկասկածելով այդ առթիւ որեւէ դիտողութիւն մը չըրինք: Նոյն օրերուն Վազգէնի կողմէ ընկեր Անդրանիկին գրուած մէկ նամակին հետեւանքով 70 Փրանք ստացանք նոյնէն, որը Սուսանի եւ Քոյրին մօտ պահ դրուելով հարկ եղած ժամանակ բանտարկեալներու եւ կազմակերպական պէտքերու համար ընդհանուր համաձայնութեամբ ծախսուիլ սկսաւ: Մինչ այդ Լեռնադաշտի մեր ընկերներուն հետ յարաբերութիւն չունէինք. անոնց հետ յարաբերութիւն սկսելու եւ նոյնպէս Լեռնադաշտի մէջ Վահագնէն տան հորը նետուած գէնքերը հանելու համար թէ-եւ անհրաժեշտ էր հոն մեր կողմէ ընկեր մը ուղարկել, բայց ուղեւորութիւնները եւ մասնաւորաբար տեղէս ուղեւորութիւնները կառուաները ուղեւորուելուն ապահովութիւնը կասկածելի լինելուն, կազմակերպական ծախսով Լեռնադաշտէն ընկեր մը տեղս բերուեցաւ: Եկողը Վահագն էր: Պատուիրուեցաւ ասոր թէ՛ Վահագնէնց տան մէջ նետուած գէնքերը կարելի եղած ջանքերով հանուին, եւ նոյնպէս բացատրելով անոր՝ ապահով թղթակցութիւն ունենալու միջոցը, նա վերադարձաւ Լեռնադաշտ: Այնուհետեւ Լեռնադաշտի ընկերներին հետ մեր ունեցած թղթակցութեամբ յարաբերուելով, իմացուեցաւ թէ Վահագնէնց հորը գէնքերը նետուելէ յետոյ Վահագնի մայրը բաւականաչափ հոգ եւ աղբ թափել է վրան զանոնք անգտանելի դարձնելու համար, եւ

1.- 4. Պոլսոյ կուսակցական ծածկանուցներն մէկը:  
2.- Գուր Երկաթը Մանիսա քաղաքի ծածկանուցն է:  
3.- Պոլսոյ եւ Իզմիրի տեղական դեկավարներն, որ Ոսկեհանքի դաւադրական ձեռնարկներու վիժումէն ետք ստիպուել էր հեռանալ Իզմիրէն: Մակաճուճը անձնաւոր է մեզի:

Թէ կառավարութիւնը այդ հորէն կասկածելով, ուսմբ կամ ուժանակի հետք գտնելու դիտումով հորին մէջ քարեր նետեր է, եւ թէ քար մը դէպի հոր նետուած ժամանակ ներկայ եղող ոստիկանները ինչպէս կը փախչին եղեր որպէսզի կարծեցեալ ուսմբերը պայթելով իրենց չվնասէ, թէ դրացի եւ տեղացի շատ մը յոյներ ինչ չարախօսութիւններ ըրեր են տեղացի հայերուն մասին, եւ վերջապէս զէնքերը հորէն հանելու անկարելութիւնը: Ահա այս կերպով սկսաւ Լեւոնադաշտի ընկերներուն հետ մեր յարաբերութիւնը: Բայց միեւնոյն ատեն ապարդիւն՝ այդ տեղի զէնքերը հանելու համար մեր կողմէ եղած ծախսերը՝ Նոյն ատենները՝ մեր բանտարկեալ ընկերները իմացած ըլլալով իրենց դատավարութեան մօտալուտ լինելը, տեղական հիւպատոսներին ուղարկուելու համար խնդրագիր պատրաստելով մեզ ուղարկած էին, որը ընկեր Անդրանիկին ղրկեցինք որպէսզի անոր հաւանութեամբ յանձնենք խնդրագրերը հասցէներին: Նա եւս հիւպատոսներուն ղրկուելու արժանի Ծ խնդրագրեր փութով պատրաստելով մեզ ղրկեց, միեւնոյն ատեն դիտել տալով մեզ թէ այդ խնդրագրերու մասին առանց իրեն հաւանութեան դիմելու պէտք էինք ցրուել հասցէներին: Պատրաստուած խնդրագրերը ցրուեցինք հիւպատոսներին:

Բացի Լեւոնադաշտէն՝ Հոլը Երկաթի մէջ եւս ընկերներ կային: Գաւառական ձերբակալութեանց խստութիւններէն թէպէտեւ ամէնէն շատ Հոլը Երկաթը տուժեց, բայց հոն պարզուած իրողութիւններուն լաւատեղեակ չլինելուս այժմ զանց կ'ընենք այդտեղի մասին խօսիլ.....

1908 Յունուար ամսի սկիզբները՝ Վազգէնը իր ծնընդավայրէն վերադարձած էր, եւ դեռ բանտարկեալ տղաք դատարան հանուած չէին: Իմացուեցաւ թէ տղոց դատավարութիւնը մի քանի շաբաթ եւս պիտի յետաձգուի, ըստ որում մեր բանտարկեալ ընկեր Փարսատը՝ դատարանի մէջ կարդացուելու համար պաշտպանողական ճառ մը պատրաստելով մեզ ուղարկեց զայն թուրքերէնի թարգմանել տալու համար: Մենք եւս Վազգէնի յանձնեցինք, որպէսզի կարող եւ յարմար տաճկաբանի մը թարգմանել տայ: Բայց Վազգէնի մեզ տուած ծանօթութեանց համեմատ յիշեալ ճառը թարգմանելու յօժարութիւն ցուցնող մը չգտնուելուն, եւ մանաւանդ ճառին թարգմանութիւնը փութացնելու ստիպողականութեան տակ՝ Վազգէնի միջոցաւ «մեզ ցարդ անծանօթ մնացած» տաճկաբանի մը երկու օսմ. ոսկի վճարելով թարգմանել տուինք եւ փութացուցինք բանտ.....

..... Ճիշդ նոյն ատեններն էր որ Վազգէնը իր ստացած 500 Փրանքին հաշիւը պատրաստելով կը ներկայացնէ Խիզախին, որը մանրամասնաբար զայն քննելէ յետոյ թերի կը գտնէ, եւ այդ պատճառաւ կը սկսի կասկածիլ Վազգէնի հաւատարմութեան վրայ, որով Վազգէնի մասին ծանօթութիւններ կը հաւաքէ կարգ մը

Վազգէնի մօտաւոր անցեալի եւ ներկայ վիճակին նրկատմամբ տեղեկութիւն ունեցող անձերէ: Ճիշդ է որ Վազգէնի ինքնութեան համար Խիզախի քաղած ծանօթութիւնները մասամբ մը խուճարար տղոց տուած բացատրութիւններուն արդիւնքն էին, բայց եւ այնպէս ատոնք բոլորովին ստուգութենէ զուրկ չէին կրնար ըլլալ՝ քանի շիտակ անհատներ եւս շուկայական ասպարէզին մէջ Վազգէնի հետ պաշտօնակցած լինելուն, կը յայտնէին թէ Վազգէն իր ՉՂ օրուայ բանտարկութենէն յետոյ իր պաշտօնատէրերէն 10 օսմանեան ոսկի գողցած ըլլալուն համար պաշտօնանկ եղեր է եւ այս պատճառաւ է որ գործ մը ցարդ չկրցաւ գտնել: Ի բաց թողնելով Վազգէնի անցեալին նկատմամբ շրջած գրոյցները թէ նա անփայլ բարոյական մը ունեցեր է, կը յայտնենք թէ Վազգէնը մեզ հետ խորհրդակից ընկեր եղածէն ի վեր անգործ կը պտտէր եւ սա փաստ մը նկատուեցաւ Խիզախի կողմէ, նոյնպէս նաեւ Վազգէնի ներկայացուցած հաշիւին բացայայտ կերպով թերի լինելը: Նոյն օրերուն ընկերուհիներու եւ Վազգէնի ներկայութեանը Խիզախը իր քաղած վերոյիշեալ տեղեկութիւններուն համար բուռն կերպով դիտողութիւններ կ'ընէ եւ Վազգէնի անվստահելի լինելը պատճառաբանելով կը յայտնէ թէ՛ այնուհետեւ ընկեր չ'ընդունիր զայն: Խիզախի այս դիտողութիւնները շատ տխուր տպաւորութիւն մը թողեցին երկու ընկերուհիներուն վրայ: այս վերջինները Վազգէնին յիշեալ ընթացքներուն մասին տեղեկացած չլինելուն, կարծիք մը չյայտնեցին, բայց ամէն ինչ ընկեր Անդրանիկին տեղեկագրելու եւ այս տեսակ տիրանկարներու վերջ մը գտնելու համար, իրենց տեսածներն ու յաճոնները ընկեր Անդրանիկին տեղեկագրեցին: Թէ՛ ինչ գրեցին ընկերուհիները, այդ մասին ծանօթութիւն չունինք: Վազգէնը եւս իր խնդիրքը տեղեկագրեց ընկեր Անդրանիկին, Խիզախը նոյնպէս առանձին նամակով եւ Վազգէնի ներկայացուցած 500 Փրանքի հաշիւով իր դիտողութիւնները յայտնեց Պրն. Անդրանիկին: Հոս տեղն է ըսելու թէ՛ ընկեր Անդրանիկը իր պատկառելի եւ համակրելի դիրքովն ու վարմունքովը, տեղոյս բոլոր մեր ընկերներուն պատկառանքն ու համակրանքը շահած էր եւ կը սիրուէր կը յարգուէր մեր ամէնքէն: Թէպէտեւ նա կրակոտ խօսող մը չէր, բայց տեղս այցելող ընկերներուն մէջ խորհելով խօսող ընկեր մըն էր: Նրա խօսքերը խանդավառութիւն չէին պատճառեր, նա գործի մարդ էր: եւ անոր համար խօսքերը պարտաճանաչութիւն եւ կոչումի գիտակցութեան գոհողութիւն կը սորվեցնէին, իր ոճը սրտապնդում կը պատճառէր, եւ իրեն յատուկ հանդարտութեամբ ու

4.- Ճարհատ եւ Սեպուի ծածկանուճներն են Պանքի Պարսի (Պայկ Թիրեպեան), որ 1902ին ձերբակալուած էր Իզմիրի մէջ, երբ կը կազմակերպէր Կաճքի ժողովին որոշած բռնի հանգամանակները: Կիլիկիոյ Պատասխանատու Մարմնին ի նպաստ:

համբերատարութեամբ պատմած առակներն ու մէջ բերած օրինակները՝ իր դաւանած սկզբունքին եւ յայտնած գաղափարներուն ճշտութիւնը փաստող մէկ մէկ ապացոյցներ էին: Նա հոս եղած միջոցին հանգիստ չէր երբեք ինչու որ ամէն կողմէ անոր պէտքն ու ներկայութիւնը զգալի կը լինէր: Նա կը վազէր դէպի խուճար ընկերները եւ անհամաձայնութեան մէջ եղած խուճարին, ու մէկէն կը դադարէին խուճարութիւնները, նաեւ անհամաձայնութեանց կը յաջորդէր միութեան, համերաշխութեան ոգին:

Եթէ պրն. Անդրանիկի պատրաստած կամ գործած ընկերները բանտային ճնշումներու տակ մերկացումներ ըրած են, կը կարծենք թէ ատոնց պատասխանատուութիւնը բոլորովին ընկեր Անդրանիկին վրայ չի ծանրանար, ինչու որ՝ առաջին, ուրիշ չըջաններու գործունէութեան յարակից գործունէութիւն մ'ալ մեր շրջանին մէջ ունենալու կարելութիւն զգացուելով, դեռ անհասունութեան մէջ եղող մեր շրջանի ընկերներուն գործին մասնակցելը անհրաժեշտ համարուեցաւ եւ անմիջական պարտք դրուեցաւ մեր տեղական շրջանին վրայ: Երկրորդ, թէ՛ Ընդհանուր Ժողովի այս որոշումը եւ թէ՛ ուսու եւ ճապոնական (պատերազմին) մեր դատին նպաստող վախճանը նկատելով, հակառակ ժամանակի եւ առիթի յարմարութեանց՝ միջոցներ պակասեցան տեղական անկարգապահ ընկերներին եւ իրենց կոչումին չգիտակցողներին որոշ կատարելութեան մը հասցունելու: Ընկեր Անդրանիկի թափած հոգածու ջանքերն հազիւ հազ բաւեցին այսքան պատրաստութիւններ ի կատար հանուելուն: Նախկին ըմբոստացող տղոց մեզ հանդէպ հանած դժուարութիւնները եւ անզաղտնապահական մերկացումները, նոյնպէս մեր ընկերներին պիտոյրելու ու ջլատելու համար թափած ջանքերը, այս բոլորը առ ոչինչ համարուեցան շնորհիւ ընկեր Անդրանիկի հոգածութեան, եւ այդպէս մեր ընթացքը շարունակելով եղած կարգադրութիւնները գործադրուեցան՝ անձայն անշուղկ կերպով: Մինչ այս կէտ գործը յաջողուին պէտք չէ՞ որեմն գնահատել ընկեր Անդրանիկի կարողութիւնը կամ ընդունակութիւնը: Բացայայտ կերպով իմացուեցաւ իրողութիւններէն, թէ մեր ընկերական գործունէութեանց վիժելուն սկզբնապատճառ մը չեղան տեղական մեր բանտարկուած ընկերները: Եթէ Վիշապի տղոց մէկ սխալ քայլը չլինէր՝ մեր գործունէութիւնները նախանձելի կերպով պիտի յաջողէին: ..... Բաց աստի կը խոստովանինք որ մեր այս քննադատութիւնը մեր վերջերս իւրացուցած փորձառութեան արդիւնքն է, որը կ'ուղղենք այն ընկերներուն, որոնք իրենց սխալը խոստովանելու քաջութիւնը չունին: Ներկայի որեւէ սխալը ընդունելը կրնայ ապագայի յաջողութեանց պատճառներէն մին ըլլալ: Վերջապէս գործունէութեանց վիժելուն պատճառները կարելի է նկատել անշրջահայեցողութիւնը, անփափկա-

նկատութիւնը քան թէ անփորձառութիւնը, ասկէ աւելին մեզ անծանօթ է: Մենք համոզուած ենք որ երբ մեր գործակից ընկերները կը լինին մաքուր բարոյականի, ազնիւ ու պարկեշտ նկարագրի տէր եւ ազգին ցաւերով վառուած անշահախնդիր անձնուէր գոհաբերողներ եւ չեն ունենար Ես եւ փառասիրական ձգտումներ, մեր բոլոր գործունէութիւնները յաջող դուրս կու գան: ..... Պէտք է նոյնպէս արգիլել առանց խորհրդակից ընկերներու հաւանութեան ունէ ընկերող ինքնաբերաբար առած քայլերը: Մենք՝ որ այժմ սոյն խորհրդածութիւնները ընելու կարող եղանք եւ ներկայիս մեր թերութիւնները զգալով մեր ներքին տագնապները խոստովանելու ինքնաճանաչութիւն եւ քաջութիւն ունեցանք, այս բոլորը մեր ընկեր Անդրանիկին թափած ջանքերուն արտադրութիւնն է: Նա մեր տեղական դժբախտութեանց օրերուն տեղէս հեռանալ ստիպուելով՝ մեծ պակաս մը թողուցած եղաւ մեր շրջանի ընկերներուն մէջ: այսուհանդերձ Անդրանիկի մեզի ղրկած նամակները զգալի փոփոխութիւններ առաջ բերին մեր մէջ: եւ նա իր նամակներով անգամ մեր խորհրդակերպի տկարութիւնները դարձանց ըստ կարելոյս: Աւելորդ կը համարենք հոս կրկնել թէ Խիզախ՝ Վազգէնի նկատմամբ ինչ դիտողութիւններ ըրաւ Անդրանիկին: Այդ առիթը խնդիրը երկուստեք քննելու անկողմնակալութեամբ եւ միեւնոյն ատեն ներկայ մեր տեղեկագրին մէջ պակաս կէտ մը չթողելու համար պարտ կը զգանք թուել Վազգէնի առարկութիւն-պաշտպանողականները, որ հետեւեալն է. Վազգէնը Խիզախի ըրած դիտողութիւններուն դէմ կը պաշտպանէր ինքզինքը ըսելով թէ իր աշխատած խանութի տէրէն 10 ոսկի գողցած եւ պաշտօնանկ եղած չէ, այլ՝ նոյն գործէն դժգոհ ըլլալուն համար: Նոյն խանութի տէրը (որ չարամիտ մէկն է եղեր) հարկադրելու համար Վազգէնին որպէսզի դարձեալ երթայ հոն աշխատելու յատկապէս իբր գող հուսած կեր է ամէնուն առջեւ Վազգէնին: Բաց աստի ըսաւ թէ «ոեւէ ընկեր որ յեղափոխական գործին անթերի կ'աշխատի կրնայ իր անձնական կամ շուկայական գործերուն մէջ թերութիւն կամ անազնութիւն ունենալ: ատոր համար պէտք չէ զայն դատապարտելով անձնական գործին հետ չփոթել ընկերականը: եւ թէ 500 Փրանքի գումարը ինք ստանալէն յետոյ չէր կարծեր որ օր մը իրմէ հաշիւ պիտի պահանջուի: այդ պատճառաւ հաշիւ բռնած չըլլալուն, իր ինչ բաներու ծախսած լինելը իր մտքէն ելեր է, ըստ որում հարկադրուել է հաշիւ մը Վարմարցնելու»,- ահա ասոնք էին Վազգէնի պաշտպանողական առարկութիւնները, որմէ յետոյ կ'աւելցուէր նաեւ թէ Խիզախը կարգ մը խուճարար տղոց թերութիւններով է որ դիտողութիւններ կ'ընէ եւ ոչ թէ Խիզախի ըրած դիտողութիւնները իրաւացի ստուգութիւն մ'է: .....

.....Խիզախի ըրած դիտողութիւններէն յետոյ տե-

դական ընկերներու հետ մեր ունեցած յարաբերութիւնները չդադրեցան. նոյն ատենները Խիզախի միջոցաւ յարաբերութիւն պահուեցաւ Համակիրներու շրջանի Արաբո խումբի, Արեւ խումբի, Հրեշտակի, Թռչունի հետ, նոյնպէս ընկերական շրջանէն Տանուտէրի, Առիւծի, Սեբաս. Հրաչեայի<sup>5</sup> հետ: Հուր Երկաթի եւ Լեռնադաշտի ընկերներու հետ եւս յարաբերութիւն շարունակեցինք. այժմ վերոյիշեալներուն հետ (բացի Հրաչեայէն որ մեկնեցաւ Ալեքսանդրիա) ամէնուն հետ յարաբերութեան մէջ ենք: Տեղական ձեռքարկութիւններու ատեն ձակատի բանտարկուելէն մի քանի օր յետոյ՝ ձակատի աշխատած վաճառատան մէջ ուստիկանութիւնը մանրակրկիտ խուզարկութիւն կատարեց. հող խտութիւններէն առաջ գէնքեր փոխադրուած ըլլալը ձակատի խոստովանութեանը արդիւնք կարծուեցաւ (այժմ եւս կասկածներ ունինք այդ մասին): նոյն վաճառատան մէջ ունէինք Համակիր ընկեր մը, որը հակի մը մէջ գետեղեր է հոն փոխադրուած գէնքերը: ..... Խուզարկուները թէպէտեւ մանրակրկիտ խուզարկութիւն կը կատարեն եւ գոց ապրանքներու հակերը կը բանան, բայց բարեբախտաբար կը դժուարանան գէնքեր պահուած հակը եւս բանալու, ըստ որում բան մը չգտած կը մեկնին:

Այսուհանդերձ նոյն վայրին մէջ կրկին խուզարկութիւն մը հաւանական նկատելով գէնքերը Խիզախի պաշտօնատեղին կը փոխադրուին եւ կը թաղէ գետնա-յարկին մէջ: Այդ իրողութեան վեց ամիս յետոյ, Խիզախը Վազգէնի մասին դիտողութիւններ ընելէն քանի մօր վերջը, Խիզախը իր պաշտօնատեղին մէջ թաղուած գէնքերը փոխադրեց կարոյի տունը. այս գէնքերէն մի քանի հատը բաւական ժանգոտած լինելուն, կարոյի տան անյարմարութեան պատճառաւ կարելի չեղաւ զանոնք մաքրել, եւ քանի մը ամիս յետոյ ընկեր Տանուտէրի աշխատած պաշտօնատեղին փոխադրուեցան, ուր Տանուտէրի թափած հողածու ջանքերուն շնորհիւ բոլոր ժանգոտածները մաքրուեցան, նոյնպէս մեր բոլոր գէնքերը սրբուելով իւղոտուեցան: Մեր տեղական գէնքերու ցանկը ուղարկած ենք ընկեր Անդրանիկին, մեր կազմակերպական գէնքերու ցանկը՝ նմանապէս:

Վազգէնի ինքնութեան մասին ընկեր Անդրանիկին գրուած նամակներէն մօտաւորապէս շաբաթ մը յետոյ երկար նամակներ ստացանք ընկեր Անդրանիկէն, որը մտաբերելով իբր մեր խարխուլ վիճակի մէջ լինելը, փութացած էր մեզ Համերաշխութիւն յորդորելութիւնով անցնալի կարգ մը անհամաձայնութիւններու տխուր հետեւանքները՝ մեզ խորհուրդ տուած էր Վազգէնի հետ հաշտուելու որպէսզի կուսակցութիւններ կազմուելով գործը եւ ազգային դատը չտուժէ, նոյնպէս կը յորդորէր մեզ որ ուրիշներու թելադրութիւններուն ահանջ չկատենք, ունէ թերութեան առաջին պարագային ընկեր չդատապարտենք, այլ յորդորենք զայն

որ ուրիշ անգամ չընէ, եւ եթէ նա շարունակէ իր թերութիւնները՝ այն ատեն միայն պէտք է նախադաս ընկերներու միջոցաւ յարմար տնօրինութիւն մը ընել:

..... Այս յորդորական խրատները իրենց մանրամասնութեամբ կարդալով զգացուեցանք շիտակը. Խիզախը եւս զգաց թէ պէտք էր Վազգէնին ընկերուհիների ներկայութեանը պարսաւել բուռն կերպով, հետեւաբար Խիզախ եւ երկու ընկերուհիներ գործին օգտակար լինելու տրամադիր, Վազգէնի խնդիրը եւ ընկեր Անդրանիկէն եկած նամակները մէջտեղ դնելով խորհրդակցեցանք եւ որոշելով Վազգէնի հետ համերաշխիլ՝ գործադրեցինք մեր որոշումը. Խիզախը եւս իր կողմէ ներողութիւն խնդրեց Վազգէնէն ընկերուհիներու ներկայութեան ըրած բուռն դիտողութիւններուն համար:

Չմոռնանք ըսել թէ ընկեր Անդրանիկը ետ վերադարձուցած էր մեզ Վազգէնի 500 Փրանքի հաշիւը, խնդրելով որ մեր այնուհետեւ ստացած դրամներու հաշուին հետ կանոնաւորելով ներկայացնենք իրեն:

Փետրուար ամսի սկիզբին՝ տեղույս բանտարկեալ ընկերներու դատաւարութեան համար մասնաւոր տեղ մը կը շինուէր կառավարական պաշտօնատան մէջ: Կառավարութիւնը՝ հայ քաղաքական 43 բանտարկեալներու դատաւարութիւնը դռնբաց ընել որոշած ըլլալուն՝ նկատելով որ շատ փոքր է դատաստանի սենեակը, պէտք համարած էր մասնաւոր ընդարձակ տեղ մը շինել տալու որպէսզի բազմաթիւ ունկնդիրներու առաջ կառավարութիւնը պարծենար իր ըրած գիւտերու եւ յաջողութիւններու մասին: Ուստի մօտաւորապէս դատաւարութեան համար պատրաստութիւններ կը տեսնուէր բանտարկեալ ընկերներու եւս ծանուցագրեր ուղարկուեցան, ամէն մարդ անհամբեր եւ հետաքրքրութեամբ կը սպասէր դատաւարութեան սկսուելուն, եւ ահա յանկարծ կառավարութիւնը փլել տուաւ իր շինել տրուած դատաստանական շէնքը. այս իրողութեան նկատմամբ թէեւ տեղույս հասարակութիւնը տարբեր մեկնութիւններ տուաւ սակայն կարծ ժամանակամիջոցին մէջ լուսաբանուեցաւ եղելութիւնը. Անդրանիկէն ստացուած նամակէ մը իմացուեցաւ թէ արտասահման եղած մեր մի քանի ընկերներու կողմէ սպառնազիր ուղարկուել է տեղույս ընդհանուր դատախազին: Այս կերպով տղոց դատաւարութիւնը յետաձգուեցաւ....: Հոս պէտք կը զգանք ըսել թէ յիշեալ 43 բանտարկելոց բոլորը ընկերներ չէին մեզի. այս 43 բանտարկեալներուն մէջ կային նաեւ նախկին ըմբոստացող տղաներէն մի քանիներ: Բանտարկեալների գրեթէ կէսը Հուր Երկաթիցիներ էին եւ նոյնպէս երկու հոգի Լեռնադաշտէն (այժմ ազատ ընկեր), իսկ մնացեալները տեղացիներ են. ասոնց բոլորին անունը ընկեր Անդրանիկին ուղարկը

5.- Իզմիրի ընկերներուց ինքնուրուիւնը, ինչպէս եւ խումբերու անունները, ընդհանրապէս անօճանօք են մեզի:

ւած տեղական թուրք թերթերուն մէջ դատաւարութեան միջոցին արձանագրուելուն եւ այժմ մեր յիշողութենէն մի քիչ ելլելուն (պատճառաւ) ստիպուեցանք չիչել հոս ասոնց անունները:

Յիշեալ դատաւարութիւնը յետաձգուելէն յետոյ, Ամերիկացին (սրան ով լինելը Անդրանիկը գիտէ) Խիզախի հետ ընկերապէս յարաբերութիւն ունենալ ուզելով մի քանի անգամներ տեսակցութիւն կ'ունենայ: Մենք՝ որովհետեւ չգիտէինք թէ նախկին ընկերներէն որոնք ազատ մնացած են, ընկեր Անդրանիկի խորհրդով կը յարաբերուէինք յարմար դատուածներու հետ. երբ Ամերիկացին այսպիսի ցանկութիւն մը յայտնելը իմացանք առաջին առթիւ ընկեր Անդրանիկին դիմեցինք մեր մի նամակով, որուն հետեւանքով իմացանք Ամերիկացիի անօգտակար մէկը եւ նաեւ հետաքրքիր ու շատ խօսող լինելը. ուստի խուսափողական դիրք բռնեցինք նրա հանդէպ: Ամերիկացիի յայտնած կարծիքները աննրպաստ եւ վնասակար գտանք ներկայ պայմաններուն համար. սակայն պնդէր..... թէ պէտք է տեւորի ենթարկել մատնիչները եւ բանտարկեալ ընկերների մեղսակցութեան մասին վկայութիւն տուողներին: ..... Տեղույս հայութիւնը խստութիւններ է վեր իր կրած վնասներու ազդեցութիւնը կը կրէր, եթէ տեւոր մը կամ գործ կատարուէր ինչ պիտի լինէր տեղական հայութեան եւ նոյնպէս մեր սաղմնային վիճակը:

..... Դեռ այն ատեն մեզ համար ժամադիր լինելու, խորհրդակցելու յարմար վայրեր կը պակսէին, ուստի Վազգէնի հետ հաշտուելէ յետոյ մի քանի անգամներ Սուսանեց տունը հաւաքումներ ունեցանք: Այդ հաւաքումներուն մէջ կը պարզէինք մեր ըրած եւ ընելիք բոլոր գործերը որով համաձայն եզրակացութենէ մը յետոյ ի գործ կը դնէինք մեր իւրաքանչիւրի պարտաւորութիւնները: Այդ միջոցներուն էր որ Սեբաստ. Հրաչեան արտասահման չուղարկելու համար միջոցներ մը տածուեցան. սակայն վերջէն անկարելի եղաւ զայն տեղույս մէջ վար դնելը, ուստի Ապրիլ ամսի մէջ նա Ալեքսանդրիա ուղարկուեցաւ: Մի քանի անգամներ Սուսանեց տունը խորհրդակցութիւններ ունենալէ յետոյ՝ նկատուելով վտանգին առջեւ խոհեմութիւն համարուեցաւ հող հաւաքումներ չունենալը. եւ Խիզախենց տունը սկսանք յաճախել, ուր եւս մինչեւ Ապրիլ ամիս մի քանի խորհրդակցութիւն ունենալէ յետոյ՝ Խիզախի մայրը չընդունեց: Շաբաթ մը յետոյ Սուսանը իր անձնական գործով Լեռնադաշտ գնաց: Ընկերուհի Սուսանին մեկնելէն յետոյ Անդրանիկէն ստացուած դրամներուն տեղական ելուժուտից հաշիւները Վազգէնի ստացած 500 Փրանքի հաշուին հետ կանոնաւորելով, մեր Գոյը, Վազգէն, Խիզախ ստորագրութիւններով ընկեր Անդրանիկին ուղարկեցինք զայն Բիւրոյին ներկայացնելու, մեր տեղական նուիրատուութիւնները եւս հրատարակելու համար: Այժմ ցաւելով կը յայտնենք թէ մեր ութամսայ

(1905 Օգոստոսէն մինչեւ 1906 Ապրիլ 16) հաշուետուութեան մէջ արձանագրած նուիրատուութիւնները ցարդ հրատարակուեցան Դրօշակի մէջ, եւ սակայն ասոնց հրատարակուելու պէտքին առաջ կարելոր կը զգանք հոս ծանրանալ նուիրատուութեանց մանրամասնութեան վրայ: Տեղական ձեռքարկութեանց ժամանակ դրամի չգոյութեան եւ անհրաժեշտութեան պատճառով, մեր ընկեր կարոն մօտաւորապէս 28 օսմ. ոսկի նրկրեց կազմակերպութեան գործերի կերպով տեղական անհրաժեշտ ընկերական պէտքերուն գործածուեցաւ. վկայ են մեր այս գործին՝ ընկեր Նահապետը եւ իր եղբայրը, բանտարկեալ վաճառ ու Խենթը. ըստ որում կարոյի այս նուիրատուութիւնները արձանագրած ենք մեր ներկայացուցած վերոյիշեալ ութամսայ հաշուեցուցակին մէջ: Նոյնպէս՝ Ամրոց խումբի, Հայկի, Վաղի-նակի, Խիզախի, Վազգէնի, Գուրգէնի, Գոյը, Սուսանի, Յուրի, Տանուտէրի, Առիւծի նուիրատուութիւնները, թղթախաղի արդիւնքները, Չատկի առթիւ բացուած հանգանակութեան արդիւնքը, եւ ամէն ինչ որ արձանագրուած է մեր ութամսայ հաշուետետրին մէջ, բոլորը ստացուած եւ անթերի կերպով կազմակերպական եւ բանտարկեալներու պէտքին գործածուած են:

..... Հաշուետուութիւն մը եւս ըրած ենք առաջին անգամ ըլլալով Պալքանի Կ. Կ.ին, այդ հաշուետուութեան մէջ գրուած նուիրատուութիւնները եւս չեն հրատարակուած: Գալով այն հարցին թէ յարմար է կամ խոհեմութիւն է մեր տեղական նուիրատուութեանց հրատարակութեան տալը, այս առթիւ մեր կարծիքը հետեւեալն է: Կ'ընդունինք որ Երկրի որեւէ շրջանի մը նուիրատուութիւններուն հրատարակութեան տալը թուրք կառավարութեան դէպի նոյն վայրը ուղարկուելու հրատարակութեան տալը, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշմարիտ է որ մեր շրջանին մասնաւորուած Ոսկեհանք անունը շատ բացայայտ է թուրք կառավարութեան որսած չեն այն զարգացումի որոշ կատարելութեան որպէսզի համակերպին նուիրատուութեան հրատարակուելուն, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է լելու, այս պատճառաւ անօգուտ եւ անյարմար է չհրատարակելը՝ գէթ մեր շրջանին համար: ..... Ճշ



ունեցանք. մեր ընելիք գործերը որոշելով, բաժնեցիներ երկուքի, որուն համաձայն խիզախը յարաբերուեցաւ Հուր Երկաթի եւ Լեռնադաշտի հետ. նոյնպէս տեղւոյս Արարօ խումբին, Հրեշտակին, Թուշունին, Մօրուքին եւ Արամայիսին հետ. իսկ Վազգէնը յարաբերուեցաւ Տանուտէրի, Առիւծի հետ, Արեւ խումբի հետ, Գեղամ, Փիրայր, Գուրգէն ընկերներու հետ. ընկերուհիները հասցէները փոխելով Վազգէնի հասցէին սկսան գալ մեզի ուղարկուած նամակները: Մեր այս կարգադրութիւնները ըրած ժամանակ բանտարկեալ ընկերներու դատավարութիւնը սկսաւ ու մինչեւ Յունիս 10 դատավարութիւնները լրանալով 23 բանտարկեալներ ազատ արձակուեցան, որոնց մէջն էր նաեւ ընկեր Նահապետը: Դատավարութեանց մասին խօսող տեղական թուրք թերթի թիւերը բոլոր դրկած ենք արտասահման մեր ընկեր Անդրանիկին: Իմացուցինք նաեւ Նահապետին ազատ արձակուիլը, ըստ որում Անդրանիկի խորհրդով եւ Նահապետի եւ մեր համաձայնութեամբ՝ Նահապետը եւս մեզ ընկերակցեցաւ իբր խորհրդակից ընկեր:

Մեր ներկայ պատմութեան իրողութենէն երկու ամիս առաջ՝ ընկեր համակիրէ մը տեղեկացանք որ իր աշխատած վաճառատան տիրոջ մի քանի տղաքներ դրամական դիմում ըրեր են իբր Դաշնակցութեան կողմէ, ուստի անմիջապէս նոյն մեր համակիրին միջոցաւ լուր դրկեցինք այդ վաճառատան տիրոջ որպէսզի դըրամ չվճարէ եւ յայտնեցինք թէ Դաշնակցութեան կողմէ չէ այդ դիմումը, աներկիւղ լինի: Այդ դիմումը ընող տղայոց ովքեր լինելը գուշակելէ յետոյ ստուգեցինք թէ անոնք խուճարար տղաք են, այսինքն Ամերիկացին ու Ճանճը, կարնեցի Վաղարշակը եւ Օշինի եղբայրը. ուստի անմիջապէս մեր բունելիք ընթացքը որոշելու համար խորհրդակցութենէ մը վերջ ընկեր Անդրանիկին փութացուցինք այս լուրը. մենք եւս միաժամանակ խաղաղ միջոցներ ձեռք առինք այդ տղոց ընթացքը կասեցնելու համար: Քիչ յետոյ ընկեր Անդրանիկէն մեր ստացած խորհուրդներուն համաձայն խիզախը ներկայանալով Ամերիկացիին յորդորել ջանաց, եւ անոնց գործելու կեղծ առարկութիւններուն դէմ պարզեց այն ամէն տխրառիթ հետեւանքները որոնք հաւանական էին մի փոքրիկ աղմուկի ժամանակ. ասոնք համոզուել չուզեցին. իրար ետերը գզուելով ալ աւելի պղտորեցին գիրար. իրենց դիմումները կրկնեցին բայց չյաջողեցան դրամ ստանալ:

..... Այժմ երկու խորհրդակից ընկեր մնացած ենք. խիզախը եւ Նահապետը: Ցարդ կը շարունակուին Վազգէնի ձեռքակալումէն ի վեր առաջ եկած խիստ հսկողութիւնները: Ազատ արձակուող բոլոր բանտարկեալները հետապնդումներու ենթակայ են. այսպիսի անձուկ պայմաններու մէջ գզուչաւորութիւն եւ խուհեմութիւն կը նկատենք ընկերներու հետ ցանցառաքար յարաբերուիլը: Տեղական հսկողութիւններուն վրայ ու-

ւէ բարդութիւն յառաջ չբերելու համար մեր պրոպագանդի գործունէութիւնը մի քիչ եւս յապաղեցնել յարմար կը դատենք. մեծ յոյս ունինք որ մեր ներկայ գզուչաւոր ընթացքով կառավարական կասկածները կը փարատին յառաջիկային:

Ներկայ այլափոխուած պայմաններուն մէջ տեղս կազմակերպող ընկեր մը գալը խիստ անապահով է. չենք կարող այդպիսի ընկերի մը ապահովութիւնը երաշխաւորել. բաց աստի անկարելորդ եւ անօգուտ կը տեսնենք տեղս ընկեր մը ուղարկուիլը, քանի որ տեղւոյս պայմաններուն անձանօթ ընկերները չգիտեն տեղւոյս յարմարութիւնները:

Ժամանակի եւ գործի պահանջին համաձայն ընթացք մը ունենալու համար, կարելորդ կը նկատենք կիլիկիոյ մարմինին հետ խորհրդակցական կապ ունենալ եւ ըստ այնմ ընթացք տալ մեր շրջանի գործերուն եւ յարաբերութեանց. յարմար ժամանակ այդ կերպով կը կարողանանք ընկերներ փոխանակել իրարու հետ. յամենայն դէպս լաւ է կիլիկիոյ կազմակերպական մարմինին հետ մեր յարաբերութիւն ունենալը:

Տեղւոյս շրջանին մէջ մեր գործունէութեան մասին ունեցած կարծիքն է՝ ուժ տալ պրոպագանդի գործին. բաց աստի թէ եւ գործեր շատ կան, բայց ներկայ մեր վիճակին եւ տեղական պայմաններուն մէջ վնասակար ենք տեսնում տեւորի պէս դրական գործերով զբաղիլը: Դրամական դիմումներ անելու գործը աւելի նպատակաւոր մարմար ենք համարում: Ինչ որ ալ լինի մեր տեղական շրջանին մէջ անգործ անցունել չէ կարելի, ուստի լաւ է գործեր տնօրինելը եւ միաժամանակ ատոնց գործադրութիւնը եւ ժամանակը մեր տնօրինութեան եւ դատողութեան թողնել: Արտասահմանի մեզ հետ կապ ունենալու կոչուող մարմինը պէտք է որոշէ մեր տեղական ծախսերու մասնաւոր պիւտճէ մը, որպէսզի հասոյթները որոշեալ գումարը մեր տեղական պէտքերուն յատկացնելու իրաւասութիւնը ունենանք:

Ընդունեցէք մեր ընկերական ջերմագին յարգանքները:



Հ. Յ. Դաշնակցութեան  
Զմիւռնիայի կոմիտէ  
  
ՆԱՀԱՊԵՏ  
ԽԻԶԱՆ

### Ա 2.- ԿՈՍՏԻ ՀԱՄԱՐՉՈՒՄԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Պոլսոյ եւ Իզմիրի ձախողութեանց տպաւորութեան տակ ըստ երեւոյթին 1905ի նամակ է, շահեկան իր արտայայտած տեսակետներով եւ գնահատումներով՝ հոգ չէ թէ մէկ անգի պատկանող եւ ոչ անպայման համընկնող Իզմիրի ժամանակաւոր մարմնի տեղեկագրի կարծիքներու հետ (նկատի ունիք ի մասնաւոր Անդրանիկի անձին եւ գործունէութեան մասին քառասունը...):

Վառնա, 12/15 Օգոստոսի

#### Սիրելի ընկերներ,

Պայտառակութիւնը կատարուեց՝ Վիշապը՝ վրիպեց, իսկ Ոսկեհանը՝ վիժեց կատարելապէս: Եւ այսպէս ահագին դրամական ծախքերից յետոյ, երկար պատրաստութիւնից յետոյ կատարեալ Ֆիասկո: Բայց փնտռենք պատճառը այս տխուր երեւոյթները: Ես իրաւունք եմ համարում ինձ խօսել Իզմիրի գործերի մասին:

I) Ինչո՞ւ Լեւոնը՝ մեկնեց: Լեւոնի կասկածոտ, ջղախիւ եւ վերջին աստիճանի հիւանդ, անհամբեր բնաւորութիւնը ստեղծել էր մի դրութիւն, որը երկար չէր կարող շարունակուել: Այդ դրութեան խառնուեց եւ պոստիկ մի ուրիշ խնդիր, որը զանց եմ առնում առայժմ, եւ հին ու նոր կռիւներ առաջացան մինչեւ այն աստիճան, որ Լեւոնը մահուան սպառնալիքներ էր կարողում... միւս կողմն էլ պակաս չէր: Նա խելօքութիւն արաւ ելնելով եւ բողբոջ ազատելով այս գձուձ, անվերջ կռիւներից: Նորա մնալը սպառնում էր նորանոր վէճեր առաջ բերելու եւ առանց ունէ մէկին մի բան ասելու... փախաւ. նա բացարձակ եւ ոչ մէկին չէր վստահում, բացի իրենից եւ... Վարդուից եւ Սարաֆուից<sup>6</sup>:

Այդ հոգեպէս հիւանդ, սպասելու անընդունակ եւ յարատեւ գործի անընդունակ փիլիսոփան ուրիշ կերպ էլ չէր կարող վարուել... ճար չկար:

II) Ինչո՞ւ վիժեց Իզմիրը: Այդ հարցի պատասխանը երկար է եւ շատ կարճ միաժամանակ:

ա) Բոշրոզագութիւնից բ) Անդրանիկի եւ Սիսակի<sup>10</sup> բնաւորութիւնից, որը կարելի է ասել հասնում էր բաշրոզագութեան գ) Վիշապի վիժելուց (շատ քիչ) դ) մի պատահարից:

բ) Բոշրոզագութիւնը սկսուած է տեղիցս, ըմբոստ տղաներից, որ ամէն ինչ հասկացել են տեղական «ներկայացուցիչներից» (Սուրէն եւայլն), Բուլգարիայի բեմերից, «Իրաւունք»ից եւ «Շարժում»ից<sup>11</sup>: Բոլորը գիտէին արդէն քաղաքում, Եգիպտոսում եւ Յունաստանում որ ցոյց է պատրաստուում: Բայց բոլորի գիտցածը մի ընդհանուր բան է եղել, կասկածի մշուշով պատած: Լեւոնի տեսակցութիւններ «ըմբոստ» տղաների հետ

համոզել է նրանց, որ «բան մը իրաւ կայ եղեր», բայց այդ ոչինչ: Գլխաւոր պատճառը այն է, որ Անդրանիկ ինքնահաւան, փառամոլ եսախաւորը իրեն իրաւունք էր տալիս խօսել «տեղացիներ»ի հետ, «վստահելի» ընկերների հետ՝ անելիքի մանրամասնութիւնների մասին: «Մինչեւ այսօր չեն վստահի տեղացուն», գործ անող տեղացին է, ինչո՞ւ ծածկել վստահելի տեղացիից՝ ձախատից, խիզախից, Սեդրակից, Եղբայրից եւ այլն (Յենթից, Վառնից, ժամագործից, դերձակից եւայլն). այնպէս որ ծրագրի մանրամասնութիւնը, կատարուելիքը դադարել էր գաղտնիք լինելուց՝ 4-5ի փոխարէն 30-40 մարդ էր իմանում... ո՞ր մնաց այլեւս գործը յաջողի: «Վստահեցէք տեղացուն» պոռացողին, կանչողներին աչքը պիտի կոխել Իզմիրի վիժելը: Այդ է գլխաւոր պատճառը վիժման, որովհետեւ եթէ նոյնիսկ բռնուէին խնձորները<sup>12</sup>, ծրագիրը հրապարակ չէր գալ երբեք եւ գործը կարելի էր շարունակել այս կամ այն պակասով: Վիշապից առաջ դեռ մի քանի անգամ բանտարկեցին Տիգրանին (որը մեզ նստեց 6.000 ուրբլի Անդրանիկի շնորհիւ) խանութից հանելու համար: Եթէ մինչեւ իսկ շնորհէր Վիշապի առթիւ ամէն ինչ կ'անցնէր յաջող, նա բռնուէր Վիշապի առթիւ կու գային» նորա բայց մեր պարոնները «կ'երթային կու գային» նորա խանութը (կասկածուած վայր) եւ երբ մի օր էլ բանխանութը (կասկածուած վայր) եւ երբ մի օր էլ բանտարկեցին Տիգրանին ու կառավարութիւնը սուրբ պահանջեց, իսկ նա չունենալով դիմեց եղբորը, եղբայրը ուստիկանին ուղարկեց մեր մարմնի անդամ Սուրէնին տեղաւորելու: Վիշապից յետոյ, երբ Տիգրամը նրանից ստանալու: Վիշապից յետոյ, երբ Տիգրամը բռնուեց, ուստիկանութիւնը ուզեց տեսնել եւ դրամ տուող Սուրէնին: Վերջինս փախաւ տունը դատարկելով նոյն օրը մի ուրիշ տեղ: Այդ մասին ձեզ գրել

6.- Յուցականի Պոլսոյ գործը (Սուլթան Գամիտի ահաբեկումը):  
 7.- Յուցականի Իզմիրի ծրագիրը:  
 8.- Գաւառաբար Լեւոն Գիւլումեանը, յատկապէս Յուցականի գործին համար կանչուած Ոսկեհանը (Իզմիր- Զմիւռնիա):  
 9.- Բորիս Սարաֆով. մակեդոնացի յայտնի հայդուկապետ եւ յեղափոխական գործիչ:  
 10.- Անդրանիկ (Իզմիրի), Սիսակ, Սուրէն, Տիգրան եւայլն, Ոսկեհանի տեղական գործիչները:  
 11.- «Իրաւունք», «Շարժում», Վառնա լոյս տեսնող լրագիր- ցեր էին:  
 12.- Չեղանուսները:



եմ: Հրացանը պայթում է «երեխանքի» ձեռքին եւ վիրաւոր Սուրէնը ընկնում է փողոց աղաղակով, հաւաքուում են յոյներ եւ կծիկը բացուում է: Այսպիսով իզմիրի ամբողջ գործի վիժումը եւ բացատրում եմ տեղացի ընկերների բաշի բողոք վարքով գլխաւորապէս:

III) Ինչո՞ւ խնձորներ բռնուելուն պէս ամէնք փախան: Այս հարցի պատասխանը սիրտ է ծակում: Որովհետեւ... Բայց «որովհետեւներ» շատ են, մէկ-մէկ սկսինք:

1) Սուրէնը եւ Լեւոնը պիտի փախչէին, որովհետեւ կասկածուած էին. այդ ընդունինք: Բայց ինչո՞ւ փախան Անդրանիկը, Միսակը, Եգիպտոսից բերած տղաներից 2-ը եւ ուրիշ 2 հոգի: Ինչո՞ւ:

Որովհետեւ Վիշապի վիժելուց յետոյ Անդրանիկը եւ Միսակը բացարձակօրէն հակառակ էին գործ անելուց: Նրանք գրել էին մի նամակ այդ մասին ձեզ յայտնելու, բայց նամակը իմ առաջարկով յետաձգուեց ձերը ստանալու համար: Որովհետեւ ո՞չ Միսակը եւ ո՞չ Անդրանիկը երբեք չէին ուզում մեռնել ամէն պարագայի տակ, այս իրենց խօսքերն են: Ես բացարձակապէս պնդում եմ, որ նրանք դաւաճանօրէն փախան, նրանք այս կամ այն կերպ կարող էին մնալ, ինչպէս մնացին յոյների մօտ 5-8 օր, եւ վերջը գործը շարունակել: Բայց նրա՞նց ինչ հոգ, միայն գլուխները ազատեն, վերջը կարելի է պատճառաբանել: Նրանք այնքան տմարդի փախան, որ երեսները անգամ չտեսայ, վերցրին դրամը բոլ-բոլ եւ գնացին: Նրանք մոռացան որ քաղաքում թողնում էին 3-4 անօգնական, նիւթականից զուրկ, օտար ընկերներ, որոնց գործի համար բերել էին քաղաք... Նրանց մոռացան: Նրանց պաղատանքն ինձ, «տեղ տուր, դրամ տուր... փախցուր», եւ միայն լսում էի, եւ հոգուս մէջ հազար անգամ անխժուած անպէտք վախկոտ ընկերներին: Տասն եւ երկու օր պտտեցի քաղաքը, էլ ծանօթ ծակ, էլ մօտակայ գիւղ, խանութներ, սրճարան չմնաց որ չմտնէի գէթ նրանց մասին մի լուր առնելու: Եւ երբ նրանց փնտրելիս հագիւ ազատուեցայ ոստիկան կոմիսարի ձեռքից (կրամբը սրճարանի առաջ) շնորհիւ մի յոյն տիկնոջ, նրանք քաղաքից դուրս տասը գինուած յոյների հետ փախչում էին հանգիստ խղճով: Դաշնակցութիւնը ապրած կենայ, կարելի է 10 հոգի գինել ապահով փախչելու համար: Ո՞ր մէկը գրեմ...

Այսպիսով 5 անգամ հաշուող մարմնի մէկ ընկեր խուղած հեռացաւ, 3ը փախան. մնացել էի ես, որ մտածում էի գէթ գործի մի մասը յաջողցնել տեղական ընկերներով: Բայց տեսայ որ մնացել են հրապարակում միայն 2 եւ կէս հոգի, որոնց մօտ Անդրանիկը թողել էր մի քիչ դրամ (այդ իմացայ կէս հոգուց) եւ ես: Այդ 2 եւ կէս հոգին էլ վտանգուած համարելով իրենց, լաւ առիթ արտասահման գնալու՝ սպասում էին միայն յոյների վերադարձին, որ իրենք էլ կծիկը դնեն: Միւս կողմից ծրագիրը բացուեց ամբողջովին: Ոստիկանութիւնը

խստութիւնը հասցրեց չափազանցութեան: Տնեցիներս, վախից բոլոր վարձու տուած սենեակները դատարկել տուին (եւ եւ 4 հոգի յոյն): Նոր սենեակ վարձեցի, ոստիկանութիւնը հետամուտ (եղաւ եւ) գտաւ նոր տունս եւ անցազիր ուզեց: Ես պատճառաբանեցի թէ դեսպանի մօտ է, թող մի ժամից վերջը գան: Անցազիրս չտուած մեկնեցի հոտել<sup>13</sup>. (Թէ ինչո՞ւ մեկնեցի այդ էլ կարելու է: Հայերից ինձ ճանաչող մէկը պտտում էր ոստիկանի հետ, տեսել էր Սուրէնի եւ այլոց հետ եւ գիտէր հայ լինելու: Եթէ իմանար ուրս լինելու, կորած էի: Սենեակը չհանելու պատրուակով գնացի հոտել որտեղ ծանօթ տէրը ինձ հիւրընկալեց, մէկ ոսկով համաձայնեց անունս չգրել գրքին մէջ եւ չյայտնել թէ այսպիսի յաճախորդ ունի: Ահա գաղտնիքը, թէ ինչպէ՞ս կարողացայ մի քիչ երկարել իմ այնտեղ մնալը: Բայց ոստիկանութիւնը հետամուտ հետք գտաւ եւ ասաց տէրոջը որ ասանկ մարդ կայ այդտեղ. նա յայտնել է որ կայ, այսօր է տեղափոխուել եւ անունը չէ արձանագրուած միայն նոր գալուն պատճառով: Ինչպէս եւ ուրիշներին նոյնպէս եւ իմ անցազիրը տարան դեսպանատուն եւ ինձ յայտնեցին որ ես գնամ ստանալու: Ուրք էլի կարող փոխել առանց ոստիկանի եւ լրտեսի, շուքի պէս հետեւում էին: Դեսպանին ներկայացայ. առաջին հարցը եղաւ, այս անցազիրը Ռուսաստանի համար է, այստեղ ի՞նչ ես անում: Պատճառաբանեցի: «Ի՞նչ գործ ես անում այստեղ, ո՞ր է խանութը»... Պատճառաբանեցի: «ինչ որ բան այն է», մրմուռաց, հարցրեց ուր է կինը, երեխաները «Ուրեմն քո որդին 6.5 տարեկան է այժմ»... «խկ ասացք խնդրեմ, ո՞ր գնում էք ծառայում» մէկ անուն սարքեցի, վրաս նայեց բարկացած: Այս անցազրով դու չես կարող այստեղ մնալ «մեկնիր Աշուած ճանապարհով, եւ միւս անգամ մի գնա այնտեղ, որ անճարգրում Աշուած չէ»<sup>14</sup>: Ես բողոքեցի որ իրաւունք ունեմ մնալ արտասահմանում, որ յոյս ունեմ շուտով գործի սկսել, ինչո՞ւ համար ինձ ուզում է քանդել, սնանկացնել, երեխաների տէր մարդ եմ եւ այլն: Կարճ կապած՝ ստիպեց որ վերջացնեմ գործերս մի քանի օրում եւ մեկնեմ: Անցազիրս էլ վիզէ արաւ միայն Ռուսաստանի համար: Ես տեսայ որ ամէն ինչ վերջացաւ, ընկերները փախան, գործը ամբողջովին բացուեց, ինքս ալ կասկածուած եմ եւ վտանգուած, խոհեմութիւն համարեցի դուրս գալ նոյնպէս: Նիւթերը տեղաւորուած էին 4 տեղ. մէկը բռնուեց (ամենակարելու): Երկրորդ պահեստը մի ուրիշի մօտ, որը մի ամսից ի վեր սպառուում էր կամ տարէք, կամ կը յանձնեմ. կինը, երեխաները վախից չեն քնում: Ես այդ պահեստից (ի՞նչ պահեստ, սնտուկով սենեակում դրած) յոյս չունեմ: Երրորդը մի ուրիշ Միսակի շնորհիւ վտանգուած մի ընկե-

13.- Պանդոկ, հիւրանոց:  
14.- Չակերտուած եւ արանքան տառերով շարուած նախադասութիւնները ուսերէն են: Տուած ենք բարգձանութիւնը:

րոջ մօտ առանց թաքստոցի: Ատամներս աւրուեց աղաչելով որ այդ տեղ թաքստոց պատրաստենք: «Անդրանիկ» փաշան չէր ուզում, «վնաս չունի»-ը կարծէր եւ նիւթը մնաց բաց սենեակում: Եթէ Հայերի տները խուզարկուեն այդ բռնուած է եւ խեղճ ընտանիքը կորած... շնորհիւ մեծամիտ կեղտոտ բռնակալի քմահաճոյքին: Չորրորդը միայն ապահով եմ կարծում, որ թաքստոցում է: Այդտեղ կայ մօտ 200-300 քիլօ իւղ<sup>15</sup>, ժամացոյցներ, կապսիւլ եւ քիչ վառօդ: Այդ պիտի լինի ապագայ յոյսը: Կայ նիւթ եւ գաւառներում, բայց ես կասկածում եմ, որ վախից ամէն ինչ արտաքնոց են ածել, ինչպէս այդ արին էօտեմի<sup>16</sup>: 25 հատ գրայ հրացան նետելով արտաքնոց: Ունենք գաւառում մօտ 200 քիլօ իւղ, մի մասը ապահով, նոյնպէս 25 հրացան 10.000 փամփուշտով, մօտ 30 ատրճանակ, ցրուած (մէկը բռնուած Միսակի ձեռքում): Նիւթ կայ, գործ կարելի է անել միշտ, այդ եւ շեշտում եմ Ոսկեհանքը ճանաչելով: Նշանակած կէտերից ամէնէն քիչը 2 կամուրջ, եւ 5 կէտ քաղաքում միշտ կարող է յարձակման ենթակայ լինել: Նիւթը կայ, մնում է ունենալ մի 5 հոգի վստահելի բռնակիրներ եւ մէկ կամ երկու հոգի լարող եւ սարքող անձնաւորութիւն: Եւ աւել ոչ ոք: Ի հարկէ այս օրերս եւ շաբաթներս այդ իրականանալի բան չէ, որովհետեւ ամէն դիրք պահուում է գործով, բայց շուտով այդ կ'անհետանայ, ես վստահ եմ դորան, եւ գործը կարելի է անել: Կլազովի հասցէն, նոյնպէս ժաստիֆինը վտանգուած են: Ես անգլիական փոստայում մի հասցէ տուի՝ Mrs. H. Fellow, եւ «մեր» մարդը պիտի յանձնի, եթէ հարցնող լինի առաջի հասցէով ծանօթ ծակուծուկ մտած չեղեալ ընկերները: Փորձի համար մի նամակ գրեցինք, բայց բաց թանաքով, որովհետեւ եթէ ստացող էլ գտնուի, բանալ չպիտի կարողանայ:

Գալով իմ մասին, ես չեմ իմանում անելիքս: Որովհետեւ չեմ ծանօթ այսօրուայ գործերի կացութեանը: Յարմար եմ Լեւոնալայրին<sup>17</sup>, չգիտեմ, որովհետեւ չգիտեմ ի՞նչ գործ կայ այնտեղ եւ ի՞նչ եղանակով է տարուում: Կարիք կա՞յ վասպուրականի կամ այլ շրջանի համար եւ ինձ համապատասխան է կատարել, այսինքն օգտակար կարող եմ լինել — նորից չգիտեմ, չեմ ծանօթ գործին: Պարսկաստանի համար իմ կարծիքս ունեմ, բայց նա անմիջական գործունէութեան վայր չէ, թէ եւ խկոյն կը գնամ եթէ կարիք կայ: Նոյնպէս եւ կովկասը: Ինձ որոշ չափով ձգում է Ղարաբաղը, բայց այնտեղի գործերը լաւ են կարծեմ: Յամենայն դէպս ձեր խորհուրդին եմ դիմում — ուզում եմ, կամենում եմ գործել, միայն յարմար միջավայրի ընտրութիւնը թողնում եմ ձեզ, այն յոյսով, որ ոյժերի նպատակայարմար բաշխումը ձեր իղձն է: Աչքի առէք որ քիչ գիտեմ եւ յունարէն: Գրեթէ նամակ գրելու չափ, արտայայտուած եմ բաւարար կերպով:

Չեմ իմանում ո՞ր մարմնի հետ կապ պիտի պահպանեմ

նել սորանից յետոյ:  
Դրամական միջոցներս 82 Ֆրանկ եւ 40 ստօտիւնի են: Ի սէր Աստուծոյ կարգադրութիւն, որ կողքի վերայ նորից չպառկեմ եւ մսխեմ:

Հասցէս այս է առայժմ. ոչ ոքի չեմ տեսած այստեղ: Խնդրեմ ապահովագրեալ գրեցէք մի անգամ, մինչեւ ուրիշ հասցէ տամ:

Վառնա, եւ այլն [ուսերէնով տրուած հասցէ]:  
Սպասելով, խնդրում եմ իմացնէք ո՞ւր են փախածները, հաւանական է Եգիպտոս, որտեղ Անդրանիկը հաշիւներ ունի նուրբ տեսակից:

Բայց ես չեմ իմանում այդ: Ինձ էլ տեղեակ պահեցէք նորանց մասին: Վարդոյի «մերկացումների» սիւներն են, գինուած «ըրկուամաններով» որոնց ուղարկել են արտասահման: Բայց թող բերանները բանան միայն:

Անհամբեր սպասելով ձեր նամակին մնամ կարօտ բարեկեցիկ

Կ. ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄԵԱՆ

Դրամական միջոցներս նկատի առէք նոյնպէս:

Ա 3.- «ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ<sup>18</sup>

1907 Փետրուարի 25-ին, Վիեննա

Յարգելի ընկերներ,  
Ընդհանուր Ժողովի որոշման համաձայն խնդրում ենք Ձեզ անմիջապէս յայտնել Ոսկեհանքի մարմնին (նրա անդամ Անդրանիկի հասցէով), որ խկոյն եւեթ ներկայացուցիչ ուղարկեն Ժողով՝ հաշիւ եւ համար տալու իրենց գործունէութեան համար:

Միաժամանակ գրեցէք Եգիպտոսի ենթակոմիտէին որպէսզի վերոյիշեալ ներկայացուցիչին՝ անհրաժեշտ ճանապարհածախսը տայ մինչեւ Վիեննա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԻԻԱՆ

P.S. Տուէք միաժամանակ եւ Օրդու Խանի ծանօթ հասցէն:

15.- Ուժանակ, պայթուցիկ ցիւր:  
16.- Էօտեմիշ, գիւղաքաղաք Իզմիրի նահանգին մէջ:  
17.- Կիլիկիա:  
18.- Էքիճ վերը, շեղակի, միեւնոյն ձեռագրով աւելցուած է «Ետապողական»:

### Ա 4.- ՈՍԿԵՀԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՄԱՐՄՆԻ ՆԱՄԱԿԸ

1907 Փետրուար 19, Իզմիր

Սիրելի ընկերներ,

Ստացած ենք Ձեր Փետրուար 13 թուակիրը. այժմ Ձեզ հեռագրելու միջոց չունենալնուս, կը փութանք յայտնել Ձեզ հետեւեալը. - Հակառակ անոր որ մեզմէ մին կարեւոր կը նկատէինք փութացնել Ձեր յիշած վայրը<sup>19</sup>, մեզմէ ոչ մին յարմարութիւն կամ պատեհութիւն ունի արտասահման դուրս գալ եւ վերադառնալու, ուստի աճապարանքի ազդեցութեան տակ մեր կողմէ պատգամաւոր ընտրեցինք Պ. Ռուբէն Զարդարեանին, որը կարեւոր է որ պաշտպանէ մեր ուղարկած տեղեկագրին մէջ յայտնուած կարծիքներն ու պահանջները: Մեր յիշեալ տեղեկագրին վերջերը ըսած ենք որ կարելի է մեր տեղական վայրին մէջ դիմումներ ընելով նիւթական արդիւնաբերութիւն առաջ բերել<sup>20</sup> եւ օգտակար ըլլալ գործին, այժմ պէտք է գիտնալ որ այդ տեսակ գործի մը համար եւ նաեւ անանկալ ու ստիպողական պարագաներու տակ տեւորական գործերու համար՝ մեր տեղական ընկերները գործածել խիստ անպատեհ է եւ վնասակար, որովհետեւ պէտք է որ թուրք կառավարութեան կասկածները կամ ուշադրութիւնը կեդրոնանայ մեր տեղացի ընկերներու վրայ, որպէսզի կարելի ըլլայ վերջէն զանոնք մեծ եւ դրական[sic] գործերու գործածել:

Մեր տեղական այժմու ընկերներու մեծամասնութիւնը բանտէն ազատ արձակուողներ են, իսկ մնացեալները նորեր. հետեւաբար տեղական մեր ընկերը դրական[sic] գործերու ենթարկելը խիստ անպատեհ եւ աղէտաբեր է: Առաջինները որքան որ այժմ ազատ են, բայց միեւնոյն ժամանակ կառավարութեան համար կասկածելիներ ըլլալով հսկողութեան տակ են. եթէ երբեք տեղական ընկերներով գործ մը կատարուի, բոլոր բանտէն արձակուողները ապահովաբար կրկին անգամ բանտ պիտի առաջնորդուին ի սպառ հոն մնալու համար: Մեր տեղական շրջանը պէտք ունի բաւական ժամանակ կազմակերպուելու եւ ընկերները զարգացնելով զբաղելու. այս պատճառաւ պէտք է որ նիւթական եւ բարոյական օժանդակութիւններ չինայուին մեզի: Յեղափոխական գրքերու պէտք ունինք, իւրաքանչիւրէն մի քանի օրինակներ՝ որպէսզի ցրուենք մեր գաւառական շրջաններուն:

Թէպէտեւ ցարդ ձեր կողմէ մեզի օժանդակութիւններ եղած են, բայց շատ անգամներ նիւթական անձկութեան մէջ մնալով անկարող եղած ենք տեղական ինչ ինչ պահանջներուն գոհացում տալու. ուստի կարեւոր է որ մեր կազմակերպական տարեկան ծախսերուն համար որոշ գումար մը որոշուի:

Նախանձախնդրօրէն փափաքողներ ենք գործ եւ ար-

դիւնք ցոյց տալու, եւ սակայն ներկայ պայմաններուն մէջ, մեր ընկերներու ներկայ յարմարութիւններովը, չենք կարող երաշխաւորել մեզի յանձնուելիք գործի մը յաջողութիւնը. առայժմ մեր կազմակերպութիւնը պէտք է սաղմնային վիճակի մէջ նկատել, եւ զայն կազդուելու եւ զօրացնելու համար յարմար տնօրինութիւններ ընել:

Ամօթալի անգործութեան մէջ չըլլալու համար, կը խնդրենք ընկեր մը որ կարող եւ ընդունակ ըլլայ մեր տեղական վայրին մէջ նիւթական արդիւնաբերութեան դիմումներ<sup>20</sup> կատարելու. նոյնպէս կը խնդրենք երկու տեւորիստ ընկեր ստիպողական պարագաներու տակ գործածուելու համար: Վերոյիշեալ երեք ընկերներն ալ պէտք չեն ձայն ունենալ մեր խորհրդակցական կազմին մէջ, միշտ պէտք է ձայնի առաւելութիւնը տալ տեղացիներու: Բոլոր ընկերական վայրերու համար ալ մեր այս վերջին կարծիքը պէտք է իր կարգին սկզբունք ընտրել: Հաւանական է որ աւելորդ կը նկատէք երկար մանրամասնութիւններ. մեր տեղական ընկերները գործի պարագային (ներկայի յարմարութիւններով) միմիայն պաշտպան եւ ապաւէն կրնան ըլլալ մեր վերեւ յիշած ընկերներուն:

Անշուշտ մեր սոյն նամակի պարունակութիւնը կը տեղեկացնէք Ընդհանուր Ժողովին: Կը խնդրենք նաեւ որ եթէ Ռուբէն Զարդարեանը մեր կողմէ իբրեւ պատգամաւոր ներկայանալ անյարմար նկատուի, յարմար կարգադրութիւններ ընել մեր սոյն նամակի եւ նաեւ ուղարկած տեղեկագրին համաձայն: Մտաւորապէս երկու շաբաթ առաջ Անդրանիկին<sup>21</sup> մեր կողմէ պատգամաւոր ներկայանալու նամակ դրկած էինք. այդ նամակով անոր ներկայացուցած էինք մեր խնդիրքներն ու պահանջները, կարեւոր է որ այդ նամակն ալ ձեռք անցունելով նկատի առնուին անոր պարունակութիւնները:

Ձերմագին յարգանքներով  
ԽԻՉԱՆ

Յ. Գ.- Ասկէ մօտաւորապէս 7 ամիս առաջ, Եգիպտոսէն Երկիր անցնող ընկեր մը իջեւանեցաւ տեղս, որուն ճանապարհորդութեան համար Եգիպտոսի ընկերներէն գալիք 10 անդրիական ոսկին ուշանալուն համար հարկ համարեցինք իբր փոխառութիւն մեր կողմէ այդ գումարը վճարել անոր, եւ վճարելով տեղեկացուցինք

19.- Վիեննա Ընդ. Ժողովին:  
20.- Ունեւորներէն որքան ուզել կամ հանգանակել:  
21.- Պոլսոյ եւ Իզմիրի ընկերներէն: Չշփոթել ազգային հետաքննութեան, որ նոյնպէս ներկայ էր Զորքող Ընդ. Ժողովին:

Եգիպտոս Յոլակին. այս վերջինը յիշեալ գումարին փոխադարձ 250 Ֆրանք դրկած էր մեզ անհատի մը միջոցաւ. այդ անհատը մենք յիշեալին իբր փոխառնի անձ մը չէինք ներկայացուցած, որը փոստէն դրամներ գանձելով ամօթալի կացութեան մը մէջ յիշեալ 250 Ֆրանքը կը կորսնցունէ թովէն. յիշեալ դրամը ստանալու համար մեր յարմար ջանքերը ապարդիւն անցան. այդ առթիւ ինչ պէտք է ընել եւ ինչ արձանագրել մեր հաշուին մէջ, տեղեկացուցէք մեզ. յիշեալ դրամի կորստելուն համար գրած ենք Գահիրէ Յոլակին, բայց ցարդ պատասխան չենք ստացած:

ՆՈՅՆ

ՆՈՅՆ

### Ա 5.- ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇ. 4ՐԳ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Եգիպտոս 10 Մարտ 1907

Սիրելի ընկերներ,

Տեղեկացանք Պատգ. Ժողովին յանձնարարութեամբ Խմբագրութեան կողմէ Փետր. 27 թիւ նամակով Գահիրէի Մարմինն եղած յանձնարարութեան, որով կ'առաջարկուէր Ոսկեհանքի 904-5-908ի Մարմնի անդամներէն մէկին ճանապարհածախս վերցնելով տեղիս Մարմնէն գալ եւ ներկայանալ Պատգ. Ժողովի Ոսկեհանքի գործերու համարը եւ հաշիւը տալու համար:

Սօտ 1-5 տարի առաջ թուրք ոստիկանութեան ձեռքէն փախցուցած Ոսկեհանքի թղթերու ծրարը Բիւրոյի ձեռքակալութիւնէն ազատելով<sup>22</sup> - տեսնել թղթերու մէջ այդ մասին Բիւրոյի նամակները - կազմեցինք հաշուեկշիւը եւ ղրկեցինք Բիւրոյին, իսկ մանրամասն հաշիւներու եւ գործունէութեան պատկանող եւ չպատկանող թղթերու հետ - Բիւրոն ումանց կնիք, ումանց թիւ գարկած ըլլալուն - ծրարած ամիս մըն է որ Խմբագրութեան ղրկած ենք Մարհատի հասցէին. Մարհատ պիտի յանձնէ Յ[ուցական] Պ[ատասխանատու] Մարմնի ներկայացուցչին, որպէսզի ներկայացնէ ան Պատգ. Ժողովիդ:

Ոսկեհանքի կոմիտէի ընկերները դէպքէն յետոյ յաջողելով Պուլկարիա հաւաքուիլ Բիւրոյի տեղեկութեան վրայ՝ անմիջապէս գումարուելիք Ընդհ. Ժ.ին համար, իբր Ոսկեհանքի շրջանի Մարմնի տեղեկաբեր եւ գոր-

Մեր վերեւ յիշած երեք ընկերները պէտք է ջանալ որ օտարահատակ ըլլան. չըլլալու պարագային մեզ խմացնելու է: Վազգէնի ձեռքակալուած միջոցին իր մօտէն այն օրը Ձեր կողմէն եկած մի նամակ գտնուած է կարգ մը թղթերու հետ միասին. այդ նամակին մէջ Թէվֆիք անուն թրքացած հայի մը մասին ծանօթութիւններ պահանջել էք. եւ այդ գրութիւնը գուգադիպաբար յիշեալ Թէվֆիքին կարողացուցած ըլլալու են. նա վախցած է եւ հրաժարելով, Պոլիս մեկնելու համար արտօնութիւն առած: Բայց փոխանակ Պոլսի նա գերմանական շոգենաւով Ամերիկա գացած է: այժմ հոն կը գտնուի:

Ժիչ, ընկեր Անդրանիկը ղրկել որոշեցին. միեւնոյն ատեն սկսան կազմել հաշիւ եւ տեղեկագիր: Սակայն Կոստան<sup>23</sup> կովկասէն ստացած հեռագրին վրայ մեկնեցաւ իր օրուայ տրամադրութիւնները իբր առանձին տեղեկագիր խմբագրելով. քիչ յետոյ Սուրէնը պարտաւորուած Աղեքսանդրիա մեկնեցաւ ծնողքին մօտ. աւելի ուշ էտվարդը մեկնեցաւ Ամերիկա. իսկ Անդրանիկ, երկար հաւատարմով Բիւրոյի հաւաստիացումներուն Ընդհ. Ժ.ը մօտ օրէն գումարուելուն մասին, մէկ տարի սպասելէ յետոյ անցաւ Եգիպտոս: Այժմ ի հարկէ մեզ համար մեծ ցաւ է, որ անձամբ համար եւ հաշիւ տալու՝ միեւնոյն ատեն համար եւ հաշիւ պահանջելու ա'յնքան ցանկացող եւ առիթն ալ ներկայացած ըլլալով հանդերձ, դժբախտաբար երկուքս ալ մեզմէ մէկը ճամբայ հանելու անհրաւորութեան մէջ կը գտնուինք:

Յարգանք՝  
ՈՍԿԵՀԱՆՔԻ Ծ[ՈՒՑԱԿԱՆ] ԿՈՄԻՏԵԻ ԸՆԿԵՐՆԵՐ

ՍՈՒՐԷՆ  
ԱՆԴՐԱՆԻԿ

22.- Հաւանաբար ըսել կ'ուզէ՝ հետապնդումն ազատելով:  
23.- Կոստի Համբարձումեանը:

XVIII
ԲԱՐՉՐԱԲԵՐԳ – ԿԱՐԻՆ – ԷՐՉՐՈՒՄԻ
ԵՒ
ՏԵՐՍԻՄԻ
ԿԵՂԻՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԻԹԻՒՆ

ա.- ԲԱՐՉՐԱԲԵՐԳ – ԿԱՐԻՆ

Գ. Ընդհ. Ժողովին աստիճան Բարձրաբերդ-Կարնոյ շրջանը աջառու ոչ մէկ գործունէութիւն ցոյց կու տայ. գոյութիւն չունի նաեւ կազմակերպական կեանք: «Չայն մը հնչեց»ով արթնութեան ազդանշան տուող յեղափոխութեան երբեմնի այդ օրրանը դատապարտուած էր անգործութեան իբրեւ հետեւանք մասամբ «հիմներու» եւ «նորերու» ամուլ վէճերուն ու հաւանշուշտ քաղաքին ու գաւառներուն մէջ անհատ գործիչներ, հին ու նոր սերունդի պատկանող հաւատարմ տարրեր, բայց կազմակերպութիւն չկայ, եթէ չհաշուենք Քոլիի շրջանին մէջ (Տոբրաձոր) երեսնուորոշ որոշ աշխուժութիւն:

Էրզրումի քաջածանօթ, Պանք Օթումանի հերոսներէն Արմէն Գարոն, որ 1906 թ. ամրան այցելած էր ծննդավայրը՝ Կարին, երեւի Բիւրոյի պահանջով իր ժընձեւ գտնուած միջոցին կազմած է տեղեկագիր մը, որ եւ հիմք պիտի ծառայէր Ընդհ. Ժողովին Էրզրումի մէջ կուսակցութիւնը վերակազմելու մասին որոշում կայացնելու:

Արմէն Գարոյի «Տեղեկութիւններ Էրզրումի մասին»ը գրուած է սեւ մելանով, նամակի սովորական չափի (27 x 21 սմ.) երկերթ թուղթի 15 էջերու վրայ: Թուականը՝ ժընձեւ, 1907 Մարտ:

բ.- ՏԵՐՍԻՄ

Տերսիմը Արեւմտեան եւ Արեւելեան (Արածանի) Եփրատներու միջեւ ինկած հատուածի հիւսիս արեւմտեան լեռնաշխարհն է, հայ եւ քիւրտ խառն ազգաբնակչութեամբ:

Հաշուի առնելով կիսանկախ այս լեռնաշխարհի քիւրտներու տեղաբնիկ հայերու նկատմամբ ունեցած բարեացակամ տրամադրութիւնները, հայկական յեղափոխութեան առաջին տարիներէն արդէն միտք ծագած էր բարեկամական այդ յարաբերութիւնները վերածել համիտեան վարչակարգի դէմ ուղղուած համագործակցութեան: Այս ուղղութեամբ գործնական առաջին քայլերը առնուած էին 90ական թուականներուն հին յեղափոխական գործիչներ Կարապետ Ղումրիկեանի եւ Տերսիմի Քեռիին (Ռուբէն Շիշմաեան) կողմէ: Հարկ է նշել, որ նման փորձեր՝ քիւրտներու գործակցութիւնը կամ առնուազն չէզոքութիւնը ապահովելու՝ մանաւանդ թրքական հալածանքներու աստակացման եւ կոտորածներու պարագային, եղած էին քիչ մը ամէն տեղ, առանց սակայն գործնական եւ մնայուն հետեւանքներ ունենալու:

Ներկայացուած փաստաթուղթը, որ միեւնոյն ատեն շրջանի աշխարհագրական եւ ազգագրական հակիրճ ուսումնասիրութեան փորձ է, նոյնիմաստ մէկ առաջարկ է՝ Ընդհ. Ժողովի ուշադրութիւնը այդ հարցին վրայ հրաւիրելու համար:

Տեղեկագրութիւն Տերսիմի, (բնական դիրք) գրուած է մանուշակագոյն մելանով, նամակի սովորական չափի (26 x 19 սմ.) գծաւոր երկերթ թուղթի 14 էջերուն վրայ եւ ստորագրուած՝ Մինաս Մ. Արթինեանի կողմէ:

Գրութեան կ'ընկերանայ միեւնոյն թուղթով մէկ էջի վրայ նամակ մը գրուած՝ Միացեալ Նահանգներու Լօրէնս քաղաքէն, ուղղուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 4րդ Պատգամաւորական Ժողովին եւ ստորագրուած՝ Ղազար Մարտիկեան, Մինաս Մ. Արթինեան եւ Պետրոս Դերձակեան. թուականը՝ 1907 Յուն. 14 Լօրէնս, Ամերիկա\*:

Ե. Փ.

\* Ընդհ. Ժողովի թղթածրարին մէջ կը գտնուի, նոյնպէս Ամերիկայէն դրկուած, երկրորդ գրութիւն մը (9 էջ) «Չարսան-ժաքի եւ Մեծկերտ» գաւառներու մասին. հեղինակ՝ Տուժիք (Յովսէփ Գրքճեան): Չանց կ'առնենք անոր հրատարակութիւնը նկատի առնելով որ տեղեկագրական բաժինը նոր բան չ'աւելցնէր առաջին գրութեան վրայ, ապա այն որ ենթակայի պատկերացումները (անձամբ գործիչային առաքելութեամբ երթալու՝ «փրօփակցանս եւ կազմակերպութիւն առաջացնելու») բաւական պարզուսակ կը թուին ըլլալ մեզի: Այսուհանդերձ ուշագրաւ է, որ երկու գրութեանց հեղինակները, հետաւոր Ամերիկա գաղթած հայորդիներ, այդքան խոր մտաւորութեամբ կապուած կը մնան հայրենի բնօրրանի ճակատագրին:

Ա. – ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՐՉՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ

1.- Դաշնակցութեան գործունէութիւնը Էրզրումի մէջ (նախ քան 1906-ի Հոկտեմբերը):

ա. Արեւելեան Բիւրոյի եւ Կարսի Կենտրոնական Կոմիտէի վերաբերմունքը:
բ. Տեղական կազմակերպութեան վիճակը:

2.- Տրամադրութիւնը Էրզրումում:

3.- Տեղական յարմարութիւնները յեղափոխական գործունէութեան համար:

ա. Էրզրումը իբր պրոպագանդի վայր, – համեմատական ազատութիւն քաղաքին մէջ (սահմանի մօտիկութիւնը, հիւպատոսներու ներկայութիւնը), խմորումը երիտասարդութեան մէջ (Մանասարեան վարժարան, քերթեր եւ գիրքեր), մի քանի զարգացած ու ձեռնառու մարդկանց ներկայութիւնը:
բ. Էրզրումը իբր կենտրոն:

1 ա.- Իմ էրզրումից դուրս գալու ժամանակները (անցեալ Սեպտեմբերի սկզբներին) Դաշնակցութեան գործունէութիւնը այնտեղ գրեթէ զրո էր. միակ փաստացի ապացոյցը այդ գործունէութեան՝ «Երկիր» եւ յետոյ «Չանգ» թերթերն էին, որոնցից ստացուած էր 1 օրինակ. միեւնոյն ժամանակ սկսուած էին թղթակցութիւններ պ. Ահարոնեանի հետ մի կոմիտէ կազմելու մասին եւ գործերը սառած էին այդ դրութեան մէջ. ոչ մի կենդանի գործունէութիւն Արեւելեան Բիւրոյի եւ կամ Կարսի Կենտրոնական (?) Կոմիտէի կողմից: Կարինում շատ դժգոհ էին այդ վերաբերմունքից:

1 բ.- Գալով իրերի դրութեանը բուն իսկ քաղաքի եւ շրջանի մէջ, ահա թէ ինչ ենք տեսնում:

Իմ Կարին գալէս (Յուլիս) մի քիչ առաջ կազմալուծած էր այնտեղի կոմիտէն՝ մասամբ ներքին հաշիւների եւ մասամբ ալ իր որեւէ գործ տեսնելու անընդունակութիւնը զգալու պատճառաւ: Դորա փոխարէն ենթակոմիտէի ժողովում ընտրուած էր մի պատասխանատու անձնաւորութիւն, որը պիտի ստանար թերթը (Չանգ) եւ յանձնէր ընկերներին: Կոմիտէ, ենթակոմիտէ, պատասխանատու մարմին խօսքերս կարող են սակայն խոր թիւրիմացութեան մէջ ձգել ձեզ, կարծել տալով թէ ինչ որ լուրջ կազմակերպութիւն կար այնտեղ. ոչ կազմակերպութիւն եւ ոչ նամանաւանդ՝ որեւէ գործունէութիւն. հրապարակի վերայ մի քանի (4-5) մարդիկ կան միայն (արհեստաւոր, մանրավաճառ) որ աշխատում են «Չուրը չտար» ամէն բան (չատ հին ժամանակներէ մնացածներու փշրանքները), նամանաւանդ որ ինչ որ լուրեր էին ելեր թէ շուտով Դաշնակցութիւնը մի

նոր կոմիտէ է կազմելու, որը կ'անցնի գործերի գլուխը՝ իսկ ամբողջ եղածը մի քանի տասնեակներ էին քաղաքին թէ գիւղերու մէջ: Դաշնակցական տուրքը (միակ բանը որ դեռ որեւիցէ կապ էր հաստատում անդամներու մէջ) չէր գանձուում արդէն մի տարիից աւել: Կանգ չեմ առնում մի երկու աննշան խմբակներու վերայ, որ աշխատում էին շահագործել ժողովուրդը. ոչ գրականութիւն, ոչ քարոզիչներ, ոչ կազմակերպողներ: Սակայն դիմումներ շատ եւ ամէն կողմից՝ «եկէք կազմակերպեցէք մեզ, մեզ գործ ցոյց տուէք, անօրէնի ձեռքը մեռանք»:

2.- Յիրաւի, տրամադրութիւնը շատ լաւ է ժողովրդեան մէջ. Կարնոյ գործադուրը, «Երկիր»-«Չանգ»-ի ընթերցումը մեծապէս նպաստած են մտքերու ցնցուկը, եւ որ գլխաւորն է, մեծ հաւատքով եւ յոյսով են վերաբերուում դէպի Դաշնակցութիւնը ամէն անոնք որ յաջողուած էին կարգաւ թերթը (գիւղացիները նամանաւանդ եւ արհեստաւորները), թէեւ անհրաժեշտ է խոստովանիլ թէ միեւնոյն ժամանակ բոլորի երեսին կարելի էր կարգաւ մի գարմանք, մի հարցում – ինչո՞ւ Դաշնակցութիւնը ոչինչ չի շինում Կարինում: Դաշնակցութեան ուժի վերայ մեծ հաւատ ունին, Կովկասի մէջ թուրք հայկական ընդհարումներից վերջինիս յաղթող դուրս գալէն ի վեր. Պոլսոյ փորձը նմանապէս շահաւոր ազդեցութիւն է գործել ժողովրդեան վերայ:

Վարը եւ աւելի երկար կանգ կ'առնեմ այն բոլոր բարեյարմար պայմաններուն վերայ, որ միանում են Կարնոյ մէջ եւ որոնց ներկայութիւնը կազմակերպութեան ուշը պէտք է դարձնէ դէպի այդ վայրը:

3 ա. Ես անկարող եմ այստեղ մի լի տեղեկագիր ներկայացնելու Կարնոյ շրջանի դրութեան մասին, թէ ո՞րչափ գիւղ կայ, թէ ինչ մաս են կազմում հայերը, թէ ի՞նչ է անոնց տնտեսական վիճակը, արդեօք զէնք ունին թէ ոչ, շա՞տ թէ քիչ տրամադրելի մարդիկ կան ինչուս թէ Բասեն, եւայլն, եւայլն. այս հարցերից մի քանիսին պատասխանելու համար բաւական է ի նկատի ունենալ Տաճկաստանի ընդհանուր դրութիւնը, ուր բռնութիւնը, տգիտութիւնը, հարստահարութիւններն ու աղքատութիւնը մրցում են իրար հետ ժողովրդեան նիւթապէս թէ բարոյապէս ոչնչացման գործին մէջ: Կարինէն մեկնելուս խոստացած էին ինձ մի տեղեկագիր պատ-

\* Ինչպէս տեսանք, լուրը բոլորովին անհիմն չէր:

1.- Յարցման նշանը, բնագրին մէջ, աւելորդ է: Կարսը (Ջրուաբերդ) անձե՛ն ծանօթ եւ գործունէայ Կեդրոնական Կոմիտեի կենտրոններէն մէկն էր, այլ խօսք որ այդ ամիսներուն շրջանը կազմակերպական տագնապ կ'անցներ:



րաստել շրջանի գործերու մասին, որը ես պէտք էի ներկայացնել Արեւելեան Բիւրոյին, բայց տեղեկագիրը ժամանակին չպատրաստուեցաւ. սակայն՝ մօտաւորապէս 6-8 ամիս առաջ արդէն նոյնանման մի տեղեկագիր ներկայացուած էր Կարսի կենտրոնական կոմիտէին. ուրեմն Դաշնակցութիւնն ունի իր տրամադրութեանը տակ տեղեկութիւններ վերելը նշանակուած հարցերիս եւ ուրիշ մի քանիսի մասին:

Իմ նպատակն է ցոյց տալ զուտ տեղական (կարին) մի քանի պայմաններ, որոնցմով պէտք է օգտուիլ: Յաճախ չեն պահուում այդպիսի բացառիկ պայմաններ:

Եթէ մինչ հայկական կոտորածները հայր իր վաճառականական հրապարակի վերայ գրուած առաջնակարգ դիրքի շնորհիւ ինքզինքը որոշեալ ուժի տէր էր նկատում, մի տեսակ իշխում էր եւ յամենայնդէպս չէր ներկայացնում quasi non existant<sup>2</sup> դրութիւնը շատ փոքր տեղ էր հայր կատարեալ «ստուեր» էր դառնել. կառավարական անմիտ խստութիւններն ու կարգադրութիւնները, որոնց մասին գաղափար կարող են կազմել միայն անոնք որ եղել են Տաճկաստանում, հայր կապել կաշկանդել, մի լուռ ու մունջ, անխօս ու իր մարդկային արժանապատուութեան զգացումից միանգամայն հրաժարուած մի էակ են դարձրել. մի էակ որ ամենաստոր, զազիր պաշտօնեային շողորթիչ ածականներ չուայլելէ գատ ուրիշ իրաւունք չունի՝ ի պատասխան անոր ամենախայտառակ ցինիք<sup>3</sup> վարմունքին դէպի հայր: Կարնոյ մէջ դրութիւնը գրեթէ նոյնն է, մի քիչ սակայն աւելի մեղմ. համեմատած ուրիշ տեղերի հետ հայր կարողացել է այստեղ քիչ թէ շատ պահպանել իր դիրքը, իր ինքնուրոյնութիւնը: Հայր այստեղ դեռ զգալի մի տարր է, նա բոլորովին սեւեցրած չէ. Կարինը գաւառական քաղաքներուն մէջ մի տեսակ կենտրոն լինելով, ոստիկանական ստորաստիճան պաշտօնեաները չեն խաղում այն դերը, ինչ որ փոքր քաղաքներում. մասամբ ուսական սահմանի մօտիկութիւնը, եւ նամանակը եւրոպական հիւպատոսներու ներկայութիւնը, որչափ ալ ասոնք ինքնուրու՜ եւ անուշադիր լինեն դէպի անցած դարձածը, ստեղծում են մի տեսակ աւելի տանելի մթնոլորտ քան մի ուրիշ անկիւնում ուր ոստիկանական մի հարկւրապետ, բոլորովին գուրկ որեւէ կուլտուրայէ, կատարեալ իշխում է, իսկ հարստահարեալ ժողովուրդը, կտրուած աշխատանքից, ձայն ու ծպտուն չի հանում, գիտնալով, որ ոչ ոք պիտի լսէ իր ձայնը. անլուր ոճիրներու, պաշտօնեաներու քմահաճոյքի մի խուլ գետնատուն է ներկայացնում գաւառի այդ մութ կեանքը: Կարինը համեմատած աւելի նպաստաւոր պայմաններու մէջ է գտնուում. այստեղ եւս անպակաս են հալածանքներ, ինտրիգներ գետնի տակից, բայց գոնէ առ երեսան մի որոշ չափով հանգստութիւն կայ: Այն պաշտպանութիւնը որ ցոյց էր տալիս Փրանսական հիւպատոսարանը կաթոլիկներուն (կաթոլիկ հոգեւորականութեանը միջամտութեամբ), որ ցոյց է տալիս ամե-

րիկեան կամ անգլիական հիւպատոսարանը ամերիկական հիւպատոսարաններին - դպրոց, որբանոց, ժողովարան - եւ վերջապէս այդ հիւպատոսներու հետ ծանօթ եղողներու շարքը ստեղծում են Կարինում մարդկանց մի կատեգորիա՝ որու հանդէպ կառավարութիւնը պակաս քմահաճ է, եւ այդ կատեգորիայի ներկայութիւնը իր ուղղակի թէ անուղղակի դրական նշանակութիւնն ունի\*: Մասամբ այս պայմաններու շնորհիւ է որ մի փոքր խմորում յառաջ է եկել երիտասարդութեանը մէջ. շարժումը դեռ նոր է, դպրոցական ուսանողութիւնն է որ շարժում է, վառ կեանքի ձգտումներ են յայտնուում, բայց շարժումը կարող է լայն ծաւալ ստանալ. պէտք է քաջալերել ու սնուցանել այդ շարժումը: Սանասարեան վարժարանի մէջ 2 տարի շարունակ հրատարակում է ներքին ձեռագիր մի աշակերտական թերթ, որը վերջին տարին դպրոցի պատերից դուրս արդէն շատ ընթերցողներ ունի. դպրոցի վարչութիւնը անտեղեկ է այդ թերթի հրատարակութեանը: Լի եռանտեղեկ է այդ թերթի հրատարակութեանը: Լի եռանդով գրուած յօդուածներ հրատարակում են գործունէութեան, թմրածութիւնից դուրս գալու. շատ անգամներ պ. Ահարոնեանի պատմութիւններն տեղ են գրաւում թերթի երեսներու վերայ ու գրգռում ընթերցողների ծով-ծարաւը դէպի կենդանի՝ գրուածքները. ուսուսուս գրականութեան ազդեցութիւնն է այդ շարժումը. մի առանձին յարմար պարագայի շնորհիւ Րաֆֆիի, Ահարոնեանի, Լէոյի, Ակնունիի հեղինակութիւնները, Մուրճը (մինչ վերջին տարիս), Յառաջ-Ալիք-Երկիր-Չանգ անցնում են Սանասարեան վարժարանի հաստ պատերից\*\*.

Օրիորդաց ազգային վարժարանը գերծ չի մնում նոր ազդեցութիւններից եւ արդիւրեւ զրբերու փոքրաթիւ օրինակները օրիորդներու ձեռքից ձեռք են անցնում գաղտագողի, գիշերներ են լուսացնում կարգալով. այդ բոլորը պէտք է վերին աստիճանի գաղտնի լինի. մատնիչներ են երեսան գալիս, բայց արժանաւոր կերպով վարձատրում են, ենթարկուելով ընկերների արհամարհանքին (ուզում են նոյնիսկ սպաննել): Ծարժումը աւելի եւս որոշ ուղղութիւն է ստանում. մի քանի մարդիկ ծրագրում են հրատարակել (միշտ ձեռագիրը եւ գաղտնի) մի թերթ, որու նպատակն է օրիորդներու մէջ մի քիչ զարգացում, գիտակցութիւն մտցնել (օրիորդներու մեծ տոկոսը աւարտած են տեղական ազ-

\*) Տրապիզոն, Չմիւռնիա ներկայացնում են նոյնանման պայմաններ, բայց հայրը շատ այլասերուած, օտարացած են այստեղ, - ինչ որ գրեթէ չկայ Կարինում:

\*\*) Սա մի մասնաւոր մարդու նախաձեռնութիւնն է եւ ոչ Դաշնակցութեան գործունէութեան արդիւնքը:

- 2.- Ֆրանս.- Գրեթ անգոյ:
- 3.- Ֆրանս.- Շնական:
- 4.- Ֆրանս.- Անկեղան:
- 5.- Ֆրանս.- Տեսակ, կարգ, դասակարգ:
- 6.- Ապրող, ժամանակակից:

գային վարժարանը, որ գաւառական օրիորդաց վարժարաններու մէջ լուսագոյնն է եթէ չեն սխալուում. անցեալ տարի առաջին անգամ լինելով՝ ուրիշ տեղից (Վան) հրաւիրուած էին այդ դպրոցի շրջանաւարտ օրիորդներից ուսուցչութեան) - եւ այսպիսով հող պատրաստելու յեղափոխական քարոզի համար որը պիտի յաջորդէ ներկայ շրջանին: Իմ կարծիքով այս շարժումը շատ նշանակալից է եւ խորին ուշադրութեան արժանի: Թեթեւս նկատէք թէ մի երեխայական շարժում երբեք չի կարող լուրջ յեղափոխական գործունէութեան հիմքը լինել. բայց իմ կարծիքով ամենահաստատուն հիմքը գաղափարի հիմքն է որը մշակուում է այսօր երիտասարդ հոգիներուն մէջ. վաղը այդ երիտասարդները կ'աւարտեն դպրոցական շրջանը, կը դիմեն դէպի գաւառական անկիւնները, իրենց հետ տանելով ազատութեան գաղափարի հունտերը: Վարը ես կը վերադառնամ այս կէտին:

3 բ.- Մի քանի զարգացած ու ձեռնհաս մարդկանց ներկայութիւնը Կարինում հնարաւորութիւն է տալիս իսկոյն եւեթ գործի սկսելու, Կարինը կենտրոն դարձնելու, իսկ վերեւ յիշածս պայմանները (ընդհանուր տրամադրութիւնը, երիտասարդութեան մէջ սկսած խմորումը) գրաւականներ են թէ քիչ ժամանակուայ մէջ մեծ արդիւնքներ կարելի է ստանալ: Հաղորդակցութիւնը Ռուսաստանի հետ վերին աստիճանի դիւրին է - թէ՛ գէնք, թէ՛ հրատարակութիւն փոխադրելու ամենալալող փորձեր եղած են. (Կարնոյ հայ գիւղերից մէկից - Չիթոյ - իւրաքանչիւր տարի մի քանի մարդ անցնում են Ռուսաստան - սա մի տեսակ սովորական բան է դարձել այդ գիւղի համար - եւ 1, 2, 3 տարի աշխատելուց յետոյ դարձեալ գաղտնի վերադառնում են հայրենիք: Գիւղացիներից մի քանի հոգի Ռուս-ճարտարական պատերազմի ժամանակ խարպին էին - հաց էին մատակարարում բանակին - եւ վերադարձան մեծ հարստութիւն բերելով իրենց հետ): Գալով վերոյիշեալ անձնաւորութեանց, դոցանից մինը որ Սանասարեան վարժարանում դասախօսում է, ամենաբարձր բարոյականի եւ լուրջ գիտական պաշարի տէր մի մարդ է, տրամադիր լուրջ յեղափոխական գործունէութեան. դա մի անձնաւորութիւն է որ շատ յարմարութիւններ ունի գործը յաջող տանելու - Երկրի պայմաններուն, լեզուին տեղեակ լինելը, անձնական ծանօթութիւններ եւայլն, - մի անձնաւորութիւն որ շատ յարմար է՝ գիտակից, Դաշնակցութեան ծրագիրներուն ծանօթ եւ այդ ծրագիրներու իրականացմանը տենչող գործիչի դերում, բայց վատ կը լինէր իբր գործիք: Ի նկատի առնելու ենք եւ այն պարագան՝ որ յիշեալ անձնաւորութիւնը Սանասարեան վարժարանի աշակերտներու ամենամեծ յարգանքը վայելում է. արդ, եթէ յիշենք թէ դպրոցի շրջանաւարտներից շատերը, արտասահման անցնելու եւ իրենց ուսումը շարունակելու իրաւունքից զրկուած (սովթանական ռեժիմը), դիմում են գաւառները եւ ազ-

գային վարժարանները պաշտօնավարութեան, կը տեսնենք թէ ինչպիսի ցանցով կարելի է պատել շրջանը, կենտրոն ընտրելով Կարինը՝:

Վերոյիշեալ միւս անձնաւորութիւնները արդէն պէտք էին կոմիտէն կազմած լինել, եթէ գրութեանս սկիզբը յիշածս թղթակցութիւնները մի յաջող ելքի յանգէին: Կարճ տեղեկագրիս մէջ ես աշխատեցի մատնանիշ անել այն նախ՝ թէ Կարնոյ շրջանի մէջ Դաշնակցութեան գործունէութեան նշոյլ չկայ գրեթէ. երկրորդ՝ թէ Կարինը մի բոլորովին հում նիւթ չի ներկայացնում յեղափոխական գործունէութեան, որին մեծ կարիք է զգացում. երրորդ՝ ուրուագծել այն բարեյաջող պայմանները որ ներկայացնում է Կարինը, քիչ ժամանակուայ մէջ մեծ արդիւնքներու հասնելու համար:

Շատ հաւանական է թէ Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը մեծ մարդասպանի սպանութեան անյաջող փորձից վերջ երկրորդ անգամ մի նոյնանման ցնցիչ լուծումը մօտ չէ ու նոր եւ երկար պատրաստութիւններու կը կարօտի, ապա ուրեմն ժամանակ կայ մտքերու եւ ոյժերու մշակման ծրագիրը ընդունելու Կարնոյ շրջանի համար: Եթէ երբեք Կարնոյ շրջանի հայր այսօր իր անձը պաշտպանելու անհրաժեշտութեան մէջ գտնուի, նա միանգամայն անկարող է այդ բանն անելու - որեւէ պատրաստութիւն չունի. բայց մի տարուայ լարուէ պատրաստութիւն չունի. բայց մի տարուայ լարուած աշխատութիւնը կարող է ուրիշ կողմ ծուխ հաւանականութեան կշիռը. գոնէ հայր ոչխարի դերը չխաղայ գայլերու հանդէպ:

Ես աշխատեցի շատ կարճ լինել, ներկայացնելով իմ համոզմունքի ու անցեալ տարուայ կատարածս ճանապարհորդութեան ընթացքում տեսածներիս ու լսածներիս quintessence-ը<sup>8</sup>. Եթէ աւելի մանրամասն տեղեկութիւններ հարկաւոր են այս կամ այն կէտի վերաբերմամբ, ես պատրաստ եմ յայտնաւորել մտքերը լրացնելու որչափ ինձ թոյլ են տալիս տեղեկութիւնները:

Մի զուտ գործնական նկատողութիւն՝ վերջացնելու համար: Ես քանիցս խօսակցութիւն ունեցած եմ Երկրի պայմաններին ծանօթ մարդկանց հետ եւ միշտ լսած եմ այն կարծիքը թէ Երկրի մէջ գործելու ամենալալող միջոցը վաճառականի քողի տակ պահուելն է. ուսուցչական դիմակը ամենակասկածելին է:

ԱՐՄԷՆ ԳԱՐՕ  
Ժընեւ, 1907 Մարտ

7.- Արմեն Գարոյի յիշած «ամենաբարձր բարոյականի եւ լուրջ գիտական պաշարի տէր» անձնաւորութիւնը անձնայն հաւանականութեամբ, Կարնոյ Սանասարեան վարժարանի երկարամեայ ուսուցիչ (ապա տնօրէն) յայտնի պատմաբան եւ հաւատաւոր դաշնակցական փրոֆ. Աստուածատուր Իսախանովն է: Իր մասին տեսնել Ս. Վրացեանի «Յուշապատում 7. Յ. Դաշնակցութեան», էջ 478-482:

8.- Ծուծը, նրբագոյն բովանդակութիւնը:



Բ. - ՏԵՐՍԻՄ

Բ 1.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 4ԲԴ ՊԱՏԳԱՄԱԻՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Հասցե 1 P. O. Box Lawrence Mass (U. S. A.)

907 Յուն. 14 Լորէնս Ամերիկա

Յարգելի ընկերներ,

Նկատելով որ Արեւմտեան Բիւրոն իր կազմակերպական վերջին ազդով ժողովի քննութեան առարկայ պիտի լինի օրակարգի կէտերէն դուրս եւ անհատ ընկերներու եւ մարմիններու ալ կարծիքներն ու առաջարկները. մանաւանդ ի նկատի առնելով Երրորդ Ընդհանուր Ժողովի Ցրդ օրակարգի այն կէտը որ կ'ըսէ. «Ժողովը ընդունելով Մեծ-Հայքի ու Փոքր Ասիայի գանազան վայրերը կազմակերպելու անհրաժեշտութիւնը, որոշեց յանձնարարել կազմակերպութեան իրաւասու մարմիններուն թէ ներսի, թէ դուրսի, չսահմանափակել իրենց շրջանով միայն, այլ ամէն ջանք թափել կազմակերպելու նոր վայրեր, մանաւանդ անոնք որ հարեւան են եւ դեռ կազմակերպութիւն չկար:

Հիմնուելով սոյն երկու կէտերուն վրայ, բաւական չհամարելով նաեւ անցողաբար վերեւ յիշուածները, յարմար դատեցինք ներկայացնել 4րդ Ընդհանուր Ժողովին լուրջ ուշադրութիւնը հրահրել Տէրսիմի շրջանին մասին կազմած մեր սոյն առաջարկի մասին որ պիտի ստորեւ ներկայացնենք:

ՂԱԶԱՐ ՄԱՐՏԻԿԵԱՆ ՄԻՆԱՍ Մ. ԱՐԹԻՆԵԱՆ ՊԵՏՐՈՍ ԴԵՐԶԱԿԵԱՆ

Բ 2.- ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՐՍԻՄԻ

(Բնական դիրք)

Տէրսիմը Բարձր-Հայոց արեւմտեան ծայրը՝ Կարնոյ, Տիգրանակերտի եւ Խարբերդի միջավայրը կը մնայ. 9-10 հազար ոտք բարձրութեամբ ծովուն մակերեւոյթէն:

Տէրսիմի լեռնաշղթան արեւելքէն Պինկէօլ (Բիւրական) լեռներէն սկսելով՝ կը հասնի մինչեւ Խաղաղուր լեռներն՝ եւ կը վերջանայ Ակնայ մօտերը՝ Եփրատն իրեն սահման ընդունելով. միանգամայն իր ընդարձակ տարածութեան մէջ առնելով Շէյթան, Քէշմիր, Ղըզլըքիլիսէ, Սիլպուլ, Պագուր, Մերձան, Սէլ, Մալ, Տուփըպպապա, Ղուրուպպապա եւ Մնձուր բարձրաբերձ լեռները, որոնք առանձին-առանձին լեռնագօտիներ կը կազմեն Տէրսիմի մէջ:

Տէրսիմի հիւսիսային եւ հարաւային ստորոտներէն դէպի արեւմուտք կը հոսին Եփրատի երկու մեծ ճիւղերը՝ երկրին վերջաւորութեան վրայ Չմշկածագի եւ Կպան-մատէնի քովերը իրար խառնուելով:

Այս երկու ճիւղերէն մէկը — Արածանին — որ Մշոյ դաշտէն անցնելով կը խառնուի Ճապաղ ջրին, Տէրսիմի հարաւային ստորոտը քերելով՝ Բալուայ-Չուր անունով կը հոսի Բալուայ հովտի, Փերնայ, Բերդակի եւ Չմշկածագի սահմանները իր աջ կողմը թողելով կը խառնուի Սեւ-ջրին կամ Ակնայ ջրին, թողնելով Խարբերդի դաշտը ձախ կողմի վրայ:

Իսկ միւս — Սեւ-ջուրը, Տէրսիմի հիւսիսային կողմէն կ'անցնի. նախ՝ իր աջ եզերքին վրայ թողելով Մամախաթուն (Դերջան) եւ Երզնկայ, դէպի հարաւ՝ ձախ կողմը թողելով Փինկան եւ Չմշկածագ. իսկ աջին վրայ Ակն:

Եփրատի այս երկու մեծ ճիւղերուն մէջ՝ բարձր կողմացած դիրք մը բռնած է Տէրսիմը, որ ունի ընդարձակ տարածութիւն եւ կ'երկարի արեւելքէն դէպի արեւմուտք 5-8 օրուայ ճանապարհ. լայնութիւն ունենալով 3-4 օրուայ ճանապարհ. միշտ լեռնային եւ մասամբ անտառապատ:

Տէրսիմը երկու մասի կարելի է բաժնել, — դաշտային եւ լեռնային. դաշտային Տէրսիմն է ամբողջ Չար-Սանճազը (չորս-սանճագ) ու Դերջանը. այս վերջինը Տէրսիմի հիւսիս-արեւելեան կողմը կը բռնէ. իսկ առաջինը — Չար-Սանճագ — գրեթէ Տէրսիմի ամբողջ հարաւային մասը:

9.- Բնագրին մէջ միշտ Զարբերք ձեւով:

Իսկ լեռնային Տէրսիմը՝ այս երկու մասերուն միջավայրը կազմելով Տէրսիմի իսկական լեռնաշղթան: Այս երկու գլխաւոր մասերն ունին երեք գլխաւոր բաժանումներ — կառավարական տեսակէտով — այն է, հպատակ, կէս հպատակ եւ բոլորովին անկախ: Հպատակները կ'ապրին Տէրսիմի դաշտային մասերուն մէջ. իսկ կէս հպատակները Տէրսիմի շուրջը, գեղեցիկ լեռներու վրայ. իսկ անկախները կ'ապրին Տէրսիմի ճիւղապատ բարձունքները. եւ այն մութ-մուայլ անտառներուն մէջ ու ժայռոտ բարձունքներուն վրայ, որոնց մասին պիտի խօսինք հիմա:

- Առաջին՝ Հպատակներն են
- 1.- Փերիս } Խարաջոր կամ
- 2.- Բերդակ } Զար-Սանճագ
- 3.- Զմշկածագ
- 4.- Դերջան

1.- Ասոնցմէ առաջինը Փերիս՝ ունի բաւական ընդարձակ տարածութիւն. Փերի քաղաքը շինուած է Լըծընք-չայի աջ եզերքին վրայ. իբր Չար-Սանճագի կեդրոնատեղի ունի 50-60 խանութներ եւ արհեստաւորներ՝ ամէնքն ալ. վաճառականութիւնը եւ նմանօրինակ բոլոր գործերը առանց բացառութեան հայերուն ձեռքն է:

Փերնայ մէջ աւելի քան 600 տուն հայեր կան. երկու յարանուանութեանց բաժնուած. ունին առանձին իրենց դպրոցները ու եկեղեցին: Փերին գայմագամախատ քաղաք է. ունի գինուորականութիւն եւ ոստիկանութիւն, որոնց կառավարողը թուրք կամ քրիտ հազարապետ մըն է: Չինուորականութիւնը բաղկացած է մէկ վաշտ գինուորներից, ոստիկանութիւնը՝ կէս վաշտ ժանտարմներից: Փերնայ կառավարութեան եւ գինուորութեան առեւտրական գործերը (իբր կապալառութիւն) բոլորովին հայերուն ձեռքն է. որովհետեւ կը պակսին ուրիշ ազգերէ ձեռնհաս եւ ընդունակ մարդեր:

2.- Բերդակ.- Բերդակ կամ Չար-Սանճագ. ունի 60 գիւղեր՝ հայ եւ քրիտ խառն ազգաբնակչութիւններով. բոլորն ալ մարաբաներ (կիսնորդ) եւ որոնք ընդամէնը կը հաշուեն 1700-1800 տուն եւ իբրեւ 14 հազար կամ քիչ մը աւելի շունչ: Իսկ քրիտները 125 տուն կամ 6-7 հազար շունչ (հաշուելով գիւղ եւ քաղաք):

3.- Զմշկածագ.- Չմշկածագը Չար-Սանճագի արեւմտեան կողմը առանձին խասապայ<sup>10</sup> մէ, Խօզաթի միւթասարիթութեան ներքեւ. կը նստի գայմագամ կառավարիչ մը. ունի զօրանոց մը երկու վաշտ գինուորներից եւ հազարապետ մը, կէս վաշտ ալ ոստիկան գինուորներ:

Քաղաքը բաղկացած է աւելի քան 1600 տուններից, որոնց կէս մասը հայ է, մէկ մասը թուրքեր ու մաս մըն

ալ քրիտներ: Վաճառականութիւնն ու արհեստը բոլորը հայերուն ձեռքն է:

Չմշկածագը ունի 50-60 մեծ ու փոքր գիւղեր, որոնցմէ 25-30ը միայն հայեր կը գտնուին այս քաղաքին մօտիկ տարածութեան վրայ եւ որոնց մէջ հայր մեծամասնութիւն կը կազմէ. իսկ եւ մնացած մասը՝ հուսակաւոր Սը. Թորոսի գիւղորայքը որոնք դեռ կը յորջորջուին իրենց բուն անուններովը, բացարձակապէս ապացուցանելով որ ասկէ մէկ կամ մէկուկէս դար առաջ պարզապէս հայ են եղեր. իսկ այժմ թուրք. բոլորովին մեծամասնութիւն կը կազմեն, հեռի քաղաքէն 10-12 ժամուայ ճանապարհ բնակուած:

Չմշկածագի մէջ սակայն հողագործութիւնը զարգացած չէ անջրդէի լինելուն պատճառաւ, ատոր համար ալ տեղացի հայերէն շատեր պանդխտելու ստիպուած են օտար երկիրներ. անոնք ընդհանրապէս կը պարապին արհեստներով. ոմանք հասարակ ծառայութիւններով. ոմանք ալ զանազան պաշտօններ կը վարեն. օրինակի համար սեղանաւոր, գրագիր, մաս մըն ալ օտար գոնախիւներու քով (Հալէպ, Պոլիս կամ այլուր) թարգման, գրագիր, խոհարար, ծախսարար. անոնք վերջին աղէտներու ժամանակ, եւ միշտ գոնախիւներու ազդեցութեամբ, փրկարար դեր կատարեցին. ահազին օգուտ հասցնելով նաեւ ուղղակի յեղափոխական տեսակէտէ ալ: Չմշկածագի հայերու դիրքը խիստ ռազմական(?) է. իսկ հայերու թիւը 7-8 հազար. թուրքերունը՝ 10-12 հազար:

4.- Դերջան.- Դերջանը կը մնայ Տէրսիմի հիւսիսարեւմտեան կողմը՝ լեռներուն ստորոտը, կարինէն Տրապիզոն տանող ճանապարհին վրայ. գիւղաքաղաքն է Մամախաթուն. գայմագամ մը կը նստի. այս խասապան ենթարկուած է Երզնկայի միւթասարիթութեան եւ ունի 6-7 հարիւր տուն բնակիչ, որոնց մէկ մասը հայ է. իսկ մէկ մասը թուրք է եւ քրիտ. ունի 75-80 գիւղեր. քրտերը մեծամասնութիւն կը կազմեն. բայց հայերն եւս մեծ թիւ մը ունին Դերջանի գիւղերուն մէջ. օրինակի համար Վերին-Բագաուիճ գիւղը՝ որ 100 տուն հայ ունի. Վարին-Բագաուիճ գիւղը որ 200 տուն հայ ունի:

Տէրսիմի հպատակ մասերուն վրայ մեր ունեցած կամ արդէն տեղեկութիւններէն քաղածը՝ մենք տրւինք: Այժմ քիչ մըն ալ դառնանք դէպի կիսահպատակները, որոնք ոչ սակաւ կը զբաղեցնեն կառավարութիւնը:

- 2.- Կիսահպատակները
- 1.- Ղըզլըքիլիսէ
- 2.- Փախ
- 3.- Մեծկերտ

10.- Աւան, փոքր քաղաք: Կը գործածուի նաեւ գաւառային կեդրոն իմաստով:

- 4.- Խօզաթ
- 5.- Օվաճուխ
- 6.- Խուլզուզան կամ Աղքան

1.- Ղըզլ-Քիլիսիս.- Ղըզլ-Քիլիսիս կը թարգմանուի կարմիր վանք կամ կարմիր եկեղեցի: Սա Տէրսիմի արեւելեան կողմը հաստատուած է, բարձր լեռնալանջի մը վրայ. ունի մօտաւորապէս 250-300 տուն: 20-30 տունը միայն հայ է, այն էլ եկուոր հայեր: Խասապային մէջ կը նստին քիւրտ կամ թուրք գայմագամը 2-3 հարիւր գինւորներով, նայելով լեռնականներուն տրամադրութեանը:

Ղըզլ-Քիլիսիսի շրջակաները կան 75 քրտական գիւղեր, որոնց մէջ կը գտնուին քանի մը տուն հայեր՝ Միրազեան անունով: Արեւելքէն սահմանակից Քղիին, իսկ արեւմուտքէն Խուլթի-Տէրէսիին. այս գիւղերը թէեւ հպատակ են, բայց ամէն ինչ առ երես է: Խասապային մէջ բնակող հայերը ոչ եկեղեցի ունին ոչ դպրոց: Խասապային մէջ խարխուլ եկեղեցի մը կայ որուն անունով կարծէք՝ կը ճանչցուի Ղըզլ-Քիլիսիս:

Քանի մը տարի առաջ երբ թուրք կառավարութիւնը ուզեց եկեղեցւոյ սրբատաշ ընտիր քարերովը բաղնիք մը շինել գինւորներուն համար, շրջակայքի լեռնցիները (քիւրտներ) յայտարարեցին կառավարութեան՝ որ եթէ յանդէսի հին ժամանակներէն մնացած սրբութիւնը պղծել, ստիպուած կը լինին գինու գորութեամբ արգելի թուրքի սրբապիղծ ցանկութիւնը: Կառավարութիւնը յետ կեցաւ իր որոշումէն, կռուի նորանոր առիթներ չտալու համար:

2.- Փախ.- Փախը՝ Չար-Սանճագի հիւսիսային բարձրութեան վրայ հաստատուած է. ունի 250 տուն, որոնց մէկ մասը նմանապէս եկուոր հայեր եւ թուրքեր. հայերն այստեղ ոչ եկեղեցի ունին ոչ դպրոց: Փախի շրջակայքը տարածուած են 35-40 քրտական գիւղեր, որոնք նմանապէս քաղաքին մէջ միայն հպատակ են եւ քաղաքէն դուրս՝ ոչ: Այս քրտական ցեղը կը կոչուի ալան որոնց ցեղապետն է Կիւլապի աղան. կան նաեւ 80-70 տուն տեղացի բնիկ հայեր, Միրազեան քաղցեղին պատկանող: Փախի մէջ կը նստի գայմագամ մը հազարապետի օգնութեամբ, եւ երկու վաշտ գինւորներով: Կառավարութիւնը ունի՝ եւ կը պահէ բաւական մեծ ռազմամթերանոց մը (դեպօ) եւ որ շատ անգամ լեռնական քրտերէ՝ մասնաւորապէս Խուլթի-Տէրէսիներէ թալանուած է կռուի ժամանակ:

3.- Մեծկերտ.- Մեծկերտը հաստատուած է նոյնպէս Չար-Սանճագի հիւսիսային կողմը, ապառաժուտ լեռներու ստորոտը: Մեծկերտու խասապան բաղկացած է 7-8 հարիւր տուններէ՝ ասոնց մէկ մասը տեղացի եւ եկուոր հայեր: Հայերն ունին օրինաւոր եկեղեցի եւ դպրոց:

Մեծկերտը կառավարողներն են՝ թուրք գայմագամը եւ մէկ վաշտ գինւորներ, կէս վաշտ ոստիկան ժանտարմներ. քաղաքի շրջակայքը կը գտնուին 25-30 քրտական գիւղեր, որոնց մէջ կը գտնուին փոքր թուրք հայեր:

4.- Խօզաթ.- Խօզաթ կը գտնուի Խարբերդէն 2 օրուայ ճանապարհ հեռու՝ ուղիղ դէպի հիւսիս Տէրսիմի արեւմտեան կողմը. ընդարձակ հովտի մը մէջ: Սա Տէրսիմի որպէս ընդհանուր լիվայութիւն՝ բաւական բազմամարդ քաղաք մըն է, որու մէջ կը նստի միւլթասարիֆ մը, երկու կամ երեք վաշտ գինւորներով եւ մէկ վաշտ ոստիկան հեծելազօրներով. ունի նաեւ (պիտայէթ եւ քեջայ-տայրէսի) դատարան՝ ուր կը նստին — ի միջի այլոց — եւ երկու հայ անդամներ՝ կառավարութեանն ընտրուած:

Խօզաթն ունի 1.500 տուն՝ որոնց մեծ մասը տեղացի եւ եկուոր հայեր են. իսկ մնացածներու մէկ մասը եկուոր թուրքեր են որ կը վարեն կառավարութեան պաշտօններ. մէկ մասն ալ քրտեր են որ սոսկ առաջիններուն կը ծառայեն: Հայերը գլխաւորապէս կը պարապին արհեստներով եւ առեւտրով. մեծ մասամբ Խարբերդի, Արաբիի, Ակնայ եւ Չմշկածագի քաղաքներէն ու գիւղերէն գաղթած:

Հայերը ունին եկեղեցի եւ դպրոց: Թուրքերը մզկիթ, որ ի հարկէ շինուած է եկուոր օսմանցիներուն համար միայն. Խօզաթի գորանոցը, որ քաղաքէն դէպի Խարբերդ տանող ճանապարհին վրայ շինուած է, նշանաւոր է իր մեծակառոց շինութեամբ եւ դիրքով (որու մէջ երբեմն բանակներ կը մնային). Խօզաթի շուրջը կան 30-40 քիւրտ գիւղեր:

5.- Օվաճուխ.- Օվաճուխը՝ Տէրսիմի ծայրագոյն արեւմուտքը, Ակնայ սահմանակից. Մնճուր գետի սկզբնաւորութեան վրայ կը մնայ՝ բաւական մեծ տարածութեամբ եւ ամենագեղեցիկ դիրքերով. ունի 30-40 քրտական գիւղեր. բնակիչները զուտ խրզրլալ են: Բաժնրւած են գլխաւորաբար երկու ցեղերու — աշիրաթներու — որոնց ցեղապետն է Տինանցի-աղա (բուն Շմաւոնին ձերբակալողը) եւ Ահմէտ աղա (այժմ իր թոռը) որոնք երբեմն անկախ, բայց միշտ կէս-հպատակներ ու ապրտամբներ եղած են թուրք կառավարութեան դէմ (հայ առեւտրականներն ու արհեստաւորները խիստ մեծ յարգանք կը վայելեն անոնց քով եւ միշտ ալ անպակաս):

6.- Խուլզուզան.- Խուլզուզանը հիւսիսային կողմը կ'իյնայ, Տէրսիմի միւս բաժիններէն շատ մեծ է. ունի աւելի քան 300-380 քրտական գիւղեր, որոնց լիազօր իշխանն ու ցեղապետն է հուսիսաւոր Շահ-Հիւսէյն պէկ Բ. (այժմ իր տղան Հայտար բէկ): Տէրսիմի այս բաժինն մէջ հայեր փոքր թիւ մը կը կազմեն, ամբողջ Խուլզուզանը

նի մէջ միայն 10-15 հայ գիւղ կայ. ամենամեծ գիւղը Ալթուն-Հիւսէյին գիւղն է, որու մէջ կը բնակի Շահ-Հիւսէյն պէկ Բ. ի եղբայրը՝ Իպրահիմ պէկ: Գիւղը 250 տուն ունի, այս գիւղը միայն եկեղեցի եւ դպրոց ունի. միւսները՝ ոչ. սակայն բոլորն ալ իրենց մայրենի լեզուն կը պահեն, քիչ մը աղաւաղուած վիճակի մէջ:

- Գ.- Անկախներն են.
- 1.- Խուլթի-Տրեւի
- 2.- Տուժիք կամ Ապասան

1.- Խուլթի-Տրեւի.- Խուլթի-Տէրէսիին (Խուլթայ-ձոր) որ կը մնայ Տէրսիմի բուն կեդրոնը՝ մեծ ու ահռելի ձոր մըն է, հիւսիսէն դէպի հարաւ ձգուած: Այս մեծ ձորի աջ ու ձախ կողմերը կը բարձրանան ահռելի ժայռերով վիթխարի լեռներ՝ բոլորովին անտառապատ: Չորի մէջէն կ'անցնի բաւական մեծ վտակ մը որ սկիզբ կ'առնէ Մերճանու լեռնէն: Այս ջրի երկու ափերուն վրայ ճիշտ ձորի մէջտեղը կը գտնուի Հայտարան գիւղը 750-800 տուն ազատ քիւրտներ որոնց ցեղապետն է Մամօ պէկ կոչուած հսկայ երիտասարդը. կը բնակի Հայտարանի (Հայտունի). անոր իշխանութիւնը կը տարածուի ամբողջ Խուլթի կողմերը՝ որ կը կոչուի Հայտարան: Խուլթի-Տէրէսիին մէջ բացի Հայտարանցիներէն՝ որոնք բուն տիրող տարրը կը համարուին, կը բնակին նաեւ ալեանցիք, ճիպանցիք կամ ճեպրանցիք եւ այլ կողմերէ հալածական եղած փախստական ցեղեր, որոնք չուզելով հպատակիլ օսմանցուն, իրենց միակ ապահով ապաստան ընտրած են Տէրսիմի ամենաանառիկ տեղը — Խուլթի-Տէրէսիին — օսմանեան պետութիւնը մինչեւ այսօր չի գիտեր տակաւին Խուլթի-Տէրէսիին ինչպէս տեղ ըլլալը, եւ կամ ինչ դիրք ունենալը:

Տէրսիմի այս մասին մէջ, հայ բնակչութիւն երբեք չկայ. բայց հայ արհեստաւորներ ու առեւտրականներ անպակաս են, որոնք մեծ ընդունելութիւն կը գտնեն այս լեռնականներուն մէջ: Խուլթի-Տէրէսիին, ինչպէս ըսինք արդէն, Տէրսիմի ամէնէն անառիկ դիրքը ունի՝ արեւելեան կողմը, ձորին ձախը կը բարձրանայ բարձրաբերձ Սէլ լեռը, դալարագեղ մարգերով օժտուած:

Այս լեռը՝ ձորին մէջէն միայն ճանապարհ մը ունի բարձրանալու համար, 2-5 կամ երեք ժամուայ տեւողութեամբ, ուրկէ վեր բարձրանալու համար հարկաւոր է այժեամբներու պէս մագլցիլ: Ճանապարհին վրայ 3-4 մարդ միայն բաւական է լեռան բարձունքէն քարեր գլորելով արգելք լինել թշնամուն բանակին, որ չկարենայ վեր բարձրանալ լեռան կատարին:

Սէլ լեռը՝ չորս կողմէն շրջապատուած է խիտ անտառով մը: Իսկ ձորի արեւմտեան կողմը, նոյնպէս սաղարթախիտ անտառով շրջապատուած Մալ լեռան շարունակութիւնն է, որ գրեթէ նոյնքան անմատչելի է՝ որքան Սէլ լեռը:

2.- Տուժիք.- Տուժիք կամ ըստ Մ. Խորենացու Առիւծ: Տուժիք-պապան կը մնայ Խուլթի-Տէրէսիին հարաւարեւմտեան կողմը, Օվաճուխի արեւելեան սահմանին մօտ: Սա անկախ Տէրսիմի ամենամեծ մասն է, ուր կ'ապրին մասնաւորապէս 75 հազար ղըզլլալ քրտեր, զանազան ցեղերու բաժնուած, որոնց գլխաւոր ցեղապետը եւ միանգամայն Տէրսիմի ընդհանուր կրօնապետն է Սէյիտ-Իպրահիմ պէկը (մեռած) կուրիչեանցիներու ցեղէն սերած (կուրիչեանցիները առանձին ազդեցիկ ցեղ մըն է Տէրսիմի մէջ, որոնցմէ գատ ուրիչներն իրաւունք եւ կարողութիւն չունին կրօնական լինելու):

Ասոնք պատրաստ ունին 40-50 հազար սպառազինուած երիտասարդներ որոնք միշտ պատրաստ են ի հարկին կռուելու թշնամուն դէմ: Տէրսիմի այս բաժինն մէջ կայ նաեւ Միրազեան կոչուած հայ ցեղը. եւ որոնց բնակութեան գլխաւոր տեղն է Հաւլորու գիւղը, եւ Հաւլորու Սբ. Կարապետ վանքը. ասոնց մարդահամարը ընդամենը կը հաշուէ 7-8 հազար:

Տուժիք-պապան որ սկիզբէն ի վեր տէրսիմցիներու պահպան հրեշտակն եղած է, կը պաշտուի ամբողջ տէրսիմցիներէ իբր աստուած: Հեռու է Խուլթի-Տէրէսիին իբրեւ 8-7 ժամ ուղիղ դէպի արեւմուտք: Այս լեռը երբեք կողմերէն բոլորովին անմատչելի է — հիւսիս, արեւելք, արեւմուտք — անհպելի ժայռերով կը բարձրանայ աւելի քան 9 հազար ոտք. միայն հարաւային, որ Խուլթի կողմն ըսել է, ունի դիւրագնաց նեղ-նեղ շաւղներով ճանապարհ մը դէպի հիւսիս բարձրացող. ուրկէ մինչեւ Տուժիք-պապայի գագաթը հասնելու համար՝ հարկաւոր է անթափանցելի խիտ անտառի մէջէն անընդհատ ճանապարհորդել ամբողջ 9-10 ժամ, եթէ տեղւոյն քաջածանօթ է:

Այս սոսկալիթխար լեռը, որուն մեր նախնիք ի հարկէ գուր (տեղը) չէ որ Առիւծ անունը տուած են, տէրսիմցիներու համար պատմական խիստ մեծ նշանակութիւն ունի եւ որուն համար տէրսիմցի քրտեր իրենց կեանքը գոհ կու տան. անոր վրայ կը բնակի խրչրլը (Ս. Սարգիսը):

Տուժիք-պապա լեռը ունի իր վրայ բաւական ընդարձակ լեռնադաշտ մը՝ առատ աղբիւրներով եւ բուսականութեամբ մը, որուն վրայ կարող են բնակուել աւելի քան 10 հազար մարդ, իրենց պիտոյքն ալ հոգալով, խրչնամելով իրենց իսկ ձեռքով:

Խուլթի եւ Տուժիքի մէջ կը հաշուուի մօտաւորապէս 100 հազար քիւրտ բնակիչ որոնք կը բաժնուին 18 եւ կամ աւելի ցեղերու, օրինակի համար՝ իզօցիք, պուլանուխիք, խնուսիք, հայտարանցիք, ճիպրանցիք, ալանցիք, տուժիքիք, խուլթեցիք, հաւլորանցիք, միրազեանք կամ մամրոցիք եւ այլն եւ այլն: Երկրորդական տեղ բռնող ցեղերն են՝ Շամ-աղաչի, Խոչ-ուշաղի, Տել-րիղ, ձեմալ եւ այլն:

Այս զանազան ցեղերն ի մի հաւաքելով վտանգի պատճառով

Հուն իբր 50-80 հազար կռուող ուժեր կարող են հանել Տէրսիմին վտանգ սպառնացող պահուն: Ամբողջ Տէրսիմի մէջ կը բնակին իբր 200 հազար ոչ մահմետական զորավաշ քրտեր (կարմրագլուխ), որոնք թէեւ կրօնական որոշ գիւրք մը չունին, սակայն ունին իրենց առանձին կրօնը, հաւատալիքները որը աւանդաբար կը հաղորդեն միմիանց. բայց երբ այդ կրօնին որոշակի անուն մը տալ չէ կարելի, այլ կարելի է ասել սակայն որ կիսահայ դրուժեան մը կը հետեւին թէ կրօնին եւ թէ իրենց հաւատալիքներուն ու աւանդութիւններուն մէջ:

**Տեղսիմի հայերը կամ Սիրագեանները**

Տէրսիմի, մանաւանդ Տուժիքի կողմերը կան բաւական թուով հայեր, բոլորովին անկախ եւ ազատ որեւէ հարկատուութենէ, որոնք կը ճանչցուին Սիրագեանք, Սիրագեքի կամ Սիրագեաններ անունով: Ասոնց մարդահամարը կը հաշուուի 8 հազար, որոնք պատերազմի ժամանակ, ինչպէս նաեւ միշտ, պատերազմի համար իբր 3 հազար քաջամարտիկ ուժեր, հմուտ պատերազմական բոլոր փորձառութիւններուն:

Սիրագեաններու գլխաւոր բնակատեղին է Տէրովան, Չոխուր էջըզ, Հաւլորու, Թորուտ, կամ Հաւլորու Սուրբ Կարապետ վանքը. եւ զանազան մեծ ու փոքր գիւղերու մէջ կ'ապրին քրտերու հետ խառն ի խուռն կերպով:

Սիրագեանները իրենց անվեհեր բնակութեամբ արդէն նշանաւոր տեղ կը բռնեն ամբողջ լեռնաբնակ քրտերու մէջ. միշտ մասնակցած են լեռնականներուն բոլոր կռիւներուն. մանաւանդ, անգամ մը, օսմանեան պաշարումի մը ատեն՝ կորուստէ փրկած ըլլալուն — տէրսիմցիներուն պաշտումի առարկան՝ Տուժիք-պական, օգնութեան հասնելով տուժիքցիներուն: Սիրագեանները լեզուով, կրօնքով, սովորութիւններով աւանդութիւններով եւ հաւատալիքներով բացարձակ հայեր են:

Տէրսիմը լինելով ամբողջ լեռնային, հանքերու կողմանէ եւս հարուստ է, որոնց մէջ բորակի հանքը ընդհանրապէս առատ է, եւ որոնցով կը պատրաստուի խիստ լաւ եւ խիստ շատ առատ վառօղ: Առատ է նաեւ աղի հանքերու կողմանէ, ինչ որ ոչ նուազ կարեւոր է:

Մեր ներկայացուցած այս կէտերէն դուրս կան նաեւ Բալուն ու Քղին ալ, որոնք նկատի կ'առնուին գործի տեսակէտէ, եւ որոնք խիստ մօտիկ կերպով հարեւան ալ են իրարու եւ բաժին կը հանուին Չարսանճագու. այս կողմի քրտերը սակայն սոսկալիորէն գէշ են եւ վատ դէպի հայերը, ու ժողովուրդը ընկճուած:

Բալուն կը ներկայացուի իբր 18-17 հազար [հայ?] բնակիչ. 20-25 հազար քիւրտ, 8 հազար տաճիկ, որոնց մասին սակայն մեր ունեցած ծանօթութիւնը շատ քիչ է. մանաւանդ որ հայերը հոս անկեալ վիճակ մը կը ներկայացնեն:

\*  
\*\*

Տէրսիմի մասին անձնապէս մեր կատարած ուսումնասիրութիւններէն դուրս՝ որ մանրամասն կերպով հետաքրքիր եղեր ենք մեր առաջադրած այս նպատակին համար, սակից զատ մենք օգտուած ենք նաեւ զանազան գրքուածքներէ եւ հեղինակութիւններէ. գլխաւորաբար՝ օգտուած ենք Արտուր-Յայաստանի անուն գրքուկէն — աշխատասիրութիւն Պօղոս Մ. Վ. Նաթանեանի — իբր Հայաստանի մասնաւորապէս Տէրսիմի ամէնէն շատ ուսումնասիրողն է. օգտուած ենք նմանապէս Գ. Վ. Սրուանձտեանցէն, անոր Թորոս-Աղբար անուն աշխատասիրութենէն՝ եւ աւելի շատ օգտագործած ենք մանաւանդ այս առթիւ մօտերս կատարուած, Պ. Անդրանիկի — դէպի Տէրսիմ ունեցած ճամբորդութենէն՝ եւ տեղեկագրած ամէնէն ճշգրիտ վկայութենէն՝ որ երբեք ցարդ կատարուած ըլլայ:

Տէրսիմը, լինելով իբր ամենամանաւոր վայր, եւ իբր միակը Բարձր-Հայքի, եւ մէկը յարմարագոյն վայրերից, արժանի համարեցինք իբր ապստամբութեան ամենայարմարագոյն վայր ներկայացնել Հ. Յ. Դաշնակցութեան 4րդ Պատգամաւորական Ժողովին: Անոր ապագայ պատրաստութեան իբր կեդրոնավայր ընտրել Չմշկածագը:

Մեր տեղեկագրէն, ամէնէն աւելի յարմար մենք կը նկատենք — իբր բնիկներ — Չմշկածագը՝ եւ այդ հետեւեալ պատճառներով:

- Նախ՝ որովհետեւ ժողովուրդը բաւական հասունութիւն ցոյց կու տայ եւ սրտի բացարձակ պատրաստակամութիւն յեղափոխական գործին համար: 2րդ. մեր կազմակերպութիւնը արդէն մուտք գտած եւ բաւական տարածուած է: 3րդ. մեր առաջարկած նպատակին համար — իբրեւ տեղացիներ՝ գործին դիւրութեան համար — մենք ինքներս բաւականաչափ պատրաստուած ենք: 4րդ. կառավարութեան կիսով չափ հաստատուած դրութիւնը եւ համարեա թէ չգոյութիւնը գինուորական ուժին. 5րդ. հայ տարրին բարոյական, մտաւորական եւ վաճառականական առաւելութիւնը թուրք տարրին վրայ: 6րդ. իբր հարեւան մեզի ունենալով Տրապիզոնը, Երզնկան եւ Կարինը, անհամեմատ աւելի օգտուել կարենալ այն տեղի դաշնակցական մարմիններէն: 7րդ. Համիտիէներու չգոյութիւնը՝ եւ ապստամբ քրտերու կիսահայ դրութիւնը. 8րդ. Եփրատ գետի առաւելութիւնը առանձնապէս գէնքի եւ ռազմամթերքի՝ անհամեմատ աւելի ապահով ու աւելի արագ փոխադրութիւններու համար: 9րդ. Չէնքեր ձեռք բերելով բուն իսկ տեղին վրայ: 10րդ. Քիւրտ-թրքական օր աւուր աւելացած թշնամութիւնները: 11րդ. Հայ-քրտական բարեկամութիւնները: 12րդ. հայ-քրտական ապագայ դաշնակցութեան մը կարելիութիւնները:

\*  
\*\*

Այժմ սկսենք՝ մէկ-մէկ բացատրել մեր այս տեսակէտն որ մենք գծեցինք:

1.- Ժողովուրդը հասունցած է կ'ըսենք մեր այս գաղափարին, անոր համար որ՝ այսօր 14 տարի կ'ընէ որ (Շմաւոնէն ետք թէ առաջ) կատարուած զանազան փորձերէ — որը թէեւ անյաջող — բայց մեծապէս նպաստած է գաղափարին ընդհանրացուելուն. բացի այդ, վերջին տարիներուն աւելի բազմանալով գաղափարական ուժերուն ներքին թէ արտաքին միացումով կ'աւելնկայինք մեծ յաջողութիւն:

2.- Դաշնակցութիւնը հոս սկսած է գործել եւ ունի մէկ քանի կազմակերպուած կոմիտէներ, որոնց տրամադրութիւնն ու իրձերը մեզի իրաւունք կը տան առաջնորդելու անոնց՝ ինչպէս նաեւ մեր գաղափարներու իրականացնելուն ամէն գնով:

3.- Մեր նպատակին այս իրագործումին համար, կատարելապէս հաւատացող ենք մենք թէ՝ իբրեւ տեղացիներ, գործը լաւ կերպով ուսումնասիրած ու անոր համար պատրաստուած ենք առանց նախորդքս դատապարտութեան արժանացնելու:

4.- Կառավարութիւնը կիսով չափ հաստատուած է, եւ գինուորական ուժերու քիչաւորութիւնը մեզի նըպաստաւոր կ'ընդունինք եւ երկրին մեծագոյն մասը որ կը մնայ ապստամբ, անհպատակ, ինչ որ մեծապէս կ'օգնէ մեր նպատակին յաջողութեան համար:

5.- Հայ տարրին բարոյական, մտաւորական եւ վաճառականական առաւելութիւններէն զատ ժողովուրդը կը միացնէ իր վրան այնպիսի առաւելութիւններ որը՝ անհրաժեշտ է մեր այս առաջադրած նպատակի յաջողութեան համար. օրինակի համար. քաջութիւն, ինքնապաշտպանութեան խորունկ ցոյց տրուած գիտակցութիւն, հայրենիքէն դուրս գաղթելու, զայն լքելու նըլազ ցանկութիւն եւայլն:

6.- Մեր հարեւան մարմիններէն անհամեմատ աւելի օգտուելով Հանդերձ, կարելի է նաեւ մեծապէս օգտուել շրջակայ քաղաքներէն ու գիւղերէն, օրինակի համար Խարբերդ, Արաբկիր եւ Ակն որ մի մի օրուան ճանապարհ միայն հեռու են:

7.- Համիտիէ քիւրտերու չգոյութիւնը եւ աշայիր քիւրտերու կիսահայ բարեկամական դրութիւնը վախու շատ առիթ է՝ ընծայելու կոտորածներու եւ թալան-

թուրաններու՝ նման ուրիշ վայրերու:

8.- Եփրատ գետի առաւելութիւնը փոխադրութիւններու գործին մէջ, սկսած Երզնկայէն մինչեւ Ակնէն՝ զայն հոսի Չմշկածագ:

9.- Տեղին վրայ գէնքեր ձեռք բերելու փորձը կատարուած եւ արդիւնքը կատարեալ եղած է. թէեւ աւելի նուազ կերպով կատարուած է:

10-11.- Քիւրտ-թրքական յարաբերութիւնները՝ կատարուած զանազան սպանութիւններով գնալով սուր կերպարանք է առեր այս վերջերը: Ասոր հակառակ երթալով աւելի կը լայնանայ հայ-քրտական յարաբերութիւնները, կարծես տեղի տալով նախկին սխալներուն (ընդհանուր կոտորածներուն ատեն, զինու զօրութեամբ բացարձակ պաշտպանութիւն ցոյց տալով հայոց. որմէ յետէ մտերմական յարաբերութիւնները ջերմօրէն կը շարունակուին տակաւին: Թուրք կառավարութիւնն ալ սկսեր է աւելի կասկածոտ վերաբերուիլ դէպի քրտերը):

12.- Միւս կողմէն ժամանակէ մը ի վեր քրտերը կը շարունակեն օգտուիլ հայերէն ու հայերը քիւրտերէն. վերջինները արդէն իրենց մէջ ընդունելու եւ տեղ տալ սկսած են անհատ-անհատ ընկերներու որոնք կը դիւրացնեն ու կը լայնցնեն ապահովաբար ապագայ բարեկամական մեծ աջակցութիւն մը, գուցէ եւ երազուած հայ-քրտական դաշնակցութիւն մը:

Այս ամէնուն հետ եւ աւելի՛ մենք կը հաւատանք նաեւ որ Բարձր-Հայքի մէջ այսօրինակ ձեռնարկի գործադրութիւնը շրջակայ ժողովուրդին մեծապէս յոյս եւ հաւատք կը ներշնչէ, եւս աւելի ջերմ կերպով ժողովուրդը գործի ու հայրենի հողին հետ կը կապէ պնդօրէն, գուցէ եւ արտագաղթին ալ առաջը կ'առնէ, հաւատք ներշնչելով շրջանին [մէջ] ապրող ժողովրդին ապագայ փրկութեանը վրայ: Յուսալով այս ամէնը, մենք Պատգամաւորական Ժողովին խորին ուշադրութեանը կը յանձնարարենք սոյն տեղեկագրի ոգին ու պարունակութիւնը:

Մաղթելով ձեր դժուարին գործերուն ջերմ յաջողութիւն:

Յեղափոխականի ողջոյններով

Պ. ԴԵՐՁԱԿԵԱՆ  
ՂԱԶԱՐ ՄԱՐՏԻԿԵԱՆ  
ՄԻՆԱՍ Մ. ԱՐԹՒՆԵԱՆ

XIX

ՋՐԱԲԵՐՂ – ԿԱՐՍԻ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Ջրաբերղի Հ. Յ. Դ. II Կեդր. Կոմիտեի սահմաններում մեջ կը մտնէր Կարսի ընդարձակ նահանգը, որ Պերլինի դաշնագրով (1878) անցած էր Ռուսաստանի տիրապետութեան տակ եւ այդ ձեւով մաս կը կազմէր Արեւելեան Հայաստանին:

Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութեան առաջին օրէն հոն հաստատուած էր եւ հետզհետէ լայնցուցած իր կազմակերպական ցանցը: Բացի Կարս կեդրոնէն, գաւառական քաղաքներու, աւաններու եւ գիւղական շրջաններու մէջ կուսակցական-կազմակերպական կարեւոր օղակներ էին Ընդարձակի (Բասէն), Աղստի (Կողք), Հանքի (Օլթի), Պարտիզաւանի (Կաղզուան), Անապատի (Արտահան), Շիկահերի (Մարիդամիշ), Շարայի (Շորագեայ) կոմիտեիները եւ ենթակոմիտեիները, որոնց միջոցաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը ատեն մը իր ձեռքերուն մէջ առած էր ամբողջ նահանգի ազգային-քաղաքական, տնտեսական եւ միջին իսկ դատական գործերը: Այս ազդեցութիւնը այնքան ուժեղ էր եւ անվիճելի, որ ցարական տեղական վարչութիւնը իր ռստիկանութեամբ ենթարկուած էր կուսակցութեան հեղինակութեան: Աշխոյժ գործունէութիւն ունէր նոյնպէս 1904ին հիմնուած Հ. Յ. Դ. Կարմիր Խաչի կանացի կազմակերպութիւնը:

Դէպի Երկիր գէնք ու զինամթերք, յեղափոխական գործիչ ու մարտական խումբեր հասցնելու տեսակէտէն եւս, Ջրաբերղը եւ հարեւան Մրգաստանը (Երեւան) միասնաբար կը խաղային այն միեւնոյն դերը, որ հարաւային գծով վիճակուած էր Ատրպատականին:

Արտասահմանէն զէնք-զինամթերքի հայթայթումը տեղի կ'ունենար գլխաւորաբար Պաթում-Նաւահանգիստէն, որուն հետ սերտ կապի մէջ կը գտնուէր Ջրաբերղը: Մակայն նուազ արդիւնաւէտ չէր տեղւոյն վրայ կատարուած մեղուազան աշխատանքը, որուն շնորհիւ, բացի նահանգի ազգաբնակչութիւնը զինելու գործէն, ձեռք կը բերուէր հսկայական քանակութեամբ ռազմամթերք Երկրի յեղափոխական ամենաշէկ գօտիները՝ Վասպուրական եւ Մասուն-Տարօն փոխադրելու համար: Չինատար խումբերու Երկիր անցքը լի է արկածալից եւ հերոսական դրուագներով, ժամանակակից Հայոց պատմութեան էջերը զարդարող արութեան եւ անձնուէր զոհաբերութեան անօրինակ պատումներով:

Յեղափոխական փոթորկումներու այդ վառ օճախներէն մէկն էր եղած Ջրաբերղը: Հոն փնտռելու է նաեւ հիմնական պատճառը այն տագնապին, զոր ան կ'ապրէր Չորրորդ Ընդհ. Ժողովին նախօրեակին՝ բոլորովին այլափոխուած եւ բացասական պատկերի մը ցուցադրումով:

Արդարեւ 1905-6 թուականներուն, Կովկասի մէջ հայ-թաթարական ընդհարումներու վերջին այս հանգրուանին, մէկ կողմէ ցարական յետադիմական վարչակարգին վարած ընդհանրապէս հակահայ քաղաքականութիւնը, բայց մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան դէմ շրջապագերծուած հալածանքները, միւս կողմէ՝ արեւմտահայ զանգուածեղ զաղթականութեան մը ճնշող կարիքները, «անգործութեան» մատնուած շարք մը «տաճկահայ» մարտիկներու ստեղծած անիշխանական կացութիւնը եւ, վերջապէս, միհրանական անջատողական շարժումը կ'առաջացնեն այնպիսի անելանելի վիճակ մը, որուն առջեւ Հ. Յ. Դ. տեղական մարմինները, կարծես անճրկած, կը բազմապատկեն իրենց դիմումները Բիւրոյին եւ Ընդհ. Ժողովին՝ փրկութեան ելքի մը յոյսով: Այս իմաստով պերճախօս են ներկայացուած փաստաթուղթերը, ուր անկեղծութեամբ մատնանշուած են յոռի այդ բոլոր երեւոյթները. կայ յստակ ախտաճանաչում. յստակ է նոյնպէս չարիքը խափանելու վճռական կամքը:

Կուսակցութեան գերագոյն ատեանին՝ Ընդհ. Ժողովին պիտի վիճակուէր լուծել նաեւ այս կնճոռոտ խնդիրը, որ խորանալու պարագային կը սպառնար թէ կազմակերպական եւ թէ գաղափարախօսական ներքին ճեղք բանալ:

\*  
\*\*

Չորրորդ Ընդհ. Ժողովին յղուած Ջրաբերղի թղթածրարը հարուստ է՝ սպառիչ համարուելու աստիճան: Ան կը բովանդակէ ոչ միայն 3րդ եւ 4րդ Ընդհ. Ժողովներու միջեւ ինկած ժամանակաշրջանին (1904 – 1907) յատուկ փաստաթուղթերը, այլեւ 1904 թուականը նախորդող տարիներու պատկերը ներկայացնող անտիպ նիւթեր:-

1.- «Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակ. II (Ջրաբերղ) Կ. Կոմիտեի, 1902 –1903 թ.: Նամակի սովորական չափի թուղթի 30 էջ. գրուած էջերու լայնքին սեւ մելանով: Հաւանօրէն արտագրութիւն է բնագրէ մը, առանց սակայն արտօսին հասած ըլլալու: Կայ նաեւ 4 էջերու մէջ եւ ամփոփ նոթերու ձեւով այլ գրութիւն մը, որ յայտնապէս նշուած տեղեկագրին յատկագիծն է: Չանց կ'առնենք այս վերջինին հրատարակութիւնը՝ կրկնութեանց տեղի չտալու նկատումով:

2.- «Արձանագրութիւն Ջրաբերղի Շրջանական Ժողովների, 1904 թ. Օգոստոս 20, Ջրաբերղ»: Մովորական չափի նամակի թուղթի 13 երեսներու վրայ, կապոյտ մելանով գրուած եւ դրոշմուած Կ. Կ.ի կարմիր կնիքով: Նոյն արձանագրութենէն կան նաեւ արտագրութիւններ՝ տարբեր ձեռագրերով (մէկը տետրակի մէջ):

3.- «Արձանագրութիւն»: Նամակի երկթերթ թուղթի առաջին էջին վրայ մակագրուած է «պատճէն» եւ կը կրէ Ջրաբերղի Կ. Կ.ի կարմիր կնիքը (նոյնը, տարբեր ձեռագրով, արտագրուած է տետրակի մէջ): «Հաշուետեւ»ներու յանձնախումբին տեղեկագիրն է Շրջանային Ժողովին ներկայացուած:

4.- «Շրջաբերական նամակ No 1 Հ. Յ. Դ. Ջրաբերղի բոլոր մարմիններին»: (Արտագրութիւն է):

5.- «1905 Օգոստ. 17ի Շրջ. Ժողովի գործերը»: Մեծադիր (35 x 22 սմ.), երկթերթ 20 էջերէ բաղկացած, տարբեր ձեռագիրներով կազմուած եւ իրարու յաջորդող Ջրաբերղի կոմիտեութեանց ամփոփ տեղեկագիրները եւ Շրջ. Ժողովի անարար արձանագրութիւնը:

6.- «Առաջարկ Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյին Ջրաբերղի II Կ. Կոմիտեից» անթուակիր նամակ Նիկոլ Աղբալեանի (Հանգոյց) ձեռագրով, նամակի սովորական չափի թուղթի վրայ, 4.5 էջ:

6բ.- Առանց թուականի, խորագրի եւ ստորագրութեան՝ 5 էջի վրայ որոշումներ եւ բանաձեւեր են, ուղղուած ինչպէս 6ա-ը (որուն կցուած է) Արեւելեան Բիւրոյին:

7.- «Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցութեան Ջրաբերղի Կ. Կոմիտեի գործունէութեան, 1906 թ.» Մեծադիր, երկթերթ (36 x 22 սմ.) 5 էջ, «պատճէն» մակագրութեամբ, բայց Կ. Կոմիտեի կարմիր կնիքով. առաւել 6 էջ Շրջ. Ժողովի 3 նիստերու ատենագրութիւն. նոյն կարմիր կնիքը:

8.- «Հ. Յ. Դաշնակցութեան պատկանելի Դ. Ընդհանուր Ժողովին», ստորագրուած Տուրքախի կողմէ. մեծադիր 8 էջ:

Ջրաբերղի թղթածրարին մէջ կը գտնուին տակաւին Ընդհ. Ժողովին ուղղուած շարք մը ուրիշ նամակներ՝ գիւղական շրջաններու հաւաքական ստորագրութեամբ, բողոքելու համար գործուող անկարգութիւններու դէմ: Իբրեւ նմոյշ կու տանք անոնցմէ մէկ քանին, ինչպէս նաեւ Պոսթոնի արխիւներէն վերցուած կարգ մը ուրիշ գրութիւններ՝ մատնանշուած յոռի երեւոյթներու առաւել պարզաբանման ծառայող:



Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ II (ՉՐԱԲԵՐԳ) Կ. ԿՈՄԻՏԵԻ

98 ԹՈՒԻՅ 901 Թ.

Ձեռքի տակ չունենալով վերջին Երկրորդ Ընդհ. Ժողովրդի յետոյ եղած գործունէութեան մասին նիւթեր մինչեւ 1902 թուական, Կարսի շրջանի համար, անկարող պէտք է լինեմ այդ շրջանի վերաբերեալ որեւէ բան գրել, մանաւանդ, որ ռեակցիայի ուժեղ շրջանը լինելով, համարեա թէ գործունէութեան դադարում էր տիրում ամէն տեղ, ի հարկէ եւ Կարսում, եթէ չհաշուենք մի երկու դէպք, որը առանձին նշանակութիւն է ստանում գործի տեսակէտից:

1) Խաստուրի դէպքը.- Վերջին Ընդհ. Ժողովի վրձուին գոհացում տալու համար, Կարսը 99 թ. մի զինատար խումբ պատրաստեց Բարձրաւանդակ ուղարկելու համար: Խումբը 99 թ. Հոկտ. 25[ին] դուրս եկաւ եւ Խաստուրի մօտ ընդհարման պատահելով, վերադարձաւ նորից Կարսի շրջանը՝ 18 զոհ տալով<sup>2</sup>:

2) 84 մոսիմ հրացաններ, որոնք գտնուում էին Բասէնի Բաշ-գիւղում, մատնութեամբ բռնուեցին ռուս կառավարութեան ձեռքով:

Մատնիչ Մատո.- Այս գէնքերի բռնուելու մէջ մեղադրուում էին մի քիւրտ բէգ եւ մի հայ Մատո անունով: Այս առթիւ եռակի քննութիւն տեղի ունեցաւ Բիւրոյի եւ Կոմիտէի կողմից, որոնցից առաջինը - Աշոտի - քրննութիւնը անմեղ դուրս բերեց Մատոյին - իսկ միւս քրննութիւնները նրա մասնակցութիւնը այդ մատնութեան մէջ երեւան հանեցին, որից յետոյ եւ նա իբրեւ դաւաճան տեւորի պիտի ենթարկուէր, բայց որովհետեւ հրնչակեան կուսակցութեան նորելուկները նրան համոզեցին եւ իրենց թեւի տակ առան, դրա համար էլ վճուի իրագործումը մի առ ժամանակ յետաձգուած է, մանաւանդ որ ուրիշ մի քանի հանգամանքներ էլ ստիպում են դեռ մի քիչ սպասել:

500 եւ 330 ռուբլի պահանջներ.- 98 թուից մինչեւ 901 թուի վերջը, Կարսի շրջանի գործունէութեան ո՛չ մի հաշիւ, ո՛չ մի թուղթ չգտնուեց, ո՛չ Կարսում, ո՛չ էլ Խմբագրութեան մէջ, որից հնարաւոր լինէր գոնէ դրամական հաշիւը դուրս բերել. եւ Կարսի Կոմիտէն առաջարկեց նախկին կոմիտէի անդամ Ատրնեբրսէ Բագրատունու կազմել մի տեղեկագիր այդ շրջանի խոստացաւ, բայց մինչեւ օրս չիրագործեց:

Մինչեւ 902 թ. Յուն[ուար], այսինքն երբ նոր կոմիտէ ընտրուեց, Կարսի շրջանի գործը ինկած էր միայն մի անհատի վրայ - Ատրնեբրսէ Բագրատունիի, որի մօտ պէտք է գտնուէր բոլոր հաշիւները, բայց նա չներկայացրեց, առարկելով, որ մի մասը այրած է, մի մասն էլ Խմբագրութիւն-Բիւրոյին<sup>3</sup> էլ դրկել: Նոր կոմիտէին յանձնուեց մի թեթեւ ցուցակ գէնքերի եւ կնիքը, ուրիշ մի թուղթ, ո՛չ մի հաշիւ. եւ չնայելով նոր կոմիտէի պահանջներին, արխիւը չներկայացուեց եւ երեւան չեկաւ: Յիշեալ երեք տարուայ գործունէութեան միջոցին, կոմիտէին պարտ են մնացել Ատրնեբրսէ Բագրատունին - [նախորդ] կոմիտէն - 330 ռուբլի եւ Դիմաքսը՝ 500 ռուբլի: առաջինը կազմակերպութեան փողը գործածել է իր անձնական պէտքերին, եւ միջոց խնդրել վճարելու, եւ չնայելով կրկնակի դիմումներին մինչեւ օրս գոհացում չէ տուած: Իսկ երկրորդը 500 ռ. ստացել է գէնքի փոխադրութեան համար, իր առաջարկած մի ծրագրի գործադրութեան համար, եւ փախել. նրան վճուուած է տեւոր, բայց նա մաս մաս վճարելու խոստում արաւ եւ վճարեց 105 ռ. իսկ մնացեալը լրացնելու ժամանակամիջոցը սոյն տարուայ վերջն է. եթէ չլրացնէ, վճիւր կը գործադրուի:

Ձեռքերը.- Ատրնեբրսէի տուած ցուցակով, երբ ստուգելու համար մարդ ղրկեցինք պահեստները, շատ բան չհամապատասխանելուց զատ, ահագին քանակութեամբ փամփուշտներ եւ մի քանի հատ բլանկ[?] ձեւի գէնքեր բոլորովին փչացել էին անխնամ պահուելու պատճառով:

Կազմակերպութեան հաշիւը.- 98-901 թուի ընթացքում, թէ Կարս քաղաքում եւ թէ գաւառներում ըստ երեւոյթին ո՛չ մի կազմակերպութիւն չկար. փողեր, ըստ վկայութեան մի քանի անհատների, հաւաքուում էին երբեմն-երբեմն ներկայացումներից, հարսանիքներից եւ ընթացիկ ծախսերի համար փող ստացուում՝ Արեւելեան Բիւրոյից. ո՛չ տեղական մուտքերի եւ ո՛չ էլ Բիւրոյից եւ

1.- Երկրորդ Ընդհ. Ժողովը գումարուած է Թիֆլիս, 1898ին: 2.- Խաստուրի կոուիմ մասիմ տեսնել Գ. Տասնապետեան, «Գ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. Ժողով», Աթէնք, 1988, էջ 60, եւ Ս. Վրացեան, «Յուշապատում Գ. Յ. Դաշնակցութեան», Բոստոն, 1950, էջ 414-416: 3.- Խօսքը կը վերաբերի «Դոշակ» պաշտօնաթերթին, որուն խմբագրութիւնը միեւնոյմ ատեն կը համարուէր Արեւմտեան Բիւրո:

այլ տեղերից ստացած օժանդակութիւնների հաշիւ չունենալով, անկարող եմ որեւէ բան ասել այս մասին. միայն աւելորդ չեմ համարում գրել եւ այս, որ այդ շրջանում, յեղափոխութեան վարկը առանձնապէս շատ ընկած էր Կարսում եւ գաւառում, այն աստիճան, որ մի մարդու բարոյական այլանդակ պատկերը ցոյց տալու, նրան գող-աւագակ անուանելու համար՝ ասում են - ճղու ազգային ես, յեղափոխական ես՝ եւ այլն: Սրա պատճառները կրկնակի են. - նախ, որ Ատրնեբրսէն Կարսում իր վարկը չկարողացաւ բարձր պահել. նա իրբեւ Յեղափոխութեան միակ ներկայացուցիչ, շատ թոյլ կողմեր ունէր, որից ժողովուրդը շատ սխալ եզրակացութիւնների մէջ ընկնելով յեղափոխական լինելուն էր վերագրում. չկար նրան ընկեր. ամէնքը արհամարհում էին եւ բամբաստում... իսկ նա քաջութիւն չունեցաւ ժամանակին թողնել, գործից դուրս գալ եւ կասկածները փարատել. դրա համար էլ ժողովուրդը աւելի եւ աւելի սառեց գործից եւ գործը ընկաւ քաղաքում. ո՛չ մի դրամական խումբ, ո՛չ մի երեկոյթ չէր յաջողում:

Խաչագողութիւններ.- Միւս կողմից այն անհատները, որոնք Երկրի մէջ որեւէ գործի մասնակցած լինելու պատճառով իրենց յեղափոխական էին համարում, գալով Կարսի շրջանի գիւղերը, խեղճ ժողովուրդի վրայ ո՛չ միայն ծանրանում էին, այլեւ իբրեւ յեղափոխականներ գործի անունով պահանջներ դնում եւ սպառնալիքներով գանձում: Սրանք օգտուելով կոմիտէի թուլութիւնից, որը միակ մարմինն էր իրան անունը շահագործութիւնից պաշտպանելու համար, աւելի եւ աւելի ընդարձակեցին իրենց գործունէութեան շրջանը եւ մոտք գործեցին նոյնիսկ քաղաքները. օրը ցերեկով փողոցում բռնի փողեր էին գանձում քաղաքի թէ հարուստ թէ արհեստաւոր դասակարգերից յեղափոխութեան անունով եւ ո՛չ մի միջոց չէր ձեռք առնուում այդ հարստահարութիւնների դէմ: Տարէց տարի այդ խաչագողութիւնները աւելի եւ աւելի զարգացան եւ մի կազմակերպւած խմբով բացարձակ հրապարակ եկան Մ[ուրթ] գործը շահագործելու: Դրանք էին Հաճի Նազիկ իր բաւական ստուար արբանեակներով, Կոստի, Քիւտ, Քուրդ Միւս, Ազիզ եւ այլն եւ այլն: Յիշեալ պարագլուխ խաչագողները հաւաքելով իրենց շուրջը 10-15 հոգի, նոյնպէս պարապ անգործ երիտասարդներ, զինուած շրջում էին գիւղէ գիւղ քոլոզներով, լաւ ձիաներով եւ գիւղացիների վրայ սարսափ ազդելով շահագործում Յեղ[ափոխութեան] անունը. ապրում, հարստանում էին...

Շիրակի, Թախտի եւ Բասէնի խեղճ ժողովուրդը, որ վերջին կոտորածներից յետոյ այնքան գրկաբաց ընդունեց գաղթականներին, պահեց, խնամեց, պահպանեց, եւ մինչեւ այժմ էլ մօտ 15 հազար գաղթականներ առանց մի կտոր հողի ծանրաբեռնուած են գիւղական հասարակութիւնների վրայ, տանում էր այդ խաչագողների բոլոր արարքները, սկզբներում համարելով նրանց յե-

ղափոխականներ, բայց նա էլ շուտով հասկացաւ նրանց ինչ լինելը, բայց գէնքի եւ ուժի սարսափի առաջ դեռ համբերում էր...

Ոչ ոքի համար գաղտնիք չէր այդ խաչագողական խմբերի գոյութիւնը եւ հարստահարութիւնները. նոյնիսկ կառավարութիւնը ամէն բան գիտէր, բայց նա էլ քաշուում էր (ի հարկէ խօսքս պաշտօնեաների մասին է) խաչագող-հայրուկ յեղափոխականի սրից... Խուլ-թաքնուած-զսպուած բողոք էր միայն լսուում ամէն կողմից: Խեղճ գիւղացին ինչքը չէ քաշել այդ խաչագողներից եւ լուր գլխին շողացող սրից վախենալով: Երբ Հաճի Նազիկի խմբի չարագործութիւնները սահմանից անցկացաւ, կառավարութեան բաւական բողոքներ տրուեցին, որոնց հիման վրայ կառավարութիւնը Հաճի Նազիկին արգիլեց Կարսի շրջանի գիւղերում շրջագայել եւ աքսորեց նոյն շրջանի մի խուլ անկիւն թրքական գիւղում ապրելու եւ այնտեղից դուրս չգալու համար. այս բանը գիւղական հասարակութեան հէփան չնստեց. որքան անմեղ սպանութիւններ, որքան հարստահարութիւններ՝ իբրեւ վրէժ այդ աքսորի տեղի ունեցան: Այս բոլորի դէմ Կ. Կոմիտէն լուռ էր եւ հանդիսատես... չնայելով անթիւ դիմումներին ժողովուրդի կողմից նա ո՛չ մի միջոց չձեռնարկեց իր անունը շահագործողների դէմ... Այսպիսի դրութիւնը շարունակուում էր մինչեւ նոր կոմիտէի ընտրութիւնը, որ տեղի ունեցաւ 901 թ. Հոկտեմբեր 25ին, եւ որտեղ չվերընտրուեց Ատրնեբրսէն: Ընտրութիւնը համակրողների մի շրջանից էր հագիւ 15-20 հոգուց, որոնք երբեւիցէ մասնակցել էին յեղ. գործին, նախապէս խոստանալով նորից կպչել գործին, խմբեր կազմել եւ գործը կենդանացնել, որը միայն խոստում էլ մնաց մինչեւ վերջը:

Նոր կոմիտէն Նոհրատեանից ստացել է միայն կնիք, եւ մի փոքրիկ թղթի վրայ գէնքերի ցուցակ եւ մի ձի որ իսկոյն վաճառուեց 80 ռուբլու:

1902-1903 ԹԻԻ

Հալածանք խաչագողների դէմ եւ շրջաբերական. Նոր ընտրուած կոմիտէն ամէնից առաջ, հէնց գործի մէջ մտած օրից, սկսեց յեղափոխութեան կեղտոտած մթնոլորտը մաքրել, եւ դրա վրայ հիմնել իր ապագայ ծրագիրների իրագործումը: Սկսեց խաչագողներից - ամէնից առաջ մի ընդհանուր շրջաբերական ցրեց թէ գիւղերը եւ թէ քաղաքները, բացարձակապէս յայտարարելով, որ այն անհատները, որ յեղ[ափոխութեան] անունով ապրում են գիւղերում կամ փողեր են հաւաքում հասարակութիւնից, ո՛չ մի կապ չունեն յեղ. կուսակցութեանց հետ, որ դրանք բացարձակապէս խաչագողներ են, որոնց ո՛չ թէ պէտք է պահել, փող տալ, այլ ամենախիստ միջոցներով հալածել. միաժամանակ շրջաբերականով խնդրուում էր հասարակութիւնից յայտ-

նել գրաւոր կամ բանաւոր կերպով Կ. Կոմիտէիս այն անհատներին անունները, որոնք յեղափոխութեան անունով փող են հաւաքում կամ ձրիակերութեամբ ապրում գիւղերում: Այս շրջաբերականը մեծ ազդեցութիւն թողեց մանաւանդ գիւղական ազգաբնակչութեան վրայ եւ սկսուեցին խուլ ձայները բարձրանալ ամէն կողմից. տեղացին թէ՛ գրաւոր, թէ՛ բանաւոր մի շարք բողոքագրեր, որոնց մէջ յականէ անուանէ խաչագողների անունները եւ իրանց գործերը գրուած էին. եղան եւ բանաւոր բողոքներ քաղաքի մի շարք վաճառականներին. սրանք առեւտրական յարաբերութեան մէջ լինելով գիւղացիների հետ, շատ անգամ ենթարկուած են եղել խաչագողների բռնի պահանջներին եւ գոհացում տուել նրանց, իբրեւ յեղափոխականների: Սկսեցին հետզհետէ տեղալ մի շարք պատմութիւններ անցեալից՝ խաչագողների «քաջագործութեան» մասին. այդ բոլոր բանաւոր թէ՛ գրաւոր բողոքները բաց արին կոմիտէի առջ խաչագողների մի մեծ ցանց, որոնք տարիներ շարունակ հարստահարել են յեղափոխութեան անունը եւ տգորակի նման ծծել խեղճ գիւղացու արիւնը: Այդ բողոքագրերից երեւաց, որ խաչագողները 3 գլխաւոր թափախ են ունեցել՝ մշեցոց, խլաթցոց եւ խնուսցոց, որոնց պարագլուխները մօտ 6 հոգի են եղել. դրանք են Կոստի, Եղօ, Մլօ, Աղճոյ, Քերիմ, Քլիտ եւ այլն:

Կոմիտէի որոշմամբ, յիշեալ պարագլուխները պաշտօնական գրութեամբ հրաւիրուեցին քաղաք բացատրութիւններ տալու համար: Սրանք նախապէս իրար հետ խորհրդակցելով ուզեցել են չլսել կոմիտէին եւ մինչեւ անգամ բացարձակ կռիւ յայտարարելու եւ ժողովուրդին սարսափեցնելու նոր փորձեր անելու ծրագիր էին կազմել, երբ կոմիտէս աւելի կտրուկ միջոցների դիմելով, զինուած հայրուկային խմբերով նրանց ստիպեց քաղաք թափուել կոմիտէին բացատրութիւններ տալու եկան բոլորը, եւ չնայելով մեր բոլոր խրատներին՝ իրենց աշխատանքով ապրելու եւ կարսի շրջանից հեռանալու, պատասխանում էին որ իրանք հայրուկներ են եւ իրաւունք ունեն ապրելու գիւղացու աշխատանքով, որովհետեւ 4-5 տարի նոյն կերպ ապրել են եւ աշխատանքի ուրիշ աղբիւր չունեն. եւ երբ կոմիտէն նրանց սպառնաց աւելի խիստ միջոցներով հալածել, նոյնը եւ պատասխանեցին եւ նորից ցրուեցին գիւղերը, բացարձակապէս սպառնալով նոյնիսկ կոմիտէի անդամներին սպանելու ձեռնարկել, եթէ կոմիտէն փորձէ շարունակել իր ընթացքը: Սրանից յետոյ այդ խմբերը աւելի յանդգնեցան. Շորագեալում օր ցերեկով սպանեցին երկու պարսիկ մուլաներ թալանելու նպատակով եւ ամբողջ շրջանում տարածեցին թէ կոմիտէի վճռով է, եւ մտնելով գիւղերը իբրեւ կազմակերպութեան մարդիկ գիւղացիներից պահանջներ դնելու փորձեր արին: Այդ սպանութիւնները մեծ աղմուկ հանեցին, գիւղական

հասարակութիւններ վտանգի մէջ էին. երկու դրացի ազգերի պարսիկների եւ հայերի մէջ գրգռում ընկաւ, իբրեւ մի ազգային դաւ ուղղուած պարսիկի դէմ: Գիւղացիները գիտէին թէ ովքեր էին սպանողները եւ թաքցնում էին հաւատարմով որ դա կազմակերպութեան գործ է, եւ իբր թէ այդ մուլաները լրտեսներ են եկած Տաճկաստանից. բայց բոլորը սուտ ի հարկէ: Սպանողներին ճանաչում էր եւ այդ շրջանի գրագիրը, որ մեզ համակրողներից էր, եւ երբ մեզնից պաշտօնապէս իմացաւ թէ դա կազմակերպութեան գործ է, այդ սպանութեան հեղինակներին բռնեց եւ յանձնեց կառավարութեան. մի քանիսը այդ խաչագողներից բանտարկուեցին եւ գիւղերում էլ յայտարարուեց, որ դա աւազակների գործ է եւ ո՛չ յեղափոխականների:

Սրանից յետոյ ժողովուրդը ուրիշ տեսակ էր նայում այդ խաչագողներին. եւ առաջուայ նման նրանց չէր ընդունում եւ եղան տեղեր, որ նրանց վռնտեցին:

Բայց մի երկու խումբը դեռ շարունակում էր իր հատակութիւնները, ապաւինելով իր ուժի վրայ (նրանցից շատերը զինուած էին ռեվոլվերներով, բերդանի հրազաններով եւ սրերով եւ թափառում էին սպառազինուած):

Բ. Շրջաբերական.- Չնայելով այդ խմբերի սպառնալիքներին կոմիտէն վերջնական որոշում տուեց, միանգամ ընդմիջող միջոցներով մաքրելու համար դիմել աւելի կտրուկ միջոցների: Նա հրատարակեց երկրորդ շրջաբերականը, յայտարարելով ժողովուրդին, որ ո՛չ մէկ մարդու, ո՛չ մի անհատի փող չտայ եւ չպահէ, եթէ նա չունի իր ձեռին կնքուած վկայագիր կոմիտէի կողմից. եւ եթէ լինեն անհատներ, որ ստիպողական միջոցներով փող պահանջեն, անմիջապէս սուրհանդակով իմաց տան կոմիտէին:

Կոմիտէի հայրուկային խումբը եւ նրա ազդեցութիւնը (Խան, Սուրատ, Ժիրայր, Արշակ, Աւետիս, Մեշէրի եւ այլն).- Միաժամանակ կոմիտէն կազմեց 5-6 հոգուց հայրուկային մի վստահելի խումբ, զինեց նրանց եւ պատժական թղթով յանձնարարեց շրջել բոլոր գիւղերը տեղնուտեղը ստուգել, գտնել այդ անհատներին եւ զինաթափ անելով բանտարկել գտնելու, մինչեւ կոմիտէի նոր կարգադրութիւն: Այս խմբի շրջագայութիւնը եւ գործունէութեան ձեւը հրաշալի տպաւորութիւն թողեց ամբողջ շրջանի հասարակութեան վրայ. ժողովուրդի աչքը բացուեց եւ համոզուեց, որ այդ խմբերը ոչ մի կապ չունենալով յեղափոխութեան հետ, իբրեւ աւագակներ հալածուում են կոմիտէի կողմից: Մի անգամից յեղափոխութեան ընկած վարկը բարձրացաւ, ամբողջ շրջանի խօսակցութեան նիւթը կոմիտէի այդ խմբի վրայ էր. հետզհետէ միջոցներով մաքրուում էր. շատ տեղեր ամբողջ գիւղական հասարակութեան ներկայութեան այդ խաչագողները բռնում, զինաթափ էին անում եւ օրերով բանտարկում, մինչեւ որ նրանց մասին

լինում էր կոմիտէի կողմից կարգադրութիւն:

Այս բանը այնքան լաւ ազդել էր գիւղացիների վրայ, որ այդ միջոցներին մի քանի գիւղական հասարակութիւններ ինքնաբերաբար փող հանգանակելով իրենց մէջ յօգուտ յեղափոխութեան, մի շնորհակալութեան գրութեամբ ներկայացրին կոմիտէիս, յայտնելով եւ պատրաստակալութիւն շարունակել այդ նուիրատրութիւնը:

Կոստիի եւ Եղոյի տեռոր.- Խաչագողների հողը կտրուեց. ժողովուրդը թեւ առնելով կազմակերպութիւնից, բացարձակապէս սկսեց ինք էլ հալածել եւ նրանցից մեծ մասը տեսնելով կազմակերպութեան ուժը եւ գիւղացիների բռնած դիրքը մեղայականով խնդրեց թոյլ տալ ապրել գիւղերում պահապանների պաշտօնով. մի մասն էլ թողեց հեռացաւ, կոմիտէի պահանջմամբ, Կարսի շրջանից. իսկ մի խումբ, Կոստիի եւ Եղոյի առաջնորդութեամբ դեռ շարունակում էր իր ընթացքը, միաժամանակ եւ խաղալիք դառնալով ռուս պաշտօնեայի ձեռքին. մի քանի անգամ զգուշացնելուց յետոյ, երբ ապացուցուեց նրա լրտեսութեան փաստը, կոմիտէի վճռով տեռորի ենթարկուեց իր ընկերոջ հետ Շորագեալում եւ սա եղաւ խաչագողութեան վերջնական հարուածը: Մաքրուեցին գիւղերը, եւ գոհունակութեան ձայներ էին լսուում ամէն կողմից:

Գաղթականների հպատակութեան խնդիրը.- Այս միջոցին հրատարակուեց ռուսաց կառավարութեան հրամանը հայ գաղթականների հպատակութիւն ընդունելու վերաբերմամբ: Կոմիտէն ազդու միջոցների ձեռնարկեց որ հպատակ չգրուեն. եւ յաջողուեց. տեղացին մի շարք խնդրագրեր, որ կամ հող տան կամ ճանապարհ բանան իրենց Երկիր գնալու. բայց բոլորը մնացին անհետեւանք եւ կառավարութիւնը բռնի եւ այլ միջոցներով ստիպեց հպատակ գրուել. բայց 15 հազար հայ գաղթականներից հազիւ կէսը գրուեցին, մնացեալ կէսը մինչեւ օրս էլ չէ գրուած եւ գիւղերում է. եթէ կառավարութիւնը բռնում է, գրել է տալիս:

Պրոպագանդա 902 ք.- Օգտուելով այս յարմար միջոցից կոմիտէն անմիջապէս ձեռնամուխ եղաւ կազմակերպութիւնների, սկսուեց ուժեղ կերպով պրոպագանդա թէ քաղաքում, թէ գիւղերում եւ թէ գաւառներում. քաղաքներում կազմուեցին դրամական խմբեր, գիւղերում եւ գաւառում ենթակոմիտէներ. ոգեւորութիւնը հետզհետէ շատանում էր, դրամը հեղեղի նման թափուում. կոմիտէն նոյնիսկ շքմել էր այդ յաջողութիւնից: Օրէց օր գործը ընդարձակուում էր, պահանջները շատանում եւ կոմիտէն չէր կարողանում հասնել ամէն տեղ:

Գիւղական կազմակերպութիւնները բարձրացան մինչեւ 80ի. եւ այդ պրոպագանդան, որ տանում էին մեր ընտրած վստահելի հայրուկները, որոնք ի հարկէ չէին կարող ժողովուրդի պահանջներին բաւարարութիւն

տալ, իրանց տգիտութեան պատճառով, պահանջ զգացեց ինտելիգենտ շրջիկների, որոնք ժողովուրդի ոգեւորութիւնը մշտատեւ դարձնելու եւ կազմակերպութիւնը աւելի ամուր հիմքերի վրայ դնելու էին:

Ինտելիգենտ շրջիկներ եւ Մեծակ (1902 Ապրիլից).- Այս միջոցին էր, որ Ոսկանապատի կոմիտէի որոշմամբ Մեծակը (Եգոր Առստամեանց)<sup>4</sup>, մի վառվռուն ոգեւորուած երիտասարդ, անցնելու էր Երկիր-Արգրում, թղթակցի պաշտօնով, բայց որովհետեւ ինքը տեղական պայմաններին անծանօթ էր, մեր որոշմամբ յետաձգեցինք նրա գնալը մինչեւ մի քիչ վարժուի մեր շրջանում եւ տուինք նրան գիւղերում եւ գաւառներում շրջիկ-պրոպագանդիստի պաշտօն, որը եւ ամենայն յաջողութեամբ տարաւ, ոգեւորելով ժողովուրդը եւ աւելի ոգեւորուելով գործով: Այս նոր երեւոյթը, ինտելիգենտ շրջիկի ոգեւորուած ճառերը, աւելի եւ աւելի բարձրացրեց Սեղափոխութեան վարկը ժողովուրդի աչքում...

Ժողովուրդի ոգեւորութիւնը հետզհետէ աճում էր եւ հնարաւորութիւն չկար նրան բաւականութիւն տալու ստիպուած էինք ուրիշ մարդիկ եւս հրաւիրել գործի: Այդ միջոցին երկու սպաներ, որ ծառայում էին Ալեքսանդրապոլում եւ վերջացնելու մօտ էին իրենց ծառայութիւնը, պատրաստակամութիւն յայտնեցին մտնել մեր շրջանի գործերի մէջ: Եւ համաձայն իրենց խոստման յիշեալ երկու սպան(երը) 902 թ. Մայիս-Յունիս ամիսներին, թողնելով ծառայութիւնը, ստանձնեցին շրջիկի պաշտօնը. դրանք էին Թուման Թումեանց (Ամպրոպ եւ ապա երկրում՝ Թորգոմ) իսկ միւսը Միքայէլ Մելիք-Փարսադանեանց (Նժդեհ) եւ աւելի ուշ՝ Լեւոնիկ (Պողոս Պողոսեանց) եւ Ռուբէն (Իսախան Առաքելեանց)<sup>5</sup>: Սկսուեց եռանդուն գործունէութիւն, շրջիկները գիւղերում եւ գաւառական քաղաքներում, իսկ կոմիտէն քաղաքում, հասցրին չտեսնուած յաջողութեանց:

Վերոյիշեալ երեք անձնուէրները, որ դեռ աշակերտական սեղանից ուխտել էին հայրենիքի փրկութեան գործին նուիրուել, ամենայն բարեխղճութեամբ, բուռն ոգեւորութեամբ մտան կարսի շրջանի բոլոր խուլ անկիւնները եւ կազմակերպեցին ենթակոմիտէներ, խմբեր եւ այլն: Ժողովուրդի մէջ ոգեւորութիւնը օրից օր աճում էր եւ կազմակերպութեան թիւը կրկնապատկուում:

Ենթակոմիտէների կազմը եւ յարաբերութիւնը Կ. Կոմիտէի հետ.- Սկզբնական շրջանում, գաւառական եւ

4.- Գ. Յ. Դաշնակցութեան պատմութեան մէջ երիտասարդ, քաջարի, խոստմնալից այլ վաղաճակ ունի մը՝ Դարաբաղի Մեծակը, նախատակուած 1903ին:  
5.- Բոլորն ալ թրծուած Կարսի «Յոնց»ին մէջ (տեսնել Ռուբէն, Գայ Յեղափոխականի մը յիշատակները, Ա. Խատրոյ). գրեթէ բոլորն ալ պիտի նախատակուէին 1903-1905 տարիներուն:

գիւղական ենթակոմիտէները կազմուում էին ըստ տեղական յարմարութիւններին զանազան ձեւերով, բայց Մրազրի գծած սահմաններում: Ընտրողական սկզբունքը միշտ առաջնակարգ տեղ էր բռնում:

Ինտելիգենտ շրջիկը մտնում էր գիւղ եւ երբ տեսնում էր գիւղացոց մէջ տրամադրութիւն յեղափոխական գործին մասնակցելու, խնդրում էր գիւղի ազդեցիկներին՝ հրահրել գիւղական հասարակութիւնը ժողովի: Հաւաքում են համարեա գիւղի ամբողջ հասարակութիւնը եւ շրջիկը, հարկաւոր բանախօսութիւնը վերջացնելուց յետոյ, առաջարկում է ընտրել 5-8 հոգուց բաղկացած մի մարմին: Ընտրուած մարմինը պաշտօնապէս երդուում է հասարակութեան առաջ, որ գաղտնապահ մնալով հանդերձ, հաւատարիմ է լինելու Յեղ. Դաշնակցութեան: Այս գրաւոր երդումագիրը վաւերացում է ամբողջ հասարակութեան կեղծ ստորագրութեամբ, եւ շատ անգամ հաստատուում ռուսաց կողմից նշանակուած գիւղ(ի) տանուտէրի պաշտօնական կնիքով: Յիշեալ պաշտօնական թուղթը եւ գիւղի հասարակութեան անդամների նպաստը, ընտրուած ենթակոմիտէի 2-3 անդամների ձեռքով, ներկայացուում է Կ. Կոմիտէի անդամներից մէկին (զանձապահին), որը իր կողմից հարկաւոր խրախուսանքն ու խրատները տալուց յետոյ, տրուած փողի ստացագիրը եւ ենթակոմիտէի հաստատման վաւերագիրը կնքուած յանձնում է նրանց, եւ յիշեալ գիւղը պաշտօնապէս կապուած է լինում Յեղ. Դաշնակցութեան) հետ: Գիւղի նպաստին, յեղ. գործ(ունեցութեան), մասնակցում է համարեա ամբողջ հասարակութիւնը՝ ըստ կամաց 5-10-20 կողակ ամսավճարով, որը նախապէս ցուցակագրուում է ենթակոմիտէի մատենանում եւ նշանակուում երդմանագրի մէջ: Ենթակոմիտէն ունի իր մատենանը, որտեղ գրում է գիւղական նպաստի ելք ու մուտքը: Այսպիսի ձեւ ունին եւ գաւառական քաղաքների ենթակոմիտէները որոնք թրւում 5 են (Անապատ-Արտահան, Հանք-Օլթի իր 10 գիւղերով, որ կապ ունեն իրենց հետ, Շիկահեր-Սարիղամիշ եւ Պարտիզաւան-Կաղզուան՝ իր մօտ 15 գիւղերով, որ կապուած են իրենց հետ, Աղոտ-Կողբ): Իսկ գիւղական կոմիտէների թիւը հասած է մօտ 80ի:

Ջրաբերդ-Կարս քաղաքը ունի իր առանձին ղեկավարող մարմինը 12 հոգուց բաղկացած, որ ընտրուում է դրամական խմբերից եւ որի մի ներկայացուցիչը շարունակ ներկայ է լինելու կոմիտէական ժողովներին, խմբերին յարմար տեղեկութիւնները տալու համար:

Քաղաքի գործը ամբողջապէս ընկած էր նրանց վերայ. բոլոր խմբերը (որ մօտ 80 են) նրանց հետ են յարաբերութիւն պահպանում, նրանց են փողը տալիս. ղեկավարող մարմնի պարտականութիւնն է երեկոյթներ կազմել, տօների առթիւ նուէրներ հաւաքել եւայլն եւայլն. եւ առ հասարակ դրամական խմբերին բաւականութիւն տալու մասին մտածել, խմբական պարապ-

մունքներ ունենալ եւայլն եւայլն: Սրանք ունեն իրանց առանձին ել եւ մտից մատենանը եւ համարուում են որպէս ենթակոմիտէ:

Այսպէս ուրեմն երկու տարուայ ընթացքում Կարսի ամբողջ շրջանում կազմակերպուել է.

1) Կարս քաղաքում ղեկավարող մարմին (12 հոգի) 80 դրամական խմբերով:

2) 80 գիւղական ենթակոմիտէներ, որոնք բաժանուած են չորս շրջանի.ա) Շեօրագեալ (Շարայ) բ) Ճամբորդ (Նախմալան)ճ գ) Բասէն-Ընդարձակ եւ դ) Թախտ:

Յիշեալ 4 շրջանի վրայ կարգուած են չորս վերատեսուչներ ընտրուած տեղական ուժերից (Վաւաշապուհ, Վարժապետ, Ղասաբենց եւ Սենեքերիմ) որոնց պարտականութիւնն է միշտ վերահասու լինել, հաշիւները վերստուգել, երբեմն հաւաքել. եւ վերջերը դրանց միջոցաւ գիւղ(ական) ենթակոմիտէ(ները) յարաբերութեան մէջ էին Կ. Կոմիտէի հետ, փոխանակ իւրաքանչիւր գիւղի ենթակոմիտէի:

Բացի սրանից, իւրաքանչիւր գիւղում (խմբեր) կազմուած են տեղական երիտասարդներից, որոնք գիւղուրութիւնը աւարտած են լինում:

Ձիւնուորական տեղական խմբեր, որոնք ենթարկուում են գիւղական ենթակոմիտէին՝ գիւղական հասարակութեան շահերը պաշտպանելու քրտական-աւազակային յարձակումներից, խաչագողներից, եւ Կ. Կոմիտէի յանձնարարած պատասխանատու գործերը կատարելու (գէնքի փոխադրութիւն, տեւոր, սուրհանդակութիւն, լրտեսութիւն եւայլն):

3) Գաւառական ենթակոմիտէներ իրանց դրամական խմբերով եւ գիւղերով. 1) Կաղզուան՝ 15 գիւղերով. 2) Օլթի՝ 10 գիւղերով. 3) Արտահան, Սարիղամիշ եւ Կողբ: Գումար 105 գիւղական ենթակոմիտէ, 5 գիւղաքաղաքներ եւ մի ղեկավար մարմին = 111 մարմին:

Ձիւնուորական խմբերին տրուում է յաճախ կազմակերպական) գէնք՝ գործածելու եւ պահելու համար ըստ պահանջման [հաշիւ] ներկայացնելու պայմանով:

Թիւրիմացութիւն չլինելու համար, այստեղ շեշտու է այն, որ մարմինների վերոյիշեալ կազմը, վերջնական ձեւակերպուել է միայն 903 թուի վերջերը. իսկ առաջ համարեա իւրաքանչիւր ենթակոմիտէ եւ դրամական խումբ անմիջական յարաբերութեան մէջ է եղած Կ. Կոմիտէի հետ:

Գաղթականների վերադարձը եւ հետեւանքը 902 թ. Սեպտ. Պրոպագանդայի ուժեղ շրջանում էր, որ ռուս կառավարութիւնը) հրաման արձակեց հպատակ չգրուող բոլոր հայ գաղթականներէն հեռանալ Ռուսիայի սահմաններից, որը եւ առիթ տուեց գաղթականների վերադարձի խնդրին: Ինչպէս լրագրութիւնից էլ յայտ-

6.- Չլիփթել Նախիջեւանի հետ. Նախջաւանը Կաղզուանի մօտ գտնուող գիւղ մըն էր:

նի է բարձրացաւ բաւական աղմուկ. չգրուող գաղթականները ցանկութիւն յայտնեցին վերադառնալ հայրենիք եւ կազմակերպուեցին Թեքէ-Բաշից[?] Բաթումից վերադարձող գաղթական խմբեր: Այս ընդհանուր տրամադրութիւնից օգտուելու եւ գաղթականների հարցը միջազգային դարձնելու դիտաւորութեամբ, Յ[եղափոխական] Դ[աշնակցութեան] Արեւելեան Բիւրոն առաջնորդող դեր ստանձնեց եւ իր կողմից որպէս առաջնորդ դէպի սահման թափուող գաղթականներին ուղարկեց առանձին յանձնարարութեամբ Սերգէյին<sup>7</sup>, Հայ-Գուսանին<sup>8</sup> եւ Մնջոյեանին, որոնք եւ գաղթականների ահազին բազմութիւնը տարան մինչեւ սահմանագլխի հայ գիւղերը եւ Կ. Կոմիտէի պաշտօնական շրջաբերականով Ձ ամսի չափ սպասեցին մինչեւ այդ մասին կարգադրութիւն լինելը: Այս հարցում ռուս կառավարութեան բռնած հակասական եւ անխիղճ դիրքը ունեցաւ բաւական ուժեղ ազդեցութիւն ընդհանրապէս բոլոր հայաբնակ վայրերում եւ մասնաւորապէս Կարսի շրջանի գիւղական ազգաբնակչութեան վրայ:

Կարսի շրջանի բոլոր գաղթականները, որ մօտ 12 հազարի է հասնում եւ որոնց ահազին մեծամասնութիւնը մերժել էր հպատակութիւն ընդունել, անհամբեր սպասում էր որ օտար տեղերից եկող գաղթականները անցնեն, որ տեղից շարժուեն. բայց թ[ուրք] կառավարութեան բռնած անխիղճ դիրքը վիժեցրեց եւ այդ վերադարձի խնդիրը:

Օտար տեղերից եկած գաղթականները, որոնք մօտաւորապէս 1.500 հոգի էին, ցրուած էին Բասէնի խեղճ եւ հիւրընկալ գիւղերի մէջ եւ սպասում էին: Բայց երբ մերժուեց, նրանցից մի մասը նորից վերադարձաւ իր նախկին տեղերը, որոնք գլխաւորապէս աշխատասէր եւ պատուաւոր տարրն էին. իսկ մի բաւական ստուար թիւ էլ, որ մեծ քաղաքներում չնչին ծառայութեանց մէջ մտած լինելով վերադարձի առթիւ թողել էին ծառայութիւնները եւ հետեւապէս իրենց տեղը բռնուած էր, ցանկացաւ ամբողջ ձմեռը ծանրանալ գիւղական դասի վրայ եւ ձրիապէս ապրել:

Խեղճ գիւղացին, որ ամէն[էն] փափուկ մոմենտին սիրով ընդունել, հիւրասիրել եւ պատասպարել էր բոլոր գաղթականներին, չէր կարող այնքան երկար ժամանակ տանել այս վերջին ծանրութիւնն էլ, մանաւանդ, որ նա հազիւ-հազ հանգստացել էր խաչագողների այն ստուար խմբերից, որ տարիներ շարունակ շահագործել էին իր համբերութիւնը: Եւ որովհետեւ գիւղերում մընալ ցանկացող տարրերը մեծ քաղաքներում տարիներով ապրած, բարոյապէս բաւական ընկածներ էին, գիւղացին վախենալով, որ դարձեալ կը վերսկսուեն նախկին խաչագողութիւնները, պաշտօնապէս դիմեց Կ. Կոմիտէին իրան այդ դժուարութիւնից հանելու համար: Կ. Կոմիտէն երկար խորհրդակցութիւնից յետոյ, գալով այն եզրակացութեան, որ այնքան ստուար թիւ

մօտ 1.000 հոգի ձրիակներն պիտի ստեղծեն նոր խաչագողական խմբեր, եւ հարստահարեն ժողովուրդը, որոնց — նախ՝ յայտարարել դրանց, որ վերադառնան իրենց նախկին վայրերը իրենց աշխատանքով ապրելու կամ գան քաղաքները մշակութեամբ ձեռք բերելու իրենց օրեկան պարէնը հայթայթելու եւ ապա յայտարարուեց բոլոր գիւղական ենթակոմիտէներին, որ ո՛չ մի մարդու չընդունեն եւ չպահեն, եթէ չունեն Կ. Կոմիտէի յանձնարարականը:

Աքսոր Բլիտի, Բուրդ Մխոյի, Բոքիկ Օհանուտի, Խլաթցի Դամբարձումի եւ Մուրատի. Այս կարգադրութիւնը առաջ բերեց նորից մի անախորժ դրութիւն կոմիտէի համար. բոլոր գաղթականները թափուեցին քաղաք եւ պահանջ դրին կոմիտէին, որ կամ փող տան ապրելու, կամ թէ չէ թուղթ տան գիւղերում ձրիակներ լինելու: Եղան նոյնիսկ սպառնալիքներ: Կոմիտէն բաւական դժուար դրութեան մէջ ընկաւ: Հազիւ հազ 2 ամսուայ ընթացքում յաջողուեց կոմիտէին մաքրել շրջանը դրանցից, ոմանց սպառնալիքով, ոմանց տեղ տալով եւ եւայլն: Եղան սրանցից եւ այնպիսիները, որ փորձեցին խմբեր կազմել եւ աւազակութեամբ պարապել, բայց կոմիտէն յաջողուեց եւ այդ փորձերը խանգարել եւ ցլրել, թէ եւ մինչեւ այժմ էլ կան անհատներ, որ ապրում են հայ գիւղերում իրենց ծախսով եւ աւազակութիւններ են անում, ո՛չ թէ հայերից, այլ շրջակայ թուրք-քիւրտ եւ յոյն գիւղերից, բայց երբ կոմիտէն կարողանում է նրանց բռնել եւ այդ յանցանքի մէջ, իր բարոյական հեղինակութեամբ զսպում է եւ հեռացնում շրջանից. ինչպէս պաշտօնապէս աքսորեց Կարսի շրջանից 903 թ. այդպիսի մի խմբի 5 հոգուց բաղկացած, նախապէս խլելով նրանց փողը, ձին, գէնքերը եւ նոյնիսկ պատժելով բանտարկութեամբ եւ որոնք չփորձեցին անգամ հակառակուել կամ դիմադրել: Սրանք էին Քլիտը, Քուրդ Մխոն, Բոքիկ Օհանուտը, Համբարձումը, եւ Փալաբեղ Մուրադը. այս վերջինիս, կոմիտէի որոշմամբ որպէս պատիժ իր գողութեան համար, խուզել տուեց մեծ բեխերը եւ շրջել տուեց ամբողջ քաղաքի մէջ, որ բոլորը տեսնեն:

Օտար տարրերի դիմումը կազմակերպութեան. Այս բանը կրկնակի բարձրացրեց Յեղափոխական) Դաշնակցութեան վարկը, մինչ այն աստիճանի, որ շրջակայ օտար տարրերը, օր[ինակ] եզիտի խաղաղ քիւրտերը, որոնք ենթակայ էին այդ գրկանքներին, լսելով կոմիտէի բռնած դիրքը դէպի աւազակները, որոնց նա Ֆիտայի էր անուանում եւ սարսափում, գիւղացիների միջոցաւ

7.- Յետագայ Արամ Մանուկեանը, նոյնպէս անցած Կարսի «Յոնց»էն:

8.- Հայ-Գուսանը Աւետիք Իսահակեանն է, այն ատեն անդամ Քարի (Ալեքսանդրապոլ) Կ. Կոմիտէի:



խնդրեց իրենց գիւղին էլ մարդ դրկել, իրենց էլ կազմակերպել եւ իրանցից էլ նպաստ ստանալ եւ առնել յեղ[ափոխութեան] հովանիի տակ:

Բացի սրանից, շատ անգամ պատահել է, որ թուրքերից կամ յոյներից խոշոր գողութիւններ են անում, ուստի թոյլ ադմինիստրացիան չի կարողանում բռնել աւագակները, եւ յիշեալ օտար տարրերը դիմում են, ի հարկէ ծանօթ հայ գիւղացիների միջոցաւ Կ. Կոմիտէին եւ խնդրում նրա աջակցութիւնը իրենցից գողացած ապրանքները գտնելու եւ աւագակները բռնելու համար: Կ. Կոմիտէին շատ անգամ յաջողուել է գտնել աւագակները այն ընդարձակ եւ սերտ կապի միջոցաւ, որ ունի նա բոլոր գիւղական ենթակոմիտէների հետ, որոնց մէջ աւագակները թաքցնում են իրենց գողութիւնները: Թէ այս դէպքերը եւ թէ գիւղական ինքնադատավարութիւնը, որի մասին քիչ յետոյ կը խօսեմ, հայ ժողովուրդը մի նախանձելի եւ պատկառելի տարր է դարձրել չըջանի օտար տարրերի աչքում, այնպէս որ թարաքամի՞ք եւ քրտի պէս աւագակային ցեղերը, ոչ միայն չեն համարձակում դիպչել հայ գիւղացու սեփականութեան, այլեւ սարսափում են նրանից: Աւելորդ չէ այստեղ յիշատակել մի դէպք, որ որոշ չափով ազդել է վերոյիշեալ երեւոյթի վրայ եւ պարզաբանում է նրան: Անցեալ աշնան Կարսի շրջանի մի յայտնի բէկի մարդիկ, քչում տանում են մի հայ գիւղացու 100 գլուխ ոչխարը գիւղացին գիտէ իր ապրանք տանողին, բայց փաստ չկայ, որ հաստատէ. գալիս դիմում է կոմիտէին եւ ա-

դաչում իրեն օգնել այդ գործում: Կոմիտէն համոզուած գիւղացու ասած ճշմարտութեան մէջ, որ գողացողները յիշեալ քրտերն են, նախապէս խորհրդակցելով վստահելի հայրուկների հետ (Մուրատ եւայլն) համաձայնում է թողնել նրանց, ինչ միջոցներով էլ որ լինի յիշեալ ոչխարները յետ խլել: Մուրատը վերցնելով իր հետ 6-7 հայրուկ, գինուած, ձիաներով գնում է յիշեալ բէկի տունը գիշերով եւ յայտնում, որ ձեր գիւղի այսինչը գողացել է մեր գիւղացոց 100 ոչխարը: 5 ժամ ժամանակ եմ տալիս յիշեալ ոչխարները վերադարձնել տիրոջ, հակառակ դէպքում 1-ի տեղ տասը ոչխար եմ տանելու ինչ գնով էլ որ լինի: Քիւրտ բէկը, որ ջան-Ֆետայուն լաւ ճանաչում էր եւ իր առաջ գինուած տեսնելով՝ աւելի զգաց նրա ուժը եւ յանդգնութիւնը, ո՛չ միայն ոչխարները 5 ժամուայ մէջ տիրոջ վերադարձնել տուեց, այլեւ փառաւորապէս հայրուկներին կերակրելուց յետոյ ճանապարհեց, նախապէս խոստում առնելով նրանցից որ այնուհետեւ բարեկամ են լինելու իրար հետ:

Դատավարութիւն.- Ամէն անգամ, երբ շրջիկ պրոպագանդիստը մտնում էր մի որեւէ գիւղ, ամբողջ գիւղական հասարակութիւնը հաւաքուում էր նրա շուրջը եւ իրա ցաւերը պատմում<sup>10</sup>:

9.- Թարաքամա՝ թաթարական թափառաշրջիկ ցեղ մը: 10.- Տեղեկագիրը հոս կ'ընդհատուի:

### Բ 1.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՋՐԱԲԵՐՂԻ ԵՐՁԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ (1904Թ.)

#### Ջրաբերղի Երջանական<sup>11</sup> Ժողովները՝ Օգոստոս 15-18

Օգոստոս 15, առաջին ժողով.-

Ջրաբերղի Երջանական ժողովները սկսուեցին Օգոստոս 15ին երեկոյեան ժամը 4-5-ին: Ժողովին ներկայ էին հետեւեալ ձայնաւորները.- քաղաքից\* 10 ձայն, գիւղերից վեց ձայն, գաւառական քաղաքներից 4 ձայն, կարմիր խաչից մի ձայն: Երջանի գործիչներից 5 ձայն: Բացի ձայնաւորներից հրաւիրուած էին խորհրդակցական ձայնով եօթն հոգի:

Ժողովը բացուեցաւ նախկին կոմիտէի անդամներից մէկի՝ Պ. Ե.-ի ձեռքով, որը տեսնելով, որ ժողովը բաց անելու համար պահանջուելիք ձայների մեծամասնութիւնը ներկայ է (22 հոգի) ժողովի բացումը համարեց օրինաւոր եւ բաց արեց, կարդալով Ջրաբերղի շրջանից տրուած զոհերի անունները, որոնց նուիրական յիշատակը ժողովը յարգեց, յոտնկայս լսելով այդ անունների շարքը:

Այնուհետեւ հերթական ժողովների համար ձայների մեծամասնութեամբ նախագահ ընտրուեց Քարի ներկայացուցիչ Պ. Գուսան<sup>12</sup>, որը իւր կողմից առաջարկեց հին կոմիտէի անդամին կարողալ 1902-4ի Ջրաբերղի շրջանի յեղափոխական գործունէութեան հաշուետուութիւնը: Պարոնը ամփոփ կարդաց այդ հաշուետուութիւնը: Ապա գործերի սովորական ընթացքը պահելու համար, երկար վիճաբանութիւնից յետոյ, ժողովը յարմար դատեց հաշուետուութեան համար ընտրել մի յանձնաժողով չորս հոգուց բաղկացած, որին անդամները պէտք է համարուին Բիւրոյի ներկայացուցիչը, մի հոգի Քարից, երկու հոգի Ջրաբերղից որոնցից մէկը պէտք է լինի Ջրաբերղի նոր ընտրուելիք կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչը եւ մի ներկայացուցիչ էլ Երջանական ժողովի կողմից: Երջանական ժողովը իւր կողմից միաձայն ընտրեց Պ. Տ. Ս.-ին:

Ապա ժողովն անցաւ կոմիտէի ընտրութեան գործին: Պ. նախագահը ժողովականներին իւր կողմից հրաւիրեց առաջարկել թեկնածուների անուններ: Տրուեցին 20 անձնաւորութեանց անուններ: Ձայների մեծամասնութեամբ այդ 20 անձերից ընտրուելիք թեկնածուների շարքում մնացին եօթն անձնաւորութիւններ: Ժողովը գտաւ այդ թիւը անբաւարար ընտրութեան անցնելու համար եւ վճռեց նոր անձանց թեկնածութիւն հանդէս բերել: Ժողովը փակուեց ժամը 9-ին:

Օգոստոս 16ի, առաւօտեան ժամը 11-ին

Բ. ժողով.-

Պ. նախագահը տեսնելով որ կայ ժողովը բաց անելու

համար ձայնաւորների օրինաւոր թիւ, յայտարարեց ժողովը բացուած (28 ձայնաւորներից ներկայ էին 22-ը, բացակայ 4-ը) ժողովականներից մէկը պ. Ազրբէկ, խնդրեց իւր կողմից, որ ժողովը, նախքան հերթական հարցերին անցնելը, զբաղուէր մի խնդրով - թէ որքա՞ն հիմնաւոր էին այն կարծիքները, որ արծարծուեցին նախկին ժողովում ժողովականներից մէկի պ. Մ.-ի մասին ձայնաւորներից ոմանց կողմից: Այդ առթիւ եղան երկար վիճաբանութիւններ եւ խնդիրը մնաց առկախ:

Պ. նախագահը անցաւ ընդհանուր հերթական հարցերին համաձայն ժողովականների ցանկութեան: Առաջին խնդիրն էր շարունակել նախկին ժողովի կիսատ թողած հարցը, այն է՝ առաջ բերել նոր թեկնածուներ, կենտրոնական կոմիտէի անդամների ընտրութեան համար: Ժողովականներից մէկը հարց յարուցեց, թէ արդեօք չի՞ կարելի մի քիչ մեղմ վերաբերուելով նախկին ժողովի թեկնածուներից ոմանց կրկին յիշել եւ ընտրել: Սկզբունքով յարմար դատուեց նրանցից էլ վերընտրել: Հանդէս եկան նոր ութ թեկնածուների անուններ, որոնցից ընտրուեցին միայն երեք հոգի: Այսպիսով նախորդ ժողովի ընտրեալ թեկնածուների հետ միասին, բոլոր թեկնածուների թիւը հասաւ 10-ի, մի թիւ, որը ժողովը համարեց բաւարար կոմիտէական ընտրութեան համար: Ապա պ. նախագահը առաջարկեց ժողովին, որ ընտրեն երկու անձնաւորութիւն, որոնք այնուհետեւ ընտրութեան թեքթիկները հաւաքելով կը ստուգեն, թէ ովքեր են ընտրուած կենտրոնական կոմիտէի անդամ: Ժողովականներն ընտրեցին պ. նախագահին եւ պ. Ա.-ին: Ժողովը նոյնպէս որոշեց, որ ընտրուած անձնաւորութիւնները պէտք է գաղտնի պահուեն: Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցին հինգ անձնաւորութիւններ եւ երկու անձնափոխանորդներ: Ժողովը այդ խնդրով էլ փակուեց երեկոյեան ժամը 4-5-ին:

\* Քաղաքի ձայները բաշխուած էին հետեւեալ կերպով.- խմբապետական ժողովին տրուած էր 6 ձայն (15 խմբին մի ձայն), դեկավարող մարմնից մի ձայն եւ կոմիտէական ամբողջ կազմը: Գաւառները՝ Շարա երեք ձայն, Թախտ եւ Արաքս երեք ձայն, Պարտիզական, Հանք, Անապատ մի մի ձայնով, գործիչներ 5 ձայնով: Հիւրերի թիւում էին Բիւրոյի եւ Քարի ներկայացուցիչները:

11.- Երջանային եւ Երջանական,- երկու ձեւերն ալ գործածուած են, բայց նախընտրելի է երկրորդ ձեւը գործածել Ուայոնական իմաստով:

12.- Ալեքսանդրապոլի ներկայացուցիչ Ա. Իսահակեանը:



Օգոստոս 16ի, երեկոյեան ժամը 8.5-ին  
Գ. ժողով.-

Ժողովը բացուեց երեկոյեան ժամը 8.5-ին նախկին երկու ժողովների նախագահ, Քարի ներկայացուցիչ պ. Գուսանի նախագահութեամբ: Նախքան բուն ժողովական խնդիրներին անցնելը կրկին առաջ եկաւ պ. Մ.-ի պատուեխնդիրը:

Բիւրոյի պ. ներկայացուցիչը յայտնեց ժողովականներին, որ մի այսպիսի բազմամարդ ժողովում չի կարելի այդպիսի կնճռոտ հարց լուծել: ուստի առաջարկեց իւր կողմից, որ այդ խնդրի քննութեան համար ընտրուի մի յանձնաժողով: Պարոնի այդ առաջարկութիւնը համարուեց շատ նպատակաւոր եւ ընտրուեց մի յանձնաժողով, բաղկացած հինգ անձնաւորութիւններից: Ընտրուեցին Բիւրոյի պարոն ներկայացուցիչը<sup>13</sup> եւ ուրիշ չորս անձնաւորութիւններ:

Ապա պ. նախագահը՝ Գուսան տուեց իւր հրաժարականը նախագահելու: Հրաժարականը յարգուեց բոլորի կողմից եւ ժողովականների խնդիրքով հրաւիրուեց նախագահելու Բարձր Մարմնի պ. ներկայացուցիչը:

Նախագահի առաջարկութեամբ սկսուեցին կարողացուել տեղեկագրերը: Բերանացի ներկայացուեց Պարտիզաւանի, Ծիկահերի, Շարայի եւ Թախտի ներկայացուցիչների տեղեկագրերը: Առանձին գովեստի արժանացաւ ժողովի կողմից Անապատի կազմած տեղեկագիրը<sup>14</sup>:

Ժողովը փակուեց գիշերուայ ժամը 10.5ին:

Օգոստոս 17ի, երեկոյեան ժամը 9-ին  
Դ. ժողով.-

Ժողովը բացուեցաւ նախկին ժողովի պ. նախագահի՝ Բիւրոյի ներկայացուցիչի նախագահութեամբ: Պարոնը<sup>13</sup> ժողովը բաց արեց յայտնելով, որ Մ.-ի խնդրի քննութեան համար ընտրուած յանձնաժողովը գործը քննելով գտել է որ կենտրոնական կոմիտէի վճիռը Մ.-ի վերաբերմամբ կայացած է նեղ շրջանում իրբեւ պատիժ, այսինքն նրա ձեռքից առնել որոշ յեղափոխական պատասխանատու գործեր: Բայց Մ. մնում էր իրբեւ անհատ յեղափոխական, իրբեւ խմբապետ եւ կարող էր ընտրուել ներկայացուցիչ պատգամաւորական ժողովում: յամենայն դէպս նրան կարելի էր անուանել վնասակար կոմիտէի կազմի մէջ, բայց հիմք չկար նրան իրբեւ Դաշնակցական կեղծ յեղափոխական համարել:

Միաժամանակ նախագահը յայտարարեց որ կ. կոմիտէի նախկին որոշումը մնում է ուժի մէջ, այսինքն Մ. զրկուում է գիւղացիների եւ կոմիտէի մէջ յարաբերութիւն պահպանելուց, զէնքի գնման եւ այլ պատասխանատու գործերից եւ արգելուում է յեղափոխականներին հաւաքուել նրա խանութը:

Նախքան բուն ժողովական խնդիրներին անցնելը, պ. Ե. խօսք խնդրեց մի հարցի առթիւ որ կապ ունէր իր

անձնաւորութեան հետ: Պարոնը յայտնեց, որ մի քանի անձնաւորութիւններ բուն յեղափոխական գործը խառնելով անձնական հաշիւների հետ, որ ունեն անհատական բնաւորութիւն, պրոպագանդայի միջոցով տարածել են կասկածելի լուրեր իւր անձնաւորութեան մասին, որ կապ ունեն ինչ ինչ դրամական հաշիւների հետ: Պարոնը խնդրում էր, որ պարզուէր, թէ ովքեր են անձնաւորութիւնները եւ ինչ փաստեր ունեն իրանց ձեռնբռում, այդպիսի լուրեր տարածելու համար: Պ. նախագահը պատասխանեց, որ այդպիսի խնդիրները իրենց առաձգական բնաւորութեամբ չեն կարող մի այսպիսի ժողովի նիւթ լինել: աւելի նպատակաւոր է ընտրել դրա համար մի յանձնաժողով եւ կամ յանձնել տեղական կոմիտէին քննութեան: նոյն պատասխանը տրուեց նաեւ պ. Բ.-ին, որը յայտնեց, թէ ինչ փաստերով առաջնորդուելով յայտնել են, թէ ինքը կաշառ է կերել: Պարոնը խնդրում էր, որ եթէ հնարաւոր էր հանդէս գար այդ անձնաւորութիւնը եւ յայտնէր այն հիմքերը, որոնց վերայ յենուելով իրան անուանարկել է:

Ապա ժողովն անցաւ նախորդ նիստում կիսատ թողած գանազան շրջանների տեղեկագրերին: Առանձնապէս գոհացուցիչ էր Բասէնի շրջանը, որը չնայելով բազմաթիւ աննպաստ պայմանների, յառաջ էր բերել բաւական զգալի յեղափոխական արդիւնք: Երբ համեմատութեան մէջ դրուեցաւ այդ շրջանը ուրիշ յեղափոխական շրջանների հետ, ապա վերջինների համեմատական յետամնացութեան գլխաւոր պատճառն այն համարուեցաւ, որ մի այլ կուսակցութեան ցանած որոմն արգելք է հանդիսացել յառաջադիմութեան:

Այնուհետեւ ժողովի խօսակցութեան նիւթ դարձաւ ընդհանրապէս այն հարցը, թէ ինչ դիրք պիտի բռնէ Դաշնակցութիւնը Հնչակեան կոչուած կուսակցութեան վերաբերմամբ, մի կուսակցութեան, որ ինչպէս շեշտում էր ժողովականներից մէկը, արդէն կազմակերպուած գիւղերի խաղաղութեան քայքայման պատճառն էր դարձել: Պ. նախագահն առաջարկեց թէ ինչ միջոցներով կարելի է այդ կուսակցութեան շահատակութիւնների առաջն առնել: Այդ հարցի առթիւ յայտնուեցին զանազան կարծիքներ:

Ոմանք առաջարկեցին ժողովը խաղաղ կուլտուրական ճանապարհով եւ զօրեղ պրոպագանդայով բարձրացել այն աստիճանին, որ նա հասկանայ կուսակցութեան էթիկան<sup>16</sup>: Այդ նպատակին կարելի է հասնել, ունենալով իրանց կոչման բարձրութեան վերջին կարծիքները:

13.- «Պարոն»ը տակաւին գործածական կը մնար Երկրի եւ սահմանագլուխի բառապաշարին մէջ: Այսօր պիտի ըսէինք «Բիւրոյի ընկեր ներկայացուցիչը», կամ պարզապէս «Բիւրոյի ներկայացուցիչը»:

14.- Պարտիզաւանը Կաղզուան է, Շարան՝ Եորագեալ, Թախտը՝ Կարսի եւ Կաղզուանի միջեւ ինկող գաւառական շրջան, Անապատը՝ Արտահան, Ծիկահերը՝ Սարիղամիշ:

15.- Բարոյականը:

րայ կանգնած շրջիկներ: Ուրիշների կարծիքով աւելի նպատակաւոր մարն այն է որ երկու կուսակցութեան ղեկավարների համերաշխ համաձայնութեամբ գիւղերը բաժանուեն ըստ կուսակցութեան: Եւ երբ որ խառն կուսակցական գիւղը կը դառնայ որոշ կուսակցութեան, այնուհետեւ պէտք է պարտաւորեցուցիչ դարձրնել, որ այդ գիւղից ոչ ոք չհամարձակուի մի այլ կուսակցութեան յարուել եւ նոր խռովութեան առիթ տալ: Այդ առթիւ ժողովականներից մէկը՝ պ. Ս. յայտնեց, որ այդ ճանապարհը գործնական հետեւանքի չի հասցնի, որովհետեւ այդ մտքով արդէն եղել են բանակցութիւններ Դաշնակցութեան ներկայացուցիչների կողմից, կնքուել են համաձայնութեան թղթեր մի այլ կուսակցութեան հետ, բայց հնարաւոր չի եղել որոշումները ի կատար ածել: Իւր կողմից նա առաջարկում էր, որ տեղական ենթակոմիտէներն արթուն աչքով հսկեն եւ խռովութեան դէպքում անյապաղ շտապեն յայտնել կենտրոնական կոմիտէին, որը իւր կողմից կ'ուղարկէ շրջիկ ներկայացուցիչ եւ գործը խաղաղ ճանապարհով կը վերջացնէ: Մտովութեան դէպքում գիւղի գինուորական ուժին երբեք չպէտք է դիմել: Ընդհակառակը շատ օգտաւէտ է գիւղի մատաղ սերնդից պատրաստել տեղական գինուորական ոյժ, — ուրիշ խօսքով՝ յառաջ բերել տեղական թարմ երիտասարդութիւն, որի բարոյական ոյժը կարող է տարածուել բոլորի վերայ:

Պ. Ե. առաջարկեց մի այլ միջոց: Այն գիւղերում, ուր Հնչակեան կուսակցութիւնը կազմում է զգալի փոքրամասնութիւն, խաղաղութիւն կարելի է վերականգնել, բարոյական ճնշում գործ դնելով նոցա վերայ եւ կտրելով նոցա հետ ամէն մի յարաբերութիւն: Երկար խօսակցութիւնների եւ մտքերի փոխանակութիւնից յետոյ ժողովի կողմից ընդունուեց հետեւեալ միջոցը.—

1.- Մտովութեան դէպքում, երբ կարող է առաջ գալ մի այլ կուսակցութեան անցնելու հարց, դիմել կենտրոնական կոմիտէին, որը կ'ուղարկէ իւր կողմից շրջիկ եւ խռովութիւնը խաղաղ ճանապարհով մէջտեղից կը վերանայ:

2.- Աշխատել խաղաղ պրոպագանդայի միջոցով գիւղերի ամենաազնիւ եւ ամենալաւ մասերը, մի խօսքով ոչ թէ անհատներ, այլ ժողովրդին ձեռք ձգել: Անհատները որպէս չնչին տոկոս, ոյժ չեն կարող ներկայացնել ճնշող մեծամասնութեան առաջ եւ տեղի կու տան վաղ թէ ուշ:

3.- Դաշնակցութեան առաջ պատասխանատու դաշնակցական անձի մի այլ կուսակցութեան դիմելը վերջինին չի ազատում պատասխանատուութիւնից: Եթէ այդպիսի անձը հակառակուի եւ նկատուի վնասակար անձն, ապա կարող է նոյնիսկ ի հարկին ամենածանր պատժի ենթարկուել:

Ապա ժողովի նիւթ դարձաւ դատավարութեան խընդիրը: Թէ որքան հնարաւոր է եւ արդիւնաւէտ դատավարութիւնը գիւղերում: Առանց բացառութեան բոլոր ճայնաւորները կարծիք յայտնեցին՝ որ թէ յեղափոխա-

կան տեսակէտից եւ թէ ժողովրդի տեսականի տեսակէտից դատերն անպայման օգտաւէտ են, օգտաւէտ են նամանաւանդ նրա համար որ կատարուում են աւելի բարեխիղճ, աւելի անկողմնակալ անձնաւորութիւնների շնորհիւ: Ժողովուրդը իրան այժմ աւելի հանգիստ է գգում, որովհետեւ ազատուած է մասամբ ռուս կաշառակեր չինովներների եւ դատաւորների ճանկից: Այս հարցով էլ փակուեց ժողովը գիշերուայ ժամը 0.5ին:

Օգոստոս 18ի երեկոյեան ժամը 8.5ին  
Ե. ժողով.-

Ժողովը բացուեց երեկոյեան ժամի 8.5-ին: Ժողովի նիւթն էր Զրաբերդի կենտրոնական կոմիտէի գործունէութեան տեղեկագիրը: Զրաբերդը 1901 թուի սկզբներում ներկայացնում էր յեղափոխութեան շատ տխուր պատկեր: Յեղափոխութեան անունն այդ ժամանակի ծաղրի եւ արհամարհանքի առարկայ էր դարձել շնորհիւ խաչագողներին<sup>16</sup>, որոնք խումբ խումբ շրջելով թէ գիւղերում եւ թէ քաղաքներում բաշխողութիւններ անում եւ կոպիտ ճնշում գործ դնում տեղական հայ տարրի վերայ սրբապղծելով յեղափոխութեան անունը:

1901 թուին Զրաբերդում կազմուում է մի կոմիտէ, որը իւր գործունէութիւնը սկսում է այդ խաչագողներին հալածելով, նոցա մէջտեղից վերացնելու համար այդ կոմիտէն դիմում է ամենախիստ միջոցների, նոյն իսկ խաչագողներից երկուսին տեւորի է ենթարկում: 1902 թուին Զրաբերդի կոմիտէն նոր ոյժ է ստանում, երբ Բագուից գալիս է որպէս շրջիկ Եգոր Առստամբանց<sup>17</sup>, որի անկեղծ գործունէութեան շնորհիւ կազմակերպուում են գիւղերն ու քաղաքը եւ յեղափոխական գործը Զրաբերդում այնքան առաջ է գնում, որ 1902 թուի վերջում Դաշնակցութիւնն ունենում է մօտ 9.000 ռ[ուբլի] մուտք: Այդ խանդն աւելի է կրկնապատկուում, երբ Ե. Դ. միջոցով ցանկութիւն են յայտնում Ալեքսանդրապոլից երկու սպաներ Թ[ուաման] Թումեան եւ Նժդեհ<sup>18</sup>: Զրաբերդ գալու եւ գործելու շրջիկի պաշտօնով: Դոցա գործունէութիւնն արդէն որոշ չափով պսակում է յեղափոխութեան կազմակերպութեան գործը: Ենտրահիլ յատկապէս Թ. Թ.-ի կրակոտ ճառերի, որոնք բխում էին անկեղծ յեղափոխականի սրտից, կազմակերպութեան գործը հսկայական քայլերով յառաջ է գնում թէ՛ գիւղերում եւ թէ՛ քաղաքում: Դաշնակցութեան գործը այդ դրութեան մէջ էր երբ նորա յառաջադիմութեան արգելք հանդիսացաւ Հնչակեան կուսակ-

16.- Երկրէն վերադարձած նախկին մարտիկներ, որոնք իրենց իրենց թոյլ կու տային յաճախ անընդունելի վերաբերմունք շրջանի գիւղացիութեան նկատմամբ:

17.- Մեծակ (տեսնել Զրաբերդի 4. 4.ի 1902-903 թ. տեղեկագիրը, ժամօրագրութիւն թիւ 4):

18.- Թուման Թումեանց, յետապայ Թորգոմը, եւ Միք. Մելիք-Փարսաղանեանց:

ցուցեան երեւան գալը գիւղերում: 1903 թ. վերջերում Զրաբերդի կազմը քայքայման է ենթարկուում. անդամներից մէկը բռնուում է, երկրորդը հրաժարական է տալիս, երրորդը գնում է արտասահման, Դաշնակցութեան ժողովներին մասնակցելու: Սակայն գործն անտէր չի թողնուում. հրաւիրուում է Ալեքսանդրապոլից մի գործիչ անձնաւորութիւն, որը տեղական ուժերի հետ շարունակուում է գործը մինչեւ 1904 թ. Յունուարի վերջը, երբ ընտրուում է մի նոր կոմիտէական կազմ չորս հոգուց բաղկացած. այդ կազմը ցոյց է տուել այնքան եռանդուն գործունէութիւն, որ ութ ամսուայ ընթացքում Զրաբերդի շրջանի մուտքն հասել է 20.000 ռուբլու: Այդ կազմը 1904 թ. Օգոստոս 17-ին կազմալուծուում է նոր ընտրութեամբ:

Այնուհետեւ տեղեկութիւն տրուեց այն գործունէութեան մասին, որ Զրաբերդի Կ. Կոմիտէն հանդէս է բերել կազմակերպելով եւ Երկիր ուղարկելով պարբերաբար վեց յեղափոխական խումբ:

Այդ տեղեկագրի վերաբերմամբ եղան զանազան առարկութիւններ: Պ. Ս. յայտնեց թէ Պ. Ե.-ի տեղեկութիւններն այն սպաւորութիւնն են թողնում ունկնդիրների վրայ, որ կարծես Զրաբերդի շրջանի յեղափոխական գործունէութիւնը արդիւնք է տեղական կոմիտէի եւ շրջիկների եռանդուն գործունէութեան, բայց սխալ է այսպէս դատել եւ ամբողջ գործը վերագրել մի շարք անհատների. այդ գործունէութիւնը պէտք է արդիւնք համարել հայկական դատի դառն իրականութեան Տաճկաստանում եւ Կովկասում. ուրիշ խօսքով յեղափ. գործունէութիւնը արդիւնք է ժողովրդական արթուն տրամադրութեան, որի գիտակցական դառնալուն պակաս չէր նպաստել այն դառն դասը, որ տուեց ռուսաց բռնակալ պետութիւնը հայոց եկեղեցական կալուածների յափշտակութեամբ: Միւս կողմից Պ. կարծիքով սրտալ կը լինի «Մըրիկ»<sup>20</sup> խմբի Երկիր անցնելուն վերագրել յեղափոխական ոգու զարթնելը Տաճկահայաստանում:

Պ. Յ. զարմանք յայտնեց, թէ ի՞նչ մի աչքի ընկնող ոյժ էր Պ. Յ., որին Զրաբերդի քայքայուած կոմիտէն հրաւիրեց Ալեքսանդրապոլից մի վերին աստիճանի պատասխանատու գործի գլուխ անցնելու:

Պ. Ս. հարց առաջարկեց Պ. Ե.-ին, թէ Կ. Կոմիտէն կարողացել է շրջանի յեղափոխական գործունէութեան բոլոր ֆունկցիաների, բոլոր մասերի վերայ հաւասարապէս ուշք դարձնել, թէ որոշ կողմեր աչքաթող են արուած:

Պ. Ե. պատասխանեց, որ Կենտրոնական Կոմիտէն չէր կարող յեղափոխական գործի բոլոր ֆունկցիաների վերայ հաւասարապէս աչք դարձնել, որովհետեւ այդ գործունէութիւնը կատարուել է ոչ թէ մի ներքին կանոնադրութեամբ կամ ծրագրով, այլ հիմնուել է կեանքի փորձի, կեանքի իրականութեան եւ շրջիկների փորձառութեան վերայ:

Պ. Ս. յայտնեց, որ թէեւ տեղեկագրում չէ յիշուած, սակայն պէտք է ի նկատի ունենալ որ Զրաբերդի շրջանի բոլոր գործերը դժբախտաբար աւելի անհատական բնաւորութիւն ունեն, աւելի կապուած են այս կամ այն անձի հետ, քան թէ կոմիտէի: Այդ է պատճառը, որ յաճախ մի անձի շրջանից հեռանալը գործին ահագին հարուած է հասցնում:

Մի քանի գաւառական ու գիւղական ներկայացուցիչներ բողոքեցին, որ Կենտրոնի եւ գաւառների ու գիւղերի մէջ կենդանի յարաբերութիւն չկայ. այնքան թոյլ է այդ յարաբերութիւնը որ նոյնիսկ կենտրոնը զլանում է ժամանակին յեղափոխական թերթեր ու թուղթիկներ հասցնել: Միւս կողմից Կ. Կոմիտէն շատ անգամ անփոյթ է վերաբերուել անյետաձգելի եւ կարեւոր գործերի նկատմամբ, որոնք գիւղական հասարակութիւնների համար կենսական նշանակութիւն ունեն:

Պ. Ե. այդ առթիւ առարկեց, թէ Զրաբերդի շրջանը իւր մօտ 100 գիւղերով եւ չորս գաւառական քաղաքներով այնքան մեծ շրջան է, որ մի երեք չորս հոգի անկարող են լիովին եւ իւր ժամանակին բաւարարութիւն տալ բոլոր խնդիրներին:

Ի վերջոյ ժողովը պարտք համարեց առանձնապէս շնորհակալութիւն յայտնել բոլոր գիւղական հասարակութիւններին իրենց ցոյց տուած եռանդուն գործունէութեան եւ զոհաբերութիւնների համար:

Վերոյիշեալները ամփոփելով, պ. նախագահը յայտնեց որ ժողովի ընդհանուր ցանկութիւնն է, որ Կենտրոնական Կոմիտէի եւ հասարակութեան մէջ յարաբերութիւնը զօրեղ լինի: Զօրեղ լինի առանձնապէս յարաբերութիւնը Կ. Կոմիտէի եւ գործիչ անհատների մէջ:

Պ. նախագահը իւր կողմից յորդորեց ժողովականներին, որ նոքա աշխատեն ըստ կարելոյն կարճ միջոցներում հաշիւ ներկայացնել Կենտրոնական Կոմիտէին, որովհետեւ վերջինս պարտաւորուած է ամիսը մի անգամ հաշիւ ներկայացնել ուր հարկն է: Ապա յորդորեց յեղափոխական վարկը բարձր պահելու համար ու շարունակելու չդարձնել զանազան ասէկոսէների, հաշիւների նկատմամբ: Ժողովն արդէն իւր կողմից ընտրել է քննիչ յանձնաժողով, որը իւր քննութեան արդիւնքը յետոյ կարող է բոլոր շրջաններում իմաց տալ:

Ժողովականների կողմից միաձայն խնդրուեց Բարձր Մարմնի Պ. ներկայացուցչից, որ նա իւր կողմից միջնորդէ ուր որ հարկն է աւելի մեծ թուով ինտելիգենտ շրջիկներ ուղարկելու Զրաբերդ, տեղական յեղափոխական պահանջներին աւելի լայն չափով բաւակառութիւն տալու համար: Դրանով էլ փակուեցին Զրաբերդի Շրջանական ժողովները:

19. «Մըրիկ»ը փորձուած ֆետայիներու այն խումբն էր որ, Թորոսի խմբապետութեամբ եւ Մեմալի առաջնորդութեամբ, 1903 Մայիսին, առանց ընդհարման կրցած էր անցնիլ Կարսէն Սասուն: Անոր մաս կը կազմէին Սեբաստացի Մուրատ, Սեպուհ, Զեդի, Աւօ, Տուրքալի եւ ուրիշներ:

**Բ 2.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ  
[ՀԱՇՈՒԵՏԵՄՆԵՐՈՒՅ]**

1904 թ. Օգոստոս 15ի Զրաբերդի Շրջանային Ժողովի կողմից ընտրուած Հաշուետեսներս, քննելով Զրաբերդի Հ. Յ. Դաշնակցութեան II Կ. Կոմիտէի 1902, 1903 եւ 1904 թ.ի Յունուար 1-ից Օգոստոս 15-ը դրամական, ռազմական եւ գնուած այլ եւ այլ իրեղէնների հաշիւը, Յ նիստում, գտանք, որ բոլոր տարիների փողի մուտքի ամէն մի յօդուածը միանգամայն համապատասխան է տրուած անդորրագրերի կտրօններին եւ դրանց փոխարինող ուրիշ փաստաթղթերին, եւ ծախսերը ըստ հնարաւորութեան վաւերացրելով (են) եւ բացատրուած:

Ծախսերի վերաբերմամբ նկատելի է խնայողութիւն եւ անհրաժեշտութիւն, որ միանգամայն անկասկածելի է կացուցանում հաշիւը իր բոլոր կէտերում:

Ռազմամթերքի եւ իրեղէնների մանրամասն ել եւ մուտքի ցուցակները եւ նրանց գործադրութիւնը իրանց մնացորդներով ճիշտ են կազմուած, որը եւ հաստատում ենք մեր ստորագրութեամբ եւ Զրաբերդի Հ. Յ. Դաշնակցութեան II Կ. Կոմիտէի կնիքով:

25ին Օգոստոսի 1904 թիւ, Զրաբերդ:

Օգոստոս 18-ի Շրջանային Ժողովի կողմից ընտրուած Հաշուետեսներ Արեւելեան Բիւրոյի անդամ-ներկայացուցիչ՝

ՄՀԵՐ<sup>20</sup>

Քարի Կ. Կոմիտէի անդամ-ներկայացուցիչ՝

Մ. ՋԱԻԷՆԵԱՆՑ

Զրաբերդի Շրջանային Ժողովից ընտրուած անդամ-ներկայացուցիչ՝ ՍԱԿՔ<sup>21</sup>

Զրաբերդի Կ. Կոմիտէի նորընտիր անդամ՝ ՌՈՒԲԷՆ<sup>22</sup>

Սոյն պատճէն[ը] միանգամայն համապատասխան է բնագրին, որ եւ ստորագրութեամբ վաւերացնում եմ. Զրաբերդի Կ. Կ. կողմից Դ. ՀԱՅԿՈՒՆԻ

**Բ 3.- ԾՐԱԲԵՐԴԻ ՆԱՄԱԿ N°1**

**Հ. Յ. Դ. ԶՐԱԲԵՐԴԻ ԲՈՒՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ**

Թէ Շրջանական Ժողովի ժամանակ Օգոստոս 15-20 1904 թ. եւ թէ առաջ հասարակութեան մէջ զանազան մութ մարդկանց կողմից կասկածելի լուրեր էին տարածուում ինչ ինչ գեղծումների մասին, որոնց նպատակն էր այս կամ այն անձնաւորութեան վարկաբեկ անելով, մտքեր պղտորել, իրանց անձնական թշնամական կրքերին յազուրդ տալու համար: Կ. Կոմիտէս չկարողանալով գտնել յիշեալ փողոցային բամբասանքների բուն հեղինակներին՝ պատասխանատուութեան ենթարկելու համար, սոյն պաշտօնական շրջաբերականով յայտարարում է ի գիտութիւն դաշնակցական մարմինների եւ հասարակութեան, որ յիշեալ փողոցային լուրերը լոկ անձնական թշնամական տրամադրութեան արդիւնք էին՝ որոշ նպատակներով հնարուած եւ հրապարակ նետուած, որոնց պաշտօնական հերքումը — հաշուետեսների արձանագրութեան պատճէնը — այսու հրատարակելով, միանգամայն փարատուում են բոլոր կասկածները եւ հերքում են բոլոր փողոցային բամբասանքները, իսկ յիշեալ բամբասանքների հեղինակներին յանձնուում հասարակական դատաստանին: Միեւնոյն ժամանակ Կ. Կոմ. սրանով յայտարարում է ի գիտութիւն բոլոր Դաշն. մարմինների եւ անհատների որ այսուհետեւ երբ որեւէ գեղծում կամ ապօրինութիւն տեղի ունենայ Դաշնակցական Մարմիններից մէկի կամ մի պաշտօնական անձնաւորութեան կողմից, դա ոչ թէ խանութիւնների կամ փողոցային խօսակցութեան նիւթ պիտի լինի, այլ ուղղակի պաշտօնական հողի վրայ դրուի Կ. Կոմիտէի կամ այլ Մարմնի կողմից քննուելու, ստուգուելու համար. աստիճանական ճանապարհով՝ խմբի անդամները պարտաւոր են իրենց խմբապետին յայտնել, խմբապետը ղեկավարող մարմնին. ղեկավարող մարմինը իր ներկայացուցչի միջոցաւ Կ. Կոմիտէին: Այսուհետեւ ով որ այդ տեսակ լուրերը, դեռ չստուգուած, չքննուած, փողոցային խօսակցութեան նիւթ չինչ, ամենախիստ պատասխանատուութեան կ'ենթարկուի:

Հ. Յ. Դ. II Կ. ԿՈՄԻՏԷ<sup>23</sup>

20.- Համօ Օհանջանեան:  
21.- Արմենակ Օլիկեան:  
22.- Այս Ռուբէնը պէտք է շփոթել յեղափոխական յայտնի մարտիկ եւ քաղաքական գործիչ Ռուբէն Տըր Միմասեանի հետ, որուն իսկական անունը Միմաս էր: Զրաբերդի Կ. Կոմիտէի «ճողմտիր անդամ» Ռուբէնը (բուն անունը՝ Երուանդ) պարզապէս առաջինից եղբայրն է, բայց երկուքն ալ իրելու կուսակցական ժածկագուն գործածած են Ռուբէն անունը:  
23.- Երաբերական ցամակին հետ տրուած է Երք. ժողովի հաշուետեսներու (իմա՝ հաշուեքննիչներու) արձանագրութեան ամբողջութիւնը (տեսնել Բ 2.):

Գ 1.- 1905 ՕԳՈՍՏՈՍ 17-Ի ԵՐԶԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԵՐԸ

- 1.- Պատգամաւորների ցանկը
- 2.- Տեղեկագիր Քաղաքի կոմիտեի
- 3.- Տեղեկագիր Պարտիզաւանի կոմիտեի
- 4.- Տեղեկագիր Պարտիզաւանի գիւղերի
- 5.- Տեղեկագիր Թախտի շրջանի
- 6.- Տեղեկագիր Շարայի IV տեսչութեան
- 7.- Արձանագրութիւն առաջին նիստի սեւագրութեան

Միւս շրջանների տեղեկագիրները եղել են բերանացի եւ արձանագրութեան են Յուլիս 23-ի ժողովներում: Այդ արձանագրութիւնները պահուում են պ. Մտրակի մօտ, որ եւ կարելի է պահանջել:

- Ջրաբերդից 1) Տուրբախ 2) Վարժապետ 3) Յ. Հայկունի
- Դատարաններից 1) Վանանդեցի
- Անանուն թաղ 1) Արսէն
- Ջրաբերդի կոմիտե 1) Խենթ
- Կ. կոմիտե 1) Ռչտունի
- Թախտ 1) Ջարմայր 2) Փիլոս 3) Բաղտասար 4) Գէորգ
- Շարայի շրջան 1) Արտաւազդ 2) Պարսկահայ 3) Վաղարշ 4) Շահբազ
- Շիկահեր 1) Նարի
- Հանք 1) Փայլակ
- Անապատ 1) Վահան
- Պարտիզաւան 1) Մհեր 2) Բազէ
- Ջինուորական խումբ 1) Բիծա
- Քար 1) Գուսան
- Մրգաստան 1) Գորգիզ

Խորհրդական ձայնով ներկայ են. 1) Դատաւորներից՝ Ուրազ. 2) Շարայից՝ Դոնիք՝ քարոզիչ. 3) Կապարճ՝ տեսուչ. 4) Յուլակ՝ հաշուետես. 5) Ոսկանապատից՝ Պանկրաս. 6) Ճինջօ՝ ժլատից<sup>24</sup>:

Գ 2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ՋՐԱԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՏԵԻ

Քաղաքի կոմիտէն<sup>25</sup> ընտրուել է ներկայ տարուայ Փետրուար ամսուն, որին յանձնուած է եղել մօտ 80 խումբ, որոնք եղել են անմխիթար դրուժեան մէջ՝ թէ հաշիւները եւ թէ կազմը:

Քաղաքի կոմիտէն գտնելով որ 80 խմբապետների հետ անմիջական յարաբերութեան մէջ լինելը ունի իրաւանյարմար կողմերը, որոշեց կազմակերպել տասնեակներ, որոնք ընտրուում էին իրանց միջից տասնապետներ եւ այդ տասնապետները գտնուում էին անմիջական յարաբերութեան մէջ Քաղաքի կոմիտէի հետ:

Տասնապետների գործունէութիւնը կայանում էր հետեւալում, խմբական եւ խմբապետական ժողովներ կազմել. խմբերի հաշիւներին հետեւել, պահել տասնեակի հաշիւը, թուուցիկներ եւ թերթեր բաժանել եւ ուրիշ խմբական գործերին հետեւել: Քաղաքի կոմիտէն յաջողուել է տասնապետների հետ խմբերի թիւը հասցնել մօտ 135-ի (հնչակեաններից 15 տուն):

Ժողովներ կազմակերպել են հետեւեալ կերպով: Խմբական ժողովներ՝ երբ եղել է զբաղմունքի նիւթ. ամիսը մի անգամ խմբապետական ժողով (թիւով 20-25), որտեղ խմբապետները ներկայացնում էին Քաղաքի կոմիտէին դրամական հաշիւները, համեմատուում էր կոմիտէի պահած ընդհանուր հաշիւները՝ խմբական հաշուատետրերի հետ, խօսուում էր խմբերի դրութեան եւ պահանջների մասին:

Միջին թիւով եղել է 2 ամիսը մի անգամ ընդհանուր ժողով 10 խմբերի համար, որտեղ Ջրաբերդ գտնուած դասախօս ընկերները կարողացել են դասախօսութիւններ:

Քաղաքի կոմիտէին որոշ չափով յաջողուել է վերացնել քաղաքի մէջ հարբեցողութիւնը, թղթախաղը եւ այլն: Զանազան խնդիրների առթիւ մտել է բանակցութեան մէջ պարսկաց կոնսուլի, ոստիկանապետի, յոյների եւ թուրքերի հետ:

Երաշխաւորներ է գտել բանտարկեալ զինուորների համար:

Մինչեւ Յունիս ամիսը դատաւիճիւնները իրագործելը եւ բանտը եղել է կոմիտէի իրաւասութեան տակ:

Երեկոյթներ եւ նեկայացումներ կազմակերպուել է

24.- Անուններու մէկ մասը (անձնանուն քէ տեղանուն) անձանօք են մեզի: Տեղանուններն թախտը Կարսի եւ Կաղզուանի միջեւ գաւառական շրջան է, Շարայի շրջանը՝ Շորագեալն է, Շիկահերը՝ Սարիղամիշն է, Դանքը՝ Օլթին, Անապատը՝ Արտահան, Պարտիզաւանը՝ Կաղզուան, Քարը եւ Մրգաստանը ծանօթ են՝ յաջորդաբար Ալեքսանդրապոլ եւ Երեւան. ժլատը՝ Դիւս. Կովկասի Նոր Արմաւիրի շրջանն է: Անձնանուններն ծանօթները կը նշուին իրենց տեղին: 25.- Խօսքը Կարս քաղաքի կոմիտէին մասին է:

Գ 3.- ՊԱՐՏԻԶԱՒԱՆ

կոմիտէի առաջնորդութեամբ: կոմիտէին յաջողուել է մեծ չափով ռազմամթերք ձեռք բերել իրանց ջանքերով ու փողի միջոցով. կոմիտէն հետեւել է ակտիւ կերպով ջանքեզարներին<sup>26</sup>. կատարել է խուզարկութիւններ տներում եւ դրսում թուրքերի եւ պարսիկների մօտ:

կազմակերպել է արհեստաւորներին իբրեւ ասնաֆութիւններ դաշնակցական հովանաւորութեան տակ:

Աջակցութիւն է ցոյց տուել թուուցիկ խմբերին եւ առաջնորդել է մէկին որտեղ որ հարկաւոր էր: Բռնել եւ բանտարկել է մի քանի խաչագողներ եւ գողեր:

կատարել է քաղաքի եւ գիւղերի գանձապահի պաշտօնը:

Թախտի եւ Շարայի շրջանը նոյնպէս եղել է Քաղաքի կոմիտէի հսկողութեան տակ որտեղ յաջողուել է վերջացնել տեղի ունեցած սուր կռիւներ եւ անխորժ դէպքերը:

Ջրաբերդի քաղաքի կոմիտէն աւելորդ չի համարում աւելացնել իւր կարծիքը տեղական գործունէութեան մասին: Նա կարծում է որ շատ լուրջ ուշադրութիւն պէտք է դարձուի խմբական ժողովների զբաղմունքներին, որը դժբախտաբար գտնուում է վերին աստիճանի անմխիթար դրութեան մէջ: Դրա պատճառը պէտք է որոնել պրոպագանդիստների եւ պրոպագանդայի վերաբերեալ զրականութեան բացակայութեան մէջ: Նոյնպէս ուշադրութիւն պէտք է դարձնել Դրօշակի կանոնաւոր եւ բաւական քանակութեամբ ստանալու վրայ, խմբերի անմիջական պահանջներին բաւարարութիւն տալու համար: Լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել դրամական հաշիւները Դրօշակի մէջ տպագրել տալու, որովհետեւ ժողովրդի մէջ լսուում են անբաւականութեան ձայներ չտպագրուելու պատճառաւ:

Ստորագրութիւն՝ ԽՆՆԹ

Պարտիզաւանը<sup>24</sup> ներկայումս ունի 700 տուն, մօտաւորապէս 1.300 [?] բնակիչ հայերով, որոնցից մեծամասնութիւն են կազմում դաշնակցականներն, այն է՝ 47 խումբ 633 անդամներով. իսկ մնացած փոքրամասնութիւնը պատկանում են Հնչակեան կուսակցութեան մօտ 20 խումբ. չմոռանանք յիշել որ այն անհատներն որոնք մի որեւիցէ պատիժ են ստացել իւրեանց անվայել վարմունքի եւ գործած գեղծման համար, հեռանալով Դաշնակցութիւնից եւ կամ Դաշնակցութիւնից աքսորաւածներն, հնչակեանների մօտ գտել են սիրալիւր ընդունելութիւն, եւ բարձր պաշտօններ. այս էլ խոստովանւենք, որ ինչ միջոցներ որ հնչակեաններն ի գործ են դնում անդամներ որսալու, եթէ Դաշնակցութիւնն էլ նոյնը անէ, մի ամսուանից կը տեսնենք որ այդ 20 խումբն կը լինի 10 խումբ. ներկայումս մի 2 խումբ խնդիր է ներկայացրել Դաշնակցութեան եւ չեն ընդունւել, առարկելով որ պէտք է հնչակեանների հետ վերջացնել իւրեանց թէ բարոյական եւ թէ դրամական հաշիւներն՝ ապա ընդունուեն:

Մրանից մի քանի տարի առաջ, այն է մինչեւ 901 եւ 902 թուականներն, Պարտիզաւանի յեղափոխութիւնն իւր գործունէութիւնով մի կատարեալ բռնութիւն էր ներկայացնում յանձին մի քանի կեղտոտ անձնաւորութիւնների, որոնք իւրեանց աղտոտ գործերով չէին գանազանում թուրք բաշիբոզուկներից. բայց այդ բաշիբոզուկութիւնն երկար չտեսց. եկաւ 902-03 թ. իւր հետ ունենալով վերածնութեան մի ծրագիր որով վերածնւեց Պարտիզաւանի յեղափոխութիւնը:

Չնայած Պարտիզաւանում յեղափոխութիւնը վաղուց գոյութիւն ունէր, բայց մենք ընդունում ենք նրա գոյութիւնը իւր բարեփոխման օրից, այն է 902-03 թ. ականից, որովհետեւ մինչեւ այդ թիւը մեզանում յեղափոխութիւն չի եղել, այլ մի աւազակների շրջան, որոնք օժտուած լինելով տաճկական ամենավայրենի յատկութիւններով, կեղեքում, հարստահարում, տանջում ստրկացնում էին ժողովրդին, մեռցնելով նրա մէջ ազատութեան ոգին:

Բայց երբ տեղս եկաւ 902 թ. արժանապատիւ Կորիւն քահանայ Քոթանջեանը, որի շնորհիւ կազմուեց խառն ժողով (որեղ ներկայ էին բոլոր հնչակեաններն եւ որոնք միանալով մեզ հետ յանձնեցին մեզ իրանց ունեցած գէնքերն) որտեղ հիմք դրուեց Դաշնակցութեան կոմիտէական նոր կազմը: Արժ. Կորիւն քահանան, բացառելով Դաշնակցութեան վեհ սկզբունքը եւ նորա նշանակութիւնը գտաւ սիրալիւր ընդունելութիւն, եւ հեռացաւ թողնելով ժողովականների վերայ շատ լաւ տպաւորութիւն: Ահա այդ օրուանից սկսուեց տեղիս Դաշ-

26.- Թուրք-քաթար ընթացներ, չէթներ:

նակցութեան գործունէութիւնը իւր լաւ եւ թէ վատ ուղղութիւններով: Հայր Քոթանջեանից յետոյ տեղս են եկել մի քանի գործիչներ որոնք ունեցել են Հանգանակութիւն, առաջինը՝ Խանի<sup>27</sup> ձեռամբ 1200 ռ. իսկ երկրորդը Տուրբախի<sup>28</sup> 1000 ռ. իսկ մնացածներն ունեցել են խմբապետական եւ խառն ընդհանուր ժողով, որտեղ արծարծուել են զանազան հարցեր որոնք մի որոշ չափով յազուրդ էին տալիս անդամների պահանջներին. չմոռանանք յիշել որ Պարտիզաւանը խիստ պահանջ ունի մի պրոպագանդիստի. կարող ենք վստահ կերպով ասել որ այս 3-4 տարիներում Պարտիզաւանը չէ ունեցել քաղաքի եւ շրջանի համար մի այնպիսի պրոպագանդիստ որ Դաշնակցութեան Մրազիրն բացատրէ լայն կերպով եւ հասկացնէ ժողովրդին, որն միայն անունով է դաշնակցական, իսկ Մրազրի մասին ոչ մի գաղափար չունի. աւելի զարմանալին այն է որ Պարտիզաւանի կոմիտէն չունի ոչ մի Մրազիր եւ կանոնադրութիւն:

Որովհետեւ ներկայ գործունէութիւնը աւելի թարմ է, մի քանի խօսք էլ ասենք ներկայ կազմի եւ նորա գործունէութեան եւ ուղղութեան մասին: 905 թ. Փետրուարի կէսին գրուած շրջաբերականով, Պարտիզաւանի կոմիտէն իւր վերայ վերցրեց պաշտօնապէս քաղաքի եւ շրջանի դատերն: Հիմնուեց առաջին դատարան աւելի բարձր իրաւունքներով եւ յետոյ միջնորդ դատարան Հնչակեանների հետ. առաջին դատարան ընդունել է քաղաքից մօտ 130 դատ որից վճռուել են մօտ 50-ն եւ գործադրուել է 15-ից ոչ աւել: Բարձր դատարանն ընդունել է մօտ 10 գործ որից 9-ը վճռուել են եւ 8-ը գործադրուել: միջնորդ դատարանն ընդունել է մօտ 45 դատ, որից վճռուել է 12 դատ եւ գործադրուել է 7 դատ: Դատերն չգործադրուելն կարելի է բացատրել այսպէս. չենք ունեցել գործադրող մարմին. իսկ Հնչակեանների գործերն չգործադրուելն կարելի է վերագրել թափաշուութեան. եւ այսպիսով դատերն մնալով անգործադրելի եւ անհետեւանք, դատարաններն յուսահատեցրել եւ զգուցեցրել են ժողովուրդին:

Կոմիտէն նկատելով գործերի բարդութիւնը եւ չունենալով ազատ անձնաւորութիւն, որն միջոց ունենար միշտ խմբերի հետ տեսնուելու, ստեղծեց մի այլ մարմին որն մինչեւ ներկայ դատավարութեան սկսուելն գոյութիւն չունէր, այն է Ղեկավար Մարմին՝ որն բաղկացած է 4 հոգուց, որոնք գործ են ունենում խմբերի հետ տեսակցել, նրանց յայտնել պաշտօնական որոշումներ, մաքրել դրամական հաշիւներն եւ վէճերն, պարապել ընթերցանութեամբ, կազմել երեկոյթներ եւ ներկայացումներ: Ներկայ կոմիտէի գործունէութեան մէջ առաջին տեղն է բռնում հետեւեալ մեծ փոփոխութիւնը,

այն է՝ ինչպէս կը տեսնենք՝ մինչեւ 903-904 թուականի վերջերն խմբերի թիւն կարելի էր հաշուել 15-ից ոչ աւել, այն ինչ 903 թուից յետոյ ստանում ենք մի մեծ թիւ, այն է՝ մօտ 48 խումբ:

Կոմիտէն աչքի առաջ ունենալով զէնքի անհրաժեշտութիւնն եւ ժողովրդի պահանջն, աշխատում էր որքան կարելի էր ժողովրդի մէջ զէնք տարածել եւ որի համար 1.000 ռ. փող հաւաքեց վաճառականներից վեց ամիս ժամանակաւ, որից ստացուեց 800 ռ. [ուրբու] զէնք, իսկ մնացած 400 ռ. [ուրբու] մօտ 7 ամիս է առանց մի օգուտի մնում է Մեծ Քաղաքում<sup>29</sup>. պէտք է նկատել որ Կ. Կոմիտէն Պարտիզաւանի զէնքերի գնման գործում շատ թոյլ վերաբերուեց, ինչպէս նաեւ մնացած բոլոր գործերում: Թոյլ է նաեւ տեղիս կազմն որովհետեւ անդամներն իւրեանց դերում չեն. աւելի բարձր են դատում իրանց կոպէկն քան գործն, թողնելով գործն մի երկուսի վերայ:

904 թուից հիմք դրուեց Պարտիզաւանում Յ [եղ. ?] կարմիր խաչի ընկերութեան, որն սպասածից շատ գործ ցոյց տուեց. շնորհիւ վարչութեան անդամուհիներին եւ կոմիտէի ձեռք առած միջոցի մի քանի օրում խմբերի թիւն հասաւ մօտ 14-15ի, մօտաւորապէս 200 անդամուհիներով. ունենալով տարեկան մուտք մօտ .....<sup>30</sup> ռուբլի. պէտք է նկատել որ այդ վառ գործունէութիւնն այժմ գտնուում է աննախանձելի դրութեան եւ հոգեվարքի մէջ:

Պարտիզաւանում գոյութիւն ունի Գրասիրաց Ընկերութիւն, որն իւր գործունէութիւնն սկսել էր 902 թուականից. իսկ 904 թուին Հիմնուեց Ս. Մես[րոպ] Գրասիրաց Ընկերութիւն, որին յանձնուեց նախկին Գրասիրաց ընկերութեան գոյքն եւ ստացուածքն. բայց ցաւօք սրտի պէտք է նկատենք որ աւելի թոյլ է ներկայ Գրասիրաց վարչութիւնը քան առաջինը, որին շատ գործ կար կատարելու:

27.- Բուճ անունը Բարսեղ Թիրեաքեան. մասնակցած Խաւսարի արշաւանքին. ղեկավարած Խաստուրի կոիւր. Ճահատակուած Բասեցի արիւնոտ կռուի ընթացքին (1903):

28.- Տուրբախ, բուճ անունով Կիրակոս Յարութիւնեան. դաշնակցական հին մարտիկ եւ գործիչ: Կազմակերպչական եւ դէպի Երկիր մարտական խումբերու եւ զէնքի փոխադրութեան գործով եղած է Կարին, Խնուս, Սասուն, Կարս եւ Ալեքսանդրապոլ: Դայ-բաթարական ընդհարումներու ժամանակ, Արմէն Գարոյի հետ կը ղեկավարէր Թիֆլիսի հայութեան ինքնապաշտպանութիւնը:

29.- Թիֆլիս:  
30.- Չնոագրին մէջ մէկ տող քաց է ձգուած:

**Գ 4.- ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՏԻԶԱՒԱՆԻ 5 ԳԻՒՂԵՐԻ (ՄԱՍԻՆ)**

**Բլբու գիւղ**  
Բլբուլն բաղկացած է 113 տուն բնակչից եւ 14 տուն գաղթական[ից]. ունի 15 պահեստի գինուոր. բացի գաղթականներից գիւղացիք բոլորն էլ հող ունեն: Կայ ուսումնարան որտեղ սովորում են 32 աշակերտներ, ուսուցիչներ, տիրացու:

Սոյն գիւղն օժտուած էր մի երկու վատ յատկութիւններով, հարեցողութիւնն եւ խումարն, որոնք տգէտ գիւղացուն դէպի կորուստ էին տանում. բայց շնորհիւ Դաշնակցութեան ձեռք առած միջոցների միջանգամայն արմատախիլ արուեց այդ աւերիչ եւ կործանիչ սովորութիւններն:

Գիւղում կայ՝ 2 հրացան բերդան եւ մի 3-4 հատ հին տաճկական անպէտք դափաղուներ: Կայ զէնքի պահանջ. չկայ ոչ մի Հնչակեան. տարեկան տալիս են 125 ռուբլի. գիւղն բաժանուած է 11 խմբերի:

**Սլան գիւղ**  
Ունի 75 տուն բնակիչ եւ 11 տուն գաղթական. ունի 8 պահեստի գինուոր: Կայ ուսումնարան 38 աշակ[երտով], որը գտնուում է Ս. Մես[րոպ] Գրասիրաց ընկերութեան իրաւանց տակ, որտեղ աշակերտներն բաւակաւին առաջ են գնացած շնորհիւ տեղական ուսուցչի քան միւս գիւղերն. սոյն գիւղը յայտնի էր իւր մի վատ յատկութեամբ, այն է՝ կառավարութեան ատեսաններում, մէջիտներում անպակաս էին մլանցիներ, որոնք զրգւեցրել էին նոյնիսկ կաշառակեր տգրուկ չինովիկներին<sup>31</sup>, որոնք ժամանակ անգամ չունէին կաշառք վերցնելու այնքան որ գործերն շատ էր. այդ վատ սովորութիւնը վերացուեց այն օրից երբ յեղափոխութիւնն դատերն վերցրեց իւր վերայ:

Գիւղում կայ մէկ բերդան, 1 դափաղու եւ 1 հատ 18 հարուածեայ հրացան, մօտ 18 ատրճանակ. չկայ ոչ մի Հնչակեան: Բաժանուած է 5 խմբերի. տարեկան մուտք 75 ռ. [ուրբու]. եղել է երկու անգամ Հանգանակութիւն. առաջին 902 թ. 44 ռ., երկրորդ անգամ 903 թ., եղել է 98 ռ.:

**Մաստան գիւղ**  
Բնակիչ 40 տուն. գաղթական 6 տուն. ունին 6 պահեստի գինուոր. չկայ ուսումնարան. կան մօտ 35 աշա-

կերտներ. չունի քահանայ. չունին հող, սակաւահող են, մանաւանդ որ 95 թ. ի երկրաշարժից վնասուեց արտերի մեծ մասն. այդտեղ կան սահմանապահ զօրք որն ընդմիշտ մնում է՝ թուով 35 հոգի. տարեկան տալիս են 80 ռ. [ուրբու]. բաժանուած են 8 խմբերի. եղել է երկու անգամ Հանգանակութիւն 902-903 թուականներին: Կայ՝ 1 բերդան եւ մօտ 15 ատրճանակ: Կային մինչեւ ներկայ թուի Մայիս ամսին 10 տուն Հնչակեաններ բայց նրանք էլ միացան մեզ հետ: Բաւակաւին համեստ գիւղ է, իւրեանց նահապետական սովորութիւններով:

**Ատրբան**  
Ունի 17 տուն բնակիչ, 8 տուն գաղթական. 2 պահեստի գինուոր. չունեն ոչինչ. պարապում են փայտ վաճառելով եւ մօտակայ պետական կապալով վերցրած հողերից են օգտուում չունենալով սեփական հող. այդ գիւղն ամբողջն վարակուած է վատ ախտով որն վարակիչ է դառցոր(?). տարեկան տալիս են 25 ռ. եղել է Հանգանակութիւն. կայ՝ 2 զէնք, 11 հատ ատրճանակ. կայ 1 տուն Հնչակեան:

**Աւուճ**  
Ունի 95 տուն բնակիչ, 30 տուն գաղթական, 11 պահեստի գինուոր. կայ՝ ուսումնարան 40 աշակերտով, ունին բաւակաւին լաւ ուսուցիչ որ շատ լաւ է պարապում. բնակիչներն բոլորն ունին հողեր. չունին քահանայ. տարեկան տալիս են 110 ռ. եղել է Հանգանակութիւն երկու անգամ. ունէին չայիր<sup>32</sup> եկեղեցուն որից 3 տարի է օգտուում էր Դաշնակցութիւնը՝ տալով 30 ռ. գիւղացիներին. ունէին ուսումնարան որն տրուում էր քրէհով<sup>33</sup>. կայ՝ 2 հրացան, մօտ 30 ատրճանակ. կայ՝ մեծ պահանջ զէնքի՝ շրջապատուած լինելով քիւրտի գիւղերով. չկան Հնչակեաններ:

31.- Պետական պաշտօնեայ, ընդհանրապէս գործածուած արիւմարիական իմաստով:  
32.- Մարգագետին, խոտոց:  
33.- Վարձքով:



Գ 5.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ [ԹԱՍՏԻ ՇՐՋԱՆԻ]

Թախտի շրջանը բաղկացած է քսան եւ երեք գիւղերից: Բաժանուած է չորս Տեսչութեան եւ մի վերատեսչի: Թախտի շրջանը՝ կազմակերպութիւնից առաջ ոգեւորուած է յեղափոխական վեհ գաղափարներով, եւ ամէն մի ժամանակ կատարում են իրենց իսկական պարտականութիւնները: Բայց որովհետեւ ներկայիս բաժնուած է չորս Տեսչութեան, դատավարութիւնը բականի(?) ընթացք ունի: Իսկ գալով ներկայիս դատավարութեան մասին՝ Թախտը համաձայն է սոյն ձեւին՝ չնայած Շարայի շրջանի նման չկան բաժնուած դատարաններ: միմիայն հարկաւոր է ստիպել Տեսչութեան վրայ, որ դատի ժամանակ տեղական ենթակոմիտէներին ներկայութեամբ գործ ջննուի եւ ըստ այնմ վճիռ կայանայ: միեւնոյնը վերատեսչին եւս: Վասնզի այս ձեւն աւելի լաւ ընթացք ունի եւ վճիռներ շուտով կ'իրագործուին, չէ՞ որ հասարակութիւնից (են) ընտրուած գիւղական ենթակոմիտէներ եւ տեսուչներ, իրենց համաձայնութեամբ, որով կը նշանակուին դատավարներ: այս ձեւն աւելի յարմար է եւ կը խուսափուի վտանգներէրից:

Թախտ պատրաստուած է նաեւ Կարմիր Խաչի անդամավճարների ցուցակներ կազմել: չնայած Կարմիր Խաչի նուիրատուներով կ'օգնեն, դեռեւս անդամավճարների ցուցակներ չէ հաստատուած: շատ շուտով կ'իրագործուի:

Թախտի շրջանը գուրկ է ուսումնարաններից: հարկաւոր է Գրասիրաց Ընկերութեան միտք դարձնել եւ ամէն գիւղում եթէ հնարաւոր է մայրենի լեզուով ուսումնարաններ բանալ շատ շուտով (եւ) երկար ժամանակաւ ուսումը շարունակել:

Նաեւ Թախտի շրջանում անկանոն են եկեղեցական հաշիւները, վասնզի ապառիկներ քանի քանի տարիների ընթացքում չեն առնուած եւ հոգեւոր կառավարութիւնը անուշադիր թողեալ: Եթէ կազմակերպութիւնը վերառնէ այդ հաշիւները (բաւական գումար) վստահ լինելով թէ եկեղեցիների կարգ մը հաստատուի եւ թէ հասարակութիւնից այդ խառն շփոթմունքներ կը վերջանան: կազմակերպութիւնը ըստ իւր հայեցողութեան կարող է գործադրել եկեղեցական պատրաստի եւ ապառիկների գումարներ, [քանի?] որ 1904 թուականին եկեղեցական ամբողջ հաշիւները ցուցակագրուած եւ յանձնուած են կազմակերպութեան:

Թախտի շրջանը բաժանուած է երկու կողմերի: Ա.

մասը Խարաղալէից սկսեալ մինչեւ Բերնա, որ գտնուում է արեւելեան կողմը՝ քրտաբնակ Խուրտարա ասուած տեղեր (քրտական գիւղեր), որից տեղական հասարակութիւնը կարիք էր զգացել իրեն պաշտպանութեան համար: Ի շնորհիւ կուսակցութեան եւ թուրքիկ խմբի խմբ[ապետ] պ. Բաղտասարի եւ իւր գինուորների կարգապահութեամբ այժմ մասնաւոր ապահով են զգում իրենց, իսկ ք. մասը դէպի արեւմուտք Չիրդան գիւղից մինչեւ Պայպուրտ<sup>34</sup> թուրքիկ խմբի խմբ[ապետ] պ. Բիծի եւ իւր գինուորների հսկողութեան յանձնուած, Գէօլայի քիւրտ եւ թարաքամա<sup>35</sup> ազգաբնակչութեան դէմ որտեղ աւելի վտանգ է սպասուում: Եթէ յիշեալ թուրքիկ խմբեր չլինէին եւ սարսափ չտարածէին օտար ազգաբնակչութեան վրայ շուտով Թախտ կը մատնուէր Երեւանի եւ նաեւ Նախիջեւանի նման թալանի եւ մարդասպանութեան:

Օտար ազգերի հետ յարաբերութիւն ունենալ, ոչ թէ դրանց դատերին խառնուիլ, այլ միշտ պէտք է ազդել եւ այդ միջոցաւ լաւ համոզուած ենք որ յեղափոխութիւնը իր դիրքը կը պահէ օտար ազգաբնակչութեան դէմ:

Նաեւ յարմար միջոցաւ ստիպել հնչակեաններին որ իրանց յայտնի կնիքով կնքուած վկայականներ չտան օտար ազգերին կազմակերպութեան նպատակաւ: Թէեւ Թախտ հնչակեաններ աննշան թիւ են կազմում, միմիայն հարկաւոր է ազդեցիկ անձնաւորութիւններ ունենալ դրանց դէմ եւ այդ ճանապարհով կարող ենք վերջ տալ այդպիսի խլրտումների, վասնզի դատավարութեան ժամանակ արգելք են հանդիսանում:

ԶԱՅՐՄԱՐ<sup>36</sup>

15/8 905 թ. Թախտ

34.- Այս Պայպուրտը գիւղ է Կարսի մարզին մէջ: Չշփոթել Կարին-Էրզրում Գահանգի Գոյնանուն քաղաքին հետ, որուն հայկական կոչումը Բաբերդ է:

35.- Թաքարական թափառաշրջիկ ցեղ մը:  
36.- Ուղիղը՝ Զարմայր:

Գ 6.- ՇԱՐԱՅԻ ԶՈՐՐՈՐԳ ՇՐՋԱՆԻ ՏԵՍՉՈՒԹԵԱՆՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1905 ամի 16ն Օգոստոսի: Կղզի գիւղ

Մեր տեսչութեան ենթակայ են եօթը գիւղեր եւ Զարիչատի քսանի չափ առեւտրականները: մեր եօթը գիւղերը՝ որոնք են Կղզի, Քար, Ստուեր, Շերամ, Եփրատ, Գետաձոր եւ Վարդաձոր ընկնում են Շիրակ գաւառի հիւսիս արեւմտեան կողմ: Հիւսիսային կողմից մեր շրջանը սահմանակից է Զարիչատ գաւառին: Բոլոր գիւղերի բնակողները կազմակերպուած են: մեր շրջանի կազմակերպութեան նախկին Հիմնադիրն եղել է հանգուցեալ Թոխմախը (Աշխալեցի Սարգիս) իսկ յետոյ զարգացրել է երջանկալիչատակ Թումանը<sup>37</sup> վերոյիշեալ եօթը գիւղերից Կղզիում (215 տուն) 52 տուն, Քարում (175 տուն) 25 տուն եւ Ստուերում (84 տուն) 3 տուն հնչակեան կուսակցութեան են պատկանում: միւս բոլորը դաշնակցական են: իւրաքանչիւր գիւղն ունի ժողովրդից ընտրուած ենթակոմիտէի անդամներ 5-7 հոգի: ենթակոմիտէն բացի յեղափոխական անհրաժեշտ գործերը վարելուց շարաթական մի օր էլ նուիրում է հասարակութեան գանգատը լսելու, դատավարութիւններ անելով: այդ օրը տնօրինուած է եւ տեղական գինուորական մեծաւորը անյապաղ ուղարկում է 2-3 գինուոր յիշեալ դատարանին ծառայելու կամ կարգը պահանելու: Դատավարութեան ժամանակ գործ չունեցողներին արգելուած է այնտեղ մտնելու: Երբեմն դատարաններն են դիմում բողոքելու մինչեւ իսկ թուրքեր եւ քիւրտեր: Եթէ իրենց բողոքը հայերի դէմն է, դատարանները նրանց բողոքը լսելով հանդերձ առանց կրօնի խտրութեան վճիռ են կայացնում մինչեւ անգամ յօգուտ թուրքի կամ քիւրտի՝ եթէ արդարութիւնը այնպէս է թելադրում: Գիւղական ենթակոմիտէի դատավարութեան իրաւունք հինգ մանէթից դէն չի անցել, պատիժի ու տուգանքի համար էլ մի օր բանտարկութիւն եւ մի մանէթ տուգանք: դրանցից աւելի իրաւունք չէ կամ չկայ: Բոլոր գանգատները ընդունում են գրաւոր ու գրուածները մնում են դատարանում ընդմիջտ:

Մեր տեսչութիւնը ունի մի այլ բարձր դատարան երդուեալ անունով: այդ դատարանն էլ նմանապէս շարաթական մի օր նիստեր է ունենում այս կամ այն գիւղում, ենթակոմիտէների վճռից անբաւական մնացողների կամ յատուկ այդ դատարանին պատկանող բողոքաւորների գործին նայելու: այդ տեղ էլ բոլոր գործերը գրաւոր ընդունելով հանդերձ իւրաքանչիւր խնդիր ներկայացնողից կանխիկ վերցնում են 10-ական կոպէկ, այստեղ էլ դարձեալ պատրաստ են տեղական գինուոր-

ներ կարգապահութեան եւ ծառայութեան համար: Բողոքաւորներ այժմ չափազանց շատ են լինում թէ այս եւ թէ միւս դատարանում, որովհետեւ ամենաչնչին բողոք ունեցողն էլ (առաջի տարիներ այդ տեսակ չնչին բողոքներ ուս կառավարութեան ներկայացնելը աննպաստ էին համարում) առանց քաշուելու գալիս տնկուում են դատարանը: բայց էլի մի կերպ բաւականութիւն ստանալով են վերադառնում: Միջանկեալ պէտք է ասել որ մեր ժողովուրդը դեռ եւս շատ խակ է կամ բոլորովին անընդունակ է ազգային դատարաններին կամաւ ընդունելու: նրանք դատ վարելու դէպքում յամառ կամապաշտութեամբ ամէն մէկը (թէ գանգատաւոր եւ թէ գանգատեալը) ուզում է խստիւ պահանջել որ ինչ էլ որ լինի անպատճառ դատաւորները իրեն արդարացնեն, որի ժամանակ ի հարկէ անպատկառ են լինում, շատ անտեղի մեղադրանքներ [անում] դատաւորների հասցէին: բայց եւ այնպէս համբերութեամբ գործը շարունակում է: Տեղական գինուորական խմբեր բացի վերոյիշեալ ծառայութիւնից ծառայում են նաեւ յեղափոխական ուրիշ շատ կարեւոր գործերում: մանաւանդ տեղափոխութեան եւ յամառ սուրհանդակի պաշտօնում թէ՛ գիւղից գիւղ թէ՛ գիւղերից քաղաք եւ այլն: գինուորական խումբն էլ ունի առանձին դատարան եւ դատաւորներ անկախ տեղական ենթակոմիտէի կազմից՝ նրանք նմանապէս շարաթական մի օր նիստ ունենալով հաշիւներ են մաքրում, թիւրիմացութիւններ են ուղղում, երբեմն էլ պատժում են իրենց յանցաւոր ընկերներին եւ այսպէս շարունակ: Նախիջեւանի եւ Երեւանի հայ-թրքական ընդհարումների ժամանակից մինչեւ այժմ մեր շրջանում ոչ մի վատութիւն չէ պատահել, մեր եւ մեր դրացի թուրքերի մէջ եղած նախկին յարաբերութիւնը բոլորովին չէ խախտուել: այժմ աւելի լաւ եւ բարեկամական յարաբերութիւններու մէջ ենք գտնուում քան երբեք:

Մ. ԿԱՊԱՐՃ

37.- Թումանց Թուման (Թորգոմ) եւ Թոխմախ, իւրաքանչիւրը արշաւախումբի մը գլուխը անցած, Գահաւապուած էին 1904 տարուան ընթացքին, ինչպէս եղաւ Գաւա Գաւապուապիւրը Խանի, Երկաթի, Կայծակի, Կաղարշակի, Սեմակի, Սուլուխցի Սեղոբի, Ռուս Գեորգի, Որսկանի, Փոխիկի եւ այլոց: Սասնոյ կողողներուն ամեն գնով օգուտեան հասնելու ճիգերը սուղ պիտի արժէին Գ. Յ. Դաշնակցութեան:

Գ 7.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՋՐԱԲԵՐՂԻ ԵՐՁԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

1905 թ. 19 Օգոստոսի

Ժողովը բացուեց երեկոյան ժամը 8.5ին:

Պատգամ[աւոր] ժողովականների ցանկութեամբ ընտրուեց նախագահ Մրգ[աստանի] Կ. Կ-ի անդամ պ. Գորգիսը: Ձայները հաշուելուց յետոյ երեւաց որ Հ. Յ. Դ. ներքին կանոնադրութեան բ. կէտի, Բիւրոյի Ընդհանուր ժողովի կանոնադրութեան համաձայն, որտեղ ասուած է պատգամաւորների 2/3 մասը ներկայ լինելով ժողովը կարող է օրինաւոր համարուել: Ձայները բաշխուել էր Կ. Կ-ին 1904 թ. Բիւրոյի Ռայոնական ժողովի ներքին կանոնադրութեան բ. կէտի համաձայն, որտեղ ասուած է «Պատգամաւորական ձայնի իրաւունք ունին ստանալ Կ. Կ-ն եւ կոմիտէն»<sup>38</sup>:

Եւ բաժանուած էին ձայները այսպէս.

Ներկայացրին տեղեկագրեր՝ Պարտիզաւանը, Եարայի IV դ. մասը, Թախտը եւ Ք[աղաքի] կ[ոմիտէն]:

Պարտիզաւանի ներկայացուցիչը կարդաց Պարտիզաւանի եւ գիւղերի տեղեկագիրը շեշտելով այն կարեւոր հանգամանքը, որով (նկատուում է) գործը ընդհանրապէս ընկած դրութեան մէջ է գտնուում. պատճառը վերագրելով տեղակալն) կոմիտէի թուլութեանը, որը գաղտնի քողի տակ մնալով՝ ոչինչ չի անում, այլ ամբողջ գործը ծանրաբեռնուած է միայն երկու երիտասարդների վզին, որոնք դժուարանում են բաւարարութիւն տալ տեղական պահանջներին. այս բանը Պ. Տուրբախը<sup>38</sup> եւս հաստատեց: Եարունակեց պատգամաւորը — քանիցս ազատ մարդ ենք պահանջել ուրիշ մի շարք պահանջների հետ, որոնցից ոչ մէկը չի կատարուել եւ մինչեւ այժմ չկայ մէկը, որ մանրամասն կերպով բացատրէ ժողովրդին Հ. Յ. Դ[աշնակցութեան] Մրագիրը: Պ. Հանգոյցը<sup>39</sup> ընդունեց եւ հաստատեց որ այդպէս է, ճիշտ է, եւ բացատրեց՝ որ չնայած քանիցս պահանջել են Բիւրոյից մարդիկ, սակայն կարելի չէ եղել կատարել այդ: Հէնց քաղաքը չունի խօսալու ընդունակ պրոպագանդիստ. շնորհիւ այն հանգամանքի որ մինչեւ այժմ իրանք չունեն դատական վճիռները գործադրող մարմին, ուստի դատարանը եւս թուլացնում է գործը: Կարմիր խաչի նախկին տրամադրութիւնը թուլացել է. հընչակեանների հետ խզուած են բոլոր յարաբերութիւնները, որովհետեւ նոքա դատերի վերաբերմամբ արդարութիւն չէին անում եւ մեղաւորներին պաշտպանում էին. մենք ունէինք հին Գրասիրաց ընկերութիւն, գրքեր, որը յանձնուել են նոր Ս. Մես[րոպ] Գր[ասիրաց] ընկերութեան վարչութեան, որը աւելի անհոգ եւ թույլ է քան նախկինը:

Կարդացուեց Եարայի շրջանի IV դ. մասի տեղեկագիրը. այդտեղ պարզուեց, որ շրջապատող օտար ազգաբնակչութեան պատրաստուելը տեղիք է տուել հայ ազգաբնակչութեանը խնդրել Կ. Կ-ից թուուցիկ խմբեր, որը եւ կատարուեց, յետոյ կազմակերպութեան փոխադրութեան գիծը անցնելով այդ մասից եւ թէ՛ հին ու թէ՛ նոր գործիչները նկատելով, որ շատ կանոնաւոր եւ բարեխիղճ կերպով է կատարուել այդ՝ յայտնեցին այդ մասին պ. Կապարճին մասնաւորապէս եւ տեղի օջակցող երիտասարդութեանը ընդհանրապէս՝ շնորհակալութիւն:

Պ. Ջարմայրը կարդաց Թախտի շրջանի տեղեկագիրը, շեշտելով, որ իւր բռնած վկայականները կնքուած հնչակեաններից եւ յանձնած օտար ազգի մարդկանց, յայտարարուելի գիտութիւն ընդհանուրի: Ասաց որ, եկեղեցական հաշիւները մաքրել է կազմակերպութիւնը, քննելով եւ ազատելով կորստեան ճանապարհից: Այդպիսի բան մենք արել ենք մեր գործունէութեան ընթացքում եւ Եար[այի] շրջանում, նկատեց պ. Հանգոյցը. պ. Ջարմայրը շարունակեց. Ս. Մես[րոպ] Գր[ասիրաց] ընկեր[ութեան] բացած 14 ուսումնարանները շատ լաւ են եւ կանոնաւոր, սակայն որովհետեւ մի քանի ամիս տեւեց որ բացուեցին, եւ ուսուցիչները երբեմն ըզբաղուած էին երեկոյթներով, ուստի ժողովուրդը [մի] քիչ դժգոհացաւ: Նկատուեց որ թուուցիկ խումբը շատ կանոնաւոր է եւ լաւ է ազդում ժողովրդի վրայ. գիւղացիք գոհ են. միայն խնդրուեց Ք[աղաքի] կոմիտէի եւ պ. Կապարճի կողմից պաշտօնապէս յայտարարել ի գիտութիւն ընդհանուրի՝ Բիճի այն 2 գինուորների մասին եղած վճիռը, որով նոքա աքսորուած են Մրգ[աստանից] եւ Կ. Կ-ն սպառնացել է փախած դէպքում մահաւան պատժի ենթարկել նոցա, այն բանի համար, որ նոքա կազմակերպութեան եւ խմբապետի անունով օտարներից անասուններ էին վերցրել:

Որովհետեւ Ք-ի Կ-ի գրաւոր տեղեկագիրը մօտ էր, ուստի ժողովի համաձայնութեամբ թողնուեց հետեւեալ ժողովին կարդալու:

Նախքան հերթական հարցերին գալը պ. Տուրբախ

38.- Յաջորդող տողը ձեռագրին մէջ բաց է ձգուած:  
39.- Հանգոյցը Սիկոյ Աղբալեանն է, իր անունը թէւ Երջ. ժողովի մասնակիցներուն մէջ չի գտնուիր բայց 1904-1905ին զինք կը գտնենք Կարսի մէջ իրու գործավար Ջրաբերդի Կ. Կոմիտէին: Երեւի որպէս այդպիսին, եթէ անշուշտ ուրիշ հանգամանք չէր տրուած իրեն Արեւելեան Բիւրոյի կողմէ, ան ներկայ է ժողովին:

առաջարկեց, որովհետեւ ներկայ Երջ. ժողովի վերայ է ընկնում ապագայ Երջ. ժողովի պատ[գամաւոր] ձայների բաշխումը. [այդ կատարել] 1904 թ. Դեկտեմբերին] կայացած Բիւրոյի Ռայոնական ժողովի որոշման համաձայն:

Ծանօթ խմբ.- Այնքան է, որ Ջրաբերդի Երջ. ժողովի 1905, 19 Օգոստոսի նիստին այս արձանագրութիւնը կիսատ է եւ կանգ կ'առնէ Տուրբախի մէկ առաջարկին վրայ: Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդ. ժողովին յղուած Ջրաբերդի քրթածըրարին մէջ կը գտնուի միեւնոյն նիստին արձանագրութիւնը նոքագրութեան ձեւով, որ բացի դժուար ընթեռնելի ըլլալէն, նոյնպէս անաւարտ է: Աւելին, հոն կը խօսուի յաջորդ օր գումարուելիք նիստի մը մասին, որուն արձանագրութիւնը նոյնպէս գոյութիւն չունի: Այս բոլորով մէկտեղ, կարեւոր գտանք տալ 19 Օգոստոսի նիստին շարունակութիւնը՝ քաղելով զայն վերոյիշեալ սեւագրութենէն:

... Պ. Հանգոյցը պատասխանեց, որ մենք իրաւասու չենք (անընթեռնելի բառ. անելո՞ւ), սակայն ժողովից յետոյ կը մշակենք մի պրոյեկտ [ծրագիր] եւ կ'առաջարկենք առաջիկայ Բիւրոյին՝ Երջ. ժողովի ի հաստատութիւն: Առարկութիւն եղաւ պ. Ա. Թ-ի կողմից, թէ ի՞նչ սկզբունքով են դեկավարուել հրաւիրելով ձայներ. Պ. Հանգոյցը բացատրեց որ ծրագրի 2րդ կէտի համաձայն են վարուել. մի տեսչութիւն, մի ձայն. 500ից մէկին կանչել. որովհետեւ Քաղաքը 2000 վճարողներ ունի, ուստի 4 ձայն կ'ունենայ:

Առհասարակ հարց եղաւ որոշել Կ. Կոմիտէի հայեացքը ապագային որոշ հարցերի վերաբերմամբ եւ Պ. Հանգոյցը պատասխանեց, որ դա Բիւրոյի, Ռայոնական ժողովի գործն է. Նա պիտի առաջուց յայտարարէ Կ. Կոմիտէին քուէարկութեամբ որոշել ձայնի մեծամասնութեամբ, որ թողնել Երջ. ժողովի իրաւասութեան եւ ձայների բաշխման խնդրով պարապելը եւ անցնել տեղեկագրին, որից եւ կը կազմուին հերթական հարցեր.

Եարայի I մի մասի պատգամաւորը առաջարկեց թողնել 18 հարցերի մեծ մասը ձեռքը եւ զբաղուել միայն ամենակարեւոր հարցով. պ. Ա. Թէ՛ նոր ասուեց

որ ապագայ Կ. Կ-ին հայեացք ստեղծելու համար պէտք է շարունակել Կ. Կոմիտէի տեղեկագիրը կարդալ.

Իմ առաջարկը ապագայ Երջ. մեծ ժողով գումարելու [մասին է], բայց եւ այնպէս այժմս լուրջ զբաղուել գտելու հին Կ. Կ-ին եւ տալ միջոց նոր Կ. Կոմիտէին: Պ. Հանգոյցը թէ մենք չպիտի թողնենք մի շրջանի բախտը Կ. Կոմիտէի, որ քանդէ, վերցնէ դատարանները, թուուցիկ խմբերը. հրատապ խնդիրների համար անպատճառ այժմս որոշումն կայացնելու համաձայն Դ-ի ասածին: Համաձայն են այս մտքին եւ պ. Նախագահը եւ պ. Ա. Ա...: Պ. Յ. Ք..., որ կարելի է հաշիւ տեսնել եւ ընտրել, ապա նոր Կ. Կ-ն կարող է յարմար ժամանակի ժողովի հրաւիրել 18, թէ 118 հարց դնել եւ ծեծել, գտել, որոշումն կայացնել: Հարցը քուէարկութեան ենթարկուեց՝ օրակարգի հարցերով զբաղուել, թէ՞ պ. Յ. Ք-ի ասածի համաձայն լինի: 18 ձայնով համաձայնեցին օրակարգով զբաղել եւ ապա հարց դրուեց՝ եթէ Բիւրոյի ներկայացուցիչը չգայ, մենք զբաղենք թէ՛ ոչ. ձայների մեծամասնութիւնը որոշեց, որ վաղը առաւօտ կարող ենք զբաղուել նամանականդ ա՛յն հարցերով: Վաղը առաւօտ մենք ժողով ունենանք թէ՛ ոչ. ամբողջը այ՞ո՞ւ. ձայնի մեծամասնութեամբ ժողովը համաձայն է որ վաղը առաւօտ օրակարգով զբաղինք. ձեռք բարձրացնում են] մեծ մասը համաձայնելով օրակարգին: Վաղը առաւօտ ժամը 10[ին] նոյն տեղ լինի ժողով:

\*  
\*\*

Պարտիզաւան՝ գէնքի մասին պահանջ եւ պ. Հանգոյցից բացատրութիւն:

- Թերթի մասին բացատրուել
- Հ-ի առաւել կողմը, 15 խմբի թէ 48-ի հասցրել.
- Ջարմայր՝ նկատեց կազմերի հող մաքրել.
- Նկատողութիւն Պարտիզաւանի տեղեկագրի մէջ յիշած խօսքին, թէ սրանից 4-5 տարի առաջ աւագակութիւն անողներ
- Գրել պատգամաւորի
- (Մտտիտով գրուած) գինուոր, խաչագողներ, կարմրակցի Եահպագ:

Գ 8.- Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ ՋՐԱԲԵՐՊԻ ՈՒ Կ. ԿՈՍԻՏԵՒՅԿՈ

ԱՌԱՋԱՐԿ

Արդէն Դաշնակցութիւնը մեր շրջանում կատարում է կառավարութեան շատ պաշտօնները — դատական, վերաքննական, որբոց դատարան, լուսաւորութիւն, հողային խնդիրների բաժին եւ այլն. միեւնոյն ժամանակ նա ունի կառավարութեան չափ, եթէ ոչ աւել, հարկադրող ուժ: Այս ուժը կարելի է ժողովուրդի յառաջդիմութեան եւ բարօրութեան ծառայեցնել. այսպէս օրինակ՝ այդ ուժով մենք մտցրել ենք պարտադիր ուսում այն բոլոր գիւղերում, որտեղ դպրոց կայ. եւ եթէ միւս տեղերը չկայ այդ ուսումը — միայն դրամի պակասութիւնից է: Մենք այդ ուժով փոխել ենք հողաբաժնութեան ձեւերը, հարկաբաժնութեան մէջ փոփոխութիւն ենք մտցնում եւ այլն:

Այդ նոյն ուժով մենք ցանկութիւն ունենք կռուելու վաշխառութեան դէմ, բայց ոչ թէ նրանց սարսափի տակ պահելով, այլ հիմնելով ամբար եւ բանկ: Բանկը կը լինի ոչ ընկերական, այլ բարեգործական բնոյթով. ընկերական բանկերից օգտուում է միայն ունեւորը, իսկ բանկի նպատակը մենք համարում ենք չքաւոր ժողովրդին ոտի կանգնեցնելը: Այս բանկից կարող է օգտուել նա, ում արժան կը համարի բանկի դաշնակցական կառավարիչը եւ որի մասին վկայութիւն կը լինի տուած տեղական ենթակումիտէն: Այսպիսով բանկը, ինչպէս նաեւ ամբարը, կը լինեն բարիք անելու համար եւ ոչ շահի ձգտումով — ահա թէ ինչպէս պիտի հասկանալ վերը յիշած «բարեգործական բնոյթ» խօսքը: Փողը բանկից տրուելու է 12 տոկոսով, որից 3-ը գնում է պարտքը գեղջելուն, ուրեմն գիւղացին իրապէս ստանալու է փողը 9%-ով: Նոյն ձեւով եւ ցորենը, սոմարին<sup>41</sup> 4 կոտ, որից 1-ը պարտքը գեղջելուն: Մեր հաշուով, մեր շրջանում հարկաւոր են չորս ամբար եւ չորս բանկ, այս կերպ.

|                |                     |
|----------------|---------------------|
| Թախտի շրջան    | մի ամբար եւ մի բանկ |
| Ճամբորդի շրջան | » » »               |
| Թռչնոց գաւառ   | » » »               |
| Շարայի շրջան   | » » »               |

Իւրաքանչիւր ամբարում ամենաքիչը 100 սոմար մաքուր ցորեն ու գարի եւ իւրաքանչիւր բանկում ամենաքիչը 3.000 ուռբլի: Առիթներ եղել են ժողովուրդի հետ այս մասին մանրամասն խօսելու եւ միայն գոհունակութիւն եւ ուրախութիւն են ունեցել այս միտքը լսելով:

Ամբարի եւ բանկի օգուտները բազմազան են. ահաւասիկ մի քանիսը. - 1) Գիւղացին էժան %-ով [տոկոսով] հաց ու փող է գտնում: 2) Գիւղացին ազատուում է անբարեխիղճ հաշիւներից եւ վերաբերմունքից (օգտուելով նրա տգիտութիւնից եւ անօգնական վիճակից) %-ը

վրայ գալիս սխալ հաշիւներ են անում. պարտքը ստանում են՝ բայց որեւէ պատրուակով մուրհակը չեն տալիս — եւ ապա նորից պահանջում են եւն): 3) Գիւղացին կ'ազատուի ստորնանալուց եւ հարստահարուելուց. մի քանի անգամ պիտի ստորնանայ՝ մի սոմար հաց %-ով [տոկոսով] առնելու համար, իսկ առնելուց յետոյ պարտատիրոջ համար պիտի ծառայութիւններ անի, ի հարկէ՝ ձրի եւ առհասարակ ենթակայ լինի նրա ուժին ու կամքին: Ինչ խօսք, որ այս ամէնի ոչնչացումը բարձրացնում է ժողովուրդի պատուասիրութիւնը՝ ուրեմն եւ ոգին: 4) Կազմակերպութեան ուժը եւ բարոյական հմայքը կ'ամրանայ. միայն դպրոցները ահագին երախտագիտութիւն են առաջ բերել դէպի կազմակերպութիւնը, որ մտածում է չքաւորների մասին — ինչ խօսք՝ որ ամբարն ու բանկը շատ աւելի մեծ սիրով կը կապեն ժողովուրդին մեզ հետ:

Այժմ հարց է ծագում, թէ որտեղից գտնենք 12.000 ու. փող եւ 400 սոմար ցորեն: Այդ առիթով մենք ունենք մի խնդիր եւ մի առաջարկ: Առաջարկը հետեւեալն է: Սեպտեմբերի Շրջանային ժողովը որոշել էր մեր եկեղեցական գումարները գանձել եւ մի ապահով տեղ պահել — մինչեւ տեսնենք ինչպէս է վերջանում եկեղեցական կալուածների խնդիրը: Այդ գործում մի իրաւական կողմ կայ. այդ այն է, որ եկեղեցական գումարները մեզ չեն պատկանում, այլ Եկեղեցուն, ուստի այդ գումարներին հսկելու եւ գործադրելու համար պէտք էր առնել վեհապառ Կաթողիկոսի համաձայնութիւնը: Մենք առաջարկում ենք Արեւելեան Բիւրոյին միջնորդել վեհապառ Կաթողիկոսի մօտ, որ մեզ թոյլ տայ գումարները գանձել եւ գործադրել բանկերի համար իբր դրամագրութիւն\* իսկ այդ դրամագրութիւնը տուած շահից դուրս գալով 4 բանկային վերահսկողների ռոճիկը եւ միւս ծախսերը — միւսը [մնացեալը] յանձնել Ճեմարանի<sup>42</sup> գոյութիւնը ապահովելու:

Եկեղեցիներն ունեն նաեւ ցորեն ու գարի. հաւաքելով եղածը, որ շատ չէ ինչպէս երեւում է մեր ցուցակներից, դրանով դնել ամբարների հիմքը: Այստեղ ահա մենք խնդրում ենք Բիւրոյից թոյլ տալ մեզ այս եկող

\*) Միայն 20 գիւղ մեր շրջանում ունի 5-8.000 ու. փող:

40.- Անթուակիի եւ առանց ստորագրութեան այս նամակին ձեռագիրը կը պատկանի Ս. Աղբալեանին, որ ինչպէս նախապէս ըսուեցաւ 1904-1905 տարիներում գործավարի հանգամանքով կը գտնուէր Կարս: Բովանդակութենէն եւս կարելի է հետեւեցնել որ 1905 թ.ին գրուած նամակ է:

41.- Մէլ սոմարը կը կշռէր 16 քիւօ եւ 380 կրամ:

42.- Խօսքը կը վերաբերի Եջմիածնի Գեորգեան հոգեւոր ճեմարանին:

Գ 9.- ԲԱՆԱՉԵՒԵՐ<sup>44</sup>

Կովկասեան խնդիր.-

Ընդունում ենք դաշնակից (Ֆեդերատիւ)<sup>45</sup> Կովկասի գաղափարը: Դաշնակից Կովկասը իբրեւ մի ամբողջութիւն պիտի մտնի ռուսական դաշնակից պետութեան մէջ:

Միջոց.-

Թերթ (կովկասեան) եւ բերանացի քարոզ: Ժողովուրդի գինումը, իր շահերը եւ իրաւունքները՝ իբրեւ ազգ՝ պաշտպանելու եւ Ռուսաստանում սահմանադրական կարգեր ստեղծելուն նպաստելու: Տեւոր — այն բոլոր պաշտօնեաներին, որոնք առանձնապէս հետամուտ են հայ ազգի եւ յեղափոխական գործի յաջողութեանը վնասելու\*:

Համերաշխ գործունէութիւն այն բոլոր տարրերի եւ կուսակցութեանց հետ, որոնք ընդունում են Կովկասի դաշնակցութեան գաղափարը:

Քաղաքական պայմաններ

Ռուս-եպպոնական պատերազմը նպաստաւոր չէ մեր դատին. ուստի յեղափոխական կտրուկ ձեռնարկները պիտի թողնել եւ բոլոր ուժը գործադրել նախապատրաստական ձեռնարկների վրայ մինչեւ պատերազմի վախճանը: Կովկասի համար՝ ընդհակառակն՝ այս պատերազմը խիստ բարերար նշանակութիւն ունի, վերագրեալ գաղափարները վերը յիշած միջոցներով տարածելու ուժգնապէս:

Դրամական միջոցներ

Ազգային տուրք. ամէն չափահաս հայ անհատից (21 տ. վեր) առանց սեռի խտրութեան՝ մարդագլուխ տարեկան 20 կ[ոպէկ]: — Խաղատոմսեր աւելի կանոնաւոր եւ ոչ աւել մէկ ուռբլի տոմսակը: — Մարկաներ<sup>47</sup> 1 կո-

\*) Նաեւ յայտնի ջանքէզարներին<sup>46</sup> եւ մեր սահմանն անցնող քուրդ բէգերին:

43.- Ռուսերէն՝ գլաւ, գլաւնի. կը նշանակէ գիւղապետ, քաղաքապետ, տանուտէր:

44.- Առանց խորագրի, ստորագրութեան եւ թուականի գրութիւն, որ կցուած է նախորդ առաջարկ-նամակին եւ անոր պէս ուղղուած վստահաբար Արեւելեան Բիւրոյին:

45.- Ըսել կ'ուզէ դաշնակցային Կովկաս: Բանաձեւը իր անբողոքեան մէջ պիտի որդեգրուէր 4րդ Ընդ. ժողովին կողմէ (սկզբնական մտածումը կու գար արդէն 1905ի «Կովկասեան Նախագիծ»էն) եւ այնուհետեւ մաս պիտի կազմէր Գ. Յ. Դ. ծրագրին:

46.- Թուրք-թաթար անօրէններ, չէթներ:

47.- Դրոշմանիշեր, նամականիշեր:

1905 թ. ամառուայ հանգանակութիւնը գիւղերում՝ յատկացնել ամբարներին: Յուսով ենք, որ Բիւրոն չի մերժի մեր առաջարկը ի նկատի առնելով մեր ժողովուրդի նեղ կացութիւնը եւ տեղական գործի ապագան ու յաջողութիւնը:

12.000 ու. 9%-ով կը բերի տարեկան 1.080 ու. — 600 սոմար ցորենը եւ գարին (եթէ հանգանակութիւնը թոյլ տաք, այն ժամանակ ամէն ամբար 150-ական սոմար կը պահուի) — կը բերի 1.800 կոտ ցորեն ու գարի, որ կ'արժենայ ամենաքիչը 1.350 ու. ուրեմն բանկերից եւ ամբարներից տարեկան ամենաքիչը կը ստանանք 2.430 ու.: Չորս ամբարի վարձը տարեկան 40 ու.: Չորս վերահսկիչի վարձը՝ տարեկան 400-ով = 1.600 ու.: Իւրաքանչիւր վերահսկիչ կ'ունենայ մի գինուոր — ամսական 3 ու. 4 հոգին = 144 ու.: Նրանց ձիերը կ'ապրին գիւղերի հաշուով: Ուրեմն մշտական ծախս լինելու է 1.600 + 144 + 40 = 1.784. դուրս գալով մինիմալ մուտքից՝ 2.430 — 1.784 = 646. այս գումարը ամէն տարի կը հասնի էջմիածին, մինչդեռ մինչեւ այսօր մի կոպէկ չի գնացել — այլ մտել է երէցիփոխների եւ ընկերների փորը:

Այս գործից մենք բարոյական մեծ շահ ունենք, ինչպէս վերն էլ յիշեցինք. բայց ունենք եւ մի ուրիշ շահ. մենք կարող ենք այդպիսով մեր շրջանը փոխադրել 4 ուսում առած մարդ եւ հաստատել գիւղերում՝ այսպիսով իրապէս եւ խելացի կերպով կը վճռենք այն հին հարցը թէ «ինտելիգենտները թող գաւառ գնան»: Այդ 4 վերահսկիչները մեծ գործ չեն ունենալու. նրանք իրանց ժամանակը կը տան յեղափոխական գործին, հանդիսանալով տեսուչներ այդ չորս շրջանի — այսպիսով կազմակերպութիւնը ձեռք կը բերի չորս լաւ՝ բանիմաց տեսուչ եւ կ'ազատի նրանց վարձից. մինչդեռ մեր նախահաշուով նրանց վրայ ծախսելու ենք 840 ու. ամսական 10 ու[ռբլի] եթէ հոգու. կարող էք երեւակայել թէ ինչ մարդիկ կը լինեն դրանք եւ ինչ գործ կարելի է նրանցով առաջ տանել:

Խնդրում ենք միշտ ի նկատի ունենալ, որ մեր շրջանում Դաշնակցութիւնը գիւղերը կազմակերպել է այնպէս լաւ, որ սա մի չճանաչուած ինքնավարութիւն է. մենք ունենք երդուեալ դատաւորներ, ունենք դատական քննիչներ, ունենք շրջանային դատարան եւ դատական պալատ: Հարկաւ այդ բոլորը դեռ սաղմնային վիճակում է, բայց այդ չէ կարելուրը: Քանի որ գործն այս ծաւալն ունի, այս ուժը, այս կազմակերպութիւնը եւ այս բնոյթը, քանի որ մենք լիովին չէքքաջրել ենք բոլոր տանուտէրների եւ գլաւներին<sup>43</sup> ուժը, դատարկել ենք պետական դատարանները եւ կաշառակեր պաշտօնեաների գրպանները — մեզ հարկաւոր է զարգացած ու խելահաս մարդիկ գործի հրաւիրել եւ ամուր ձեռքով հիմք դնել ժողովուրդի նիւթական բարօրութեան եւ բարոյական վերակազմութեան գործին:

Յուսով ենք որ Բիւրոն չի մերժել մեր առաջարկը եւ կեղեցական գումարների համար եւ խնդիրը՝ այս եկող տարուայ հանգանակութեան համար:

պէկանոց (յարմար է դատուում ամբողջ Դաշնակցութեան մուտքը գանձել մարկաներով 1, 2, 3, 5, 10, 20 կոպէկնոց եւ 1, 3, 5 եւ 10 ուրբանոց): — Պարտաւորիչ Հանգանակութիւն բոլոր ընտանեկան Հանդէսներում — պսակ, նշանդրէք, թաղում, կնունք, անուանակոչութիւն:

Ծախքեր

Մեր շրջանի բացառիկ դրուութիւնը նկատի առնելով առաջարկում ենք Ընդհ. Ժողովում տեղական ծախքերի համար որոշած %ը մեծացնել:

Յնչակեաններ

Գործի յաջողութեան համար անհրաժեշտ է, որ նրանք չլինեն, որովհետեւ Հանդիսանում են իբր անսկզբունք եւ անկարգ ջլատողներ եւ գործը խանգարողներ: Հարկաւոր է նրանց ուժը ջլատել խաղաղ ճանապարհով: 1) բարձրացնել Դաշնակցութեան համալը օրինաւոր, խելացի եւ օգտակար ձեռնարկներով: 2) Պրոպագանդ նրանց վնասակարութեան եւ անգործութեան դէմ: 3) Դպրոցի, ամբարի եւ բանկերի միջոցով ստիպել, որ ժողովուրդը յարի Դաշնակցութեան:

(Հնչակ. երիտասարդների [դպրոցական] վարձը պարտաւորեցնելով որ հնչ. տեղական մարմինը տայ):

Կազմակերպութիւն

Վարչութիւն. 1) Ենթակոմիտէ. 2) Տեսուչ (5-10 գիւղի). 3) Կ. Կոմիտէ:

Դատավարութիւն. 1) Ենթակոմիտէ. 2) Երդուեալ դատարան. 3) Դատական մարմին (քաղաքում):

Կարմիր խաչ

Իբր դաշնակցական մասնախմբեր՝ ներքուստ ինքնուրոյն

Գրասիրաց ընկերութիւն

4 պրոպագանդիստ

1 հաշուետեա

1 քննիչ

1 Կ. Կոմիտէի ազատ անդամ:

Այս ամէնը տեղական գործերի համար՝ մշտապէս:

Շտաբ<sup>48</sup>

Գործը պահանջում է, որ ներկայումս ռազմական գործը վարչականից բաժանուի: Ռազմականը յանձնուրի մի յատուկ մարմին — ընտրուած Ընդհանուր ժողովից, որոնք լինելու են մասնագէտ անձեր. սրանք կազմելու են կուռի եւ ապստամբութեան ծրագիր եւ կազմակերպելու են զէնքի գնման, փոխադրութեան գործը. նրանք պէտք է անհատ մարդիկ լինեն եւ 5 հոգի: Բոլոր Կ. Կոմիտէները պարտաւոր են գինուորական գործերում օժանդակել շտաբին:

Ջանքագարներ<sup>49</sup>

Գոյութիւն ունին, բայց անկերպարան: Ուսումնասիրուում են շրջաբերականով [sic]:

Բռնի միջոցներ դրամ հաւաքելու.

ժխտում ենք. փոխարէնը՝ զօրեղացնել պրոպագանդը եւ կազմակերպութեան գործը. մարդիկ ցրել ամէն կողմ եւ ամէն խաւերում:

Պահապան.

Անյարմար, չարիք են դառնում:

Ընտրութիւն, հաշիւ.

Յանկալի է, որ բոլոր դաշնակցական մարմինները միաժամանակ հաշիւ փակեն եւ ընտրութիւն անեն. մեզ համար միևնոյն է թէ երբ կը լինի: Խաղաղ ժամանակ Հնարաւոր է հաշիւները ամիսը մէկ ներկայացնել:

Դատարան

Անհրաժեշտ է դատեր վերցնելը: 1) Ժողովուրդին կապելու գործի հետ. 2) ժողովուրդը պաշտպանուում է կաշառակերութիւնից եւ գոհանում իրաւապէս. 3) դրամական մուտքը աւելացնելու համար. 4) ինքնավարութեան եւ ժողովրդական դատի վարժեցնելու համար:

Գրասիրաց ԸՈՍ.

Պէտք է դաշնակցական մարմին լինի ամէն տեղ, որ դրանով փոխադարձաբար թէ մեր եւ թէ Գրասիրաց ընկերութեան վարկը բարձրանայ: Դպրոցները պէտք է բացուեն Դաշնակցութեան անունից — ինչպէս որ լինում է:

Եկ[ամուտ]-դրամներ. Յուցակագրուում են. եւ մասամբ ցուցակագրուած են. տես մեր առաջարկը<sup>49</sup>:

Պահանջներ եւ առաջարկներ.

1) Հարստացնել յեղափոխական գրականութիւնը ինքնուրոյն եւ թարգմանական երկերով:

2) Կանոնաւորել «Դրօշակ»ի բաշխումը եւ ներմուծումը:

3) Կովկասեան շաբաթաթերթ

4) Մ[եծ] Բ[աղաք]-ում<sup>50</sup> հիմնել մի յատուկ խումբ ձեռնհաս անձերից ամիսը առնուազն մի անգամ մի թուղթիկ խմբագրելու եւ հրատարակելու:

\*) Բոլոր կազմակերպութիւնները քայքայման վտանգի կ'ենթարկուեն առանց թերթի եւ գրականութեան:

48.- Դեկավար մարմին, դեկավարող կեդրոն:

49.- Կակնարկէ Գախորդ Արեւելեան Բիւրոյին ուղղուած Գամակիւն մէջ մանրամասնօրէն բացատրուած դրամատուն եւ հացահատիկի ամբարներ ստեղծելու ծրագրին:

Գ 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՋՐԱԲԵՐՂԻ ԵՒ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ 1906 Թ.\*

Ջրաբերղի Հ. Յ. Դաշնակցութիւնը այս վերջին 1905-1906 թ. նախանձեղի դրութիւնն չի ներկայացնում: Ջրաբերղի այդ դրութիւնը առանձնապէս ցաւալի է այն յեղափոխականների համար որոնք ծանօթ էին այդ շրջանի նախորդ տարիների անցեալին:

Ջրաբերղը Դաշնակցութեան Սարուստանի<sup>50</sup> այն աչքի ընկնող շրջաններից էր, որ գտնուելով սահմանագլխի վրայ եւ ծառայելով իբրեւ կամուրջ երկրի հետ կենդանի յարաբերութիւն պահպանելու համար, ունէր մի առանձին յեղափոխական դիրք եւ գոյն, որը կարող էր նախանձեղի եւ օրինակելի երեւնալ մեր շատ շրջաններին: Սակայն ներկայումս Ջրաբերղը այդպիսի օրինակ ծառայել չի կարող: Ջրաբերղում Դաշնակցութեան տաք ոգին ընկած է եւ դա ունի իւր պատմական եւ ներքին պատճառները:

Անհրաժեշտ կարիք էր զգացուում այս ամենամանհրաժեշտ պահում վերականգնել եւ վերանորոգել ազգային այդ կուսակցութիւնը, որի ծնունդը եւ զարգացումը, ինչպէս ամէն տեղ, նոյնպէս եւ մեզ մօտ խել է ընկերներից շատ ջանք եւ էնէրգիա. սակայն խոչընդոտները ու դժուարութիւնները ոչ թէ մի արտաքին զօրեղ ու մրցող ուժից էին առաջ գալիս, այլ իրեն Դաշնակցութեան մէջ ծնունդ առած երեւոյթներ էին, որոնք ամբողջապէս ներքին բնաւորութիւն էին կրում:

I.- Կ. Կոմիտէները անշուշտ առաջին տեղը պէտք է բռնէին ու առանձին ջանք պէտք է գործադրէին այդ վերանորոգութեան նկատմամբ. սակայն դժբախտ իրողութիւնը այն է, որ ամբողջ 1905-1906 թուականների վերջերից սկսած ոչ մի ուժեղ, ու գիտակից ու գործին նուիրուած կազմ չէ եղել, որ կարողանար իւր հեղինակութեան կնիքը դնել շրջանի վրայ եւ ամէնքիս համար ցանկալի վերածնութիւն առաջացնէր: Անուշադրութեան չպէտք է թողնել նաեւ այն Հանգամանքը, որ ցայսօր ոչ մի կանոնաւոր Շրջանային ժողով Դաշնակցութեան Մրազրի ու ներքին կազմակերպչական կանոններին ու սրան համաձայն չի գումարուել, որ հեղինակութիւն ունենար շրջանի շատ անհրաժեշտ կարիքների մասին մտածելու, որոշ հրահանգներ ու ձեռնարկութիւններ սկսէր, այլ այդ ժողովները եղել են ցանկացողների, հրաւիրուած մարդկանց ներկայութեամբ, ուրեմն եւ անիրաւունք: Այս ընդհանուր լքման պատճառով չեն եղել նաեւ օրինաւոր ընտրուած կենտրոնական Կոմիտէի կազմեր, այլ եղել են նշանակովի, ժամանակաւոր, որոնք եւ շատ անգամ իրենց անձնական արժա-

նաւորութիւններով Հանդերձ չեն ներկայացրել առանձին հեղինակութիւն, որովհետեւ ընտրուած չեն եղել, այլ նշանակովի: Այս է եղել ուրեմն իսկական պատճառներից մէկը, որ Կ. Կոմիտէն չի վայելել հարկաւոր եղած վարկն ու հեղինակութիւնը, չէր կարող հետեւապէս իւր ձայնը ուժեղ կերպով բարձրացնել եւ գործադրել յօգուտ միւս իրեն ենթարկուող մարմինների եւ ամբողջ յեղափոխական ոգուն, որը քանի գնալով աւելի ու աւելի թուլանում էր ու ընկնում:

Վարչական մարմինների հեղինակութիւնն չունենալու նկատմամբ կայ նաեւ մի ուրիշ նոյնչափ զօրեղ պատճառ, որ մատնել անուշադրութեան չի կարելի: Այդ պատճառը այն է, որ Կ. Կոմիտէի կազմի մէջ չեն եղել նոյն Համոզմունքներով ու աշխարհահայեացքներով մարդիկ: Այս Համոզմունքը շատ մեծ արգելք է Հանդիսացել Համերաշխ, շիտակ ու յարատեւ գործունէութեան: Պատահել են դէպքեր, եւ այդ շատ յաճախ, որ ընկերներից շատերը մի քանի օր, կամ մի քանի ամիս յետոյ տեսնելով իրենց կարծիքների ու հայեացքների ռատիկալ<sup>51</sup> տարբերութիւնը, հրաժարական են ներկայացրել ու Կ. Կոմիտէն ոյժ ու հեղինակութիւն չի ներկայացրել իր թոյլ կազմով: Թողնենք դեռ այն, որ նման պատճառներով մեզանում Կ. Կոմիտէի կազմը ներկայացրել է իրմով մի անհատ, որով առաջ է եկել ոչ թէ խմբական, այլ անհատական ապակենտրոնացում, հակառակ մեր Մրազրի, մեր կանոնադրութեան:

II.- Սակայն Կ. Կոմիտէի թուլութիւնը միակ պատճառը չէր Դաշնակցութեան այս անկման: Այս տեսակետով մեր շրջանը մի ուրիշ աւելի կարեւոր երկրորդ պատճառ ունէր, այդ պրոպագանդի կամ քարոզի բացակայութիւնն էր: Ամէն մի գիտակից յեղափոխականի համար պարզ է, որ պրոպագանդան ամենալաւ եւ ամենակարեւոր միջոցն է՝ որեւէ յեղափոխական կուսակցութիւն առաջ բերելու եւ պահպանելու համար: Ջրաբերղում այդ բանը բացակայում էր: Ջրաբերղը մեր

\*) Այս տեղեկագրին կցուած են նաեւ Ջրաբերղի 1906 թ., Նոյեմբերի 28-30 ժողովների արձանագրութիւնները, որ իրենց մէջ ամփոփում են շրջանի պատգամաւորների տուած որոշումները Դաշնակցութեան IV Ընդհանուր ժողովին առթիւ Արեւելեան Բիւրոյի ուղարկած եւ առաջադրած հարցերի նկատմամբ:

50.- Դիւ. Կովկասի եւ Ռուսաստանի կուս. ծածկանունը: 51.- Արմատական, հիմնական:



այն շրջաններին է որի համար կարելի է ասել որ ամբողջապես դաշնակցական էր, շատ քիչ բացառություններով, ի հարկէ: Մանաւանդ այն շրջաններում, երբ Դաշնակցութիւնը օրհասական կռիւ էր մղում ուսումը բիւրոկրատ կառավարութեան դէմ կալուածների գրաւման առթիւ, կամ սովորական ռեֆորմի դէմ հայրենիքի բարեկարգման ու ազգային պատուի վերականգնման առթիւ, նորա դեռուշակը ծածանում էր աւելի գրաւիչ, աւելի յաղթական կերպով, եւ մեր ժողովուրդը որ մասամբ սիրում է հիֆեկտուրը՝ տեսարաններ, ահագին մասսայով դիմեց Դաշնակցութեան գիրկը եւ Դաշնակցութիւնը ամէնքին առաւ իր հովանու տակ: այս ցաւը ընդհանուր եղաւ մեր՝ Սարուստանի բոլոր ռալոնների համար: Սրանով մի տեսակ վերացաւ դաշնակցական լինելու արժանաւոր ցեղը եւ կուսակցութիւնը դառնալով ընդհանուրի սեփականութիւն՝ նրա մէջ մտան շատ անվստահելի եւ Դաշնակցութեան ոգուն հակառակ մարդիկ: Այսպիսի մի հակայական բազա իր ձեռքում պահելու համար Դաշնակցութեանը աջակցել կարող էր միայն օրինաւոր եւ սխտեմատիկ կերպով առաջ տարուող պրոպագանդան, որ կը մտցնէր այդ տարրի մէջ յեղափոխական գիտակից ոգին, յեղափոխական հայեցակէտը՝ դաշնակցական գոյնով: Մենք առիթից օգտուել չկարողացանք: Ջրաբերդը չունէր այնքան գիտակից պրոպագանդիստներ, որոնք սիւն լինէին Դաշնակցութեան յարատեւութեան: Այս երեւոյթը մեր ամենացաւոտ կողմերէն է ընդհանրապէս:

III.- Դաշնակցութիւնը Ջրաբերդում ունենալով մի այդպիսի ահագին բազա, մի անսահման մասսա, շրջանում շատ վտանգաւոր դիրք ստացաւ: Նա դառաւ աւելի մի պետութիւն, որ իւր համար ունէր գիւղեր եւ քաղաքներ. ծծկեր երեխայից մինչեւ մահճում տառապող ծերունին դաշնակցականներ էին: Մեր ամսավճարների գանձումը դառաւ մի տեսակ պետական հարկերի հաւաքումն: Սրանից առաջ եկաւ այն անհետեւութիւնը, որ Դաշնակցութիւնը դառնալով ամէն կարգի ու ամէն հասակի մարդկանց սեփականութիւն, դուրս եկաւ իւր անլեզալ՝ գրութիւնից եւ դարձաւ մի յայտնի եւ ափաշկարայ կուսակցութիւն. վերացաւ մեր ծրագրում նախատեսուած խիստ դիսցիպլինան եւ գաղտնապահութիւնը:

Ջրաբերդի ներկայ կազմի բուռն ցանկութիւնն է առանձին հրահանգներ մշակել այս մասին եւ պրոպագանդիստներ պատրաստել:

IV.- Դատավարութիւնը քիչ չնպաստեց ընդհանուր լքման:

Շատերին անհաւատալի է թւում այս երեւոյթը, որովհետեւ մինչեւ օրս էլ մեր գաղթականութեան մէջ կան պահանջողներ, որ Դաշնակցութիւնը իւր ուսերի վրայ վերցնի դատավարութիւնը: Սակայն մեզ յայտնի է մեր ցաւը: Դատավարութիւնը մի այնպիսի ծանր եւ

պատասխանատու գործ է, որի համար պետութիւնների մէջ սահմանուած են հազար ու մի տեսակ ատենաներ, իրենց հազար ու մի մարմիններով ու տասնեակ հատորներ մշակուած օրէնքի կոտէկաներով: Մենք չունենք դրանից եւ ոչ մէկը. դատավարութիւնը Ջրաբերդի Կ. Կոմիտէն իր վրայ վերցնելով, ձեռքի տակ չունենալով նախ օրէնքներ, ապա ձեռնհաս մասնագէտ անհատներ եւ մարմիններ, նրանք իրենց շրջանային կոմիտէներով եւ ենթակոմիտէներով ամբողջովին կլանուեցին այդ գործով, մինչդեռ իսկական յեղափոխութիւնը մնաց երկրորդական, երրորդական պլանի վրայ:

Դաշնակցութիւնը իւր այս ուղղութեամբ դառաւ մի տեսակ կառավարութիւն եւ ոչ թէ մի քաղաքական պարտիա: Նա իր անձեռնհաս մարդկանց միջոցաւ ծանր դատեր տեսաւ, դժգոհների շարքերը աւելացրեց եւ ընդհանուր լքման ու վհատութեան սկիզբը դրեց: Սրա վրայ պէտք է աւելացնել Կ. Կոմիտէի յաճախակի լուծումները, անգործունէութիւնը, ժամանակաւոր փոփոխութիւնները, հաշուետուութեան բացարձակ բացակայութիւնը, այն ժամանակ մեզ համար պարզ կը լինի այդ լքման եւ վհատութեան պատճառները: Այս երեւոյթները առաջ բերին կոմիտէների հեղինակութեան եւ նոցա նկատմամբ տարածուած վստահութեան բացակայութիւնը. եւ կոմիտէները ոչ ժամանակ ունէին իրենց կարճատեւ պաշտօնավարութեամբ եւ ոչ իսկ հնարաւորութիւն:

V.- Ընդհանուր վհատութեան եւ լքման պակաս չէ նպաստել նաեւ Ջրաբերդում ապրող գաղթականների հարցը: Մեր շրջանը կարելի է ասել միակ շրջանն է, որ ամէնից շատ զբաղուած է այդ հարցով: Մօտ 15.000 գաղթականներ պատասպարուել են մեր Կ. Կոմիտէութեան սահմաններում: Նրանք գուրկ են եղել տնից, հողից, ստացուածքից եւ առանձին սեփականութիւնից, իրենց ահագին հոգսերով ծանրացել են մեր աղքատ գիւղացիների վրայ: Այն գիւղը որ ունի 40 տուն հողաբաժին, ներկայումս ստիպուած է իր սակաւ սահմաններում սնուցանել 60-70 ընտանիք, շատ պարզ է որ դժգոհութիւններ եւ խռովութիւններ շարունակ տեղի կարող էին ունենալ: Թողնելով այն որ գաղթականներից շատերը, լինելով բախտախնդիր մարդիկ, դաշնակցական զինուորի անուան տակ անասելի բռնութիւններ եւ հարստահարութիւններ են կատարել շրջանում: Դրանով պատճառ են դառել ընդհանուր դժգոհութեան դէպի մեր տաճկահայ եղբայրները, որոնք տեղաւորուել են առանց այն էլ աղքատ ու սակաւահող գիւղացիների կողմէն: Եղել են դէպքեր, ուր դժգոհութիւնը այնքան սուր կերպարանք է ստացել որ տեղի են ունեցել սուր ընդհա-

րումներ եւ անախորժ դէպքեր: Այս չարիքը մի փորձութեան սուր է եղել որ գուցէ ընդմիջող կախուած կը մնայ Ջրաբերդի գլխին եւ շատ տխուր հետեւանքների կը հասցնի, եթէ նախօրոք դրա մասին լուրջ հրահանգներ չմշակուին ու չգործադրուին: Սա արդէն մի երեւոյթ է որ անմիջապէս կապ ունի մեր շրջանի ժողովրդի տնտեսապէս քայքայման հետ, որ իւր հետ կապուած ունի ընդհանուր անտարբերութիւն եւ լքումն դէպի ազատութեան, դէպի վերածնութեան սուրբ գործը:

VI.- Դաշնակցութեան ջլատման գործում պակաս չնպաստեց նաեւ «կովկասեան Գործունէութեան Նախագի» սխալ, անտակտ եւ յեղափոխականին յատուկ հեռատեսութեամբ չգործադրուելը: Պրոֆեսորնալ միութիւնների, բանուորական խնդրի շուրջը պատող հրահանգները կարելի էր խելօք եւ կանոնաւոր տանել ու հասարակութեան մէջ անջատում եւ վիչ չբանալ:

Դաշնակցութիւնը, որ ամէն մի շրջանում եւ մասնաւորապէս Ջրաբերդում տիրապետող էր եւ ճանաչուած էր իբրեւ ազգային ընդհանուր շարժման կուսակցութիւն, մեր նախորդների անտակտ գործունէութեան [բերումով] կորցրեց այդ հմայքը եւ դարձաւ միայն մի քանի անհատների սեփականութիւն, որոնք իրանցից դուրս ոչինչ չէին ճանաչում: Ընդունելով հանդերձ կովկասեան գործունէութեան նախագիծը իւր ամբողջութեամբ, մենք կարծում ենք որ դրա գործադրութեան համար աւելի լուրջ եւ խելացի տակտիկ է հարկաւոր, որի համար աւելորդ չէր լինի, որ Ընդհանուր ժողովը ընդհանուր հրահանգներ մշակի:

Սրան կարելի է կցել նաեւ այն բազմաթիւ բռնութիւնները, որոնք կամ դիտաւորեալ եւ կամ անտեղի թիրիմացութիւնների արդիւնք լինելով շատերին վհատեցրին եւ բաժանեցին մեր դրօշից: Բուրժուական դասակարգը չհաշուելով, մեր դրօշակի տակից դուրս եկան նաեւ այնպիսի անհատներ որոնք մեր շարքերում պատուաւոր տեղ կարող էին գրաւել: Այս երեւոյթը մանաւանդ Ջրաբերդի կենտրոնումն է աչքի ընկնում:

VII.- Պակաս վհատութեան պատճառ չէ եղել նաեւ մեր Կ. Կոմիտէների անհետեւողութիւնը: Հիմք ունենալով Դաշնակցութեան այն ընդհանուր սկզբունքը, որ Կ. Կոմիտէի մարմինները ղեկավարուելու են ապակենտրոնացման ոգով, մենք բազմաթիւ սխալների մէջ ենք ընկել եւ այդ ոչ այն պատճառով որ ապակենտրոնացումը մենք սխալ ենք հասկացել եւ ծայրայեղութեան հասցրել: Մեր Կ. Կոմիտէն այնքան ամփոփուած է իր սահմաններում եւ այնքան խորասուզուած իւր շրջանային գործերով, որ ոչ մի տեղեկութիւն եւ կենդանի յարաբերութիւն չունի հարեւան Կ. Կոմիտէների հետ: Մէկի մի սկզբունքային որոշումը անյայտ եւ անլուր է մնում միւսների համար: Այս է պատճառը որ մի շրջանից իւր անկարգութեան եւ գեղձումների պատճառով աքսորուած անձնաւորութիւնը, հիւրընկալուած եւ պաշտօն է

գտնում մի ուրիշ շրջանում. յանցանքը, որտեղ էլ կատարուի իբրեւ յանցանք էլ կը ճանաչուի. սակայն մեզանում, տարբեր շրջաններում՝ պատօր փոխարէն պատուի են արժանանում: Ասել թէ սա փոքր բան է, սխալ կը լինի: Սա անհետաւորականութիւն է, որ մեզանում շատ վտանգաւոր եւ վնասակար արդիւնքներ է տուել, որից մինչեւ օրս մենք ազատ չենք: Մեր կուսակցութեան գտնումն ու բիւրեղացումը այս տեսակէտով եւ անհրաժեշտ ենք համարում: Տալով սոյն կարծիքները Դաշնակցութեան դրութեան մասին Ջրաբերդում, աւելորդ չենք համարում շեշտել, որ այս բոլորի հետ միասին ինքնապաշտպանութեան առթիւ բազմաթիւ զինուորների ասպարէզ տալը պակաս վնասակար ազդեցութիւն չունեցաւ գործի յառաջադիմութեան վրայ: Մենք զինուորների կարիք էինք զգում եւ մեր դրօշակի տակ էինք հաւաքում անխտիր ամէնքին, ով այդ նպատակով ծառայելու ցանկութիւն էր արտայայտում: Եւ դրա հետեւանքը այն էր լինում որ ազնիւ, անձնագոր, մաքուր յեղափոխական ոգով տոգորուած զինուորի մօտ կանգնած էր լինում նաեւ բախտախնդիր, անկարգ, տգէտ զինուոր, որ տեղն եկած դէպքում չէր դանդաղում բռնութիւններ ու ամէն տեսակ անկարգութիւններ գործ դնել աղքատ ժողովրդի եւ մանաւանդ գիւղացու վրայ: Բռնութեան եւ բռնաբարութեան դէպքեր մեզանում շատ են պատահել, ու ինչ խօսք որ տգէտ ժողովրդի կողմից կազմակերպութեան են վերագրուել եւ անվստահութիւն ու վհատութիւն առաջ բերել: Նկարագրելով վերոյիշեալ պատճառները Կ. Կոմիտէն այս պատճառները համարում է մեր ամենացաւոտ կողմերից եւ առաջադրում է Դաշնակցութեան Ընդհանուր ժողովին լուրջ եւ հետեւողական քննութեան ենթարկել եւ մեր վէճերը բուժելու համար փորկարար հնարներ որոնել\*:

Ընկերներ եւ անդամք Կ. Կոմիտէի



Ա. ԱՐԱՄԵԱՆ  
Խ. ՀԱՅԿՈՒՆԻ  
ԽԱՆՁԱԴԷ  
ՄՏՐԱԿ  
ԳԱՍՊ

\*) Սոյն տեղեկագիրը Կ. Կոմիտէի որոշմամբ եւ յանձնարարութեամբ կազմեց ընկեր խանգաղէն, որ եւ ընթերցումից յետոյ վաւերացուեց Կ. Կոմիտէի ստորագրութեամբ:

52.- Տպաւորիչ:  
53.- Ոչ օրինական, գաղտնի:  
54.- Օրինագիրը, օրէնքներու ժողովածոյ:

### Գ 2.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ [ՇՐՋ. ԺՈՂՈՎԻ]

#### I Նիստ

Ջրաբերդի շրջանի կողմից Հ. Յ. Դ. առաջիկայ IV Ընդհանուր ժողովին մասնակցելու համար մի պատգամաւոր ընտրելու նպատակով հաւաքուած դաշնակցական պատուիրակների ժողովի առաջին նիստը տեղի ունեցաւ Ջրաբերդում, 908 թ. Նոյեմբերի 28-ի երեկոյեան:

Ժողովականների խնդրանք ընկեր Յ. բացեց ժողովը, առաջարկելով յարգել մեր ընկած նահատակ ընկերների յիշատակը, ոտքի կանգնելով, որ եւ անմիջապէս կատարուեց: Ապա նկարարագրելով Հ. Յ. Դ. ներկայ քայքայուած դրութիւնը եւ այն մեծ դերը, որ վիճակուած է առաջիկայ Ընդհանուր ժողովին, ընկեր Յ. առաջարկեց, նախքան Հերթական հարցերին անցնելը, ընտրել մի նախագահ եւ մի քարտուղար: Նախագահ ընտրուեց ընկեր Ա. Արամեան, իսկ քարտուղար՝ Մ. Մ.:

Ընկ. նախագահը ժողովի խորհրդածութեան նիւթ դարձրեց նախ այն հարցը, թէ ո՞վ է վայելում ձայնի իրաւունք ներկայ ժողովում: Կարդացուեցին եւ վաւերացուեցին շրջաններից եկած պատուիրակների լիազօրութիւնները հաստատող հաւատարմագրութիւնները: Այդպիսի հաւատարմագրութիւններ եկել էին հետեւեալ շրջաններից. 1) Ամարանոցից, 2) Արաքսից, 3) Բասենից, 4) Թախտի շրջանի Բլուր գիւղից, 5) Թախտի շրջ. Օձաձոր գ., 6) Թախտի շրջ. Բեազլիամար գ., 7) Նոյն շրջ. Լորիկ գ., 8) Նոյն շրջ. Հիւսիս գ., 9) Պարտիզաւանից, 10) Անանուն թաղից 2 հոգի, 11) Արհեստակցական միութիւններից եւ միլիցիական խմբերից 3-ական հոգի: Բացի սրանցից ներկայ էին նաեւ քաղաքից հրաւիրուած մի քանի ընկերներ, ընդամենը 48 հոգի:

Մի քանի պատուիրակներ այն կարծիքը յայտնեցին, թէ շրջաններից եկածների ձայնի իրաւունք ունենալու կամ չունենալու մասին խօսք անգամ չի կարող լինել, որովհետեւ նրանք ընտրուած են իրենց շրջաններից: Վիճելի է միայն քաղաքից հրաւիրուածների ձայն ունենալու հարցը, քանի որ նրանք ընտրուած չեն:

Ժողովականներից ոմանք էլ առաջարկեցին այսօրուայ նիստերը փակել եւ վաղուայ նիստին հրաւիրել քաղաքում գտնուող բոլոր բանիմաց ընկերներին, որոնց հետ միասին ընտրել մի պատգամաւոր Ընդհանուր ժողովի համար: - Այս առաջարկը քուէարկուեց եւ մեծամասնութեամբ ընդունուեց: Ապա ժողովը կազմեց մի ցուցակ, որի համաձայն հրաւիրուելու են նոր ընկերներ, յաջորդ նիստին մասնակցելու համար:

Նիստը փակուած յայտարարուեց:

#### II Նիստ

Ջրաբերդի շրջանային երկրորդ նիստում, Նոյեմբերի 29ին, նախագահը առաջարկեց քննութեան առնել Արեւելեան Բիւրոյի ուղարկած Ընդհանուր ժողովի պատգամունքի հարցերը: Նախ կարդացուեց այդ հարցերի ցուցակը եւ ապա [այդ հարցերը] մէկ-մէկ քննութեան ենթարկուեցին:

1) Ժողովրդի տնտեսական կացութիւնը եւ անդրադարձումը յեղափոխական շարժումների վրայ: - Որովհետեւ ժողովականներից իւրաքանչիւրը իւր կերպ էր ընդունում եւ բացատրում այս հարցը, ուստի ժողովը ոչ մի եզրակացութեան չկարողացաւ գալ:

2) Ժողովրդի տրամադրութիւնը եւ նրա վերաբերմունքը դէպի մեր մարմինները:

Պատուիրակները, ընդհանրապէս, աննպաստ, անմոխիթարական կարծիքներ յայտնեցին մարմինների վերաբերմամբ. ժողովուրդը շատ եւ շատ վատ է տրամադրուած դէպի դաշնակցական մարմինները, որովհետեւ վերջիններս իրանց կոչման բարձրութեան վրայ կանգնած չեն:

Նշաքիլիսի պատուիրակը այդ տեսակ տրամադրութեան երեւան գալը բացատրում է նրանով որ կոմիտէները առաջ ժողովրդին ամէն կերպ օգնում էին, պրոպագանդ մղում, իսկ այժմ որովհետեւ այդ չկայ, ուստի ժողովուրդը սառել է:

Պատուիրակներից մի ուրիշը յայտնեց, որ Կ. Կոմիտէն խառնուեց իրանց հողային խնդրում, գիւղացիներին հարստահարողներից, կեղեքողներից խլելով, հողաբաժիններ տուեց խեղճ ու կրակ, սակաւահող գիւղացիներին, այսպիսով մի տեսակ հողը համայնացրեց, բայց գործը այնպիսի խախտու հիմքերի վրայ դրեց, որ երբ կառավարութիւնը հարկեր պահանջեց, չունեւոր, հողագործը գիւղացին նորից ենթակայ եղաւ միւս, համեմատաբար ապահով, գիւղացիների հարստահարութեան: Այսպիսով, Դաշնակցութիւնը չկարողացաւ պաշտպանել իր հովանաւորեալներին եւ նրանց նոյնիսկ աւելի վատ վիճակի մէջ ձգեց:

Մի երրորդը ժողովրդի սառն վերաբերմունքը բացատրում է դատաւարութեան վերացման, մի ուրիշն էլ բացատրում է նրանով, որ մարմինները իրանց կոչման բարձրութեան վրայ կանգնած չեն, չկայ հաշուետուութիւն, չկայ պրոպագանդա: Վերջապէս մի քանիսն էլ պատճառ են բերում այն, որ վերջերս հրապարակ են եկել մի շարք սրիկաներ, խաչագողներ, որոնք արձակահամարձակ թալանում, կողոպտում, բռնաբարում են, քայքայելով ժողովրդին թէ՛ տնտեսապէս եւ թէ՛ բարո-

յապէս, եւ այդ անողները՝ հին գինուորներ են:

Այս բոլոր թեր ու դէմ կարծիքները լսելուց յետոյ, ընկեր նախագահը ամփոփեց բոլոր ասուածները այսպէս. - Ժողովրդի տրամադրութիւնը դէպի մարմինները շատ վատ է, որովհետեւ ժողովուրդը վերջերս ենթակայ է աւազակային խմբերի յարձակումներին:

#### III Նիստ

Նոյեմբերի 30-ին, երեկոյեան ժամը 8.5-ին նախագահը ժողովը բացուած յայտարարեց:

Կարդացուեց Դ. գիւղի պատուիրակի մանդատը, որի մէջ նկարագրուում է ժողովրդի դժբախտ կացութիւնը եւ դէպի Դաշնակցութիւնը ունեցած անցեալ եւ այժմեան վերաբերմունքը: Դ. գիւղը պահանջում է, որ Դաշնակցութիւնը շօշափելի օգուտներ տայ՝ դպրոցներ բանայ, երկրագործութիւնը ծաղկեցնի, տեխնիկան բարելաւի: - Ի պատասխան այս գրութեան, ընկերներէ մէկը յայտնեց որ Դաշնակցութիւնը իբրեւ յեղափոխական կուսակցութիւն, պարտաւոր է կռիւ մղել բիւրոկրատիայի դէմ, որ հաստատուեն այնպիսի կարգեր, որ կառավարութիւնն ինքը պարտ զգայ բաւարարութիւն տալ այդ պահանջներին: Յեղափոխական կուսակցութիւնն անկարող է դպրոցներ բանալ եւ գիւղատնտեսական գիտելիքներ տարածել:

Պատուիրակներից մէկն առաջարկեց դիմել քաղաքի միլիցիային, որ սա կազմակերպէ շրջանի միլիցիա եւ հալածէ խաչագողներին: - Նախագահը բացատրեց, որ քաղաքի միլիցիան անկարող է աւազակներին հալածելու համար օգնութիւն ցոյց տալ:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պատուիրակները սկսել են հետզհետէ քաղաքից հեռանալ, առաջարկ եղաւ նախ Ընդհանուր ժողովի պատգամաւորի ընտրութիւնը կայացնել, ապա դիմել միւս հարցերի քննութեան: Առաջարկը ընդունուեց: Ապա քուէարկուեց եւ միաձայն պատգամաւոր ընտրուեց ընկեր Ա. Ահարոնեան:

Այնուհետեւ նախագահը առաջարկեց զբաղուել Արեւելեան Բիւրոյի ուղարկած հարցերի քննութեամբ: Տաճկահայ խնդրի 4-րդ կէտի վերաբերմամբ առաջարկողներ եղան, որ Դաշնակցութիւնը՝ այլեւս իւր նախկին տակտիկային չդիմէ, խմբեր չուղարկէ, ապա թէ՛ ոչ

Հայաստանում հայ չի մնայ. այդ են ապացուցանում անցած խմբերի գործունէութեան հետեւանքները: Տաճկահայ խնդրի միւս 5 կէտերի մասին ժողովը ոչ մի կարծիք չկամեցաւ յայտնել, ի նկատի ունենալով, որ ինքը տեղեկութիւններ չունի եւ անձեռնհաս է:

Առաջարկուեց խօսել կովկասահայ խնդրի մասին: - Ինքնապաշտպանութեան գործը կովկասում: Կարեւոր համարուեց ինքնապաշտպանողական գաղափարը մտցնել ժողովրդի մէջ եւ ինքնապաշտպանողական խմբեր պատրաստել ապագայ չարիքների համար:

Աշխատաւոր խումբերի կազմակերպութիւնը եւ մեր ստացած հետեւանքները: - Այդպիսի գործունէութիւն սկսուեց, բայց որովհետեւ խախտու հիմքերի վրայ էր դրուած գործը, եւ որովհետեւ Կ. Կոմիտէն չաջակցեց, այդ պատճառով էլ չյարատեւեց եւ քայքայուեց:

Դաշնակցութեան դերը քաղաքական-հասարակական այլ ասպարէզներում: Մեծամասնութիւնն այն կարծիքը յայտնեց, թէ իբրեւ կուսակցութիւն Դաշնակցութիւնը հրապարակ չպէտք է գայ ազգային-հասարակական գործերի մէջ. իսկ քաղաքական-հասարակական գործերի մէջ նա միշտ պէտք է ակտիւ գործունէութիւն ունենայ: Վերջին կէտին համաձայն էին բոլոր ժողովականները:

Տաճկահայ եւ կովկասահայ խնդիրների ներքին կապը գործունէութեան եւ կազմակերպական տեսակէտից:

Ընկերներից մէկը առաջարկեց հիմնել Թիֆլիսում երկու Բիւրո՝ մէկը Տաճկահայաստանի գործունէութեան համար, միւսը կովկասեան, որոնք իրար հետ խորհրդակցելով կը լուծեն ծանրակշիւ բնաւորութիւն ունեցող հարցերը: Առաջին մէջ կը գործեն տաճկաստանցի կամ երկրին լաւ ծանօթ եւ այնտեղից ընտրուած մարդիկ: - Ժողովականների մի մասը (ստուար) այդ առաջարկը գտնում է այնպիսի քայքայեցողիչ Դաշնակցութեան համար, մանաւանդ այն պատճառով, որ երկու Բիւրո հիմնելու դէպքում գուցէ կարիք լինի եւ շրջաններում յառաջ գայ այդ բաժանումը նաեւ այլ մարմինների մէջ, եւ վերջապէս տարբեր Բիւրոների կարգադրութիւնները կարող են շատ անգամ հակասական լինել եւ կենտրոնական մարմիններին կարող են անելանելի վիճակի մէջ դնել:

Ժողովը փակուեց գիշերուայ ժամը 12-ին:

*Նախագահ ժողովի՝ Ա. ԱՐԱՄԵԱՆ*  
*Քարտուղար՝ ԳԱՄ*



Գ 3.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ [ՕԼԹԻ ԺՈՂՈՎԻ]

1906 թուի, Հոկտեմբերի 14-ին, Համաձայն Արեւելեան Բիւրոյի կարգադրութեան, Օլթիում ժողով գումարուեց տեղի կազմակերպութեան անհատները եւ շրջանի պատգամաւորները մասնակցութեամբ, որի ժամանակ քննուեց գլխաւորապէս Հ. Յ. Դ[աշնակ]ցութեան բռնած դիրքը տաճկահայ խնդրի վերաբերութեամբ: Այդ հարցի շուրջ երկար թեր ու դէմ վիճաբանութիւններուց յետոյ, ժողովը ձայնի առաւել մեծամասնութեամբ ցանկութիւն յայտնեց, որ տաճկահայ դատը լինի Հ. Յ. Դ[աշնակ]ցութեան գործունէութեան համար գլխաւոր, բուն եւ անմիջական նպատակ՝ իբրեւ ամենաճշտած ժողովրդի: Իսկ Կովկասի ինքնապաշտպանութեան եւ ռուսական ազատագրական շարժումներին հետեւել այն չափով, որչափով անհրաժեշտ կարիք կը ստիպի, նայելով Հանգամանքներին: Փոքրամասնու-

թիւնը այն կարծիք յայտնեց, որ ինքը յարմար է դատում, որ տաճկահայ դատը թողնել տաճկահայաստանցիներին, բարոյական աջակցութիւն ցոյց տալով միայն նրան եւ առաջ տանել Կովկասում ինքնապաշտպանութեան եւ ռուսական ազատագրական գործը: Մնացած հարցերի շուրջ առանձին վիճաբանութիւններ տեղի չունեցան: Ժողովը ընտրեց իբրեւ պատգամաւոր պ. Փայլակին մասնակցելու Ընդհանուր ժողովին<sup>55</sup>:

55.- «Արժանագրութեան» տակ ստորագրած են 19 հոգի: Որոշ է որ խնդրոյ առարկայ ժողովը այժմու հասկացողութեամբ Ներկայացուցչական ժողով է եւ ընտրուած պատգամաւորը յաջորդ՝ Նոյեմբեր 28-30ին գումարուելիք Ջրաբերդի Երջանային ժողովին համար է:

Ե.- ՋՐԱԲԵՐԴԻ ԵՐՉԱՆԵՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Հ. Յ. Դ. Չարքոյ Ընդհ. ժողովի գումարումն ամիսներ առաջ զոյգ Բիւրոները, շրջաբերականներով եւ «Դրօշակ»ի մէջ պարտած յայտարարութիւններով, երաւեր կ'ուղղէին բացի մարմիններէն եւ ժողովներէն նաեւ անհատ ընկերներուն, որպէս զի իրենց կարծիքներն ու առաջարկները ներկայացնեն Ընդհ. ժողովին յատկապէս կարգապահական խախտումներու, դրամական զեղծումներու եւ այլ բնոյթի անկարգութեանց մասին: Այդ կարգի գրութիւններու շարքին կը պատկանի ամենամի և վաստակաւոր մարտիկ Տուրքալի (Կիբակու Յարութիւնեան) այս նամակը, որ իր խիզախ վերլուծումներով եւ փաստացի մատնանշումներով իրապաշտ մէկ պատկերը կու տայ Ջրաբերդի շրջանին ներկայացուցած կուսակցական կազմակերպական անկեղծ վիճակին:

Տուրքալի ընդարձակ գրութեան կը ձայնակցի նոյնպէս վաստակաւոր յեղափոխական ուրիշ գործիչի մը, զէնքի հայր Քոչարման եւ փոխադրութեան գործին նուիրուած, Բիճայի (Սվազցի Յարութիւն) նամակը ուղղուած Արեւելեան Բիւրոյին:

Երէկ տակաին արդարօրէն Դաշնակցութեան հնոց նկատուած Կարս քաղաքի եւ մասնաւորապէս գաւառային գիւղերու մէջ, ըստ երևոյթին «անգործ» մնացած շարք մը նախկին խմբապետներ՝ իրենց այլատարր հետեւորդներով, ազատազարեզ գտած էին պատուհասելու համար անտիրութեան մատնուած խեղճ գիւղացիութիւնը, որ դեռեւս անխախտ Դաշնակցութեան հանդէպ ունեցած իր անսահման վստահութեան մէջ, պարզունակ բայց եւ խօսուն բողոքներով (տեսնել ամենցմէ քանի մը նմոյշ) պիտի դիմէր կուսակցութեան վերին աստիճանին իր ցանկուն դարման գտնելու յոյսով:

Եւ 4րդ Ընդհ. ժողովը պիտի գտնէր այդ դարմանը: Չեք առնուած կտրուկ միջոցներով շուտով արմատախիւ պիտի խառնէին այդ յոռի երեսուցիները եւ ամենց տխրահոյսի ենթահակները:

Ե 1.- Հ. 3. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՌԵԼԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Յարգելի Ընկերներ,

Ընդունելով՝ որ «մեր հակառակորդների ասածների մէջ եւս որոշ չափով ճշմարտութիւններ կան», - ուստի այս գրութեամբ համարձակուում եմ, որպէս դաշնակցական զինուոր, ժողովիդ ուշադրութեան ներկայացնել իմ այս համեստ կարծիքը: Թէեւ մինչեւ այժմ գումարուած ժողովների ժամանակ մեզ իրաւունք չէր տրուում մեր կարծիքը յայտնել կամ բողոքել որեւէ մի խնդրի առթիւ:

Նախ եւ առաջ ես կանգ կ'առնեմ այն տխուր իրականութեան վերայ՝ որը ամէնից այրողն է, թէ ինչո՞ւ 1-2 տարուայ ընթացքում Հ. Յ. Դաշնակցութեան ղիրքը եւ հմայքը ընկած է հայ հասարակութեան՝ նոյնիսկ օտարների աչքում, որոնք աւելի քան ակնածութեամբ էին վերաբերում: Պատճառներն են հետեւեալները:

1.- Որ՝ դաշնակցական մարմիններից ոչ մէկը հասարակութեան եւ մեծամասնութիւն կազմող տգէտ գիւղացիութեան առաջ հասկանալի լեզուով չեն բացատրած կազմակերպութեան Մրազիրը եւ նրա դաւանած գաղափարները: Մինչեւ այժմ ամէն շրջանների այս ու այն խաւերը կերակրուել են քաղաքական եւ ռազմական հարցերով եւ ոչ մի խօսք ներքին տնտեսութեան կամ ինքնաճանաչութեան մասին, որով այժմ ոչ մի տեղ չի կարելի ասել թէ յեղափոխականացած հասարակութեան մի ամբողջութիւն ունինք. այլ խախտաբողոք մի հաւաքածու քանակութիւն:

2.- Որ՝ Դաշնակցութեան գաւառական եւ կենտրոնական մարմինները չեն բացառութեամբ գուրկ լինելով յեղափոխական տէմպերամենտից<sup>56</sup>, որոշ չափի յեղափոխական) ցենզ չունենալով իւրեանց գործունէութեամբ եւ ուղղութեամբ, ոչ միայն հակասել են կազմակերպութեան Մրազիր ընդհանուր ոգուն, այլ եւ մէկը միւսին հակասելով չեն կարողացել հասարակ ներդաշնակութիւն պահել գէթ իրենց որոշումների եւ գործերի մէջ:

Ինչպէս Կովկասի ռայոնական ժողովները՝ նոյնպէս Կենտրոնական Մարմինները որքան անգամներ շատ գեղեցիկ որոշումներ են կայացրել, հետեւանք փայլուն ճառերի, բայց մեծ մասամբ մնացել են սոսկ որոշում թղթի վրայ եւ ոչ մի գործունէութիւն կեանքի մէջ: Որովհետեւ նախքան որեւէ որոշում կայացնելը, մեր հասարակութեան այս ու այն խաւերը յեղափոխական տեսակէտից լաւ չեն ռուսումնասիրուած. իսկ երբ հարց է բարձրացել այդ խնդրի առթիւ՝ կազմակերպութեան ղեկավար կամ նրա խոհանարան<sup>57</sup> ճրճուած ճառ խօսող ինտելիգենցիան խուսափել է շրջանները ման գալ՝ ծանօթանալու գիւղացիների կեանքի պայմանների եւ նրա հոգեկան աշխարհայեացքի հետ՝ որովհետեւ ֆի-

զիքական անյարմարութիւններ կան, այդպիսով ասպարէզը մնացել է տգէտ գինուոր շրջիկներին, որոնք չնայած իրենց անձնուէր գործողութեան, բայց չնորհիւ մտաւոր պաշարի պակասութեան՝ մի շարք բարդութիւններ են առաջ բերել: Բայց երբ այդպիսիներին քննադատելու խնդիր է ծագել, մատը տաքից պաղ չխփող ինտելիգենտ պարոնը հարայ հրոց է ձգել եւ խօսել «XXրդ դարու մարդասիրութիւնից, լուսաւորութիւնից»:

3.- Որ՝ դաշնակցական մարմինները հետեւողական չեն եղել, աւելի պարզուեց այն դժբախտ օրից երբ կազմակերպութիւնը զբաղուեց ժողովրդական դատերով. փառք եւ դիրք ձեռք բերելու գեղեցիկ ասպարէզ. - մէկի շինածը՝ միւսը քանդում էր, - եսի խնդիր է: Թէեւ Կովկասեան Ռայոնական ժողովը զգաց դրա վաղաժամութիւնը եւ դատեր վարելը վերացրեց բայց արդէն ուշ էր: Կարճ ժամանակամիջոցում Դաշնակցութեան շարքերը ստուարացնողները իրենց բողոքներով շահեր ունէին եւ նրանց գործադրելուն էին սպասում, բայց միանգամից վերանալը՝ բոլորին հիասթափեցրեց, որոնք զանազան տրտունջներով հեռանալով լքումն առաջ բերին հասարակութեան մէջ:

4.- Որ՝ մինչեւ այժմ մանրամասն եւ կանոնաւոր հաշիւ չէ տրուած՝ ինչպէս դրամականի նոյնպէս եւ ռազմականի: Մանաւանդ զինման համար հաւաքուած գումարների: Եթէ մի անկողմնապահ մէկը շրջի մեր շրջանի գիւղերի մէջ, որքան տրտունջներ, որքան տարածայնութիւններ լսելուց գատ ճշմարիտ իրողութիւններ կը պարզի:

5.- Մինչեւ 1903-ի ռուսական յափշտակութիւնները՝ Դաշնակցութիւնը զբաղուած լինելով միմիայն տ[աճկահայ] դատով, ոչ մի խօսք, ոչ մի ակտիւ ձեռնարկ չունեցաւ կովկասահայ մասին. ոչ մի նախապատրաստութիւն նրա կեանքի քաղաքական եւ տնտեսական դրութեան հոգ տանելու համար: Այսպիսով երբ անակնկալ հարուածի ժամանակ ժողովուրդը բողոքի արտայայտութեամբ հրապարակ նետուեց իւր շահերի գիտակցութեան խուլ եւ անկանոն պահանջով՝ թէեւ այդ ուրախալի տրամադրութեան Դաշնակցութիւնը ընթացք եւ կանոնաւորութիւն տուեց, բայց երբեք ուշադրութիւն չդարձրեց՝ թէ կարճ միջոցում բազմացող դաշնակցականները ի՞նչ կարգի, ի՞նչ հասկացողութեան, ի՞նչ ձգտումների մարդկանցով էր:

Այսպիսով յեղափոխական դառնալը եղաւ օրուայ մոտային պահանջ. մինչեւ իսկ մութ եւ կասկածելի անձնաւորութիւններ եղան յեղափոխական կամ դաշ-

56.- Խառնուածք, բնաւորութիւն: 57.- Մտքերով, գաղափարներով:



նակ կամ հնչակ անուններով, որով սկսուեց մի շարք տխուր կուսակցական պայքարներ՝ որի կորստաբեր կողմերը անդրադարձան հասարակութեան վրայ կարծես ընդմիջտ թաղելու նրան անտարբերութեան մէջ: Իսկ երբ ընտրութիւններ էին առաջ գալիս, այդ ժամանակ արդէն աթոռի հարց էր ծագում եւ ամէնքը ներելի եւ աննրբելի միջոցներ էին գործ դնում կենտրոնականի աթոռը ձեռք բերելու: Ընտրողական մաքուր սկզբ-բունքը շահագործւում էր ի վնաս յեղափոխական գործի:

Դեռ 90-ական թուականներից մեր շրջանը թէեւ դեկավարում էր ընտրողական սկզբունքներով՝ բայց եւ այնպէս գեղծումները եւ թերութիւններն անպակաս են մնացել: Այնպէս որ թէ կովկասի) Ռայոնական եւ թէ Բ. եւ Գ. Ընդհանուր Ժողովին ներկայացած պատգամաւորները՝ ժողովրդական ընտրութեամբ եւ նրա տրւած մանրատներով չեն ներկայացել: Նոյնպէս եւ այս Դ. Ժողովին ներկայացող պատգամաւորը: Նրա ընտրութիւնը թէեւ կատարուել է արտաքին ձեւականութեամբ, բայց ի նկատի պէտք է ունենալ, որ նախապէս յօգուտ յարգելի պատգամաւորի կատարում էր զօրեղ ագիտացիա շրջանից հաւաքուած պատուիրակների շրջանում: Այնպէս որ ամբողջ շրջանի դաշնակցական ազգաբնակչութիւնը մեծաւ մասամբ անծանօթ է իւր տուած պատգամաւորին: Նոյնպէս եւ այն ակնի կարեւոր հանգամանքը որ մեր այս տարուայ պատգամաւորը շատ քիչ տեղեկութիւն ունի մեր շրջանի ազգաբնակչութեան ցաւերի, նրա աշխարհայեացքի հետ կամ բնաւ ծանօթութիւն չունի: Առանձնապէս մեր տուած պատգամաւորի եզակի անձնաւորութիւնը միմիայն պատիւ կը բերէ շրջանին<sup>58</sup>:

8.- Ենտրհիւ այն հանգամանքի, որ կովկասահայը նախապատրաստուած չէր, սկսեց դատապարտել կազմակերպութեանս, երբ նա որպէս պայքարող յեղափոխական) քաղաքական կուսակցութիւն սկսեց իւր համեստ եւ շրջահայեաց մասնակցութիւնը համայն Ռուսաստանի ազատագրման շարժման: պարզ է եւ անվիճելի, որ եթէ Դաշնակցութիւնը որեւէ մասնակցութիւն ցոյց չտար այդպիսի զօրեղ եւ ընդհանուր շարժման, ոչ մի պատիւ չէր բերել ընդհանուր հայութեան, մասնաւորապէս Դաշնակցութեան, որը միակ զօրեղ յեղափոխական) կուսակցութիւնը լինելով հայ ազգի մէջ մեծ դիրք եւ սքանչելի համարում էր ձեռք բերել օտար ազգերի, մինչեւ անգամ ռուս բռնակալ կառավարութեան աչքում:

7.- Կովկասեան հայ-թուրք ընդհարումների ժամանակ, շնորհիւ Երզ կէտում մէջ բերած հանգամանքների, ասպարէզ եկան մի շարք բախտախնդիր մարդիկ, որոնք իրենց արարքներով առիթ տուին մեր հակառակորդներին գինուել մեր դէմ եւ ամէն մի իրենց վայել միջոցներով վարկաբեկել կազմակերպութեանս: «Կաց-

նի կոթը մեզնից էր»- 1906 թուի մամուլի բանակաւիւնները, Միհրանի եւ նման փառամուրների պատճառով, մի-թէ՞ քիչ մտքեր պղտորեցին: Իսկ այդ բոլորը դարձեալ վերագրել պէտք է մասամբ մեր մարմինների անհեռատեսութեան, կամ նրանց թուլութեան: Նիւթականի անկանոն եւ անհաւասար բաշտումը:

8.- Որ՝ մեր ընկերների միջից շատ քչերն են, որ միմիանց վերաբերուում են մաքուր, անկեղծ եւ գաղափարական սուրբ սիրով: այդ քաղցր վերաբերմունքը գոյութիւն ունէր մինչեւ 97 թիւը: Նրանից յետոյ, երբ մեր գործունէութիւնը ակնի ընդարձակուեց՝ փոխանակ ակնի եւս հաւատով վերաբերուելու, սկսեցինք սոսկ պաշտօնական գործունէութիւն: Խախտուեց սէր եւ հաւատք դէպի ընկերը: զօրեղը՝ մտաւորով կարողը բարձրից էր նայում թոյլի վրայ, փոխանակ ընկերական կրեկցութիւն ցոյց տալու: Այդ երեւոյթը ակնի բնորոշ կերպով կը տեսնենք մեր «Շէֆերի» մէջ, որից աստիճանաբար իջնում է մինչեւ մեզ՝ հասարակ մահկանացուներին մէջ:

9.- Կովկասեան գործունէութեամբ, որքան որ պահանջուտ այժմէութիւն ունէր, դարձեալ մեր դեկավարին տեղիք ենցիլայի անհեռատեսութեան եւ քաղցր երեւակայութեան շնորհիւ, գայթակղութեան քար: Մտքերը, իրողութիւնները, սկզբունքային եւ տակտիկային հարցերը, պարզ եւ որոշ կերպով չբացատրուեց: Պարզ է, որ Դաշնակցութիւնը հիմնուած օրից միմիայն ի նկատի է ունեցել՝ աշխատաւոր եւ իրաւագուրկ դասակարգի արհեստաւորի, բանուորի, գիւղացիութեան շահերը եւ դրա վրայ իսկ յենուած առաջ է տարել իւր գործունէութիւնը: բայց պաշտպան լինել աշխատաւոր դասակարգի շահերին՝ չի նշանակում, որ միանգամից մէկ դասակարգ միւսի դէմ թշնամացնել եւ առիթ տալ ընդհանուր կասկածանք եւ ատելութիւն ստեղծել դէպի դաշնակցական մարմինները եւ նրա ոգուն: Այդպիսով բացի մեր հակառակորդների թիւի շատանալուն նպաստելը, յամառ կերպով հիմնաւորուել [է] այն համոզմունքը, որպէս թէ Դաշնակցութիւնը բաժանուել է «հին ու նոր» Ֆրակցիաների, որ Դաշնակցութիւնը-ը «սոցիալ» է դաւել, որ նա այլեւս մոռացութեան է մատնել տաճկահայ դատը: Ի հարկէ այս բոլորը ժողովրդեան ենթադրութեան արդիւնք է, սակայն հիմքից գուրկ չէ, որին տեղի են տուել դիւրաբորբոք նորնծայ դեկավարները:

Թէեւ ճիշտ է այն (որին ականատես են եղել շատերը եւ զգացել են) որ կովկասեան դաշնակցական մարմինները մինչեւ այժմ այնպիսի եռանդուն թափով չէին գործել՝ երբ խնդիրը տաճկահայ դատին էր պատկանում, որքան կովկասեան անակնկալների ժամանակ: Թէեւ դեռ Սասունի մէջ Անդրանիկի կոխներին առթիւ պաշտելի ընկերների՝ Հրայրի եւ Վահանի գրածները

58.- Խօսքը Աւետիս Ահարոնեանի մասին է:

այնպիսի արձագանգ չգտան, որպէս կարիքն էր պահանջում եւ որպէս պարտական էինք, բայց այդ բոլորը կարծում ենք որ անսպասելի դիպուածների առիթ էին:

Մենք հաւատում ենք, որ Ընդհանուր Ժողովը կը ցրի այն տեսակ թիւր տարածայնութիւնները՝ հետեւեալ պարզ եւ անուրանալի պատճառաբանութեամբ

ա.- Որ արդէն 18 երկար տարիների արիւնոտ գործունէութեամբ Դաշնակցութիւնը սրբազործել է տաճկահայ դատը՝ զոհ տուած նահատակուած ընկերների արեան վրէժխնդիր գնով եւ եւրոպական դիւանագիտութեան մէջ հերթական հարց դարձրել անբաժան Մակեդոնականից:

բ.- Տաճկահայ ժողովուրդը եւ այնտեղի մեր ընկերները՝ լի յոյսերով սպասում [են] մի միայն ընդհանուր եւ ուժեղացած գործունէութեան եւ ոչ ոքի հաճելի չէ բաժանում առաջ բերելը: դա արդէն՝ ներեցէք ասելու որ դաւաճանութիւն կը լինի ռուսահայերի կողմից:

եւ գ.- Չնայած, որ կովկասեան գործունէութիւնը անհրաժեշտաբար պահանջուտ այժմէութիւն ունի, բայց եւ այնպէս նախապատուութիւնը պէտք է տալ տաճկահայ նուիրական դատին-ի հարկէ մեր ուժերի համապատասխան համաչափել եւ մասնակցել ընդհանուր Ռուսաստանի ազատագրական շարժման: Բացի այդ՝ վեհ եւ բարձր պահել Դաշնակցութեան կարմիր դրօշակը ամէն մի բռնակալութեանց առաջ որտեղ տառապում է հայութիւնը: Մի-թէ՞ կովկասահայը մոռնալու է, Ղարաբաղի, Միսիանի եւ այլ տեղերում տաճկահայ մարտիկների անձնուէր մասնակցութիւնը ընդդէմ թուրքերի, որոնց քաջագործութիւնը հիացրեց նոյնիսկ ռուս պրովոկատորը<sup>59</sup> կառավարութեան:

Մինչեւ այժմ եղածները այսուհետեւ էլ սպասած յաջողութիւնները պէտք է գտնենք Հ. Յ. Դաշնակցութեան համերաշխ եւ անբաժան ուժի մէջ:

10.- Որ՝ կազմակերպութեանս մարմինների եւ դեկավարների մէջ բացակայում է պատասխանատուութեան խիստ օրէնքը՝ ընկերական պատժական կանոններով, որից խուսափած էին առհասարակ՝ խաթեր համար եւ աթոռի տեսչով ասպարէզ եկած յեղափոխականները: Պատժել յանցաւորին, անխնայ ընկերական ուղղիչ միջոցներով ձաղկել մէկի պակասութիւնը, հրապարակ հանել կատարուած գեղծումները՝ երբեք թշնամութիւն կամ ատելութիւն չի նշանակում, այլ արթուն աչքերով հսկել ընդհանուրի շահերին, մասնաւորապէս բարեկամ դառնալ անհատ ընկերին:

Անաչառութիւնը պահանջում է, որ յանցաւորին պէտք է դնել յանցանքի ծանրութեան տակ, որով վերացրած կը լինենք մի շարք գեղծումներ եւ հիմնովին ապացուցած կը լինենք դէպի ժողովուրդը եւ մեր դաւա-

նած գաղափարն ունեցած սէրը, համոզմունքը եւ անձնութիւնը:

11.- Դաշնակցական հայ գինուորը, որը ակնի կենդանի եւ մաքուր արտայայտիչ էր լինելու իւր դաւաճած գաղափարների, որի համար կոչուելու յաւակնութիւն էր ցոյց տալիս, որը երէկ երդուում եւ միտքարուում էր իւր նահատակուած ընկերների յիշատակով եւ գործերով, որը իւր ամենաթանկ ստացուածքը՝ կեանքը զոհ տալու էր տրամադրուած հայ ժողովրդի կեանքի, գոյքի եւ պատուի ապահովութեան: միթէ՞ քիչ փաստեր եւ ապացոյցներ կան, միթէ՞ [քիչ է] նրանց թիւը, որով ոտնատակ տալով հայ գինուորի վեհ եւ բարձր կոչումը, իւրաքանչիւրը մի մի պատուհաս են դառել խեղճ գիւղացու գլխին: հայ գեղջուկը, հայ կինը՝ որը երէկ գրկաբաց կերպով ընդունում եւ կերակրում էր հայ գինուորին, այսօր սարսափում է նրա ներկայութիւնից: Ռուս եւ տաճիկ բռնակալութիւնը այնպիսի ստրուկ վրձակի չէ հասցրել հայ գիւղացուն, որպէս դաշնակցական գինուորը:

Գաղափարի մարտնչողը՝ աւագակ, կողպատող, վայրագ: ո՞վ կարող է համարձակուել եւ այդպիսիներից մէկին նկատել անգամ, սուրբ, գնդակը եւ դաւադրութիւնը շուտով պատրաստ էին: Ես չէի կարող երեւակայել մարդկային ստորութիւններից ամենավատթարագոյնը, ամենազղուելին, ամենագարշիլին՝ որպէս այդ ցոյց տուեց Հ. Յ. Դաշնակցական գինուորը՝ այն էլ խմբապետ կոչուողը՝ դա է խայտառակ մուրացկանութիւնը: առանց խղճի խայթ զգալու, առանց ամօթանքի, իւր ընտանիքի թշուառ գոյութիւնը փոխանակ աշխատանքով պահելու՝ նա դիմում է մուրացկանութեան եւ գիտէք ինչի՞՞ յանուն իւր խմբապետութեան: Նա առանց կարմրելու ընդունում է գիւղացիների տուած մի մի բուռ ցորենը, գարին, ալիւրը եւ դժուարութեամբ ձեռք բերած սել փողերը: Ճնշող է պատկերը, բայց տխուր եւ դառն իրականութիւն է:

Ընկերներ. անհուն եւ անսահման հաւատք ունեմ, որ Հ. Յ. Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովը, մանրագին քննութեամբ եւ անկողմնակալութեամբ վերջ կը դնէ տխուր իրականութեան: եւ ի նկատի ունենալով թուածս երեւոյթները՝ պարտ եւ պատշաճ կարգադրութիւններ կ'անէ այսուհետեւ չկրկնուելու համար: Ի նկատի ունեցէք եւ այն որ իմ մէջբերածս բոլոր տպաւորութիւնները ստացել եմ այն շրջաններում, որտեղ բախտ եմ ունեցել գտնուելու որպէս դաշնակցական ներկայացուցիչ: Հարկ է գտել եւ մաքրել Դաշնակցութեան շարքերը:

Բաւական համարելով այսքանը՝ ակնորդ չեմ համարում «ձայն բարբառոյ յանապատի» մնացած բողոքներս ներկայացնել պատկառելի ժողովրդ քննութեան:

59.- Գրգռիչ, գրգռութիւն սերմանող:



ա.- 1903 թուի Հոկտեմբեր 10-ից մինչև նոյն թուի Դեկ. 1-ը՝ որպէս Զրաբերդի Կ. Կոմիտէի ներկայացուցիչ՝ անձամբ չըջել եմ Պարտիզաւանի, Անապատի, Հանքի եւ Երկահերի շրջաններում եւ նիւթական նպաստները գանձել եւ ներկայացրել Կ. Կ. ին, որի համար «Դրօշակ»ի նուիրատուութեանց բաժնում ոչինչ լոյս չի տեսել:

բ.- 1904 թուի ընթացքում մեր շրջանի Լուիզ գիւղում ձերբակալուած [գրաւուած?] 28.000 Ռ2-ի ծայրերի համար - յանցաւորներ չկային եւ եթէ կային ովքեր էին եւ ի՞նչ պատժի ենթարկուեցին: Չէ՞ որ հասարակութիւնը դեռ եւս սպասողական դրութեան մէջ է:

գ.- Քարում եւ Զրաբերդում, եթէ չեմ սխալուում Մրգաստանում էլ, ինչո՞ւ փոխադրուած գէնքերի փոխարէն աղիւսներ էին դուրս գալիս: Այդ առթիւ քննութիւն կատարուե՞լ է արդեօք, թէ խնամիրաբար ծածկուել:

եւ դ.- Վերջին երկու տարուայ ընթացքում զինման առթիւ գանձուած փողերը ի՞նչ եղան, որի համար ժողովուրդը տրտուեցնուեցին էլ յայտնում, բաւարարութիւն չստանալով:

Ի նկատի ունենալով Տաճկաստանում մահմետական տարրի ազատագրական շարժումը, լաւ է՞ր լինի արդեօք մի մասնախումբ կազմել քրտական պրոպագանդով գրադուելու Երկրում, որի յաջողութեամբ պսակելուն տարակոյս չունեմ:

Այս բոլոր ասածներէս համար մի առ մի փաստեր եւ ապացոյցներ մէջ բերելը աւելորդ համարելով պատասխանատուութիւնն ամբողջովին ինձ վրայ եմ վերցնում, եթէ հարկ կը համարէ Ընդհանուր Ժողովը: Որով մնամ անկեղծ ակնածութեամբ եւ Ձեր որոշումներին ենթարկուելու պատրաստ՝ Դաշնակցական՝

*Մուսթաֆա*

ՏՈՒՐԱՆՆՅԱՆՆԵՐ

1907 թիւ, Մարտ 5  
Զրաբերդ

Փաստ. 274-3

Ե 2.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

ՁԵԿՈՒՑՈՒՄ

Պարտք եմ համարում սրանով յայտնել հետեւեալը որի համար, խնդրում եմ շուտափոյթ կարգադրութիւն:

Ա.- Տեղւոյս Կ. Կ[ոմիտ]-էի հրահանգով չըջցի ամբողջ Զրաբերդի շրջանը զինական եւ զինուորական գործեր վերստուգելու եւ հաշիւները ամփոփելու, բայց գտայ բոլորովին անբաւարար վիճակի մէջ, մասնաւոր զինուորական գործը որի հսկողութեամբ պէտք է ապահովուած համարէինք շրջանին հայ ժողովուրդի դրութիւնը օտար յարձակումներից, բայց շնորհիւ ինչպէս շրջիկ զինուորների անկարողութեան որոնց հրահանգը անհաւատելի ամէն մի անախորժութիւնից եւ շնորհիւ, որ հակառակ Երջանական ժողովի որոշման, որ պէտք էր կազմել տեղական միջոցաւ ազգաբնակչութեանը խաղաղ պահելու, որը մինչև այժմս բարձի թողի է արուած, ահա շնորհիւ այդ հանգամանքների ասպարէզ են եկել մի շարք բախտախնդիր աւագակաբարոյ խաչագողներ, որոնք իրենց արարքներով ակամայից ստեղծելու են ընդհարումներ: Փաստեր, ապացոյցներ որքան որ կ'ուզէք կայ:

Մանօթ. այդպիսի ոչ ցանկալի գործողութիւններ ցոյց տուողները նախկին դաշնակցական զինուորներ եւ խմբապետներ են, որոնց մասին կարծում եմ որոշումներ կայացուել է բայց չէ գործադրուած, ինչպէս Աւիւթի [Աւագ] եւ Ասլանի:

Բ.- Այս բոլորի մասին իմ տպաւորութիւնները յայտնել եմ տեղւոյս Կ. Կ. ին եւ պահանջել կարգադրութիւն, բայց դժբախտաբար ինչպէս նախկին նոյնպէս եւ ներկայ Կ. Կ.-էն իւր կազմով եւ ընդունակութիւններով անգոր են, այդպիսի հրատապ խնդրոյն ընթացք տալ:

Եւ Գ.- Ի նկատի ունենալով՝ որ ներկայիս գոյութիւն ունեցող Կ. Կ.-էի ամբողջ կազմը նուիրուած է միմիայն բանուորական միութիւններ կազմելով՝ հակառակ ինչպէս քաղաքի նոյնպէս եւ շրջանի ազգաբնակչութեան հասկացողութեան եւ ընդունման:

Այս բոլորը ներկայացնելով եւ խնդրելով Ձեր կարգադրութիւնը աւելորդ չեմ համարում եւ իմ մասնաւոր կարծիքը յայտնել որպէս սոսկ դաշնակցականի:

Որպէս դաշնակցական եւ նուիրուած նրա ընդգծած սկզբունքային խնդիրների՝ որոնք պէտք է մտցնել հայկական շրջաններում՝ ընդունելով որ բանուորական եւ արհեստակցական միութիւնները հիմնաւորապէս երաշխաւորութիւն են ներկայացնելու մեր ազգային գոյութիւնը պաշտպանելու գլխաւոր ցանկութեանը: Բայց որովհետեւ այդ ուղղութեան, այդ նպատակին

Ե 3.- ԿԱՐԾԻՔՆԵՐ

Հ Յ. Դ. Չրաբերդի շրջանի Ղախալի գիւղի բնիկ հասարակութիւնից

Մենք բոլոր հասարակութիւնք լեռնային ժողովուրդ, աղքատ ամէն միջոցներից, տնտեսապէս եւ բարոյապէս ընկած ենք մեր դառն հոգսերի յետեւից. մեր ամէն տարուայ պտղաբերութիւն ցուրտն է տանում, այնպէս որ մոլորուած չըլտեսնէք ինչ կարծիքներ յայտնենք. միմիայն այսքան կ'ասենք որ չմոռանանք մեր նահատակների արիւն. մեր պարոններ թող աշխատեն աւելի Տաճկահայաստանի հարց առաջ տանել, որ մենք իսկ այդ նպատակով էլ յեղափոխուեցինք. ուրիշ ոչինչ չունինք յայտնելու. պահանջում ենք խաչագողներին հալածել մեր միջից, ուսում եւ կրթութիւն տարածել մեր մէջ. աշխատենք եւ գործ առաջ տանենք շատ խոհեմ եւ ազնիւ կերպով. թող չլինի մեր մէջ կուսակցական հարցեր. մենք միմիայն ճանաչում ենք մի կուսակցութիւն եւ պաշտում ենք մի գաղափար:

ԿԻՐԱԿ ՈՍ ԱՌԱՔԵԼԵԱՆ  
ՊԵՏՐՈՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ  
ՅԱԿՈՒ ԳՐԻԳՈՐԵԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ՊՕՂՈՍԵԱՆ

1906 թ. Հոկտ. 12  
Ղախալի

Հասնելու համար համապատասխան ղեկավարող անձնաւորութիւններ չկան, ահա այդ իսկ պատճառաւ ամբողջ շրջանի հասարակական կարծիքը սկսել է աննշուպատ կարծիքներ կուսակցութեան մասին, կարծելով որ մենք հակուած ենք [սոցիալ] դեմոկրատների ուղղութեամբ եւ նրանց գաղափարին: Եւ այսպիսի անորոշ դրութիւնը ստեղծել է ընդհանուր խառնակ վիճակ, որը ոչ մի բանով չի կարող հաւաստիացնել մեր ապագայում կատարելիք գործերի, որոնք միմիայն դրամական օժանդակութեամբ էին ապահովուում, նամանաւոր Տաճկահայկական հարցում, որի ժամանակ մեր շրջաններում սկսել են կասկածանքներ առաջ գալ, որպէս թէ Դաշնակցութիւնը այլեւս գրադուելու չէ Տաճկահայկական խնդրով:

Ներկայացնելով իրերի այսպիսի վիճակը խնդրում եմ Ձեր կարգադրութիւնը որ Դաշնակցութեան հիմնական ծրագրի ոգուն համապատասխան լինելուց գատ, վերացնէր Ա. հասարակութեան միջից անհիմն տարածանութիւններ, Բ, որ անպայման կերպով գործի գլուխ պէտք էր տեսնել այնպիսիներին, որոնք բացի համապատասխան ընդունակութիւն ունենալուց, վայելում էին հասարակութեան վստահութիւնը:

Եթէ այս բոլորի մասին չի լինելու պարտ ու պատշաճ կարգադրութիւն՝ որով ես եւս ինձ անվրդով համարէի, ուրեմն խնդրեմ ինձ ազատ համարէք որեւէ գործից, ընդունելով ինձ բոլորովին ազատ դաշնակցական եւ թոյլ տուէք որ այսուհետեւ իմ մասնաւոր գործերով զբաղուեմ:

Սրանից մի քանի օր առաջուայ խմբապետ Կեղզուեցի[?] եւ Ասլանի ընդհարման շարունակութիւնը այսօր էի կրկնուել էր, Ասլանի եւ ուրիշ անհատների հետ, որոնցից վեց հոգի վիրաւոր են թեթեւ՝ ատրճանակից եւ դաշնից, որոնց չորսը սկալուղում[?] է, իսկ երկուսը թաքնուած է. չորսին մինը Ասլան ինքն է, «ղլաթցի Բաղդասար»: Եթէ տեղւոյս կոմիտէն իւր դանդաղ քայլերով առաջը չկարողանայ առնել, հետեւանքը աւելի վատ կարող է ըլլալ. այժմս դուրս է եկել ղլաթցի եւ խնուցի պարտիաներ:

Մուրատից<sup>80</sup> այսօր հեռագիր ստացուեց Գորիսից, դրութիւնը վատ է. պահանջել է ինձ եւ չորս ընկերի, այսօր պաշտօնական կ'առաջարկեմ Կ. Կոմիտէին որ իմ հաշիւներս ստանան. ցանկալի է որ օր առաջ գնամ Սիսիան. գուցէ Ձեզ մանրամասնաբար տեղեկութիւն տուած է Մուրատը. խնդրում եմ իմաց տալ այստեղ. զինուած գնալ թէ առանց գէնքի:

*Վրոյ Բիշու*  
Գրող Բիշու

12 Օգոստոսի 1906 թ.  
Զրաբերդ

60.- Սեբաստացի Մուրատն է, որ հայ-բաքարական ընդհարումներու այդ օրերուն կը ղեկավարէր Չանգեզուրի ինքնապաշտպանութեան կռիւները:

Ե 4.- ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Հ Յ Դ Ջրաբերդի շրջանի Ծառաստան գիւղի բնիկ հասարակութիւնից

Մենք ամբողջ հասարակութիւնս պահանջում ենք 1903, 1904 թ. կազմը, որովհետեւ երբ վերջացաւ դատա- վարական միջոցը եւ երբ երեւան եկան խաչագողների ազատ միջոցները, բոլոր ժողովուրդը յուսահատուեց, իսկ այժմ երբ հարցը գալիս է ժողովրդի ցանկութեանը, մենք ընդունում ենք հետեւեալ միջոցները որոնք են Դատաւարութիւն, խաչագողների հալածումը, թուղցիկ խմբերի ման գալը, ժողովրդի միջից խլրտում եւ երկպառակութեան վերջ դնելը, աշխատել իսկական եւ ազնիւ գործ վարել առանց խտրի, մտածել նաեւ Տաճկահայաստանի վրայ. այս է մեր պահանջը. իսկ հա- կառակ դէպքում, եթէ անընդունակ եղաւ մեր այս պա- հանջները, մենք այլեւս յեղափոխական ջենք, կը մտա- ծենք մեր մասին եւ կ'ապրինք մեզ համար:

ՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԲԱԲԱՆ ՍԱՀԱԿԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

1908 թ. Հոկ. 12 Մառաստան

Ե 5.- ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բլուր գիւղի դաշնակցական հասարակութիւնից

Յարգոյապատիւ Ընդհանուր Ժողովին

Նախ յայտնելով մեր խորին շնորհակալութիւնը յար- գելի Բիւրոյին որ մեր հասարակութեան կարծիքը եւս ուզեցել է իմանալ թէ մենք ինչ կարծիք ունինք դէպի յեղափոխութիւնը: Նախ Ձեզ յայտնի լինի որ մենք ան- կարող ենք լուրջ կարծիք յայտնել յեղափոխութեան ծրագրի ու գործունէութեան մասին. միայն թող ներ- լի մեզ ասել մի քանի խօսք մեր ներկայ կեանքի տխուր երեւոյթների մասին: Ձեզ յայտնի լինի որ օր ցերեկով մեր աչքի առաջ ալան-թալան է լինում, ցաւալի է ասել այն է, Հայ մարդի ձեռքով եւ մենք մեր վախից ու եր- կիւղից ստրկաբար լուրմ ենք, չգիտենք ինչ անենք, կամ ո՛ւմ դիմենք, եթէ ոչ միայն ու միայն Ձեզ ենք դիմում եւ ձեզանից բարոյական իրաւունքով օգնութիւն ենք խնդրում: Թող յարգելի Ընդհանուր Ժողովը հաւատա- ցած լինի որ մի ժամանակ մեզ շրջապատող ազգաբնա- կութիւնը մեր ազգի մասին յարգանքով ու պատկա- ռանքով էին խօսում, իսկ ներկայումս ցաւալի է ասել անարգանքի ու անպատուութեան ենք հանդիպում եւ մեզ պախարակում են որպէս յանցաւորներ. դուք գի- տէք որ առանց այդ էլ մենք լաւ օրի չէինք, կարօտ էինք կարեկցութեան ու օգնութեան՝ չքաւորութեան պատ- ճառով մինչեւ իսկ մեր ջնջին ամսավճարը անկարող ենք եղել իր ժամանակին վճարելու, այնպէս որ այդ մասին մինչեւ իսկ ենթարկուել ենք որոշ խստութեան, բայց այդ մեր պարտականութիւն է եղել, իրաւունք չունէինք չտալու եւ տուել ենք, բայց թող ներուի մեզ մի նկատո- ղութիւն անել որ մենք որ սպասում էինք որ եթէ մենք բռնութեան տակ ենք, շնորհիւ յեղափոխութեան պէտք է որ ազատուէինք, եւ եթէ մեր մարդկային իրաւունք- ներից մէկը բռնադատուած էր, յեղափոխութեան շնոր- հիւ պէտք է յետ ստանայինք. բայց հակառակը հաւա- տացնում ենք Աստուծով Ձեզ որ այն բռնութիւնը, այն թալան թուրանը, որ ազատ խօսքի ճնշումը որ ներկա- յումս մեր մէջ կայ գուցէ ոչ մի ժամանակ չի եղել. ու- ռեմն վատահոլութիւն առնելով յարգելի Բիւրոյի պահան- ջից որ մենք իրաւունք ունինք մեր կարծիքները եւ ցա- ւերը յայտնելու, դրա համար էլ մեր սրտի տարտերը, անպաճուճ ու պարզ խօսքերով արձանագրեցինք. ու- ռեմն երդում ենք բոլոր աստուածների անունով որ եթէ մի մարդ արարած մեզ այս մարդ անուան պատիւ չբերող դրութիւնից ազատէ, մենք նրա անունը յիշելիս իւրաքանչիւր անգամ մեր երեսները կը խաչակնքենք որպէս մեր սրտի մուրազը տուող սրբերի առաջ ենք ե- ռեսներս խաչակնքում. վերջապէս մենք չէինք կարող մեր սրտի բոլոր ցաւոտ զգացմունքները արտայայտ- անել, ուրեմն մենք եթէ մէկ ասինք դուք ի հարկէ հազա- ըր հասկացաք!!!<sup>61</sup>

Ձ.- ՋՐԱԲԵՐԴԻ Կ. Կ.Ի ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Փաստ. 274-5

Ձ 1.- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

908 Նոյ. 9

Ինչպէս Ձեզ յայտնի է, ահա մի ամբողջ տարի է, որ Ջրաբերդն անհոգածութեան երեսից այսօր ամէն ինչ կորցրել է եւ ոչ մի մխիթարական երեւոյթ գոյութիւն չունի:

Այսպիսի դրութեան մէջ մենք բարոյական պարտա- կանութիւն վերցրինք մեզ վերայ գործի գլուխ անցնել եւ մի կերպ աշխատել թոյլ չտալ զանազան բախտախըն- դիր եւ ստոր մարդկանց հիմնայատակ անել այն 15 տարուայ գործը, որի համար աշխատել եւ գոհ են գնա- ցել մեր պաշտելի ընկերները շատերն: Ճիշտ է, մենք վերցրինք մեր վերայ այդ պարտականութիւնը, բայց եւ այնպէս դրսի ընկերների ջերմ աջակցութիւնը անհրա- ժեշտ է, որովհետեւ այս անխիղճութիւնը եւ ռեակ- ցիան հեռացնելն հեշտ չէ եւ ժամանակի կարօտ եւ 1-2 ամսուայ մէջ որեւէ դրամական մուտք սպասելն միամտութիւն է:

Ձնայած այս բոլոր բացասական կողմերին մեր ա- ռաջ դրուած են շատ կարեւոր եւ պատասխանատու գործեր՝ մի կողմից պիտի աշխատել ակտիւ կերպով մասնակցել ընտրութիւններին Դումա-ի[ուսաստան] որի համար հարկաւոր է մարդիկ ուղարկել զանազան շրջաններ մեր ցանկացածների թեկնածութիւնը անց- կացնելու, միւս կողմից գլխաթափ եղած գինուորներին պէտք է մի կերպ բաւարարութիւն տալ եւ հեռացնել (որը որքան մեզ պիտի յաջողուի այսպիսի ժամանակ, այդ վերինը գիտէ<sup>62</sup> եւ գուցէ սուր կերպարանք ստա- նայ եւ ցաւալի դէպքերի տեղիք տայ, որովհետեւ կո- պէկներով գործ անել չի լինի), երրորդ կողմից վերջերս ինչ որ հայ-թրքական ընդհարման ստուեր է երեւում, մի խօսքով այս բոլորի մէջ առանց ընկերների եւ ան- կեղծ բարեկամների եւ գլխաւորն՝ առանց փողի, մարդ իր գլուխն է կորցնում, եւ ահա այդ դրութեան մէջ Ձեր ներկայացուցիչը, որը շատ լաւատես էր (գուցէ այդպէս էր իրան պահում) տուեց 400 ռ. եւ գնաց, իսկ մեզ թո- ղեց կրակի մէջ եւ գուցէ կեանքի տեսակէտից՝ վտանգի մէջ:

Այս բոլորից յետոյ դիմում ենք Ձեզ եւ խնդրում առանց յետաձգելու տեղափոխէք մեզ փոխարինաբար երկու հազար ռուբլի (2000 ռ.), չէ որ Ջրաբերդն էլ իր լաւ ժամանակ շարունակ տուել է դրսի Կ. Կ. [ներ]-ին եւ շատ անգամ եւ Ձեզ, ինչպէս ինքներս գիտենք եւ ինչ- պէս երեւում է այստեղի հաշիւներից. բացի դրանից

վերջին օրերս ահագին գէնքեր եւ ուրիշ իրեր ուղարկե- ցինք ներս եւ երբ խնդրեցինք Մուրատից եւ Առաքելից որ գոնէ դրանց փողերն վճարեն, նրանք պատասխանե- ցին որ այդ առթիւ ահագին փողեր է հաւաքուած եւ պէտք է պահանջել Ձեզանից, որի մասին իրանք կը գրեն այս նամակում:

Կրկին անգամ մենք մեր վերջնական խօսքն յայտ- նում ենք Ձեզ, որ լաւ մտածէք եւ անպայման առանց ուշացնելու տեղափոխէք 2000 ռ. հակառակ դէպքում բոլոր յետագայ այնպիսի ընկերների եւ գուցէ ցաւալի դէպքերի պատասխանատուութիւնը կ'ընկնի ամբողջո- վին Ձեզ վերայ:

Այդ գումարն փոխարինաբար ենք խնդրում Ձեզա- նից, որովհետեւ գէնքեր ունինք ծախելու եւ ծախուածի պէս իսկոյն կ'ուղարկենք, որովհետեւ հաւանական է որ սրանից յետոյ աւելորդ ծախքեր չունենանք. իսկ այդ շուտով չի կարելի անել քանի որ հարկաւոր է ամէնից առաջ հասարակութեան հաշիւ տալ, որպէսզի դրանով զանազան խօսակցութիւնների առաջն առնել. ընդունե- ցէք մեր անկեղծ բարեւանքը: Խնդրում ենք անպայման այս առթիւ հեռագրով իմաց տալ թէ համաձայն էք թէ ոչ:

Ջրաբերդի II Կ. Կ.-ի անդամներ՝ Ա. ԱՐԱՄԵԱՆ Հ. ՄԵՆԱԿ[?]

Մեր 3-րդ ընկերն չկարողացաւ ստորագրել, որովհետեւ քաքա- ղից բացակայ էր:

9/ XI 908 թ. Ջրաբերդ

Այս անգամ նամակի ներքե- ւում կնիք խփեցինք, քանի որ նոր ստորագրութիւններին չլինի թէ թիւրիմացութեան տեղիք լինի: Խնդրում ենք գրել եւ ուղարկել մեզ մի քանի փոստի հասցէներով [Կը տրուին հասցէներ ուղարկէն] Բոլորի տակերն գրել յանձնել (որեւէ անուն): Այսօր Մուրատն եւ Առաքելը<sup>63</sup> իրանց նամակներն ուղարկեցին փոստով:

Ա. ԱՐԱՄԵԱՆ

62.- «Այդ վերինը գիտ», այսինքն Աստուած գիտ: 63.- Սեբաստացի Մուրատ եւ այդ օրերու Ձանգեղուրի կղզուորուն իր գիւնակիցներն Կայծակ Առաքել:



Փաստ. 275-1

Ձ 2.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Հ. Յ. Դ. II Կ. Կոմիտէ.  
Ջրաբերդ  
1907 թ. 7 Յուն(ուար)

Ընկերներ,  
Քանիցս դիմում ենք արել ձեզ թէ գրաւոր եւ թէ բա-  
նաւոր կերպով եւ հրակիրել ձեր ուշադրութիւնը մեր  
չրջանի վերայ, սակայն ցաւօք սրտի ցայտօր ոչ մի գործ-  
նական օգուտ կամ աջակցութիւն չստացանք: Իրերի  
դրութիւնը տեսնելով մենք կանգ չառանք ծախսերի  
առաջ եւ մեր ընկերներից երկուսին ուղարկեցինք  
չրջանի մասին գեկուցում տալու եւ մեր վերջնական  
հրաժարականի մասին յայտնելու. սակայն չնայած ձեր  
խոստման երկու օրուայ ընթացքում ձեր որոշման մա-  
սին մեզ յայտնելու, մինչեւ օրս մի պատասխան կամ  
տեղեկութիւն տալու չնորհին անգամ չարժանացրիք

մեզ: Ակամայից զարմանում ենք. դուք կամ մոռացել  
էք, որ մի անհրաժեշտ գործի համար ձեզ դիմուած է, եւ  
կամ չրջանը մագաչափ անգամ չի հետաքրքրում ձեզ:  
Իրերի ներկայ դրութիւնը ստիպում է մեզ վերջին  
անգամ դիմել Ձեզ եւ խնդրել կարգադրութիւն, հակա-  
ռակ դէպքում հրաժարականում շեշտուած ժամանա-  
կամիջոցն անցնելուց յետոյ մենք մեզ բոլորովին ազատ  
կը համարենք: Սպասում ենք շուտափոյթ կարգադրու-  
թեան:

Հ. Յ. Դ. ՋՐԱԲԵՐԴԻ  
II Կ. ԿՈՄԻՏԷՑԻՆ՝<sup>64</sup>

64.- Նամակը ստորագրած են Ջրաբերդի Կեդր. Կոմիտէի 6  
կամ 7 անդամներ, որոնցմէ յստակ կը կարդացուին Ա. Արամ-  
եանի, Խան Ջաղի եւ Գասպի անունները:

XX

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ – ՊԱԹՈՒՄԻ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Նաւահանգիստի Կեդր. Կոմիտէի մէջ կ'ընդգրկէր կազմակերպական ընդարձակ շրջան մը, որ  
կը տարածուէր Պաթումի նաւահանգիստէն սկսեալ Սեւ Ծովու արեւելեան եւ հիւսիսային ափերը  
մինչեւ Օսեսա եւ Պեսարապիա, ներառեալ Խրիմի թերակղզին: Ծովեզերեայ քաղաքներու եւ գիւղե-  
րու մէջ, բացի տեղաբնիկ հայերէն, ԺԹ դարու երկրորդ կիսուն սուլթանական Թուրքիոյ բոնութիւն-  
ներու եւ համիտեան կոտորածներու հետեւանքով բազմաազար արեւմտահայ գաղթականութիւն  
ապաստանած էր Պաթումի, Աբխազիոյ եւ Կրասնոտարի շրջաններուն մէջ:

Հ. Յ. Դ. Նաւահանգիստի Կեդր. Կոմիտէի մէջ, որ VI թուահամարը կը կրէր Սարուստանի (Կով-  
կաս եւ Ռուսաստան) Կ. Կոմիտէներու շարքին մէջ, կը գործէր երկու տասնեակի հասնող կոմիտէնե-  
րով եւ ենթակոմիտէներով: Պաթումը եւ նուազ չափով մը Օսեսան կը հանդիսանային արտաքին  
աշխարհի հետ կապի գլխաւոր կետերը: Պաթում-Նաւահանգիստի կազմակերպութեան վստահուած  
էր նոյնպէս Երոպայէն առաքուած զէնքն ու զինամթերքը ստանձնելու եւ դէպի Երկիր հոսեցնելու  
խիստ փափուկ եւ վտանգաւոր պարտականութիւնը:

\*  
\* \*

Չորրորդ Ընդ. Ժողովի քրթածրարին մէջ գրեթէ ոչ մէկ փաստաթուղթ գոյութիւն ունի Նաւահան-  
գիստի շրջանէն: Միակը որ կայ՝ «Համառօտ տեղեկագիր նաւահանգիստի շրջանի» խորագրով ան-  
թուական եւ անստորագիր գրութիւն մըն է (չորրջ 5 մեծադիր էջ, 35 x 22 սմ.), որ փաստօրէն կազմը-  
ւած է Ընդ. Ժողովի աւարտէն շատ ուշ եւ սահմանուած՝ ներկայացուելու համար ամենայն հաւա-  
նականութեամբ, 1907 Դեկտեմբերի վերջերուն գումարուած Կովկասեան Ռայոնական Ժողովին:

Պոսքընի Հ. Յ. Դ. արխիւներուն մէջ, սակայն, կարելի է դաւ գտնել Նաւահանգիստ-Պաթումի Կ.  
Կոմիտէութեան մէջ 1905 եւ 1906 թուականներուն կայացած հետեւեալ 2 շրջանային ժողովներու ար-  
ձանագրութիւնները, որոնք բաական լայն չափով լոյս կը սփռեն կազմակերպական այս տարածուն  
շրջանի գործերուն վրայ:

1.- Արձանագրութիւն VI Կ. Կոմիտէի Շրջանային Ժողովի, գումարուած Փետրուար 24ին (Նաւա-  
հանգիստ 1905 թ.), ստորագրուած է ժողովին մասնակից պատգամաւորներու կողմէ: Կը գրաւէ մե-  
ծադիր 10 էջ:

2.- Արձանագրութիւն Հ. Յ. Դ. III Շրջանային Ժողովի VI Կենտրոնական շրջանի, գումարուած  
24-30 Նոյ. 1906ին, կապոյտ գոյնի խմորատիպ օրինակ, գծաւոր մեծ չափի (35 x 21 սմ.) 20 էջերու  
վրայ:

Շրջանային այս ժողովն է, որ կը քննէ Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդ. Ժողովի օրակարգը եւ կ'ընտրէ իր  
պատգամաւորը (Միք. Վարանդեան), ինչպէս նաեւ նոր Կ. Կոմիտէի կազմ:

Նշուած փաստաթուղթին կը միացնենք Շրջ. Ժողովի կողմէ Արեւելեան Բիւրոյին յղուած եւ ժողո-  
վականներէն ստորագրուած 29 Նոյ. 1906ի նամակը:

Յաջորդաբար թուականներու կարգով կու տանք վերեւ յիշատակուած չորս փաստաթուղթերը:

Ե. Փ.

Փաստ. 376-82

Ա1.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ VI Կ. ԿՈՄԻՏԵԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Հ. Թ. Դ. Կ. VI կոմ.-էն կարելու համարեց Նաւահանգիստում կազմել շրջանային ժողով, որին ներկայ լինելու հրահրուած էին հետեւեալ կոմիտէներն ու ենթակոմիտէները մասնակցելու շրջանային 1 ժողովին իրանց ներկայացուցիչների միջոցով: Նաւահանգիստը, Ձորափորը, Մաղկաձորը, Ջրաչէնը, Գաղթավայրը, Ապաստանը, Նոր-Քաղաքը, Կարմիրը, Դաշտը, Ամարանոցը եւ Կարծը: Ժողովները սկսուելու էին ներկայ ամսի 20-ից, բայց մի քանի ընկերների բացակայութեան պատճառով սկսուեցին Փետրուարի 24-ին, թէեւ Կարծի, Դաշտի, Ամարանոցի եւ Նաւահանգիստի ներկայացուցիչները էլի բացակայում էին, բայց ձայների օրինական մեծամասնութիւնը ներկայ լինելով՝ Կ. Կ.-ի ներկայացուցիչը, որը եւ նախագահում էր, ժողովը բացուած համարեց:

Որոշուեց հարցերի օրակարգ.- 1) Հաշուետուութիւն եւ նրա սխտեմը, 2) ինքնապաշտպանութիւն, 3) պրոպագանդա, 4) դաշնակցականներ ընդունելու պայմաններ, 5) Ուրիշ կազմակերպութիւնների հետ յարաբերութիւններ, 6) խաչագողներ, 7) Կ. Կ.-ի եւ մարմինների յարաբերութիւնները միմիանց հետ, 8) Շրջանային ժողովների ժամանակը, 9) շրջանների որոշումը, 10) զանազան հրատարակութիւններ եւ 11) Կ. Կոմ.-ի ընտրութիւն:

Անցնելով հերթական հարցերին՝ նախագահը հրահրեց Ձորափորի ենթ. կոմ.-ի ներկայացուցիչին Հաշուետուութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ:

Մաղկաձորի ենթ. կոմ.- խմբեր ունեն միայն քաղաքում թուով 14, 159 անդ. 80 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ:

Ջրաչէնի ենթ. կոմ.- ունեն 10 խ., 148 անդ. 70 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ:

Գաղթավայրի կոմիտէ.- քաղաքում, շրջակայ գիւղերում եւ Նոր-Աշխարհ աւանում ունեն 38 խ., 600 անդ., 350 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ:

Ապաստանի ենթ. կոմ.- Քաղաքում եւ շրջանի գիւղերում ունեն 7 խ. 130 անդ. 30 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ:

Նոր-Քաղաքի ենթ. կոմ.- քաղաքում եւ շրջանում ունեն 15 խ. 185 անդ. 90 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ:

Կարմիրի կոմիտէ.- Կարմիրում ունեն 6 խ. 100 անդ. 80 ուսուցիչ, եւ Նաւահանգիստում 1 խ. 12 անդ. 7 ուսուցիչ: Կոմ. ընտրութեան, որից երեւաց՝ թէ քաղաքում կան 9 խ[ումբ] 270 անդ. 80 ուսուցիչ, իսկ շրջակայ 3 գիւղերում կան 9 խ[ումբ] 115 անդ. 18 ուսուցիչ:

Գալով Հաշուետուութեան սխտեմին, որոշուեց ամէն ամիս Հաշիւ ներկայացնել Կ. Կ.-ին որոշուած ձեւով, եւ խնդրել Կ. Կ.-ին՝ որ պահէ Դրօշակի բոլոր այն համարները, որոնց մէջ կան մեր շրջանի Հաշիւների հրատարակութիւնը:

II Ինքնապաշտպանութիւն

Բաքուայ եւ Երեւանի վերջին ցաւալի դէպքերը ի

- 1.- Նիստերու արձանագրութեան մէջ ժողովի սկզբնաւորութիւնը նշուած է 24 Փետրուար, առանց տարեթիւի, որ ամենայն հաւանականութեամբ 1905 է:
2.- Այս եւ յաջորդ տեղեկագիրներուն մէջ յիշուած կուսակցական միաւորները կը համապատասխանեն հետեւեալ վայրերուն:
Նաւահանգիստ - Պարոմ
Չորափոր, Չորաբերդ, Մասիս - Արդուին եւ շրջակայքը
Շաղկաձոր - Քուրայիս
Ջրաչէն - Փոթի
Գաղթավայր - Սուխում, Օջամչիք
Ապաստանը եւ Գրուանդանը - Սոջի, Ասլոն
Նոր Քաղաք - Նովորոսիսկ
Ամարանոց (հաւանաբար նաեւ Եալաղը) - Անապա
Կարմիր - Ղրիմսկ
Անտառ - Տուապս
Կլորիկ - Թեոտոսիա
Դաշտ - Սիմֆերապոլ
Ջրաբերդ կամ Ջրաչէն - Սեւաստապոլ
Կայծ - Օտեսա

նկատի ունենալով՝ ժողովականները միաձայն որոշեցին առայժմ գինուել տեղական հնարաւոր եղած բոլոր միջոցներով եւ անմիջապէս գինավարժութեան դիմել, իրաւունք տալով մարմիններին, այդ գործին զարկ տալու համար ծախսել ընդհ. մուտքի 10%-ը բաժանելով նրան բոլոր շրջանների վրայ՝ կարիքի համեմատ: Ծանկալի համարուեց գինուերական խմբերը ջուկել եւ կազմել բոլոր խմբերի մանրամասն վիճակագրութիւնը ըստ կազմուած բլանկի<sup>3</sup>:

Փետրուարի 24-ի (երեկոյեան) նիստ

III Պրոպագանդ

Բոլոր շրջանները միահամուռ կերպով պահանջում էին պրոպագանդիստներ եւ աւելի մեծ թուով թերթեր ու թռուցիկներ:

Որոշուեց բոլոր միջոցները ձեռք առնել հնարաւոր եղած չափով բաւարարութիւն տալ[ու] այդ ընդհ. պահանջին, ունենալով ամբողջ շրջանի համար բացի Նաւահանգստից երեք պրոպագանդիստներ:

IV Դաշնակցականներ ոճրուներու պայմաններ

Որոշուեց անդամներ ընդունելիս զգոյշ ու պահանջկոտ լինել անդամների բարոյականի վերաբերմամբ:

V Ուրիշ կազմակերպութիւնների հետ յարաբերութիւններ

Օտար կազմակերպութիւնների հետ, (օր. Սոցիալ-դեմոկրատների, սոցիալ-յեղափոխականների, Սաքարթվելիստների<sup>4</sup> եւն.) որոշուեց հնարաւոր եղածին չափ համերաշխ գործել, առանց հակասելու Դաշնակցութեան ծրագրին եւ թոյլ չտալով ոտնատակ անել մեր կազմակերպութեան շահերը: Գալով Հնչակեաններին՝ ժողովականներից նրանք, որոնց շրջանում գոյութիւն ունեն հնչ.-ներ, միաձայն հաստատում էին, որ դա թայ-Ֆայական մի կազմակերպութիւն է բառիս ամենալայն մտքով, որ նրանք իրանց արհեստ են դարձրել օրիորդների առեւանգումը (մասնաւորապէս Սեւ Մովի փերում), կողոպտումների պատճառով սպանութիւններ կատարել, դաշնակցականներին սպանելը եւ ուրիշ մի շարք այդ կարգի սխրագործութիւններ. այնուամենայնիւ ի նկատի ունենալով կողկասեան IV ռայոնական ժողովի<sup>5</sup> պատճառաբանութիւնները ու որոշումը, որոշեց հնարաւոր եղածին չափ խոյս տալ բարդութիւններից:

VI Խաչագողներ

Որոշուեց առաջարկել դրացի Կ. Կոմ.ին<sup>6</sup> իրագեկ պահել իրանց շրջաններից փախած կամ աքսորուած

խաչագողների մասին, իսկ ինչ վերաբերում է զանազան յեղափոխական գործիչների պատկերների շահագործելուն, ցանկալի համարուեց խաչագողութեան այդ ձեւի առաջն առնելու համար, արգիլել առանձին անհատներին, յեղափոխական գործիչների նկարները վաճառելը, այդ մասին նոյնպէս տեղեկացնելով շրջանների Կ. Կոմ.ներին:

VII Կ. Կ.-ի եւ մարմինների յարաբերութիւնները միմիանց հետ

Հարց ծագեց թէ կարող է արդեօք Կ. Կ.-էն չհաստատել ընտրուած կոմ.-ի կամ ենթակ.-ի այս կամ այն անդամին, որը վճռուեց այն մտքով, թէ Կ. Կ.-էն լինելով իւր շրջանի ընդհ. հսկիչը, կապող է չէզոքացնել այս կամ այն անհատին, տալով սակայն պէտք եղած բացատրութիւնը: Իսկ եթէ տեղական մարմինը իւր վրայ կը վերցնէ պատասխանատուութիւնը, այդ դէպքում տեղական մարմինը ազատ է իւր որոշումների մէջ:

Թռուցիկներ հրատարակելը վերապահուեց միմիայն Կ. Կոմ.-ին:

Ծանկութիւն յայտնուեց, որ թէ կենտրոնական եւ թէ բոլոր մարմինները պահեն իրար հետ սերտ եւ ընկերական յարաբերութիւններ:

VIII Շոքամային ժողովների ժամանակը

Շրջանային ժողովները որոշուեց հրահրել տարեկան առնուազն մի անգամ, յարմարեցնելով նրան ընդհանուր կովկասեան ռայոնական ժողովներին, որպէսզի մեր շրջանի ներկայացուցիչը տանի մեր ամբողջ շրջանի կարծիքը եւ առաջարկները:

IX Շոքանների որոշում

Նաւահանգիստի կոմ.-է. Նաւահանգիստ իւր գիւղերով, Ձորափոր, Ձորաբերդ, Մաղկաձոր եւ Ջրաչէն:

Գաղթավայրի կոմ.-է. - Գաղթավայր իւր գիւղերով, Նոր Աշխարհ եւ Օջամչիք:

Ապաստանի ենթակ.- Ապաստան իւր գիւղերով, Խոյթայ, Շապուղայ, Ատլեռ, Կակուայ եւ Տուապս:

Նոր-Քաղաքի ենթակ.- Նոր Քաղաք իւր գիւղերով, Անաբայ, Ապին եւ Քուրմակի:

- 3.- Տպուած պաշտօնական թերթ՝ պարապ ձգուած տեղերը լեցնելու համար:
4.- Վրացական սոցիալ-ֆեդերալիստական կուսակցութիւն:
5.- Նշուած Ռայոնական ժողովը կայացած էր 1904 թ. Դեկտեմբերին:
6.- «Դրացի» Կ. Կոմիտեն վստահաբար Ջրաբերդ-Կարսի Կ. Կոմիտեն է:



Կարմիրի կոմիտեի: Կարմիր, խառն-Քաղաք եւ Դէմ-  
րուկ իրանց գիւղերով:

Դաշտի կոմիտեի: Դաշտ, Արմեանսկ, Աղ, Ջրաբերդ,  
Քարասուպազար, եւ Քէնջ իրանց գիւղերով:

Ամարանոցի ենթակա: Ամարանոց եւ Կլորիկ  
իրանց գիւղերով:

Կայծի կոմիտեի: Կայծ եւ Պեսարապիայի ամբողջ  
չրջանը:

Փետրուարի 25-ի Գիստ

Այս նիստին ներկայ լինելով Դաշտի ներկայացուցիչ-  
ը տուեց իրանց շրջանի մասին հետեւեալ տեղեկու-  
թիւնները: Դաշտում ունեն 13 խ. 170 անդ. 500 ու. ամսա-  
վճարով: Աղում ունեն 4 խ. 60 անդ. 80 ու. ամսավճար-  
իսկ Քառասու Պազարում 4 խ. 40 անդ. 48 ու. ամսավճար-  
ը: Դաշտում ունեն նոյնպէս եւ Կարմիր խաչի ընկե-  
րուկները (Կանանց) 1 խմ. 25 անդ. 40 ու. ամսավճար եւ 2  
կոթ մատակարար պէս 5000 ասեղներով: Այս շրջանի ներ-  
կայացուցիչն էլ մատնանիչ անելով իրանց շրջանի բա-  
ցառիկ պայմանները - ազգաբնակչութեան օտարացած  
լինելը, անհրաժեշտ է համարում ունենալ իրանց շրջա-  
նի համար առանձին շրջիկ գործիչ լուրջ մտաւոր պա-  
շարով:

X Զանազան հրատարակութիւններ

Շրջանային ժողովը անհրաժեշտ համարեց շուտով  
տպուած տեսնել առանձին գրքերով հետեւեալ հրատա-  
րակութիւնները:

ա. Տարին մի անգամ Դաշնակցութեան ընդհանուր  
նուիրատուութեան ցուցակը:

բ. Հ[այ] Յեղափոխութեան մանրամասն պատմու-  
թիւնը սկզբից մինչեւ մեր օրերը:

գ. Հնչակեանների հետ միութեան առթիւ Դրօշակի  
յաւելուածները (1899-ի կամ 1900-ի):

Փետրուարի 26-ի Գիստ

Այս նիստին ներկայ էր Նաւահանգիստի տեղ.

- Ջորափորի ենթակոմիտէի ներկայացուցիչ՝ ԵՂԻՇԷ
- Ապաստանից - ԿԱՐԷՆ
- Նոր Քաղաք - ՀԱՐՄԱՆ(?)
- Կարմիրից - ՍՈՒՐԷՆ
- Նաւահանգիստ - ԱՐՄԷՆ
- Ջրաչէնից - ՍԼԱԲ
- Մաղկաձորից - ԹՇՈՒԱՌԸ
- Գաղթավայրից - ՎԷՄ
- Դաշտի ներկայացուցիչ ԱՇՈՏԻ լիազօրութեամբ ԿԱՐԷՆ

կոմ. -ի ներկայացուցիչը, որը տուեց հետեւեալ հաշիւը.  
1904 թ. Հոկտեմբերին երբ նրանք ստանձնել են գործը  
Նաւահանգիստում կային 63 խ. 2500 անդամ. ներկա-  
յում ունեն 72 խ. 3000 անդ. 1200 ու. ամսավճարով. ու-  
նեն նոյնպէս Կ. խաչի ընկ., կանանց 8 խ., 200 անդ., 100  
ու. ամսավճարով:

Այս նիստում առաջ եկան որոշուած օրակարգից  
դուրս նոր հարցեր, որոնք են.-

Ա. Գաղթականութիւն եւ Բ. Դարձեալ հնչ.ների մասին:  
Ի նկատի ունենալով՝ որ Սեւ Մովսիսի ափի գաղթակա-  
նական միսիան ցանկալի հետեւանք չուենցաւ եւ գիտե-  
նալով՝ որ մօտ ապագայում նրանց դրութեան վտանգ է  
սպառնում, ժողովականները վճռեցին խնդրել Կ. Կոմ-  
էն բաւարար կերպով կարգադրել այդ հարցը մօտ  
ապագայում (քանի որ վճռուած է նրանց աքսորել max-  
imum մինչեւ Մայիս ամիսը):

Ի լրում V հարցի, ուր խօսուած է հնչ.ների մասին,  
ժողովականները կրկին վերադառնալով այդ հարցին,  
նկատելով՝ որ Կ. ՎՂ կոմիտէի շրջանում սովորական ե-  
րեւոյթ է դարձել հնչ.ների կողմից անձնական թէ կու-  
սակցական պատրուակներով ոտնձգութիւններ եւ ո-  
ճիրներ գործել, միաձայն որոշեցին ամբողջ շրջանից  
այդ խնդրի մասին փաստացի տեղեկագրեր ուղարկել Կ.  
Կոմ-ին, որի հիման վրայ վերջինս անյապաղ մի յարմար  
թուղթիկով դիմի իր շրջանի հնչ.ներին զգուշացնելով  
ապագայում այդ տեսակ սխրագործութիւններ կատա-  
րելուց:

XI Ընտրութիւններ

Գաղտնի քուէարկութեամբ կատարուեց Կ. Կոմիտէի  
ընտրութիւն: Ընտրուեցին հետեւեալ ընկերները մի  
տարի ժամանակով: Սարեան, Ջոհ, Ատ., Ղարիպ, Բար-  
խէ եւ Թեկնածու Առիւծ: Ցանկութիւն յայտնուեց Կ. Կ.-  
ի անդամներից գոնէ մին բոլորովին ազատ լինէր եւ  
տարին առնուազն մի անգամ այցելէր ամբողջ շրջանի  
մարմիններին: Միաձայն որոշուեց նաեւ պարտակա-  
նութիւն դնել Կ. Կոմ-ի վրայ հրաւիրել Մեյիքին իբրեւ Ի-  
րանց համահաւասար ընկեր, ուժեղացնելու համար  
կազմը:

Ջորափոր ենթակոմիտէի ներկայացուցիչ՝ ԵՂԻՇԷ  
այստանալ Ջորափոր  
Դաշտում Կարմիր  
Կարմիր ամբողջ  
Նաւահանգիստ  
Ջրաչէնից  
Մաղկաձորից  
Գաղթավայրից  
Դաշտի ներկայացուցիչ ԱՇՈՏԻ լիազօրութեամբ ԿԱՐԷՆ

Փաստ. 377-104

Բ 1.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. 3. Դ. ՍՈՐՁԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
VI ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՇՐՁԱՆԻ

Ժողովը կայանալու էր ամսիս Երն. բայց շրջաններից  
մի քանիսի ներկայացուցիչների ուշանալու պատճառով  
սկսուեց միայն ներկայ 1906 թուի Նոյեմբեր 24ին Մաղ-  
կաձորում, մասնակցութեամբ VI Կ. Կոմիտէի, Ջորա-  
փորի, Մաղկաձորի, Ջրաչէնի, Գաղթավայրի, Ապաս-  
տանի, Նոր-Քաղաքի, Կլորիկի եւ Կայծի ներկայացու-  
ցիչների. բացակայում էին Նաւահանգիստի, Դաշտի,  
Ամարանոցի եւ Ջորաբերդի ներկայացուցիչները, որոն-  
ցից վերջինին Կ. Կոմիտէն հրահրէր չէր ուղարկած<sup>7</sup>:

Կ. Կոմիտէի ներկայացուցիչը ժողովը բացուած յայ-  
տարարեց եւ առաջարկեց ընտրել նախագահ եւ քար-  
տուղար: Նախագահ ընտրուեց ընկ. Ղարիբը<sup>8</sup>. քարտու-  
ղար՝ ընկ. Կարէնը<sup>9</sup>: Աչքի առաջ ունենալով ներկայ  
եղողների օրինական թիւը, ժողովը օրինաւոր ճանաչ-  
ուեց:

Գաղթավայրի Կոմ-ի ներկայացուցիչը յայտնեց որ  
նա ներկայ ժողովին մասնակցելու համար ընտրուած է  
տեղական կոմիտէի կողմից ինչպէս այդ տեղի է ունեցել  
եւ անցեալում. այդ պատճառով հարց դրեց, թէ կարո՞ղ  
է արդեօք մասնակցել ժողովին: Ժողովը յենուելով Հ.  
Յ. Դ. ժամանակաւոր կանոնների յօդ. 33րդ-ի վրայ՝ գը-  
տաւ. - թէ նրա եւ թէ Ջորափորի ու Ապաստանի ներկա-  
յացուցիչների մասնակցութիւնը օրինաւոր է: Օրինա-  
ւոր ճանաչուեցին եւ միւս ներկայացուցիչները, որից  
յետոյ ժողովը անցաւ օրակարգ կազմելուն, որը ստա-  
ցաւ հետեւեալ ձեւը:

- 1) Տեղակազրերի եւ մանդատների ընթերցումն եւ  
նրանցից առաջացած հարցերի քննութիւն:
- 2) Ընդհ. ժողովում վճռուելիք հարցերի քննութիւն:
- 3) Մեր շրջանին վերաբերեալ զանազան հարցեր: Եւ
- 4) Ընտրութիւններ:

Բոլոր մանտաղների եւ տեղեկագրերի հետ ծանօթա-  
նալուց յետոյ հարց դրուեց թէ ուղարկե՞լ արդեօք այս  
մանտաղներն ու տեղեկագրերը Ընդհ. ժողովին՝ թէ ոչ:  
Թեր ու դէմ կարծիքներից յետոյ որոշուեց այդ բոլոր  
գրութիւնները կցել ներկայ արձանագրութեան եւ ու-  
ղարկել Ընդհ. ժողովին: Ժողովը ապա ձեռնարկեց ներ-  
կայացուցիչների զեկուցումները լսելու՝ գործերի դրու-  
թեան մասին:

Ջրաչէնի ներկայացուցիչը յայտնեց, որ ունեն 18  
խումբ 300 անդամով, որոնցից 95% բանուոր, իսկ մնա-  
ցածը մանր առեւտրական եւ արհեստաւոր: Տարեկան  
հասոյթն է մօտ 800 ուրբլի:

Գաղթավայրի ներկայացուցիչը կարգաց կոմիտէի  
ամփոփ տեղեկագիրը, որից ի միջի այլոց երեւաց որ  
ներկայումս Գաղթավայրի շրջանում կան 58 խմբեր, ո-  
րոնցից 4ը կանանց կարմիր խաչին են պատկանում. ան-  
դամների թիւն է 1100. որոնցից 90% կազմում են տաճ-  
կահայ գաղթական ծխախոտագործներ (գիւղացի). մը-  
նացածը արհեստաւոր մշակ եւ մանր առեւտրական:  
Տարեկան ընդհանուր հասոյթն է՝ 3000-8000 ուրբլի նա-  
յած ժողովրդի տնտեսական լաւ կամ վատ դրութեան:  
Մանդատների վերաբերմամբ յայտնեց որ Կովկասեան  
գործունէութեան վերաբերմամբ ստացուածները ու-  
ղարկուել են տաճկահայ համագումարին: Իսկ Ընդհ.  
ժողովի հարցերի վերաբերմամբ կոմիտէն ստացել է  
մօտ 30 մանտաղ, որոնցով խմբերը յայտնում են, որ  
անձեռնհաս են այդ հարցերի մասին կարծիք յայտնելու  
իսկ այլ մանտաղներ կոմիտէն չէ ստացել:

Ապաստանի ներկայացուցիչ զեկուցումից երեւաց որ  
905 թուի դեկտեմբերեան ապաստամբութիւնը իր արձա-  
գանքն է գտել եւ մեծ ծաւալ է ստացել Ապաստանում,  
որտեղ ժողովուրդը յարձակուել է կառավարական հիմ-  
նարկութիւնների եւ ամրոցների վրայ եւ երբ ապաստա-  
մբութիւնը ստացել է ընդհանուր բնոյթ, իրանք ստիպ-  
ւած էին մասնակցել կուռին, որով զգալապէս նպաստել  
են կուռի աջողութեան՝ եւ ստիպել են թշնամուն անձ-  
նատուր լինել. բայց այդ բոլորը եղել է ոչ Հ. Յ. Դ. ան-  
լան տակ: Թեակցիայի վրայ հասնելովը երբ բոլոր մեր  
գիտակից ընկերներին սկսեցին որոնել, նրանք ստիպ-  
ւած էին հեռանալ Ապաստանից, կամ լուռ ու մունջ մնալ  
նոյն շրջանում: Ինքն էլ դեռ նոր է վերադարձել Ապաս-  
տան եւ վերսկսել են կազմակերպչական գործը: Այժմ

7.- Ծածկանուններու բացատրութիւնը տեսնել նախորդ  
արձանագրութեան սկիզբը, ծանօթ. 2, էջ 158:  
8.- Աւետիս Ահարոնեան:  
9.- Արամ Յակոբեան:

Ապաստանում եւ Հրուանդանում կան խմբեր 700 անդամով. տարեկան հասոյթը կը լինի մօտ 2000 ռ. Ընդհ. ժողովի հարցերի վերաբերմամբ Ապաստանի խմբերից մանդատներ չունի, իսկ Հրուանդանի խմբերը մանդատ ուղարկել են:

II Նիստ 24 Նոյեմբերի (երեկոյեան)

Ներկայ են նախորդ ժողովում եղած բոլոր պատգամաւորները

Նոր Քաղաքի ներկայացուցիչը յայտնեց, որ իրանք ունեն 18 խումբ 500 անդամով, տարեկան հասոյթ 1400 ռուբլի: Տուած տեղեկութիւններից երեւաց որ Ս. դեմ.ները բռնութիւն են բանեցնում հայ բանուորութեան վրայ եւ չնայած դաշնակցական՝ բանուորների բաւական մեծ տոկոսին, գործադուլներ են յայտարարում առանց մեր մարմնի խորհրդակցութեան: Ժողովը գտաւ այդ վարմունքը անթոյլատրելի եւ որոշեց՝ ապագայում նոյնը չկրկնուելու համար Նոր-Քաղաքի ընկերների ուղարկութիւնը հրաւիրել այդ հազամանքի վրայ, պէտք եղած միջոցները ձեռք առնելու համար:

Ալտըիկի ներկայացուցիչ բանաւոր զեկուցումից երեւաց որ իրանց խմբերի թիւը հասնում է 13ի, 200 անդամով, որոնցից 80% բանուոր եւ գիւղացի. մնացածը մանր ու խոշոր վաճառականներ: Իրանց շրջանում կան բաւական չկազմակերպուած գիւղեր: Տարեկան հասոյթ մօտ 1000 ռուբլի:

Կաթի ներկայացուցիչը բանաւոր զեկուցեց, որ Կայծի շրջանում կայ 15 խումբ 600-700 անդամով. ներկայ վիճակում տարեկան հասոյթ մօտ 2000 ռուբլի, որը կարող է կրկնապատկուել ուղարկութիւն դարձնելու դէպքում: Նրա զեկուցումից պարզուեց որ այս շրջանը գէնք մատակարարելու գործում մեծ դեր է կատարել եւ ապագայում էլ կարող է շատ մեծ աջակցութիւն ցոյց տալ այս գործում: Այս շրջանը ունի մեծ յարմարութիւններ արտասահմանի հետ կապ պահելու եւ ռազմամթերք եւայլն տեղափոխելու համար:

Ձորափորի ներկայացուցիչը նախ յայտնեց, որ վերջին օրերս Ձորափորում տեղի ունեցած խռովութիւնների պատճառով ինքը չի կարող գրաւոր տեղեկագիր ներկայացնել: Ապա մանրամասն կերպով ծանօթացրեց ժողովականներին նորերս տեղի ունեցած սպանութեան, նրա պատճառների եւ հետեւանքի հետ, յայտնելով որ այնտեղ սկսուած եւ ոյթ է առած մի հակայեղափոխական-ռեակցիոն-կղերական (կաթոլիկ) հոսանք,

որ ուղղուած է առայժմ միայն Հ. Յ. Դ. [ի] դէմ եւ ըստառնում է սպանութիւններով, մատնութիւններով եւ այլն արմատախիլ անել Հ. Յ. Դ. գործունէութիւնը այդ շրջանում եւ խնդրեց ժողովին լուրջ ուշադրութեան առարկայ դարձնել այս հարցը: Կ. Կոմիտէի ներկայացուցիչը յայտնեց, որ արդէն համապատասխան եւ կտրուկ միջոցներ ձեռք են առնուած: Այդ յայտարարութիւնը բաւականացրեց ժողովին: Ձորափորում ներկայումս կայ 20 խումբ՝ 200 անդամով տարեկան հասոյթը կը լինի մօտ 800 ռուբլի:

Ձորաքերդում կայ 10 խումբ 150 անդամով, 500 ռուբլի տարեկան հասոյթ:

Ասսիսի վարչութիւնն ունի 8 խումբ, 100 անդամ, 200 ռ. տարեկան հասոյթ:

Մաղկաձորի ներկայացուցիչը յայտնեց որ իրանց շրջանում ունեն 18 խումբ 300 անդամով 1000 ռուբլի տարեկան հասոյթ: Ժողովը կանգ առնելով Հանքաձորի պայմանների վրայ, ուր աշխատում են տասնեակ հազարաւոր բանուորներ եւ որտեղ հնարաւոր է բաւական մեծ թուով գործազուրկ հայ բանուորներ մտցնել՝ գրտաւ որ անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել այդ վայրի վրայ եւ որոշեց, որ Կ. Կոմիտէն ամէն ճիգ գործ դնէ այդ ուղղութեամբ հարկ եղած քայլերն անելու: Ժողովը անհրաժեշտ է գտնում նոյնպէս, որ Մաղկաձորի ընկերներն էլ աւելի մեծ ուշադրութիւն դարձնեն այդ վայրի մեր բանուորների տնտեսական դրութեան վրայ:

Բոլոր ներկայացուցիչների տուած տեղեկութիւններից երեւաց որ մեր ամբողջ շրջանում կանանց Կարմիր Նաչի խմբեր, բացի Մաղկաձորից եւ Ապաստանից ամէն տեղ կան:

Կ. Կոմ.ի ներկայացուցիչը բանաւոր զեկուցեց, որ նրանց գլխաւոր հոգսերից մինն է եղել գէնք ու ռազմամթերք հասցնել Կովկասի գանազան վայրերը եւ դա աջողուել է բաւարար կերպով: Ուրիշ աչքի ընկնող ոչ մի գործունէութիւն չեն ունեցել: Նա խոստովանում է որ Կ. Կոմիտէն թոյլ է եղել ընդհանրապէս եւ մասնաւորապէս դէպի շրջանները եւ այդ պատճառով էլ նա դնում է հրաժարականի հարցը. բայց նա շեշտում է նոյնպէս որ շրջաններն էլ են թոյլ. նա մատնացոյց է անում եւ այն հանգամանքի վրայ, որ ներկայ տարուայ ընթացքում գրեթէ բոլոր շրջաններիցն էլ դրամ չէ ստացուել:

Ներկայացուցիչների տուած բացատրութիւնից պարզուեց՝

1) Մի քանի տեղեր «Նախագիծին» հակառակ լինելու պատճառով անդամավճարներ չեն տալիս եւ սպասում

են Ընդհ. ժողովին:

2) Մի քանի տեղեր չեն վճարում անդամավճարներ, իրանց հաշիւը 1.5 տարի չտպագրուելու պատճառով:

3) Մի քանի տեղեր էլ դրա պատճառն է ներկայանում ժողովրդի վատ տնտեսական դրութիւնը:

Կ. Կոմիտէի զեկուցումը լսելուց յետոյ հարց ծագեց թէ ինչու արդեօք նա չի գործադրել նախորդ Շրջանային ժողովի մի քանի որոշումները, մանաւանդ վճարել էր Կ. Կոմիտէն մի ամսուայ մէջ պէտք է ընթացք տար այդ որոշումներին: Օրինակ.՝ մինչեւ այժմ չի գործադրուել Ստ. Ուստեանի սպանութեան գործում մեղսակից ճանաչուող Օր. Խ. Նալպանդեանի եւ Բաղտիկի մասին տրուած որոշումները, որոնք երկուսն էլ ապրում են հէնց Նաւահանգստում: Սպանուածի մօր եւ որբ քրոջ նիւթական աջակցութեան ձեւի մասին ժողովի որոշումները: Ժողովը լսելով Կ. Կոմիտէի ներկայացուցիչի բացատրութիւնը, թէ նրանք չեն գործադրել այդ վճարը, որովհետեւ իրանք դէմ են եղել այդ որոշման՝ գտաւ այդ բացատրութիւնը անհամոզիչ, քանի որ Կ. Կոմիտէի իրաւասութիւնից դուրս է չգործադրել մեր շրջանի ամենաբարձր մարմնի տուած վճարը եւ որոշեց (7 ձայնով ընդդէմ 2ի) պարտաւորեցնել Կ. Կոմիտէի նոր ընտրուելիք մարմնին, որ նա նախկին Շրջանային ժողովի թէ այդ եւ թէ ուրիշ այժմէութիւն ունեցող որոշումները անպայման կերպով գործադրէ:

III Նիստ 25 Նոյեմբերի (առաւօտեան)

Այս նիստին ժամանեց, բացի նախորդ ժողովում եղած պատգամաւորներից եւ Նաւահանգստի ներկայացուցիչը, որի տուած տեղեկութիւններից երեւաց որ ներկայումս ունեն՝

ա) Կանանց Կարմիր Նաչի 10 խումբ՝ 200 անդ., տարեկան հասոյթ 1000 ռուբլի

բ) Տղամարդկանց 88 խումբ, 2500 անդ., տարեկան հասոյթ 8000 ռուբլի

Այս խմբերից 16ը (14 խումբ խլաթցիների եւ 2ը բարեղցիների) ներկայումս ըմբոստացել են եւ չեն ճանաչում ոչ մի մարմին. իսկ մնացած 52 խմբերից 19ը ներկայացրել են մանդատներ, իսկ մնացած 33 խմբերը չեն հասցրել. սակայն Նաւահանգստի ներկայացուցիչը յայտնեց, որ այդ խմբերից մօտաւորապէս կէսը ընդունում է «Նախագիծը» իսկ միւս կէսը հակառակ է Կովկ. գործունէութեան: Ժողովը ծանօթացաւ Նաւահանգստի խմբերից ստացուած մանդատների հետ եւ պարզուեց՝ որ

11 խումբ 258 անդամով ընդունում են Նախագիծը: 7 խումբ 197 անդամով հակառակ են Նախագիծին: 1 խումբ 16 անդամով ձեռնպահ է մնում այս հարցում:

Ժողովը այս նիստում բազմակողմանի քննութեան առարկայ դարձրեց այն պատճառները, որոնք առաջ բերին ըմբոստութիւնը եւ գտաւ (միաձայն) որ դա արդիւնք է՝

ա) Կարգապահական խիստ պակասութեան, որի շնորհիւ մի կարգ արատաւորուած դաշնակցականներ, որոնք վաղուց մեր շարքերից դուրս պէտք է ձգուէին, մնացել են կազմակերպութեան մէջ եւ նոյնիսկ պատասխանատու դերեր են ստանձնել. որով այսօր իրանց հին բնաւորութիւնն են երեւան հանում եւ օգտուում խառնակ դրութիւնից:

բ) Զանազան թայֆայապետների փառամոլական եւ եսական ձգտումների, որոնք մասնաւորապէս պարարտ հող գտան հայ-թրքական ընդհարումներից յետոյ անգործ մնացած գինուորների մէջ:

գ) Սառնակ դրութիւն ստեղծուելուն նպաստեց նոյնպէս բուրժուական անամօթ տարրերի վայնասունը, որոնց Հ. Յ. Դ. դուրս է վանում հասարակական ասպարէզներից, պաշտպանելով աշխատաւոր հանրութեան շահերը: Պակաս նշանակութիւն չունի նաեւ՝

դ) Մեր խմբերի անդամների տգիտութիւնը, որի պատճառով գանազան ռեակցիոն տարրեր կարողանում են շահագործել նրանց նուիրական զգացումները «Նախագիծ» գործադրութեան առիթով, մրթացնելով նրանց գիտակցութիւնը:

ե) Եւ վերջապէս՝ երկրի դրութեան վատանալը եւ նրա անդրադարձումը տաճկահայերի տրամադրութեան վրայ՝ եւ որոշեց՝

ա) Զէզոքացնել եւ հեռացնել գործից թայֆապետներին, չվախենալով նոյնիսկ խմբերի պակասելուց. եւ

բ) Ամէն կերպ աշխատել գիտակցութեան բերելու մեր մասսաներին, ազդեցիկ եւ գիտակից ընկերների միջոցով:

Այս խնդրի քննութեան ժամանակ հարց ծագեց, թէ իրաւունք ունէ՞ր արդեօք Արեւ[ելեան] Բիւրոն տաճկահայերի խորհրդակցական համագումարը հրաւիրելու: Երկար վիճաբանութիւններից յետոյ դրուեցին հետեւեալ բանաձեւերը:

Ա. Բանաձեւ.

1) Արեւելեան Բիւրոն իր իրաւասութիւնից դուրս է եկել, առանց գոնէ շրջանի Կ. Կոմիտէների կարծիքը վերցնելու, մի այդպիսի ժողով գումարելով:

2) Որ դա եղել է գուտ տաճկահայերի ժողով (5 ձայն ընդդէմ 5ի):

Բ. բանաձեւ.

Հանգամանքներն ու ժամանակը այնքան փոթոր-

կալից էին, որ Ար(եւելեան) Բիւրոն չէր կարող եւ ստիպուած էր հրաւիրել այդ համագումարը: այդ պատճառով էլ Շրջանային Ժողովը կանգ է առնում հարցի միայն իրաւական կողմի վրայ եւ գտնում որ Ար(եւելեան) Բիւրոն իր իրաւասութիւնից դուրս է եկել հրաւիրելով համագումարը եւ ցանկութիւն յայտնում, որ գէթ ապագայում Հ. Յ. Դ. ամէն մի մարմին դուրս չգայ ծրագրով սահմանուած իրաւունքից (4 ձայն, 5 ընդդէմ, 1 ձեռնպահ):

**Գ. քանաձեւ.**

- 1) Կարիքը օրէնք չունի եւ ոչ մի իրաւասութեան մասին չի կարելի խօսիլ, ուրեմն Ար(եւելեան) Բիւրոն այդ քայլն արել է զիջելով այն աղմուկող հարցերին՝ որոնք քննուել են հէնց այդ համագումարում:
- 2) Ապօրինի քայլ կը ժամարուէր այն ժամանակ երբ ժողովականները սկզբից հրաժարուէին իրանց արտօնութիւնից (1 ձայն ընդդէմ 9)<sup>10</sup>:

IV Սիստ 25 Նոյ. (Երեկոյեան)

**Ներկայ են բոլոր ընկերները**

Նախքան «Ընդհ. Ժողովի պարագմունքները» հարցերի քննութեան անցնելը, որոշուեց մի վերստուգիչ յանձնաժողով ընտրել, շրջանի եւ Կ. Կոմիտէի հաշիւները քննելու. ընտրուեցին ընկերներ՝ Աշոտ, Վահան եւ Ղարիբ-Երկաթ:

10.- Հարցը կը վերաբերի ամիս մի առաջ, 1906 թ. Դոկտեմբերի վերջերուն Արեւելեան Բիւրոյի հրաւերով կայացած «Կովկասաքնակ տաճկահայ դաշնակցականներու համագումարին», որ պիտի քննէր Կովկասեան Նախագիծը եւ դատապարտութեան խօսք ըսէր խմբապետ Միհրանի գլխաւորած արակողմեան անջատողական շարժման մասին:

Հ. Յ. Դ. արիւնքներուն մէջ մեր փնտռութեանը՝ այդ համագումարի արձանագրութիւնները երեւան հանելու՝ եղան ապարդիւն: Այսուհանդերձ գտանք 15-41 եւ 16-147 թուահամարները կրող Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյի տպագիր հետեւեալ շրջաբերականը, որ փաստօրէն ժողովի գումարման հրաւերն էր.

**Ընկերներ!**

Այքի առաջ ունենալով Կովկասեան գործունէութեան նախագծի շուրջը ծագած տարաձայնութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոն սրանով դիմում է անում Ռուսաստանի սահմաններում ապրող դաշնակցական քիւրքահայ ընկերներին, առաջարկելով նրանց որոշ եզրակացութեան գալու համար կազմել խորհրդակցական ժողով: Պատգամատրներին միջոցով եզրակացութիւնները տրուելու են ի գիտութիւն առաջիկայ Ընդհանուր Ժողովին:

Խորհրդակցական ժողովի համար ամէն մի 500 դաշնակցական ընկեր ուղարկում են մէկ պատգամատր:

Կռուի վայրերում գտնուող ընկերները ամէն մի շրջանից ուղարկում են մի մի ներկայացուցիչ անկախ իրենց թուից: Այդ վայրերն են՝ Այգեստան, Ապասած, Միւնիք, Մրգաստան, Ռսկանապատ (յաջորդաբար՝ Գանձակ, Ղարաբաղ, Միւնիք (որ արդէն մաս կը կազմէր Ղարաբաղի Կեդր.Կոմիտէութեան), Երեւան եւ Պաքոյ): Ժողովի տեղի եւ ժամանակի մասին կը յայտարարուի առանձին ընտրուած պատգամատրներին: Ընտրութիւնները պէտք է սկսուեն անմիջապէս եւ վերջանան Հոկտ. կէսին: Ընտրուածների անունները հարկատր է անմիջապէս յայտնել Բիւրոյին:

Ժողովը, գումարուելուց յետոյ, իր կողմից հրապարտում է խորհրդակցական ձայների իրաւունքով այն ընկերներին, որոնց մասնակցութիւնը անհրաժեշտ է համարուում:

Ամէն մի պատգամատր պէտք է բերի իրեն ընտրողների ցանկը եւ նրանց կարծիքներով արձանագրութիւնը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Յարող շօշափելի վկայութիւնը այդ ժողովի գումարման մասին կու տայ «Դրօշակ» (1906 թ. Նոյեմբեր), որ «Դիմում» խորագրով կը հրատարակէ հետեւեալ յայտարարութիւնը (Փաստ. 357-33).-

**ԴԻՄՈՒՄ**

Կովկասաքնակ տաճկահայ դաշնակցական ներկայացուցչական Համագումարը, որ հաւաքուած էր «Կովկասեան Նախագծի» շուրջը տարածուած խնդիրներն քննելու, ի միջի այլոց, քննութեան առնելով վերջին 4-5 ամսուայ ընթացքում մամուլի մէջ եւ զանազան խաւերում յանուն տաճկահայ դատի մղուած պայքարը, որով իբր թէ պաշտպան են հանդիսանում մեր դատին, յայտարարում է.

1) Որ դա հակայեղափոխական մութ տարրերի ազդեցութեամբ - զանազան մութ, ստոր, ետական նպատակների համար:

2) Որ այդպիսի մի ընթացք լոկ դաւաճանական դիրք է տաճկահայ դատի հանդէպ:

Որ դաշնակցութիւնը իբր հայ ժողովրդի արդար դատի միակ պաշտպան, այսօր էլ գործում է նոյն ճանապարհով՝ ինչ որ 16 տարուց ի վեր:

Համագումարը սրանով կոչ է անում ամբողջ հայ հասարակութեան եւ մասնաւորապէս Կովկասի դաշնակցականներին, զգույշ մնալ այդ հակայեղափոխական տարրերից եւ նրանց պարագաներից:

ԿՈՎԿԱՍԱՔՆԱԿ ՏԱՃԿԱՀԱՅ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Քաղ, 30 Հոկտ. 1906

**Բ 2.- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՐԱՊԱՏՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ**

**I ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ**

**1. Ժողովրդի տնտեսական կազմութիւնը եւ անդրադարձումը լեռ. շարժումների վրայ:**

Ընկերները շեշտեցին որ մեր շրջանում դաշնակցական մասսան գլխաւոր երկու մասերի է բաժանուում. գիւղացիութեան եւ բանուորութեան:

ա) **Գիւղացիութիւն:** Գաղթաւայրի, Ապաստանի, Նոր-Քաղաքի եւ Կլորիկի<sup>2</sup> ընկերների տուած մանրամասն տեղեկութիւններից պարզուեց, որ հայ գիւղացիութիւնը (անհող) մեր շրջանում մօտ քսան հազար, կազմուած է տաճկահայերից, որոնք թէեւ հարստահարուած կալուածատէրերից եւ մանաւանդ ծխախոտի ֆիրմաներից, բայց չունենալով հարկաւոր մտաւոր պատրաստութիւն, միւս կողմից լինելով օտարահայատակ եւ չունենալով ոտքի տակ իրաւական հող, յեղափոխական շարժումների մէջ ակտիւ գործունէութիւն չեն ցոյց տուել բացի Ապաստանից (որը պատահական ընդթ ունէր):

Ժողովը որոշեց՝ մէկ կողմից պրոպագանդ մղել նրանց մէջ տնտեսական հողի վրայ, միւս կողմից միջոցներ ձեռք առնել նրանց օր առաջ ռուսահայատակ դարձնելու որպէսզի պատրաստ լինեն աւատական ազրաբային շարժման մէջ ջերմ մասնակցութիւն ունենալու:

Կլորիկի պատգամաւորը յայտնեց, որ մի քանի հատ հայ (դաշնակցական) երկրագործներ կապալով վերջընում են հողերը կալուածատէրերից եւ թանկ գնով վարձու են տալիս հայրենակից չքաւորներին: Ժողովը գըտաւ՝ այդպիսի դէպքերը ոչ թոյլատրելի Դաշնակցութեան մէջ եւ յանձնարարուեց Կլորիկի ընկերներին այժմեանից միջոցներ ձեռք առնել այդ տգեղ երեւոյթի դէմ:

բ) **Բանուորութիւն:** Նաւահանգստի, Նոր-Քաղաքի եւ Կլորիկի պատգամաւորները վկայում էին որ իրանց շրջանի դաշնակցական բանուորները սարքել են առանձին գործադուլներ. միշտ մասնակցել են ուրիշ կուսակցութիւնների յայտարարած գործադուլներին եւ սրանից յետոյ էլ կը սարքեն ու կը մասնակցեն, բացի «Կայծի» ընկերներից, որոնք մի անգամ չարաչար խաբուած Մոցիլալ Դեմոկրատներից եւ տեղները կորցրած՝ վրձուել են այլեւս ոչ մի գործադուլի չմասնակցել:

Ընկերները շեշտում էին, որ շատ անգամ միւս կուսակցութիւնները, գլխաւորապէս Ս.Դ.ները տմարդի

կերպով են վարուել մեր բանուոր-ընկերների հետ:

Ժողովը պարտաւորեցրեց ընկերներին, իրանց տեղերը գնալուց անմիջապէս կազմել մանրամասն, փաստացի եւ ճշգրիտ տեղեկագրեր այդ մասին եւ ուղարկել Կ. Կոմիտէին, որը կ'ուղարկէ այդ փաստաթղթերը Բիւրոյին՝ մամուլի մէջ դուրս բերելու համար:

2) Ժողովրդի տրամադրութիւնը եւ նրա վերաբերմունքը դէպի այդ մարմինները:

Ժողովրդի վերաբերմունքը դէպի Հ. Յ. Դ-ը հայթրեքական ընդհարումների ժամանակ գերազանց էր. իսկ ընդհարումները դադարելուց եւ ռեակցիայի ուժեղանալուց յետոյ մասամբ սառն է. այնուամենայնիւ աւելի լաւ է քան դէպի միւս կազմակերպութիւնները:

3) Տեղական մարմինների կազմը եւ նրանց ծաւալը զանազան խաւերում:

- ա) **Չոռափոր կոմիտէ** անդամներն են՝ 2 ուսուցիչ, 1 ծառայող, 2 միջակ վաճառական որոնցից արիեստաւոր 60%. մանր վաճառական 37.5% միջակ վաճառական 2.5%:
- բ) **Նաւահանգստ կոմիտէ** անդամներ՝ 4 գործակ., 1 մանր առեւտրական խմբ(երի) անդամ 2500, բանուոր 70% արիեստաւոր բանուոր 25% մանր առեւտրական 5%
- գ) **Չոռաբերդ եւ Մասիս ենթակոմիտէ** անդամներ՝ 4 գիւղացի 1 տրուտը խմբ(երի) անդամներ 250, գիւղացի 100%
- դ) **Չոռաշեն ենթակոմիտէ** անդամներ՝ 1 բանուոր, 1 աւամնարոյժ 1 առեւտր. մանր 1 գործարանատը 3 բանուորով բանուոր 95% ծառայող 2% մանր առեւտրական 3%
- ե) **Գաղթաւայր կոմիտէ** անդամներ՝ 1 արիեստ. 1 ուսուցիչ 2 մանր առեւտր., 2 երկրագործ 1 հաշուապահ գիւղացի 90% բանուոր 3.5% արիեստ. 3.5% մանր առեւտ. 3%

խմբ. անդ. 1100,

- զ) Ապաստան եւ Գրուստան կոմիտեի անդամներ 5 մանր առեւտրական լուծուած նոր ընտրութիւն պէտք է լինի: խմբ. անդ. 700, գիւղացի 96% բանուոր 2% արհեստ. 1% մանր առեւտրական 1%:
- է) Նոր-Քաղաք կոմիտեի անդամներ 4 մանր առեւտրական, 1 արհեստաւոր խմբ. անդ. 500, գիւղացի 53% բանուոր 40% արհեստ. 2% մանր առեւտ. 3% միջ. վաճառական 2%
- ը) Կոտիկ ենթակոմիտեի անդամներ 4 մանր առեւտ. 1 միջ. վաճառական խմբ. անդ. 200, բանուոր 40% գիւղացի 35% արհ. 10% մանր առեւտր 7.5% միջ. վաճ. 7.5%
- թ) Կաթ կոմիտեի անդ. 2 մանր առ. 2 գործակատար 2 ուսանող խմբ. անդ. 700, բանուոր 90% ուս. համալսարանի 3% մանր առ. 4% մեծ վաճ. 3%
- ժ) Ծառկաձոր ենթակոմիտեի անդ. 1 ուսուցիչ 1 ուս(անող) 1 արհեստ. 1 կալուածատեր 1 վաճառական խմբ. անդ. 200, բանուոր 20% արհ. 10% աշակերտ 10% մանր վաճ. 50% մեծ վաճ. 10%
- ժա) Ամարաճոց.....
- ժբ) Ղաշտ.....

- 4) Աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան գործի համար առաջ եկած մարմինները, նրանց ծաւալն ու գործունէութիւնը  
Ոչ մի տեղ առանձին մարմիններ չեն եղել. բոլոր գործերը վարել են տեղական մարմինները ուժեղ կամ թոյլ կերպով:
- 5) Կազմակերպութիւնից դուրս գտնուող խաւերի պահանջները դէպի կազմակերպութիւնը եւ նրանց ստանձնած պարտականութիւնները:  
Մեզանում այդպիսի պահանջներ եւ ստանձնած պարտականութիւններ չկան:
- 6) Ռուսահայ մարմինների վերաբերումը դէպի տաճկահայ դատը:  
Մեր մարմինների ներկայացուցիչները յայտնում են

որ այստեղ վերաբերմունքի հարց չի կարող լինել. մինչեւ հիմա այդ դատը տարել են եւ կը տանեն:

**Ծանօթութիւն.** Մեր մարմինները մօտաւորապէս 70% տաճկահայեր են. ուստի կարելոր համարուեց շրջանի տաճկահայ դաշնակցականների վերաբերմունքը յայտնել դէպի Կովկ(ասսան) նախագիծը: Պարզուեց որ՝

**«Կայծ»** ընկերները «Նախագիծին» հակառակ են. ջերմ կողմնակից ինքնապաշտպանութեան եւ ցանկութիւն են յայտնում, որ կովկ. գործունէութիւնը եթէ հարկաւոր է, որ Հ. Յ. Դ. ը իր վրայ չառնէ, այլ թող անեն միւս կուսակցութիւնները:

**«Կլորիկ»** ընդունում են «Նախագիծը». իրանց կողմից բարոյական նիւթական աջակցութիւն միայն:

**«Նոր-Քաղաք»** համակրում են «Նախագիծին» բայց գործնական ոչ մի աջակցութիւն չեն ցոյց տայ, բացի դրամականից:

**«Ապաստան»** սկզբունքով ընդունում են, գործնական ոչ, իրանց շրջանում:

**«Գաղթավայր»** մեծամասնութիւնը ընդունում է սկզբունքով, գործնականով ոչ. փոքրամասնութիւնը չի ընդունում:

**«Ջրաչէն»** կովկ. գործունէութիւն ընդունում են, բայց ընդհ. յեղափոխութեան մէջ աւանգարդ չլինել, այլ հետեւողականութեամբ:

**«Նաւահանգիստ»** 40% բոլորովին չի ընդունում: 30% ձեռնպահ է մնում եւ ենթարկուելու է Ընդհ. Ժողովի վճռին. իսկ 30%ը ընդունում է:

V Նիստ 26 Նոյեմբերի (առաւօտեան)

Ներկայ են բոլոր պատգամաւորները

7) Անփոփ գեկուցում բոլոր դաշնակցական մարմինների գործունէութեան յիշ. ձեռնարկներ, պրոպագանդա, ինքնապաշտպանութեան միջոցներ եւ ժողովրդի զինումն, յարաբերութիւններ եւ համերաշխ գործակցութիւն այլ ազգային եւ յեղ. կուսակցութիւնների հետ:

**«Նաւահանգիստ»** մասնակցել է 1905 Նոյեմբեր 30ի բարրիկատային ցոյցին<sup>11</sup> եւ Օդեսայում սպանուած ուսանողի յուղարկաւորութեան առիթով կազմակերպուած ցոյցին. իր զինուորական ոյժով, դրօշակով եւ ճառարխօսով: Պրոպագանդը տարուած է շատ անշնորհք որովհետեւ մեր պրոպագանդիստները չէին համապար-

11.- Փողոցներու մէջ քարեր էլ զանազան այլ իրեր էլ պատճեններ կանգնեցնելով ցոյց:

տասխանում իրանց կոչմանը եւ դա առիթ է տուել ծանր թիրիմացութիւններին:

Յարաբերութիւններ եւ համերաշխ գործակցութիւն այլ յեղ. տարրերի հետ: Յարաբերութիւն եւ համերաշխութիւն եղել է միայն Ս[ոցիալ] և [եւրոպացիներ]ների հետ. իսկ Ս[ոցիալ] դ[եմոկրատ]ների հետ եղել է սառն եւ վերջերս նոյն իսկ լարուած՝ շնորհիւ վերջինների անտակտութեան:

**«Ապաստան»** Առանձին ձեռնարկներ չէ ունեցած. բայց ջերմ մասնակցութիւն ցոյց տուած է 1905 Դեկտ. 28-Յունուար 2ի բռնու ապստամբութեան Ս. դ. ների եւ Ս. ու. ների հետ միասին եւ մեծ աջակցութիւն է ցոյց տուած այդ կազմակերպութիւնների ղեկավարների փախստեան գործին: Բնական է որ յարաբերութիւնները լաւ են եղած:

**«Նոր-քաղաք»** Առանձին եւ միացած ձեռնարկներ չեն եղած. լաւ յարաբերութեան մէջ են Ս. ու. ների հետ եւ որոշ աջակցութիւն են ցոյց տուել մանր գործերում:

**«Կլորիկ»** Արած է դրամական օժանդակութիւն եւ գէնքի մատակարարումն. պրոպագանդ չկայ. ինքնապաշտպանութեան միջոց չկայ. ժողովրդի զինում չկայ. ազգային եւ այլ յեղ. կուսակցութիւնների հետ ոչ մի կապ չկայ. չեն մասնակցել յեղափոխութեան միջոցին ոչ մի ցոյցի եւ նոյնիսկ ոչ մի միտինգի. բոլորովին հեռու են մնացել:

**«Գաղթավայր»** Յեղ[ափոխական] որեւէ ակտիւ ձեռնարկ եղած չէ: Պրոպագանդան թոյլ է եղել. հրատարակել եւ մասնակցել է մի քանի գործադուլների, միտինգների եւ բաց է թողել մի շարք շրջաբերականներ եւ թուղակներ, որոնց մի քանիսը օտար յեղ[ափոխական] Ս[ոցիալ] կուսակցութիւնների հետ, հայերէն, ռուսերէն եւ վրացերէն: Ժողովրդի զինումը բաւարար չափով կատարուել է: Հնչակեանների հետ յարաբերութիւնները չափազանց լարուած են եղել. պատահել են զինուած ընդհարումներ եւ սպանութիւններ. սակայն այժմ կրքերը խաղաղուել են: Ս. ու. եւ Ս. դ. ների հետ աշխատել է միշտ համերաշխութիւն պահպանել. մասնակցում է միջկուսակցական խորհուրդին Կոալիցիոն[ի] սովետ [ուսկաստաւ. Կոալիցիոն խորհուրդ]: Ս. դ. ների հետ եղել են ինցիդենտներ<sup>12</sup> շնորհիւ նրանց անտակտութեան:

**«Կայծ»** Յեղ. ակտիւ ձեռնարկներ չէ ունեցած. մասնակցած է Ս. դ. ների գործադուլին եւ վնասուած դուրս եկած: Ինքնապաշտպանութիւն չկայ. պրոպագանդան թոյլ է:

**«Ջրաչէն»** Յեղ. առանձին ձեռնարկներ չէ ունեցած. մասնակցած է գործադուլներին. ինքնապաշտպանութիւն չկայ. պրոպագանդան թոյլ է:

**«Մաղկաձոր»** Յեղ առանձին ձեռնարկ չէ ունեցած. ջերմ մասնակցութիւն ցոյց տուած է Ս. դ. եւ Ս. ու. ների սարքած ապստամբական շարժումներին, որոնք անա-

ջողութեամբ են վերջացել. պրոպագանդան լաւ է, ինքնապաշտպանութիւնը՝ բաւարար:

**«Չորափոր»** եւայլն. Ոչ մի առանձին յեղ. ձեռնարկ չի ունեցել: Ընդհարուել են հնչակեան եւ հուլիսական<sup>13</sup> կուսակցութիւնների հետ եւ զոհ տուել:

8) Կազմակերպութեան եկամուտների աղբիւրները ներկայումս եւ ապագայում:

Եղած են անդամավճարներ, նուէրներ, ներկայացման հասոյթներ, հանգանակութիւն եւայլն: Մուտքը թոյլ է եղած մարմինների թուլութեան եւ տնտեսական ճգնաժամների պատճառով:

- Ապագայի համար՝
  - ա. բանաձեւ. Ընդհ. Ժողովից յետոյ անհրաժեշտ է «փոթորիկ»ի անմիջական եւ եռանդուն գործունէութեան, խորհրդակցութեամբ տեղ[ական] մարմինների (7 ձայնով ընդդէմ 3ի):
  - բ. բանաձեւ. «Փոթորիկ»ի գործունէութեան ամենալայն չափերով (ամենախոշորներից մինչեւ 1000 ու կարողութիւն ունեցողներից 10% (2 ձայն ընդդէմ 8ի):
  - գ. բանաձեւ. Ամենալայն չափերով (1 ձայն ընդդէմ 9ի) (Դա աւելի ծայրայեղ էր):

II ՏԱՃԿԱՀԱՅ ԽՆԴԻՐ

1) Երկրի դրութեան մէջ առաջ եկած փոփոխութիւնները:

Ուղղակի տեղեկութիւններ չկան. բայց ստացուած տեղեկութիւններից երեւում է որ Երկրում հայերի դրութիւնը սաստիկ վատացել է: դրա պատճառով գաղթը զօրացել է: Դրութիւնը վատացել են՝ 1) Տուրքերի ծանրութիւնը: 2) Մահմեդական գաղթականների խոշոր տեղաւորումները հայ գիւղերում: 3) Երկրից դուրս գտնուողների նպաստ չկարողանալ հասցնելը, տնտեսական ճգնաժամների պատճառով:

2) Շարժումներ մահմեդական տարրերի մէջ. հաւանական դաշնակցութիւն երիտասարդ թուրքերի, մակեդոնական կազմակերպութիւնների հետ:

Լրագրական եւ բերանացի տեղեկութիւնների վրայ հիմնուած, շարժումները մահմեդականների մէջ են տնտեսական խնդիրների շուրջը եւ պարարտ հող կայ պրոպագանդի համար:

12.- Միջադէպեր:  
13.- Ըսել կ'ուզէ հաւանաբար կաթողիկէ:



Թուրքիայում, եթէ կան շարժումները կազմակերպող մարմիններ (մահմեդական) եւ եթէ դրանք զուտ յեղ(ափոխական) բնոյթ ունեն, ջանալ ամէն կերպ համերաշխ լինել, աջակցութիւն ցոյց տալ նրանց եւ միասին գործել, որոշելով գործունէութեան պատճառմա: (Միաձայն):

Ընկերներից մէկի տուած տեղեկութիւններից ժողովը իմանալով, որ մակեդոնական կազմակերպութեան հետ սերտ համերաշխ գործունէութիւն ունեցել են մեր դաշնակցական մարմինները, ցանկութիւն յայտնեց ապագայումն էլ պահպանել այդ կապը:

3)Նոր քաղաքական պայմաններ եւ նրանց հաւանական ազդեցութիւնը «հայկական դատի» վրայ:

Նոր քաղ. պայմաններ չկան. շարունակուում են Հին աննպաստ պայմանները (3րդ ձեռնպահ):

VI Նիստ 26 Նոյ. (երեկոյեան)

Ներկայ են բոլորը:

4) Տակտիկի քննութիւնը նոր պայմանների եւ պահանջների համաձայն. ինքնապաշտպանութիւն, զինում, բացառիկ խմբեր, կենտրոնացում, ցուցական գործունէութիւն:

Ա) Տակտիկի քննութեան ժամանակ երկու հոսանք առաջ եկաւ ժողովականների մէջ. երկար վիճաբանութիւնից յետոյ տրուեցին հետեւեալ բանաձեւերը:

ա. բանաձեւ. Հայ ժողովուրդը Հ. Յ. Դ[աշնակցութեան] անմիջական մասնակցութեամբ եւ ղեկավարութեամբ ապստամբում է սեփական ուժերով նպատակ ունենալով հայկական Յ նահանգների ինքնավարութիւն, շահագրգռելով եւ միացնելով այդ շարժման նոյն նահանգներում բնակուող բոլոր յեղափոխականացած օտար տարրերին: 5 ձայն 4ի դէմ 1 ձեռնպահ (ձայն են տալիս 2 ուսուսչայ, 3 տաճկահայ):

բ. բանաձեւ Հ. Յ. Դ-ը հայկական նահանգների ինքնավարութեան հարցը իր ծրագրից դուրս է ձգում եւ կռիւ է մղում թուրքիայում ընդհանուր թուրք բռնապետական ուժերը տապալելու, միացած բոլոր յեղ. տարրերի հետ. միաժամանակ աշխատելով հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան եւ

ընդհ. ապստամբութեան համար հարկ եղած պատրաստութիւնները եռանդով տեսնել այժմեանից: 5 ընդդէմ 1 ձեռնպահ. ձայն են տալիս 4ը (տաճկահայեր):

Բ) Կենտրոնացում եւ ցուցական գործունէութիւն

1898 եւ 1904 թ-ի Ընդհ. ժողովներում ընդունուած կենտրոնացման եւ ցուցական գործունէութեան շարունակութիւնը մեծ ծաւալով, (6 ձայն ընդդէմ 2ի. 2 ձեռնպահ): Երկու ընդդիմադիրները (տաճկահայեր) բողոքում էին, քանի որ Հ. Յ. Դ-ը Յ նահանգների ինքնավարութիւնն է միայն պաշտպանում եւ հետեւաբար աջողութեան պարագայում արդիւնքից պիտի օգտուեն միայն Յ նահանգները, իրաւունք չունեն ցուցական վայրերում (ծովափնեայ) Քբաութեան նոխազ՝ շինել այնտեղերի եւ շրջակաների հայութիւնը որ կազմում է հայ ազգաբնակչութեան մօտ 40%:

Գ) Ինքնապաշտպանութիւն. Թուրքիկ խմբեր եւայլն:

Ժողովրդին զինել իր հաշուով որտեղ հնարաւոր է: Երկիր մտցնել մեծ ծաւալով ինտելիգենտ-մարզիչ ոյժեր: Թուրքիկ խմբեր Երկիր մտցնել եւ Երկրում ասպարէզ բերել՝ վնասակար է (միաձայն): Երկրի այն վայրերում, որտեղ յեղ. շարժումներից վնասուել է ժողովուրդը՝ Օր. Տարօն, Բարձրաւանդակ<sup>14</sup> եւայլն, փութացնել նիւթական անմիջական օգնութիւն, սովի եւ գաղթականութեան դէմ կռուելու համար:

5) Զին(ուորական) եւ ռազմ[ական] ոյժի կազմակերպումն եւ պատրաստութիւն թէ երկրի ներսը եւ թէ դրսում:

Ինտելիգենտ եւ ռազմագէտ ուժերից կազմել մի առանձին մարմին. զինուորական եւ ռազմական ուժերի կազմակերպման եւ պատրաստութեան համար, թէ Երկրի ներսը եւ թէ դրսում: Ռազմագէտ զին. ուժեր պատրաստելու համար ունենալ յատուկ զին. ուսումնարան:

6) Քաղաքական-դիպլոմատիկական քայլեր: Ժողովը անօգուտ է գտնում:

14.- Սասուն:

III ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԽՆԴԻՐ

VII Նիստ 27 Նոյեմբ. (առաւօտեան)

Ներկայ են բոլոր ընկերները:

1) Յեղ. շարժման առաջ գալը Կովկասում եւ նրա պատճառները:

Ռուսական բռնապետութեան առանձնապէս ճշունները կովկասահայի ազգային-կուլտուրական ճիւղերի վրայ, դեռ ռուս յեղ[ափոխութեան] վերջին շարժումները ի յայտ չեկած՝ առաջ էր բերել կովկասահայի մէջ բուռն յեղ. տրամադրութիւն եւ գործունէութիւն, որով համառուսական ազատագրական շարժումը, կառավարական ընդհանուր՝ ռեպրեսիաները<sup>15</sup> այս կամ այն ձեւի տակ, ուժեղ թափով անդրադարձան կովկասահայի վրայ եւ Հ. Յ. Դ-ը պահանջ գգայ կռիւր տանել յամառ, մշտական եւ որոշ սիստեմի վերածած (միաձայն):

2) Ինքնապաշտպանութեան գործը Կովկասում:

ա. բանաձեւ. Ինքնապաշտպանութեան գործը այժմեանից յանձնել ժողովրդին. վտանգի պարագային երբ ժողովուրդը Հ. Յ. Դ[աշնակցութեան] օգնութեան կարիք գգայ եւ դիմում անէ՝ այն ժամանակ միայն Դաշնակցութիւնը ղեկավարէ գործը (1 ձայն 9ի դէմ):

բ. բանաձեւ. Հ. Յ. Դ-ը հսկում եւ ղեկավարում է գործը աշխատելով աստիճանաբար ժողովրդին վարժեցնել ինքնօգնութեան եւ որտեղ համոզուի թէ ժողովուրդը արդէն ձեռնհաս է եւ կարող է վարել այդ գործը՝ բոլորովին յանձնել նրան ( 9 ձայն ընդդէմ 1ի):

Այս առիթով լսելով որ Շուշու ազգաբնակչութեան մի մասը պահանջում է հաշուետուութեան եւ ինքնապաշտպանութեան բոլոր նիւթերի յանձնումը, ժողովը գտնում է հաշուետուութիւնը կարելի. բայց ինքնապաշտպանութեան նիւթերի յանձնումը ապօրինի եւ անընդունելի որովհետեւ դրանք պատկանում են Հ. Յ. Դ-ի իրերւ մի յեղ. կազմակերպութեան եւ եթէ իրանք դրամ են տուած՝ Դաշնակցութիւնն էլ գործադրած է ահագին էնէրգիա<sup>16</sup> եւ զոհած է այնքան թանկագին ընկերներ:

3) Սեր ուղղութիւնն ու բռնելիք դիրքը ընդի. յեղ. շարժման մէջ. ինչպէս նաեւ մեր ունենալիք յարաբերութիւնները միւս յեղ. կուսակցութիւնների հետ  
ա) Սեր տեղը ռուս[ական] ընդհ. յեղ. շարժման մէջ

պիտի լինի ակտիւ, մոռացութեան չտալով ինքնապաշտպանութեան գործը ռեակցիոներ<sup>17</sup> տարրերի դէմ (9 ձայն, 1 ձեռնպահ):

բ) Կովկասեան Ա[նգիալ] դեմոկրատիա

Ժողովը նկատի ունենալով որ կովկասեան Ս. դ-ների ղեկավարները դիտաւորեալ նկատումներով մթացնում են իրանց մասսաների դասակարգային գիտակցութիւնը՝ փաստերի յեղաշրջումներով, անհեթեթ գրաւոր-տուրքիւններով ջանալով արատաւորել Հ. Յ. Դ-ը եւ այդպիսով սուր անդագոնիզմ<sup>18</sup> առաջ բերել վրացի, ռուս եւ հայ աշխատաւոր մասսաների մէջ՝ գտնում է Ս. դ- բիրտկրատիայի վարմունքը շովինիստական, գուրկ գաղափարական եւ յեղ. մաքրութիւնից, դատապարտելի եւ որոշում է՝

Ամէն միջոց գործ դնել նրանց մասսայի աչքերը բաց անելու Հ. Յ. Դ-ի նկատմամբ եւ համերաշխութեան կամուրջը նետելու բոլոր յեղ. տարրերի մէջ: 1 ձեռնպահ, 7 թեր, 2 դէմ (երկու ընդդիմադիրները միայն բիւրոկրատ բառի համար էին ընդդիմադիր, որի փոխարէն առաջարկում էին շէֆ գործածել):

Ժողովը ընկերներից լսելով անցեալ զինուած ապրտամբութեան ժամանակ Ս. դ-ների թեթեւամիտ եւ անպատրաստ քայլերը, որոշեց՝ նոյնիսկ կրիտիկական ընկերներում շատ զգուշութեամբ միանալ նրանց ձեռնարկներին, կամ միասին ձեռնարկներ որոշել եւ իրագործելիս (միաձայն):

գ) Ա. Ռ-ների եւ վրացի Ա. Ֆ-ների<sup>19</sup> հետ շարունակել մեր բարի յարաբերութիւնները (միաձայն):

դ) Հնչակեաններ. Սուր յարաբերութիւններից խոյս տալ եւ աշխատել համերաշխ լինել նրանց հետ (միաձայն):

ե) Անարխիստ-կոմունիստներ. բացառութեամբ մէկ ընկերի, ժողովում ոչ մի ընկեր նրանց չի ճանաչում. ուստի այդ հարցը բաց է թողնուում:

4) Աշխատաւոր խաւերի կազմակերպութիւնը եւ մեր ստացած հետեւեանքները:

ա) Անհրաժեշտ է աշխատաւորներին կազմակերպել կուսակցական հողի վրայ, բացառութեամբ սեւ ծովեան ծխախոտագործների, որովհետեւ միւս կուսակցութիւնների եւ անկուսակցական օտար հոծ տարրերի մասնակցութիւնը անհրաժեշտ է կազմակերպման գործում:

Ծանօթ.- բայց դաշն[ակցական] մասնակցողները

- 15.- Ճնշումներ, պատժական միջոցառումներ:
16.- Ոյժ, եռանդ:
17.- Յետադիմական:
18.- Հակամարտութիւն:
19.- Անգիալ-Ֆեդերալիստներ:

մնում են դաշնակցական:

բ) Լուրջ փորձեր չեն եղած մեր շրջանում, պրոֆեսիոնալ միութիւններ հաստատելու իսկ Նաւահանգստում անաջող է անցել, շնորհիւ անշնորհ պրոպագանդիստներին:

5) Դաշնակցութեան դերը քաղաքական-հասարակական այլ ասպարեզներում:

Երկար վիճաբանութիւններից յետոյ դրուեցան հետեւեալ բանաձեւերը:-

ա. բանաձեւ. Ակտիւ մասնակցութիւն կրթական, վանքապատկան գործերում՝ զեղծումների առաջն առնելու եւ ստեղծելու ռամկավար վարչական մարմիններ այդ գործերի համար (թեր 2 ձայն, ձեռնպահ 1 ձայն, 7 ձայն դէմ):

բ. բանաձեւ. Հ. Յ. Դ. իր յեղ. կուսակցութիւն, լեզալ գործերով չպէտք է զբաղուի (1 ձայն ընդդէմ 9ի):

գ. բանաձեւ. Հ. Յ. Դ. իմ բնած չափով մասնակցում է կրթական գործին. բայց ոչ մի մասնակցութիւն եկեղեցական վանքապատկան կամ էջմիածնական գործերում: Անցաւ 7 ձայնով ընդդէմ 2ի, 1 ձեռնպահ:

VIII ՈՒՍՏ 27 ՆՈՅԵՄԲԵՐԻ (ԵՐԵՎԱՆ)

Ներկայ են բոլոր պատգամաւորները:

1) Տաճկահայ եւ կովկասահայ խնդիրների ներքին կապը գործունէութեան եւ կազմակերպական տեսակետներից:

Ներքին կապը ոչ ոք չէր ժխտում. բայց ուժերի գործադրուելու եւ այլնի համար ժողովում ծագեցին տարաձայնութիւններ, որոնք հետեւեալ բանաձեւերի տակ առնուեցան:

ա. բանաձեւ. Չկայ խտրութիւն տաճկահայ եւ կովկասահայ խնդիրների մէջ: Դաշնակցութեան Ընդհ. ժողովը որոշում է այս կամ այն կողմի տակտիկան ու ձեռնարկները եւ նրա համեմատ բաշխում իր միջոցները (անցաւ 8 ձայնով ընդդէմ 2ի):

Թաւելուած: Որովհետեւ վերջին 10 տարուայ ընթացքում Ար(եւելեան) Բիւրոն շատ անգամ զանցառու է եղած Հ. Յ. Դ. ձեռնարկների համար եւ Երկրում եղած ընկերներին հարկ եղած օժանդակութիւնները հասցնելու իր ժամանակին, ապագայում այդպիսի բան տեղի չունենալու համար, Երջանական ժողովը որոշեց պահանջել, որ Ընդհ. ժողովը Ար(եւելեան) Բիւրոյին կից ստեղծի մի օժանդակիչ-հսկիչ մարմին, որը թէ անակցութիւն ցոյց տայ եւ թէ

հսկիչ Ընդհ. ժողովի որոշած ձեռնարկների համար ուժերի բաշխումը կանոնաւոր կատարելու վրայ (անցաւ 7 ձայնով 1 դէմ, 2 ձեռնպահ):

բ. բանաձեւ. Հ. Յ. Դ. տաճկահայ դատի համար պահելով իր գոյութիւնը, կովկ. գործունէութեան համար ստեղծում է մի օժանդակ մարմին Հ. Յ. Դ. անուան տակ (1 ընդդէմ 9ի):

գ. բանաձեւ. Հ. Յ. Դ. իր պարէ իբրեւ մի եւ անբաժան կուսակցութիւն թէ տաճկահայ եւ թէ կովկասահայ խնդիրները, որոնք պիտի սրուեն ինքնավար կերպով ու իրաւունքներով եւ կապուած լինելով ֆեդերատիւ կապերով: Պարտաւորեցնելով սակայն կովկասեան մարմիններին, որ միշտ արձագանգ տան Երկրի պահանջներին, իրանց ուժերի որոշ տոկոսը յատկացնեն տաճկահայ դատին (1 ձայն ընդդէմ 9ի):

2) Հայկական գաղութների դերը թուրքահայ եւ կովկասահայ խնդիրների վերաբերմամբ:

Թողնել իրանց եւ Ընդհանուր ժողովի որոշման (միաձայն):

3) Հ. Յ. Դ. մարմինների գաղութներում ունեցած դերը տեղական քաղաքական-տնտեսական հարցերի վերաբերմամբ:

Ցանկալի է որ գաղութներում դաշնակցական մարմինները ակտիւ դեր կատարեն տեղական քաղաքական եւ տնտեսական հարցերում սոց(խախտական) ոգով:

V ՆԱԲԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ԾՐԱԳՐԻ

IX Նիստ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ (տեւեց 10 ժամ)

Ներկայ են բոլոր պատգամաւորները

Երջանական ժողովը թողնում է Ընդհ. ժողովին խմբագրելու ծրագիրը, համաձայն իր որոշումներին: Հարկ է համարում սակայն պատասխանել այն հրատապ հարցին թէ «որ խաւերի վրայ յենուելու ենք մենք»: Այդ մասին դրուեցան հետեւեալ բանաձեւերը:

ա. բանաձեւ. Հիմնուել, գիւղացի, բանուոր, արհեստաւոր դասակարգերի վրայ: Դուրս քշել բոլոր կեղեքիչներին (1 ձայն ընդդէմ 9ի):

Ընդդիմադիրները գտնում էին որ «կեղեքիչ» բառը սահման չունի այստեղ:

բ. բանաձեւ. Նոյնը, միայն փոխանակ կեղեքիչ բառի. «բոլորովին դուրս ձգել բուրժուաներին» (4 ձայն թեր, 5 ձայն դէմ, 1 ձեռնպահ):

գ. բանաձեւ. Որ խաւերի վրայ յենուելը միեւ-

նոյն ինչ որ միւսները: «Օգնող բուրժուաները ձայն չեն ունենայ կազմակերպութեան ոչ մի գործի մէջ եւ Դաշնակցութիւնը ոչ մի դէպքում չի պաշտպանի նրանց» (5 ձայն ընդդէմ 5ի):

Կազմակերպական ձեւ

ա) Անխախտ պահել ապակենտրոնացումը (միաձայն):

բ) Կոմիտէների եւ ենթակոմիտէների ընտրութիւնը կատարուի ոչ թէ խմբագրական ժողովներով, այլ իւրաքանչիւր դաշնակցական տայ 1 ընտրող ներկայացուցիչ (միաձայն):

գ) Այդ ներկայացուցիչներից ընտրուած վերստուգիչ յանձնաժողովը կը քննէ կոմիտէի եւ ենթակոմիտէի հաշիւները (միաձայն):

դ) Կոմիտէների ընտրութիւնը տեղեկացուում է Կ. Կոմիտէին ի գիտութիւն. եթէ նորընտիր կազմի կամ ռեւէ անդամի մասին Կ. Կոմիտէն ունի փաստացի մեղադրանքներ, իրաւունք ունի մեկուսացնել եւ նորից ընտրութիւն առաջարկել պակասողի տեղ (միաձայն):

ե) Երջանային ժողովի գնացող ներկայացուցիչը ընտրում է ոչ թէ մարմինը, այլ իւրաքանչիւր տասնեակ տարիս է մի ներկայացուցիչ ընտրելու Երջ. ժողով գնացող ընկերին (միաձայն):

զ) Բայց թէ որին պէտք է ընտրել, մարմինից թէ դրսից, դրուեցան՝

ա. բանաձեւ. Տասնեակների ներկայացուցիչները ընտրում են Երջ. ժողովի համար պատգամաւոր դաշնակցական ընկերներից, պայմանով որ գնացողը ունենայ լիակատար տեղեկութիւն իր ներկայացուցիչի մասին եւ փաստացի մեղադրուած չլինի որեւէ զեղծումի մէջ (7 ձայն թեր, 3 ձայն դէմ):

բ. բանաձեւ. Տասնեակների ներկայացուցիչները ընտրում են Երջ. ժողովի համար պատգամաւոր տեղական մարմնի անդամներից. իսկ եթէ իրանց տեղից երկու ներկայացուցիչ ուղարկելու իրաւունք ունեն 1ը մարմինը, միւսը մարմինը դուրս եղող ընկերներից (3 թեր 7 դէմ):

Կոմիտէների եւ ենթակոմիտէների ձայների թիւը շրջանային ժողովների համար:

Դրուեցան հետեւեալ բանաձեւերը:

ա) 100ից մինչեւ 1000 հոգի 1 ձայն. 1100ից վեր երկու ձայն միայն (5 թեր, 5 դէմ):

բ) 200ից մինչեւ 500 հոգի 1 ձայն. եւ այդպէս շարունակաբար (4 ձայն ընդդէմ 8ի):

գ) Իւրաքանչիւր ռայոն բաժանուում է որոշ հաւասար շրջանների. իւրաքանչիւր հաւասար շրջան ունենում է իր կոմիտէն. ահա այդ իւրաքանչիւր կոմիտէի շրջանակից տասնեակները կ'ընտրեն 1 ներկայացուցիչ

Երջ. ժողովի համար: Ցանկալի էր որ Կ. Կոմիտէն ընտրուէր եւ կազմուէր հէնց կոմիտէների անդամներ կայացուցիչներից (1 ձայն 9 դէմ):

Կովկասեան կոմիտէները կնիք ունենան՝ Երջանական ժողովը կ'որոշէ իւրաքանչիւր անգամ թէ որ կոմիտէներին պէտք է տալ կնիք (9 ձայնով ընդդէմ 1ի):

Կարմիր խաչ

Ի նկատի ունենալով, որ «Կարմիր խաչ» անուան շփոթութիւն է պատճառում, վերցնել այդ անուան եւ ունենալ Հ. Յ. Դ. կանանց խմբեր (9 ձայնով ընդդէմ 1ի):

Ունենալ կազմակերպական ներքին դատավարութիւն. կոպիտ պատիժներ չտալ. եւ ազդել բարոյական միջոցներով (միաձայն):

Մանօթ. ծանր յանցանքներում վարուել Ընդհ. ժողովի գծած պատժական օրէնքներով (միաձայն):

Ժողովրդական ոչ մի դատ (միաձայն):

Կարգապահութիւն եւ կոնտրոլ. ամենախիստ կերպով (միաձայն):

VI ՊՐՈՊԱԳԱՆԴԱ

1) Դրօշակ եւ այլ կիսապաշտօնական թերթեր

Շարունակել եղածները եւ ունենալ մի ռուսերէն թերթ (միաձայն):

2) Կուսակցական այլ գրականութիւն: Ի նկատի ունենալով որ մինչեւ վերջերս թոյլ է եղել կուսակցական միջոցների համեմատութեամբ, որոշուեց՝ առանձին ոյժ տալ նրան (միաձայն):

3) Պրոպագանդան բանուորական, գիւղացիական եւ ուսանողական խաւերում:

Տանել ամենալայն չափերով:

Հ. Յ. Դ. ծրագիրը թարգմանել ռուսերէն, վրացերէն եւ թուրքերէն լեզուներով, հայ բանուորութեան, գիւղացիութեան համար տպուած բրոշուրները անպատճառ տպել եւ թուրքերէն եւ տարածել մահմեդական տարրերի մէջ թէ Կովկասում եւ թէ Թուրքիայում, արագացնելու համար նրանց դասակարգային գիտակցութիւնը (միաձայն):

4) Արտասահմանեան պրոպագանդա. դադարաւորական. ո'չ դիպլոմատիական (9 ձայն 1ի դէմ):

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ

Ամէն տեղի մեր բանտարկեալների օգնութեան հասնելու համար կազմել առանձին ֆոնդ Հ. Յ. Դ. միջոցներից (8 ձայնով ընդդէմ 2ի):

Մանօթ. Ընդդիմադիր երկուսը գտնում էին որ, եւ ոչ դաշնակցական հայ քաղաքական բանտարկեալներին էլ հարկաւոր է նպաստել բանտարկեալների ֆոնդից:

**ԱՆԳՈՐԾ ՁԻՆՈՒՈՐՆԵՐ**

Հարցը բարդ լինելով, Ընդհ. ժողովին է թողուում կարգադրութիւնը:

**ՄԵՐ ՇՐՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՐՑԵՐ**

1) Որովհետեւ շրջանի մարմինները բոլորովին անծանօթ են մնում կուսակցական կեանքին, ժողովը պարտաւորեցնում է Կ. Կոմիտէին, Բիւրոյից ստացած եւ իր ունեցած յարմար դատած տեղեկութիւնները պարբերաբար հաղորդել շրջանի մարմիններին (միաձայն):

2) Շրջանի մարմիններն էլ պարտաւորում են գոնէ երեք ամիսը մի անգամ հաշիւ ներկայացնել եւ տեղեկագիր տալ Կ. Կոմիտէին գործերի դրութեան մասին (միաձայն):

3) Մեր շրջանի մէջ գոնէ 2 ձեռնհաս շրջիկ ունենալ (միաձայն):

4) «Կայծի» մարմնի մէջ անցեալ տարուայ կատարած գեղծումի գործին վերջ տալու համար յատուկ ձեռնհաս քննիչ ուղարկել, որը կը մտնի եւ «Դաշտ» այնտեղի խառնակ վիճակին վերջ տալու համար (միաձայն):

5) Շրջանային ժողովը լսելով Նաւահանգստի ընկերներից, որ մի քանի բանուորների շահերը պաշտպանելու համար նախորդ եւ ներկայ Կ. Կոմիտէները իրանց վրայ պարտականութիւն են վերցրել, վճիռներ են տուել ու չեն գործադրել կամ գոհացում չեն տուել, որով թէ բանուորների շահն է վնասուել եւ թէ կազմակերպութեան պրեստիժը, Շրջանական ժողովը գտնում է, որ այդպիսի դէպքերում Կ. Կոմիտէն շրջահայեցողութեամբ պիտի գործէ եւ վճիռ տալուց յետոյ գործադրութիւն առաջ չպիտի կանգ առնէ (9 ձայնով 1ի դէմ):

6) ա. Յատկապէս ընկ. Խ.ի գործին համար յանձնարարում է անմիջապէս գոհացում տալ նրա պահանջին գործարանատիրոջից. որովհետեւ նա վստահացած կազմակերպութեան վրայ՝ չէ դիմել ուրիշ միջոցի եւ 1.5 տարուայ ընթացքում տուժել է նիւթապէս (8 ձայնով, 1 ձեռնպահ):

բ. Ընկ. Խ. պատճառաբանում էր, որ գործարանի կողմից մերժման դէպքում, ինքը անձնապէս պատասխանատու է բռնում նախորդ Կ. Կոմիտէի ընկերներին եւ նիւթական բաւարարութիւն պահանջում նրանցից: Շրջանային ժողովը որոշեց՝ ընտրել 3 հոգուց բաղկացած մի քննիչ յանձնաժողով, քննելու նախորդ Կ. Կոմիտէի ընկերների պատասխանատուութիւնը այս գործում եւ նոյն յանձնաժողովին յանձնել, քննած եւ կենտրոնականի պատասխանատուութիւնը հաստատ

ած պարագայում, ստանալ բաւարարութիւն վնասած ընկեր Խ.ի օգտին: Յանձնաժողովի մի անդամը կը լինի Նաւահանգստի կոմիտէից, մին Թ. Թ. եւ դրանք երկուսը կ'ընտրեն երրորդ ընկեր: Մինչ այս կամ այն որոշման գործադրութիւնը, գտնելով ընկ. Խ.ի դրութիւնը յուսահատական, տալ նրան փոխարինաբար (80) վախճան ուրբի կազմակերպութեան միջոցներից (8 ձայնով, 1 ձեռնպահ):

7) Պարտաւորեցնել Կ. Կոմիտէին, որ թէ անցեալ եւ թէ ներկայ Շրջանային ժողովների վճիռները մեր շրջանի գործերի մասին, գործադրէ արագ կերպով (8 ձայն, 1 ձեռնպահ):

8) Կ. Կոմիտէի մէջ 2-3 ազատ անդամ ունենալ անհրաժեշտ համարուեց եւ որոշուեց (միաձայն):

9) Կնիքի մասին, եթէ Ընդհ. ժողովը ընդունի մեր առաջարկութիւնը, Շրջանական ժողովը որովհետեւ չի կարող նորից հաւաքուել՝ կնիք ունենալու յարմար սեպուած մարմինները որոշելու, յարմար դատուեց այժմեանից ձեռնարկել այդ գործին:

- 1) Նաւահանգստ. 9 թեր 1 ձեռնպահ:
- 2) Զրաշէն. Սկզբունքով համաձայն. բայց մինչեւ որ տեղական մարմինը չուժեղանայ՝ չտալ (9 թեր, 1 ձեռնպահ)
- 3 Գաղթավայր. 6 թեր, 4 ձեռնպահ:
- 4) Ապաստան. Ներկայացուցիչը յայտնեց որ պահանջ կայ:
- 5) Նոր-Քաղաք. Տալ՝ երբ կազմը ուժեղանայ եւ աչքի ընկնող գործունէութիւն ցոյց տայ
- 6) Ամարանոց
- 7) Կլորիկ
- 8) Դաշտ
- 9) Զորավոր
- 10) Կայծ. 9 թեր, 1 դէմ
- 11) Մաղաճոր. Կոմիտէ ընդունել եւ տալ կնիք (8 թեր, 1դէմ, 1 ձեռնպահ):

10) Կարդացուեց Գաղթավայրից եկած բողոքագիրը 14 խմբերի կողմից, 8 ներկայացուցիչների ստորագրութեամբ ընկ. Աշոտի Շրջանային ժողովի ներկայացուցիչ ընտրուելու դէմ: Որովհետեւ այդ հարցը նախապէս ժողովում քննուած է եւ Գաղթավայրի ներկայացուցիչը ընտրուած է մինչեւ այժմ գործադրուող Հ. Յ. Դ. օրէնքների համաձայն, որոշուեց անհետեւանք թողնել այդ բողոքագիրը:

11) Կարդացուեցին Նաւահանգստից նոր ստացուած «Նոր կեանք, Արագած, Բիւրակ, Կորէզ, Արարատ եւ Քաջալեր» խմբերի մանդատները, որոնցից առաջին երկուսը ընդունում են «Նախագիծը», 3րդ ձեռնպահ են

մնում եւ ենթարկուելու են Ընդհ. ժողովի վճիռին. Յրդը իրան ձեռնհաս չի համարում կարծիք յայտնելու: Որոշուեց միւս մանդատների հետ ուղարկել Ընդհ. ժողովին:

12) Մեր շրջանից առաջիկայ Ընդհ. ժողովի համար պատգամաւոր ընտրուեց միաձայն Մ. Յ. 20 նրա մերժման դէպքում մեր ձայնն էլ յանձնում ենք Մ. Զ.ին<sup>21</sup>:

13) Կ. Կոմիտէն հրաժարական տուած լինելով, Շրջ. ժողովը ընտրեց միաձայն նոր Կ. Կոմ.ի անդամներ 1) Հճ. Միսաք. 2) Թ. Թ. 3) Ղարիբ Հ. 4) Սեպուհ. 5) Համ. Օ. եւ 6) Ե. Դ. եան<sup>22</sup>:

Որոշուեց Շրջ. ժողովի կողմից դիմել թէ Բիւրոյին եւ թէ նորընտիր ընկերներին, բացատրել նրանց VI շրջանի կարեւոր դիրքը, տեղական ակտիւ ուժերի սակաւութիւնը, ներկայ խառն վիճակը եւ համոզել ստանձնելու առաջարկուած պարտականութիւնը:

14) Եթէ որեւէ պատճառով չկազմուի Կ. Կոմիտէն՝ լիազօրութիւն է տրուում Նաւահանգստի, Զորավորի, Զրաշէնի, Գաղթավայրի եւ ներկայ Կ. Կ.ի ներկայացուցիչներին, լրացնել պակաս մնացած անդամները:

**X Նիստ 30 Նոյեմբերի**

Ներկայ են բոլորը  
Կարդացուեց նախորդ նիստերի ատենագրութիւնը եւ վաւերացուեց: Նկատի ունենալով որ վերստուգելի յանձնաժողովը անընդհատ Շրջանական ժողովի նիստ

տերին մասնակցած լինելով ժամանակ չէ ունեցել իր պաշտօնը լիովին կատարելու եւ գործը վերջացնելու, այդ պարտականութիւնը յանձնեց Նաւահանգստի ընկերներ Սուրէնին, Ղարիբ-Երկաթին եւ Գ.ին հետեւեալ Շրջանական ժողովին զեկուցում տալու այս մասին<sup>23</sup>:

**Ստորագրութիւններ 10 ներկայացուցիչների Նախագահի եւ քարտուղարի**

20.- Մ. Յ. սկզբնատառերը կը վերաբերին Սիբայէլ Յովհաննեսեանին, որ նոյն ինքն Մ. Վարանդեանն է, եւ որ ներկայ էր Չորրորդ Ընդհ. ժողովին որպէս պատգամաւոր Նաւահանգստի:

21.- Ս. Զ.Ս Սիմոն Զաւարեանն է, որ Ընդհ. ժողովին ներկայ էր որպէս պատգամաւոր Լեոնավայրի (Կիլիկիա):

22.- Սկզբնատառերով նշուած անձերու ինքնութիւնը կարելի է մասամբ միայն ճշդել: Սեպուհը Արշակ Ներսէսեանն է, ապագայ գոր. Սեպուհ: Համ. Օ.Ս Համօ Օհանջանեանն է. Յ. Դ.Ս Յոնան Դաթեանը: Կարելի է զարմանալ վերջին երկուքի ընտրութեան համար, մանաւանդ Օհանջանեանի, որ արդէն անդամ էր Արեւելեան Բիւրոյին, իսկ Յ. Դաթեանը կը վարէր Թիֆլիսի դաշնակցական պաշտօնաթերթ «Յառաջ»ի խմբագրութիւնը: Երեւի այս անպատեհութեան նկատառումով Շրջ. ժողովը պէտք կը տեսնէ առանձին նամակ յղել Բիւրոյին եւ հիմնաւորել իր այս ընտրութիւնը (տեսնել 377-44 փաստաթուղթը):

23.- Այստեղ կ'աւարտի Շրջ. ժողովի արձանագրութիւնը: Եզին վարը շեղակի գրուած կը կարդանք.- Ստորագրութիւններ 10 ներկայացուցիչների, Նախագահի եւ քարտուղարի: Նշուած 10 ներկայացուցիչներու ստորագրութիւնները կը գտնենք յաջորդ փաստաթուղթին տակ, որ Արեւելեան Բիւրոյին ուղղուած նամակն է:

Փաստ. 377-44

Բ 3.- ՆԱՄԱԿ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Հ. Թ. Դ. VI Կ. Կ.

III Ծ. Ժողով

Արեւելեան Բիւրոյին.

Ընկերներ!

VI Կենտրոնական Շրջանային III Ժողովը իր Թ-րդ նիստի մէջ ձեռնարկելով Կ. Կոմիտէի ընտրութեան, անհրաժեշտ գտաւ դրսի ընկերներով ուժեղացնել նոր կազմը, ընտրելով այդպիսի ազատ ընկերներ՝ նաեւ Համ[օ] Օ[հանջանեանին], Սեպուհին եւ Յ[ովնան] Դ[աւրթ]եանին:

Ուստի դիմում է Արեւ. Բիւրոյին եւ խնդրում է ամէն միջոց ձեռք առնել յիշեալ ընկերներին համոզելու եւ ստանձնել տալու մեր շրջանի գործերի ղեկավարութիւնը, մասնաւորապէս անելով այն լուրջ վտանգը, որ եթէ շրջանի տեղական ուժերի վրայ միայն ձգուի գործի ծանրութիւնը, Նաւահանգ[ի]ստը իր կարեւոր եւ ընդարձակ շրջանով ծանր խառնակութիւններին եւ ռեակցիայի ասպարէզ պիտի դառնայ, որտեղից մեծ վնասով դուրս պիտի գայ Դաշնակցութիւնը:

- Նաւահանգստի ներկայացուցիչ] ՍՈՒՐԷՆ
- Զորափորի ներկ. ՂԱՐԻԲ-ԵՐԿԱԹ
- Ծաղկաձորի > ԹՇՈՒԱՌԸ
- Զրաչէնի > ԳԱԳԻԿ
- Գաղթավայրի > ԱՌԻԻՍ[?]
- Ապաստանի > ԿԱՐԷՆ
- Նոր-Քաղաքի > ՀԱՅԿՈՒՆԻ
- Կլորիկի > ՍԱՐՕ
- Կայծի > ՎԱՀԱՆ
- VI Կենտ. Կ. > ՂԱՐԻԲ

20 Նոյեմբերի 1908  
Ծաղկաձոր

24.- Այս տեղեկագիրը թուական եւ ստորագրութիւն չի կրեր: Բովանդակութեանց յայտնի կը դառնայ, որ գրուած է Չորրորդ Ընդ. Ժողովի փակումէն ամիսներ ետք եւ սահմանուած է հաւանաբար Կովկասեան Ոստիկանական Ժողովին, որ պիտի գումարուէր 1907 թ. Դեկտեմբերի վերջերու:  
25.- Գրուած է ռուսատառ. մտաւոր իմաստը «մահ կամ ազատութիւն»:

Գ.- ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆԱՒԱՀԱՆԳՍՏԻ ՇՐՋԱՆԻՉ

Նաւահանգիստը ունի հետեւեալ շրջանները

- 1.- Զորաբերդ իւր շրջակայ գիւղերով՝ առայժմ մտատարապէս հաշուում է 50 ընկեր, որոնց յառաջիկայ տարուայ եկամտը կը լինի 200 ռուբլի:
  - 2.- Զորափորի եւ իր շրջաններում՝ հաշուում է 70ի չափ կազմակերպուած դաշնակցականներ. համաձայն ներկայացուցիչի հաղորդած տեղեկութիւնների յառաջիկայ տարուայ բիւզջէն minimum 500 ռուբլի է:
  - 3.- Ծաղկաձոր, ուր առայժմ կան կազմակերպուած 40 ընկեր. բիւզջէն 500 ռուբլի:
  - 4.- Զրաչէն, ուր ունենք 200ի չափ ընկեր բանուորներ. եկամուտ ամենապակասը 250 ռ[ուբլի]:
  - 5.- Ապաստան, ուր հաշուում է 70 ընկեր. յառաջիկայ տարուայ բիւզջէն minimum նկատի է առնուած 200 ռ.:
  - 6.- Կլորիկի շրջան. միմիայն Կլորիկում կան 50 ընկերներ. այս շրջանը օժանդակող շրջաններից մէկն է, որի եկամուտը, հիմնուելով անցեալի վրայ, ի նկատի է առնուած 800 ռուբլի:
  - 7.- Ամարանոց, ուր կան մօտ 250ի չափ բանուորներ. առաջիկայ բիւզջէն՝ minimum 600 ռուբլի:
  - 8.- Դաւաշ.- Այս շրջանը նոյնպէս օժանդակող շրջաններից է, ուր առ այժմ կազմակերպուած ընկերներ են հաշուում մօտ 80 հոգի. եկամուտը հաշուում է 1.000 ռուբլի ամենապակասը:
  - 9.- Կայծ, իր շրջաններով, ուր հաշուում է ամենապակասը 200 ընկեր: Բիւզջէն հաշուում է 1000 ռուբլի:
  - 10.- Նաւահանգիստ, ուր կայ մարտական 7 խումբ նոր կազմակերպուած. արհեստակցական ու բանուորական միութիւնները. բոլոր ընկերների թիւը առայժմ հասնում է 1.000ի հիմնուելով տեղականի գեկուցման վրայ:
- Բացի սրանից կայ մի աշակերտական խումբ կազմուած գիմնագիտներից, որոնց անդամների թիւը հասնում է 30ի: Վերջերս նոքա լոյս ընծայեցին տպագրած «Մամբրի սկստորա»<sup>26</sup> անունով ռուսերէն մի անլեզալ թերթ, որը ամբողջովին գրեթէ նուիրուած է կուսակցութեան Մրազին եւ նրա տակտիկայի բացատրութեանը:

\*\*\*

Նաւահանգստի Կ. Կ.ի շրջաբերականի համաձայն Դեկտեմբեր 20-ին Նաւահանգստում սկսեց VI Կ. Կ[ոմիտէի] շրջանային Ժողովը, ուր՝ սկզբում, ներկայ էին Կլորիկի, Ամարանոցի, Ծաղկաձորի, Ապաստանի, Զորափորի, Նաւահանգստի ներկայացուցիչները. ապա եկաւ եւ Դաւաշի ներկայացուցիչը: Ներկայացուցիչները, ի նկատի ունենալով տեղական մի քանի ընկերների ներկայ լինելու կարեւորութիւնը, որոշեցին հրահրել նրանց կէս-կէս ձայնի իրաւունքով: Ժողովներում ընկերները ներկայացրին զբաւոյր եւ բերանացի կերպով

թէ տեղի եւ թէ շրջանի զանազան վայրերի մասին գեկուցումներ եւ նրանց կարիքները: Զեկուցումներից առաջ եկան հետեւեալ պահանջները եւ բողոքները:

ա.- Ի նկատի ունենալով որ Նաւահանգիստի շրջանի բոլոր հաշիւները, սկսած 1905-ից, բոլորովին չեն տպագրուել պաշտօնական օրգանում, ներկայ եղող պատգամաւորները դաշնակցական մասսաների կողմից արտայայտում են իրենց տրտուներն ու բողոքը, որովհետեւ շատ տեղեր հրաժարուած են վճարել իրենց տուրքերը:

բ.- Ամբողջ շրջանը երկար ժամանակից ի վեր կազմակերպուած լինելով (հանդերձ) չէ ունեցել աշաւուրը հակողներ եւ կարող պրոպագանդիստներ. հետեւանքը այն է եղել, որ զանազան անպատրաստ մարդիկ պրոպագանդիստի եւ գործչի դերում կատարել են զանազան անտակտ գործեր, որով դեմոքրատիկացիայի ենթարկել մասսաներին: Որպէս օրինակներ՝ կարելի է յիշել Վան-Փուշին<sup>28</sup> Զորաբերդի շրջանում, Վարդանին՝ Նոր-Քաղաքի եւ Կլորիկի շրջանում, Հաջուն, որը շրջել է Նաւահանգստի շրջանը հակառակ նոյն տեղի Կ. Կ.ի որոշման, բայց Բիւրոյի կարգադրութեամբ, եւ ուրիշներին:

գ.- Շրջանի մարմինների տեղական ուժերի պակասութեան պատճառով, կազմակերպական գործը շատ տեղերում գտնուում է խարխուլ եւ քայքայուած դրութեան մէջ տնտեսապէս եւ բարոյապէս: Նկատուում է որ ծախսերի մէջ տեղ են բռնում այլեւայլ գործիչների եւ գիմուորների ծախսերը:

դ.- Զորաբերդի շրջանում թուրքերի մէջ կայ հետաքրքրութիւն դէպի յեղափոխական գրականութիւնը: Իսկ մասնաւորապէս Նաւահանգստում մեր կազմակերպուած մասսաների մէջ 70ի չափ յոյներ եւ թուրքեր կան:

ե.- Նոր-Քաղաքի շրջակայքում ապրող տաճկահայ գիւղացիների մէջ առաջ է եկել դէպի կոոպերացիաները մի առանձին հետաքրքրութիւն. Նոր-Քաղաքի Շրջանային Ժողովը առաջարկում է իր շրջանի տաճկահայ գիւղացիներին կազմակերպել կոոպերատիւ հիմունքներով, քանի որ տրամադրութիւն կայ նրանց մէջ:

զ.- Նաւահանգստի Կենտրոնական Կ. իր տրամադրութեան տակ չունենալով իր սեփական ազատ տպարանը, մեծ դժուարութիւններ է հանդիպում. առանց տրպարանի ապագայում երեւան կը գայ նախկին դրութիւնը:

է.- Ծաղկաձորի ընկերով գեկուցման համաձայն երեւաց՝ որ Տ. Զ.-ի վրայ կատարուած տեւորը ունեցել է իւր նպաստաւոր եւ գործնական ազդեցութիւնը, որից անմիջապէս յետոյ նպաստաւոր պայմաններ են ստեղծուել տեղական գործերը կարգի բերելու համար. մինչդեռ առաջ, Զ.-ի եւ ընկ. կողմից կատարուած մասնութիւնների եւ առաջադրած խոչընդոտների շնորհիւ, գործը կաղում էր: Ինչ վերաբերում է Ալի Բէկի տեւորին, նրա յաջող կազմակերպութեան պատճառով, թէ՛ մեր շրջանում եւ թէ՛ մասնաւորապէս Նաւահանգստում ունեցաւ նա իւր քաջախիտ ազդեցութիւնը:

ը.- Խօսելով Սմբատի սպանութեան դէպքի մասին,

Շրջանային Ժողովը հարցապնդում է Բիւրոյին, թէ ինչո՞ւ նա միայն աքտորի դատապարտեց Մհերի ընկերներին, քանի որ նրանք հաւասար չափով մեղսակից են Սմբատի սպանութեան գործում:

թ.- Կ. Կ. գեկուցումից երեւաց, որ իւր գործունէութեան ամբողջ ընթացքում Կ. Կ.ն գտնուել է աննորմալ պայմանների մէջ, եւ հնարաւորութիւն չէ ունեցել միհրանականութիւնից ի սպառ քայքայուած շրջանը վերակազմել: Շրջանից եկած ընկերները դժգոհ լինելով Կ. Կ.ից բողոքում են Բիւրոյին, որ նա անուշադիր է թողել Նաւահանգստի Կ. Կ.ի կարիքները եւ պահանջները:

ժ.- Շրջանային Ժողովը խօսելով դաշնակցական գրականութեան մասին եկաւ այն եզրակացութեան, որ աշխատաւոր մասսաների մտաւոր եւ բարոյական մակերեւոյթը բարձրացնելու համար անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել տարածելու համար կուսակցական հրատարակութիւնները. մասնաւորապէս նկատուում է որ թերթը պէտք է ձեռնարկել աշխատաւորական մասսաներին մատչելի նիւթերով:

ժա.- VI Կ. Կ[ոմիտէի] շրջանային Ժողովը պարտաւորութիւն է դնում իւր պատգամաւորների վրայ պաշտպանել Դաշնակցութեան IV Ընդհ. Ժողովում որոշուած այն բանաձեւը, որը որոշում է Տաճկահայաստանի եւ Ռուսահայաստանի դատերը վարել Դաշնակցութեան դրօշի տակ:

ժբ.- VI Կ. Կ[ոմիտէի] շրջանային Ժողովը նրկատելով որ Ս[եւ] Ծովի ափերում ապրող տաճկահայ գաղթականների վիճակը թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս ներկայացնում է խիստ ցաւալի մի դրութիւն, եւ նկատելով որ նախորդ Շրջանային Ժողովներում եւս այդ հարցը քննուած է թէեւ, սակայն ոչ մի դրական արդիւնք չէ ունեցել, այս առթիւ պարտք է դրուում Ռայոնական Ժողովը գնացող պատգամաւորների վրայ, որ պէտքի Ս[եւ] Ծովի ափերում ապրող տաճկահայ գաղթականների տխուր վիճակը ներկայացնեն Ռայոնական Ժողովին եւ պահանջեն նրանից, որ նա Արեւելեան Բիւրոյի ուշադրութիւնը հրահրէ սոյն խիստ կարեւոր խնդրին վրայ:

ժգ.- VI Կ. Կ[ոմիտէի] շրջանային Ժողովը, ի նկատի ունենալով որ Կ. Կ.ի համար առաջարկուած թեկնածուները հրաժարուած են, եւ քանի որ շրջանը դեռ չունի յարմար ձայն այդ պաշտօնի համար, Շրջանային Ժողովը այս ցաւոտ երեւոյթը ներկայացնում է Ռայոնական Ժողովին, եւ շտապով պահանջում է պատշաճ կարգադրութիւն:

ժդ.- Ի նկատի ունենալով, որ Կ. Կ.ի անդամներ Վազգէնը եւ Ղարիբը այստեղ չեն, Շրջանային Ժողովը իր կողմից ընտրեց մի հաշուի կոմիտէա, որը հրահրելով վերոյիշեալներին կը քննի հաշիւները եւ արդիւնքը կ'ուղարկի Կենտրոնականի միջոցաւ Արեւելեան Բիւրոյին:

26.- Վան-Փուշ կամ Վանցի, իսկական ազգանունը՝ Զրաղացպանեան:



XXI

ԾՈՎԱՓ – ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԻ ԹԻՒՆ

Ծովափի Կեդր. Կոմիտեինը կ'երկարքր Տրապիզոն – Կիրասոն – Սամսոն Սեւ Ծովեայ ափերուն վրայ, ընդգրկելով պատմական Պոնտոսի երկրամասը:

Ծովափը Ընդի. Ժողովին կը ներկայանայ վստիտ թղթածրարով մը. Կ. Կոմիտեի անփոփ տեղեկագիր մը: Հակառակ 90ական թուականներէն դաշնակցական առաջին գործիչներու կողմէ (Ս. Չաւարեան, Յ. Եւսուֆեան, Յ. Ծափրիկեան) թափուած ճիգերուն, կազմակերպութիւնը խոր եւ կայուն արմատ չկրցաւ նետել այդ միջավայրին մէջ, գլխատարաբար թրքական իշխանութիւններու բանեցուցած խիստ հսկողութեան եւ յաճախակի ձեռքարկութիւններու պատճառաւ: Ասոր համար ալ Տրապիզոնի շրջանը 4րդ Ընդի. Ժողովին կը ներկայանար լրջօրէն ջլատուած վիճակի մէջ եւ խորհրդակցական ձայնի իրաւունքով միայն:

Այսուհանդերձ որոշ կենդանութիւն կը նշմարուի հոն. գաղտնապահութեան խիստ պայմաններու մէջ փոքրաքիւ բջիջներ կը գործեն քաղաքներու եւ գիւղերու մէջ: Աւելի տեսանելի է թրքակցական կապը «Իրօշակ»ի հետ, ուր գրեթէ կանոնաւորաբար լրատուութիւն կը հասցուի շրջանին մէջ թրքական իշխանութիւններու ի գործ դրած բռնութիւններուն մասին:

Եւ սակայն պէտք է պատել Օսմ. Սահմանադրութեան հռչակումին, որպէսզի Ծովափի կուսակցական գործունէութիւնը վերակախ ընթացիմ:

Ե. Փ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԾՈՎԱՓԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

Ներկայացուած Հ. 3. Դաշնակցութեան 4րդ Ընդիանուր Ժողովին

1.- Ժողովրդի տնտեսական կացութիւնը եւ անդառաք զարճումը յեղափոխական շարժումներէ վրայ:

Ժողովրդի տնտեսական կացութիւնը երթալով աւելի կը վատանայ, ժողովուրդը ջարդուած ու կողոպտուած՝ եւ հիմա ալ սխտեմաթիք կերպով հարածուած՝ չի կրնար վերստանալ գոնէ իր նախկին վիճակը, որուն ախ ու վախով կը ցանկայ: Տնտեսական անկումին յաջորդած է ե՛ւ բարոյական անկում ե՛ւ գաղթականութիւն: Գաղթականութիւնը որը գլխատարաբար ուղղուած է դէպի Սեւ Ծովի ռուսական ափունքը եւ նաւակով գաղտնի փախչելով կը կատարուի մեծ գոհողութիւններով, գիւղացոց մէջ մանաւանդ մեծ ծաւալ ստացած է եւ հետզհետէ կը շարունակուի, այնպէս որ գիւղի շատ տներ դատարկութեան եւ նոյնիսկ շատ երիտասարդ ուժեր ալ երկրէն հեռացան: Յեղափոխական գործին համակրողներու տրնտեսական վիճակին վատթարանալուն պատճառաւ, ինչպէս եւ ոմանց ալ հեռանալուն հետեւանքով՝ կամաւոր նուէրները երկու տարիէ ի վեր գրեթէ բոլորովին դադարեցան:

2.- Ժողովրդի տրամադրութիւնը եւ նրա վերաբերմունքը դէպի մեր մարմինները:

Ժողովուրդը որոշ կերպով գիտակ չլինելով տեղույս դաշնակցական մարմին գոյութեան, չենք կրնար ճշդել իր տրամադրութիւնը:

3.- Տեղական մարմիններ կազմը եւ նրանց ծաւալը պանագան խաւերում:

Մեր Կեդ[րոնական] Կոմիտէի անդամներէն մէկին հեռանալով, մէկին արտասահման անցնելը, ուրիշի մը 15 տարուան դատապարտուելը, չորրորդին անձնասպան լինելը, բնականաբար տեղաբացուցին մարմինը, եւ դրանց գործիչ մ'ալ կոմիտէին մէջ ընդունելով՝ ալ մ'ալ չորս անձերէ կը բաղկանայ, սակայն ասոնցմէ երկուքը քաղաքէն հինգ ժամուայ ճանապարհով հեռու գտնուելով՝ մեծ դժուարութեամբ հազիւ կրնանք ժողով կազմել, մանաւանդ որ հեռուն գտնուող երկուքին ալ միասին քաղաք գալը շատ անպատեհութիւններ ունի իրենց կեցած տեղին համար, եւ քաղաքը մնացող միւս երկուքին հետ ալ միշտ տեսնուելու դժուարութիւններ չունին, որովհետեւ տարբեր շրջանի մարդեր են եւ գրեթէ չորսն ալ կառավարութեան կասկածելի դարձած: Կեդր. Կոմիտէն սոյն վիճակին մէջ գտնուելով՝ բնականաբար չպիտի կրնար կանոնաւոր ընթացքի մէջ պահել ամէն ինչ: Սակայն այս ամառ Արեւմտեան Բիւրոյին բերել տուինք կազմական կանոնագիրը եւ որոշած ենք վերակազմութիւն ընել, հաւանաբար մեր տեղական պայմաններու համեմատ կանոններուն մէջ փոփոխութիւն մտցնելով, քանի որ մեր տեղին մէջ պիտի գործադրուի, վասնզի դժուարին եւ թերեւս անկարելի ըլլայ կանոնագիրը նոյնութեամբ

գործադրել:

Այժմ ունինք Կեդր. Կոմիտէէն գատ ոչ կանոնաւոր վիճակի մէջ մէկ կոմիտէ, մէկ ենթակոմիտէ, կոռուող խմբեր, փոխադրութեան եւ այլ պէտքերու ծառայող գործիչներ, համակրողներ, թերթ կարդացող երիտասարդներ:

4.- Աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան համար առաջ կեցած մարմինները, նրանց գործունէութիւնը եւ ծաւալը:

Այս տեսակ դասակարգ եւ այս տեսակ գործունէութիւն չկայ երկրին մէջ:

5.- Կազմակերպութիւնից դուրս գտնուող խաւերի պահանջները դէպի կազմակերպութիւնը եւ նրանց ստանձնած պարտականութիւնները:

Ժողովուրդը ջարդերէն յետոյ, մինչեւ ատեն մը, դարձեալ բաւական համակրանքով կը վերաբերուէր դէպի յեղափոխութիւնը, յուսալով [որ] այսքան ցոյցեր, շարժումներ, կողոպտումներ ու ջարդեր, եւրոպական միջամտութեամբ պիտի բարեփոխէ իր դրութիւնը եւ նախկինէն լաւագոյն վիճակ մը պիտի ստանայ: Իսկ երբ տեսաւ թէ, ընդհակառակը, աւելի վատթարացաւ իր դրութիւնը, բոլոր վստահութիւնը վերցուց յեղափոխութեան վրայէն եւ սկսաւ իւրաքանչիւր յեղափոխական շարժումէ սոսկում ու սարսափ զգալ եւ այն աստիճանի բարոյական ինկած վիճակ մ'ունեցաւ: Ունեցաւ, հատկապէս որ եւ վէճի հետեւանքը շատ անգամ մատնութեան սպառնալիքը կը լինի: Վայ այն յեղափոխականին կամ կառավարութեան կասկածելի անձին, որ կը համարձակի տեղական ազգ[ային] գործերու մասնակցել, կամ տկարի մը իրաւունքը պաշտպանել, գաղափարի անկեղծ կռուի փոխարէն՝ գինքը կը գտնէ մինչեւ անգամ կառավարութեան դուրս, բանտը: Այս պատճառաւ ոմանց ազգ[ային] գործերէ քաշուելով, ոմանց հետզհետէ արտասահման անցնելով, ազգային գործերը մնացին գրեթէ մէկ երկու անձերու ձեռքը, որոնք քաշ կը բերեն ամէն ինչ: Այսօրուայ մօտիկ բարեկամը իսկ վաղը կը զգուշանայ քեզից. իսկ եթէ հոտ մը առնու թէ կասկածելի դարձած ես, մինչեւ իսկ բարեւը կը դադարեցնէ քեզ հետ:

Թէ եւ երկար ժամանակամիջոցի մէջ, բայց վերջապէս դպրոցը մինչեւ աստիճան մը դարման պիտի կրնար տանիլ այս անկումին, սակայն ուսուցչութիւնն ալ հետզհետէ ինկաւ, կարող ուժերը հարածուեցան եւ ներկայ ուսուցիչներու խմբէն այլեւս բան չի սպասուիր, մինչեւ իսկ կայ ուսուցիչ, որ իրաւացի քննադատութեան կատարած, ուսուցչական) ժողովի մէջ իսկ սպառնաց կառավարութեան դիմել:

Իսկ գիւղացի տարրը քաղաքին բաղադրամամբ աւելի համակրանքով կը վերաբերուի դէպի յեղափոխութիւնը:

6.- Ռուսահայ մարմինների վերաբերումը դէպի տաճկահայ դատը:

Կովկասի մարմիններուն անկ է ասոր պատասխանել: 7.- Ամփոփ գեկուցում բոլոր դաշնակցական) մարմինների գործունէութեան յեղափոխական ձեռնարկներ, պրոպագանդա, ինքնապաշտպանութեան միջոցներ, ժողովրդի գիւղամբ, քաղաքներութիւններ եւ համեմատելի գործակցութիւն այլ ազգային եւ յեղափոխական կուսակցութիւնների հետ:

Իբր յեղափոխական ձեռնարկ կատարուած են երկու տեսակ գործեր, որոնց մին միշտ կը շարունակուի, ասոնց մասին մեր պատգամաւորը կը յայտնէ, եթէ անհրաժեշտ է գիտնալը:

Այս առթիւ թող ներուի մեզի յայտնելու թէ Տաճկաստանէն դուրս գտնուող գործիչներ, մեծ մասամբ Տաճկաստանի հանգամանքները կը մոռանան, եւ շատ անհոգ կը վերաբերուին Երկրի գործիչներուն անձին եւ Երկրին վերաբերեալ գաղտնիքներուն նկատմամբ. ասոր ապացոյցներ շատ կան եւ կը խնդրենք որ ուշադրութիւն դարձուի այս կէտին:

Պրոպագանդան խումբ մը գիւղերու մէջ կը շարունակուի, իսկ քաղաքին մէջ սեղմ կերպով վերսկսուած է եւ առայժմ միայն թերթերու եւ գրքերու ընթերցման միջոցաւ. երբ վերակազմութիւն ըլլայ, բնականաբար պրոպագանդի շրջանակն ալ կ'ընդարձակուի: Գիւղացին որ զէնք պահելու դժուարութիւն ալ ունի, կ'աշխատինք անոր զէնք հայթայթել իր դրամովը եւ ինքնապաշտպանութեան պէտքին համար:

Մեր շրջանին մէջ ուրիշ ազգային եւ յեղափոխական կուսակցութիւն մը մէջտեղ չ'երեւիր որուն հետ յարաբերութիւն հաստատէինք, միայն թուրք տարրին մէջ դժգոհութիւնը թէ եւ որոշ կ'երեւի, սակայն կազմակերպութեան մը հետքը դեռ չ'է երեւցած. էրզրումի շարժումէն վեր թուրք ցոյցերուն հետեւելով միշտ «Իրօշակ»ին թղթակցութիւններ կ'ուղարկենք, որոնք կը հրատարակուին ընդհանրապէս իբր Կիրասոնէն կամ Սամսոնէն գրուած:

8.- Կազմակերպութեան կեամբունների աղբիւրները ներկայումս եւ ապագայում:

Մինչեւ երկու տարի առաջ դրամական նուէրներ ստանալով՝ անով կը հոգայինք մեր զէնքի գնումները, բանտարկեալ ընկերներու ստակացուած նպաստները եւ գործին ուրիշ ծախքերը. սակայն տնտեսական վատ դրութեան պատճառաւ նուէրները գրեթէ դադարեցան եւ ապագային համար ալ շատ յուսալից չենք:

Մեր ելքը կը գոցենք օր. Աղանի Հանդակոֆի մեզի դրկած բաւական մեծկակ գումարէն եւ առայժմ մեր դրամական միջոցը գրեթէ միայն այդ է:

9.- Հաշուետուութիւն դրամական եւ ռազմական

Մինչեւ 1903 Յունուարի 1-ը Կեդրոնական Կոմիտէի հաշուեկշիռը ամէն տարուայ վերջին եւ մանրամասն հաշւոյ տետրերն ալ լմնցածին պէս միշտ ուղարկած ենք Արեւմտեան Բիւրո. իսկ 903էն մինչեւ 904 Յունուար, գրեթէ մէկուկէս տարուայ հաշիւը ջնջուած է նոյն ամսոյ խուզարկութեանց եւ ձեռքարկութեանց ժամանակ. գալով անկէ վերջի ժամանակամիջոցին, այսինքն 904 Օգոստ[ոս]էն մինչեւ 906 Հոկտ[եմբեր]ի հաշուեկշիռն ալ ներփակ կը ստանաք. իսկ մանրամասն հաշւոյ տետրն ալ կ'ուղարկենք երբ այլեւս պէտք չունենանք անոր:

Ռազմական հաշուին դառնալով, միջոց չունեցանք ատիկա կարգի դնելու, այդ ալ պատրաստելով կ'ուղարկենք Արեւմտեան Բիւրոյին:

Ի դիմաց Կեդր. Կոմիտէին ՅՈՒԱԿ

1906 Նոյեմբ. 24, Ծովափ

XXII

ԼԵՌՆԱՎԱՅՐ – ԿԻԼԻԿԻՈՅ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Կազմակերպական իմաստով Լեռնավայրը շատ աւելին է քան Կիլիկիան: Տեսականօրէն ա-  
նոր մաս կը կազմէին առաջին առթիւ բուն Կիլիկիան իր պատմական-աշխարհագրական սահ-  
մաններով, որոնց մէջ կ'իյնային Ատանա, Այնթապ եւ Մարաշ քաղաքները, Ձէյթունն ու Հանը-  
նը, արտաքին աշխարհի վրայ բացուող Մերսին եւ Իսկէնտերուն նաւահանգիստները, այլեւ  
Անտիոքն ու յարակից Սուէտիոյ (Մուսա Լեռ) եւ Քեսապի գաւառակները իրենց հայաբնակ  
գիւղերով: Ապա, դէպի Արեւելք, Լեռնավայրի կազմակերպութիւնը կը հասնէր մինչեւ Ուրֆա,  
Մալաթիա եւ Խարբերդ. հիւսիսի մէջ կը ներգրաւէր Սեբաստիոյ եւ Կեսարիոյ նահանգները,  
իսկ հարաւի մէջ՝ հիւսիսային Սուրիան եւ Լեռնալիբանանը: Այս բոլորով մէկտեղ, իբրեւ կազ-  
մակերպական շրջան, գէթ մինչեւ Դ. Ընդհ. Ժողով, գործերը կեդրոնացած կը տեսնենք բուն  
Կիլիկիոյ եւ Պէյրութի ու Հալէպ քաղաքներուն մէջ:

Ընդարձակ այս շրջանին մէջ հայութեան ոչ զանցառելի թուաքանակը բաշխուած էր անհա-  
ասար կերպով: Մեծագոյն մասով կեդրոնացած քանի մը տասնեակ գաւառական քաղաքնե-  
րու եւ աւաններու մէջ՝ ան կ'ապրէր թուրքերու, արաբներու եւ ասորիներու կողքին, մինչ բուն  
գաւառը, բացի նշուած քանի մը վայրերէն, զուրկ էր առհասարակ հայաբնակ գիւղերէ, որոնք  
վերջին հաշուով պիտի կազմէին ողնայարը որեւէ յեղափոխական երկարաշունչ գործունէու-  
թեան, ինչպէս էր օրինակ պարագան Տարօն-Վասպուրականի համար:

Առաջին յեղափոխականները, որ մուտք գործած են Կիլիկիա, հնչակեաններն են: Դաշնակ-  
ցութիւնը Կիլիկիայով կը սկսի հետաքրքրուիլ Ձէյթունի 1895ի յայտնի ապստամբութեան առի-  
թով: Այնուհետեւ կ'առնուին առաջին գործնական քայլերը հոն դաշնակցական կազմակեր-  
պութիւն ստեղծելու համար: Նախ Մար (Միք. Տէր Մարտիրոսեան), Հրաչ (Հայկ Թիրեաքեան)  
եւ Մկրտիչ Հատիկեան (Պոնտացի) կ'առաքուին հոն. անոնց պիտի յաջորդեն, մանաւանդ  
1898ի Բ. Ընդհ. Ժողովի կողմէ Կիլիկիան Պատ. Կեդրոնական Մարմնով մը օժտելու որոշումէն  
ետք, շարք մը ուրիշ գործիչներ՝ Մարթին, Սարհատ, Ռ-ահվէր, Յար. Գալֆայեան (Վահրամ)  
եւ այլն, որոնք կուսակցական բջիջներ կը հիմնեն Ատանայի, Այնթապի, Պէյրութի եւ այլ քա-  
ղաքներու մէջ, իբրեւ հեռանկար ունենալով Լեռնավայրի օգտագործումը իբրեւ օժանդակ շըր-  
ջան, որ պիտի արձագանգէր Արեւմտահայաստանի մէջ պայթելիք ընդհանուր ապստամբու-  
թեան մը:

1904էն սկսեալ Միմոն Չաւարեան եւ Խանասորի Վարդանը աւելի մօտէն եւ հիմնական  
կերպով պիտի զբաղին Լեռնավայրի յեղափոխական կազմակերպութեամբ:

\*  
\*\*

Չորրորդ Ընդհ. Ժողովի թղթածրարին մէջ գրեթէ բան չէ պահուած Լեռնավայրի մասին,  
հակառակ այն իրողութեան որ երկու առիթներով ժողովի քննարկման ենթարկուած է ան:

Փաստօրէն Լեռնավայրի յատկացում այս գլուխին տակ տրուած 16 փաստաթուղթերուն  
15-ը վերցուած է Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւէն: Անոնց կարեւոր մէկ մասը, զոր խմբած ենք ա-  
ռաջին բաժնին մէջ (Ա 1. – Ա 9.), հակիրճ տեղեկագրեր են՝ գրուած 1902-1904 տարիներուն,  
այսինքն Գ. Ընդհ. Ժողովէն առաջ բայց մնացած չիրատարակուած: Անոնք հետաքրքրական  
տեղեկութիւններ կու տան Կիլիկիոյ աշխարհագրութեան, ազգաբնակչութեան կազմի եւ այլ  
առանձնայատկութիւններու, ինչպէս նաեւ կազմակերպութեան սկզբնական քայլերու եւ գոր-  
ծիչներու մասին: Իրարու մօտիկ թուականներու գրուած ըլլալով, բնականաբար անխուսափե-  
լի ըլլան կրկնութիւնները նոյն անձնատրութիւններու եւ դէպքերու մասին, բայց եւ այնպէս բո-  
լորը միասին ամբողջական պատկերացում կու տան միջավայրին ու մթնոլորտին մասին:

Երկրորդ բաժինը կը գրաւեն Ս. Չաւարեանի եւ Խանասորի Վարդանի (Մարգիս Մեհրաբ-  
եան) գրութիւնները, յատկապէս «Ամփոփ տեղեկագիր Կիլիկիայի մասին»ը, որ ամէնէն ու-  
շագրու փաստաթուղթն է Կիլիկիոյ մասին գրուած: Չոյզ հեղինակները իբրեւ անդամ Լեռնա-  
վայրի Կեդր. Մարմնին 1904-5 թուականներուն երկարատեւ այցելութիւններ տուած եւ ուսում-  
նասիրած էին երկրի յարմարութիւնները՝ յեղափոխական գործունէութիւն ծաւալելու եւ իբր  
ապստամբավայր ծառայեցնելու տեսակէտէն: Ի դէպ, այս այցելութիւններու ընթացքին է, որ  
Միմոն Չաւարեան հանդիպումներ ունեցաւ Պէյրութի ամերիկեան եւ ֆրանսական համալսա-  
րաններուն մէջ ուսանող հայ երիտասարդներուն հետ. այդ շփումներէն ալ ծնունդ առաւ  
Հ.Յ.Դ. Չաւարեան Ուս. Միութիւնը, որուն վիճակուած պիտի ըլլար բախտորոշ դեր խաղալ Ե-  
րիտասարդ ուժերու գաղափարական պատրաստութեան մէջ:

Յայտնի է որ թէ Չաւարեան եւ թէ Վարդան շուտով ստիպուած պիտի ըլլային անցնիլ Կով-  
կաս, հոն բորբոքած հայ-թաթարական բախումներուն մէջ ղեկավար դերեր ստանձնելու  
համար:

Երրորդ եւ վերջին բաժնին մէջ տրուած փաստաթուղթերը (Գ 1. – Գ 4.) կը կրեն 1906 եւ  
1907 թուականները եւ գրուած են տեղաբնիկ գործիչներու կողմէ՝ Լեռնավայրի տարբեր կեդ-  
րոններու կազմակերպական վիճակը բնութագրելու համար:

Ե. Փ.

Փաստ. 221-63

### Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ. ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Կ. ԿՈՄԻՏԵԻ 1898 - 1903

Ներկայացնում փաստաթուղթը Հ. Յ. Դ. արխիվներում մէջ կը կրէ 221-63 համարը, բուսական և հեղինակի անուն կամ առարագրութիւն չունի: Տեղեկագրի կողքի էջին վերը գտնուող արձանագրութեան («Գ. Ընդ. Ժողովի վաւերագրերից»), ինչպէս նաև Լիբանանի ծովեզրեայ շրջաններու ուսումնասիրութեան մասին եղած ակնարկութեան կարելի է հետևելը: Այս ան գրուած պէտք է ըլլայ 1904ին:

13 մեծադիր էջ գրուող այս գրութիւնը փորձ մըն է ամփոփ գիծերու մէջ ներկայացնելու Կիլիկիոյ մէջ դաշնակցական կազմակերպութիւնը առաջացնելու առաջին քայլերը, այլ խօսք որ հոն ուղարկուած կարգ մը գործիչներու նկատմամբ հեղինակին կատարած դատումները ըլլան երբեմն շատ ենթակայական և հետևաբար՝ վիճելի:

Ե. Փ.

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը 1895ին առաջին անգամ իր ուշադրութեան առարկայ կը դարձնէ Լեռնավայրը, երբ Արծուաբերդը<sup>1</sup> ապստամբութեան դրօշը պարզած էր: Ապստամբութեան ընթացքին մէջ կը հանդիպէինք ընկերներու, որոնք Կիլիկիոյ ափերը խմբուած՝ նիւթական և բարոյական աջակցութիւն կ'առաջարկեն Հնչակեաններու, որոնք այն ատեն հոն հաստատուած միակ կազմակերպութիւնն էին, բայց կը մերժուին աւանգը: Այս մերժումէն յուսահատ, մերայինք աչքերնին կը դարձնէին Լեռնավայրէն, որ իրենց համար անանցանելի կը մնար: Ատկէ մինչեւ 1896ի վերջերը չգիտէինք թէ կազմակերպութիւնը ինչ խորհուրդներ ունեցեր է, միայն այդ դարու վերջը Կովկաս գումարուած տարեկան Ընդհանուր ժողովին<sup>2</sup> արձանագրութեանց մէջ կը հանդիպինք հետեւեալ տողերուն:

«Ժողովը աչքի առաջ ունենալով Լեռնավայրի անա-

ռիկ դիրքը, տեղ. ժողովրդի յեղ. ոյժը և ընդհանրապէս միւս յարմարութիւններն ու առաւելութիւնները, որոշեց լուրջ ուշադրութիւն դարձնել այդ տեղի վրայ և այնտեղ ուղարկել կազմակերպող ղեկավարող մի ոյժ»: 1897ին Կիլիկիոյ մէջ Հրաչ, Մար<sup>3</sup> և այլք կը կազմեն գինուած խմբով Լեռնավայր մտնելու ձախորդ ծրագիրը, որուն դեռ չձեռնարկուած վիժելու պարագաներուն վրայ հարկ չենք տեսներ ծանրանալ հոս, քանի որ Բ.րդ Ընդհ. ժողովին մէջ (1898ին) այս մասին մանրամասն լուսաբանութիւններ տրուած պէտք է լինին: Սոյն 97 տարուայ վերջերը Պոնտացի (Հատիկ) Լեռնավայր կը մտնէ և կը սկսի թղթակցութիւններ և կապեր հաստատել:

1898 Այս թուականին Ապրիլին գումարուած Ընդհանուր

1.- Այս եւ յաջորդ փաստաթուղթերուն մէջ յաճախ յիշատակուած ծածկանուն-տեղանունները կը համապատասխանեն հետեւեալ վայրերուն.  
Արծուաբերդ - Ձէթուն  
Աւազան - Ուրֆա, Եղեւսիա  
Աւար-Աւեր - Խարբերդ  
Բազէ - Ատանայի (Խոր Վիրապ) կոմիտէին ծածկանունը:  
Բերդակ - Չոք կամ աւելի ծիշդ՝ Չորք Մարգուան  
Դաշտ - Չալէպ  
Թիկնաբերդ - Ֆոնտ'ուգ  
Խորշ - Քիլիս  
Խոր Վիրապ - Ատանա  
Ծոց - Պէլլուր  
Կարաւան - Իսկէտէրուն, Ալեքսանտրոք  
Կարմիր Լեռ - Անտիոք  
Կղզի - Կիպրոս  
Դեղեղատ - Ատիոք եւ Սուտիոյ հայաբնակ գիւղերը

Չովիտ, Գողարուր - Այնթապ  
Չսկայ-բերդ - Սի'ս, Վահկա՝  
Միջնաբերդ - Գաճըն  
Ջրվէժ - Մերսին  
Սահմանաբերդ - Մարաշ  
Տելդա - Աղեքսանդրիա  
Փորձանք - Պեհեսնի  
Քարձոր - Կիլիկի  
2.- Խօսքը կը վերաբերի Դեկտ. 1896- Յունուար 1897ին գումարուած կովկասեան Ռայոնական ժողովին:  
3.- Գրաչը Գայկ Թիրեաքեանն է, Պանք Օթոմանի հերոսներէն. Մար Միքայէլ Տեր Մարտիրոսեան: Բ. Ընդ. ժողովին երկուքն ալ ընտրուած էին անդամ Լեռնավայրի Պատասխանատու Կեդր. Կոմիտէին: Քիչ անդին յիշուող Պոնտացի, Տրապիզոն, Սկրտիչ Գատիկեանն է, Կիլիկիոյ առաջին կազմակերպիչներէն Մարի եւ Գրաչի հետ:

Ժողովը վերջապէս Բարձրաւանդակի համահաւասար կեդրոնացման վայր ընդունած է Լեռնավայրը, եւ Պատասխանատու Մարմին ընտրած Մար, Հրաչ և Միր-զայեանց: Այս վերջինը իր պաշտօնին գլուխը չանցած կը հրաժարի: Սոյն տարին Պոնտացի կը շարունակէր Լեռնավայրի մէջ իր սկսած գործը:

1899 Այս տարուայ գարնան Մար կը մտնէ Լեռնավայր, ուր կազմակերպութիւն մտցնելու առաջին քայլերուն մէջ կը ձեռնարկուի, մարտականներու (վերակազմեալ կամ նոր կոչուած Հնչակեաններ) մատնութեամբ: Մարի ձեռնարկումը պատճառ կը դառնայ և Պոնտացիի երկրէն դուրս ելնելուն, ըստ որուն մատնողները գինքն ալ կը ճանչնային: Ասոնց հետեւանք կազմակերպելու գործը կանգ կ'առնէ: Պատ. Մարմինը բաղկացեալ կը մնայ միակ Հրաչէն, որ գուրկ նիւթական և այլ միջոցներէ, անկարող կը լինի պէտքերուն բաւարարութիւն տալ և գէթ ձեռք անցուած կապերը կարելի սահմանին մէջ զարգացնել:

1900 1900ին (Մայիս), ճանապարհածախսի մը չգոյութեան պատճառաւ ամիսներու երկար սպասումներէ և յետաձգումներէ վերջ, Պատ. Մարմին կողմէ Լեռնավայր կը դրկուի Ռահվեր<sup>4</sup>, որ անցնելով Կարաւանի և Դաշտի միջով, կը տեսակցի նախկին ընկերներուն հետ, խզուած յարաբերութիւնը կը վերահաստատէ և կը հասնի Հովիտ: Հովիտի մէջ միայն մի քանի ամիս անցընելէ ետք, յարաբերութեան [մէջ] կը մտնէ երկու ոչ կուսակցական յեղափոխական] խմբերու հետ, որոնք փոխադարձ ծանօթութիւններէ և շփումներէ ետք կը համաձայնին միանալ և գործել որպէս Հայ. Յեղ. Դաշնակցութեան անդամներ:

1901 1901ի գարնան տեղի կ'ունենայ Աւար-Աւերի<sup>5</sup> մէջ Շրջանական ժողով: Պատ. Մարմին կողմէ ժողովին կը մասնակցէր Ռահվեր: Շրջանական ժողովը, թեր ուղէմ երկար վիճաբանութենէ ետք, միաձայնութեամբ կ'որոշէ ձգել Բարաթայուի<sup>6</sup> գործը, նկատելով զայն ոչ գործնական և կազմակերպութեան ոյժէն վեր մի գործ: Իսկ Լեռնավայրը գրեթէ առանց վէճի և այնպէս միաձայնութեամբ կ'ընդունի իբրև միակ յարմարագոյն ապստամբական կեդրոնավայր և Ռահվերի տըւած տեղեկութիւններէն տեսնելով որ ցարդ եղած ջանքերն ու գոհողութիւնները խիստ անբաւական են Լեռնավայրի նման կենսական կարեւորութիւն ունեցող ընկալապարմար շրջանի մը նոյնիսկ կազմակերպական գործի նախնական պէտքերուն, ժողովը կ'որոշէ (միաձայն) ղրմել ուր որ հարկ է, այդ շրջանի կարեւոր-

ութեան համապատասխան ջանքեր գործ դրուելու և գործը ցանկալի բարձրութեան հասցնելու համար:

Համարեա միեւնոյն ժամանակ, (1901ի գարունը), Յիլիպէի մէջ տեղի կ'ունենայ Կամքը<sup>7</sup> ներկայացնող Մարմին ժողովը, որուն մասնակցելու համար Աղեքսանդրիայէն մեկնելու կը հարկադրուի (Պատ. Մարմինի միակ անդամ) Հրաչը: Այս միջոցին Լեռնավայրի գործին հետ կապուած ընկեր մը չգտնուելուն, գործերը կը մնան Վահրամի<sup>8</sup> վրայ, որուն Երկրի [հետ ունեցած] կապերու և գործերու ընթացքի մասին որեւէ ծանօթութիւն չի տրուիր, այն համոզմամբ թէ չուտով Աղեքսանդրիա կը հասնի շրջանի գործերուն տեղեկ նոր ընկեր:

Կամքը ներկայացնող Մարմին ժողովը նկատի առնելով Լեռնավայրի Պատ. Մարմին կազմալուծեալ վիճակը, կը վերակազմէ զայն, Հրաչին հետ ընտրելով երեք նոր ընկերներ. Պետո Պուլկարացի, Ա. Երկաթ և Ա. Մարթի<sup>9</sup>: Բայց, կարծես ճակատագրական ըլլար այդ շրջանի համար ձեռնհաս Մարմին մը գրկուած մնալը: այս վերակազմեալ Մարմին անդամները փոխանակ գործին շուրջը հաւաքուելով [իրենց] պարտականութիւնը ստանձնելու, կը մնան անուանական: Ինչպէս յայտնի է, քիչ ժամանակ ետքը Պետո կը մտնէ Մակեդոնիա, ուր ձեռնարկուելով կախաղան կը բարձրանայ: Երկաթ Ամերիկա կը մնայ մեզ անյայտ պատճառներով: Մարթին նոյնպէս Ամերիկա կը մնայ սպասելով դրամական հարցի մասին իր պայմաններուն կարգադրման: Իսկ Հրաչ՝ որուն ձեռքը կը կեդրոնանայ այսպիսով ընդարձակ շրջանի մը բոլոր պատասխանատու գործերու ղեկավարութիւնը, կը մտնէ Ոսկեհանք և կը միջոցառուի բռնի դրամական հանգանակութեան անել բաւիղին մէջ: Նոյն տարուայ մէջ թէեւ Պատ. Մարմին անդամ կ'ընտրուի նաև Ալայն<sup>10</sup>, բայց ծանօթութեանց պակասութեան, յարաբերութեանց անկանոնութեան, հեռաւորութեան և այլ պատճառներով նա ևս կը մնայ անկարող գործնականապէս անդա-

4.- Ռահվեր բուն անունով Միսաք Վարդանեան:  
5.- Աւար-Աւեր Խարբերդի կուս. ծածկանունն է:  
6.- Քարաթայու Տերսիմն է:  
7.- Դաշնակցութեան Կամքը ցերեպայանց մարմինը ստեղծուած էր Բ. Ընդ. ժողովին կողմէ (1898) և կը բաղկանար Արեւելեան և Արեւմտեան Բիւրոներու և չորս Պատասխանատու Կ. Կոմիտէներէն (Բարձրաւանդակ-Սասուն, Վասպուրական, Լեռնավայր և Կոռածաղիկ-Պոլիս) մէկական ցերեպայանցիներէն: Դ. Ընդ. ժողովին ան վերակոչուեցաւ Դաշնակցութեան Խորհուրդ:  
8.- Վահրամ բուն անունով Յարութիւն Գալֆայեան, նոյնպէս Լեռնավայրի գործիչներէն:  
9.- Պուլկարացի Պետոն Պետրոս Սերեմճեանն է, Ա. կամ Աշոտ երկաթ՝ Արմենակ Լեռնեանը, իսկ Ա. կամ Աշոտ Մարթին՝ Մուրատեան Մարթին:  
10.- Ալայնը յայտնի գրող Ռուբէն Ջարդարեանի ծածկանունն է:

մակցելու մինչև իր ձեռքակալումը, որմէ ետք յարաբերութիւնը ընդհատուած է բոլորովին: Ինչպէս կը տեսնուի, Պատ. Մարմնի անդամակցութեան ընտրուածներէն մեծ մասը, արդէն նախապէս այս շրջանի մասին ծանօթութենէ զուրկ, միշտ գործէն հեռու մնացած եւ կարծես չեն իսկ հետաքրքրուած:

Այսպէս ուրեմն, իրարու յաջորդող ժողովները, որոշումները, ընտրութիւնները, Լեռնավայրի Պատ. Մարմինը, բոլոր ասոնք թղթի վրայ մնացած են, իսկ Լեռնավայրի տխուր կացութիւնը՝ անփոփոխ: Թերեւս անհավատալի լինի եթէ յայտնուի թէ 1900էն մինչև 1901ի կէսը, մէկ ու կէս տարուայ ընթացքին մէջ Լեռնավայր մը տած դրամներու գումարը հազիւ կը հասնի 30 ոսկիի, ուսական փողով 300 ուրբի: Ներս մտած գործիչներէն Ռահվեր<sup>4</sup>, մի կերպ Շրջանական Ժողովին մասնակցելու համար Աւար-Աւեր<sup>5</sup> գնալէ ետք, անկարող վերադառնալու ալ ճանապարհածախս ճարել, կը փակուի իր ծննդավայրը ամբողջ տարի մը անորոշութեան մատնուած: Սամուէլ, որ Հրաչի մեկնած օրը զրկուած էր Կարաւան<sup>1</sup>, երկար սպասողական դրութեան մէջ մընալով դուրս գալ կ'առաջարկէ: Միւս կողմէ, նոյն տարուայ վերջերը, ձեռքէ չհանելու համար, Ա. Լեռնը ճամբու կը դուրսի Սահմանաբերդ<sup>1</sup>, աննշան ճանապարհածախս մը միայն տալ կարողանալով: Այդ միջոցին, իր հայրենիքը Խոր-Վիրապ<sup>1</sup> վերադառնալով տեղական կազմակերպութեան կը միանայ ընկեր Կիլիկեանը (Զաքարիա Պատիկեան):

1902

1902ին Ռահվեր վերադառնալով Հովիտ<sup>1</sup>, կը տեսնէ յեղ. խմբերու ղեկավարներէն մէկ մասին հեռացած ըլլալը, քահանայութեան եւ բժշկութեան պատրաստուելով աւելի օգտակար դառնալու մտածումով: Ինչպէս կը սպասուէր, ասոնք իրենց նոր միջավայրին մէջ ալ օգտակար եղան, շարունակելով գործել տեղական պայմաններու համեմատ: Հովտի ոյժերը կարգի դնելէ ետք, Ռահվեր նախ Արծուաբերդ եւ յետոյ Սահմանաբերդ<sup>1</sup> կ'երթայ տեղային ոյժերը աչքէ անցնելու, Աշտուր Արծուաբերդ զրկելու, իսկ ինք Սահմանաբերդ հաստատուելու նպատակաւ: Դժբախտաբար այդ նպատակին իրագործման համար ներկայացած դրամական պէտքերու գոհացումը քանի մը ամսուայ երկար թղթակցութիւններէ ետք, անհնար ըլլալով կարգադրել, կը վերադառնայ Հովիտ: Այս տարուայ մէջ Սամուէլ կ'այցելէ Բերդակ եւ Փորձանք<sup>1</sup> ու հոն գտնուող ազդեցիկ մարտիկներու հետ յարաբերութիւն մշակելէ ետք կը վերադառնայ Կարաւան:

Մինչ Երկրի գործերը եւ գործիչները կանգ առնելու էին դատապարտուած, անդին Պատ. Մարմնի անդամներէն Հրաչ Ոսկեհանք<sup>11</sup> մէջ տարուած էր ընկերական վէճերով: Երկաթ<sup>12</sup>, որ այդ միջոցին Ոսկեհանք կը հաս-

նէր, քանի մը ամիս մնալէ ետք կը լքէ Լեռնավայրը եւ կը հեռանայ դէպի Բարձաւանդակ<sup>12</sup>: Քիչ յետոյ Հրաչ կը ձեռքակալուի: Իսկ Մարթին, տարուայ վերջը միայն Աղեքսանդրիա կը հասնի եւ կը սկսի Լեռնավայրի մասին ծանօթութիւններ ստանալ: Բայց Երկիր մտնելու համար կը շարունակէ անհրաժեշտ պայման նկատել դրամական հարցի մասին որոշ կարգադրութիւն մը ընել Արեւմտ. Բիւրոյի եւ Ամերիկայի Կ. Կոմիտէի հետ:

1903

1903ի սկիզբը Աշտու Մարթինի<sup>13</sup> առաջարկութեամբ Պատ. Մարմնի մէջ կը մտնեն Վահրամ<sup>8</sup> եւ Աղասէր<sup>13</sup>: Սոյն երեք անդամներէ բաղկացեալ Մարմինը Երկրի գործերուն ընդհանուր<sup>1</sup> ուղղութիւն մը տալու համար կ'որոշէ կարեւոր շրջաններու եւ գործիչներու մասնակցութեամբ Շրջանական Ժողով մը գումարել Մոցի<sup>1</sup> մէջ, ուր ներկայ ըլլայ նաեւ Մարթին: Այս հրահանգը ստանալով Ռահվեր, Ա. Լեռնը Արծուաբերդ կը զրկէ ու կը մեկնի դէպի Մոց: Բայց դժբախտաբար, ժողովի գումարումը ամիսներ յետաձգելէ ետք, բոլորովին ձգել կը ստիպուի Պատ. Մարմինը, ստիպողաբար անհրաժեշտ տեսնելով նախ քան այդ, իր անդամներէն մին ժընել ուղարկել, Արեւմտ. Բիւրոյի հետ դրամական եւ այլ հարցերու մասին վերջնական համաձայնութեան մը գալու համար: Այս նպատակաւ Ապրիլ ամսուն կը մեկնի Վահրամ<sup>8</sup> եւ կը վերադառնայ Յունիսի վերջը, մինչև մօտ օրէն գումարուելիք Ընդհ. Ժողովը Լեռնավայրի պէտքերուն յատկացուելու որոշ պիտուէի մը կարգադրութեամբ: Այդ ժամանակէն մինչև ցարդ տեղի ունեցած դէպքերը եւ առնուած քայլերը հետեւեալներն են:

Անցեալ Օգոստոսին ընդհանուր<sup>1</sup> գործունէութեան որոշ ուղղութիւն մը տալու համար, Աղեքսանդրիա Ռահվերի<sup>4</sup> ներկայութեամբ խորհրդակցութիւն կատարելէ ետք Ռահվեր Երկիր վերադարձած է: Աղասէր Պատ. Մարմնի անդամակցութենէն հեռացած եւ Ռահվեր ընդունուած է պատասխանատու ընկեր:

Երկրի մէջ իրարմէ հեռու եւ գաղտնի հաղորդակցութիւնը վտանգաւոր վայրերու միջև ջորեպանային գծեր հաստատուած են մեր ընկերներով, որով միացած են Խոր-Վիրապ, Կարաւան, Հովիտ, Սահմանաբերդ եւ Արծուաբերդ, կեդրոն ունենալով Հովիտ<sup>1</sup>:

Ռահվերի հետ վերջին անգամ Երկիր մտած է մի ընկեր, Սարհատ, որու հետ քննած են Լիբանանի ծովեզերքը Մոցէն սկսեալ մինչև Գօտի, գէնք-ռազմամթերքի եւ այլնի փոխադրութեան տեսակէտով եւ նպատակաւոր տեղեկագիր տուած: Ճիշտ այս հարցի առթիւ խոր-վի-

11.- Ոսկեհանքը, ինչպէս գիտենք, Իզմիրն է:  
12.- Սասուն:  
13.- Յակոբ Աղասէր Գրիգորեան իբրեւ Երոպայի Դաշնակցական Ուսանողներու պատգամաւոր մասնակցած է Գ. Ընդհ. ժողովին:

րապցիք ձեռնարկած են քննել Տաւրոսեան Լեռնաշղթայի ծովափնեայ վայրերը:

Ամիս մը առաջ նոյնպէս յաջողութեամբ գաղտնի ներս անցած է մի ուրիշ ընկեր, Արամ, Լեռնավայրի մէջ գործելու:

Քանի մը ամիս առաջ Հովիտ հասած է Քեռի<sup>14</sup> խումբի անդամներէն մին, որ նոյնպէս Լեռնավայրի մէջ գործելու համար զրկուած է:

Մոցի մէջ կազմուած են կոմիտէ եւ մի քանի խմբեր, իսկ Զրվէժի ու Ովասիսի<sup>1</sup> մէջ մի մի խումբ:

Կազմակերպական Գերակայ վիճակ

Երկրի մէջ մեր ունեցած ոյժերը եւ կապերը պատկերացնելու համար, Լեռնավայրի աշխարհագրական դիրքին համապատասխան վերջերս կազմուած Արեւելեան եւ Արեւմտեան Կ. Կոմիտէներու շրջաններու վրայ գաղտնի խօսիլը օգտակար կը լինի, շրջանները բաժնելով Ալեքսանդրէթի ծոցին ուղղութեամբ դէպի Արեւելք եւ Արեւմուտք:

Ա. Արեւելեան Շրջան

Այս շրջանի պատկանող երկու կարեւոր նաւահանգիստներու Մոցի եւ Կարաւանի<sup>1</sup> մէջ ունիւմ [sic] կազմակերպութիւն եւ կապեր:

1.- Կարաւան.- Այստեղ կը գտնուին հեղինակաւոր անձեր, որոնց հետ ունինք կապեր եւ գործնական քայլերու մէջ անոնցմէ օգտուելու յոյսեր: Կան մի քանի կռուող ոյժեր, ծանօթ Լեռնավայրի լեռներուն, կիրճներուն եւ լեռնային ճամբաներուն: Լեռնավայրի էլմահաղ լեռան վրայ գտնուող հայ գիւղախմբերու մէջ համակիրներ եւ կապեր:

2.- Մոց.- Տարիներէ ի վեր գտնուած են ուսանող ընկերներ, մանաւանդ Հովտէն. վերջերս կազմուած տեղ. կոմիտէն սկսած է եւրոպական եւ ամերիկեան բժշկական բարձրագոյն վարժարաններու ուսանողներու հետ շփուիլ եւ կապեր հաստատել: Նաեւ արտասահմանէն ընկերներ ներս առնել: Այս երկու գործերուն մէջ ալ առնուած քայլերը յաջող են: Ուսանողներու բաւական թիւ մը համակրած եւ յարած է կարճ ժամանակի մը մէջ եւ հետզհետէ նորեր կ'աւելնան: Իսկ դրսէն ներս դուրս մօտերս երկու ընկերներ յաջողութեամբ մտան Մոց: Մասնաւոր յարաբերութիւն կը պահէ Կոմիտէն Սուէտիոյ հետ, ուր մի քանի համակիրներ կան:

3.- Դաշտ եւ Ովասիս՝ համակիր ընկերներ եւ խումբ.- Համակիր ընկերները օժտուած են ապագային լաւ ոյժեր դառնալու բոլոր յատկութիւններով:

4.- Հովիտ.- Արեւելեան շրջանի կեդրոնն է: Կազմա-

կերպութիւնը մուտք գտած է երեք-չորս տարիներէ ի վեր, ուր բացի վերջերս կազմուած Կ. Կոմիտէէն, կայ նաեւ տեղ. կոմիտէ մը: Ընկերներու թիւը ներկայիս կը հասնի մի քանի տասնեակի, բաղկացած Ամերիկեան Գոլէճի շրջանաւարտ ուսանողներէ, բժիշկներէ, կղերէ եւ մեծ մասամբ առեւտրական ու արհեստաւոր դասէն: Հաղորդակցութիւն ունի իր շրջանի քաղաքներուն, Խոր-Վիրապի, Պատ. Մարմնի եւ սահմանակից մի քանի քաղաքներու հետ:

5.- Սահմանաբերդ.- Այստեղ Աշտու-Լեռնի հաստատուելէն ի վեր ունինք կազմակերպութիւն: Տեղ. կոմիտէ որուն շուրջ կան երկու տասնեակի չափ ընկերներ, իր գործունէութեան ապացոյց տուաւ վերջերս Արծուաբերդի նման խիստ շղթայի մէջ առնուած մէկ վայրը յարաբերութեան մէջ դնելով Պատ. Մարմնին հետ:

6.- Արծուաբերդ.- 7-8 ամիսներէ ի վեր Աշտու-Լեռն հոն հաստատուած եւ տեղացի կարող անձերէն կազմած է տեղ. կոմիտէն: Հսկաբերդի մէջ կազմակերպութիւնը երկու տարիներէ ի վեր մուտք գտած է եւ մեր քահանայ ընկերը նախաձեռնութեամբ ունեցած է տեղ. կոմիտէ, յիշեալի եւ տեղույն իշխաններուն մասնակցութեամբ: Թիկնաբերդի մէջ մեր երիտասարդ եւ գաղափարական քահանայ ընկերը կազմելով տեղ. կոմիտէ յարաբերութեան մէջ է Արծուաբերդի եւ Հսկաբերդի կոմիտէներուն հետ: Մի քանի անգամ Շրջանական Ժողով գումարուած է, ուր մասնակցողները իրենց կարողութիւնը եւ տրամադրութիւնը յայտնած են տեղ[ական] պայմաններու համաձայն գործունէութեամբ նպատակաւոր մարմար շարժում մը պատրաստել: Նոյն ժողովի կողմէն, քահանաներէ մին տեսակցութիւն մը ունենալով Արծուաբերդի իշխաններէն երկուքին հետ, անոնք պատրաստակամութիւնը յայտնած են շարժել, պայմանաւ որ զոհողութիւնը երկուստեք լինի:

Բ. Արեւմտեան Շրջան

1.- Զրվէժ.- Խ. Վիրապի ամենամօտ ծովափը, նոր կազմուած է անոր հետ: 3-4 տարիներէ ի վեր հոն գտնուած են ընկերներ, բայց ամիս մը առաջ միայն կազմուեցաւ խումբ մը քանի մը երիտասարդներէ:

2.- Խոր-Վիրապ.- 4-5 տարիներէ ի վեր գոյութիւն ունեցեր է հոն Բագէ կոմիտէն, կազմուած տեղացի զարգացած եւ արհեստաւոր դասակարգերէն: Վերջերս ձեռնարկած է կոմիտէն մարտական խմբեր կազմելու, որոնց թիւը իր կարծիքով կրնայ հասնիլ մինչև 200ի:

3.- Միջնաբերդ<sup>1</sup>.- Լեռնավայրի ամենաանառիկ քաղաքն է, հոն հայ բնակչութեամբ մը, որ գէնքի վարժու-

14.- Ռուբէն Երզնանեան, ծանօթ Տերսիմի Քեռի անուամբ:



թիւն ալ ունի: Դժբախտաբար տակաւին հոն կազմակերպութիւն չունինք: Հարկ եղածը կարգադրուած է գարնան այնտեղ հաստատելու մեր բժիշկ ընկերներէն մին, որ այդպիսով կարող է օգտակար լինել նաեւ արծաթեղջուր, տարւոյն մի մասը հոն անցընելով:

Հարկ չենք տեսներ Լեռնավայրի ուրիշ երկրորդական քաղաքներու մէջ գտնուած ընկերներու եւ համակիրներու թուումով ծանրաբեռնել սոյն տեղեկագիրը, միայն կը շնորհակալանքս յայն նշանակալի փաստին վրայ թէ՛ կազմակերպութիւնը որ 4-5 տարիներ առաջ դեռ նոր կը մտնէր անհատներ գտնելու, այսօր, հակառակ երկար ժամանակ լքեալ մնալուն, ունի գրեթէ 1 Լեռնավայրի թուր կարեւոր տեղերը կոմիտէներ, իսկ երկրորդական տեղերը՝ խմբեր, ընկերներ եւ համակիրներու պատկառելի թիւ մը, որոնք, միջավայրին պայմաններուն համապատասխան գործունէութեամբ, կոչումն ունին գործին յաջողութեան ստատարներ լինելու: մանաւանդ կիւ մղելու ընդունակ ազգաբնակչութեան եւ յարմար միջավայրի մէջ, որպիսին է Լեռնավայրը:

**Լեռնավայրի դիրքը**

Լեռնավայրի դիրքին եւ ապստամբական ձեռնարկի մը յարմարութիւններուն վրայ հարկ չենք տեսներ ծանրանալ, քանի որ մեր կազմակերպութիւնը տարիներէ ի վեր այդ ճշմարտութիւնը ըմբռնած եւ զայն իբր կեդրոնացման վայր ընդունած է, սակայն ստիպուած ենք շնորհակալանքս մեր նպատակին ընծայած մի քանի առաւելութիւնները, որոնք, դժբախտաբար կը պակսին Մայր Հայաստանին եւ կարծես միշտ անտեսուած են մեր կազմակերպութեան կողմէ: Լեռնավայրը, ինչպէս յայտնի է, շղթայուած է լեռներով: Բացի այն որ այդ լեռներու անառիկ դիրքերուն վրայ շինուած են հայ մարտիկներուն օրրանը, այլ եւ այդ լեռներու գլխաւոր շղթաները սկիզբ կ'առնեն բաց ծովու ափերէն: Այս կէտը յեղ. գործունէութեան տեսակէտով շատ մը առաւելութիւններ ունի: Երկրորդ, արտաքին աշխարհին մօտաւորութեան

շնորհիւ դրսէն ոյժերու ներս փոխադրութեան յարմարութիւնը, քաղաքական շահերու զօրաւոր բախման նուազ հաւանականութիւնը եւ արտաքին միջամտութեան մը ընծայած կարելիութիւնն ու դիւրութիւնը, այնպիսի օժանդակներ են, որոնք երբեք ուշադրութեան վրիպեցնելու չենք: Յ տարի առաջ կոտորածի հաւանականութեան մասին Ռահվերի<sup>15</sup> տուած տեղեկութիւնները պատճառ եղան որ Ֆրանսական նաւատորմի Մերսին այցելէ, իսկ Արծուաբերդի հապճեպ եւ կարճ ժամանակուայ դիմադրութիւնը յանգեցաւ եւրոպական միջամտութեան, այնպիսի ժամանակ մը երբ հարիւր հազարներու կոտորածին առաջ հանդիսատես կը մնար նոյն Եւրոպան:

**Լեռնավայրի ժողովրդի լեռ. տրամադրութիւնը**

Լեռնավայրի հայութիւնը Հայաստանի հայութեան հետ բաղդատմամբ նուազ ճնշուած, տարիներ առաջ ապստամբական գաղափարներ չէ ունեցած, բացի Արծուաբերդէն, որ կռուած է յաճախ իր տեղական առանձնաշնորհումները պահելու համար: Թուրք ռեժիմին փոխուելուն եւ իր գաղափարական յառաջդիմութեան շնորհիւ Լեռնավայրի ազգաբնակչութեան մտածող դասը բացած է աչքերը եւ անցեալին մէջ կորսնցուցած մի քանի բարեպատե՛հ առիթներէն օգտուել չգիտնալուն համար դառնապէս զղջացած է: ԶԶ-ԶԶ Փոքր Ասիոյ շարժումներուն եւ ԶԵի Արծուաբերդի ապստամբութեան ժամանակ Միջնաբերդի, Բերդակի եւ Սուէտիոյ գիւղերուն մէջ տիրող յեղ. յուզումները, շարժելու պատրաստութիւնները եւ ընդհ. պատրաստակամութիւնը զօրաւոր ապացոյցներ են Լեռնավայրի ժողովրդի ազատասիրական զգացումներուն եւ զոհողութեան ընդունակութեանը: Ներկայիս, այդ տրամադրութիւնը աւելի զօրացած է:

Այսուհանդերձ անցեալի դառն փորձերէն օգտուած՝ միջավայրին պահանջումներուն համապատասխան պատրաստութեամբ կ'ուզէ շարժիլ, հանդէս բերելու համար զօրեղ եւ տեւական ապստամբութիւն մը:

Փաստ. 229-4

**Ա 2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**Յաջորդաբար տրուած տեղեկագիրները (փաստ. 229-4 եւ 229-1) ստորագրութիւն եւ թուական չունին: Երրորդը (945-29) թուականով է եւ գրուած (հայերէն եւ ֆրանսերէն) «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Կիլիկիոյ Կեդր. Կոմիտե» ժողագրութիւն եւ զինանշան կրող պաշտօնաթուղթի վրայ. ստորագրութիւնը՝ Լ. Պ. Կ. Կ., այսինքն Լեռնավայրի Պատասխանատու Կեդր. Կոմիտե: Երեք փաստաթուղթերը ըստ երեւոյթին կը կազմեն միեւնոյն տեղեկագրին տարբեր մասերը եւ բոլորին ձեռագիրը, լեզուն եւ ոճը կը պատկանին Յարութիւն Գալֆայեանին (Վաերամ), որ այդ տարիներում իբրև գործիչ կը գտնուէր Լեռնավայր եւ Մարմնի անունով հազորայնական կապ կը պահէր Կիլիկիոյ եւ Արեւմտեան Բարքի հետ:**

**Յաջորդող փաստաթուղթերու մէջ յաճախապէս է ծածկագրերու (չիֆրէ) գործածութիւնը: Լեռնավայրի գործիչներուն օգտագործածները կը բացուին ընդհանրապէս «Մայր Արաքսի ափերով» շարքով: Տպագրութեան մէջ ծածկագրերը տուած են շեղագիր տատերով:**

Մեր կազմակերպութեան մէջ եթէ կայ գործունէութեան շրջան մը, որ կեդրոնացման վայր ընտրուած ըլլալով իր աշխարհագրական եւ քաղաքական դիրքը, անցեալի պատմութիւնը, ժողովրդին տնտեսական եւ քաղաքական վիճակը, դեռ քիչ ուսումնասիրուած ըլլայ՝ մենք առանց վարանման պիտի ըսէինք որ նա Լեռնավայրն է: Ատոր պատճառներու մանրամասնութեանց հարկ չենք տեսներ մտնել հոս. միայն այս շրջանի մէջ մեր ունեցած ներկայ ուժերու եւ կապերու վերաբերեալ ներքի չափով տեղեկութիւններ տալու հարկին չմտած անօգուտ չենք նկատեր այս վայրի բնական եւ աշխարհագրական դիրքին, մեր նպատակակէտով ժողովրդի վերաբերեալ զանազան կարեւոր հարցերու յեղ. շրջանէն առաջ եւ վերջը հոն տեղի ունեցած կարեւոր դէպքերու, կատարուած սխալներու եւ այդ սխալներու հետեւանքով յեղ[ափոխական] ձեռնարկներու եւ շարժումներու վիժման պատճառներու մասին հակիրճ եւ ամփոփ տեղեկութիւններ տալ:

**Լեռնավայրի աշխարհագրական դիրքը**

Լեռնավայրի աշխարհագրական դիրքի վրայ խօսելով մենք նպատակ չունինք այս վայրի սահմաններու, քաղաքական եւ այլ բաժանումներու, քաղաքներու եւ անոնց բնակչութեան, երկրի բերքերու, արտածութեան եւ ներածութեան վրայ երկարօրէն խօսիլ. մենք պիտի բաւականանք երկրին յեղափոխական եւ ապստամբական տեսակէտներով ընծայած շատ մը առաւելութիւններու եւ այսպիսի շարժումներու իր ունեցած բնական յարմարութիւններու նկարագրութեամբ: Երբ աչք դարձնենք Լեռն[ավայր]ի քարտէսին վրայ, կը տեսնենք որ Երկիրը շրջապատուած է շատ մը լեռնաշղթաներով, որոնք կ'երկարին մէկ ծայրէն միւս ծայրը 30-40 քիլոմետրէն մինչեւ 3-400 քիլ[ոմետր] եր-

կայնութեամբ եւ 10-20էն մինչեւ 100-150 քմ. լայնութեամբ: Երկրին արեւելեան մասին մէջ կը գտնուի ահեղապանծն Ամանոս (Կեպուր տաղ), որ էլ մա տաղ անուամբ Ռաս էլ Խնդիրի հրուանդանէն սկսեալ կը քաշուի մինչեւ Ս[ահմանա]բերդի՝ մօտերը եւ կը լմնայ Շէքէր Օվասը կոչուած պղտիկ դաշտին մօտ բարեւելով Ախրը եւ Գանլը տաղ լեռները, որոնք Ս-բերդէն սկսեալ կ'երկարին դէպի հարաւ-արեւելք մինչեւ Մայաթիա:

Ամանոսի արեւելեան կողմը կը գտնուի նոյնպէս Գուրտ տաղ ըսուած լեռները, որոնց եւ Ամանոսի մէջտեղ գտնուող Լեռնադաշտի մէջ հաստատուած կան բաւականաչափ հայ գիւղեր, որոնց մէջ դեռ յեղ[ափոխութիւնը] ոտք չէ կոխած: Ամանոսի ստորոտն է նոյնպէս Պուլանք գաւառը, որ իր բազմամարդ հայ բնակչութեամբ մեծ օգտակարութիւններ կը խոստանայ հրոսակային խումբերուն: Մենք պիտի չծանրանանք հոս Ա[րծուա]բերդի եւ Ս[իջնա]բերդի [վրայ], որոնցմէ առաջին դիրքէն աւելի ժողովրդին անկախ եւ խիզախ ոգին եւ երկրորդին՝ իբր կ[ազմակերպ]ման վայր բնական առաւելութիւնները արդէն հանրածանօթ են:

Երկրին արեւմտեան մասին մէջն է վեհապանծ Տաւրոս, որ Տիւմպէլէկ, Պուլկար եւ Ալա տաղ շղթաներով կ'երկարի Ատալիոյ Մոցի եզերքէն մինչեւ Ս[իջնա]բերդի գլուգահեռական ուղղութեամբ դէպի արեւմուտք: Սուէտիոյ Գեսապ լեռ<sup>15</sup>, որու բարձրաւանդակի վրայ դրուած են լեռնայն հայ քաջերու գիւղախմբեր: Ս[իջնա]բերդի մօտերը Պագըր տաղը եւ Գոգան լեռները ոչ նուազ նշանաւոր եւ գործունէութեան տեսա-

15.- Ըստ երեւոյթին հեղինակը թիրմացութեան մէջ է. խնդրոյ առարկայ լերան անունը Կասիոս է, որուն ստորոտը, լերան լանջին փոռած է Քեսապ գուտ հայաբնակ մեծ գիւղը: Երջակայքը կը գտնուի շուրջ տասնեակ մը ցոյցալէս հայաբնակ գիւղակները: Քեսապ անունով ծանօթ է նաեւ անբող գաւառակը:

կէտով շատ յարմարութիւններ կը ներկայացնեն ցանկացեալ գործին:

Քաղաքական դիրքը

Աւելորդ կը համարենք [Եռն(ավայր)ի քաղաքական] դիրքի մասին խօսք բանալ հոս:

Այսօր ապացուցուած եւ յայտնի ճշմարտութիւն մըն է որ, այն ազգերը որոնք բաց ծովերու առջին ազատ դռներ ունին անոնք միայն զարգացման եւ յառաջդիմութեան հսկայ քայլեր առած են, եւ դեռ ականատես ենք այն խոշոր ջանքերուն եւ հսկայ ձախողութիւններուն, որոնք երբեք չեն խնայուիր մեծ պետութեանց ու մանց կողմէ բռնելու համար բաց ծովերու վրայ գրտնընդ որեւէ դուռ կամ նաւահանգիստ:

Միջերկրականի գեղեցիկ ափունքի վրայ շարուած դռներով եւ ներսերը հարստութեան, առաջդիմութեան դեռ իր կոյս եւ բնական վիճակին մէջ պահուած խոշոր տարրերով օժտուած վայրի մը քաղաքական կարեւորութեան վրայ խօսիլն անգամ աւելորդ կը համարենք:

Լեռնավայրի ժողովրդին տնտեսական եւ քաղաքական պայմանները

Լեռնավայրի ժողովուրդը իր վայելած դիրքին շնորհիւ է որ թուրք բռնակալութեան լուծին տակ նուազ տառապած է քան Մայր Հայրենիքի հայութիւնը: Արտաքին աշխարհի մօտաւորութիւնը կարծես անօտարացուցած է բռնակալութեան ճնշիչ մթնոլորտը եւ կիլիկիոյ հայութիւնը, մինչեւ իսկ դաշտերու վրայ ցրուած մասը, չէ ենթարկուած այն խիստ պայմաններուն, որոնց ենթակայ եղած են միշտ Մեծ Հայքի հայերը: Քաղաքական բաղադրամասեր նպաստաւոր պայմանները, ծովեզերեայ վաճառաշահ մեծ կեդրոններու հետ շատ կանուխէն սկսած առեւտ. յարաբերութիւնները օգնած են իր տնտեսական բարգաւաճման, եւ այսօր իսկ դիտելի կէտ մըն է, որ տաճկահայերու առաջնակարգ հարուստները կը կազմեն, շատ քիչ բացառութեամբ, կիլիկիոյ կամ անոր մօտաւոր վայրերու հայութիւնը: Մենք չենք կրնար լուրջեամբ անցնիլ հոս պատմական կարեւոր իրողութեան մը վրայ թէ՛ բարբարոս ազգերու մեծ արշաւանքներու ատեն, որոնց միշտ թատր եղած է մեր բնաշխարհը, կը տեսնենք որ գաղթականութեան ստուար զանգուածներ շարժուել են դէպի ծովեզերեայ վայրերը, որու կը պարտինք այսօր կիլիկիոյ հայութեան խոշոր մէկ մասը, որ ժամանակ մը այնքան զօրացած կարողացեր է հայկական անկախ իշխանութիւն մը կազմել: Չէ կարելի ուրանալ այն պատմական դէպքին մէջ հայուն բնական յատկութիւնները եւ հայ կեանքի ձգտումները բնորոշող կէտերը, ուշադրութեան չվրիպեցնելով նաեւ ծովեզերեայ վայրերու մէջ բռնակալութեան նուազ խտացումը եւ ի հարկին երկրէն

բոլորովին հեռանալու համար ծովեզերեայ վայրերու ընծայած բնական դիւրութիւնները:

Լեռնավայրի իր ապստամբավայր

Բռնութեան դէմ ընդվզող ժողովուրդներու ապստամբական վերջին մի քանի դէպքերը բացորոշ ցոյց տուին, թէ երկրի դիրքը եւ ժողովրդին տրամադրութիւնները, միանալով խնամքով պատրաստուած եւ լաւ դեկավարուած շարժումներու, որչա՛փ ծանր հարուածներ կրնան տալ անհամեմատ ուժերու դէմ:

Լեռնավայրը իբր լեռնային երկիր՝ իր լեռներով, իր կիրճերով, իր անառիկ դիրքերով երբեք ետ չի մնար թրանսպալներէն, ջուպաներէն եւ կրետէներէն: Հոն պիտի հանդիպինք մէկէ աւելի կեդրոնացման վայրերու, որոնք իրենց անմատչելի գագաթներով եւ անանցանելի թերմոպիլեան կիրճերով ընդունարան կրնան լինել բռնութեան դէմ ծածանող ապստամբական դրօշին: Հոն են լեռներու երկարաձիգ շղթաները, ընդարձակ եւ խիտ անտառներ, որոնք բնութենէն օժտուած են թշնամույն դէմ տեւական guérillաներ մղելու ամէն յարմարութեամբ:

Ժողովրդին տրամադրութիւններուն գալով՝ 92-93ի Փոքր Ասիոյ խրտուամերէն սկսեալ մինչեւ ներկայի մեր հետազօտութիւնները, Երկրի մեր ընկերներուն կարծիքները կու գան ոյժ տալ մեր համոզման թէ՛ այդ երկրի ժողովուրդը այնքան չէ ստրկացած եւ իր մէջ ազատութեան սէրը անշէջ կը մնայ: Թէ՛ նա պատրաստ է շարժիլ եթէ երբեք առնուած քայլերուն լըտութեան վրայ նա որոշ չափով վատահուօրին կազմէ: Ստիպուած ենք ստորագծել վերի տողերը, վասնզի խոստովանելու ենք թէ՛ յեղ. տարեզրութեան մէջ իր սխալ եւ գեցացանք թէ՛ յեղ. տարեզրութեան մէջ իր սխալ եւ գեցացական կողմերով հարուստ 92-93ի Փոքր Ասիոյ շարժումները եւ 25-26ի ապստամբութեան շրջանին մէջ ի գործ դրուած յեղ. անագին միջոցները հակազդեցութեան խորունկ տպաւորութիւններ դրոշմած են ժողովրդի մտքերու վրայ: Չխօսինք ալ Մեծի Սուրբ տիպի հնչակեան արշաւանքի, կիլիկիոյ հնչակեաններուն թեթեւ եւ անտակտ վարմունքներու եւ երկրին մէջ դեռ սպրդող խաչագողներու շահատակութիւններուն մասին, որոնք ոչ նուազ կը նպաստեն ժողովրդին յեղ. հաւատքին նուազմանը: Չենք ուզեր նոյնպէս ծանրանալ մեր կազմակերպութեան նախնական քայլերու սխալներուն եւ անյաջողութեան պարագաներուն վրայ, որոնք երկրի խստութեան եւ պայմաններու նկատմամբ անգիտակցութեան հետեւանքներ կրնան նկատուիլ այն ժամանակուան մէջ, ուր մեր կազմակերպութիւնը դեռ երկրին մէջ ո՛չ մէկ կապ եւ յարաբերութիւն ունէր: Իսկ այսօր տարիներու մեր փորձառութիւնը, մեր կազմակերպութեան յանձն առած առաւել-նուազ զոհողութիւնները, մեր հետազօտութիւնները, մեր ընկերներու բուն իսկ երկրի վրայ կատարած ուսումնասիրութիւն-

ները մեզ դրած են այն անյողողող համոզման մէջ, թէ մենք ունինք մեր առջեւ գործունէութեան շրջան մը՝ օժտուած նպատակաշարժութեան բոլոր առաւելութիւններով, եթէ երբեք չպակսին յաջողութեան պայմանները:

Յայտագրեան պայմանները

Մեր առաջադրած նպատակին հասնելու գաղտնիքը մենք կը տեսնենք գլխաւորաբար հետեւեալ երկու պայմաններուն մէջ:

- 1.- Գործունէութեան եղանակ (տակտիկ)
- 2.- Գործի նախնական քայլերու մէջ անհրաժեշտ պէտքերուն արտասահմանէն զոհացում:

Այս հսկան կէտերուն մասին կ'ուզենք քիչ մը մանրամասնօրէն խօսիլ՝ մեր ներկայ տեղեկագրի մէջ, մենք ալ մեր կողմէ համոզուած ըլլալով անոնց նկատմամբ կազմուած գիտակցութեան կարեւորութեան եւ օգտակարութեանը:

Տակտիկ

Թող ներուի մեզ լուել հոս գործունէութեան հիմնական ծրագրի մասին, որ ընդունած է այս շրջանի Պատ. Մարմինը եւ որուն գործադրութեան պիտի ձգտի իր տրամադրելի ուժերով եւ մտցնելով, ի հարկին, անոր մէջ անհրաժեշտ բարեփոխումներ, որոնց օգտակարութեան եւ նպատակաշարժութեան պիտի համոզուի իր գործելու ընթացքին մէջ: Մենք մասնաւորելով մեր խօսքը պիտի մատնանշենք հոս գլխաւորաբար գործելու այն եղանակներն ու միջոցները, որոնք պիտի առաջնորդեն մեզ դէպի մեր առաջադրած նպատակը: Այդ տեսակէտէն քննելով հարցը կու գանք յայտնելու որ մեր գործելու ուղղութիւնը որչա՛փ համապատասխան է երկրի մէջ տիրող ներկայ վարչական եւ տնտեսական պայմաններուն, որչափ հոս գինուած լինի այնքան յարաբերութեամբ փորձառութեամբ, որչափ լաւ չափուած եւ կշռուած ըլլան մեր առած քայլերը, այնչափ պիտի անվրէպ յաջողինք մեր ծրագրի գործադրութեանը մէջ: Երկրի ամէն մէկ վայրի վրայ կը գտնուին երիտասարդական թարմ ոյժեր, որոնք գերծ են 95-96ի ընդհ. կոտորածներու ձգած սարսափներէն եւ հակազդեցութիւններէն: Հոն են դարձեալ փորձուած կարեւոր ոյժեր, որոնք պահ մը տիրող ընդհ. լքման եւ յուսահատութեան հետեւանօք սմբած եւ մէյմէկ անկիւն քաշուած էին, այսօր պատրաստ են մեր հրաւերին սիրով պատասխանել: Գործունէութեան արգասանդ հող պատրաստելու ոչ-նուազ կը նպաստեն թուրք կառավարութեան մէկզմէկ յիմար վարչական կարգադրութիւնները եւ տարիէ տարի անհամեմատ չափեր ստացող գեղծումները եւ կամայական բռնութիւնները, ճնշումները, որոնք կը նպաստեն ժողովրդին (ապստամբա-

կան) ընդվզումի բնագոյնները արթնցնել: Արդ, կազմակերպութեան կը մնայ թարմ, քիչ շատ փորձառու եւ թէ՛ դժգոհներու մէջէն գտեալ ոյժերը կատարեալ խնամքով եւ տակտով հաւաքել գործի շուրջը եւ զանոնք մղել դէպի ցանկացեալ նպատակակէտը: Սակայն ստիպուած ենք շեշտել հոս որ որչափ ալ տակտ դրուի գործը պատրաստելու եղանակին մէջ մեր ամէն մի քայլին առջեւ կու գան ու [կը] ցցուին անհրաժեշտ եւ անմիջական շատ մը պէտքեր, որոնց զոհացումը արտասահմանեան օգնութեան կը կարօտի: Եւ մենք ստիպուած ենք քիչ մը ընդարձակ խօսիլ այս օգնութեան վրայ, որուն մերթ չգոյութիւնն ու մերթ անբաւականութիւնը մեծ վնասներ հասցուցին ցարդ մեր գործունէութեան զարգացման եւ առաջադիմութեան:

Արտասահմանեան օգնութիւն

Այս անհրաժեշտ օգնութեան զանազան հանգամանքներու մասին լայն եւ յստակ գաղափար մը կազմելու համար երկրի մէջ գտնուելի պէտք է: Երկրի տնտեսութեան քայքայեալ վիճակը եւ կառավարութեան մասնաւորապէս հայերու նկատմամբ ի գործ դրած բացառիկ եւ դժնդակ պայմանները կազմակերպութեան զարգանալուն դէմ կը հանեն այնպիսի խոչընդոտներ, որոնք յաճախ ստիպուած ենք դրամով յաղթել: Մեր մօտը, մեր տրամադրութեան մատչելի կը տեսնենք ամենակարեւոր ոյժ մը, գործին օգտակար դառնալու շատ մը առաւելութիւններով օժտուած, բայց նա աղքատ է. չոր ու ցամաք ապրուստ մը գտնելու համար ստիպուած է շարաշար աշխատիլ, այնպէս որ կազմակերպութիւնը գայն տրամադրելի ընելու համար ստիպուած պիտի ըլլայ գէթ պարզ ապրուստ հայթայթել: Յարաբերութիւններ պահելու համար մարդիկ հարկաւոր են. անոնց ապրուստը եւ գէնքերը կազմակերպութիւնը պէտք է հոգայ: Անդին ընկեր մը պիտի շարժի որոշ վայրի մը համար, կա՛մ պիտի բռնէ գաղտնի լեռնային ճամբայ, եթէ այդ կարելի եւ յարմար է. եւ կամ ստիպուած է անցագիր վերցնել, անցագիր չեն տար, ստիպուած եւ կաշառել կառավարական պաշտօնեաները, որ կարելի եղածին չափ շուտ անցագիր մը կարողանան ճարել: Ստիպուած ենք հոս յայտնելու որ ընկերներու մօտ պահեստի դրամ ըլլալուն՝ ամիսներ հարկ եղաւ մէկտեղից միւս վայր շարժիլը եւ այսպէս ամիսներ կանգ առած է մեր գործունէութեան ընթացքը:

Անդին կայ քիչ շատ բարեկեցիկ դասակարգ մը, որ յուսալի է թէ որոշ չափով նպաստէ գործին. սակայն անցեալին մէջ շուայուած սուտ ու սխալ խոստումները, խաբեբայութիւնները, հայ դատին լքեալ երեւոյթը՝ մեծ տեղ գրուած է անոնց մտքերուն մէջ եւ մինչեւ իսկ բռնակալութեան դէմ ընդհ. սարսափի ժամանակ գէնք վերցուցած քաջարի լեռնականներու հանդէպ, հակառակ իրենց շուայուած խոստումներուն:



ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ

1890

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

Փաստ. 945-29

Ա 3.— ՏԵՂԵԿԱԳԻՐ

25 Փետրուար 1903

Լեռնավայրի գլխաւոր երկու նաւահանգիստներէն Կարաւանի (Խախտաղբուն) եւ Զրվէփ (Մերսին) հետ մեր յարաբերութիւնը սկիզբէն ի վեր կանոնաւոր եղած է: Այս երկու գլխաւոր դռներէն, մանաւանդ՝ առաջնոյն մէջ ունինք կարեւոր ընկերներ եւ անձեր որոնք մեծ յոյսեր կու տան մեզի մեր գործունէութեան կարեւոր մղում եւ զարկ տալու: Այս գծով սկսած է մեր յարաբերութիւնը Բերդակի (Մարզիսէն) հետ ուր ունինք մեզի համակիր անհատներ եւ թաքստոցներ: Բերդակի եւ Կարաւանի շրջակայ հայ գիւղերու հետ նոյնպէս ունինք յարաբերութիւններ եւ կապեր: գլխաւորապէս կապուած ենք ազգեցիկ եւ հարուստ հայու մը հետ, որու շնորհիւ կը յուսանք որ մեր կազմակերպութիւնը շուտով զօրանայ այդ շրջականերու մէջ: Լեռնային այս գիւղերու յարմար վայրերու մէջ ալ ապահոված ենք քանի մը թաքստոցներ, որոնք ապագային համար պիտի ունենան իր(ենց) կարեւոր օգուտները:

Հեղեղատի (Մուհտիա) հետ մեր յարաբերութիւնը դժբախտաբար դեռ սաղմնային վիճակի մէջ կը գըտնուի: Քանի մը ամիսներ առաջ մեր ընկերներէն մին այցելած է հոն, ուսումնասիրած է երկիրը եւ մէկ երկու կարեւոր անձնաւորութեանց հետ կապեր հաստատած եւ այս կապերուն զարգանալուն եւ զօրանալուն միջոցները տեղեկագրած է մեզի: Մենք շուտով ի վիճակի պիտի ըլլանք այդ ուղղութեամբ եւ նոր ուժերու փոխադրութեամբ մեր կապերը ամրացնել եւ զօրեղապէս հաստատուիլ այս կարեւոր վայրին մէջ: Լեռնավայրի նաւահանգիստներու վրայ կառավարութեան կողմէ ի գործ դրուած խիստ հակողութիւնը յայտնի է, որու հետեւանք է նաւահանգստի ոստիկանութենէն գատ իսթէլի Գոմիսիոնը անուամբ 3 ոստիկաններէ կազմուած տարբեր մարմնի մը գոյութիւնը: Այս մարմնին պաշտօնն է աջալուրջ հակել նաւահանգիստներէ ներս մտնող եւ ելլողներու վրայ: Այս խիստ հակողութեան եւ տարապայման խտուածեան պատճառաւ ժամանակէ մի վեր Զրվէփի հետ մեր յարաբերութիւնը ընդհատուած է: Հոն գտնուող մեր երրորդայն բարեկամին հետացած ըլլալը նոյնպէս պատճառ եղած է մեր յարաբերու-

թեան խզման: Պատասխանատու] Մարմինս միջոցներ խորհած է յարաբերութիւնը վերսկսելու մանաւանդ այն գերագոյն պատճառով որ Զրվէփ դուռ բանալով Լեռնավայրի արեւմտեան մասին, այս ուղղութեամբ մեր գործունէութիւնը պիտի առաջանար Խ[որ] Վիրապի (Ատանա) ճամբով դէպի Միս եւ Միջնաբերդ (Հաճըն): Այս շրջանէն (Խ[որ] Վիրապ) պիտի օգտուինք նաեւ Արծուաբերդի գործերու համար, ուր տարուան մի քանի եղանակներու մէջ միջնաբերդից եւ արծուաբերդից խումբ խումբ կու գան աշխատելու եւ շուտ շուտ կը վերադառնան իրենց հայրենիքը: Ուրախ ենք յայտնելու որ Խ[որ] Վիրապի մեր կազմակերպութիւնը վերջերս շատ խոստամնայի փուլի մէջ մտած է Երրորդայն վերադարձող տեղացի ընկերով մը ջանքերուն շնորհիւ:

Կը յուսանք թէ տեղական կազմակերպութիւնը կրցած ըլլայ ցարդ շրջակայ հայաբնակ գաւառներու հետ յարաբերութիւններ հաստատել մանաւանդ Պուշաշքի գաւառին հետ, որը գտնուելով Ամանուսի (Կեսաշքի գաւառին հետ, որը գտնուելով Ամանուսի (Կեսաշքի վտար տաղ) արեւմտեան ստորոտի մօտ, կոչուած է մեծ դեր ու նշանակութիւն ունենալու հրոսակային խմբերու պաշար հայթայթելու, օգնելու եւ այլ գործերու մէջ:

Լեռնավայրի սահմաններէն թէեւ մի քիչ հեռու բայց իբր Սուրիոյ գլխաւոր նաւահանգիստ իր նուազ հակողութեան եւ մինչեւ Համա-Հոմ երկարող երկաթուղիի շնորհիւ, մեծ դիւրութիւններ կրնայ ընծայել Պէյրութի նաւահանգիստը: Այստեղ ալ ունինք բաւական մեծ թիւով ընկերներ, որոնք վերջերս գործնական քայլեր սկսան առնել ընկերներ ներս առնելու ապահով միջոցներ ցոյց տալով: Այս առթիւ աւելորդ չենք նկատեր յայտնել որ Պ. Մարմինս իր գործունէութեան տակտիկներէն մին ընտրած է այս գլխաւոր երեք նաւահանգիստներու եւ Հեղեղատի կազմակերպութիւններու գործունէութեան մէջ որոշ տեղ տալ կարգ մը բախտախնդիրներու՝ դէպի Երկիր արշաւանքին հանդէպ դռները գոցելու եւ կամ ի հարկին զանոնք չէզոքացնելու ամենակարեւոր հարցին (համար) ինչպէս վերջերս այսպիսի յաջողութիւն մը ունեցած ենք:

Արծուաբերդի (Չէթուեն) վրայ Պ. Մարմինս լուրը

ձեռնարկներ ունի կատարելիք, որոնք դեռ բանակցութիւններու եւ կարգադրութիւններու փուլին մէջ կը գտնուին: Իսկ ներկայիս մէջ տեղացի մի ընկեր շուտով կը մտնէ եւ կը հաստատուի հոն, միշտ կանոնաւոր յարաբերութիւն պահելով Սահմանա]բերդի հետ (Մարաշ): Իսկ Սահմանաբերդի մեր կազմակերպութիւնը արդէն իր սաղմնային վիճակէն ելած եւ որոշ գործունէութեան սկսած է: Այս շրջանի ջանքերուն կը պարտինք Լեռնավայրի անկեղծ եւ յարգելի քահանաներէն Տէր Մարտիրոսին մեր կազմակերպութեան հետ վերջնականապէս կապուելէն յետոյ: Սահմանա]բերդի մէջ իր քահանայական պաշտօնը ձգելով իր ծննդավայր Յունուզի մէջ հաստատուիլը, ուր արդէն կազմակերպութեան հիմքը դրած եւ յաջողած է կազմել նոր տեղական մարմին մը 5 հոգիներէ բաղկացեալ, որուն կը մասնակցի տեղուոյն աղաներէն մին: Սահմանա]բերդի մեր կազմակերպութեան հետ կապուած է նաեւ կառավարական հայ պաշտօնեայ մը, որ որոշ ծառայութիւններ կը մատուցանէ հաղորդելով ներկայիս մէջ կառավարական ներքին գաղտնիքները եւ կը խոստանայ ապագային կարեւոր գործօն դերեր ստանձնել եւ կատարել, երբ կազմակերպութիւնը նպատակայարմար նկատելով զանոնք գործադրելու վիճակին հասնի:

Կայ կարեւոր եւ ռազմական ամենամեծ նշանակութիւն ունեցող վայր մը Միջնաբերդը (Հաճըն), ուր մեր կազմակերպութիւնը չկրցաւ մուտք գտնել դժբախտաբար ընդհանուր գործերու երբեմն մինչեւ անգամ ամենահարթեշտ եւ տարրական պէտքերուն յատկացուելիք նիւթական միջոցներու չգոյութեան պատճառաւ:

Սահմանա]բերդի ընկերները, վերջերս որոշ խոստումներ ըրած են յարմար ընկեր դրկելու հոն: Պատասխանատու] Մարմինս, համակարծիք գտնուելով մեր ընկերներու առաջարկին՝ անբաւական կը նկատէ այդպիսի կարեւոր եւ խոստամնայի վայրի մը համար միակ անոնց առաքելութիւնը: Արդէն մեր գործունէութեան տակտիկին մէջ ընդունած ենք այդ վայրին մօտեցնալ երեք կարեւոր կէտերէ, որոնց կազմակերպութիւններէն երկուսը արդէն ի վիճակի է դիւրութիւններ ընծայել մեզի, իսկ մին կը մնայ մօտաւոր ապագային, որուն գոհացում տալու մասին Պ. Մարմինս երբեք պիտի չթերանայ նկատի ունենալով նոյն կէտի սահմաններու վրայ գտնուող մեզի համակիր լեռնցի քաջ եւ կռուող տարրի մը գոյութիւնը:

Հովիտի (Այնթապ) մէջ ունինք կազմակերպութիւն մը, որուն գոյութիւնը կը սկսի մեր կազմակերպութեան մտնելէն մէկ երկու տարիներ առաջ, որը յետոյ իր ամբողջութեամբ մեզի հետ կապուած է: Մեր այնտեղի կազմակերպութեան մէջ կը գտնուին բաւական թուով խոհեմ եւ գաղափարական երիտասարդներ, որոնք բաւականաչափ ծառայութիւններ ըրած են գործին եւ այս շրջանի ջանքերու միջոցաւ շուտով պիտի

հաստատուինք Հեղեղատի (Մուհտիա) մէջ, որու հետ, ինչպէս վերեւ գրած ենք, արդէն յարաբերութիւններ սկսած են: Դաշտի (Հալէպ) մէջ մասնաւոր ընկերներ ունինք բայց ոչ կազմակերպուած: Պ. Մարմինս որոշած է ուժ տալ գործունէութեան այս շրջանի, որու մէջ եւ շրջակաները կը գտնուին մէկ-երկու հազարի մօտ սատուցի քաջեր, որոնք հացագործութեամբ եւ ջաղացպանութեամբ կը պարապին եւ որոնց ապստամբութեան ժամանակ կեդրոնացման վայրերուն փոխադրութիւնը ամենաարդիւնալից ձեռնարկներէն մին ըլլալ կը խոստանայ: Պ. Մարմինս աչքի առջեւ ունի անոնց լեզւին եւ բարբերուն ծանօթ յարմար ընկերներ, զորոնք շուտով պիտի հրաւիրէ գործին գլուխը:

Պ. Մարմինս նկատի առած է նոյնպէս կազմակերպութիւն մտցնել Կիւրիշի մէջ, որը հրոսախմբեր եւ կեդրոնացման վայրերու կռուող ուժ փոխադրելու գործին մէջ ունի իր շատ մը առաւելութիւնը:

Պ. Մարմինս հաղորդելով մեր երկրի ուժերու եւ կապերու մասին վերոյիշեալ տեղեկութիւնները հարկ կը զգայ չեղտելու որ այս կապերը ստեղծուած են այնպիսի միջոցներով, որոնք այնքան ալ իրաւունք չունենին պարզուած արդիւնքներու յանգիլ: Մենք ստիպուած ենք վեր հանել սա կարեւոր եւ յատկանշական պարագան, թէ հակառակ մեր միջոցներու անբաւականութեան, այս կապերը ստեղծուած, որոշ չափով զարգացած եւ մեզ դէպի մեր նպատակակէտը առաջնորդող նպատակայարմար գործունէութիւններ ունեցած են: Յիշելով այս իրականութիւնը ուրախ ենք յանգելու հետեւեալ անվրէպ եւ կազմուելիք եղրակացութեան, թէ Լեռնավայրը մեր առաջադրած նպատակին իրականանալուն արդէն պատրաստ հող մ'ունի. երիտասարդ կարեւոր ուժեր, որոնք գերծ են 95-98ի ընդհ. սարսափներու պահ մը ձգած հակազդեցութենէ եւ վհատումներէ միշտ սիրալոյսաբերութիւն ցոյց կու տան գաղափարական գործին. եւ պատրաստակամ]ութիւն իրենցմէ պահանջուած գոհողութեան: Երկրին ամէն մի անկիւնը մոխրի տակ պահուած կը մնայ խուլ դժգոհութեան եւ անհաշտ ատելութեան կայծերը՝ կառավարական այն յիմար եւ անարդար եւ երբեմն վայրագ կարգադրութիւններու հանդէպ, որոնք տարուէ տարի անտանելի չափեր կը ստանան: Մեր կազմակերպութեան ուրեմն գործը պիտի ըլլայ չափուած ու կռուած քայլերով օգտուել այս ուժերէն. երբեք չգահավիժել զանոնք անտակտ եւ տհաս ձեռնարկներով եւ կազմել լարուած, պատրաստուած մեքենականութիւն մը որոշեալ ժամուկ պայթեցնելու: Պ. Մարմինս խորապէս համոզուած է որ անսայթաք պիտի հասնի իր առաջադրած նպատակին, եթէ նիւթական միջոցները չպակսին իրեն՝ որուն անբաւականութիւնը ցարդ մեծ արգելքներ եւ խոչընդոտներ եղած են երկրի գործերու յուսալի զարգացմանը:

Լ. Պ. Կ. Կ.

Փաստ. 229-1

**Ա 4.- ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԸՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԸ**

**ԵՒ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ**

- I Ապստամբութիւն եւ կեղրոնացում (3) վայրի մէջ:
- 1 - Ա[րծուա]բերդ 2րորդ Միջնաբերդ եւ 3րորդ Հեղեղատ<sup>1</sup>:
- II Կազմել հրոսակախմբեր գործելու համար երկրին լեռնային եւ մասամբ դաշտային մասին վրայ:
- III Դրսէն արշաւանք միաժամանակ Մովսիսէն:
- IV Ռազմական ծրագրի մշակում:

**Արծուաբերդի շրջանակ**

Ա[րծուա]բերդի մէջ ապստամբութեան մը հնարաւորութիւնը եւ տեւականութիւնը կախեալ է գլխաւորաբար

- Ա. Զօրանոցի գրաւումէն կամ քանդումէն<sup>16</sup>
- Բ. Կարեւոր քանակութեամբ պաշար եւ աղ ամբարելէն
- Գ. Տեղական կարեւոր եւ ազդեցիկ անձնաւորութիւններու վստահութիւն ներշնչելով զանոնք գործի կապելէն
- Դ. Անոնց գէնք եւ ռազմամթերք հայթայթելէն:

Հետեւաբար Պ[ատասխանատու] Մարմին ջանքերը պիտի ձգտին դէպի վերոյիշեալ չորս պայմաններուն իրազորմանը: Անոնցմէ գատ Ա[րծուա]բերդի կազմակերպութիւնը իր գործունէութեան շրջանին մէջ պիտի ունենայ Մ[իջնա]բերդի<sup>1</sup> մէջ ապստամբութիւն սկսելու պաշտօնը:

**Մանօթ.-** Զօրանոցի գոյութիւնը Ա.բերդի մէջ նոր ապստամբութիւն մը առաջացնելու ամենամեծ արգելքն է. ուստի առանց զայն նախապէս գրաւելու կամ քանդելու շարժումի մը ձեռնարկելը այս անգամ Ա.բերդի գոյութեան համար վտանգ մը լինելու է. հետեւաբար կազմակերպութեան գլխաւոր զբաղումներէն մին պիտի լինի գօրանոցին գրաւման կամ քանդմանը վրայ լուրջ ծրագիր մը պատրաստելով անոր գործադրութեան միջոցներուն ձեռնարկել: Զօրանոցին գրաւումը կամ քանդումը պիտի ըլլայ Ա.բերդոցոց գլուխը բարձրացնելու եւ ապստամբութեան դօրը պարզելու ամենակարեւոր եւ թերեւս միակ ազդակը:

Բ. Ա.բերդոցիք իրենց պաշարին մեծագոյն մասը կը

ստանան Ալպիսթանի դաշտէն եւ աղը Ս[ահմանա]բերդէն: Հետեւաբար այս երկու վայրերու կազմակերպութիւնը պիտի զբաղի Ա.բերդին այդ դիւրութիւնը տալու գործով: Պաշար հայթայթելու եւ ամբարելու համար մեծ դիւրութիւն եւ յարմարութիւն մըն է ալարի իլիթիզամը: Պաշարը փոխադրել մաս առ մաս եւ անզգալաբար Ա.բերդ ապահով ձեռքբերու մէջ. փոխադրել նոյնպէս կարեւոր մաս մըն ալ Ֆոնուզ, եւ այլ մօտակայ գիւղեր: Ֆոնուզի կազմակերպութիւնը մեծ դիւրութիւններ կրնայ ընձեռել պաշար ամբարելու գործին: Մեծաքանակ աղ մթերելու հարցը պիտի լինի Ա.բերդի եւ Ս[ահմանա]բերդի կազմակերպութեան ամենակարեւոր մտածումներէն մին:

Գ. Տեղական կարեւոր եւ ազդեցիկ ոյժերը կազմակերպութեան հետ սերտ կապելու հարցին վրայ շատ լրջօրէն պէտք է նայիլ: Ապագայ ժողովը գլխաւորաբար պիտի զբաղի այս հարցով:

Դ. Ա. բերդոցիք ունին իրենց մասնաւոր գէնքերը: Նոր սիստեմի հրացաններ գնել չէրթսններու, քիւրտներու եւ թիւրքմէններու միջոցաւ եւ պահել զանոնք յարմարագոյն թաքստոցներու մէջ: Լուրջ կերպով պիտի զբաղուի էլ մտադր — Կեպիւր տաղը գծով գէնք եւ ուժանակ փոխադրելու հարցով:

**Միջնաբերդի շրջանակ**

Նկատելով այս շրջանակին նպատակայարմար եւ անառիկ դիրքը, նկատելով նաեւ 5000 տունէ բաղկացեալ գոտի հայութեան մը մէկտեղ խոնուած վիճակը Պ[ատասխանատու] Մարմինը որոշած է մեծ զարկ տալ եւ ամէն ջանք թափել այս շրջանին ապստամբական գործին: Կազմակերպութեան [համար] մտցնել նախապէս լուրջ եւ գաղափարական երիտասարդներ չլրջանին մէջ: Տեղւոյն հարուստները եւ երեւելիներու մեծամասնութիւնը շահասէր եւ շարժի մարդիկ են. բայց եւ այնպէս անկարելի չէ ասոնց որոշ եւ ազնիւ մասը կապել գործին: Այս շրջանակին պիտի թափանցուի

16.- Խօսքը քրքական կառավարութեան Զէյթունի մէջ հաստատած զօրանոցին մասին է:

երեք տարբեր շրջաններէ՝ Սահմանաբերդէ, Բարձրաբերդէ եւ Նոր-Վիրապէ՛:

Պաշար հայթայթելու մեծ դիւրութիւն մըն է իլիթիզամի գործը տեղւոյն վրայ: Այս գործին կրնայ մեծապէս նպաստել Բ[արձրա]բերդ՝ էվերէկ-Թումարզա գծով:

Այս գծին կազմակերպութիւնը պիտի զբաղի նոյնպէս յարաբերութիւններու եւ բանակցութիւններու մտնել աւշար պէկերու հետ եւ օգտուիլ այս կարեւոր ուժէն ապստամբութեան ժամանակ ընդարձակելով Մ[իջնա]բերդի ապստամբական շրջանակը Գօզանեան լեռներու վրայ:

**Յեղեղատի շրջանակ<sup>1</sup>**

Կազմակերպութիւններ պիտի մտցուին լեռնային հայ գիւղերու մէջ: Կազմակերպութեան գլխաւոր նպատակներէն մին պիտի լինի նաեւ յարաբերութիւն հաստատել Գեսապի եւ Մոսսա տաղերու շրջանակները բնակող կիսանկախ Նրսէյրի ցեղապետներու հետ, որոնք նոյնքան թշնամի են թուրք կառավարութեան:

Նկատի ունենալով Հեղեղատին<sup>1</sup> ծովափի մօտաւորութիւնը ջանքեր պիտի ըլլան այս շրջանի կազմակերպութեան կողմէ դրսէն արշաւանքի ատեն ապահով ճակատ պատրաստել մինչեւ յարմար ամրոցները:

**II**

Ապստամբութեան հետ միաժամանակ պիտի սկսին հրոսախմբերու դերերը: Ասոնք պիտի կազմուին որոշ շրջաններու մէջ քաջ եւ կռուող տարրերէ: Պիտի ըլլան հետեւակ եւ հեծեալ: Ասոնց գործը պիտի ըլլայ guérilla-ներ մղել թշնամոյն ուժերու դէմ, յոգնեցնել զանոնք, արգիլել անոնց առաջխաղացումը, որչափ կարելի է դա, բերդերուն վրայ. սարսափ ազդել պաշտպանութեան վրայ, պաշտպանել կարելոյն սահմանին մէջ, անպաշտպան եւ անգէն հայ բնակչութիւնը ապստամբական շրջանին մէջ եւ մօտակաները: Հեծեալ հրոսախմբերը Ջէրլոյական դրութեամբ թեթեւ 5-8 հոգիներէ բաղկացեալ երկրին աւելի դաշտային մասին մէջ, իսկ հետեւակ խմբերը երկրին լեռնային մասին եւ անոր շրջականներու մէջ ի հարկին քաշուելով իրենց ապաստանարանները եւ վերջնական անկարողութեան մատնուած պահուն դէպի կեղրոնացման վայրերը:

**Մանօթ.-** Լեռն[ավայր]ի մէջ երբեք նպատակայարմար չէ կազմակերպական գործին հաստատ հիմերու վրայ դրուելէն առաջ հրոսակային խմբերու գործունէութեան սկսիլը: Պէտք եղած շրջաններու կազմակերպական գործին որոշ հիմերու վրայ հաստատուելէն վերջ եւ միայն արտակարգ պայմաններու մէջ կարելի պիտի ըլլայ անոնց երեւումը կազմակերպական գործին աւարտումէն եւ ապստամբութեան պայթման

միջեւ սահող ժամանակամիջոցին մէջ. կազմակերպութիւնը հիմակուրնէ պիտի աշխատի հրոսակներ պատրաստել Լեռն[ավայր]ի մէջ եւ մօտակայ վայրերէն: Կազմակերպութեան մտած շրջաններ որոշ խոստումներ կու տան եւ արդէն մէկ-երկու վայրեր պատրաստ ունին յարմար ընկերներ: Պ[ատասխանատու] Մարմինը բանակցած է Կիւրիկի հետ եւ 150-200 կռուողներ պատրաստելու խոստումը առած է: Թումարզա եւ Ճումագլըն կրնան 50-100 մարդ տալ: Երբ առիթներ ներկայանան Կեմերէկը իր քաջերէն կրնայ տրամադրելի ընել՝ ինչպէս տեսնուեցաւ Փոքր Ասիոյ շարժումներու ժամանակ: Կեպիւր Տաղի եւ Քուրտ-Տաղի մէջտեղ բնակող լեռնաբնակ հայերու մէջէն կարելի պիտի ըլլայ հրոսախմբեր կազմել Կեպիւր Տաղի շրջականները ասպատակելու:

**III Դրսէն արշաւանք**

Նկատելով արտաքին ուժերու եւ օգնութեան վրայ երկրի ժողովրդին ունեցած չափազանց վստահութիւնը ու հաւատքը, նկատելով մակեդոնական վերջին շարժումներու ժամանակ դրսէն մտնող գինեալ ուժերու կատարած նշանաւոր դերը, նկատելով Երկրէն դուրս նախկին գործիչներու այն միահամուռ կարծիքը այդպիսի արշաւանքի մը կարելիութեան եւ կարեւորութեան վրայ, Պ[ատասխանատու] Մարմինս լրջօրէն նկատի առած է այս խնդիրը եւ շուտով պիտի ձեռնարկէ միջոցներուն խնամոտ ուսումնասիրութեան:

**IV**

Կռիւր յայտարարելէ առաջ Երկրին ձեռնհաս ուժերը խորհրդակցութեան հրաւիրել եւ նոյն ժողովին մէջ գծել պատերազմի վերջնական տակտիկը՝ մասնակցութեամբ ձեռնհաս ռազմագէտներու: Պ[ատասխանատու] Մարմինը որոշած է սակայն սոյն խորհրդի գոլմարումէն առաջ Մ[իջնա]բերդի եւ Հեղեղատի ռազմական քարտէսը գծել տալ ձեռնհաս անձնաւորութեանց միջոցաւ: Զեռնհաս անձնաւորութիւններ արդէն գոյութիւն ունին, որոնք պատրաստակամութիւն յայտնած են գործին հարկ եղած ծառայութիւնը մատուցանելու:

**Կեղոնացման վայրերու ուժեր**

Ա[րծուա]բերդի եւ շրջականներու մէջ կռուող ուժի քանակը կարելի է հաշուել 3-4000 հոգի: Մ[իջնա]բերդի մէջ կռուին մասնակցողներու թիւը կրնայ 5-800 ըլլալ: Իսկ Հեղեղատի մէջ 1000-1500 հոգի:

Այս թիւերը ամրոցներու մէջէն կռուողներուն են. իսկ հրոսախմբերու մասնակցող 5-8000 յարմարաւոր անձինք կրնան գտնուիլ կեղրոնացման վայրերէ եւ չլրջականներէ:



**Ձեռնարկ հարցոց**

Երկրի շատ մը շրջաններու մէջ կարելի է ամէն տեսակէն գէնք եւ ռազմամթերք գնել զանազան ապահով ձեւերով եւ միջոցներով: Զէնքերու գնումը կառավարութեան մօտ զգալի չընելու համար յարմար միջոցներ պիտի չպակսին: Դրամական գոհողութեամբ չէր քէսներու, քիւրտերու, ժամանակին աւագակութեամբ զբաղուած եւ զինուորական դասալիք եղած մարդիկներու եւ մինչեւ իսկ զինուորականներու ձեռքով կարելի է գնել՝ առեւտրական գոյն տալով գործին: Մալաթիոյ եւ Այնթապի շրջաններու մէջ հրեաները մեծ դերութիւններ կ'ընծան այդ գործին: Հին ձեռով հրացանները նոր սիստեմի փոխելու համար վարպետ զինագործներ կը գտնուին երկրի մէջ. անոնցմէ կարելի է օգտուիլ՝ զանոնք յարմար վայրերը փոխադրելով: Այսու ամենայնիւ դրսէն նոր սիստեմ հրացաններ ներս փոխադրելու հարցը անխուսափելի հարկ ու պահանջ մըն է եւ ատոր մէջ յաջողելու անխախտ համոզումն ունինք եթէ որոշ գոհողութիւններ յանձն առնուին եւ ճամբաները լաւ կերպով ուսումնասիրուին: Կարաւանի (խսկենտէրու) պէս ոստիկանական խիստ հսկողութեան ենթարկուած նաւահանգստի մը ընկերները զանազան միջոցներ առաջարկած են, միջոցներու ապահովութեան վրայ շեշտելով:

Իւզը (ուժանակ) որ ուզուած քանակութեամբ կարելի է ձեռք անցընել Յունաստանի մէջ, միջոցներ պիտի չպակսին այնտեղէն փոխադրել Կարաւանի մօտակայքի եւ Հեղեղատի ափերու վրայ: Յարաբերութեան մէջ մտած ենք ընկերոջ մը հետ որ վերջերս կրկնակի դիմումներ ըրած էր Բիւրոյին եւ ծանօթ է եղեր իւր գործածելու արհեստին: Նոր սիստեմ հրացաններու եւ ուժանակի բաւական քանակութեամբ մեր տրամադրութեան տակ գտնուիլը մեծ եռանդ եւ միանգամայն ինքնավստահութիւն պիտի ներշնչէ վհատած սրտերու: Պիտի աշխատինք մեր բոլոր ջանքերով երկրի ներսէն եւ դրսէն անոնցմէ ձեռք անցընել, որչափ պիտի ներեն մեր միջոցները:

Իսկ պաշար ամբարելու գործին մէջ պիտի ուժ տանք

գետնախնձորի մշակութեան կեդրոնացման վայրերու շրջանէն ներս: Արդէն գետնախնձորի մշակութիւնը Հեղեղատի գլխաւոր զբաղումներէն մին է:

Միջնալեռերի ապստամբական շրջանէն ներս շատ հողեր կը գտնուին. տարիներ առաջ գետնախնձորի կեդրեններ թաքցնել հողին մէջ, որով պիտի ըլլանք պաշար մը եւս ամբարած հողին տակ:

Երկրի ժողովրդին տրամադրութիւններու մասին երկար գրելու հարկ չենք տեսներ: Թարմ եւ կոռուող երիտասարդ ուժերը միշտ պատրաստ են գործին մասնակցելու եւ գործին հարկ եղած գոհողութիւնը բերելու: Ասոր փայլուն ապացոյցն է դեռ մօտերս Խ[որ]-Վ[ի]րապի շրջանին մէջ սպորտը խաչագողի մը շատ կարճ ժամանակուան մը մէջ ցոյց տուած համակրութիւնը եւ անոր անգիտակցաբար հետեւիլը, որ դժբախտաբար բաւական սուղ նստաւ 50-80 երիտասարդ ուժերու: Անցեալին մէջ գործունէութիւններ ունեցած փորձառու ուժեր երկրին մէջմէկ անկիւնը սմբած, ժամանակ ժամանակ խուլ աղաղակներ կ'արձակէին կենդանի գործին մասնակցելու. դեռ ամենավերջին ատեններն էր որ Ասլանը<sup>10</sup> թախանձանօք կը գրէր Երրգայէն արհեստաւոր շատ մը երիտասարդներու միահամուռ փափաքը Լեռն[ավայր] անցնելու եւ գործին աջակցելու: Մարաշի մեր ընկերները քանիցս շեշտած են երիտասարդութեան ջերմ փափաքը իրենց ցոյց տրուած գործերու մասնակցելու եւայլն եւայլն: Վերջապէս մեր առաջադրած նպատակին եւ մշակած ծրագրին գործադրութեան համար ուժ չէ որ պիտի պակսի մեզի երկրին մէջ: Մեր ընկեր Կիլիկեան իր ծննդավայր մտած չմտած արդէն պատրաստ հող մը գտած էր, մինչեւ իսկ սկսած էին ծրագիրներ մշակել ներքեւի շրջականերու Սիսէն մինչեւ Պուլաշըզ գաւառակի վրայ: Յարաբերութիւններ հաստատած էին միջնալեռերիցիներու եւ ա[րծուա]-բերդցիներու հետ, որոնց տրամադրութիւններու մասին շատ լաւատեսութեամբ կը խօսէին: Սակայն միշտ կանգնած է եւ պիտի կանգնի մեր առջեւ դրամի հարցը, որուն միանգամ բարեյաջող լուծումը մեր նպատակակէտին հասնիլը պիտի ըլլայ: Այս խնդրի մասին մեր առաջարկները եւ կարծիքները նամակաւ:

Փաստ. 292-2

**Ա 5.- ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱՊԱԳԱՅ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ**

**Յեղափոխական, զինուորական եւ նիւթական տեսակետով**

Լեռնավայրը 30 քաղաքներ կը պարունակէ, հետեւեալ կերպով հինգ նահանգներու միջեւ բաժնուած:

Ա. Հայէպի նահանգ. կը պարունակէ 13 քաղաքներ. 1. Սուէտիա, 2. Արսիուս 3. Իսկէնտերուն նաւահանգիստները, 4. Անտիոք, 5. Պէյլան, 6. Քիլիս, 7. Այնթապ, 8. Պերեճիկ, 9. Եդեսիա, 10. Պաղտին, 11. Մարաշ, 12. Ալպիստան, 13. Զէյթուն:

Բ. Ատանայի նահանգ, 10 քաղաքներ կը պարունակէ. 1. Այաս, 2. Փայաս, 3. Մերսին նաւահանգիստները, 4. Ատանա, 5. Թարսուս, 6. Միսիս, 7. Սիս, 8. Կեպուր Տաղ, 9. Չոք Մարզուան, 10. Հաճըն:

Գ. Սըվազի նահանգ. կը պարունակէ 2 քաղաքներ, 1. Տերենտէ եւ 2. Կիւրին:

Դ. Խարբերդի նահանգ. կը պարունակէ 3 քաղաքներ, 1 Մալաթիա, 2. Ատեման, 3. Պեսնի:

Ե. Գաղատիոյ նահանգ. կը պարունակէ 2 քաղաքներ, 1. Կեսարիա, 2. Թալաս:

Սոյն 30 քաղաքներէն զատ քիչ-շատ կարեւոր սահմանակից քաղաքներ եւս կան, ինչպէս Հայէպ, Լաթաքիա, Խարբերդ, Սըվազ, Գաղատիա եւ այլն, որոնց ունեց մէջ անջատ գործ ունինք եւ պիտի ունենանք:

**Յեղափոխական**

Լեռնավայրը, բաղադրամամբ ընդհանուր Հայաստանին, շատ մեծ տարբերութիւն ունի յեղ[ափոխութեան] տեսակէտով: Մինչդեռ Հայաստանի ժողովուրդը կատարեալ անտարբերութիւն մը ունի դէպի ազատութեան գործը, յոսահատ համոզումը ունենալով թէ ամէն ջանք անօգուտ է, Լեռնավայրի ժողովրդեան մէջ ընդհակառակը բաւական թուով անձինք կան որ ազատութեան ճամբուն շինութեան համար գէթ քար մը, խիճ մը գետեղելու բաղձանքը ունին, ու քիչերն են որ իրենց բաղձանքը իրականացնելու միջոցը կրցած են գտնել:

Լեռնավայրի 8 կէտերուն մէջ եւ սահմանակից քաղաքներու 2 կէտերուն մէջ յեղ. կազմակերպութիւն ունինք:

1. Կարաւան, 2. Խոր-Վիրապ<sup>1</sup>, որոնց վրայով Վահրամը<sup>8</sup> կրնայ տեղեկութիւն տալ:

3. Հովիտ. հոս ունինք կատարեալ խումբ մը, որ 1-10-100 հոգիէ կը բաղկանայ ըստ հարկին [sic]: Անձնագոհ եւ յեղափոխական, բառին բովանդակ նշանակութեամբ:

բը: Ամէն տեսակ գործի եւ փոխադրութեանց կարող է մասնաւորապէս պատրաստուած մարդիկներով:

4. Սահմանաբերդ. ունինք 10-15 հոգիէ բաղկացեալ խումբ մը, որ բաւական բաներ կրնայ կատարել այսօր. ապագային շատ բաներ կատարելու ընդունակ է:

5. Արծուաբերդ. հոս կազմակերպութիւն չունինք, բայց հոն այցելութեան առթիւ այնքան լաւ ճանչցայ քանի մը անձինք, որ կրնամ ուզածս ատեն կազմութեան սկսիլ. Աշոտ Լեռն, զնալու վրայ է, եթէ արդէն գացած չէ: Արծ[ուա]բերդցիք հակառակ են ամէն տեսակ թղթակցութեանց: Իրենց դրութիւնն է, եթէ ստիպւին, մէկը դրկել իբր կենդանի նամակ, հարկ եղածը հասկնալ, հասկցնել վերադառնալու. վհատած չեն:

Հսկաբերդի մէջ ունինք խումբ մը, կարող (տեղուոյն համեմատ) անձերէ բաղկացեալ եւ քահանայի [մը] առաջնորդութեամբ:

6. Անտիոքի գիւղերը կազմուելու պատրաստ խումբ մը մարդիկ ունինք, ըստ Յօշանի<sup>17</sup> տուած տեղեկութեանց:

7. Կիւրին եւ Մալաթիա միջակ կազմութեամբ խումբեր ունինք:

Սահմանակից քաղաքներու 2ին, 1 Դաշտի եւ 2 Աւար-Աւերի<sup>1</sup> մէջ: Բաւական լաւ խումբեր ունինք, վերջինը Ասլանի<sup>10</sup> առաջնորդութեամբ:

**Ձինուորական**

Լեռնավայրը զինուորական տեսակէտով հսկայ առաւելութիւն կը ներկայացնէ Հայաստանի միւս վայրերուն հետ բաղդատմամբ. Լեռնավայրի 4 քաղաքներուն մէջ ներկայիս ոչ արհամարհելի զինուորական ուժեր կան:

1. Արծուաբերդ իր շրջականերով մշտապէս գինեալ վիճակի մէջ է, թէ եւ նախնական գէնքերով: Անակնկալի մը դէմ ինքզինքը կրնայ պաշտապանել, ու մեծ հաւանականութեամբ յարձակողականի իսկ անցնիլ: Եթէ ա-

17.- Յարդ կը կարդացուէր Յօլան ձեռով ընդհանրապէս, եւ ինքնուրիշ կը մնար անձանք: Այժմ ծածկագիրներու ճիշդ վերծանումով կրնանք հաստատել որ Յօշան է եւ իսկական անունը՝ Ներսէս Պաղտոյեան, բնիկ այնքապցի: Նշուած տարիներուն բօշկական ուսանող էր Պէյրուի Ամերիկեան համալսարանին մէջ եւ երիտասարդ աշխոյժ գործիչ թէ՛ Պէյրուի հայ ուսանողական շրջանակներուն եւ թէ Կիլիկիոյ կազմակերպական գործերուն մէջ:

պրատամբի, կրնայ ամսի մը չափ դիմանալ:

2. Հովիտ<sup>1</sup>. ինքզինքը եթէ ոչ կատարելապէս, գէթ մեծ մասամբ կրնայ պաշտպանել: Կրնայ մօտակայ ապրատամբեան մը 100 գինեալ մարտիկ դրկել:

3. Անտիոքի Մուսա տաղի գիւղերը (ըստ Յօշանի տեղեկութեանց), կրնան ինքզինքնին պաշտպանել եւ մօտակայ ապրատամբեան մը 50 գինեալ մարդիկ դրկել:

4. Մալաթիա մեծ մասամբ կրնայ ինքզինքը պաշտպանել եւ մօտակայ ապրատամբեան մը 50 գինեալ մարդիկ ուղարկել:

Կ'ենթադրեմ թէ Հաճրն եւ Չոք Մարզուան եւս առնոց մօտ գինուորական ոյժ ունենալու են հիմակ:

Պէշլան գինուորական խիստ կարեւոր կէտ մ'է մեզի համար, բայց ախոս ուր, ինչպէս կառավարութեանէն, նոյնպէս եւ մենէ հարկ եղած կարեւորութիւնը եւ ոյժը տրուած չէ:

**Սիւթական**

Ժողովրդի ներկայ վիճակը չափազանց աննախանձելի դրութեան մը մէջ է: Մանօթ դէպքերէն<sup>18</sup> ի վեր տակաւին չկրցաւ նոյնիսկ քիչ բարուք նիւթական կացութիւն մը ունենալ: ասոր մէջ բնաւ տարբերութիւն չունի Լեռնավայրը Հայաստանէն: Բարեկեցիկ վիճակի մէջ եղողները ցանցառ են, իսկ հարուստները պարզապէս հագուազիւտ: Կեցած հարուստներն ալ տեսակ մը մշտական երկիրդի մէջ, շատ զգոյշ եւ ամփոփ գործունէութիւն մը ունին, որմէ ի հարկէ չի կրնար օգտուիլ ոչ արհեստաւոր դասակարգը եւ ոչ հասարակ ժողովուրդը: Չկայ ոչ իսկ հարուստ, որուն դրամագլուխը ապրուստ հայթայթէ գոնէ 200 անձերու:

**Մանօթ:-**

Մինչեւ հոս ներկայացուցինք Լեռնավայրի արդի կացութիւնը, յեղափոխական եւ նիւթական տեսակէտներով, որքան որ անձնական տեղեկութիւններու պաշարը, որ անբաւական է, կը ներէր: Կան կարգ մը մանրամասն տեղեկութիւններ, որոնք ներկայացնել պատ. ժողովրդ անյարմար էր, նկատելով որ 1) անոնք Ձեր առաջ ժամանակը պիտի սպառեն, 2) մօտ օրէն հոս պիտի ունենանք ժողով մը ուր կարելի է ներկայացնել եւ աւելի յարմար է անոր զբաղումներուն կցել:

Որքան որ Լեռնավայրը ամբողջ չկրցայ պտտիլ, միջոցներու չզոյրութեան պատճառով, այնուամենայնիւ կը ներկայացնեմ Ձեզ Լեռնավայրի ապագայ կացութեան վրայ եւս մի համառօտ տեղեկագիր, նոյնպէս յեղափոխական, գինուորական եւ նիւթական տեսակէտներով:

**Յեղափոխական**

Լեռնավայրը պէտք է բաժնել 3 գլխաւոր շրջանակներու. Ա. Հովտի շրջանակ, Բ. Խոր Վիրապի շրջանակ, Սեբաստիոյ շրջանակ<sup>1</sup>:

Ա. Հովտի շրջանակը կը պարունակէ Դաշտի նահանգին մէջ Լեռնավայրի մէջ գտնուած 13 քաղաքները եւ սահմանակից կարեւոր քաղաքները:

Բ. Խոր Վիրապի շրջանակը կը պարունակէ իր՝ Խ. Վիրապի նահանգին 10 քաղաքները եւ սահմանակէ տերը:

Գ. Սեբաստիոյ շրջանակը կը պարունակէ իր, Սեբաստիոյ, Աւար-Աւերի եւ Գաղատիոյ նահանգներուն 7 քաղաքները սահմանակից կարեւոր քաղաքներով:

Պատասխանատու մարմինը պէտք է հաստատուի Ա. Հովտի շրջանակին մէջ, նկատելով որ Հովտը բոլոր Լեռնավայրի կեդրոնն է, յարաբերական, վաճառականական եւ գինուորական տեսակէտներով: Հովտը, շրջականերու պէտք եղած գործիչներու արտադրութեան մենակ կարող կեդրոնն է: Հովտը ապահովութեան եւ ազատութեան կողմէ ամենայարմար վայրն է, եւայն եւայն: Սակայն, պատասխանատու մարմնի անդամներէն մէկը Տելդա<sup>1</sup> կը մնայ թղթակցութեանց եւ օտար կուսակցութեանց ընթացքին տեղեակ ըլլալու համար: Եւ ուրիշ մը Խոր Վիրապ կ'երթայ հոն կազմուելիք կեդրոնական կոմիտէին ընկերակցելու:

Յարմար ընկեր մը կամ ընկերներ ունենալու ենք կողմին (Կիպրոս) մէջ, օտարներու վրայ Հնչակեան<sup>1</sup> եւայն տեղեակ ըլլալու ու միանգամայն մեր փոխադրութեանց համար:

**Հարողակացութիւն. Անմիջական պէտք ունինք Ա. Հովտի եւ Բ. Խոր-Վիրապի ամէնէն կարեւոր քաղաքները հասարակական յարաբերութեամբ կապելու:**

**Գործիչներ.** մեր բոլոր գործիչները, Լեռնավայրի որեւէ քաղաքին մէջ, հարկ անհրաժեշտ է որ զբաղում ունենան. նախ՝ անկասկածելի մնալու եւ յետոյ իրենց ապրուստը կարենալ ճարելու համար: Այդ զբաղումը սակայն չի կրնար օգտակար նկատուիլ, երբ անկախութիւն կորսնցնելու պատճառաւ կը լինի. ուրեմն անկախ զբաղում մը պէտք է լինի: Այդպիսի անկախ զբաղում մեր բոլոր գործիչներուն առհասարակ ճարելու համար միակ միջոց մը կայ, այն է ունենալ վաճառականական այնպիսի կեդրոն մը, որ կարենայ գործ հայթայթել գործիչին, շրջակայ քաղաքներէն հարկ եղածին մէջ ճիւղ մը հաստատելով: Այս նպատակին կրնան ծառայել 3 տեսակ վաճառականական գործեր. 1. Միակերի կամ այլ մեքենայի ընկերութեան մը եթէ ոչ Լեռնավայրի, գէթ Դաշտի նահանգին ներկայացուցչութիւնը ձեռք անցնել եւ այդպիսով մեր գործիչներուն ամէն քաղաքի մէջ գործ հայթայթել նոյն ընկերութեան գործէն: 2. Մանիֆակտուրայի եւրոպական ապրանսց կամ մանածի տուն մը հաստատել Դաշտի կամ Հովտի մէջ, անոր ճիւղ:

18.- Ակնարկութիւնը 1895 թ.ի Ձեյրուհի ապստամբութեան եւ համիտեան կոտորածներուն է:

ղեր բանալ շրջակայ քաղաքներու մէջ: 3. Որ աւելի յարմարն է ոստայնանկութեան գործարան մը հաստատել Հովտի մէջ մանածեղէնի (որ աժան է, թէեւ կարելի է բողի կամ մետաքսի վրայ գործել) եւ արտադրած ապրանքը սպառել շրջակայ մինչեւ իսկ շատ հեռու քաղաքներու մէջ: Այսպիսի գործ արդէն հաստատուած կայ տեղացի մասնաւորներու կողմէ, բայց թերի եւ անկատար է, այնպէս որ մեր արտադրական ապրանքը միւսներէն աւելի աղէկ եւ աժան կրնայ ըլլալ: մեր գործիչներուն համար այդ գործը շատ յարմար գործ պիտի լինէր, որովհետեւ մինչեւ ցարդ այդ ապրանքը շրջակայ քաղաքները կ'երթան զանազան ձեռքերէ անցնելով, որով աւելի կը սղէ: Ապրանքը սպառեցնող եւ մարդ ունեցող գործարանատէրեր չկան: Սոյն երեք եղանակներէն մին կամ անոնց նմանող ուրիշ եղանակով մը միայն կարող պիտի լինենք, առանց խոշոր դրամական գոհութեան ամէն տարի, ունենալ կարեւորութեան կարգաւ Լեռնավայրի քաղաքներուն մէջ գործիչներ, ամէն դասակարգի հետ յարաբերութիւնը դիւրացած եւ ապահոված: Ասով դարձեալ դիւրին կը լինի մեզ ունենալ շրջուն գործիչներ, քննիչի պատրուակին տակ ամբողջ Լեռնավայրը շրջելու կարող:

**Զինուորական**

Ա. Հովտի շրջանակը ապստամբական 3 վայրեր ունի, մէկը գլխաւոր եւ երկուքը օժանդակ: Գլխաւոր վայրը Արծուաբերդն է իր շրջականերով, Հսկաբերդ, Այապաշ, եւայն: Օժանդակ վայրերն են Պէշլան եւ Անտիոք - Մուսա տաղի գիւղերը: Հովտի շրջանակը պէտք է այս ապստամբութիւնները պատրաստէ խելացի, ծանր, զգոյշ եւ կշռուած քայլերով եւ այս ապստամբութեանց համար իր գինուորական ոյժը պէտք է լինի 4500 գինուոր, 4000ը հետեւակ, 500ը ճիւղաւոր, հետեւակ ու ճիւղաւոր կատարելապէս գինեալ:

Բ. Խոր Վիրապի շրջանակը 2 ապստամբական վայրեր, մէկը Հաճրն եւ միւսը Չոք Մարզուան. առաջինը գլխաւոր, երկրորդը օժանդակ վայր: Խոր Վիրապ այս երկու վայրերու ապստամբութիւնը պէտք է պատրաստէ 2500 մարդկանց գինուորական ոյժով մը, որուն 2300 հետեւակ, 200ը ճիւղաւոր, նոյնպէս կատարեալ գէնքերով ու պաշարով:

Գ. Սեբաստիոյ շրջանակը իր երեք նահանգներովը, Սեբաստիա, Աւար-Աւեր<sup>1</sup> եւ Գաղատիա պէտք է պատրաստէ 1000 գինեալ մարդ, 700 հետեւակ, 300ը ճիւղաւոր իրենց գէնքերով ու պաշարով կամ ապստամբութեան մասնակցելու եւ կամ դրսէն օգնելու համար:

Օժանդակ ապստամբութիւնները, կարելի եղածին չափ կամ նիւթականի ներած չափովը երկար ամիսներ դիմանալու է, բայց գլխաւոր երկու վայրերը Հաճրն եւ

19.- Ծննդեան կամ բնակատեղիի արձանագրութեան վայր:

Արծուաբերդ շրջականերով առնուազն տարի մը դիմանալու կարող ընելու է:

Իրաւ է թէ պատերազմի ատեն մեր հաշուած 8000 (1000ը ճիւղաւոր) գինուորներէն 2000ի չափ աւելի՝ 10.000 պատերազմիկ կ'ունենանք, բայց այս թուոյն 5 պատիկը 50.000 հոգի կերակրելու ստիպուած ենք:

Ձեւը. ներսը որոշ քանակութեամբ մը (1000-1500) գէնքեր գնելու կարող ենք, բայց բնաւ այդ միջոցին դիմելու պէտք չունինք, նախ, վասնզի դրսէն որեւէ քանակութեամբ գէնք ներս ընդունելու եւ փոխադրելու դիւրութիւնը ի ձեռին ունինք, երկրորդ մեր ունենալիք գէնքերը կառավարական գէնքերէն գերակշիռ ըլլալ պէտք են: Անոնք կը գործածեն մարթին եւ մառուգէր: Աւելորդ է անշուշտ ըսել թէ կրնանք նաեւ ներս առնել ու փոխադրել տիւնամիթ, ուսմբ եւայն եւայն:

**Սիւթական**

Արդէն կարելի եղածին չափ մեր Լեռնավայրի պէտքերը ներկայացուցած լինելով հարկ չկայ նիւթականի մասին բան մը խօսիլ, միայն այսքան կրնամ ըսել թէ Ա. Հովտի շրջանակը 80% դրամի կարօտ է, Խոր-Վիրապի Բ. շրջանակը 20%, իսկ Սեբաստիոյ շրջանակը, առանց որեւէ դրամական դրսի օգնութեան, կրնայ, եթէ պէտք եղած մարդիկը կենան, իրեն բաժին ինկած 300 ճիւղաւորներն ու 700 հետեւակները գինել, պաշարով օժտել ոչ այնքան երկար ժամանակի մէջ:

Ա. Հովտի շրջանակին մէջ բնաւ, իսկ Բ. Խոր Վիրապի մէջ խիստ քիչ դրամական աղբիւրներ կան:

**Մանօթ:-**

Վերջերս նիֆիլսս<sup>19</sup> Այնթապ փոխադրած լինելով, այսուհետեւ աւելի դիւրին է ինձ ամբողջ Լեռնավայրը շրջել եւ ուսումնասիրել: միայն թէ ժամանակ եւ միջոց ունենամ:

**Կարեւոր.** Մօտերս Հնչակէան անունով մարդիկ Կիպրոսէն հոս կու գան դէպի ներս Լեռնավայրի կարեւոր քաղաքները գնալու, ինչպէս Սահմանալքերդ եւայն: Բնականաբար որեւէ միջոց չենք խնայեր (ազնիւ միջոցներ անազնիւներու դէմ) գիրենք ետ դարձնելու համար, մէկը կը դառնայ, միւսը կու գայ քանի մը օր չանցած: Այնպէս որ մեր հոս կատարելիք ժողովրդ փութացնելու է որքան հնար է: Ժամանակ առաջ գործի սկսելու եւ շարունակելու է:

Յաջողութեան մաղթանքներով եւ ընկերական բարեկեցութեամբ Ձեր ամէնուր:

5/5/203  
Պ. Երսիկ  
ՌԱՀՎԵՐ



Փաստ. 945-3

### Ա 7.- 30ՇԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ-ՆԱՄԱԿԸ ՎԱՐԱԶԳԱՏԻՆ



**Սիրելի Վարազդատ**  
 903 Յուն. 3 Պէթրոս

Ձեր Դեկ. 7/20 թուակիրը ստացայ ոչ այնքան գոհ քանզի վազանձիս վերջին օրերուն ձեռքս անցաւ, սակայն ըստ կարելոյն պիտի ջանամ Ձեր հարցումները գոհացնել: Խոստացեր էի գրել Անտիոքի ծովագերեայ լեռներու վրայ. այս անգամով կը սկսիմ վերի յատակագրի վրայ Ձեր ուշադրութիւնը հրահրելով: Նախ ըսեմ թէ այցելութեան ատեն չկրցայ շրջիլ Ասի գետի հարաւ գտնուող Քեսապի (է նշանակուած) լեռները ուր տասնմէկի չափ հայու գիւղեր կան, մեծ ու փոքր շատ

աղաւաղեալ մայրենի լեզու մը կամ արաբերէն խօսող<sup>23</sup>: Հոս յարանուանութիւնները բաւական մեծ հակազային աւերներ գործեր են, ինչպէս նաեւ ազգային անտէրութիւնը եւ անհովուութիւնը, այդ տեղերը միայն կարեւորութիւններն կ'ընեն ազատ Հիբանանի հետ յարաբերութեան ճամբայ մը հաստատելու հարկ լինի: Այդ տեղերը չկրցայ շրջիլ չունենալով հետս իմ անձնական ձին, քանզի հայրենիք չէի հասած...:

Այդ սահմաններուն [մէջ] կարեւորութիւն ունեցող վայրը Մուսա տաղն է (2 տարով նշանակուած Ասի գետին հիւսիսային [կողմը] քերելով ծովափը մի քանի (5-15) մղոն): Այդ լեռնակողերու վրայ նստած կան վերեւ

նշանակուած հինգ մեծ հայ գիւղեր, միջին հաշուով իւրաքանչիւրը 200 տնով, ինչպէս նաեւ մի քանի մանր գիւղեր: Աստիք շարուած են լեռնակողերուն վրայ արեւելքէն-հարաւ-արեւմուտք:

Ընդհանուր նկարագրութիւն մը տալով լեռնաշղթային՝ հիւսիսէն գտնուած է (Բ) Գրգը տաղ լեռներէն, յարգելի բարձրութեան վրայ մի կապանով (զոր ես չկրցայ տեսնել): գործի տեղեկները կը վկայեն թէ կարելի է այդ անցքը պաշտպանել քսան կամ երեսուն հոգիով շատ մեծ ուժի մը դէմ, իրենք նոյնիսկ անանցանելի կը դաւանին նոյքան ուժով մը: Այդ անցքի մօտերէն մինչեւ Ասի գետափնեայ դաշտը դէպի հարաւ-արեւելք կ'երկարի խիստ խոր ձոր մը օձապտոյտ ուղղութեամբ: մէջէն կը հոսի գետակ մը (կամ լաւ եւս հեղեղատ մը) ձմեռը յաճախ անանցանելի՝ գոնէ իր լեռնային սահմաններուն: Այս երկար եւ գալարուն ձորին չափազանց խորութիւնը եւ հայկական կողերուն հակառակ կողմէն աւելի բարձրութիւնն ու չափազանց ուղղութիւնը գինարուեստի փոքր մի ջանքով եւ արագ շարժումի մշտակայ դրութիւնով մը կրնան անանցանելի ընել այդ երկայնքը 1000-1500 անձով:

Մովեզերեայ կողմէն շղթային պաշտպանութիւնը աւելի դիւրին է նախ նեղ միջոց մը ունենալով բարձրութեան եւ ծովափի մէջ երկրորդ՝ բարձրութիւնը չափազանց ուղղորդ լինելով հոն մօտաւորապէս բնականէն անմատչելի է, երրորդ՝ այս գծի հարաւ-արեւմտեան ծայրը, ուր գետաբերանի դաշտը կը յանգի. տկար կէտեր եթէ կան ատոնց պաշտպանութեան համար ալ սքանչելի միջոցներ կ'ու տան հին յուշական շէնքերէ եւ ամրութիւններէ մնացած դիրքերու նշխարներ:

Հարաւային սահմանագիծ.- Ահա այս վայրին էն տկար կողմը. վե՛հ բարձրութիւններէն դէպի վար կ'իջնան (undulating hills) աստիճանաբար բլուրներ մինչեւ գետեզերեայ դաշտը. եւ այդ սարալանջերուն վրայ ճիշդ ամփիթէադրական աստիճանաւորումով մը ծաղկած են գիւղերու թթաստանները: Այսուամենայնիւ եթէ այդ պարտէզները գոհուին (որ ժողովրդի ապրուստի միակ միջոցն է) այդ գիծն ալ դժուար չէ պաշտպանել համեստ մի ուժով:

Այս գեղջուկներու ապրուստի միակ միջոցը լինելով շերամաբուծութիւնը, եթէ օր մը իսկ իրենց յարաբերութիւնը կտրուի Անտիոքի հետ, անօթութենէ կը մեռնին բոլորը. միայն իրենց գետնախնձորը եւ պտուղները իրենք կը մշակեն. արմտիք գրեթէ ոչ. տաւարաբուծութիւնը այդքան յարմար գետնի մը վրայ զարմացայ թէ ինչո՞ւ է՛ր յառաջացած<sup>24</sup>: Եթէ պաշար ունենան մի քանի տարուայ, կամ ծովէն ներմուծուի, դիւրին է հոն ապստամբիլ:

Ցարդ խօսեցայ ամպերէն վար բարձրութեանց վրայ (1000 անգլ[իական] ոտք) որոնց վերի սահմանին վրայ

կը գտնուի գիւղերէն մի քանին: Ամպերէն վեր դեռ լեռնաշղթան 1500-2000 անգլ. ոտքի պատկառելի բարձրութիւն մը ունի, զոր շատ կը ցաւիմ թէ չկրցայ քննել: Սակայն հեջլակեաններու ապստամբ[ութեան] ատեն կարող գործողներ կը հաւաստեն թէ 1500 ոտքէն վեր շղթան կատարելապէս անմատչելի է ի բաց առեալ մի քանի այժի արահետները, զորս պաշտպանելը առ առաւելն 200-250 անձի գործ է. թէ այդ բարձունքներու վրայ կան բնականէն սքանչելի վայրեր եւ դիրքեր, ժամերով անթափանցելի անտառներ, ժամերով երկրաբանական serrate<sup>25</sup> ափսիայներ, եւ մի շատ բնական այրեր: Այդ բարձրավայրը սքանչելի դիրք մ'է ապստամբուելու եթէ բնակչութիւնը տարիներու պաշար ունենայ (կամ հայթայթուի իրեն) եւ գիւղերն ու պարտէզները լքուին աւերուելու, որ ժողովրդի կատարեալ մահը կը նշանակէ եթէ սկսուած շարժումը մեծ արդիւնք մը չծնի: (Հընչակեաններու անդ գործողութեանց ատենը մարդիկը աս վերջին գաղափարին համոզուելով ու յարելով է որ իրենց ձայնակցեր են):

Սակայն այդ վե՛հ բարձունքը, սքանչելի դիրք մ'է հրոսակային որջեր հաստատելու կամ շրջանի գիշերուակաւ] ոյթերու ճգնաժամերու պահուն ապաստանի վայրեր շինելու համար՝ ցանցակերպ յեղափոխական] գործունէութեան մէջ: Կը կրկնեմ թէ այս տեսակէտէն սքանչելի է, (արդէն հիմակ հոն այդ ձեռով գործողներ անպակաս են իրենց անձնական] շահի հաշույն):

Առանձինն գիւղերու վրայ չուզեցի խօսիլ, միայն այս թէ այն շարքին վրայ ժողովուրդը նոյն իսկ կարողութիւն ունենալով հանդերձ՝ դպրոցներ չունի. շէնքերը եւ պարագաները պատրաստ են, սակայն ժողովուրդը վարող ուժեր չկան: Հեջլակեան] տարրը ժողովուրդին սորվեցուցեր է գէշը շարժել, ասպատակել եւ գողնալ. սակայն այդ միջոցները իրարու դէմ կը գործածեն հիմակ մոլորած անհատները: ժողովրդի աշխարհի ըն-

23.- Տեղեկագրի հեղինակը լուսածագօք չ'երեւիր Քեսապի շրջանին այդ վայրերը այցելած չ'ըլլալով ինչպէս կը գրէ քիչ անդին: Ճիշդ է որ Սուրիոյ հիւսիս-արեւմտեան այդ անկիւնին մէջ արաբախօս հայեր եւ նոյնիսկ ամբողջ գիւղեր կային (Արամօ, Եագուպիէ Եայլն), բայց Քեսապ եւ համանուն գաւառակի տասնեակ մը հայաբնակ գիւղերը հայախօս էին եւ ունէին իրենց ուրոյն բարբառը, զոր կը պահեն մինչեւ այսօր եւ զոր հեղինակը անգիտութեամբ «աղաւաղեալ» հայերէն կը կոչէ:

Լաթաքիայէն մինչեւ Անտիոք, Քեսապ եւ Սոււտիա՝ Սուրիոյ հիւսիս արեւմտեան այս շրջանի արաբախօս հայերու եւ գաւառական շրջանի մասին տեսնել վերջերս լոյս տեսած Յակոբ Չոլաքեանի «Անտիոքի մերձակայ Ռուծի հովիտի հայերը» պատմա-ազգագրական շաեկան ուսումնասիրութիւնը, Անթիլիաս, 2006:

24.- Չեռագրի 4րդ էջի ծախ լուսանցքին եւ շարունակութիւնը էջի տակ, ժամկազով գրուած է՝ «Այլեւս սա հասցեով որկըք ֆրանսերէն եւ ֆրանսիական] փոստով միշտ - Ամերիկեան գոլէճ, առեւտրական տեփարթման- Սահակ Կիւլպենկեան - Ներփակեալ 3.ին»:

25.- Սղոճածել, ատամնաւոր, հոս գործածուած է ապառաժուտ լեռներու կտրուածքները բնորոշելու համար:



Թացքէն հասկցող մասը գտն է: Հնչ[ակեան]ներու ձգած հոգերն [են] որ մերինները կը կրծեն եւ չեն կրծուիր [sic]: սակայն բարեպաշտ մասը կ'ողբայ հին անմեղ ու նահապետական բարքերու կորուստը:

Աւագակները սովորական են հոն, բաւական դրամ ալ կը շահին, սակայն շատ կը ցաւինք որ լոկ իրենց եսին համար է: Գիւղերու մէջ երկպառակութիւնը օր աւուր կը շատնայ առաջնորդող ուժերու չգոյութենէ:

Կարեւորագոյն կէտ մը՝ Անտիոքի շրջակայ շատ մը վայրեր ինչպէս նաեւ Մուսա Տաղի սահմանները բնակուած են ֆէյլա՛ կոչուած մի ժողովուրդով, որք մահմետական]-թուրքերու հետ արեան քէնով թշնամի են, որմէ օգտուելը չափա[զա]նց կարեւոր եւ դիւրին էր ինչպէս եւ է:

Վերի յատակագծին մէջ կէտերով ընդհատ մատիտի ուղիղ գծերը կառուղիներ են, իսկ կարմիր գծերը՝ ջորեպանի ճամբաներ կամ լեռնային ուղիներ են: Նոյն ուրուագծի վրայ պիտի տեսնաք թէ (Չ) Անտիոք լճակին շրջակայ սպիտակ-բաց մասերը կը ցուցնեն այն ահագին ու երկայն դաշտը, որու մեծագոյն մի մասը կ'երկարի արեւմուտքէն Գ. եւ Դ. եւ արեւելքէն Զ լեռներու միջեւ մինչեւ Մարաշ տարբեր անուններով, տարբեր մասերով, մէջէն հոսելով այլեւայլ գետակներ մանաւանդ ձմրան, որոնց տեւականներէն մին է (Զ) Գարա-Մու: Այս դաշտի հիւսիսային մասերը անտառապատ են, իսկ հարաւային ընդարձակագոյն գետինները անհուն ճախիններ<sup>26</sup>, այն աստիճան որ դաշտի այն մասը՝ զոր Հայէպի կառուղին կտրելով կ'անցնի՝ ձմեռը կատարելապէս անանցանելի կը դառնայ: Բացի նոյն կառուղիէն, ուրեմն ձմեռը լիճի հիւսիսային կողմէն բանող ճամբաներ դէպի Խաքն[տերուն] կամ Անտիոք բացարձակապէս հարկադրուած կ'անցնին կառուղիի որոշ կամուրջներէն, ուր հաստատուած կան հեծեալ-ոստիկանութեան փոքր կայաններ: Իսկ լճի հարաւէն անցնող բոլոր ճամբաներ թէ Այնթապէն թէ Հայէպէն եւ Դաշտէն պարտին անցնել Ասիի կամուրջէն, ուր կանոնաւոր պահականոց մը կայ: Եւ Անտիոքէն դարձեալ դուրս ելլելու համար դէպի Մուսա տաղէն պէտք է անցնել Ասիի երկրորդ կամուրջէն, հոսմէական պատկառելի հնութիւն մը, պահպանուած կանոնաւոր մի պահականոցով:

Թէ թուականին երբ հնչ[ակեան] գինագործներ Դաշտէն կ'երթային միանալով Մուսա լեռան շարժումներուն՝ բռնուեցան մահմետական արաք գիւղի մը մէջ երբ Ասիի արեւելեան անցքը կ'ընէին:

Նախ ըսենք թէ ոեւէ արագ հաղորդակցութեան մի շարժումի ատեն ամառը լճի հեռաւոր հիւսիսային եւ մօտաւոր հարաւային գետիններուն բաւական մասերը կը չորնան եւ գետակները կ'իջնան անցանելի ըլլալով ձիւղերներուն, նոյնիսկ հետեւակին. միայն սա յոռի

կողմը ունին գետակները: Խոր տիղմ ունին դաշտի հողին չափազանց խորութեան համար եւ ձիւրը մահառիթ կը խրին:

Արդ պիտի գանք ըսելու թէ հայ ծովեզրը հասնելու համար ձմեռը՝ եթէ հարաւային ճամբու վրայ Ասիի երկու պահպանուած կամուրջները գոցուած են, եթէ դաշտի անհուն ճախիններու<sup>28</sup> վրայէն անցնող միակ ճամբան՝ կառուղին՝ բռնուի իւր մի քանի երկար կամուրջներով, այն ատեն որտեղէն պիտի անցնինք Մուսա տաղին հասնելու համար: Բոլոր ճամբաները գոցուած պիտի լինեն:

Ի հեճուկա գտնուող պահականոցներուն անկարելի է այդ ճամբաներէ անցնել նոյն իսկ ձմեռը: ճարպիկ ձիւղեր խմբերու համար կրնանք ըսել թէ ամէն տեղ ճամբայ կը գտնուի մեր հողերուն վրայ: Ասիի հուները եթէ չգիտցուին իսկ, ատոր նման գետեր կամ նոյնիսկ Եփրատի էն լայն ու խոր մասերը կրնան քիչ դժուարութեամբ անցանելի լինել եթէ մարդիկ ունենան իրենց տակ մեր կողմի առոյգ ձիւրէն: Ապահովագոյն ուղիներ կան:

Ուրուագծի վրայ կը տեսնուին երկու գուգահեռական գծեր Հովիտէն (Այնթապ) մինչեւ Մուսա տաղին, մին՝ կարմիր՝ միւսը կէտերով: Ինչպէս կը տեսնէք այս ճամբէն՝ Զ. էն կ'իջնէ իւր արեւմտեան շրջակայ գիւղերէն կ'անցնի, կը կտրէ Աֆրոն գետակը (Բ) (որ ամառը գրեթէ կատարելապէս կը ցամքի եւ ձմեռը երբեմն սոսկալի կերպով կը յորդի երբ չափազանց եւ երկար անձրեւներ գան): կ'անցնի քիւրտ լեռներու շատ կամ քիչ բնակեալ մասերէն (կրնայ նոյն իսկ կատարեալ անձրեւակ, անտառապատ մասերէն անցնել) եւ կ'իջնայ Ամրգի տաղերէն այն մասը, որ Այպազ մեծ եւ մասամբ հարբնակ գիւղին առջեւ՝ կը կոչուի Այպէզի դաշտը, որու արեւելեան եզրերին երկայնութեամբ կը հոսի Գարա-Մու (Զ) կոչուած գետակը քերելով քիւրտ լեռներու քրդանցքը (դիւրաւ անցանելի ամէն տարին): Յետոյ կը կտրէ դաշտի լայնքը, որ 3-5 ժամ լայնքով ծածկուած է խիտ անտառի խաւով մը, ուր արեւը գրեթէ չի թափանցեր: միայն հովանաւոր արահետներ, ոլոր-մոլոր կորսուելով կը կտրեն դէպի արեւմուտք: Երբ ճամբան կը հասնի այդ ծովափնեայ հայոց լեռներու ստորոտը, կը դառնայ դէպի հարաւ արեւմուտք միշտ գուգահեռական այդ լեռնաշղթային, մերթ ընթանալով շղթային ստորոտէն, մերթ մխրձելով իւր երկրորդական բլրաշարքերուն միջեւ, կը կտրէ Հայէպի կառուղին որեւէ մի կէտի վրայ դաշտի եզրը կամ լեռնակողերուն եւ կը շարունակուի մինչեւ իւր վերջին նշանակէտը: Այս ճամբան ես անձամբ քննած եմ մինչեւ Այպէզի առջեւ փոքր առիթէ մ'օգտուելով եւ արդէն մեծ կառուղիէն մինչեւ

26.- Ճահիճներ, ճահճախուտ տեղեր:

վերջին կէտն ալ շարունակելու եմ: Այս գծին գուգահեռական կան շատ մի ուղիներ մինչեւ վերջին կէտ, կամ ծովեզրեայ լեռնաշղթան կտրող տարբեր կէտերու վրայ կիրճերով կամ կատիքներով<sup>27</sup>. այս ճամբան եւ իւր գուգահեռականները այն առաւելութիւնը ունին որ գրեթէ ամէնուրեք հեռու են կառավարական կեդրոններէ:

27.- Ծածկագրով գրուած «կատիք» բառը կարելի չեղաւ հասկնալ: Արդեօ՞ք կատիկ բառն է (շնչափողի, կոկորդի բերան) քանի կը խօսուի նեղ անցքերու եւ կիրճերու մասին:

28.- Դոս կ'աւարտի Յօշանի գրութեան տեղեկագրական մասը: Յաջորդող քանի մը էջերուն մէջ կ'արժարժուի կազմակերպական ընթացիկ եւ քիչ մը անձնական հարցեր, որոնց հրատարակումը կը գտնենք ոչ շահեկան:

Ա 8.- ՌԱՀՎԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՍԵՊՈՒՀԻՆ

20 Օգոստոս (Հ.տ.) Այնթապ<sup>29</sup>

Սիրեցեալ Սեպուհ<sup>30</sup>

Ունիս<sup>31</sup> գացի եւ վերադարձայ: Պատմեմ քեզի թէ ինչպիսի տեղ է Ունիսն եւ ինչպիսի ժողովուրդ ունի այն:

Լեռնային 2 ժամ ճանապարհ քայլելէ ետքը կը հասնիս Ունիս, որ ձորի մէջ սկսելով լեռան կողին վրայ շինուած է՝ լեռան ստորոտը մնալով դարձեալ: Ունիս գալու ճամբուն վրայ, Ունիսի դիմացի կողմը, այսինքն ձորին միւս կողին վրայ, որն է նաեւ Ունիս գնալու ճամբան, շինուած է զօրանոց մը ամուր շէնքով եւ այնպիսի դիրքով որ Ունիսի վրայ կ'իջնէ թէ բարձրութեան եւ թէ դիրքի տեսակէտներով: Զօրանոցին քով շինուած է փոստը՝ հեռագրատունը եւ փոքր աղօթատեղի մը: Քաղաքային կառավարութիւնը Ունիսի մէջ է եւ կը կառավարուի յոյն կառավարչով մը, տեղացի հայերէ եւ պանդուխտ թուրքերէ կազմուած պաշտօնէութիւնով մը: Քաղաքային կառավարութիւնը անուանական է, իրականը գինուորական հրամանատարին ձեռքն է:

Զօրանոցին կողմը, այսինքն Ունիսի արեւելեան կողմը, զօրանոցին հիւսիսային կողմը շինուած կայ Ս. Աստուածածին վանքը, որուն եւ զօրանոցին միջեւ լեռան կողը քիչ մը դուրս ցցուած ըլլալով գիրար չեն տեսներ:

Զինուորական այժմու հրամանատարը խիստ անաչառ եւ արդարադատ մարդ մ'է: Ունիսացիք միշտ պատերազմասէր, միշտ աւագակա-

րէն եւ հակառակութեան մը պահուն թշնամի ոյժերու հաւանական համախմբումէն: Այսպիսի խնդիրներու վրայ խօսելու ոչ ժամանակը եւ ոչ տեղը կը բաւեն<sup>28</sup>:

-----  
-----  
-----

Ձերմ համբոյրներով Ձեզ  
Գ.Յ. 29.2.14.  
3 0 2 ա Ն.

Եւ սիրալի բարեւներ բոլոր սիրելիներու

յին բնակութեամբ մարդիկ են: Ոչ-կառավարական գէնքեր միշտ ունին քովերին, եւ տեսակ մը հաճոյքով կը նային օտարականի մը դէպի իրենց գէնքերը ուղղած հետաքրքրական նայուածքին: Շատ ոգեւորիչ շեշտերով կը պատմեն իրենց պատերազմը մանրամասնութեամբ: Ի միջի այլոց մէկը կ'ըսէր՝ «չեղաւ այդ, բայց Աստուած ողորմած է»: Պէտք է այդ տեղերը մարդ անձամբ պատի հասկնալու համար թէ, ինչ ժողովուրդ կը բնակի եւ որպիսի տեղ:

Ունիս ունի 4 թաղ, 4 եկեղեցի եւ 4 վարժարան, կաթոլիկ եւ բողոքական հիմնարկութիւններէ գատ: Բայց Ունիս դուրսէն գիւղ մ'է միայն, ուր առ առաւելն 2000 հոգի բնակիչ հագիւ կրնայ ենթադրուիլ, մինչդեռ 2000 տուն է, իրարու կուշտ, իրարու ետեւ, վրայէ վրայ շինուած: Այնքան ինքնավստահ են, որ կը կարծեն թէ ի հարկին պատառ մ'ուտելու չափ դիւրաւ պիտի կրնան գօրանոցը եւ մէջի բնակիչները ոչնչացնել:

29.- Նամակը տարեթիւ չունի. էջն վերը, տարբեր ձեռագրով հարցական գրուած է 1903?, որ չի կրնար ճիշտ ըլլալ անշուշտ, որովհետեւ Սեպուհ-Դրաշ 1902 թ. Գոլտեմբերին, երբ կը պատրաստուէր անցնիլ Կիլիկիա, ձերբակալուեցաւ Իզմիրի մէջ եւ բանտ մնաց մինչեւ 1908 թ. Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը: Գետեւաբար նամակի տարեթիւը պիտի ըլլայ 1902, ինչ տոմարով՝ 20 Օգոստոսի:

30.- Պէտք է շփոթել ապագայ գորավար Սեպուհի հետ (Արշակ Ներսեսեան): Այս Սեպուհը ծածկանուններն մէկն է Լեռնավայրի Պատ. Մարմնի անդամ Գայկ Թիրեաքեանի, աւելի ծագօթ Գայկ անունով, որ Բարկէն Սիւնիի եւ Արմէն Գարոյի հետ եղած էր Պանք Օթթոմանի գրաման ղեկավարներն:  
31.- Ունիսն Ձէթունի տրուած մէկ այլ անուն է:

Կատարեալ պատրաստութեամբ՝ ունիացիք կրնան որեւէ ուժի դէմ շատ ժամանակ աննուաճ մնալ:

Գերմանիկ<sup>32</sup> եւ Ունիա շատ խաղաղ ու հանդարտ վիճակի մէջ են, յարաբերութիւնք գրեթէ կատարեալ: Իսկ Այնթապ Եւրոպա ըլլալու չափ ազատ է: Չեք գալու մասին ուշադրութեամբ մտիկ ըրէ հետեւեալնեւրուն: Պէտք է ցամաքով գաս: Պէտք է ունենաս անցագիր Հալէպի, Այնթապի կամ Մարաշի վրայ եւ կամ Հալէպի վիլայէթի տակ գտնուող ուրիշ քաղաքի վրայ: Լաւագոյն է Այնթապ կամ Հալէպ: Պէտք է ունենաս (եթէ անկարելի չէ) դրամագումար մը 100 [ոսկի] նոսր շաքի շատ աչքան լաւ: Վաճառականը միշտ համարձակ է եւ միշտ արտօնեալ: Այնթապի մեր ընկերներէն գլխաւոր եւ կարեւոր մէկ անդամը որ Պէյրուսի ուսանող էր<sup>33</sup>, արձակուրդի առթիւ հոս եկած է հետեւաբար քիչ մ'ատեն եւս հոս մնալու կարեւոր է խորհրդակցութեան համար: Կը մտածեմ թէ այդ ընկերը եթէ հող հանդիպի լաւ պիտի ըլլայ: Կը տեսնուիք անոր հետ, որ կարող ընկեր մը եւ լաւ ծանօթ [է] Կիլիկիոյ: Հող հանդիպելու համար 2 ոսկի առ առաւելն աւելի պիտի ծախսէ եւ այդ դրամը մենք պիտի վճարենք: Ինք հարուստ չէ: Հոս գալուն շատ օգտակար խորհրդածութիւններ կ'ընէք իր հետ, ինք խումբի մը առաջնորդն է գրեթէ: Կատարելապէս վստահ է: Գալֆան<sup>34</sup> կը թղթակցի եղբոր իր Պէյրուսի եղած միջոցին: Ունիայէ հոս վերադաձին, Նշանի հետ տեսնուիլ ուզեցի, բայց չկրցայ: Տէր Արս. քահանային հետ տեսնուեցայ բաւական, պէտք եղածին պէս գտայ գինքը: Նշանին կեղծ անունը Աշո՞տ էր արդեօք<sup>35</sup>: Ընդարձակ տեղեկութիւն տուր Գերմանիկի վրայ եւ գրէ՝ Նշանի վրայ մանրամասն: Նամակը ստանալէ ետքը կը մեկնիսմ Գերմանիկ ըստ որում թէ տեղեկութիւններդ եւ հրահանգներդ ընդունելու եմ եւ թէ ըսածս ընկերը, որ Ներսէս Պաղտոյանի<sup>36</sup> կը կոչուի, քանի հոս է պէտք ունինք խորհրդակցելու: Գու գալուդ մասին դժուարութիւն չկայ, աւելի լաւ մանրամասնօրէն կրնաս տեղեկութիւններ ստանալ Պ. Ն[երսէս]ը երբ տեղդ գայ: Գրէ

ինծի թէ 2 ոսկին վճարել յարմար է հոս թէ հող վճարել: Հող գալէ ետք վճարուի աւելի լաւ է կարծեմ: Որչափ ժամանակ կ'ուզես որ հող մնայ: Հոկտ. 2ին (Հին) տ[ոմար] վարժարանը պիտի բացուի, ուստի եթէ մէկ շաբաթէն աւելի կ'ուզես որ քովդ մնայ, հարկ է որ աւելի կանուխ ճամբայ հանենք գինք: Իրբեւ ուսանող անցագրով ազատ կու գայ ու կը մեկնի:

Նշան Մարգիսեան, իմանալով որ գինք տեսնելու գած է Մ[խաթ] վարդ[անեան]ը<sup>35</sup> կը գրէ թէ ինչէ՞ն կը ճանչնամ. եւ թէ Ադեքսանդրոյ մէջ որո՞նք կը ճանչնամ եւ ի՞նչ տեսակէտով: Պատասխանեցի թէ Յ. Գալֆ. եւ Ս. Մար<sup>36</sup> կը ճանչնամ, խնդրեցի հարցոյդ ինձ Մարաշի գործերու վրայ տեղեկութիւններ: Այսինքն թէ, Մարաշի վրայ գործ մը կրնա՞յ յաջողիլ հոն եթէ այդ արհեստը հոն բանեցնել ուզեմ:

Դարձիս, շաբաթէն հագիւ կրցայ տեղէս ելնել եւ բոխիլ օգնութեամբ: 10 անգլիակ. ինչպէս նաեւ Գալֆայի<sup>37</sup> դրկած 5 օսմ. [ոսկի] ինձ հասաւ: Ունիա երթեւեկիս համար 8 ոսկ. ծախս ըրած էին որուն 2ը ունէի արդէն, իսկ 4ը Այճեան էֆ.էն փոխ առած էին, ուստի վճարեցի:

Համբոյրներ, քոյդ ՌԱՀՎԵՐ<sup>38</sup>

- 32.- Գերմանիկը Մարաշն է:
- 33.- Ակնարկութիւնը կ'երթայ Պէյրուսի բժշկական ուսանող 3օշանին: Տեսնել ծանօթ 17ը, էջ 193:
- 34.- Այս Նշանը (Մարգիսեան) կապ չունի Աշոտի հետ, որ ծանօթ էր Աշոտ Լեւոն անունով:
- 35.- Միս. Կարդանեանը նոյնինքն նամակագիր Ռաիվերն է:
- 36.- 3. Գալֆը 3արուսիւն Գալֆայեանն է անշուշտ: Մարը կրնայ ըլլալ Մարթին Մուրատեանը (Աշոտ Մարթին) կամ Միքայիլ Տեր Մարտիրոսեանը՝ ծանօթ Մար ժածկանունով: Բայց այս վերջինը այդ տարիներուն քանտ կը գտնուէր, իսկ Մարթինը դեռ Ամերիկայէն չէր վերադարձած:

Փաստ. 229-5

Ա 9.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԼԻԲԱՆԱՆԻ ԳՃՈՎ ԶԷՆՔ ՓՈՒՏԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիբանանի ժողովուրդը ընդհանրապէս ազատութեան տենչացող, բայց դէպի այդ որեւէ գործնական քայլ առնելու մասին խիստ անճարակ է: Մանօթ ֆրանսական գրաւումը — որուն արդիւնքն է իրենց այժմեան առանձնաշնորհեալ վիճակը — զիրենք սա խիստ սխալ համոզման բերած է թէ՛ սեփական ոյժերը ոչինչ կրնան ընել կայսրութեան համեմատաբար վիթխարի ոյժին հանդէպ բայց եթէ ոչնչացման առաջնորդել. եւ հետեւաբար անհրաժեշտ է հանդարտ կենալ մինչեւ ֆրանսական դրդում մը կամ ուրիշ քրիստոնեայ պետութեան մը գրաւումը: Ինքնապաշտպանութեան մասին չեն մտածեր անգամ, չնայելով որ ժողովրդի կէսը արտասահման գացած եւ վերադարձած է:

Բաս էլ Շագալին այս կողմի (Պէյրուս) ետեւէն մինչեւ ինքնա գտնուած միջավայրը:

Յիշեալ կէտերէն մին պէտք է ընտրել եւ որեւէ պատրուակաւ (պատշաճ գրադուում մը) հաստատութիւն մը ունենայ: Աւելորդ է ըսել թէ՛ յիշեալ հաստատութիւնը հարկ է [որ] օժտուած լինի նպատակաշարժար մասերով, ինչպիսին է օրինակ, զէնքեր պահելու տեղը եւայլն: Լինի բնակութենէ բաւական հեռի՛ լսողութեանէ եւ տեսողութեանէ ազատ կացուցանելու համար աղմուկ կամ գործ: Լինի ծովուն այնպիսի մէկ տեղին վրայ, որ մօտակայ տեղերու տեսողութիւնը արգիլող հողամաս մը ունենայ՝ ծովուն գործածուելիք երեսը անյայտ ընելու համար:

Կայ բացառութիւն մը սակայն, որ ոչ միայն երբեմն ըմբոստ էր կայսրութեան հանդէպ, այլեւ Հիբանանի վարչութեան: Այս բացառութիւնը Տրիպոլիէն եւ ծովէն մօտ 2 ժամ հեռավորութեամբ լեռնադաշտին վրայ գտնուած եւ Զդարթա կոչուած քաղաքն է (գայմագումար): Հոս 1000ի չափ մարդիկ կայ եւ մեծ տրամադրութիւն [զէնք] գնելու: Այս գաւառակը իր ըմբոստ բնաւորութիւն ունեցող բնակիչներուն շնորհիւ, կրկնակի առանձնաշնորհեալ հանգամանք մը ունի: Հոն մտնողը գրեթէ չի յանձնուիր, (եթէ մանաւանդ քաղաքակա՛ն յանցաւոր էր) Հիբանանի կառավարութեան իսկ: (Ընդհանրապէս Հիբանան չի ձերբակալեր, չի փնտրեր անգամ վիլայէթէ՛ն որեւէ փախստական: Զդարթազիք էին որ տարիէն աւելի ապստամբ ապրեցան քանի մը հարիւր հոգով, բայց Հիբանանին մնացեալ ժողովրդին անտարբերութիւնը ստիպեց զիրենք հանդարտիլ: Ասոնց մէջ ազատութեան զգացումը խիստ վառ է: Զ. Յ. Դաշնակցութիւնը կրնայ եղբայր մը գտնել (միեւնոյն նրպատակով տողորուած) յանձին այս քաղաքացւոց, եթէ կարելի ըլլայ հարկ եղած աշխատութիւնը նուիրել: Ըստ որում, ցաւ է ըսել, այս ժողովուրդը բոլորովին անտեղեկ է կազմակերպ գործերէ եւ խակ միջոցներ մտածելու մէջ:

Այս կարգադրութեան հետ միաժամանակ պէտք է կարգադրուի լմնայ առաջատանաւին գործը, որ այս գործին կէսը եւ անհրաժեշտօրէն կարեւոր է, առանց որուն աւելորդ կը լինի բոլոր այս բաները: Բայց առաւել տարողութեամբ պէտք է լինի նա, քան այն գոր առաջադրած էինք: Տեղական պայմանները կը հարկադրեն մեզ եթէ ոչ ամենալաւ տեսակէն, զէթ լաւագոյններէն մին ունենալու:

Կը մնայ ցամաքէն դէպի նպատակավայրը փոխադրելու խնդիրը, որ այս գործին համեմատաբար նուազ դժուար մասն է: Այս կրնայ յետաձգուիլ (եթէ ստիպուինք) մինչեւ միւսներու կարգադրութեան գրեթէ ավարտումը:

Երջելով Պէյրուսի մինչեւ Տրիպոլի ամբողջ ծովեզրը եւ հանդիպելով բոլոր քաղաքներն ու գիւղերը, Տրիպոլի կողքէն բարձրացանք լեռնադաշտը, Զդարթա ուրկէ դարձեալ 2 ժամ դէպի լեռը բարձրանալով հասանք լեռան կիրճին մէջ շինուած Կոնգրա քաղաքը: Այս քաղաքը դէպի դաշտ տանող ճամբուն գրեթէ վերջին եւ ամենամօտ քաղաքն է: Ատկէ լեռնադաշտի գծով վերադարձանք զանագան մեծ ու փոքր քաղաքներ, գիւղեր հանդիպելով դէպի Էյ Պաթրուլը, որ Պէյրուս-Տրիպոլի ծովեզրեայ գծին կէսն է, սա տարբերութեամբ որ ատկէ մինչեւ Տրիպոլի փոխանակ կառուողի, խճուղի միայն կայ:

Սոյն երեք մասերէ բաղկացած գործը, պէտք է յանձնել երկու (մասնաւորապէս այս գործին յատկացեալ եւ ձեռնհաս) ընկերներու, որոնց մին ծովային մասին նրկիրուի, իսկ միւսը ցամաքայինին:

Գործին այս կերպ կարգադրութեանն յետոյ, ուզած քանակութեամբ զէնք-նազմամթերք-ոււււււ, տինամթը եւայլն կարելի է դիւրաւ փոխադրել: Բոլորովին աւելորդ կը դառնայ այլեւս ներսը զէնք եւայլն պատրաստելու համար գինարան մը ունենալու խնդիրը, զոր առաջադրած էինք ուսումնասիրել: Ուստի եւ լքեցինք այդ մասին մեր մշակելի գործնական ծրարագիրը: Եւ ասիկա մանաւանդ անոր համար որ, (վերի տեղեկութիւններէն ինչպէս յայտնի է) մեր պոստը կատարելապէս պարզեց ինչպէս աւելորդութիւնը յիշեալին, նոյնպէս եւ կատարեալ դիւրութիւնը, եթէ երբեք ուզենք գործադրել գայն:

Սոյն տեղեկագրի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ եւ լրացուցիչ բացատրութիւններ բերանացի կու տայ Ռ.<sup>39</sup> երբ (մօտ օրէն) տեղը հասնելով անձամբ եւ մանրակրկիտ կերպով կը զեկուցանէ, իւրաքանչիւր տեղի մասին քարտէզի վրայ ցուցմունքներ ընելով:

ՍԱՐՀԱՏ ՊԱՐԿԱՆՈՒՄ ՌԱՀՎԵՐ  
Պէյրուս, 8/1/904

Ամբողջ գծին վրայ մեր նպատակին յարմար 5 ժամայ ճամբայ կայ, որ կը սկսի Պէյրուսէն 4 ժամ հեռու գտնուող Ծիպէլ քաղաքէն եւ կ'աւարտի Բաս էլ Շագա հրոստանին ետեւը գտնուող Կոնգրա քաղաքը: Սոյն 5 ժամուայ ճամբուն վրայ յարմարագոյն կէտերն են Եյ Պաթրուսն 1 ժամ անդին սկսելով մինչեւ Էյ Պաթրուսն Բ.

Փաստ. 947-37

Բ 1.- Ա[ՄԵՐԻԿԱՅԻ] Կ[ԵՂՐ. ԿՈՄԻՏ]ԵԻՆՆԵՐ

Այս եւ յաջորդ երկու փաստաթուղթերը հրատարակած են Հ. Տառնապետեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Միմաճ Զաւարեան» գործի Բ. հատորին մէջ, 1992 Պէյրուս (էջ 263-268 եւ 543-554): Մտորելու կու տանք զանոնք, Հ. Յ. Դ. Պոսթընի արխիւներուն մէջ պահպանուած բնօրինակներու բաղդատութեամբ հարկ եղած ստուգումները եւ ճշգրտումները կատարելէ ետք: Անկցուցած ենք նաեւ անհրաժեշտ նկատուած բացատրութիւններն ու ծանօթագրութիւնները:

12/25էն 17/30 Մարտ [19]06, Մոց<sup>1</sup>

Ընկերներ, 12 III — 05ին, մեր ընկեր Թ[ափառիկ]ը առած է Ամեր[իկայի] Կ. Կ.էն 300 անգլ. ոսկի 1 շիւ: Այդ գումարը համարելու է մեր տրամադրութեան տակ, որի բարեխիղճ եւ նպատակայարմար գործածութեան համար կարող էք վստահ ըլլալ:

Շնորհակալութեամբ եւ բարեկեցութեամբ, Լեռնավայրի Պատասխանատու Մարմնի անդամներ՝ ՍՄԲ. ՕՀ., ՎԱՐԴԱՆ

Ընկերներ! Օգտուելով առիթից, օգտակար ենք համարում կանգ առնել մի քանի յոյժ կարեւոր հարցերու վրայ, որոնց մասին ակնարկուած էր նաեւ մեր 1904 VIIIի եւ XIIի գրութիւններուն մէջ: Երջանիս գործերը թէ եւ կը քայլեն առաջ, սակայն պահանջուած է դեռեւս շատ եւ շատ աշխատանք, նրանց հաստատ հողի վրայ դրնելու համար: Միայն է տարածուած կարծիքը, որ Լեռնավայրը պրոպագանդի, կազմակերպութեան պէտք չունի, որ ամէն ինչ պատրաստ է եւ միայն դրամ ու դրամ կը պահանջուի: Իրականութիւնը կը հակասէ ատոր: Անցած ու նախընթաց տարիների մեր գործունէութեան ու հաշվետուութեան քննութիւնը ապացուցած է մեզ, որ միայն դրամի վերայ ծանրանալը ոչ մի յաջողութեան չի հասցընի մեզ, նոյնիսկ կարող է տանել դէպի կորուստ: Դրսի միջոցներով գինեւ 100-150 հազար բնակչութիւն ունեցող մի շրջան, նոյնիսկ նրա 1/10 մասը, անհնարին է, մեր ոյժից վեր է...

Եթէ իրենք, տեղացիք, չգիտակցեն գործը եւ իրենք եւս չանեն զոհաբերութիւն, մեր տուածը (դրամ թէ զէնք) կը վատնուի, կը կորչի:

Եթէ ներս եկող «գործիչները» ամիսներ, տարիներ նստեն ծովեզերքում իրեւ օտարականներ ու վաճառականներ, նրանք կը վատնեն մեր ժողովուրդի դառը քրտինջով վաստակած սանտիմները, նրանք անկարող կը լինեն շփուել բուն ժողովրդի հետ, անգործունէութիւնից եւ պարապութիւնից կը լքուեն, քայլ առ քայլ յանցաւորներ կ'արքը կ'անցնեն: Օրինակները, դժբախտաբար չեն պակսում մեզ: Մեզ ակներեւ է, որ առանց շրջանիս ազգաբնակչութեան արթնացումի, առանց իրենց հաշվով գինուող տեղական ինքնապաշտպանութեան մարմիններու կազմակերպութեան, առանց մաքուր, անձնուէր, զոհաբերութեան պատրաստ դրսից եկած ընկերներու, գործը դժուար թէ յաջող վախճանի հասնի: Երջանիս ազգաբնակչութիւնը համեմատաբար գինուած է եւ

կարող է աւելի եւս գինուել. նրան պակսում է միայն գիտակցութիւն ազգային ընդհանուր շահի, մեր անեղծներին նկատմամբ: Դրսից եկող եւ հեշտութեամբ տրուող գումարները (իր թէ գինուելու համար) կը դադրեցնեն զէնքի գնումը իրա՝ ժողովուրդի միջոցներով, մեր մարմիններու մէջ իսկ կը ստեղծուի շահի, վարձկանութեան, իսկ յետոյ խաբէութեան վրայ հիմնուած ուղղութիւն... Մենք եկած ենք այն համոզումի, որ ա) մեր կարեւոր վայրերում անհրաժեշտ է լայն կերպով կազմակերպել ինքնապաշտպանութեան մարմիններ, որոնք գինուելու են իրենց միջոցներով, բ) դրսի միջոցները տալու է միայն այն վայրերու պատրաստութեան, որոնք ապագայում կարող են բռնել յարձակողական դիրք. այդ ալ յաջողցընելու համար, պէտք է ունենալ խիստ եւ աշխուրճ կոնտրոլ գործիչներից. գ) կազմակերպական միջոցներով ապրելու են միայն անոնք, որոնք փախստական, կոուուոյներ կամ շրջիկներ են, կամ անկարող են մի տեղ հաստատուել ու աշխատել: Հարցի որ կողմն ալ վերցնենք, ակներեւ է որ ամէնէն շատ մեզ պէտք են մարդիկ, ընկերներ դրսից: Այդ մասին գրուած էր եւ 1904 Օգ[ոստոս]ին եւ XIIին: Դուք կը բաւականանաք միայն դրամ դրկելով: Ծատ շնորհակալ ենք ատոր համար եւս, բայց մենք կը գերադասէինք ստանալ միայն 100 ոսկի եւ մի ընկեր, քան թէ 500 ոսկի առանց ոեւէ մարդու: Միայն դրամով ոչ մի ազգ չի ազատուել: Լեռնավայրից եւս անկարող են ազատուել...

Մեր գործի յաջողութեան համար, անհրաժեշտ է դրամները ծախսել ներդաշնակօրէն, գործիչներու զոհաբերութեան եւ գինուորական-տեխնիքական ուժի զարգացման հետ միասին: Քարոզիչը - գինուորը - դրամը առաջ են գալու ձեռք ձեռքի տուած, համահաւասար քայլերով: Մենք աչքից թողած ենք երկու առաջինները ու ծանրացած գլխաւորապէս վերջինի վրայ: Դա սխալ է: Թէ մեր ընդհանուր եւ թէ մասնաւորապէս Լ[եռնավայր]ի շրջանի գործերը յաջողութեամբ տանելու համար, դրամի հետ միասին, մեզ պէտք են եւ կազմակերպող

- 1.- 2րդ այս բաժնին մէջ ծածկանունով նշուած տեղանունները կը համապատասխանեն հետեւեալ վայրերուն.
 

|                      |                     |
|----------------------|---------------------|
| Շոց — Պէյրուս        | Արծուաբերդ — Ձէթուն |
| 7ովիտ — Այնթապ       | Չրվեժ — Սերսիհ      |
| Կարաւան — Իսկէնտրուն | Խոր փրպալ — Ատանա   |
| Սահմանաբերդ — Սարաշ  | Դաշտ — Գալէպ        |
- 2.- Գրուած է Լեռնավայրի Պատ. Կեդր. Կոմիտէի անունով եւ ստորագրուած Սիմոն Զաւարեանի եւ Խամասորի Վարդանի կողմէ: Վերջինիս իսկական անունը Սեիրաբեան Սարգիս է, իսկ Սնքատ Օհանեան Զաւարեանի գործածած ծածկանուններն ընդ:

քարոզիչ ընկերներ եւ կոուուոյ-գինուոր ուժեր: Վերջին Ընդհ. Ժողովով, իր նուազագոյն պահանջներով, արդէն չեղած էր այդ մտքի ճշմարտութեան վրայ: Չենք կարող ու չենք ուզում հաւատալ որ 1000 աշխատաւոր դաշնակցական ունեցող Ամերիկան, միայն դրամի պարկ հանդիսանայ: Մի չափազանցք դէպի «եկողները» դրուող պահանջները: Համեստ, ազնիւ, չարքաշ կեանքին պատրաստ, քիչ-չատ ընդունակութիւն ունեցող ժողովրդի հետ շփուելու եւ ընկերներ գտնելու, արհեստաւորները, իրենց բնական խելքը եւ անձնութիւնը ունենալով իրենց դեկ, կարող են ոչ պակաս օգտակար լինել մեր շրջանում, քան թէ «զարգացած», «կրթուած» գործիչներու տիտղոս կրողները: Մեր ազգին տալու է դեռ եւս յեղափոխականների աջակցութիւնը. իսկ այդ աջակցութիւնը ստրկեցնել կարող են եւ համալսարանականը, եւ գիւղական համեստ ուսուցիչը: Մինչեւ անգամ տեղացի տիրացու ուսուցիչը աւելի լաւ նոյնիսկ, քան օտար համալսարանականը: Եթէ չունենք կամ քիչ են համալսարանականները, օգտուենք զոնէ մեր աւելի համեստ արհեստաւոր ուսուցիչներից, որ թուով տասնապատիկ աւելի են: Որպէսզի առանց կասկածուելու ապրին, որպէսզի պարապութիւնից չլքուեն ու չփճանան, որպէսզի նրանք իրենց կեանքով կարողանան զոհաբերութեան օրինակ տալ եւ վերջապէս որպէսզի մենք կարողանանք շատ ընկերներ ներս բերել ու յատկացնել կազմակերպութեան միջոցները բուն կուուի պահանջներին, եկողները ապրելու եւ աշխատելու են ներսը՝ իրեւ արհեստաւորներ, ստանալով սկզբում մի քանի ամիս (1-2) համեստ ապրուստի միջոց եւ փոքրիկ նպաստ չբաւորութեան դէպքում (10-15 ոսկի) արհեստը սկսելու համար: Յարմարագոյն արհեստները սոքա են,— ժամագործ, լուսանրկար[իչ], թանաքալի (թիթեղագործ), կալալի (աման կլայնկող), կոնդուրալի եւ պատուած կօշիկներ կարկատելու ձեւը իմացող, եմենիլի, քաղցրաւենիք պատրաստող (չաքարլի) փոքրիկ մեքենայով, դոնդուրմալի (պողպատակ) փոքրիկ սառուցի մեքենայով, ներկարար, բարբար, պայտառ, հիւսն, չարչի, հայելի շինող եւ նորոգող եւ այլն:

Ծատ ցանկալի է որ եկողները լինեն այս շրջանից եւ, որ ամենապլխաւորն է, այդ մարդիկը պէտք է ապրեն որպէս հայեր եւ ազատ: Եկողները երկրի մէջ անպաճառ ազատ մարդիկ են լինելու, ունենալու են համիդիէ<sup>3</sup>: Ամերիկեան անցազիրը գործ չի տեսներ, բայց յամենայն դէպս չի խանգարեր ունենալը, որը կը պահուի դրսում եւ վտանգուած ատեն կարելի կը լինի հրապարակ հանել: Փախստական մարդու կարիք չկայ: Յաջողութիւն ունենալու համար, նրանք (այսինքն եկողները) ծանօթ են լինելու եւ մեզ հետաքրքրող գինուորական տեխնիքական ճիւղերի հետ: Լաւ վառօղ շինելով, փամփուրշտ [եցնել գիտնալով, հրացանի պէտքերին եւ գործածութեան հմուտ ըլլալով, ուսմբեր պատրաստել եւ պայթուցիկ ցիւթերին ծանօթ ըլլալով, եւն. եւն., աւելի հեշտութեամբ կարելի է մարդ համոզել, օգտակար լինել ապագայում, քան թէ ճարտարախօսութեան, գիտութեան եւ փիլիսոփայութեան խորքերի մէջ մտնելով: Մեր գործիչները լինելու են միաժամանակ եւ յեղափոխական առաքեալներ, եւ գինուորական ինստրուկտորներ<sup>4</sup>, գուցէ ապագայում խմբապետներ եւ մեզ

պէտքական ձեռնարկներ յաջողեցնողներ:

Ամերիկայում այս շրջանից շատ մարդկանց գիտակցութիւնը բաւականին արթնացած է ըլլալով: 1000 դաշնակցականներից թող մի քանի տասնեակը ներս գան իբրեւ կազմակերպող-վարժեցնող ուժեր: պատրաստ եղածներից լաւագոյնները (զոնէ մի քանիսը) թող ճանապարհուեն առանց ժամանակ կորսնցնելու, հանդիպելով Արեւմտ[եան] Բ[իւրոյ]ին:

Մի ուրիշ հարց եւս, ընկերներ. մենք աւելի քան համոզուած ենք, որ մեր շրջանի (ինչպէս եւ այլ վայրերում) ապագայ ձեռնարկների յաջողութեան մի խոշոր մասը կախուած է դրսում կազմակերպուած եւ ներս խուժող լաւ պատրաստուած արշաւախմբերից: Այդ տեսակ ձեռնարկներու համար շրջանս ունի յարմարութիւններ. այդպիսի մի քայլը մեծ սիրտ կը տայ ներսեցուց, կ'աւելցընէ նորանց քանակը եւ կը բարձրացնէ որակը, գործ կը դնէ մեր ազգի դրսում ապրող եւ օրէցօր աւելացող գիտակից եւ անձնուէր մասը: Հետեւաբար, օր առաջ պատրաստելու է դրսում այդ ազգային փրկութեան գինուորական բանակը:

Եթէ գերդաստի է մեզ առնել 100 ոսկի եւ մի ընկեր, քան թէ 500 ոսկի առանց մի մարդու, աւելի եւս ճշմարիտ է, որ գործի ընդհանուր յաջողութեան տեսակէտից, 1000 ոսկի դրամի տեղ, մեզ աւելի կարեւոր է ստանալ միայն 100 ոսկի եւ մի մարդ, ունենալով սրա հետ միասին դուրսը 10 հոգի գինուոր, պատրաստ ներս նետուելու: Մեր փորձուած ընկերներէն մին կ'ըսէ, որ 10 փորձուած վարժ գինուորով, նա աւելի յաջողակ գործ կարող է կատարել քան թէ 50 մեր սովորական կամաւորներով, որոնց մեծ մասը ունեն լաւ սիրտ բայց չունեն լաւ բազուկ եւ լաւ գլուխ...

Ընկերներ, անհատներով ու ցուցական ձեռնարկներով մենք սկսեցինք մեր կուուը, հարիւրներով ու կոուուոյ խմբերով արթնացրինք հայ ազգը, խնդրողներից դարձանք կուուոյներ, Հայկական Հարցը դրինք քաղաքական սեղանի վերայ: Հիմա մտնում ենք երրորդ ամենալուրջ, յաջողութեան շրջանը. իսկ այդ յաջողութեան համար պատրաստելու ենք հազարաւոր գինուորներ, գինուելու ենք գիտութեան տալիք ամբողջ տեխնիքական ուժով, կուուը եւ կուուիլը ենք մեր ազգի համայն խաւերը ոչ միայն ներսը, այլեւ դրսում, ոչ միայն դրամով, այլեւ կազմակերպող ինստրուկտոր անձնուէր ընկերներով, այլեւ բուն գինուորական ազգային փրկութեան բանակ կազմակերպելով:

Սպասում ենք ձեր պատասխանին եւ ամէնից անհամբեր՝ անձնուէր, համեստ, տեխնիքապէս պատրաստ առաքել-ինստրուկտորներուն:

Ընկերական բարեկեցութեամբ եւ յաջողութեան ցանկութեամբ,

Լ[եռնավայր]ի Պ[ատասխանատու] Մ[արմնի] անդամք՝ ՍՄԲ. ՕՀԱՆԵԱՆ, ՎԱՐԴԱՆ

3.- Այսինքն պէտք է օսանցի քաղաքացի անձնագիր ունենան: 4.- Մարդիցներ, սորվեցնողներ:



Փաստ. 947-39

Բ 2.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ ԿԱՄ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆՆԵՐ

1- IV 905

Սիրելիք,

Վարդան երկար կը պատմէ մեր ցաւերի, անելիքների, գործերի մասին: Միասին նայէք Տիրանի հաշիւը եւ մի կարգադրութիւն արէք: Ուզած գրքերս չմոռանաք: Քանի որ ներս գնացողներ են լինում միշտ հոս, հասցնելու է մի Ծական համար անցեալ տարիների «Դրոշակ»ներից, մաս-մաս: «Հայրենիք»ից, անգլիական «Armenia» թերթերից նոյնպէս լաւ է մի 3-ճական հատ դրկել: Մեր դրամական եւ այլ հարցերը կարգադրելու համար լաւ է մի արձանագրութիւն կազմել (Վարդանին եւ ինձ), որով ղեկավարուելու ենք եւ պահանջելու ուրիշներէն:

Մի բան կազմել եմ եւ արտագրում եմ. թող Վարդանը աւելցնէ կամ պակսեցնէ գրածիցս, բայց մաքուր արտագրէք եւ ինձ ուղարկէք: Ես էլ կը ստորագրեմ եւ դա կը դառնայ պարտաւորեցուցիչ: Ահա այդ արձանագրութիւնը.— Որոշումներ մեր բռնելիք ուղղութեան նկատմամբ տրուած լեռնավայրի Պատ. Մարմնի անդամներէն՝ 905 թ. V. Քննելով լեռնավայրի շրջանի գործունէութիւնն ու հաշուետուութիւնը վերջին Թ-Յ միսնների ընթացքում, ի նկատի առնելով շրջանումս աշխատող ընկերների կարծիքները, որոշում է.

I) Ընդունելով առայժմ Արծ[ուաբերդ]ի իբրեւ մեր ամենակարեւոր վայրը, աշխատել գլխաւորապէս նորահամար: Միւս վայրերու նկատմամբ մեր ուշադրութիւնը կենտրոնացնել պրոպագանդի եւ տեղական մարմիններու կազմակերպութեան համար, ինքնապաշտպանութեան հողի վերայ: Հրաւիրել բոլորին՝ զինուել տեղական զէնքերով, գնուած տեղական մարմիններու միջոցաւ, պատրաստել թաքստոցներ, վարժուել զէնքի գործածութեան, մօտէն ուսումնասիրել իրենց վայրը զինուորական տեսակէտէ, եւ այլն:

II) Դրսից հրաւիրել այն տեսակ անձնուէր, չարքաշ կեանքի պատրաստ ոյժեր, որոնք մարդկանց համոզելու եւ կապելու ընդունակութեան հետ միասին, գործնականապէս ծանօթ են մեզ հետաքրքրող զինուորական ճիւղերից մի քանիսի հետ: Ներսում նրանք պարելու են լեզակ կերպով, իրենց կամ հայ անցազրերով, պարապելու են որեւէ արհեստով եւ հայթայթելու են իրենց հացը սեփական աշխատանքով: Այդ ներս եկող ընկերները ստանալու են 1-2 ամսուայ համար ամենահամեստ ապրուստի միջոց եւ ինչեւ 10-15 ոսկի միանուազ նպաստ՝ արհեստը սկսելու համար:

III) Երկրում արդէն գտնուած եւ գործող ընկերները հրաւիրուած են 1-2 ամսում յարմարեցնել իրենց դիրքը յիշեալ պահանջներին:

IV) Կազմակերպական միջոցներով ամենահամեստ

կերպով ապրում են միայն մի քանի շրջիկներ եւ այլ ծածուկ ապրող եւ որեւէ տեղ հաստատուելու հնարաւորութիւն չունեցող ինստրուկտոր մասնագէտները, որոնց գոյութիւնը անհրաժեշտ կը համարուի Պատ. Մարմնի անդամների կողմից:

5) Մինչեւ Արծ[ուաբերդ]ի ճանապարհների վրայ գտնուած մարմինների ուժեղանալը, թաքստոցների պատրաստելը, Արծ[ուաբերդում] յուսալի ընկերների հաստատուելը՝ չփոխադրել Արծ[ուաբերդ] ունեցած մեր ապրանքը. դրսից եկած գումարներով՝ ներսում չկատարել ապրանքի գնումներ, թողնելով այդ տեսակ գրնումները տեղական մարմիններուն՝ իրենց հաստիքներով:

6) Մինչեւ Կ. Կոմիտէի հաստատուելը (նուազագոյն պահանջների համեմատ) դրսից ստացուող դրամական միջոցները պահել կամ Արեւմտեան Բ[ուրդ]ում, կամ Դելթա Թափառիկի մօտ, կամ վերջապէս Պատ. Մարմնի անդամներուն քով:

Մինչեւ օրս զանազան վայրերում (Արծ., Հովիտ<sup>1)</sup>) պարապ մնացած գումարները հաւաքել յիշեալ վայրերում եւ դնել խիստ եւ մանրամասն հաշուետուութեան տակ:

Ցուցակագրել զանազան վայրերում մեր ունեցած ապրանքներն ու իրերը, մինչեւ Արծուաբ[երդ] փոխադրուած դնել ապահով տեղ, ժամանակ առ ժամանակ իւզել եւ հսկել նրանց չփչանալուն:

Մրա մեծ մասը գրուած էր մատիտով Վարդանի կողմէ. շուտ սա ստորագրելու է որպէսզի Հովիտի դրամը կարելի լինի առանց անախորժութիւնների յետ առնել: Հոս կը սպասեմ մինչեւ սրա պատասխանին:

Մինչեւ Երբ հող կը մնայ Մարը՝ Կալուածքներ գնելով, նաւթի առեւտուրներ անելով, մենք չենք կարող զբաղուել:

Երբ մարմինները կազմուեն փոխադրութիւնը կը դիւրանայ. օտարները՝ արաբ, յոյն մաքսախոյզները՝ դա կ'ընեն... Թող 5-10 անձնուէր մաքուր տղաներ գան եւ մի 0.5-1 տարում գործը արագ կերպով կը քայլէ:

Շատ ու շատ բարեւներով,  
Զեր՝ ՍՄԲԱՏ

- 5.- Գրուած է, ամենայն հաւանականութեամբ, Պէյրութն, Վարդանի ԺՆԵՆ մեկնումին առիթով:
- 6.- Օրինական, ոչ փախստական:
- 7.- Դելթա ծածկանունն է Աղեքսանդրիա քաքաղին: Թափառիկը ծածկանունն է կուսակցական գործիչ Տոթթ. Կարապետ Փաշայեանի, որ Աղեքսանդրիա կը մնար:
- 8.- Մարը Միքայէլ Տը Մարտիրոսեանն է, Կիլիկիոյ հին գործիչներէն, որ Բ. Ընդի. Ժողովին (1898) ընտրուած էր անդամ Լեռնավայրի Պատ. Մարմնի. ձեռքակալուած էր մատուցութեամբ եւ 1899-1905 մնացած Մարաշի բանտը, ուրկէ նոր դուրս եկած էր:
- 9.- Գործածուած է մաքսանեց իմաստով:

Փաստ. 1567ա-5

Բ 3.- ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՇՐՉԱՆԻ Հ.Յ.Դ. 1904-5 ՀԵՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Այս տեղեկագիրը, գրուած հասցորէն 1905ի սկիզբը, գրուած է Գաղափարական Խորհուրդին, որ գումարած է ժողովուրդի 1905ի Փետրուար-Ապրիլ ամիսներուն: Զաւարեանի ձեռագրով, ան կը գրուէ միջակ չափի (սովորական մամակի թուղթի) 17 էջեր (17 թերթ, մէկական էրես, մնաց ետեւը կարգ մը նոթերով ու յաւելումներով): Առաջին 15 էջերով, ըստ երեւոյթին, կ'ամբողջանայ Պատասխանաւոր Մարմնի բուն տեղեկագիրը ստորագրուած Երրորդ Ընդի. Ժողովին կողմէ ընտրուած անդամներ Սմբատ Օհանեանի (Օ. Չաւարեան) եւ Վարդանի, ինչպէս նաեւ անոնց տեղական գործակիցներէն՝ Շատիկի, Զօշանի (Յուլան?) եւ Զարուբի-նի (?) կողմէ: Վերջին երկու էջերը լուսանցքի մէջ paraphé եղած են Զաւարեանի եւ Վարդանի կողմէ միայն: Տեղեկագիրը, որ վերջերս միայն գտնուեցաւ Արխիպի թղթածրարներուն մէջ, ցարդ տեղ գտած չէ դիւանի եւ նիւստիտարներուն մէջ: Կը կարծենք որ առաջին անգամ ըլլալով կը հրատարակուի ան:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ.- Յայտնի է բոլորիդ՝ որչափ Կիլիկիոյ աշխարհագրական դիրքը աւելի նպաստաւոր է համեմատաբար Մեծ Հայաստանի դիրքի հետ: Եւրոպական շոգենաւերն ու առաջաստանաւերը շաքաթը մի քանի անգամ այցելուած են Մերսին, Իսկենտէրուլ, իսկ հունձի(?), փորթուկալի արտահանութեան շրջանում նաեւ այլ մանր վայրեր՝ Փայաս, Իւմուրթալը, Քարատաղ, Սելեկիա, Սուեփա: Նաւագնացութեան հետ միասին կատարուած է եւ մաքսանենքութիւն (թէ՛ զէնքի եւ թէ՛ այլ իրերի): Մաքսախուզութեան շնորհիւ է որ ամէն տարի հազարաւոր մարդիկ (լիբանանցի, սիրիացի, մահմետական, հայ) փախչում են արտասահման (մանաւանդ Ամերիկա) եւ վերադառնում (աւելի նուազ թիւով)՝ վճարելով մի քանի ոսկի յատուկ միջնորդների: Զէնքի առեւտուրը կատարուած է ոչ միայն քրիստոնեայ Լիբանանում, այլեւ մահմետական Հայկա ու այլ տեղեր: Մաքսախուզութեամբ պարապում են արաբներ, յոյներ, թիւրքեր: Հայերը, որ կազմում են նաւահանգիստների ազգաբնակչութեան 1/5 — 1/4 մասը, շատ դժուարութեամբ կարող են զբաղել այդ արհեստով. 95էն յետ[ոյ] նրանց արգելուած է հասարակ նաւավարութիւնն իսկ:

ԲԱՂԱԲԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ նոյնպէս նպաստաւոր են: Թուսաստանը չունի այս շրջանում նոյնիսկ հասարակ հիւպատոսներ: Ընդհակառակը, աւելի քան այլ տեղեր, շահագրգռուած է Ամերիկան (Միացեալ Նահանգները), որի հպատակները պահում են մի քանի միջնակարգ դպրոցներ՝ (Այնթապ, Ատանա, Թարսուս, Հաճըն, Մարաշ) չհաշուած տարրական դպրոցները շատ հայ գիւղերում, ուր կան բողոքականներ: Բոլոր մեծ

պետութիւնները հաւասարաչափ շահագրգռուած են շրջանիս խոշոր առեւտուրով. բաւական է յիշել, որ միայն Մերսինը տարին ներմուծում է 16-18 միլի[ոն] Ֆրանքի մշակուած իրեր (փոխարէնը վճարելով բամբակով, քունջութով, հացով, անասուններով, խալինքով, բրդով եւ այլն). տարէց տարի առեւտուրը լայնանում է եւ երկրի դրսի հետ ունեցած կապը սերտանում է: Բացի այդ, գերմանական գիծը<sup>10</sup> հասած է արդէն էրիզլի (1.5-2 օր Ատանայից), իսկ Անգլիան դժուար թէ մոռանայ որ Բաղդադ-Բասրա յանգող ճամբան սկզբուելու է Իսկենտէրուլից կամ Իւմարթալըքից (Այասի մօտ): Յիշատակալի է նոյնպէս, որ Ֆրանսական ապրանքները վերջերս տեղի են տալիս գերմանական արտադրութիւնների, իսկ Թուսաստանը ոչինչ չի ներմուծել եթէ չունենար նաւթի մենաշնորհը եւ շաքարի պրեմիաները<sup>11</sup>:

ԱԶԳԱՐՆԱԿՈՒԹԻՒՆ.- Սակայն, աշխարհագրական եւ քաղաքական նպաստաւոր պայմանները միայնակ չեն կարող լուծել ոչ մի քաղաքական հարց: Վերջինս հետեւանք է աւելի մրցողների արտադրած Ֆիզիքական եւ բարոյական ուժի: Իսկ այս տեսակէտից, մենք այնքան էլ նպաստաւոր պայմաններում չենք գտնուում: Կ[իլիկիայ]ի եւ կից մասերի ազգաբնակչութեան մօտ 2/5-ը կազմում են թիւրքերը եւ թիւրքմէնները: 1/3-էն մի քիչ պակաս այլ տարրերը՝ Ֆեյլահները (նուսայրիները) [քրիստոնեաները], գնչուները, մտուա-

10.- Խօսքը Պոլիս-Պաղտատ շոգեկառքի գծին մասին է:  
11.- Պրեմիա՝ ուսերէն բառ, որ հոս ունի աճուրդով շահած մրցանակի իմաստ:



լինելը, չերթնանալը, քրդերը, կրետացի նոր գաղթականները (տեղաաղուրում Հայերի մաս), նողացները [?] եւ այլք՝ բոլորը միասին՝ որ չեն գտնում իրենց թուրք, տեղ տեղ հակառակ են վերջիններիս եւ որոնց մի մասի (առաջին երեքի մասնաւանդ) դերը, ընդհանրապէս վերցրած՝ զոտուրը է որոշել: Առ այժմս անկարելի է ասել ինչ չափ համերաշխութիւնը կարող է դեր խաղալ:

Ատանայի վիլայէթում (առանց Սելեւկիայի շրջանի) եւ կից Մարաշի միւթասարիթութիւնում հայերը կազմում են ազգաբնակչութեան մօտ 1/3 մասը՝ 100-130 հազար: Բայց այս 100 հազարը շատ ցրուած է, — Ուլնիա, Չոք Մարզուան, Քեսաբ (Սուեթիայի շրջանում) իրենց գիւղերով եւ Հաճըն, Ատանա, Մարաշ, Սիւ-Կարս<sup>12</sup> ամէն մէկը 15-20 հազ[ար] բնակչութեամբ, շրջապատւած կամ խառը տարրերի հետ: Յիշատակելու է որ այդ կենտրոնավայրերից դուրս եւս հարեւան ոչ հայ շրջաններում կան թաք-թուրք խառը կամ զուտ հայ գիւղեր (Օրինակ՝ Հասան Բէյլի, էքբէզ, Բախչէ, Բէյլան, Գեաւուր Տաղում եւ այլ տեղեր): Յիշածս հայաբնակ շրջանները մէկը միւսից գտնուում են 1.5-2 օր (18-24 օր)<sup>\*</sup> տարածութեան վրայ: Ծովի ամենախորը վայրէն (Փայաս-Չոք-Մարզուանէն) մինչեւ Չէյթուն 3-4 օր է: Մի քիչ աւելի է Մերսինէն-Հաճըն: Լեռնային ճանապարհները աւելի կարճ չեն իրենց դժուարութեան պատճառաւ:

Թիւրքերը նստակեաց են: Թիւրքմէնները ամառները բարձրանում են եայլա, չեն բաժանուած ցեղերի, աւելի խաղաղ են եւ հետեւաբար պակաս զինուած, պակաս քաղ քան քրդերը՝ Մեծ Հայաստանում: Միւս կողմից, Կիլիկիոյ շրջանում հայերը չիթիաներով, շէշխանաներով զինուած են, աւելի քան նրանց եղբայրակիցները՝ Հայաստան: Հայերը իրենց գոյութիւնը պահպանած են գլխաւորապէս քաղաքներում եւ լեռնային աղքատ եւ անառիկ վայրերում: Օժտուած են լեռնականներին յատուկ դրական եւ բացասական յատկութիւններով. աւելի համարձակ, աւելի ինքնավստահ. բայց գողութիւնը, ստախոսութիւնը, նոյնիսկ մատնութիւնը (հակառակորդին յաղթելու համար) նրանց հասարակական բարոյականութեան կողմից այնքան էլ դատապարտուած չեն: Հայ աղաւաղուած բարբառը պահած են ուլնիացիք, հաճընցիք եւ քեսապցիք: Միւս տեղերում հայերէնը գործ են ածում միայն դպրոց աւարտողները, որ — համեմատած կովկասի հետ — այնքան էլ քիչ չեն:

Հայի ուժը աւելի եւս թուլանում է կրօնական բաժանումներով: 70-90ական թուականներին, կաթողիկոսների վրայ աւելացած են բողոքականները, որ ազգային տեսակէտից կաթողիկոսներից աւելի վտանգաւոր են. նրանց դպրոցներում ու եկեղեցիներում հայերէնը փոխարինւած է թիւրքերէնով: Բողոքականութիւնը մտած է ամենախուլ անկիւնները՝ Հաճըն, Չէյթուն, Քեսապ: Բարբախտաբար շահի եւ անբարոյականութեան շարժու-

մը 95-98ից յետոյ թուլացած է: Հայի կողմն է պատմական անցեալը, իրենց յառաջդիմական պահանջները եւ մի քիչ էլ գիտակցութիւնը: Թիւրքերի կողմը՝ թուր առաւելութիւն, աւելի մոլեռանդ ըլլալը եւ տէրութիւնը: Ընդհանրապէս վերցրած՝ հայը թողնում է գզգզուած, վիրաւորուած, իր բախտի հետ հաշտուած, ոչխարի տպաւորութիւն, որ աղբրուում է հովուին (Յւրոպային). Թիւրքը՝ սոված, ոչխարակեր շան, որ խրախուսուած իր անպատիժ յանցանքից, հետեւում է նշան դրած գոհին, բայց վախենում տիրոջ փայտից...:

**Թեղ(ԱֆոնԱկԱն) ՀՈՂ.** — Ամենաընդարձակ հայկական շրջանը Ուլնիան է, իր մի քանի տասնեակ մանր գիւղերով (հաշուած եւ էնտերինի կազան՝ 5000 տնէն աւելի բնակչութեամբ): Նա կոտել է անցեալում եւ ապագայում էլ հաւանական է չի մորթուի. վերջի յաղթութեան պատճառաւ, նրանք լաւատես են, բայց եթէ լուրջ պատրաստութիւն չտեսնուի, կարող են շատ փիս տաղուել եւ Սասնոյ վիճակին հասնել: Հաճընը (4-5 հազար տնով) գիւղեր չունի եւ ազգաբնակչութեան 1/4 — 1/2 մասը (մանաւանդ տարուայ որոշ շրջաններում) դուրսն է ապրում (Օվայում, քաղաքներում): Լաւ կազմակերպուելու դէպքում, Սսի եւ Ատանայի կամաւորներու օգնութեամբ, գուցէ կարողանան կոտել եւ նոյնիսկ գրաւել որոշ վայրեր:

Չ[ոք]Մարզուանի դիրքը շատ սահմանափակ է (այգիների մէջ փոռուած, մի մեծ, զուտ — 750 տնով — եւ 3 խառը միմեանց կից գիւղեր, ընդամէնը 1400 հայ տնով), որ կոնակին ունեն լեռներ՝ խիտ անտառներով ծածկուած եւ մի քանի գոմեր ու եաթաղներ, 0.5-1 օր տարածութեան վրայ, Իւմուրթալիքի կողմերը:

Բէյթազ<sup>13</sup>-Քեսապի (Սուեթիայի) շրջանում, ծովի մօտ, հայ գիւղերու երկու խմբակներ՝ միմեանցից մի օր տարածութեան վրայ, ամէն մէկ շրջանը 1400-1500 տնով. դիրքը լաւ է, ծովի ափին, բայց հացը միշտ գնուում է 1-2 օրուայ տարածութիւնից եւ շրջապատող Փելլաճ ազգաբնակչութիւնը անհամեմատ աւելի բազմաթիւ է:

Վերջին երկու շրջանները (Չ[ոք]Մարզուանի եւ Քեսաբի) կարող են նպաստել փոխադրութեան, գուցէ եւ ընել որոշ յարձակողական քայլեր՝ Իսկենտէրուն (Հալէպի ճանապարհին կամ Իսկենտէրունի վրայ), մանաւանդ եթէ կոնակ առնեն դրսից եկած օգնութիւնէ: Վերջապէս Չրվէժ, Կարաւան, Խոր Վիրապ<sup>1</sup> (4-5000 տնով) լաւ ցուցական վայրեր են...:

<sup>\*</sup> Ժամը մօտ 4 քիլոմետր է:  
12.- Սիւ-Կարս. Կարս կամ Կարս Պազար կը կոչուր Աճար-գաբա բերդէն հիւսիս, Սիսի մերձակայ աւանը:  
13.- Յաւաճօրէն Պիթիաս (Բէթիապ):

**Թեղ(ԱֆոնԱկԱն) ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ.** — Ատանայի վիլայէթում թալանը չյաջողողութեց կոտորածներով (ծովը մօտ էր եւ վալին՝ համեմատաբար բարեխիղճ). Հալէպի շրջանը սարսափելի ջարդ կրեց՝ Ադեամանը ոչընչացաւ, Ուրֆան ողջակէզ եղաւ, Այնթապը, Մարաշը, Քիլիսը եւ բոլոր գիւղերը կորցրին իրենց աշխատողներու 1/10 մասը. իսկ թշնամու կորուստը հայ կորուստի 1/10ին հազիւ հասաւ: Բացառութիւն կազմեց Ուլնիան, դիմադրեց Չոք-Մարզուանը, չտուժեց Բէյթազը:

Ատանայում համեմատական ապահովութեան պատճառով, Հալէպ մի տեսակ շրջանով թէ բարոյապէս շատ ինկած ըլլալով, հայերը չօգտուեցին անցեալի դառն փորձէն: Այսօր նրանք աւելի չեն զինուած քան 10 տարի առաջ, աւելի գիտակից, աւելի սերտ չեն կապւած միմեանց հետ քան կոտորածներէն առաջ: Ուլնիացիք իսկ ձեռք գցած արագածիզ հրացաններից (100-200?) 1/3-1/2-ը ծախած են: Ամէն մէկը խլուրդի նման մտած է իր բոյնը, չի տեսնում լոյս աշխարհ, չի բացուում եղբորն իսկ: Հատ ու կտոր մտածող, երազներով օժտուած անհատներն իսկ գիրք-թերթ «սկզբունքից» (գուցէ եւ չափազանց վախից) չեն տարածուած, որպէսզի գոնէ այդ միջոցաւ զարթնէր պաղած ու ստրկացած զգացմունքը: Հնչակ(եան)ները անցեալում բաւականին աշխատած են, բայց աւելի շատ դրամներ ծախսած ու խաբուած: Ներկայումս էլ գալիս-գնում են, ալ ու ձախ դրամ են չպրտում... Աւելի աշխատում են Խոր Վիրապի կողմերը: Նրանք ունեցած են մարմիններ ամէն տեղ, որոնք շատ տեղեր կոտորածների դէպքում կենդանի մեռածներ հանդիսացան... Վերջերս մեր ունեցած խմբակները (Հովիտ, Խոր Վիրապ, Սահմանաբերդ)<sup>1</sup>, որ մեծահնչիւն անուններ են կրած, նոյնպէս չեն ունեցած որոշ եւ նպատակաւոր մար ուղեցոյց, կամ իրենց անելիքի գիտակցութիւնը: Դաշնակցական մի խմբի «անդամ» միամտորէն հարցնում էր, — «ինչ եղաւ Հնչակը» (այսինքն՝ յեղ(ափոխական) գործունէութիւնը)... Ամէն ինչ սպասուել է Պատ(ասխանատու) Մարմնի «հրահանգներից», կամ աւելի ճիշդ կապուած է եղել դրսից ստանալիք խոշոր գումարների յոյսի հետ: Դաւադրական եւ գաղտնապահութեան իբր թէ ըմբռնումից՝ ամէն ինչ կենտրոնացած է եղել մի մի անհատներու ձեռք, առանց դրսի կամ գոնէ տեղի ընկերների խորհրդի եւ կոնտրոլի: Մտածուել է ոչ այնքան ընկերներ համոզելու, հայ ժողովուրդը տեղական միջոցներով զինելու, նրա գիտակցութիւնը բարձրացնելու վերայ, ինչքան՝ գոլշուրթեան, թէկուզ այդ գոլշուրթիւնը հասցընէր մեռելութեան...:

Մարդոց ամէն մի քայլը գնուել, վարձուել է կարծես: Հարիւրաւոր Ֆրանկ աշխատող մարդիկ ձեռքներում չօգտակելով Հարիւրաւոր ոսկիներ կամայակամայ գայթակղուել են, դարձել են ձրիակերներ, յանցաւորներ:

Մեր տասնեակ հազար ծախսած գումարների 9/10 մասը գնացած է «գործիչների» աղալական ապրուստի, ճանապարհորդութեան վերայ, ան էլ դուրսը կամ ծովեզերեայ հայազուրկ քաղաքներում: Ամիսը 1-2 ոսկի աշխատող նախկին արհեստաւոր Ռահվերդ<sup>14</sup> (վաճառականի դիրքը պահելու համար՝ իբր թէ) 1904ին միմիայն անձնական ապրուստի ծախս է ցոյց տուած ամիսը 150 Ֆրանք (7 ոսկիէն աւելի...): Արծուաբերդի շրջանին անցեալներում յանձնուած 200 լիրայից 130ը գնացած է «գործիչ» Աշոտ Լեւոնի ապրուստի եւ 70ը միայն յանձնուած է տեղացիներին, որոնք «կ'ըսեն» թէ գնած են մի քանի արագածիզ հրացաններ, մի քանի թաղիք վառօղ: Վախենում ենք վերջերս արծ[ուա]բերդցուն յանձնուած 200 ոսկիները եւս չծառայեն մեր նպատակին: Միթարուենք որ գոնէ արիւն թափած Արծուաբերդի է յանձնուած եւ ոչ թէ մի «գործիչի»: Ունենք եւ մի այլ տեսակի չարիք թէ թիւրիմացութիւն: «Երկիր» մտնելը, — ինչպէս Բորիսը<sup>15</sup> կ'ըսէր, — եղել է մի բաղձանք, քիչ է մնում՝ երազ, եւ մենք մոռացած ենք եղել, կարծես, որ մտնելը չէ մեր նպատակը այլ գործելը, որը կարելի է անել միայն հայ ժողովուրդի մէջ ապրելով: Ամիսներ, տարիներ մարդիկ ճանապարհորդել են, մտել են ներս այլ ազգի անուան տակ, հազարաւոր աշխատողներու մէջ չեն գտել ոչ մի զբաղմունք, ծախսել են հազարներ, եւ... վարժուել պարապութեան, հարստացրել օտար դահլիճիներին...: Հետեւանք մեր առջեւն է:

Հովտի նման համեմատաբար ազատ վայրում, մեր «ամենաուժեղ» մարմինը դեռ այնքան թոյլ է, որ մի ամսուայ ընթացքում չկարողացաւ վարձով գտնել մի հաւատարիմ կաթրջի<sup>16</sup>, պահել մի փախտական ընկերոջ, ապահով տեղ դնել մի քանի տասնեակ հրացան... Արծուաբերդի նման կարեւոր վայրում չունինք մի մարդ, իսկ օտար Մոցում<sup>1</sup> եւ դրսում՝ «ընկերները» ճանձրացել են երեւի միմեանց հանդիպելուց:

**ՄԵՐ ԲՈՆԱՄ ՈՒՂՈՒԹԻՒՆԸ.** — Քանի մօտէն էինք ծանօթանում գործերին ու մարդկանց, վերը նկարագրուած դրութիւնը ստանում էր աւելի եւ աւելի մուժ գոյն: Հարկաւոր էր ոչ միայն բռնել նպատակաւոր մար ուղղութիւն, այլեւ մաքրել մեր միջոցաւ վարձկանական հողի վրայ դրուած ձեռնարկներից, անմաքուր անհատներից:

Յեղափոխական պրոպագանդը լայնացնելու համար, սկսած ենք մի քիչ տարածել թերթեր-գրքեր: Տե-

14.- Ռահվեր. բուն անունով Միսաք Վարդաճեան՝ Կիլիկիոյ հին գործիչներէն, որ կը համարուի Դովիտի (Այճապ) Դ. 3. Դ. կոմիտէից հիմնադիրը:  
15.- Սմբատ Խաչատրեան:  
16.- Ջորեպան:

ղացի շրջիկները, ինչքան էլ թոյլ լինեն, կը նպաստեն ժողովրդի արթնացման: Ընկերների հետ ունեցած տեսակցութիւնների, խորհուրդների, քննութիւնների շնորհիւ, գործի գիտակցութիւնը աւելի ընդգրկուած է: Դաշտ, Հովիտ, Խոր Վիրապ, Հաւանաբար եւ Սահմանաբերդ, Մոց՝, աւելացած է ընկերների թիւը, հասկացուած է ընկերական խորհրդակցութիւնների, հաւաքական պատասխանատուութեան, ինքնավար գործունէութեան անհրաժեշտութիւնը: Խոր Վիրապը ինքն է վճարելու իր շրջիկների ծախսը՝ իր միջոցներով խնդրում է գնել 50 հատ ատրճանակներ...

Անցեալները Երկրում<sup>17</sup> աշխատած ընկերների առաջարկութեամբ ու պնդումով, 1904ի Օգոստոսին տուած որոշումը՝ ներս մտցնել որոշ քանակութեամբ ապրանք, հաւանականօրէն յետաձգուել, մինչեւ որ միջնորդ մարմինները իրենց թուի եւ գործունէութեան լայնացումով ապացուցեն իրենց ուժը, հասունութիւնը, փորձառութիւնը:

Հաշիւների քննութիւնը կատարուում է (եւ ապագայում էլ կը կատարուի) ըստ Դաշնակցութեան սովորութեան՝ ընկերաբար, անկողմնապահօրէն, բայց առանց երկդիմի փարիսեցիութեան: Դառն սխալները ու կատարուած գեղձումները գուցէ մեզ հետո պահեն ապագայ նոր չարիքները:

Գործը ճշմարիտ ուղիի վրայ դնելու համար, մենք կանգ ենք առած մի քանի որոշումներու վրայ, որ անհրաժեշտ է գիտնալ եւ ձեռք միջնորդութեամբ եկող ընկերներին:

ա) Աշխատելու եւ գործ ունենալու ենք միմիայն անպայման մաքուր եւ զոտաբերութեան պատրաստ անձերու հետ: Բոլոր կարգի գործող եւ կազմակերպութեան հաշուով ապրող դաշնակցականները, ինչպէս առհասարակ, այնպէս էլ իրենց առօրեայ ապրուստի մէջ ընելու են զոհաբերութիւն: Նպաստ ստանալու են միմիայն մի քանի շրջիկ ընկերներ: Միւս, որոշ վայրերում հաստատուած ընկերները, ապրելու են արհեստով, կամ այլ աշխատանքով, չքաւորութեան դէպքում ստանալով միանուագ նպաստ (10-15 ոսկի)՝ գործ կամ արհեստ սկսելու համար:

Արտասահման գործի համար ժամանակաւորապէս մնացողներու անձնական ամբողջ ծախքը սահմանափակուելու է անհրաժեշտ որոշ գումարով (մօտ 100 Ֆրանք): Դրսից սպասուելիք միջոցները գնալու են միայն այն վայրերին, որոնք բռնելու են յարձակողական դիրք:

Պատասխանատու Մարմինն մասնակցում են այն մարմինները, որոնք նուազագոյն պահանջներու համեմատ արժանի են Կ. Կոմիտէի կոչման...

Այս ուղղութեամբ գործը մի քիչ առաջ է գնացած: Սակայն, հաստատ ճանապարհի վրայ դնելու եւ մանաւանդ յաջողութեամբ պսակելու համար, պահանջուում է

դեռ եւս շատ ու շատ աշխատանք, գուցէ նոյնքան ուժեր, որքան մենք տուած ենք Վասպուրականին կամ Սասուն-Մշոյ Դաշտին:

**ՄԵՐ ԱՊԳԱՅ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.** Արծ[ուաբերդ]ի շրջանը ամենայնուայն վայրն է: Նրա վրայ էր կենտրոնացնելու մեր ուշադրութիւնը: Հոն ունենալու ենք ամենայնուայն մարմին, գէթ վստահելի ընկերներ:

Դժբախտաբար մինչեւ օրս դա չի յաջողուած անել... Ձի յաջողուած, ասում ենք, որովհետեւ ամբողջ անցած դարձածից յետոյ դժուար է հաւատալ Աշ[ոտ] Լեւոնի ասածներուն՝ Արծ[ուաբերդում] մեր ունեցած մարմիններու կամ գոնէ ընկերներու գոյութեան մասին... Ի դէպ, Արծ[ուաբերդի] վստահելիներէն մին (Սահմանաբերդ 22, 21, 10', 63, 37, 41, 74, 43, 79, 73, 75, 37, 54, 87, 79, 25, 41, 23, 25, 59-եան<sup>18</sup>, որին յանձնուեց 200 ոսկի), 3 ամիս առաջ Հովտում կարծիք էր յայտնած, որ մինչեւ իրենք ներսում պատրաստուած չլլան, դրսից ապրանք ստանալը վտանգաւոր է՝ քանի գէնքի առաջին ձեռքակալութիւնը յանկարծակի յարձակում առաջ կը բերէ տէրութեան կողմէ... Դա գուցէ անհաւանական չէ, բայց գուցէ եւ դրամ պոկելու պատրուակ է: Իսկ քանի որ առանց լուրջ պատրաստութեան, Արծ[ուաբերդ]ը չի շարժուել, եւ եթէ շարժուել էլ աւելի քիչ յաջողութիւն կ'ունենայ քան թէ անցեալում, նախապատրաստութեան հարցը այստեղ ստանում է կարեւորագոյն տեղ: Հարցը ոչ այնքան միջոցներու քանակութեան մէջ է, որքան այդ միջոցներու նպատակայարմար եւ բարեխիղճ գործածութեան:

Աշխատում ենք նախ տեղացիներից հաստատել հոն մի երկու լեզալ ընկերներ, որպէսզի ապրելու համար ունենանք ապաստարան: Երբ դա յաջողուելի՝ կը գնայ մեզմէ մին եւ կապուելով տեղացիներու հետ, կը սկսէ պատրաստութեան գործը... Այլ ճանապարհ առաջօրէն չի գտնուում: Մոռնալու չէ նաեւ, որ առանց մի քանի տասնեակ տաք անձնուէրներ գտնելու, դժուար է յուսալ որ Արծ[ուաբերդ]ի հարուստները հարկ եղած դէպքում դիմեն իրենց համար վտանգաւոր քայլի եւ չվստենն հեշտութեամբ ստացուող ոսկիները...

Սակայն Արծ[ուաբերդ]ի ինչպէս եւ այլ վայրերի) դրութիւնը հիմա աւելի ծանր կը լինի, քան թէ 10 տարի առաջ էր: Տէրութիւնը արթնացած է. նա հաստատած եւ աւելացրած է դիտանոցների թիւը ամբողջ ծովեզերքում, հիմնած է պահականոցներ քաղաքների գանազան թաղերում, շատացրած է զօրքի ու ռազմամթերքի քանակը բոլոր հայաբնակ կէտերում (Հաճըն, Մարաշ,

17.- Կուսակցական գրականութեան մտք եւ առ հասարակ «Երկիր»ը Արեւմտեան Հայաստանն է, Կիլիկիոյ համար եւս կ'ըսուէր Երկիր:

18.- Ձաւարեանի գործածած ծածկագիրը (chiffre) մեզի անծանօթ է դժբախտաբար:

Միս, Չ[որք]-Մարզուան, Ջէյթուն), տեղաւորած տասնեակ թնդանօթներ՝ Ջէյթուն, նշանակած խիստ հսկողութիւն ամէն տեղ:

Որսպէսզի Ար[ծուաբերդը] դիմանայ եւ մի բան կատարէ, նրան օգնելու է եւ ուղղակի կերպով՝ գէնք հայթայթելով, եւ կողմնակի միջոցաւ՝ շարժելով այլ վայրեր, կատարելով այլ ձեւի ձեռնարկներ: Ո՛րտեղ, ի՛նչ ձեւի, հիմա դժուար է ասել: Դա կախուած կը լինի ապագայ տեղական մարմինների ուժից, հասունութիւնից: Այդ մարմինների կազմը լինելու է մեր նպատակի երկրորդ մասը: Ծատերը կ'ըսեն՝ դա շատ անորոշ է, դա ցրուել է, մեր ուժից վեր է: Գուցէ: Բայց եւ այլ ուղղութիւն բռնելը աւելի սխալ կը լինէր, դժուար թէ յաջողէր: Մոռնալու չէ, որ մեր գործունէութեան ամենաթոյլ կէտը յեղ[ափոխական] գիտակցութեան բացակայութիւնն է, որը անխախտ կերպով կապուած է մեր ժողովրդի ճնշուած, յուսահատ հոգեբանական դրութեան հետ, դրութիւն՝ որը մի տեսակ հիպնոզի է ենթարկում նրան: Ոչ մի տեղից օգնութիւն չսպասող, միմեանցից կտրուած, դիմադրութեան գիտակցութիւնից զուրկ հայերը շփոթուեցին, սարսափահար եղան, ունեցած գէնքերն իսկ չգործածեցին, եւ մորթուեցին՝ համարձակ, համերաշխ, իր ուժին վստահ թշնամուց: Յեղ[ափոխական] կազմակերպութեան նպատակն է լինելու՝ կապ ստեղծել մեր ժողովրդի ցրուած մասերի մէջ, համոզել որպէսզի նա գիտնուի ինչով էլ լինի (թէկուզ ամէն տեղ վաճառուող արժան չիթիաներով), որպէսզի նա դիմադրէ իրեն սպանողին, օգնէ մորթուող հայուն:

Քանի այս գաղափարը տարածուի, թէկուզ միմիայն ինքնապաշտպանութեան հողի վրայ, առանց կապի յեղգործունէութեան հետ, այնքան աւելի կը բարձրանայ նրա ինքնավստահութիւնը, նոյնքան աւելի կը հաստատուի համերաշխութիւն նրա ցրուած մասերի մէջ, այնքան աւելի կը զարգանայ իրա յեղ. գիտակցութիւնը եւ այնքան աւելի մենք մօտեցած կը լինենք մեր նպատակին\*:

Բացի Արծ[ուաբերդում] տեսնուելիք պատրաստութիւնից, տեղական մարմինների կազմակերպումը՝ ինքնապաշտպանութեան հողի վրայ կազմելու է մեր կառուցելիք տան հիմքը: Յետոյ կը պարզուի, թէ բացի դրանից ի՛նչ կարող է անել ամէն մի շրջան, ամէն մի վայր: Ժամանակը ինքը կ'որոշէ ամէն մէկի ճիշտ դերը: Աւելորդ է յիշել որ այդ ուղղութեամբ աշխատանքն իսկ մենք տալու ենք նախ մեզ պէտքական վայրերուն, տեղացի ընկերներու միջոցաւ: Մեր կարեւոր ոյժերը, համարեա բոլոր միջոցները գնալու են յուսալի վայրերու վերայ, որոնցից ամենակարեւորը Արծ[ուաբերդն] է երեւում:

Համոզուած լինելով հանդերձ, որ մեր ձեռնարկը կը հանդիպի շատ խոշորդոտների եւ գուցէ կամ չյաջողուի, կամ բռնուի օր առաջ՝ հակառակ մեր ցանկութեան,

վրժի առանց հասունացած լինելու, մենք գնալու ենք այս ուղղութեամբ:

Այսօր նա ծանր, ոչ այնքան որոշ է՝ վաղը յուսանք կը լինի աւելի պարզ եւ աւելի դիւրին:

**ՄԵՐ ԿԱՐԻՔՆԵՐԸ.** Ինչպէս տեսնում էք, գործը ծանր է եւ պահանջում է մեծ աշխատանք:

ա) Տեղի ուժերը շատ սակաւ են, դրսի աշխարհից քիչ բան գիտցող, անփորձ եւ «զոհաբերութեան» մասին մոլթ գաղափար ունեցող: Ուսանողութիւնից մի բան դուրս կը գայ, բայց դա էլ պահանջում է ժամանակ: Վերջապէս, ի՛նչ են տալիս Ռուսաստանի 500 եւ Եւրոպայի 200 ուսանողները (որ համեմատաբար աւելի լաւ պատրաստուած են եւ աւելի նպաստաւոր միջնորդուում են ապրում), որպէսզի մեծ յոյսեր դնենք տեղիս աշխատանքով ծանրաբեռնուած մի քանի տասնեակ երիտասարդներուն վերայ:

Մեր պակասը լրացնելու համար, մեզ պէտք են ոյժեր դրսից: Թող հասարակ մարդիկ լինեն դրանք, բայց մաքուր, անձնուէր, գինուորական-տեխնիքական պատրաստութեամբ եւ երկրացի: Մարդկանց հետ տեսնուելու, քարոզելու ու կազմակերպելու, կասկածներից զերծ մնալու համար նրանք վերջ ի վերջոյ ապրելու են իբրեւ հայեր, պարապելու են որեւէ արհեստով\*\* աշխատելու են իրենց հացը:

Աշխատանքը անհրաժեշտ է նրա համար, որպէսզի պարապուելից մարդիկ չփչանան, ճրիակներն եւ վերջը յանցաւորներ չըսուան, որպէսզի վերջ դրուի վարձկանական-կապալառուական ուղղութեան եւ որումը ջոկուի ցորենից, որպէսզի կրճատենք «կազմակերպական» ծախքերը:

Վերջապէս, յեղափոխութիւն (այսինքն՝ ապագայ նիւթական եւ բարոյական բարիքների համար այսօր աւերում եւ արիւն) քարոզողը, ինքը իր կեանքով օրինակ է տալու այդ զոհաբերութեան: Այլ կերպ, նա կը նկատուի պոռոտախօս, նոր ձեւի խաբեբայ...

Ամերիկայում այս շրջանից շատ մարդ կայ. պրոպագանդը ուժեղ է. հիմնուած էր անձնուէրների բանակ: Պատրաստները, լաւագոյնները, մեր դրած պահանջներին համապատասխանողները ներս են գալու: Ներկայ մեր նախապատրաստական շրջանում, հաւանաբար եւ ապագայում, մեզ աւելի կարեւոր է ստանալ 5 հազար Ֆրանկ եւ 5 յարմար մարդ, քան թէ 50,000 Ֆրանք

\*) Համեմատեցէք Մշոյ Դաշտի հայութեան յեղ. գիտակցութիւնը հիմա եւ 3-4 տարի առաջ

\*\*) Յարմարագոյն արհեստներ է համարելու՝ նախած տեղին... [շարունակուած չէ, հաւանաբար նախապէս յիշուած կամ յաջորդող տեղում մտք մշուած ըլլալու պատճառով]:

առանց մի մարդու: Գուրգը սպասող ընկերները (Տիրանը, Մարթինը, Սարհատը, Յարութինը) վատ չեն, բայց վախենում ենք որ մեր դրած պայմաններին չկարողանան կամ չուզենան բաւարարութիւն տալ եւ հետեւաբար մնան գործից դուրս:

Բացի այդ համեստ ոյժերից, շրջանս պէտք ունի եւ մի երկու փորձուած ու կրթուած թարմ ընկերների՝ Պատասխանատու] Մարմինն անդամակցութեան համար: Քաղաքավարութիւնը մի կողմ թողնելով, խոստովանուելու է որ եղածները շատ տրորուած են, եթէ չասենք կիսաքայքայուած, չեն կազմում գործին պէտք ուժ, թիւ եւ առողջութիւն, վտանգի կամ այլ պաճառներից հեշտութեամբ կարող են ասպարէզից դուրս նետուել...

բ) Վերը յիշուած էր, որ եկողները լինելու են լաւ մասնագէտներ մեզի համար կարեւոր ճիւղերից մէկում, կամ գործնապէս ծանօթ լինելու այդ ճիւղերից գլխավորներու հետ: Մինչեւ օրս եկածները չեն ունեցած ամենատարրական պատրաստութիւնն իսկ ունէ գործ, ձեռնարկ յաջողութեամբ կատարելու համար: Միայն պարապ խօսելու եւ անձնագրհոլութեան պատրաստակաւութեամբ (եթէ ընդունենք իսկ դրա գոյութիւնը) դժբար է թշնամու հետ մաքառել:

Բացի այդ, լաւ վառող պատրաստել, փամփուշտ լցնել ու հրացան քանդել-կապել գիտնալով, մի ուրիշ պատրաստելով, խրամատ շինելով, հասարակ զինուորական քարտէզի նախագիծ կազմելով, մի երկու կրուում մասնակցած լինելով, աւելի դիւրին կարելի է մարդկանց համոզել, իսկական յեղափոխական ընկերներ գտնել, քան թէ միմիայն խօսքի պրոպագանդով:

Մենք քիչ ենք. թուի պակասը լրացնելու ենք գոնէ լաւ պատրաստութեամբ. օգտուելու ենք գոնէ ուրիշների տուած փորձից, տեխնիքայի հայթայթած ուժից, կրուի ասպարէզ ենք դուրս գալու կրուած ու կոփուած:

Սմբատը<sup>19</sup> ժամանակին ըրած էր այդ մասին մի գործնական առաջարկութիւն: Արեւմտ. Բիւրոյի ըրած աւելի դիւրին իրագործելի ճամբան բաւարարութիւն չտուեց հէնց առաջին քայլից:

Սարհատ, Մարթին, Յարութին, Տիրանը ցանկութիւն ունեն ներս գալու, ծանօթանալու մեզ պէտք եղած ճիւղերին եւ պարապութիւնից հաւանաբար ձանձրացել են: Սոֆիայից — ուր գտնուում էր մասնագէտը — Աթէնք մի քանի օր էր միայն եւ մեր միակ մարդը ստիպուած եղաւ բաւարարութիւն չտալ մեր պէտքին:

Մասնագէտների պատրաստութեան հարցը ինչ գոհաբերութիւն էլ պահանջուի դնելու է դրական եւ գործնական հողի վրայ: Հերիք է ինչքան, 15 տարուայ ընթացքում, «չտապեցիւք» եւ «եղա տանելով միայն բաւականացանք:

Ի դէպ, Վարդանը<sup>20</sup> մեծ կարեւորութիւն է տալիս փամփուշտի գիլգաներ<sup>21</sup> շինելուն, ներսը: Սասունցիք

փորձով կը շեշտեն դրա կարեւորութեան եւ լրջութեան վրայ: Նոյնը հաւանաբար եւ վանեցիք: Գործը շատ բարդ է, որպէսզի անկարելի լինի պարզ ձեւի փոքր եւ թեթեւ մի համապատասխան մեքենայ շինել տալ: Վառողի պատրաստելն էլ Եւրոպայում կատարուում է միլիոնաւոր կապիտալ եւ հարիւր ու հազարաւոր բանուորներ ունեցող գործարաններում, իսկ հայ ժողովուրդը նոյն բանի համար գործ է ածում իր կոպիտ ձեռքերը, մի ֆրանկնոց հաւան<sup>22</sup> եւ իր խրճիթի անկիւնը: Նոյնը կը լինի երեւի եւ փամփուշտ շինող մեքենայի հետ: Մեզ պէտք պարզ ու փոքր մեքենան 1000ի տեղ թող շինէ 100 հատ, մի կոպէկի տեղ փամփուշտը թող մեզ նստի 2, 5, 10 կոպէկ, բայց մենք ասպարէզ լինենք:

Աշխատէք եւ կը գտնէք\*:

Մի մոռնաք, որ այդպիսի մեքենայ պէտք է ոչ միայն մեզ, այլեւ Շամ<sup>23</sup>, գուցէ նոյնիսկ Պարսկաստան:

Բացի այդ, որպէսզի մեր շրջանի գործը ունենայ յաջողութիւն, աշխատելու ենք ապագայում ներս մտցնել արշաւախմբեր դուրսից: Աշխարհագրական դիրքը դրան նպաստում է Մեծ Հայաստանից ոչ պակաս: Այդ տեսակ քայլը ոգեւորութիւն առաջ կը բերէ ներսեցոց մէջ, կը լրացնէ նրանց տեխնիքական հմտութիւնը եւ ռազմական պաշարը, գործի կը դնէ դրսում եղած ոյժերը:

Ուստի, ներսի ապստամբութեան հետ միասին, կազմակերպելու է զինուորական ոյժ եւ դրսում: Եւ, քանի որ նոյն բանը անհրաժեշտ է եւ կովկաս, քանի որ ընդհանրապէս ստրկացած հայի ոգին զինուորական կրթութիւնն ու զէնքը միայն կարող է մաքրել ու բարձրացնել, դաշնակցական բոլոր մարմինների գործունէութեան մէջ այդ հարցին տալու է առաջնակարգ տեղ: Գուցէ վատ չլինէր հաստատել զանազան վայրերում բուն զինուորական մարմիններ, պահել յատուկ ինստրուկտորներ, կազմակերպել զբաղումներ ապագայ խմբապետացուներու հետ եւ այլն: Եթէ չենք կարող հիմնել մի կենտրոնական հայկական զինուորական ակադեմիա<sup>24</sup>, գէթ մի քանի վայրերում (Սալմաստ, կովկաս, Բուլղարիա, Եգիպտոս, Ամերիկա) հաստատելու ենք մասնագէտ-ինստրուկտորներ զինուորներին եւ մանաւանդ ներս մտնողներին գործնականապէս եւ

\* Հարցրէք Սոֆիա՝ Տիֆլիսէլից, Փարիզ՝ գէնքի վաճառականից, Բերն-Յիւրիխ՝ զինագործներից:

- 19.- Արդեօ՞ք Սմբատ Օհանեան (ի՞նքը՝ Սիմոն Ջաւարեանը):
- 20.- Սարգիս Սեհրաբեան, Խանասորի Վարդանը, որ անդամ էր Լեւոնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու Մարմնին:
- 21.- Սետաղեայ պատեան փամփուշտի, պարկուճ:
- 22.- Սանդ:
- 23.- Վան-Վասպուրական:
- 24.- Յաջորդ տարին (1906) Պուլկարիոյ մէջ պիտի հիմնուէր «Գ. Յ. Դ. զինուորական վարժարան»ը:

յատկապէս պատրաստելու համար: Դառը փորձերը ցուցում են ակներեւ, որ մինչեւ թուրքիայից դուրս չունենանք մի քանի հազար հոգուց բաղկացած, լաւ պատրաստուած, ազգային փրկութեան զինուորական բանակ, կամայ ակամայ դատապարտուած կը լինենք միմիայն ցոյցեր կատարելու եւ կոտորածներ տալու<sup>25</sup>:

Դրանի վրայ երկար կանգ չենք առնում: Նախ, որովհետեւ մեր դրամով ուժեղացած դրսի (մի քիչ էլ ներսի) մարմինները, յուսով ենք, առաջմաս գործի պահանջին բաւարարութիւն կը տան: Երկրորդ, որովհետեւ խոշոր գումարների ձայնը եւ ստացուած հարիւրաւոր ոսկիները նպատակայարմար գործածութիւն չգտան, այլ ընդհակառակը:

Միւս շրջաններու մեր գործունէութեան մասին դժբարանում ենք ունէ հաստատ բան առաջարկել: Մեզ թւում է որ ապագայ ժողովրդական շարժման մէջ ամենամեծ դերը խաղալու է Շամը՝ շրջակայքներով: Եթէ յաջողուի այնտեղ հաստատել բուն զինուորական վարչութիւններ, եթէ կարողանանք պատրաստել մի քանի տասնեակ մասնագէտ-արհեստաւորներ եւ ներս մտցնել բաւականին քանակութեամբ պայթուցիկ նիւթեր եւ այլ ռազմական պաշար\*, անհաւանական չէ որ Շամը իր շրջանով արտադրէ մինչեւ օրս չտեսնուած հայ կրուող ուժ:

Յուցակաւ ձեռնարկները խոշոր ծովեզերեայ քաղաքներում շարունակելու ենք:

Բիւրո-խմբագրական գործերի նկատմամբ մեր կարծիքը նա է, որ հետեւելու է Ը[նդհ.] Ժ[ողով]ի տուած որոշումներին ապագայ հրատարակութիւնների նկատմամբ: Բիւրո-խմբագրութեան անդամների մի մասը լինելու են երկրի պայմաններին լաւ ծանօթ ընկերներ, աւելի լաւ է՝ տաճկահայեր: «Դրօշակ»ի ընդհանուր յօդածների գէթ կէսը տպագրելու է արեւմտ[ահայ] բարբառով:

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

1) Ը[նդհ.] Ժ[ողով]ի նախագծած բիւտձէի համեմատ, Լեւոն[ավայր]ի շրջանին դրամական օգնութիւն էին հասցնելու Ամերիկայի, Պայքանների Կ. Կ[ոմիտէ]ները, Եգիպտոսը, Արեւել[եան] Բիւրոն եւ Դրամ խումբը<sup>26</sup>: Դոցանից միայն առաջինը եւ վերջինն են որոշ չափով օժանդակած: Ինչքա՞ն է եղել եւ ո՞ւր է միւս մարմիններու հասոյթը: Կարո՞ղ ենք արդեօք յուսալ, որ ապագայում կազմակերպութեան որոշումները կ'իրագործեն:

2) Քննա՞ծ է արդեօք Արեւել[եան] Բ[իւրո]ն Ռուսաստանի Կ. Կ[ոմիտէ]ներու հաշիւները, եւ մասնաւորապէս ի՞նչ վախճան ունեցաւ Նաւահանգստում տեղի

ունեցած դրամի անհաշիւ ծախքի թէ վատնման հարցը (Կարախան... եւ այլն):

3) Օտեսա եւ Ռոստով աքսորուած նախկին մեր ընկերները վերադարձրի՞ն արդեօք իրենց վրայ մնացած գումարները:

4) Ի՞նչ վախճանի յանգաւ Արսէնի դէմ բացուած քննութիւնը գէնքերի իբր թէ վաճառման առթիւ:

5) Դիմադրութեան ցոյցերի առթիւ Երեւան-Գանձակ ուսու փաստաբաններին յանձնուած խոշոր գումարը կոնտրոլի ենթարկուե՞ց թէ չէ (Արեւել[եան] Բ[իւրո]յին յայտնի է որ այդ հարցում չօշափուած էր մեր ընկերներից մէկի պատիւը):

6) Սեւ Աշոտի ընտանիքին Վիշապի մարմնոյ<sup>27</sup> կողմէ տրուա՞ծ է եղել արդեօք նպաստ. ինչքա՞ն. ի՞նչ բացառիկ պատճառներից դրողուած եւ ի՞նչ դիրք ենք բռնելու մենք նոյնանման ուրիշ ընկերների վերաբերմամբ:

7) Ի՞նչ յարգելի պատճառներից Արեւմտ[եան] Բ[իւրո]յն չունեցաւ որոշուած կազմը, բաժանումները եւ չկատարեց իր վրայ դրուած պարտականութիւնների մի մասը:

8) Ինչքա՞ն են ծախսած իրենց անձնական պէտքերու վրայ Յունաստան ապրող Վիշապի մարմնի անդամները:

ՍՄԲ[ԱՏ] ՕՀ[ԱՆՏԱՆ] ՎԱՐԴԱՆ

\* Սոֆիա մեր ունեցածի նմանը կարելի է նոյնիսկ Պարսկ[աստան] պատրաստել:

25.- Այստեղ կ'աւարտի Ջաւարեանի ձեռագրին 15րդ էջը: Լուսանցքին մէջ (աջից) արծաճագրուած է հետեւեալը, որ կը փաստէ որ Դաշնակցութեան խորհուրդին ուղղուած այս գրութիւնը պաշտօնական տեղեկագիրն է Լեւոնավայրի Պատասխանատու Մարմնին, « 1-15 երեսները կարդացած եւ համաձայն եմք. ՍՄԲ. ՕՀ. (ՍԻՍՈՆ) - ՎԱՐԴԱՆ: Գամաճայն եմ. ՇԱՏԻՎ: Տեղական մարմնի կողմէ՝ ՅՕՇԱՆ եւ ՅԱՐԻԹԻԻՆ: Յաջորդող երկու էջերը (16 եւ 17) ստորագրուած են Ջաւարեանի եւ Վարդանի կողմէ միայն:

26.- Ամենայն հաւանականութեամբ «Փոթորիկ»ի մարմինը: 27.- Սեւ-Աշոտը Կարապետ Եղիկեանն է. Վիշապը Կ. Պուլտոյ կուսակցական ծածկաւորն է, իսկ Վիշապի մարմինը՝ Յուցական մարմինը, որուն անդամներն են մէկն էր Սեւ-Աշոտ:



Փաստ. - 949-43

### Գ 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԼԵՈՆԱՎԱՅՐԻ ԾՐՁԱՆԵՆ՝ ՀՈՎԻՏ, ԳԱՇՏ, ԽՈՐԾ ԵՒ ԱՐԾՈՒԱԲԵՐԳ՝ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1.- 1903ին իբրև հայ յեղ. կազմակերպութիւն Հովտի մէջ գոյութիւն ունէր ութ ընկերներէ բաղկացած շրջան մը, որոնց երկուքը գործին տեղեակ ընկերներ իբրև բժշկական) ուսանող կը գտնուէին Մոց<sup>1</sup>: Կազմակերպելու, ներքին ու արտաքին յարաբերական դերը իր վրայ առած էր - եւ կամ յանձնուած էր իբր դրսէն եկող ընկեր Ռահվերին<sup>2</sup>: Չնայելով որ Ռահվերը 1900ին Երկիր մտած էր՝ գործը միայն իւր վրայ վերապահելու մարմաջէն բռնուած եւ անգիտակից պահելով միւս ընկերները գործէն, չկրցաւ ակնկալեալ արդիւնքը ձեռք բերել այս երեք տարուայ միջոցին մէջ: 902 եւ 903 թուին Մոցի ուսանող ընկերները դրսի հետ աւելի չփման մէջ գտնուելով՝ աւելի տեղեկացան Հ. Յ. Դ. եան կազմակերպական գործերուն հետ. որով երբ հայրենիք վերադարձան գործին աւելի սերտիւ փարեցան եւ տեղական ընկերներն ալ քաջալերեցին դէպի նշանաբանը:

Սահմանաբերդ իբր գործիչ ղրկուած լլլալով Աշոտ Լեւոնը, նոյն վերաբերմունքը ունեցած է գործի նկատմամբ՝ ինչպէս Ռահվերը. գործին որոշ տրամադրութիւն ցոյց տուող ընկերները անգիտակ պահելով անցուղարձերուն հետ՝ խաբած են իրենց փքուն նամակներով դրսի մարմինները ու գործի անուան ներս փոխադրուած դրամները իրենց անհատական ծախքերու ու քմահաճ բաներու ծախսելէն զատ բուն գործի պէտքերուն գրեթէ ոչինչ են յատկացուցած:

Այս բոլոր տարիներուն ընթացքին մէջ երեսի վրայ թողուած էր Դաշտը<sup>1</sup>, կազմակերպական եւ յարաբերական տեսակէտով: Չնայելով որ Ռահվեր քանիցս անձամբ Դաշտ այցելած է եւ գոյութիւն ունեցող մի ընկերոջ հետ տեսնուած լլլալով հանդերձ ոեւէ թելադրական դեր չէ ունեցած:

2.- 1903ին վերջերը՝ Հովտ-ին Մոց եկան Սարհատը եւ Սիրականը. այս ժամանակամիջոցին Մոց կը գտնուէին Հովտի երեք որոշ ընկերներ, որոնք Մոցի ուսանողներէն կազմած էին յեղ. մի խումբ. Սարհատը մեծ բարոյական դեր խաղաց Մոցի ընկերներու մէջ, զանոնք աւելի գաղափարական եւ գործին ծանօթ ընկերներ դարձրնելով, նամանաւանդ Հ. Յ. Դ. եան եւ կազմակերպական դրութիւնը եւ բարոյական ոյժը եւ գործունէութեան նպատակը մեզի աւելի ծանօթացնելով:

3.- 903ի<sup>3</sup> տեղի ունեցած Ընդհ. ժողովէն վերջ, 904 Յուլիսին ներս եկաւ Սմբատ, անկէ վերջ Վարդանը<sup>4</sup> իբրև Պատ. մարմնոյ ընկերներ. Սմբատ Մոց հասնելէն քիչ յետոյ, տեղւոյն մէջ գտնուած Հովտի երկու ընկերներու եւ Սարհատի հետ միասին կազմած են մի քանի խորհրդակցական ժողովներ՝ ներսի կէտերու մէջ զտնըւած կազմակերպութեան վիճակը քննելու եւ բաւարարութիւն տալու համար: Յաջորդաբար տեղի ունեցած այդ ժողովներու մէջ գոյացած են հետեւեալ որոշումները.

Ա. Գործիչներու խնդիր եւ անոնց կատարելիք դերը:

Բ. Կազմակերպական գործին դրամական պէտքերուն որոշ չափով բաւարարութիւն տալ:

Գ. Թէ տեղւոյն մէջ եւ թէ դրսի ազատ միջավայրէ գէնքեր գնել եւ ներս փոխադրել:

Դ. Մօտէն ուսումնասիրել տեղային կազմակերպութեան վիճակը, եւ մասնաւորապէս Արծուաբերդի հետ սկսած յարաբերութիւնները ամրապնդել:

Այս որոշումներէն իբրև գլխաւոր գործադրութիւն Սարհատը ----- ղրկուեցաւ ----- եւ ներս փոխադ-

- 1.- Յրդ այս բաժնին մէջ ծածկանուցով նշուած տեղանունները կը համապատասխանեն հետեւեալ վայրերուն.-  
Դաշտ - Յալէպ  
Յովտ - Այնթապ եւ շրջակայք  
Խորշ - Քիլիս  
Տելթա - Աղեքսանդրիա  
Օոց - Պէրոս  
Արծուաբերդ - Ձէթուն  
Միջնաբերդ - Յաճըն  
Գեղեղատ - Անտիոք եւ Սուտիոյ հայաբնակ գիւղերը  
Կարմիր-Լեռ - Անտիոք  
Խոր Վիրապ - Ատանա  
Սահմանաբերդ - Մարաշ  
Բերդակ - Չոր կամ աւելի ճիշդը՝ Չորք Մարզուան

- 2.- Միսաք Վարդանեան:
- 3.- Պէտք է լլլայ 1904:
- 4.- Ամբատ եւ Վարդան, Սիմոն Չաւարեան եւ Խանասորի Վարդան:

րելու համար<sup>5</sup>:

Ներսի կազմակերպութեանց իրերու վիճակը քննելու, գորացնելու եւ յառաջ մղելու դերը Սմբատ իր վրայ առած էր, եւ այդ նպատակաւ Սմբատի առաքելութիւնը դէպի Դաշտ, Հովտ, Բերդակ<sup>1</sup> եւ շրջակաները անգոր եղաւ որոշ դեր կատարելու հետեւեալ պատճառներով: Ա. Քանի որ իբրև օտարի (ոչ հայ) Երկիր մտած ու այդպէս ալ կայացած էր միջին կէտերու մէջ՝ Բ. Իւր յարաբերական տեսակցութիւնը տեղային գործի տրամադրութիւն ունեցող ընկերներու հետ, խիստ սահմանափակ ու գաղտնագողի լլլալով, բուն նպատակին թերի ու անօգուտ կարգադրութեամբ յառաջ բերաւ սրխալներ ու փնասներ դրամական ու բարոյական: (ատոնց իբր հետեւեալ Սահմանաբերդի եւ Արծուաբերդի ձեռքաւարութիւնները, որոնք ցարդ տխուր շարունակական վիճակ մը ունին): Նոյնպէս եւ Վարդանի ներկայութիւնը Հովտի եւ Դաշտի մէջ կազմակերպական տեսակէտով որոշ դեր չէ կատարած. գործի օգտակարութիւնը ու ապահովութեան տեսակէտով այս խնդիրներու վերաբերմամբ Շրջ. ժողովիս կատարած քննական ուսումնասիրութիւնը հասցուց զինքը այն որոշման. (տես արձանագրութեան յօդ. 3)<sup>6</sup>, իբրև անպայման պահանջ դրսէն եկող ընկերներէն եւ բացի այդ մեր կազմակերպութիւնը որ սկզբունքով ընդունած եւ գործադրած է գործին նուիրուած գործիչներուն ծախքը հոգալու տեսակէտը, ասոր հակառակ որոշմամբ Սմբատը եւ Վարդանը մեզ կաշկանդած եւ զրկած են այդ միջոցներէն օգտուելու. եթէ ոչ այս վերջին մէկ տարուայ ընթացքին մէջ մենք միջոց պիտի ունենայինք ոչ միայն գորացնելու մեր տեղային կազմակերպական գործերը, այլ նաեւ շրջակայ վայրերը, որոնք երեսի վրայ կը մնան: (Այս մասին իբրև որոշում Շրջ. ժողովին տես յօդ. 1)<sup>6</sup>:

Կազմակերպութեան հետ գէնքի խնդիրը որ յեղ. կան ներկայ թէ ապագայ պատրաստութեանց համար մեծ նշանակութիւն ունի, տեղւոյն մէջ գէնքերը ձեռք բերելու ընձեռած միջոցներէն չկրցանք օգտուել: (Հակառակ երկու տարուան իրարու հակասող որոշումներուն):

Ալքի առաջ ունենալով շրջանիս բուն գործի նպատակին համար վերջին Ընդհ. ժողովին ըրած կարգադիր այն որոշումները եւ նշանակուած պիւտճէն, ու երբ այս մասին ներսի ընկերները քանիցս Սմբատի զրած եւ միջոց խնդրած են, իր կողմէն մերժուած եւ անտես առնուած է այս խիստ կարեւոր խնդիրը եւ պահանջը:

Սմբատ թէ Պատ. Մարմնոյ անդամ (ըստ Ընդհ. ժողովի, Պատ. Մարմինը որ իւր վաւերական կազմը չէր ներկայացներ սկիզբէն մինչեւ վերջ) ներսի կէտերու վրայ իր կատարած կարծատես այցելութեանը, եւ ամբողջ մէկուկէս տարի Մոցի մէջ սահմանափակուելու ստիւղ, բուն գործին մօտէն ուսումնասիրութեան մը

եւ անոր անհրաժեշտ պէտքերուն հետ ծանօթանալ եւ գիտակցել չէր կարող, ու իրաւունք չունէր ներսի ընկերներուն՝ գործի հետ կապուած պահանջին նկատմամբ տիքթաթորի վարմունքը ունենալ, ու անտեսել անոնց իրաւացի պահանջները (տես այս մասին որոշում Շրջ. ժողովի յօդ. 3)<sup>6</sup>:

Մենք համոզուած լլլալով մեր դատի իրագործմանը եւ արատաքին միջամտութիւն յառաջ բերելու կարելիութիւնը՝ կեդրոնացած որոշ չափով տեւական գործող կոչուելու մէջ. նաեւ համոզուած լլլալով անցեալի դառն փորձերէն որ ցուցական բնոյթ ունեցող ոեւէ դէպքերը եւ ձեռնարկները մեր նիւթական եւ բարոյական կարեւոր ոյժերը սպառած են անօգուտ տեղ (անտես առնելով անոնց անմիջական հետեւեալը եղող չարիքները թրքական) կառավարութեան կողմէն), մենք մեր շրջակայ կազմակերպութեամբ նպատակ ունինք շրջանիս կարեւոր կէտերու հետ կապուած յառաջ բերել ընդհանուր) եւ խմբական ապստամբութիւն մը. եւ յառաջիկային ոեւիցէ ցուցական ձեռնարկի հակառակ լիւնելով՝ չենք ուզեր մասնակցել այդպիսի արարքի մը:

Լեռնավայրը իր դիրքի նպաստաւորող պայմաններով առաւել մեծամեծ դիւրութիւններ ու յարմարութիւններ կը ներկայացնէ մեզի՝ մեր յառաջադրած նպատակի իրագործման մէջ. ցաւալի է, եւ խիստ ցաւալի որ անցեալ բոլոր տարիներէ ի վեր բացի լոկ խօսքերէն չկրցանք օգտուել այս միջավայրի ներկայացող առիթներէն:

Շրջանիս մէջ այդ նպատակի իրագործման կարելիութիւնը կը գտնենք հետեւեալ անհրաժեշտ ու անմիջական պահանջներու մէջ.

Ա. Շրջանիս գլխաւոր կէտերուն մէջ յառաջ բերել նպատակին ձգտող կուռ կազմակերպութիւն մը.

Բ. Գլխաւոր դեր խաղացող միւս կէտերը ու անոնց հետ կապուող անմիջական դեր ունեցող վայրերը զինել որոշ չափով ու պատրաստել ապագայ կոչուելուն համար:

5.- Այս տեղեկագրի մէկ արտագրութեան մէջ կատարուած զայն արտագրող Ակոբի կողմէ, կը գտնենք կարգ մը յաւելումներ եւ բացատրութիւններ: Բնագրին մէջ կտրուով բաց ձգուած նախադասութիւնը ամբողջական ձեւով կը կարդացուի այսպէս. «Այս որոշումներուն իբրեւ գլխաւոր գործադրութիւն Սարհատը Աթէք ղրկուեցաւ զէք գնելու եւ փոխադրելու համար: (Սարհատը Լիբանան տեղացի շէյխի մը հետ արհեստով զաչախճը՝ [նաքսանեց] համաձայնութեան եկած էր զէքերը ցամաք հանելու եւ մինչեւ Յալէպ փոխադրելու համար. իբրեւ վարձք զէքերու 1/4ը իրեն պիտի տրուէ):

6.- Շրջանային ժողովը, որուն յոլումներ կը կատարուին հոս եւ շարունակութեան մէջ գումարուած է 1906 թ. 6/19 - 11/24ին: «Ատեմագրութիւն Յովտի, Դաշտի, Խորշի եւ Արծուաբերդի Շրջանական ժողովի» խորագրով ան հրատարակուած է «Նիւթեր»ու Ա. հատորին մէջ, էջ 258-262:



Վերոյիշեալ երկու կէտերը իրագործելու համար մենք բոլոր գոհողութեամբ մղուած գործին պիտի ջանանք ներելի եւ աններելի միջոցներով բաւարարութիւն տալ. նոյն բանը ընել կը պահանջենք ու թախանձանօք կը խնդրենք մեր ընդհ. կազմակերպութենէն, եւ մասնաւորապէս մեր շրջանին հետ կապուող օժանդակ մարմիններէն, որպէսզի յառաջ բերելիք մեր այդ ընդհ. ձեռնարկի հանդէպ չզլանան իրենց նիւթական ու բարոյական օժանդակութիւնները:

Արծ[ուաբերողը] որ այս տեսակէտով մեր յառաջիկայ նպատակին մէջ գլխաւոր տեղը կը բռնէ, բուն տեղւոյն վրայ մեր կատարած ուսումնասիրութիւնները եւ մշակած յարաբերութիւնները մեզ հասցուցած է հետեւեալ եզրակացութեան.

Ա. Արծուաբերողները բոլոր բարի տրամադրութեամբ պատրաստակամութիւն ցոյց տուած են եւ կու տան բուն գործի նպատակով մեզ հետ կապուելու:

Բ. Ինչպէս ուրիշ կէտերու մէջ՝ միջավայրը կարելիութիւն չ'ընծայեր որոշ սահմանի մէջ կազմակերպական այն դրութեանը՝ (ինչպէս խմբական դրութիւն, օժանդակութիւն եւ այլն):

Գ. Կարելի է միայն տեղւոյն ազդեցիկ եւ անցեալին դեր խաղացող անհատներէ բաղկացեալ մարմին մը կազմել այնտեղ մեր կողմէն հաստատելիք ընկերներու հետ: Այս դրութիւնը որոշ չափով հաստատուած եւ իրականացուած էր վերջին մի քանի ամիսներու մէջ Հոն հաստատուած մեր ընկեր Գուրգէնի միջոցաւ: Բայց դժբախտաբար վերջինս թէ Գուրգէնի եւ թէ տեղւոյն մասնակցող ընկերներու ձեռքակալութեան պատճառաւ առ այժմ մեր յարաբերութիւնը ընդհատուած է. յոյս ունինք շուտով ընկերներու ազատմամբ եւ կամ այլ նորանոր միջոցներով վերահաստատել մեր յարաբերութիւնը:

Դ. Հեղեղատ՝ նոյնպէս նկատելով մեր յառաջիկայ գլխաւոր վայրերէն մին, հոն ունինք տասնըհինգի (15) չափ ցրուած ընկերներ, որոնք կը գտնուին անկապ եւ անյարաբերական վիճակի մէջ, բայց կը յուսանք առա-

ջիկային մեր ձեռք առնելիք միջոցներով եւ դրկելիք գործիչներով պիտի կարենանք պատրաստել զինքը մեր նպատակի իրագործման մէջ:

8.- Միջնաբերողը՝ նմանապէս մեր գլխաւոր նպատակավայրը ընդունելով հանդերձ որոշ բան մը չենք կարող ըսել, քանի որ այդ կէտի յարաբերութիւնը կապուած է եղեր խոր վիրապիւ հետ:

Ծ.- Աչքի առաջ ունենալով օրէ օր տիրող պայմաններու փոփոխութիւնը եւ յառաջ գալիք դժուարութիւնները, ինչպէս նաեւ ընդմիջտ ընդ[հանուր] կոտորածի մեր երկիւղը եւ սարսափը, մենք զմեզ այլեւս դատապարտելի կը գտնենք՝ մեր անցեալ թոյլ վերաբերմունքը շարունակել նաեւ յառաջիկայի մէջ: Այս բոլոր նկատողութիւններով որոշուեցաւ մեր ձեռք առնելիք յառաջիկայ քայլերը. եւ որպէսզի մենք զմեզ ունէ պատահարի մը մէջ անակնկալ չգտնենք, որոշուեցաւ ըստ կարելւոյն Երկիր փոխադրել գնած այն գէնքերը ու պարագաները որ այսօր դուրս կը մնան:

10.- Լեռնավայրը իր մասնաւոր միջավայրերէն գէնք եւ ռազմամթերք ձեռք բերելու ընծայած դիւրութիւնները եւ յարմարութիւնները:

Ժողովուրդի տրամադրութիւնը յեղ[ափոխական] տեսակէտով:

Երկրին իրար հետ հաղորդական եւ փոխադրութեան համար ներկայացնող պարագաները:

Կառավարութեան դիրքը եւ ձեռք առած միջոցները:

Երկրի ժողովուրդին կուռելու ընդունակութիւնը եւ յառաջ բերուած ոյժը ապագայի որոշ գործին հանդէպ:

(Բերանացի բացատրութիւններ վերի հարցերուն):

Նիստ 8րդ, 906 Յուն. 11-24

Ընթերցումն Ընդհ. Ժողովի ներկայացուելիք տեղեկագրի եւ վաւերացում

Handwritten signatures and stamps, including names like 'Հովիտի ներկայացուցիչներ' and 'Դաշտի ներկայացուցիչ ԱՇՄԱՐ'.

Հովիտի ներկայացուցիչներ ԱԿՈՐ ՀԻԼՄԻ Արծուաբերողի եւ ՄԱՅԻԼ Խորշի ներկայացուցիչներ ԶԷՀՄՈՒՐ

Փաստ. 950-4

Գ 2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴԱՇՏԻ Հ. Յ. Գ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐ ՇՐՋԱՆԻ

ԴԱՇՏ<sup>1</sup>

ՅՈՎԻՏ<sup>1</sup>

Կիլիկիոյ այս մասին մէջ 8 տարիէ ի վեր — մանաւանդ քաղաքիս մէջ 5-8 տարիէ ի վեր — Դաշնակցութիւնը մուտք գտած է. բայց եւ այնպէս վերջին 2-3 տարիներու մէջ է որ կրցեր է ունենալ որոշ ընկերներ եւ որոշ աստիճանի մ'ալ գործունէութիւն:

1908ին Մարթինի (Աշմար<sup>2</sup>) Դաշտ հաստատուելէն վերջ կազմակերպութիւն սկսեր է եւ ունեցեր ենք 5 խումբեր՝ ճական անդամներէ բաղկացած, որոնք սակայն պէտք եղած կերպով գինուած չեն եւ ոչ ալ կազմակերպական տեսակէտով որոշ կրթութիւն առած: Վերջին օրերու կանոնաւոր կազմակերպութիւն մը հաստատուելու համար լուրջ աշխատութիւններ ձեռք առնուած են: Յարդ կազմակերպութեան վերաբերեալ գիրք եւ թերթերը քիչ թէ շատ կանոնաւորութեամբ մը տեղս մուտք գտած եւ թէ տեղւոյս եւ թէ շրջաններու անդամները անոնցմէ բաւականին օգտուած են. յուսով ենք որ ասոնց միջոցաւ յեղ. հոգին ժողովուրդին մէջ արծարծելու կարող պիտի լինենք: Դաշտ լաւ ապագայ մը կը խոստանայ իբրեւ կարեւոր կեդրոն. կարճ ժամանակի փորձառութիւնը մեր այս յոյսը կը հաստատէ: Եթէ Մարթինի դժբախտ բանտարկութիւնը չպատահէր եւ Դաշտի ընկերներ անով զբաղած չլլային, վերջին 5-8 ամիսներու մէջ կարող էինք ըսել որ Դաշտ ցարդ արդէն կեդրոն մը հանդիսացած կ'ըլլար Կիլիկիոյ մէջ, որովհետեւ շրջակայ վայրերու ամենաընդունակ տարրը սկսեր է գաղթել դէպի Դաշտ, որոնցմէ կարելի է օգտուիլ ամէն տեսակէտով, թէ հաղորդակցութիւններ հաստատելու Կիլիկիոյ տարբեր կողմերուն հետ գործիչներ գտնելու համար եւ թէ դրամական հասոյթի աղբիւրներ գտնելու տեսակէտով. ուստի տեղական կանոնաւոր կազմակերպութիւնը հաստատուելուն պէս ձեռք պիտի առնուին հասոյթի աղբիւրներ ստեղծելու միջոցներ, որպէսզի աւելի գործօն դեր մը կարենայ խաղաղ Դաշտը, իբրեւ կեդրոն Կիլիկիոյ այս մասին: Տեղեկագիրնիս պատրաստուած ժամանակ իսկ կեդրոնական վարիչ մարմինը ընտրելու ձեռնարկին մէջ է. լիայոյս ենք որ ի վիճակի պիտի ըլլայ մեծ քայլերով յառաջանալ դէպի յուսացեալ նպատակը:

Հովիտ առաջին վայրն է այս շրջանին մէջ ուր Դաշնակցութիւնը մուտք գտաւ Ռահվերի միջոցաւ. նոյն տարին հոն արդէն գոյ եղող 8 անդամներէ բաղկացած խումբ մը Ռահվերի հետ համաձայն սկսան գործել, բայց կարգ մը պատճառներով մի քանի տարիներ անգործութեան դատապարտուած մնաց այդ խումբը: Այժմ այդ խումբի անդամներէն շատեր բացակայ են. մնացած ընկերներ շարունակած են գործը եւ հասցուցած իր այժմու վիճակին: Այժմ Հովիտի կազմակերպութիւնը ունի 8 խումբ՝ իւրաքանչիւր խումբ ճական անդամներէ բաղկացած: Այս 8 խումբերէն 4ը կազմակերպական եւ 2ը թուրքիկ խումբեր են. ասոնք գինուած են մարդիկներով, սիւրմէլիներով, հասարակ գէնք եւ եւ ատրճանակներով, որոնց մէկ մասը կազմակերպական գոյք է եւ միւս մասը անձնական: Թուրքիկ խումբերը ունին 8 հատ կուս-մարդիկներ իւրաքանչիւրը 75ական փամփուռով. հատ մը ամերիկեան փամփուռուոր հրացան՝ 35 փամփուռով. 300 ալ թուրքիկ [?] փամփուռու: Ատրճանակներ — 1 հատ մաուզերեան 80 փամփուռով. 1 հատ պրալինինկ 100 փամփուռով, 3 հատ գարատաղ ատրճանակ 50ական փամփուռով. 1 հատ վելդակ 50 փամփուռով, 10 հատ երկփող ատրճանակ: Իւրաքանչիւր հոգի ունի 1 1/4 օխա վառօղ. ունին նաեւ 125 օխա կապար: Մնացեալ 4 խումբերու անդամներն ալ գինուած են հասարակ ատրճանակներով: Հովիտը կազմակերպական տուրքի վճարման եւ խումբերու իրարու հետ յարաբերութեան մէջ կանոնաւոր է. բայց դուրսի հետ հաղորդակցութիւնն է որ կը պակսի: Դաշտի եւ Հովիտի հաշիւները անցեալ տարի գումարուելիք Ընդ. Ժողովին ներկայացուելու համար Տեղեկ. ղրկած ենք, ուրկից պիտի ղրկուէր Արեւմտ. Բիւրոյին. կրնաք անկից պահանջել:

7.- Աշմար՝ Աշոտ-Մարթին Մուրատեանն է:

**ԽՈՐԸ<sup>1</sup>**

Հոս 4 տարի առաջ Դաշնակցութիւնը մուտք գործած է. եւ առաջին անգամ 3 անդամէ բաղկացեալ խումբ մը կազմուած է. բայց ցաւալի է ըսել որ բոլոր այդ չորս տարիներու ընթացքին մէջ ընկերներու 3 թիւը 4 եղած չէ: Ժողովուրդը լաւ է, զգացում ունին, կարող են մտքով եւ սրտով պատրաստուիլ, բայց կարող գործիչ ընկերով մը պակասը նկատելի է. կազմակերպական կրթութեան պէտք ունին:

**ԱՍՅԱՍԱԿԵՐՈՂ<sup>1</sup>**

Ներկայիս Հոս կազմակերպութիւն եւ կամ զայն յառաջ բերելու ձեռնարկ չկայ. կարող գործիչի մը աշխատութեամբ, բաւական արդիւնք յառաջ կու գայ: Ասկէ մի քանի տարի առաջ պահ մը կարծուեցաւ, թէ Հոս կանոնաւոր կազմակերպութիւն գոյութիւն ունէր: Բայց Սմբատի<sup>2</sup> եւ շրջակայ տեղային ընկերներու այցելութեամբ հասկցուեցաւ թէ եղած է անկանոն եւ չնչին բան մ'էր. եւ այս ալ Աշոտ Լեւոնի խաբէութեան երեւան գալէն եւ այդ պատճառաւ կառավարութեան ձեռքակալութեանց սկսելուն առթիւ ցիրուցան եղաւ: Այժմ այդ քայքայուն վիճակին մէջ կը կենայ քանզի Հոս գործող ընկեր չունինք:

**ԱՐԾՈՒԱԲԵՐՈՂ<sup>1</sup>**

Թէեւ վերջին տարիներու մէջ տեղւոյս կազմակերպութիւնը ամէն ջանք ի գործ դրած է Հոս հաստատելու համար ընկերներ եւ խումբեր, առանց այդ նպատակին համար նիւթական եւ բարոյական ունէ գոհողութիւն խնայելու, բայց այդ վայրի ժողովրդին գործի հանդէպ բռնած անվստահելի ընթացքը եւ վերջին տարուայ ձեռքակալութիւններ եւ բանտարկութիւնները պատճառ դարձած են գործին երեսի վրայ մնալուն: Այս կէտի մասին Սիրական Պոյաճեան կրնայ մի քիչ տեղեկութիւն տալ: Բաւական դժուարութիւններով յաջողած էինք զինքը Հոս տեղաւորել, բայց դժբախտաբար Հովիտ եկած ատեն Հոս ձեռքակալութեան արտասահման զբոսը կը ելնուի:

**ԲԵՐՈՂԱԿ<sup>1</sup>**

Մարթինի Դաշտ հաստատուելու օրէն Հոս ալ հաստատուած է տեղացի ընկեր Թաթուլ. մինչեւ անցեալ ամառ կանոնաւոր յարաբերութիւն ունեցած չէինք այս վայրի հետ. 1908ի Օգոստոսին ընկեր Գատրիլ<sup>3</sup> (որ այժմ Մոց<sup>4</sup> կը գտնուի) տեղէն զրկուեցաւ իբր գործիչ, որ պէսզի այնտեղի ընկերներու վիճակը հասկնայ եւ Դաշտի հետ կանոնաւոր յարաբերութեան մէջ դնէ. այս

ձեռնարկը բաւական օգտակար եղաւ, քանզի ընկեր Թաթուլ, բակական պատճառներով անգործութեան մատնուած էր: Ընկեր Գատրիլ յաջողած էր ընկեր Թաթուլին ուրիշ երկու կարեւոր ընկերներ գտնել (մին դասատու, միւսը քահանայ) եւ երեք հոգիէ բաղկացեալ խումբ մը կազմել, որոնց հետ այժմ կը նամակցինք. յուսով ենք որ գործը լաւ յառաջ կ'երթայ Հոս, ուրիշ մէկ երկու այցելութիւններ ընդունելէ վերջ ընկերներու կողմէ:

Ընկեր Գատրիլ այցելած էր նաեւ Քեսապ գիւղը եւ կարճ ժամանակի մէջ յաջողած ճարել 10ի չափ կարող կանոնաւոր ընկերներ եւ 8ի չափ կէս-պաշտօնական, որոնք քիչ շատ կրթութիւն ընդունելով կրնան լաւ գործողներ լինել: Հոս կը գտնուի այժմ երկու խումբ 5ական ընկերներէ բաղկացեալ. մէկ խումբը բաղկացած տեղական ազդեցիկ մարդոցմէ, որոնք հնչակեան ժամանակէն քիչ թէ շատ գործի փորձառութիւնը ունեցած են. այս խումբը ունի ունիւններ հրացան մը, մարթին մը, երկու ընկերներ եւ 3 հատ զոյգ-հրացան: Երկրորդ խումբը կը բաղկանայ ուսումնականներէ, որոնց երեքը այժմ տեղւոյն մէջ դասատու եւ երկուքը Դաշտի գոլէճը ուսանող (ամէնքն ալ տեղացի): Այժմ այս տեղ գործը իր սաղմային վիճակին մէջ է. շատ յուսալից է, միայն կը կարօտի կարող կազմակերպական ոյժի տէր գործիչի մը: Ասոնց հետ կը յարաբերի ընկեր Գատրիլ Մոցէն եւ անոնց թերթեր կը դրկէ: Որոշուած է նաեւ Հոս հաստատել մի գրադարան տեղւոյն յարմարութեան պատճառաւ, որուն կատարելու պաշտօնը յանձնուած է ընկեր Գատրիլի:

Մանթօ.- Պէտք է յայտնի լինի որ այս գիւղը իր շրջակայ ագարակներով ընդամէնը 1200 տուն միայնակ հայ<sup>10</sup> ունի, բազմաթիւ երիտասարդ ոյժեր, ազատ վայր, թէ գործի թէ գէնքի վարժութեան: Այս գիւղի մասին ընկեր Գատրիլ ընդարձակ տեղեկագիր մը պատրաստած ունի եթէ հարկ լինի կրնաք պահանջել իրմէ:

**ՊԵՆԱՆ ԵՒ ԻՍԿԵՆՏԵՐՈՒՄ**

Այս տեղերուն ալ թէ կարեւոր թուով հայ բնակչութեան գոյութիւնը եւ թէ հայկական դիրքերուն կարեւորութիւնը հարկ կը դնէ ունենալ այդ տեղերուն մէջ ընկերներ եւ կազմակերպութիւն. բայց մեր ոյժի պակասութիւնը, անզօր կ'ընէ մեզ: Վերջին վայրը մանա-

- 8.- Ամբաստան Սիւնն Չաւարեանի ծածկանուցներն մէկը:
- 9.- Գատրիլ Կիլիկիոյ երիտասարդ գործիչներն, բուն անունը Սիրոպ Քեթեմճեան. բնիկ ուրֆացի, միջնակարգ ուսումը ստացած է Այնթապի Ամերիկեան գոլէճի մէջ, բժշկութիւն ուսանած Պէյրութի Ամերիկեան համալսարանին մէջ. հիմնադիրներն է Ուրֆայի Գ. Յ. Գ. կազմակերպութեան: Հեղինակն է այս տեղեկագիրն:
- 10.- Ըսել կուզէ՛ զուտ հայաբնակ:

անդ բազմակողմանի կարեւորութիւն ունեցող կեդրոն մըն է: Վերջերս կառավարութիւնը մասնաւոր ուշադրութիւն դարձուցած է, որպէսզի օգտուի անոր բնական դիրքի յարմարութենէն, եւ այժմ բաւական շինութիւններ կը շինուին Հոս զինուորական կեդրոն մը դարձնելու:

**ՊԱՅԱՆՁՆԵՐ**

Մեր գործունէութեան ընթացքը կանոնաւորելու համար հական պարագաներ նկատուած են հետեւեալները:

Ա. Կիլիկիոյ քարտէսը աչքի առաջ ունենալով բաժնել զայն 2-3 կեդրոններու, որոնք ենթարկուած լինին կեդրոնական Բիւրոյին զրկուած պատասխանատու անդամի մը հսկողութեան:

Բ. Այս շրջաններէն իւրաքանչիւրը 5 ամիսը մի անգամ իւր կեդրոնին տեղեկագիր մը պէտք է մատուցանէ:

Գ. Այս կեդրոններէն մէկը ընտրել աւագ կեդրոն, որուն պարտականութիւնը լինի արտասահմանի հետ հաղորդակցութիւն պահել, իսկ միւս կեդրոն կամ շրջանները աւագ կեդրոնի միջոցաւ կատարեն իրենց հաղորդակցութիւնը արտասահմանի հետ: Կիլիկիոյ լիազօր աւագ կեդրոնին մէջ պէտք է հաստատուի պատասխանատու անդամ եւ շրջուն գործիչ մը՝ տեղական կազմակերպութեանց իրաւասութիւնը պահելով ընդհ. կազմակերպութեան ներքին եւ արտաքին կանոններուն համաձայն:

Դ. Թէպէտեւ Մարթինը իբր գործիչ մը ներս մտած է եւ իր բոլոր ջանքերը ի գործ դրած կազմակերպութիւնը զօրացնելու, եւ իւր սահմանին մէջ շատ մեծ օգուտներ ունեցր է, բայց քանի որ ոչ պաշտօնական կնիք ունինք եւ ոչ ալ գործի պատասխանատուութիւն, այդ բոլորանուէր երիտասարդին ջանքերը մասամբ ապարդիւն մնացին. ուստի տեղւոյն կազմակերպութիւնը կը պահանջէ ճշդել Մարթինի դիրքը գործի հանդէպ, մենք իր գործունէութենէն շատ գոհ մնացած ենք. իր բանտարկութիւնը մեզի ցաւ եւ գործին վնաս պատճառած է (լիայոյս ենք որ մօտ օրերս կ'ազատի անպաճառ): Նաեւ պաշտօնական կնիքի պէտք իբր կենսական պահանջ կը դնենք, քանի որ մասնաճիւղեր իրենց կեդրոնին հրահանգով պիտի ընթանան եւ կեդրոնները աւագ կեդրոնին պատասխանատու պիտի ճանչցուին. ուստի իւրաքանչիւր կեդրոն իւր մասնաւոր կնիքը ունենայ որը լիւր երեք կամ չորս կտոր՝ իւրաքանչիւր կտոր մէկ անգամի թով:

Ե. Տեղային պահանջներու համապատասխան տարեկան պիւտճէ մը շինելու խնդիրը պիտի մնայ մինչեւ պատասխանատու անդամի մը գալը: Այս տարի որոշ պիւտճէի մը չգոյացումը պատճառ եղած է գործին մե-

ծապէս խաթարման, մանաւանդ որ 2 տարիէ ի վեր գանազան քաղաքներէ բերուած քաղաքական յանցանքներով բանտարկեալ ընկերներ ունեցեր ենք, որոնց դժբախտաբար չկրցանք պէտք եղածին պէս օգնել:

Զ. Կիլիկիոյ մէջ որեւէ քաղաք կամ գիւղի մէջ գործի հիմը դնելու ատեն մեր դէմը կ'ելլէ յաճախ խոչընդոտ մը, գոր առանց բառնալու մեր գործունէութիւնը ջրլատուած, միշտ հարուածի հանդիպած պիտի մնայ, եւ երբեմն իսկ վտանգուած: Այս խոչընդոտն է միւս կուսակցութեան<sup>11</sup> մարդոց ներկայութիւնը, որով շատ անգամ մեր գործունէութիւնը չէզոքացած եւ ջանքերն ապարդիւն եղած կը գտնենք: Արդ եթէ կարելի է, նոյնիսկ գոհողութիւններ ընելով, միութիւն մը հաստատել այդ կուսակցութեան հետ Կիլիկիոյ գործունէութեան համար: Ասով ամենամեծ դժուարութիւն մը հարթուած լինելով ձեռք ձեռքի տուած ապահով կրնանք գործել յաջողութեամբ:

Կարծենք աւելորդ չէ լինել Հոս թէ Կիլիկիոյ մէջ ընդլայնութիւն կարծր կաղ մնացած եւ միշտ կաղ պիտի մնայ քանի որ իւրաքանչիւր կեդրոն գործելու իր որոշ սահմանը չունի եւ կանոնաւոր յարաբերութեան մէջ չի գտնուիր իր շրջակայ կեդրոններու հետ եւ չի գիտեր թէ մինչեւ ո՛ր գիւղ կամ գիւղաքաղաքը իր իրաւասութեան տակ է, ո՛ր քաղաքներու մէջ կեդրոններ կան եւ գործիչ ընկերներ կը գտնուին: Ուստի կը մնայ այս ամէնը կանոնաւոր վիճակի մը դնելու համար ձեռք մասնաւոր հրահանգ եւ միջոցներով ճշդել գործին եղանակը:

Ընդհ. Ժողովի մէջ մեր կողմէն իբր ներկայացուցիչ ներկայանալու համար մեր ձայնը տոքթոր Սարհատին տուած էինք՝ Մոցի ընկերներու միջոցաւ: Դրամական եւայլ հաշիւներ յետաձգուեցան մինչեւ Մարթինի ազատուիլը: Հիմակ պատրաստելու ժամանակ չունինք, քանի որ տեղեկագիր պատրաստել զրկուելու ունէ միտք մը չունէինք, այլ Մարթինը եւ ուրիշ ընկերներ բանտէն ազատելու ետեւէ էինք, եւ վերջին օրերս միայն՝ հապճեպով պատրաստելով կը դրկենք ներկայս: Բիւրոյին մեզ համար դրկած օրակարգը չկրցանք ստանալ, քանզի Մոցէն փոսթով հիւպատոսի մը հասցէին զրկուած էր, որը բոլորովին անյայտ եղաւ, մեզ չհասաւ:

Ընդհ. Ժողովը Կիլիկիոյ նկատմամբ ինչ որոշելու առաջին առթիւ մեզ փութացուի: Մնանք ընկերական բարեւանքով՝ Դաշտի Մարմին\*:

**ԳԱՏՐԻԼ<sup>9</sup>**

\* Օրինակուած Դաշտի Մարմնի ծածկագրէն, Ի Մոց, Մարտ 24, 1907:

11.- Այսինքն՝ հնչակեանցներու:

Փաստ. 950-30

Գ 3.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԴԱՇՏԻ ՇՐՋԱՆԻ

1905 Մայիս - 1907 Հոկտեմբեր 1/13

Այս տեղեկագիրը, ճիշտ է քիչ մը երկարապատում եւ մանաւանդ մանուածապատ շարադրութեամբ, կազմուած է ինչպէս բուականն ալ ցոյց կու տայ, Զորքորդ Ընդ. Ժողովի ասարտէն ետք, երբ նորընտիր Բիւրոն պիտի ձեռնարկէր Առնակայրի համար դեկավար նոր մարմնի մը կազմութեան:

Պատրոնի Հ. Յ. Գ. արխիւներուն մէջ գտնուող այս օրինակը Նիկոլ Աղբալեանի ձեռագրով կատարուած արտագրութիւնն է «Բնագիրը ուղարկուած է Բիւրոյին» նշումով:

Ա.

Մեր տեղային Հ. Յ. Դ. կազմը հիմնապէս առաջ եկած է 1905 թ. Մայիսի 27-ին, երբ այս թուականին (Մայիս 7) տեղս եկած եւ հաստատուած է ընկեր Մարթին]ը<sup>1</sup>: Վերոյիշեալ թուականէն գէթ տարի մը առաջ հոս եկած էր Սիրականը (Պոյաճեան), ինչպէս նաեւ այս միջոցին ժամանակաւորապէս եկած եւ անցած էին Սմբ[ատ] եւ Վարդ[ան]ը<sup>12</sup>: Բայց տեղային կազմակերպութեան մը գոյութիւնը բացայայտապէս ապահովելու եւ միջոցներ ստեղծելու ոեւէ ձեռնարկ մը կատարուած չէր իրենց կողմէն:

Մարթին]ը հաստատուելուն կը ծանօթանայ տեղային կարգ մը անհատներու (Թումասի, Սմբատի եւ Գոստիի հետ), որոնց հետ շփումներ եւ կարծիքներու փոխանակութիւն ունենալէ յետոյ փոխադարձ համաձայնութեամբ տեղային գործունէութեան համար կը մշակուի եւ կը պատրաստուի տեղային ներքին կազմակերպական կանոնագիր-ճրագիր, որու տրամադրութեամբ կ'որոշուի ժողովրդական խաւելու մէջ մտնալ, գործի եւ գաղափարի տրամադիր ընկերներ ճարել եւ այդպիսով առաջ բերել կազմակերպեալ խումբերու ընկերական շրջան մը: Գործելով այս տրամադրութեամբ մինչեւ 1906 թ. մեզի հետ կապուած ունեցանք 21 ընկերներ, որոնք յետոյ վերածուեցան (3 երեք) կազմակերպեալ խումբերու. այս 3 խումբերէն զատ ունեցանք որոշ թուով համակիրներու շրջան[ակ] մ'ալ: 1905 թ. Յունիս 10-ին որ Սիրական Արծալեանը<sup>1</sup> մեկնեցաւ, ամիսներ յետոյ Դաշտ եւ Դաշտէն Հովիտ<sup>1</sup> վերադարձին ձերբակալուելով բաւական յետոյ արտասահման աքսորուեցաւ: Այս բոլորը կերպով մը իր անխոհմտութեան պատճառաւ: Աւելորդ չէ մէջբերելու սա գլխաւոր պարագան, թէ երբ մենք մխրճուած էինք մեր բոլոր թափովը տեղւոյն այս կազմակերպական գործովը, դրսի մարմինների հետ մեր ի գործ դրած յարաբերական թղթակցութիւնը եւ գործին կարեւոր առաջարկապահանջնիս (Բիւրոյի, Տեղթայի եւ Մոցի<sup>1</sup> հետ) կը մնար անխելի եւ անիրագործելի: Մեր նամակները շատ ան-

գամ իրենց կողմէն կը մնային անպատասխան եւ երբեմն ալ ամիսներ յետոյ միայն կը պատասխանուէր. եւ հակառակ մեր ցոյց տուած միջոցներուն, ամբողջ երկար ժամանակ մը զոկուեցաւ մեզի թերթեր եւ այլ յեղափ. հրատարակութիւններ, որոնք օրուան մեր ընկերներուն վստահութիւնը գրաւելու հետ՝ յեղափ. մտքի աւելի գարգացման եւ զանոնք մեզի եւ թէ գործին հետ աւելի սերտ կապերով կապուելու հաւատքը պիտի ստեղծէր, մինչդեռ այդ ատեն այդ կարեւոր պէտքի պակասութեան մեր շուրջը համախմբուած ընկերներու կողմէն հետզհետէ առաջ կու գար մեզի հանդէպ գործին եւ գաղափարին վրայ օրինական վստահութիւն պահանջող առաջարկներ: Եւ մինչեւ հիմա ալ մեր այս կարեւոր պահանջը՝ թերթեր ստանալու եւ դրսի հետ մեր թղթակցութիւնը, կը մնան շատ թերի եւ անկանոն վիճակի մէջ: Մենք, Հովիտ եւ Պորշ<sup>1</sup> ընդհանուր առմամբ մեզ կաշկանդող այս տխուր պարագաներէն մի անգամ ընդ միշտ դուրս գալու համար եւ թէ տեղական կարգ մը կազմակերպական եւ փոխադարձ յարաբերական խնդիրներու համար, որոշեցինք ունենալ շրջանական ժողով մը:

Շրջանական ժողովը ունեցանք (գումարեալ ի Դաշտ) 1906 թ. Յունուարին. ժողովին կը մասնակցէր Հովիտէն ընտրեալ երկու ձայն, Պորշէն մէկ ձայն. Արծուաբերդեղող Սիրականի փոխարէն մէկ ձայն եւ Դաշտէն երկու ձայն: Տեղի ունեցած մեր այդ ժողովի օրակարգի հարցերուն եւ անոնց եզրափակութեանց հետ վայրիս զանազան խնդիրներու վերաբերմամբ մեր առաջարկ պահանջները իր ատենին ժողովի արձանագրութեամբ դրուելու է Բիւրոյին (Առնակայրի օժանդակ նոր մարմինը՝ եթէ անծանօթ է այդ ատենագրութեան, թող դիմէ Բիւրոյին եւ ծանօթանայ անոր հետ, որ իր համար կարեւորութիւն ունի<sup>13</sup>): Շրջանական ժողովի այդ առաջարկապահանջներն ալ դրսի մարմիններուն կողմէն մնաց անհետեւանք եւ անիրագործելի. այս մասին մասնաւորա-

12.- Սմբատ եւ Վարդան. առաջինը Սիմոն Չաւարեանն է, երկրորդը՝ Խանասորայ Վարդան (Սարգիս Մեծարեան), երկուքն ալ անդամ Լեռնակայրի Պատ. Կ. Կոմիտէին:

պէս Բիւրոն մեզի կը գրէր թէ այդ առաջարկ-հարցերուն բաւարարութիւն տալու իրաւասութիւնը կը պատկանի միայն առաջիկայ տեղի ունենալիք Ընդ. Ժողովին եւ հետեւաբար պէտք է սպասէք անոր կազմութիւնը) եւ որոշումին: Ուրեմն այս պարագային տակ դարձեալ մեր դրութիւնը չփոխուեցաւ եւ մնաց միշտ սպասողական վիճակի մէջ մինչեւ տեղի ունենալիք Ընդհանուր Ժողով, որ դժբախտաբար ինչպէս յայտնի է փոխանակ շուտ գումարուելու յայտնի պատճառներով ձգձգուեցաւ մինչեւ 907 թ. Մայիս: Մենք այդ ատեն մէկ կողմէն աչքի առաջ ունենալով օրէ օր այս անվերջ սպասողական դրութիւնը եւ միւս կողմէն անհրաժեշտ պէտքերու անբաւականութիւնը, առանց վստահութեան եկանք այն եզրակացութեան թէ մինչեւ Ընդ. Ժողովի գումարուելը եւ մինչեւ մեր նկատմամբ անոր որոշում-կարգադրութիւնը մեզի յայտնուելը, նորանոր բարդութիւններու տեղի չտալու համար, պահել եւ ղեկավարուիլ միայն ներկայ մեր ունեցած կազմակերպական ուժերովը:

Այս պարագաներուն, մասնաւորապէս անհատական պատճառներով երբ ընկեր Գոստին մեր ներքին գործերուն հետ իր ընկերակցութիւնը շարունակելէ դադարեցաւ, անոր տեղ Մարթին]ի միջոցաւ միացուեցաւ Ռուշտին, որ մինչ այդ ատեն կապուած էր մեզ հետ իբր խմբի լաւ ընկեր: Ընդհանուր ժողովի գումարման այդ ձգձգումը, որի հետ կապուած էր մասնաւորապէս մեր բոլորին տեղային գործնապէս բռնելիք դիրքը եւ անոր ներքին գործնական պահանջները, ինչպէս նաեւ անցեալի երկար եւ տխուր սպասողական վիճակը, Հովիտի ընկերներու մէջ առաջ բերած էր մի տեսակ խաբուսիկ եւ վստահութեան սերմեր: Այս մասին մեր եւ իրենց կողմէ կատարուած մի քանի թղթակցութիւնները տեսնելով, որ անբաւարար է մտքերը շտկելու եւ գործի առաջ իրենց եւ մեր դիրքը ճշդելու, որոշեցինք անցեալ ամառ 1906 Օգոստոսին որ Մարթին]ը Հովիտ երթայ եւ իրենց հետ բերանացի խօսի-խորհրդակցի կարգադրելու համար պէտք եղածները. եւ միւս կողմէն մօտէն ծանօթանայ իրենց տեղային ներքին կազմի վիճակին հետ, որոնք մեզ համար կարեւորութիւն ունէին ամէն տեսակէտներով: Ինչպէս նաեւ ծանօթանայ Պորշի ընկերական եւ տեղի վիճակին հետ: Մարթին]ը 21 օր Հովիտ մնալուն, տեղացի ընկերներու հետ խորհրդակցութեամբ կը ձեռնարկուի պէտք եղած կարգադրութիւններուն եւ այդպիսով կը բարձրացուի տեղային կազմակերպական վիճակը եւ անխախտ կը պահուի ընկերական յոյսը եւ հաւատքը ներկայ եւ ապագայի գործին հետ:

Ինչպէս գիտէք երբ Մարթին]ը իր այս դերակատարութեան յետոյ Հովիտէն հոս կը վերադառնար, այդ ատեն կը ձերբակալուի տարբեր խնդրոյ մը համար, որ մեզ հետ կապ չունէր. նոյնպէս կը ձերբակալուի այն ընկերը, որուն տունը օթեւանած էր Մարթին]ը. թէ այս ձերբակալութեան պարագան եւ թէ յետոյ խուզարկու-

թեան ատեն տան մէջէն գտնուած նամակ մը (որ նամանապէս մեզի հետ կապ չունէր) իրենց համար կատարուած թեան մօտ բարդ պարագայ մը կը ներկայացնէր. երբ իրենց դատավարութեան թղթերը հոս կեդրոնը եկան՝ Հիւնթի Իտամիէի<sup>14</sup> պաշտօնէութիւնը 20 ոսկի կաշառելու միջոցը գտնելով՝ 13 ամիս բանարկութեան յետոյ երկուքն ալ ազատ եւ անպարտ թողուեցան. այս տեղէն այդ որոշումէն յետոյ ալ, Հովիտի պաշտօնէութիւնը Մարթին]ը իր բուն հայրենիքը աքսորելու որոշում տրուաւ: Այս պարագային յետոյ ալ ինչ պատահելուն ծանօթ էք արդէն:

Մարթին]ի այս անակնկալ բանտարկութիւնը տեղի տուաւ մեզի ատեն մը բոլորովին զգոյշ լլլալ մինչեւ որոշ ատեն մը. մեր այս սպասողական դիրքը եւ թէ Մարթին]ի բանտարկութիւնը՝ առաջ բերաւ մեր շուրջը ունեցած խումբերուն եւ թէ համակրողներու մէջ, յարաբերական եւ դերերու պարտականութեան անկանոն վիճակ մը, որ յետոյ մեր կողմէ ձեռք առնուած ազդու միջոցներու եւ հակառակ գինք շրջապատող աննպաստ պարագաներուն, մասնաւորապէս Ռուշտի ջանքերուն շնորհիւ, ըստ բաւականին ստացաւ իր նախկին վիճակը եւ հիմա միացեալ ուժերով կ'աշխատինք աւելի կանոնաւորել եւ զարգացնել:

Վերջին գումարեալ մեր ընդհանուր ժողովի համար, 1907 Փետրուարին Հովիտի մէջ միասին մշակած եւ ընդկած ենք տեղեկագիր մը եւ իբր պատգամաւոր մեր ձայնը տուած էինք Սարհատին, երբ վերոյիշեալ իբր պատգամաւոր չէ ընդունուած. այդ պարագային տակ չգիտենք թէ մեր այդ տեղեկագրի հարցերը Ընդ. Ժողովը իր օրակարգի հարցերուն մէջ անցուցած է թէ ոչ եւ կամ ո'ւր մնաց մեր տեղեկագիրը: Ահա մեր արդի ունեցած կազմակերպեալ եւ տրամադրելի խմբական ընկերներու քանակը եւ թիւը

|                  |   |          |                  |
|------------------|---|----------|------------------|
| 1.- Վրէժ խումբ   | 5 | ընկերներ | կանոն. վճարողներ |
| 2.- Ապառաժ       | 7 | »        | »                |
| 3.- Արիւն        | 5 | »        | »                |
| 4.- Կաթակ        | 5 | »        | »                |
| 5.- Վազգէն       | 5 | »        | »                |
| 6.- Տիկնանց      | 4 | »        | օժանդակներ       |
| 7.- Վարիչ ներքին | 7 | »        | վճարողներ        |

Ունինք նաեւ մեզ հետ կապուած ասոնցմէ դուրս 15-է աւելի լաւ համակրողներու շրջան[ակ] մը, որոնցմէ առաջիկային պիտի կազմենք խումբ, իսկ ոմանց դիրքը եւ պայմանները չներելով խմբական ձեւի վերածուիլը՝ կը

13.- Յիշուած գրութիւնը՝ «Առնակայրի Գոստի, Դաշտի, խորհի եւ Արծուաբերդի Շրջանական ժողովի» խորագրով, տպուած է «Նիւթեր»-ու Ա. հատորին մէջ, էջ 258-262:

14.- Վերին ատեան:

մնան միշտ իրենց անհատական վիճակին մէջ, որոնցմէ կ'օգտուէինք միշտ զանազան գործին օգտակար պարագաներով:

**Զէնքեր.** Խմբերու ընկերներէն ոմանք միայն ցարդ ունին իրենց տեղային հասարակ սեփական գէնքերը: Արդէն մեր տեղային ներքին կանոնագիրը կը պարտաւորեցնէ մեր ընկերները, որ իբր յեղափոխական իրենց սեփական միջոցներովը կարելի եղածին չափ զինուին: Կազմակերպութիւնս իւր տրամադրութեան տակ ունի յեղ. գաղտնի գրադարան մը, 30-է աւելի յեղափ. գրքեր, մասնաւորապէս Րաֆֆիի կարեւոր երկերովը, որոնց ընթերցումէն եւ մտքերու պատրաստութենէն կազմակերպութիւնս կ'օգտուի իր հետ կապելով նոր-նոր ուժեր: Ռահվերի<sup>2</sup> օրով Վարդանի<sup>12</sup> խորհուրդով գնուած 3 գէնքեր եւ 2 ատրճանակներ իրենց քիչ փամփուշտով փոխադրուած է Հովիտ, ինչպէս նաեւ վերջը մեր ձեռքով գնուած եւ դարձեալ նոյն տեղը փոխադրուած է 5 կռաներ իրենց փամփուշտներովը:

Բ.

Դաշտը իր տեղական կազմակերպական գործէն զատ, իր վրայ առած է նաեւ շրջակայ կէտերու հետ փոխադրական եւ ներքին յարաբերական գործը, ամրացնելու համար անոնց մէջ առաջ եկած դաշնակցական կազմակերպական կապը եւ կարելի եղածին չափ գործի մէջ առաջ մղել զանոնք: Այս մտքին իբր միջոց ընդունած ենք ա) ներքին թղթակցութիւնը բ) դրկել իրենց յեղափ. թերթեր ու գրքեր գ) ի հարկին իրենց մօտ դրկել պատուիրակ ընկերներ կենդանի խօսքերով եւ միջոցներով բարձրացնելու համար իրենց տեղական կազմը ու վիճակը, եւ այդպիսով առաջ բերել թէ իրենց տեղական ներքին տարրերու եւ թէ մեզ հետ իրար յարաբերական կապ: Այս տեսակէտով մինչեւ ցարդ եւ ասկէ յետոյ ալ մեր յարաբերութիւնը կը շարունակուի հետեւեալ կէտերու հետ.

- ա) Խորշ բ) Հովիտ գ) Հեղեղատ եւ դ) Կարմիր-Լեռ<sup>1</sup>:
- Այս 4(չորս) կէտերու մէջ ալ ունինք մեզի եւ գործին հետ կապուած ընկերներ, բայց ասոնց մէջ ընկերներու շատութեան եւ բաւականին կանոնաւորութեան տեսակէտով ա(ռաջին տեղը կը բռնէ Հովիտը (չնորհիւ այդ տեղի ընկեր Մկոյին), որոնք 40ի մօտ կարծենք ընկերներ ունին հիմա: Գրած եւ թելադրած ենք իրենց, որ տեղւոյն գործերու եւ վիճակին վրայ մանրամասն տեղեկագիր մը պատրաստելով դրկեն մեզի ձեզի հասցնելու համար եւ կամ ուղղակի իրենք դրկեն: - Խորշի կազմը թոյլ է. կան միայն մի քանի ընկերներ, որոնք յարաբերութիւններ կը պահպանեն եւ ի հարկին դիւրութիւններ կու տան մեզի ասոնց վիճակը բարձրացնելու համար առաջիկային կը մտածենք ձեռք առնել ուրիշ միջոցներ: Հեղեղատ. հոս կան 6 (վեց) ընկերներ որոնց մին թաթուլն է, որը բնիկ

տեղացի է եւ գրեթէ Մ(արթին)ի հետ (Թունաստանէն) միաժամանակ ներս մտած եւ հաստատուած է հոն. ինքը ինքնուրոյն կերպով անկարող է կազմակերպել[ու] եւ ուժեր առաջ բերելու ընդունակութենէն, բայց գործին վստահելի եւ ամէն գնով տրամադրուած է:

**Կարմիր-լեռ.** 8-10 ընկերներ կան հոս եւ համակրողներու շրջան մը, որոնք ի հարկին իրենց հետ միանալու տրամադիր: Վերջին այս երկու կէտին վրայ (Հեղեղատ եւ Կարմիր-լեռ), մենք կը նայինք իբր ապագայի կարեւոր ապստամբավայրի, որ այդ նպատակին համար ամէն տեսակ դիւրութիւններ եւ միջոցներ կը ներկայացնէ: Եւ ահա այս մտօք ինչ որ անհրաժեշտ էր անցեալ տարի հոն զրկեցինք մեր կողմանէ պատուիրակ ընկեր մը, որպէս ի եղած այդ ուժերու եւ մեր մէջ պարզուի գործին նպատակը եւ աւելի սերտ յարաբերական կապ առաջ գալ մեր եւ իրենց մէջ. եւ իրենց կազմը աւելի օրինական եւ հաստատ հողի վրայ դրուի: Մեր ընկերը մնաց հոն մէկ ամիս եւ այս երկու կէտերուն հետ մեր յարաբերական կապերը եւ այլն կարգադրելով վերադարձաւ. բայց ասկէ յետոյ ի նկատի ունենալով իրենց տեղային կարեւորութիւնը, պէտք է ձեռք առնել ազդու միջոցներ իրականացնելու համար գործի տեսակէտով մեր այս կարեւոր փափաքը, որ եթէ կարելի է առաջիկային հոն հաստատել երկու կամ մէկ գործին կարեւոր ընկերներ, որով կարելի ըլլայ տեղացիներու հետ միացած ուժերով առաջ մղուի տեղային եւ շրջակայ կազմակերպական գործին հետ այս նպատակը (ասոնց ալ գրած ենք որ իրենց արդի կազմի եւ վիճակի մասին տեղեկագիր մը պատրաստելով մեզի զրկեն ի հարկին ձեզի հասցնելու համար):

Գ.

**1.- Երկրի ընդհանուր պայմանները.**

Լեռնավայրի գլխաւոր քաղաքները եւ իրենց հետ կապուած անմիջական կէտերը իրար հետ չփոխելու եւ յարաբերելու տեսակէտով՝ պայմանները բոլորովին կը տարբերին Մեծ ու Փոքր Հայքի վրայ տիրող վիճակէն. մէկ նահանգի (վիլայէթ) հետ կապուած եւ անոր ազդեցութեանը տակ եղող մեծ քաղաքներէն սկսելով մինչեւ փոքր գիւղերը դրկելու համար առեւտրական եւ կամ որեւէ պատրուակի տակ, բնաւ դժուարութիւն եւ արգելք չկայ (մասնաւոր բռն գիւղացիներու համար): Հետեւաբար այս տեսակէտով ստեղծուած որեւէ պատրուակ-միջոց, լինի տեւական եւ կամ ժամանակաւոր, կըրնայ մեզ դիւրութիւններ տալ շուտ եւ կարճ ժամանակի մը մէջ կարեւոր կէտերու վրայ առաջ բերել նպատակին ձգտող կազմակերպութիւններ եւ ներքին ամուր յարաբերական կապերով կապուի իրար հետ:

**2.- Ժողովուրդին վիճակը**

Լեռնավայրի ընդհանուր հայ ժողովուրդի վիճակը եւս թէ տնտեսապէս եւ թէ մտաւորապէս ալ բոլորովին

կը տարբերի Մեծ եւ Փոքր Հայքի ազգայիններու վիճակէն. քիչ բացառութեամբ հոս ժողովուրդը բաղդատաբար այս երկու կարեւոր պարագաներով ալ նպաստաւոր վիճակ մը կը ներկայացնէ. եւ մասնաւոր բացառութեամբ, ժողովուրդը գիտակից է իր ներկայ եւ թէ ապագայի վիճակին եւ սպառնացող վտանգին (տիրող ներկայ կառավարութեան ապօրինի դրութիւնը եւ այլն): Բայց յեղափ. մտքի տեսակէտէն շատ թերի հաւատք եւ յոռետես գաղափար մը կը կրէ. այս շատ կարեւոր եւ միանգամայն ցաւալի համոզմունքը իրեն ներշնչողը եղած են ա) Անցեալին Հ(նչակեան)ներու սխալ գործունէութիւնը եւ անոնց կատարած խաբբայութիւնները. բ) Այս կարեւոր վայրի ժողովուրդը մեծաւ մասամբ անգիտակից է Հ. Յ. Դ. կազմակերպութեան եւ անոր կատարած գործերուն. գ) Մինչեւ ցարդ մեր կողմանէ պակաս է այս կէտերուն վրայ հաստատուող գործին կարեւոր դեր խաղացող գործիչներու ներկայութիւնը եւ ատոր հետ միասին պակաս է ցարդ գործնական որոշ հոսանք մը, որով կարելի ըլլար գործին վստահութիւն ներշնչող պարագաներով՝ անոր մէկ մասը կապել գործին հետ, իսկ միւս կողմանէ ալ իր անխաղախ եւ մաքուր գործունէութեամբ կարողանար մասամբ ժողովուրդի մէջէն խախտել ու արմատախիլ ընել այդ շատ վնասակար կարծիքը: Մենք մեր տեղական նախնական կազմակերպութեան ատեն մինչեւ հիմա ալ հասարակութեան մէջ տեղ բռնած այս անվստահութեան տեսակէտէն որքան դժուարութիւններ կրած ենք եւ կը կրենք, մինչեւ որ մեզ հետ կապուող ընկերներու եւ համակրողներու մէջէն կարողացած ենք խախտել այդ վնասակար միտքը՝ իրենց վստահութիւն տուող միջոց-պարագաներով, որովհետեւ յեղափոխական ասելով կը հասկանան Հ(նչակեան)ներու խաբբայութիւն եւ այլն:

**3.- Յեղափ. գործի ընդհ. տեսակէտով Լեռնավայրի ընծալած ներքին եւ արտաքին միջոցները.**

Լեռնավայրի ունեցած աշխարհագրական դիրքերու առաւել նպաստաւորութեան եւ անոր մէջ գտնուած այն գլխաւոր վայրերուն առաւելութիւնները, որոնք ապրտամբութեան եւ ուժերու կեդրոնացման համար մեզի կու տան շատ մը վստահութեան զօրաւոր փաստերը եւ օգտակար գաղափարները, չենք ուզեր հոս անոնց մանրամասնութեանց մէջ մտնել եւ ոչ ալ կ'ուզենք թուել հոս՝ այս կէտի վրայ ապագայի յեղափոխական զօրաւոր շարժումներու — ապստամբութեան մը — այն օգտակար պարագաները, որը կարող է ոչ միայն ազդել եւ զբաղեցնել Եւրոպայի ընդհանուր միտքը, այլեւ կարող է որոշապէս ազդել շահամոլ դիւանագիտութեան վրայ: Այս խիստ կարեւոր հարցերուն հետ, մենք հաւատացած ենք որ մեր կազմակերպութեան մարմինները եւ թէ այն ընկերները, որոնք կ'ուզեն վճռական դեր խաղալ այս վայրի ներկայ եւ ապագայի գործունէութեան հետ, արդէն իրենց կողմէն նախատեսած եւ ըմբռնած են այս վայրի

գործին հետ կապուած շատ մը կարեւոր օգտակարութիւնները. մենք կը բաւականանանք միայն թուել հոս այն պարագաները, որ այս վայրը յեղափոխական ձեռնարկի մը ներքին պատրաստութեան համար շատ մը առաւել դիւրութիւններ կու տայ մեզի օգտուելու տեսակէտով այս երկրի թէ ներքին եւ թէ արտաքին պայմաններէն:

1.- Երբ կարեւոր կէտերու վրայ հետզհետէ զօրաւոր դիրք ստանան մեր տեղային կազմակերպական ուժերը եւ մարմինները, բուն տեղւոյն մէջէն կարող ենք ամէն տեսակ կանոնաւոր գէնքեր գնել եւ ձեռք բերել թրքական մարթին, յունական կռաներ իրենց փամփուշտներով եւ մեծաքանակ վառօդ, որ թէ տեղւոյն մէջ կը պատրաստուի եւ թէ դրսէն ալ կը ներմուծուի (Մոցի եւ տեղւոյն մէջ կան մասնաւոր կոնտրաբանդիստներ<sup>15</sup>, որոնք դրսի աշխարհէն այս բաները Մոցի ծովեզերեան եզերքով ներս մտցնելով շահու համար կը ծախեն): այս միջոցէն օգտուած են եւ կ'օգտուին շատեր եւ մասնաւորապէս Տերսիմի եւ Ալմատաղի քիւրտերը:

2.- Երբ մարդիկ լոկ շահի վրայ հիմնուելով երկրին ծովեզերքի այս յարմարութիւններէն կրնան օգտուիլ՝ մենք իբր յեղափոխական գործի յաջողութեան եւ գաղափարի յաղթանակին նուիրուածներ, երբ հետզհետէ մեր կազմակերպական մարմինները եւ իրենց վայրերը զօրաւոր դիրք գրաւեն, միթէ չենք կարող օգտուիլ երկրի այս ծովեզերեան նպաստաւոր պայմաններէն:

3.- Երկրի ներքին երթեւեկութեան պայմանները, կառուպաններու եւ ջորեպաններու մէկ ծայրէն միւս գծերը շատ նպաստաւոր եւ անկասկածելի դիւրութիւններ կու տան մեզի՝ մեր թէ ներկայ եւ թէ ապագայ փոխադրութեանց տեսակէտով օգտուելու մէկ կէտէն միւսը (ի բաց առեալ լեռնային գաղտնի ճանապարհներէն):

Դ.

Լեռնավայրի մեր բուն գործունէութիւնը ձգտելու է մի ընդհ. ապստամբութեան եւ ատոր համար ուժերու կեդրոնացման գլխաւոր վայրեր ինչպէս մինչեւ ցարդ նկատուած է՝ ասկէ վերջն ալ պէտք է նկատել հետեւեալ վայրերը. ա) Արծուաբերդ բ) Միջնաբերդ, գ) Հեղեղատ<sup>1</sup>

1.- Վալթի (Արծուաբերդ)<sup>1</sup> համար մինչեւ ցարդ մեր ձեռք բերած ուսումնասիրեալ տեղեկութիւնները հասցուցած են մեզ հետեւեալ համոզմունքին. ա) Տեղւոյն վրայ կազմակերպութիւն առաջ բերելը եւ կամ գուտ տեղացիներէն անկախ հոգատար եւ շրջակայ կէտերուն հետ յարաբերութիւն պահող մարմին առաջ բերելը՝ մինչեւ հիմա անկարելի եղած է եւ է. բ) Տեղացիներուն վրայ չենք կարող իրենց ինքնուրոյնութեան վրայ վստահել իրենց յանձնելով դրամական միջոցներ եւ այլն (որպէս-

15.- Մաքսանգնոյն:



զի) ապագայի նախապատրաստական պէտքերուն համար գործածեն տեղւոյն վրայ եւ կամ դրսէն հայթհայթեն, որովհետեւ մինչեւ հիմա այս մտքով իրենց յանձնուած գումարները իրենց կոկորդը անցած եւ մեզ միշտ շահագործած են: գ) Այդ վայրի պայմանները եւ կառավարութեան խիստ կասկածոտ խստութիւնները միշտ արգելք հանդիսացած են մեզի՝ հոն դրսէն մնալուն ընկերներ հաստատելու եւ անոնց միջոցով ապահովելու տեղային ներքին թէ արտաքին այս շատ կարեւոր յարաբերական գործը: դ) Սահմանաբերող որ այս վայրի ամենամօտիկ եւ հայաշատ կէտն է, որ նա միայն կարող է ի հարկին այդ նպատակին մեծ դեր խաղալ, դժբախտաբար այս վայրի մարդոց վրայ ալ մեր համոզմունքը մինչեւ հիմա շատ թոյլ եղած է եւ մեր յարաբերութիւնը դադրած է այն ծանօթ ձեռքակալութիւններէ ի վեր: եւ որքան որ այս մասին ջանացինք Հոգւոյ միջոցաւ տեղւոյն վրայ կապեր ստեղծելու, չկրցանք յաջողիլ: Քանի մը շաբաթ առաջ այդ կէտի առթիւ բնիկ տեղացիի մը հետ բանակցութիւն մը ունեցանք, որ խոստացաւ մեզի իր աջակցութեամբ տեղւոյն վրայ կազմակերպութիւն եւ յարաբերական կապ ստեղծել: եւ այս նպատակաւ մեկնեցաւ հոն: կը սպասենք այս մասին իւր տեղեկութիւններուն: Մեր կարծիքով մինչեւ որ Սահմանաբերող մէջ բաւականին զօրաւոր եւ նպատակին կռիւնով վստահելի կազմակերպական մարմին մը չունենանք, Արծուաբերողի հետ մեր ընկերքը չի դիւրանար: հետեւաբար ամէն բանէ առաջ աշխատիլ եւ ջանք խնայելու չենք նախ ձեռք բերել Սահմանաբերողը, ու յետոյ՝ զօրացնելով Սահմանաբերողի, Հոգւոյ եւ Քիւրտ լեռի մէջ գոյութիւն առած եւ կամ ունեցած մեր կազմակերպութեանց վիճակը, որք միայն Արծուաբերողի հետ մեր թէ ներկայի եւ թէ ապագայի ընկերքը կը դիւրացնեն, քանի որ մէջբերուած այդ գլխաւոր խոչընդոտ-պարագաներով ուղղակի Արծուաբերողի մէջ չենք կարող կազմակերպութիւն եւ մարմին մը ստեղծել: Այդ նպատակի համար մեր բոլոր ուժը թափել եւ կեդրոնացնելու ենք զօրացնելու համար վերոյիշեալ այդ երեք վայրերը եւ անոնց մէջ կեդրոնացնելով մեր ուժերը ապագային յանկարծակիի բերել թէ զիրենք եւ թէ արտաքին թշնամին: Ամէն պարագայի մէջ ալ Արծուաբերողը ապամբեցնելու մեր ապագայ կուրսին համար բոլոր պատրաստութիւնները պէտք է որ կեդրոնացնենք այդ շրջակայ վայրերուն մէջ (մասնաւորապէս ռազմական) եւ իրենց մեծաքանակութեամբ ներս մտցնել միայն բուն կուրսի նշանը տալէն գէթ մէկ ամիս առաջ: Իսկ եթէ երկար ժամանակի մէջ մաս առ մաս փոխադրական եւ այլն գործ ունենանք այդ վայրերու հետ այդքան խիստ հսկողութեան տակ, կարող է օր մը չէ օր մը խնդիրը բացուելով մեր ամբողջ փայտաշատ ծրագիրը քայքայել եւ վայրը ի գուր տեղը վտանգուի: Արդէն Արծուաբերողի ժողովուրդը ինքնին կուրսը ժողովուրդը եւ այդ մտքին միշտ տրամադիր, երբ տեսնեն թէ իրենց

չուրջը այդքան ոյժ պատրաստուած է ու անցեալէն տարբեր ուղղութեամբ իրենց միջոց կը տրուի, ու այս անգամ կուրսի ասպարէզին վրայ իրենք միմեկին մնալու չեն, այն ատեն իրենք սիրաշօթար կը մասնակցին եւ մենք այդ ձեռով շատ բան կը շահինք:

**Միջնաբերք<sup>1</sup>.** Այս վայրի մասին մենք մօտէն ուսումնասիրեալ տեղեկութիւն մը չունինք: Այս կէտերու հետ միշտ յարաբերութիւն ունեցած է կարծենք Սոր Վիրապը եւ հետեւաբար կարելի է անոնցմէ ստանալ տեղեկութիւններ՝ մինչեւ հիմա իրենց ձեռք բերած տեղեկութիւններէն:

**Հեղեղատ<sup>1</sup>.** Այս վայրը իր աշխարհագրական դիրքով եւ վայրին ընդհանուր լեռնային բնական ամուր յարմարութեամբը, առաջինը բուն ապստամբական տեսակէտով կարող է որոշ դեր խաղալ, մանաւանդ իր հետ առնելով Կարմիր-լեռ<sup>1</sup>: եւ այն շատ մը գուտ հայաբնակ գիւղերը, որոնք ամենամօտ գծերով կապուած են ծովագերքին հետ, որոնք կրնան մեր ապստամբութեան ատեն անկէ առաջ փոխադրական գործի եւ այլ պարագաներով գործին (մէջ)մեծ դեր կատարել: Այս տեսակէտով անցեալին Հինչակեանները այս վայրէն շատ մը տեսակէտներով օգտուած են: տեղացի ժողովուրդը շատ տրամադրութիւն ցուցուցած եւ գոհողութիւններ կատարած է: բայց ինչպէս ուրիշ տեղեր նմանապէս ալ այս տեղի ժողովուրդի մտքէն չէ խախտուած Հինչակեաններու իրենց գլխին խաղցած այն տխուր յուսախաբութիւնները, որ յետոյ կրեց տեղական ժողովուրդը: եւ ահա այս պատճառով մեր այս տեղի ընկերները իրենց առջեւ ունենալով այս խոչընդոտ պարագան՝ չեն կրցած ցարդ աւելի յաջող քայլեր առնել եւ լայնացնել իրենց շրջանակը: բայց ինչ որ ալ ըլլայ, թէ ներկայ եւ թէ ապագայի գործին կարեւորութիւնը ի նկատի ունենալով պէտք է հիմակուանէ միջոցներ ձեռք առնուին այս խիստ կարեւոր վայրի եւ իր շրջանակներուն մէջ ստեղծելու համար իւր նպատակին ձգտող կազմակերպեալ ուժեր եւ մարմիններ: Ներկայիս այս տեղերուն մէջ գոյութիւն ունեցող մեր ընկերներու սաղմը եւ ուղղակի տեղւոյն հետ մեր յարաբերութիւնը եւ իրենց վայրերուն պայմանները եւ ընկերներու տեղեկութիւնները՝ ապագայի յաջողութեան յոյսերը կուտան մեզի, երբ մեր կողմէ միջոց եւ գոհողութիւն չխնայելի:

Ե.

Լեռնավայրի կարեւոր կէտերու մէջ մինչեւ ցարդ աչքի զարնող կազմակերպութիւններ առաջ չգալուն եւ եղածները գործնապէս չկարենալ զարգանալուն բուն պատճառը նախ պէտք է ընդունիլ որոշ գործիչ ընկերներու բացակայութիւնը: բ) դրամական պէտքերու պակասութիւնը, եւ անվերջ սպասողական վիճակը: Գէթ ասկէ վերջ կը սիրենք յուսալ, թէ մեր կազմակերպութիւնը այս

բոլորին վերջ դրած՝ ասկէ վերջ անցեալէն տարբեր վերաբերում մը պիտի ունենայ այս կարեւոր վայրի գործի բոլոր պէտքերուն համար: հակառակ պարագային անցեալի դրութիւնը եւ անվերջ սպասողական վիճակը առանց հիմնական գործի եւ պէտք եղած միջոցներուն՝ արդի եղած ուժերն ալ առանց օգուտի կը փճանան, կը կորին:

Լեռնավայրի գլխաւոր եւ երկրորդական կէտերուն մէջ կազմակերպուելուն եւ թէ ապստամբական գործին նախապատրաստական պէտքերը առաջ մղելու եւ կանոնաւորութեան տակ առնելու համար, պէտք է որ Լեռնավայրը բաժնուի երեք (3) գլխաւոր կէտերու: ա) Դաշտի, բ) Սոր-Վիրապ եւ գ) Կարմիր-լեռ<sup>1</sup>: Այս 3 գլխաւոր կէտերու մէջ բաժնելով իրենց մօտակայ երկրորդական վայրերը եւ ամէն մի գլխաւոր վայր իր վրայ առնէ իր մէջ ինչպէս ապստամբավայրի կանխապատրաստական դերը, օրինակի համար - Դաշտը իր հետ կապուած մօտակայ վայրերով իր վրայ ստանձնէ - Արծուաբերողի ապստամբական գործը: Սոր Վիրապ իր շրջանով՝ Միջնաբերողի ապստամբական գործը եւ Կարմիր-լեռ՝ Հեղեղատի ապստամբական գործը: Եւ դրսէն եկած գործիչ ընկերները տեղաւորուին այս 3 վայրերուն մէջ եւ այս 3 վայրի յարմարագոյններէն մին ընտրել աւագ կեդրոնավայր, որը միայն (աւագ կեդրոնը) առաջմ յարաբերութիւն պահէ դրսի աշխարհի հետ, իսկ մնացեալները կապուին աւագ կեդրոնի հետ: Այս եւ տեղային խնդիրներու, ինչպէս նաեւ կազմակերպական գործին վերաբերող ուրիշ բաներու համար մենք մտադիր ենք առաջիկայ Ս. Մընունդին օրերը ունենալ Շրջանական ժողով, ուստի աշխատելու է եւ կը պահանջենք որպէսզի ներս գալիք ընկերներու գէթ մի մասը մինչ այդ ատեն հոս հասած ըլլայ մասնակցելու մեր այդ ժողովին, ուր մեր տեղային գանազան գործերու մասին խորհրդակցութեանց եւ կարգադրութեանց հետ մշակուի երկրի գործունէութեան համար այս մասին մասնաւոր ծրագիր:

**2  
ՊԵՆԱԿԱՆԵՐ**

1. Կը պահանջենք Արեւմտեան Բիւրոյնէն եւ Լեռնավայրի օժանդակ մարմինն յետ այսու օրը օրին պատասխանել մեր դիմում-նամակներուն եւ գոհացում տալ առաջարկ-պահանջներուն:
2. Ըրկել մեզի շուտով նուիրատուներու եւ այլնի համար ստացագրեր, գործիչի վկայականներ եւ պատուիրակի տպեալ քարտեր (քարտ-վիզիտի ձեւով), որով ներքին եւ արտաքին դիմում-գործերու համար գործածուին եւ կազմակերպութեանս կողմէն եղած գործին ունէ առաջարկ մը՝ վստահութեան եւ կարեւորութեան արժանանայ:
3. Օժանդակ մարմինէն գատ, կը պահանջենք ներս

ղրկել առնուազն երեք (3) գործիչ ընկերներ, որոնք ձեռնհասութիւններ ունենալու են՝ ներքին պրոպագանդի կազմակերպութեան եւ այլն (Մանօթ-Գործիչ ընկերները պէտք է որ որոշ յարմարութիւններ ունենան երկրի գանազան պայմաններուն հետ համակերպելու, լեզուի եւ այլն):

4. Նշանակեալ Լեռնավայրի (Մարմնի) հետ վճարական դեր ունեցող օժանդակ մարմինը պէտք է որ ներս գայ եւ հաստատուի երկրի մի կարեւոր կէտի վրայ, որ գործակցելով տեղի ընկերներու հետ կարելիութիւնը ունենայ մօտէն գիտակցելու թէ գործերուն եւ թէ անոր պէտքերուն հետ:

5. Նշանակեալ օժանդակ մարմինը պէտք է որ կարելի եղածին չափ շուտ հաստատուի երկրի մի որոշ կէտի վրայ: հակառակ պարագային իր կազմը եւ իր առաջարկները երկրի գործին վերաբերմամբ՝ մեր կողմէն անընդունելի եւ անվաւեր պիտի նկատենք:

6. Յետ այսու տեղական կազմակերպական գործին հետ միաժամանակ միացնելու է ապագայ բուն գործին նախապատրաստական եւ փոխադրական պէտքերը, որ առաջնորդ թէ ժամանակ կը շահինք եւ թէ մեր շուրջը համախառնուած ընկերներուն մէկ որոշ մասը այդ գործերով կը պատրաստենք ապագայ գործին որոշ դերակատարութեանց համար:

7. Ներսէն եկած գործիչ ընկերներու վրայ մտադիր ենք աւելցնել տեղային յարմարագոյն ընկերներէն եւ կազմել շրջուն գործիչներ անուան տակ մարմին մը, որոնք կապուած իրենց տեղական մարմիններուն հետ, առանց խորհրդակցութեամբ (ունէ պատրուակի տակ) շրջին հոս եւ հոն թէ իրենց վայրերը ուսումնասիրելու եւ թէ եղած կազմակերպական կապերը զօրացնելու եւ թէ նոր ընկերներ եւ կապեր ստեղծելու համար: Այս նպատակին համար դրամական միջոցներու առաջ կանգ առնելու չէ: պէտք եղած ծախսերը հոգալու է թէ ներքին եւ թէ արտաքին միջոցներով:

Մեր այս կազմած տեղեկագրով բացատրելով մեր ներկայ գործերու վիճակը եւ ապագայ գործերու հետ մեր ունեցած հայեցքները, առ այժմ այս չափով կը բաւականանանք, ապագայի մեր գործունէութեան թողնելով աւելի կենսական խնդիրներու պէտքը՝ անոնց չափը ճշդելու համար:

Դաշտի Հ. Յ. Դ. Վարիչ Մարմին  
ՍՄԲԱՏ, ՄԱՅԻԼ, ՌՈՒՇՏԻ, ԱՇ.-ՄԱՐԹԻՆ

Ե.Գ. Մնացեալ երեք ընկերները գանազան պատճառներով չկրցան ներկայ գտնուիլ ստորագրելու համար, բայց պարունակութեան ծանօթ եւ համաձայն են: մեր հաշուեկշիռը երկու տարուայ յաջորդաբար պիտի ստանայք:

ՌՈՒՇՏԻ եւ նոյնք

XXIII

ԵԳԻՊՏՈՍ

Քսաներորդ դարու սկիզբը Եգիպտոսի փոքրաթիւ հայկական գաղութը կեդրոնացած էր գլխաւորութեամբ Աղեքսանդրիա եւ Քահիրէ քաղաքներուն մէջ եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը, հակառակ այն իրողութեան որ տասնամեակէ մը ի վեր հոն ուրք դրած էր, չէր յաջողած տակաւին հաստատուն կազմակերպութեան մը վերածուիլ: Պատճառը հայկական միջավայրին մէջ հնուց արմատ նետած քաղքենի-աղայական մտայնութիւնը չէր միայն, ոչ ալ յեղափոխական ոգիի կամ հայրենասիրութեան բացակայութիւնը: Նշուած երկու քաղաքներուն մէջ ստեղծուած էին դաշնակցական ենթակոմիտէութիւններ, ուր անպակաս էին սակայն ներքին վէճերն ու պայքարները: Սկզբունքային կամ գաղափարական ոչ մէկ տարակարծութիւն. պարզապէս անհատներու շուրջ հաւաքուած խմբակցութիւններ եւ կազ ու կոիւ, որոնց մասին անվերջանալի գանգատներով ու բողոքներով կ'ողողուէին Արեւմ. Բիւրոն եւ Ընդհ. Ժողովները:

Եւ սակայն, Եգիպտոսի աշխարհագրական դիրքը, գոյութիւն ունեցող համեմատական ազատութիւնները (թրքական իշխանութիւնը միայն անուանական էր) այլեւ տնտեսութեան ընձեռած հնարաւորութիւնները կ'ընէին այնպէս, որ կարելի ըլլար յեղափոխական գործունէութեան համար պարարտ հողի վերածել երկիրը: Իսկ յեղափոխական կուսակցութիւնները հոն մուտք գործած էին կանուխէն. նախ հնչակեանները, ապա 1895էն ետք դաշնակցական գործիչներէն Քարեգին Խաժակն ու Հրաչը (Հայկ Թիրեաքեան): Յաջորդած էին Յար. Փալֆայեան եւ Տոքթ. Կ. Փաշայեան, որոնց օրով Եգիպտոսը դարձած էր կապի գլխաւոր օղակը ամբողջ շրջանին համար: Աղեքսանդրիան վերածուած էր Լեռնավայրի Պատ. Մարմնի կեդրոնին, բայց հոն հաստատուած կամ այնտեղէն անցնող գործիչները կը ղեկավարէին ոչ այնքան Եգիպտոսի կուսակցական միաւորներու գործունէութիւնը, որքան մնայուն հաղորդակցութեան մէջ կը պահէին Արեւմտեան Բիւրոն՝ Լեռնավայրի, Ոսկեհանքի (Իզմիր), Յունաստանի, Կիպրոսի եւ այլ շրջաններու գործերուն: Հո՛ւ, համակուսակցական այս դերակատարութեան մէջ կը կայանար Եգիպտոսի կարեւորութիւնը: Իսկ ինչ կը վերաբերի տեղական, ներքին կազմակերպութեան, այնտեղ ալ կարգ ու կանոն հաստատելու համար շուտով պիտի գործուէր Նիկոլ Աղբալեանը (Ն. Հանգոյց), որ նախ Եգիպտոս, ապա Լեռնավայրի տարածքին պիտի գործէր շուրջ երեք տարի (1905-1908):

Եգիպտոսի թղթածրարին նիւթերը խմբած ենք հետեւեալ կարգով.- Առաջին երկու բաժիններուն մէջ տրուած են տեղեկագրեր, ժողովական արձանագրութիւններ եւ Ընդհ. Ժողովին ուղղուած նամակներ: Երրորդ բաժինը կը պարունակէ Ն. Աղբալեանի յընդած զեկուցագրերն ու նամակները Արեւմ. Բիւրոյին: Ն. Աղբալեանի գործիչային այս առաքելութիւնը կը սկսի 1905ի Գեկտեմբերին եւ կ'աւարտի 1908ի կէսերուն: Չորրորդ եւ վերջին բաժինը յատկացուած է Եգիպտոսի հինգ ընկերներու այն նախաձեռնութեան, որմով կ'առաջադրէին, առաւելաբար իրենց սեփական միջոցներով, մեկնիլ Սեբաստիոյ նահանգը եւ տեղւոյն վրայ կուսակցական եւ մարտական կորիզներ ստեղծել:

Ե. Փ.

Ա.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵԳԻՊՏՈՍԻ

Եգիպտոս հասարակութեան դաշնակցական անհայր ընկերներու կողմէն

Ա. Ի՞նչ է Եգիպտոսը

Մօտ 10 տարի է որ Դաշնակցութիւնը աչքը դարձուցած է Եգիպտոսի վրայ, այսինքն 1898ի դէպքերէն ասդին երբ, իբր գաղթականութիւն, այս երկիրն ալ որոշ կարեւորութիւն մը ստացաւ:

Սկիզբի տարիները սակայն Դաշնակցութիւնը, անշուշտ, շատ տկար մնաց այս երկիրն մէջ որովհետեւ անկէ առաջ բաւական ուժեղ արմատներ ձգած էին միւս կուսակցութիւնները: Դաշնակցութեան՝ Եգիպտոսի մէջ քիչ շատ զօրեղ կերպով յիշատակումը կը սկսի ընկեր Բաբայեանի՝ այս կողմերը այցելութեան թուականէն: Ընկեր Բաբայեանը անշուշտ, այն ատենէն իսկ, ըմբռնելով թէ Եգիպտոսը Դաշնակցութեան համար կրնայ ըլլալ ամէնէն աւելի նիւթական հաստեղծարարութեան աղբիւր մը, որոշեց Դաշնակցութեան՝ շահերը յանձնել այնպիսի անձերու պաշտպանութեանը՝ որոնք ըլլային բաւական մը ազդեցիկ, դիրքի տէր ու կէս-bourgeois կարենալ ըլլալու համար միեւնոյն ժամանակ յարաբերութեան միջնորդներ բուն յեղափոխական) ժողովրդական դասակարգին եւ մենծ աղա հարուստներուն միջեւ: Սա Գալֆայեան Միհրանի եւ իր ընկերներուն շրջանն է, ուր կար Աղեքսանդրիոյ) կոմիտէ անուն մարմին մը իր կնիքով եւ իր որոշ իրաւասութիւններով, առանց սակայն ընկերական քուէարկութեամբ ընտրուած ըլլալու եւ սոսկ ներկայ եղող դաշնակցական) գործիչին նախաձեռնութիւնովը կազմուած:

Բաբայեանէն ետքը Հրաչեայ՝ շարունակեց իր նախորդին գործը, ինքն իսկ համոզուած ըլլալով թէ Եգիպտոսի համար այդ սիւտեմը կրնայ միայն օգտակար ըլլալ Դաշնակցութեան: Դժբախտաբար սակայն երկուքին ալ ջանքերը ի դերեւ ելան: Ու այս անյաջողութեան պատճառներուն մէջ որոնք բազմադիմի են, ամենակարեւորը այն պարագան է թէ յիշեալ դաշնակցական) գործիչները իրենց կազմած կոմիտէներուն իբր անդամ առած էին մարդիկ, որոնք զուրկ էին իսկական յեղափոխականութեան մը խոր ու սրտագին համոզումներէն, այլ տողորուած էին պարզ dogmatique՝ ազգասիրութիւնով մը միայն, անկարող կամ առնուազն անտր-

րամադիր ոեւէ զոհարարութեան եւ մանաւանդ՝ իրականին մէջ աւելի փառատենչիկ: Ու բնական է թէ այս տեսակ մարդիկ առաջին ամենափոքր դժուարութեան հանդէպ նահանջէին. եւ այնպէս ալ եղաւ, քանի որ այդ բռնադատուած դաշնակցականները մէկ քանի աննշան գործունէութիւններէ ետք շուտով հրաժարեցան, երբ իրենց այդ «յեղափոխականութենէն» անձնապէս «վրնասուելու» երկիւղը մտաւ իրենց մէջ ու ցրուեցան եւ Եգիպտոսի Դաշնակցութիւնը մնաց դարձեալ շատ տրկար ու գրեթէ ոչինչի վերածուած. իր գոյութիւնը հազիւ կրցաւ քաշկուտել մինչեւ վերջին Ընդհ[անուր] ժողովը (1904):

Այս Ընդհ. ժողովը կը հաստատէր դաշնակցական) մարմիններու կազմութեան համար նոր օրէնքներ՝ հիմնուած խմբական դրութեան եւ հաւասար ձայնատրուութիւններով ընտրութիւններու եւ ցենզի վրայ: Ճիշդ այս ատենէն կը սկսի Դաշնակցութեան) ընկերական տգեղութիւնները Եգիպտոսի մէջ: — Մէկ կողմէն բաւական հասուն ղեկավարող ուժերու բացակայութիւնը կամ ստիպեալ չէզոքացումը, միւս կողմէ ընկերներու՝ իրենց յեղափոխականութեան մէջ կարգապահական գիտակցութենէ բոլորովին զուրկ ըլլալը պատճառ դարձան որ Եգիպտոսի Դաշնակցութիւնը ըլլայ Արեւ[մտեան] Բիւրոյի համար շարունակական դժգոհութեանց ու վէճերու ժամադրավայր մը, դրական արդիւնք հայթայթելու տեսակէտէ մնալով ընդմիջտ ամուլ:

Աւելորդ պիտի ըլլար այստեղ մանրամասնօրէն խօսիլ այն անծայրածիր երկպառակութիւններու մասին, որոնք Տոքթ. Փաշայեանի օրով ծագում առին Եգիպտոսի մէջ, որովհետեւ այդ ինդիւրներու նկատմամբ կարգ մը բողոքող դաշնակցականներու կողմէ ժամանակին մասնաւոր տեղեկագիր ուղարկուած է Արեւ[մտեան] Բիւրոյին եւ ատոր վրայ է որ այս վերջինս ընկեր Ն.

1.- Գարեգին Խաժակ:  
2.- Պանքայի Գրաչը (Գայկ Թիրեաքեան), որ երկրորդ Ընդհ. ժողովին կողմէ (1898) ընտրուած է անդամ Կիլիկիոյ Պատ. Մարմնին Մարի (Միք. Տըր Մարտիրոսեան) եւ Յովսէփ Միրզայեանի (Արբակ Ոչտուցի) հետ:  
3.- Պաղարիւն, հանդարտ, ոչ յուզական:

Հանգոյցը դրկած է այս կողմ կարգադրելու համար այս բազմակողմանի իրարանցումները:

Ենթակոմիտէ կը յաջորդէ ենթակոմիտէի, այսինչ խումբը չի ճանչնար այն ինչ ենթակոմիտէն եւ փոխադարձաբար, խումբին մէկը իր դրամը չի յանձնել որոշեալ մարմին, կը գտնուին ընկերներ, որոնք գաղտնի հրատարակութիւններ կ'ընեն թերթերու մէջ այս կամ այն մարմնի նկատմամբ, փողոցներու մէջ դաշնակցական դաշնակցականի հետ կը կուռի ու իրարանցում ու վէճ ու պառակտում եւ ահա բուն Գործը, բուն Դաշնակցութեան նպատակը կը մնայ մէկ կողմ երեսի վրայ ու կը վարկաբեկուի:

Ներկայիս, տակաւին այսօր, ահաւասիկ թէ ինչ վիճակ ունի Դաշնակցութիւնը՝ Եգիպտոսի մէջ:

Ապօրէն Ռայոնական Ժողով մը\* սակէ 5 ամսու չափ առաջ ընտրեց «Եգիպտոսի կոմիտէ» անուն մարմին մը՝ իր մէջ առնելով ամբողջ Եգիպտոսի դաշնակցականները եւ Յունաստան գտնուող քայքայուած խումբի մը բեկորները՝ հազիւ հազ լրացնելու համար պահանջուած ցենզը, որը սակայն այդպէսով ալ տակաւին պակաս կը մնար քանի որ հաշուուած թիւին մէջ առնուած էին, կազմակերպական կանոններու հակառակ ըլլալով, ո'չ խումբի անդամ դաշնակցականներ:

Կոմիտէն կազմուելէն անմիջապէս յետոյ եղան, մասնաւորաբար Գահիրէի մէջ, խումբեր որոնք բուռնօրէն բողոքեցին անոր դէմ եւ նորէն բաժանում, նորէն քայքայում, ենթակոմիտէի տապալում, Ընդհ. Ժողովին համար ընտրուած պատգամաւորի հրաժարում եւ հիմա Աղեքսանդրիոյ ու Գահիրէի ենթակոմիտէները ու կոմիտէն կը գործեն անջատօրէն այսինքն աւելի ճիշդը, բնաւ չեն գործեր\*\*:

Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ մէջ կը կազմուի բողոքող դաշնակցականներու խումբ մը կոմիտէին կազմութեան եւ ենթակոմիտէին անկարողութեան դէմ: Եւ ահա կու գանք կը հասնինք արդէ շատ տխուր վիճակին, ուր Եգիպտոսի մէջ կան շատ մը դաշնակցականներ բայց Դաշնակցութիւն չկայ դժբախտաբար: — Այսօր ո'չ բարոյական, ոչ ալ նիւթական ուժ մը կը ներկայացնէ Դաշնակցութիւնը Եգիպտոսի մէջ եւ եթէ ուղղակի Դաշնակցութեան անունը արատաւորող շատ մեծ սխալ մը չէ գործուած՝ այստեղ ատի մէկ քանի աշխուրջ ընկերներու ու շաղկուածութեան կը պարտինք միայն:

Ու արդիւնքը այն կ'ըլլայ որ եգիպտահայ գաղթականութիւնը, մասնաւորապէս անոր այն ստուար մասը, որ հայ ընթերցանութեամբ չի գրադիր իր «Եւրոպականացած», մենք կ'ըսենք «օտարացած» ըլլալուն պատճառաւ, չի գիտեր թէ ինչ է բուն Դաշնակցութիւնը եւ ինչ են իր ծրագիրները ու ինչպէ՛ս կարելի է անոր օգնել: Ընդհակառակը ասդին անդին ամէն օր լսելով տեսնելով Եգիպտոսի դաշնակցականներուն իրարու հետ անվերջանալի ու յաճախ փողոցային պայքարներն ու բա-

նակութիւնները, անոնք կը կազմեն շատ ցաւալի գաղափար մը մեր ԳԱՂԱՓԱՐԻ մասին. իսկ հասարակ եւ միջակորեար դասակարգերը, որոնք ի բնէ աւելի տրամադիր կրնան ըլլալ յառաջդիմական տարրերու ջրովն ի վեր քալելու, նոյն տխուր շարժառիթներուն համար, եթէ զգուանք չեն յայտներ, առնուազն ցոյց կու տան ահաւոր, քարի անտարբերութիւն մը:

Եւ այսպէս, Եգիպտոսը կը մնայ Դաշնակցութեան համար ոչ միայն անպտուղ ծառի մը չափ անօգուտ, այլ նոյնիսկ անոր Մեծ անունին, տիրապետող համբաւին եւ ուժին վնասակար:

Ցարդ չկազմուեցաւ Եգիպտոսի մէջ դաշնակցական մարմին մը մարդերէ, որոնք իսկապէս յեղափոխական խառնուածքին (tempérament) եւ խորին համոզումին (conviction) միացնէին գործելու վճռողականութիւն եւ մասնաւոր իբր ղեկավարող ուժեր ունենալին բաւական զօրութիւն: Այս կարգի անձերու սակաւութիւնը մէկ կողմէն, շատ երկրորդական մարդերու կազմակերպութեան մէջ սարդիլը միւս կողմէ, պատճառ եղած են որ յաճախ Եգիպտոսի մէջ դաշնակցական մարմինները կազմուին, կամ իսկապէս յեղափոխական բայց գործ վարելու անկարող մարդերէ (ինչպէս այժմ) եւ կամ կառավարելու կարող բայց յեղափոխական համոզումէ զուրկ անձերէ:

Բ.

Ի՞նչ կրնայ ըլլայ Եգիպտոսը

Եգիպտոսի տնտեսական շատ բարգաւաճ կացութիւնը պատճառ դարձաւ, որ 1898ին եւ անկէ ետքը այստեղ խուժող նիւթապէս քայքայուած հայ գաղթականութիւնը 8-10 տարուան այս շրջանին մէջ յաջողի իրեն (համար) շինել առաւել կամ նուազ դիւրակեցիկ դիրք մը, թո՛ղ մէկ կողմ անոնք որոնք բախտի բարեբաստիկ պատահումներով յանկարծակի հարստութիւններու տիրացան եւ անոնք որոնք ջճէն առաջ Եգիպտոս հաստատուած ըլլալով, բաւական արմատացած հարստութիւններ ունին:

Այսպէս այսօր միայն հայ հարուստ դասակարգը ուսումնասիրելով, Եգիպտոսի մէջ մենք կարող ենք հաշուել առնուազն 80-85 անձնաւորութիւններ որոնք 10.000էն մինչեւ 100.000 անգլ. ոսկիի տէր են եւ տակա-

\*) Ապօրէն՝ որովհետեւ այդ Ռայոնական Ժողովը կազմուած էր Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի ենթակոմիտէներէն եւ անոնց կամքովը հրաւիրուած անդամներէ առանց խումբերու մասնակցութեան:

\*\*) Երկու տարիէ ի վեր ո'չ հանգանակութիւն մ'եղած է, ո'չ Դաշնակցութեան ի նպաստ ներկայացում մը տուած է, ոչինչ:

լին ալ առատօրէն շահելու վրայ: Իսկապէս հայ աղքատութիւն չկայ Եգիպտոսի մէջ եւ առնուազն ամէն ոք կրնայ օգտակար դառնալ յեղափոխութեան նիւթապէս:

Այս հաստատումները ընելէ յետոյ եւ միւս կողմէ ընդունելով առատ դրամին գոյուցեան մեծագոյն անուրանալի օգտակարութիւնը յեղափոխութեան մէջ, կը մտածենք թէ Եգիպտոսը կրնայ եւ հետեւաբար պէտք է որ ըլլայ Դաշնակցութեան համար՝ հասոյթի փառաւոր աղբիւր մը:

Եգիպտոսը կառավարուելով այն դրութեամբ զոր յետոյ ցոյց պիտի տանք, կրնայ, առանց չափազանցութեան, մօտ 1.000 ոսկի բերել Դաշնակցութեան ամէն տարի, իսկ բացառիկ պայմաններով կատարուած հանգանակութիւն մը կրնայ մինչեւ 8-7.000 ոսկի արդիւնք տալ:

Եգիպտոսը նիւթական հասութեաբերութեան այսպէս պատկառելի աղբիւր մ'ըլլալէ գատ, կրնայ ըլլալ նաեւ պրոպագանդի եւ ապագայ ուժերու պատրաստութեան հիանալի կեդրոն մը:

Պէտք է ընդունիլ որ, իբր պրոպագանդ, եգիպտահայր կարեւոր ոչինչ տեսած է ցարդ, ոչ ունեցած է մէկ երկու կարող բանախօսներ, ոչ կարեւոր լուրջ թերթ մը, ոչ ալ ծանր գլուխ գործիչ մը՝ գործի վրայ: — Եթէ Եգիպտոսի համար սկիզբը 1-2 տարի ծախսուի ամսական 15-20 անգլ. ոսկիի գումար մը (ու ասի մեր վերեւը սած տարեկան 1.000 ոսկիի հասոյթին համեմատութեամբ մեծ չէ) կարելի է այստեղ ստեղծել շատ լայն շրջանակ մը Դաշնակցութեան համար. կարելի է, մէկ բառով, ցնցել այս կարեւոր գաղթականութիւնը ի նըպաստ Յեղափոխութեան՝ գաղափարին: Ու այն ատեն երբ արթննայ այս ժողովուրդն ալ, բնական է կ'աւելնան նաեւ ազգային եւ ազգային ու ոգեւորութիւն եւ մարդու տեսակէտէ արդիւնաբերութիւնն ալ կ'ըլլայ աւելի առատ: Այն ատեն կարելի կ'ըլլայ մտածել եւ հիմնել այստեղ ալ գինավարժական կուրսեր, պայթուցիկներու ուսումնասիրութեան գործնական դասեր եւ այլն. մէկ բառով բոլոր յեղ. պատրաստութիւններ: Որովհետեւ այստեղ խմորը կայ, կայ ցնցուելու տրամադիր ժողովուրդ մը. ինչ որ կը պակսի ցնցողն է: Մենք ատի փորձով տեսանք, - խանստորի արշաւանքին տարեդարձին առթիւ Աղեքսանդրիոյ դաշնակցական ընկերներու կողմէ սարքուած հանդէս մը օրերով շաբաթներով վառ պահեց ժողովուրդը: Ըսել է հոգին կայ, խնդիրը կը կայանայ զայն բորբոքելու մէջ:

Վերջապէս, Եգիպտոսը պէտք է ըլլայ նաեւ շատ զօրաւոր օժանդակ մը Լեռ(նապայր)ի յեղափոխական պատրաստութիւններուն, նկատի առնելով իր աշխարհագրական շատ նպաստաւոր դիրքը եւ քաղաքական ազատութիւնը. սակայն երբ այստեղ կը շեշտենք Լեռ(նապայր)ի օժանդակութեան այս խնդրի մասին, պատճառն

այն է, որ այս օժանդակութիւնը պէտք է ըլլայ տարբեր քան այն՝ որ եղած է ցարդ:

Այն պարագային ուր Ընդհ. Ժողովիդ կողմէ ընտրուած Լեռ. Պատասխանատու Մարմինը չուզէ իր անդամներէն մէկը արտասահման ձգել, հարկ եղած յարաբերութիւնները անոր միջոցաւ մշակելու համար եւ անհրաժեշտ ըլլայ Լեռ(նապայր)ի Պատասխանատու Մարմնին մաս չկազմող ընկերներու օգնութեան, այդ պարագային այս փափուկ գործը, աւելի նպատակաշարժար կը լինի յանձնել, մեր կարծիքով, այն մարմնին՝ որու մասին պիտի խօսինք յետոյ: Որովհետեւ յանձին Տոքթ. Փաշայեանի շատ տխուր մէկ փորձառութիւնը ստացանք այս պաշտօնին միակ անհատի մը յանձնուելէն առաջ եկած վնասներուն\*:

Գ.

Ի՞նչ պէտք է ընել

Արդ, ահաւասիկ հիմա թէ ինչպէս միայն կարելի է մեր կարծիքով կազմակերպել Դաշնակցութիւնը Եգիպտոսի մէջ: - Ընդհանուր Ժողովը եթէ այս անգամ վաւերացնէ նախորդին կողմէ գծուած խմբական ընդհ. ձայնատուութիւնով մարմիններու ընտրութեան դրութիւնը, պէտք է գոնէ միայն Եգիպտոսի համար հաստատեց բացառութիւն մը, նկատի առնելով բոլոր այն պատճառաբանութիւնները եւ մասնաւոր այս գաղթականութեան առհասարակ միւսներէն տարբերող ընկերական եւ ազգային հանգամանքները, որոնց մասին մասնաւորապէս խօսեցանք տեղեկագրին սկիզբները:

Եւ այն ատեն Եգիպտոսի մէջ դաշնակցական գործը պէտք է յանձնել 5 կամ 7 հոգիէ բաղկացած լիազօր կոմիտէի մը, որուն 3 կամ 4 անդամները պէտք է ըլլան Գահիրէէն իսկ մնացեալը Աղեքսանդրիայէն, կամ փոխադարձաբար. այս լիազօր կոմիտէին անդամները կամ մէկ մասը կը մնան հասարակութեան համար գաղտնի, եթէ այնպէս յարմար դատեն: — Այս կոմիտէն պէտք է ունենայ կեդր. կոմիտէի մը բոլոր իրաւասութիւնները:

Այս կոմիտէին կազմութիւնը պէտք է կազմակերպական ճամբով ծանուցուի Դաշնակցութեան կողմէ հայ ժողովուրդին: — Այդ օրէն խումբերը կը դադրին ձայն ունենալէ կոմիտէի անդամներուն կամ անոնց գործունէութեան նկատմամբ եւ կը վերածուին պարզ դաշն. խմբակցութիւններու առանց առնչութիւն ունենալու տեղական-կազմակերպական գործերու հետ:

Գալով այս լիազօր կոմիտէի ընտրութեան, Ընդհ.

\*) Այս մասին անշուշտ Լեռ(նապայր)ի Մարմինը հարկ եղածը տեղեկագրած է Ընդհ. Ժողովիդ:

ժողովը հարկ է որ բաւական կարող ու ազդեցիկ գործիչ մը ուղարկէ Եգիպտոս, որպէսզի ան ուղարկուած անհատ ուժերը այստեղ հաստատուած դաշնակցական անհատ ուժերը առանձին առանձին եւ ժողովէն ստացած լիազօրութեանը հիման վրայ կազմէ փափաքուած կոմիտէն, ջանալով, ամէնէն աւելի, որ այդ մարմինն մէջ տիրապետէ մտաւորական ուժը եւ համոզուած յեղափոխականի փորձառութիւնը, որպէսզի ան ի վիճակի ըլլայ ձեռնարկելու եւ արտադրելու:

Պէտք է նաեւ որ Եգիպտոսի կոմիտէի կազմութեան պաշտօնով եկող անձը որոշ ատեն (գոնէ 3-4 ամիս) մնայ այստեղ, որպէսզի կարենայ իսկական կարողութիւնը ճանչնալ իրեն ներկայացող դաշնակցականներուն, որովհետեւ իր պաշտօնը պիտի ըլլայ կերպով մը ազնուականացնել Եգիպտոսի Դաշնակցութիւնը, անանկ որ իր ընտրութիւնը պէտք է կեդրոնացնէ անձեռու վրայ՝ որոնք լաւ ճանչնան Եգիպտոսի հայութեան զանազան դասակարգերուն, ու մանաւանդ հարուստին, ընկերաբանական հոգեբանութիւնը:

Ինչո՞ւ Դաշնակցութիւնը կը ցաւի թէ Եգիպտոսը ոչինչ չէ արտադրեր ցարդ: — Պատճառը յայտնի է. այսինքն անոր համար որ Եգիպտոսի մէջ մինչեւ այսօր չէ կազմուած մարմին մը, որ կարենայ Դաշնակցութեան Եգիպտոսէն սպասածը յառաջ բերել, ըլլալով այս գաղթականութեան յարմարող մարմին մը:

Ու երբ մենք յիշեցինք բոլոր բարեմասնութիւնները գորս պէտք է ունենան այս լիազօր կոմիտէին անդամները՝ utopique՞ գործ մը չտեսանք, որովհետեւ Եգիպտոսի մէջ կան այդ կարգի Հայ Յեղափոխական) Դաշնակցականներ, որոնք ստիպեալ քաշուած ապրեցան

այս անցեալ շրջանին մէջ, սպասելով Ընդհ. ժողովի գումարման, եւ թերեւս Եգիպտոսի մասին նոր կարգադրութիւններու:

Ընդհ. ժողովը ուղարկելով իր լիազօր պատուիրակը կու տայ նաեւ անոր, եթէ կը փափաքի, գրաւոր հրահանգ մը կազմուելիք կոմիտէին, որ բարձրագոյն մարմինն առաջ համարատու եւ պատասխանատու ըլլալուն նկատմամբ եւ անոր պաշտօնին տեւողութեան մասին:

Կը սիրենք յուսալ որ Ընդհ. ժողովը, լուրջ նկատողութեան կ'առնէ մեր առաջարկը եւ կը տնօրինէ այս անգամ հարկ եղածը, որովհետեւ շատ մեծ ցաւ է Եգիպտոսը բնակող գիտակից յեղափոխականին համար տեսնել այս՝ այնքան բարեբեր արտը անպտուղ ձգուած...:

**ԳԱՀԻՐԷԻ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԱՆՀԱՏ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ**

Աղեքսանդրիա 1 Յունուար 1907

Հասցէ  
S. Turabian  
P. B. N° 127

5.- Յնորակաց:



**Դ Ե Յ Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ա Կ Ա Ն Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն**

→ 1890 ←

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

Աղեքսանդրիայ ԿՕՄԻՏԷ

1907 Յունիս 9

**Բ 1.- ԵՆԱՄԱԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ**

Անձնուէ՛ր ընկերներ,

Կը հաստատենք մեր Մայիս 8 թուակիր գրութիւնը, որուն պատասխանը դժբախտաբար տակաւին չստացանք Ձեզմէ: Այո՛, գիտենք որ ներկայիս կարեւոր խնդիրներ զՁեզ կը զբաղեցնեն, բայց մի մոռնաք նաեւ որ Աղեքսանդրիոյ տեղական գործը կրիտիքական վիճակի մը մէջ է. կորսուելու վտանգին ենթակայ եւ Ձեր ունեւ ձեռով մէկ կարգադրութիւնը կրնայ բարեբար ազդեցութիւն ունենալ իրերու խանգարուած վիճակին վրայ:

Արդէն անցեալ նամակով քիչ թէ շատ հասկցուցեր էինք Ձեզ ներքին մի քանի կարեւոր խնդիրներ, իսկ հիմա այդ խնդիրները հետզհետէ ընդարձակուեցան եւ լայն ծաւալ մը ստացան: Սկզբունքը եւ անձը իրար խառնուելով ծանր հետեւանքի յանգելու վտանգ կը սպառնան. նոյնիսկ ժողովրդեան մէջ վարկերնիս ինկաւ, առաջուան հմայքը, Դաշնակցութեան նախկին պատիւը չմնաց: Կարելի է զմեզ մեղադրէք այդ խնդրոյն մէջ, բայց պարագաները եթէ լաւ մը դիտէք, պիտի տեսնէք որ կոմիտէն կարելին ըրաւ, անհատներն են որ պատճառ եղան:

Տեղական սահմանադրական պայքարին չմասնակցելու համար ժամանակին, Փետրուար ամսուն, կոմիտէս լրագրութեան միջոցաւ ծանոյց հասարակութեան եւ ընկերներուն, որ Դաշնակցութիւնը պաշտօնապէս ո՛րեւէ մասնակցութիւն պիտի չունենայ, այլ անհատներ ազատ են: Բայց դաշնակցական ընկերներէն ոմանք սրտաւ դիրք բռնեցին երկդիմի, միաժամանակ թէ՛ սահմանադրականներու եւ թէ՛ հակասահմանադրականներու ի նպաստ գործելով, նոյնիսկ դրամ ստանալով: Այդ բանին մէջ բացայայտ կերպով մեղադրուեցաւ Հաճի Արսէն Պոյաճեանը, որ երկու կողմէն ալ դրամ առած է եւ ինքզինքը ընկերներու դժգոհութիւններէն փրկելու

համար ամբաստանեց Տոքթ. Փաշայեանն՝ ալ, իբր թէ իր «Առողջապահութիւն» անուն գրքին համար Փաշայեան ստացած 40 անգլ. ոսկին կաշառք է եղեր, իբր թէ Տոքթորին հիմա բացած տպարանը փաշայեան դրամով է եւայլն, որպէսզի Տոքթորը քաշուի սահմանադրական պայքարէն<sup>7</sup>. Հաճի Արսէնին այս խօսքերը ահագին աղմուկ հանեցին, ժողովուրդը այսօր Տոքթորը իբր կաշառակեր կը ճանչնայ: Հաճի Արսէն ընկերներու մէջ ալ խառնակութիւն ձգեց, պ. Պետրոս Փափագեանը եւ Նորհատ Պետրոսեանը զրդելով Տոքթորին դէմ, անոնք կը պնդէին թէ Տոքթորը ներկայացուցիչ չէ, եւայլն. այդ մասին նախորդ նամակով արդէն գրած ենք Ձեզ, թէ եւ քննութիւն եղաւ եւ այդ երկու ընկերները դատապարտուեցան, բայց խնդիրը նորէն շարունակուեցաւ, այն աստիճանի ձգտման հասաւ որ տեղական խումբերը ընդհ. ժողով ըրին Մայիս 21-ին, այսինքն Բաֆֆի, Սասուն, Տալուրիկ, Ձեռք, Դրօշակ եւ Խոզանտաղ, որոնց անդամներու ընդհանուր թիւն է -----<sup>8</sup> հոգի, 30 հոգի ստորագրութեամբ թուղթ մը ներկայացուցին ենթակոմիտէին. այդ թղթով կ'ամբաստանէին ընկերներէն 4 հոգի, այսպէս՝ «նկատելով թէ Հրանտ Մանաւեան, Հաճի Արսէն Պոյաճեան, Պետրոս Փափագեան եւ Նորհատ Պետրոսեան, առանց նկատի ունենալու Դաշնակցութեան» հիմնական սկզբունքները, ամէն տեսակ խառնակութիւններու պատճառ եղած են, տեղույս ներքին կազմակերպութեան գործերը խանգարելով, նկատելով որ իրենց այդ ամբաստանութիւնները քննելու

6.- Բժիշկ Կարապետ Փաշայեան, կուսակցական հին գործիչ Երզնկայի, Թաւրիզի եւ ապա Եգիպտոսի մէջ: 1904-1906ին, հաստատուած էր Աղեքսանդրիա, ուրկէ կը վարեր Լեռնավայրի Պատ. Մարմնի բղթակցութիւնները Արեւմտեան Բիւրոյի հետ: Ծանօթ էր Թափառիկ ծածկանունով:  
7.- Դարը կը վերաբերի արեւմտահայերու Ազգ. Սահմանադրութեան Եգիպտոսի մէջ կիրարկումին:  
8.- Բաց ձգուած քննարկ մէջ:



Համար կազմուած ընկերական ժողովը իրենցմէ երկու- քը՝ Նորհատ Պետրոսեան եւ Պետրոս Փափագեան դա- տապարտած է եւ այդ դատապարտութիւնը առաջին նիստին մէջ ընդունելով հանդերձ՝ երկրորդ նիստին մէջ ուզած են պատասխանատուութիւնը ենթակոմիտէի վրայ ձգելով զայն անուանել՝ «ստախօս, խաչագող եւ անգիտակից իրենց գործերուն» եւ անոնցմէ մէկ քա- նիին ըսածները խեղաթիւրելով ուզած են վարկաբեկ ընել:

«Նկատելով որ երկրորդ նիստին մէջ ենթակոմիտէի դէմ ըրած ամբաստանութիւննին գրուած է, եւ ատկից գոհ չմնալով ժողովի խանգարման պատճառ դարձած են, մենք խմբի անդամներս ժողովեցանք մեր կարծիք- ները յայտնելու ենթակոմիտէիդ»:

«Ժողովիս փափաքն է Հաճի Արսէնի վտարումը տե- դական մարմինէն իբր պարագլուխ ներկայ խառնաշը- փոթութեանց, իսկ Հրանտ Մանաւեանի, Նորհատ Պետ- րոսեանի եւ Պետրոս Փափագեանի վտարումը տեղական մարմինէն իրենց ստախօսութեանց, անգաղտնապա- հուժեանց եւ խառնակութեան համար»:

39 ստորագրութիւն

Կարեւոր է այս թուղթը, զոր վաւերացուց ենթակո- միտէն եւ մեզ դրկեց, կոմիտէս վաւերացուց զայն եւ պաշտօնական թուղթի վրայ գրելով ու կնքելով կախեց խմբատեղիին մէջ ի գիտութիւն ընկերներու. կը կար- ծենք թէ Բիւրոն ալ համակարծիք կ'ըլլայ: Յիշեալ 4 հո- գիէն Հաճի Արսէնի մասին արդէն Ապրիլ 25 թուակիր ամբաստանագիր մը եւս կազմուած է կոմիտէին եւ են- թակոմիտէին բոլոր անդամներէն սորագրուած. որով նկատելով իր 1) ներքին կեանքը, 2) գինովութիւնը, 3) կոմիտէի անդամներուն հայհոյելը, 4) պր. Մարթինին (Առնավայրի գործիչներէն) 1903-ին սրճարանին մէջ անպատուելը, 5) Սահմանադրական պայքարին մէջ երկդիմի ընթացքը որ Դաշնակցութեան անպատուա- բեր եղաւ 6) Տոքթ. Էնֆիեճեանին սպառնական նամակ ղրկելը եւ յետոյ անոր քով երթալը դրամ քաշելու առա- ջադրութեամբ 7) խնամակալութեան կողմնակիցներու դիմելը յայտնելով որ սահմանադրականներու հանրա- գրութեան համար ստորագրութիւններ չհաւաքելու համար իրեն որոշ գումար մը վճարեն, 8) Իզմիր երթա- լը, եւ որովհետեւ «իր այս խաչագողական ու անբարո- յական արարքները հրապարակ ելած են եւ ժողովուրդը կը դատապարտէ զինքը, ինքն ալ վերջերս սկսած է մի քանի միամիտներ որսալ եւ ընկերներու մէջ խռովու- թիւն ու խառնակութիւն ձգել», ուստի «Դաշնակցու- թեան պատիւը փրկելու եւ վարկը բարձրացնելու հա- մար կազմակերպական կանոններու 125-130րդ յօդ- ւածներու տրամադրութեանց համաձայն 9 ձայնէն 8-ի մեծամասնութեամբ որոշեցինք արտաքսել զինք Հայ

Յեղ. Դաշնակցութեան Եգիպտոսի շրջանէն: Այս որո- շումը ինչ ինչ նկատումներ եւ իր մասնաւոր դիմումնե- րուն վրայ գործադրութեան չդրուեցաւ: Նոյնպէս 3 օր յետոյ, Ապրիլ 28-ին ներկայութեամբ Գահիրէի կոմի- տէի անդամներէն՝ պրն. Տէր Գալստեանի, եւ Աղեք- սանդրիոյ ընկերներէն՝ Տոքթ. Փաշայեանի, Լեւոն Մի- րաքեանի, Մանուկ Եարլմեանի եւ Արա Մամիկոնեանի, յանձնախումբ մը կազմուեցաւ Տոքթ. Էնֆիեճեանի սպառնազրին խնդիրը քննելու. երեք վկաներու ըսած- ները լսուեցան եւ իրենց ստորագրութեամբ գրուեցան. ատկէ քանի մը օր ետքը նորէն ժողով կազմուեցաւ ուր կանչուեցաւ Տոքթ. Էնֆիեճեանը, որ կարգ մը բացատ- րութիւններ տուաւ սպառնազրին մասին եւ անոր հե- ռանալէն յետոյ Հաճի Արսէն Պոյաճեան «վերջապէս խոստովանեցաւ որ ինքը գրել տուեր է» եւ երկարօրէն բացատրեց գրելուն պարագաները, միշտ դաշնակցա- կան ընկերները մէջ խառնելով, մինչդեռ դիտմամբ է որ ինքզինքը արդարացնէ: Քանի որ այս խնդրով այնքան զբաղուած ենք, ա'լ կրնաք երեւակայել թէ որքան կա- րեւոր է, եւ հասարակութիւնը ինչե'ր կ'ըլլէ:

Տոքթ. Կ. Յ. Փաշայեանն ալ սխալներ ըրաւ, 1) պէտք էր որ 40 ոսկին Փաշայէն առնելուն պէս հրատարակէր եւ այնուհետեւ մինչեւ վերջը սահմանադրական պայ- քարին մասնակցէր, մինչդեռ ինքը պահեց, Հաճի Արսէ- նը մէջտեղ հանեց, Տոքթորը ի վերջոյ պայքարէն հրա- ժարեցաւ եւ անկէ յետոյ հրատարակեց. շատ կարեւոր սխալ մ'է այս, մենք ամէն կերպով վստահ ենք իւր ան- կաշառ եւ ազնիւ բնաւորութեանը, բայց երեւոյթները զինքը չփրկեցին, մանաւանդ որ հիմա Փաշան եւ փաշա- յականները իր տպարանին կը յանձնեն Առաջնորդարա- նի եւ այն տպագրական նիւթերը, այդ ալ խօսակցու- թեան նիւթ եղած է, իբր թէ Տոքթորը յիրաւի Փաշային մարդը ըլլար, երբ մեր ընկերներէն՝ Գուրգէնը (Արա Մամիկոնեան) դպրոցի ուսուցչութենէն դուրս հանեցին յանիրաւի, կրնար անոր դիմելով նորէն ընդունիլ տալ, մինչդեռ այդ բանը ընել չհամարձակեցաւ Տոքթորը եւ մեր ընկերը զոհուեցաւ. այս խնդիրը լրագրութեան տրուեցաւ:

Կը կարծենք թէ՝ Եգիպտոս կարող գործիչի մը պէտքն ունի, որ թէ՛ «Հորիզոն»ը վարէ եւ թէ՛ մանա- ւանդ տեղական գործը նպաստաւոր ճամբու մը մէջ դնելու հոգ տանի, շատ կարեւոր խնդիր է այս, մանա- ւանդ Տոքթորի քաշուելովը մեր մէջ փորձառու մէկը չմնաց, եւ միշտ սայթաքելու վտանգին ենթակայ ենք:

Այս շաբաթ բոլոր խմբերը իրենց հաշիւները կը կար- գադրեն, բչ. օր մասոյս 12-ին, պիտի ըլլայ խմբատեղիին մէջ, ըստ կազմակերպական կանոնագրի, նոր ենթակո- միտէին ընտրութեան նախաձեռնութիւնը: Այդ օրը ե- ռապատիկ<sup>9</sup> կը կազմուի եւ կը ղրկուի Յունաստանի ըն-

9.- Այսինքն՝ ընտրելիներու եռապատիկ ցանկ:

կերներուն, որ 7 հոգիի [քուէ] տան. աւելի յարմար մի- ջոց չգտանք անոնց մասնակցութիւնը դիւրացնելու հա- մար:

Հոռոտս գտնուող բանտարկեալ Վահրամ Մանաւ- եանին եղբայրը՝ Արամ կը պահանջէր որ 4 ոսկի եւս աւելնայ իր եղբայրը ազատելու համար որոշուած գու- մարին վրայ. մեր ընկերներէն պր. Վ. Ազնաւորեանին հետ բանակցեցաւ այդ մասին, խոստացուեցաւ 4 ոսկին ալ ի հարկին հայթայթել, եթէ երաշխաւոր տրուի, որ այդ դրամը եղբօրը ազատութեան համար պիտի գոր- ծածուի. հիմա իրեն 8 ոսկի կը տրուի՝ ազատողին տըր- ւելու, յետոյ եղբայրը՝ Վահրամ երբ որ գայ, այն ատեն ալ մնացած 10 ոսկին կը տրուի: Արամ Մանաւեանը չէ ընդունել այս պայմանը, այս անգամ անսահման վարկ պահանջեր է իր եղբայրը ազատելու համար: Զարմա- նայի բան մը, միայն 8 ոսկիի համար երաշխաւորութիւն կու տայ:

«Կարմիր խաչ»ի կողմանէ այս շաբաթ դրամ

10.- Աքիա կամ Աքքա՝ Պաղեստինի ծովափնեայ քաղաք՝ պատմական Պողոմայիսն է. Շամ Թարապուսը՝ ներկայ Լիբա- նոնի Թրիփոլից, իսկ Պոտրումը՝ Թուրքիոյ հարաւ-արեւմտեան ծովափնեայ քաղաք. երեք քաղաքներու թրքական բանտե- րուն մէջ արգելափակուած էին մեծ թիւով հայ քաղաքական բանտարկեալներ:

11.- Դիւանագիտական սպասարկութիւն:

ղրկուեցաւ՝ Աքեայի բանտարկեալներուն 3 օսմ. ոսկի, Շամ Թարապուսի բանտարկեալներուն՝ 4 օսմ. ոսկի, Պոտրումի<sup>10</sup> բանտը՝ պրն. Նալպանտեանի՝ 4 օսմ. ոսկի:

Յունիս 10.- Նամակնիս փոսթան տալէ առաջ իմա- ցանք որ Հոռոտսէն պրն. Վահրամ նամակ գրած է հոս, այն տեղի ֆրանսական հիւպատոսին միջոցաւ այստեղի անոնց agence diplomatique-ին<sup>11</sup> որ 10 ոսկի ստանայ մեզմէ եւ հոն Վահրամին փոխադրէ իր երաշխաւորու- թեամբ: Փախուստի նոր ճամբայ մը գտած է եղբր- կ'ըլլէ:

Ընկերական բարեւներով Հ. Յ. Դ. ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԿՈՄԻՏԷ



Բ 2.- ԵՆԱՄԱԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

11 Օգոստոս 1905

Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան վերջին կազմական կանոնադրի տրամադրութեանց համեմատ ենթակոմիտէ մը ունենալու իրաւունքը ունենալնու համար, նախկին կոմիտէին նախաձեռնութեամբ Յունիս ամսոյ 12-ին տեղի ունեցաւ երկպատիկ ցանկի ընտրութիւնը, խումբերու 45 անդամներէն 34-ի մասնակցութեամբ. այդ ցանկը ղրկուեցաւ Յունաստանի ընկերներուն, որոնք անոր մէջէն եօթ հոգիի ձայն տուին իբր անդամ ենթակոմիտէի, իրենց քուէները կնքուած մեզ ղրկեցին եւ Յունիս ամսոյ 3-ին դարձեալ ընդհ. ժողով ունեցանք. 45 քուէարկողներէն (միայն խումբի անդամները քուէ տուին, քանի որ կանոնագիրը կը տրամադրէ եօթը խումբ եղած տեղը ենթակոմիտէ ընտրել) 31-ի ներկայութեամբ, որոնք քուէ տուին. ասոնց խառնուեցան նաեւ Աթէնքի 11 քուէները (21 ընկեր ունինք հոն), եղան 42 քուէ ընդամէնը. այնուհետեւ քուէատուփը բաց անելով հետեւեալ արդիւնքն ունեցանք.-

- 1) Միհրան Կարապետեան — 38 քուէ, 2) Սեդրակ Գաբրիէլեան — 38 քուէ, 3) Արա Մամիկոնեան — 34, 4) Վահագն Ազնաւորեան — 30, 5) Տիգրան Եաղուպեան — 30, 6) Մանուկ Եարրմեան — 25, եւ 7) Տոքթ. Կ[արապետ] Փաշայեան Խան — 24 քուէ. մնացած ընկերները 15 քուէէն աւելի չստացան:

Այս ընկերները յայտարարուեցան իբրեւ ենթակոմիտէի անդամ, սակայն տոքթ. Կ. Փաշայեան<sup>6</sup> բացարձակապէս մերժեց անդամակցիլ եւ անդառնալի կերպով հրաժարական տուաւ. մնացած անդամները ընտրութիւնը ընդունեցին, թէեւ ոմանք դժուարաւ, եւ առաջին նիստը ըրինք Յունիս 14-ին: Խնդիրները շատ էին, որովհետեւ նախկին կոմիտէն Ձեզ գրած էր եւ դուք, չենք գիտեր ինչ պատճառներով, երբեք չպատասխանեցիք ու սպասելով Ձեր գրութեանց խնդիրները իրարու վրայ դիզուեցան. անմիջական կարեւոր խնդիրներ էին հաշիւները եւ խմբատեղին:

Նախկին կոմիտէին հաշիւները պարզ էին, — 1282,5 դրուչ պատրաստի գումար ունէր. մաս մը եւս գանձելիք դրամ ունի, որուն կարգադրութիւնը Ձեզմէ կախում ունի, այսինքն Մ. Խարախանեանին համար եղած 5 ոսկիէ աւելի եւ Յովհ. Գալուստեանի համար եղած երկու ոսկիի ծախքը. Տոքթ. Փաշայեանը կը պնդէ որ կարմիր Խաչը պէտք է վճարէ, իսկ Կարմիր Խաչը կը մերժէ, Բիւրոյին Ապրիլ 5 թուակիր նամակին յենելով որ կ'ըսէ

— «կազմակերպութենէն անոր օգնելը բոլորովին դադարեցէք». արդ ի՞նչ կ'ըսէք: Ենթակոմիտէին հաշիւները բաւական խառնակ էին, մանաւանդ թատրոնի խնդիրը. զանոնք լուծելու համար բաւական աշխատեցանք: Յառաջիկային Ձեզ կը ղրկենք հաշուեկշիռները:

Խմբատեղիին խնդիրը ամէնէն ծանօթն է. ձմեռը՝ նկատելով ընկերներուն բազմանալը եւ համակիրներու շրջանակի ընդլայնումը՝ նախկին ենթակոմիտէն կ'որոշէ աւելի մեծ խմբատեղի մը ունենալ: Կոմիտէն ալ կը ձայնակցի, սակայն խմբատեղին վարձուելէ 1.5 ամիս յետոյ ծագեցան ընկերական ներքին պառակտումները. պաղտութիւն ինկաւ ընկերներուն մէջ. հաւաքումները համարեա դադարեցան, հասոյթը շատ պակսեցաւ եւ խմբատեղին՝ որ ինքզինքը պիտի պահէր իր պիւֆէին հասոյթով եւ բաժնեգրներովը, ընդհակառակն՝ իր ծառային 220 դրուչը չի կրնար շահիլ. մինչդեռ ամսական վարձքը 5 անգլ. ոսկի է, եւ առանց հաշուելու ներկայ եռամսեային վարձքը՝ մօտ 15 ոսկի պարտք ունի. որոշուած է որ այս եռամսեան վճարելու համար նախկին կոմիտէին դրամներէն փոխ առնուի, որով խմբատեղին կ'ունենայ 30 անգլ. ոսկի պարտք. ո՛ւր պիտի երթայ ասոր ծայրը. բաժնեգրները եւ ընկերական հաւաքումները եթէ ըլլային, գործը կը դիւրանար:

Տեղուոյ ընկերներէն Կարապետ Արսլանեան Յունիս 22 թիւ նամակով մեզմէ կը խնդրէ որ զինքը Կովկաս ղրկելու համար կարգադրութիւն մը ընենք, բայց առաջուց Գահիրէ ղրկենք ռուսը շինելու արհեստը սորվելու: Այս մասին գրուեցաւ Գահիրէ, պատասխան չեկաւ. մինչդեռ կ'իմանայինք որ Մարը<sup>12</sup> նորէն նամակ գրեր է Կարոյին եւ շտապեցուցեր է Կովկաս անցնելու: Կ'երեւի թէ Լեւոնը շատ գործ ունի հիմա եւ չի կրնար Կարոյին սորվեցնել արհեստը. ի՞նչ կ'ըսէք, ղրկենք Կովկաս, թէ ոչ, եւ ուսկի՞ց դրամ տանք, ճանապարհածախքի համար:

Անցեալները Պուլկարիայէն հոս եկաւ Սամսոն անունով մէկը, որ կ'ըսէ թէ ես Անդրանիկի ընկերներէն եմ: Տոքթ. Փաշայեանը զայն քննելով Յունիս 28 թուակիր նամակով մը կը հաղորդէ մեզ թէ՝ «կռուող տղաներէն է, կը յանձնարարեմ Ձեզ մի քանի օր պահել խմբատեղին եւ կերակրել, մինչեւ որ Բիւրոյէն հրահանգ ստանամ». այս շաբաթ ալ անոր լուսանկարը Ձեզ ղրկուեցաւ: Սակայն զարմանալի՛ բան, այս մարդուն դէմքի

12.- Սիբայլ Տըր Սարսիրոսեան, Կիլիկիոյ Գալատիոյ Պատ. Մարմնի անդամ, որ 1899 թուականէն մինչեւ 1904ի աւարտը բաճու կը գտնուէր:

գծանկարը կը մատնէ զինքը թէ հայ չէ. ընկերները կը կասկածէին, վերջապէս զինքը տեսեր են (հանրատունը), ուր գացեր էր իր քոյրը փնտռելու եւ իբրեւ տաճիկ ներկայացեր էր. ենթակոմիտէիս լուր գալով նիստի հրաւիրեցինք զինքը, խոստովանեցաւ տաճիկ ըլլալը, բայց քաշուեցաւ քոյրը մասին բան մ'ըսել: Ընկերներուն մէջ կասկած եւ գայթակղութիւն կայ, օր առաջ գրեցէք ճիշդ իրողութիւնը քանի տակաւին ժողովրդեան մէջ չէ տարածուած: Նոյնպէս Ձեր Յունիս 24 թիւ նամակով կը յայտնէք կոմիտէին թէ «Անդրանիկի զինւորներէն Ատիլ Չաուչ Պուլկարիայէն Եգիպտոս մեկնած է...»: Սամսոնը ըսած է մեր ընկերներէն Գուրգէնին որ ինքն է Ատիլ Չաուչը. ուստի կը խնդրենք որ Բիւրոն օր առաջ լուսաբանէ այդ խնդիրը. մինչեւ Ձեր պատասխանին գալուն կազմակերպութեան հաշուոյն կը պահենք:

Ժամանակին Ձեզ գրած էինք որ «Անդրանիկ» անունով խումբ մը կազմուած է հոս, գլխաւորաբար դժգոհ տարրերէ բաղկացած. այն ատեն Ձեր նկատումն ենթարկեցինք, բայց բան մը չգրեցիք: Կոմիտէին յանձնարարութեամբ նախկին ենթակոմիտէն քննած էր խումբին անդամներուն պարագաները՝ թէ խումբի անդամ ըլլալու ամէն պայմանները կը ներկայացնեն՝ թէ ոչ, եւ գտած էր որ երկու հոգի՝ հաճի Արսէն Պոյաճեան զանազան պատճառներով, իսկ Արմէն Մանաւեանը՝ Դաշնակցութիւնը նախատած ըլլալուն համար, ամբաստանուած են, ուրեմն չեն կարող խումբի անդամ ըլլալ, իսկ Կ. Այվազեանի մասին ոչինչ չի գիտեր: Արդ մենք ալ Կ. Այվազեանի մասին որոշ ոչինչ չենք գիտեր. ուստի կրկին ձեր նկատումն կ'ենթարկենք: Արդէն այս Անդրանիկ խումբին անդամներն են որ պատճառ եղան այնչափ ներքին խառնակութեանց, որոնց առաջին առնելու համար, մենք ամէն միջոց որ օրինական է եւ օգ-

տակար, սիրով կ'ընդունինք. գրեցէք մեզի այդ մասին. Ձեր մէկ խօսքը կրնայ շատ թիւրիմացութիւններու առաջին առնել. վերջ մը տալու կարգադրութիւն մ'ըրէք. ապա թէ ոչ ներքին պառակտումը կրնայ շատ վրնասաբեր ըլլալ, մանաւանդ որ կուսակցութեան հակառակորդները կը քաջալերեն, եւ այս առթիւ հեռու կեցած կը խնդան:

Այս ամէն անմխիթար խնդիրներուն մէջ սակայն, ազգային մխիթարական կէտ մ'ունեցանք, — Վարդապետի Կիրակին, Օգոստոս 8-ին, խմբատեղիին մէջ տօնեցինք Խանասորի արշաւանքին Ը [Յրդ] տարեդարձը. ժողովուրդը խմբովին եկեղեցիէն դիմեց խմբատեղին, ահագին սրահը լեցուեցաւ, ասեղ ձգելու տեղ չկար, ժողովուրդին մեծագոյն մասը տեղ չգտնելով՝ դժգոհ հեռացան. ունեցանք դասախօսութիւններ (տոքթ. Փաշայեան եւ Արա Մամիկոնեան), երգեր եւ ոտանաւորներ[?]: Բաւական յաջող էր հանդէսը, 8.5 ոսկի ալ զուտ հասոյթ ունեցանք պնակէն եւ պիւֆէէն: Այդ առթիւ ներեցէք եթէ յիշեցինք որ մեր դժգոհ ընկերներէն ոմանք իմանալով որ տոքթ. Փաշայեանը՝ պիտի բանախօսէ, որոշեր էին... սուլել բանախօսած ատեն. ի՞նչ որոշում եւ ի՞նչ անպատուութիւն. սակայն ընկերներէն ոմանք, նկատելով որ ատիկա Դաշնակցութեան անպատուաբեր է, արգելեցին:

Անհամբեր Ձեր նամակներուն կը սպասենք: Կը խնդրենք որ «Դրօշակ» ղրկած ատեննիդ մեզի 100 հատ ղրկէք. միշտ կը պակսի եւ դժգոհութիւն յայտնողներ կան:

Ընկերական բարեւներով  
ի դիմաց Աղեքսանդրիոյ ենթակոմիտէի

Ատենապետ ԿԱՐԻՃ  
Ատենադպիր ԳՈՒՐԳԷՆ

Բ 3.- ԵՆԱՄԱԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Աղեքսանդրիա, 18 Սեպտ. 1905

Յարգելի ընկերներ,

Յունաստանի մէջ մեր բոլոր խմբի տղաները բանտարկուած են, միայն Խաչիկ Խաչիկեան ընկերը միջոց ունեցել է փախչելու եւ Աղեքսանդրիա հասնելու, որին հետ Սարգստը<sup>13</sup> ներփակ մատիտով գրուածքը դրկելով պահանջել էր իր անցագիրը եւ դրամ՝ թէ՛ տեղացիների եւ թէ՛ թերթերը կաշառելու համար: Եւ որովհետեւ Պ. Սմբատը<sup>14</sup> ինձ խիստ եւ վերջնական կերպով յանձնարարել է, որ Լեոնավայրի Մարմնի փողոցից մի կոպէկ իսկ չտամ ուրիշ մարմիններին, բացի այն պարագայէն, որ Արեւմտեան Բիւրոն եւ կամ ինքը հրամայէ, հետեւաբար դրամ չտուի, միայն տեղական ենթակոմիտէից 7 ոսկի տալ տուի, որպէսզի բոլորովին գուրկ չմնան ապրուստից, քանի որ դուրսը մի ընկեր իսկ մնացած չէ, իսկ Սարգստն էլ պահուած է մինչեւ իր անցագրի հասնելը, որ ժամանակ երեւան է գալու եւ Ամերիկեան դեսպանի միջոցով իրան պաշտպանելու է, նիւթերի տէրը եւ պատասխանատուն ինքը ձեւանալով: Նիւթերը ցրուած են եղել Աթէնքի ընկերների մօտ եւ եկեղեցին, հետեւաբար կառավարութիւնը մէկէ աւելի հայերու մօտ գտնելով այդ նիւթերից, բոլորն էլ բանտարկել է: Բանտարկեալներին չափազանց նեղացնում եւ ծեծում են եղել, հարցաքննութիւններ կատարելիս Պոլսից եկած թուրքեր եւս ներկայ են լինում. լրագրութիւնը բոլորովին կաշառուած է, շատեր ծեծից հիւանդացել են, օրինակ) քահանայի տղան: Յունաստանի սահմանադրական երկրում այս թիւրք բարբարոսութիւններ են գործում. այս մասին եւրոպական լրագիրներին հարկաւոր է հաղորդել եւ դատապարտել յոյն կառավարութեան բռնած այս բարբարոս ընթացքը:

Ռուբէն Զարդարեանն էլ նամակ էր գրել եւ խնդրել, որ Սեւակ Թոխաճեանին ճանապարհածախս տալով ուղարկեմ Ֆիլիպէ վերոյիշեալ պատճառներով մերժեցի, եւ սպասում եմ ձեզ գրած նախորդ նամակիս պատասխանին, որ եթէ Ոսկեհանքից<sup>15</sup> եկողներին փող տալ յանձնարարէք, նրան էլ ճանապարհածախս կը տամ:

Մոցի<sup>16</sup> հասցէներին թերթ եւայլն ուղղել առաջմ յետագայ է հարկաւոր ներփակ նամակի հիման վրայ, նոյնը իմաց տալով ուրիշներին. կարծում եմ բոլոր Տաճկաստանի համար միեւնոյն զգուշութիւնը ձեռք պէտք է առնել, որովհետեւ օտար նամակատուներն էլ կաշառուած լինելը կասկածելի է, ապահով նոր հասցէ-

ների պէտք է սպասել: Իսկ Սմբատի հետ Տիկին Կամսարականի միջոցով յարաբերութիւն պէտք է պահպանել:

Եթէ համամիտ լինիք յունական թերթերը կաշառելու ծրագրին, որ Սարգստը առաջարկել է, պէտք է փողը հեռագրով ուղարկել Աթէնքի ամերիկեան դեսպանին խնդրելով յանձնել ամերիկահայտակ Harutin Haggopianին, ճիշդ այս ուղղագրութեամբ, որքանութիւնը դուք կ'որոշէք:

Նախորդ նամակովս յիշածս սպառնալիքը ո՞ւմ գործը լինելը քննելու եւ ստուգելու համար մի քանի ընկերների հետ քննութեան ձեռնարկեցինք գաղտնաբար եւ այդ առթիւ բաւական մեծ գաղտնիքներ երեւան բերինք - մատնութիւններ, դաւադրութիւններ, եւայլն - որոնց մասին չուտով Ձեզ կը ներկայացնենք մեր կազմած տեղեկագիրը: Այդ քննութիւններից երեւան եկաւ, որ նախորդ սպառնալիքի եւ վերջին սպառնազրի հեղինակները եղել են Արամ Մանաւեան, Հրամատ Մանաւեան եւ Հաճի Արսէն Պոյաճեան:

Շատ հաւանական է, որ սրանք աշխատեն գործադրել իրենց սպառնալիքը, որովհետեւ բժշկական արհեստս իրենց բաւական դիւրութիւններ է տալիս, գիշեր ժամանակ կարող են հիւանդի պատրուակի տակ դուրս հանել եւ մի քանի հոգիով վրաս յարձակուել. այդ պատճառով գիշերները հիւանդի գնալը դադարեցրի, սակայն այդ էլ ինձ նիւթական վնաս է պատճառելու: Մինչեւ որ նրանցից մէկն ու մէկը, մանաւանդ աւելի արժանին՝ Հաճի Արսէնին՝ տեղորի չենթարկենք, այդ գէշութիւնները չեն վերանալու. տեղական ընկերների պատասխանատուութեան տակ եւ ամէն նախագրուշութիւններ ձեռք առնելով պէտք է վճռենք տեղորը: Ցանկալի էր իմանալ ձեր կարծիքը, անշուշտ տեղեկագիրը ստանալուց յետոյ շուտով մեզ կ'իմացնէք ձեր կարծիքը կամ որոշումը:

Յարգալից ընկերական բարեւներով  
ԹԱՓԱՌԻԿՑ

13.- Լեոնավայրի գործիչներն. չչփոթել Գեորգ Զաւուշի հետ, որ նոյնպէս ծանօթ է Սարհատ ծածկանունով:  
14.- Միսոն Զաւարեան:  
15.- Իզմիրի շրջանին կուս. ծածկանունը:  
16.- Պէյրուք:



ՀԵՑ ՑԵՂԵՓՈՒԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1890

(FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE)

Գրակցութիւն Էջմիածնէ

Գրակցութիւն 13 Երեւանից 1905

Բ 4.- Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ, ԺԸՆԵՒ

Յարգոյ ընկերք,

20 Օգոստոս 1905-ի Ձեր շրջաբերական նամակին ի պատասխան, Ձեզի կը ներկայացնենք հետեւեալ հարցերը, ցանկանալով որ Ընդհանուր Ժողովոյ օրակարգի խնդիրներուն մէջ դասելով զանոնք, ենթարկէք ժողովոյ քննութեանը:

- 1.- Արտասահմանի խմբական ներկայ դրութիւնը:
- 2.- Կարելոր եւ հայաշատ կեդրոններու մէջ կոմիտէներու գոյութեան անհրաժեշտութիւնը:
- 3.- Շրջուն ներկայացուցիչների պաշտօնի կանոնաւորումը ըստ կանոնագրի տրամադրութեան:
- 4.- Յառաջիկայ ընդհանուր գործունէութեան եղանակը:
- 5.- Պատասխանատու Մարմիններու պատասխանատուութեան չափը:
- 6.- Եւրոպական փրոփականտը:
- 7.- Վարդոյի ընթացքի քննութիւնը:

Նկատելով որ շուտով կը գումարուի Ընդհանուր Ժողովը<sup>17</sup> մենք կը պահանջենք որ թոյլ տրուի մեզ եւս մի ձայն ունենալ նոյն ժողովոյ մէջ: Որչափ որ ներկայ

խմբական դրութեամբ Եզիպտոսի մէջ կոմիտէներ գոյութիւն չունին պահանջուած 25 խմբերը ամբողջապէս կազմուած չլլալուն պատճառաւ, այսուհանդերձ տեղական ներկայ կազմակերպութիւնը շատ աւելի զօրեղ է քան ինչ որ էր վերջին Ընդհանուր Ժողովոյ ժամանակ, յորում Եզիպտոսը ունեցած էր մի ձայնի իրաւունք:

Կը խնդրենք որ փութացնէք ընդհանուր տեղեկագրի հետ ներկայացնել այդ մասին եւ մեր կարծիքները: Մնամք ընկերական յարգալից բարեւներով՝

Ի դիմաց Հայ Յեղ. Դաշնակ. Գահիրէի  
Ենթակոմիտէին  
Ատենադպիր ՅՈՒԱԿ  
Ատենապետ ԹԱՔՈՒԼ

17.- Զորորդ Ընդհ. ժողովի գումարումը, Կովկասեան իրադարձութիւններու եւ յատկապէս հայ-թաթարական ընդհանրումներու պատճառաւ, տեղի չունեցաւ 1905ի վերջերուն: Ինչպէս որոշուած էր 9. Ընդհ. ժողովին: Աճ կայացաւ 1907 Փետրուարին միայն:

Փաստ. 1032-17

**Բ 5.- ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ**

**Ա. Ընդհանուր ժողով<sup>18</sup>**

Ա. Ժողովը գումարուեցաւ Յունուար 16ին 1908 թ. մօտ 40 ընկերներու ներկայութեամբ:

Ընկեր Հանգոյց<sup>19</sup> առաջարկեց թէ նախ պէտք է նախագահ մը ընտրել, որ ըլլայ տեղիս ընկերներէն, նոյնպէս հարց դրաւ թէ ընտրուած նախագահը մնայուն ըլլայ իր պաշտօնին մէջ, թէ փոփոխելի: Ժողովի մեծամասնութեան կողմէ որոշուեցաւ թէ փոփոխելի ըլլալը ալ աւելի նպատակաւոր կրնայ ըլլալ: Ուստի ներկայ ժողովիս ընկերներու մեծ մասը բացակայ ըլլալուն պատճառաւ առաջարկուեցաւ ընկեր Հանգոյցի ընդունելու նախագահութեան պաշտօնը:

Քննութեան նիւթը եղաւ հետեւեալ հարցը.  
«Ինչպէս պէտք է գինել ժողովուրդը ինքնապաշտպանութեան եւ ընդհանուր ապստամբութեան համար:

Ժողովը ընդհանուր կերպով այն համոզումը յայտնեց, որ Երկրի մէջ եղած զէնքով հնարաւոր է գինուիլ, բայց մեր ժողովուրդի անզէն լինելուն պատճառը գլխաւորապէս անոր տգիտութիւնն է յեղափոխական մտքով:

Անհրաժեշտ է ամէնէն առաջ Երկրի մէջ ամենագորեղ պրոպագանդ մղել քարոզելով ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը, օգտակարութիւնը եւ անխուսափելիութիւնը: Յեղափոխական մարմիններու առաջին գործը պէտք է ըլլայ ժողովուրդի գինումը, որովհետեւ զէնք ունեցող ժողովուրդը թէ իրենք պիտի կրնան պաշտպանուիլ կոտորածի ժամանակ, թէ արձագանք տալ կեդրոնացած գիւղերը եղած շարժումներուն եւ թէ հարկ եղած ժամանակ թռուցիկ խումբերու համար մարդիկ պատրաստել:

Այնուհետեւ խնդիր եղաւ թէ պէտք է գինել Դաշնակցութեան միջոցներով, թէ իրենց սեփական դրամով. ժողովը մեծամասնութեամբ նկատելով որ Ա.— բոլորովին տարբեր նշանակութիւն ունի ժողովուրդի համար ճրի տրուած, եւ իր քրտինքի արդիւնքով ձեռք բերուած զէնքը: Բ.— որ իր միջոցներով զէնք կը գնէ միայն ան, որ խորապէս կը զգայ զէնքի յարգը եւ ի հարկին կարող է անկից օգտուիլ: Ժողովը ցանկութիւն յայտնեց որ Հ. Յ. Դ. Ընդհանուր Ժողովը որոշէ եւ հարկադրէ որ Երկրի մարմինները քարոզեն ժողովուրդին իրենց սեփական միջոցներով գինուելու անհրաժեշտութիւնը:

16 ձայն ընդդէմ 34ի յայտնեց այն կարծիքը որ պէտք

է ճրի զէնք տալ կռուիլ ցանկացող գինուորներուն:

Բայց որովհետեւ կարող է պատահիլ, որ կառավարութիւնը միանգամայն իր միջոցներով զէնք գնողներուն ձեռքէն խլէ իր զէնքը, ժողովս ցանկալի համարեց որ այդպիսիներուն տրուի նոր զէնք եւ ճրի, քանի որ անոնք անգամ մը իրենց միջոցներով զէնք ձեռք բերելով արդէն ցոյց են տուած թէ կը հասկնան զէնքին արժէքը եւ կարեւորութիւնը: Իսկ երկրորդ անգամ գնելու միջոցներ կարող են պակսիլ անոնց:

Քանի որ ժողովուրդի տնտեսական կացութիւնը ծանր է, ժողովը թոյլատրելի համարեց թէ ժողովուրդի գինման ցանկութիւնը քարոզելուն եւ այդ գինումը արագացնելու համար, զէնք տալ այն անձանց, որոնք կանխիկ կը վճարեն զէնքին կէս արժէքը եւ միւս կէսը կը պարտաւորուին վճարելու մաս առ մաս:

Նկատելով, որ մեր թուական պակասութիւնը կարելի է համապատասխանել թշնամու ուժին միայն լաւ տեսակի զէնքերով, ժողովս ցանկալի համարեց որ դաշնակցական մարմինները զբաղուին զէնքի ներմուծմամբ եւ առեւտրով վերը յիշուած սկզբունքներով. միանգամայն անխորհուրդ համարելով գինեալ խումբերով զէնք փոխադրելու սխտեմը, որ արդէն ցոյց է տուած իր ապարդիւնութիւնը:

Նախագահ ՀԱՆԳՈՅՑ

**Բ. Ընդ. ժողով**

Բ. Ժողովը գումարուեցաւ Յունուար 20ին 1908 թ. մօտ 40 ընկերներու ներկայութեամբ: Ընկերներուն մեծամասնութեան ձայնով նախագահ ընտրուեցաւ ընկեր Երուանդ Պոյաճեան:

Քննութեան նիւթը եղաւ հետեւեալ հարցը.— «Ինչ կը պահանջէ Հ. Յ. Դաշնակցութիւնը»: Երկար կարծիքներէ վերջ, ընկերները պատասխանեցին թէ չենք կրնար կատարեալ որոշում մը տալ քանի որ մեզ նախապէս ծանօթացուած չէր քննուելիք նիւթը: Հետեւաբար պարտինք նախ գիտնալ մեր ժողովներուն մէջ յաջորդաբար քննութեանց դրուելիք նիւթերը, որ կանխաւ առիթ ունենանք անոնց մասին խորհելու:

18.- Պէտք է հասկնալ ցիստ իմաստով:  
19.- Դանգոյցը Նիկոլ Աղբալեանն է, որ Արեւմտեան Բիւրոյի կողմէ իրել գործիչ դրուած էր Եգիպտոս:

Ընկերներուն տրուեցաւ գրաւոր կերպով յիշեալ օրակարգը, որ յաջորդաբար քննութեան պիտի դրուին ժողովին մէջ:

- 1.- Դաշնակցութեան նպատակը:
- 2.- Գործունէութեան ուղղութիւնը:
- 3.- Հայ եւ այլ յեղափոխական մարմիններու հետ յարաբերութիւնը:
- 4.- Պրոպագանդա, դասախօսութիւն, հրատարակութիւններ:
- 5.- Զինուորական ոյժի կազմակերպութիւն
- 6.- Գաղութներու դերը:
- 7.- Հաշուետուութիւն:

Նախագահ Քարտուղար

**Գ. Ընդ. ժողով**

Ժողով գումարուեցաւ 1908 թ. Յունուար 23ին 52 ընկերներու ներկայութեամբ. ժողովի մեծամասնութեան ձայնով նախագահ ընտրուեցաւ ընկեր Երուանդ Պոյաճեան:

Ժողովի օրակարգն էր Դաշնակցութեան ծրագրի խնդիրը եւ յատկապէս Դաշնակցութեան նպատակը:

Ժողովը այն կարծիքը յայտնեց թէ, պէտք է ընկերվարական գաղափարները վանել Դաշնակցութեան ծրագրի մէջէն եւ պէտք է պարզ մեկնութիւն տալ «Ազատ Հայաստան» բառին, որ չհասկցուի իբր «Տաճիկ կառավարութեան» բոլորովին անջատ Հայաստան»:

Երկար վիճաբանութիւններէ վերջ սա եզրակացութեան եկան, թէ Դաշնակցութեան նպատակը պէտք է համարուի Տաճկաստանի համար՝ Պերլինի դաշնագրութեան ՅՆԴ յղուած իրազորութիւնը 1895 Մայիս 11-ի դեսպաններու մշակած ռեֆորմներու ծրագրով եւ որ ծրագրի «Ազատ Հայաստան» բառը պէտք է հասկըցւի այդ մտքով:

Գալով Կովկասի մասին, ժողովը ցանկութիւն յայտնեց որ Կովկասի գործունէութեան ծրագիրը մշակուի Կովկասի Ռայոնական Ժողովի կողմէ, միայն մի պահանջ համարեց դնել այն է որ նոր ծրագիրը պէտք չէ հակասէ Դաշնակցութեան ոգոյն:

Նախագահ Քարտուղար

**Դ. Ընդ. ժողով**

Ժողով գումարուեցաւ Յունուար 28ին 1908 թ. 30 ընկերներու ներկայութեամբ: Ժողովի նախագահ ընտրուեցաւ Երուանդ Սրմաքէշխանլեան<sup>20</sup>:

Քննութեան նիւթն էր Դաշնակցութեան բռնելիք ուղղութիւնը մօտակայ տարիներու գործունէութեան մէջ:

Ժողովը, երկար վիճաբանութիւններէ վերջ, հետեւեալ եզրակացութեան հասաւ.

Պահպանել ցոյց-կենտրոնացումի ձեւը բայց աւելի լայն հասկնալով զայն: Նախ պէտք է ժողովուրդը ամէն տեղ գինել ինքնապաշտպանութեան համար: Մանաւանդ այն վայրերը եւ շրջակաները, ուր պիտի կեդրոնանան Դաշնակցութեան դրամական, ռազմական եւ կազմակերպիչ ուժերը: Յետոյ ամէն գաւառ ալ պէտք է ունենայ մի թռուցիկ խումբ, որ ի հարկին օգնութեան հասնի ինքնապաշտպանուող գիւղերուն: Ապա պէտք է ամրացնել մէկ կամ երկու վայր, կեդրոնացնելով այնտեղ ամէն կարգի ուժեր: Իսկ սահմանին կից գիւղերը պէտք է պատրաստ լինեն ներս խուժելու խումբերով: Միայն այս ձեւով պատրաստ եղած ժամանակ շարժում սկսիլ:

Քանի որ կազմակերպութիւնը լայնացած է եւ ամէն տեսակ գործ ընտրուած մարմինները չեն կարող կատարել, հարկաւոր է գինուորական գործը զատել միւս գործերէն, ստեղծել մի յատուկ գինուորական կեդրոնական մարմին եւ անոր յանձնել գինման, գինավարժութեան, զէնքերու գնման, փոխադրութեան, պահեստի եւ գինուորական խումբեր կազմելու գործը: Այս մարմինը պատասխանատու պիտի ըլլայ Ընդհանուր Ժողովի առաջ: Այս մարմինը կ'ունենայ իր պատուիրակները, մարզիչները, կազմակերպիչները, հրատարակութիւնները, վարժոցները, Երկրի մասին տեղեկութիւններ՝ ռազմագիտական տեսակէտէ եւ կը պատրաստէ ժողովուրդը լայն ու տեւական գինման, որով միայն հնարաւոր է եւրոպական միջամտութիւն հրաւիրել: Միայն այսպիսի մարմնի մը ձեռքով գինուորական կրթութիւն ու կազմակերպութիւն ստացած ժողովուրդը կարող է արդիւնաւոր գործ ստեղծել:

Նախագահ Քարտուղար

**Ե. Ընդ. ժողով**

Ժողով գումարուեցաւ Յունուար 29ին 1908 թ. 35 ընկերներու ներկայութեամբ: Ժողովին նախագահ ընտրուեցաւ Մեսրոպ Նորատուկեան:

Քննութեան նիւթն էր օտար ցեղերու եւ ուրիշ յեղափոխական կուսակցութիւններու հետ ունեցած յարաբերութիւնները:

Ժողովը, այս խնդրոյն վրայ երկար զբաղելէ վերջ հետեւեալ եզրակացութեան եկաւ:

Նկատելով որ ամէն շարժում ընդդէմ թիւրք տիրապետող ռեֆիմի մեզ օգտակար է, նկատելով որ մանապէս

20.- Ամենայն հաւանականութեամբ հանրածանօթ գրող Երուստան է, որ 1904-8 թուականներուն կը գտնուէր Եգիպտոս:



լանդ թուրք ժողովուրդի շարժումը ընդդէմ իր պետութեան ամէնէն վտանգաւորն է ներկայ բեօմի համար, ժողովը ցանկութիւն յայտնեց որ ընտրուի մի յատուկ մարմին մի քանիններէ որոյ նպատակը լլլայ յարաբերութիւններ մշակել թուրք յեղափոխականներու հետ, եւ աջակցիլ անոնց գործունէութեան՝ օգնելով անոնց թէ դուրսը եւ թէ ներսը, դուրսը խորհուրդներ տալ իբր աւելի փորձառու մարմին, ներսը՝ տալով տեղեկութիւններ թուրք ժողովուրդի հարստահարութեան մասին, հասցէներ՝ թերթեր ուղարկելու եւ այլն: Այդ մարմինը ուղղակի մասնակցութիւն պիտի չունենայ կազմակերպութեան եւ պրոպագանդի գործերուն, այլ ջանալու է թուրք թուրքի միջոցաւ յեղափոխել որ շարժումին վարկը չընկնի, իբր քրիստոնեայի մշակած բան: Նոր ստեղծուած մարմինը պատասխանատու է Ընդհանուր ժողովին առաջ:

Գալով քիւրտերուն, ժողովը նկատելով որ այդ տարրը ներկայ կազմէն դժգոհ լլլալու պատճառ մը չունի, միեւնոյն ժամանակ իր աւարառու բնակորութեամբ դիւրաւ գործիք է դարձած կառավարութեան ձեռքին, միշտ աշխատիլ անոնց դէմ եւ այս կերպով չէզոքացնել կամ մեղմացնել անոնց վատ դերը մեր հարցի նկատմամբ, քանի որ ոեւէ քարոզ կարող չէ ազդել անոնց վրայ:

Երկու ձայն ընդդէմ 35-ի ընդունելով քիւրտերու մասին եղած որոշումները անփոփոխ, առանձին մարմին կազմելով եւ թուրքերու հետ յարաբերութեանց մէջ մտնելը լիովին ապարդիւն եւ աւելորդ համարեցին, քանի որ անոնց կրթութեանը ոչ մէկ կերպով չեն կրնար համաձայնիլ Հայր ու թուրքը հաւասար ճանչնալու, իսկ հասարակ դասը անվստահելի է միանգամայն:

Նախագահ Քարտուղար

**2.- Ընդ. ժողով**

Ժողովը գումարուեցաւ 31 Յունուար 1908 թ. 28 ընկերներու ներկայութեամբ. ժողովին նախագահ ընտրուեցաւ Երուանդ Պոյաճեան:

Ժողովի քննութեան նիւթն էր յարաբերութիւն ուրիշ կուսակցութիւններու հետ եւ պրոպագանդի խնդիրը:

Ժողովը հետեւեալ կարծիքը յայտնեց. Ռուսաստանի համար այս կամ այն կուսակցութիւններու հետ համերաշխ գործելու որոշումը, թողուլ կովկասի բայրապան ժողովին, միայն հարկ համարեց յայտնել, որ մեր ձգտումները ու ծրագիրները պէտք չէ հակասեն Հ. Յ. Դաշնակցութեան ոգոյն:

Գալով պրոպագանդի խնդրին, կրկին շեշտաւորուեցաւ լաւ պրոպագանդիստներու հարկաւորութիւնը, թէ դուրսը եւ թէ մանաւանդ Երկիրը: Մասնաւորաբար

խօսք եղաւ գրաւոր պրոպագանդի անբաւարարութեան մասին: Այս առիթով ժողովը ցանկալի համարեց՝ որ իրապէս գործադրուի Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր ժողովի որոշումը 500 էջ գրքոյկները հրատարակելու մասին: Բացի այս, ի նկատի ունենալով որ Դաշնակցութեան ծրագիրը շատերը չեն գիտեր, ցանկալի համարուեցաւ հրատարակել գրքոյկներ որ նուիրած լլլան ծրագրի կէտերու պարզաբանութեան եւ բացատրութեան եւ երկրորդ՝ ստեղծել գրքերու մի նոր շարք՝ գիտութեան գրադարան, հրատարակելով ամէն կարգի գիտութեան եւ պայթուցիկ նիւթերու մասին գրքեր:

Նկատելով որ Ռուսաստանի պետական կազմը փոփոխութեանց կ'ենթարկուի եւ անհրաժեշտաբար նոր տրամաբանութիւններ կը ստեղծուին դէպի մեր հարցը, ժողովս անհրաժեշտ համարեց որ ռուս լեզուով «Pro Armenia» մը հրատարակուի՝ բարոյապէս նուիրուած այս դատին, քանի որ մեր դատը երաշխաւորող վեց պետութիւններէն մեծագոյնը Ռուսիան է եւ անոր հասարակական կարծիքը այս գործին մէջ մեծ դեր ունի խաղալու:

Նախագահ Քարտուղար

**Է.- Ընդ. ժողով**

Ժողովը գումարուեցաւ Փետրուար 2 1908 թ. 28 ընկերներու ներկայութեամբ. ժողովին նախագահ ընտրուեցաւ Ն. Հանգոյց:

Քննութեան նիւթն էր գաղութներու դերը յեղափոխական գործին մէջ:

Ժողովը ընդունեց այն կարծիքը, որ յեղափոխական աշխատանքը պէտք է բաժնել գաղութներու մէջ. այսպէս՝ մի գաղութի թողնելով պայթուցիկ նիւթերու պատրաստութեան եւ գործադրութեան վարժեցնելու գործը. միւս գաղութին՝ գիտութեան գրքերի հրատարակութեան գործը, եւ այլն: Այն ժամանակ ամէն ոք կ'իմանայ թէ այս ինչ կամ այն ինչ մասնագիտութիւնը լաւ ուսանելու համար ո՞ր կեդրոնական կոմիտէի շրջանին պիտի դիմէ եւ ո՞ւր աւելի լաւ կարող է վարժուիլ: Ուրիշ մի գաղութ կարող էր յանձն առնել սպաներ պատրաստելու հոգը, գիտութեան վարժարանները եւ այլն:

Բացի այդ որոշուեցաւ ընդհանուր ժողովի ուշադրութիւնը դարձնել Ռուսաստանի հայութեան վրայ, որ հայութեան մի մեծ թիւ ունի, ուրտեղ եթէ յեղափոխական պրոպագանդ մղուի կարող է օգտակար դառնալ թէ դրամական եւ թէ ազգային գիտակցութեան զարթնումի տեսակէտով:

Գալով Եգիպտոսի մասին, յայտնուեցաւ որ այս Երկիրը կարող է փոխադրաբար լլլալ բուն Երկրի համար, բացի այդ նկատելով որ այստեղ է կեդրոնացած

երիտասարդ թուրքերու մեծամասնութիւնը, ուստի այստեղ կարելի է յարաբերութիւններ մշակել այդ տարրի հետ, ինչպէս նաեւ տաճկահայատակ ուրիշ տարրի հետ:

Բայց այս ամէնը ընելու համար պէտք է գաղութը լաւ կազմակերպութիւն ունենայ. իսկ այդ հնարաւոր է միայն այն ժամանակ երբ այստեղ փորձառու պրոպագանդիստ գտնուի:

Այս նկատումներով ժողովս պարտք համարեց դիմելու Ընդհանուր ժողովին եւ խնդրելու որ անպատճառ այստեղ ուղարկուի փորձուած պրոպագանդիստ մը, որ ունենայ նաեւ թերթ խմբագրելու ընդունակութիւն: Եգիպտոսի ընկերները կարող են հոգալ անոր ամսա-

կան ապրուստը եւ ամէն կերպով աջակցիլ անոր ձեռնարկութիւններուն, լլլայ այն թերթ թէ ուրիշ յեղափոխական գործ: Գալով այն հարցին թէ ինչ յարաբերութիւն պէտք է ունենալ տեղիս հնչակեան երկու կազմակերպութեանց հետ, որոշուեցաւ ոչ մի յարաբերութեան մէջ չմտնել անոնց հետ, ոչ յեղափոխական եւ ոչ տեղական-ազգային գործերով: Չայն մը միայն պահանջեց, որ այդ որոշումը վերաբերի միայն վերակազմեալ հրնչակեաններու ճիւղին, իսկ հին հնչակեաններու հետ տեղական ազգային գործերուն մէջ համերաշխ լլլալ:

Նախագահ ՀԱՆԳՈՅՑ Քարտուղար

**Բ 6.- ՔԱՂՈՒԱԾ Հ. Յ. Դ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ [ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ]**

1 Դեկտ. 1908ի նիստին՝ որ տեղի ունեցաւ ի Գահիրէ ..... վայրը, երեկոյեան ժամը ճիշդ 10ին<sup>21</sup>:

**Օրակարգ**

- 1.- Բերանացի Տեղեկագր. Ենթակ(ոմիտէի) գործունէութեան մասին:
- 2.- Նախկին Ենթակ(ոմիտէի) գանձապահին վարմունքը:
- 3.- «Կոմիտէի» հարցը
- 4.- Աղեքսանդրոյ Ենթակ(ոմիտէի) նամակը:
- 5.- Մասնախմբեր (Հորիզոն թերթի, խմբատեղիի եւ գոյքերու մասին):

- 1.- -----
- 2.- Նախընթաց ընդհ. ժողովի մէջ օրինաւոր քուէարկութեամբ ընտրուած ընկերք՝ Տիրան, Մալայ, Աշոտ, Պէրպէրեան եւ Աստուրեան կազմելով Ենթակոմիտէի ժողովը ըստ օրինի դիմած են նախկին Ենթակ(ոմիտէի) գանձապահ ընկ. Սեդրակ Պալլազեանի պահանջելու իր մօտ գտնուած գոյքերը (դրամ մօտ 80 ոսկի, կնիք, բոստի բանալիներ եւ այլն): Այս վերջինը մերժած է իրենց յանձնել այդ գոյքերը առարկելով թէ ա.- Ենթակոմիտէի կազմը ապօրինի է բ.- թէ ինք այդ գոյքերը յանձնած է ընդհ. ժողովէն անվաւեր հուշակուած կոմիտէին գ.- թէ ինք այդ կոմիտէի անդամ է եւ չի կրնար ընդունիլ ընդհ. ժողովի անվաւեր հուշակուած մասին որոշումը: Ընկեր Սեդրակ Պալլազեանի ըրած ա. առարկութիւնը թէ Ենթակ(ոմիտէի) կազմը ապօրինի էր՝ ընդհ. ժողովս բոլորովին անհիմն գտաւ, նկատելով որ ամենախիստ օրինական միջոցներու մէջ ընտրուած է այդ Ենթակոմիտէն, որոնց մասնակցած է եւ ընկ. Պա-

լլազեանը ինք առանց որեւէ դիտողութիւն իսկ ըրած լինելու իսկ բ. առարկութեան մասին՝ որ իբր թէ որոշուած լինի նախկին Ենթակ(ոմիտէի) ժողովին մէջ որպէսզի սոյն գոյքերը յանձնուէին «Կոմիտէին», կարդացուեցաւ նախկին Ենթակ(ոմիտէի) միւս անդամներուն (Կվլեանի, Մալայի եւ Աշոտի) ստորագրութիւնը կրող նամակ մը, որ կը յայտարարէր թէ այդպիսի որոշում մը երբեք տեղի ունեցած չէ, հետեւաբար ընկ. Պալլազեանի սոյն յայտարարութիւնը բացարձակ կերպով զինք հակասութեան մէջ կը ձգէր, եւ այս հաստատելու համար հարցուեցաւ ընկ. Պալլազեանի թէ ի՞նչ էր կոմիտէի յանձնած գումարը. ընկ. Պալլազեան անկարող էր պատասխանելու որովհետեւ այդպիսի մի բան տեղի ունեցած չէր, [ինչ] որ կը նշանակէ թէ ի վերոյ ըրած յայտարարութիւնը անհիմն էր եւ թէ նախորդ ընդհ. ժողովին մէջ իւր ներկայութեան յայտարարուած էր թէ այդ գոյքերը Ենթակ(ոմիտէի) գանձապահ ընկ. Պալլազեանի մօտ կը գտնուէին: Դարձեալ հարցուեցաւ իրեն թէ քանի որ նախկին Ենթակ(ոմիտէի) որոշումով յանձնած էր սոյն գոյքերը «Կոմիտէին», ուրեմն հարկ էր ներկայացնել մի պաշտօնական որեւիցէ թուղթ կամ ստացական, ուստի պահանջուեցաւ այս, - ինչ որ չունէր ընկ. Սեդրակը, եւ այս բոլորովին հակասութեան մէջ ձգելով այլեւս տարակոյս չմնաց թէ սոյն գոյքերը իր մօտ էին եւ թէ ինք չէր հանդիսանալ յանձնել առ որ անկ էր եւ ընկ. Սեդրակ Պալլազեան ինք իսկ ըմբռնելով իւր հակասութիւնը փորձեց ծանրանալ իւր գ. առարկութեան մասին՝ որ է «Կոմիտէին» անվաւեր հուշակուած լլլալու խնդիրը: Ընդհ. ժողովը կրկին եւ կրկին շեշտեց թէ տեղ-

21.- Եզին վերջ՝ ձախ անկիւնին վրայ գրուած է. Ստացուած 3ուճուար 2, 1907:

ւոյս կազմակերպական կանոնադրութիւնը իրաւունք չէր տար ենթակոմիտէին որպէսզի ինքնընտիր քայլ մտնէր, հետեւաբար նա շեղած լինելով իւր պարտականութեան սահմաններէն՝ ընդհ. ժողովը իր մեծամասնութեան քուէով անգամ մը անվաւեր հռչակած լինելով հանդերձ այս անգամ դարձեալ շեշտեց սոյն որոշումը եւ հետեւաբար ընկերոջ մը առաջարկին վրայ կրկին եւ կրկին պահանջուեցաւ պրն. Պալրզեանէն որպէսզի իւր մօտ գտնուած գոյքերը յանձնէ եւ որոնց մերժումին վրայ ընդհ. ժողովը իւր մեծամասնութեան քուէով հետեւեալ որոշումը տուաւ. «Նկատելով որ ընկ. Սեդրակ Պալրզեան հակառակ բոլոր բարեկամական միջոցներու չնուգեր կարգապահ լինել, ուստի այս խնդիրը իւր մանրամասնութեամբ կը հաղորդուի

Արեւմտեան Բիւրոյին որպէսզի նա իւր միջոցներով այդ գոյքերը ստանձնէ, որով ընդմիջտ մեր հաշիւը փակուած կը լինի այդ ընկերոջ հետ. իսկ գալով կոմիտէի մասին՝ նոյնպէս հարկ է որ Արեւմտեան Բիւրոն իւր միջոցներով զգացնէ անոնց անվաւերութիւնը»:

- 4.-----
5.-----

Այս ժողովին մասնակցած են 48 ընկերներ որոնց 42ը ստորագրած են այս ատենադրութիւնը:

Պատճէնս յար է բնագրին:

Ի դիմաց ենթակոմիտէի ՄՄԱԹ ՏԻԳՐԱՆ Ատենադպիր Ատենապետ



ՀԱՅ ՅԵՂԵՓՈՒԹԵԱՆ ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

— 1890 —

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

47 հոկտեմբեր 1907 թ. ԿՕՄԻՏԷ

1907 թ. հոկտեմբեր 2

Բ 7.- Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 1907Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Յարգելի ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Եզիպտոսի մարմիններուն Ռայոնական<sup>22</sup> ժողովը, որ գումարուեցաւ անցեալ տարուայ վերջերը Արեւմտեան Բիւրոյին ստացուած հրահրին համաձայն, պատգամաւորի ընտրութիւն կատարելով՝ այդ պաշտօնը յանձնեց Պ. Սիրական Պոյաճեանի, որ իրաւունք պիտի ունենայ մասնակցել ձեր ժողովին իբրեւ ներկայացուցիչ Եզիպտոսի դաշնակցական կազմակերպութեան:

Ընկերական ջերմ բարեւներով ՊԱՐՈՅՐ ՍԱՐՀԱՏ

22.- Յաւակնութիւն է մէկուկէս կիսկատար մարմնի Եզիպտոսի յարկէն հաւաքը անուանել Ռայոնական ժողով: Եզիպտոսի հարկ է վերապահել բազմաթիւ 4. 4. Եզիպտոսի ընդարձակ շրջան մը եկած պատգամաւորներու ժողովներուն: Ընդհ. ժողովը Սիրական Պոյաճեանին տուաւ խորհրդական ծայրի իրաւունք:

Գ 1.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Կիկո Արապեան, ծանօթ մահու Ն. Հանգոյց ծածկանունով, 1904-5ին իրեն կուսակցական գործիչ Չրաքերոյի (Կաթոլիկ) ժողովին մէջ ծառայել էր, 1905 Գեղու.ի առաջին օրերուն Աղեքսանդրիա է արդէն, այս անգամ Արեւմտեան Բիւրոյին արգադրութեամբ Եզիպտոսի կազմակերպական գործերը վարելու համար: 1906ի Յուլիսին կ'անցնի Ժընև եւ շուրջ վեց ամիս կը մնայ Չուիքերիա պարբերաբար անցնելով Մարտի, Փարիզ, եւ եւրոպական այլ ուստաններ: 1907ի Յունուարին Եզիպտոս գործուողած է Եզիպտոս նախկին առաքելութեամբ, որուն վրայ անկցուած են Լեռնավայրի գործերը, ինչ որ առիթ տրուեցաւ իրեն այցելելու Հալէպ, Պէլոսք եւ Կիլիկիոյ քաղաքները: Արեւիշեալ տարիներուն (1905 - 1908) Ն. Արապեան կանոնաւոր քրակցական կապ պահած է Արեւմտեան Բիւրոյին, ինչպէս նաեւ Եզիպտոսի ու Լեռնավայրի կուսակցական մարմիններուն եւ գործիչներուն հետ: Չորրորդ Ընդհ. ժողովը արգադրեց մէջ պահուած են Արեւմտեան Բիւրոյին (Ժընև) յղուած տեղեկագրական բնոյթի երեք գրութիւններ, որոնց միացնենք իր բազմաթիւ նամակներէն մէկ քանին, որոնք Եզիպտոսի Հ. Յ. Գ. կազմակերպութեան վիճակը բնութագրելու համար առաւել յստակացական են:

1905, XII/19, Գահիրէ

Գնացի մի քանի օր Աղեքսանդրիա, որովհետեւ դրութիւնը սպառնական կերպարանք ունէր, կարող էր անհամուծիւն դուրս գալ այս ազատ երկրում: Գումարեցի մի խառն ժողով բոլոր խմբերի՝ թէեւ քիչ մարդ եկաւ եւ յորդորեցի որ հանգիստ մնան մինչեւ տեսնենք ի՞նչ է լինում:

Այստեղ նոյնպէս ընդհանուր ժողով գումարուեց ենթակոմիտէի եռամսեայ հաշիւը լսելու: Ժողովը կանոնաւոր անցաւ: Դրամական նպաստներ կանոնաւոր հաւաքուած են, դժբախտաբար հաշիւ քննողները դեռ չեն հաւաքուել, որ ստուգելուց յետոյ տեղեկագրեմ:

Ընդհանուր առմամբ այս քաղաքում գործ անել հընարաւոր է միայն մէ պայմանով — որ մի խմբատեղի լինի. տեղ չկայ մարդ տեսնելու, ցրուած են քաղաքի ամէն անկիւնում, չես իմանում ինչպէս իրար մօտ բերես: Արդէն վարձելու են մի բնակարան, բայց մի կողմից դըրամն է քիչ, միւս կողմից ուզում են կենտրոն տեղ լինի, որ հեշտ հաւաքուեն. իսկ այդ տեսակ տեղերն էլ չատ է սուղ:

Հասարակութեան վրայ ազդելու համար պէտք է անպատճառ խմբել նրան. այստեղ Յունուարից բաց են անում մի լսարան-ընթերցարան — չէզոքները — որ բաւական մեծ սրահ ունի, ասում են. այդ լսարանի բացուելով հնարաւորութիւն կ'ունենամ թէ՛ մարդ տեսնելու, թէ՛ պրոպագանդի յարմարութիւն կը ստեղծուի:

Գալով թերթին — դա էլ մի միջոց է պրոպագանդի եւ լաւ միջոց — բայց... մերոնց, ինչպէս եւ առհասարակ այստեղի գաղութին ոչ թէ պրոպագանդ, այլ կրթութիւն է հարկաւոր: Տաճկաստանից են բոլորը, ոմանք թրքախօս, ոմանք արաբախօս, հայախօսները հազար ու մի գաւառից ու գիւղից, իրար այստեղ են միայն պատահում. մեծ մասը օրապահիկ հոգսով զբաղուած,

կարողալ-գրել իմացող՝ բայց ի՞նչ է կարդացածը՝ «Ձայն հայրենեաց», «Ազատ բեմ», «Հորիզոն» եւ նմանիք, որից սովորում են ֆրագներ, բայց մտածել՝ ամենեւին: Մտածել արդէն յանցանք է Տաճկաստանում — իսկ թերթ վարողները բոլորը այնտեղի ոգով ու ուղղութեամբ է, որ գնում են: Այստեղ պէտք է մարդկանց կրթել — գիտելիքներ եւ գաղափարներ տալ. մանաւանդ գաղափարներ: Լեզուներ գիտեն եւ ոչինչ չգիտեն: Երկարել այս մասին աւելորդ է: Իմ համոզումը ինչպէս նաեւ ընկերների համոզումն այն է, որ այստեղ անհրաժեշտ է մի կարող, համալսարանական պրոպագանդիստ, որ միաժամանակ կարողանար թերթ վարել: Եզիպտոսը կարող է դրամապէս ապահովել մի թերթ եւ մի խմբագիր — պայմանով որ տեղական գործերով զբաղի եւ լինի մի թերթ, պարզ թերթ, ուրիշ ոչինչ, ոչ հնչակեան յարձակումները նկատէ, ոչ Դաշնակցութիւնը գովաբանէ. լինի այնպէս, ինչպէս մի «Մշակ» Թիֆլիզում — բայց իրերն ու անձերը քննէ դաշնակցական տեսակէտից: Արփիարի<sup>23</sup> ողորմելի «Լուսաբեր»ը գրտնում է կարդացողներ, մինչդեռ «Հորիզոն»ը<sup>24</sup> սկսել են մերժել նոյնիսկ դաշնակցական ընկերները: Ուրեմն այստեղ հարկաւոր է կուլտուրական աշխատանք, թերթ լաւ գնաց — Դաշնակցութեան գործն ապահովուած է, որովհետեւ այստեղ նայում են թէ ով է խօսողը, գործողը. չեն սիրում, որ կուլտիւն ու վիճիւն իրանց չհասկացած բաների մասին. բայց Դաշնակցութիւնն ունի լաւ մարդիկ — այսքանը բաւ է: Անպատճառ մի խելքը գլխին մարդ, որ սորվեցնէ ո՞րն է պատիւ, ո՞րն անպատուութիւն. մարդիկ կան, որ կարծում են թէ եթէ հնչակեա-

23.- Արփիար Արփիարեան, որ այդ թուականներուն Եզիպտոս էր:
24.- Չշվոթել Թիֆլիսի «Հորիզոն»ին հետ. այս մէկը Աղեքսանդրիոյ մէջ անհատ դաշնակցականներու կողմէ հրատարակուող լրագիր էր:

նին մի ապտակ զարկէ կամ խայտառակէ — Դաշնակցութեան պատիւը պաշտպանուած է. այսպէս է մարդկանց հոգեբանութիւնը, ինչ անես: Ուրեմն նորից կրկնում եմ մի լաւ պրոպագանդիստ, որ թերթ դեկավարէ, խելօք, ազնիւ եւ կարող: Հակառակ դէպքում, այստեղ կը լինին դաշնակցականներ, կը գայ նաեւ դրամ. բայց չի լինի գործ, որովհետեւ չգիտեն շատ պարզ բաներ. մեղաւոր չեն, չեն տեսել:

Յունուարից «Հորիզոն»ը դառնում է Փաշայեանի<sup>8</sup> անձնական սեփականութիւնը. Դաշնակցութիւնն այլ լեւա թերթ չի ունենալու այստեղ: «Հորիզոն»ից ամէնքը դժգոհ են, գոհ լինել էլ չի կարելի — քանի որ նոյնիսկ այդտեղի գեաղուած վիճակում, նկատել էիք, որ շատ է անտակտ կուռում:

Գալով ինձ, ես այստեղ երկար չեմ կարող մնալ, ամենաշատը կը մնամ չորս ամիս, կ'անեմ ինչ որ կարգադրել ու յանձնարարել էք, կարգի կը բերեմ գործերը, բայց թերթը վարել — այդ չեմ կարող: Պէտք է լեզուներ իմանալ. առնուազն ֆրանսերէն, իսկ ես ոչինչ չգիտեմ. այս վիճակում գործը այնպէս տանել ինչպէս ես կ'ուզէի՝ անհնարին է: իսկ տանել այնպէս՝ ինչպէս դուրս կը գայ, հակառակ եմ: Կը լինեն գուցէ մարդիկ, որոնք կ'ուզենան հաստատուել այստեղ, մնալ, գործ ստեղծել, ինչպէս «Հայրենիք»ի խմբագիրը, այդ հասկանում եմ եւ այդ տեսակ մէկը պէտք է լինի այստեղ. բայց սկսել, ձեռաց թողնել — դա զուր ջանք է, մանաւանդ թէ ապարդիւն: Եզրպտոսը դրամաշատ տեղ է, կարելի է գործ ստեղծել, բայց այստեղ հարկաւոր են ոչ թէ այցելուներ, այլ հաստատուող մարդիկ:

Բարեւներս բոլորիդ՝  
Ն. ՀԱՆԳՈՅԹ

Ուշագրաւ հանգամանք է նաեւ հետեւեալը: Կոմիտէի փակուած հաշիւների մէջ, որ իմ քննութիւնից դուրս է, նշանակուած է վիրաւոր Զարեհին (երեք անգամով) 450 դր[ուշ]: Այս Զարեհ ասածը, ոչ խմբի անդամ է եղել, ոչ բան. հրացանի փորձ անողների հետ գացել է դաշտ եւ փորձի ժամանակ վիրաւորուել...

Ընդհանրապէս տեղիս գործերը տարուել են «տնավարի». առանց մտածելու թէ ո՞ւմ դրամն ո՞ւմ են տալիս:

Խնդրեմ յատկապէս նայէք Սարհատի հաշիւներում նշանակուած է, 45 դր[ուշ] գումար. այստեղից Աթէնք մեկնող տղաների լուսանկարների ծախս, որ մտնում է ուղարկածս հաշուեկշռի 100 դր[ուշի] մէջ: Հիմքեր ունեմ կարծելու, որ այդ ծախսը եւ այստեղի կոմիտէի հաշիւներում է նշանակուած եւ Լեւնավայրի (? թէ Վիշապի<sup>25</sup> մի խօսքով Սարհատի) Պատասխանատու Մարմնի հաշիւներում: Յաւուր եմ, որ այստեղի անձերը սկսում են կասկածելի երեւալ աչքիս...

Ստացուել է այսօր Մեծ մարդասպանի դէմ բրոշիւրը. ի՞նչ պիտի անենք այդքանը. այստեղ ամէնքը կարգացել են Պոլսի թերթերում, Երկրի մէջ նոյնպէս աւելի քան կարդացել են՝ անգիր են արել:

Առ այժմ այսքան՝  
Ն. ՀԱՆԳՈՅԹ

Բարեւներ ծանօթներիս: Այստեղ մնալը այն օգուտն ունեցաւ, որ ծանօթացայ հին «Դրօշակ»ներին. ի դէպ, շատ լաւ կը լինէր, եթէ խմբագրութիւնը հրատարակէր «Դրօշակ»ի սկզբի տարուայ համարները կրկին տպագրութեամբ: Կը ծախուէր եւ լա՛ւ կը ծախուէր:

Վատ չէր լինի եթէ հրատարակուէին Քր[իստափոր] Միքայէլեանի յօդուածները, որոնք դուրս են մնացել «Ամբոխային տրամաբանութիւն» գրքոյկից: Երբ նոր գրքոյկներ չկան, գոնէ հին գրութիւնների հաւաքածոներ ունենանք, մանաւանդ Քր. Միքայէլեանինը, որ անհրաժեշտ է ամէն պրոպագանդիստի, դաշնակցականի եւ ծրագրին ծանօթանալ ցանկացողի:

P.S. Մոռացայ յիշել, որ հաշուեկշռում նշանակուած ծախսերից ինչպէս 100 դր[ուշ], այնպէս էլ 882.5 դրկած Սարհատին, իսկապէս պիտի այս կոմիտէն չանէր. այլ՝ եթէ հանգամանքների բերումով ինքն էր անելու պիտի պահանջ նշանակուէր համապատասխան պատասխանատու մարմիններին: Ինչեւէ. այսպէս գործ վարելով միայն շիւսփլաւ ստացուի, հաշիւներն ու իրաւանց սահմաններն իրար կը խառնուին եւ ջուրը պղտորուելով՝ բաւական դրամ կը կորչի. ո՞վ է գնալու փնտռէ խառնուխուռն գրութիւններն ու թղթերը...

[Էջերու լուսանցքներուն վրայ]

Խնդրելով խնդրում եմ փող փոխադրէք, շատ թանգ տեղ է, պարտք անելով մեռայ, կամ կարգադրեցէք մի կերպ. օգ չեմ ուտելու:

Ընդհանուր ժողովի տեղը, ժամանակը եւ հարցերը շուտով ղրկեցէք, ինչպէս ասիք — գուցէ մի մարդ ղրկենք:

Սիմոն<sup>26</sup> եկել է, շատ է յոգնած. գրել եմ այս լուրը, երեւի նամակ ստացաք: Պրոպագանդիստ ու խմբագիր մէկը հոգացէք:

25.- Լեւնավայր՝ Կիլիկիա: Վիշապ՝ Պոլիս (այս պարագային Յուդայական Մարմինը, որու օժանդակներն սեկն էր Սարհատ):

26.- Սիմոն Զաւարեան:

Փաստ. 1030-15

Գ 2.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Նամակի ճակատին գրուած այս բուսկանը՝ 1905, Յունուար 15 յայտնապէս սխալ է: Աղբարեան առաջին անգամ եղիպտոս հասաւ 1905 թ. Դեկտեմբերի առաջին շաբաթը, հաւանաբար 6ին: Տարեթիւր պէտք է ըլլայ 1906: Նամակին մէջ գրուած Աղբարեանի ժողովն ալ արդէն սխալ է 1906 թ. Յունուար 16ին (տեսնել էջ 238, փաստ. 1032-17):

1905, Յունուար 15

Այս միջոցներում պատահածը հարկ եմ համարում տեղեկագրել:

Մինչեւ այժմ Գահիրէ էի. երէկ միայն եկել եմ այստեղ երկար մնալու. Գահիրէի գործերը բաւական կարգին են:

Ընդհանուր ժողովին մեր շրջանի կարծիքներն ուղարկելու համար հրաւիրեցինք ընկերների ընդհանուր ժողով. այստեղ քննուեցին մի քանի խնդիրներ.

- ա. Դաշնակցութեան նպատակը.
  - բ. Գործելու եղանակը, տակտիկ.
  - գ. Ժողովուրդի գինման եւ ինքնապաշտպանութեան խնդիրը:
  - դ. Պրոպագանդի խնդիր:
  - ե. Ուրիշ կուսակցութեանց եւ օտար տարրերի հետ ունենալիք յարաբերութեան խնդիրը:
- Եւ վերջապէս թէ Եզրպտոսը ի՞նչ կարող է անել նպատելու համար յեղափոխական գործին: Ընդհանուր խնդիրների մասին շրջանիս կարծիքը կ'ուղարկուի Ընդհանուր ժողովին, երբ այստեղ՝ Աղեքսանդրիա եւ նման ժողովներ ունենանք (առաջինը Երեքաբթի օրն է՝ վաղը) ու այն ժամանակ մեր ժողովների արձանագրութիւնից կ'իմանաք թէ ինչ են մտածում այստեղ այս կամ այն խնդրի մասին:

Կարեւորը տեղական գործերն են առ այժմ: Որոշուեց ունենալ զինուորական խումբեր, որի ծրագիրը մըշակել եմ, բայց մանրամասնութիւնները մշակելը եւ ծրագրի ընդունելը մնում է յետագայ Ընդհանուր ժողովին՝ որ թուով Երդը կը լինի. մինչեւ այժմ Գահիրէում եղել է 4 ընդհանուր ժողով (գալուցս ի վեր): Այդ խմբերի նպատակն է գինավարութեան սովորեցնել դաշնակց. ընկերներին եւ Երկրի համար կուռուղ պատրաստել: Պրոպագանդը զօրացնելու համար, որոշուեց ամէն ջանք թափել նոր բացուած լսարան-ընթերցարանը դարձնել Գահիրէի համար մի ժողովրդական տուն:

Այս գործում մեզ հետ են հին հնչակեանները: Բացի այս՝ կազմել դասախօսների մի խումբ՝ միջկուսակցական, որ ջանալու է ժողովուրդի մտաւորը բարձրացնել. ինչպէս երեւում է բոլոր ըսի-ըսաւներու աղբիւրը տգիտութիւնն է եւ կղզիացումը:

Նաեւ հրատարակել մի շարք զինուորական գիտութեան վերաբերեալ թարգմանական հանրամատչելի գրքոյկներ — այս համարելով մի տեսակ մասնաւոր ծառայութիւն ընդհանուր գործին մեր շրջանի կողմից:

Նոր խմբեր կազմելը մենք համարում ենք աւելորդ ու ծանրութիւն մեր գործի համար. խմբերը, որոնք ոչինչ չեն վճարում (նրանց տարեկան վճարը մի շրջելով կարելի է հանգանակել) միայն դժուարացնում են գործը, քանի որ իրականում թողնենք գրածը, գրած շատ բան կայ աշխարհում, միայն դրամ վճարողն է, որ համարում է դաշնակցական. արդ՝ ի՞նչ սպասել այս անձերից, որոնց միակ առաքելութիւնը չնչին դրամ վճարելն է, այն էլ ոչ պարբերաբար եւ ոչ առանց յիշեցնելու:

Պէտք է աշխատել որակը բարձրացնել. իմ կարծիքով միայն զինուորն է իսկական յեղափոխական, մէկ էլ՝ կազմակերպիչ-պրոպագանդիստը՝ պրոպագանդը իր բոլոր ճիւղերով: Իսկ որակը բարձրացնելը դժուարագոյն գործն է այս աշխարհում. շատ քիչ դաշնակցական կայ, որ ծրագրին տեղեակ լինի, շատ քիչ՝ որ կազմակերպական կանոններն իմանայ. արդէն այստեղ կուռը այդ բաներն իմանալ ուղեւորեցն է առաջ եկել. մարմինները չեն ուղեւոր այն ծրագիրը տալ իրանց անգամներին, որով ուրիշ կազմակերպութիւններ հեղեղում են տուն ու փողոց: Ես կ'ուզէի, որ այստեղ արտասպէսինք կազմակերպական կանոնները. կամ ուղարկեցէք, որ ծախենք այստեղ:

Որոշուեց մի յատուկ մարմին ստեղծել երիտասարդ թիւրքերի հետ բանակցելու եւ ի հարկին՝ հրատարակութիւններ անելու տաճկերէն. դժբախտաբար յարմար մարդիկ քիչ կան. եղածներն էլ մէկը միւսին չի ասում թէ Աստուած է ստեղծել: Տեսնենք. այս գործը է՛ն կարեւոր գործերից մէկն է:

Առանձին թերթ ունենալը ցանկալի համարուեց, բայց եւ անկարելի. աշխատակիցներ չկան: Գալով ինձ, ես երկար մնացողը չեմ. երկրորդ՝ լաւ գործ անելու պայմաններ չեմ գտնում: Հորիզոնը<sup>24</sup> կը մնայ Փաշայեանին՝ որ շարունակելու է աւելի փոքր ծաւալով:

Մարտիրոսը եկաւ: Երկիր մտնողների գործը արդէն կարգադրել էինք Սիմոն<sup>26</sup> հետ: Մեծ ծառայութիւններ արաւ մարդն այստեղ (Սիմոնը), չնայած իր չափազանց յոգնած լինելուն. առանց նրան շատ բան այնպէս չէր

լինի ինչպէս եղաւ: Վերջնական որոշումն այս է. գնացողները պէտք է պատրաստ լինին: Պիտի իմանան գինական գործը, զինուորական գործը, մի քիչ պայթուցիկ նիւթերի մասին տեղեկութիւն, տեղի պայմանները. ազատ պիտի ապրին, որեւէ գործով պիտի զբաղուեն, մեր կանոններին, կարգերին ու կազմակերպական ձեւերին ծանօթ պիտի լինին, պիտի իմանան յեղափոխական անձերը եւ մեր ծրագիրը շատ լաւ. ուրիշ կուսակցութեան ծրագիրներուն տեղեկ պիտի լինին: Այս ամէնը իմանալուց շատ են հեռու մեր ընկերները: Ուստի ընդունելով նրանց գնալու օգտակարութիւնը՝ խորհուրդ տրուեց մի քանի ժամանակ անցնել կովկաս եւ տեղն ու տեղը մասնակցելով գործին ծանօթանան յեղափոխական կեանքին ու կազմին - ապա միայն Երկիր գնան: Ուրիշ չըջան չեն ուզում գնալ եւ լաւ էլ անում են: Ծանօթ չեն ամէն տեղի հետ եւ անյարմար է անծանօթ վայրում թաքուն ապրելով գործ տեսնելը: Այս գործը վերջնապէս լուծուած կարելի է համարել:

Ստացայ այսօր 300 Ֆրանկը. արդէն ձեր գրութեան հիման վրայ՝ ստանում էի Գահիրէի ընկերներից, բայց որ եկել է դրամը, կը դարձնեմ ստացածիս տեղը եւ կ'ասեմ որ ստացականներս ոչնչացնեն. ուղարկում եմ ստացական:

Միմոնը չի ուզում Աթէնք գնալ. գրել է ձեզ այդ մասին. ես ծանօթ չեմ գործերին. Մտում է որ այստեղից մէկը գնայ կարգադրելու թէ չէ եղած չեղածն էլ կ'ուտեն ու մօտը կը կանգնին: Այս մասին մի շուտափոյթ կարգադրութիւն:

Կը խնդրէի եռանդագին ուղարկել ինձ գուլիցերական գործի կազմակերպութեան մասին տեղեկութիւններ եւ գուլիցերական ժողովուրդի համար հրապարակւած զինուորական հրահանգի գրքոյկներ. այս մէկը շատ շուտով:

Բարեւներ ամէնքին  
ՀԱՆԳՈՅՑ

**Գ 3.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ**

**Հաշուական Գամակ, ամբուսակիր. Գամակի սովորական 4 էջեր:**

Ահա ուղարկում եմ նախկին կոմիտէի Հաշուեկշիւը եւ օրագրական մատեանը: Այս Հաշիւները տեսայ, բայց ստուգել չկարողացայ, որովհետեւ դուկտ. Փաշայեանը ինձ չկարողացաւ ներկայացնել կտրօնների արմատները, ասելով որ ուղարկել է Բիւրոյին: Այսպիսով ստուգելը ձեռք է մնում: Մինչեւ Փետրուար 15ը Հաշիւները փակուած են. ես չեմ նայել. այնուհետեւ եղած Հաշիւը, ինչպէս ասի, տեսել եմ եւ գումարները ճշգրիտ:

Իրանց կազմած Հաշուեկշիւի մէջ խառն են Հաշիւները, ես պարզել եմ. համեմատեցէք եւ կը տեսնէք. այսպէս, «Դրօշակ»ի բաժանորդագիրը, որ կոմիտէի մուտք է, արձանագրուած է այդ թերթի մէջ: Այդպէս է նաեւ Երկիր մեկնող մէկ ընկերող աւանդ տուած դրամը, որ իբր մուտք է ցոյց տուած, մինչդեռ մարդն եկաւ նորերս եւ յետ դարձրինք իր տուածը:

Միասերի մէջ նշանակուած է Այվատեանին տուած ճաշի ծախսի մնացորդը 160 դր[ուշ], որ ես չընդունեցի. ինչպէս կ'ուզեն, թող վճարեն, դա ի՞նչ կոմիտէի ծախս է: Մարդիկ ճաշ են տուել, դեռ դրամը չգանձած՝ կոմիտէի դրամը ծախսել են (հակառակ Ընդհանուր Ժողովում ըստուած կանոնի) եւ ապա մի մասը, որ չեն կարողացել գանձել՝ գրել են կոմիտէի Հաշուին: Զգաստացնելու համար սրանց՝ վատ չէր լինի, որ մի յանդիմանութիւն ուղարկէք:

Կան եւ ուրիշ կէտեր. օրիորդ Զարուհիին<sup>27</sup> տրուած դրամը Կ. Խաչը պիտի տայ. ես կը գանձեմ եւ կը մտցնեմ կոմիտէի սնտուկը, դրա համար էլ իմ կազմած Հաշուեկշիւի մէջ այդ ծախսը չկայ:

Կոմիտէն ներկայացնում է 405.5 դրուշի պահանջ գանազաններից. ինչպէ՞ս են ստեղծուել այդ պահանջները: Ոմն Պիէր Արուսեան սովորաբար վճարելիս է եղել 20 դր. ամսական: Դուկտ.ը ասում է որ մի ամսական նա չէր վճարել, բայց ես տուի նրան ստացագիր, այսինքն՝ կազմակերպութեան անդորրագրերից: Ոչ անդորրագիր կայ մէջտեղ, ոչ մարդն է այստեղ, որ ստուգեմ:

27.- Զարուհի Տրոյեան (Ժենիա) քոյրը յայտնի յեղափոխական գործիչ եւ մարտիկ Վազգէնի (Տիգրան Տրոյեան), որ 90ական թուականներուն Վասպուրականի մէջ հռչակուած էր իր վարած կռիւներով եւ հերոսական Գահատակութեամբ (1898): Զարուհի ինքն ալ յայտնի իր յեղափոխական գործունէութեամբ (անդամ էր Վասպուրականի Կեդր. Կոմիտէին), 1896ին ձերբակալուած եւ քստրուած էր Երուսաղէմ, ուր կը մնար այդ թուականէն ի վեր կոսակցութենէն ստանալով ցիւրակական օժանդակութիւն:

Յետոյ գալիս է ոմն Ազարեան ինձեներ. խոստացել է Հանգանակութեան ժամանակ տալ 292.5 դր. այդպէս էլ Հաշուել են եւ ձեզ ուղարկել իբր տուած, մինչդեռ չէ գանձուած: Դիմել եմ մի նամակով՝ խոստացել է տալ 100 դր. այս մասին յետոյ\*:

Երրորդը՝ 43 դր. այսպէս է. Միսաքեան<sup>28</sup> ընտանիքի օգտին ընկերները Հանգանակութիւն են անում, դեռ չսպասած արդիւնքին մարմինը իր միջոցներից տալիս է օգնութիւն՝ յուսալով լրացնել լինելիք Հանգանակութեամբ: Եւ Հանգանակութիւնը պակաս է դուրս գալիս 43 դր. կամ ինչպէս ասում են՝ Հանգանակել են նախկին ենթակոմիտէի անդամ Մանուկ Եարըմեան, մի փուշ աւագակ, որի մասին կը գրեմ եւ ոմն Գալֆայեան, ու չեն տուել կոմիտէին: Գրել եմ, բացատրութիւն եմ ուղարկել: Այսպէս թէ այնպէս՝ դարձեալ նոյն ապօրինութիւնը, կազմակերպութեան դրամարկղը նպաստների են բանեցրել, որ իրաւունք չէ:

Յետոյ՝ 38 դր.: Բժիշկն ասում է, թէ ինքը վճարել է երեք մարդու փոխարէն «Դրօշակ»ի բաժնեգին եւ զրկել է խմբագրութեանը. իրանց Հաշուեցոյցի մէջ նշանակուած 80 բաժանորդների մէջ են այդ երեքն էլ. դարձեալ նոյնը՝ ինչ որ Հանգանակութեան դէպքում: Զգանձուած գումարը Հաշուի մէջ առնել եւ վերջը բարդութիւններ ստեղծել: Ուզեցայ, ասում է, 80 բաժանորդ լրիւ ուղարկել, հիմի ե՛կ եւ գանձիր...

Գրքերի Հաշիւը նոյն վիճակումն է. ինչ որ ես ստացել եմ (աւելի ճիշդ Փոթորիկ խումբն ստացել է) այդ մասին գրեցի, իսկ ինչ որ մնում է՝ չեմ կարող ստուգել. Հաշիւ չի պահուած ոչ ստացածի, ոչ էլ ծախսածի:

Այսպէս ուրեմն 381.5 դր. դրամ պէտք է կորած համարել. կը յաջողուի՞ արդեօք գանձել. ո՞վ գիտէ: 20 դր. տէրը՝ Պիէր Արուսեան այժմ տաճկացել է եւ ասում են մատնութիւններ է անում. 292.5 դր. խոստացող ինձեները իմ նամակին պատասխանել էր թէ 100 դր. կը տայ, 43 դր. պարտ ունեցող Մանուկ Եարըմեանը 535 դր. պարտք ունի Կ. Խաչին եւ կոմիտէին եւ պարպ չըջում է Գահիրէ (եղել է ենթակոմիտէի անդամ!), 38 դր. «Դրօշակ»ի բաժնեգիրը մերժում են՝ թէ մենք միշտ ձրի ենք կարդացել:

Այս բոլոր գանցառութեանց եւ անկանոնութեանց համար մի յանդիմանութիւն անելը Հներին՝ օգտակար

կը լինէր նոր ընտրուելիք ենթակոմիտէի անդամներին: Մնացած գումարից էլ 1450 1/4 դր. պարտք է տրուած խմբատեղիի վարչութեան, որ դեռ չի վճարել, բայց մեծ յոյս ու Հաւանականութիւն կայ, որ վճարել կարողանան շուտով:

Հին Հաշուի մէջ նշանակուած եւ նորի մէջ մտցրած 14 դր. պոստի ծախքերը Փաշայեանը ներկայացրել է յետոյ եւ ենթակոմիտէն ընդունել է, ուստի մտցնում եմ ելքի մէջ, թէ եւ նոյնպէս ստուգել չեղաւ:

Ահա այս վիճակի մէջ է այստեղի գործի դրամական կողմը:

Աթէնքից եւ տեղական խմբերից գանգատ են գրել թէ իրանց տուածը դուրս չեկաւ «Դրօշակ»ում. հանգրուացրի, որ դեռ չի ուղարկուած: Հիմա յոյս ունիմ, որ անմիջապէս կը տպագրէք առաջիկայ համարում:

Հին Հաշուեցոյցի մէջ նշանակուած «Դրօշակ»ի բաժնեգիրը՝ 158 դր. դուկտորի մօտ է, շուտով կ'ուղարկեմ, բայց նոր Հաշուեցոյցին մէջ չեմ առել, որովհետեւ դա կոմիտէի մուտք է:

Թէ ո՞վ պէտք է լինի չգանձուած ապառիկների պատասխանատուն, քանի որ կոմիտէի դրամ է մի մասը՝ անտուկը մտած (43 դր.), այդ ինքնորդ դատեցէք ու Համապատասխան կարգադրութիւն արէք:

\* Այդ պարոնը երէկ ուղարկել է մի անգլիական ոսկի (97.5 դր.), եւ խնդրում է «Դրօշակ»ում եւս այնպէս տպել, իբր թէ տառասխալով 97.5ը տպուել է 292.5 դր.: Ես գրել էի նրան, որ թէ տալիս էք տուէք դրամը. թէ չէք տալիս՝ ասէք, որ գրեմ Բիւրոյին՝ ուղղեն Հաշիւը թերթի մէջ: Հիմա յուսով եմ, որ կ'ուղղէք սխալը. այսինքն «Դրօշակ»ում կը տպէք, որ անցեալ տարուայ Հանգանակութեան ցանկում նշանակուած 292.5 դր. փոխարէն, որ չէր վճարուած, ստացանք 97.5 դր.: Կամ ուղղեցէք ինչպէս ինքն է խնդրում, այսինքն իբր թէ տառասխալ է եղել: Այս ուղղումը ի հարկէ Հաշիւներն ուղարկելուց յետոյ կը լինի. ենթակոմիտէ ընտրելուն պէս կ'ուղարկեմ նոր Հաշիւներս:

28.- Արուաշես Միսաքեան՝ Սամաթիոյ 1896ի հերոսամարտի կազմակերպիչներէն եւ Գահատակութիւն:



### Գ 4.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

**Յաջորդաբար կը ներկայացնենք Ն. Համբարյանի երկու տեղեկագիրները Քիւրային, 1906 Յուլիսի 6 և 1907 Հոկտեմբերի 10-ին Երևանի քաղաքի քաղաքապետին իր կողմէ կազմուած այն երրումնագրին, որուն վրայ կ'աւանդուին զինուորական մարզապետ Կարապետի եւ Երկիր մեկնելու պատրաստուող երիտասարդ մարտիկները (փաստ. 1032-28):**

#### Միրելի ընկերներ,

Շտապում եմ կարճ հաշիւ տալ իմ կատարած գործերի մասին Եզրիպտոսում, նաեւ տեղեկութիւններ մեր գործի դրութեան մասին այնտեղ:

Իմ գնացած ժամանակ Ալեքսանդրիա միայն մի խումբ կար «Փոթորիկ» անունով, որ կառավարում էր խմբատեղին եւ դրանով պահպանում Դաշնակցութեան անունը: Թափառիկը՝ բոլորովին քաշուած էր գործերից եւ ոչ մի յարգանք չէր վայելում ոչ ընկերների եւ ոչ հասարակութեան մէջ՝ ծանօթ 40 ոսկու պատճառով: Գահիրէ կար «կոմիտէ» եւ խմբերը նոր վերջացրել էին իրանց ներքին մանր մուկը հաշիւները: Անմիջապէս գրեցի Գահիրէ տեղական ընկերների հետ խորհրդակցելու իմ անելիքի մասին: Այդ խորհրդակցութիւնը արդիւնք չունեցաւ, որովհետեւ հագիւ հնարաւոր եղաւ ժողովներ գումարել, որից տեսայ թէ տեղական ընկերները լայն հայեացք չունին գործի մասին. ամենաշատը կարող էին իրանց գործերը վարել: Այսքանը միայն պէտք է ասեմ թէ կարողացան ինձ տեղեկութիւններ տալ այս կամ այն անձի մասին: Մնում էր անձամբ ծանօթանալ գործերին եւ նրանց ընթացք տալ իմ գիտցած ձևով: Միմոնի՞ր՝ զարը շատ օգնեց գործին. մի ամսուայ չափ մնաց այն կողմերը. եւ միասին կարողացանք բաւական բան անել: Չերկարելու համար այստեղ կը դնեմ համառօտակի իմ արածը Միմոնի եւ տեղական ընկերների աջակցութեամբ:

1) Հինգ ընկերների առաջարկը՝

Այս առաջարկն արդէն ձեռք ծանօթ է իրանց գրութիւնից, որով հինգ ընկերներ մտադրութիւն ունին Սուլապ-Կեսարիա-Ենոզիտի շրջանում գործ ստեղծել: Այս առաջարկը երկար քննութեան նիւթ եղաւ, բաւական վէճերի տեղիք տուաւ եւ թիւրիմացութիւններ առաջ բերաւ: Միմոնը շատ խստապահանջ էր եւ իրաւամբ, ընկերները սառնութիւն համարեցին այդ վերաբերումը: Վերջը գործն անուշի կապեցինք ու համաձայնեցանք հետեւեալ ձևով: Պէտք է գնալուց առաջ պատրաստուել գործունէութեան. պէտք է անցնել կովկաս կամ Բուլգարիա, ծանօթանալ զինուորական եւ զէնքի գործին, մասնակցել կազմակերպական գործերին եւ փորձուել: Միմոնը խոստացաւ 250 ոսկի Լեռնավայրի

*Արեւիկայի Բիւրօ*

*Արեւիկայի Բիւրօ*

*Բարեկամ իմ հարց եւրոպայում իմ կատարած գործերի մասին ինչպէս վարուեցաւ իմ կողմից: Միմոնը շատ օգնեց գործին: Մնում էր անձամբ ծանօթանալ գործերին եւ նրանց ընթացք տալ իմ գիտցած ձևով: Միմոնի՞ր՝ զարը շատ օգնեց գործին. մի ամսուայ չափ մնաց այն կողմերը. եւ միասին կարողացանք բաւական բան անել: Չերկարելու համար այստեղ կը դնեմ համառօտակի իմ արածը Միմոնի եւ տեղական ընկերների աջակցութեամբ:*

*Իմ գնացած ժամանակ Ալեքսանդրիա միայն մի խումբ կար «Փոթորիկ» անունով, որ կառավարում էր խմբատեղին եւ դրանով պահպանում Դաշնակցութեան անունը: Թափառիկը՝ բոլորովին քաշուած էր գործերից եւ ոչ մի յարգանք չէր վայելում ոչ ընկերների եւ ոչ հասարակութեան մէջ՝ ծանօթ 40 ոսկու պատճառով: Գահիրէ կար «կոմիտէ» եւ խմբերը նոր վերջացրել էին իրանց ներքին մանր մուկը հաշիւները: Անմիջապէս գրեցի Գահիրէ տեղական ընկերների հետ խորհրդակցելու իմ անելիքի մասին: Այդ խորհրդակցութիւնը արդիւնք չունեցաւ, որովհետեւ հագիւ հնարաւոր եղաւ ժողովներ գումարել, որից տեսայ թէ տեղական ընկերները լայն հայեացք չունին գործի մասին. ամենաշատը կարող էին իրանց գործերը վարել: Այսքանը միայն պէտք է ասեմ թէ կարողացան ինձ տեղեկութիւններ տալ այս կամ այն անձի մասին: Մնում էր անձամբ ծանօթանալ գործերին եւ նրանց ընթացք տալ իմ գիտցած ձևով: Միմոնի՞ր՝ զարը շատ օգնեց գործին. մի ամսուայ չափ մնաց այն կողմերը. եւ միասին կարողացանք բաւական բան անել: Չերկարելու համար այստեղ կը դնեմ համառօտակի իմ արածը Միմոնի եւ տեղական ընկերների աջակցութեամբ:*

հաշուից (իրանք պահանջում էին առնուազն 500 ոսկի տրամադրել): Այս վայրկեանին արդէն մէկը Երկիր է անցել, միւսը անմիջապէս կը հետեւի նրան, երրորդը անցաւ կովկաս. չորրորդն իւր ընտանիքն ու երեխաներին ուղարկեց Բուլգարիա, որ հնարաւորութիւն ունենայ պատրաստուելու եւ դրամ հաւաքելու. հինգերորդը արդէն պատրաստ է եւ կ'անցնի Օգոստոսին կովկաս: Երկիր մտնելն ու այնտեղ ապրելը իրանց դրամով

29.- Այս առաջարկի մասին եղած նիւթը պիտի տրուի Եզրիպտոսի յատկացուած այս գլուխի յաջորդ՝ Դ. բաժնին մէջ: Այս մասին տեսնել նաեւ «Նիւթեր»-ու Ա. հատոր, էջ 229-236:

է. տեղը եղած կազմակերպական ծախսերը կուսակցութեան հաշուին: Այստեղ կարեւոր եմ համարում նորից շեշտել այն ինչ որ ասացի բերանացի: Մինչդեռ մարդիկ դրամ էին պատրաստել ներս մտնելու համար, անակընկալ պատահարներ այդ մտնելը առաջին անգամ անկարելի դարձրին: Մերսինից վերադարձաւ գնացողներից մէկը եւ գնաց նորից ուրիշ ճամբով մտնելու Երկիր: Այս անյաջողութիւնը նստեց նրանց վրայ 15 ոսկի, որ փոքր գումար չէ հասարակ պաշտօնեաների համար: Այսպիսի դէպքեր կարող են դարձեալ պատահել. ուստի այն 250 ոսկին, որ խոստացել է Միմոնը մեր կազմած ամենամատ հաշուով՝ շատ քիչ է. վերը յիշուած անյաջողութիւնները կարող են սպառել ընկերների ամբողջ խրանայողութիւնը եւ ծրագիրը կարող է վիժել: Ինձ թւում է, որ այդ տեսակ ընկերների, որոնք իրանց ծախքով յանձն են առնում մի ծանր գործ, պէտք է ամէն կերպ քաջալերել եւ այդ քաջալերութիւնը այն կը լինի, որ Ընդհանուր Ժողովում Բիւրոն եւս իւր կողմից ամէն կերպ պաշտպանէ նրանց ծրագրի իրագործման համար 500 ոսկի յատկացնելու առաջարկը: Յուսով եմ, որ այս կէտը ի նկատի կ'ունենաք:

2) Թէ՛ Գահիրէ եւ թէ՛ Ալեքսանդրիա գումարեցի բազմաթիւ ընդհանուր ժողովներ, ուր քննութեան առանք Ընդհանուր Ժողովին ներկայացուելիք մի շարք խնդիրներ եւ կազմեցինք արձանագրութիւններ: Այդ ժողովները շատ մեծ տպաւորութիւն արին խմբերի վրայ, որոնք նման ժողովներ տեսած չէին. դրանով նրանք ծանօթացան Դաշնակցութեան անցելիքին (Միմոնի խօսածներէից) եւ ներկայիս կարեւոր հարցերին: Առաջին անգամ՝ բացի դրամ վճարելը՝ նրանք մասնակցեցին ընդհանուր գործին՝ իրանց խորհուրդով: Մինչեւ այդ խմբի անդամները արհարմարհուած էին եւ ենթակոմիտէն մի տեսակ աղաների ժողով էր. առաջին անգամ ամէնքը «ընկեր» զգացին իրանց: Տեսան որ բացի տեղական մանր ինտրիգներն ու հաշիւները՝ կան ընդհանուր եւ մեծ գործեր, որոնք եւ կարեւոր են աւելի-սրանով նրանց տեսողութեան հորիզոնը լայնացաւ:

3) Ամենածանր գործը Ալեքսանդրիայի անկերպարան վիճակն էր: Սկզբում եւ ժողովներ արի, հանդէսներ սարքեցի, զրոյցներ ու պրոպագանդ կազմակերպեցի — առանց իրանց «բոս-բոսալ»ները քննելու — սրանով թշնամիներին ընտելացրի միմեանց: Բոլորին քննութեան դնելով իրանց վէճերից ու ինտրիգներից բոլորովին դուրս հարցեր՝ մոռացնել տուի մանր վէճեր եւ տեղական միջոցաւոր վատ ազդեցութիւնը չէզոքացրի բաւական. ապա միայն, երբ ամիս անցնելուց յետոյ, քննեցի նրանց մէջ եղած չնչին հաշիւները: — Բաւական սառել էին արդէն, իրար ընտելացել, մեծ խնդիրների առաջ զգացել էին իրանց վարմունքի եւ վէճերի չնչինութիւնը — այդ պատճառով, այն վէճերը, որ վերջանում էին աթոռամարտութեամբ՝ կարգադրուեցին շատ հա-

սարակ կերպով:

4) Դժուար գործ էր հաշիւների քննութիւնը. մի խառնափնթոր բան, որից ոչինչ չէր կարելի հասկանալ. խմբատեղիի 6 ամսուայ հաշիւներ քննելը տեւեց 6 օր շարունակ: Կոմիտէի հաշիւների մասին գրել եմ արդէն թէ որքան անկարգ ու խառն էին: Այս մասին երկարել չեմ ուզում. այսքանը բաւական է որ ասեմ, թէ բոլոր խառը հաշիւները մաքրեցի եւ կանոնաւոր հաշուեմատեան ու ստացագրեր յանձնեցի նոր ենթակոմիտէին:

5) Գահիրէ արել եմ երեք հրապարակական դասախօսութիւն

- 1.- Յեղափոխութեան գաղափարը.
- 2.- Մեր ներկայ վիճակը.
- 3.- Հայ-թաթարական ընդհարումները, նրանց պատճառն ու հետեւանքը:

Այս բանախօսութիւններով, ինչպէս ասում են, կարողացել եմ մի համակրանք ներշնչել դէպի Դաշնակցութիւնն առհասարակ. առաջին հաւանողները եղել են հնչակեանները: Ներկայ են եղել 200-400 մարդ:

6) Մի անգամ այցելել եմ Տանտա<sup>30</sup>՝ այնտեղի 20 ընկերներին տեսնելու. կազմել եմ մի բանախօսութիւն եւ քաջալերել:

7) Ձեռնարկել եմ Բիւրոյից հրահանգով Ռուզուէլ-տի հեռագրի գործին, առանց «սագերին զրգուելու»՝ որ գործը յաջողութիւն ունենայ:

8) Մասնակցել եմ տեղական երեսփոխանական ընտրութիւններին, որպէսզի Դաշնակցութեան ընկած վարկը (40 ոսկու պատճառով) բարձրացնեմ. եւ յաջողել եմ — ցոյց տալով ամենաբարձր անկաշառութիւն եւ օրինակելի տիպիկային (հարկաւ ընկերների հետ միասին):

9) Ընկերների հետ ձեռնարկել եմ մի նոր խմբատեղի գտնելու՝ շատ աւելի լաւ. այդ նպատակով հինգ հոգի պատասխանատու լինելով՝ դիմել են 400 ոսկու փոխառութեան: Նրանց ներքին պայմանագրութեան մէկ օրինակն ուղարկում եմ այս գրութեան հետ: Այս ձեռնարկութիւնից ամէնքս մեծամեծ օգուտներ ենք սպասում:

10) Վերակազմել եմ խմբերը. այժմ Ալեքսանդրիայում հինգ խումբ կայ, մօտաւորապէս 60 անդամով, «Յառաջ», «Փոթորիկ», «Սոցիալիստ», «Ալիք», «Շաքէ», վերջինը աղջիկների խումբ է՝ շատ աշխատասէր եւ արդիւնաւոր:

11) Սերտ յարաբերութիւն եմ պահպանել Կ. Ռաջի հետ. քննել եմ նրանց հաշիւները. միայն կը խնդրեմ եթէ հնարաւոր է, նրանց հաշիւներն եւս տպագրուի «Իրօչակ»-ում: Չգիտեմ ի՞նչ հիմք կայ ընդհանուր հաշուեկրղւում նշանակել «Կ. Ռաջ» եւ «Իրօչակ»-ում տեղ չտալ նրանց վճարների տպագրութեան: Եթէ հաշիւները տպւում են միամտացնելու համար նուիրատուներ

30.- Տանտա կամ Թանթա՝ քաղաք Նեղոսի տեղաւայր վրայ:

րին՝ կին նուկրատունները նոյնքան պահանջկոտ են. այդ խտրութիւնը չեմ հասկացել եւ կը խնդրէի, եթէ հնարաւոր է, տպագրէք նրանց հաշիւներն եւս: Բացի այս լաւ կը լինէր որ մի քաջալերական նամակ գրուէր Բիւրոյի կողմից Կ. Խաչին. նրանք այնքան լայն զարգացում չունեն, որ այդ տեսակ թղթի կարիք չունենան: Գրելով այսպէս չլսեցինք ձեր եռանդուն գործունէութեան մասին, յուսով ենք որ կը շարունակէք եւայլն: Ղրանով թեւ տուած կը լինիք նրանց, որ մեծ ներդրութիւն են կըրում գործելով հայ ընտանեկան ծանր մթնոլորտում: Ուղարկում եմ իմ օրով եղած ելքի եւ մուտքի հաշուեկրչուր: Այսուհետեւ ենթակոմիտէն է պատասխանատու: Բոլոր ղրամներն ու հաշիւները յանձնել եմ նրանց եւ ստորագրել տուել մատենի մէջ: Խնդրեմ առաջիկայ համարում տպագրէք իմ ժամանակ եղած մուտքերը, որ ուղարկում եմ սրա հետ:

Թէ ինչ ազդեցութիւն է ունեցել իմ անձը եւ իմ գործունէութիւնը Եգիպտոսում այդ վկայելն ինձ չի պատկանում. միայն կը խնդրեմ հետեւեալը յանուն գործի յաջողութեան:

Որքան ես ճանաչեցի Եգիպտոսը՝ այնտեղի ընկերները իրար հաւասար մարդիկ են, ուստի չկայ մէկը որ հեղինակութիւն ունենայ. սրանով վէճերն անլուծելի են մնում միշտ եւ տեղի տալիս գործերի քայքայման: Որքան տեսայ տաճկահայերը շատ ձեւասէր են, — թուղթ, գրութիւն, կնիք, ստորագրութիւն եւայլն մեծ տեղ են բռնում նրանց վէճերի ժամանակ. ուստի անհրաժեշտ է մեր կազմակերպական կանոնների լաւ ծանօթութիւն:

Ոչ ոք յեղափոխութեան մասին գաղափար չունի եւ անկեղծ մարդ չատ քիչ կայ մէջները. նրանց հարկաւոր է լուսաւորել, տալ տարրական գիտելիքներ քաղաքական գիտութիւններից: Վերջապէս տեղական գործերի

վրայ ազդելու համար անհրաժեշտ է մի թերթ: Այս բոլորը հնարաւոր է միայն մի դէպքում՝ երբ այնտեղ ուղարկուի մի յատուկ մարդ, լուրջ մարդ, փորձուած մարդ, որ կարողանայ պատկառանք ազդել եւ ընթացք եւ ուղղութիւն տալ տեղական գործերին: Եգիպտոսը շատ կարեւոր կէտ է, թէ՛ գործի, թէ՛ դրամի տեսակէտից, մի լուրջ եւ պատրաստի մարդ այնտեղ պահելը մեծ նշանակութիւն ունի. ուստի նորից եւ վերջին անգամ ի սէր գործի կը խնդրեմ որոնել եւ գտնել յարմար մարդ ու ղրկել Եգիպտոս. օրինակ Չարդարեանի պէս մէկը: Եթէ մարդը շուտ չհասնի, այն ժամանակ ամէն ինչ հին ուղիով կ'երթայ եւ իմ աշխատանքը եւ ջանքը զուր կորած կը լինի: Առանց մի փորձուած մարդու Եգիպտոսի գործերը եթէ գնան էլ, միշտ կաղալով կ'երթան:

Ուղարկում եմ այս տեղեկագրի հետ նաեւ վկայականս՝ ոչնչացնելու:

*Ն. Հաւստի*

Ն. ՀԱՆԳՈՅՑ

1906, 19 Յուլիս

- P.S.- Մշակել եմ ընդհանուր ժողովով
- 1.- «Կանոններ խմբատեղիի համար».
  - 2.- «Կանոններ մարտական խմբերի համար».
  - 3.- «Կանոններ ներքին կազմակերպութեան».
- Պէտք է ուզել ենթակոմիտէից այս կանոնները, որ վէճ եղած դէպքում առաջնորդուէք նրանցով:

Փաստ. 1032-28

Գ 5.- ԵՐԳՈՒՄ

Երգում:

Այնք. Երգի ստորագրող Շ. Յ. Դաշնակցութեան  
 խմբի անդամները իմ քաջալերանքով և քաջալերանքով  
 Աստուծոյ աստուծոյ, մի անհատական ստորագրող  
 եւ մի անհատական ստորագրող պայտուար վրէժի վրայ՝ եւ  
 ստորագրող խմբի մի անդամ, ստորագրող խմբի  
 մի անդամ պատիւ եւ անհատական ստորագրող  
 խմբի: Դաշնակցութեան միջոցով, պայտուար Շ. Յ.  
 Դաշնակցութեան ստորագրող, ստորագրող մի  
 անհատական ստորագրող, ստորագրող մի անհատական  
 մի անհատական ստորագրող: Իսկ եթէ մեզմէն  
 մէկը չհասցուի որ ստորագրող եւ ստորագրող  
 խմբի վրէժի վրայ վրէժի վրայ վրէժի վրայ  
 իսկ եթէ մեզմէն մէկը չհասցուի ստորագրող  
 խմբի վրէժի վրայ վրէժի վրայ վրէժի վրայ:

1906, մայիս 4. Ալեքսանդրիա.

*Ալեքսանդրիա*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*  
*Ստորագրող*

ԵՐԳՈՒՄ

Մենք, ներքոյ ստորագրող Հ. Յ. Դաշնակցութեան մարտական խմբի անդամներս՝ երգում ենք բարձրեալ Աստուծոյ աստուծոյ, մեր նահատակների սուրբ արիւնով եւ մեր անձի-ու հայրենիքի պաշտպան զէնքի վրայ — հաւատարիմ մնալ մեր ուխտին, անձնուկրաբար ծառայել մեր արդար դատին եւ անաղարտ պահել զինուորի կոչումը: Հնազանդիլ մեծաւորին, պաշտպանել Հ. Յ. Դաշնակցութեան սուրբ դրօշը, անձը նուիրել մեր ժողովուրդի բարիքին, չղաւաճանել մեր ընկերներին, մեր հայրենիքին եւ մեր գործին: Իսկ եթէ մեզանից մէկը չկատարէ իր ուխտը եւ դրժէ իր երդումը, թող վրէժխնդիր լինի նրան երկնքում Աստուած, իսկ երկրի վրայ ընկերների եւ հայրենիքի արհամարհանքը լինի նրա բաժինը:

1906, Մարտ 4. Ալեքսանդրիա

Փաստ. 1034-26

### Գ 6.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԻ

Այս տեղեկագիրը կազմել եմ յատուկ նպատակով, որ անցնի այն անձի ձեռքը, որը գալու է այստեղ իբր մնայուն գործիչ՝ յուսով եմ սրանով պարզած լինել ո՛չ միայն գործերի ներկայ վիճակը այլ եւ թելադրութիւններ արած լինել ապագայի համար:

**Ընդհանուր պայմաններ:** Թէեւ քաղաքական տեսակետով ամէն ազատութիւն կայ այստեղ օգտակարապէս գործելու, բայց տնտեսական պայմանները չափազանց արգելք են հանդիսանում: Մեր ընկերները՝ մեծ մասամբ աշխատաւոր, չափազանց շատ են աշխատում եւ ազատ ժամանակ չունեն: Միակ ազատ օրը կիրակին է, տօներ չկան. այն էլ տակաւին կէս օրը զբաղուած են: Այս հանգամանքը դժուարացնում է ընկերներին համախմբելու եւ յաճախակի շփումներ ունենալու գործը: Կազմակերպութեան մուտքը շատ փոքր է, որ կարելի լինի յատուկ տեղ վարձել հաւաքումների համար. աշխատաւորը շատ քիչ է վարձատրուում՝ ունենալով սակաւագէտ, չարքաչ եւ անգիտակից արաբի մրցութիւնը: Շրջապատող կեանքի մէջ գաղափարական հոսանքներ չկան, որ անուղղակի խթան հանդիսանան մեր ընկերներին! Դրամ չահել - ահա միակ նպատակը, որով ապրում են մարդիկ. սրճարանի ծոյլ եւ անիմաստ կեանքը - ահա միակ հանգիստը: Ուստի մեծ ճիգեր են հարկաւոր շահից դուրս խնդիրներով հետաքրքրելու հասարակութիւնը:

Սրան աւելանում է մեղկ կլիման, որ ծուլութեան ու անգործութեան է տանում ամէնքին անխտիր:

Մտաւոր ու բարոյական ճիգ անելը համարեա անհրաժեշտ է դառնում: Մի ուրիշ՝ վնասակար պայմանն է այն կղզիացումը, որ նկատուում է տեղիս հայերի մէջ. իրար մօտ գնալ-գալ չունին. իրար չեն ճանաչում. նիւթապաշտական ոգին աւելի եւս շեշտուում է այստեղ, եւ գաղափարական ամէն ծիլ խարկուում է այս արեւի տակ: Չնայած այս աննպաստ պայմաններին՝ գործ ստեղծելը թէեւ չափազանց դժուար՝ բայց անհնարին չէ: Միայն պէտք է գործել, որոշ ծրագրով, կամաց-կամաց եւ անընդհատ: Այս դէպքում յատուկ մարդու ներկայութիւնը բոլորովին անհրաժեշտ է:

Կարելու է յիշատակել եւ հետեւեալ ընդհանուր պայմանը: Տեղս բաւական շատ կան բարձր կրթութեան տէր հայեր, որոնք սակայն կատարեալ անտարբերութիւն ունին հայ տառապանքի հանդէպ իսկ եթէ կան

հեաքքորուողներ՝ ատում են յեղափոխութիւնը եւ բարեգործութեամբ մտածում են բուժած լինել հայրի վէրքերը: Գուցէ մէկ ուրիշը կարողանայ սրանց շարժել աւստի բարոյական մահից: Բայց ինձ թւում է, որ այդ անհնարին է ներկայ պայմաններում: Ոչ մի գործով չեն հետաքրքրուում, բացի շահը. նոյն իսկ տեղական ազգային գործի մէջ մտնում են (եթէ կան մտնողներ) միմիայն շահելու համար: Ժողովուրդը տգէտ է. եւ հակառակ այդքան գիտուն անձերի, ոչ մի լսարան, կիրակնօրեայ դասեր, դասախօսութիւնները չկազմեցին, որով անուղղակի կարող էին նպաստել մեզ, լուսաւորելով մասսայի գլուխը: Յամենայն դէպս վատ չէր լինի եթէ եկող գործիչը տեղական «մտաւորականներից» փորձէր դասախօսների մի խումբ կազմել, «չգզող» նիւթերի վերայ խօսելու համար: Այս ձեռնարկութիւնը կարող էր վարժեցնել շատերին միտքը շարժել նաեւ այլ կարգի հարցերի համար, բացի ոսկին:

Աննպաստ պայման է նաեւ տեղիս գրականութիւնը: Երեք պարբերական կայ եւ մի ամսագիր(?), որ երբ կարողացաւ, լոյս է տեսնում: «Ազատ բեմ» հնչակեան թերթ է՝ Արզուեանի կողմնակից, որ պահուում է մասնաւոր նպաստով. մեզ հակառակ, զգուելի՛ իբր բարոյական եւ մտաւոր գործ, որ միայն վարկաբեկում է յեղափոխութիւնն ու յեղափոխականներին: «Լուսաբեր» Ա. Արփիարեանի թերթը, հակայեղափոխական, որ միայն ատելութիւն է սերմանում դէպի ազգերն ու յեղափոխականները: «Ազատ խօսք»՝ լոյս է տեսնում անկանոն, ծաղրով է ապրում. աննշան՝ իր ուղղութեամբ: «Շիրակ» ամսագիր (?), հակայեղափոխական, ուր գրում են ջոջեր եւ թիւրք փաշաների պնակալէզները՝ ինչպէս Քէլէկեան: Այսպիսով, այն ամէնը ինչ որ կարողում է տեղիս գաղութը նրան ոչ թէ դէպի յեղափոխութիւնն է առաջնորդում, այլ դէպի ստրկութիւն ու ստրկամտութիւնը: Ամէն շաբաթը երկու անգամ զրգւելով ու զայրանալով յեղափոխական շարժման դէմ - հայութեան մեռած ոգին՝ բոլորովին անմատչելի է դառնում ամէն ազատական քարոզի:

Վերջապէս աննպաստ հանգամանք է նաեւ այն ամիրայական եւ աղայական ոգին, որ տիրում է այստեղ ամէնքի մէջ: Ընդհանուր ձգտում կայ միահեծանութեան. ռամկավարական տարրական զգացումը բացակայ է. արհամարհանք կայ դէպի «փոքրիկները»՝ կօշիկ մաքրողները, բանուորները եւ այլն. եւ նրանց հետ

գործ անելը անպատշաճ է համարում: Այս չարիքի դէմ եւս կռուել կարելի է, բայց կամաց-կամաց եւ յարատեւ ազդեցութեամբ: Շատերը կազմակերպութեան մէջ չեն մտնում թէ՛ «ես երթամ այսինչին հետ ժողով նստիմ, կ'ըլլայ մի'...»: այս ոգին պէտք է արմատախիլ անել:

Եթէ յիշատակեմ այն ընդհանուր տգիտութիւնը, որ նկատուում է այստեղ քաղաքական եւ տնտեսական գիտութիւնների մասին թէ «մտաւորական» եւ թէ ռամիկ չըջաններում - պատկերը կատարեալ կը լինի: Ահա թէ եկող ընկերը ինչ աննպաստ պայմանների մէջ է գործելու:

#### Ընդհանուր պայմաններ մեր ընկերական շրջանում

Եգիպտոսի դաշնակցական ընկերները ոչ մի ծանօթութիւն չունին դաշնակցական ծրագրի հետ. ո՛չ կուսակցութեան աշխարհայեացքը եւ ոչ էլ նրա առաջադրած պահանջներն ու հետեւած շարժելակերպը կարծես բնաւ չեն հետաքրքրած սրանց միտքը: Այս հանգամանքը շատ չփոթութիւնների տեղիք է տալիս եւ միտքը թողնելով խոպան՝ հող է պատրաստում վհատութեան, տատանումի եւ անհետեւողականութեան համար:

Եկող ընկերը մեծ զգուշութեամբ աշխատելու է ծրագիրը պարզել եւ աննկատելի կերպով ընտելացնել սրանց դաշնակցական խորհելակերպին:

Նոյն չափ անտեղեակ են տեղական ընկերները նաեւ կազմակերպական կանոններին. Դաշնակցութեան կազմը, նրա հիմնական սկզբունքները կազմակերպական գործում, նրա մարմինների փոխադարձ կախումն ու իրաւասութեան սահմանները անծանօթ են համարեա բոլորին: Սրանից առաջ են գալիս անվերջ վէճեր ու կռիւներ, իրաւանց եւ պարտուց սահմաններում, որոնք խանգարում են գործերի կանոնաւոր ընթացքը: Յաճախ ենթակումիտէները գործում են աններելի եւ վրդովեցուցիչ սխալներ, որ միայն տգիտութեան եւ չարամտութեան արդիւնք է:

Այս հանգամանքը աւելի վտանգաւոր է դառնում մասնաւոր, որովհետեւ միանում է այն ընդհանուր հակման հետ դէպի անկարգապահութիւնը, որ նկատուում է այստեղ: Եկող ընկերը պէտք է կազմական կանոնները բացատրելու հետ միաժամանակ - ջանք թափէ երկաթէ ձեռքով վարելու ընկերները, որ սովորեն կուսակցական կարգապահութիւն:

Ընդհանուր հակումը դէպի անկարգապահութիւնը նկատուում է նաեւ մասնաւոր յարաբերութիւնների մէջ, որ ծնունդ են տալիս անվերջ կռիւների, որոնք անձնական ծագում ունենալով՝ փոխում են կազմակերպականի եւ վնասում մեր գործին: Ամէն կերպ պէտք է աշխատել տարաձայնութիւններ ձուլի մէջ խեղդել. թէեւ դժուար է շատ, բայց յարատեւ եւ սիստեմատիկ նոյն ուղղութեամբ գործելով՝ կարելի է յաջողիլ:

Շատ աննպաստ պայման է նաեւ դրամական անհաւատարմութիւնը, որ յաճախադէպ երեւոյթ է այստեղ: Սովորական բան է գանձումներն ուշացնելը, ստացած գումարը ծախսելը եւ ուշ յանձնելը. նոյնիսկ իւրացման դէպքեր են եղած: Այս կողմից չափազանց զգոյշ պէտք է լինել: Խիստ կտրուկ եւ անողոք՝ խօսքով ու գործով վարժեցնել ընկերները շիտակութեան դրամական գործի մէջ:

Հին խնդիրներով զբաղուելը, ըսի-ըսաւներուն հետեւելը մի ախտ է, որ արդիւնք է ըստ իս մտաւոր շահերի բացակայութեան: Ընթերցանութիւնը տարածուած չէ. քչերն են լրագիր կարդում. Դրօշակ ամէնքը չեն կարդում, թէեւ ստանալու համար կռիւներ են սարքում. իսկ կազմակերպական հրատարակութիւնները մի քանի մարդ են միայն կարդում եւ գուցէ 2-3 մարդ հասկանում: Մանր վէճերի վերջը, ըստ իս, սրանց ընթերցանութեան եւ լուրջ նիւթերի վարժեցնելու մէջն է, որ պիտի յարատեւ ջանքերով պատուաստել:

Ընկերները ընդհանրապէս անջատ-անջատ են ապրում. հաւաքման վայրի պակասութիւնն է գլխաւոր պատճառը. շատ ցաւեր կը բուժուին խմբատեղի ունենալով՝ որոնց ստեղծելը պէտք է եկող ընկերով առաջին հոգսերից մէկը լինի. չփոխելով իրար հետ, կը կապուին իրար եւ գործ առաջ կը բերեն:

Բաւական տարածուած է ինտրիգներ լարելու գէշ սովորութիւնը. սուտ լուրեր, բամբասանքներ միմեանց մասին՝ թունաւորում են մթնոլորտը. պէտք է լսել բոլորը, առանց կարեւորութիւն տալու եւ աշխատիլ արմատախիլ անել այս վնասակար սխալը:

Այս ընդհանուր պայմանների դէմ ձեռնարկուած են որոշ միջոցներ: Հնարաւոր եղաւ շրջանային խորհուրդ գումարել եւ Եգիպտոսի համար մի ընդհանուր կանոնագիր պատրաստել, որ ուղարկուեց Բիւրոյին՝ տպագրութեան թոյլտուութիւն ստանալու համար: Այս կանոնագրի յարատեւ սիստեմական, ճիշտ, անկողմնակալ եւ անթերի գործադրութիւնը նախ կանոնաւոր գործունէութեան կը վարժեցնէ, երկրորդը՝ կռիւներն ու խռովութիւնները կը կանխէ եւ երրորդը՝ կարգապահութեան ոգին կը շեշտէ:

Մրագիրը պարզելու համար ինքս ժողովներում խօսած եմ եւ պիտի խօսեմ. երկրորդ՝ բոլոր խմբերի մէջ ծրագիրն ու կանոնագիրը զբաղմունքի նիւթ է դառած, երրորդ՝ մեր ծրագրի եւ յարակից այլ խնդիրների պարզաբանութեան համար «Եռաւաջ»ի գրադարանն ու Դաշնակցութեան հրատարակութիւններն սկսել են կարդալ, իսկ ընթերցանութիւնը կանոնաւոր եւ շահեկան անելու համար աւելի գիտակից ընկերներից կազմուած է «ընթերցողներ» խումբ, որոնք որոշ գիրք իրանք լաւ իւրացնելուց յետոյ գնում կարդում եւ մեկնում են միւս խմբերին: Սրանով հիմք է դրուած տեղական ուժերի առաջ բերելուն եւ ընթերցանութեան տա-

րածման գործին:

Մասնաւոր կոիւնները սկզբից եւեթ վերացնելու համար ընկերական դատարանի սկզբունքն է գործադրուում եւ հաշտարար դեր է յանձնուած ենթակոմիտէին, որ յաջողութեամբ է պսակուում. դրամական գեղծումների դէմ յաջողապէս կուռելու համար կանոնագրի մէջ մտցրած են համապատասխան կէտեր, որոնք, յուսով եմ, վերջ կը տան այս ախտին, եթէ աշխուրջ հսկողութեամբ եւ միշտ գործադրուին:

Հարկ է այստեղ շեշտել, որ մեր գործերի վիճակը չափազանց վատ է Գահիրէ եւ բաւարար է Ալեքսանդրիա, այնպէս որ եկող ընկերը իր ջանքը թափելու է Գահիրէ: Այնտեղի ընկերները աւելի անկարգապահ են, աւելի բաժանուած իրարից, աւելի տգէտ, աւելի ծոյլ եւ նուազ ընթերցասէր: Անկարող լինելով կարճ ժամանակի մէջ երկու տեղն էլ լաւ կազմակերպել, ես իմ ջանքը թափեցի Ալեքսանդրիա, մտածելով թէ մի ուժեղ եւ կանոնաւոր մարմին բաւական է որեւէ շրջանում, որ իր գոյութեամբ կանոնաւորէ միւսները:

Գործերի ընդհանուր վիճակը կը բարձրանայ եթէ Դաշնակցութիւնը այստեղ մի կանոնաւոր եւ լրջմիտ թերթ ունենայ: Այս գործին աջակցելու տրամադիր շատ անձեր կան թէ դրամով եւ թէ իրենց աշխատակցութեամբ: Եկող ընկերը, եթէ խմբագրական ընդունակութիւններ ունենայ, անմիջապէս կարող են գործի ձեռնարկել: Միայն պիտի զգուշացնեմ մի բանից. երբեք պէտք չէ գրադուել անձերով. միայն սկզբունքներ ու գաղափարներ տարածել. հակառակ պարագային այն աստիճան զգուշի միջավայր է այստեղ, որ ոչ միայն գործին կը վնասեն ամէն հնարաւոր միջոցներով, այլեւ անձերի պատիւն ու անունը ամենաստոր ստերով կ'արատաւորեն: Յանկալի է, որ եկողը, եթէ պիտի նաեւ թերթ խմբագրէ, տաճկահայ լինի, լեզուական եւ ուրիշ նկատումներով: Ծատ եւ շատ յարմար կը լինէր Լահէ գնացող Ծահնագարը, եթէ դաշնակցական է իր աշխարհայեացքով:

**Հաշուական.** Ոչինչ չեմ կարող գրել: Գահիրէի ենթակոմիտէի գանձապահը գնացել էր օդափոխութեան, հնարաւոր չեղաւ հաշիւ տեսնել: Ալեքսանդրիայի ենթակոմիտէն գիտէք, որ ոչինչ չուզեցաւ յայտնել: Նախկին կոմիտէն՝ Սարհատ եւ ընկ(երթ), այժմ լուծուած, նոյնպէս հաշիւ չտուին: Լեռնավայրի մարմնի հաշիւները Ս. Գաբրիէլեանի մօտ է. նոյնպէս չտուաւ, որ տեսնեմ: Միայն ամսավճարները վատ են գանձուում, ենթակոմիտէները լաւ չեն հսկում դրամական գործերին եւ թերանում են ժամանակին փոխադրել դրամը Բիւրօ: Այս մասին լաւ կը լինէր մի գրութիւն ուղղելէք Գահիրէի ենթակոմիտէին, որի մօտ աւելի քան 40 ոսկի կայ, չգիտեմ ինչու դեռ ձեռ ձեռ ուղարկել:

**Տպարանի խնդրի մասին առանձին գրեցի մի քանի օր առաջ:**

Կցում եմ այս գրութեան Գահիրէի, Ալեքսանդրիայի խմբերի ցանկը:

Կը խնդրեմ այս տեղեկագիրը յանձնէք այստեղ եկող մնայուն գործիչին, որ ծանօթանայ գործերի վիճակին: Իմ կողմից խորհուրդ կը տամ, որ եկողը մի ամիս ոչ մի ձեռնարկ անէ, այլ ծանօթանայ տեղին եւ մարդկանց եւ այնուհետեւ միշտ ընկերների խորհրդակցութեամբ շարժուի: Յատկապէս Ալեքսանդրիայի ընկերները իբր աւելի կարող եւ գիտակից՝ կարող են շատ բանում նրան օգնել եւ շատ սխալներից հեռու պահել:

**Լեռնավայրի գործը:** Որովհետեւ եկող ընկերը Լեռնավայրի գործն եւս վարելու է, ուստի այս մասին հարկ եմ համարում իմ կարծիքը յայտնել: Այստեղ այդ գործը վարում ենք ես, Ծահնագը եւ Մինաս Խաչատրեանը: Անձամբ ես դէմ եմ որ առայժմ ուրիշ ընկերներ աւելանան այս գործին քանի որ հաւատարիմ եւ գաղտնապահ ընկերներ քիչ կան: Միաժամանակ բացարձակօրէն հակառակ եմ անհատական գործավարութեան: Պէտք է անպատճառ որոշ մարմին վարէ այդ գործը, եթէ չենք ուզում Փաշայեանի օրերին հասնել: Կարող է յարաբերութիւնը մէկը պահպանել, բայց մարմնի անունով, դրամի գործադրութիւնը, որոշումները, նամակները խմբական որոշումներով պիտի լինին. սրանով նախ սխալ քիչ կը լինի. երկրորդ մէկի հեռանալով յարաբերութիւնը չի ընդհատուի եւ երրորդ, որ գլխաւորն է, կոնտրոլը անպակաս կը լինի, ինչպէս եւ որոշումները աւելի հասուն: Եթէ եկողը մեն-միմակ պիտի գործ վարէ, ըստ իս, աւելի լաւ է յարաբերութիւնները Բիւրոն ինքը պահէ: Անհատական գործունէութիւնը միշտ վնասել է մեզ եւ կը վնասէ: Այս մասին լուրջ մտածել պէտք է եւ համապատասխան հրահանգներ պիտի տալ եկողին եւ գրել տեղիս ընկերներ՝ Ծահնագին եւ Մինաս Խաչատրեանին:

Եզրիպտոսի մասին իմ վերջնական կարծիքը հետեւեալն է: Առանց յատուկ գործիչի տեղիս գործերը միշտ վատ կ'երթան: Եթէ յատուկ մնայուն ընկեր չէք ուղարկելու, այն ժամանակ պէտք է գրել այստեղի մարմիններին, որ եթէ միւս անգամ եւս տեղական մանր անկարգութիւններով գործը քայքայեն, այն ժամանակ Դաշնակցութիւնը կը յայտարարէ, որ Եզրիպտոս կազմակերպութիւն չկայ: Ուրեմն՝ կամ մնայուն գործիչ ուղարկել, կամ թէ նոր խլրտումների դէպքում լուծել բոլոր կազմակերպութիւնները:

**P.S. Հակառակորդները:** Եկողը պէտք է իմանայ, որ այստեղ գործ է ունենալու երկու տեսակ հակառակորդների հետ. նախ՝ «Ազգ»ի շուրջը հաւաքուած վերա-

կազմեալ հնչակեանները, որոնց հետ են նաեւ տեղիս ուսուցիչները՝ Աղասէր, Առանձար, եւ այլն: Մրանք դիմել էին մեր ընկերներից մի քանիսին Գահիրէ, մի նոր կուսակցութիւն կազմելու համար - բայց անյաջող:

Յետոյ Սարհատ եւ ընկ(երթ), մի քանի ուրիշ դժգոհ դաշնակցականների հետ, որոնք նոյնպէս վերելների հետ են եւ մի նոր միութիւն են կազմելու «Գաղափարակիցների միութիւն» ընդդէմ Դաշնակցութեան: Վերջապէս վերակազմեալ եւ հին հնչակեան անհատները եւ Ար. Արփիարեանի խմբակը, որոնք զօրաւոր չեն: Դաշնակցութեան մէջ եղածները, իբր գինուց դարձած քացախ կարող են վնասակար լինել եւ հակամարտ բանակ կազմել. նրանք միջոցառում լարուած են պահում եւ ընդհարումներ չունենալու համար մեծ զգուշութիւն է

հարկաւոր: Որովհետեւ մարդիկ շատ փուչ են, կարող են շատ անհամութիւններ առաջ բերել: Լրջմտութեամբ միայն կարող ենք չէզոքացնել նրանց վատ դիտաւորութիւնները, որ է վարկաբեկել Դաշնակցութիւնը ամէն տեսակ սուտերով:

Յուսով եմ, որ այս տեղեկագիրը կ'արժանանայ ուշադրութեան թէ Բիւրոյի եւ թէ տեղս եկող ընկերող կողմից:

Ընկերական բարեկեցիկ  
Ն. ՀԱՆԳՈՅՑ

1907 13 Հոկտ.  
Աղեքսանդրիա

**Դ 1.- ԵԳԻՊՏՈՍԻ ՀԻՆԳ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ<sup>31</sup>**

Դաշնակցութեան «Խորհուրդին», Ժընեւում

Աղեքսանդրիա, 1 Հոկտեմբեր 1905

Յարգելի ընկերներ,

Մեր Եզրիպտոսի ընկերներից Պ. Պ. Արչակ Սվաճեան, Մկրտիչ Եփրեմեան, Սեդրակ Պալքեճեան, Ստեփան Ծալայեան եւ Տիգրան Ծաղուպեան փափաքում են իրենց սեփական փողով կազմակերպութեան ծառայել եւ օգտակար դառնալ եւ որոնք իրենց ծրագիրների մասին արդէն հարկաւոր տեղեկութիւնները հաղորդելու են Խորհուրդիդ: Այս ընկերները յեղափոխական կեանքի մէջ փորձուել են, մեծ մասը ունի մտաւոր զարգացում, լաւ պաշտօն եւ դիրք. մի մասը թէեւ զուրկ է մտաւոր զարգացումից, սակայն դրա փոխարէն ունի տոկուն կամք, հաստատուն բնաւորութիւն, քաջութիւն եւ գործի փորձառութիւն, իսկ բոլորն էլ անպայման անձնուէր են գործին եւ բոլորն էլ այստեղ ապրում են իրենց սեփական աշխատանքով եւ կան էլ, որ անձնական որոշ մի հարստութիւն ունին:

Այսպիսի նուէրուած մարդկանց յեղափոխական

գործի գործնական կեանքի մէջ մտնելը միջոցառական մի երեւոյթ է եւ արժէ ամէն կերպով գոհացում տալ նրանց ցանկութեանց եւ միշտ աջակցել իրենց:

Լիայոյս եմ, որ Խորհուրդը անպայման ընդունելու է նրանց առաջարկութիւնը եւ ծրագիրը եւ ամէն դիւրութիւն ընծայելու է նրանց ցանկութիւնների իրականացման:

Ամէն կերպով անպայման վստահելի են եւ կարող էք յոյս դնել նրանց վրայ, որեւէ ձեռնարկի մէջ:

Ընկերական բարեկեցիկ  
ՏՈՒԲՈՐ ՓԱՇԱՅԵԱՆ

31.- Դաշնակցութեան Խորհուրդին ներկայացուած այս ծրագրին ծանօթ ենք արդէն Ն. Հանգոյցի տեղեկագրին (տես Եզրիպտոսի յատակացուած այս գլուխի 3րդ բաժինը): Երկիր անցնիլ ուխտած ճուրղեւաններու ողիսակցին յաւելեալ ժամօթացման համար տեսնել «Նիթեր»ու Ա. հատոր, էջ 197-256, ապա նաեւ Վ. Նաւասարդեանի յօդուածաշարը «Հայրենիք» ամսագրի մէջ (1941- թիւ 5-7) եւ Գ. Լազեանի «Դէպքեր Հայ ազատագրական շարժումին», Հայկա, 1992, էջ 402-415:



Գ 2.- ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ, ԺԸՆԵՒՈՒՄ

Տաճկահայր՝ որ նախ քան 95-98ի արիւնոտ օրերը, անկեղծութեամբ եւ եռանդով փարած էր իւր ազատագրութեան գործին, նկատելով այն սոսկալի համեմատութիւնները, որ կը ստանային թուրք կառավարութեան եւ խուժանին գայրոյթը, նկատելով՝ որ իւր ազատական տենդոտ եւ մի քիչ անխորհուրդ գործունէութիւնը կանխել տուին Սուլթանին ճիւղային ծրագիրները եւ արիւնով ներկեցին իւր երկրին դաշտն ու սարերը, սարսափած՝ մտաբերեց պահ մը ետ դառնալ այդ գարհուրելի շաւիղէն՝ ուր մահը կար դարանած, մէկդի նետել այն փառաւոր դրօշը՝ որ զինքը դէպի ազատութիւն կ'առաջնորդէր կրակի եւ արիւնի մէջէն:

Սակայն նա իւր աչքի առաջ ունէր հազարաւոր այրիացած մանկահասակ հարսեր, անտէր եւ անպաշտպան բազմաթիւ որբեր, խողխողուած եւ գիշատուած անթիւ կտորիճներ, որոնք ամէնքն ալ միահամուռ, միաձայն վրէժ էին գոչում, վրէժ պահանջում: Անտարբեր մնալ այդ աղաղակին անկարելի էր: Նա ուխտեց շարունակել իւր ուղին, նա ուխտեց լուծել իւր սիրելիներին վրէժը եւ հասնիլ, նոյնիսկ կեանքի վտանգով, իւր փայփայած խէպիւն:

Բայց պէտք էր աւելի խոհեմ, աւելի լուրջ կերպով գործել: Յեղափոխութեան, իր մանկական շրջանին մէջ, ներելի էին սխալներ: Բայց այժմ նա իւր հանդէպ ունէր տասը տարուան գործունէութեան երկար շրջան մը: այսուհետեւ մէն մի անխոհեմ քայլ, մէն մի աննպատակ ձեռնարկ, ոչ միայն ներելի չէր, այլ նաեւ պախարակելի, դատապարտելի:

Դաշնակցութիւնը՝ միակ կուսակցութիւնը՝ որով վրայ կարող է յոյս դնել ամբողջ ազգը եւ ուր սեւեռած են հազարաւոր հայածեալներու ըզմալից աչքերը, զգաց թէ, որչափ որ ջարդերու, հալածանքի, թալանի, հրոյ եւ սրի ամբողջական ծրագիրներ կազմուած եւ վաղուց պատրաստուած էին Մեծ Գազանին որջին մէջ, սակայն նրանց գործադրութեան համար հարկաւոր էին առիթներ, հարկաւոր էին նպաստաւոր պարագաներ: Պապ-Ալիի, Պանքալի ցոյցերը, Տրապիզոնի մէջ Շաքիր Փաշայի սպանութեան փորձը, որոնք ոչ մի արդիւնք չտուին, նշանը, միջոցը եղան կոտորածներուն: Յոյցերու յղացումը փառաւոր էր, բայց անոնց գործադրութիւնը շատ թերի, շատ կիսկատար դուրս եկաւ: այնպէս որ ոչ միայն օգտակար չեղան, այլ անհունապէս վնասեցին Ազգին եւ Յեղափոխութեան թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս:

Սակայն Սուլթանի սպանութեան փորձը կատարելագործութիւնն էր նախկին ցոյցերու: նախ գաղափարը

անզուգական էր, անփոփոխորէն յեղափոխական: Հարւածել Հրէշը՝ նոյնիսկ իւր անմատչելի պալատից ներս, շրջապատուած բազմաթիւ զօրքերով, մահ ու սարսափ տարածել այնտեղ՝ ուր ամէնից աւելի ապահով կը կարծէր իւր անձը: Գործադրութեան եղանակը նոյնպէս շատ լաւ սահմանուած, շատ լաւ որոշուած էր: Յոյցը ոչ միայն իւր նպատակին պիտի հասնէր, այլ նոյնիսկ չպիտի յայտնուէր թէ դա՝ հայ ձեռքերէ պատրաստուած, հայ ուղեղի արտայայտութիւնն է: դա յառաջդիմութեան մի շօշափելի ապացոյց էր:

Եւ ահա կրկին հակասական արդիւնք: Ռուսները պայթեց, բայց հրէշը կ'ապրի տակաւին: գործի հայկական ըլլալն իսկ երեւան եկաւ: Այս անգամ եւս յանցանքը, պատասխանատուութիւնը, կը ծանրանայ, ոչ թէ ցոյցը յղացողին եւ անոր գործադրութեան եղանակը գծողին, այլ նորա գործադրողներուն վրայ:

Եւ ահա կրկին երեւան կու գան այն ամբողջ երեւոյթները, որ տեսնուեցան 95ի ջարդերէն առաջ: Պոլսոյ թերթերը, ներշնչուած, կծու յօդուածներով կատաղօրէն յարձակում կը գործեն երկրի անգործութիւնը եւ խաղաղութիւնը վրդովող ազգի մը անհատներուն վրայ: Մոլլաները, խուլ վայրագութեամբ մը, մզկիթներուն մէջ կը զրզուեն միւսիւրմանը, իւր խալիֆային վրայ ձեռք վերցնող անարգ եւ յանդուգն կեաւորներուն դէմ: Եւ ասոնց անմիջական հետեւանք, թուրքերը սկսած են յայտնապէս սրել իրենց թրերը, կեաւորները ջարդելու համար:

Ամէն կողմ ահ ու սարսափ կը տիրէ: ամէն տեղ մահ ու արիւն կը հոտի: ամէն ինչ պատրաստ է: վերին հրաման մը բաւական է հրոյ եւ սրոյ մատնել այդ ամբողջ երկիրը, եւ արեան հեղեղներու մէջ խեղդել յեղափոխական մինչեւ վերջին նշոյլը:

\*  
\*\*

Մենք այս դէպքերը առաջ կը բերենք ոչ թէ քննադատելու համար գանոնք, այլ ցոյց տալու՝ որ ուշի ուշով հետեւած ենք, անոնց մէն մի երեւոյթին, եւ թէ մեր ծրագիրը, մեր ապագայ գործունէութիւնը գծած ենք, օգտուելով անոնց աննպաստ հանգամանքներէն:

Մենք որոշած ենք 1908ի գարնան մտնել Երկիր եւ գործել կեսարիա-Յոզկաթ-Սեբաստիոյ շրջանին մէջ:

Մենք այդ շրջանի հարագատ գաւակներն ըլլալով մօտէն տեղեակ ենք նոյն տեղի ժողովրդեան պահանջներուն, տրամադրութեանց եւ ձգտումներուն: Այդ շրջանի աշխարհագրական դիրքը, հայ եւ տաճիկ տարրին

միմեանց հետ ունեցած յարաբերութեան եղանակը նոյնպէս ծանօթ է մեզ: Մենք հոն ունինք բազմաթիւ վաղեմի բարեկամներ, եւ մեզմէ ոմանք ունեցած են հոն յեղափոխական անցեալ: Գիտենք որ ժողովուրդը՝ եւս առաւել յեղափոխական տարրը, անկարող է նախաձեռն ըլլալ որեւէ գործ արտադրելու եւ անհամբեր կը սպասէ արտասահմանեան յեղափոխականներու աջակցութեանը շարժելու եւ գործելու համար:

Հէնց այս նկատումներով մենք ընտրած ենք այդ շրջանը կեդրոն մեր գործունէութեան եւ անձնավստահութեամբ կարող ենք հաւաստել Ձեզ թէ հնար պիտի ըլլայ սպասուած արդիւնքը ձեռք բերել:

Եւ որպէսզի կարելի ըլլայ վայելել խորհուրդիդ անպայման վստահութիւնը, գրութեանս կցած ենք, Լեւնավայրի Եգիպտոսի ներկայացուցիչին՝ Թափառիկի մի վկայագիրը: Մեզմէ ոմանք Գահիրէի կոմիտէի անդամ ըլլալով՝ բնականաբար շատ հեշտ էր մեզ աւելի լաւ մի վկայական առնել անկից: սակայն նկատելով որ գաղտնիք մը շատ աւելի դիւրաւ կարելի է տարածանքը մարմնոյ մը բազմաթիւ անդամներու կողմանէ՝ քան մի անհատի, որ արդէն պատուոյ խօսք տուած է ծածկել զայն իւր սրտին խորը — նախընտրեցինք այս վերջնոյն դիմել վկայականին համար: Մեզմէ ոմանց մասին կարող էք նաեւ տեղեկութիւններ ստանալ Պրն. Մարէն<sup>12</sup>:

\*  
\*\*

Մեր ծրագիրը պիտի ըլլայ: Պատրաստել, կազմակերպել, զինել ժողովուրդը եւ զայն առաջնորդել դէպի ընդհանուր ապստամբութիւն:

Ի հարկէ մեր շրջանին աշխարհագրական դիրքը չի ներկայացնէր պահանջուած ապահովութիւնը, առանձնական ապստամբութեան մը համար: Սակայն երբ հարեւան մի վիճակ, մի վայր, կը պարզէ ապստամբութեան դրօշը՝ մենք այդ պարագային գլուխ վերցունելով, կը նպաստենք, կ'օժանդակենք եւ կը լրացունենք այդ վայրի ձեռնարկին յաջողութիւնը: Զօրքերէ թափուր մնացած մեր շրջանը կը մատնենք մինչեւ այն ժամանակ պատրաստուած մեր ասպատակային խմբերով, կը թալլենք, կ'աւրչտկենք, հրոյ ճարակ կ'ընենք ամբողջ տաճիկ գիւղերն ու կեդրոնները: (Թուրքի մեծ ոյժը զօրքն է: առանց անոր նա կատու կը դառնայ: ատոր ապացոյցները ունինք նոյնիսկ 95-98ի ջարդերու ժամանակ): Թուրքը՝ ամէն կողմէ սեղմուած եւ չարչարուած, ամէն կողմ ապստամբ հայր իւր գերակշիռ դերին մէջ, կարող պիտի ըլլայ ընդունիլ տալ իւր պահանջները, եւ ձեռք բերել ինչ որ կը ցանկար, ինչ բանի որ կը տենչար:

Թրեւս առարկուի թէ թուղթի վրայ ծրագրի մը գործադրութիւնը շատ դիւրին է: Մենք այդ բանը ընդունելով հանդերձ, նկատի ունինք այն ամէն դժուարութիւնները, ճախողութիւնները, անակնկալները, որ

կարող են առաջ գալ այսպիսի ընդարձակ մի ձեռնարկի մէջ: Մենք գիտենք որ այս ծրագրի ամբողջական իրականացմանը համար մեզի հարկաւոր են առնուազն երկու տարիներու անդուլ եւ յամառ ջանքեր, որոնք պիտի հանդիպին ահագին խոչընդոտներու, չէզոք հայ տարրի անտարբերութեան եւ հակաֵյեղափոխական վրձմակի հալածանքներուն:

Եւ որպէսզի կարելի եղածին չափ վտանգներու առաջըն առնենք եւ գործը չվիժեցնելով հասցունենք ակրնկալուած նպատակին, որոշած ենք միշտ խոյս տալ աչքի գարնող գործունէութենէ, որը կառավարութեան կասկածը մեր վրայ հրաւիրելէ զատ, ուրիշ ոեւէ շօշափելի օգուտ չ'ունենար: Ամէն բացայայտ ձեռնարկներ, որոնց գործադրութիւնը անհրաժեշտ է (ինչպէս են ըսպանութիւն, զինուց փոխադրութիւն եւլն) կատարել միշտ թուրք անուան տակ:

Զինուց փոխադրութիւնը:

Այս երկու տարուան շրջանին մէջ, մենք պէտք է որ զինենք ժողովուրդը հին եւ նոր սիստեմի գէնքերով: Հին սիստեմի գէնքեր կարելի է գտնել երկրին մէջ, իսկ նոր սիստեմի գէնքերու փոխադրութիւնը կը ստանձնենք մենք, պայմանաւ որ Դաշնակցութիւնը հանէ գանոնք կիրիլիոյ եւ կամ Սեւ ծովու նաւահանգիստներէն մէկը:

Ձէնքերու փոխադրութեան համար մենք ընտրած ենք բոլորովին մի նոր եղանակ: Հրոսակախմբերով գէնքի փոխադրութեան միջոցը շատ անգործնական կը գտնենք, այն պատճառաւ որ, նախ շուտով նշմարելի կ'ըլլայ թշնամի տարրերէն եւ հետեւաբար կը դժուարանայ գործը ու կը վտանգուին թէ գէնքերը եւ թէ հրոսակները: Երկրորդ՝ կառավարութեան մատնանիչ կ'ընենք գործունէութեան վայր ընտրած շրջաննիս, եւ կանխել կու տանք ազդու միջոցներ ձեռք առնել շարժումը մարելու, խեղդելու համար:

Մեր ընկերներէն մէկը, որ 18 տարիէ ի վեր հեռացած է հայրենիքէն եւ բոլորովին անձանաչելի դարձած, պիտի մտնէ երկիր իբր մահմետական, կանխաւ հմտաւորով նրա կրօնական մէն մի ձեւակերպութեանց: այդ պատճառաւ նա գրեթէ անկասկածելի կը մնայ: Նա պիտի փոխադրէ գէնքերը, պարապելով ջրոբպանութեամբ: (այս մասին հարկ եղած յարակից պարագաները ուսումնասիրուած եւ պատրաստուած են): Յիրաւի շատ փոքր քանակութեամբ տեղի կ'ունենայ այդ փոխադրութիւնը բաղդատմամբ հրոսակախմբերու, սակայն յարատեւ գործ մը, ապահով ու անվտանգ, շատ աւելի արդիւնաբեր կ'ըլլայ՝ քան ուրիշ նմանօրինակ փոխադրութեան միջոց:

Ումբը եւ իւր կառուցութիւնը:

Ձէնքը անշուշտ կարելուր եւ անհրաժեշտ է ապրա-

տամբուլեան դիմող հայուն, սակայն բաղդատամբ իւր վրայ իշխող ժողովրդեան, նա թուով եւ ռազմիկ յատկութիւններով այնքան ստորադաս է, որ հայուն համար հարկաւոր է մի նոր ոյժ, մի բոլորովին գերազանց միջոց, որպէսզի նա կարող ըլլայ, ոչ միայն հաւասարի իւր տեղւոյն մէջ գտնուող թուրք զօրութեան, այլ նաեւ գերազանցել, գերակշռել զայն:

Այդ ոյժը արդէն Դաշնակցութիւնը ուրիշ տեղեր շատ յաջողութեամբ գործածեց, բայց մինչեւ հիմա գէթ մեր ընտրած շրջանին մէջ նա գոյութիւն չունի: Ռուսերը՝ ճնշուածներու, հալածուածներու եւ մարդադէմ գազաններու կողմէ մոլեգնորէն յօշոտուածներու արդար բողոքի արտայայտութիւնը՝ թշնամի ժողովրդեան արհաւիրքը եւ ճիւղ կառավարութեան զարհուրելի ուրուականը, — ու՛ումբը միայն կարող է սոսկումի մէջ պահել թուրք խուժանը եւ գերակշիռ դիրք մը ստեղծել հայուն համար:

Հետեւաբար, պէտք է որ մեզմէ մէկը նոյնիսկ այժմէն սկսի ուսանիլ ռուսի պատրաստութեան եղանակը, ամէն պարագաներովը, որպէսզի յառաջիկայ գարնան նա կարող ըլլայ մտնել Երկիր եւ հոն հաստատել ռուսի գործարան մը եւ անդու ու անդադրում աշխատութեամբ, երկու տարուան ընթացքին մէջ, պատրաստել, դիզել որքան ռուսը որ կարելի է:

Այսուհանդերձ, մինչեւ վերջին վճռական վայրկեանը ոչ մի գործ, ոչ մի խօսք եւ ակնարկութիւն պէտք չէ տեղի ունենայ որը կարող ըլլայ գուշակել, կասկածիլ տալ: Կամ վտանգել անոնց գոյութիւնը: Ռուսի գործարանի գոյութիւնը երկրի ծոցում շրջապատուած պիտի ըլլայ մութ, անթափանց գաղտնիքով: Նրա տեղը, մթերանոցը եւ յարակից ամբողջ մանրամասնութիւնները պէտք է գիտնայ միայն նոյն քաղաքի Մարմնոյ ներկայացուցիչը, անկէ դուրս, արտաքին ոչ մի յարաբերութիւն ներելի պիտի չըլլայ:

**Քաղաքական տեղեկութիւններ:**

Պատերազմի մը ելքը եւ անոր ճակատագիրը վճռողը շատ անգամ ռազմագէտ զօրապետին ճարտարութենէն աւելի՝ կախում ունին իւր լրտեսներու բերած լուրերէն: Թշնամի բանակի թիւը, նրա զօրութիւնը, դիրքը, իւր հրետանիներու ոյժը որոշ կերպով գիտնալը, մեծ, շատ մեծ դեր կը խաղայ պատերազմի յաջողութեանը համար: Մենք կռիւ հրատարակած ըլլալով թուրք կառավարութեան դէմ, մինչեւ այժմ չէ լսուած որ լրջօրէն քննենք նրա ոյժը, ուղղակի դիմելով պաշտօնական աղբիւրներու: Այդ քննութիւնը կարելի է կատարել նոյնիսկ թուրք պաշտօնատարներու ձեռքով, կաշառելով զանոնք: սակայն այս միջոցը երկու անպատեհութիւններ կը ներկայացնէ. նախ՝ ահագին գումարներ պէտք է տրամադրել այս նպատակին, սակայն Դաշնակցութեան դրամը գէնքի եւ ռազմամթերքի յատկացնելը ա-

ւելի բարւոք նկատելով, մենք չենք համաձայնիւր նմանօրինակ ծախսերու ենթարկել զայն: Իսկ երկրորդ՝ այդ ահագին գումարները ծախսել յանձն առնելով հանդերձ, շատ հաւանական է, որ մենք զոհ դառնանք լարուած թուրք պաշտօնեային խորամանկութեան, երբ նա ուզէ բոլորովին անտեղի եւ սուտ լուրեր հաղորդել մեզ:

Ճիշտ այդ նկատումներէն մղուած՝ մենք որոշած ենք որ մի երկրորդ ընկեր եւս իբր մահմետական մտնէ Երկիր: Նա յարաբերութիւն կ'ունենայ տեղւոյն բարձրաստիճան պաշտօնեաներու եւ գինուորականներու հետ: Կ'ուսումնասիրէ թուրք զօրքի եւ խուժանի զօրութիւնը, անոնց տրամադրութիւնները եւ գաղտնի ծրագիրները: վերահասու կ'ըլլայ հայ տարրի դէմ տրուած որոշումներուն եւ ամէն վտանգներուն՝ որ կարող է սպառնալ հայ ժողովրդեան, ջանալով առաջին առնել անոնց եւ եթէ հնար չի, թշնամույն գէնքը թշնամույն դէմ դարձնել: Պաշտօնական տեղեկագրերու վրայ հիմնւելով որոշել հայ եւ թուրք բնակչութեան թիւը, անոնց աւաններու քանակութիւնը եւ դիրքերը ռազմական տեսակէտից: որպէսզի ըստ այնմ կարելի ըլլայ զօրացունել, գէնքի եւ ռուսի միջոցաւ, հայկական այս կամ այն կեդրոնը, ուր տեղ շատ աւելի շրջապատուած են տաճիկներէ եւ կամ աննպաստ դիրքի մէջ կը գրտնւին:

**Կազմակերպական եղանակ:**

Կազմակերպական գործը պէտք է տեղի ունենայ շատ խիստ եւ գաղտնի կերպով: Մենք որոշած ենք Դաշնակցութեան դրօշին տակ ընդունիլ միայն կուուելու ընդունակ եւ պատրաստ անդամներ: Անոնցմով է որ պիտի գբադի շրջանի կազմակերպական մարմինը: զանոնք վարժեցունել, կրթել եւ մարզել գէնքի գործածութեան մէջ, որպէսզի ընդհ. ապստամբութեան ժամանակ, նրանք կարող ըլլան, թէ իրենց օրինակով եւ թէ փորձառութեամբ, առաջնորդ դառնալ ժողովրդեան, ներշնչել անոր հարկ եղած վստահութիւնն ու եռանդը:

**Նիւթական հարցը:**

Մենք որոշած ենք մեր անձնական դրամով մտնել Երկիր եւ այնտեղ ապրուստի համար, այժմէն պէտք եղած ապահովութիւնը ձեռք բերած ենք: Որով մենք մեր անձնականի համար որեւէ դիմում չենք ընել Դաշնակցութեան սնտուկին: Բայց նկատելով որ գործունէութիւնը ինքնին առաջ պիտի բերէ կարգ մը ծախսեր, բացի գէնքերու եւ ռազմամթերքի փոխարժէքէն, կը ցանկայինք որ խորհուրդդ այս մասին որոշէր մի պիւտճէ մասնաւորաբար մեր շրջանին համար: Աչքի առջեւ ունենալով տաճկահայի նիւթական անձուկ վիճակը, մեզի շատ դժուար պիտի ըլլայ տեղական հասոյթներով հայթայթել որոշ գումար կազմակերպական ծախսերու համար: բաց առեալ արտակարգ պարագաներէ (առեւան-

գում հարուստներու, սուրհանդակի կողոպտում եւայլն), որոնց գործադրութեան որոշումը եւ անոնց յաջողութեան պայմանները կարելի չըլլալով մեզ այժմէն ճշդել, պիտի ուսումնասիրենք զանոնք տեղւոյն վրայ:

Ինչպէս վերը շեշտած ենք մեր շրջանի ռազմագիտական դիրքերը, ընդհ. ապստամբութեան պարագային երկար դիմադրելու բաւականաչափ ապահովութիւն ներշնչել չկարենալով, մենք հարկադրուած ենք զուգահեռաբար ընթանալ Լեռնավայրի գործունէութեան հետ: Ինչպէս նաեւ այս վերջինը, իւր գործունէութեան

իրը լրացուցիչ մարմին նկատելով մեզ, պէտք է որ նա եւս լծորդէ իւր գործունէութիւնը մեր շրջանի հետ եւ երկու կողմէն բացարձակ պատրաստ եղած պարագային, պարզել միահամուռ՝ ապստամբութեան դրօշը: Եւ այսպէսով միանուազ՝ կիլիկիան եւ մեր շրջանը, ուժեղ դիմադրութեամբ մը կարող կ'ըլլան տալ վճռական հարուած մը թշնամույն եւ ձեռք բերել շատ շօշափելի արդիւնք:

Գահիրէ 20 Հոկտ. 1905

*(Մաքսիմ Գաւ. Կոմիտէ)* *Մարտի Գ. Եւզոբով*  
*Լ. Կոմիտէ*  
*Մարտի Եւզոբով* *Մարտի Գաւ.*  
*(Գաւ.) Ռի Կոմիտէ*  
*Մարտի Եւզոբով*  
*(Կոմիտէ)*  
*(Մարտի Կոմիտէ)*  
*Մարտի Եւզոբով*  
*(Կոմիտէ)*  
*Մարտի Եւզոբով*  
*(Կոմիտէ)*

*Մարտի Եւզոբով*  
*M. Eprémian,*  
*Boîte postale 277*  
*Le Caire (Egypte)*

**Ընկերական յարգալիր բարեններով**

- ՍԵՆՐԱԿ Գ. ՊԱԼԸԳՃԵԱՆ (ՎԱՀՐԻՃ)  
(Անդամ Գահիրէի կոմիտէին)
- ՏԻԳՐԱՆ ԵԱՂՈՒՊԵԱՆ (ԹՈՎՀԱՆՆԷՄ)  
(Անդամ Աղեքս[անդրիոյ] ենթակոմիտէին)
- ՄԿՐՏԻՉ ԵՓՐԵՄԵԱՆ (ՅՈՒԱԿ)  
(Անդամ Գահիրէի կոմիտէին)
- ԱՐՇԱԿ ՍՎԱՃԵԱՆ (ԿԱՅՄԱԿ)  
(Խմբապետ Բաֆֆի խմբի)
- ՍՏԵՓԱՆ Ա. ԵՍԱՅԵԱՆ (ՀՐԱՅՐ)  
(Խմբապետ Արծրունի խմբի)

Կը ներկայացնենք սոյն ծրագիրը Դաշնակցութեան խորհուրդիդ եւ կ'ուզենք գիտնալ այս մասին նրա կարծիքն ու տրամադրութիւնները, եւ միանգամայն այն ամէն աջակցութիւնները որ կրնանք յուսալ Հ. Յ. Դաշնակցութենէն:  
 (Գաղտնապահական նկատումներով մենք բնաւ չենք համաձայնի որ սոյն ծրագիրը, յառաջիկայ Շնոյ. ժողովոյ ներկայացուելով նիւթ դառնայ նրա խորհրդակցութեանց եւ ոչ ալ դուրս գայ խորհուրդիդ անդամներու շրջանէն):

Փաստ. 73-1

Գ 3.- ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆՅՈՒՄ

907, Հոկտ. 19  
Վառնա

Արեւմտ. Բիւրոյի ընկերներուն

Ինչպէս խօսած եմ ձեզի ժամանակին եւ ինչպէս որ վերջին անգամ եւս Ընդհ. Ժողովին ներկայացուցի՝ Եզիպտոս գտնուող մեր մէկ քանի վստահելի ընկերներ ծրագիր մը առաջարկած էին Սեբաստիոյ եւ Եոզղատիանի շրջանին համար. այդ ծրագիրը արդէն ընդունւեցաւ Ընդհ. Ժողովին եւ քուէարկուեցաւ անոր իրագործման համար այլ յատուկ պիւտճէ: Արդ, քանի մը օր առաջ նամակ մը ստացայ նոյն ընկերներէն որոնք անհամբեր կը սպասեն իրենց տալիք ձեռնարկին, որպէսզի փութով անցնին Երկիր. արդէն այդ ընկերներէց մէկը վաղուց հասած է իւր վայրը եւ կը սպասէ դուրսի ընկերներուն:

Հետեւաբար, պիտի խնդրէի որ կարելի եղածին չափ փութով տալիք հարկ եղած հրահանգները նոյն ընկերներուն՝ որոնց հասցէն ձեզի ծանօթ ըլլալու է: Ի գուր կը սպասեն եւ աւելորդ տեղը ժամավաճառ կ'ըլլան: Ահա իրենց առաջարկը՝ որ ամփոփած են հետեւեալ կերպով.

1.- Մենք պատրաստ ենք մեր գործը շարունակելու, եւ, ամէն գնով մեր գաղափարը իրագործելու սրբազան ուխտ ունինք: Միայն, մեզի դոյզն օգնութիւն մը պէտք է:

2.- Կ'իմանանք թէ Ընդհ. Ժողովը 250 ոսկի որոշեր է մեզի համար — ըստ Պ. Հանգոյցի տուած տեղեկութեան — այս դրամը կամ գոնէ կէսը անմիջապէս յայնձնել մեր տրամադրութեան, որպէսզի Արշակը ու իր ընկերը մեկնին: Յետոյ Ս. Ե. — Երկիր մտած ընկերը<sup>32</sup> — իր չորս նամակներով կը խնդրէ որ իր պարտականութիւնը լիուրի կատարելու համար 20 ոսկիի պէտք ունի: Այս 20 ոսկին անհրաժեշտ է զրկել, գոնէ սկսած գործը անսայթաք առաջ տանելու համար:

Ես կը յուսայի որ մինչեւ հիմա արդէն բանակցութեան մտած կ'ըլլաք նոյն ընկերներուն հետ եւ ընթացք տուած՝ այս հարցին: Մանաւանդ ներկայ ըրալէին՝ ուր Եզիպտոսը բաւական խառնակ դրութիւն մը կը ներկայացնէ, աւելի քան հարկեցուցիչ է մեր այս խոստմնալից ուժերը անորոշ վիճակի մը չմատնել:

Փիլիպէի մէջ բաւական կազդուրուած ըլլալով՝ ուզեցի անցնիմ Վառնա, գտնելու համար վերջնական առողջութիւնս: Սակայն, ցաւալին այն եղաւ որ հիւանդութիւնս յետադարձ շարժում մը ունեցաւ եւ նորէն գամեց զիս անկողնին: Հաղորդելով ձեզի ընկերական բարեւեներս՝

ԱՆԴՐԱՆԻԿ

Իմ հասցէս՝  
Հայրապետ Սարգիսեան  
յանձնելի Պարոյրի<sup>33</sup>  
Վառնա — Պուլկարիա

Եզիպտոսի ծանօթ ընկերներու հասցէն՝  
Messieurs K. & G. Melkonian Le Caire  
յանձնելի՝ Պ. Ս. Պալլոզեանի (Egypte)  
Le Caire (Egypte)

31.- Նամակը գրուած է մեծ հայրուկապետին թելադրութեամբ Պուլկարիայէն, ուր Ընդհ. Ժողովէն ետք կը մնար անբժշկական խնամքի համար: Ստորագրութիւնը սակայն ԱՆԴՐԱՆԻԿ, իր գրչին կը պատկանի:  
32.- Երկիր իր ծննդավայրը՝ Կերմիր մտած ընկերը Ստեփան Եսայեանն է: Արշակը «իինգ»-ի անդամներէն Սվաճեանը:  
33.- Պարոյր կամ (ա) Պարոյր Անդրանիկի ծածկանունն է:

XXIV

ՅԱՒԵԼՈՒԱԾ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ

Այս հատորի Յառաջաբանով բացատրած ենք արդէն այն պարագաները, որոնք պատճառ դարձան յաւելածական այս գլուխին, որ սահմանուած է «Նիւթեր»-ու նախորդ չորրորդ գրքին մէջ բաց բաժին մը լրացնելու: Այդ մէկը կարելի եղաւ շնորհիւ Հ.Յ.Գ. արխիւներուն մէջ կատարուած մանրակրկիտ պրպտումներու, որոնց միջոցաւ երեսն բերուեցան Ընդհ. Ժողովի թղթածրարէն պակտող համապատասխան վաւերագրերը: Նկատի ունենալով որ անոնք, թէ՛ կազմակերպական եւ թէ՛ համազգային իմաստով, կ'առնչուին յոյժ կարեւոր շրջաններու, ինչպիսիք են երբեմնի հայաշատ կամ էապէս հայապատկան՝ Վասպուրականը, Ղարաբաղը, Գանձակն ու Թիֆլիսը — հասկնալի կը դառնայ, թէ ինչո՞ւ անհրաժեշտ համարեցինք այս հատորին մէջ տեղ տալ անոնց վերաբերող եւ պատմական արժէք ներկայացնող փաստաթուղթերուն:

Հաշուի առնելով նոյնպէս, որ յիշուած կազմակերպական շրջաններու մասին հարկ եղած ծանօթութիւնները «Նիւթեր»-ու նախորդ հատորով տրուած են արդէն, կը բաւականանանք նշելով որ՝

ա — Մեծ Քաղաք - Թիֆլիսի Կեդր. Կոմիտէութիւնը կը տարածուէր այժմու Վրաստանի հանրապետութեան սահմաններուն վրայ, բացի ծովեզերեայ մասէն, որ կը պատկանէր Նաւահանգիստ-Պարսի Կ. Կոմիտէութեան: Թմրուկ-Ախալքալաքի շրջանը, որ նախապէս մաս կը կազմէր Քար-Ալեքսանդրապոլի Կ. Կոմիտէութեան, 1905ին միացած էր Թիֆլիսի: Այս վերջինը կեդրոնատեղին էր նաեւ Հ.Յ.Գ. Արեւելեան Բիւրոյին:

Ընդհ. Ժողովի շրջանի պատգամաւորն էր Եղիշէ Թոփչեան:

բ — Վասպուրականը բաժնուած էր երկու Կեդր. Կոմիտէութեանց, — Ծամի (Վան) եւ Լեռնապարի: Վերջինս կ'ընդգրկէր Վանի նահանգին հարաւային շերտը՝ Ռշտունիքի, Մոկաց աշխարհի եւ Շատախի լեռնային զաւառները:

Ընդհ. Ժողովին շրջանը կը ներկայացնէին Արամ Մանուկեան (Վան) եւ Իշխան (Նիկոլ Օտապաշեան):

գ — Ապառած-Շուշիի Կեդր. Կոմիտէութեան ենթակայ էին Լեռնային Ղարաբաղը՝ ազատագրուած երկրամասերով եւ Միւնիքը՝ Չանգեզուրի երեք կոմիտէութիւններով:

Ապառածի պատգամաւորը Ընդհ. Ժողովին Բարսեղեանն է (ապագայ Վանայ Սարգիսը):

դ — Այգեատան-Գանձակի Կեդր. Կոմիտէութեան իրաւասութեան տակ կը գտնուէին Գանձակ նահանգը իր հայաշատ զաւառական շրջաններով (Գետաշէն, Գետաբէկ, Բանանց եւայլն):

ե — Հինգերորդ բաժնով տեղ տրուած է «Արձանագրութիւն չորրորդ Շրջանային Ժողովների» խորագիրը կրող ատենագրութեան այն հատուածներուն, որոնք կը պակսին «Նիւթեր»-ու Բ. հատորին մէջ լոյս տեսածէն:

Վերջապէս, բոլոր փաստաթուղթերուն մասին հարկ նկատուած բացատրութիւնները տրուած են ներածական գրութիւններով կամ էջատակի ծանօթագրութիւններով:

Ե. Փ.

Ա.

ՄԵԾ-ՔԱՂԱՔ – ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ

Փաստ. 251-30

Ա 1.- ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ. Յ. Դ. ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

1904 – 1906 ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ

Գործող Ընդ. Ժողովի տեղեկագրերից մեջ 31րդ հիստը (13 Մարտ) կը սկսի եկտեմբայ խօսքերով... «Նախագահ խօսքը տալիս է Թիֆլիսի պատգամաւորին, որ կարդում է իւր շքանի տեղեկագիրը: Ընթերցումը տեսւմ է 1.5 օրով («Նիւսթը», Գ. հատոր, էջ 77): Ապա կը սկսի տեղեկագրի քննարկումը, որ կ'աւարտի յաջորդ նիստին: Տեղեկագիրը ընթերցողը ու հարցերուն պատասխանողը Եղիշէ Թոփչեանն է:

Ընդ. Ժողովի թղթածրարին պակասող այդ տեղեկագիրը, բարերայտաբար, կարելի էղաւ գտնել արխիւներուն մէջ (Փաստ. 251-30): Գրութիւնը մանրատաւ է եւ կը գրաւէ մեծապէս 40 էջ. ստորագրուած չէ, բայց ձեռագիրը կը պատկանի Ե. Թոփչեանին: Կողքի շապիկին վերեւ Ահմադի ձեռագրով կը կարդանք «Նախագահութեամբ Հ.Յ.Դ. Ընդհանուր Ժողովի, Մարտ 13 Ա[ռաւույտ] 1907»:

1 — ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ

Հ. Յ. Դ. 1904 թ. սկիզբներին բաւական աննախանձելի պատկեր էր ներկայացնում իր հետեւորդների քանակով ու նրանց կուսակցական գիտակցութեան որակով: Կարևորական խնդրի շուրջը բռնկուած ժողովրդական այնքան շարժումը եւ դաշնակցականների խաղաղած խոչոր ու ազդեցիկ դերը այդ հարցում թողել էին իրենց դրոշմը հայկական լայն խաւերի վրայ: Ստեղծուել էր մի նպաստաւոր մթնոլորտ յեղափոխական պրոպագանդի ու կազմակերպման համար: Եւ ահա այդ հանգամանքների շնորհիւ աջողուած է կամաց-կամաց յետ վանել անտարբերութեան մրուրը, նորանոր շարքեր քաշել Դաշնակցութեան դրօշակի տակ:

Մի երկու ընկերների ջանքերով կազմակերպուած են խմբեր, որոնց թիւը հետզհետէ աճում է եւ մինչեւ ամառը 1904թ. հասնում մօտ 30-ի միայն Թիֆլիսում:

Տեղի է ունենում կենտրոնական կոմիտէի ընտրութիւն, որ նոր զարկ է տալիս գործին: Նորընտիր մարմինը չի բաւականանում միայն Թիֆլիսով եւ իր ուշքը դարձնում է նաեւ գաւառների վրայ, հնար եղած չափով կազմակերպելով նրանց ու փոխադարձ կապ հաստատելով:

Այդպիսով գաւառներում էլ առաջ են գալիս խմբեր, ենթակոմիտէներ ու կոմիտէներ: Թիֆլիսում եղածներն էլ ամրապնդւում են եւ կանոնաւորում: Այդ շրջանում Դաշնակցութեան բոլոր խմբերն ու մարմինները հիմնւում են ընդհանուր «կազմակերպչական կանոնների» համեմատ: Սակայն Ռուսաստանի յեղափոխութիւնը եւ շրջապատող տնտեսական - սոցիալական պայմանները գալիս են ուժգին թափով պահանջ դնելու կազմակերպչական նոր ձևերի: Դա արհեստակցական շարժումն էր որ մի տարերային հոսանքով անցնում էր

Ռուսաստանի մէջ ծայրից մինչեւ միւսը եւ իր յորձանքները հասցնում նաեւ կովկաս, բոլոր ազգերի, ինչպէս նաեւ հայ աշխատաւորների խաւերը եւն:

Արհեստակցական միութիւններ կազմակերպելը դառնում է հրամայողական անհրաժեշտութիւն, որին արձագանգ են տալիս եւ Թիֆլիսի դաշնակցական մարմինները:

Հ.Յ.Դ. հիմնական ծրագրի ոգու, կովկասեան ռայոնական ժողովի մշակած ու (Դաշնակցութեան) Խորհրդի հրատարակած «Նախագծի» համեմատ ուրուագրուած են յատուկ հրահանգներ արհեստ[ակցական] միութիւններ կազմակերպելու վերաբերմամբ եւ կենդանի գործը առաջ է գնում աճելով ու լայնանալով: Միութիւնների հիմքը դրւում է Թիֆլիսում, որտեղից շարժումը անցնում է եւ գաւառները: Դրա շնորհիւ հետզհետէ աճում է դաշնակցական ընկերների ու համակրողների թիւը: Իբրեւ ապացոյց բաւական է վերցրնել թուրքի մի քանի համեմատութիւն Թիֆլիսի շրջանից:

1905 թուականի վերջերին, երբ նոր էր սկսւում արհեստակց. միութիւնների կազմակերպումը, Թիֆլիսում կազմակերպուած դաշնակցականների թիւը հասնում էր 2000-ի, որ ամենաբարձր թիւն է այդ շրջանի վերաբերմամբ ամբողջ անցեալում: Իսկ արհեստակցական միութիւնների շնորհիւ այդ թիւը հասնում է արդէն 8000-ի եւ այդքան յաւելում միայն 1.5 տարուայ ընթացքում: Առանձին արհեստների վերաբերմամբ նկատելի է օրինակ այսպիսի բնորոշ պատկեր՝ 1905 թ. դաշնակց. խմբերի մէջ եղել են միայն 100-ի չափ գործակատարներ, իսկ 1906 թ. 800-է, դերձակներ 1905 թ. — 30-40, իսկ 1906 թ. մօտ 300. կօշկակարներ մօտ 50-60, իսկ 1906 թ. մօտ 400. դրոգապաններ՝ 1905 թ. 70-75, իսկ 1906 թ. մօտ 1300 եւ այլն: Բացի դրանից կան մի շարք արհեստներ, որոնց աշխատաւորներից եւ ոչ մէկը չէ եղել դաշ-

նակցական, իսկ այժմ մեծ մասը կազմակերպուած են Դաշնակցութեան դրօշակի տակ — օրինակ՝ խզարչիներ<sup>2</sup>, լուսանկարիչներ, կին — կար անողներ, չոթիկ<sup>3</sup> չիւնողներ, պողպատագործներ, հինած<sup>4</sup> գործողներ, լրագրավաճառներ եւ այլն եւ այլն:

Ներկայումս դաշնակցական խմբերն մեր շրջանում հետեւեալ տեսակներին են բաժանւում.

- ա) արհեստակցական միութիւններ
- բ) գործարանային բանուորների խմբեր
- գ) խառը խմբեր
- դ) զինուորական խմբեր:

Արհեստակցական միութիւնները կազմակերպուած են այն սկզբունքներով, որ ուրուագրուած են կովկասի դաշնակցական օրգանում եւ յատկապէս այդ նպատակով հրատարակուած մի գրքով: Իրանց քանակը Թիֆլիսում հասնում է 25-ի, որոնցից իւրաքանչիւրի անդամների թիւը տարածուած է 15-ից մինչեւ 1300:

Արհեստակցական միութիւններ կան նաեւ Ախալքալաքում, Գորիում եւ Սղնաղում:

Միութիւնները մեր շրջանի ամենականոնաւոր մարմիններն են, որ ունենում են պարբերական ժողովներ, հաւաքում են անդամավճարներ, կազմակերպում են գործադուլներ ու տնտեսական այլ բողոքներ ու պահանջներ, մասնակցում են քաղաքական բոլոր ցոյցերին կուսակցութեան ղեկավարութեամբ, պահպանում են կապ եւ իրանց եկամուտների կէս մասը գործադրում են սեփական տնտեսական կարիքների համար, իսկ միւս կէսը տալիս են կուսակցութեան քաղաքական նպատակների համար:

Գործարանային բանուորները կազմակերպուած են նոյնպէս վերոյիշեալ հիմունքներով — իւրաքանչիւր գործարան առանձին:

Թէ արհեստակցական միութիւններից եւ թէ գործարանային շրջաններից իւրաքանչիւրը ունի իր առանձին վարչութիւնը, որ ղեկավարում է ընթացիկ գործերը եւ անմիջական կապ պահպանում կուսակցութեան հետ:

Բացի դրանից այդ վարչութիւններն ունին մի-մի կամ երկու-երկու ներկայացուցիչներ, որոնք կազմում են արհեստակցական միութիւնների խորհուրդ: Այդ խորհուրդը հանդիսանում է մի շաղկապող օղակ բոլոր միութիւնների միջեւ:

Խառը խմբեր: Դրանք դաշնակցական սովորական խմբերի մնացորդներն են: Խմբի մէջ ընդունւում են բոլոր դաշնակցական համարուածները առանց զբաղմունքի խտրութեան: Խմբերը ստորաբաժանւում են տասնեակների, հարիւրեակների, որոնցից իւրաքանչիւրն ունի համապատասխան ներկայացուցիչ: Այդ ներկայացուցիչներն եւս պարբերական ժողովներ են

ունենում, որ կոչւում է «խառը խմբերի ներկայացուցիչների խորհուրդ»:

Խառը խմբերի թիւը ամենածաղկած ժամանակը հասնում էր 20-25-ի: Բայց արհեստակցական շարժումը դրանց շարքերում բնական նուազում մտցրեց, արհեստակից աշխատաւորներին մի միութեան մէջ համախմբելով եւ հարիւրեակների մի մասը քայքայման ենթարկելով:

1906 թ. վերջերին խմբերի թիւը հասնում էր 70-80-ի՝ մօտ 8-10 հարիւրեակի մէջ ցրուած:

Ձիւնուորական խմբեր: Այդ բառի իսկական իմաստով շրջանում առաջ են եկել գլխաւորապէս հայ-թուրքական ընդհարումների ընթացքում: Մինչեւ այդ ժամանակ թէեւ կային դաշնակցական շարքերում կուսուող ոյժեր՝ զինուորներ, բայց նրանք խառնուած էին միւսների հետ միեւնոյն խմբերում:

Յեղափոխական շրջանը եւ յատկապէս հայ-թուրքական արիւնոտ փոթորիկը անհրաժեշտութիւն ստեղծեցին առանձին զինուորական հարիւրեակներ կազմակերպել իրանց հարիւրապետներով ու տասնապետներով: Սկզբում այդ հարիւրեակների թիւը 9-էր, յետոյ աւելացաւ: Իսկ երբ անցաւ յեղափոխութեան արիւնոտ շրջանը, երբ կամաց-կամաց դադարեցին հայ-թուրքական ընդհարումները, զինուորական խմբերի գոյութիւնն էլ աւելորդ դարձաւ, ուստի միջոցներ ձեռք առնելից նրանց կրճատման համար: Այնպէս որ վերջերս հազիւ 2-3 խումբ են մնացել դրանցից, այն եւս ոչ լրիւ անդամաթուով:

Ձիւնուորական խմբերի նուազումը նշան չէ, ի հարկէ, որ զինուորները հեռացել են Դաշնակցութիւնից: Ընդհակառակը իրանց մի մասը մտել են խառը խմբերի մէջ, մի մասն էլ գործի լինելով, միացել են համապատասխան արհեստակցական միութիւններին: Ընդհանուր առմամբ կենտ. կոմիտէն ջանքեր է գործ դնում, որպէսզի իր շրջանից բոլորովին վերանայ միլիտարիզմի - թէպէտ եւ յեղափոխական բայց ժողովրդի համար ծանր այդ բեռը եւ ինքնապաշտպանութիւնը բառի բոլոր իմաստով համայնական ձեւ ստանայ, միլիցիայի վերածուի: Սակայն նրա ջանքերն այդ ուղղութեամբ վերածուի: Սակայն նրա ջանքերն այդ ուղղութեամբ դեռ լրիւ արդիւնքի չեն հասել շնորհիւ մի շարք խոչընդոտների, որոնց մասին իր տեղէն բացատրութիւն կը տրուի:

Ահա այդ է դաշնակցական խմբերի պատկերը Թիֆլիսում եւ մասամբ շրջանի միւս քաղաքներում:

Գալով գիւղերին, պէտք է ասել, որ այնտեղ խմբերը միատեսակ են, իսկ հայ թուրքական ընդհարումների

1.- Սայլապաններ:  
 2.- Սողոմ գերան կտրող:  
 3.- Խոզանակ, համրիչ:  
 4.- Կտակ կամ կարպետի հէնքի թել:



ժամանակաշրջանում ստեղծուել էր մի այնպիսի մթնոլորտ, որ ամբողջ գիւղեր իրանց յայտարարում էին դաշնակցական՝ առանց դասակարգի ու համոզմունքների խտրութեան:

Սակայն այդ շրջանը արդէն անցել է եւ գիւղերում էլ առաջ է գալիս գտում տնտեսական-դասակարգային հիմունքներով: Դաշնակցութեան դրօշակի տակ մտում է խեղճ աշխատաւոր գիւղացիութիւնը, իսկ ունեւոր մասը, յետադիմական խաւերը կամաց-կամաց հեռանում են եւ մերթ ընդ մերթ բողոքի ձայներ հնչեցնում:

Իւրաքանչիւր գիւղ ունի իր ենթակոմիտէն, իսկ ամբողջ գաւառներն ու գիւղերի որոշ համախմբումը աշխարհագրական յարմարութեան համեմատ՝ տեղական կոմիտէներ:

Այսպիսով մեր շրջանում 1904-1906 թ. 1) Թիֆլիսում 2) Ախալքալաքում, 3) Ախալցխայում, 4) Լոռիում, 5) Դուռնուկում 6) Դուլէթում 7) Շուլաւերում, 8) Ղազախում 9) Շամշադնում 10) Բարանայում 11) Գորիում եւ 12) Կարեւեթիայում:

Դրանցից ներկայումս կազմալուծուած են երեքը, այն է՝

1) Ախալցխայինը — այն պատճառով, որ մարմինը իր կոչման բարձրութեան վրայ կանգնած չէ եղել: նրա անդամներից մի քանիսը շահագործել են կուսակցութեան անունը, բռնութիւններ են կատարել եւ մի շարք խռովութիւններ են առաջացրել: Թէ կենտրոնական կոմիտէն թէ Բիւրոն միջոցներ ձեռք առած, քննութիւն կատարեցին, որպէսզի չարիքը վերացուի, բայց ապարդիւն: Ստեղծուած էր մի այնպիսի մթնոլորտ, դաշնակցական խմբերը այնպիսի դեմորալիզացիայի<sup>6</sup> էին ենթարկուած եւ երկու հակամարտ հոսանքների բաժանուած, որ անհնարին էր նոր ընտրութիւններ կատարել: Այդ բոլոր պատճառներով կենտրոնական կոմիտէի առաջարկով շրջանային ժողովը կազմալուծուած համարեց Ախալցխայի կոմիտէն, որպիսի վճիռը հաստատեց նաեւ կոմկուսեան Ռայոնական ժողովը: Ներկայումս Ախալցխայում չկայ դաշնակցական պաշտօնական ոչ մի մարմին, այլ կան անհատ դաշնակցականներ: Ժողովրդի յուզուած կրքերն ու թշնամանքը բաւականաչափ մեղմացան: Յետոյ հնարաւոր է դիւրութեամբ նորից մարմիններ ստեղծել:

2) Շուլաւերի կոմիտէն քայքայուել է ինքնաբերաբար՝ շնորհիւ տեղացիների ներքին հակահոսանքների: Սակայն դաշնակցական խմբերը գոյութիւն ունին եւ կենտր. կոմիտէն կարեւոր դէպքերում կապ է պահպանում նրանց հետ:

3) Թիֆլիսի տեղական կոմիտէն հրաժարուել է տեսական-ծրագրային պատճառաբանութեամբ. այնպէս որ կենտրոնական կոմիտէն ստիպուած է եղել անձամբ

դեկավարել Թիֆլիսի տեղական բոլոր գործերը նախկին տեղական կոմիտէի 1-2 անդամի աջակցութեամբ:

Նոր ընտրութիւններ կատարելը աննպատակալարմար է համարուել մինչեւ որ վերջանայ Ընդհանուր Ժողովը եւ տեսական-ծրագրային վիճելի հարցերը վերջնականապէս լուսաբանուեն:

Ահա այդպէս ուրեմն մեր կենտր. կոմիտէն իր շրջանում ընդգրկում է Թիֆլիսի նահանգը եւ Գանձակի նահանգի Ղազախ գաւառը, որտեղ հայ ազգաբնակչութեան թիւը հետեւեալ պատկերն է ներկայացնում.

| Քաղաքներում   | Ընդամէնը      | հայ           |
|---------------|---------------|---------------|
| 1.- Թիֆլիս    | 240323        | 84170         |
| 2.- Ախալքալաք | 7200          | 6370          |
| 3.- Ախալցխա   | 19220         | 15031         |
| 4.- Գորի      | 15353         | 3431          |
| 5.- Թելաւ     | 8458          | 5413          |
| 6.- Սիգնաղ    | 8994          | 2551          |
| 7.- Դուլէթ    | 1720          | 749           |
| <b>բոլորը</b> | <b>301268</b> | <b>117715</b> |

Այս կենտրոններում կազմակերպուած դաշնակցականների թիւը հասնում է 2-2500-ի:

| Գաւառներում        | Ընդամէնը      | որից հայեր    |
|--------------------|---------------|---------------|
| 1.- Թիֆլիս         | 75042         | 13181         |
| 2.- Ախալքալաք      | 67269         | 41728         |
| 3.- Ախալցխա        | 53480         | 8973          |
| 4.- Բորչալի (Լոռի) | 128587        | 48586         |
| 5.- Ղազախ          | 112071        | 43000         |
| 6.- Գորի           | 180822        | 16814         |
| 7.- Սիգնաղ         | 93319         | 5517          |
| 8.- Թելաւ          | 34158         | 700           |
| 9.- Դուլէթ         | 65153         | 2590          |
| <b>ընդամէնը</b>    | <b>809901</b> | <b>181189</b> |

Այս շրջանների դաշնակցականների թիւը ճշտօրէն որոշել դժուար է: Իրողութիւնն այն է, որ գիւղերի ստուարագոյն մասը կամ արդէն կազմակերպուած են կամ համակիր Հ. Յ. Դաշնակցութեան: Յամենայնդէպս դաշնակցական գիւղացիութեան թիւը կարելի է մի քանի տասնեակ հազարներ հաշուել: Դժբախտաբար պրոպագանդիստների թիւը այնքան սակաւ է եղել, որ անհրճարին է դարձել ցանկալի գիտակցութեան հասցնել

5.- Վիատուբեան, յուսարեկութեան:

գոնէ կազմակերպուած գիւղացիութեանը: Այդ տեսակէտից համեմատաբար աւելի բան է կատարուել Ղազախի, Լոռիի եւ Ախալքալաքի շրջաններում:

Ամփոփելով կազմակերպական ընդհանուր տեղեկութիւնները, կարելի է ասել, որ գրեթէ բոլոր դաշնակցական մարմինները մի տեսակ անցողական, գտման շրջանի մէջ են եւ մասամբ տատանուող ու տարբեր ազդեցութիւնների ենթարկուող: Սակայն այդպիսի դրութիւնը երկար շարունակուել չի կարող: Շրջապատող տնտեսական-սոցիալական-քաղաքական պայմանները այնպէս են դասաւորուած, որ նրանք հեշտութեամբ կարող են դաշնակցական մասսաներին մղել դէպի այլ կողմ, եթէ գէթ ապագայում ուժեղ պրոպագանդ չմղուի որոշ ծրագրով, եթէ սկզբունքային վիճելի հարցերը իրանց բաւարար պարզաբանութիւնը չստանան եւ դաշնակցական անուան տակ գործող բախտախնդիր ու շանտաժիստ տարրերը չզսպուեն:

Ընթացիկ կեանքը մեր առաջ դրել է մի շարք հրատապ խնդիրներ, որոնք դրանց շուտափոյթ լուծումն են պահանջում:

Դաշնակցութեան դրօշակի տակ կազմակերպուած աշխատաւոր մասսան՝ բանուորութիւն ու գիւղացիութիւն իրանց իրաւունքների ու շահերի պաշտպանութեան համար նոր եւ կենսունակ գործելակերպի կարիք են զգում, որի սկիզբը դրուած է, բայց անհրաժեշտութիւն կայ ամբողջ թափով առաջ տանել շարունակութիւնը:

Այդ մասին ունենք որոշ առաջարկներ, որ Ընդհանուր Ժողովիդ քննութեան կը յանձնենք ծրագրային ու տակտիկային հարցերը լուծելիս:

Այժմ մի քանի խօսք մեր շրջանի նիւթականի մասին:

II - ՆԻԻԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Նիւթական աղբիւրներն են կազմում անդամավճարներ, երեկոյթներ-վիճակախաղերի հասոյթներ, նուէրներ եւ հանգանակութիւն: Ինչպէս յայտնի է, տեղեկագրուած ժամանակաշրջանում այնքան յախուռն դէպքեր տեղի ունեցան, այնքան արիւնոտ երեկոյթներ, որ կուսակցութեան նախաձեռնած հանգանակութիւնները նուիրուած էին լինում յատուկ նպատակի — այն է ինքնապաշտպանութեան: Այդ ձեւով հանգանակուած է մօտ 45.000 ռ[ուբլի], իսկ 1905-ի վերջերից մինչեւ 1906 թ. Մայիս- Յունիս ամիսները աւելի քան 120.000 ռ[ուբլի]: Այդ գումարի չնչին մասը գործադրուած է քաղաքի ինքնապաշտպանական ընթացիկ ծախսերի համար (անիշխանութեան ժամանակ պահպաններ եւայլն), իսկ խոշոր տոկոսը, մօտ 140,000, յանձնուած է «գլխոնին» գէնք գնելու համար, որը մնալու էր կուսակցութեան տրամադրութեան տակ:

Նոյն ձեւով խոշոր գումարներ են հանգանակել ու գործադրել նաեւ գաւառական մարմինները:

Գալով մեր գուտ կուսակցական հաշուին, նա հետեւեալ պատկերն է ներկայացնում.

|                      | Մուտք    | Ելք       |
|----------------------|----------|-----------|
| 1904 թ.              | 7231-53  | 6347-96   |
| 1905 թ. <sup>6</sup> | 43127-22 | 32,774-07 |
| 1906 թ. <sup>7</sup> | 7888 -96 | 7524-87   |

Բացի դրանից Ախալքալաքի տեղական կոմիտէն ունեցել է 1906թ. ընթացքում<sup>8</sup>

|                            | Մուտք     | Ելք     |
|----------------------------|-----------|---------|
|                            | 2389-02   | 2387-45 |
| եւ Թիֆլիսի տեղական կոմիտէն | 10.949-44 | 3976-85 |

Այդպիսով մեր շրջանի գուտ կուսակցական էլ եւ մուտքը, չհաշուելով հարիւր հազարների յատուկ հանգանակութիւնը, 1906 թ. արտայայտուել է հետեւեալ ձեւով.

|  | Մուտք       | Ելք            |
|--|-------------|----------------|
|  | 7888 - 96   | 7524 - 87      |
|  | 2389 - 02   | 2387 - 45      |
|  | 10949 - 44  | 3976 - 85      |
|  | 21,227 - 42 | 13,869 - 17    |
|  |             | (բացատրութիւն) |

Աւելորդ չէ այստեղ յիշել, որ Թիֆլիսում հաւաքուած մօտ 11,000 ռ[ուբլի] գուտ անդամավճարներ են, խեղճ ու կրակ աշխատաւորների քրտնաթոր վաստակից է բաժին հանած: Արհեստակցական միութիւնների կամ գործարանային շրջանների իւրաքանչիւր անդամ վճարում է իր ստացած վարձագնի 2%, որի կէս մասը գործադրուում է տնտեսական կարիքների համար, իսկ մնացածը դրուում կուսակցութեան տրամադրութեան տակ: Հաշուելից երեւում է, որ այդ ձեւով 1906 թ. ծախսուած է միայն 3976-85, այսինքն ընդհանուր եկամուտի միայն 1/3-ը եւ այս հետեւեալ ստորաբաժանումով.

- 6.- Լուսանցքին վրայ նոյն ձեռագրով աւելցուած է. «Մանրամասն տես հաշուելչոուն»:
- 7.- Լուսանցքին վրայ նոյն ձեռագրով աւելցուած է. «Բացատրութիւն սակաւութեան պատճառների»:
- 8.- Լուսանցքին վրայ նոյն ձեռագրով աւելցուած է. «Մանրամասնութիւնը տես հաշուելչոուն»:

- 1) Պրոպագանդիստների 515 ու-
  - 2) Օժանդակութիւն եւ փոխարինութիւն գործադու-լաւոր ընկերներին - 1324 - 10
  - 3) Գրադարանի համար գրքեր - 300 -
  - 4) Չանագան (կառք, ցրիչներ, թուղթիկներ, տպա-րան, թուղթ, ընտրութիւնների ծախս եւ այլն) 1837 - 75
- Խառը խմբերի անդամավճարները չափը որոշուել է կամաւոր կերպով:
- Անհրաժեշտ է յիշատակել նաեւ այն, որ վերջին տար-ուայ ընթացքում արգելուեց դրամական տեսակէտով երեկոյթներ կազմակերպելը, որովհետեւ դրանք ցան-կալի արդիւնք չէին տալիս նիւթական եւ մանաւանդ բարոյական տեսակէտից եւ բացի դրանից միջոց էին ծառայում զանազան շանտաժիստների ձեռքում միա-միտ հասարակութեանը շահագործելու համար:
- Այդպիսի երեկոյթների փոխարէն կազմակերպուել են մի քանի հանդէսներ (օր. Վասպուրականի տասնամ-եակ, Քրիստափորի յիշատակին, Օտտոմանեան բանկ եւ այլն) եւ բազմաթիւ դասախօսութիւններ:

III - ԳՈՐԾՈՒՆԵՒԹԻՒՆ

Մեր շրջանի դաշնակցական մարմինների գործու-նէութեան մասին մի ամփոփ գաղափար տալու համար մենք համառօտակի կանգ կ'առնենք հետեւեալ կէտերի վրայ 1) պրոպագանդ. 2) գինավարժութիւն եւ ինքնա-պաշտպանութիւն 3) վերաբերմունք դէպի ներքին հա-սարակական երեւոյթները 4) վերաբերմունք դէպի ընդ-հանուր ռուսական յեղափոխութիւնը եւ քաղաքական ակտեր: 5) վերաբերմունք դէպի տաճկահայ դատը եւ 6) յարաբերութիւն այլ քաղաք. յեղափ. կուսակցութիւն-ների հետ:

1) Պրոպագանդը առաջ է մղուել թէ՛ գրաւոր կերպով եւ թէ՛ բանաւոր: Հրատարակուել են բազմաթիւ թու-ցիկներ ու շրջաբերականներ թէ՛ տնտեսական հարցերի եւ թէ՛ ընթացիկ յեղափոխական դէպքերի ու երեւոյթնե-րի վերաբերմամբ: Թէ՛ գաւառներում եւ թէ՛ մանաւանդ կենտրոնում՝ Թիֆլիսում գործել են յատուկ պրոպա-գանդիստներ:

Բայց չնայելով գործադրուած բոլոր ջանքերին, դեռ անկարելի է ասել, թէ՛ պրոպագանդը մեզանում ցան-կալի որակի ու աստիճանի է հասած: Շրջանը այնքան մեծ է, կարիքը այնքան լայն եւ միմեանց յաջորդող հրատապ հարցերը այնքան բազմաթիւ, որ եղած ոյժերը չեն կարողանում ծովացած պահանջին բաւարարու-թիւն տալ, ուստի եւ ամէն կողմից շարունակ լսոււմ են տրտուները պրոպագանդիստների, դասախօսների սակաւութեան նկատմամբ:

Լայն պահանջին գէթ մասամբ բաւարարութիւն տա-լու նպատակով կենտրոնական կոմիտէի նախաձեռնու-

թեամբ կազմակերպուել են յատուկ դասընթացներ պրոպագանդիստների համար: Այդտեղ յաճախողների թիւը հասել է 1904 թ. - մօտ 15-ի, 1905 թ. - 20-25-ի, իսկ 1906-1907 թ. 20-30-ի: Դասընթացներում կարդացուել են մի շարք դասախօսութիւններ՝ տաճկահայ դատի, հողային հարցի, Ֆեդերացիայի, բանուորական կազմա-կերպութիւնների, մեր Մրազրի ու Նախագծի, այլ կու-սակցութիւնների ծրագրի ու գործունէութեան մասին եւ միջանկեալ կերպով նաեւ ընթացիկ դէպքերի ու հար-ցերի մասին: Դասախօսներ [են] եղել 3-4 կարող ընկեր-ներ:

Ներկայումս դասընթացները յաճախում են բացի միջնակարգ դպրոցների բարձր դասարանների մի խումբ աշակերտներից նաեւ գործակատարներ ու բա-նուորներ:

Ընդհանրապէս վերջին ժամանակներս ջանքեր են գործ դրոււմ, որպէսզի Հէնց իրանց բանուորների մի-ջից դուրս գան պրոպագանդիստներ եւ առաջին փոր-ձերը շատ միտիթարական հետեւանքի են հասցրել:

Գալով պրոպագանդի նիւթին կարելի է այսքանը ասել, որ նա եղել է չափազանց բազմազան եւ ընթացիկ կեանքից բխած: Մեծ մասը նուիրուած է եղել Հ.Յ.Դ. ծրագրի, անցեալի ու ներկայ գործելակերպի բացատ-րութեան եւ նորանոր խմբեր ու միութիւններ կազմա-կերպելուն:

Բաւական եռանդ ու ժամանակ են խլել մանաւանդ գործադուլները, որ մի տարեբային ուժով առաջ էին գա-լիս Հէնց իրանց աշխատաւորների նախաձեռնութեամբ ու պահանջով: Կուսակցական մարմիններն ու դեկա-վար ընկերները միայն օժանդակիչ ու խորհրդատու էին հանդիսանում: Գործադուլների աջող ելքը մեծ չափով նպաստել է դաշնակցական նորանոր միութիւններ կազմակերպելուն:

Հարկաւոր է նկատել, որ ռուսական յեղափոխու-թեան եռուն ժամանակաշրջանում, երբ տնտեսական-քաղաքական հարցերը կարկտի արագութեամբ թափ-ւում էին ժողովրդի առաջ, երբ ազգաբնակչութեան տարբեր խաւերը գտնան ու կազմակերպման ուղիի վրայ էին կանգնած, բնականաբար ընթացիկ երեւոյթ-ները գլխաւոր նիւթ էին ծառայում պրոպագանդի հա-մար: Չէր խօսուում տաճկահայ դատի մասին որպիսի հանգամանքը վերջի վերջ տրտուները ու կասկած-ներ գարթեցրեց որոշ խաւերի կողմից: Սակայն վերջին ամիսներում դրա առաջն եւս առնուեց մի շարք դասա-խօսութիւններով ու բացատրութիւններով վերոյիշեա-լի մասին: Այնպէս որ դաշնակցական գիտակից մաս-սան այժմ այլեւս չի կասկածում, որ տաճկահայ դատը Հ.Յ.Դ. [ի] համար մոռացուած չէ եւ չէ էլ կարող մո-ռացուել:

Պրոպագանդի պատկերը ամբողջացնելու համար պէտք է ասել, որ աշխատաւոր գիւղացիութեան ցաւերն

ու կարիքներն էլ չեն վրիպել մեր ուշադրութիւնից: Գիւղացիական ժողովներում կարդացուել են մի շարք դասախօսութիւններ հողային հարցի մասին եւ արուել են նաեւ գործնական քայլեր այդ ուղղութեամբ:

2) Զինավաճառութիւն եւ ինքնապաշտպանութիւն

Արհեստակցական միութիւնների կազմակերպման առաջին շրջանում Դաշնակցութեան գինուորական խաւերում խուլ տրտուները ու կասկածանքներ էին լսոււմ, թէ՛ այդ ձեւով մեռցոււմ են Դաշնակցութեան ռազմական ոգին, թէ՛ դաշնակցականներին «թուլա-մորթ սոցիալներ» են դարձնում եւ այլն: Բայց տրտ-ուներն անտեղի էր: Միութիւններ կազմակերպողները շատ լաւ գիտէին, որ ներկայ պայմաններում միայն խաղաղ ճանապարհով անհնարին է ժողովրդի կեանքի, գոյքի ապահովութիւն, խօսքի ու կամքի ազատութիւն ստեղծել, որ քանի կայ բռնակալութիւնը անհրաժեշտ է նաեւ Ֆիզիքապէս կուռել նրա դէմ՝ թէ՛ սահմանի այս կողմը՝ Ռուսաստանում, եւ թէ՛ այն տեղ դժոխք աշ-խարհում՝ արիւնոտ Տաճկահայաստանում: Հէնց այդ պատճառով էլ ծրագրուած էր, որ միութիւնների ան-դամներին առանձին դիւրութիւններ տալ նաեւ գինա-վարժութեան համար: Եւ այդ ուղղութեամբ գործնա-կան քայլեր արուած են:

Գալով ինքնապաշտպանութեանը, պէտք է ասել, որ մեր շրջանում բարեբախտաբար միայն երկու կէտե-րում կարիք եղաւ նրա գործադրութեան՝

- 1) Ղազախ-Շամշաղնում եւ 2) Թիֆլիս-Բորչա-լիում\*:
- Երկու կէտերում էլ դաշնակցական ռազմիկնե-րը փառահեղ կերպով տարան իրանց դերը եւ հմալքի նոր պսակ աւելացրին կուսակցութեան անուանը, հայ ժողովրդին եւ առանձնապէս Թիֆլիսի բազմացեղ ու բազմալեզու ազգաբնակչութեանը ցոյց տալով Հ. Յ. Դ. [ի] խոշոր ոյժը, որ պահանջուած դէպքում գործա-դրոււմ է ճնշուածների, հալածուածների պաշտպա-նութեան համար:

Դա ինքնապաշտպանութեան դրական կողմն էր: Բայց կար եւ բացասականը: Կեանքի ու մահուան այդ անցողական շրջանում բոլորը պաշտպանութիւն էին որոնում Դաշնակցութեան դրօշակի [տակ], բոլորը սի-րում էին իրանց դաշնակցական համարել: Դրա շնորհիւ մեր շարքերը վարարուեցին կասկածելի ու ոչ յեղափո-խական տարրերը, որոնք եւ խաղաղ օրերին արդէն ի-րանց շեշտն էին ուզում դնել կուսակցութեան ընթացիկ գործելակերպի վրայ եւ անաջողութեան հանդիպելով տրտուներ յաւակնոտ ձայներ էին բարձրացնում:

Սակայն կեանքի հոսանքը արդէն քշում է դրանց դէ-պի այլ կողմ եւ կարելի է յուսալ, որ շուտով Դաշնակ-ցութիւնը մաքրուած կը լինի այդպիսի աւելորդ ու ա-նխորժ բեռից:

Ինքնապաշտպանութեան մի բացասական կողմն էլ

այն էր, որ Դաշնակ[ցութեանն] ստիպեց ակամայից ա-ւելացնել իր ռազմիկ ոյժերը եւ մի տեսակ յեղափոխա-կան միլիտարիզմ առաջացնել, որի ծանրութիւնը վա-ղուց զգալի է դարձել ժողովրդի համար, մանաւանդ որ գինուորների անգիտակից մասը իր անցեալից երես ա-ռած ի չարն էր գործն դնում իր անունը եւ ժողովրդա-կան համակրանքը:

Ահա այդ չարիքի առաջն առնելու համար էր, որ մեր վերջին Շրջանային ժողովը ընդունեց մի այսպիսի բա-նաձեւ.

— «Քննադատութեան ենթարկելով ինքնապաշտպա-նութեան հարցը, այդ առիթով աչքի առաջ առնելով ան-ցեալի փորձը, ներկայ իրականութիւնը եւ ապագայի ցանկալի հեռանկարը, Հ.Յ.Դ. Թիֆլիսի Շրջանային ժո-ղովը եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է ինք-նապաշտպանութեան գործը ամենալայն հիմքերի վրայ դնել, արծարծելով եւ հնար եղած չափով իրագործելով ժողովրդական միլիցիայի գաղափարը, վերացնելով վարձու գինուորութիւնը, եւ դրանով իսկ դրդելով ժո-ղովրդին տեղական - սեփական ոյժերով դեկավարելու ինքնապաշտպանութիւնը ընդդէմ խուլիգանական տարրերի եւ բռնակալութեան ոտնձգութիւններին: Այդ միեւնոյն ժամանակ Հ.Յ.Դ. աշխատելու է ամէն տեղ արծարծել ազգերի համերաշխութեան գաղափարը եւ իրելու մի սոցիալիստական կուսակցութիւն զարգացնե-լու է աշխատաւոր մասսաների գիտակցութիւնը ընդ-դէմ շահագործող տարրերի, դրանով նպաստելով հա-րեւան ազգերի մերձեցմանը եւ բուրժուական-ֆէոդա-լական ազդեցութեան ջլատմանը եւ ազգային անդադո-նիզմի՞ վերացմանը:

Բացի այդ բոլորից Հ.Յ.Դ. իրելու մի յեղափոխական կազմակերպութիւն գտելու եւ կազմակերպելու է իր որոշ ակտերի համար յատուկ մարդասիրական խմբեր՝ իսկական յեղափոխական տարրերից»:

3) Վերաբերմունք ուլի Գեորգի Կասարակական երեւոյթներ

Հ.Յ.Դ. երկար տարիներ գոյութիւն ունենալով Կով-կասում անմիջական գործունէութիւն ցոյց չէր տուել տեղական իրականութեան վերաբերմամբ: Նա հանդի-սացել էր Կովկասի հայ ազգաբնակչութեան համար իբ-րեւ մի յեղափոխական մարդարան, որ նիւթական օգ-նութիւն ուղարկելով Տաճկահայաստան, գաղտնի խմբակներում խորհրդաւոր զգուշութեամբ խօսելով բռնակալութեան ելեւէջների մասին — ունկնդիրների մէջ զարգացնում էր տրամադրութիւն բողոքի ու ըմ-բոստացման: Եւ այդպէս անցնում են երկար տարիներ:

\* Մանրամասնութիւնները բանաւոր:

Բայց երբ ռուսական ռեժիմը իր ոտնձգությունները առանձնապես հայերի վերաբերմամբ ավելի ու ավելի մեծացրեց, երբ ժողովրդի մէջ հասունացած պահանջ էր դարձել ցասման պոռթկումը, ահա այդ ժամանակ դաշնակցական գործիչները ստիպուած եղան ասպարէզ մտնել եւ շարժման ղեկավար հանդիսանալ: Դա կալուածական հարցի շուրջը բռնկուած ցոյցերի շրջանն էր, որին հետեւեց հսկայական ժողովրդական բոյկոտը ռուս կառավարութեան դէմ:

Հ.Յ.Դ. Կովկասեան գործունէութեան առաջին դեպիւտէն<sup>10</sup> էր դա, որ ունեցաւ չափազանց արդիւնաւէտ հետեւանք՝ կալուածները եւ դպրոցների վերադարձնելը:

Սկիզբը ունենալով էր եւ իր շարունակութիւնը, որպիսին հանդիսացաւ Հ.Յ.Դ. Կովկասեան յետագայ գործունէութիւնը իր շօշափելի հետեւանքներով: Դաշնամարմինները արդէն դուրս էին եկած իրանց անտարբեր վիճակից Կովկասում եւ մասնակցում էին ընթացիկ հարցերին:

Այդ տեսակէտից էլ մեր շրջանը իբրեւ կենտրոն իր որոշ դերն է ունեցել եւ մասամբ ազդել է նաեւ հեռուորդաւանների վրայ:

Մինչեւ այդ ժամանակ հայ կեանքի բոլոր ասպարէզները դարձել էին մի տեսակ մենաբաժին<sup>11</sup> իրանց ազատամիտներ կոչող մի խումբ մարդկանց ձեռքին: Եւ ահա դաշնակցականների թարմ ոյժը ներս է մտնում այդ ասպարէզները՝ իր խօսքը ասելու, ժողովրդի իսկական շահերը պաշտպանելու: Սկսւում է հնի եւ նորի բախումը, որի առաջին արտայայտիչն է հանդիսանում այսպէս ասած «Ազգային ժողովը» (1905 թ.), որ յիշեալ լիբերալների նախաձեռնութեամբ գումարւում էր հայ ժողովրդի անունից պետիցիա մշակելու եւ Վիտտէին<sup>12</sup> ներկայացնելու: Այդ ժողովին թէեւ Հ.Յ.Դ. չէր մասնակցում պաշտօնապէս, բայց իրականապէս ժողովականների մի ստուար տոկոսը դաշնակցականներ էին: Չնայելով դրան ժողովի մշակած պետիցիան հեռու էր արմատական լինելու յաւակնութիւնից, որովհետեւ այդ շրջանում նոյնիսկ շատ դաշնակցականներ զգուշաւորութեան ու չափաւորութեան անունից էին բարբառում, դեռ բաւարար չափով պարզած ու ընդունած չլինելով Հ.Յ.Դ. յեղափոխական ոգին ու դերը:

Այսպէս թէ այնպէս մի քանի դաշնակցականների արտայայտած մտքերը գուշակում էին, որ մեր կղերական ու լիբերալ տարրերի մենարտօնութիւնը հայկական ներքին հարցերի վերաբերմամբ շուտով վերանայու է, տեղի տալով նոր հոսանքին:

Եւ իսկապէս ընտրողական պայքարը գալիս է պերճախօս կերպով հաստատելու այդ փաստը: Տեղի են ունենում Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւնները Թիֆլիսի ամբողջ թեմի կողմից եւ դաշնակցականները տանում են փառաւոր յաղթանակը:

Դրանից յետոյ տեղի են ունենում ընտրութիւնները էջմիածնի կենտրոնական ժողովի համար եւ այս յաղթանակը նորից կրկնւում է:

Հ. Յ. Դաշնակցութեան այդպիսի առաջխաղացութիւնը ցնցում է հայկական յետադիմական եւ quasi<sup>13</sup> լիբերալ տարրերին: Մրցումը օրէցօր սաստկանում է եւ մասնաւոր ժողովներից ու վիճաբանութիւններից մատուցի էջերն անցնում: Կղերական-բուժուական-լիբերալ հոսանքի բերան են հանդիսանում «Մշակ-Մուրճ»-ը մերթ ընդ մերթ իրանց ձայնակից ունենալով հակառակորդ այլ բանակի՝ սոց. դեմ. մամուլը:

Այդպիսով դաշնակցականների ցոյց տուած մասնակցութիւնը հայկական ներքին խնդիրների մէջ, բնականաբար դժգոհութիւն է յարուցանում յետադիմական-բուժուական տարրերի կողմից եւ հակամարտ հոսանքների մրցումը ուժեղացնում: Եւ այդ ամէնը ամենամեծ չափերով արայայտուել է մանաւանդ մեր շրջանում:

**4) Վերաբերումը դէպի համառուսական լեղափոխութիւնը եւ քաղաքական ակտեր**

Այս խնդրում էլ Թիֆլիսի կենտրոնական Կոմիտէն իր պատասխանատու դերն է ունեցել: Լինելով ամբողջ Կովկասի կենտրոնավայրում, չփոքելով այլ կուսակցութիւնների ու տարրերի հետ, նա ստիպուած է եղել միշտ էլ ուշի ուշով հետեւել ընդհանուր քաղաքական անցքերին, հայ մասսաների շահերին ու պահանջներին եւ պատշաճաւոր արձագանքը տալ բռնկուող անցքերին իբրեւ մի յեղափոխական-սոցիալիստական կուսակցութեան ներկայացուցիչ այդ շրջանում:

Հոկտեմբերեան նշանակալից օրերին, մանիֆեստից յետոյ նա եւս միւս կուսակցութիւնների հետ միասին բաց հրապարակ հանեց իր դրօշակը, որի շուրջը համախմբւում էր մի քանի տասնեակ հազարաւոր համակրողների բազմութիւնը: 4 օր շարունակուող այդ հսկայական ցոյցերի ու միտինգների ընթացքում Թիֆլիսում Հ. Յ. Դ. ը նոյնիսկ օտարների զարմանքն էր յարուցել իր տակտով ու մեծ մասսայով:

Դրանից յետոյ, Նոյեմբերեան-Դեկտեմբերեան քաղաքական գործադուլներին եւս մասնակից էր Հ.Յ.Դ. եւ անարխիստ օրերին, երբ Թիֆլիսում ու նրա շրջակայքում միայն յեղափոխականներն էին իշխում, Հ.Յ.Դ. դարձեալ ակտիւ դեր էր խաղում՝ թէ ժողովրդին համար դիւրութիւններ ստեղծել. օրինակ՝ մի քանի օր շարունակ դաշնակց. թաղական խմբերը պահեստներին

10.- Սկզբնաւորութիւն:  
11.- Մեծաշնորհ իմաստով:  
12.- Պետիցիա՝ աղերսագիր, պահանջագիր: Վիտտէն Ռուսաստանի ներքին նախարարն էր:  
13.- Գրեթէ, համարեալ:

հանել էին տալիս շաքար, նաւթ եւ այլ մթերքներ. իրանք նշանակում էին գները եւ վաճառել տալիս. այդ առիթով հրատարակւում էին թուուցիկներ\* եւ միեւնոյն ժամանակ կեանքի ու գոյքի մասին հոգալով: Այդ օրերին դաշնակցական անունը հմայիչ էր դարձել նոյնիսկ օտարների համար:

Բայց Ռուսաստանի ընդհանուր պայմանները բացի քաղաքական գործադուլներից ավելի ակտիւ քայլեր էին պահանջում, որոնց համար նախապատրաստութիւններ էին հարկաւոր: Այդ խնդրում Կովկասն անմասն մնալ չէր կարող, ոչ էլ Հ.Յ.Դ. բացառութիւն կազմել: Թիֆլիսում գոյութիւն ունեցող յեղափոխական կուսակցութիւնները երկար խորհրդակցութիւններից ու բանակցութիւններից յետոյ որոշում են կազմել «Համաձայնութեան Բիւրօ» որպէսզի հնարաւոր լինի նրա միջոցով համակերպութիւն ու համերաշխութիւն մտցնել յեղափոխական բոլոր տարրերի միջեւ ընդդէմ մի ընդհանուր թշնամու: Այդ բիւրօյում մասնակցում էին 1) Հ. Յ. Դ. 2) սոց. յեղ[ափոխականները] 3) սոց. դեմ[ոկրատները] 4) վրացի սոց. Ֆեդերալիստները եւ 5) հնչակեանները:

Մոսկուայում բռնկուած զինուած ապստամբութիւնը անյետաձգելի պահանջ էր դարձնում Կովկասից եւս արձագանք հնչեցնելու, ակտիւ քայլեր անելու: Այդ ուղղութեամբ «Համ. Բիւրօն» մշակում է մի ընդհանուր գործելակերպ եւ ծրագիր, որ պարտադիր էր բիւրօյում մասնակցող բոլոր կուսակցութիւններին: Աւելորդ չէ յիշատակել, որ Դաշնակցութիւնը մտնելով Բիւրօ հէնց սկզբից շեշտել էր հայկական բացառիկ պայմանները - թուրքական վտանգի տեսակէտից եւ իրան իրաւունք էր վերապահել զինուած ընդհարումներին դէպքում իր ռազմիկ ոյժերով նախ ապահովել հայ մասսաներին թուրքական արշաւանքներից:

Այսպէս թէ այնպէս «Համ. Բիւրօն» բոլոր մասնակցողների անունից մի երկու թուուցիկ է բաց թողնում եւ նախապատրաստւում ավելի խոշոր ակտերի:

Սակայն սոց. դեմ[ոկրատները] կասկածելի վերաբերմունքը հէնց սկզբից դժգոհութիւն է զարթեցնում ոչ միայն Դաշնակցութեան այլեւ միւս կուսակցութիւնների կողմից. (օր. Բիւրօյի որոշման հակառակ ուղիք նետելը Դոյրլինսկի պրոսպեկտ. անկախ զինւորականների ռազմիկ խմբեր ունենալը եւ այլն): Իսկ Սոլդարսկի բազարում այնքան անտեղի ու թեթեւամտօրէն նետած ռուբլը եւ նրա առաջացրած սոսկալի աղէտը գալիս է վերջնականապէս հաստատելու, որ սոց. դեմ[ոկրատները] հետ անհնարին է յեղափոխական որեւէ լուրջ ձեռնարկ աջողեցնելը:

Հէնց այդ նկատումներով Հ.Յ.Դ. բողոքելով դուրս է գալիս «Բիւրօյից»: Միւս կուսակցութիւնները թէեւ մտում են, բայց դրանից յետոյ եւ ոչ մի ակտ չեն կատարում:

Բացի վերոյիշեալից Հ.Յ.Դ. ակտիւ կերպով մասնակցում է նաեւ Օգոստոսեան մի օրեայ քաղաքական գործադուլին, որ առաջացած էր իբրեւ մի բողոք մինչբերեան գնդի զինուորներին դատի առիթով:

**5) Վերաբերումը դէպի տաճկահայ դատը**

Մեր շրջանը հեռու լինելով սահմանագլխից, տաճկահայ դատի նկատմամբ կարողացել է միայն նիւթական օժանդակութիւն հասցնել Արեւելեան բիւրօյի միջոցով. միեւնոյն ժամանակ պրոպագանդ է մղել աշխատելով այդ հարցի շուրջը գիտակից վերաբերմունք ստեղծել լայն խաւերի կողմից: Ընդհանուր առմամբ մեր շրջանում չկայ օրինաւոր մարմինների հետ կապուած դաշնակցական ոչ մի խումբ, ոչ մի միութիւն, որ չուզենայ ջերմ աջակցութիւն ցոյց տալ տաճկահայկական-ազատագրական շարժմանը: Բայց դրա հետ միասին չկայ եւ ոչ մի խումբ, որ կողմնակից լինի միմիայն տաճկահայ դատի օժանդակութեան առանց յեղափոխական-սոցիալիստական գործունէութեան Կովկասում: Երկուսը միասին եւ նրանց վրայ Հ.Յ.Դ. ընդհանուր դրօշակը պարզած - այդպէս է նրանց ցանկութիւնը: ՈՍՍԵՐ Ի հարկէ անհատ - բացառութիւնների մասին չէ:

**6) Յարաբերութիւն այլ կուսակցութիւնների հետ**

Հ.Յ.Դ. Թիֆլիսի կենտրոնական Կոմիտէն տեղեկագրուած ժամանակաշրջանում զանազան հարցերի առիթով յարաբերութիւն ու բանակցութիւններ է ունեցել 1) սոց. Ֆեդերալիստների հետ եւ 2) ս[ոցիալ] ռ[եւոլուցիոններ]-ների հետ - հոկտեմբերեան միտինգների ժամանակ մշակելով ընդհանուր քաղաքական լուրջագներ: Եւ այդ միտինգների ժամանակ միշտ էլ այդ երկու կուսակցութիւնների հետ է դուրս եկել, առանձնացած ս[ոցիալ] դ[եմոկրատ]ներից եւ հնչակեաններից: Առանձնապէս վրացի Ֆեդերալիստների հետ երկար խորհրդակցութիւններ է ունեցել Կովկասեան Ֆեդերացիայի մանրամասնութիւնները պարզելու համար եւ մի ուրիշ անգամ էլ հայ-թուրքական ընդհարումների առաջնաւանդու նպատակով:

Բացի այդ երկուսից նա գործ է ունեցել նաեւ սոց. դեմ-ի հետ շատ յաճախ՝ տնտեսական հողի վրայ, երբ գործադուլներ էին կազմակերպւում եւ կարիք էր լինում, որ դաշնակցական եւ ս.դ. բանուորները ընդհանուր համաձայնութեամբ դնեն իրանց պահանջները:

Իսկ քաղաքական հարցերի նկատմամբ որոշ յարաբերութեան մէջ եղել է յիշեալ երեք կուսակցութիւնների հետ, հայ-թուրք. ընդհարումների ժամանակ Թիֆլիսում եւ քաղաքական ընդհանուր գործադուլների ժամանակ «Համաձայնութեան Բիւրօ» կազմելիս:

\*) Նոյն քայլը արել էր նաեւ Ախալքալաքի մարմինը:



Հնչակեանների հետ միայն հանգանակութեան մի հարցի առիթով բանակցել է, բայց առանց ակտիվ քայլերի անցնելու...

Պատկերը լրացնելու համար այս էլ ասենք, որ մեր շրջանում կղերական-մշակական- բուրժուական բրդեր մի քանի անգամ փորձեր է արել քաղաքական կուսակցութիւն կազմելու՝ նախ «կաղերականների հայկական ռազմակալ ֆրակցիա» անուան տակ, իսկ յետոյ «հայկական պրոգրեսիստներին», բայց երկու դէպքում էլ մնացել են գեներալներ առանց բանակի, լայն մասսաների կողմից արհամարհուած: Դրանք շատ ջանքեր են գործ դրել Դաշնակցութեան շարքերում քայքայում առաջացնելու եւ նրա դէմ դժգոհութիւն զարթեցնելու համար: Հէնց այդ նպատակով էլ նրանք առանձին հովանաւորութիւն ու քաջալերութիւն են ցոյց տուել Դաշնակցութեան անունը շահագործող մի խմբակի, որ յայտնի է միհրանականներ անուան տակ: Ապացոյցների նմուշները յաճախ հանդիպում են դրանց օրգաններում:

IV ՏԱՐԲԵՐ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Ինչպէս յայտնի է վերջին ժամանակներ դաշնակցական շարքերում առաջացել են տնտեսական տարբեր հոսանքներ ծրագրային ու տակտիկային հարցերի շուրջը: Դրանցից մէկը, որ իրան գէնք է դարձրել տաճկահայ դատը, յայտնի է միհրանականներ մականունով եւ օրէցօր աւելի ու աւելի յանդուգն քայլեր է անում եւ աղմուկ բարձրացնում ընդդէմ դաշնակցական ներկայ գործունէութեան:

Միամտութիւն կը լինի, ի հարկէ, պատահական երեւոյթ համարել այդ հոսանքը կամ մի որեւէ բախտախնդիր անհատի առաջացրած: Նրա շատ առիթներն աւելի խորն են եւ բազմազան: Մանրամասն կանգ առնել դրանց վրայ շատ հեռուն կը տանէր: Ուրուագծենք այդ շարժառիթներից զլիաւորները, որ հետեւեալներն են.

1) Հ.Յ.Դ. կովկասեան գործունէութիւնը նորանոր շարքեր գրաւելով Դաշնակցութեան] դրօշակի տակ եւ ակտիվ քայլերով ընդհանուր հետաքրքրութիւն զարթեցնելով, տաճկահայերից շատերի մէջ կասկածանք է առաջացնում, թէ տաճկահայ դատը մոռացութեան է տրուած, թէ կովկասեան գործունէութիւնն իր «նախագծով» խանգարում է նախկին գործելակերպին: Եւ այդ կասկածանքը աւելի եւս ոյթ է ստանում շնորհիւ այն հանգամանքի, որ տաճկահայ դատի վերաբերմանը պրոպագանդը թուլացած էր ռուսական յեղափոխութեան բռնկման շրջանում եւ նրանից յետոյ:

2) Տաճկահայաստանում դէպքեր տեղի չէին ունենում. ոչինչ էլ չէր լսուում: Իսկ խաղաղ գործունէութիւնը, այս կողմից փոխադրած նիւթական ու ռազմական միջոցները գաղտնիք էին մնում մասսաներից: Եւ միամիտների մտքերը հեշտութեամբ պղտորում էին...

3) Հայ-թուրքական ընդհարումները բազմացնելով Դաշն. ռազմական շարքերը ժողովրդական լայն համակրանք էին գրաւել դէպի գինուորները, որ ամիսներ շարունակ գուրգուրում էին ամէնքի կողմից: Բայց երբ կամաց-կամաց դադարում են ընդհարումները եւ վտանգը հեռանում, ժողովուրդը այլեւս նախկին վերաբերմունքն ու զոհաբերութիւնը ցոյց չի տալիս դէպի գինուորները: Դաշն. մարմիններն էլ կամաց-կամաց միջոցներ են ձեռք առնում ակամայից առաջացած միլիտարիզմը թեթեւացնել գինուորների թիւը կրճատելով, նրանց զբաղմունք գտնելու առաջարկ անելով, իսկ շատերին էլ ինքը տեղաւորելով այս կամ այն գործին: Կամաց-կամաց բարձրանում է գինուորների տրտուելը մարմինների դէմ, մանաւանդ երբ վերջիններս ստիպուած են լինում ապրուստի միջոցներ տալը հետզհետէ նուազեցնել ու դադարեցնել, շեշտելով սեփական աշխատանքով ապրելու անհրաժեշտութեան վրայ: Առանձնապէս տրտնջում են խմբապետները, որոնք ընդհարումների ժամանակուայ իրանց դիրքից օգտուելով շարունակում էին իրաւունքներ բանեցնել, ժողովրդի մասնաւոր գործերին միջամտել, դատեր անել եւ շատ յաճախ Դաշնակցութեան] անունը շահագործել սեփական շահերի համար: Տրտնջում էին դրանք, որովհետեւ կենտրոնական կոմիտէն մի քանի նախագգուշ[ու]-թիւններից յետոյ [Դաշնակցութեան] Խորհ[ուրդն] արգելել էր դրանց դատավարութիւնը եւ մասնաւոր գործերին միջամտելը:

Դժգոհ գինուորները ու խմբապետները սեփական հաշիւները ծածկում էին դաշնակցական կեղծ ուղղափառութեան դէմ եւ դաշնակցական<sup>14</sup> հակառակորդների իդէոլոգիայով տարուած իրանց ձեւացնում են հիւկական դաշնակցականներ» եւ բողոքում են մարմինների դէմ, որոնք իբր թէ շեղուել են իրանց ուղիից:

4) Դրա վրայ աւելանում է նաեւ այն հանգամանքը, որ նախկին հարիւրեակները կամաց-կամաց քայքայւում են, վերածուելով արհեստակցական միութիւնների եւ դրանով իսկ թուլացնելով խմբապետների ազդեցութիւնը:

Այդ բոլորի հետեւանքն է լինում խմբապետների հաւաքական մի գրութիւնը Բիւրոյին եւ կենտ. կոմիտէին ուղղուած, որով պահանջում են, որ իրանց իրաւունքները չսահմանափակուեն, որ թոյլ տրուի նախկին ձեւով դատեր անել, յիացօր հանդիսանալ եւ այլն:

Գրութեանը մերժողական պատասխան է տրուում եւ յատուկ ժողովներում բացատրւում է դժգոհութեան նիւթ ծառայող հարցերը: Բայց ապարդիւն: Տրտուելքները շարունակւում են:

Այդպիսի տրամադրութիւններից օգտուում են մշակական-բուրժուական տարրերը, որոնք Միհրան եւ ընկ.

14.- Պէտք է ըլլայ Դաշնակցութեան:

քաջալերելով ու հովանաւորելով զարկ են տալիս Դաշնակցութեան] ներքին դժգոհութեանը: Եւ ահա այդ հոսանքն է, որ այնքան յոխորտալով աղմուկ է բարձացնում յանուն տաճկահայ դատի: Դրանք իրանց սխրագործութիւնների մէջ այնքան առաջ են գնում, որ առանձին խմբեր են կազմակերպում, կեղծ կնիքներով փողեր են հանգանակում<sup>15</sup>, իսկ վերջերս Ֆիզիքական բռնի ոյթով քայքայել են աշխատում Թիֆլիսի արհեստակցական միութիւններն ու բանուորական խմբերը (ապացոյց դրոպապանների<sup>1</sup>, Թամամչեւի քարվանսարայի գործակատարների եւ մասնաւոր անհատների վերաբերմամբ գործադրուած բռնութիւնները)<sup>16</sup>:

Պարզ է, ի հարկէ, որ մեր շրջանի դաշն. պատասխանատու մարմինը, որպիսին հանդիսանում էր կենտրոնի կոմիտէն, պարտաւոր էր կտրուկ միջոցներ ձեռք առնել Դաշնակցութեան] անունը այդքան յանդուգն կերպով շահագործող տարրերի դէմ, բայց քանի որ հոսանքը մեր շրջանից տարածուել էր աւելի հեռուն եւ խրախուսանք էր ստանում նաեւ Բաթումի շրջանից, ուստի Արեւելեան Բիւրոն իր վրայ վերցրեց գործի ղեկավարութիւնը, կազմակերպեց գինուորական արտակարգ դատ, որ սակայն շօշափելի ոչ մի արդիւնք չտուեց: Բայց այդ մասին անշուշտ Բիւրոյի տեղեկագրի մէջ կը լինեն աւելի մանրամասնութիւններ:

Այսպէս թէ այնպէս դժգոհ գինուորների ու խմբապետների շարժումը վերջերս աւելի ու աւելի նուազել է շատերը հեռացել էին նրանից եւ նորից միացել Հ.Յ.Դ. խմբերին: Մնում է միայն մի փոքրիկ խմբակ, որ ամէն եռանդ գործ է դնում միամիտների մտքերը պղտորելու համար:

Իսկ թէ տաճկահայ դատի շուրջը եղած տրտուելները որքան հիմնաւոր են եւ լայն խաւերի մէջ տարածւած — այդ կարող է պարզել ժողովը միւս շրջանների տեղեկագրերն էլ լսելով եւ հարցը լուրջ քննութեան ենթարկելով:

Բոլորովին այլ բնոյթ է կրում մի ուրիշ հոսանք, որ յայտնի է «զատողականներ» անունով եւ որի արտայայտիչներն են հանդիսացել մի խումբ երիտասարդ դաշնակցականներ, որոնք թէ տաճկահայ դատի եւ թէ կովկասեան սոցիալիստական շարժման շահերի տեսակէտից նպատակայարմար են համարում, որ Դաշնակցութեան] շարքերում տեղի ունենայ անջատում: Թէ այս հոսանքի եւ թէ հակառակը պնդողների պատճառաբանութիւնները աւելի ճշտօրէն պատկերացնելու համար, առաջ ենք բերում մեր վերջին Շրջանային ժողովում (ներկայ էին 15 պատգամաւորներ 11 շրջաններից ընտրուած) առաջարկուած երկու բանաձեւերը, որ ասում է.

3. 3. Դաշնակցութեան Թիֆլիսի Շրջանային ներկայացուցչական ժողովը, որին ներկայ են եղել 11 շրջաններից ընտրուած 15 պատգամաւորներ, քննու-

թեան է ենթարկել 3. 3. Դաշնակցութիւնը երկու տարբեր կուսակցութիւնների բաժանելու հարցը եւ 11 ձայնով ընդդէմ 4-ի ընդունուած է մի բանաձեւ, որ դէմ է անջատման: Ահա այդ բանաձեւի բովանդակութիւնը.

«Ի նկատի առնելով, որ

1) 3. 3. Դաշնակցութիւնը հէց իր հիմնաւորութեան օրից յենուած է եղել հայ ժողովրդի գրեթէ 90 տոկոս կազմող աշխատաւոր մասսայի վրայ եւ 15 երկար ու ծիգ տարիներ հայկական արիւնոտ իրակաւնութեան մէջ առաջ է տարել իր յեղափոխական դրօշակը, ղեկավարուելով այդ մասսայի շահերի պաշտպանութեամբ եւ ընդհանուր ազատագրական պահանջով եւ իբրեւ այդպիսին լայն ազդեցութիւն տարածելով թէ Տաճկահայաստանում, թէ Կովկասում եւ թէ գաղութներում.

2) Որ տաճկահայի դատը իբրեւ ազատագրական մի շարժում ցանկալի ուղիով եւ միջոցներով առաջ տանել կարող են միայն իսկական յեղափոխական-սոցիալիստական տարրերը եւ ոչ բուրժուական կամ այլ կասկածելի, հայեցակէտ ունեցող գործիչներն ու դատարկ խօսքերով ազգասէր ու հայրենասէր ձեւացող բախտախնդիրները.

3) Որ տաճկահայկական ներկայ իրականութիւնը բաւականաչափ պատրաստի հող է ներկայացնում սոցիալիստական սկզբնական գործունէութեան համար եւ աւելի ստիպողական պահանջ՝ ընդհանուր ազատագրութեան.

4) Որ 3. 3. Դաշնակցութիւնը իբրեւ ճնշուածներին, հարստահարուածներին պաշտպանող սոցիալիստական մի կուսակցութիւն՝ անկարող է անտես առնել կովկասեան իրականութիւնը եւ անպաշտպան թողնել նաեւ իր այստեղի յենակէտի՝ հայ աշխատաւոր մասսաների շահերը:

5) Որ թէ կովկասեան գործունէութեան եւ թէ տաճկահայ դատի շահերի տեսակէտից աւելի քան ցանկալի է, որ 3. 3. Դաշնակցութիւնը անբաժան կերպով առաջ տանի այդ երկու դատերը, ղեկավարուելով սկզբունքային մի ծրագրով եւ տեղական պայմաններին յարմարեցրած տակտիկայով, ահա այդ բոլոր հիմունքներն ի նկատի առնելով Թիֆլիսի Շրջանային ժողովը գտնում է, որ 3. 3. Դաշնակցութիւնը ինչպէս վերջին տարիները, այսուհետեւ էլ պէտք է իբրեւ մի սոցիալիստական կուսակցութիւն պաշտպանէ աշխատաւոր դասակարգի շահերը թէ Տաճկահայաստանում, թէ Կովկասում եւ թէ այն բոլոր տեղերում, որտեղ կան հայ մասսաներ, միայն տեղի եւ ժամանակի պահանջների համեմատ ֆերդերատի հիմունք-

15.- Լուսանցքին վրայ նոյն ձեռագրով աւելցուած է. «Յոյց տալ նոյն-ստացակամը»:

16.- Լուսանցքին վրայ նոյն ձեռագրով աւելցուած է. «Մանրամասնութիւնները բանաւոր»:



ներով աշխատանքի որոշ բաժանում մտցնելով գործունեության ու ղեկավար մարմինների իրաւասութեան մէջ եւ անենալայն տեղ տալով տաճկահայկական ազատագրական շարժմանը իբրեւ մարդկային բնական ու տարրական իրաւունքների ձգտող մի շարժման»:

Փոքրամասնութեան բանաձեւը, որ ստացել է 5 ձայն ընդդէմ 10-ի, հետեւեալն է.

«Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ թիրքահայ իրականութիւնը թէ սոցիալական, թէ կուլտուրական եւ թէ քաղաքական տեսակետով տարբեր է Կովկասի իրականութիւնից:

Ի նկատի ունենալով, որ այդ դատերը վարուած են երկու պետութիւնների մէջ.

Ի նկատի առնելով, որ թիրքահայ շարժումը մինչեւ օրս եղել է եւ է ընդհանուր ազատագրական ուղղութեամբ սուլթանական ռեժիմի դէմ, այնպէս, ինչպէս ներկայումս մակեդոնական յեղափոխական շարժումն է եւ անցեալում բուլղարական, սերբիական եւ ուրիշ նման ժողովուրդների շարժումները.

Ի նկատի առնելով, որ այդ կարգի շարժումը երկրում կարող է յենուել գրեթէ բոլոր խաւերի վրայ եւ Կովկասում իր համակրանքը եւ գործօն աջակցութիւնը կարող է ստանալ գրեթէ բոլոր դասակարգերի կողմից.

Ի նկատի առնելով, որ մեր Կովկասեան գործունեութիւնը սոցիալիստական է, դասակարգային, ուղղութեամբ թէ մանր եւ խոշոր բուրժուազիայի եւ թէ ռուսական կառավարութեան դէմ.

Ի նկատի առնելով, որ Կովկասի աշխատաւոր մասսայի օժանդակութիւնը թիրքահայերի ազատագրութեան գործին կարող է լինել միայն կամաւոր:

Մենք Շրջանային ժողովի պատգամաւորներս զըստում ենք, որ աննպատակայարմար եւ անհնար է այդ երկու դատերը մի կուսակցութեան մէջ առաջ տանել:

Քանի որ Դաշնակցութիւնը իր հիմնուելու օրից գործել է թիրքահայ ազատագրական շարժման համար՝ այսուհետեւ էլ զբաղուելու է միայն այդ դատով: Դաշնակցութիւնը Կովկասում ունենալու է երկրի կոմիտեների կողմից ընտրուած իր պատասխանատու մարմինը, որը այստեղ կազմակերպելու է բարոյական, դրամական, ռազմական եւ այլ տեսակի օժանդակութեան ամբողջ գործը յօգուտ թիրքահայ դատի: Այդ մարմինը չէ ունենալու եւ ոչ մի մասնակցութիւն Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի քաղաքական եւ տնտեսական կողմին:

Նախագծի հիման վրայ վերջերս կազմակերպուած Ռուսաստանում ապրող հայ բանուորութիւնը եւ աշխատաւոր զինուորացիութիւնը կազմակերպում են իրենց դասակարգային սոցիալիստական կուսակցութիւնը աշխատաւորական սկզբունքի հիման վրայ»<sup>17</sup>:

*Այդպէս է արատայայտուել Շրջանային ժողովի տրամադրութիւնը Հ.Յ.Դ. ապագայի նկատմամբ: Գալով կազմակերպուած մասսաներին պէտք է ասել, որ նրանք բացասաբար են վերաբերուած շատման առաջարկին...*

**Ներկայացումներ**

Վերջացնելով տեղեկագիրը, աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել իբրեւ եզրակացութիւն եւ ամփոփումն առաջ բերած տեղեկութիւններին:

Մեր շրջանում թէ կազմակերպուած մասսան եւ թէ ժողովրդի ստուար մասը մի տեսակ սպասողական դրութեան մէջ է: Նա սպասում է որ Հ.Յ.Դ. ամենաբարձր օրգանը՝ Ընդհանուր ժողովը իր որոշումներով, ծրագրային ու տակտիկային վճիռներով վերջ տայ այս քաոսային վիճակին, որ ներկայումս տիրում է դաշնակցական շարժերում. զսպէ այն շահատակութիւնները, որոնք տեղի են ունենում մի խմբակի ձեռքով յանուն տաճկահայ դատի:

Բաւական անմխիթար կացութիւն է տիրում թէ դաւաճներում եւ թէ քաղաքում: Մի քանի միհրանականներ այս ու այն կողմ ընկած անզուսպ զրպարտութիւններ են տարածում դաշնակցական մարմինների ու գործիչների հասցէին եւ տեղ-տեղ նոյն իսկ բռնութիւններ կատարում մեր կողմնակիցների վերաբերմամբ:

Միւս կողմից սոց. դեմոկրատներն են սկսել ուժեղ պրոպագանդ, յոյս ունենալով, որ այդպիսի պայմանների ներքեւ, այդպիսի պառակտումների շնորհիւ դաշնակցական մասսան վերջ ի վերջոյ երես է դարձնելու իր այժմեան դրօշակից եւ սոց. դեմոկրատների գիրկն է նետուելու:

Ահա այդ բոլորն ի նկատի ունենալով սիրելի է մեզ յուսալ, որ ժողովը իր կոչման բարձրութեան վրայ կանգնած պէտք է ի դերեւ հանէ մեր հակառակորդների բոլոր յոյսերը եւ խոհեմութեան ու հեռատեսութեան լապտերը ձեռքին առաջ է տանելու իր աշխատանքները, ղեկավարուելով աշխատաւոր եւ ազատագրութեան ձգտող մասսաների շահերով:

Այդ դէպքում մեր շրջանի տասնեակ հազարաւոր քաղաքային բանուորութիւնը եւ մի քանի տասնեակ հազարաւոր գիւղացիութիւնը նորից շալկած Դաշնակցութեան արիւնոտ խաչը կը դիմէ դէպի ազատութեան Գողգոթան՝ միշտ աներկիւղ՝ հալածանքներից եւ անվրդով՝ հակառակորդների ստոր միտումներից:

Միայն թէ ցոյց տուէք նրան այդ ճանապարհը ձեր աշխատանքներով, ձեր որոշումներով...

17.- Թէ մեծամասնութեան եւ թէ փոքրամասնութեան բանաձեւերը տալագիր են տեղեկագրին մէջ, հաւանաբար վերցուած հրատարակուած շրջաբերական մը:

Փաստ. 251-28

**Ա 2.- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ Ա. ՆԻՍՍ**

1908 թ. Դեկտեմբերի 7-ին կայացաւ Մեծ քաղաքի շրջանային ժողովի առաջին նիստը, որին մասնակցում էին 10 ներկայացուցիչ՝ Կենտրոնից 1 մարդ, Տեղակալից -2, Լոռի -2, Ղազախ - 2, Թմբուկ - 1, Գորի - 1, Դուշէթ -1:

Ժողովը զբաղուեց Կենտրոնական Կոմիտէի առաջադրած հետեւեալ օրակարգով.

- 1. Կ.Կ.ի զեկուցում:
- 2. Ձեկուցում շրջաններից:
- 3.- Դաշինքը:

Առաջին եւ երկրորդ կէտերը քննութեան առնելուց յետոյ, երրորդ կէտը՝ դաշինքը քննելու գործը յանձնուեց մի մասնաժողովի, իսկ ժողովը անցաւ Ար(եւելեան) Բիւրոյի կազմած հարցերի քննութեանը:

Շրջանային ժողովը իր Թ-րդ նիստում մանրամասն քննութեան ենթարկեց մի շարք կարեւոր հարցեր եւ ի միջի այլոց զբաղուելով զատման<sup>18</sup> ինքնապաշտպանութեան հարցերով, հանեց հետեւեալ բանաձեւերը.

Ա. Ինքնապաշտպանութեան համար առաջարկուեցին 3 բանաձեւ.

1. Ի նկատի ունենալով հայ ժողովրդի աշխարհագրական եւ քաղաքական բացառիկ դիրքը,

Ի նկատի ունենալով, որ աշխատաւոր դասակարգի կուսակցութիւնը չէր կարող անտարբեր մնալ ժողովրդական աղէտների վերաբերմամբ,

Ի նկատի ունենալով, որ ինքնապաշտպանութիւնը պէտք է հասկանալ դիմադրութիւն խուլիզանական հոսանքի եւ կառավարութեան ոտնձգութիւնների դէմ

Հ. Յ. Դ[աշնակցութիւնը] իր կողմից պէտք է ղեկավարի հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը միլիցիական սկզբունքներով:

2. Հ. Յ. Դ[աշնակցութեան] Թիֆլիսի Շրջանային ժողովը քննադատութեան ենթարկելով ինքնապաշտպանութեան հարցը, այդ առիթով աչքի առաջ առնելով անցեալի փորձը, ներկայ իրականութիւնը եւ ապագայի ցանկալի հեռանկարը, եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է ինքնապաշտպանութեան գործը ամենալայն հիմքերի վրայ դնել արծարծելով եւ հնար եղածին չափ իրականացնելով ժողովրդական միլիցիայի գաղա-

փարը, վերացնելով վարձու զինուորութիւնը եւ դրանով իսկ դրդել ժողովրդին տեղական սեփական ոյժերով կազմակերպելու եւ ղեկավարելու ինքնապաշտպանութիւնը ընդդէմ խուլիզանական տարրերի եւ բռնակալութեան ոտնձգութիւնների:

Այդ միեւնոյն ժամանակ Հ. Յ. Դաշնակցութիւնը աշխատելու է ամէն տեղ արծարծել ազգերի համերաշխութեան գաղափարը եւ իբրեւ մի սոցիալիստական կուսակցութիւն զարգացնելու է աշխատաւոր մասսաների գիտակցութիւնը ընդդէմ շահագործող տարրերի, դրանով նպաստելով հարեւան ազգերի աշխատաւորների մերձեցմանը եւ բուրժուական-ֆէոդալական ազդեցութեան ջլատմանը եւ ազգային անդազոնիզմի<sup>9</sup> վերացմանը:

Բացի այդ բոլորից Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ մի յեղափոխական կազմակերպութիւն՝ գտելու եւ կազմակերպելու է իր որոշ ակտերի համար յատուկ մարտական խմբեր՝ իսկական յեղափոխական տարրերից:

3.- Ղեկավարուելով տեսականի տակտիկական մի շարք նկատումներով Շրջ. ժողովը գտնուած է, որ անհրաժեշտ է ժողովրդական ամբլայն խաւերում արծարծել միլիցիայի գաղափարը եւ ինքնապաշտպանութեան գործը դնել անկուսակցական հողի վրայ:

Ձայների մեծամասնութեամբ՝ Յ ընդդէմ 4-ի անցաւ երկրորդ բանաձեւը:

Առաջինը տարաւ 2 ձ. ընդդէմ 8-ի, իսկ IIIը 4 ձ.— 6-ի.

Բ. Ապա դրուեցին հետեւեալ երկու բանաձեւերը զատման հարցի շուրջը.

18.- «Ձատման» կամ «գաղտնական» որակումով կը հասկըցուէր այն մտայնութիւնը, որում կ'առաջադրուէր Կովկասի եւ ընդհանրապէս Ռուսիոյ տարածքին գործող դաշնակցական միաւորները բաժնել երկու անջատ խմբաւորումներու. մէկը՝ «սոցիալական» ուղղութեամբ, որ գործօն մասնակցութիւն պիտի ունենար համառուական քաղաքական եւ ընկերային շարժումներու, միւսը՝ գոտ մարտական, նուիրուած զինման եւ ինքնապաշտպանութեան գործին:

Դժբախտաբար անաւարտ է արձանագրութիւնը. արխիւներում մէջ չեն գտնուիր նաեւ յաջորդ նիստերու ատենագրութիւնները:

Ա 3.- ՏԵՂԵԿԱԳԻՐ ԹՄԲՈՒԿԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ<sup>22</sup>

Կոմիտէ բաղկացած է 15 [խմբից]
Ենթակոմիտէ 75 [անդամից]

ԽՄԲԵՐ ՔԱՂԱՔՈՒՄ

Քաղաքական

Մայր խումբ 13 անդամ
Արշալոյս 8
Կտրիչ 8
Փայլակ 7
Կայծակ 7

Արհեստակցական

Ուսուցիչներ 18
Ջրկիրներ 12
Դաղդաճիներ 17
Խոհարարներ 20

Մարտական

Մարտիկներ 6

ԳԻՒՂԱԿԱՆ

Կազմակերպուած են 25 գիւղ.

- 1) ՏիւիՖ 108 Հոգի
2 Աբուլ 48
3) Մարահարթ 52
4) Գիւլի 105
5) Փոկայ 128

- 6) Օրճայ 35
7) Մեծ Կարգախ 54
8) Փոքր Արակալ 30
9) Հարկայ 201
10) Մեծ Արակալ 60
11) Մաճատիայ 90
12) Փոքր Կարգախ 40
13) Խանտո 225
14) Արագվա 154
15) Սուլտայ 130
16) Կուլիկամ 110
17) Գանձայ 227
18) Խոտճաժիկ 68
19) Կորդ 90
20) Գոման 80
21) Թակչայ 13
22) Մեծ Գեօնդուրայ 85
23) Փոքրը » 70
24) Մամզարայ 50
25) Գետափ 160

Գումարն է 2090 Հոգի

Ի դիմաց Թմբուկի կոմիտէի ԴԱՐԲԻՆ

24 Դեկտեմբերի 1907 թ. Թմբուկ

22.- Թմբուկը ժածկանունն է Ախալքալաքի շրջանին, որ Գ. Ընդի. ժողովին մաս կը կազմէր Քար-Ալեքսանդրապոլ Կ. Կոմիտուբեան, այնուհետեւ անցաւ Թիֆլիսին:

Ա 4.- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՇՐՋԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Ընկերներ!

Նոյեմբերի 4-ին նշանակած Շրջանային ժողովը եւ կենտրոնական կոմիտէի ընտրութիւնը չկայացան, որովհետեւ համապատասխան թուով պատգամաւորներ չէին եկել:

Նշանակելով նորից Շրջանային ժողով առաջիկայ Դեկտեմբերի 24-ին կենտրոնական կոմիտէի վայրում, խնդրում ենք Ձեզ անպայման ուղարկել Ձեր պատգամաւորները:

Պատգամաւորների ընտրութիւնները պէտք է կատարել հետեւեալ կերպով.

1) Շրջանային ժողովի պատգամաւորների ընտրութիւններին մասնակցում են այն դաշնակցականները, որոնք մտնում են որեւէ դաշնակցական միութեան կամ խմբի մէջ, ընդունում են կուսակցութեան ծրագիրը եւ տակտիկը եւ որոշ զոհաբերութիւն են անում կազմակերպութեան օգտին:

2) Կազմակերպուած վայրերը ընտրում են ամէն հինգ հարիւր դաշնակցականների կողմից մի պատգամաւոր:

3) Այն վայրերը, ուր կազմակերպութիւնը չի համապատասխանում այս շրջաբերականի 1-ին կէտին, բայց կան դաշնակցական տրամադրութիւն եւ որոշ թուով դաշնակցական ընկերներ, ընտրում են մի մի պատգամաւոր: Այդ դէպքում ընտրութիւններին մասնակցում են դաշնակցական ընկերները:

4) Եթէ մինչեւ ընտրութիւնների օրը Յրդ կէտում ցոյց տրուած վայրերը կազմակերպուին համաձայն կանոնադրութեան, կարող են մասնակցել ընտրութիւններին այս շրջաբերականի 2-րդ կէտի համաձայն:

5) Ընտրութիւնները կատարւում են ուղղակի իսկ եթէ տեղական պայմանները այդ թոյլ չեն տալիս՝ պէտք է վարուել այդ պայմանների համաձայն:

6) Հաշուում են կազմակերպուած թիւիլիզ, Ախալքալաքի շրջան, Լոռուայ մի մասը, Գորու, Թեւաւի եւ Սղնախի շրջանները: Այս շրջաբերականի 3-րդ կէտին համապատասխանում են հետեւեալ վայրերը. Ղազախ, Շամշադին, Բորչալու, Լոռուայ միւս մասը եւ Ախալքալաքի շրջան:

Շրջանային ժողովի օրակարգը:

- 1) Կենտրոնական կոմիտէի ընտրութիւնը:
2) Հաշուետուութիւն տեղական եւ կենտրոնական:
3) Կազմակերպութեան ներկայ դրութիւնը եւ նրա ապագայ զարգացումը:
4) Արհեստակցական միութիւնները եւ քաղաքական ու մարտական խմբերը:
5) Ռայոնական ժողովի պատգամաւորի ընտրութիւնը:
6) Այլ եւ այլ ընթացիկ հարցեր եւ առաջարկներ շրջանի կողմից:

Պատգամաւորը պէտք է ներկայացնէ Շրջանային ժողովին իր շրջանի դրամական հաշիւը, տայ զեկուցում շրջանի կողմից եւ ունենայ գրաւոր մանդատ իր ընտրութեան մասին:

Խնդրում ենք օրակարգում յիշուած հարցերը քննութեան առնէք ընտրողական եւ այլ դաշնակցական ժողովներում, զեկուցելով դրա մասին Շրջանային ժողովին Ձեր պատգամաւորի միջոցով:

Ընկերական բարեկեցութիւն
I ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

24 Նոյեմբերի 1907 թ.

Ա 5.- ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

| <u>ՆԱՀԱՆՑՆԵՐ</u> |           | ԵՐԵՒԱՆ    | 555.000 |
|------------------|-----------|-----------|---------|
| ընդհանուր        | հայեր     |           |         |
| Թիֆլիս           | 1.200.000 | 311.000   |         |
| Գանձակ           | 1.050.000 | 305.000   |         |
| Երեւան           | 1.000.000 | 555.000   |         |
| Կարս             | 330.000   | 93.000    |         |
| Բաթում           | 110.000   | 18.000    |         |
| Արդուին          | 87.000    | 9.800     |         |
| Սուխում          | 130.000   | 8.000     |         |
| Սեւ-Մով          | 100.000   | 8.200     |         |
| Բուխարա          | 1.000.000 | 3.000     |         |
| Բազու            | 1.000.000 | 85.000    |         |
| Ջաբաթալա         | 95.000    | 2.500     |         |
| Դաղստան          | 650.000   | 3.100     |         |
| Ընդամենը         | 6.722.000 | 1.461.600 |         |

| <u>ԳԱՒԱՌՆԵՐ</u>       |         |
|-----------------------|---------|
| <b>ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆՑ</b> | 311.000 |
| 1. Թիֆլիս             | 105.000 |
| 2. Ախալքալաք          | 87.500  |
| 3. Ախալցխա            | 23.200  |
| 4. Բորչալու           | 62.000  |
| 5. Գորի               | 25.000  |
| 6. Դուշէթ             | 3.800   |
| 7. Սղնախ              | 11.500  |
| 8. Թելալ              | 12.000  |
| 9. Թիոնէթ             | 1.000   |
| <b>ԳԱՆՋԱԿ</b>         | 385.000 |
| 1. Գանձակ             |         |
| 2. Արէշ               |         |
| 3. Ջաբրայիլ           |         |
| 4. Ջիւանչիր           |         |
| 5. Ջանգեզուր          |         |
| 6. Ղազախ              |         |
| 7. Նուխի              |         |
| 8. Շուշի              |         |

| <u>ԲԱԹՈՒՄ</u>   |        |
|-----------------|--------|
| Բաթում          | 20.000 |
| Արդուին         | 9.800  |
| <b>ՍՈՒՆՈՒՄ</b>  |        |
| Սուխում         | 8.000  |
| <b>ՍԵՒ-ՄՈՎ</b>  |        |
| Սեւ-Մով         | 8.200  |
| <b>ՋԱԲԱԹԱԼԱ</b> |        |
| Ջաբաթալա        | 2.500  |
| <b>ԲՈՒԹԱՅԻՍ</b> |        |
| Դաղստան         | 3.100  |
| <b>ԲԱԳՈՒ</b>    | 85.000 |
| 1. Բազու        | 47.300 |
| 2. Գեօզայ       | 16.150 |
| 3. Ջելադ        | 900    |
| 4. Ղուբա        | 1.800  |
| 5. Լենքորան     | 650    |
| 6. Շամախի       | 42.000 |

Բ.

ՇԱՄ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ ԼԵՌՆԱՊԱՐԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆԻԹԻՒՆՆԵՐ

Փաստ. 666-2

Բ 1.- ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ 1906 ՓԵՏՐ. 16

Վաստապուրականի Կ. Կոմիտեի այս տեղեկագիրը ուղարկւած է Գ. Ընդհ. Ժողովին, որ, ինչպէս գիտենք զամառուցաւ տեղի ունէր ուղի տարի մը ետք 1907 թ. Փետրուար 22ին, եւ ուր Վաստապուրականի Հ. Յ. Դաշնակցութիւնը պիտի ներկայանար իր զոյգ Կեդր. Կոմիտեի Գանձակի Եւ Լեռնապարի պատգամաւորներով, Արամ Մանուկեան եւ Իշխան (Նիկոլ Օտապուշեան):

Փաստաբարձը կը գրաւ նամակի միջակ չափի 35 էջ. առաջին էջին գուլար փորձուած է «Լեռնոյ Մելոյեանի ձեռագիրն է»: Արդարեւ գրութեան ոճը եւ արտայայտուած մտքերը, ճիշդ է քիչ մը շատ յախտոն եւ չափազանցօրէն քննադատական, կը կրեն նրբաւարտ գարծիչին տնձնական գրոշմը:

Ընդհանուր Ժողովին

Ընկերներ!

Մեր շրջանից Ընդհանուր Ժողովին ինչպէս գիտէք ներկայանալու են երկու ընկերներ՝ Կոմս եւ Թորգոմ: Թէեւ նրանք լաւ ծանօթ ենք շրջանի պարագաներին, այնու ամենայնիւ կարիք ենք զգում մի համառօտ տեղեկագիր ուղարկելու գործերի այժմէութեան մասին, այն նկատուածով, որ ընկերներից առաջինը՝ Կոմս վաղուց հեռացած լինելով շրջանից (չուտով տարին կը լրանայ) դիւրութիւն չունի գործերը իւր ներկայ դրութեամբ ձեռնարկելու, իսկ երկրորդը՝ Թորգոմ, թէեւ երկրից հեռացաւ վերջին օրերը, բայց այդ հեռացումը եւ Ընդհ. Ժողովի հրաւերը այնքան յանկարծակի էին, որ անհնար եղաւ երկրի (շրջանիս) բոլոր ընկերների միասին հաւաքումը եւ մի կողմից ընկերակցական տպաւորութիւններին ամփոփումը եւ ընկերակցական խորհրդակցութիւնը: Ուստի միայն բաւականացանք նամակներով համաձայնութեան գալ եւ նրան իսկոյն ճանապարհ դնելու ու շարունակելու անկարելի էր, որովհետեւ չուտով պիտի գործը փակուէին եւ նա վերջնականապէս պիտի զրկուէր ժողովին ներկայանալու բախտից:

Այժմ ընդարձակ տեղեկագիր կազմելու ոչ ժամանակ ունինք եւ ոչ դիտաւորութիւն. մեզ ընդամենը երկու ամիս ժամանակ էլ չտուէր որ կարողանայինք աւելի մանրամասն եւ կոնգրէտ կերպով ներկայացնել իրերի իսկական դրութիւնը: Այս անգամ բաւականանալու էք այս համառօտ տեղեկութիւններով:

Կազմարների եւ կազմակերպողների ու ինտելիգենտ ուժերի չի կարող առաջ քայլել: Այդ կողմից աւելի պահանջկոտ է Շամիրը եւ իւր շրջանը: Յեղափոխական պատմական անցեալը այնպէս է դասաւորուել, որ այստեղ առանց դրսի ղեկավար ընկերների գործը յեղափոխական բարձրութեան վրայ չի կարող կանգնել: Պատճառների մէջ մտնելու ժամանակ չունինք, միայն երեւոյթն ենք ընդգծում: Պետոյից սկսած մինչեւ այժմ մեր գործերը այն ժամանակ է յաջողութեամբ եւ թափով առաջ գնացել, երբ ունեցել ենք դրսերի ազդեցիկ ու փորձուած ընկերներ, իսկ երբ դրանք բացակայել են, գործունէութիւնը հաւասարուել է գերոյի: Արմենականները որ միշտ հակառակ են եղել դրսեցիներին թէ անցեալում եւ թէ ներկայում, իրենց խմբերին կերակրել են դրսեցի փախստական ներկայացուցիչների հեռանդկարներով: Պատմական պայմանները, կրթութիւնը, սեպհականութիւնն ունենալը այնպէս են դասաւորել պարագաները, որ երկիրը իր միջից չի կարողացել ինտելիգենտ կազմակերպող ուժեր արտադրել (զինուորական ուժերի վերաբերմամբ բացառութիւն է կազմում) եւ կամայ թէ ակամայ դրսեցիք են միշտ ասպարէզ եկել: Այդ իսկ պատճառով մեր ամենավէրջտու կողմը եղել է ղեկավար ինտելիգենտ ուժերի բացակայութիւնը: Որպէսզի գործը կանոնաւորուի, որպէսզի երկիրը եւ ժողովուրդը կարողանայ իւր ուժերի մակսիմալը զոհաբերել յեղափոխական Ս. սեղանի առաջ, հարկաւոր է որ երկրում մենք ունենանք տաղանդաւոր ինտելիգենտ եւ

Ա. ԿԱԶՄ. ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ինչպէս որ ամենահասարակ մեքենան առանց մեքենավարի չի գործի, այնպէս էլ երկրի գործը առանց ղե-

1.- Պետո՝ Աղեքսանդր Պետրոսեան եղած էր Վաստապուրականի առաջին կազմակերպիչներէն 90ական թուականներուն: 1896ին արմենական Աւետիսեանի եւ հնչակեան Մարտիկի հետ ղեկավարած է Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնը եւ անոնց հետ նահատակուած դէպի պարսկական նահանգի ընթացքին: Կոմսը Վահան Փափագեանն է, իսկ Թորգոմը՝ Տեղտրիկեան Թոնս:

ղեկավար ուժեր եւ ոչ մեզ պէս սովորական մահկանացուներ: Մեր պատմական ցաւերից մէկն էլ այն է, որ անցեալ ընկերները միշտ աւելի ձեռնհաս եւ տաղանդաւոր են եղել քան յաջորդները:

Բաւական է ներկայ ընկերներին խարակտերիստական<sup>2</sup> ներկայացնել արդէն պարզ կը լինի վերոյիշեալ պարզ ճշմարտութիւնը: Մենք կ'ուզէինք Ընդհանուր ժողովին ներկայացնել մեր ուժերը իր իսկական գոյներով, որ նրանք կարողանային ուժերը եւ գործերը այնպէս դասաւորել, որ այս կամ այն շրջանը չտուժէ եւ ներդաշնակութիւնն էլ գործից չվերանայ:

Ա.- Տիրգրան սարուստանցի է՝<sup>3</sup> կրթութիւնը ստացել է հայոց միջնակարգ դպրոցներում, եղել է Ռուսաստանում, մի քանի ամիս եղել է Վրէժի<sup>4</sup> շրջանում եւ անմիջապէս անցել է Երկիր, տարին արդէն անցաւ Երկիր մտնելուն:

Բ.- Արամ<sup>5</sup> սարուստանցի է, կրթութիւնը ստացել է հայոց միջնակարգ դպրոցներում, եղել է Զրաբերդի<sup>6</sup> շրջանում մի քանի ամիս: դրանից յետոյ անմիջապէս անցել է Երկիր: ընդամէնը 10 ամիս է Երկիր մտնելը:

Գ.- Թաթուլ: բնիկ շամեցի<sup>7</sup> է տարրական կրթութեան տէր արհեստաւոր: Վազգէնի ժամանակակից է եւ նրանից յետոյ Դաշնակցութեան լաւ աւանդապահներից մէկն է: Թէեւ անձնագրութեան եւ գործին օգտակար լինելու բոլոր ձգտումներն ունի, բայց անկարող է առանց ղեկավար ուժի գործ կատարել:

Դ.- Մենիկ: Հին արմենական է: Նրանց օրով բաւական գործ կատարել է եւ արհեստաւոր դասակարգի մէջ բաւական համարում ունի, սովորական կրթութեան տէր արհեստաւոր է: ձեռքի տակ շատ օգտակար գործ կարող է կատարել: առանց ղեկավար ուժի կանոնաւոր գործ կատարել անկարող է:

Ե.- Նիկոլ: արհեստաւոր է, բաւական մաքուր զգացմունքների տէր տղայ, առանց խորհուրդների եւ հրահանգների բան չի կարող կատարել:

Զ.- Սուրէն՝ միսինարական-բողոքական կրթութիւն ստացած մի երիտասարդ տղայ է: Կ. Կոմիտէի տրամադրութեան տակ շրջիկ է գիւղերում: առայժմ յեղափոխական գործի աշակերտ է:

Է.- Յարութիւն՝ եկել է Ամերիկայից: Եղել է ամերիկեան բանակի կամաւոր, մասնաւորապէս գիտէ խմորային եւ խնձորային<sup>8</sup> գործողութիւններ: գինուորական մի տասնեակի տեսնապետ է: գիւղերում շրջիկ պրոպագանդիստի դեր է կատարում: կրթութիւնը շատ սովորական է: գործի մէջ առաջ գնալու մեծ տրամադրութիւն ունի: Եթէ հնարաւոր լինէր շրջիկութեան պաշտօնը (աւելի ձեռնհասը չկայ) նրանից վերցնել՝ նա գիւղերում կամաւոր խմբեր կազմակերպելու եւ վարժեցնելու գործում մեծ դեր կարող էր կատարել եւ շատ աւելի շահաւէտ կը լինէր:

Առայժմ Շամուկ<sup>9</sup> եղած ռեզուլեատոր<sup>10</sup> ուժերը

սրանք են հետեւեալ գինուորների հետ:

ա.- Զաման-խան Պուրակցի՝ մեր հին գինուորներէն, հաւատարիմ եւ կտրիճ գինուոր է, եղել է մի քանի դէպքերում: Վերջին տարին Պուրակի տասնեակի տասնապետ էր:

բ.- Միհրան — պուրակցի՝ Բարձրաւանդակի<sup>11</sup> գինուորներէն է, վերջին տարին եղել է Պարսկ(աստան)-մասնակցել է Բարձր(աւանդակ) կռիւներին:

գ.- Ռուբէն<sup>12</sup>՝ Սարուստանէն է եկել, տաճկաստանցի է, ընդամէնը մի քանի ամիս է գալը:

դ.- Աւետիս՝ թեհրանցի է: մի քանի ամիս է Երկիր գալը:

ե.- Ամի՝ շամեցի է, մի տարուց աւելի է որ գէնքի տակ է, սովորական գինուոր է:

զ.- Արիս՝ շամեցի է, մի երկու ամիս է որ գէնքի տակ է, մի անակնկալով սպանուեց:

Եւ մի քանի գործակատարներ:

Ահա սրանք են փախստական եւ կիսափախստական ընկերները, որոնց մեծ մասի ամբողջ զբաղմունքը յեղափոխական գործն է:

Սրանից դուք տեսնում էք, որ մենք ամէնից առաջ կարիք ունենք ղեկավար ինտելիգենտ ուժերի, կիսաինտելիգենտ գինուորական ուժերի՝ տասնապետութեան եւ շրջիկութեան համար:

Զինուորների թիւը այս տարի հասցրինք մինիմումի, եթէ կ'ուզէք՝ գերոյի այն պատճառով՝ որ խոստացուած նիւթական ու բարոյական օժանդակութիւնը արտասահմանէն չստացանք, մենք էլ անկարող էինք պարտքերով գինուորներ պահել կամ գործունէութեան շրջանները լայնացնել: Որովհետեւ առանց պատրաստութեան եւ ղեկավար ուժերի՝ այդ կը լինէր մի աւելորդ աշխատանք:

Պատկերը կատարեալ դարձնելու համար՝ աւելացնենք եւ այն որ ընդհանուր գործերի կարգադրման եւ որոշման դէպքերում միշտ խորհրդակցել ենք Լեռնա-

- 2.- Յատկանիշ, բնորոշ նկարագիր:
- 3.- Սարուստան՝ կուսակցական ծածկանունն էր Ռուսաստանի, սարուստանցի գործածուած է ռուսահայ կամ արեւելահայ իմաստով: Իսկ Տիգրանը կողքիցի էր, որ յետագայից գործեց Տարոնի մէջ Վարդան կոուճով:
- 4.- Վրէժ ինչպէս ծանօթ է Ատրպատականի Դ.Յ.Դ. կազմակերպական շրջանն է:
- 5.- Արամ Մանուկեան:
- 6.- Կարսի շրջանի կուսակցական ծածկանունը:
- 7.- Այսինքն՝ վանեցի, վասպուրականցի:
- 8.- Պայթուցիկի եւ ձեռնառումի:
- 9.- Շամ, Շամիր եւ Շամիրամ՝ Վասպուրականի Դ.Յ.Դ. կազմակերպութեան ծածկանուններն են:
- 10.- Կարգաւորիչ:
- 11.- Սասունի:
- 12.- Ռուբէն Տեր Միսասեան, որ նախքան Տարոն-Սասուն անցնիլը՝ գործեց Վասպուրականի շրջանին մէջ:

պարի Կ. Կոմիտէի ընկերների հետ: այդ հողի վրայ դիւրութիւններ ունինք եւ գործողութեան շատ կէտերով միացած ու համերաշխութեամբ ենք գործում:

Չպէտք է մոռանալ եւ մի ուրիշ պարագայ, թէ քաղաքում եւ թէ գիւղերում: բացի վերոյիշեալ փախստական եւ կիսափախստական ընկերները, մենք ունենք լեզալ բազմաթիւ ընկերներ եւ գործիչներ, որոնց աշխատանքով եւ գործունէութեամբ է որ կատարուում է մեծ մասամբ գործի ու աշխատանքի մեծ մասը՝ բայց դրանք առանց վերոյիշեալների չեն կարող գործ կատարել:

**Բ.- ՄԻԱՍԵԱՅ ԳՈՐԾՈՒԵՆՈՒԹԻՒՆ**

Այս տարի, ինչպէս գիտէք Երկիր համար սեւ տարի էր շնորհիւ Սարուստանի դէպքերին: Այդտեղ անակնկալ կերպով առաջ գալով հայ թուրքական ընդհարումները կազմակերպութիւնը իր ուժերի՝ ուղղական ընկերների, դրամական մակախմայր կենտրոնացրեց այնտեղ, որով ի սպառ մոռացութեան տրուեց Երկիրը: Եւ եթէ որեւէ նպաստ եղել է՝ այդ էլ շնորհիւ նրան որ նախքան ընդհարումներն ուղարկուած սահմանազրուիները եւ կամ Կոմսը անձնականապէս աշխատել են մեր մինիմալ պահանջներին բաւարարութիւն տալ: Այս բոլորով չենք ուզում մեղադրել Սարուստանի մեր ընկերներին, թէեւ մեղադրելու հիմքեր ունինք, այլ կ'ուզէինք ձեռք ներկայացնել այն տառապանքները, որ մենք քաջել ենք շնորհիւ անորոշութեան եւ տարտամ խոստումների ինչ ներշնչել են մեզ մասնաւոր ընկերները եւ այս կամ այն մարմինները իրենց նամակներով: խոստումներ՝ որ իրականապէս մնացին նամակների մէջ: Երկրում ապրող ընկերով համար պարզ մերժումը աւելի մեծ միսիթարութիւն է, քան տարտամ յոյսերով ապրել եւ ապա յուսախաբ լինելը: Բացի հոգեբանական կողմից կայ եւ օգտակարութիւնն ու շահը: եթէ մենք միանգամընդմիջտ մեր յոյսը կտրէինք արտասահմանից թերեւս հնարաւորութիւն ունենայինք մտածելու այլ դիւրութիւնների եւ ծրագիրների մասին, իսկ այս տարի այդ չեղաւ ու չեղաւ...

Այս իսկ պատճառներով այս ամբողջ տարին ոչ դիւրութիւն եւ ոչ հնարաւորութիւն ունեցանք մտածելու ձեռնարկների կամ ձեռնարկային ծրագիրների մասին: Այս տարի մեր գործունէութիւնը մեծ մասամբ դարձել է հետեւեալ խնդիրների շուրջը:

ա.- Կազմակերպութիւնները: բ.- ինքնապաշտպանութեան գործը: գ.- Ժողովրդական դատեր, տնտեսութեան բարելաւումը, վաշխառուական գործողութիւնների եւ թալանների չէզոքացումը: դ.- Փոխադրութեան, սուրհանդակ(ային) եւ արտասահմանի ընկերների հետ յարաբերութեան խնդիրը եւ ե.- պրոպագանդա:

ա.- Կազմակերպութիւններ: Անցեալ տարուայ կազ-

մակերպութիւնները այնքան լայն շրջաններ են ընդգրկել, որ այս տարի համարեա բաւականացանք միայն եղածները պահպանելով եւ ամրապնդելով, եթէ չհաշուենք մի քանի նոր շրջաններ, որ այս տարի նոր կազմակերպեցինք տեղափոխութեան եւ դրան կից ուրիշ գործողութիւնների համար: Աշխատանքը դիւրացնելու եւ տեղական ուժերին ինքնաշխատութեան վարժեցնելու համար թէ անցեալում եւ թէ այս տարի աշխատեցինք կազմակերպել ենթակոմիտէներ եւ նրանց յանձնել որոշ գիւղական շրջաններ: Ենթակոմիտէները առհասարակ զբաղուել են ըստ կարողութեան, շատ անգամ Կ. Կոմիտէի հրահանգներով: գիւղերում եւ խմբերում եղած վէճերը կարգադրելով, գիւղական դատերը վերջացնելով, վաշխառութիւնը հալածելով, գէնքի դրամ գանձելով եւ իրենց շրջանի նորութիւնների մասին պարբերաբար գեկուցումներ ուղարկելով Կ. Կոմիտէին, սրա վրայ աւելացնելու էք եւ պրոպագանդի գործը թէ գործով եւ թէ խօսքով եւ թէ գրքերով ու թերթերով: Առհասարակ գիւղական կազմակերպութիւնները լինում են համայնական: գիւղում կազմակերպութիւնից դուրս ոչ ոք չի մտնում: Դրան կից ամէն գիւղում կան երիտասարդական խմբեր, որոնք ենթարկուում են այն դիւստիպլինական շարժուն խմբեր եւ պէտք է շարժուին Կ. Կոմիտէի հրահանգներով: Այս տարի առանձնապէս ուշ դարձրինք այդ խմբերի կանոնաւորման, գինավարժութեան եւ նշանաձգութեան: Բոլոր շրջաններում անհնար եղաւ հաւասար կերպով առաջ տանիլ այդ գործը: աւելի լայն եւ կանոնաւոր եղաւ Շամի եւ շրջանը գտնուած արուարձանների եւ գիւղերի խմբերի գործը: Գիւղերում այս տարի անհամեմատ մեծ գործ կը կատարուէր (որովհետեւ կառավարութիւնը կամ քնած էր կամ այդպէս էր ձեւացնում) եթէ մենք ունենայինք եղածներից զատ գոնէ երկու կիսաինտելիգենտ գինուորական տասնապետներ, բայց չեղաւ ու չեղաւ... Թէեւ այս մասին գրեցինք արտասահմանի բոլոր վայրերի մարմիններին ու ընկերներին: Մի փոքրիկ բացատրութիւն էլ այս տարի մենք դրական կերպով մերժեցինք ընդունիլ Պարոյրին<sup>13</sup> եւ նրա գինուորներին՝ այն նկատմամբ, որ երկիրը խաղաղ մնայ, կազմակերպուի եւ ուժ կենտրոնանայ, իսկ դրա համար կարելու էր ինտելիգենտ, կազմակերպող եւ ոչ թէ գինուորական մասնաւանդ անլանի ուժեր: Նոյն տակտիկով շարժուելու ենք եւ առաջիկայ տարին: Դրան կից մենք պնդել ենք եւ պիտի պնդենք, որ առանց նախապէս մեզ հետ համաձայնութեան գալու ոչ մի մարմին իրաւունք պիտի չունենայ մարդ

13.- Պարոյրը ծածկանունն է Անդրանիկի, որ Սասնոյ ապրտամբութենէն ետք Վասպուրականի վրայով անցաւ Ատրպատական:



ուղարկել ներս Առանց նախապէս եկող ընկերների բնաւորութեան, ուժերին ծանօթ լինելու մենք ոչ ոքի չենք ընդունի- այդ կերպ միայն կարող ենք գործ կատարել: Հակառակ պարագային մենք պատրաստ ենք մեր տեղը թողնելու ուրիշ ընկերների եւ մի այլ վայր քաշուել, միայն թէ գործը չտուժէ...

Այս տարի, քաղաքակերպութեամբ մանաւանդ Դաշնակցութեան դրօշ տակ մտնելու տրամադրութիւնը անհամեմատ բարձր էր քան երբեւիցէ: Ժողովուրդը յուսահատելով բոլոր կուսակցութիւններից միակ կենդանի կուսակցութիւնը երկրում գտաւ «Դաշնակցութիւն» եւ իւր ամբողջ յոյսը դրեց նրա վրայ (վա՛յ մեզ եթէ չկարողացանք արդարացնել նրա յոյսերը): Այս բանին քիչ չնպաստեց եւ Սարուստանի դէպքերը: Թէ մասնաւոր նամակներ, թէ գաղթական եկողները ժողովուրդի մէջ հրաշքներ էին պատմում «Դաշնակցութեան» յաջողութիւնների մասին վերջին դէպքերի ժամանակ: այդ լուրերը մի տեսակ վարակեցին բոլոր շրջանները եւ խանդավառեցին ժողովուրդը, որը աւելի իւր դրացու ստին է հաւատում քան մեր ճշմարտութեան: Ամենախռով վայրերից, ամենահեռու եւ քրտորով բնակեցւած տեղերից խնդրագրեր եւ աղերսանքներ է թափուում իրենց մօտ գնալու եւ կազմակերպելու մասին...

Այսպէս էր քաղաքակերպութիւնը գաւառում: Շամուկ էլ թէեւ շարժում է սկսել յօգուտ «Դաշնակցութեան», բայց այստեղ այն չափով չկարողացանք գործերը լայնացնել եւ եղածները կանոնաւորել ինչ մեզ վիճակուեցաւ գաւառում:

Գաւառացիներ իբրեւ նահապետական հայեացքների տէր ժողովուրդ, այն չափով չէ կարող քննադատել մեր այս կամ այն քայլերը, ինչքան շամեցին: Գաւառում սովորական մտաւորականով կարելի է ազդել ժողովուրդի վրայ, նրան ոգեւորել: Մանաւանդ զինուած խմբերի ներկայութիւնը, ամբողջ համայնքի կազմակերպուելը, վճիռների եւ կարգադրութիւնների անմիջական կերպով գործադրելու դիւրութիւնը՝ ամէն կերպ նպաստել են եւ նպաստել են գաւառի աւելի շատ եւ աւելի լաւ կազմակերպելուն եւ գործելուն:

Ուրիշ բան է շամեցին, նա փորձուած է եւ միակողմանի կրթութեան տէր: նա իւր օրիգինալ փոխտփայլական հայեացքներն ունի կեանքի խնդիրների վերաբերմամբ: մինչեւ որ շարժումները եւ խնդիրները չհամապատասխանեն իր այդ հաճոյքներին նա չի ենթարկուի: Ուրեմն Շամուկ յաջողութիւն ունենալու համար, մենք ունենալու ենք աւելի մտաւորականներ՝ քան ունենք: Եղածները անկարող էին որեւէ գործ կատարել այդ ուղղութեամբ մանաւանդ եւ այն պատճառով, որ սեւ աշխատանքը այնքան շատ էր, որ անկարող էր ազատ ժամանակ գտնել եւ պրոպագանդով զբաղուել:

բ.- Ինքնապաշտպանութեան խնդիրը: Երկրի գա-

նազան վայրերում տեղի ունեցած դէպքերի ժամանակ ժողովուրդը միշտ կրաւորական կոտորուողի ու թաւանուողի դեր է ստանձնել: մենք միշտ մոռացել ենք կամ դիւրութիւն չենք ունեցել մտածելու ժողովուրդի անձնապաշտպանութեան խնդրի մասին: Բայց վերջին անյաջող դէպքերը, Սարուստանի<sup>3</sup> փայլուն օրինակները, այն պարզ ճշմարտութիւն բերաւ մեզ, որ առանց ժողովուրդական լայն շրջանների ազատագրման եւ զինուորագրման մենք մեծ յաջողութեան երբեք չենք կարող հասնել: ուստի մեր առաջնակարգ հարցերից մէկը եղաւ եւ լինելու է ժողովուրդի ինքնապաշտպանութեան խնդիրը, որի վերաբերմամբ կազմակերպութեան դերը միայն ձեռնարկողի, ղեկավարողի, վարժեցնողի եւ գտնողի մէջ պիտի լինի: գոհողութիւն անողը ինքը ժողովուրդն է եղել եւ պիտի լինի:

Չնայած արտաքին աննպաստ պայմաններին, Սարուստանի դէպքերի պատճառով արդէն գիտէք որքան թանգացաւ գէնքերի գինը, այստեղի ժողովուրդական գէնք մատակարարողը եղել է մինչեւ այժմ Պարսկաստանը, իսկ թէ Պարսկաստանից գէնքերը դէպի ո՛ր էին գնում եւ որքան թանգ էին ծախուում այն էլ յայտնի էր բոլորին: սրա վրայ աւելացրէք նաեւ վերջին տարիների պարբերական սովերը, որ խեղճ ժողովուրդին հալումաշարաւ,- բայց եւ այնպէս սպասածից աւելի գործ կատարուեցաւ: Դժբախտութիւնն այն է, որ գնուած բոլոր հրացանները պակասութիւններ ունին: Առանց կանոնաւոր վարպետ ունենալու կամ առանց բազմաթիւ մասեր ստանալու նրանք չպիտի այն յաջողութիւնը ունենան ինչ սպասում ենք: Եթէ սրա վրայ աւելացնենք եւ մի այլ պարագայ՝ պատկերը աւելի կատարեալ կը լինի: Այստեղ գնուած գէնքերի հետ համարեա թէ ծայրեր չի լինում: քիւրտն ու տաճիկը ուրախութեամբ իր գէնքը կը ծախէ հային, բայց փամփուշտը երբեք, պարզ ու հասկնալի պատճառով: Չէնքը լաւ գնով ծախելով փոխարէնը աւելի էժանը կարող է ձեռ բերել, իսկ փամփուշտը ոչ մի տեղ էլ չի գտնի: Մեր եւ արտասահմանի ընկերների ամենամեծ հոգսերից մէկը լինելու է ժողովուրդական գէնքերի համար փամփուշտ ձեռ բերել հէնց իւր՝ ժողովուրդի դրամով: կեղծ ու իսկականին նայելու չէ: մանաւանդ ուժ տալու է գիլգիներ<sup>4</sup>, լաւ վառօդ եւ նման պարագաներ գնելու գործին: Մենք ուրախութեամբ դրամ կ'ուղարկէինք արտասահման այդ իրերի գնման համար, եթէ վստահութիւն ունենայինք, որ դրամը այդ նպատակին կը գործադրէին եւ կամ գործադրողներ կը լինէին... բայց այդ յոյսը մենք չունեցանք եւ երեւի չենք ունենայ:

Ինչպէս որ գաւառներում կազմակերպութիւնները մեծ յաջողութեամբ առաջ գնացին ջան Շամուկ, նոյնը եղաւ եւ ինքնապաշտպանութեան խնդիրը: Սա էլ

14.- Փամփուշտի մետաղեայ պատեան, պարկուճ:

նոյն մոտիւններով է բացատրուելու ինչ կազմակերպութեան յաջողութիւնը: Մի բան որ իբրեւ խոստովանութիւն պիտի ընդգծել, այդ այն է, որ մենք էլ մեր գլխաւոր ուղադրութիւնը այդ հողի վրայ դարձրել էինք դէպի գաւառը, այն նկատմամբ, որ շամեցիք թէ նախնական պատրաստութիւնները ունէին եւ թէ եւրոպական հիմնարկութիւնները միշտ հիւրընկալել են անգէն ժողովուրդին, մանաւանդ կանանց եւ երեխաներին: իսկ գաւառը այդ գլխաւոր դիւրութիւնից գուրկ է եղել:

Գաւառի միակ տէրն ու պաշտպանը եղել են «հայրենի» լեռները, բայց նրանք էլ անգէն մարդկանց վերաբերմամբ անհիւրընկալ են եղել եւ պիտի լինին...

Գիւղերում ինքնապաշտպանութեան գէնքերը մինչեւ այժմ եղել են անհատական, իսկ այսուհետեւ ուղադրութիւն պիտի դարձնենք համայնական գէնքերի վրայ, որոնցով զինուելու են գիւղական կամաւոր խմբերը: Սրանք աւելի դիսցիպլինայի ենթակայ են եւ աւելի դիւրութեամբ կարելի է գործածել այս կամ այն գործողութիւնների համար:

Ինքնապաշտպանութեան գործը կանոնաւոր հողի վրայ դնելու համար այս տարի կազմեցինք գէնք գնող եւ ցրող կոմիտէա կ. կոմիտէի անմիջական հսկողութեան տակ: Սա գործեց մեծ եռանդով եւ մեծապէս նրպաստեց կանոնաւոր դասաւորման եւ գէնքերի տարածման գործին: Գործը դրուած է ամուր հիմքերի վրայ, եկամուտները հաստատ աղբիւրներ են, ապագային յոյս ունինք աւելի յաջողութիւն ունենալու մանաւանդ երբ մեղմանան Սարուստանի դէպքերը եւ Պարսկաստանը նորէն կարողանայ երկրին գէնք մատակարարել:

Այս ուղղութեամբ ստատիստիկա խոսափեցինք առաջ բերել մի քանի ներքին գաղտնապահական նկատումներով, որոնց մասին ընկերները կը խօսին անձամբ:

**գ.- Ժողովուրդական դատեր, վաշխառութիւնները եւ թալանների չէզոքացում:**

Տաճկաստանում շատ յեղափոխական ճշմարտութիւններ գլխիվայր է դրուած: Այն՝ ինչ արտասահմանում թերթեր կամ թուղցիկներ կամ ժողովներում ազիտացիայի ժամանակ յեղափոխական ֆակտորներ<sup>15</sup> էք հաշուում, այստեղ բնաւ չեն կարող ֆակտոր լինել: Սովորաբար ընդունուած է սասել, որ ճշումները, թալանները, կողոպուտները, վաշխառութիւնը եւայլն նրպաստում են յեղափոխական տրամադրութեան բարձրացման եւ ամբողջ յեղափոխականանալուն: Սա միայն ճիշտ է այն տեսակէտով, որ ժողովուրդի սիրտը անկութեամբ է լցւում դէպի թալանողները, բայց այդ բոլորը այնպիսի պարագաներ են, որ մեծապէս նպաստում են ժողովուրդի տնտեսապէս քայքայուելուն:

Տնտեսապէս քայքայուելով քաղաքների ժողովուրդը

փախչում է արտասահման, չդիմանալով ճշումներին: իսկ գիւղացիք մեծ մասամբ մի գաւառից միւսը, առհասարակ հայերով բնակեցուած տեղերը դատարկում են եւ գաղթում դէպի Գիւրտիստան հասկնալի պատճառով: Վերջին վայրերում ճշողը միայն քիւրտ աղան է եւ ոչ անսիրտ պաշտօնեաները: հայերը ապահով են մանաւանդ քրտական այն շրջաններում, որոնք համիտիա են եւ ամբողջապէս կտրուած կառավարութեան ազդեցութիւնից: Թէեւ երկու կողմն էլ կրակ է, բայց չարիքների փոքրագոյնը քիւրտն է:

Տաճկաստանում ապրող եւ գործող յեղափոխականը անկարող է անտես անել այդ պարագաները: Երբ ժողովուրդը միջին տնտեսութիւնից գրկուեց, երբ նա գաղթեց մայրենի հողից, երբ քայքայուած է նրա համայնական եւ ընտանեկան սրբութիւնները, դրան կից պիտի կազմալուծուի եւ յեղափոխական տրամադրութիւնը: Յեղափոխական գործի յաջողութեան գլխաւոր պայմաններն են կեանքի պարագաների կայունութիւն եւ կապուածութիւն մի որոշ վայրի հետ, այն էլ այնպիսի վայրի, որ ունի հայերու հոծ բազմութիւն: Հակառակ պարագային ոչ գործ կը լինի եւ ոչ յաջողութիւն:

Ահա այս նկատումներով մենք մեր ուժերի մաքսիմալը գործադրելու ենք ժողովուրդական դատերի, վաշխառութիւնների, թալանների չէզոքացման, տնտեսութիւնների կանոնաւորման, արտագաղթի գաղափարի յետ մղման՝ ոգեւորելով նրանց ազատ ապագայի հեռանկարով եւ շատ անգամ էլ թշուառ ներկայի պարէնը հոգալով:

Դատերի եւ նման գործողութիւնների ձեռնամուխ լինելը Տաճկաստանում վերջին տարիների գործն է, թերեւ Սարուստանի<sup>3</sup> օրինակի հետեւողութեամբ: Բացի վերոյիշեալ ոչալ նկատումներից դատերին միջամտելու գործերում մենք ունեցել ենք եւ քաղաքական նկատումներ:

Մի ժողովուրդ ամբողջ դարեր ենթարկուած լինելով ստրկութեան՝ թալանի, կողոպուտների, բռնաբարման եւ միշտ ուրիշներին ենթարկուելու պարագաներին, պարզ է, որ ամէն գէշ եւ բացասական յատկութիւններով վարակուած պիտի լինի: եւ մի ժողովուրդ քաղաքականապէս ազատագրելու համար պիտի ազատագրուի իւր հոգւ ամբողջ թերեւրով եւ կեանքի բոլոր պարագաներով: Հէնց այդ ներքին ինքնավարութիւնը, այդ հզօր կառավարութեան մէջ հիմնուած հզօր վստահութիւնը այն շրջանն է, որի մէջ պիտի մաքրուի մեր ստրկական բոլոր կեղտերը եւ որի մէջ պիտի սովորենք ազատ քաղաքացիական եւ մարդկայնական գաղափարներ:

Այս բոլոր շահերին կից կայ եւ այն որ պաշտպանելով անպաշտպան ժողովուրդին նրա թշնամիներից, նա

15.- Գործօճներ, ազդակներ:

քեզ վրայ կը նայի իբրեւ փրկութեան հրեշտակի վրայ, իսկ սա պակաս չէ ազդում մեր հեղինակութեան բարձրացման եւ աւելի լայն շրջաններում ժողովրդականանալու գործին:

Աւելի մանրամասնների եւ գործողութիւնների տեսակների մասին ընկերները կը պատմեն անձամբ:

**Դ.- Փոխադրութիւն, սուբսանդակ եւ դրսի յարաբերութիւն:**

Այս տարի հակառակ բոլոր անպատեհութիւններին, բոլոր տարիներէն փոխադրութիւնը աւելի յաջող է եղել եւ աւելի պիտի յաջողէինք եթէ սահմանների կարեւոր վայրերում ապրանքներ ունենայինք եւ ձեռնհաս ընկերներ, բայց այդ երկուսից ոչ մէկը չեղաւ: Ի դէպ էլ յիշել, որ այս տարի Վրէժը<sup>16</sup> արգիլեց ուղարկել մեզ վերաբերեալ ապրանքների մի մասը. չգիտենք այդ ինչ նկատումով եւ ո՛ւմ համաձայնութեամբ. գոնէ մենք համաձայն չենք եղել: Նոյն կերպ են վարուել եւ մի քանի ուրիշ իրերի վերաբերմամբ եւ Արեւել: Բիւրոյի կողմից մեզ ուղարկուած 2500 ռուբլի դրամը ամբողջութեամբ վար են դրել. այս մասին թէ եւ Վրէժը մեզ բացատրութիւն է տուել, բայց դա շատ անբաւարար է, եւ հարցը այնուամենայնիւ մնաց անլուծելի: Այսպէս կամ այնպէս Վրէժի նոյնանման գործողութիւնների վերաբերմամբ որոշ կարգադրութիւններ էք անելու: Ամենագլխաւորը իւրաքանչիւր շրջան պարտաւոր է ստանալ այն՝ ինչ որոշուած է իր համար: Եթէ այդ անբաւարար կը լինի այս կամ այն անակնկալի պատճառով, պէտք է դիմել բուն աղբիւրին եւ ոչ այս կամ այն շրջանի իրաւունքները բռնաբարել:

Այս տարուայ փոխադրութիւնը եղաւ ոչ միայն յաջող այլեւ քիչ կորուստներով: Կորուստը եղել է 1/5 -ից աւելի քիչ. այն էլ կորածների կէսից աւելին թէ դրամով եւ թէ ուրիշ միջոցներով նորէն ձեռք է բերուած: Թրւական մանրամասնութիւնների մասին կը խօսին ընկերները: Փոխադրութեան յաջողութեան պատճառները մի քանիսն են. ա.- այս տարի բոլորովին արգիլուեց խմբական փոխադրութիւնը, որ միշտ կորստաբեր եւ վնասակար ու թանգ է եղել: Բ.- Փոխադրութիւնը եղաւ տեղացիներու միջոցով, որոնք մեծապէս նպաստեցին: Գ.- Տեղափոխութեան կէսից աւելին եղաւ օտարների ձեռքով, որոնք անսպասելի եռանդ ցոյց տուին այս տարի շնորհիւ առատ վարձատրութեան: Դ.- Կառավարութիւնը զբաղուած լինելով արտաքին անպատեհութիւններով, անկարող եղաւ զբաղուել մեզմով. ամենագլխաւորը՝ գործը տեղացիներով, այն էլ օտար տարրերով կատարուելով, նաեւ անգիտակ մնաց եւ անկարող հետքը գտնելու:

Դրան ամենափայլուն փաստը այն է, որ կորուստներից միայն 500 ծայր<sup>16</sup> է ընկել կառավարութեան ձեռքը: Փոխադրութեան պատճառով այս տարի միայն 2 մարդ

ուժական տարի վճիռ կերան. այս է եղել միայն մարդկային զոհերը, եթէ չհաշուենք այն մի քանի փախստական եղած գիւղացիներին, որոնք ձեռք չեն ընկել եւ չեն ընկնի իրենց եւ մեր բարեկամ աղաների (յօ-լօ) պաշտպանութեան շնորհիւ: Փոխադրութիւնը յաջողութեամբ կատարելու համար մի քանի պայմաններ է հարկաւոր:

ա.- Ժամանակին սահմանագլուխներում պատրաստ ապրանք ունենալ: Բ.- Կարելոր վայրերում (սահմանագլխի) ձեռնհաս ընկերներ ունենալ: Գ.- Դրամ ունենալ պատրաստի եւ առատութեամբ վարձատրել օտարներին եւ Դ.- Փոխադրութիւնը կատարուելու է ներսի ընկերների ղեկավարութեամբ եւ խորհուրդներով:

Սուբսանդակային հաղորդակցութիւնը այս տարի եղաւ շատ փառահեղ. նոյն ամսուայ «Դրօշակ»-ը եւ Սարուստանի թերթերը այստեղ ստացուած էր: Այդ էլ եղաւ այն պատճառով, որ մեր սուբսանդակները այս տարի բացառապէս լօյսներ էին կամ օտարներ: Այս տարի ահագին դիմողներ եղան նոյն աշխատանքի մասին, այդ պէտք է բացատրել վարձի գրաւութեամբ եւ սովի պատճառով:

Այս տարուայ սուբսանդակային գործի յաջողութեանը մեծապէս նպաստել է Մինարէթի ընկեր Գարեգինը<sup>17</sup>, համարեա նրա շնորհիւ եւ նրա անհատական աշխատութեամբ էր վարուած այդ գործը: Գարեգինը միակ մարդն էր, որ առանց սառնարիւնութիւնը կորսնցնելու յարաբերութիւն պահպանեց Երկրի ընկերների հետ: Մնացած բոլոր ընկերները եւ մարմինները զլուխնին կորցրին:

Արեւելեան Բիւրոն գրել է ընդամէնը 2 նամակ, չնայած՝ որ մենք գրել ենք 50-ից աւելին: Կարող են պատճառաբանել, որ նամակների մի մասը անապահով հասցեների պատճառով բռնուել է, բայց թող նրանք ներող լինեն մեզ, երբ նրանց յայտնենք, որ այդ էլ եղել է նրանց ծուրութեան պատճառով: Երջապատուած ամէն կողմից դժոխային պարագաներով, ծանրաբեռնուած ուժերից աւելի գործերով, գիշեր ու ցերեկ անքուն ու անդադար մենք ժամանակ էինք գտնում մեր փոստային նամակների պատճէնները միշտ էլ, բոլորին էլ, Վրէժի գրծով էլ ճամբելու, բայց չտեսանք մէկ ընկեր կամ մէկ մարմին, որ նոյնը ինքը անէր, թէ եւ հազար անգամ աղաչեցինք ու պաղատեցինք: Մեր սիրտը այնքան չի ջրջրուած անարգ դուշմանի հասցրած վիրաւորանքներից, որքան արտասահմանի մեր ընկերների անտարբերութիւնից եւ արհամարհանքներից: Երանի թէ նրանք գոնէ մի օր մեր դրութեան մէջ լինէին... Ա՛խ, այն ժա-

16.- Փամփուշտ:  
17.- Մինարէթը Սալմաստի Գ. Յ.Ղ. կազմակերպութիւնն է: Գարեգին ծածկանունն է Սամսոն Թադէոսեանի (թրիստափորի քրոջ որդիներն), որ կը վարէր Ստրպատականէն դէպի Վասպուրական զէնքի եւ մարդոյթի փոխադրութեան գործը:

մանակ ամէն բան պարզ կը լինէր:

Ե.- Պրոպագանդա.- Ծնորհիւ նրան, որ սեւ աշխատանքները այնքան շատ են եղել եւ գործերը այնքան ստիպողական որ բանաւոր պրոպագանդա չկրցանք եւ շատ քիչ ունեցանք, մանաւանդ Շամում, ուր նրա պահանջը շատ մեծ է, բայց դրա պակասը — եթէ միայն թերթեր եւ գրքերը կարող են կենդանի խօսքի տեղ բռնել — լրացրինք թերթերով եւ գրքերով, որ այս տարի մեծ առատութեամբ աշխատեցինք ձեռ բերել եւ յաջողեցինք էլ: «Դրօշակ» ստացուած էր մեծ առատութեամբ եւ ցրուած էր ամենախուլ անկիւնները: «Հայրենիք»-ը վերջերս ստացուած էր կանոնաւորապէս, բայց ընդամէնը 10 օրինակ. այս վերջինիս պահանջը շատ մեծ է մանաւանդ գիւղում: Ընկերների համար ստացուած է Սարուստանից մի քանի թերթեր:

Շամում ամենահարուստ գրադարանը մերն է. ունինք 300 կտոր արտասահմանեան գրքեր, որոնք թէ եւ սովորական բաներ են եւ ինքնուրուիքեան չնչին թուով, բայց դարձեալ բաւական նորութիւն է երկրի համար: մենք միշտ մոռացել ենք յեղափոխական գրականութիւն ներս մտնելը: Միշտ գանգատուած ենք, որ երկիրը նկարագիր ունեցող յեղափոխական տիպեր չի տալիս, բայց չենք մտածում, թէ այդ տիպերը իրենց մտաւոր պահանջների գոհացումը որտեղից պիտի ստանան. Պոլսի գրականութիւնից թէ՛ խալիֆայական դպրոցներից... Լաւ կը լինէր որ առանձին ուշադրութիւն դարձնէր այդ խնդրի վրայ: Ամէն բան կը կորչի, ամէն բան կը մոռացուի, բայց գիրքը, այն էլ յեղափոխական գիրքը կարող է մարդիկ ստեղծել եւ նրանց գոյն տալ: Կ'ուզէինք Շամում մի կենտրոնական գրադարան ունենալ, իսկ ենթակոմիտէների տրամադրութեան տակ էլ մասնաճիւղեր. բայց գիրք չլինելու պատճառով գաւառը մոռացութեան է տրուած:

Գրադարանը եւ առհասարակ յեղափոխական գրականութիւնը մեծ յաջողութիւն կ'ունենայ մանաւանդ եւ այն պատճառով որ Շամում 90% գրագէտ կայ, իսկ գաւառում ամենաքիչը 40%: Ամէն տարի Շամում 3-400. երկսեռ սովորող երախաներ են լինում:

Անցեալ տարի հեկտոգրաֆիայով<sup>18</sup> թուղիկներ էր տպուած եւ ժողովրդի լայն խաւերում տրուած. պահանջը շատ շատ է բայց ձեռնհաս եւ աւելորդ ձեռքեր չլինելով՝ այդ գործը երեսի վրայ է մնացել:

**Գ.- ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵԸ**

Կառավարութեան վերաբերմունքը երկու վարեանտներ ունի. ա.- կառավարութեան բռնած դիրքը դէպի հայ ժողովուրդը եւ Բ.- կառավարութեան բռնած դիրքը դէպի յեղափոխութիւնը: Առաջին խնդրում կառավարութիւնը ոչ մի փոփո-

խութիւն չէ մտցրել. նախկին ոգով եւ ուղղութեամբ շարունակուած է կողոպուտը, թալանը, բռնաբարութիւնը, արհեստական սովերը եւն եւն:

Թէ եւ այս բոլորը մասնակի գոյներով եւ պարագաներով է տեղի ունենում, բայց բոլորի դրդիչ պատճառները եւ բոլորի համագումարը նոյնն է ինչ ընդհանուր կոտորածը: Կառավարութիւնն էլ է փորձուել, ուզում է մի գնդակով երկու որս անել եւ հայերին տնտեսապէս քայքայել եւ այնպէս շարժուել, որ Եւրոպան դժգոհելու առիթներ չունենայ: Պէտք է խոստովանել, որ նա այդ երկու նպատակներին էլ լաւ կերպով հասնում է: Դրան օրինակ բազմաթիւ գիւղերի կործանուելը, մի գաւառից մի ուրիշը գաղթելը, հարիւրներով պանդխտութեան գնալը, վաճառականութեան կանգ առնելը, արհեստաւորների անգործութիւնը եւն եւն: Եւ այս բոլորը այնպիսի ճարպիկ քաղաքականութեամբ է կատարուում, որ հայերի կողմից եղած դժգոհութիւնները վրայ եւրոպական հիւպատոսները նայում են իբրեւ ապօրինի եւ յեղափոխական խնդիրների վրայ:

Շամը այդ կողմից երջանիկ է քան գաւառը. սրանք թէ իրենց ճարպիկութեամբ, թէ օրէնքներին գիտակ լինելով, թէ եւրոպական ներկայացուցիչների ներկայութիւնից օգտուելու դիւրութեամբ, աւելի քիչ են շահագործուած քան գաւառացիք:

Այս տարի դրութիւնը բարդուեց եւ մի քանի անակընդակների պատճառով: Տարուայ սկիզբը արաբական ապստամբութիւնը առիթ տուաւ նոր շահագործութիւնների: Կառավարութիւնը պատրաստի դրամ չուներնայով սկսեց մի կողմից խստիւ գանձել բախկիաները, միւս կողմից էլ բուն կերպով հայ հարուստներից դրամ պահանջել: Այս օրերն էլ նոյն դրութիւնն է ստեղծուած. զօրքերը տանում են դէպի Մուսուլ, ինչ նպատակով յայտնի չէ... Սրա վրայ եթէ աւելացնենք եւ վերջին տարուան սովերը եւ այս տարուայ 100-ին 35 նոր ստուրքերի աւելնալը, այն ժամանակ ամէն բան պարզ կը լինի: Այս դեռ մետալի մի երեսն է. այստեղ հայը շահագործուած եւ թալանուած է իբրեւ հայ, իբրեւ քրիստոնեայ. բայց այդ բոլորը չէ, պատմական պայմանների այսպէս դասաւորման շնորհիւ մեր ժողովուրդը տաճիկ կառավարութեան հանդէպ մի ուրիշ յանցանքի մէջ պիտի ընկնէր. իսկ այդ յանցանքը յեղափոխական լինելն է:

Երկրորդ պարագան՝ կառավարութեան վերաբերմունքը դէպի յեղափոխութիւնը այս տարի շատ տարօրինակ էր եւ հանելուկային: Թերեւս վերջին տարիներից եւ ոչ մէկ տարին կառավարութիւնը այնքան անտարբերութիւն չէ ցոյց տուել յեղափոխութեան հանդէպ ինչ այս տարի: Այս տարի կատարեալ անխիստանական ազատութիւն էր. ամբողջ տարին անցաւ, դեռ ոչ

18.- Չեռագիր կամ մեքենագիր գրութիւնները քազմացնող տպագրական պարզ սարքուածք:

Շամուս եւ ոչ գաւառուս ոչ մի լուրջ խուզարկութիւն չեղաւ:

Ամբողջ տարին անցաւ եւ ոչ մի փոքրիկ ընդհարում տեղի չունեցաւ ո՛չ Շամուս եւ ոչ գաւառուս, թէեւ առիթներ պակաս չէին: Ամենատարօրինակն այն է, որ կառավարութիւնը Շամուս սկսեց մի քանի փախստական յեղափոխականների ներում շնորհել եւ ազատ թողնել (օր. Մուսայ): Մի փոքրիկ դէպք, որ աւելի է բնորոշում կառավարութեան անտարբերութիւնը, սա թէ՛ եւ մասնակի՝ շատ բնորոշ է: Վերջին օրերս մատնութեամբ խուզարկում են մի հայի տուն եւ գտնում մի հրացան: Հայը կաշառքով մի քիւրտի իբրեւ հրացանի տէր է ներկայացնում եւ յետ վերցնում իր հրացանը: Ուրիշ օրինակների մասին կը պատմէ Թորգոմը, որից կը հասկնաք այս տարուայ կառավարութեան բռնած հարցական դիրքը: Այս տարի յեղափոխական գործով վտանգուածներն ու բռնուածները մի չնչին գումար է, որոնցից մի քանիսը օրինական ճանապարհով ազատւեցին, օգտուելով կառավարութեան թոյլ քաղաքակաւութիւնից:

Ի՞նչն է արդեօք պատճառը կառավարութեան այդ թոյլ քաղաքականութեան. պատճառները ընդհանուր քաղաքական են եւ գուտ տեղական — մասնակի:

Ընդհանուր պետական պատճառները ձեզ ամէնից շատ յայտնի է. Արաբական ապստամբութիւն. մակեդոնական հարցի վերաբերմամբ եւրոպական յաճախակի հարցապնդումները, վերջին գործերի դէպի Մուսուլ գնալը (?) եւն, եւն պատճառներ, որոնք թոյլ չէին տալիս այլ խնդիրների շարքում տնկել եւ հայկական խնդիրը:

Չուտ տեղական մասնակի երեւոյթները հետեւեալներն են. անցեալ տարի Բարձրաւանդակի<sup>11</sup> խմբերի այս շրջան գալը եւ այստեղից արտասահման գնալը, այստեղի մի քանի ընկերների արտասահման անցնիլը, Սարուստանի<sup>12</sup> դէպքերը եւն եւն, այն համոզմունքն էր մտցրել ժողովրդի եւ կառավարութեան մէջ, որ Սարուստանում կուի լինելով բոլոր խմբերը այնտեղ օգնութեան են գնացել. ուրեմն այստեղ գործ չկայ (ձեռնարկային) կամ եթէ մարդիկ էլ կան մի քանի անհատներ են, որ կը թափառին այս ու այն կողմ, առանց որոշեալ նպատակների. իսկ կառավարութիւնը ըստ երեւոյթին պէտք չէր համարում նրանցով զբաղուիլ:

Մենք էլ ի նկատի ունենալով դրութեան վտանգաւորութիւնը՝ ուղև-ճապոնական պատերազմը, Սարուստանի դէպքերը, օգնութիւն չստանալու յոյս եւն եւն — որոշեցինք ամենակարող կերպով խուսափել դէպքերից եւ ընդհարումներից: Մեզ օգնեց մասամբ եւ այն, որ մենք այս տարի քիչ զինուորներ ունէինք եւ եղած զինուորների կառավարիչները շատ թէ քիչ կըթուլիւն ստացած եւ դիսցիպլինա ճանաչող մարդիկ էին: Պէտք է շեշտել մի բան՝ որ տեղացի նոր փախստական եղող թէ՛ հին զինուորներն ու դեկավարները միշտ աւելի տրա-

մադիր են լինում մասնակի դէպքեր ստեղծելուն, վրէժ լուծելուն, տեւորներ կատարելուն, քան դրսեցի ընկերները:

Չուտ տեղական մասնակի երեւոյթների շարքն է դասուելու եւ այլ խնդիր, որը նպաստել է շրջանիս առեւտրեւոյթ մեռելային խաղաղ մնալուն: Որոշ մարդիկ այն համոզման են, որ շրջանիս կուսակալի անձնաւորութիւնը կապ ունի այդ խնդրի հետ:

Բոլորի համար պարզ է, որ Տաճկաստանում այս եւ այն պաշտօնեայի կապրիզը<sup>13</sup> աւելի մեծ գին ունի, քան գոյութիւն ունեցող օրէնքները: Այդ երեւոյթի կլասիկական հայրենիքը Բիթլիսն է իր գաւառամասերով. թէ այնտեղ մի կուսակալի կապրիզներ եւ արկածախնդրութիւններ ինչ չարիք կարող են ստեղծել, արդէն յայտնի է բոլորին:

Մի բան որ պարզ է այս կուսակալի վերաբերմամբ, դա այն է, որ նա խոյս է տալիս բռնի, ցուցական, յեղափոխական գրգռու տուող, եւրոպացիներին խօսեցնել տուող եւ այլն երեւոյթներից. իսկ դրա փոխարէն գուտ եւրոպական տակտիկով եւ քաղաքականութեամբ, խաղաղ տնտեսական հողի վրայ առաջ է տանում այն միսիան, ինչ ընդգծել է տաճիկ կառավարութիւնը հայերի վերաբերմամբ — Հայաստան առանց հայերի, կամ բնակեցրած այնպիսի ոչխարներով, որոնք անընդունակ են որեւէ բարձր թռիչքների:

Ահա այս է խոշոր գծերով մեր շրջանի կազմակերպութեան շուրջը դարձող խնդիրների ընդհանուր պատկերը: Ինչ կը լինի եկող տարին, այդ մեզ համար բոլորովին անյայտ է: Սակայն առանց գուշակութիւնների ետեւից ընկնելու եւ առանց մարգարէ լինելու՝ կարելի է պնդել, որ առաջիկայ սեզոնին էլ կարելի է մի կերպ խուսափել ընդհանուր գործողութիւններից: Այս բանը մեզ էօան կը նստի թէ թանգ, այդ նոյնպէս անյայտ է. մի բան որ պարզ է, դա կախուած է մասամբ եւ նրանից թէ արտասահմանը ինչ դիրք կը բռնէ դէպի մեզ եւ իր գործողութիւններին ինչ գոյն կը տայ:

Անցնենք մեր կողմից Ընդհանուր ժողովին առաջարկելիք խնդիրներին: Երկու Բիւրոններու հրահրին — հարցեր առաջարկելու վերաբերմամբ — մենք պատասխանեցինք այն յոյսով՝ որ ընդհանուր հարցերի ցուցակը ժամանակին մեզ հասնի, մենք էլ դիւրութիւն ունենայինք մեր կարծիքները յայտնելու դրուած խնդիրներու մասին: Բայց դժբախտաբար այդ չստացանք. նոյնիսկ չիմացանք թէ մեր հարցերի ցուցակը տեղ է հասել, թէ ոչ. մինչեւ վրէժ հասնիլը գիտենք:

Խմբագրութեան ուղարկել ենք հետեւեալ հարցերը.

ա.- Տակտիկա — ցոյցերու եւ շարժումներու համբաւաբար գործադրութիւնը, առանց Երկրի համա-

19.- Զմախաճոյքը:

ձայնութեան սահմաններու վրայ ոչ մի շարժում. յարգել Երկրի մարմիններու իրաւունքներն ու կարծիքները:

Թէ անցեալի դառն փորձերը որքան օրինակներ է բերել մեզ համոզելու համար թէ անջատ, կղզիացած գործունէութիւնը մեծ մասամբ մի ընկնող եւ անհետք ասող է երկնակամարի վրայ, այդ արդէն բոլորը գիտէք: Բարձրաւանդակի<sup>11</sup> հերոսական կուրը եւ նոյնքան հերոսական պարտութիւնը յայտնի է: Յայտնի է եւ դեռ թարմ է բոլորիդ յիշողութեան մէջ Վիշապի<sup>20</sup> ձեռնարկը, որը հանդիսացաւ լոկ մի բլանկ, որ հարսանիքի ժամանակ բաց են թողնում գուարճանալու համար: Եթէ քաղաքական պայմանները բարդուած չլինէին կը տեսնէիք որքան գուարճութիւններ կը լինէր բուն երկրում: Փաստերը մէկ մէկ թուել աւելորդ է. պարզ է այն, որ առանց հիմնաւոր եւ ընդհանուր գործողութիւնների մենք չենք կարող նպատակի հասնել եւ դուրսը որոշ տպաւորութիւն թողնել:

Եթէ ուզում էք լուրջ գործ կատարել, եթէ ուզում էք շահել եւ ոչ ժողովուրդ կոտորել տալ, հարկաւոր է գործողութիւնները, պատրաստութիւնները այնպէս դասաւորել ու բաշխել, որ Երկրի երկու կամ մի քանի կէտերում միասին հնարաւոր լինի միաժամանակ գործ կատարել: Այդ իրագործելու համար, նախ պէտք է Երկրում ունենանք միաժամանակ մի քանի կէտերում ձեռնհաս ընկերներ եւ գործ ստեղծողներ եւ երկրորդ՝ արտասահմանում որոշ պատրաստութիւններ եւ տրամադրութիւն Երկրի ընկերների պահանջներին գոհացում տալու եւ նրանց կարծիքները յարգելու: Եթէ այս երկու պարագան միաժամանակ ստեղծուեց կարելի է ստեղծել նաեւ առաջինը, ապա թէ ոչ յանցանք է այս ժողովրդի արեան տակ մտնելը: Շատերը միամտօրէն պնդում էին որ թէեւ մենք ունենանք պատրաստութիւններ, բայց դիւրութիւններ չունենք ներս մտցնելու կամ ներսում պահելու: Թէ որքան խոշոր թիւրիմացութիւն է սա կը հասկնայ միայն նա, ով գոնէ մի քանի տարի ուշադրութեամբ հետեւել է մեր շրջանի գործողութիւններին (փոխադրութեան պահանջներին գոհացում տալու խնդիրը եւն եւն): Ի հարկէ երբ տասնեակ տարիներով անգործութեան մատնուինք դուրսը, եւ Երկրի գործը թողնենք զանազան պատահական՝ մեծ մասամբ զինուորական մարդկանց ձեռքը, նրանց էլ թողնենք երեսի վրայ եւ դառն յուսահատութեան մէջ, կը պատահի այն՝ ինչ որ սովորաբար լինում է:

Ինքնախաբէութիւն է այն՝ որ Երկրում առանց լուրջ պատրաստութիւններ եւ գործողութիւններ ունենալու մենք սահմանազուխներում սարքում ենք զանազան ցոյցեր «արշաւանքներ» անուան տակ: Չգիտենք մենք ենք միամիտ, թէ թշնամու ենք միամիտ կարծում: Ինչ կարող ենք շահել կամ անել այն էլ ուշացած, եթէ այդ պատրաստութիւնների, գոհողութիւնների կէսի կէսը

Երկրի մտցնէինք եւ այստեղ շահագործէինք անհամեմատ մեծ բան կը շահէինք եւ աւելի նպատակալարմար կը լինէր: Թող ոչ ոք չպնդի թէ դիւրութիւն չկայ, թէ անցեալ եւ թէ այս տարի եւ թէ միշտ վրէժի<sup>21</sup> գծերով ահագին դիւրութիւններ կար փոխադրութեան, բայց ապրանք չկար ու չկար...: Եթէ մենք մի քիչ շրջահայեաց լինէինք, ծանօթ մեր բոլոր դիւրութիւններին, դրան կից մի քիչ աւելի դրամապէս գոհող փոխադրութեան վերաբերմամբ՝ մենք շատ բան կ'անէինք, քան մինչեւ այժմ արել ենք: Կարճ՝ մենք հակառակ ենք մասնակի գործողութիւններին եւ սահմանազլխի ցոյցերին:

բ.- Հայ-քրտական յարաբերութիւն.- Մեր մեր այս խնդրի առթիւ շատ է ջուր ծծոնել եւ երեւի դեռ շատ պիտի ծծուի: Մենք որ Երկրում լինելով միշտ առիթներ ունինք շփուելու նրանց հետ միշտ էլ յոռետես ենք եղել այդ խնդրի վերաբերմամբ: Պեսիմիստ<sup>22</sup> ենք յայտնի պատճառով: Քիւրտը չունի լայն հասարակական եւ քաղաքական պահանջներ, նա ուժի կողմ խոնարհուող տարր է, իսկ առաջմ մեզնից ուժեղը կառավարութիւնն է: Մինչեւ մենք չկարողացանք որոշ ուժ դառնալ, որոշ յաղթանակ տանելու պատրաստութիւն ցոյց տալ նրանք կը մնան կառավարութեան կողմը: Պարզ պատճառով. նա տաճիկ կառավարութիւնից աւելի է շահում քան մեզնից: Չպէտք է մոռանալ եւ մի պարագայ. ինչքան էլ քիւրտը տեղական կամ տնտեսական հողի վրայ առիթներ ունենայ դժգոհ լինելու կառավարութիւնից, բայց այդ «դժգոհութիւնը» չի հաւասարիր իր այն դժգոհութեան, ինչ կարող են ունենալ եւ ունին հայը կամ ուրիշ ժողովուրդները: Բացի այդ կայ եւ այն պարագան, որ քրտի համար միշտ ձեռնտու է անխիստանական դրութիւնը, որովհետեւ այդ պայմաններում աւելի ազատ է շահատակութիւններ անելու եւ իւր ցեղական նման գծերին ազատօրէն գոհացում տալու:

Դեռ մի կողմն ենք թողնում այն պարագան, որ կառավարութիւնը «հայկական շարժումը» բնում խեղդելու համար միշտ գոհող է լինում քրտական ոտնձգութիւնների հանդէպ, ինչքան որ դրանք ինքնստիքեան վտանգաւոր լինեն ընդհանուր պետական տեսակէտից:

Այս բոլորի հետ չի կարելի չիտոտովանել եւ մի բան առանց ընդհանուր քաղաքական ակնկալութիւնների քրտերին դրամի եւ զանազան «փէշքէշներին» առատութեամբ կարելի է գործադրել տալ գործնական խնդիրների համար, ինչպէս մինչեւ այժմ եղել է եւ յաջողութեամբ կը շարունակուի, եթէ միայն դրամ ունենանք:

Այս է մեր համոզումը հայ-քրտական յարաբերութիւններուն մասին:

20.- Վիշապը Պոլիսն է: Կ'ակնարկուի Սուլթանի մահափորձի ծախողութեան: 21.- Յոռետես:



**գ.- Տաճկահայերուն եւ Կովկասի գործի անջատումն եւ առաջինի համար յատուկ մարմնի կազմութիւն.-** Ամբողջ չորս ամիս է ինչ տեղեկութիւն եւ նամակներ չենք ստանում Սարուստանից՝ եւ արտասահմանից, որ ըստ այնմ կարենայինք որոշ կարծիք յայտնել Սարուստանի գործերի մասին: Չհասկցանք, թէ մեր հոն դրուած պահանջները որի մասին գոհացում տրուեց եւ որի մասի համար պիտի շարունակուի մեր կռիւը որ ըստ այնմ որոշէինք մեր բռնելիք դիրքը Սարուստանում:

Բայց ի նկատի ունենալով որ այնտեղ մեր մինիմալ պահանջներին դեռ բաւարարութիւն տրուած չլինելով եւ տրուածներն էլ դեռ որոշ հաւաստիացում չունենալով — այնտեղ կռիւը անխուսափելի եւ շարունակելի է լինելու, մենք առաջարկում ենք ընդհանուր գործի շահի տեսակէտից անջատել Սարուստանի գործը Երկրի գործից եւ վերջինիս համար որոշ մարմին ընտրել որոշ լիազօրութեամբ գործերը ղեկավարելու համար: Բաւական է որքան մի մասի գործը զոհեցինք միւս մասին. թող բաժանուի թէ եկամտոնները եւ թէ գործողների բանակը. նախկին դրութիւնը մի կատարեալ անորմալութիւն է, որ շարունակել չի կարելի:

Ամիսներով եւ տարիներով Երկրի գործերը թողնել երեսի վրայ, Երկրի ընկերներին մատնել ի սաստ ճակատագրի, այս ոչ յեղափոխական բարոյականութիւնն թոյլ կը տայ եւ ոչ էլ գործերի ընդհանուր շահը:

Բաւական է որքան մտավախութեան ախտով վարակուած, վախեցած զանազան «Ֆրակցիաներ» առաջ գալու ուրուականից՝ գործը թողինք անորոշութեան եւ տարտամ վիճակի մէջ: Կեանքի հոսանքները մենք չենք կարող կանգնեցնել մեր զանազան «բարի ցանկութիւններով»: Եթէ առիթ ու հիմքեր կայ այս կամ այն երեւոյթի ստեղծուելու, ուզենք չուզենք, վաղ թէ ուշ պիտի լինի. աւելի լաւ է շուտ լինի որ այս տարաբախտ երկրի գործն էլ զոհ չգնայ չմտածուած անակնկալների... Այս մասին աւելի ընդարձակ գրել ենք Արեւելեան Բիւրոյին դեռ տարուայ սկիզբը:

**դ.- Ներկայիս մէջ եւ ապագային Բարձրաւանդակի եւ իւր անելիք դերը ապստամբական շարժման մէջ եւ այդ տեսակէտով որքան ուժ եւ կարեւորութիւն տալու է իրեն.-** Այս խնդիրը կարեւոր է եւ կարիք է զգում շուտափոյթ լուծման. ոչ թէ միայն ընդհանուր յեղափոխական նկատումներով, այլև զուտ ժողովրդի ապահովութեան տեսակէտից: Արդէն յայտնի է ձեզ, որ երբ Պարոյրը<sup>13</sup> իւր ընկերներով անցաւ արտասահման՝ Սարահատը<sup>22</sup> վճռեց մնալ Երկրում եւ վերադառնալ Դուրան ու Բարձրը<sup>23</sup> շրջանը: Վերադառնալուց յետոյ ինչ արկածներ հանդիպեցան, եւ դրանք որքան թանգ նրատեցին թէ ժողովրդին եւ թէ մեզ, յայտնի է:

Ինչ ուզում է լինի, ինչ ուզում էք վճռեցէք, միայն մի

մոռանաք այն պարագան, որ ինչքան էլ Սարահատը եւ նման ընկերները բացի ցանկութիւններ, զգացումներ եւ հերոսական ընդունակութիւններ ունենան կռուի ասպարէզում, առանց ինտելիգենտ ուժերի չեն կարող շրջանը ղեկավարել, կամ առանց անակնկալների առիթ տալու ապրիլ: Դրան փայլուն օրինակը այս տարի տեսանք Դուրանում, որի պակասը լրացրեց վերջին դէպքը, որի մանրամասնութիւնները եւ թէ ինչ պարագաներում տեղի ունենալը թերեւս յայտնի լինի ձեզ:

Ինչ դրութեան մէջ էլ դնելու լինէք Բարձրաւանդակը — ինքնապաշտպանութիւն կամ ձեռնարկ — հաշուի պէտք է առնէք երկու պարագայ. արդեօք մենք ունինք այնքան դրամական եւ ռազմական ուժ, որ կարողանանք եղած տեղերին էլ բաւարարութիւն տալ, այնտեղին էլ. եւ երկրորդ՝ ունինք արդեօք ձեռնհաս ինտելիգենտ ընկերներ, որ ստեղծուած շրջանների պակասը լրացնենք եւ այնտեղ էլ այժմուանից մարդ ուղարկենք: Այս երկու պարագան եթէ միաժամանակ տեղի չունենայ, մէկը առանց միւսի անկարելի եւ աննպատակալարմար կը լինի:

Մենք չենք կարող ոչ մի բան ասել, որովհետեւ չգիտենք մեր արտասահմանեան բարոյական, դրամական եւ ռազմական ուժի ներկայ վիճակը վերջին դէպքերից յետոյ: Այդ մնում է ձեզ վճռել:

**ե.- Շամիրի եւ Լեռնապարի համար ուրոյն եւ անջատ Պատասխանատու.)** Կ(եղբ.) կոմիտէ պէ՞տք է կազմել. թէ՞ երկուսի համար մէկ Պ. Կ. Կոմիտէ եւ արդեօք ժամանակը չէ՞ այդ որոշելու եւ գործադրելու: Թէ Շամիրի եւ թէ Լեռնապարի գործերը այնքան են բարդացել եւ լայնացել որ հէնց այժմեանից կարիք է զգացում Պ. Կ. Կոմիտէի կազմուելու խնդիրը: Կան ձեռնարկներ եւ պատրաստութիւններ, որ առանց պատասխանատու մարմին կազմելու անկարելի է ձեռնարկել կամ գլուխ բերել. ուստի ամէն կողմից ժամանակն է պատասխանատու մարմին կազմելու:

Մեր երկու շրջանի գործողութիւններ, դիւրութիւններ եւ պարագաները այնպէս են դասաւորուած, որ անջատ գործունէութիւն թէ աննպատակ է եւ թէ անկարելի: Ուստի երկու վայրերի համար ընտրուելու է մէկ պատասխանատու մարմին:

Որովհետեւ չգիտենք թէ ասպարէզի վրայ ովքեր կան արտասահմանում յարմար պատասխանատու մարմնի թեկնածութեան՝ ուստի անկարող ենք որոշ ընկերների մատնացոյց անել: Միայն կը խնդրէինք, որ — եթէ կարելի էր — սկզբունքով ընդունէիք պատասխանատու մարմին կազմելու խնդիրը, քննէիք թեկնա-

22.- Գեորգ Չաւուշ:  
23.- Դուրանը Մուշ-Տարոնի շրջանն է. Բարձրը Բարձրաւանդակն է, այսինքն՝ Սասուն:

ծուների ցանկը, բայց վերջնական կազմակերպելը թողնէիք երկու Բիւրոններուն եւ մեզ: Այս այն նկատումով ենք ասում, որ փոխադարձաբար խորհրդակցելով թերեւս կարողանանք աւելի յաջող ընտրութիւն անել եւ համերաշխ բնաւորութիւններ իրար քով բերել:

**զ.- Ընկերներու եւ մարմիններու գինուորական պատասխանատուութեան ենթարկելը. ի՞նչ պարագաներու մէջ եւ որ աստիճան.-** Արդէն գիտէք որ այս կամ այն ընկերները, այս կամ այն մարմինները սեփական ձեռքով գործողութիւններ են կատարում ոչ իրենց իրաւունքի սահմանում. դրանից տուժել [է] եւ պիտի տուժէ գործը: Մեզ մօտ գոյութիւն ունի միայն պատասխանատու լինելու անունը: Իսկ գործողութիւն, կամ այս կամ այն երեւոյթների պատասխանատուներին դատի կանչել, քննել եւ ըստ այնմ որոշ հրահանգներ տալը մարմիններին ու ընկերներին՝ չտեսանք. մինչդեռ գործը այնքան մեծացել [է] եւ այնքան պատասխանատու դարձել՝ մանաւանդ այնպէս է դասաւորուել, որ այս կամ այն ընկերով կամ մարմնի բարի ցանկութիւնը կարող է չլինել չլինելը՝ դառնալ ժողովրդի համար:

Այս խնդրի վերաբերմամբ որոշ օրէնքներ է մշակուելու եւ այնպիսի պարագաներու մէջ է դրուելու, որ մնացած օրէնքներու պէս արձանագրութիւններու մէջ չմնան:

**է.- Որոշեալ բիւրոներու հայթայթման եւ գործադրութեան հարցը.-** Անցեալ դառն փորձերը ցոյց տուին, որ բիւրոների որոշման ժամանակ հաշուի չէ առնուած մեր աղբիւրները կամ հայթայթման պարագաները: Ինչո՞վ բացատրել Բարձրաւանդակի (զուտ դրամական) մինիմալ պահանջների ժամանակին տեղ չհասնելը: Ինչո՞վ բացատրել մեր այս տարուայ յուսախաբուութիւնները՝ որոշուածներին 1/10 էլ չեղաւ (հաշուելով եւ ռազմական բիւրոներ): Կարելի է այդ հանելուկը պարզել կամ արդարանալ վերջին դէպքերով եւ դրանց անակնկալ անուններ տալ. ցաւալին հէնց այն է, որ մենք միշտ մոռանում ենք այդ «անակնկալները», որոնք մեր կեանքում աւելի մեծ դեր են խաղում քան նորմալ պայմանները: Պէտք է կազմել այնպիսի ծրագիրներ եւ բիւրոներ, որոնց իրագործուելուն գոնէ 50% շանսեր լինեն: Վերջին դէպքերը այդ էլ չէին արդարացնում: Ինչպէս վերել էլ շեշտեցինք, Երկրում ապրողի համար ամենամեծ հարուածն այն է, որ նա հիմնուելով դրսի խստութիւնների վրայ, խանդավառութեամբ ձեռնարկներ է անում, գործերը լայնացնում եւ յանկարծ գործի կիսում եւ կամ ամենատաք ժամանակը, սառն անտարբերութեան կամ մերժման է հանդիպում արտասահմանի ընկերների կողմից: Սա աւելի գէշ մահ է այն մահից ինչ կարող է պատճառել դուշմանի զնդակը:

Պակաս թիւրիմացութիւններ չի յարուցանում նաեւ

բիւրոների գործադրման հարցը: Արտասահմանում այս կամ այն մարմինը, այս կամ այն ընկերը իր քէֆի ուզածի պէս դասաւորում կամ գործածում է որոշեալ բիւրոները առանց կարեւորութիւն տալու Երկրի կարիքներին կամ Երկրի ընկերների ձայնին: Մենք կը խնդրէինք մեր շրջանի որոշեալ բիւրոներն դնել մեր վերել առաջարկած մարմնի տրամադրութեան տակ, իսկ այդ մարմինը այնպէս պիտի դասաւորէ այդ բիւրոներն ինչպէս որ մենք կ'առաջարկենք: Առանց մեր համաձայնութեան ոչինչ չեն անելու:

**ը.- Ինչպէս է հայթայթուելու Երկրի ռազմական պահանջները.-**

Սա գուցէ խնդիրներից ամենակարեւորն է: Ով եղել է Երկրում կամ ով դժբախտութիւն է ունեցել երբեւիցէ սահմանագլուխներում լինել, տեսած կամ լսած կը լինի թէ Երկիր ուղարկուած ռազմամթերքները, որքան անպիտան են լինում: Եւ քանի քանի անգամ կռիւների ամենատաք ժամանակը հրացանը գինուորի ձեռքին փչանում է... Իսկ հետեւանքը պարզ է: Մի մոռանաք մի պարագայ. մինչեւ հիմա Երկիր չի մտել մի հմուտ գինագործ, թէեւ արտասահմանում ժողովների ժամանակ միշտ պարծեցել ենք մեր «արհեստանոցներով» եւ «զինագործներով»: Այդ բոլորի հետ ամբողջ տարիների ընթացքում չկարողացանք գոնէ բազմաթիւ մանր մասեր ստանալ՝ եղածները կանոնաւորելու համար. թէ քանի քանի անգամ գէնք գնող զանազան մարմիններ հազարներ ծախսելով ճանապարհորդութիւններ են կատարել...

Երկրի ռազմական պահանջների մասին առանձին ուշադրութիւն է դարձուելու եւ այն հասարակ պատճառով որ վերջերս Սարուստանում եւ Վրէժում ռազմական պահանջները լայնանալով աւելի այնտեղերի պահանջներին է գոհացում տրուում, քան այստեղի. ամէն մարդու շապիկը իր մարմնին աւելի է մօտիկ. փաստեր պակաս չեն, առաջ բերելը աւելորդ է: Այս խնդիրն եւս յանձնելու է առանձին (Երկրի համար կազմուած) մարմնի տնօրինութեան:

**թ.- Երկրում բանտարկելուց օգնութիւն պէ՞տք է թէ ոչ. եւ եթէ պէտք է ինչ աղբիւրներից եւ ինչ աստիճան.-** Այս խնդրի մասին քանիցս մասնաւոր նամակներով գրեցինք Բիւրոններուն, բայց ոչ մի դրական պատասխան չառանք: Ի նկատի ունեցէք որ մեր շրջանի (թերեւս եւ ամէն շրջանի) բանտարկեալները այնքան շատ են եւ նրանց պահանջները այնքան լայն, որ դրսում եղած ընկերների չափ ծախս է գնում (տե՛ս միամեայ հաշուեցոյցը. խօսքը միայն «ապրուստ» գլխի մասին է): Մինչեւ այժմ այդ եղել է մի ծանր բեռ Երկրի, գոնէ մեր շրջանի առանց այն էլ թերի բիւրոների գլխին: Ընկերներին առանց նպաստի թողնել, կատարեալ անբարոյա-



կանութիւն կը լինէր. Երկրում շատ աղբիւրներ ստեղծել անկարելի էր, որովհետեւ եղածները հազիւ բաւականացնում են ինքնապաշտպանութեան գործը: Այս խնդրին առանձին նշանակութիւն էք տալու եւ որոշ աղբիւրներ գտնելու բանտարկելոց համար: Մեր շրջանում առայժմ 50 քաղաքական բանտարկեալներ կան: Մանրամասները Թորգոմը կը պատմէ:

ժ.- Ի՞նչ ձեւի տակ դնել թերթը (պաշտօնական օրգան), որ Տաճկահայաստանի գործը մոռացութեան չտրուի. ինչպէս այժմ.- Թէ վերջերս «Դրօշակ»ը դադարել է տաճկահայոց դատի օրգան լինելուց, նրա ցաւերի արտայայտիչ լինելուց, հայկական եւ առհասարակ արեւելեան խնդրի իդիոլոգիական<sup>24</sup> ղեկավար լինելուց, այդ բոլորովին պարզ եւ ակաշկարա է. «Դրօշակ»ի մէջ ամէն բան կը գտնէք, բացի հայկական եւ արեւելեան հարցից:

Այս տարի խոշոր երեւոյթներ տեղի ունեցան Տաճկաստանի ներքին կեանքում, բայց այդ բոլորի մասին մի բառ էլ չկարդացինք «Դրօշակ»ում: Զեզ օրինակ Արաբական շարժումը, որ այնքան մեծ աղմուկ ձգեց թէ դուրսը եւ թէ ներսը. Մակեդոնական հարցի նոր փազիր<sup>25</sup> մէջ մտնելը, զանազան դիպլոմատիկական ընդհան-

24.- Գաղափարախօսական:  
25.- Հանգրուանի, փուլի:

րումները, ինչ որ շշուկներ Ալբանական շարժումների մասին. ինչ որ լուրեր Տերսիմում տեղի ունեցած դէպքերի մասին. ինչ որ կոտորածի ուրուականներ Տիգրանակերտի շրջանում. ի լրումն ամէնի եւ ոչ մի խօսք Դուրանի<sup>23</sup> այս տարուայ այնքան խոշոր դէպքերի մասին եւն եւն: Սրանք դեռ այն երեւոյթներն են, որ մեր դժոխային պայմանները թոյլ են տուել նկատելու, իսկ աւելի յաջող պայմաններում ապրողներն ինչ պահանջներ ունին, այդ էլ Աստուած գիտէ:

**ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆ. ՎԱՄՊ. Կ. ԿՈՄԻՏԷ**

1908 թ. Փետր. 18  
Շամիր



Փաստ. 668-8

**Բ 2.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

**Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆԻ III ԱՅՈՆՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՅԵ**

ԵԻՍՍ Ա. Յունիս 25 (1906)

**Ընկերներ**

- 1.- Սարգիս
- 2.- Ռուբէն
- 3.- Արամ
- 4.- Տիգրան
- 5.- Իշխան
- 6.- Մայիսա
- 7.- Սաման
- 8.- Վաթան
- 9.- Վարդան (բացակայ)<sup>27</sup>

**Օրակարգ**

- 1) Նոր ընկերներ կանչելու խնդիրը.
- 2) Սարհատի<sup>22</sup> եւ այլ վայրերի խնդիրը.

**Որոշումներ**

1) Ի նկատի ունենալով, որ Սասունի դէպքերից յետոյ, Դաշտի դրութիւնը վատացել է, որոշուեցաւ ընկեր Ռուբէնին ուղարկել այնտեղ, որ աշխատի խոհեմութեամբ Գէորգ Զաւուչի եւ Տատրակի<sup>28</sup> հետ խորհրդակցելով, չարիքը չէզոքացնել ժողովրդի վիճակը բարելաւել եւ պարբերաբար տեղեկութիւններ տալ մեզ երկրի դրութեան, իւր արածի կամ անելիքի մասին, որպէսզի տեղեակ լինենք այնտեղի իրականութեան եւ խորհենք ապագայի մասին: Ռուբէնը իւր հետ պէտք է վերցնի առայժմ 50 լիրա:

Որոշուեցաւ նոյնպէս առաջի պատեհ վայրեանին մարդ ուղարկել կազմակերպելու Մալնոյ-ձորի<sup>29</sup> շրջանը:

Ի նկատի ունենալով, որ Տիարբեքիւրի եւ Բարձրաբերդի<sup>30</sup> շրջաններում անհրաժեշտութիւն կայ կազմակերպելու, որոշուեցաւ առաջարկել Բիւրոյին մարդիկ ուղարկել այդ շրջանները:

2) Նկատելով որ նոր ընկերների կարիք կայ տեղս եւ բաւական թուով ցանկութիւն յայտնող ընկերներ կան Երկիր մտնելու, որոշուեցաւ Երկիր հրաւիրել հետեւեալ ընկերները. 1) Տոքտոր Ստեփան, 2) Վահան, 3) Նիկոլայ, 4) Մամիկոն, 5) Սուրէն Մայիսասեան, 6) Գրիգոր եւ Յարութիւն Տէր-Յովհաննէսեան (Բարսումեցի): Սրանցից առաջին երկուսը, Տոքտոր եւ Վահան կը ճանաչուեն Երկրի մարմնի իբր հաւասար ընկերներ, իսկ միւսները միայն իբր օժանդակ ընկերներ:

ԵԻՍՍ Բ. Յունիս 26

Նախորդ ժողովի ընկերները բոլորը ներկայ են:

**Օրակարգ**

- 1) Պատասխանատու մարմնի խնդիրը եւ ընկերների դասաւորումը:
- 2) Խորհրդի վճիռը դրամական եւ գինական:

**Որոշումներ**

1) Միեւնոյն վայրում երկու անջատ մարմինների իրարից անկախ գործունէութիւնը, տակտիկայի աննմանութիւնը եւ այլ խնդիրների վերաբերմամբ անհամաձայնութիւն չյառաջացնելու համար, տեղական մարմինների կողմից եւս առաջարկուած էր Պատասխանատու մարմին կազմելու խնդիրը: [Դաշնակցութեան] Խորհուրդը ըստ Երկրի ընկերների ցանկութեան, Պատասխանատու մարմին կազմելը թողել էր Երկրի մարմիններին, իսկ իւր կողմից նշանակել էր Սարգիսին. Այդ մարմինը պէտք է գործէր Խորհրդի կողմից ընդգրծած որոշ սահմաններում, ինչպէս յարաբերութիւն պահպանել երկու Կ. Կոմիտէների միջեւ եւ դրսի մարմիններում հետ, դրամական եւ գինական բաշխումները կատարել եւ հսկել, որ մարմնի գործողութիւնը մնայ Դաշնակցութեան ծրագրի շրջանում: Ժողովը նպատակաւորաբար չհամարեց առանց այն էլ ոչ լրիւ կազմերի կոմիտէների ուժերը ջլատել եւ կազմել մի երրորդ մարմին, այնպիսի իրաւունքներով, որոնք կը կատարեն նաեւ Կ. Կոմիտէները անջատ կամ իրար խորհրդակցու-

26.- Ոայնական այս ժողովի արձանագրութիւնը լոյս տեսած է Ռուբէնի «Հայ յեղափոխականի մը յիշատակներ»-ու Բ. հատորի յաւելուածի բաժնի մէջ (Գ. տպագր. Պէյրուս, 1983, էջ 303-313): Մեր ձեռքի տակ ունեցածը Պոսթընի արխիւներէն վերցուած արտագրութիւն մըն է. 11 էջ:

27.- Սարգիսը՝ Վանայ Սարգիսն է, Շամիլ կամ Բարսեղեան Սարգիս, իսկ բուն անունով՝ Օտապաշեան Պողոս: Տիգրանի ազգանունը կը մնայ անյայտ. կողքեցի էր եւ քահանայի գաւազ կը վարէր Կ. Կոմիտէի հաշուապահութիւնը մեծ բժախընդութեամբ: Նախապէս գործած էր Կովկաս եւ Ատրպատական Յարութիւն անունով, իսկ աւելի ուշ Վարդան ծածկանունով կը գտնուէր Սասուն, ուր նահատակուեցաւ 1915ի ապրիլի 11-ը: Մալմալի: Մալիսաի իսկական անունը Արտաշէս Յովսէփեան է. Սալմանը Համազասպ Բաղէշեանն է, Վաթանը Ղեւոնդ Մելոյեան, իսկ Վարդանը՝ Վարդան Շահապա:

28.- Տատրակը ծածկանունն է Մշոյ Գեղամին, Տէր Կարապետեան: Ռուբէնը՝ Տէր Միսասեան:

29.- Սալմոյ ձոր՝ Պիթիս-Բաղէշի կուսակցական ծածկանունն է:

30.- Բարձրաբերդը Կարին-Էրզրումի շրջանն է:

**Թեամբ:** Տեղի ունեցան զանազան թեր ու դէմ կարծիքներ. առաջարկուեցան հետեւեալ բանաձեւերը. ա. Մի մարմին 5 հոգուց ընտրովի եւ պիտի լուծուին Կ. Կոմիտէները. բ. մի մարմին ներկայ (Երկրի) բոլոր ընկերներով. գ. Պահել երկու Կենտ. Կոմիտէները աւելի ուժեղացրած եւ դ. Պատասխանատու մարմին խորհրդի ընդգծած (ձեւով) պահելով երկու Կ. Կոմիտէները: Սրանցից քուէարկութեամբ մեծամասնութեան կողմից մերժուեց առաջինը իբրեւ Երկրի մէջ դիկտատուրա ստեղծող ձեւ. ընդունուեց երկրորդը. մի մարմին կազմելը բոլոր ընկերներին. բայց յետոյ ի նկատի ունենալով տեխնիկական անյարմարութիւնները եւ ընկերների բաժանման մէջ անհամաձայնութիւններ, առաջարկուեցաւ եւ ընդունուեցաւ երկու Կ. Կոմիտէ ուժեղացրած կերպով որոնք պիտի վարեն իրենց շրջանի գործերը Ռայոնական ժողովի ընդգծած սահմաններում, մինչեւ յետագայ գումարուելիք Ընդհ. ժողովի կարգադրութիւնը: Լեռնապարի Կ. Կոմիտէի անդամներ որոշուեցան Իշխան, Սարգիս եւ Վարդան. իսկ Շամ մնացին Արամ, Տիգրան, Մալխաս, Սալման եւ Վաթան<sup>21</sup>:

2) Խորհրդի որոշած դրամական ռազմական բիւրճէի մասին որոշուեցաւ 15 հազար ռազմական(?) կազմակերպական դրամը կիսել հաւասար կերպով Լեռնապարի եւ Շամի միջեւ, իսկ ռազմամթերքի դրամը եւ փոխադրուած 2/3 մասը մնայ Շամ, իսկ 1/3ը ուղարկուի Լեռնապար: Առաջիկայ արդարեւ բաժանուեց թողնելով վերջնական բաժանումը ապագայի Ընդհ. ժողովի կազմը: Պատասխանատու մարմին որոշման:

Այս տեսակ բաժանման ձեւը առաջարկեց Իշխան ի նկատի ունենալով, որ այս կերպով աւելի հաւանականութիւն կայ կրկին նպատակայարմար կերպով բաժանելու:

**ՆԻՍ 9. Յուլի 27**

Բոլոր ընկերները ներկայ են

**Օրակարգ**

- 1) Ընդհանուր ժողովին մասնակցելը
- 2) Ձէնքի գնման գործը
- 3) Քաղաքական կոմիտէի եւ խմբեր
- 4) Արմենականներ

**Որոշումներ**

1) Դեկտեմբերին գումարուելիք Ընդհ. ժողովին իբր պատգամաւոր որոշուեցաւ առաջիկայ 3 հոգի՝ Արամը՝ Մանուկեան, Շամից, Իշխան՝ Լեռնապարից եւ Սալման<sup>21</sup> իբր երկրացի, բայց վերջնական որոշումը թողուեցաւ Հոկտեմբերին գումարուելիք IV Ռայոնական ժողովին: Ընդհանուր ժողովին մանրամասն ու հանգամանորէն տեղեկագիր ներկայացնելու համար որոշուեցաւ ընդհանուր գծերը երկու շրջանի համար, որպէս-

զի այժմեանից աշխատանքները սկսեն.

2) Ի նկատի ունենալով առհասարակ Երկրի եւ մասնաւորապէս քաղաքի զինման գործի անհրաժեշտութիւնը, որոշուեցաւ անխտիր կերպով քաղաքը զէնքի գնումը թէ կազմակերպուած խմբերին եւ թէ չհզոք ու համակիր անդամներին, պահելով միշտ հերթական սիստեմը: Այս որոշմանը համաձայն չէին Իշխան, Ռուբէն եւ Մալխասը, որոնք կարծում էին թէ պէտք է առաջնութիւն տալ կազմակերպուած խմբերի պահանջներին:

3) Նկատելով ժողովրդի զէնքի եւ ռազմամթերքի պահանջի հետզհետէ լայն ծաւալ ստանալը, որոշուեցաւ լուրջ ուշադրութիւն դարձնել զէնքի կոմիտիայի գործունէութեան վերայ եւ նոյն գործունէութիւնը հետզհետէ ընդլայնել զէնքի վաճառականութեան հրապարակը մեծացնելով: Բացի այդ կոմիտիայից որոշուեցաւ ձեռնարկել այլ միջոցների մանաւանդ ժողովրդեան փամփուշտներ հայթայթելու համար. այս մասին Արամը պէտք է աշխատի զէնքեր բերող եւ կոմիտիային վաճառող քրդերի հետ պայմանաւորել՝ որոշ գումարական առնելով նրանցից, որպէսզի նրանք գնան Վրէժից<sup>31</sup>, մեր այնտեղի ընկերների ձեռքով գնումներ կատարեն եւ բերեն այստեղ յանձնեն՝ որոշ դարձեալ պայմանաւորուած շահը ստանալով. այդ մասին նաեւ պէտք է գրուի Վրէժի յարմար ընկերներին:

4) Քաղաքի խմբերի մէջ եղած ընդունակ երիտասարդների վերայ լուրջ ուշադրութիւն պէտք է դարձընել, առաջ քաշել եւ որոշ ուղղութեամբ պրոպագանդայով եւ ընթերցանութեամբ պատրաստել ապագայ գործիչներ. իսկ զինուորական ընդունակ երիտասարդներից կազմել գուտ զինուորական խմբեր եւ դրանց հետ պարապել այդ ուղղութեամբ:

Քաղաքային կոմիտէին աստիճանաբար պէտք է ծանօթացնել բոլոր քաղաքային գործերին եւ հետզհետէ նորա գործունէութեան սահմանները ընդլայնել յանձնելով նորան ամբողջ քաղաքի եւ իր շրջանի գործերը:

5) Ի նկատի ունենալով որ Տաճկաստանում յեղափոխական տարբեր կուսակցութիւնների գոյութիւնը չարիք է, իսկ ներկայ հանգամանքներում Արմենականութեան գոյութիւնը լոկ թիւրիմացութիւն է, որոշուեցաւ քաղաքում գոյութիւն պահպանող արմենականներին խաղաղ պրոպագանդայով քաշել Դաշնակցութեան մէջ: Իսկ եթէ նրանք դուրս գալով քաղաքից, կուսակցական կոիւներ առաջացնելով սկսեն ոտնձգութիւններ անել նոյն գաւառներում եւ գիւղերում, որ Դաշնակցութիւնը արդէն կազմակերպել է, նախ պէտք է խաղաղ միջոցներով ատելութեան առաջն առնել, իսկ եթէ այդ խաղաղ միջոցները չբաւականեն, իբր փոքրագոյն չարիք պէտք է դիմել բռնի ոյժի զինաթափ անելով նրանց:

31.- Վրէժը Ատրպատականն է:

**ՆԻՍ 9. Յուլի 29**

Բոլոր ընկերները ներկայ:

**Օրակարգ**

- 1) Արասահմանի յարաբերութիւնը եւ փոխադրութիւնը
- 2) Լեզալ հաստատութիւնների վերահսկողութիւնը եւ դատական խնդիր
- 3) Գիւղացիների եւ առհասարակ գաղթականների փոխադրած դրամների խնդիրը
- 4) Բանտի ընկերների հետ յարաբերութիւն պահել եւ պահանջներին բաւարարութիւն տալ:

**Որոշումներ**

1) Ի նկատի ունենալով, որ արտասահմանեան յարաբերութիւնները եթէ միայն մի կոմիտէ պահէ անկարելիութիւն կայ տեղական պայմաններու շնորհիւ մշտական խորհրդակցութիւնների, ուստի որոշուեցաւ իւրաքանչիւր Կ. Կոմիտէ անկախ կերպով յարաբերութիւն պահպանել արհասահմանի հետ: Պէտք է պարբերաբար թղթակցել նաեւ պաշտօնական օրգաններին: Փոխադրութիւնը պէտք է կատարէ դարձեալ Շամի կոմիտէն:

2) Ի նկատի ունենալով, որ հասարակական գործերը հետզհետէ կը կենտրոնանան յեղափոխութեան ձեռքը, ուստի որոշուեցաւ լեզալ հաստատութիւնների վերայ վերահսկել միայն աշխատելով ընդհանուր ուղղութիւն տալ վանքերի կառավարութեանց եղանակին, ուսումնարանների, առաջնորդարանի, թաղականութեանց եւ այլն: Պէտք է առհասարակ կլանուիլ ամբողջապէս լեզալ հասարակական գործերով ի վնաս գուտ յեղափոխական գործի:

Դատական խնդիրները իբրեւ անհրաժեշտութիւն, որոշուեցաւ գոնէ պահել դարձեալ յեղափոխութեան ձեռքին, ուստի պէտք է դատական մարմինները շարունակեն իրենց գործունէութիւնը վճռելով միայն նոր խնդիրները, իսկ ԹԻ-ից առաջ պարտք կամ պահանջ քաղաքացու եւ գիւղացու միջեւ այլեւս ճանաչելու չէ, ի նկատի ունենալով, որ կարգ մը քաղաքացի սնանկ վաճառականներ մերժում են իրենց պարտքը վճարել գիւղացի պահանջողներու, իսկ իրենք կառավարութեան միջոցով ժողովում են գիւղացիների վերայ ունեցած առնելիքները: Քաղաքի դատերը նկատելով, որ գուր ժամանակ են խլում եւ կառավարութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրում, որոշուեցաւ ամբողջովին թողնել թաղականութիւններին եւ նրանց վճիռը համարել վերջնական:

3) Արտասահմանից մշտական դրամ փոխադրող վաճառականները, երբ ուշացնում են վճարելը, ամէն անգամ խիստ պէտք է միջամտել եւ պահանջատէրերին բաւարարութիւն տալ:

4) Բանտի ընկերների պահանջներին պէտք է բաւարարու-

րարութիւն տալ, նրանց հետ յարաբերութիւն պահել, հսկել դատավարութեան վերայ եւ միշտ ուշադրութիւն տալ վտանգուած ընկերների դատերին, ազդելով դատավարութեան վերայ սպառնալիքներով, կաշառքներով եւ այլ միջոցով: Այս գործի վերահսկողութիւնը յանձնուեցաւ Վաթանին<sup>21</sup>:

**ՆԻՍ 6. Յուլի 30**

Բոլոր ընկերները ներկայ են

**Օրակարգ**

- 1) Չինաւորում եւ ժողովրդական զինուորագրութիւն
- 2) Գաւառական, զինուորական, կամաւորների կանոնների մշակումը
- 3) Կազմակերպական բիւրճէ Երկրի:

**Որոշումներ**

1) Շամի եւ Լեռնապարի գաւառական-գիւղական կազմակերպութեան ձեւի մէջ ժողովս նկատեց տարբերութիւններ. չնայած որ երկու վայրերում էլ գիւղերի կազմակերպութիւնը համայնական է, ամբողջ գիւղը կազմակերպուել է, բայց այն տարբերութեամբ, որ Լեռնապարի համար գնուած զէնքերը բոլորը գտնուում են կազմակերպութեան տրամադրութեան տակ. կազմակերպութեան միջոցով գնուած զէնքը համարուում է համայնական, իսկ Շամի շրջանում խմբական զէնքերից զատ կան նաեւ անհատական զէնքեր: Այդ մասին որոշուեցաւ ամբողջ Վասպուրականի շրջանի կազմակերպութիւնը միօրինակութեան վերածել եւ ժողովը աւելի նպատակայարմար համարեց Լեռնապարի կազմակերպական սիստեմը, որովհետեւ այդ պարագային կազմակերպութիւնս պէտք եղած ժամանակ, կարող է շրջանի ամբողջ ուժերը դասաւորել այնպէս ինչպէս ինքն է կամենում. ուստի որոշուեցաւ Շամի գիւղերի խմբական եւ անհատական զէնքերն էլ այսուհետեւ համայնացնել:

Համայնքը պարտական է մասնակցել զէնքի եւ դրամի հայթայթման, զինուորների եւ սուրհանդակների պահպանման եւ փոխադրութեան. սրանցից իւրաքանչիւր գիւղում ընտրովի պէտք է կազմակերպել թրուցիկ եւ ինքնապաշտպանութեան խմբեր, իսկ վերջիններից դուրս մնացած անհատները իբրեւ նպաստող անդամներ՝ ամսականներ են տալու: Ամսականները հաւաքուում է շրջանի ենթակոմիտէի կասսան եւ դրանով գրնուում է կազմակերպական լաւ զէնքեր: Այդ զէնքերը դրուում են ենթակոմիտէի տրամադրութեան տակ:

2) Ի նկատի ունենալով, որ ներքին կանոնադրութեան շատ կարիք կայ, իսկ եղածները լրիւ չեն, որոշուեցաւ 3 հոգի՝ Իշխան, Տիգրան եւ Արամ<sup>21</sup> մինչ մի ամիս նիւթեր հաւաքեն եւ միասին կազմեն գաւառական,

խմբական, գինուորական եւ կամաւորների կանոնադրութիւններ եւ ներկայացնեն Սեպտեմբերին գումարւելիք Ռայոնական ժողովին ի հաստատութիւն:

3) Որոշուեցաւ 2 շրջանի համար ունենալ մինիմում 500 ոսկի գուտ կազմակերպական բիւզճէ, որ հայթայթուելու է հետեւեալ աղբիւրներից — հանգանակութիւններ, կամաւոր նուէրներ, տուգանքներ, քաղաքի խմբերի մուտքի 1/4ը եւ այլն: Հաւասար կերպով տալու են երկու շրջանները:

**ԼԻՍՍ Զ. Յուլիս 1**

Բոլոր ընկերները ներկայ

**Օրակարգ**

- 1) Օտար տարրերի հետ յարաբերութեան խնդիրը
- 2) Կարգադրութիւն Շամի շրջանի գաւառների մասին
- 3) Գործունէութեան ընդհանուր տակտիկա երկու շրջաններում:

**Որոշումներ**

1) Քիւրտերի հետ ունեցած մեր յարաբերութիւնը ցոյց է տուել, որ նրանց աղաները ոչ մի քաղաքական իդէալ չունեն, մեզ մօտենում են միայն մասնակի (փէշքէշ, նուէր, կառավարութեան առաջ միջամտել եւ այլն) միտումներով, ուստի նրանց հետ դաշնակցել չենք կարող: Ազիտացիայի համար էլ յարաբերելը շատ թանգ է նստում թէ մեզ վերայ եւ թէ մասնաւորապէս ժողովրդի վերայ, որոշուեցաւ միայն փոխադրութեան եւ նման գործնական խնդիրների համար կապ եւ յարաբերութիւն ունենալ մասնաւոր քրդերի եւ զոլամների հետ վարձով եւ փէշքէշներով նրանց շահագործելու համար:

Պէտք է աշխատել թուրք աշխատաւոր ժողովրդի եւ զօրքի մէջ յեղափոխական տրամադրութիւն ստեղծել թուրքիկներով, մասնաւոր տեսակցութիւնով եւ նման

միջոցներով:

2) Շամի գաւառների համար որոշուեցաւ առաջիմ գնայ Տիգրանը, մինչ մի ամիս կազմակերպէ որքան հրնարաւոր է գծուած ուղղութեամբ ապա վերադառնայ ու Մալխասի հետ գնայ Հայոց-ձոր մօտ մի ամսուայ չափ միասին գործեն մինչեւ Մալխասը ծանօթանայ գործերին: Այնուհետեւ Տիգրանը կը վերադառնայ իսկ Մալխասը կը մնայ Հայոց-ձորում:

Քաջբերունեաց եւ Բզնունեաց հետ առաջիմ պէտք է պահել յարաբերութիւնը եւ աշխատել ազատ ընկերներ ուղարկել ուսումնասիրելու:

Քաղաքի շուրջը գտնուած եւ եզիտ նահանգների շրջանի գիւղերը դարձեալ պիտի մնան Յարութիւնի ձեռքի տակ. մեզանից մէկն ու մէկը պէտք է նրա հետ գնայ պտտելու եւ իմանալու թէ կազմակերպութիւնը ինչ աստիճանի յաջող է:

3) Շեշտելով անցեալ տարուայ I Ռայոնական ժողովի որոշման այն կէտը թէ պէտք է խուսափել ամէն մի ընդհարումից եւ զանազան գործին բացասաբար ազդող պարագաներից, ինչպէս են՝ ընդհարումներից, դատական խնդիրներից, աղմկալի տեղորոշներից եւ այլն, որոնք կարող են ազդել կառավարութեան վրայ ու առաջ բերել գործը վիժեցնող պարագաներ, III Ռայոնական ժողովը վաւերացնում է այդ եւ որոշում է այսուհետեւ էլ շարունակել գործունէութիւնը այդ ուղղութեամբ պատասխանատու ճանաչելով Ռայոնական ժողովի առաջ այն մարմինը կամ անհատը, որի շրջանում կամ որի միջոցաւ տեղի է ունենում այդ վերոյիշեալ գործը վիժեցնելու բնաւորութիւն ունեցող երեւոյթները:

Իսկականի վերայ ստորագրուած է՝

**ԱՐԱՄ, ՍԱՐԳԻՍ, ԻՇԽԱՆ, ՄԱԼԽԱՍ, ՎԱԹԱՆ, ՌՈՒԲԷՆ, ՍԱԼՄԱՆ, ՏԻԳՐԱՆ**

Փաստ. 666-13

**Բ 3.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՇԱՄԻ ԵՒ ԼԵՌՆԱՊԱՐԻ Դ. ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ**

1906 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20 – ՍԵՊՏ. 30

**ԼԻՍՍ Ա. Սեպտեմբեր 20**

Ներկայ են Իշխան, Սարգիս, Տիգրան, Արամ, Մալխաս, Վաթան եւ Սալման. բացակայ է Վարդան<sup>27</sup>:

**Օրակարգ**

- 1.- Ընդհ. ժողովին մասնակցելու խնդիր
- 2.- Հայաբնակ բոլոր վայրերի դերը Ընդհ. յեղափոխութեան գործում
- 3.- Շամիի եւ Լեռնապարի դրամական եւ ռազմական պահանջը Ընդհ. ժողովից
- 4.- Ընդհ. ժողովի պարագամունքների ցուցակը
  - ա.- Տաճկահայ խնդիր
  - բ.- Շարժումներ մահմետական տարրերի մէջ. հաւանական դաշնակցութիւն նրանց հետ (երիտասարդ թուրքեր, մակեդոնական կազմակերպութիւն) եւ այլն:

**Որոշումներ**

1.- Ընդհանուր ժողովին մասնակցելու ներկայացուցիչների մասին հարց է դրուում թէ արդեօք նրանք ներկայանալու են լոկ իբրեւ Վասպուրականի ներկայացուցիչներ, որոնք պիտի առաջադրեն միայն Վասպուրականին վերաբերեալ խնդիրներն ու պահանջները, իբրեւ Երկրի յեղափոխական ամենավաղ շրջանների ներկայացուցիչները, պիտի դնեն նաեւ այդ շրջանների մարմինների կարծիքները յեղափոխական այն ուղղութեան մասին, որին հետեւելու է Դաշնակցութիւնը Տաճկաստանի միւս հայաբնակ վայրերում: Հարցը վճռուում է դրական մտքով. ի նկատի ունենալով որ ընդհանրապէս մասնակի ցոյցերն ու ձեռնարկները ցանկալի հետեւանքների չեն հասցնում, շեշտում է մի քանի վայրերի միաժամանակ գործունէութեան անհրաժեշտութիւնը, յեղափոխական-ապստամբական կրթակը հնարաւոր չափով աւելի լայն շրջաններում տարածելու եւ պայքարը աւելի տեւական դարձնելու համար. այդ գործունէութիւնը կարող է լինել նոյնիսկ ինքնապաշտպանողական հողի վրայ, որին կարելի է, սակայն, ըստ ապագայում ստեղծուելիք դրութիւնների տալ այս կամ այն արտայայտութիւնը. ուստի եւ ժողովը ի նկատի է ունենում Տաճկաստանի ընդհանուր հա-

յաբնակ վայրերը եւ արտայայտում է իր կարծիքները այդ տեղերում ունենալիք յեղափոխական ուղղութեան մասին, իր ներկայացուցիչների միջոցով Ընդհ. ժողովին առաջադրելու համար:

2.- Համաձայն նախորդ որոշման վերցւում է իւրաքանչիւր վայրը առանձին-առանձին. նախ՝ Արեւել-Բիւրոյի շրջան, որին պատկանում են Դուրան, Բարձրաբերդ, Մալոյ-Ձոր, Վիշապաձոր եւ Վասպուրական<sup>32</sup>: Առաջարկում է յիշեալ վայրերից Մալոյ-Ձոր, Դուրան, Բալու եւ Քղթ<sup>33</sup> կազմակերպել ոչ միայն ինքնապաշտպանութեան հողի վրայ, այլ ի նկատի ունենալով իբրեւ ապստամբավայրեր, յեղափոխական գործ ստեղծել: Առանձնապէս Շեշտում է Դուրանի եւ Մալոյ-Ձորի ժողովրդի պատրաստականութեան մասին, եւ հնարաւոր է համարում առաջիկայ Ընդհ. ժողովից յետոյ հէնց խորհել այդ վայրերում յեղափոխական գործունէութիւն սկսելու մասին եւ ուղարկել ձեռնհաս ընկերներ գործ ստեղծելու համար: Իսկ Վիշապաձորում, Բարձրաբերդում եւ Տրապիզոնում յիշեալ վայրերի հետ միաժամանակ սկսել գործունէութիւն միայն ինքնապաշտպանողական հողի վրայ: Իբրեւ յեղափոխական ապստամբավայրեր ի նկատի պէտք է ունենալ նաեւ Շապին Գարահիսար, Դերսիմ եւ Խարբերդ, որոնք յարմարութիւն են ներկայացնում, երկրորդը իր լեռնային դիրքով եւ միւսները բաւական խիտ ազգաբնակչութեամբ: Արեւմտեան Բիւրոյի շրջանից խօսելով Լեռնավայրի<sup>34</sup> մասին, նկատում է որ այդ պէտք է համարել իսկապէս մի առանձին շրջան, որ անմիջական կապ չունենալով Մալոյ-Երկրի հետ, չէ մտել այն վիլայէթների ցանկի մէջ, որոնց բարենորոգումը ծրագրուած է Բերլինի տրակտատում եւ Մալխասն Մրագրում: Այսուհանդերձ շեշտում է, որ այնտեղ էլ քաղաքական եւ սոցիալիստական նոյն պայմաններն են տիրապետում ինչ որ յիշեալ վիլայէթներում. եւ հետեւաբար այնտեղ

32.- Յաջորդաբար՝ Տարօն, Սասուն, Բաղէշ, Տիարպեցիք, Վան-Վասպուրական:  
 33.- Բալու, Քղի եւ շարուճակութեան մէջ շատ մը տեղա-  
 նուցնելով ծածկագրով (չիֆրէ) եմ եւ կը բացուին «Որ մտնում եմ  
 քաջի սման» կոչու տալով մինչեւ վերջ»ի շարքով: Բոլոր ծած-  
 կագրերը կու տանք շեղագիր:  
 34.- Լեռնավայրը Կիլիկիան է:

եւս պէտք է հող պատրաստել յեղափոխական գործունէութեան համար. սկզբում այդ կարող է լինել ժողովրդական — ինքնարաշտպանական, սակայն ապագայում, համաձայն տեղական պարագաների, կարող է փոխուել ակտիւ յեղափոխութեան եւ ձեռնարկային գործի: Անցնելով Վիշապին եւ Ոսկեհանքին<sup>35</sup>, մեծամասնութեամբ յարմար է համարուում, որ այդ քաղաքներում ստեղծուի ժողովրդական կազմակերպութիւն, առաջ քաշելով տեղական ուժերը եւ ստեղծելով տեղական բիւրօ՛: այդ տեղերում կարող են լինել սակայն ապագայում միայն ու միայն ցուցական ձեռնարկներ, որոնք կատարուած լինելով այդպիսի աչքի ընկնող կենտրոններում, ուժեղ արձագանգ պիտի հանդիսանան Երկրում կատարուող ապստամբական ակտի, եւ հետեւաբար այդ ձեռնարկները կարող են լինել այն ժամանակ միայն, երբ երկրում սկսուում է պայթարը: Այդ տեսակէտից դատելով Ոսկեհանքից աւելի կարեւորութիւն պէտք է տալ Վիշապին: Երկու քաղաքների մասին եղած այս կարծիքներին համաձայն չէին Իշխանն ու Արամը, որոնք այդ վայրերում կատարուած ուժեղ ձեռնարկ համարում են անօգուտ գործ:

Անցնելով Վասպուրականի շրջանին (Շամիր եւ Առնապար) նկատուում է, որ յեղափոխական գործը այս վայրում արդէն որոշ հասունութիւն է ստացել. ժողովրդի յեղափոխական ընդհանուր տրամադրութիւնը բարձրացել է եւ շատ հաւանական է, կառավարութիւնը խիստ միջոցների դիմելու պարագային, պայթի կատաստրոֆը<sup>36</sup>, որ իր վաղաժամ լինելու պատճառով պիտի դառնայ յեղափոխական ձեռնարկի դժբախտ վիժում. ուստի անհրաժեշտ է համարուում նախ՝ ինչքան հնարաւոր է, ինչքան այդ կախումն ունի մեզանից, աշխատել կատաստրոֆը ուշացնել, խուսափելով այն ամէն արտայայտութիւններից, որոնք կարող են կառավարութեան ուշադրութիւնն ու զայրոյթը հրահրել եւ այդ նպատակով նորից շեշտուում է Գ. Ռայտնական ժողովի Զ-րդ նիստի 3 յօդուածը<sup>37</sup>, որով պատասխանատուութեան են ենթարկուում այն բոլոր խմբերն ու անհատները, որոնք իրենց անխոհեմ ընթացքով տեղի կը տան ընդհարումների եւ աղմուկների. եւ երկրորդ՝ եթէ հակառակ մեր բոլոր ջանքերին չյաջողուց յետաձգել կատաստրոֆը, գէթ լինել պատրաստ, աւելի տրամադրելի ուժերով եւ լայն սահմաններում նրան դիմադրելու եւ համեմատաբար աւելի տեւական ու արդիւնաւոր կուի մղելու համար:

3.- Ի նկատի ունենալով նախորդ որոշման վերջին կէտը, այն է Վասպուրականի շրջանում յեղափոխական գործի հասունանալը, եւ դրա հետեւանքով մօտաւոր ժամանակներում կատաստրոֆի պայթելու հաւանականութիւնը, ի նկատի ունենալով թուրք-բուլղարական հաւանական եւ մօտաւոր ընդհարումն եւ դրանից առաջանալիք քրտական անխուսափելի շարժումները

ընդդէմ քրիստոնեայ ազգաբնակչութեան, կանոնաւոր դիմադրութիւն ցոյց տալու համար անհրաժեշտ է համարուում մինչեւ 1909 թիւը ունենալ հետեւեալ պատրաստութիւնը. ժողովրդական զէնքերը մինչեւ այդ թ. կարող են հասնել երկու հազար<sup>38</sup> հրացանի, որի համար անհրաժեշտ է պահանջել 200.000 ծալր<sup>39</sup>. դրամը պիտի վճարէ ժողովուրդը հատը մէկ դահեկան, իսկ փոխադրութեան ծախսը իր վրայ պիտի առնէ կազմակերպութիւնը: Իբրեւ կազմակերպական բիւրօ՛ է յաջորդ 907 եւ 908 թուականների համար պէտք է պահանջել 1.- հազար հրացան — (0.5) միլիոն ծալր ի նկատի ունենալով որ կէսը կարող է ճանապարհին կորչել. իսկ փոխադրութեան համար 100 հազար ռուբլ. եւ ձեռնարկի<sup>38</sup> եւ այլ պարագաների համար 200 հազար ռուբլ.: Իբրեւ զինուորական ընկեր անհրաժեշտ է, որ այդ ժամանակ Երկիր մտնեն Պարոյր, Դուրմաշ, Վարդան եւ Ռոստոմ<sup>40</sup>: Իբրեւ ինքնիշխան ուժ պէտք է հրահրել եւ 10-ի չափ կրթուած մանր զինուորական ուժեր եւ ինտելիգենտ գործիչներ:

4.- Անցնելով Ընդհ. ժողովի պարագամունքների ցուցակին, որոշուում է պատրաստել տեղեկագիր համաձայն նախապէս կազմուած ծրագրի. ապա կարծիքներ են յայտնուում 11-ի բ կէտի նկատմամբ — «Շարժումներ մահմետական տարրերի մէջ, հաւանական դաշնակցութիւն նրա հետ (երիտասարդ թուրքեր, մակեդոն. կազմ. եւն.)». դիտուում է, որ մեր միջավայրում թրքական կամ քրտական յեղափոխական գոյն կրող որեւիցէ երեւոյթ բնաւ չի նկատուում. բայց հայ յեղափոխական կազմակերպութիւնների լայն ծաւալ ստանալը, արաբական ապստամբութիւնը, ռուսական յեղափոխութեան մեծ շարժումը, Պոլսի (փորձ Սուլթանի անձի դէմ, Ռուզվան փաշայի սպանութիւնը եւ նրան հետեւող աքսորները) եւ Պարսկաստանի դէպքերը, մանաւանդ կառավարութեան ճնշումներն ու տուրքերի աստիճանական բարձրացումը թուրք ու քիւրտ հասարակ ժողովրդի վրայ, յառաջ են բերել համոզմունքների որոշ փոփոխութիւն, որոնք արտայայտուում են հայերին եւ հայ յեղափոխական շարժման պլատոնական համակրութիւն յայտնելով եւ հրապարակօրէն յաճախ կառավարութեան ընթացքի դէմ խօսելով եւ նրան վարկաբեկ անելով: Թուրք եւ այլ տարրերի հետ յեղափոխ. ձեռն[արկների] նկատմամբ որոշուեցաւ թուրք աշխատաւոր ժողովրդի եւ գործի մէջ յեղափոխական տրամադրութիւն ստեղծել:

35.- Վիշապը Պոլսոյ կուսակցական ծածկանունն է, իսկ Ոսկեհանքը՝ Իզմիրին:  
 36.- Աղտոյ:  
 37.- Տեսնել Ուլտոյի Բ 2 փատաբուրդը էջ292:  
 38.- Բնագրին մէջ ռուսատառ հայերէն:  
 39.- Փամիուշտ:  
 40.- Յարրոպար՝ Աճորանի, Նիկոյ Դուման, Խանասորի Վարդան (Սեիրաբեան Սարգիս) եւ Ոստում Չօրեան:

ծել, թուրքիկներով, մանաւոր տեսակցութիւններով եւ ուրիշ հնարաւոր միջոցներով. ուստի անհրաժեշտ համարուեցաւ արտասահմանի ընկերներից խնդրել թուրքիկներ, յայտարարութիւններ թուրք յեղ[ափոխական] ակնաւոր գործիչների ստորագրութեամբ, թրքական ժողովրդի զանազան խաւերի մէջ տարածելու համար:

**ՆԻՍ Բ. Սեպտեմբեր 22**  
 Ներկայ են բոլորը՝ բացի Վարդանից:

**Օրակարգ**  
 Ընդհ. ժողովի պատգամաւորների ցուցակ 1-ի Երդ կէտը.՝ Տաճկահայ մարմինների կարծիքը կովկասեան եւ ընդ. Ռուսական շարժման մասին:

**Որոշումներ**  
 Առաջարկուած խնդրի նկատմամբ յառաջ եկան երկու բանաձեւեր.

1. Բանաձեւ. Կովկասեան յեղափոխական շարժումը որոշ քաղաքական, սոցիալ-տնտեսական պատճառներ ունեցող մի երեւոյթ լինելով, ոչ մի ժողովուրդ չի կարող դուրս մնալ նրանից, մանաւանդ որ դա ուժեղ կուսակցութեան ստեղծած շարժում չէ, ամէնքը, ինչպէս եւ հայ ժողովուրդը ուժեղ կերպով պիտի դիմադրեն նրան, իբրեւ իրենց կեանքի մէջ բարեփոխութեան մտցնող մի շարժում: Այս բանաձեւին համաձայն էին Իշխան, Վաթան, Մայիսա եւ Արամ<sup>21</sup>:

2. Բանաձեւ. Կովկասահայ յեղափոխութիւնը ունի իւր տնտեսական-քաղաքական պատճառներ. այդ շարժումը անհրաժեշտօրէն յառաջ պիտի գար եւ եկաւ, առաջադրելով իրեն համար քաղաքական ու տնտեսական որոշ իդէալներ, ուստի եւ յայտնեցաւ էլ ուժեղ կերպով յառաջ պէտք է տանիլ այդ շարժումը, մինչեւ իր քաղաքական ու տնտեսական իդէալների իրագործումը: Այս բանաձեւին համաձայն էին Սարգիս, Սալման եւ Տիգրան<sup>21</sup>:

Իսկ այդ շարժման եւ ընդհանուր ռուսական յեղաշարժման մէջ եղող կապի համար բոլորի կողմից ընդունուեցաւ հետեւեալ բանաձեւը. Ի նկատի ունենալով, որ ռուսական յեղափոխական շարժումների բուն պատճառները թաքնուած են բիւրոկրատիկ կառավարութեան ռեժիմի մէջ եւ որ միայն այդ ռեժիմի տապալումով է, որ համեմատօրէն ազատ շունչ պիտի քաշեն բոլոր ճնշուած տարրերը, ուստի անհրաժեշտօրէն պէտք է միանալ ռուս բոլոր յեղափոխական տարրերի հետ, ընդհանուր ուժով տապալելու բոլոր չարիքների արմատ միապետական բիւրոկրատիկ կառավարութիւնը, մանաւանդ երբ այդ բռնակալական ռեժիմի անկումով մահացու հարուած կը տրուի ասիական բռնապետութիւններին:

**ՆԻՍ Գ. Սեպտեմբեր 23**  
 Ներկայ են բոլորը՝ բացի Վարդանից

**Օրակարգ**  
 Տակտիկի քննութիւնը նոր պայմանների եւ պահանջների համաձայն, — ինքնապաշտպանութիւն, գիտում, թուրքիկ խմբեր, կենտրոնացում, ցուցական ձեռնարկներ թուրք եւ այլ տարրերի հետ (Ընդհ. ժող. փարապ. ցուցակ 11-ի 4 կէտը):

**Որոշումներ**  
 Տակտիկի հարցը որոշ կերպով պարզուելու համար ի նկատի է առնուում յեղափոխական անցեալը, որոշելու տակտիկի այն ձախող կողմերը, որոնք պատճառ են եղել յեղափոխական այս կամ այն ձեռնարկի վիժման եւ ապարդիւն դառնալուն. ու գտնում են որ գլխաւոր պատճառներն են

1.- Զինուորական ուժերի ներկայութիւնը, որ վրտանգաւոր է միշտ յեղափոխական նախապատրաստական շրջաններում, որովհետեւ այս կամ այն կերպ արտայայտուում են նրանք եւ ունենում ծանրակշիռ ու չնախատեսուած հետեւանքներ:

2.- ժողովրդական կազմակերպութեան բացակայութիւն, որի վրայ պէտք է հիմնուի անպայման յեղափոխական գործը.

3.- Արտասահմանը, խոշորացոյցային չափերի են հասցնում Երկրում կատարուած ամենաչնչին դէպքը եւ շահագործում անբեւեակայելի եւ վտանգաւոր եղանակներով, որի ազդեցութեամբ առաջացած ոգեւորութիւնը պատճառ է դառնում աղմկալի ցոյցերի, արշաւախմբերի, անկախ Երկրի կամքից ու ցանկութիւնից. ուստի որոշուեցաւ նախ զօրացնել Երկրի ժողովրդական կազմակերպութիւնը հնարաւոր եղած չափով, գործի հրահրելով որքան կարելի է ինտելիգենտ ուժեր, խուսափելով զինուորական այն արտայայտութիւններից, որոնք վնասում են գործին եւ թոյլ չտալ արտասահմանեան ուժէ մարմնի ինքնագլուխ Երկրի վերաբերեալ ամենաչնչին կարգադրութիւնն իսկ անել, այլ առաջնորդուել միայն ու միայն Երկրի մարմնի ցուցմունքներով եւ հրահանգներով, պահպանելով խորին գաղտնիք ու լուսթիւն երկրում կատարուած ամէն բիւրոկրի ու դէպքի համար. հակառակ պարագային պատասխանատուութեան հրահրել այն մարմիններու ընկերները, որոնք առանց երկրի մարմնի գիտութեան ինքնագլուխ կերպով մի քայլ կ'անեն երկրի նկատմամբ:

Ժողովրդի ինքնապաշտպանութեան հարցում նրկատուեցաւ, որ յեղափոխական զանազան ձեռնարկների պարագային ժողովուրդը համարեա ոչ մի դեր չի ստանձնել եւ ընդհակառակն վնասուել է. ուստի անհրաժեշտ համարուեց շարունակել ժողովրդական ուժեղ



գինումն, որպէսզի պէտք եղած պարագային միանայ յեղափոխական ձեռնարկին. իսկ ձեռնարկային ձախորդ դէպքերում կարողանայ գէթ ինքնապաշտպանութեամբ իր գոյութիւնն ապահովել: Արդէն ձեռնարկուած լինելով գիւղական ինքնապաշտպանութեան խմբերին կից կազմակերպել թուցիկ գինուորական խմբեր, որոշուեցաւ շարունակել նոյն ուղղութեամբ դրանց դերը պիտի լինի ձեռնարկների ժամանակ կամ միանալ տեղական ինքնապաշտպան ուժերին կամ գործել իբրև յեղափոխական գինուոր:

Ինչ վերաբերում է թուրք եւ այլ տարրերի հետ ունենալիք ցուցական ձեռնարկներին, այդ մասին ժողովի կարծիքը տես նիստ Ա. 4-րդ կէտը:

**ՆԻՍՏ Դ. Սեպտեմբեր 24**

Ներկայ են բոլորը՝ բացի Վարդանից:

**Օրակարգ**

- 1.- Զինուորական եւ ռազմական ուժի կազմակերպումն եւ պատրաստութիւնը թէ՛ ներքին ներքը եւ թէ՛ դուրսը (Պարագ. Ծուց. II-ի 5 կէտը):
- 2.- Քաղաքական դիպլոմատիկական քայլեր (պարագ. մոնիթորինգ) ցուցակի II-ի 6 կէտը):
- 3.- Մեր ուղղութիւնն ու բռնելիք դիրքը ընդհանուր յեղ. շարժման մէջ, ինչպէս եւ մեր ունենալիք յարաբերութիւնները միւս յեղ. կուսակցութիւնների հետ (պար. ցուց. III Կովկասահայ խնդիրը 3-րդ կէտ):
- 4.- Դաշնակցութեան դերը քաղաք-հասարակական ասպարէզներում (Պար. Ծ. III-ի 5րդ կէտը):
- 5.- Տաճկահայ եւ կովկասահայ խնդիրների ներքին կապը գործունէութեան եւ կազմակերպչական տեսակէտով (պարագ. ցուց. IV-ի 1 կէտը):

**Որոշումները**

1.- Երկար վիճաբանութիւններից յետոյ առաջարկուեցան երկու բանաձեւ. ա. բանաձեւ. - Ընդհանուր ապրտամբական եւ ձեռնարկային գործում մենք նախապատուութիւն ենք տալիս ռազմական եւ գինային ուժերի կենտրոնացման երկրում, համոզուած լինելով, որ այդպիսի դէպքերում ներսի տասը կուռուղը աւելի բան կարող է անել, քան դրսից եկած հարիւրը: Այդ տեսակէտն ի նկատի ունենալով մենք պահանջ ենք դնում առանձին ուշադրութիւն դարձնել երկրի պահանջների վրայ եւ լիովին բաւարարութիւն տալ նրանց. եթէ կազմակերպութիւնը երաշխաւորում է, որ երկրին բաւարարութիւն տալուց յետոյ յաւելեալ ուժեր կ'ունենայ, այն ժամանակ մենք կողմնակից ենք դրսի օգնութեան հասնող խմբերի եւ արշաւախմբերի, որոնք կարող են օգտակար դառնալ մանաւանդ երբ երկրում ապստամբութիւնը համայնաժառակ բնաւորութիւն ունի. միայն թէ պէտք է նախօրէ լռիկ կազմակերպել ղեկավարուե-

լով ներսի ընկերների հրահանգներով: Համաձայն էին այս բանաձեւին Վաթան, Սարգիս, Տիգրան եւ Սալման:

բ. բանաձեւ. - Նկատելով որ Երկրի ներքը եղած շարժումների ժամանակ սահմաններում գինուորական վիճակ ստեղծուում է, անցուղարձը դժուարանում. նկատելով որ Արտասահմանից եկած խմբերը ֆիզիքական հնարաւորութիւն չեն ունենում ներս գալու, նկատելով որ այդ արշաւախմբերը արտասահմանում ահագին աղմուկ են ձգում, ոգեւորութիւն առաջ բերում, անխուհեմ գործողութիւններ անել տալիս, նկատելով որ այդ շարժումները արդիւնք չբերելով հանդերձ, վնասում են Դաշնակցութեան բիւրջին, շատ ազնիւ տարրերի համար գերեզման փորում սահմաններում, որ դրանով փակում ու վտանգում են մեր կարեւոր գծերը, որով ապագայ գործը զրկում են իր կենդանութիւն տուող մի գործօնից. ուստի բացարձակապէս մերժում են արշաւանքային շարժումները թէ՛ սահմաններում ցոյցեր անելու, թէ՛ ներս գալու եւ ներսի կուռուղներին օգնութիւն տալու նպատակով: Այս բանաձեւին համաձայն էին Մալխաս, Իշխան եւ Արամ:

2.- Ի նկատի ունենալով, որ Հայկական Հարցի լուծման գործօններից մէկն է կազմում եւրոպական կառավարութեանց միջամտութիւնը, որ նոյնիսկ երբ դիպլոմատիան իր ներկայացուցիչների միջոցով երկրում այս կամ այն մասնաւոր հարստահարութեան եւ բռնութեան պարագային միջամտել է, ունեցել է իր որոշ օգտակար հետեւանքները, հետեւապէս յարմար նկատուեցաւ, որ այսուհետեւ էլ շարունակուի նոյն ուղղութեամբ գործունէութիւնը, եւրոպական հասարակական կարծիքի վրայ ազդելու, դիւանագիտական միջամտութիւն առաջ բերելու համար: Այս որոշման հակառակ էր միայն մէկը:

3.- Նկատուեցաւ, որ մենք ընդունել ենք սոցիալիստական այն աշխարհայեացքը, որի համաձայն յեղափոխական տարր է ընդունուում եւ պրոլետարը եւ գիւղացիութիւնը եւ քաղաքացի է սնաֆ դասակարգը եւ հետեւաբար մենք կարող ենք դաշնակցել յեղափոխական այն կազմակերպութեան հետ, որ իւր քաղաքական ու տնտեսական դաւանանքով ամէնից աւելի մօտիկ է մեզ:

4.- Ամէն մի յեղափոխական կուսակցութիւն ունենալով իւր քաղաքական եւ սոցիալիստական դաւանանքը եւ ձգտելով այդ դաւանանքի իրագործման, բնականաբար պիտի աշխատի հասարակական ամէն յառաջադէմ երեւոյթին արձագանգ տալ իւր աշխարհայեացքի կնիքը դնելով նրա վրայ իր դաւանանքների իրագործման համար:

5.- Նկատուում է ընդհանրապէս, որ Դաշնակցութիւնը ինչպէս Կովկասում, նոյնպէս եւ Տաճկաստանում յենուել է միայն ու միայն աշխատաւոր ճշուղած դասակարգերի վրայ, կռիւ յայտարարելով շահագործող դասակարգերին եւ նրանց պաշտպան կառավարութեան

դէմ: Իբրեւ աշխատաւոր դասակարգի կազմակերպութիւն, նա երկու վայրերում եւս ունի նոյն քաղաքական-տնտեսական իդէալներ. ուրեմն եւ ներքին գործը կապ գոյութիւն ունի երկու վայրերի միջեւ, տարբերութիւն կարող է լինել միայն տակտիկի մէջ, որ ձեւակերպուում է ըստ միջավայրի պայմանների. սակայն լոկ այդ տարբերութիւնը չի կարող արգելք դառնալ այդ ներքին գործը կապակցութեան:

**ՆԻՍՏ Ե. Սեպտեմբերի 26**

Բացակայ են Վարդան եւ Վաթան

**Օրակարգ**

- 1.- Հայկական գաղութների դերը թուրքահայ եւ կովկասահայ խնդիրների վերաբերմամբ (պարագ. ցուց. IV-ի 2 կէտը):
- 2.- Դաշնակցական մարմինների գաղութներում ունեցած դերը, տեղական քաղաքական-տնտեսական հարցերի նկատմամբ (պարագ. ցուցակ IV-ի 3 կէտ):

**Որոշումները**

1.- Հայկական գաղութներն իբրեւ Դաշնակցութեան մասերը պիտի նպաստեն կազմակերպութեան նիւթապէս եւ բարոյապէս. եւ հետեւաբար այդ նիւթական եւ բարոյական օժանդակութիւնները պիտի դասաւորուին Դաշնակցութեան բարձրագոյն իրաւասու մարմինների ձեռքով Դաշնակցութեան ընդհանուր նպատակների համար. իսկ Երկիրը առանձնապէս գաղութներից սպասում է ինտելիգենտ ուժեր, մասնագէտ արհեստաւորներ (ուբային-ականային) գործողութիւնների եւ գինագործ, պատրաստուած գինուորականներ՝ վարժուած տեղական բանակներում:

2.- Հ. Ծ. Դաշնակցութեան գաղութներն, իբրեւ աշխատաւոր դասի կուսակցութեան օրգաններ, պարտաւոր են ձեռք ձեռքի ընթանալ տեղական աշխատաւոր դասակարգերի հետ, տնտեսական-քաղաքական բոլոր հարցերում:

**ՆԻՍՏ Զ. Սեպտեմբեր 27**

Բացակայ են Վաթան ու Վարդան

**Օրակարգ**

Դաշնակցութեան այլեւայլ մարմիններ եւ նրանց փոխադարձ յարաբերութիւնն ու կապը. - նրանց պարտականութիւններն ու իրաւասութիւնները - դատաւորութիւն, կարգապահութիւն եւ կոնտրոլ (պարագ. ցուց. V-ի 3 կէտը):

**Որոշումները**

Ամէն պատասխանատու մարմին պարտական է որոշ ակտ կատարելուց յետոյ ամբողջ կազմով մանրա-

մասն հաշիւ ներկայացնել Դաշնակցութեան Խորհրդին եւ պիտի դատուի իբրեւ միակ պատասխանատու իր կատարած ակտի: Խորհուրդը պարտաւոր է նրանց հաշիւն առնելուց յետոյ, կողմնակի տեղեկութիւններով ստուգել եւ լրացնել եւ տալ իր վճիռը դրական կամ բացասական, որ ուժ ունի մինչեւ Ընդհ. Ժողովից սանկցիա<sup>41</sup> ստանալը. Երկրում պատասխանատու մարմին չեղած պարագային Խորհուրդին պիտի հրաւիրուին ներկայացուցիչներ այն տեղերի կենտ. Կոմիտէներից, ուր գոյութիւն ունի ժողովրդական կազմակերպութիւն:

Մանօթ.- Խորհուրդը եթէ տեւորի որոշում տայ, գործադրութիւնը պիտի յետաձգուի մինչեւ Ընդհ. Ժող.ից սանկցիա ստացումը:

Զինուորական դիսցիպլինայի հարցում առաջ եկան երկու բանաձեւ. ա. բանաձեւ. - Մենք յարգելով ամէն մի յեղափոխականի անհատականութիւնը, լինի այն գինուոր, խմբապետ կամ յեղ. գործիչ, ընդունում ենք միանգամայն, որ Երկրում ուր միշտ պատերազմական վիճակ է, կարող է լինել մի կամք միայն, որ կարող է արտայայտուել գինուորական մարմնի, կամ նրա բացակայութեան պարագային կ. Կոմիտէի միջոցաւ. յանուն դիսցիպլինայի գինուորը անպայման պէտք է ենթարկուի այդ մարմնին. իսկ կամայականութեանց դէպքում այդ մարմինը պատասխանատու է իրենից աւելի բարձր իրաւասու մարմնի. ըստ այդմ եւ պէտք է կազմուի գինուորական կանոնադիրը: Բանաձեւը անցաւ 5 ձայնով ընդդէմ մէկի: Բ. բանաձեւ. - ընդունելով գինուորական գործերի մէջ խմբական կենտրոնացում եւ ոչ անհատական, եւ գտնելով, որ անպայման անհրաժեշտ է խիստ դիսցիպլինայի այնուհանդերձ պէտք է մըշակել այնպիսի գինուորական կանոնադրութիւն, որի մէջ գինուորի անհատականութիւնը ենթակայ չլինի այս կամ այն անհատի կամ մարմնի կամայականութեան. բանաձեւին համաձայն էր միայն մէկը:

Երկրից արտաքսուած ընկերը կամ գինուորը ոչ մի տեղ չպէտք է ընդունուի իբրեւ դաշնակց. անհատ, մինչեւ որ նրա գործը չքննուի աւելի բարձր մարմնի կողմից: Մասնաւորապէս Երկրից դուրս ուղարկուած ոչ մի գինուոր Պարսկաստանի մարմինը չպէտք է ընդունի իր մէջ, որովհետեւ իբրեւ սահմանակից ազդում է Երկրի վրայ. միայն այն գինուորին թոյլատրելի է մնալ Պարսկաստան, որի յանձնարարականի մէջ Երկրի մարմինը կը յայտնէ իւր համաձայնութիւնը:

Ընդունելով հանդերձ, որ Ընդհ. Ժողովն ու [Դաշնակցութեան] Խորհուրդը իբրեւ բարձրագոյն ինստանցիաներ<sup>42</sup>, իրաւունք ունին անկախաբար ընկերներ ուղարկելու Երկրի ունեւ շրջան, ցանկալի է համարուում սակայն, որ յանուն ընկերական համերաշխութեան,

41.- Գաստատում, հաւաճութիւն:  
42.- Ատեաճներ:

նախապէս Երկրի համապատասխան շրջանի մարմնի կամ քննարկող ընկերոջ նկատմամբ յիշեալ երկու մարմիններից գատ, դաշնակցական ո՛չ մի մարմին իրաւունք չունի առանց Երկրի համաձայնութեան ընկեր ներս ուղարկել:

Շեշտուում է յատկապէս կանոնագրութեան այն կէտը, որի համաձայն Դաշն իւրաքանչիւր մարմին որեւէ գործ կատարելիս պէտք է ի նկատի ունենայ թէ այդ գործը չի՞ անդրադառնայ իր շրջակայ նահանգների կամ Երկրի վրայ, որի ժամանակ պարտաւոր է նախօրօք դիմել համապատասխան շրջանների մարմիններին, յայտնելու ծրագրուած գործի ժամանակը, ստանալով միանգամայն նրանց կարծիքներն այդ մասին. այլ կերպ վարուող մարմինները ենթարկուելու են պատասխանատուութեան:

**ՆիՍՏ Է. Սեպտեմբերի 30**  
Բացակայ են վաթան ու վարդան

**Օրակարգ**

- 1.- «Դրօշակ» եւ այլ կիսապաշտօնական թերթեր (պար. ցուց. VI-ի 1):
- 2.- Կուսակցական եւ այլ գրականութիւն (պար. ցուց. VI 2):
- 3.- Դրամական եւ կարգապահական գեղծումներ (Բ. Թերթիկ Գ-ի 5 կէտ)
- 4.- Զինուորական ընդհ. խորհրդ-ի հիմնումն (Բ. Թերթիկ Գ-ի 4 կէտը)

**Որոշումներ**

1.- Պրոպագանդայի եւ պրեստիժի տեսակէտից անհրաժեշտ է համարուում «Դրօշակ»-ի հրատարակութիւնը, իբրեւ կենտր. օրգան, այն պայմանով որ տայ աւելի նիւթ քան տալիս է, արձագանգ դառնալով այն ամէն երեւոյթի որ կապ ունի հայկ. հարցի հետ, եւ ժողովրդին

մատչելի կերպով արծարծելով կազմակերպութեան քաղաք-տնտեսական սկզբունքները: կիսապաշտօնական օրգանները օգտակար են իբրեւ օժանդակ կենտ. օրգանի:

2.- Յեղ. գրականութեան մէջ պէտք է զօրեղացնել գիտական կողմը. բրոշուրներով ու գրքակներով պէտք է պարզել Եւրոպայի յառաջադէմ կուսակցութեանց տնտեսա-քաղաքական իդէալները: Նոյապէս տալ ուսումնասիրութիւններ հայ եւ օտար ազգերի յեղափոխական անցեալից:

3.- Ի նկատի ունենալով որ տեղի ունեցող դրամական եւ կարգապահական գեղծումները անմիջական պատժի չենթարկուելու պատճառով դեմորալիզացիայի են ենթարկուում կազմակերպութիւնը եւ պատճառ դառնում նման դէպքերի կրկնութեան, պահանջուում է անպայման անմիջական քննութեան ենթարկել իւրաքանչիւր նման գեղծում, գեղծանողին (անհատ կամ մարմին) տալով խիստ պատիժ, կազմակերպութեան բարոյական հեղինակութիւնը բարձր պահելու համար:

4.- Նկատի ունենալով, որ գիւտուորական առանձին մարմնի կազմութիւնը պատճառ պիտի դառնայ իրաւական թիրիմացութեանց, այդպիսի մարմնի կազմութիւնը համարուում է հիմակուհիմա վաղահաս:

ՍՄԻՐԱՆ  
ՎԱԹԱՆ

ՍՄԱԽԱՍ  
ԱՐԱՄ  
ԻՇԽԱՆ

**Բ 4.- Հ. 3. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆՆԻՍ<sup>43</sup>**

Շատ ժամանակ չէ որ հեռացել եմ վանից. երկար ատեն եղել եմ ժողովրդի մէջ, եւ յեղ. գործով շրջել եմ գաւառները, մասնաւորապէս Իշխանի հետ. հետեւաբար պարտաւորութիւնս կը համարեմ գոնէ միայն ուրուագիծը տալ վասպ[ուրականի] յեղ. գործունէութեան: Ցանկանում էի աւելի մանրամասն ու լիուլի տեղեկութիւններ հաղորդել, կանգ առնել մի շարք կենսական ու լուրջ բնաւորութիւն կրող խնդիրների վրայ, թուել մի քանի պերճախօս փաստեր բուն իրականութիւնից եւ ընդհանուր գծերով մօտենալ էական հարցին, դնելով զայն աւելի ուժալ հիմքերի վրայ, որպէսզի դրանով հնարաւոր լինէր աւելի որոշ գաղափար կազմել վասպ[ուրականի] իրերի արդի դրութեան մասին, սակայն ցաւում եմ որ ժամանակի սղութիւնը հնարաւորութիւն չտուեց ինձ այդ անելու. իմ այդ պակասը գուցէ լրացնեն Երկրի կողմից ընտրուած պագամաւոր ընկերները:

Թիւրքահայկական արիւնոտ իրականութեան մէջ անցեալում գործ ունեցած երեք յեղ. կուսակցութիւններից միայն Հ. Յ. Դ. է որ այժմ որոշ դեր է ստանձնել մէկ երկու կարեւոր վայրերում եւ մեծ ծաւալ ստացել ժողովրդի խաւերում: Եամ[ոււմ] հնչակեան կուսակցութիւն վաղուց գոյութիւն ունենալէ դադարել է, իսկ Արմենական անուան տակ մինակ վան քաղաքում կան քիչ թրւով խմբակներ, որոնք ձգտում են գործ ունենալ նաեւ գիւղերում: Այլ եւ այլ առիթներից դրդուած նրանք հիմնել են գործունէութեան տարբեր ասպարէզ, թէեւ շատ անձուկ. ինքնապաշտպանութեան համար կազմուած խմբակներ են, քան թէ որոշ տակտիկայով ու գործունէութեամբ առաջնորդուող մի կազմակերպութիւն կուսակցութիւն. իսկ Դաշ[նակցութիւնը] վասպուրականում ժողովրդի կողմից մեծ համակրանք է վայելում. ժողովուրդը իր ցաւերի արտայայտութիւնը նրա մէջն է գտնում. յօժարակամ մօտենում է նրան եւ խոյս տալիս միւս կուսակցութիւններից, իբրեւ թոյլ, անգործներից: Դաշ[նակցութիւնը] ունեցել է նաեւ իր որոշ ազդեցութիւնը թուրք եւ քիւրտ տարրերի վրայ. նրա յամառ գործունէութիւնը հիացմունք է ազդել թուրք կառավարութեան. նա եղել է մի զօրեղ կուսակցութիւն եւ հէնց այդ հանգամանքը նպաստել է նրա ծաւալման ու ժողովրդականացման. նա իր անթիւ զոհաբերութեամբ, իր վսեմ դաւանանքով մեծ հաւատք է ներշնչել տաճկահայերին. նա եղել է մի փայլուն աստղ հայկական մուսլիմ հորիզոնում. նա դիմել է գործի առանց տատանման ու տուել է բաւական թուով գիտակից ու հասուն ոյժեր, տիպիկ հերոսները. նա ձեւակերպել է այնտեղ միտք ու կորով. ստեղծել է մի շարժում՝ որը ունեցել է իր փրկարար ազդեցութիւնը եւն: Ես չեմ խօսում Դաշ[նակցութեան] պատմութիւնից, այլ անցնում եմ բուն խնդրին: վասպ[ուրականի] ժողովուրդը մի կերպ իր դարաւոր վշտերին ու խորունկ վէրքերին դարման գտնելու համար կարելի է ասել ամ-

բողջովին նետուել է Հ. Յ. Դաշ[նակցութեան] գիրկը. նա միշտ պատրաստ է եղել ուժգին կերպով արտայայտելու իր բողոքը սպանիչ ռեժիմի դէմ ու սպառնացել է մէկէն բռնկուիլ. թէեւ գործի պահուն երբեմն վարանելով, նա սթափուել է թմրած դրութիւնից երբ կոչ է արուել նրան. բայց քիչ բացառութեամբ գիտակցօրէն ու լրջօրէն է վերաբերուել իր շուրջ կատարուող բարդ խնդիրներին. ընդհանրապէս շատ վառվռուն յոյսերով է առաջնորդուել դէպի ամէն մի երեւոյթ եւ դա ունեցել է իր հոգեբանական խոր պատճառները: Նա իր յոյսերը տածել է ու դեռ տածում է եւրպ. դիպլոմատիային եւ չեմ սխալուի ասելու որ իր փրկութեան արշալոյսի աւետիսը սպասում է եւրպ. հզօր պետութիւններից. լայն հայեցակէտներով պարզել իր մտումները՝ նա չէր էլ կարող, երբ տարիների ընթացքում իր յիշողութեան մէջ արձանագրուել ու մարմնացել են այն շռայլ ու խաբուսիկ յոյսերը, որոնք գալիս էին հեռաւոր անկիւններից, գթութեան աշխարհներից, որպէս բուժիչ սպեղանիներ, որպէս կանխանշաններ տանջուող հայ ժողովրդի ազատագրման խնդրոյն. բնականաբար մի լծացած միջավայրում, ուր կեանքը մեռելային դրութեան է մատնուած, ուր չկայ շփում, շարժում, միտքարիչ հոսանքներ ուրոյն մտքերի ու գաղափարների, ժողովուրդը իր շոյած երազները, իդէալները իրագործումը պիտի ակնկալէր մի գօրաւոր, կարող ոյժից: Սակայն ժամանակի ընթացքում փոփոխման է ենթարկուել նրա աշխարհայեցողութիւն. մի շարք տիտեր փաստեր եկան հերքելու այն թիւր համոզումը որը գերիշխող էր հանդիսացել մտքերի վրայ. ժողովուրդը գիտակցեց որ մի քիչ էլ ինք պէտք է առաջ գնայ, իրան վրստահի:

Ահա հէնց ամենակրիտիկական ըոպէներում ձեռք բերուած փորձառութիւնից, ժողովրդի գոնէ մեծամասնութիւնը եկաւ այն եզրակացութեան, որ ջանք ու աշխատանք է հարկաւոր ու ոչ թէ անգործունեայ վիճակը: Այժմ համոզուած լինելով որ Դաշ[նակցութիւնը] ծնունդ է առել իր գրկում, իր արիւնոտ երկիրն է եղել նրա օրորանք, յամառ տոկոսութեամբ տանում է իր ուսերի վրայ դրուած ծանր լուծը, ամէն տառապանք, մի միայն յուսալով որ՝ մտնելով կեանքի պայքարուտ ասպարէզ դիմադրական ոյժով, մի օր յաջողութեամբ կը պսակ-

43.- Կը գտնուի Չորրորդ Ընդհանուր ժողովի թղթածրարին մէջ. ձեռագիրը կը գրաւէ նամակի միջակ չափի 9 էջեր: Առաջին էջին վերջ գրուած է. «Կարդացուած Մարտ 11ին, 1907»: Արդարեւ Ընդ. ժողովի ատենագրութեան մէջ, վասպուրականի խնդրի քննութեան ժամանակ, խօսք կայ Արամի խնդրանքով ժողովին ուղղուած նամակի մը ընթերցման մասին («Նիւթեր» 9. հատոր, էջ 72ա): Գրութիւնը կը կրէ Ռաֆ ստորագրութիւնը: Արիւններու մէջ կը գտնուին շարք մը նամակներ Ռաֆի, Ռաֆայէլ ստորագրութիւններով: Ենթական երիտասարդ մտաւորական է. եղած է շրջիկ գործիչ յատկապէս Ենոնապարի գիւղերուն մէջ:

ւին իր կրած տանջանքները, նա տէր կը դառնայ իր հալալ աշխատանքին եւ այդ դէպքում գործօն դեր կատարելու է Դաշնակցութիւնը: Նա նուիրական կապով է կապուած Դաշ. դաւանանքին, նրանով է առաջնորդուել նոյնիսկ մի քանի արիւնոտ ցոյցերի մէջ, սակայն ցաւալին այն է որ Վասսպ. մտնող եւ ղեկավար դեր ստանձնող ընկերներից քիչերն են աջողել ժողովրդի ցաւոտ երեւոյթները լիովին ըմբռնել, մօտից ծանօթանալ նրա հոգեբանական գծերին ու ընդունակութեան, ուսումնասիրել տիրող պայմանները ինչպէս որ կան եւ հիմնել գործունէութիւնը ոչնչալ հիմքերի, բուն իրականութեան վրայ եւ այլն:

Վասպուրականում գլխաւորապէս յեղ. գործի ղեկավարները հանդիսացել են կովկասահայեր, որոնք սահմանից այն կողմ են անցել, նշանակուել են գործիչներ իրանք են տարել պրոպագանդան ամէն գաւառում. տեղացիների մասնակցութիւնը շատ աննշան չափեր է ընդունել եւ որովհետեւ ժողովրդին մէկէն հասկանալու պարագային, դժուարութեանց են բախել, դրա համար էլ առաջ են եկել թիւրիմացութիւններ ու հակասութիւններ. խուլ բողոքներ են յառաջացել գիւղերում ժողովրդի մէջ, թէ եւ չեն արտայայտուել բացարձակ կերպիւ: Յարդ չենք էլ կարողացել գիտնալ թէ իսկապէս երկրում կա՞ն այնպիսի ոյժեր, որոնք դեր ստանձնէին (խօսքս մօտ ժամանակների համար չէ): Վասնզի զարկ չի տրուել ժողովրդի ինքնավստահութեան եւ նա ինքզինք բարերարեալ է նկատել: Ճիշտ է կոտորածները խլացին մեզնից թարմ ու առողջ ոյժեր, բայց չենք կարող ժխտել եւ այն՝ որ այժմեան դեռահաս երիտասարդութիւնը նրանցից պակաս գործունեայ կարող է լինել: Գործի տոն տուողները եղել են կովկասահայերը եւ որովհետեւ մենք չենք ունեցել մարդիկ որոնք հակառակ դէպքում նրան յաջողէին, հէնց այդ պատճառաւ էլ, երբ վնասուել է յեղ[ափոխական] գործիչը, վնասուել է նաեւ գործը ու երկար ժամանակ է գոհուել մինչեւ որ մի նոր գործիչի ջանքերի շնորհիւ ամէն բան նորից կարգի է բերուել. ես դէմ չեմ որ ընդհանրապէս պատասխանատու դեր վերցրել են դրսից եկող ընկերները, նրանց մէջ եղած են շատերը՝ որոնք իսկապէս լաւ գործունէութիւն են ցոյց տրուել, բայց սկզբունքի տեսակետից տեղացիների մասնակցութիւնը շատ կարեւոր է:

Վասպուրականում համեմատաբար Դաշ[նակցութիւնը] աւելի ընդարձակ ասպարէզ ունի գործելու: Մօտաւորապէս 11 գաւառներում յեղ[ափոխական] գործ կայ եւ գրեթէ իւրաքանչիւր գիւղում կազմուած խմբեր սակայն պրոպագանդիստների պահանջը խիստ զգալի է: Ամէն գաւառ հազիւ տարին մէկ երկու անգամ է այցելուել, այն էլ ի հարկէ ոչ բոլոր գիւղեր, բացառութեամբ մի քանիսի. մի բան որ շատ անհրաժեշտ էր. պրոպագանդան շատ թոյլ կերպով է տարուած. զինուած խմբով գիւղերն ենք մտել, մեր գործը եղել է զէնքի համար փողի հանգանակութիւններ անել, քան ժողովրդին ծանօթացնել իր անելիքի եւ դրութեան հետ. մի քիչ որոշ գոր-

նով պարզել Դաշ[նակցութեան] նպատակը եւ զարկ տալ նրա մտաւոր զարգացման ու ինքնագիտակցութեան, որպէսզի նա աստիճանաբար լուրջ վերաբերմունք ցոյց տար դէպի յեղ. գործը: Պրոպագանդայի կարիքը շատ զգալի չափեր է ընդունել: Բռնութիւններ ու խստութիւն ի գործ են դրուել գրեթէ ամէն գաւառում. դրսից եկող ընկերներ ամէն պարագային նկատուել են լիազօր եւ իրաւասու, ամենաէական խնդիրների նկատմամբ անգամ ժողովրդի կարծիքը չի յարգուել. նոյնիսկ թոյլ չի տրուել որ իւրաքանչիւր յեղ. անհատ իր ուրոյն տեսակէտը պարզէ որեւէ հարցի մասին. Դաշ[նակցութեան] ծրագրի էական կէտերից մինը տրամադրել է ղեկավարուել ապակենտրոնացման սկզբունքով, սակայն գոնէ մեր իրականութեան մէջ գործը այդ հիմունքների վրայ չէ դրուած: Անշուշտ երազելն անգամ դժուարին է որ Տաճկաստանում ներկայ պայմանների մէջ հնարաւոր կը լինի մըշակել եւ գործադրել միտապաղաղ մի գործելակերպ, որը տեւականութիւն ունենայ, որովհետեւ արտաքին հանգամանքները այնքան դիւրափոփոխ են եւ այնպիսի զօրեղ ազդեցութիւն են ունենում կեանքի վրայ, որ ստիպուած շատ անգամ պիտի դիմել զանազան միջոցների, սակայն եւ այնպէս պէտք է խոյս տալ ծայրայեղութիւններից, որպէսզի գործից դրական արդիւնք ստացուի: Շատ քիչ են եղել օտար տարրերի հետ յարաբերութիւն մշակելու փորձեր, թէ եւ եղածներն էլ ապարդիւն են մնացել: Ժողովրդին զինելու համար միջոցներ են ստեղծուել, բայց անբաւարար. շատ տեղերում էլ ժողովրդը ինքն է ձեռք բերել: Գաւառներում նշանակուել են ենթակոմիտէներ, որոնք իրենց իրաւասութեան սահմաններում անգամ գործել է զգուշացել են, նախաձեռնութիւն նրանց մէջ մեռած է, այլ կատարել են այն ինչ որ իրանց հրամայուած է բարձր մարմիններից կամ աւելի հեշտ է ասել անհատներից: Ժողովրդի գոնէ երիտասարդ տարրերին զէնքի հետ ծանօթացնելու հոգ չի տարուած, թէ եւ զինուորների մէջ եղել են բաւական փորձառու եւ վարժ տղերք: Ստորադրեալ ոյժերին ասպարէզ չի տրուել գործելու. ժողովրդը շատ անգամներ ցանկութիւն է յայտնել որ զէնքի գործածութեան համար վարժութիւններ լինին, սովորեցնեն իրեն զէնք բանեցնել որ ժամանակին խեղճ չմնայ, բայց մտիկ տուող չի եղել, չնայած որ հնարաւորութիւն էլ ունեցել ենք: Առանց բանաւոր պատճառների երկրից արտաքսուել են երկար տարիներ Դաշ[նակցութեան] դրօշակի տակ զինուորական կոչման ծառայող փորձուած զինուորները: Թէ ինչո՞ւ, - այդ կէտը մնացել է մութ ու անբացատրելի. ժողովրդի մէջ խուլ յուզումներ են առաջացել. դժգոհութիւններ են եւ:

Փաստացի իրողութիւն է որ դրսից եկող ընկերներից մէկ երկուքը շատ թոյլ պատրաստակամութիւն են ունեցել: Թէ եւ ցանկալի չէ ինձ կանգ առնել անհատի դրական եւ բացասական կողմերի վրայ, սակայն քանի որ գործունէութեան հոլթիւնը բնորոշելու համար կարեւոր է նկատի ունենալ գործիչի անձնաւորութիւնը, երբ նա է հանդիսանում գործի ղեկավար եւ պատասխանատու,

պէտք է օրեկտիւ, անաչառ վերաբերմունք ունենալ դէպի անհատը, մանաւանդ երբ մեր առաջ դրուած է մի բարդ ու կնճռոտ խնդիր:

Ընկերներից մէկ երկուքը չափազանց խիստ վերաբերմունք են ունեցել թէ դէպի ժողովուրդը եւ թէ դէպի զինուոր-ընկերները, աչքաթող են արել հարկ եղած նախագգուչութիւններ, եւ փոխանակ թոյլ տալու որ տեղացիների մասնակցութեամբ ու համաձայնութեամբ վճռուի ժողովրդին վերաբերող մի հարցը, նրանք գործադրել են այնպէս ինչպէս ցանկացել են. նրանց արձակած վճիռները անդառնալի են եղել ու որոշումները պատգամ, հրամաններ են արձակել եւ դրանց դէմ ոչ ոք չի համարձակուել դիտողութիւն անգամ անելու, բացարձակ տէր են հանդիսացել սակայն ժողովուրդը դարձեալ հնազանդուել է... նա միշտ կարօտ է այլոց օգնութեան եւ հէնց այդ տխուր հանգամանքը ստիպել է նրան զգոյշ լինել ու հպատակուել եւ այլն: Գործունէութեան այս եղանակը մեզ ցանկալի հետեւանքների չի կարող հասցնել, ես նկատել եմ Ռշտունիք, Շատախ, Մոկս եւն գաւառներում, ուր ժողովուրդը պատրաստակամութիւն է ցոյց տալիս ամէն պարագային մեզ հետ լինելու, բայց բռնութիւնները մթացրել են նրա ենթագիտակցութիւնը. կարելի է ասել որ նա եղել է ստրուկ նաեւ մեր ձեռքում եւ հէնց այդ պատճառաւ յեղ. գործի հասկացողութիւնը մնացել է նրանց համար մութ, կամ լուսաբանուել է շատ համառօտ գծերով. նրանք իրենց յոյսը դրել են միշտ ուրիշների վրայ, մի տեսակ անվստահութիւն է ստեղծուել նրանց մէջ. իրենց վրայ հաւատք չունին, կարծում են ինչ քանի էլ որ ձեռնարկեն պիտի չյաջողին եւն: Իմ կարծեօք յեղ. գործիչի դերը պէտք է լինի ղեկավարել ժողովրդին, զարկ տալ նրա ընդունակութիւնների մշակման եւ ամրացնել նրա մէջ կամքի ոյժը: Տաճկաստանում ապրող ժողովուրդը արդէն ընտելացել է ստրկութեան, նրան պէտք է ներշնչել կորով ու վստահութիւն, որ գոնէ իր մտքեր, իր ցաւեր նա կարողանայ ազատ արտայայտել մեզ մօտ, դիմի դէպի գիտակցութիւն ու նախաձեռնութիւնների եւ տայ ուժեղ տարրեր իր միջից: Թուրքական քաղաքականութիւն արդէն թունալից ու սպանիչ է. մասսայական զօրեղ, ցայտուն շարժում է հարկաւոր, որպէսզի մտքերի վրայ տիրող խաւարը եւ երկրի ազգաբնակչութեան տարիներ ցեղերի հանդէպ իրար տածած ատելութիւն եւ անվստահութիւնը անհետանայ, նրանք կարողանան իրար հասկացնել, իրար ձեռք մեկնել. հետեւաբար ուժեղ պրոպագանդան արպիսի դէպքում մեծ դեր ունի կատարելու. ժողովուրդը պէտք է լինի այն գործօն ոյժ, ֆակտորը որի վրայ պէտք է հիմնել գործունէութեան շէնքը. հետեւապէս մեր ամենաստիպողական պահանջներից մինը, ամենակենսականը կը լինի այն՝ ժողովրդին նախապատրաստել: Գրածներս ապացուցանելու համար հարկաւոր էր թուել նաեւ փաստեր. եւ որովհետեւ իրողութիւնը պարզելու համար աւելի որոշ կերպով անհրաժեշտ էր այդ

դէպքում նաեւ շատ մանրամասն տեղեկութիւններ եւ այդ բոլորը արձանագրելու համար թերթեր էին հարկաւոր, եւ ինչպէս կանխաւ շեշտեցի որ այդ անելու հնարաւորութիւն չունեմ, հետեւաբար ես բաւականանում եմ տալով միայն իրականութեան շատ համառօտ տեսութիւնը: Գալով ստուգման խնդրին՝ կարծեմ դա շատ կարեւոր է եւ հնարաւոր: Երկար դատողութիւններ էլ չեմ ուզում տալ, այլ յայտնում իմ կարծիքը. ես կ'ասեմ.

Քանի որ Հ. Յ. Դաշ. հիմք ունենալով տաճկահայ ազատագրման խնդիրը, որպէս մի առանձին կուսակցութիւն իր շատ որոշ ծրագրով երկար տարիներ գործել է Տաճկահայաստանում, ձգտել է ապստամբութեան միջոցաւ մի քիչ տանելի կարգեր ստեղծել Երկրում եւ այդպէս աստիճանաբար, քանի որ նրա նպատակն է եղել զարկ տալ ժողովրդի ինքնագիտակցութեան, իր բոլոր միջոցներով նպաստել է նրա շարժումներին, պատասխանատու դերն է իր վրայ վերցրել եւ երբ անհնարին է որեւէ դրական օգուտ սպասել անգիտակից վերաբերմունքից, նաեւ այն որ Վասպ[ուրականի] ժողովուրդը ամբողջապէս Դաշ[նակցութեան] գիրկն է նետուած՝ անհրաժեշտ է՝

ա) Որքան հնարաւոր է զարկ տալ ժողովրդի ինքնավստահութեան, նախաձեռնութեան եւ ինքնագիտակցութեան. թոյլ տրուի նրան իր զգացածը արտայայտելու ազատ ու համարձակ, վերանան բռնութիւններ, ծեծ եւ այլն, որպէսզի նա ոչ թէ ստիպուած, այլ ինքնակամ դիմէ յեղ[ափոխութեան] եւ իր անելիքի մասին կազմէ ճշմարիտ գաղափար:

բ) Յեղ. գործի ղեկը յանձնել կարող եւ հասուն ոյժերի եւ ոչ պատահական ընկերների, քանի որ այդ դերը շատ փափուկ է ու դժուարին, տեղացի շատ կամ քիչ կրթուած տարրերին մղել դէպի գործի ասպարէզ, ղեկավարել նրանց, տանիլ լայն պրոպագանդա ամէն գաւառում եւ գիւղում, նպատակաւորաբար ձեւ տալ ներքին եւ արտաքին պրոպագանդային, ակտիւ ձեռնարկութիւնների հարցը լուծել ժամանակի պայմանները եւ յեղ. պահանջների համաձայն եւ այլն:

գ) Որ ամենակենսականն է. նիւթապէս եւ բարոյապէս նպաստել տաճկահայ դատին մեծ չափերով. զէնք, ռազմամթերք ուղարկել աւելի մեծ քանակով, ժողովրդին զինել եւ Երկիր ուղարկել ազդեցիկ ու փորձառու զինուորական ոյժեր - խմբապետներ, որպէսզի նրանք իրենց հմտութեամբ ձեռք առնեն կտրուկ միջոցներ նախապատրաստութիւններ կանխելու:

Յոյս ունեմ որ Ընդհ. ժողովը ի նկատի կ'ունենայ իմ գրածը, որոնք իրողութիւններ են:

Յարգանք՝



ՌԱՅ

Գ.

ԱՊԱՌԱԾ - ՂԱՐԱԲԱՂԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Փաստ. 404-10

Գ 1.- ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՊԱՌԱԾԻ Կ. Կ.Ի ՇՐՋԱՆԻ 1904 — 1907<sup>1</sup>
ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապառաժի շրջանը կազմում են Գանձակ նահանգի հարավային չորս գաւառները՝ Զանգեզուրի (8742-92 քառակուսի վերստ տարածութեամբ), Շուշուայ (4423-28 ք. վ.), Զիւլանչիրի (4654-08 ք. վ.) և Զիրբայիլի (3276-31 ք. վ.): Ընդհանուր տարածութիւն մօտ 18 — 19000 քառ. վ.:

Շուշուայ գաւառի այն մասը, որ կոչւում է Խաչէն, տարածւում է Շուշու քաղաքից դէպի հիւսիս եւ հիւսիս արեւմտեան կողմը, իսկ Վարանդան — դէպի հիւսիս-արեւելեան:

Վարանդային կից աւելի դէպի արեւելք տեղ է բռնում Զիրբայիլի գաւառը կամ Դիզակը, իսկ Խաչէնի շարունակութիւնն է կազմում դէպի հիւսիս եւ հիւսիս արեւմուտք Զիւլանչիրը (Մուսա) սարի շուրջը Թարթար գետի վրայ: Զանգեզուրը կամ Սիւնիքը ամենամեծ գաւառն է — սիւսում է Վարանդայից ուղիղ դէպի հարավ եւ հարավ-արեւմտեան կողմերը:

Այդ բոլոր գաւառներն էլ մեծ մասամբ բարձր լեռնային գաւառներ են, նրանց հայ գիւղերի փոքրագոյն մասը մօտենում են դաշտավայրերին, մնալով որոշ բարձրութեան վրայ: Դիզակում եւ Զիւլանչիրում կան գիւղեր, որոնց կլիման թոյլ է տալիս բամբակ ցանելու, գիւղերի 1/4-ը մասը խաղողի եւ թուփի այգիներ ունի, իսկ մեծագոյն մասը գոհ է լինում, եթէ ցորեն, գարի կամ կորեկ (վերջի տարիներ կարտոֆիլ-գետնախնձոր) է ունենում բաւարար չափով իրա ընտանիքը մի կերպ կերակրելու:

Ամբողջ շրջանը ըստ Կովկասեան պաշտօնական օրացոյցի (Կովկ. կալենդար 1907)<sup>2</sup> ստատիկայի 1908 թուի մօտաւորապէս կազմում է 190.000 հայ, պարունակելով 235 գիւղ, մի քաղաք՝ Շուշու:

1.- Այս տեղեկագիրը ստորագրուած է Ապառաժ-Ղարաբաղի պատգամաւոր Բարսեղեանի կողմէ (ծանօթ՝ Վանայ Սարգիս ծածկանունով, իսկականը՝ Պօղոս Օտապաշեան): Ը. Ժ. Բրթոմատրոն բացակայելուն պատճառաւ տեղ չէ գտած «Նիւթր»-ու Դ. հատորի Ապառաժի յատկացուած բաժնին մէջ: Բարեխառնար ան պահուած է Գ. Յ. Դ. Պոսթոլի արխիւներուն մէջ: Չեռագիրը կը պատկանի Բարսեղեանի գրչին. գրուած է սեւ մելանով սովորական չափի 30 էջերու վրայ:

Ազգաբնակչութիւնը ըստ գաւառների բաժանւում է այսպէս, նաեւ թուրք եւ քիւրդ ազգերէ՝

Table with 6 columns: գաւառներ, գիւղ, հայեր, թուրք, քիւրդ ընդամէնը, ընդամէնը. Rows include Դիզակ, Զիւլանչիր, Խաչէն, Վարանդա, Զանգեզուր, Բաղաք, and a total row.

Եթէ վերցնենք միայն լեռնային մասերը եւ բաց թողնենք դաշտայինը, որտեղ գլխաւորապէս տեղաւորուում է թուրք տարրը, հայ տարրը ամբողջ տարածութեան վրայ կը կազմի 70-80%:

Գիւղերը բաղկացած են 30 տնից սկսած մինչեւ 800-1000 տուն: Զբաղմունքներ են հողագործութիւն, այգեգործութիւն, շերամաբուծութիւն, մեղուաբուծութիւն, գինի են շինում, արաղ են քաշում:

Գիւղացիների մեծ մասը բնակուած է բէգական հողի վրայ եւ վճարում է տասնորդը բէգին: Պետական հողի վրայ բնակուած է՝

2.- Բնագրին մէջ ռուսատառ:

Table with 2 columns: Խաչէն եւ Վարանդա, Զիւլանչիր, Դիզակի, Սիւնիքի. Values: 25.55%, 27.14%, 33.35%, 53.00%

Ըստ ծուխի եւ շնչի հողը այսպէս է բաժանուած՝

Table with 4 columns: ամէն տեսակ հող, վարելահող, ծուխ շունչ, ծուխ շունչ. Rows include Դիզակ, Սիւնիք, Խաչէն եւ Վարանդա, Զիւլանչիր.

Թուրքերը աւելի լաւ բերրի հողեր ունեն իրանց տրամադրութեան տակ, քան հայերը, որովհետեւ դաշտերում են բնակւում եւ հողերի աւելի մեծ տարածութիւնով են օգտւում՝ օր. Շուշուայ գաւառի հայերը օգտւում են մօտաւորապէս 32000 դեսիատին պետական հողերով, 38000 դես. կալուածատիրական նաղելին<sup>3</sup> հողերով, 37000 դես. կալուածատիրական հողերով, ընդամէնը 107000 դեսիատին (հետար 2 օրավար) հողերով եւ վճարում են զանազան տեսակ տուրքեր մօտաւորապէս 61000 ռուբլի, իսկ թուրքերը օգտւում են 108000 դես. պետական, 76000 կալուածատիրական նաղելին<sup>3</sup> եւ 125000 մասնաւոր կալուածատիրական, ընդամէնը 307000 դեսիատին հողերով եւ վճարում են մօտ 600000 ռուբլի տուրքեր: Հողատիրութիւնը մեծ մասամբ համայնական է, բայց շատ ուշ ուշ է բաժանւում հողը: Այս շրջանի միջին ունեւոր հայ գիւղացին ստանում է իւր աշխատանքից տարեկան մօտ 50 ռուբլի ըստ շնչի եւ նոյնքան էլ ծախսում է:

Սոչոր գործարաններ շատ քիչ են՝ 1-2 հանքային գործարաններ Ղափանում (Զանգեզուր) մօտ 2000 բանուորներով, 20-25 մետաքսի գործարաններ փոքր չափերով ընդամէնը 2000 բանուորներով (կանայք եւ երեխաներ գլխաւորապէս) եւ 2-3 օղի եւ սպիրտի — կոնեակի գործարաններ 300-400 բանուորներով եւ 30-40 փոքր արաղի գործարաններ 2-8 բանուորներով ամէն մէկը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

1903 թուի Սեպտեմբերին Ապառաժում Դաշնակցութիւնը ունեցել է քաղաքում միմիայն մի քանի խմբեր արհեստաւորներից եւ բաւականաչափ թուով թեմական եւ ուշադրական աշակերտութիւնից: Կոմիտէն կազուած է եղել 3 հոգուց, որը ցրուել է կալուածական հարցի առթիւ ցոյցերից յետոյ: 1903-ի վերջը Մարգար Ժամ-

հարեանը<sup>4</sup> վերակազմեց խմբերը, Կոմիտէի մէջ ընտրուեցին նոր ութեր՝ 1 արհեստաւոր, մի ուսանող, 2 գործակատարներ, 1 ատամնաբոյժ: 1904ին այդ մարմինը շնորհիւ իր պրոպագանդիստների (Ստ. Ի. Դ., եւ այլն) բաւականի եռանդ ցոյց տուեց, կազմակերպելով ամբողջ շրջանը եւ մաքառելով հնչակեանների դէմ այնպիսի յանդուրժեամբ, որ 1905ին բոլոր գիւղերը, բացի 4-5 գիւղից կազմակերպուած էին Դաշնակցութեան դրօշակի տակ:

Գիւղերը կազմակերպուում էին համայնական ձեւով — ամբողջ գիւղի համայնքը — գիւղական մարմինները ընտրուում էին ազդեցիկ մարդկանցից. պրոպագանդիստ-չրջիկները աշխատում էին որ մարմինների մէջ չլինեն վախառուներ եւ այլ վնասակար տարրեր. զանազան տեղեր եղել են ենթակոմիտէներ, զինուորական ներկայացուցիչներ, դատաւորներ: Այդ շրջանում կազմակերպութիւնը հանդիսացել էր իբրեւ մի կառավարութիւն իր բոլոր ֆունկցիաներով<sup>5</sup>: Քաղաքում կազմակերպուել է 60-70 խմբեր (այդ ժամանակ՝ 1905 թուին շրջանը ունէր 30-ից աւելի ենթակոմիտէներ, 5 Կոմիտէներ բաղկացած Զանգեզուրում 5 անդամից, Խաչէնում 3 անդամից, Զիւլանչիրում 5 անդամից եւ Ապրիլի Կովկասեան Ռայոնական Ժողովը ճանաչեց նորան Կենտրոնական Կոմիտէ): Աշակերտութեան ստուար մասը, եթէ ոչ բոլորը թէպէտ կազմում էր առանձին միութիւն, բայց բոլորն էլ Դաշնակցութեան համակրող էին եւ օժանդակում էին:

Գարնան աւելանում են նոր ընկերներ. սկսում են դասակարգային պրոպագանդա մղել գիւղերում բէգերի դէմ, վախառուների եւ բուրժուազիայի դէմ, բայց գործնական կտրուկ քայլեր խուսափել ենք անելու: Եղել են ծրագրի վերաբերեալ դասախօսութիւններ: Գործարանների բանուորները կազմակերպուում էին եւ կազմալուծուում. մետաքսի գործարանները (բանուորները) գլխաւորապէս կանայք եւ երեխաներ են, ստանում են 5-30 կոպէկ 10-11 ժամուկ օրական աշխատանքի համար: Դոքա մի անգամ գործադուլ են արել կոիւներից առաջ, յանդուրժիւն են ունեցել. նոյնպէս յանդուրժիւն են ունեցել 1905ին գործակատարները:

Բազուի Փետրուարեան դէպքից յետոյ Կոմիտէն առանձին խնամք էր ցոյց տալիս ժողովուրդը զինելու:

- 3.- Յատկացուած:
4.- Սարգար Ժամիարեան (ծածկանունը՝ Սոաւ). ուսեալ, զինուորական պատրաստութեան տնր հաւատաւոր դաշնակցական էր. եղած է անդամ Կովկասի ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէին: Երիտասարդ տարիքին զոհուեցաւ Շուշուի պաշտպանութեան կռիւներուն (1905):
5.- Պաշտօններով, դերակատարութիւններով:
6.- Խանասարի Վարդանը (Սարգիս Մեիրաբեան), որուն վստահուած էր հայ-թրքական ընդհարումներու շրջանին Ղարաբաղի ինքնապաշտպանութեան ղեկավարութիւնը:



(տեսնել հաշիւները)։ Ղեռ 1903ի վերջին կառավարութիւնը հրահրել էր թուրք բէգերին օգնութեան հայերի դէմ, բայց վերջինները հրաժարուել էին։ Վրայ հասան Նախիջևանի-Երեւանի դէպքերը։ Այդ ժամանակ (Յուլիսին 1905 թուին), երբ քաղաքական մթնոլորտը սկսել էր խստանալ եւ սպասուում էր նոր բարդութիւններ եւ պրովոկացիաներ, Ապառաժի շրջանի գինուորական մասը յանձնուեց Վարդանին<sup>6</sup>, իբրեւ գինուորական լիազօր այդ շրջանի։ Նրա հետ եկաւ եւ հանգուցեալ Մարգար ժամհարեանը— Մուսը։ Ձեռնարկուեց աւելի հաստատուն հողի վրայ դնել ինքնապաշտպանութեան գործը, ամէն տեղ պրոպագանդ էր մղուում որպէսզի ժողովուրդը գէնք առնի, ամէն գիւղում յանձնաժողով էր ընտրուում այդ գործի համար եւ մի պատասխանատու խմբապետ, գինավարժութիւններ անոււմ, փող հաւաքում գէնքի համար, պահապաններ նշանակուում հերթով, թուրքիկ խմբեր պատրաստուում եւայլն...

1905ի դէպքերը ցոյց տուեցին, որ մեր ժողովուրդը բաւականի անպատրաստ է խոշոր յարձակումների դէմ եւ թուրք ժողովուրդի հետ պասսիւ<sup>7</sup> դիմադրութեան տակտիկը նոյնքան էլ ձեռնտու եւ նպատակայարմար չէ։ Եւ ահա 1905-ին վերջը կովկասեան Ռայոնական Ժողովը որոշեց, եթէ հարկաւոր եղաւ դիմել ակտիւ յարձակողական տակտիկի, վերապահելով այդ անել տեղական մարմիններին եւ գինուորական լիազօրներին։ Սկսուեց եռանդուն պատրաստութիւն գարնան եւ ամառուան սպառնալից օրերի համար, մանաւանդ որ ամէն տեղ Ռուսաստանում պոգրոմային<sup>8</sup> քաղաքականութիւնը հասցրած էր ամենակոպիտ ձեւերին։

Մի քանի ընկերներ այդ ժամանակ վտանգուում են, ստիպուած են լինում աշխատել ուրիշ վայրերում։ Նոցա տեղ գալիս են ուրիշ ընկերներ եւ ուսանողներ, որոնք ամառուայ ամիսներում բաւականի մեծ չափերով օգնում էին տեղական կազմակերպութեանը։ 1906-ի դէպքերը պայցուցեցին որքան յաջող կերպով էր գործել եւ պատրաստուել Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան գործը եւ այնպիսի մեծ հարուածներ հասցրեցին թուրք բէգերին եւ նրա ձեռքին կոյր գործիք դարձած անգիտակից թուրք ամբոխին մեր շրջանում, որ նոքա էլ չհամարձակուեցան Շուշուց յետոյ որեւէ ուրիշ վայրում կռիւ բարձրացնել։ Քաղաքի կռուից առաջ նոքա յոխորտում էին եւ դարձել էին յանդուգն եւ լրբաբար դիպչում էին ուր որ պատահէր հայերին։

**ԶԻՆՈՒՄ**

Առաջ է գնացել շնորհիւ կազմակերպութեան ջանքերի շատ բաւարար կերպով  
 1.5 տարի սրանից առաջ Խաչէնի 22 գիւղերում (2000 ծուխ) ունեցել են մօտաւորապէս 280 բերդան եւ իգուլ-չատկա, իւրաքանչիւրը միջին թուով 15 փամփուռով,

իսկ այժմ մօտ 800 բերդան հրացան ունի 150ական փամփուռով, իսկ մասին եւ մաուզեր — 120 հատ 200-ական փամփուռով։

Խաչէնի գիւղերում հաւաքուած է եղել Համազասպի<sup>9</sup> միջոցով 3338 ռուբլի, ի դիմաց այդ գումարի գնուած է եւ բաժանուած N 1 — 8, N 3 — 4, N 2 — 13, N 4 — 1, եւ փամփուռներ։

Ջիւանշիրի շրջանի 33 գիւղում կար կռիւներից առաջ N 1—2, N 2— 1100, իսկ այժմ N 1 — 485, N 3 — 22, N11 — 18 հատ եւ N 2 մօտ 2000 հատ. ռազմամթերք 150ական մոսինի եւ մաուզերի, իսկ բերդանի — 50ական։ (3 թնդանօթ անիււտը, կազմակերպութեան)։ Վարանդայում — 1905ի սկիզբը եղել է 250-300 N 2 (5000 ծուխ), իսկ այժմ մօտ 3500, որից N1 եւ N 3՝ 300, ռազմամթերք 50-60 հատ ամէն մի N2ի, 100ական ամէն մի N1 եւ N3ի։

Ջիւանշիրի գիւղերում Համազասպը հաւաքել է 7444 ռուբլի 40 կոպէկ եւ բաժանել է N1 —15 [հատ] N2 — 20, N 3 — 5: N1a — 1910, N2a — 1620, N2a° — 6545, N3a — 642, պիստոն 13500, արձիճ 9 փութ 38 գր[ուան] վառօդ — 4 փ. 6 գր[ուան], փողով վերադարձուել է 788 ռ.։

Դիզակում եւ Ջանգեղուրում թուրք չունենք ձեռքի տակին։ Քաղաքում մօտ 300 հրացան ժողովուրդի ձեռքին կայ։ Իսկ կազմակերպութեան մօտ կայ մօտաւորապէս 250000 փամփուռ եւ 200 հրացան։

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ**

Մինչեւ վերջերը (1906-ի Յունիսը) կազմակերպութիւնը ամենալայն դատավարութիւն էր անում։ Յատուկ դատավարական կենտրոնական մարմին էր կազմուած քաղաքում եւ ամէն տեսակ դատեր էր ընդունում։ Վերջերս կոմիտէն թողեց գտնելով որ այդ գործը իր ոյժերից վեր է։

Շուշի — Գանձակի հայկական գիւղերի միջով ճանապարհ չինելու միտքը տուեց կազմակերպութիւնը եւ աջակցութիւն էր ցոյց տալիս թէ դրսում հաւաքելով, Շուշի քաղաքում եւ թէ գիւղացիներին համոզելով դուրս գալ աշխատելու այդ ճանապարհը շուտով գլուխ բերելու։ Իբրեւ միակ ճանապարհ որ Եւլախեան տրակտի<sup>10</sup> վտանգից ազատում է ամբողջ Ղարաբաղի հայ ազգաբնակչութիւնը։

1905-ի Դեկտեմբերի ընդհանուր Ռուսաստանի գոր-

- 6.- Խանասորի վարդանը (Սարգիս Սեհրաբեան), որոն վստահուած էր հայ-թրքական ընդհարումներու շրջանին Դարբաղի ինքնապաշտպանութեան ղեկավարութիւնը։
- 7.- Կրաւորական։
- 8.- Պոգրոմ ամբոխային ջարդ։
- 9.- Դամազասպ Սրուանձտեան, Ասկերանի հերոսը։
- 10.- Թակարդի (?)։

ծաղուլի ժամանակ Ապառաժի Կ. Կ-ը լայն հսկողութիւն է ունեցել ամենաանհրաժեշտ միջոցներ մատչելի գներով ծախելու ժողովուրդին։

Աջակցում էր դպրոցական գործը կանոնաւորելու եւ ցանկալի ուղղութիւն տալու թէ քաղաքում եւ թէ գիւղերում։

1905-ի Քաղաքի<sup>11</sup> կռուի ժամանակ շնորհիւ հայկական հրդեհի մեծ թալան էր սկսուել եւ կատարուել քաղաքում։ Կոմիտէն արգելում է եւ հաւաքում բոլոր այն ապրանքները որ նրա ձեռքն էր ընկնում։ Կռուից յետոյ նա այդ բոլոր թալանը բաժանեց ըստ պատկանելոյն (մօտ 150000 ռուբլի)։ Առհասարակ բոլոր խոշոր հասարակական երեւոյթներին տոն տուող<sup>12</sup> է հանդիսացել։

**ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՐԻՇ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԵՏ**

Մինչեւ 1906 թուականի Սեպտեմբերը մեր շրջանում ուրիշ կուսակցութիւններից կային միայն Հնչակեանները, որոնց Շուշուայ մասնաճիւղը 1906-ի կռուին դուրս էր բերել մի գինուած խումբ 12-16 հոգուց բաղկացած որ կուռում էր բաւականի քաջ մեր գինուորների հետ միասին։

Այդ խմբի վրայ ծախսած փողը նոքա պահանջում էին քաղաքի ներկայացուցչական ժողովից (մօտ 10000 ռուբլի)։ Իսկ վերջը առաջարկեց միայն 500 ռուբլի, բացի առանձին անհատներից հաւաքուածից։ Հնչակեանները մերժեցին վերցնել, դիմումներ արին զանազան մեծ մեծ պահանջներով հարուստներին, բայց ոչինչ չկարողացան ստանալ եւ շուտով նոցա ամբողջ մարմինը բռնուում է։

Վերջերս նոքա միանալով տեղական ռուս սոցիալ դեմոկրատ բանուորական կուսակցութեան, հայ բանուորական սոց. կուսակց[ութեան] եւ մի քանի հայ ռեւոլյուցիոն էին մեր դէմ հրբրել թէ մենք վիրաւորել ենք նոցա մի ընկերոջ եւ բաւարարութիւն չենք ուզում տալ։ Այդ բողոքները մենք թողեցինք առանց պատասխանի։

Ջանգեղուրում նոքա բուն են դրել Խնձորեսկ գիւղում եւ շատ անգամ մեր այնտեղի խմբի հետ անհամ կռիւներ են ունեցել։ Օր. մերոնք սպանում են յայտնի թուրք աւագակապետին՝ իր խմբով. նոքա մօտերը լինելով գալիս են դէպքի վայրը, ճանաչում աւագակապետին, գլուխը կտրում եւ տանում Գեորգիս ցոյց տալու բոլորին իբրեւ թէ իրանք են սպանել. այդ առթիւ մեր տղերանց հետ կռիւ է ծագում եւ մի քանի վիրաւորածներ եւ սպանուածներ են տալիս նոքա։

Յետոյ նոքա սպանում են մեր տղերանցից մէկին, մի ընկերոջ հօրն են սպանում (Շիրինեանցի)։ Կ. Կ.-էն ոչ մի կտրական միջոցի չդիմեց յանձնարարելով տեղական մարմինն ամէն տեղ պարզել նրանց ուղղութեան վնասակար լինելը։

Մեր ընկերները Ջանգեղուրում մի քանի անգամ հրահրել են նրանց դիսպուտի<sup>13</sup>, չեն եկել։ Կազմակերպութիւնից դուրս գտնուող խմբերը աշխատում էին կազմել հայ դեմոկրատ. կուսակցութիւն (մշակական), բայց անյաջող, նրա մի երկու ղեկավարները միշտ ունեցել են ձգտում ինքնապաշտպանութեան գործի վերաբերեալ հրահանգներ տալ Դաշնակցութեանը, բայց վերջինը իւր հայեացքներով ղեկավարուելով յանձնել է այդ տեսակ տարրերին համապատասխան իրանց կարողութեան գործերն՝ ինքնապաշտպանութեան վերաբերեալ, կազմակերպել է 80 հոգուց բաղկացած մարմին, որ հոգում էր դրամականի մասին քաղաքի ինքնապաշտպանութեան համար։

Վերջերս կոմիտէն ամբողջ ինքնապաշտպանութեան գործերը յանձնեց ընդհանուր լայն սկզբունքով ընտրուած մի մարմին, որը հրաժարուեց ստանձնելու այդ գործը իբրեւ անձեռնհաս տանելու, եւ խնդրում էր որ Դաշնակցութիւնը որոշ ժամանակ էլի տանի այդ գործը։

**ԴՐԱՄԱԿԱՆ ԵՒ ԶԻՆԱԿԱՆ ՀԱՇՈՒԵԿՈՒ**

| Տես հաշուեկշիւը       |           |           |                   |
|-----------------------|-----------|-----------|-------------------|
|                       | Մուտք     | Ելք       | Գնուած ռազմամթերք |
| 1904                  | 5638.84   | 4155.20   | 499.80            |
| անդամավճար 2821.12    |           |           |                   |
| 1905                  | 90913.75  | 91901.91  | 56324.15          |
| անդամավճար 7026       |           |           |                   |
| 1906                  | 208342.16 | 192556.59 | 58247.88          |
| անդամավճար 1196.01    |           |           |                   |
| այլ մարմիններից 45957 |           |           |                   |
|                       | 304894.75 | 288613.70 | 115071.83         |

**ԱՅՎԵԿՉՈՒԹԻՒՆՆԵՐ**

1904-1906 շրջանում եղել են մօտ 16-20 դէպք. մանրամասնութիւնները տես ահաբեկչութիւնների ընդհանուր վիճակագրական ցուցակում։

- 11.- Այսիքն Շուշիի։
- 12.- Տոն տուող ուղղութիւն տուող, թելադրող։
- 13.- Գրապարակային բանավեճի։

ԻՆՔԵՆԱԿՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՍԻՆՈՒԹԵԱՆ ԴԵՊՔԵՐ

Վարանդա

Բագուի փետրուարեան 1905ի դէպքերից յետոյ, Ղարաբաղում երկու կողմերն եւս, թէ հայերը եւ թէ թուրքերը, ըստ երեւոյթի ջանքեր էին գործ դնում, որպէսզի նոյնը չկրկնուի մեզ մօտ:

Այդ օրերում Աղղամում նկատուում էր որ թուրք ժողովրդի մեծամասնութիւնը ոչ մի տրամադրութիւն չունի հայերի հետ ընդհարուելու, բայց պրովոկացիան եւ երկու կողմերի մէջ զարգացող կասկածը եւ գործ դրուող նախապատրաստական միջոցները, որը բոլորովին կարելի էր լինում գաղտնի պահելու, փոքր առ փոքր մթնոլորտը ելեկտրականացնում էին:

Ամէն մի սովորական եղած սպանութիւն, աւազակութիւն եւ ընդհարում 2 կողմից եւս յատուկ ուշադրութեան էր առնուում եւ որպէս զէնք ծառայում պրովոկացիայի ձեռքին: Երեւում էին մասնաւոր աւազակութիւններ Եռուշի — Եւլախեան ճանապարհի վրայ եւ այլ տեղեր: Սարից դառնում էին քոչուորները, որոնց նախնականեան եւ Ձանգեզուրի դէպքերում խաղացած խոշոր ակտիւ դերի մասին արդէն լսել էր դարաբաղցին: Զիւլանշիրի մեր խումբը խաչենագետի ձորում Վանքի գիւղի մօտ ընդհարում է ունենում քոչուորների հետ: Աղղամում լսելով այդ, 100-ից աւելի դիլիթանսով<sup>14</sup> երթեկողներին աղղամից թուրքերը բանտարկում են (չատերին կողոպտելուց յետոյ) եւ սպասում խաչենագետի դէպքի ելքից, որտեղ մի 2 օր փակուած քոչուորներին օգնութեան են գնում մօտ 100 թուրք ձիաւոր զինուորներ Աղղամից: Գործը այդտեղ չի բարդանում. բաց են թողնուում թէ քոչուորները եւ թէ Աղղամում փակուած հայերը, բայց ի հարկէ երկու կողմն էլ խիստ վիրաւորուած են հեռանում: Էլ հաւատ չի մընում հարեւանների մէջ. դրուժիւնը լարուում է լարուում ու հասնում Եռուշի առաջին ընդհարման 18-ի Օգոստոսի 1905:

Եռուշու ընդհարմանը 2-րդ օրը միայն վարանդացիների մի փոքր ոյժ դուրս է գալիս Ասկերանը փակելու եւ կարողանում է մի 2 օր, իսկ 3-րդ օրը թուրքերը գրոհ տալով մեծ ոյժերով անցնում են: Այդ օրը խաչէնի կողմից քիչ ոյժեր կային — բացակայում էր Զիւլանշիրի խումբը մի քանի ընտիր կռուողներով եւ լաւ զէնքերով:

Վերջապէս գալիս են մօտ 100 խաչէնի եւ Զիւլանշիրի զինուորներ եւ բոլորը միասին յարձակուում են Եռուշի գնացող մի թուրք ստուար խմբի վրայ, շատերին կոտորում են եւ Չ հատ հրացան էլ գրաւում. աւելի ուշ հասնում են եւ վարանդացիները եւ սկսում է այն կռիւները ու ջարդերը, որ կրեցին Եռուշուց յոխորտալով վերադարձող թուրք յորդանները. դա մի մեծ հարուած էր թուրքերի համար: Մի երկու օրից յետոյ գեներալ Տա-

կայզվիլին է ասպարէզ գալիս եւ առ ժամանակ նրա պահանջով Ասկերանը բացուում է թուրքերի համար: Այդ ժամանակ Վարանդայի կենտրոնական Ֆրոնտի հայերը յարձակուել, գերել էին Ղարանեաղու եւ Ղարանդալու թուրք գիւղացիներին եւ կողոպտել նրանց գոյքը: Թուրքերից մարդ սպանուել է շատ քիչ, մի խոշոր մասը փախած է լինում, մնացածներին էլ շուտով բաց են թողնում թուրքական սահմաններում: Ամարաս վանքի կողմերում էլ սկսում են փոքրիկ ընդհարումներ թուրքերի հետ: Եւ այդտեղ էլ կրակում են Դուլանլար թուրք գիւղը եւ կողոպտում Դրախտիկ հայ գիւղի մօտ գտնուող փոքրիկ Սալաքաթին թուրքական գիւղը:

Ասկերանեան դէպքերից յետոյ դեռ չանցած մի ամիս, մօտաւորապէս Սեպտեմբ. 10-ին 1905, թուրքերը թարաքեամաններ<sup>15</sup> հետ միասին Աւղալ եւ Գիւլաֆլու (800 տուն) գիւղերի կողմից յարձակուում են Միրաջալու հայ գիւղի վրայ. գիւղերը լուսաբացին մի 2-3 ժամ մնացած թուրքերը կարողանում են մի կողմից ներս խուժել գիւղը, գիւղի կէսը թալանում եւ սպանում 7 հոգի մեծ ու փոքրերից, մինչեւ որ հարեւան հայ գիւղերից վրայ են հասնում եւ յետ մղում յարձակումը: Օգնութեան հասած վարանդացիները գումարուում են Միրաջալու գիւղում, այդ օրը թեթեւ հակադարձակում են անում Աւղալի կողմից թուրքերի վրայ: Երեկոյեան գալիս են Տակայզվիլու կարգադրութեամբ 22 կողակներ, որոնց իբր թէ յանձնարարուած է լինում Գիւլաֆլու թուրք գիւղում քար քարի վրայ չթողնել: Բայց երբ 3-րդ օրն առաւօտեան թուրքերը բռնում էին Միրաջալուի դիմաց գտնուող բարձր դիրքը, կողակները յետ են քաշուում դէպի մօտակայ մի սար, որտեղ եկած են լինում եւ ուրիշ կողակներ եւ 2700 քայլից մի քանի գալպեր<sup>16</sup> են տալիս դէպի թուրքերը եւ երբ նրանց խնդրում են կրակել թուրքերի վրայ աւելի մօտից, փամփուռները սակաւութիւնը պատճառ բերելով, լուկ հանդիսատես են լինում տաքացած կռուին: Բայց պէտք է խոստովանել որ կողակների վերաբերմունքը դէպի հայերը այնչափ էլ վատ չէր եւ երբ 8-7 ժամ տեւող կռուից յետոյ գրոհ տալով մերոնք մտան Աւղալ Գիւլաֆլու գիւղը, տեսան մի քանի կողակներ (7-8) թուրքերի տները վառելիս (դրանք ջոկուել էին հարիւրեակից): Աղղամից օգնութեան հասան թուրքերը մի հարիւրեակ կողակների հետ, նրանք էլ թուրքերի հետ միասին հակադարձակում գործեցին Վարազաբոյն հայ գիւղի վրայ եւ սկսում են իրանք էլ վառել այդ գիւղի գոմերը: Այդտեղ կողակները սկսում են հեռու տարածութիւնից իրար վրայ կրակել ի հարկէ չիմանալով: Մերոնք ստիպուած են լինում թողնել Աւղալ Գիւլաֆլուի գործը կիսատ եւ

14.- Գանրակառքով:  
15.- Թուրք-թաթարական վազկատուն ցեղ:  
16.- Գանազարկեր:

չտապել Վարազաբոյնին օգնութեան եւ մեծ դժուարութեամբ յետ մղում թուրքերին: Կողակները աւելի էին բարձրացել սարը եւ համարեա դադարել էին կրակել: Երբ մենք յետ մղեցինք թուրքերին, կողակները սկսեցին սիգնալներ<sup>17</sup> տալ եւ իմանալով որ մեր կազմում էլ կողակներ կան, հարիւրակները մօտեցան իրար եւ կոմանդիրները-օֆիցերները իրար հետ վէճի են բռնում եւ հայհոյում իրար: Այդ կռիւների ժամանակ հայերը այնքան էլ լաւ չէին զինուած. դրանից յետոյ աւելի առաջ գնաց զինման գործը: Աւղալ-Գիւլաֆլուցիները փախան դէպի Աղղամ, այդ գիւղերի միայն կէսն աւերուեց եւ թալուեց: Հայերը այնքան ուժեղ եւ թուրքերին համար անսպասելի գրոհով մտան գիւղը, որ թուրքերը ոչինչ չկարողացան փախցնել եւ հայերն յետոյ էլ շարունակեցին թալանել այդ գիւղերը. հայ կռուողները թուրք կռուողների համար պատրաստուած կերակուրն էին կերել եւ խմել նրանց դեռ տաք տաք սամովարների թէյը:

Մի ամիս հազիւ անցած Աւղալ Գիւլաֆլուի եւ Ասկերանի շուրջը դարձեալ սկսում է տաքանալ կռիւներ մանր ու խոշոր ընդհարումներով: Այդ գիւղերում արդէն հաւաքուել էին միայն կռուող թուրքերը եւ անհանգիստ էին անում հայերին. ահա թէ ինչու հայերը յարձակում էին գործում եւ դարձեալ աւերում գիւղի մի մասը: Գիւլաֆլուն մօտ լինելով Աղղամեան ուայոնին, միշտ առաջ օգնութեան են հասնում դրանց թուրքերը եւ նորից նորոգում կռիւները: Դեկտեմբերի վերջերին 1905-ի հայերը շրջապատում են գիւղը եւ վերջնականապէս աւերում այն մեծ եւ հարուստ գիւղերը: Այդ կռուում թուրքերը կորցնում են 50-70 սպանուածներ. միայն մի տան դիրքում սպանուել են 28 հոգի:

Մօտաւորապէս Դեկտեմբ. 18ին վարանդացիները յարձակում են գործում Մալիբէկու թուրք գիւղի վրայ, որը հանդիսանում էր մեծ խոչընդոտ խաղաղ երթեկուցութեան հայ գիւղերի եւ քաղաքի մէջ. երկու ժամից յետոյ մերոնք գրոհ են տալիս եւ մտնում Մալիբէկու, հազիւ հայերը կարողանում են վառել 5-6 տուն, թուրքերի հասնում է օգնութեան կողակների կէս հարիւրեակ խանքենդ<sup>18</sup> աւանից եւ մենք ստիպուած ենք լինում յետ նահանջել տալով 2 սպանուած եւ 3 վիրաւորուած ընկերներ:

Դեկտեմբերի վերջերին տեղի է ունենում վարանդացիների եւ խաչէնացիների միջոցով 54 թուրք ֆուրկոնների թալանը Ասկերանում, նոքա կենսական մթերքներ էին տանում Եռուշի պաշարուած թուրքերի համար. եւ այդ թալանը կատարուում է 100-ից աւելի կողակների ներկայութեամբ, որոնք ուղեկցում էին ֆուրկոնները:

Այդ դէպքին հասնում են բազմաթիւ զինուած թուրքեր, որոնց հետ մեր խմբերը կռուում էին մի քանի ժամ: Եթէ այդ թալանը չլինէր, գիւղացիների մէջ սովը աւելի քան զգալի պէտք է լինէր:

1905 թուին բացի Վարանդայում տեղի ունեցած բազմաթիւ կռիւներից նշանաւոր են թուրքերի բազմաթիւ յարձակումը Սոս հայ գիւղի վրայ. թուրքերը կարողանում են ներս խուժել գիւղը եւ թալանում են մի քանի տներ. տեղի է ունենում մի կատաղի կռիւ օգնութեան հասած հայերի եւ թուրքերի մէջ. վերջինները փախուստի են դիմում: Օգնութեան համար գումարուած հայերը այդ օրը վառում են Հաջուգ թրքական գիւղը. միւս օրը հայերը յարձակում են վեյսալու եւ Աղբալլու յայտնի աւազակաբարոյ թուրք գիւղերի վրայ, հրդեհում եւ թալանում են:

Հայերի ստացած վնասները Վարանդայի շրջանում 1905 թ. շատ են լինում Ամարասի հովտում, որտեղ գտնուում են մի քանի հայ գիւղերի գոմերը, որոնցից շատերը թուրք գիւղերից էլ պակաս չեն լինում: Թալանում եւ սրբապղծում է Ամարասի վանքը եւս:

1906ի ԴԵՊՔԵՐԸ

Թուրքերը չէին դադարեցնում կռիւները. նրանք սկսել էին աւելի լուրջ պատրաստուել. նոքա հրակիրում էին եւ բերում Պարսկաստանի Շահսեւաններից 700-800 հոգի, որոնք հռչակուած են իրենց քաջութեամբ. օգնութեան են գալիս Արէշի եւ ուրիշ գաւառներից:

Մենք կարողացել էինք հօտն առնել եւ միայն նախագոչացրել էինք Ասկերանի շրջակայ գիւղերը. հեռուից օգնութիւն խնդրելու կարիք չէինք զգացել, կարծելով թէ սովորական սուտ լուրերից կը լինի: Թուրքերը յարմար օր էին ընտրել յարձակուելու. ջրօրհնէքի օրը: Լուսաբացին ժամը 4-ին մօտ 2500 թուրքեր յարձակում են Վարազաբոյնի եւ Փիրաջամալի հայ գիւղերի կողմից, բարձրացնում մի սարսափելի աղաղակ «Եա Ալի» եւ հրացանաձգութիւն:

Մեր առաջապահ դիրքերի գիւղացիները մի առ ժամանակ պաշտպանում են, յետոյ մթութիւնից չիփթուած խառնում են թուրքերի հետ եւ կորցնելով իրար, երկու գոհ տալուց յետոյ մի գլխաւոր դիրքից յետ են նահանջում դէպի գիւղերի մօտակայ դիրքերը: Թուրքերը մօտենում են գիւղերին շատ մօտ — այդ ժամանակ մենք ուղարկում ենք մի խումբ ձիաւորներ — ասկերանեան խումբ — 5 վերստ տարածութեան վրայ գրտնրող Շէլլու թուրք գիւղի մօտ դեմոնստրացիա<sup>19</sup> սարքելու. այդ միջոցը մեզ բաւականաչափ օգնում է, թուրքերից բաժանում է մի մասը եւ օգնութեան շտապում Շէլլուին, որոնց հալածում են հայերը մեծ դժուարութեամբ. կռիւը տեւում է 9 ժամ, հայերից սպանում է 13

17.- Սիգնալ՝ ազդանշան:  
18.- Խանքենդը այժմու Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտն է:  
19.- Ցոյց, ցուցադրութիւն:

Հոգի ու վիրաւորում 14 հոգի: Այդ օրուայ կռուի տարածութիւնը 7-8 վերստի է հասնում: Թուրքերը այդ յարձակումով նպատակ ունէին 3-4 հայ գիւղեր ակերել եւ Մալիբէկլուի վրայից միանալ պաշարուած հայերից Շուշու: Թուրքերը բերել էին բազմաթիւ ֆուրկոններ, կառքեր եւ գրաստներ: Դրանից յետոյ տեղի է ունենում հայերի կողմից յարձակում Ղաջարի վրայ, որտեղ հայերը նահանջում են խայտառակ կերպով, յաջողեցնելով կրակել միայն մի քանի տուն: պատճառը այն է, որ զինւորները եւ գիւղացիները շատ շուտ ընկած են լինում թալանի ետեւից — ամէն մէկը ուզեցել է մեծ թալան տանել: Մինչեւ Շուշու վերջին կռիւր վարանդայի սահմաններում շատ կռիւներ են տեղի ունեցել, խոշոր եւ փոքր: Շուշուայ քաղաքի Յուլիսի կռուին վարանդացիները յարձակում են Մալիբէկլուի վրայ, որ կազմակերպուած է լինում վատ: Շնորհիւ դանդաղ գործունէութեան, կողակները հասնում են Խանքենից<sup>18</sup> եւ հալածում հայերին, որոնք ստիպուած յետ են նահանջում:

**Խաչէն եւ Զիւանչի**

Յուլիսի 14-15ին 1905ին թ-ին սարխեւանդցի թուրքերը սպանեցին Յիւճոքում 2 սէյիտիչէնացի եւ մէկ առաջածորեցի հայեր: Օգոստոսի 23ին կազմակերպութիւնը այդ սպանողներից մէկին Մուսսաբէգին տեղորի ենթարկեց: Դրանից յետոյ յարաբերութիւնները սրուեցին — սարխեւանդցի բէգերը եկան Առաջածորի եւ Վանքի բազարում (խառն հայ-թուրքական բազարը) թուրքերին բաժանեցին հայերից, սպառնալով որ կռիւ են սարքելու: Այդ բէգերը գրգռեցին անցնող քոչուորներին (Փերասանլու եւ Քենջեյլու) որպէսզի նոքա յարձակւին Վանք գիւղի վրայ: այդ նպատակով քոչուորները վէճ ձգեցին Վանք հայ գիւղացոց հետ եւ վիրաւորեցին 2 հայի, հայերը պատասխանելով սպանեցին 2 թուրքի, իսկ 3-ին վիրաւորեցին:

Այդ ընդհարումը լսելուց Աղդամի թուրքերը բռնում են մի քանի մնիբուսներ հայերով լիքը:

Որպէսզի այդ բռնուած հայերին ազատի, Զիւանչի-րի գինուորները խումբը արգելում է քոչին բարձրանալու: Միւս օրը 100երորդը թուրքեր գինուած յարձակում են Առաջածոր գիւղի վրայ բայց յետ են մղում: Թուրքերը տեսնելով որ քոչը չենք բաց թողնում, ազատ թողեցին բռնուած կառքերը Աղդամում:

Դրանից յետ, Օգոստոսի 12-ին թուրքերը յարձակում են Մարաղայի վրայ եւ յետ են մղում: Չորս օրից յետոյ պատահում է Շուշուայ Օգոստոսի 18-ի դէպքը — քաղաքի կռիւր: Չուզընթացաբար Ասկերանում Համազասպի, Իսրայէլի, Խէչոյի, Արամայիսի, Գրիգորի, Ալեքսանի ղեկավարութեամբ խմբերը ամսի 20-ից սկսած 4 գիւղերը կռուի են բռնում թուրքերի հետ, որոնք մեծ բազմութեամբ աշխատում են անցնել Ասկերանից

դէպի Շուշու: Մերոնք այրում են Խոջալու թուրք գիւղը, Խանաբաղ հայ գիւղում Սուլէյման բէգի տունը, իսկ բացատում այրում են բէգերի տները եւ սպանում 19 հոգի բէգերից: մի փոքր յետոյ Բալլուջայի եւ Խնածախի հայ գիւղերի թուրք բէգերի տները այրեցին:

Միաժամանակ մօտ մի ամիս ընդմիջում եղաւ: Նոյեմբերի 2-ին մեր խումբերը յարձակուեցին Մարխեւանդ (150 տ(ուն)) թուրք գիւղի վրայ, այրեցին 21 դռըլաղ<sup>20</sup> (5 — 20 տնից բաղկացած) որ պատկանում էր Զաւաղ աղա Զիւանչիին: Դրանից յետոյ կաբարդուի ձորի թուրք դռըլաղներ այրեցին մերոնք (11 հաստ):

Նոյեմբերին այդ խումբը փչացրեց Ումուդուր կարաւանդի վեց գիւղեր (300 հոգի կոտորուեց), յետոյ Չըրախլու Գեարաւանդ, Մամեղ-Րիզալլեար, Դամիրլեար, Արթասիլա, Բուրուլ:

Նոյեմբերի վերջին թուրքերը յարձակուեցին Չայլուի վրայ եւ այրեցին վերին Չայլուն: Դեկտեմբերին թուրքերը յարձակում են Մարաղայի վրայ, յետ մղուեցին, 80 մարդ կորուստ տալով:

1908-ի Յունուարի 5ին Համոյի, Բախչիի, Ալեքսանի, Եպիսկոպոսեանի ղեկավարութեամբ խմբերը յարձակուեցին Մաֆրաւանդ թուրք գիւղի վրայ, 133 թուրք սպանեցին իսկ հայերից 9 հոգի (5 գինուորներից 4 գիւղացիներից), բայց չյաջողուեց վառել գիւղը եւ մերոնք յետ նահանջեցին: Մայիսի 18-ին սկսում են կռիւների նոր շրջան: Խաչէնում թուրքերը ճանապարհին անհատական սպանութիւններ էին անում, Գէորդը ուզենալով նրանց վախեցնել այդպիսի մի անտակտ կարգադրութիւն է անում: Թուրքիկ Գէորդի կարգադրութեամբ սպանում են 9 անմեղ թուրքեր: Իր հերթին թուրքերը շուտով պատասխանեցին ակելի ուժեղ կերպով՝ Եւլախ-Շուշու խճուղու վրայ: մի քանի անգամ թուրքերը կողոպտում են շատ դիլիթաններ<sup>14</sup> եւ մօտ 100-120 մարդ սպանում են եւ շատ յարձակողական դիրք էին բռնել: Դրան պատասխան Յունուարի 22ին Զիւանչիի խումբը յարձակում է Համգաչիմանի քոչի վրայ, Աթերք հայ գիւղի մօտ, սպանում են 15 թուրքեր, մեծ թալան բերուեց (200 ոչխար) Աղիգէօզալ բէգի ոչխարներից, իսկ 27ին յարձակում են Զինլու եւ Ղըրթլու թարաքամայի քոչի վրայ, սպանում է 17 տղամարդ: 2 կին 1 երեխայ: Հայերի կողմից 2 գինուոր է սպանում: Թալանը եղել է. 400 տաւար, 300 ոչխար, 6 ձի: Յունուարի 13ին Զիւանչիի խումբը գալիս է քաղաք օգնութեան:

**Չանգեզուրի շրջան**

1905 թուի Երեւանի դէպքերից յետոյ անմիջապէս

20.- Գիւղակ:

թուրքերը յարձակում են Չանգեզուրի հայ գիւղերի վրայ եւ նրանցից 4ը ակերում (Մինքենդ, Խոզնավար եւ ուրիշ 2-ը): Հայերը իր(ենց) հերթին ակերում են 5 թուրք գիւղեր:

1908ին նոյնպէս սկսողները թուրքերն էին: բայց այս անգամ այս շրջանի դէպքերը ոչ թէ առաջաբան էին այլ վերջաբան ուրիշ շրջանների դէպքերի: Այրուեցին հայ գիւղեր.— Ղարաբաբա, Ղալաջիկ, Քաջարանց եւ երկու ուրիշ գիւղերի մարազները, բացի այդ Մելիք Ազատեանի հանքերի գործարանը: Մերոնք ի պատասխան կատաղաբար այրեցին թուրքերի 27 գիւղեր, մեծ եւ փոքր, ի միջի այլոց գուտ միայն բէգերից կազմուած Տանձավայրը: Ղափան ու Սիսիանի գիւղերն էին մեծ մասը — գործը ղեկավարում էին Մելիքը, Մուրատը, Կորիւն եւ ուրիշները:

**Դիզակ**

Օգոստոսի 21ին 1905, թուրքերը յարձակում են Քիւրաթաղ հայ գիւղի վրայ, սպանում է մի ծերունի, քիչ է թալանւում, որովհետեւ վաղօրօք այդ գիւղացիք իրեւ թուրքերի սահմանակից իրանց ապրանքը թաքցրել էին: 22 — VIII [Օգոստոս] թալանւում եւ կրակի է մատնւում 3 հայ գիւղեր՝ Խումանջուղ, Աղբուլաղ, Եխեցիք: Կռուի ժամանակ թուրքերը շատ կորուստներ են տուել: Նոյն օրը Ուշըլլար հայ գիւղը արդէն դատարկւած՝ թուրքերը քանդում են եւ թալանում: 25 VIII հայերը յարձակում են Արիշ թուրք գիւղի վրայ, մասամբ այրում: 28 VIII Չոր հայ գիւղը ենթարկւում է թուրքերի յարձակման, բայց շուտ յետ են մղում: հայերը հալածելով մտնում են Կըզլար թուրք գիւղը եւ տների մի մասը այրում եւ թալանում:

Սեպտեմբերին թուրքերը յարձակում են Դոլանյար հայ գիւղի վրայ, յետ բաւականի կորուստ թողնելով, հայերից սպանուած է) 1 կին:

Հարար հայ մեծ գիւղը խաբբայութեամբ գերում է թուրքերից, այրում: կառավարութեան միջամտութեամբ ազատում է գերելութիւնից, մի մասը հիւրընկալութիւն է գտնում Չանգեզուրում, միւս մասը Դիզակի Խժաբերդ գիւղում: Այժմ գաղթել են Խանքենդ եւ քաղաք:

Միւլքաղարը եւ Քարազլուխը յարձակման են ենթարկւում թուրքերի կողմից, պաշտպանւում են մինչեւ օգնութեան գալը: Թուրքերին քշում են եւ կրակում երկու թուրքական գիւղեր — Մավրա եւ մի ուրիշ գիւղ:

1908 Օգոստոսի սկիզբն թուրքերը յարձակում են Միլիջանլու հայ գիւղի վրայ, բայց յետ են մղում եւ հայերին յաջողում է կրակել 2 թուրք գիւղեր — Ղարաղաղլու եւ Գիւլլեակ:

Սուլէյմանլու թուրքերը յարձակում են հայ Ղըլլաղ գիւղի վրայ, Չոր գիւղի հայերը հասնում են օգնու-

թեան, քշում թուրքերին եւ ամբողջ օր պահպանում Ղըլլաղ թուրքերից:

**Շուշու քաղաք**

16 VIII 1905. կռիւր տեւեց 5 օր: հրդեհը շատ օգնեց թուրքերին: մօտ 400 հայ տուն կրակուեց՝ ամենահարուստ թաղը շնորհիւ քամուն որ այդ օրերը շարունակ փչում էր ցածից դէպի վերեւ: հայերը կարողացան կրակել մօտ 80 թուրքական տներ: Սպանուել են հայերից մօտ 70 հոգի, մեծ մասը թուրքաց բազարում կռուի սկիզբը մնացածներից: (Այն ժամանակ կազմակերպութիւնը մօտ 80 գինուոր էր պահում):

1908 Յունուարի 12ին սկսուեց վերջին կատաղի կռիւր: Թուրքերը սկսեցին, սպանելով մեր մի գինուորին եւ յարձակուելով կառավարութեան քննիչ յանձնախումբին վրայ: Կռուում էին մօտ 1000 հոգի թուրքերից եւ մօտ 700 հոգի մեր կողմից: Տեւեց 12 օր ընդմիջումներով: Չոհեր — 27 հոգի սպանուած եւ 100 հոգի վիրաւորուած (մեծ մասը քաղաքացիներ): Թուրքերը խաղաղութեան մասին գրաւոր աղերսագիր տուին գնեբրալ Գալաչապոզին, որպէսզի նա միջնորդ հանդիսանայ հայերի առաջ: Թուրքերը մեծ ոյժեր ունէին եւ չէին սպասում այդպիսի մի պարտութեան: այդ կռուի յաջողութիւնը փրկեց ուրիշ վայրեր կռիւներից, օր: Գանձակ քաղաքը եւ գաւառները, որտեղ թուրքերը եթէ Շուշու յաջողութիւն գտնէին, լայն պատրաստութիւն էին տեսել:

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ**

Դեռ վերջին երկու տարիներ առաջ շնորհիւ գիւղացիների սակաւահողութեան, խոշոր արդիւնաբերութեան եւ կանոնաւոր հաղորդակցութեան բացակայութեան, Ապառաժի շրջանի ազգաբնակչութեան տնտեսական դրութիւնը քայքայուած է եղել:

Այս վերջին երկու տարիների ընթացքում հայ-թուրքական յարաբերութիւնների սրուիլը եւ կռիւները նրապատեցին ակելի եւս այդ քայքայման՝ ազգաբնակչութիւնը ստիպուած էր գինուելու, ինքնապաշտպանութեան մեծ ծախսեր հոգալու, թալանուած եւ ակերուած գիւղերի բնակիչներին եւ քաղաքի հրդեհուած տներում ապրողներին իրենց սուղ միջոցներով կերակրելու:

Միեւնոյն ժամանակ այն գիւղերը, որոնք ունին մի քանի բերրի տափեր ստորոտներում, ոչ մի հնարաւորութիւն չունէին հերկելու եւ ոռոգելու այդ հողերը չընորհիւ այն հանգամանքի, որ այդպիսի հողերը գտնուում են թուրքերի բնակչութեան սահմաններում: Բացի դրանից առաջ սակաւահող կամ անհող գիւղացիները եւ արհեստաւորները քաղաքներումն էին հայթայ-

Թույլ իրանց ապրուստի միջոցները, իսկ այժմ կուհիների եւ արդիւնաբերականի կրիզիսները<sup>21</sup> պատճառով (որ տիրում է ամբողջ Ռուսաստանում) առանց աշխատանքի թափառում են: Միւս կողմից էլ կառավարութեան բռնած դիրքը — իր էկզեկուցիաներով<sup>22</sup> եւ անսահման չափազանցած տուգանքներով (40000 ռ. Ղափանից, 12+3000 քաղաքից, 5000 Վարանդայից եւ այլն) եւ նախկին տարիների չվճարած իր տուրքերը եւ կալուածատէրերի բահրանները<sup>23</sup> ամենախիստ զինուորական ոյժով ժողովելով — ծայրայեղ աստիճանի է հասցրել այդ քայքայումը: Ամենածանր դրութեան մէջ ըստ չքաւորութեան եւ քայքայման աստիճանի այսպէս կարելի է դասակարգել վայրերը՝ Սիւնիք, Խաչէն, յետոյ Վարանդա, Զիւանջիւր եւ Դիզակ:

Շնորհիւ այդ տեսակ ռեպրեսիաների<sup>24</sup> ժողովրդի գիտակցութիւնը արթնանում է եւ բարձրանում է. նա ըմբռնել է արդէն իր վատթար դրութեան սկզբնապատճառը, սակայն իր հակակառավարչական տրամադրութիւնը չէ արտայայտում, չէ ակներեւ դարձնում, միեւնոյն ժամանակ գիտակցելով եւ փորձով իմանալով, որ անհաւասար կուռում երկու Ֆրոնտի վրայ՝ թէ թուրք տգէտ ամբոխի եւ թէ ռուսաց անգիտակից զօրքերի դէմ նա պարտութիւն է կրելու:

- 21.- Տագնապ, ճգնաժամ:
- 22.- Ճնշումներով, բռնագրաւումներով (զօրքի կողմէ):
- 23.- Բնատուրքերը:
- 24.- Բիրտ ճնշումներու, պատժամիջոցներու:

Դասակարգային եւ հողի շահերը նա որոշ չափով գիտակցում է, բայց թոյլ կերպով է արտայայտում աչքի առաջ ունենալով հայ-թուրքական յարաբերութիւնը եւ կառավարութեան առանձին հովանաւորութիւնը բէգութեան (իսկ հայ գիւղերը գլխաւորապէս թուրք բէկերի ձեռքին են):

Ժողովուրդն ընդհանրապէս գիտակցում է մեր կազմակերպութեան մարմինների կատարած դերը եւ ընդհանրապէս լաւ են վերաբերւում:

Դասակարգերը սկսել են գտուել: Շահագործող դասակարգը բաղկացած բէգերից, դիրք ունեցող բուրժուա-ինտելիգենտներից եւ վաշխառու վաճառականներից գիտակցելով իրենց շահերը եւ Դաշնակցութեան ներկայ եւ ապագայ դերը, սկսել է խմբուել եւ արտայայտուել Դաշնակցութեան դէմ: Այդ հոսանքն աւելի նկատելի է քաղաքում:

Ապառաժի Կ. Կ. ի պատգամաւոր  
ԲԱՐՍԵՂԵԱՆ

*Ապառաժի Կ. Կ. ի պատգամաւոր  
ԲԱՐՍԵՂԵԱՆ*

*Երբեք չէի կրնայի մտածել, որ  
այսչափ ծանր կ'ըլլար իմ կեանքս:  
Երբեք չէի կրնայի մտածել, որ  
այսչափ ծանր կ'ըլլար իմ կեանքս:  
Երբեք չէի կրնայի մտածել, որ  
այսչափ ծանր կ'ըլլար իմ կեանքս:  
Երբեք չէի կրնայի մտածել, որ  
այսչափ ծանր կ'ըլլար իմ կեանքս:*

Նմոյշ մը՝  
Բարսեղեանի ձեռագրէն եւ ստորագրութենէն:

Փաստ. 404-11

**Գ 2.- ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. Յ. ԴԱՇ. ԱՊԱՌԱԺԻ  
ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԵԻ ՄԻ ՏԱՐՈՒԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ<sup>25</sup>  
1906 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՅ ՄԻՆՉԵԻ 1907Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԸ**

Հայ-թուրքական ընդհարումներից յետոյ, երբ կառավարութեանը կողմից սկսուեցան մի շարք ռեպրեսիաներ Դաշնակցութեան դէմ՝ ստիպուած հեռանում են շրջանից կարեւոր ընկերներից շատերը թողնելով անորոշ դրութեան մէջ շրջանի բոլոր գործերը, դրան հետ միասին գինական եւ դրամական հաշիւները: Հեռացած ընկերների թույլ էր շրջանի կարեւորագոյն ընկերներից նաեւ Վարդանը<sup>26</sup>: Գործերը մի կերպ «եռլա տանելու» համար քաղաքի ընկերների լայն շրջանում ընտրուում է մի մարմին բաղկացած 5 հոգուց:

Սեպտեմբերի վերջերին ընտրուած մարմնից հեռանում են երկու հոգի. մնացածները Մեծ քաղաքից եկած ընկեր բժշկի հետ հրաւիրում են քաղաքում գտնուած կուսակցական ընկերներից մի քանիսին միասին վարելու կուսակցական ընթացիկ գործերը: Բայց աւելի շատ նրանք լիկվիդացիա<sup>28</sup> են անում ինքնապաշտպանութիւնից մնացած կազմակերպութիւններն ու հաշիւները: Շրջաններում գործում էին հետեւեալ ընկերները. Վարանդայում սկզբից մինչեւ Նոյեմբերի վերջերը լինում էին Հայրուժը եւ Խեչոն՝ 3-4 գինուորների հետ: Խաչէնում Իսրայիլը — մինչեւ Նոյեմբեր. Զիւանջիւրում Համոն. Դիզակում Խեչոն եւ Գերասիմը. Սիւնիքում Սամուէլը, Քեռին, Սուրենը, Կորիւնը, Սողոմոնը եւ Զեմլեակը իրենց խմբերով: Բոլոր ընկերներին յանձնարարուած էր շրջաններում լիկվիդացիայի<sup>28</sup> ենթարկել ինքնապաշտպանութեան բոլոր գինական եւ դրամական հաշիւները առաջ բերելով տեղական ինքնապաշտպանողական մարմիններ, որը յաջողուում է գրեթէ բոլոր շրջաններում բացի Խաչէնից եւ Զիւանջիւրից: Գաւառական ընկերները միաժամանակ մղում էին լայն մասսայական պրոպագանդ: Այդ դրութիւնը գնում է մինչեւ 1908-ի վերջը: Այդ ժամանակամիջոցում տեղի չի ունեցել որեւէ խոշոր ակտ, որ արժանի լինէր յիշատակութեան: Բացի նրանից որ Կենտր. Կոմիտէն բոլոր գաւառական ընկերների հետ աշխատում էր հարթել բոլոր այն սխալ հասկացողութիւնները, որ կար մեր ժողովրդի մէջ եւ որը ստացել էր նա ինքնապաշտպանութեան շրջանի գործունէութիւնից:

Շրջանում չկայ եւ ոչ մի կազմակերպուած խմբակ, որուն միջոցով հնարաւոր լինէր կուռել աջից եւ ձախից Դաշնակցութեան հասցէին տեղացող յարձակումների

դէմ. դրա դիմաց շրջանում կար մի ահագին թիւ, ինքնապաշտպանութեան շրջանից մնացած, երես առած եւ սանձարձակ զինուորների, որոնք զրկուելով այն նիւթական միջոցից որը մինչեւ այդ ստանում էին կազմակերպութիւնից՝ հասարակութեան մէջ պրոպագանդ էին մղում Դաշնակցութեան դէմ: Քաղաքի բուրժուա-կղերո-սոցիալ-դեմոկրատական խմբակը միացած միւս հակադաշնակցական տարրերի հետ դուրս էին եկել վերականգնելու իրենց նախկին փառքն ու դիրքը՝ աշխատելով թուլացնել ժողովրդի աշխատաւոր մասսայի եւ Դաշնակցութեան մէջ եղած կապն ու դէպի Դաշնակցութիւնն ունեցած հաւատը:

Որպէսզի վերջնականապէս իր ուսերից զցէր ինքնապաշտպանութիւնը՝ Կենտր. Կոմիտէին փոխարինող մարմինը քաղաքում եւս առաջ է բերում առաջին անգամ մեր շրջանում գործադրուող քառանդամ սիստեմով ընտրուած մի ժողովրդական մարմին՝ կազմուած 15 հոգուց: Քաղաքի հակադաշնակցական տարրերից է ընտրուում գլխաւորապէս այդ մարմինը: Այդ ընտրուած մարմինը սակայն հրաժարուում է վերցնել իւր վրայ ինքնապաշտպանութեան գործը, համարելով իրեն անձեռնհաս առանց Դաշնակցութեան աջակցութեան: Կենտր. Կոմիտէն մի թուուցիկով յայտարարում է, որ նա այլեւս պատասխանատու չէ ժողովրդի ինքնապաշտպանութեան համար, խոստանալով ներկայացնել մանրամասն հաշիւ եղած մուտքի եւ ելքի: Սկսուում է մի այլանդակ կուռ Կենտր. Կոմիտէի եւ քաղաքի հակադաշնակցական տարրերի մէջ, որի մանրամասնութիւնները աւելորդ ենք համարում արձանագրել:

Հակադաշնակցական այդ տարրերը արտայայտուեցին «Մուրճ»ի եւ «Մշակ»ի մէջ իրենց կոչելով Դաշնակցութեան դէմ: Այդ շրջանում քաղաքի երիտասարդութիւնը դիմում է Կենտր. Կոմիտէի անդամներից մէկին իբրեւ անհատի՝ կազմակերպելու նրանց ինքնապաշտպանութեան գործը ստանձնելու եւ տանելու, որովհետեւ

25.- Տեղեկագիրը կազմուած է Չորրորդ Ընդհ. ժողովէն ետք 1907 թ. Դեկտեմբերի վերջերուց կայանալիք Կովկասեան Ռայոնական ժողովին համար: Կը գրաւէ 14 սեծադիր էջ եւ Ապառաժի Կեդր. Կոմիտէի կնիքը:  
26.- Լուծարք:



տեւ այդ ժամանակ թուրքերի վերաբերմունքը դեռ վերին աստիճանի կասկածելի էր, իսկ Դաշնակցութիւնը թողել էր ինքնապաշտպանութեան գործը եւ պաշտօնապէս յայտարարել այդ առթիւ. նորընտիր մարմինն էլ իրեն համարում էր անձեռնհաս, թուրքիկով յայտարարելով: Այդպիսով ինքնապաշտպանութեան գործը մնացել էր երեսի վրայ:

Առաջ է բերւում քաղաքում երիտասարդական կազմակերպութիւն որն ունէր մօտաւորապէս 500 անդամ: կազմակերպուած երիտասարդները դուրս են գալիս այդ բուրժուական տարրերի դէմ եւ բազմաթիւ ստորագրութիւններով հերքում են «Մշակուում տպուած կոչը, միաժամանակ յայտարարելով մեր թերթում, որ ինքնապաշտպանութեան գործը վերցնում են իրենց վրայ: Սկսւում է մի ուժեղ կռիւ քաղաքի բոլոր տեսակի հակադաշնակցական տարրերի դէմ. արել են մի գործադուլ կոնսիստորիայում<sup>27</sup>, անարդարացի կերպով արձակուած գրագրի համար, պահանջելով յետ ընդունել կամ բաւարարութիւն տալ, տալով 3 ամսուայ ուժիկ:

Կազմակերպուած երիտասարդութիւնը ամբողջապէս լաւ էր տրամադրուած դէպի Դաշնակցութիւնը եւ պահանջում էր որ կազմակերպութիւնը ընդունի իրենց որպէս կազմակերպուած շարքեր: Սակայն այն հանգամանքը, որ նրանք կազմուած էին մանր արհեստաւորներից, մանր վաճառականներից եւ նման խառն տարրերից, Կենտր. Կոմիտէն հնարաւոր չգտաւ նրանց ընդունել Դաշնակցութեան շարքերում: Այդ կազմակերպութեան ծառայութիւնը Դաշնակցութեան այն եղաւ, որ հասարակութեան լայն խաւերում առաջ բերեց նախկին վստահութիւնը ու համակրանքը Դաշնակցութեան վերաբերմամբ եւ այդպիսով հող պատրաստեց ապագայ Արհեստակցական Միութիւններին կազմակերպելուն:

Բացի դրանից, նա հարկադրեց նորընտիր ինքնապաշտ. մարմինն ստանձնելու քաղաքի ինքնապաշտ. գործը: Վերջինս ձեռնարկեց մի նոր ներկայացուցչական ժողովի ընտրութեան, որը ինքնապաշտպանութեան) հետ ստանձնեց դատավարութեան եւ այլ ֆունկցիաները: այդպիսով ներկայացուցչական ժողովը դառնում էր հակայեղափոխական-բուրժուական կազմակերպութիւն, որը ինքնապաշտպանութեան) հողի վրայ ընդգրկելու էր հասարակութեան լայն խաւերը, դառնալով ամենավտանգաւոր թշնամին յեղափոխութեան՝ Դաշնակցութեան Ապառաժի շրջանում:

Սակայն նոյն այդ երիտասարդական կազմակերպութեան շնորհիւ էր, որ յաջողուեց Դաշնակցութեան կողմնակի կերպով ընտրուող ներկայացուցչական ժողովում անցկացնել մեծ թուով քիչ թէ շատ դեմոկրատիկ անդամներ, նոյն այդ կազմակերպուած երիտասարդներից, որով ընտրուած ներկայացուցչական ժո-

ղովը հնարաւորութիւն չունեցաւ դառնալ մէկը ժողովրդական անունը կրող հակայեղափոխական մարմիններից, որի նմաններին մենք հանդիպում ենք ինքնապաշտպանութեան) շրջանում Ապառաժի իրականութեան մէջ:

\*  
\*\*

Չփակելով մինչեւ 1907 թուի սկիզբները ունեցած գործունէութեան շրջանը՝ պէտք է կանգ առնել այն տարտամ դրութեան վրայ, որ տիրում էր ընդհանրապէս Դաշնակցութեան շարքերում եւ մասնաւորապէս մեզանում մինչեւ Դաշնակցութեան «Դ» Ընդհանուր ժողովը: Այդ դրութեան հետեւանքները ընկերների մի որոշ մասի անտարբերութիւնն էր դէպի իրենց պարտականութիւնները, որ զգալի կերպով անդադարւում էր կուսակցական գործունէութեան վրայ: Այդ շրջանում յատուկ հաշիւների եւ ռազմամթերքի պահեստները կարգի բերելու նպատակով տեղս եկած ընկեր Վարդանը՝ առանց ցուցակագրելու կուսակցական ռազմամթերքը ու զէնքերը թողնում հեռանում է ընկեր Բարսեղեանի հետ: Վերջինս ընտրուած էր Ապառաժի ներկայացուցիչը լինելու Ընդհանուր ժողովում:

Բարսեղեանի հեռանալուց յետոյ գործը ծանրանում է յիշեալ մարմնի վերայ, որի գրեթէ բոլոր անդամները ունէին իրենց սեփական զբաղմունքը: Այդ ժամանակ շրջանը թողել հեռացել էին Ջիւլիանիից Համոն, Խաչէնից Հարամ-բէկը ու Խարալէյը, Վարանդայում Հայրու-մին փոխարինել էր Արստն 3 զինուորով. Դիզակից հեռացել էին Խեչոն եւ Գերասիմը. իսկ քաղաքում Կենտր. Կոմիտէն ունէր միայն մի գործող անդամ: Նախ քան այդ, գումարուել էր մի ռայոնական ժողով, որտեղ պարզուեց որ Ապառաժի շրջանը չի ունեցել մինչեւ 1907 թիւը ոչ մի դրամական եկամուտ, այլ ընդհակառակը բոլոր շրջանները ինքնապաշտպանութեան գործը լիկվիդացիա<sup>28</sup> անելու համար ստանում էին Ապառաժից գումարներ: Այդ շրջանում եղել են մի շարք դասախօսութիւններ քաղաքում. կազմակերպուել է հայ աշակերտական անկուսակցական միութիւնը, որի կազմակերպուելու մէջ ընկերներից շատերը լայն մասնակցութիւն են ունեցել եւ միայն բոլոր մօտաւորապէս 10 խմբակների հետ պարապուել են բացառապէս մեր ընկերները:

Շրջանը չունէր ոչ մի դրամական աղբիւր եւ աչքի առաջ ունենալով մեր մասսայի տնտեսապէս քայքայուած դրութիւնը հարկաւոր էլ չէր կազմակերպել դրամական միջոցները: Այդ իսկ պատճառով յանձնարարուած է ընկեր Համոյին անցնել Անդրկասպեան երկիր եւ

27.- Թեմական հոգեւոր ատեան, դատարան:

Ոսկանապատի Կենտր. Կոմիտէի համաձայնութեամբ հանգանակութիւն բանալ այնտեղ բնակուող դարաբաղցիների շրջանում, որպէսզի հնարաւոր լինէր այդ ճանապարհով փակել ինքնապաշտ. շրջանից բաց մնացած դրամական հաշիւները: Բարսեղեանի, Վարդանի, Հայրու-մի եւ մի քանի ուրիշ ընկերների շրջանից հեռանալով՝ շրջանը մնում է ծանրացած մի խումբ ընկերների վրայ, որոնք փոխարինում էին Ապառաժի Կենտր. Կոմիտէին. դրանք էին — Շաւարշ, Տրդատ, Էլվենտ (ընտրուածներ). Կրպօ, Սուրէն, Բրինդար, Գորգիզ, Միխայէլ (հրաւիրուած):

Կուսակցական միջոցներով քաղաքում պահոււմ էր 6-10 զինուորներ, որոնց գործադրում էին որպէս պահեստապահ, սուրհանդակ, լրագրավաճառ, եւայլն:

Վարանդայում մի շրջիկ ընկեր 3 զինուորով, Զանգեզուրում վերել յիշուած թիւը աւելացնելով Գուրգէն եւ Գասպար, որոնք մինչեւ Մայիս կազմակերպութիւնից ապրուստ չէին ստանում:

Խաչէնում Հարամ-բէկը, որը մինչեւ ամառ նոյնպէս ապրուստ չէր ստանում կազմակերպութիւնից):

Քաղաքում, մարմինը չգիտէր Դաշնակցութեան զէնքի եւ ռազմամթերքի տեղը, քանակութիւնը, որովհետեւ Բարսեղեանի եւ Վարդանի գնալու ժամանակ այդ բոլորի բանաձեւերը միայն յանձնել էին Տրդատին:

Այդ բոլորը ի նկատի առնելով մարմինը հրաժարուում էր իւր վրայ վերցնել զէնքի եւ պահեստների պատասխանատուութիւնը քանի որ նա չգիտէր ինչ է թողնուած, ինչ դրութեան մէջ եւայլն. ընկեր Տրդատը ի նրկատի առնելով ապագայ պատասխանատուութիւնը զէնքի եւ ռազմամթերքի համար որի քանակը չիմանալով ընդունել էր բանալիները: Ահա այս տարտամ դրութեան միջոց մեզ պէտք է դուրս բերէին նախկին ընկերները, որոնք ծանօթ էին պահեստների տեղերին, ռազմամթերքի եւ զէնքի քանակութեան եւ որոնց Ապառաժ գալու համար քանիցս անգամ դիմումներ է եղել Արեւելեան Բիւրոյին պահանջելով նոյնպէս մի վստահելի պահեստապահ. բայց մեր պահանջները շարունակ մընում էին պահանջ, եւ Արեւ. Բիւրոն իւր այդպիսի վերաբերմունքով աւելի սրում էր ընկերների մէջ ծագած տարակ[արծ]ութիւնները եւ Մարտի 24-ին իւր ունեցած ժողովում մանրամասն արձանագրում է պահեստների դրութիւնը, քաղաքում պտտուող լուրերը, որ իբր թէ մեր պահեստներից ապրանք է ծախուել եւ այլն, որ պահեստները անհնար է բանալ առանց նախկին պահեստապահի եւ մանաւանդ Վարդանի (չարունակ դրա վրայ էր շեշտում Տրդատը, որի մօտ էին բանալիները եւ որը միակն էր որ գիտէր պահեստների տեղերը). արձանագրութեան պատճէնը ուղարկոււմ է Բիւրոյին պահանջելով որ որքան կարելի է շուտ հանել Կենտ. Կոմիտէին այդ անել դրութիւնից. սակայն Բիւրոն դարձեալ չբաւարարեց Կենտր[ոնականի] պահանջը: Այդպիսի դժըն-

դակ պայմանների մէջ չստանալով ոչ մի տեղեկութիւն Դաշնակցութեան) «Դ» Ընդհանուր ժողովից, սպասողական դրութիւնը, որ տիրում էր մեր շարքերում, կասկածոտ վերաբերմունքը ընկերների կողմից դէպի «Դ» Ընդ. ժողովի ձախող ելքը (?) քանի գնում թանձրանում էին ընկերների մէջ տիրող տարաձայնութիւնները: Ահա այդպիսի աննպաստ պայմանների մէջ շարունակ Բագուից լուրեր էին հասնում անջատական շարժման ուժեղանալու մասին, լոյս տեսան Մուսեանի եւ Ռիխարդի բրոշուրները ու նրանց թուրքիկները:

Այդ գրականութեան ազդեցութեան տակ առաջ եկաւ մեր շարքերում մի տարօրինակ դրութիւն. ընկերներից շատերը, նոյնիսկ մարմնի անդամները, վախենալով քննադատութիւնից եւ չունենալով հարկաւոր վրստահութիւնը դէպի «Դ» Ընդ. ժողովը, ընկան տատանման մէջ եւ հրաժարուելով ակտիւ գործունէութիւնից նրանք բաւականանում էին միայն քննադատելով Դաշնակցութիւնը: Սկսուեց մի ուժեղ կռիւ հէնց մեր մէջ, որ արտայայտուեց մարմնի Ապրիլի 17-ին ունեցած ժողովում, որտեղ դրուեց 2 բանաձեւ. ա) նորից յիշեցընել Բիւրոյին տիրող դրութեան մասին եւ եթէ սա դարձեալ բաւարարութիւն չտայ Կենտր. Կոմիտէի պահանջներին՝ հրաւիրել հարեւան Կենտր. Կոմիտէների անդամներից մի-մի ներկայացուցիչ առաքելու եւ ընդունելու պահեստներն ու դրամական հաշիւները եւ լիկվիդացիա անելու Դաշնակցութեան գործունէութիւնը Ապառաժի Կենտր. Կոմիտէի շրջանում: Եթէ Բիւրոյի եւ Կենտր. Կոմիտէների ներկայացուցիչները չգային՝ այդ պիտի անէր Կենտր. Կոմիտէն. այս բանաձեւին կողմնակից էին Դից 4 հոգի, Էլվենտ, Տրդատ, Կրպօ, Սուրէն:

Բ. բանաձեւը. - Վերջին անգամ ներկայացնել դրութիւնը Բիւրոյին պահանջելով, որ նա այդ առթիւ տեղեկացնի բոլոր դաշնակց. մարմիններին եւ եթէ վերջիններս արձագանգ չտան Ապառաժի կողմն, մնացած 2 ընկերներով (Շաւարշ, Մելիք-Մուրադ) վերցնել եւ տանել բոլոր գործերը ինչպէս կարող են՝ մինչեւ կը հրաւիրուի ռայոնական ժողով, որը կը տնօրինէ շրջանի բախտը: Այս բանաձեւին կողմնակից էր եւ Գուրգէնը, որը սակայն հնարաւորութիւն չունէր մասնակցելու:

Բիւրոյից հեռագրով պատասխան է ստացուում որ պատրաստ են բաւարարութիւն(տալ) մինչեւ Մայիսի մէկը. սակայն չորս ընկերները չսպասելով Բիւրոյի պատասխանին թողնում եւ հեռանում են կազմից: Մարմնի դրամական հաշիւները գտնոււմ էին հեռացող ընկերներից Սուրէնի ձեռքին, որի հաշիւները չի ստուգուում եւ չի ընդունում մարմնի կողմից, որի ծախսարարը եւ գանձապահն էր. եւ ահա շնորհիւ այդ դրութեան է, որ 1907 թուի այդ շրջանի դրամական հաշիւները հնարաւոր չեղաւ պատշաճ կերպով մտցնելու հաշուեկշռի մէջ. գործը մնում է ծանրացած 2 ընկերների վրայ: Վրայ է հասնում անջատական հոսանքը. երիտասարդ ընկերնե-

րի դատապարտելի անտարբերութիւնը աւելի եւս ուժեղանում է դէպի կուսակցական գործունէութիւնը:

Եւ ահա այդ դժուար կացութեան մէջ է սկսւում Ապառաժի գործունէութեան նոր շրջանը, որ զգալի կերպով տարբերւում է ինքնապաշտ. շրջանից նրանով, որ առաջ բերուած կազմակերպութիւնները դրւում են դասակարգային հողի վրայ: Քաղաքում այդ ժամանակ գոյութիւն ունէին հետեւեալ կազմակերպութիւնները. Աշակերտական-մարտական խումբ 7 անդամից, որոնց հետ ընկերներին մէկն ունենում էր պարբերական պարաօմունքներ պատրաստելով նրանց իբրեւ պրոպագանդիստներ. գոյութիւն ունէր օրիորդաց ա. խմբակ նոյն նպատակով 13 անդամուհիներից. կազմակերպուած էին արհեստակցական միութիւններ. կոչկակար քեարտաճ եւ աշակերտ բանուորների միութիւնը, որն ունէր մօտ 70 անդամ: Եւրոպական (կանանց) դերձակների միութիւն 25 անդամից. ասիական դերձակների 50 անդամ. Հիւսնեթ 64 անդամ՝ դրանց թւում եւ բանուոր Հիւսնեթ, գրաշարներ 9 անդամ, ծառաներ 120 անդամ՝ դրանց թւում 2 վրացի եւ մի ռուս կին, ծառայողները 90 անդամ, ջրկիրներ 8 հոգի, հացթուխներ 30 հոգի, գործակատարներ 27 անդամ, համբալներ 2 խմբակ մօտաւորապէս 200 հոգի, բուրձնիկներ<sup>28</sup> 4 անդամ, նաեւ մի կոչկակարների միութիւն խանքենդում<sup>28</sup> 12 անդամով. չուստ կարողներ 35 անդամ, դարբիններ 182 [անդամ]:

Այդ բոլորից կազմուած է մի Բիւրօ:  
Այս մասին գրուած է «Խարխիս» թերթի 30-ական համարներում, Վազրիկի յօդուածը (Արհեստակցական շարժումը Շուշում):

Մինչեւ Ապառաժի շրջանի ռայոնական ժողովը, որը կայացել է Մայիսի սկիզբներին, տեղի են ունեցել կոչկակարների միութեան գործադուլը, պահանջները «Խարխիս»-ի սկզբնական համարներում:

Բացի դրանից տեղի են ունեցել մի շարք թաղային ժողովներ, որտեղ բացատրուել է Դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը, խօսուել է ինքնապաշտմասին: Շրջաններում եղել է միայն մասսայական պրոպագանդ բացի Դիզակից, որտեղ նաեւ կազմակերպուել է քիւմուարական միութիւնը մօտ 200 անդամ (գիւղացիներ որոնք պարապուում են շերամապահութեամբ, առանց շահագործելու ուրիշին): Քիւմուարական միութեանը կենտր. կոմիտէն փոխարինաբար տուել է իր սող միջոցներից 1200 ռ[ուբլի], որով գնուել է սերմ (1 ռ. 50 կոպ. կարապկան) եւ բաժանուել քիւմուարներին, որովհետեւ այն ժամանակ սերմը այն տեղում արժէր 3 ռ. 50 կոպ.: Այդ միութեան մէջ մտնում են նաեւ 2 թուրք համայնքներ՝ մէկում 30 իսկ միւսում 20 անդամ:

Չանգեզուրում կատարուած գործունէութեան մասին ճշգրիտ տեղեկութիւն տալ չենք կարող, որովհետեւ այդ տեղեկութիւնը չեն տուել կենտր. կոմիտէին. այս-

քանը միայն կարելի է ասել, որ այնտեղ եղել են խոշոր շարժումներ հակաբէկութեան եւ մի խոշոր գործադուլ հանքերում, որին մասնակցել են մօտաւորապէս 5000 հայ եւ թուրք բանուորներ:

Մինչեւ ռայոնական ժողովը կատարուել են հետեւեալ ակտերը՝ Սոյնաի գիւղացի Պօղոս Սարգսեան (գինավաճառ) հայ գիւղացիներից գէնքերը առնելու եւ թուրքերին վաճառելու համար. Իսրայէլ՝ (Քէօռ Իսի) մատուցեան եւ տեղական պոստում լրտեսի դեր կատարելու համար: Խանաճախիցի Սամսոն՝ մատուցեան համար. այս տեւորները ոչ նիւթապէս եւ ոչ ալ Փիզիքապէս չեն ծանրացել ոչ ազգաբնակչութեան եւ ոչ էլ կուսակցութեան վրայ: Պէտք է ասել, որ այս տեւորները չեն եղել հրապարակային այլ կատարուել են անհետացման ճանապարհով: Կազմակերպուած էին նաեւ երկու տեւորներ՝ Ծամիր-բէկի եւ Ալիխանովի վերաբերմամբ, որոնք յաջող ելք չունեցան:

Կենտր. կոմիտէն հպատարակել էր նաեւ 7 թուրքիկ: Ինչպէս վերեւում ասացինք Մայիսի սկիզբներում կայանում է Ռայոնական ժողով, որին մասնակցում էին Չանգեզուրից՝ Սամուէլ, Սուրէն, Գասպար, Գուրգէն եւ Սողոմոն. Դիզակից՝ Գերասիմ. Խաչէնից՝ Հարամ-բէկ. Վարանդայից՝ Արսօ, Աբբօ, Ջարմայր եւ Հայրում. քաղաքից՝ կենտր. կոմիտէի քաղաքում գործող ընկ(երները) եւ խմբերի ներկայացուցիչները: Ժողովը կրում էր աւելի շատ գործիչ ընկ(երների) ընդհանուր ժողովի բնակորութիւն, քան թէ ռայոնականի. ունեցել է 12 նիստ. խորհրդակցութեան գլխաւոր նիւթը շրջանի դրութիւնն էր եւ նոր մարմնի ընտրութեան խնդիրը:

Ժողովում վերջնականապէս ակտիւ գործունէութիւնից հրաժարուում են — Էլվենտ, Տրդատ, Կրպօ, Սուրէն. ժողովում ընտրուում է ժամանակաւոր մարմին կազմուած 5 անդամից, որոնք են՝ Հայրում, Մելիք Մուրադ, Սամուէլ, Եաւարչ եւ Հարամ-բէկ, որը գրեթէ մասնակցում է միայն մի նիստի եւ յետոյ հեռանում է շրջանից: Մարմնի երեք անդամները լինում են բոլորովին ազատ եւ կուսակցական գործով զբաղողներ, որոնք կուսակցութիւնից ստանում էին միայն ապրուստ, բացի մէկից, որը մինչեւ Յունիս ապրում է սեփական հաշուով: Ռայոնական ժողովից յետոյ քաղաքում գործում էին հետեւեալ ընկերները՝ Սամուէլ, Մելիք-Մուրադ, Եաւարչ եւ Հայրում, Միքօ. քաղաքում գործող միւս ընկերների թիւը հասնում էր 3-5-ի իսկ գաւառներում, Չանգեզուր՝ 7 հոգի եւ երկու խումբ գինուորներ, բոլորն էլ ստանում էին կուսակցութիւնից ապրուստ. Վարանդայում՝ Աբբօ 3 գինուորով դարձեալ կուսակցական միջոցներով եւ ուսուցիչներ թուով 4 հոգի: Խաչէնում եւ Ջիւանջիրում մարդ չի եղել: Դիզա-

28.- Լուսաբարտուիցներ (?):

կում՝ ուսուցիչներ թուով 3 հոգի. Ռայոնական ժողովից անմիջապէս յետոյ սկսւում է պահեստների վերստուգման գործը, որը յանձնւում է ընկ. Սամուէլին, Կրպոյին, Տրդատին եւ Միքոյին. բացւում են պահեստները, իւղւում, մաքրւում եւ նորից տեղաւորւում են կազմելով մօտաւոր ցուցակ, որի հիման վերայ եւ կազմուած են Ապառաժի կենտ. կոմիտէի գինական հաշիւները, որը չի կարելի համարել ներկայ մարմնի ունեցած գինականի ճիշտ եւ վերջնական հաշիւը: Մայիսի վերջերից սկսւում է նոր գործունէութեան շրջան, Յունիսի սկիզբներից «Մուս» խումբը բաժանւում է 3 խմբակի եւ անցնում է շրջան. Ջիւանջիր 1 հոգի 3 ուրիշ ընկերների հետ, որոնցից 3ը ստանում էին կուսակցութիւնից ապրուստ: Այդ չորս հոգին Ջիւանջիրում կազմում էին ընկերական խորհուրդ, մղում էին մասսայական լայն պրոպագանդ, առաջ էին բերում երիտասարդական կազմակերպութիւններ, որոնք ընկերների հեռանալուց յետոյ կազմալուծւում էին, [լուծում ] տալիս ինքնապաշտպանութիւնից մնացած հարցերին. նրանց գործունէութիւնը տեւում է մինչեւ Յունիսի վերջերքը:

Խաչէնում մի ընկեր Մուսից, ընկեր Ծոօ, մի ուրիշ ընկերով, որոնք նոյնպէս կազմել էին ընկերական խորհուրդ, մղել են մասսայական պրոպագանդ, կազմակերպել են 9 մետաքսագործարանների մօտ 500 հոգի, երկսեռ բանուորութիւնը 9 տարեկանից սկսած: Դրանք բոլորն ապրում էին կուսակցական միջոցներով. գործունէութիւնը դրանց շարունակւում է մինչեւ Յունիսի վերջերքը, որից յետոյ շրջանում մնում է Եղոն շարունակելով եռանդուն գործունէութիւն մինչեւ Դեկտեմբեր. առաջ է բերում 9 գիւղացիական միութիւն մօտ 200 անդամ, որոնք մնում են մինչեւ այժմ. միտինգների կողմից ընտրուած է շրջանային խորհուրդ, գիւղերը բաժանուած են տեղում գործող 4 ընկ(երների) վերայ, որոնք սեփական գործով կապուած են տեղի հետ: Խաչէնում կար մի պահեստապահ եւ մի սուրհանդակ, որոնք ապրում էին կազմակերպութեան հաշուով:

Վարանդայում գործում էին Աբբոն, ՍՀօ, որոնք մղել են մասսայական լայն պրոպագանդ, կազմակերպել են 7 մետաքսագործարանների 534 երկսեռ բանուորութիւնը, յետոյ ՍՀօն հեռանում է. մնում է Աբբոն. Վարանդայում կար 3 ձիււոր գինուոր կուսակցական հաշուով եւ մի ձի:

Սեպտեմբերին անցնում են այնտեղ ընկ. Հայրում եւ Գիրօ, կազմակերպում են 12 գիւղացիական միութիւններ մօտ 250 անդամ. առաջ են բերում շրջանային խորհուրդ 5 անդամից, կայացնում միտինգներ, ներկայացուցչական ժողով, որին մասնակցում էին 33 անդամ 27-ը միութիւններից, 6-ը գործող ընկերներից, որի որոշումները լոյս էին տեսնում առանձին թուրքիկով: Դիզակի եւ Վարանդայի շրջանում գործում էր եւ Օրիորդաց Ա. խմբակի անդամուհիներից մէկը, ընկ. Մենակ:

Օգոստոսի սկիզբներին էլ տեւորի ենթարկուեց Ծոչի գիւղացի Աւագը՝ Սէիդի սպանութեան պատճառով, որը սպառնում էր առաջ բերել հայ-թրքական ընդհանրում:

Դիզակի շրջանում Մուսից 2 հոգի մի ուրիշ ընկերով, որոնք նոյնպէս կազմում էին Դիզակի ընկ(երական) խորհուրդը, մղում էին մասսայական լայն պրոպագանդ եւ կազմակերպել են 12 գործարանների հայ երկսեռ բանուորութիւնը եւ քումուարական միութիւնը. ապրում էին կուսակցական հաշուով. գործունէութիւնը շարունակւում է մինչեւ Յունիսի վերջը:

Նորընտիր մարմնի մէկ անդամը Հայրումը Յունիս ամսի սկիզբներից անցնում է Վարանդա եւ այնտեղ մնում է մինչեւ Յունիսի վերջը: Վերադառնալով Վարանդայից նա գնում է Կովկասի Խորհրդաժողովին եւ մնում մինչեւ Յունիսի վերջերքը:

Հեռանում է 15 օրով նաեւ Սամուէլը՝ մաքրելու Չանգեզուրի հաշիւները, որտեղից վերադառնալով նոյնպէս գնում է Կովկասի Խորհրդաժողովին: Քաղաքում մնում են միայն Մելիք-Մուրադ եւ Եաւարչ: Յունիս 11ին յայտարարում են մետաքսագործարանների ընդհանուր գործադուլի հետեւեալ պահանջներով:

ՊԱՀԱՆՔՆԵՐ

I. Գործարանատէրերը եւ գործարանի ադմինիստրացիան պարտաւորուում են ճանաչել Հ.Յ.Դ-եան Բանուորական խորհուրդը իբրեւ պաշտօնական մարմին, իսկ գործադուլի ժամանակ բանուորների ցանկութեամբ յարաբերութիւնը պահում է Ապառաժի կ. կոմիտէին:

II. Բանուորական օրը ձմեռը (Հոկտ.—Ապրիլի սկիզբները) տեւում է 8 ժամ: Աշխատանքը սկսել առաւօտեան 8-ից 12. 12-ից մինչեւ 2 հանգիստ: 2-ից մինչեւ 6-ը դարձեալ աշխատանք: Ամառը բանուորական օրը տեւում է 10 ժամ: Աշխատանքը սկսւում է առաւօտեան ժամը 6-ից մինչեւ 9: 9-ից մինչեւ 9 եւ կէսը հանգիստ. 9 եւ կէսից մինչեւ 12 աշխատանք. 12ից մինչեւ 2-ը հանգիստ: 2-ից մինչեւ 6 եւ կէսը դարձեալ աշխատանք:

III. 20 կ[ոպէկ]ից պակաս օրավարձ չպէտք է լինի գործարաններում. 20-30 կ. ստացողներին աւելացնել 40%: 30է աւել ստացողներին 30%: 20 ռ[ուբլ]ուց պակաս ամսավարձ չպէտք է լինի, 20 ռ.ուց աւելի ստացողներին աւելացնել 5 ռ.ուբլով:

IV. Ամէն շաբաթ տաբելի<sup>29</sup> պատճէնը կախել գործարանում ի գիտութիւն բանուորների:

V. Ռեճիկները պէտք է վճարել անպատճառ ամէն երկու շաբաթ մի անգամ, եւ այն էլ անպայման դրամով:

29.- Ցուցանակ:

VI. Ամէն մի բանուոր պէտք է գործէ մի շարիս<sup>30</sup> վրայ:

VII. Պահել երկու կաշէգար (ղազանչի) մէկը գիշերուայ միւսը ցերեկուայ համար:

VIII. Բանուորներին բացի իրանց պրոֆիտալից չգրադեցնել ոչ մի կողմնակի աշխատանքով եւ չբանեցնել ծառայի տեղ: Այդպիսի աշխատանքների համար վարձել ծառայ:

IX. Գործարաններում մտցնել անպատճառ բոժոժ թակող մեքենաներ:

X. Գործարանի բոլոր բաժանմունքներում ունենալ պատի ժամացույցներ:

XI. Գործաւորներին բաժանել հաշուետուներ (ռասչետուսայա կնիժկա) [ռուսաստառ. հաշուետուներ]:

XII. 12 տարեկանից պակաս հասակ ունեցողներին գործի չընդունել:

XIII. Ծաբաթ եւ տօն օրերի նախընթաց օրը արձակել գործաւորներին մի ժամ առաջ սովորական օրերից:

XIV. Տօն եւ կիլիսի օրերին լիակատար ազատութիւն:

XV. Տուգանքների վերացում:

XVI. Բանուորների մէջ եւ բանուորների գործարանային վարչութեան մէջ տեղի ունեցած տարաձայնութիւնները քննում է Բանուորական խորհուրդը. բանուորներին արձակելու դէպքում գործը տրուում է Բանուորական խորհրդին: Վերջինս պարտաւորուում է քննել գործը Յ օրուայ ընթացքում: Եթէ Բան. խորհուրդը արդար ճանաչեց մեղադրուող բանուորին՝ վերջինս շարունակուում է գործել, իսկ գործարանատէրը կամ փոխարինող անձը եթէ համաձայն չէ Բան. խորհրդի որոշման, այդ դէպքում գործը վերաքննում է երկու կողմերի համաձայնութեամբ ընտրուած միջնորդ դատարանը: Երեքական հոգի ընտրում են երկու կողմերը, վեց դատաւորներն ընտրում են դրսից եօթներորդին: Միջնորդ դատարանը պարտաւոր է 15 օրուայ ընթացքում վերջ տալ գործին: Միջնորդ դատարանի վճիռը պարտադիր է 2 կողմերի համար:

XVII. Նոր բանուոր ընդունելիս ստանալ Բանուորական խորհրդի համաձայնութիւնը:

XVIII. Գործը դիտաւորեալ կերպով փչացնելու դէպքում բանուորը ենթարկուում է պատասխանատուութեան Բան. խորհրդի կողմից:

XIX. Բանուորներին արձակելու դէպքում յայտնել մի ամիս առաջ եւ տալ նրա մի ամսուայ ռոճիկը:

XX. Քաղաքավարի վերաբերմունք դէպի բանուորները: Գործարանում չպէտք է տեղի ունենայ ծեծ, հայհոյանք եւ կոպիտ վերաբերմունք գործարանի աղմի-նիստրացիայի կողմից. հակառակ դէպքում մեղաւորին ենթարկել պատասխանատուութեան Բան. խորհրդի գիտութեամբ եւ համաձայնութեամբ:

XXI. Բարենորոգումներ մտցնել գործարանների սանիտարական<sup>31</sup> բաժնում Բան. խորհրդի գիտու-

թեամբ եւ մասնակցութեամբ:

XXII. Բանուորի հիւանդութեան դէպքում բժշկել նրան գործարանատէրերի հաշուով եւ տալ նրա չաշխատած օրերի վարձը լիովին: - այս կէտը վերաբերուում է նաեւ յղի կանանց:

XXIII. Ամէն գործարանում հիւանդների համար մի սենեակ երեք մահճակալով ունենալ, եւ ամէն մի գործարանական ռայոնի համար պահել բժշկի, մի ֆելդշերուհի<sup>32</sup> եւ ունենալ կանոնաւոր դեղատուն:

XXIV. Գործարանի յատակը պէտք է լինի անպատճառ ծակոտած տախտակներից կամ աղիւսային նովերով:

XXV. Առաստաղի վրայ շինել վենտիլացիաներ<sup>33</sup>:

XXVI. Իւրաքանչիւր գործարան ունենալու է 4 արտաքնոց: - երկուսը կանանց, երկուսը տղամարդկանց համար:

XXVII. Գործաւորներին տալ շաբաթական մի հատ մաքուր ֆարտուկ<sup>34</sup>:

XXVIII. Ամիսը մի անգամ գործարանը եւ գիշերօթիկների սենեակները ենթարկել բժշկական խիստ քննութեան:

XIX. Գիշերօթիկներին տալ կանոնաւոր սենեակներ:

XXX. Խոզանոցներ, եթէ կան, անմիջապէս հեռացրել գործարանի սահմաններից: Հեռացնել նաեւ բոժոժի որդերի թաղման տեղերը յատկացնելով գործարաններից հեռու կանոնաւոր փորուած հորերում:

XXXI. Լիակատար կերպով վճարել գործադուլ օրերի վարձը:

**Հ. Թ. Դ. ՇՈՒՇՈՒԱՅ ԱՐՀԵՍՏ. ՄԻՈՒԹԻՆՆԵՐԻ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԻՒՐՈ**

Գործադուլը տեւում է մինչեւ Յուլիսի վերջը եւ պսակուում է յաջողութեամբ:



Յուլիսի սկիզբներին յայտարարուում է նաեւ հիւսն-բանուորների գործադուլը, որը տեւում է գրեթէ մի ամիս եւ պահանջները լիապէս բաւարարուում է Օգոստոսի 4-ին. (պահանջները թերթում):

Յուլիսի 8-ին յայտարարուում է տպարանական բանուորների գործադուլը, որը մի օր տեւելով ստացուում են հետեւեալ պահանջները.

- I. 8-ժամեայ բանուորական օր:
- II. Լիակատար ազատութիւն բանուորներին՝ գործելու ժամանակ ծխելու, խօսելու:

30.- Ճախարակի:  
 31.- Առողջապահական:  
 32.- Բուժակ, օգնական բժշկուհի:  
 33.- Դովախարճեր, օդափոխիչներ:  
 34.- Գոգնոց:

III. Քաղաքավարի վերաբերմունք:

IV. Բանուորն արձակուում է ընկերների որոշումով եւ ստանում 2 ամսուայ ռոճիկ, եւայլն:

V. Առանց հին բանուորների համաձայնութեան չընդունել նորին:

VI. Ռոճիկներն աւելացնել 40-50%-ով:

VII. Զրի բժշկուելու, տեղը պահել 3 ամիս:

VIII. Տօնել նշանաւոր տօները, տօների նախընթաց օրը 7 ժամ զբաղմունք:

IX. Լիակատար վճարել գործադուլի օրերի վարձը եւ մի շաբթ ուրիշ պահանջներ:

Յուլիսի սկիզբներին յայտարարուում է եւրոպական կանանց դերձակների գործադուլը, որը տեւում է 10 օր եւ պսակուում է յաջողութեամբ (պահանջները տես թերթում):

Մի բուլղոնիկի գործադուլ-բոյկոտը, որը մի ամիս շարունակելով յաջող ելք է ստանում. նոյնը եւ մի գործակատարի եւ մի հիւսնի նկատմամբ, որոնք դարձեալ պսակուում են յաջողութեամբ:

Այս բոլոր շարժումները եղել են տնտեսական հողի վրայ. ընդհանուր քաղաքական միօրեայ գործադուլը, որը տեղի ունեցաւ Շուշում եւ որի ընտրութեան ժամանակ Կ. Կոմիտէն ցոյց է տուել եռանդուն մասնակցութիւն, որի արդիւնքը եղաւ այն, որ Գանձակի 18 դաշընտրողներից 14-ը Ապ[առաժի] Կ. Կոմիտէի ռայոնից էին: Ընտրութիւնների բնաւորութեան վրայ ազդելու համար Ապ-ի Կ. Կոմիտէի կողմից ուղարկուած էր յատուկ ընկեր կուսակցական միջոցներով, II Պետ. Դուման ցրելու առթիւ, որին մասնակցում էին բոլոր արհեստակցական միութիւնների անդամները թուով 400-500 հոգի: Այդ օրը տեղի է ունենում 2 խոշոր միտինգներ Քաղաքական Այգում, որին մասնակցում էին 450-500 բանուորներ եւ քաղաքացիներ: Խօսեցին մեր ընկերներից. միտինգներ եղել են Յուլիսին եւ Յուլիսին քաղաքական բնաւորութեամբ:

Յուլիսի վերջերին Կովկ. խորհրդաժողովից վերադառնում են Սամուէլը եւ Հայրուհի. նրանց հետ գալիս է Բարսեղեանը:

Այդ ժամանակ քաղաքում գործողների թիւը հասնում է մօտ 20-ի: Այդ շրջանում բաց են թողնուած մօտ 15 թոռցիկ շրջաբերականներ եւ այլն:

Փետրուարից, ռայոնում գործում էր ընկեր Արամը, որը անում էր եւ գինադործի եւ գրաշարի եւ տպագրողի պաշտօնը: Ընկերն ապրում է կուսակցական միջոցներով: Կային եւ մի խումբ գինուորներ թուով 9 հոգի զանազան պարտականութիւնների համար, որոնք ապրում էին կուսակցական միջոցներով:

Նորընտիր Կենտրոնը իւր շրջաններից, չհաշուած Վարանդան եւ քաղաքի խմբակներից, գրեթէ ոչ մի մուտք չի եղել. ծախսերը հոգացուում էին դրսի մարմիններից

ստացածներով. ստացուել է 4000 ռ[ուբլի] Ոսկանապատի<sup>35</sup> Կ. Կոմիտէից Մելիք-Մուրադի միջոցով. 5500 ռ. Վարանդայից: Ծախսերը Մալիսից մինչեւ Յուլիսի վերջերքը անում էր Ընկ. Սամուէլը, իսկ նրանից յետոյ մինչեւ Յուլիսի վերջը ընկ. Մելիք-Մուրադը: Յուլիսի վերջին փակուում է եռամսեայ հաշիւը: Ծախսերը սկսում է անել ընկ. Բարսեղեանը մինչեւ Հոկտ. 17-ը, իսկ նրանից յետոյ (մինչեւ մեր օրերը) մինչեւ հիմա անում է Վազրիկը: Օգոստոսի սկիզբին հեռանում է շրջանից Մելիք-Մուրադը: Ծարունակուում էին խմբերին պարապմունքը: Օգոստոսի վերջերքին սկսում են ռեպրեսիաները<sup>24</sup>, որի հետեւանք է լինում մի շաբթ ձերբակալութիւններ եւ խուզարկութիւններ: Այդ ժամանակ շրջանից հեռանում են մի շաբթ ընկերներ: Ծրջանում մնում են Բարսեղեան, Նասիր, Ծաւարչ, Վազրիկ. այդ ժամանակ շրջանից աքսորուում են մարմնի կողմից Միմէնը բէկ Քալանթարեան, Վալդիա Դանիէլեան ոստիկանութեան ցոյց տուած իրենց աջակցութեան համար:

Սեպտեմբերի սկիզբներին գալիս է ընկ. Մ.-Մուրադը. քաղաքում սկսում են խիստ ծանր պայմաններ, ձերբակալութիւններ, խուզարկութիւններ, ձերբակալուած ընկերներից աքսորուում են 4 հոգի: Սկսում են Պետ. Դումայի ընտրութիւնները, որին ակտիւ բոյկոտ էր արել շրջանի ռայոնական ժողովը. մարմինը հնարաւորութիւն չունեցաւ կազմակերպել քաղաքում լայն պրոպագանդ բաւականանալով միմիայն իր խմբակների հետ ունեցած ժողովներով, բաց է թողնում քաղաքում մի թոռցիկ, իսկ շրջաններում մղում է լայն պրոպագանդ ժողովրդի լայն խաւերում: Արդիւնքը լինում է այն, որ քաղաքում 900 ձայն ունեցող հայերից ընտրութեան մասնակցում են միայն 300 բուրժուաներ:

Շրջանից ընտրողներ նշանակում են պրիստաները<sup>36</sup>, որովհետեւ գիւղական կուրիաներում<sup>37</sup> ընտրական ոչ մի տեղ տեղի չի ունենում եւ այդ պայմաններում ընտրում է Հ. Առաքելեանը 200-300 ձայնով:

Բաց է թողնում նաեւ մի թոռցիկ տիրող դրութեան եւ Դաշնակցութեան կողմից աքսորուածների մասին. այդ շրջանում ռայոնից հեռանում են - Բարսեղեան, Նասիր, նրանցից քիչ յետոյ Հայրուհի եւ Գիրօ: Գործը մնում է բացառապէս ծանրացած Վազրիկի վերայ, որովհետեւ Մ.-Մուրադը լինում էր շրջաններում: Քաղաքի ընկերների լայն ժողովում, նորից ընտրում է 6 հոգուց բաղկացած մի մարմին, որը եւ տանում է Կ. Կոմիտէի պարտականութիւնները մինչեւ այսօր. դրանք են.- Արշալիր, Վարդ, Գարեգին, Գսպօ, Վազրիկ եւ Մ.-Մուրադ: Քաղաքը ունի բացի արհեստակցական միութիւններից, որոնք արդէն սկսել էին կանոնաւոր

35.- Պաքո:  
 36.- Տեղական ոստիկանապետ:  
 37.- Ընտրատեղիներում մեջ:

յաճախել ժողովներին եւ գանձել անդամավճարները Դեկտեմբեր ամսից, բացի դրանից կան աշակերտական 3 մարտական խմբակներ, Մուսւ եւ III ալ մարտ(ական) խմբակ՝ մօտաւորապէս 30 հոգուց: Օրիորդաց Ա. խումբակ 6 հոգուց, անհատ ընկերներ մօտ 10-ը, որոնցից գործին ակտիւ մասնակցութիւն են ցոյց տալիս միայն 3ը՝ Եղօ, Աբբօ, Աղասի եւ Մանուկ, վերջինս զբաղուած է պահեստների գործով:

Յիշենք նաեւ Յուլիսի վերջից մի շանտաժի համար դատի են կանչուած եւ աքսորուած մեր զինուորներից 4-ը: Նոյեմբերից շրջանից հեռանում է նաեւ Արամը: Դեկտեմբերին զինուոր է գնում նրան փոխարինող Շամիրը: Քաղաքում կուսակցական հաշուով ապրում են 3 ընկեր: Շրջանում՝ Վարանդայում չունենք յատուկ ընկեր: գործը ծանրացած է այնտեղի ընկերների վրայ, որոնք սեփական պաշտօնով կապուած են տեղի հետ, թուով 8 հոգի: Դիզակ՝ նոյնպէս 3 հոգի: Խաչէն եւ Զիւանչիւր նոյնպէս որտեղ կան 6 ընկեր:

Գիւղացիական միութիւնները մնում են եւ բոլոր շրջաններում կայ անսահման համակրանք դէպի Դաշնակցութիւնը եւ խոշոր տրամադրութիւն կազմակերպուելու, միայն պակասում են կազմակերպող ձեռքեր եւ դրամական միջոցներ:

Ձանգեզուրից վերջին ժամանակներս չունենալով հարկաւոր տեղեկութիւնները՝ հրաժարուած ենք տալ այնտեղից որեւէ ճշգրիտ տեղեկութիւն այնտեղի գործունէութիւնից:

Մեզ թուում է, որ այն գործունէութիւնը որը ունեցել է Ապ(առածի) Կ. Կոմիտէն վերջին տարուայ ընթացքում, որի ուղղակի հետեւանքն է եղել դասակարգային շերտաւորումը, որ տիրում է այժմ մեր շրջաններում, գտումը մեր շարքերում եւ վերջապէս վերանալը այն թիւր հասկացողութեան Դաշնակցութեան մասին, որ կոփուել էր դատաւարութեան եւ ինքնապաշտպանութեան շրջաններում, այն տնտեսական քայքայումը, որ տիրում է յատկապէս մեր բազային պատկանող խաւերում եւ որ Ղարաբաղի բոլոր աշխատող ձեռքերը գտնուած են Ղարաբաղից դուրս, բացառապէս Ոսկանապատի<sup>35</sup> շրջանում, որոնք եւ պէտք է իրանց կոպէկներով լրացնէին շրջանիս դրամական ցնեզը, որը նախատեսուել է IV Ընդհանուր ժողովում, ահա այդ բոլոր Փակտորներն աչքի առաջ անելով Կովկասեան Ռաշտրական ժողովը խաչ չպէտք է դնի Ապ. Կ. Կոմիտէի ռաշտրի վրայ եւ պէտք է ժամանակաւոր նիւթական օժանդակութիւն կազմակերպի մինչեւ այդ շրջանը կը կարողանայ կազմակերպել իւր դրամական հաշիւները:

Զ. Մարտիրոսյան  
Կոմիտէ  
Բրիգադ  
Ընկերների կողմից  
ԲՐԻՆԴԱՐ<sup>38</sup>

38.- Մելքոնեան Արտաշէս:

Փաստ. 251-19

Գ 3.- ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Ցաքուտի շրջանի գիւղական մարմիններին<sup>39</sup>

Ցաքուտի շրջանի 3 մասի 3.3.Դ. Պատգամաւորական ժողովը իր սոյն 1906 թ. Սեպտեմբերի 28-ին Սրբավայրում կայացած նիստում, շրջանիս վերաբերմամբ արժարժած հարցերի նկատմամբ կայացրեց հետեւեալ որոշումները:

Ներկայ էին բոլոր համապատասխան ընտրեալները նշանակուած գիւղերից:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

1.- Հողաբաժինների աւելացումը

Ընդունելով, որ միայն յեղափոխական ճանապարհով կարելի է ձեռք բերել հող եւ ազատութիւն, որի համար ներկայումս համարձակօրէն օրհասական կռիւ է մղում Ռուսաստանի ամբողջ ազգաբնակչութիւնը. որոշեց, ըստ առաջի պահանջման միանալով նրանց հետ՝ աջակցել ամէն կերպ, այսինքն.-

ա. Գրաւել պետական ազատ վարելահողերը, արօտատեղիները, անտառները, նաեւ կալուածատիրական հողերը, դնելով նրանց համայնքների տրամադրութեան տակ:

բ. Վերոյիշեալ հողերը գրաւած դէպքում, գիւղացիների մէջ բաժանելու ժամանակ պիտի դեկավարուել այն սկզբունքով, որ բոլորը ունենան հողաբաժինների հաւասար մասը ըստ շնչահամարի:

2.- Հողաբաժանումն

Ընդունելով, որ հողային հարցը մի շատ բարդ հարց է եւ դրա լուծողը կարող է լինել միայն այդ «հողը մշակող» տարրը, քանի որ նա է հանդիսանում ինչպէս տէր եւ, որ ամէն մի գիւղ առանձին վերցրած ունի իրան առանձնաշատկութիւնները եւ պայմանները — որոշեց դնել իւրաքանչիւր գիւղի հասարակութեան տրամադրութեան տակ հողի բաժանելը տեղական պայմանների համեմատ, միայն ամէնին հաւասար չափով տալու պայմանով:

Միւսնոյն ժամանակ պէտք է աչքի առաջ ունենալ հետեւեալ կէտերը ըստ տեղական պայմանների:

ա) Բոլոր վարելահողերը առանց բացառութեան (խմհատ, գորդահատ եւ այլն) բաժանել շնչահամարի հաւասար չափով:

բ) ա. կէտի վերաբերմամբ տնտեսողները, կալու մարագատեղերը եւ այլ առանձին աշխատանքով ձեռք բերած անհրաժեշտ տեղերը չբաժանել, միայն հաշուի առնել:

գ) Անտառները, արօտատեղիները պահել համայնքի տրամադրութեան տակ, թողնելով որ ինքը համայնքը որոշէ օգտուելու ձեւը, իսկ այգիները եւ բանջարանոցները (բոստանատեղերը) բաժնելու ժամանակ աչքի առաջ ունենալ այս յօդուածի ա. կէտը (բաժանել շնչահամարի հաւասար չափով):

դ) Պակասաւոր գիւղերում հողաբաժինների հաւասարացումն մտցնել նոր պետական հողերից, կալուածներից, նոր աւելցուելիք արօտներից, կապալով տրուող հողերից, անտառներից եւ այլն:

ե) Ապագայում, նոր հողաբաժանումն կատարել տասն տարուց ոչ ուշ, բաժանելով բոլոր գիւղի հողերը տեսակների եւ հնարաւոր չափով ամէն տեսակից յատկացնել բոլորին:

3.- Հարկերի բաժանումն

ա) Բոլոր հարկերը, թէ պետական, թէ համայնական, դպրոցական բաժանել ըստ ամէն մէկի կարողութեան չափի՝ հողի, անասունների, տան արժեքի, ունեցած դրամագլխի, արհեստի եկամտի եւ այլն:

բ) Հողերը գնահատել ըստ նրա արժեքի հարկերի բաժանման ժամանակ:

39.- Ցաքուտը Սիւնիքի մէջ, Տաթևի շրջանի գիւղ է, Որոտան գետի ափին: Սիւնիքը (Չանգեզուր) մաս կը կազմէր Ապառածի Կեդր. Կոմիտեի կողմից: Սրբավայրն ալ, ուր ժողովը գումարուած է, ամենայն հաւանականութեամբ Տաթևի վանքն է: Շրջաբերական նամակը տպագրուած է մեծադիր թերթի մը երկու էջերուն վրայ:



զ) Իւրաքանչիւր գիւղում մտցնել մատեաններ, որոշելու իւրաքանչիւրի կարողութիւնը. հողի արօժը, անասունների, առձեռն դրամի քանակը, միւս կարողութիւնը մանրամասն ցուցակագրելով:

4. - Ինքնապաշտպանութիւն

ա) Ամէն միջոց ձեռք առնել, որպէսզի շրջանը զուրկ չլինի ինքնապաշտպանութեան մթերքներից, փամփուշտ, վառօդ, արճիճ եւ այլ անհրաժեշտ պաշարից. այս բանը պիտի կատարել անպայման:

բ) Միջոցներ ձեռք առնել թուրքերի հետ հաշտ ապրելու, հասկացնել նրանց մեր կողմի աննպատակ եւ կորստաբեր լինելը, բացատրել, որ մեր իսկական թշնամիներն են՝ կառավարութիւնը, նրա արբանեակները՝ բեգերը, ժողովրդի հաշուով ապրող ցեցերը եւ այլն:

5. - Կազմակերպչական

ա) Բոլոր գիւղերում ընտրուում են ենթակոմիտէներ (3 անձից ոչ պակաս, նայել գիւղի մեծութեան), որոնք իրագործում են գիւղական ժողովների որոշումները, հարկերի արդարացի բաժանումը, հսկում են գիւղական (պետական) դատաւորների արդարադատութեան վրայ եւ արգելում գիւղում կատարուող զանազան զեղծումներն ու այլանդակութիւնները եւ այլն (գողութիւն, վաշխառութիւն, զրկանքներ):

բ) Շրջանային ժողովը ընտրում է մի մարմին, որի պարտականութիւնն է ընթացք տալ բոլոր անկախ հարցերին եւ հսկել գիւղական մարմինների գործողութիւններին, ու ամէն դէպքում ուղեցոյց լինել նրանց տալով հարկաւոր հրահանգները:

6. - Մասնաւոր հարցեր եւ որոշումներ

ա) Արգելել մի գիւղի համայնքի մերձեմալ միւս գիւղի սեփականութեան (թաւաններին ու վարելահողերին, արօտատեղերին, սարին եւ այլն), խուսափելով ամէն ընդհարումից, որը առաջ է բերում ոչ ցանկալի չարիք:

բ) Թաւանները (այսինքն արօտատեղիների մի մասը) ոչ մի դէպքում կապալով չվերցնել, այլ օգտուել ուրիշ հնարաւոր միջոցներով:

գ) Ամէն միջոց գործ դնել գիւղերում գողութիւնը ոչնչացնելու աչքի առաջ ունենալով որ գողութիւնը ամէն չարիքի պատճառ կարող է դառնալ:

դ) Գողութիւնը ոչնչացնելու ձեւը թողնել շրջանային մարմնին, պարտաւորեցնելով նրան անպայման արմատախիլ անել: Հասարակութիւնը պէտք է իր կողմից աջակցէ այդ գործը ի կատար ածելու:

ե) Կռուել վաշխառութեան դէմ ու ինչպէս գործնական միջոց դրա առաջն առնելու՝ հիմնել գիւղական շտեմարաններ (ամբարներ), փոխատու դրամարկղ:

զ) Ապագայ սերունդ պատրաստելու համար հիմնել ուսումնարաններ աշխատելով ապագայում ուսումը դարձնել պարտադիր, ծրի եւ ընդհանուր:

է) Հրաւիրել մասնագէտներ պարբերաբար դասախօսելու գիւղատնտեսութեան վերաբերեալ առարկաներ՝ անասնապահութիւն, այգեգործութիւն, մեղուաբուծութիւն, շերամապահութիւն, իւղագործութիւն, պանրագործութիւն, կաթնատնտեսութիւն, թռչնապահութիւն, եւ այլն:

ը) Չրկել հողի սեփականութիւնից այն անձանց, որոնք թէպէտ գիւղական անդամ են հաշոււում սակայն միշտ ապրելով օտարութեան մէջ ոչ մի առնչութիւն չունին հողի հետ, միայն տալիս են իրանց հողը կապալով ուրիշներին եւ չեն մասնակցում գիւղի ցաւերին: Այդ հողերը բաժանել չունեւորներին:

թ) Արգելել գիւղի շրջանից դուրս ցանկապատելը (չափարները), մանաւանդ ջրի հոսանքով, որոնք արգելք են լինում տաւարի ազատ արածելու եւ ջուր խմելուն. նոյնը անել եւ գորդիատների եւ խմիչատների վերաբերմամբ, մի խօսքով բացի այգիներից եւ գիւղական մարմինների որոշման համաձայն իրաւունք տրուած ցանքերից՝ բոլորն արգելում են անպայման:

Վեոջաբան

Ուրեմն մեր որոշումները թող թղթի վրայ չմնան, այլ իրականացնեն կեանքի մէջ: Ցաքուտը ինքնապաշտպանութեան գործում հրաշքներ է կատարել ու այդ բանին նպաստել է մեր սերն ու միութիւնը, մենք դրանով կարող ենք պարծենալ եւ մեր սիրոյ ու միութեան դրօշակը բարձր պահել:

Դէ՛հ յառաջ ընկերներ:  
Կեցցէ Ցաքուտը! Կորչի բռնապետութիւնը!  
Կեցցէ Հ. Յ. Դաշնակցութիւնը!

ՏԱԲՈՒՏԻ ՇՐՋԱՆԻ 3 ՄԱՍԻ  
ՊԱՏՁԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1906 թ. Հոկտեմբեր

Դ.

ԱՅԳԵՍՏԱՆ – ԳԱՆՉԱԿԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

Դ.– ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ Յ. ԴԱՇՆ. ԱՅԳԵՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

1907 թիւ<sup>1</sup>

Դժուար է կարճ եւ ամփոփ ներկայացնել ընկերական այս շրջանում տեղեկագիր մեր շրջանի գործի մասին:

Այս մի տարուայ ընթացքում եղած այնքան փոփոխութիւնները, յաջող եւ անյաջող ընթացքներ, աննպաստ եւ նպաստաւոր հանգամանքներ այնքան են եղել եւ դրա հետ գործը մերթ լաւ, մերթ կաղալով, մերթ նոյնիսկ թուացել է մեռած, որ դժուարանում ենք խոստանալ տեղեկագրի կարճ, համառօտ եւ միաժամանակ լրիւ լինելու մէջ: Մենք վերջինիս (լրիւ լինելուն) կը գոհենք առաջինը (համառօտութիւնը):

Մեզ ուղարկած օրակարգի մէջ տեղեկագրի պարտադիր բովանդակութիւնն էլ այնքան լայն է, որ Այգեստանի շրջանի 1907 թուի գործունէութեան տեղեկագիրը ներկայացնել լրիւ բազմակողմանի թերեւս անհրնար համարուի:

Սակայն փորձ կը կատարենք: Կ'աշխատենք տալ 1907 թուում մեր գործունէութեան լաւ եւ պակաս կողմերը. մեր արածը՝ անաչառ քննադատութեան տալ: Որովհետեւ ներկայ տեղեկագիրը կարդացում է ընկերական շրջանում մենք չենք քաշուելու նոյնիսկ շատ անգամ, հարկաւ ստիպուած, մանրամասնութիւններին մէջ մտնել. սակայն այդ մանրամասնութիւնների հետ կարելու է ծանօթ լինել մեր շրջանը ճանաչելու համար: Անցնենք:

Գործը մինչեւ 1907 թ. Յունուարը ներկայանում էր մեզ այսպէս:

Ինքնապաշտպանութեան գործը, որ փորձել էին նախկին մարմինները լրիվիտացիայի ենթարկել<sup>2</sup> 1906-ի վերջերում, դեռ բոլորովին լրիվիտացիայի չէր ենթարկուել:

Դեռ կարելու էր համարուում պահել մի տասնեակ նոյնիսկ աւելի գինուորներ, որոնք նպաստ էին ստանում կազմակերպութիւնից ապրելու համար:

Յաճախ լինում էին պրովակատորական<sup>3</sup> լուրեր թուրքական յարձակումների նախապատրաստման առթիւ, բայց այդ բոլորի առաջն առնուում էր զանազան միջոցներով: Ինքնապաշտպանութիւնը անուսով էր միայն ժողովրդին թողնուած. իրականութեան մէջ – մի բան պատահած դէպքում – Դաշնակցութիւնը պիտի լինէր որ պիտի պաշտպանէր եւ ղեկավար լինէր ինքնապաշտպանութեան:

Ստեղծուած էին եւ կային քաղաքում<sup>4</sup> բանուորական կազմակերպութիւններ, որոնք վարում էին մի տիպիկ տեսակի դասակարգային կռիւ: Շտաբ էին կանչուում տէրն ու բանուորը եւ երկար սակարկութիւններից յետոյ գործադուլներ տանում: Պիտի նկատել, որ Շտաբի (գինուորական վարչութեան) ազդեցութիւնը այնքան մեծ էր, որ ոչ ոք չէր էլ մտածել բանուորներին փողոց շարտելու կամ գործադուլը վիժեցնելու մասին: Բոլոր գործադուլները տարւում էին հէնց յայտարարման յետագայ օրը: Բանուորական արհեստակցական միութիւնները այդ տեսակի կռուում, պիտի պարզ ասել, այլասերւում էր:

Մեզ մօտ քաղաքին կից է նաեւ Գանձակի կայարանը, որտեղ կայ Հայ բանուորութիւն – թէ երկաթուղային թէ գործարանային: Այդտեղ կազմակերպութիւնը ունէր բացարձակ ինքնապաշտպանութեան բնոյթ:

Որեւէ պրոպագանդ կամ կռիւ դասակարգային հողի վրայ կազմակերպուած չէր եղել եւ չկար:

Մեր շրջանում է նաեւ Գետաբէկի պղնձահանքը: Այդտեղ մենք ունէինք գործող ընկեր, որը կարողացել էր որոշ կազմակերպութիւն ստեղծել բանուորութեան մէջ: Կազմակերպուած բանուորների թիւը հասնում էր 300-400-ի: Մեր եւ այդ կազմակերպութեան կապը եւս – չնայած բանուորական կազմակերպութեան – ժամանակի պայմաններին նայած (Գետաբէկում թուրք տարրը գերակշռող էր) – ինքնապաշտպանութեան հողի վրայ էր:

Իսկ գիւղերը: Այդտեղ արդէն մեր գործունէութեան համար եղած հողը ոտքերի տակից խլուած էր: Տնտեսական քայքայումը, հացի պակասութիւնը, ինքնապաշտպանութեան ժամանակից մնացած փողը, բայց մեծացած դժգոհութիւնները, դեռեւս գիւղերում գտնուող մեր երկու տասնեակ գինուորների մանր-մուկը քմահաճոյքները, այլ եւ մօտ երկու տարուայ արիւնոտ եւ սպասողական դրութիւնը – աշխատաւոր գիւղա-

1.- Այս տեղեկագիրը գրուած է նամակի միջակ չափի երկթերթ բուրբերէ կազմուած տետրակի մը 27 երեսներուն վրայ: Չեռագիրը մանրատառ է, բայց դիւրին ընթեռնելի: Կողքի շապիկին վրայ խորագրին տակ աւելցուած է. «Ներկայացուած Ուլայոնական ժողովին 1907-ի վերջում»:  
2.- Լուծարքի ենթարկել:  
3.- Գրգռիչ:  
4.- Գանձակ քաղաքի մէջ:

ցիտեթեանը սառեցրել էին մեզնից:

Մեր պրոպագանդիստ ընկերները գիւղ գնալուց պատահում էին գիւղացիութեանը միշտ սառն դիմաւորելիս մեզ:

Գիւղացիութիւնը սիրում եւ յարգում էր Դաշ[նակ-ցուծի]ւնը իբրեւ հայ ժողովրդի պահպանի, իսկ Դաշն-ը իւր իսկական գոյնով ոչ ոք չէր ճանաչեցրել, ոչ ոք էլ չէր ճանաչել:

\*\*\*

Շատ տեղերում իբրեւ դաշնակցականներ յայտնի էին գիւղերի տղորակներն ու վաշխառուները: Ինքնապաշտպանութեան օրերում ամէն ոք դաշ[նակցական] էր. իսկ ամէնից շուտ գիւղի ազդեցիկները... Գիւղական միութիւններն ոչ մի տեղ չկար: Գիտակցական ծանօթութիւն դաշնակցականների եւ Դ-եան հետ բացակայում էր:

Այս էր մօտաւոր պատկերը Դաշ. գործի դրութեան մասին մեր շրջանում մինչեւ 1907 թիւը:

Ի՞նչ պիտի անէինք մենք: Այս հարցը նորընտիր մարմնի խորհրդածութեան նիւթը դառաւ հէնց սկզբից:

Վճռուած էր: Նախ վերակազմել եւ հնարաւորութեան չափ ոյժ տալ քաղաքի արհեստակցական միութիւններին. ամենաուժեղ կերպով կռուել բանուորութեանը այլասերող դասակարգային կռուի այս ձեւին որ վերեւ նկարագրեցինք: Այդ ուղղութեամբ փորձերը սկզբում դժուարութիւնների էր հանդիպում: Մինչեւ այժմ էլ բանուորութեան որոշ մասը քննադատում է կազմակերպուած դասակարգային կռիւը եւ ցանկութիւն է յայտնում վերադառնալ դէպի հինը:

Գիւղերում որոշուեց սկզբնական աշխատանքը ուղղել գիւղացիութեանը մեր իսկական դէմքը ճանաչեցնելու. իսկ դրա համար հարկաւոր էր գիւղում միտինգներ եւ ժողովներ նախատեսել եւ մեր քաղաքի ոյժերի մի մասը գաւառ ուղարկել:

Կայարանում, գերմանական գաղութ էլլենդորֆում եւ Գետաբէկում որոշուեց կազմակերպել բանուորութիւնը կապիտալիստների դէմ կռուելու համար:

Չէր մոռացուել նաեւ Գետաշէն գիւղից մի ժամ հեռու գտնուող ծծմբահանքը (Բէկզատեանի) որտեղ բանուորների մշտական թիւ չկար, սակայն շահագործումը իւր պրիմիտիւ ամենասկզբնական եւ վայրենի (դրութեան) կերպարանքն ունէր:

Այդ ուղղութեամբ մեր աշխատանքը աւելի քան արդիւնաւէտ եղաւ:

Տարուայ առաջին եւ երկրորդ քառորդը մեր գործը ընթանում էր շատ յաջող: Ընկերների գործող խումբը, որ կենտրոնացած էր քաղաքում (գլխաւորապէս) ամենաուժեղ կերպով սկսեց որոշումներն ի կատար ածել:

Քաղաքի բանուորական ամբողջ մասսան — մօտ տասներկու պրոֆեսիաներ — 350-400 բանուորներով կազմակերպուած էր եւ կանոնաւոր դասախօսութիւն-

ներ էր յաճախում:

Պիտի նկատել որ քաղաքի մի խումբ երիտասարդների ջանքերով (գլխաւորապէս դ[աշնակց]ական) բացուած էր գրագիտական երեկոյեան դպրոց չափահասների համար, որտեղ սովորողների թիւը մի ժամանակ աւելի քան 120 էր:

Կայարանում ստեղծեցին խմբեր — մեծ մասամբ գանգան խաւերի արհեստաւորներից խառն: Միեւնոյն խմբում լինում էին՝ երկաթուղային գծի ծառայողներ, ապրանքատար դեպոյի<sup>6</sup>, բամբակի գործարանի եւ այլն: Չուտ բանուորական միութիւններ ստեղծել տրուած պայմաններում հնարաւոր չէր:

Գիւղերում պրոպագանդը ուղղուած պիտի լինէր — ինչպէս վերն ասացինք — գիւղացիութեանը մեզ ճանաչեցնելու:

Եւ պրոպագանդը առաջ էր տարւում բանաւոր եւ գրաւոր:

Մեր ընկերները — հերթով յունուարեան, բարեկենդանի, գատկական տօներին գաւառ էին գնում եւ գիւղից գիւղ անցնելով — կայացնում էին բազմամարդ միտինգներ, որտեղ — գլխաւորապէս ագիտացիական նշանակութիւն ունեցող ճառերում — բացատրում էին ժամանակակից քաղաքական, հասարակական, յեղափոխական շարժումների միտքն ու ձգտումները, Հ. Յ. Դ. քաղաքական եւ հողային ծրագիրը եւ այլն, եւ այլն:

Գրաւոր պրոպագանդան պատում էր գլխաւորապէս Բ. պետական դումայի շուրջը: Հրատարակուել էին մի կարգ թուուցիկները Դումայում քննուած գանգան հարցերի առթիւ: Օր. թուուցիկներից մի քանիսի վերնագիրը. I. Պետական դուման եւ կառավարութիւնը. II. Ժողովրդական փողերը եւ կառավարութիւնը. III. Սոված ժողովուրդը եւ կառավարութեան դիրքը եւ այլն: Թուուցիկները գրուում էին տեղական գաւառական բարբառով. ունենում էին նամակների ձեւ եւ ինչպէս մեր գիւղացի ընկերներն են ասում — կարդացւում էին մեծ հետաքրքրութեամբ:

Անկախ դրանից գիւղերում եւ քաղաքում հնարաւորութեան դէպքում փողով — մեծ մասամբ ձրի կազմուած են գրադարաններ, «Յառաջ»ի գրադարանի գրքերից գլխաւորապէս:

Սակայն դրանք միայն 1907 թուի գործունէութեան առաջին շրջանն էր:

Կարեւոր էր կրկնակի եռանդով ձեռք գարկել նոր աշխատանքների, իսկ այդ նոր աշխատանքները նոր կարիքների պիտի բաւարարէին:

Բանուորական արհեստակցակ. միութիւնները քաղաքում այնքան էր կապուել ինտելիգենցիայի հետ, որ նա պահանջ էր գգում մի չլիման կեդրոնավայր ունենալու:

5.- Բնագրին մէջ ռուսատառ. պահեստատուն:

Մի ժամանակ շատ ազատ պայմաններում — մեր փայտիայած գաղափարն էր «Թատրոնասիրաց» ժողովարան անուան տակ լեզալ կերպով ստեղծել բանուորական ակումբ, ընթերցարանով, լսարանով եւ բեմով: Սակայն նախատեսողների խումբը շատ խոչընդոտների պատահեց եւ ծրագիրը մնաց ծրագիր: Դրա հետ միաժամանակ տեղական մարմնի եւ աշակերտական Դաշն. միութեան Ֆինանսների եւ գործունէութեան շնորհիւ բացուեց «Դեմոս» գրադարան-ընթերցարանը, որին կից կան երկու սենեակներ բանուորական լսարանի յարմարութիւններով: Դա իւրատեսակ մի կլուբ էր: Երեկոյեան բանուորութիւնը խոնուում էր գրադարան-ընթերցարանի չորս սենեակներում եւ մի տեղ լրագիր էր կարդում, միւսում գրուցում ընկերների խառն խաւերի հետ, կամ դասախօսութիւնները լսում: Իւր մօտ Թ. 7 ամսուայ գոյութեան ընթացքում բանուորական այդ «ակումբը» եւ ոչ մի անգամ ուստիկանութեան ուղք չէր գրաւել, չնայած որ դրսում յաճախակի ռեպրեսիաներ լինում էին:

Կարեւոր էր նաեւ կոոպերացիայի մի փորձ կատարել. թէեւ պարզ պիտի խոստովանել որ դրա համար կարեւոր առաջնորդներ կամ առաջնորդող ձեռնարկներ չկային. այլ եւ իրական օրինակներ:

Առաջին կոոպերացիան հիւսններին էր, որի գոյութեան առաջին ամիսը յաջողութիւնը ակնյայտնի էր, թէեւ դարձեալ կրկնում ենք, գուցէ այդ յաջողութիւնը միայն երեւութական էր: Այդ ժամանակները ահա կոմիտէն, երբ նրա անդամների մի մասը բացակայ էին քաղաքից, գործում է մի սխալ: Փոխանակ իւր բոլոր ուշադրութիւնը եւ ջանքերը լարելու առաջին կոոպերացիայի յաջողութիւնը ապահովելու, նա (գործազուրկ բանուորների համար մի կերպ գործ ստեղծած լինելու համար) բաց է անում երկրորդ եւ երրորդ կոոպերացիան (կօչկակարների եւ դերձակների):

Գիւղերում կարեւոր էր ստեղծել կազմակերպչական կորիզներ. — ապագայ գիւղացիական միութիւնների սաղմերը: Դրա համար հարկաւոր էին մշտական աշխատող ձեռքեր լինին գաւառում: Սակայն դոցա թիւը պահանջուած երեքի դիմաց միայն մէկն էր, որը եւ անցաւ շրջան (Վերի Շէնի, Աղջաղայի եւ այլ գիւղերի):

Մօտ 5 ամսուայ գործը կարողացան գաւառի 8 գիւղերում ստեղծել գիւղական գաղտնի միութիւններ 25-30 երբեմն էլ աւելի անդամներով: Այդ միութիւնների մէջ հնարաւորութեան սահմաններում եռանդով (սակայն ոչ շատ կանոնաւոր) յառաջ էր տարւում կուսակցական պրոպագանդա: Փորձ է արուել 2 գիւղում հիմնել ընթերցարաններ, սակայն Ֆինանսական սուղ միջոցները թոյլ չեն տուել լայն կերպով իրագործելու այդ իդէան:

Գիւղացիութեան տրամադրութիւնը վերին աստիճանի բարձր էր այդ շրջանում: Հող կար ստեղծելու

նոյնիսկ հակաֆէոդալական շարժում (ազրարային շարժում): Գիւղացիութեան մեծ մասը պարզ կերպով որոշ բէկերի հողեր վարում էր եւ կապալու դրամ կամ տասանորդ հրաժարուում էր տալ:

Շատ տեղերում այդ ատելութիւնը արտայայտուում էր գիւղացիների բոյկոտով ընդդէմ գիւղական ցեցերի եւ այլն:

Տրամադրութիւնները այդ դրութեան մէջ էին: Աշխատաւորական մասսաները գործունէութեան այս կարճ ժամանակաշրջանից յետոյ, ունէին հետեւեալ քանակը (թուերը մօտաւոր են).-

|  |       |
|--|-------|
| Քաղաքի բանուորութեան Արհեստ. միութիւն. | — 400 |
| Կայարանում                             | — 80  |
| Գետաշէն գիւղում                        | — 120 |
| Վերին շրջանի 8 գիւղերում               | — 240 |
| էլլենդորֆ եւ ծծմբահանք                 | — 25  |
| Գետաբէկի բանուորութ.                   | — 350 |

Հատ-հատ ընկերներ գանգան գիւղ. (Բանանց, Չարդ[ախլու]) — 30

Անդամների ընդհան. գում. — 1245 հոգի

Չպէտք է այստեղ բաց թողնել որ այս թուերը մեր կազմակերպուած ընկերների «մինիմումն» է: Բազմաթիւ գիւղերում որտեղ Դաշնակ. տրամադրութիւններ եւ աշխատելու պատրաստ հող կար, աշխատող ձեռքերի պակասութեան պատճառով չէին ստեղծում կազմակերպութիւններ: Ընդհակառակը եղած գործով ընկերներն էլ գաւառից՝ շնորհիւ քաղաքական այլ դէպքերի, որոնց յիշատակութիւնը ներքեւում է լինելու, ստիպուած են եղել փախչել: Գետաբէկում աշխատող մեր ընկերը հէնց տարուայ սկզբում ձեռքաւորուած է թողնելով բանուորական միութիւնը բախտի կամքին: Այդ բանուորութիւնը մինչեւ հիմա էլ կազմակերպուած է սակայն դարձեալ առանց առաջնորդների. որեւէ շարժում կամ կենդանութեան (ունեցել են մի գործադուլ որ վիժել է շնորհիւ ոչ լուրջ նախապատրաստութեան) նշոյլ այդ բանուորութիւնը չէր կարող ցոյց տալ, որովհետեւ պղնձահանքի բանուորական մասսայի գերակշռող մասը թուրքեր են, որոնք որեւէ սեփական կազմակերպութիւն չունեն, այլ գուրկ են դասակարգային գիտակցութիւնից. նոցա առաջնորդել եւ գիտակցութեան բերել բանուորութիւնը առայժմ անձեռնապահ է:

Աշխատող ձեռքերի պակասութիւնը գիւղերում շեշտուած էր նաեւ այն գիւղական ընկերների համագումարում, որ կայացել է տարուայ առաջին քառորդում (այդ մասին ժամանակին թղթակցութիւններ են

տպուել թերթում):

Այսպէս էր ընդհանուր գործունէութիւնը, եւ գործը «ներսում»։ «Ղուրսն» էլ էր սկսել ճանաչել մեզ — թէ կառավարութիւնը թէ բուրժուազիան (գիւղական թէ քաղաքական):

Եւ երկուսի կողմից էլ պիտի նկատուէր գործունէութեան որոշ քայլեր ուղղուած Դաշ[նակցութեան] դէմ: (Խօսքը առաջին կիսամեակին է վերաբերում):

Այդպէս էլ եղաւ: Սակայն մինչեւ այդ չպիտի մոռանանք յիշել, որ թուրքերի հետ բարեկամական յարաբերութիւն ստեղծելու համար աշխատանք մեզ մօտ արւել էր: Առաջին շրջանում մենք մօտենալով փորձեր արինք ինտելիգենցիային. սա մեր սպասածից շատ պահանջողական եւ ոչ յեղափոխական այլ եւ վախկոտ երեւաց: Պիտի փորձէինք մօտենալ աշխատաւորութեան, եւ այդ հնարաւոր էր միայն քաղաքում: Մեր արհեստակցական միութիւնների ղեկավարներից շատերը շուփում ունէին թուրք բանուորութեան հետ. նոցա ազդեցութեամբ թուրք բանուորութեան երկու պրոֆեսիաներ (ղերձակներ եւ կօշկակարներ) գործադու էին արել: Մենք ունէինք նաեւ մի պրոֆեսիա խառն ազգաբունակութիւններով (վրացի, թուրք եւ հայ). դա ձիաքարչի ծառայողների միութիւնն է:

Թուրք բանուորութիւնը տրամադիր էր մասնակցել նաեւ մայիսեան տօնին (այդ օրը Դաշն-ը միօրեայ գործադու էր յայտարարել) սակայն նա անկազմակերպ էր եւ թոյլ:

Այդ փորձը վիժեց. թէեւ մեր տօնական միտինգին ներկայ էին թուրք բանուորների երկու ներկայացուցիչները:

Այդ բոլորը գաղտնի չէր թէ բուրժուազիայից թէ կառավարութիւնից: Եւ նոքա սկսեցին որոշ կենդանութեան նշաններ ցոյց տալ. եւ միաժամանակ միջոցներ փնտռել ոչնչացնելու Դաշնակ[ցութիւնը]:

Մի քանի փորձեր՝ առաջացնելու ընդհարում թուրքերի եւ հայերի մէջ, կառավարութեան ազենտներին համոզեց, որ այլեւս կոտորել հայերին թուրքերի ձեռքով հնարաւոր չէ: Պրովակատորներից երկու հոգի ժամանակին տեւորի են մատնուած:

Յեղափոխական շարժումը այնքան համակրելի էր ժողովրդական լայն խաւերի համար, որ Դաշն-միտինգներ եւ ժողովներ յաճախում էին նոյնիսկ կողմնակի անձինք: Ամենամեծ ժողովրդականութիւն էին վայելում քաղաքի մեր բոլոր ընկերներ, որոնք գործի գլուխ էին անցած: Փոքր ու մեծ լրտեսները, ի հարկէ կառավարութեանը, այդ բոլորը ժամանակին յայտնում էին. լրտեսներից մէկին հայկական թաղում, երկուսին՝ թուրքական, մէկին էլ հիւանդանոցում տեւորի են ենթարկում դարձեալ մեր կազմակերպութեան վճռով:

Այդ ժամանակներն ահա երբ կառավարութեան բոլոր հիմնարկութիւնները եւ պաշտօնեաները իրանց ան-

գորութեամբ ոչինչ չէին ուզում անել, Գանձակ է գալիս որոշ լիազօրութիւններով յայտնի Լոյսձէն. նա սկսում է իւր գործունէութիւնը հատ-հատ խուզարկութիւններից եւ ձեռքակալութիւններից, ապա կամաց-կամաց լայնացնում է մասսայական ձեռքակալութիւնները. թաղային խուզարկութիւններ վերջ չունէին: Լոյսձէի ներկայութիւնը Գանձակում՝ մի կապարեայ ծանրութիւն էր, որ զգալի էր նոյնիսկ կառավարութեան ոչ այնքան ատելի բուրժուազիային: Պիտի մի վճռական քայլ արուէր, եւ այդպէս էլ եղաւ: Լոյսձէն սպանուեց մեր ահաբեկիչների խմբի ձեռքով: Տուգանք, բանտարկութիւն, նոր հարուածներ ոչինչ չէին կարող անել: Գանձակի հայկական թաղում Դաշն-ը տիրապետող էր: Կառավարութիւնը այդ բանը ի հարկէ չէր կարող մոռանալ:

Բուրժուազիան եւս անտարբեր չէր: Նրան ձանձաղըրել էին այդ «Մոց. դաշն»-երը, որոնք գործադու էլ, միտինգ, բոյկոտ, տեւոր եւ այլ յեղափոխական գործերով հանգստութիւն չէին տալիս քաղաքի փափկասէր տարրին:

Նա պիտի ունենար իւր սեփական կազմակերպութիւնը. դա անհրաժեշտ էր, գոնէ Գանձակում, թէեւ պէտք է հէնց այժմ ասել, որ բուրժուազիան ընդունակ չէ մեզ մօտ առ այժմ լուրջ դասակարգային կազմակերպութիւն ծնելու:

Տեղի ունեցած բազմաթիւ առօրեայ «չարիքներ» այդ էին թելադրում:

Միւս կողմից Բագուի տիպիկ անարխիստ-ական<sup>6</sup> շարժման ալիքները մի ժամանակ Գանձակ էլ հասան: Կար մի ամիս երբ ամէն օր քաղաքում շատ սխտեմատիկ կերպով կատարուում էին գողութիւններ, «էկսպրոպրիացիա», շանտաժ եւ այլն: Ի հարկէ այդ օրինակ մի շարժում — ուղղուած պիտի լինէր բուրժուազիայի դէմ, եւ այդպէս էլ էր: Սակայն նա անհանգստացնում էր նաեւ մեր աշխատաւորութեանը եւ մանր բուրժուազիային, որոնք համարեա թէ այդ շարժման ժամանակ, ոչնչով չէին տուժում:

Այդ բոլորի դէմ կռիւ մղելու համար (այն է գողութիւն), էկսպրոպրիացիա, շանտաժ եւ այլն) քաղաքի մի խումբ մարդիկ (բուրժուաներ եւ նոցա ինտելիգենցիան) մտադրում են հիմնել մի միութիւն, որին եւ մկրտում են «ժողովրդական» անուամբ:

Համակրելի էր նպատակը, սակայն գործունէութեան հէնց առաջին քայլերը եկան մեզ համոզելու որ «ժող. մ. ը» իւր .....<sup>7</sup> տակ ծածկած ունի, իսկական հայ մարդկանց կազմակերպութիւնը: Միութեան ղեկավարներից շատերը կառավարութեան հետ կապեր ունին եւ

6.- Բնագրին մէջ ռուսատառ:  
7.- Աճըթեռնելի քառ. կրճայ կարդացուիկ «եւրոսիկի», վրան, տանիք, ծածկոյթ իմաստով:

կասկածելի ծառայութիւններ են մատուցանում նրան: Միութեան վարձու գինուորները շատ մուլթ անցեալ ունեցողներ են. թէեւ նոցա մի մասը ինքնապաշտպանութեան ժամանակի ամենալաւ գինուորներն են եղել:

«ժող. մ. ը» ցանկանում էր ժողովրդականութիւն ձեռք բերել. կարելու էր հէնց դրա դէմն առնել եւ դրա համար մեր ղեկավարութեամբ եւ Մոց. Դեմ-ի աջակցութեամբ կազմակերպուում էին յաճախակի միտինգներ, (400-500 հոգի, նոյնիսկ աւելի) որտեղ բացարձակ կերպով մերկացում էր բուրժուազիայի այդ խաւի ներքին ձգտումները եւ մուլթ նպատակները: Ժողովրդական լայն մասսաների տրամադրութիւնը (յատկապէս մանր բուրժուազիայինը, որ տնտեսապէս անտագոնիզմի<sup>8</sup> մէջ է գտնուում մեծերի հետ) մեր կողմն էր. «ժող. մ. ը» չէր կարողանում գոյութեան հաստատ հող գտնել իւր ոտքերի տակ:

Լրագրներում արուած մերկացումները մի կողմից, նաեւ Դաշն. Այգեստ. մարմնի թուրքիկները համարեա թէ կազմալուծել էին նրան: Սակայն բուրժուազիան մի վերջին ճիգ գործ դրեց իր գոյութիւնը ապահովելու: Եւ այդ փորձը գուտ պրովակատորական<sup>9</sup> էր: Նրա նախատեսութեամբ կայացած մի միտինգում (600-700) ժող. միութիւնը ձգտում էր հաւատացնել, որ թուրքերը շուտով յարձակուելու են, որ դրա համար հարկաւոր է շուտափոյթ ինքնապաշտպանութիւն կազմակերպել եւ այլն: Համոզուած որ Դաշն-ը իւր վրայ չի վերցնել ինքնապաշտպանութիւնը, ժող. միութ. ը այդ հարցը դնում էր, որ ժողովրդը իւր վստահութեան քուէն տայ իրեն: Սակայն դարձեալ հիասթափութիւն. «ժողովրդական միջոցիան» — միակ միջոցն էր ինքնապաշտպանութեան, իսկ «ժող. միութ.»-ը իւր բարդ առաջարկներով սեւացաւ: Հարիւրաւոր ժողովրդի «կորչիչները բաց երկրնքի տակ վերջնական խաչ էին դնում նրա վրան: Սակայն նոր դէպքերը եկան եւ ամէն ինչ միանգամից փոխեց:

Գերմանական էլլենդորֆ գաղութում տեւորի ենթարկուեց Գուրը<sup>10</sup>: Ահաբեկիչներին հետապնդող կողակներից մէկի սպանուելը եւ թաղման ժամանակ ակնյայտ կատարուած պրովակացիան՝ առաջին պոգրոմը<sup>11</sup> ստեղծեցին, 3 սպանուածներով: Կարճ ընդմիջումից յետոյ բացարձակ կերպով առանց պատճառի եղաւ երկրորդ պոգրոմը՝ աւելի զոհերով (մօտ 25):

Իշխանութիւնները, (թէ ոստիկանական, թէ գինուորական) կազմակերպուած էին այդ օրուայ համար: Խաղաղ Գանձակի հայկական փողոցները 3-4 ժամ շարունակ դարձել էին թատերաբեմ սոսկալի գազանութիւնների, չնայած որ կազմակերպութեան մարտական ոյժերից 80 հոգի գինուած էին, սակայն ակտիւ քայլ վճռուած էր չառնել:

Անցաւ պոգրոմի օրը: Եւ հակադաշնակցական բոլոր տարրերը աւելի բարձր եւ յանդուգն յայտարարեցին ա-

մէն տեղ որ Դաշն[ակցութիւնն է] այս բոլորի իսկական պատճառը. պիտի սպանել Դաշն-ը: Մասսայական մատնութիւններ, խուզարկութիւններ սկսուեցին առօրեայ երեւոյթ դառնալ: Ժողովրդական լայն մասսաների փոփոխական տրամադրութիւնը եւս մեր կողմը չէր: Նա եւս հակադաշնակցական էր: Թաղական ժողովներում վճիռներ էին կայացուում դ-ական ղեկավար ոյժերին կառավարութեան ձեռքը տալ: Հալածանք, զրկանք այդ օրերը բոլոր դաշնակցականների բաժինն էր: Ժողովրդական պատգամաւորութիւնը յաճախ լինում էր նահանգապետի մօտ եւ նրա հետ խորհրդակցում էր Դ-ութեան դէմ կռուելու միջոցների մասին:

Ինչ հետեւանք ունեցաւ այդ բոլորը, ինչ դրութեան մէջ է գտնուում գործը այժմ, որքան հնարաւոր է մեզ մօտ գործել եւ այլն. այս հարցերին մնում է պատասխանել. սակայն մինչ այդ, զեկուցման լրիւ լինելը պահանջում է մի քանի խօսք ասել մեր շրջանում եղած այլ խմբակցութիւնների եւ նոցա գործունէութեան մասին, յիշատակել Դաշն. գինուորական-մարտական կազմակերպութեան մասին եւ ապա դնել մեր շրջանի ընդհանուր կարիքների տեսութիւնը. 1908 թուի բիւրջէն եւ 1907 թուի հաշուետուութիւնը (գին. եւ Ֆինանսական):

Ինքնապաշտպանութեան գործի լիկվիտացիայից<sup>12</sup> յետոյ (պիտի նկատել որ առաջին կիսամեակից յետոյ համարեա թէ իրականացած էր լիկվիտացիան). մեզ մօտ ստեղծուել էր մարտական կազմակերպութիւնը (ըրոյսվրայա օրգանիզացիայ)<sup>13</sup>: Մասնակցել էին այդ կազմակերպութեան մէջ թէ արհեստաւորական միութիւններից եւ թէ աշակերտական միութիւններից ընդունակ եւ ցանկութիւն ունեցող տղաներ: Եղել են նաեւ ինքնապաշտպանութեան ժամանակի մի խումբ գինուորներ, որոնք շարունակել էին իրենց թողնել Դ-ի տրամադրութեան տակ: Մարտական կազմակերպութեան մէջ մասնակցողների թիւը մշտական չէ եղել: Տարուայ սկզբում նա հասնում էր 190-ից էլ աւելի. յետոյ աւելի վստահելի եւ գիտակից տղաներին առանձնացրել եւ կազմակերպել են 7 տասնեակ: Ներկայումս նոքա վերակազմուած են: Սակայն ներկայիս մասին՝ յետոյ:

Այդ խմբակցութիւններից մեզ մօտ կան սոց. դեմ. եւ «անջատականներ» (հայ սոց.-յեղ):

\*) Ժամանակին Յուլիս եւ Օգոստ. ամիսներում եղել են մի շարք թղթակցութիւններ այս մասին. Շահէն

8.- Դակամարտութեան:  
9.- Գուր կամ Գուր. գերմանացի. Գանձակ քաղաքի մօտակայ քաղաքատեղն գերմանաբնակ էլլենդորֆի մեծահարուստ գործարանատէրերն, որ ահաբեկուեցաւ Այգեստանի 7.3.7. Կեղո. Կոմիտէի որոշումով՝ ցարական կառավարութեան մատուցած իր հակահայ լրտեսական ծառայութեանց համար:  
10.- Չարդը:  
11.- Բնագրին մէջ ռուսատառ:



Նոցա գոյութիւնը իրականութեան մէջ չի արտայայտուում ոչնչով: Լուրջ ղեկավարող ոյժեր եւ մասսա չունին: Բացի դրանից (եւ «ժող. միութիւն»-ից) կան հրեշտաններ, որոնց թիւը 5-10 հոգուց դէնը չի անցնում: Գործունէութեան եւ կենդանութեան նշաններ սոքա ցոյց չեն տալիս:

Մեր մի տարուայ գործունէութիւնը, որ առաջ է տարուել երեք փոխուած մարմինների ղեկավարութեամբ, իւր ամբողջ բովանդակութեամբ ձգտել է լինել արտայայտիչ Դաշն[ակցութեան] աշխատակողման սկզբունքի եւ ժողովրդական համերաշխութեան: Դրա համար չնայած ոյժերի սակաւութեան, մեզ մօտ արուել է այն ամէնը ինչ որ հնարաւոր է:

Կազմակերպութեան գործունէութիւնը չէր կարող գերծ մնալ եւ գերծ էլ չէր պակասութիւններից: Մի քանի դատական հարցերում եւ մասնաւոր խնդիրների մէջ, մեր միջամտութիւնը թերեւս միակ պակասաւոր կողմերը կը լինեն մեր տարուայ գործունէութեան:

Պագրոմից յետոյ, պահ մը թւում էր թէ գործը արդէն կարելի է մեռած համարել: Գործիչ ընկերները ցրուել էին, կոմիտէական մարմինը քայքայուած էր: Արհեստակցական միութիւնները եւ գաւառը մեր ձեռքից կտրուած էին եւ մի կողմից քաղաքի բուրժուազիայի, միւս կողմից կառավարութեան հալածանքները, յաճախ միահամուռ, մօտ մի ամսուայ ընթացքում սպանել էին մեզ մօտ կուսակցական կեանքը:

Պիտի նորից սկսէինք գործ կատարել. իսկ դրա համար հարկաւոր էր հրաւիրել գործը ղեկավարելու համար նոր մարմին:

Այստեղ պիտի նկատել որ գործունէութեան առաջին շրջանում, շնորհիւ եռանդուն պրոպագանդի, քաղաքում ունէինք մի խումբ ընկերներ, որոնց միշտ կարող էինք վստահութեամբ մօտենալ եւ գործի ղեկավարութիւնը եւ վերակազմութիւնը սոցա յանձնարարել: Ընկերների այդ խումբը մօտ 80-70 հոգի մեր շրջանի խառն խումբն է, որտեղ մասնակցում են արհեստ. միութեան ներկայացուցիչները, գիտակից բանուորները, աշակերտներ, օրիորդներ: Հէնց պոզրոմի երկրորդ շաբթում այդ խումբը մտադրուեց գործի անցնել: Տեղի ունեցաւ գործի բաժանումն: Վերակազմել բանուորական միութիւնները, կայարանի խմբերի հետ պարապուելը, եւ առաջ տանել կուսակցական պրոպագանդան, եւ վերաստեղծել որտեղ եղել են, կամ ստեղծել որտեղ չկան, գիւղացիական միութիւններ: Կազմակերպել ներկայացումներ (քաղաքի մեռած կեանքը մի քիչ շարժելու) եւ այլն եւ այլն:

Այսքան գործեր... եւ դրա համար ահագին եռանդ եւ գործող ձեռքեր են հարկաւոր: Մեր վերջին քառամսեայ գործունէութեան մէջ դարձեալ մեր հակառակորդները շարժուեցին. «ժող. միութիւն»ը սկսել էր իւր գործունէութիւնը ակելի բացարձակ. կառավարութիւ-

նը իր նոր ագենտի միջոցով շարունակում է կռիւ ընդդէմ յեղափոխութեան:

Սակայն տրուած պայմաններում մեզ մօտ գործը առաջ է գնում: Մի կողմից վերակազմում են արհեստ. միութիւնները, միւս կողմից խառն ժողովներում քրննութեան են ենթարկւում զանազան տեղական հարցեր եւ կազմակերպչական խնդիրներ:

Ամենամեծ կարիքը դա մշտական ժողովարանի խնդիրն է: Պիտի վերստեղծել ռաշոնական կլուբը: Դրա համար կարեւոր են ջանքեր. եւ այդ ջանքերը, գլխաւորապէս ֆինանսների հարցը, արդէն որոշ հետեւանքի են յանգում: Շուտով կը բացուի գրադարան-ընթերցարան-ժողովարանը: Մեր կազմակերպուած բանուորների եւ գիւղացիների թուերը տալ այժմ դժուարանում ենք:

Գործող ընկերներ. միայն քաղաքում ունենք այժմ մօտ 250-300 կազմակերպուած ընկերներ: Դոցա մէջ մտնում է մարտական կազմակերպութիւնը (որ վերակազմուել է), օրիորդների խումբը, քաղաքական առաջին խումբը: Գիւղերում ունինք կազմակերպութիւն Վերին Ենի, Աղջաղալի, որտեղ աշխատող մի ընկեր ունինք: Այդտեղ ընկերների թիւը հասնում է եօթ գիւղերում մօտ 200ի: Գետաչէնում մի խումբ՝ 40 հոգի, իսկ Գետաբէկում որեւէ աշխատանք հնարաւոր չէ՝ պահպանողական թուրք տարրի շնորհիւ: Մեր շրջանում վերակազմութեան այս շրջանում կարելի է մօտ 800 դաշն[ակցական] հաշուել: Աշխատանքը շարունակուում է: Լայն ժողովրդական մասսաների տրամադրութիւնը դարձեալ մեր կողմն է անցնում: Գիւղացիներից մեր մարդիկն են պահանջում: Քաղաքի հակադաշնակցական տարրը (դրանց մէջ հարկաւ բուրժուազիան) Դաշն[ակցութեան] մասնակի դիմումներ է անում՝ քաղաքի հասարակական անարխիստիստ<sup>12</sup> վերջ տալու. «ժողով. միութիւն»ը համարեա քայքայուած է: Քաղաքի աղքատ ազգաբնակչութիւնը դարձեալ մեզ է հեղինակաւոր ոյժ ճանաչում: Աւելի լայն նկարագրել գործը ներկայումս հնարաւոր չէ: Գանձակի շրջանը անցողական մի շրջան է: Իւրաքանչիւր օր գործը նոր նուաճումներ է անում: Ինչ է լինելու վաղը մասսաների տրամադրութեան եւ կազմակերպութիւնների մէջ՝ չի կարելի ասել: Միայն մի բան պարզ է: Աղքատ ազգաբնակչութեան եւ աշխատաւորութեան տրամադրութիւնները մեր կողմն են, իսկ գիւղացիութիւնը մերն է: միայն աշխատող ձեռքեր են հարկաւոր:

Մեր շրջանի ներկայ դրութեան ամփոփ պատկերը տալուց յետոյ մեզ մնում է ընթացիկ համարողական կարիքների անցնել եւ ապա ներկայացնել անցեալ 1907-ի հաշուետուութիւնը եւ 1908-ի նախահաշիւը:

Ամենախոշոր գուցէ եւ ամենազգալի կարիքը դա իսկական յեղափոխական անհատների քրննութիւնն է քա-

12.- Անիշխանութեան:

ղաքում եւ համարեա չիքութիւնը գիւղերում: Ամէն անգամ մի բան ձեռնարկելիս, մանաւանդ վերջին շրջանում, երբ մեր գործող ընկերներից շատերը հեռացել էին, զգացուել է կազմակերպող եւ ղեկավարող ընկերների կարիքը: Ինտելիգենցիա (սոց[իալիստ]ական) գաւառներում չկայ. նոր-նոր է ստեղծուում: Նոր-նոր է ստեղծուում աշակերտութիւնից, որոնց մէջ կան տարրեր որոնք թերեւս ապագայ են խոստանում: Մեր իսկական ինտելիգենցիան միայն կարիերիստ<sup>13</sup> է... ձգտող լաւ պաշտօնի, չաղ<sup>14</sup> ուճիկի, փափուկ կեանքի: Ինչու է այդ այդպէս (հարկաւոր փաստեր կարելի է թուել ոչ միայն Գանձակում այլ եւ ամէն տեղ) ինչպէս առնել ինտելիգենցիայի այդ կորստաբեր յատկութեան առաջը եւ այլն. այդ հարցերին ներկայ տեղեկագրում չենք պատասխանի: Թերեւս դրա համար կարելի է որոշ հրապարակական տրակտատ<sup>15</sup> գրել, կամ ընկերական շրջանի լայն քննադատութիւն բանալ... այժմ տեղը չէ այդ մասին խօսիլ: Մենք միայն իրական փաստերն ենք արձանագրում:

Երկրորդ խոշոր եւ ամենամեծ կարիքը՝ ֆինանսների կարիքն է. եթէ ճիշտ է նապոլէոնի ասածը պետութիւններին՝ «փող, փող եւ փող», ապա նոյնքան գուցէ եւ ակելի նոյն խօսքերը ճիշտ են՝ մի յեղափոխական կազմակերպութեան համար: Եւ իսկապէս մեր յեղափոխական կազմակերպութիւնը ամէն քայլափոխում կարիք է գգում փողի: Ընթացիկ ծախսեր են՝ ընկերային ապրուստ, պահեստների եւ տպարանական ծախսեր, զանազան ծախսեր եւ այլն եւ այլն:

Ծախքեր՝ որոնք հասցրուում են մինիմումի: Մեր բիւջէն, որ ի տեղ է ասել՝ կազմուած է ենթադրութեամբ եւ հազիւ թէ որեւէ դէպքում իրականութեանը համապատասխանի (որովհետեւ անկարելի է մօտաւորապէս հաշուել նոյն իսկ 1908 թուի յեղեղով կեանքը), պարունակում է ամենամահաբեղալուծ ծախքերը եւ ենթադրական մուտքերը:

Բիւջէն ուշադրութեամբ քննողը պիտի իսկոյն նկատի, որ մուտքի եւ ելքի մէջ կայ անհաւասարութիւն: Ելքը գերազանցում է մուտքին. ինչպէս անել?:

Նախքան այդ հարցին պատասխանելը — պիտի նկատել, որ մեր կազմակերպութեան եկամուտները պատահական են: Մշտական կանոնաւորուած եկամուտներ չունինք եւ անհնարին էլ է ունենանք: Մենք ունինք բանուորութիւն, որ գիտակցաբար չէ կապուած դեռեւս Դ-ութեան հետ: Նա ամսավճար է տալիս Դ-ութեան, երբ իր կողմէ կաւոր շահերի պաշտպանութիւնը կազմում է Դ-ութեան միակ մտածողութեան առարկան: Թո՛ղ այդ կազմակերպութիւնը (որ շատ քիչ մարդիկ ունի, որոնք գործ են ղեկավարում) մի ամիս իւր գործունէութիւնը կամ մտածողութիւնը ուղղի այլ կողմ եւ ամսավճարները կը դադարեն կազմակերպութեան կասսան մտնելուց: Կամ յաճախ ձգձգուում է ամսավր-

ճարների գանձումը եւ այդպէս էլ ապառիկ մնում:

Գիւղացիութիւնից, որտեղ ինչպէս ասուեց վերելու, շատ քիչ կազմակերպութիւններ ունինք, մենք մուտք չենք ունեցել. պատճառը այն է որ գիւղերում անմիջական գործիչներ չկան, որոնք գիւղացիութեանը «կոպէկներ տալ» սովորեցնեն, իսկ կազմակերպութիւնը չի ուղղում իր շրջիկ ազենտներին<sup>16</sup> հարկահաններ դարձնել, որոնք սոված գիւղացու նիհար քաակից իրանց կուսակցական տուրքը պիտի պահանջեն:

Երեկոյթների, ներկայացումների եւ այլն եկամուտները թերեւս նոյնքան կասկածելի են եւ ենթադրական որովհետեւ լինում են ամիսներ, երբ կեանքը այնքան է մեռնում, եւ շրջապատող հանգամանքները այնքան ճնշում, որ որեւէ երեկոյթի եւ ներկայացման (կամ այլ հանդէսի) կազմակերպման մասին մտածելը օդային ջրաղացների հետ կռուել կը նշանակէ:

Նիւթական կրիզիսը<sup>17</sup> կարող է մեր գործին հսկայական վնաս տալ: Թող այս ժողովրդ որտեղ կան երեւի շատ մարմինների ներկայացուցիչներ, որոնց նոյնպէս անծանօթ չէ այդ կրիզիսը — միջոցներ մտածեն, այլապէս, կրկնում եմ, այդ կրիզիսը, թողնուած մի կողմ այլ շատ կրիզիսներ, կարող է մեր կուսակցութեան բարգաւաճմանը մեծ վնաս տալ:

Մի բան եւս.

Որովհետեւ գիւղերում մեր գործը արմատական դարձնելը պահանջում է մշտապէս գիւղում ինտելիգենտներ ունենալը, շատ կարեւոր է միջոցներ մտածել գիւղական դպրոցները եւ գիւղական ուսուցչական տեղերը մեր կուսակցական ընկերների ձեռքը ձգել:

Մի կողմ թողած այն, որ մենք կուսակցական-հասարակական գործերի մէջ խառնուելու խնդրում, արդէն ընդունում ենք ձգտել ձեռք ձգել բոլոր հասարակական հիմնարկութիւնները (որոնց թւում նաեւ հոգաբարձութիւնները) մենք առաջարկում ենք մի արմատական գուցէ շատ դժուար միջոց:—

Որովհետեւ դպրոցական գործի ղեկավարութիւնը մեզ մօտ թողնուած է հոգաբարձութեանը եւ բուրժուազիային, իսկ նոցա շատ էլ ձեռնտու չէ Դ-ութեան ուսուցչութիւնը, Դաշն-ը լեզալ կերպով հիմնում է իւր մի «դպրոցական ֆոնդը» յատկապէս կարեւորութիւն ունեցող տեղերում դպրոցներ բաց անելու:

Եթէ մի «կուստորական ընկերութիւն» հնարաւորութիւն ունի դպրոցներ բանալու, նոյնպիսի հնարաւորութիւն կ'ունենայ թերեւս գուտ կուսակցական նպատակներով հիմնուած մի այլ կուստորական ընկերութիւն:

13.- Շահանով, շահախնդիր:  
14.- Առատ, լեցուն:  
15.- Ուսումնասիրութիւն:  
16.- Գործիչներուն:  
17.- Տագնապը, ճգնաժամը:



Մանրամասն կանգ առնել ներկայ խնդիրքի վրայ դարձնել տեղը չենք համարում: Գուցէ այս ժողովը իւր օրակարգի մէջ կը մտցնի եւ քննութեան կ'առնի այդ հարցը: այն ժամանակ աւելի երկար եւ խիստ կերպով կարելի է քննել այս հարցը եւ ըստ մեր կարծիքի դրական եզրակացութեան գալ:

Մենք վերջացրինք: Ինչպէս սկզբում էլ ասել էինք մենք միայն փորձում ենք 1907-ի գործի մօտաւոր պատկերը տալ: Բնականաբար շատ թերութիւններ կան, շատ ասելիքներ դուրսն են մնացել: գուցէ եւ շատ ասուածներ լաւ չէին ասուած: Ներկայ տեղեկագիրը բնականաբար լրիւ չէ, հնարաւոր էլ չէ այն աւելի լրիւ լինի:

Մնում է մեր շրջանի հաշուետուութիւնը եւ բիւրջէն, որ եւ աւելացնում ենք:

Երկու խօսք եւս հաշիւների մասին: Հաշիւները պահել են հնարաւորութեան չափ կանոնաւոր: գինական հաշիւները թերեւս կարող են փոքրիկ սխալներ պարունակել: եւ դա ունի իւր պատճառները: Անվերջ խոզարկութիւնները, որոնք յաճախակի վտանգում էին մեր պահեստները, ստիպում էին մեզ շուտ-շուտ տեղափոխել պահեստները...

Տեղափոխութեան ժամանակ կարող են փոքրիկ կորուստներ եղած լինել, սակայն այդ հնարաւոր չէ եղել պարզել: Պահեստները ստուգման չեն ենթարկուած, որովհետեւ ներկայ պայմաններում հնարաւոր չէր:

Դրամական հաշիւների փաստաթղթերը եւ տետրակները պահւում են Այգեստանի արխիւում:

Բիւրջէ Այգեստանի շրջանի 1907 թուի

| Սուտք                       | ն.          | կ. | Ելք                           | ն.          | կ. |
|-----------------------------|-------------|----|-------------------------------|-------------|----|
| Որտեղից է մուտքը            |             |    | Ինչպիսի ծախք.                 |             |    |
| Արիեստակցական միութիւններից | 400         | —  | Տպարան եւ պահեստներ           | 150         | —  |
| Կանանց եւ աշակերտ.          | 150         | —  | Ընկերների մասք.               | 1000        | —  |
| Երկրք, ներկայացում] եւ այլն | 300         | —  | ճանապարհածախք                 | 150         | —  |
| Պատահական եկամուտներ        | 100         | —  | Ձիմամքեր                      | 350         | —  |
| Գիւղերից                    | 50          | —  | Պատահական ծախք                | 500         | —  |
| Կայարանից                   | 100         | —  | Գիւղական շրջիկ ընկերոջ (ծիով) | 400         | —  |
|                             |             |    | Նոր պահեստներ շինելու         | 200         | —  |
| <b>Գումար</b>               | <b>1100</b> |    |                               | <b>2750</b> |    |

Կարելու է օժանդակութիւն 1650 ռուբլու:

Մանօթ.- Բիւրջէն բաւականին կասկածելի եւ ենթադրական է: Մուտքերը maximum են ծախքերը minimum:

Ի դիմաց Այգեստանի Կ. Կոմիտէի

*[Handwritten signature]*

ՇԱՀԻՆ

Փաստ. 1581-2

Ե.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ ՇՐՉԱՆԱՅԻՆ (ՌԱՅՈՆԱԿԱՆ) ԺՈՂՈՎՆԵՐԻ

(1904 ԴԵԿՏԵՄԵՐ 10 - 22)

«Նիւթեր»ու Բ. հատորին մէջ, 1904 թուականին Արեւելեան մարմիններու մասնակցութեամբ կայացած Կովկասի մարմանական ժողովներու շարքին յոյս ընծայուած է նաեւ այս մէկը (էջ 206-223), երկու բաժիններով. առաջինը «Չորրորդ Շրջանային ժողովի որոշումների արձանագրութիւնը», որ, ինչպէս ենթադրած է Հ. Տ., ժողովէն ետք Հ.Յ.Դ. մարմիններում ընդունուած շրջաբերական մըն է: Երկրորդը Ռայոնական ժողովի նիստերու արձանագրութիւնն է բայց պակասաւոր: Պոսքընի Հ.Յ.Դ. կեդրոնական արխիւներէն յայտնաբերուած N° 1581-2 փաստաթուղթը շատ աւելի ամբողջական մէկ արտագրութիւնն է 1904 թ. Դեկտ. 10 - 22ին գումարուած Կովկասի Ռայոնական ժողովի արձանագրութեանց: Այսուհետեւ իրենք, կրկնութեւն խուսափել մտահոգութեամբ, կու տանք միայն այն բաժինները, որոնք տեղ չեն գտած «Նիւթեր»ու Բ. հատորին մէջ:

Օգտագործուած փաստաթուղթը գրուած է սեւ մեկանով, խիստ մանրատառ, սովորական չափի 33 էջերու վրայ. կրկնութեամբ արուած մասերը կը գտանք 1-13 եւ 17-18 էջերը:

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոն ի նկատի ունենալով առաջիկայում լինելիք դաշնակցական խորհրդի գումարումը, նախօրօք կարեւոր համարեց Մ[եծ] Ք[աղաք]ում կազմել Շրջանային ժողով, քննութեան ենթարկելու մի շարք հարցեր, որոնք դրուելու են ապագայում Խորհրդի ժողովի առաջ: Այս պատճառով հրահրուած էին մասնակցելու Չորրորդ Շրջանային ժողովին հետեւեալ դաշնակցական մարմինները իրանց ներկայացուցիչների միջոցով.- Մրզաստանը, Քարը, Ջրաբերդը, Մեծ Քաղաքը, Ոսկանապատը, Ոսկանապատի Բ. Կոմիտէն, Արեւելեան Բիւրոն, Ժլատը, Նաւահանգիստը, Ինքնապաշտպանութեան կոմիտէն, Ուսանողութիւնը, Ապառաժը, Այգեստանը, Նալբանդը, Եկեղեցին եւ Վրէժստանը:

Ժողովն սկսելու օրը նշանակուած էր 1904 թուի Դեկտեմբերի 10-ին, սակայն մի քանի ընկերների բացակայութեան պատճառով յետաձգուեց մինչեւ 11-ի առաւօտը. թէեւ կրկին բացակայում էին Նաւահանգիստի, Ինքնապաշտպանութեան, Ուսանողութեան, Եկեղեցու, Այգեստանի եւ Նալբանդի ներկայացուցիչները, բայց ներկայ լինելով օրինական ձայների մեծամասնութիւնը՝ Բիւրոյի ներկայացուցիչը ժողովը բացուած համարեց եւ առաջարկեց ներկայ տարուայ նահատակ ընկերների յիշատակը յարգել յոտնկայս, որ եւ մեծ համակրութեամբ ընդունուեց ժողովի կողմից: Ժողովին նախագահում էր Բիւրոյի ներկայացուցիչը, որն առաջարկեց որոշել հարցերի օրակարգը. ձայների մեծամասնութեամբ ընդունուեց Բիւրոյի կազմած օրակարգը հետեւեալ ձեւով.-

ա.- Հաշուետուութիւն եւ տեղեկագիր մարմինների գործունէութեան

բ.- Տակտիկա  
գ.- Կովկասեան խնդիր եւ ապա միւս հարցերը:  
Անցնելով հերթական հարցերին ժողովը հրահրեց Ջրաբերդի [Կարս] կենտր. Կոմիտէի ներկայացուցչին գեկուցանել իրանց շրջանի միամեայ գործունէութեան մասին, որի տեղեկութիւններից երեւաց, որ համաձայն անցեալ տարուայ Ընդհանուր ժողովի վճռին՝ 200 հոգոց արշաւախմբեր պէտք է պատրաստէին, որոնց նըպատակը լինելու էր մի մասի համար՝ Երկիր՝ ապստամբութեան վայրը հասնելու, իսկ միւսինը սահմանի վրայ մօտիկ տեղերում արշաւանք գործելու: Այդ նպատակով երկու ձեռնարկութիւններ եղան, երկուսն էլ վիժեցին եւ ոչ մէկը բուն նպատակին չհասաւ: Առաջինը կայծակ ձիւղոր խումբը, որ Երկիր օգնութեան էր հասնելու ընկերներին, ճանապարհների կանոնաւոր ուսումնասիրութեան բացակայութեան եւ վախճների պակասութեան պատճառով սահմանազխի վրայ կռուի բռնուրեց եւ անուրանալի քաջութեամբ կռուելուց ոչնչացաւ առանց դրական հետեւանքի, իսկ երկրորդը՝ Որսկան խումբը պատահականութեան զոհ գնալով՝ նկատ-

- 1.- Մրզաստանը Երեւանի Կ. Կոմիտուութիւնն է, Քարը Ալեքսանդրապոլի, Ջրաբերդը՝ Կարսի, Մեծ քաղաքը՝ Թիֆլիսն է: Ոսկանապատը՝ Պաքուն (Բագու), Ժլատը՝ Գիւ. Կովկաս (Նոր Արմաւիր), Նաւահանգիստը՝ Պաթում, Ապառաժը՝ Ղարաբաղ եւ Չանգեզուր, Այգեստանը՝ Գանձակ, Նալբանդը՝ Նոր Նախիջեւան, Եկեղեցին՝ Մոսկուա, Վրէժստանը՝ Ասրապատական:

ւեց ուսումնական կարգից եւ առանց որեւէ դիմադրութեան՝ կորստի մատնուեց, որով վերջացաւ Զրաբերդի կողմից ձեռնարկուած յեղափոխական-մարտական գործը: Դրանից յետոյ աշխատեցին օտարների միջոցով կանոնաւորել փոխադրութիւնը, բայց որոշ վերջնական եզրակացութեան չեն հասել: Զրաբերդը աշխատել է նաեւ Արտասահմանի, Երկիրի եւ Կովկասեան Մարմինների հետ յարաբերութիւնը կանոնաւոր պահել: մինչեւ 4000 ուսուցիչ փոխադրել է Երկիր, որ տեղ հասել է փոխադրուած է եղել նաեւ 200 լիրա, բայց ստացւել է միայն 25-ը, մնացածը յետ է ստացուել: Նիւթեր չունենալով ձեռքի տակ չէր կարողանում յիշել թէ որքան ուղղամիտ էր տեղափոխուել Երկիր, միայն ուղղամիտներից տրուած է Կայծակի «Դժոխք» խմբին 20 մոսին 40000 փամփուռչուով, Որսկան խմբին 61 հրացան 25000 փամփուռչուով եւ ուրիշ համապատասխան պատրաստութիւններով: փող եղել է 2 խմբի մօտ՝ օսմանեան 160 լիրա: Զրաբերդի շրջանում ներկայումս կայ 112 պատրաստի մոսիններ, որից միայն 41-ը անփայտ է, 42 բերդան — մի մասը անպատրաստ, որոնց վրայ արհեստաւորը աշխատում է եւ շուտով կարող է պատրաստ լինել: մոսինի փամփուռչու ունին 30000, բերդանի 32000, գրիգի<sup>2</sup> մոսինի համար վառօդով միայն առանց գնդակի՝ 18000, իւր<sup>3</sup> 2 փուլ, 1200 ուղղամիտ, որոնցից միայն 26-ը լեցուն է, 27 ձի, որ ծառայելու են շրջիկներին, վերատեսուչների եւ դաշնակցական 10 զինուորների տեղական պէտքերի համար, 40 ձեռք տաճկական զինուորական համազգեստ: Ընդհանրապէս փամփուռչուի գնումը դժուար է առաջ գնում: տարուայ ընթացքում գնուած է 18000 հատ: մոսինի փամփուռչուի սովորական գները եղել են մինչեւ 6 կոպէկ, բայց անհրաժեշտ դէպքերում գնուած է մինչեւ 8 կոպէկ: բերդանի փամփուռչուներից պատահականութեան պատճառով Բերան գիւղում վտանգուել ու բռնուել է 27000 հատ: Զրաբերդի տեղական կազմը հետեւեալ ձեւն է ունեցել: Քաղաքում կենտ. կոմիտէ 5 անդամներով, ղեկավարող մարմինը եւ 121 դաշնակցական խմբեր: միջին թիւը իւրաքանչիւր խմբի հաշուելով 15 հոգուց մօտ 2000 հոգի յեղափոխական անհատներ կը լինեն զանազան խաւերից, վաճառականներից 13 խումբ 5-30 ուսուցիչ ամսավրձարով, արհեստաւորներից եւ ինտելիգենտներից: աշակերտական խմբերը խառն են յեղափոխական խմբերի հետ: Կովկ. աշակերտական միութիւն չկայ Զրաբերդում, որովհետեւ այնտեղ աշակերտութիւնը առանձին մի բան չի ներկայացնում: Կայ նաեւ Հ.Յ.Դ. Կարմիր խաչի կոմիտէ, որ 13 խումբ ունի եւ լաւ առաջադիմում է: 8 ամսուայ ընթացքում 2500 ուսուցիչ մուտք է ունեցել: քաղաքի եւ Կարմիր խաչի մուտքը միայն եղել է 10461 ուսուցիչ: Քաղաքում կայ նաեւ Գրասիրաց ընկերութիւն, որ Դաշնակցութեան կրթական ֆունկցիան է կազմում, պահում է 28 դպրոց եւ տարածում է կրթութիւն, որին

շատ նպաստում է յեղափոխութիւնը՝ ուսման պարտադիր դարձնելու արձակած վճարով: Ժողովրդի մասնաւոր դատերը կարգի դնելու համար քաղաքում գոյութիւն ունի դատական մարմին, որ կազմուած է Կ. Կոմիտէի ներկայացուցիչից, 2-3 հոգի ղեկավարող մարմնի անդամներից կամ գործին համակրող կազմից դուրս դաշնակցական մարդկանցից:

Շրջանում կայ 4 կոմիտէ ա. - Արտահան — 12 խումբ, Կարմիր խաչի կազմով. ունի 2 գիւղ. բ. - Կաղզուան — 28 խումբ. Կարմ. խաչ եւ 8 գիւղ. գ. - Մարիդամիշ — 23 խումբ եւ 2 գիւղ. դ. - Օլթի — 13 խումբ եւ 11 գիւղ: Չորս կոմիտէների մուտքը եղել է 5000 ո.:

Գիւղերում կազմակերպութիւնը հետեւեալ ձեւն ունի. - 79 գիւղական հասարակութիւնը բաժանուած է 7 շրջանի: 5-10 գիւղ կազմում է մի շրջան. ամէն գիւղում կայ ենթակոմիտէ 3-5 հոգուց կազմուած, որ վարում է գիւղական գործերը եւ ընտրում է գիւղից: 5-8 հոգի Դաշնակցութեան ներկայացուցիչի հետ որոշում են անդամավճարների քանակը: իւրաքանչիւր մի շրջանի համար նշանակուած է մէկ վերատեսուչ, որ հսկում է ենթակոմիտէների, փողի հաշիւների, յեղափոխական գործերի վրայ եւ կապ են պահպանում կենտ. կոմիտէի հետ: վերատեսուչը ընտրում է կամ ինտելիգենտ եւ կամ գիւղերում բարի համբաւ ունեցող անձնաւորութիւններից, բացի այս մարմիններից կայ նաեւ 8 հոգուց կազմուած երդուեալների դատական կազմը, որը մինչեւ 25 ո. տուգանք սահմանող դատեր է վերցնում: վերատեսուչը մինչեւ 15 ո. իսկ ենթակոմիտէն մինչեւ 5 ուսուցիչ տուգանքի ենթարկող դատեր: դատաստանական մարմինները պատօի եղանակի պակասութեան պատճառով դժուարութիւնների են հանդիպում: Պատիժներն են՝ ծեծ, աքսոր, տուգանք, բոյկոտ, յարաբերութիւն դադարեցնում են: Քաղաքում գոյութիւն ունի դասակարգային դատաւորների սիստեմը, որոնք 20-30 դատեր յաջողութեամբ վերջացրել են: Գիւղերում կան նաեւ գիւղական զինուորական խմբեր գիւղերի շահերի պաշտպանութեան համար:

Ներկայ տարուայ ընթացքում տեղի են ունեցել հետեւեալ պաշտօնական տեւորները:—

Ա. - Աղբյւր. մատնութեան համար որի հետ նաեւ որդին սպանուեց: Բ. - Օլթիի սահմանապահ գնդապետ Բըկովը Բերնա գիւղի բնակիչ ձիւն, աքսեղագեցի քիւրտ Օհան Գլոսնին: Գ. - Ժանդարմի թարգմանը, իր լրբութեան, անբարոյականութեան եւ հարստահարող բարքերի պատճառով. նախկին հայոց եւ ներկայումս քաղաքային գրադարանի գրադարանապետի պաշտօնն ունենալով՝ գրադարանը արբեցողութեան վայր եւ ժանդարմների բոյն էր դարձրել, որով ընդհանուր գայ-

2.- Փամփուռչուի, մետաղեայ պատեան, պարկուճ:  
3.- Ուժանակ, պայթուցիկ ցիւփ:

րոյթ առաջ բերեց եւ պատժուեց: Դ. - Զանբէզարների պրոպագանդիստը սպանուեց եւ մէկ անյաջող փորձ էլ կատարուեց քաղաքի պոլից-մէյստրի վրայ:

Մուտքի եւ ելքի հաշիւը հետեւեալն է ներկայացնում ընդհանուր գծերով: 8 ամսուայ մուտքը եղել է 31600, որից գիւղերը տուել են՝ 16000, կոմիտէները՝ 5000. Կարմիր խաչը եւ քաղաքը 10600. Ծախս եղել է ուղղամիտների 6500, մարտական եւ մարզական պիտոյք 5000, երկրից եկած գործիչներին՝ 450, տեղական 3300, գէնքի գնման, պահպանողութեան եւ փոխադրութեան ծախս 2084 ո., դիւանական՝ 117 ո. տպագրական՝ 272 ո., կորուստ 176 ո., Կարմիր խաչի ծախսը՝ բանտարկուածների, վնասուածների եւ այլն 1700 ո. փոխադրուած ուրիշ մարմինների՝ 10000 եւ կանխիկ փող մօտ 13000:

Կատարուել է նաեւ վիճակագրութիւն, թէ ժողովրդի ձեռքին որքան գէնք է գտնուում, որը հետեւեալ արդիւնքն է ցոյց տուել. - Շարայի<sup>4</sup> շրջանում՝ 121 դափաղու, 203 ատրճանակ, 233 հատ դաշոյն, 26 սուր, 5 չախմախուր, 1 մոսին եւ 1 այնալու: Ծամբորդի<sup>5</sup> շրջանում 19 գիւղում՝ 18 բերդան, 37 չախմախուր, 70 ատրճանակ, 3 այնալու, 8 չախմախուր, Արաքսի եւ Թախտի<sup>6</sup> շրջանի տեղեկութիւնները պակասում են: Այս տարուայ ընթացքում եկեղեցական կալուածների գրաւման առթիւ եւ յեղափոխութեան պատճառով բանտարկուել են որոշ ժամանակով եւ յետոյ արձակուել՝ 300 հոգի, 7 շրջիկ, Թումանի<sup>7</sup> խմբից՝ 20 հոգի, որոնցից 13ը ազատուել են: իսկ 7-ը դեռ բանտումն են: աքսորուել են 53 հոգի: Համառօտակի այս է ներկայացնում Զրաբերդի յեղափոխական գործերի միամեայ վիճակը 1904 թուականի ընթացքում:

**II Մրգաստանի (Որեւան) գործունէութեան մասին զեկուցումը.**—

Մրգաստանի յեղափոխական գործունէութիւնը ծանրացել է դէպի Երկիր ուղղամիտների տեղափոխուել եւ արշաւախումբ կազմելու վրայ յայտնեց ներկայացուցիչը: Թաղամիտների տեղափոխութիւնը շատ աջող է տարուել, որը մինչեւ օրս էլ շարունակուում է: ունին երկու գիծ — մէկով կատարուում է հրացանների, իսկ միւսով փամփուռչուների տեղափոխութիւնը դէպի Վրէժստան եւ Գաղթային<sup>8</sup> սակայն մի գիծը որով անցաւ Երկաթը՝ վտանգուած է, այդ խմբի կուռի բընընկու եւ ոչնչանալու պատճառով, որի հանգամանքները մինչեւ օրս էլ պարզուած չէ: Բիւրոյի կարգադրութեամբ արշաւախումբին մասնակցողների թիւը 30 հոգուց աւելի լինելու չէր, բայց մի քանի յարգելի պատճառներով խմբի թիւը անհրաժեշտ համարուեց մեծացնել: Նախ այդ ձեռնարկը, որ պիտի կատարէր արշաւախումբը, հնչակեանների 14 հոգուց կազմած արշաւախումբի պատճառով փչացաւ եւ երկրորդ սահմանագիծը վտանգուելուց յետոյ թեթեւ խմբով այն ձեռնարկը, որ ծրագրուած էր արշաւախումբի համար դժուար իրա-

գործելի էր. եւ երրորդ՝ այդ խումբը երկու մասից էր, որոնցից մէկը միւսին օգնութեան էր հասնելու եւ նրա պատեւու նպատակի կատարմանը:

Մրգաստանում յարաբերութեան մէջ ենք մտել հրնչակեանների եւ թուրք տարրերի հետ: ունեցած յարաբերութիւնը աղողութիւն է խոստանում: Մեզնից աւելի շատ ժամանակ խլել է Վանքի<sup>10</sup> հետ ունեցած յարաբերութիւնը եւ նրանց կարգադրութիւնների մեծագոյն մասը կատարուել է Մրգաստանցոց թելադրութեամբ, ինչպէս եկեղեցական կալուածների նոյնպէս եւ ուրիշ հարցերի մէջ:

Եկեղեցական կալուածների կառավարութեան ձեռքով աճուրդի դրուելու ժամանակ այդ հարցը որոշ բարդութիւններ եւ դժուարութիւններ առաջ բերեց, ինչպէս Քասախի շրջանի դուքանները եւ վարեւահողերի շահագործութիւնը: այդ շրջանը ամբողջովին վանքապատկան է եւ տեղի հայ ժողովուրդը պարապում է այդ կալուածների եւ դուքանների շահագործումով, հետեւաբար դժուար կը լինէր առաջարկել եւ ստիպել նրանց, որ նրանք ձեռք վերցնէին:

Մեզանում դատավարութեան դէմ լինելով դատական գործեր չենք վերցրել, թէ եւ այդ հարցը մեզ էլ զբաղեցրել է եւ մեր վերջին Շրջանային ժողովում ձայների մեծամասնութեամբ անցաւ՝ ընդունել դատական գործերը: կենտր. կոմիտէն խոստովանուում է որ շատ դժուար է ներկայ ուժերով տանիլ այդ գործը, իսկ եթէ շրջանային ժողովում էլ անցնի այդ հարցը, այն ժամանակ հարկաւոր է առանձին մարմին առաջ բերել լուրջ ծրագրով: հակառակ դէպքում կարող է ծայրայեղութեան եւ այլ գեղծումների պատճառ դառնալ: Ունին նաեւ Գիր կոչուած մի ընկերութիւն, որ առանձին կազմակերպութիւն է: վճեցին Դաշնակցութեան ձեռքի տակ առնել այդ ընկերութիւնը, աւելացնել ընկերութեան դաշնակցական անդամների թիւը: Այդ ընկերութիւնը ունի քաղաքում եւ գաւառի զանազան կէտերում մինչեւ 12 մեծ եւ փոքր գրադարաններ, պահում է 18 դպրոց 800 աշակերտներով, ուսուցիչների ուժերին էր մի մասը տալիս է Գիր ընկերութիւնը, մինչեւ 500 ուսուցիչ, իսկ մնացած ծախսը հոգում է ժողովուրդը:

- 4.- Շարայի շրջանը՝ Շորագեալն է:
- 5.- Ճամբորդի շրջանը՝ Նախալան գիւղն է, Կաղզուանի մօտ:
- 6.- Թախտը՝ գաւառական շրջան է Կարսի եւ Կաղզուանի միջեւ:
- 7.- Թուման Թումեանց:
- 8.- Կրէժստանը՝ Ատրպատականն է. գաղթային, գաղթաչէն կան գաղթաւայր՝ թուրք-պարսկական սահմանագլուխի վրայ գտնուող Ս. Թաղի վանքն է, որ յայտնի էր Մեմաւոր ծածկանունով:
- 9.- Աշոտ-Երկաթն է. յեղափոխական մարտիկ եւ գործիչ, որ մասնակցած է 7.3.7. 9. Ընդհանուր ժողովին:
- 10.- Վանքը՝ Եջմիածինն է:

Ժողովրդին զէնք անհրաժեշտ է եւ պահանջն էլ մեծ է, որին աշխատում ենք ըստ կարելոյն բաւարարութիւն տալ ի նկատի ունենալով թուրքերի գաղտնի գինման հանգամանքը:

Մրգաստանի շրջանում կատարուել են հետեւեալ ահաբեկութիւնները: Սարգիս Անթէկեան<sup>11</sup> կալուածական խնդրում հակազգային ընթացք ցոյց տալուն համար: 2) ...րպետինը, որ ցուցակով մատնել էր Ղամարլուի կոմիտէի անդամներին: 3) Ս. Թարվերդեանինը, որպէս պոլիցիական լրտեսի, տեղական կոմիտէի որոշմամբ: 4) ..... իր կատարած բազմաթիւ շարագործութիւնների համար: 5) ..... 6) .....

Ղամարլուից աքսորուել են կալուածական հարցի համար 10 հոգի, բանտարկուել են 18 հոգի: Երեւանից աքսորուել են 28 հոգի, Նոր-Բայազէտից՝ 10 հոգի, Գիւլլիճայից՝ 9 հոգի<sup>12</sup>:

Մրգաստանի շրջանում հնչակեանները միայն երեք կէտերում ունեն կազմակերպութիւն: Քաղաքում արդէն սկսել են քայքայուել, թէեւ ունեն մի քանի խմբեր: Ղամարլուի նրանց կազմակերպութիւնը, որն այնքան էլ ուժեղ չէ, թաքցալուծեան արդիւնք է: Մրգաստանի շրջանի գիւղերում հնչակեանները գինուորներ են հանել գործերը խանգարելու համար եւ այդ պատճառով մեր կազմակերպութիւնը ստիպուած է ինքն եւս գինուորներ հանել շրջելու գիւղերը որպէս մի հակադիր ուժ:

Համաձայն Դաշնակցութեան կանոնների Մրգաստանում ներքին կազմակերպութիւնը հետեւեալ պատկերն ունի: Քաղաքում գտնուում է Կենտ. Կոմիտէն 7 հոգուց կազմուած, մի ազատ անդամով, որը վարում է Մրգաստանի շրջանի բոլոր յեղափոխական գործերը: Խմբերը կազմուած են առնուազն 7 հոգուց սկսած մինչեւ 30 հոգի: Իւրաքանչիւր խումբն ունի մի խմբապետ եւ մի գանձապահ: մէկը վարում է խմբի գործերը եւ կապ պահպանում տեղական մարմնի հետ: Իսկ երկրորդը վարում է խմբի դրամական գործերը: առնուազն 5 խումբը, իսկ աւելին մինչեւ 20 խումբ ընտրում են մի ենթակոմիտէ 5-7 հոգուց կազմուած: 5-7 կամ աւելի ենթակոմիտէները կազմում են մի կոմիտէ, այնպէս որ Մրգաստանի շրջանում կայ 150 ենթակոմիտէ, 2398 խմբերով, 27 կոմիտէ եւ մէկ կենտր. կոմիտէ: Կազմակերպուած գիւղերի թիւը հասնում է մինչեւ 272 գիւղերի: Կազմակերպութեան ծաւալի տարածմանը, մանաւանդ մի քանի շրջաններում, նպաստեցին եւ տեւորները եւ եկեղեցական կալուածների գրաւման հարցը: Մուտք եղել է այս տարուայ ընթացքում մօտաւորապէս 60000 ռուբլի, որից 50000-ը գիւղերից է: Իսկ 10000-ը քաղաքից: 40-45000-ը ծախք է եղել, իսկ կանխիկ փող կայ մօտ 13000 ռուբլի: Եկող տարի մուտք սպասուում է 50000 ռուբլի: Պրոպագանդը ընդհանրապէս թոյլ է եղել շրջիկների պակասութեան պատճառով: ընդամենը ունեցել ենք երկու շրջիկ, այնտեղ անհրաժեշտ է ունենալ

առնուազն 8 շրջիկ:

Որովհետեւ չունենք մշակուած ծրագիր, այդ պատճառով էլ գինուորական խմբերի եւ կազմակերպութեան գործը թոյլ է առաջ գնում: Թէեւ դիմողներ շատ են լինում: ուստի անհրաժեշտ է համարուում ունենալ մշակուած գինուորական ծրագիր: Առանձնապէս աչքի է ընկնում մեր քաղաքում պատահած հետեւեալ դէպքը: Գիմնագիայի դիրեկտորը արգելել էր հայ աշակերտներին տօնելու Թաղէոս եւ Բարդուղիմէոս առաքելների տօնը, կազմակերպութիւնը դիմեց այդ առթիւ նրան եւ առաջարկեց զգուշ լինել այդպիսի խնդիրների վերաբերմամբ: դիրեկտորի վրայ այդ բանը մեծ ազդեցութիւն է արել եւ նա հայ աշակերտներից ներողութիւն է խնդրել:

Իեկտեմբերի 11-ի նիստը

III Ոսկանապատի [Բագու] մասին գեկուցումը: Ոսկանապատի ներկայացուցիչը ձեռքի տակ չունենալով նիւթեր եւ հաշիւներ, մանրամասն տեղեկութիւններ տալու հնարաւորութիւն չունեցաւ: միայն այսքանը յայտնեց, որ ունին 185 խումբ մօտ 5000 անդամներով: զուտ ամսականներից գոյանում է 3000 ռուբլի: վիճակախաղից արդիւնք է եղել 20000 ռուբլի: Իսկ ուրիշ մանրամասն տեղեկութիւններ չկան:

Ոսկանապատի II կոմիտէի ներկայացուցիչը, որին Մայիսեան Երջանային Ժողովը որոշել էր ձայնի իրաւունքով մասնակցելու շրջանային Ժողովներին, գեկուցեց հետեւեալը: կոմիտէն ընտրուած է Մայիսից — ունի 80 խումբ: մուտք եղել է 10000 ռուբլի — 4500 պատահական աղբիւրներից, իսկ մնացածը զուտ ամսավճարներից: Այդտեղ կազմակերպութիւնը ըստ պրոֆեսիաների է: գործակատարներն առանձին խումբ են կազմում, բանուորներն առանձին: բոտոլչիները առանձին ըստ պարապմունքի: կազմակերպութեան մէջ են մտել նաեւ կառավարիչները: 2% տուրքի վճարումը մեզանում ընդունուած է եւ գործադրուում է: Թէ գործակատարները եւ թէ կառավարիչները թուով 83 հոգի համաձայնուել են վճարել 2%-ի տուրքը Դաշնակցութեան:

Անցեալ տարի պատահական տուրքերը կազմում էին ընդհանուր մուտքի 50%-ը, իսկ ներկայումս քանի գրեթե պակասում է եւ հասել է 18%-ի: Այս շրջանում կազմակերպական գործերը առանձին բնաւորութիւն ունեն շնորհիւ բանուորութեան առաջ բերած հարցերի: որովհետեւ ներկայումս ամենամեծ կազմակերպուած

11.- Ազգանուան ստուգութիւնը կարելի չէ երաշխաւորել: Բնագրի այս էջին կարելուք մէկ մասին սեւցած ըլլալուց պատճառով վերծանուած մասամբ միայն կարելի եղաւ: Ամբողջութեամբ կամ մասամբ արուած բառերը նշուած են կէտերով:  
12.- Ղամարլուց այժմու Արտաշատն է: Գիւլլիճայ վարդեգիս գիւղը ապարանի շրջանին մէջ:

ոյժը ներկայացնում է Դաշնակցութիւնը, ուստի եւ առանց դաշնակցականների միջամտութեան ոչ մի բանաւորական շարժում չի կարող այն համաքը ունենալ, ինչ որ առաջներում ունենում էր եւ այդ գիտակցելով միւս կազմակերպութիւնները, ինչպէս սոցիալ-ուեւոլուցիոներները եւ սոցիալ-դեմոկրատները, միշտ իրենց ձեռնարկութիւնների ժամանակ դիմում են մեզ եւ մենք առանց մեր խորհրդակցութեան թոյլ չենք տալիս մեր բանուորներին մասնակցելու գործադուլներին:

Մենք որպէս պաշտպան մեր բանուորների շահերի միշտ նրանց կողմն ենք բռնում եւ աշխատում ամէն դէպքում նրանց առաջնորդողները լինել: Այս շրջանում հայ բանուորների թիւը աւելի շատ է միւս ազգութիւնների բանուորներից եւ մեր ոյժն առանձին աչքի է ընկնում: առանց մեզ մեր միւս կազմակերպութիւնները իրաւունք չունեն գործ անելու, որովհետեւ յայտարարել ենք, որ հակառակ դէպքում կը խանգարենք եւ այս հանգամանքը ի նկատի են առնում: Սոց.-դեմոկրատները պառակտուել են եւ առանձին ուժ չեն ներկայացնում, սոց.-ուեւոլուցիոներներն էլ թոյլ են, բայց վայելում են մեր առանձին համակրանքները: գործադուլների ժամանակ օգնութեան կարիք մինչեւ օրս առաջ չի եկել եւ սովածութեան հարց չէ եղել: բանուորները կարողացել են դիմանալ:

Այս շրջանը բաժանուած է 5 ռայոնի, որոնք ունին իրանց ենթակոմիտէները 3-5 հոգի կազմով: 80 խմբի համար ունենք 2 շրջիկ ամսական 50 ռուբլով, սակայն էլի պրոպագանդը թոյլ է առաջ գնում եւ եղած պահանջին բաւարարութիւն չենք տալիս: այս կողմից առանձնապէս աչքի է ընկնում միւս կազմակերպութիւնների գործունէութիւնը, մանաւանդ գրականութեան կողմից, որ բրոշիւրներով ու թուղցիկներով հեղեղում են այդ շրջանը: Իւրաքանչիւր բանուորի տուրքը համապատասխանում է 2%-ի Դաշնակցութեան տուրքին:

Այս շրջանում կազմակերպուել է Սահակ-Մեսրոպեան «Գրասիրաց» ընկերութիւնը կիսով չափ դաշնակցական, որը կազմակերպել է դպրոցներ գաւառներում, ունի գրադարաններ: այս ընկերութիւնը Դաշնակցութիւնից ազատուելու միտումներ է ցոյց տալիս, բայց մենք կ'առնենք մեր ձեռքը:

Այս շրջանում կայ նաեւ գրագիտութիւն տարածող ընկերութիւն (դաշնակցական), որ պահում է 800 աշակերտ: ունի 35 ուսուցիչ — 6-ը ուժեղով: ուսուցիչների ամսավճարների քանակը հասնում է 250 ռուբլու, որը ծածկուում է զանազան ֆիրմաների տուած ամսեայ նպաստներով: նայած ֆիրմայի, այդ նպաստները հասնում են 30-50 ռուբլու: առանձին ամբամսականներ չկան: Սովորեցնում են հայերէն եւ թուրքաբանութիւն: այս գործի կանոնաւորման համար անհրաժեշտ է, որ մեր ձեռնհաս ընկերներից մի քանիսը մտնեն այդ ընկերութեան մէջ որոշ հսկողութիւն ունենալու համար

գործի ընթացքի վրայ:

Կազմակերպուած է նաեւ կարմիր խաչի ընկերութիւնը, որ թէեւ նոր է, բայց շատ եռանդոտ գործունէութիւն է ցոյց տալիս եւ ունի 7 խումբ: Յանկալի է համարուում երեկոյթների արդիւնքը յատկացնել կարմիր խաչին ոյժ տալու համար: կայ «անյաղթ» անուանով կազմակերպուած գինուորական խումբ, զուտ տաճկահայերից՝ Երկիր գնալու նպատակով: նշանակուած ինստրուկտոր<sup>13</sup> կայ, որ պարապում է նրանց հետ գիւնավարծութեամբ խմբի ծախսով:

Երջանը յարաբերութիւն է պահպանում նաեւ հեռաւոր վայրերի հետ, որոնք փող են ուղարկում եւ կազմակերպուած են, թէեւ լուր կայ, որ ինքնագլուխ կատարել են: ստուգութեան կարօտ է: Քաղաքում շանտաժիստ Ահարոնեանը եւ այլ 2 հոգի նամակներով հարուստներից փող էին պահանջել: առաջինին խփեցին: վիրաւորեց միայն, իսկ միւսին այդ շրջանից աքսորեցին: Մի տեւոր ինքնագլուխ կատարուել է եւ անօրէն ձեւով, իսկ Ն-ի տեւորը կատարուել է որոշման համաձայն:

Քաղի [Ալեքսանդրապոլ] Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ գեկուցումը:

Այս շրջանի յեղափոխական գործունէութիւնը կենտրոնացել է գլխաւորապէս հարեւան կենտր. կոմիտէներին օգնութեան հասնելու մէջ թէ արշաւախմբերի եւ թէ Երկիր ռազմամթերք փոխադրելու գործում: Ձեռք է բերուած բաւական մեծ քանակութեամբ ռազմամթերք: խմբերի պատրաստութիւնների մեծագոյն մասը կատարուել է Քարում: ձիերի գնումը, սպիտակեղէնների, գրաստների եւ խմբի պատրաստութիւնների պէտքերը հոգացուել են այստեղ: տեղափոխութիւնը դէպի հարեւան կենտ: կոմիտէների շրջանը կատարուել է մեծ աջողութեամբ: վտանգման ոչ մի դէպք չէ պատահել մեր ձեռքով կատարուած տեղափոխութիւնների ժամանակ: տեղափոխութեան գործը շատ կանոնաւոր է, որ ամէն յարմար դէպքերից օգտուում են եւ հնարաւորութիւն են ունեցել նոյնիսկ միանգամից մինչեւ 70000 փամփուշտ փոխադրել: Պահեստները շատ ապահով են եւ վտանգման դէպք չի պատահել: միայն ապրանքները վտանգուել են երբ ուրիշ տեղերից փոխադրութեան ժամանակ նախապէս մեզ իմաց տրուած չէ եղել, որի համար հրաւիրում ենք ուշադրութիւն դարձրել: վտանգուած ապրանքներից հնարաւոր է եղել երկաթուղու պահեստներից 3 անգամ գողանալ ապրանքները, — իւր<sup>3</sup>, փամփուշտ եւ կոթեր, չնայած մեր շրջանի առանձին խտութիւններին: Անցեալ տարուայ 800000 փամփուշտների գողացումը շա վատ է ազդել կառավարութեան վրայ, որը կարծում է թէ Քարը յեղափոխական ռազմամթերքի շտեմարանն է եւ աշխատում է նե-

13.- Սարգիս, վարժեցնող:



րելի եւ աններելի միջոցներով բաց անել յեղափոխական գաղտնիքները: Այդ տեսակի մի տխուր դէպք տեղի ունեցաւ այսպէս. պահեստի վրայ նշանակուած սպաներից մէկը զինուորներին սովորեցնում է խաբելով մեր մարդկանցը տանել պահեստ եւ բռնել տալ: զինուորին յաջողուում է այդ միջոցով վտանգել երեք հոգու, որոնց չնայելով Քարի կոմիտէն, հասկանալով խաբեբայութիւնը, արգիլել էր գնալ, բայց էլի գնացել են հնչակեանները մէկի հետ. խօսուում է որ երբ մենք յայտարարեցինք եւ զգուշացրինք հնչակեաններին չգնալ, նրանք չհաւատալով մեզ՝ փող են տուել տղաներին եւ ուղարկել, կասկածելով մի գուցէ դաշնակցականները որոգայթներ են լարում դուրս բերուած ապրանքները իրենց ձեռքը ձգելու համար. ստուգութեան կարօտ է այս կէտը: Այս տարի Քարը անցնող խմբերին տուել է մեծ քանակութեամբ զինուորներ եւ ունի տեղական զինուորական 4 խմբեր. սակայն ինստրուկտորի<sup>13</sup> պակասութեան պատճառով կանոնաւոր զինավարժութիւն չի լինում: Զէնքի եւ ռազմամթերքի գնումը բաւական մեծ է եղել, սակայն նիւթերի պակասութեան պատճառով ճիշտ թուերով ներկայումս ցոյց տալ անկարող էր: Յեղափոխական գիտակցութիւնը հետզհետէ աւելի է աճում ժողովրդի մէջ եւ մեծ ծաւալ ստանում: Ժողովուրդը խոստովանելով յեղափոխութեան մեծ ուժը, յեղափոխական կազմակերպութիւններին իբրեւ իւր ներքին կառավարութիւնը ճանաչելով, ցանկութիւն է յայտնում իր բոլոր ներքին կառավարչական, դատական եւ ընկերական գործերը յանձնել յեղափոխականների ձեռքը, սակայն կազմակերպութիւնը չունենալով բաւականաչափ ձեռնհաս ուժեր՝ դժուարութեան մէջ է. գաւառական ինչ որ տեղերից աւելի Քարի շրջանում է զգալի յեղափոխութեան ազդեցութիւնը, որ կրթիչ նշանակութիւն է ունեցել ժողովրդի վրայ եւ բաւականաչափ յեղափոխել է նրա կեանքը. կոլիւնները, հարեցողութիւնը, թղթախաղը (ղումար), գողութիւնը եւ այլ ախտերը՝ զգալի չափերով պակասել են: Յեղափոխութիւնը շատ աւելի մեծ ազդեցութիւն կ'ունենայ ժողովրդի վրայ, եթէ ուժեղ եւ կանոնաւոր պրոպագանդա լինի. ոչ մի կանոնաւոր շրջիկ չկայ. սկսած Օգոստոս ամսից, երբ հեռացան շրջիկները՝ տեղական անպատրաստ միջոցով է առաջ տարուում գործը. եթէ այսպէս շարունակուի կարող է թուլանալ այդ շրջանում յեղափոխական գործունէութիւնը, անհրաժեշտ է գոնէ առնուազն երկու լաւ շրջիկ ունենալ: Սկզբունքով դատավարութիւնը չի ընդունուել կոմիտէի կողմից, աչքի առաջ ունենալով գործի բարդութիւնը եւ դժուարութիւնը. փորձի համար միայն մի շաբթով ընդունուեց, որ լաւ հետեւանքներ ունեցաւ. ջիւղերներին<sup>14</sup>, գողերին սկսեց հալածել սակայն հանդիպելով դժուարութիւններ եւ նկատելով որ դատավարութիւնը այնքան մեծ ժամանակ է խլում, որ յեղափոխական գործերը կարող են

կաղալ՝ թողեց մինչեւ ռազմական ժողովների վերջնական եզրակացութեան գալուց առաջ հարցի առթիւ, մանաւանդ որ կենտ. կոմ. ի անդամների մեծագոյն մասը հակառակ է դատավարութեան:

Պրոպագանդի պակասը լրացնելու եւ նիւթական հասոյթը աւելացնելու համար՝ տեղական կազմը առանձին ուշադրութիւն է դարձրել երեկոյթներ կազմելու վրան, որը բաւական աջող է գնացել եւ բաւական թուով երեկոյթներ է տրուել. սրանք շատ լաւ ազդում են գաւառական ժողովրդի վրայ:

Քարի շրջանում հնչակեանները բաւականաչափ ուժ ունեն. Քաղաքում 35 խումբ կայ, իսկ գիւղերի մասին ճիշտ տեղեկութիւն չկայ. հաւանականորէն 40-50 գիւղ կ'ունենան: Նրանց մասնաճիւղի մէջ գտնուում են՝ մի բոխիկ, երկու ուսուցիչ եւ երկուսն էլ քաղաքացի. ընդհանրապէս նրանց հետ Դաշնակցութեան կազմի յարաբերութիւնները լաւ չեն, թէեւ լարուած էլ չէ. փորձեր եղել են միջնորդ դատարանների, խառն ժողովների, բայց անհետեւանք են մնացել: Հնչակեանները ամէն առիթից աշխատում են օգտուել Դաշնակցութեանը թուլացնելու, բայց չի յաջողում նրանց: Մայիսից սկսուած պրոպագանդայի շնորհիւ հնչակեաններից մօտ 8 խումբ, միւս գիւղ եւ մօտ 200-ի չափ անհատներ մտել են դաշնակցական կազմակերպութեան մէջ. սակայն վերջերս գիւղերում թափախականութեան եւ պրոպագանդայի թուլութեան պատճառով մեր գիւղերից մի քանիսը մերժել են մտնելու հնչակեանների կազմակերպութեան մէջ. գործը դեռ քննուում է եւ դեռ չէ վերջացել: Ընդհանուր առմամբ հնչակեաններին դիմողները կամ մի որեւիցէ պատիժ կրելուց եւ կամ պատժից ազատուելու եւ պաշտպանութիւն գտնողներ են լինում: Օրինակներ շատ կան: Հնչակեանները նաեւ շատ անգամ դիմում են եւ մեր խմբերի անդամներից ուժով փող հանգանակում եւ տուգանքի ենթարկում. այդ հողի վրայ մեր եւ նրանց մէջ ընդհարում առաջ եկաւ, որը յանձնուած է միջնորդ դատարանին եւ դեռ չէ վերջացել:

Շատ հարցերում հնչակեանները պրեստիժի խնդիր են գործեցնում եւ աշխատում են խանգարել մեզ. մենք կազմակերպել ենք կարմիր խաչի օգտին ներկայացումներ. որովհետեւ դահլիճը հնչակեանի էր պատկանում, ազդեցին այդ պարոնի վրայ. չտալ դահլիճը մեզ. առաջարկում էին միացած ոյժերով տալ ներկայացում, որ ժողովուրդը չասի, թէ ինչու Դաշնակցութիւնը ներկայացումներ տալիս է, իսկ հնչակեանները ոչ, եւ նրանցից երես դարձնի:

Քարում կայ կենտ. կոմիտէ մինչեւ Թ անդամից կազմուած, որոնցից երկու անդամը վարում են գիւղական գործերը, 3-ը զինուորական-ռազմական գործերը եւ զեկուցում տալիս կոմիտէական ժողովներին: Ներկա-

14.- Զիրգիրներին՝ քսակախատներուն:

յումս զինուորական յանձնախումբը կազմալուծուած է եւ գործերը բաժանուած են կենտ. կոմիտէի անդամների մէջ: Քաղաքում կայ ղեկավարող մարմին, որ վարում է զուտ խմբական գործերը: Խմբերի թիւը այս տարի մեծ չափով աճել է. տարուայ սկզբում ունեցել են միայն 35 խումբ, իսկ ներկայումս ունին մինչեւ 181 խումբ. խումբն իր միջից ընտրում է 2 հոգի. մէկը խմբական գործերը վարելու համար — խմբապետ, իսկ միւսը խմբի դրամական գործերի համար — գանձապահ: Իւրաքանչիւր 10-15 խումբ ունի մի տասնապետ, որ վարում է իւր ձեռքի տակ գտնուած խմբերի գործերը. տասնապետների ժողովը կոչուում է ղեկավարող մարմին, ուր վճռում են խմբական եւ նաեւ քաղաքի վերաբերեալ թեթեւ գործեր: Ղեկավարող մարմինը ունի իր ներկայացուցիչը, որի միջոցով կապ է պահպանում կենտ. կոմիտէի հետ: Քաղաքի խմբերի պրոպագանդը տանում են խմբերի ներկայացուցիչը եւ կենտրոնի կոմիտէի անդամներից ձեռնհաս մարդիկ: Թերթերի եւ թուղթիկների պակասութիւնը թուլացնում է պրոպագանդի գործը. հարկաւոր է կանոնաւորել: Այս շրջանում կայ երեք կոմիտէ, Շահմուտ, Թումբ եւ Անտառապատում իրանց շրջակայ գիւղերով: Թումբը 60-ից աւելի կազմակերպուած գիւղեր ունի, իսկ ընդհանուր շրջանի գիւղերը, որ դուրս են 3 կոմիտէների շրջանից, հասնում է մինչեւ 110-ի եւ բաժանուած են 3 ռայոնի: Գիւղերը համայնական կազմակերպութիւն ունեն, իւրաքանչիւր գիւղում կայ ենթակոմիտէ մինչեւ 5 հոգուց կազմուած. ենթակոմիտէների եւ առհասարակ գիւղական գործերի կանոնաւոր ընթացքի վրայ հսկելու համար կան վերատեսուչներ, որ կապ են պահպանում գիւղական մարմինների եւ կենտրոնական կոմիտէների հետ:

Գիւղերում մի քանի տեղ կան գրադարաններ եւ ձեռնարկում են ուսումնարաններ բաց անելու գործին: Ներկայումս գիւղական գործին աւելի լաւ ընթացք տալու համար մտադրուում է կազմել յատուկ մի կոմիտէ, որ գրադուելու է գիւղական գործերով:

Բացի այս մարմիններից քաղաքում կայ նաեւ կարմիր խաչի կազմակերպութիւն, որ ներկայումս մեծ եռանդ է ցոյց տալիս իր գործունէութեան մէջ: Ինը կանանց խմբեր, որոնց նպաստներն անմիջապէս յեղափոխական դրամարկղն էր մտնում, կենտր. կոմիտէի որոշմամբ եւ կանանց խմբերի համաձայնութեամբ մըտան կարմիր խաչի կազմի մէջ նրան աւելի ոյժ տալու նպատակով: Կարմիր խաչի եւ կենտր. կոմիտէի յարաբերութիւնները պահպանում է կենտր. կոմիտէի կողմից նշանակուած ներկայացուցիչը, որ կարմիր խաչի նիստերին միշտ ներկայ է լինում: Բացի մշտական այսպիսի մարմիններից գոյութիւն ունեն պարբերաբար գումարուող հաւաքական մարմիններ. 1) խմբապետների ժողով եւ 2) գիւղական ներկայացուցիչների ժո-

ղով: Քաղաքի խմբապետները ամիսը կամ երկու ամիսը մի անգամ նայելով յարմարութեանը՝ ժողով են ունենում, ուր քաղաքային ընդհանուր բնակչութիւն կրող յեղափոխական եւ այլ հարցեր են քննադատում, ղեկավարող մարմին, տասնապետների, խմբապետների եւ խմբերի գործունէութեան հաշիւ է տրուում, եւ եթէ հարկաւոր է համարուում կատարում են նաեւ պակասած տասնապետների ընտրութիւնը: Նոյն սահմաններում եւ նոյն արտօնութիւններով գումարուում է եւ գիւղական ներկայացուցիչների ժողովը գիւղական գործերի համար: Այս շրջանի ժողովուրդը զինման պատրաստակաւութիւն է յայտնում:

Այս տարուայ ընթացքում Քարի շրջանում մուտք եղել է ընդամէնը՝ 27421 ու խմբերի ամսավճարներից՝ 9891 ու երեկոյթներից եւ այլ կողմնակի աղբիւրներից մօտ 2000 ու ենթակոմիտէներից եւ կոմիտէներից 10782 ու ծախս եղել է քաղաքում ռազմամթերքի գնման, անցնող խմբերի պատրաստութեան եւ տեղական պէտքերի վրայ՝ 20305 ու ենթակոմիտէների ծախս՝ 1344 ու ընդամէնը ծախս կարելի է հաշուել՝ 21600 ու կանխիկ պատրաստի դրամ՝ 5770 ու Բարձրաւանդակ<sup>15</sup> փոխադրուած է դրամ Բիւրոյի գիտութեամբ մեր միջոցով՝ 3300 ուրբլի, որի մեծ մասը տեղ հասել է: Աքսորեալների եւ բանտարկեալների ցուցակը ձեռքի տակ չունենալով դժուար եղաւ իմանալ նրանց թիւը, միայն վերջին ամիսներում աքսորել են 10 հոգի. տեւորի 4 դէպք է եղել. 1) Մի յունադաւանութիւն ընդունած հայ մատնիչ, որ գործակից էր յունաց քահանային եւ մատնութիւններ էր կատարում. 2) Մեծ Փափանակ[?] գիւղից տէր Գրիգորը, յայտնի մատնիչ եւ դաւաճան, որ նոյնիսկ յունադաւանութեան պրոպագանդա էր անում հայ գիւղացիներին մէջ. 3) Պրիստաւ<sup>16</sup> Նայանսկին, որ ծայրայեղ եռանդ էր ցոյց տալիս յեղափոխութեանը վրնասելու, գործակից ունենալով թուրք ոստիկան Մահմատին: Այս չորսից ահաբեկչները միայն երկուսին լուպանեցին, իսկ երկուսին ծանր վիրաւորեցին: Միայն քահանայի ահաբեկիչներից մէկը բռնուեց, որ ներկայումս բանտարկուած է:

Ժլատ [Հիւս. Կովկասի Արմաւիրի շրջան].— Ժլատի կոմիտէի ներկայացուցիչը զեկուցեց, որ այդ շրջանը շատ լայնածաւալ է եւ որի շրջանի մէջ մտնում են հիւսիսային Կովկասի հայաշատ տեղերի մեծ մասը. մի կոմիտէ ունեն ժլատում եւ 8 ենթակոմիտէ գանազան վայրերում. խմբերի թիւը հասնում է 31-ի. ունեն 10 հոգուց կազմած մի զինուորական խումբ, որ պատրաստ է Երկիր գնալու:

Այս շրջանում ռազմամթերք շատ է ձեռք բերուում,

15.- Բարձրաւանդակը Սասունն է: 16.- Ցարական ոստիկանապետ:



առաւելապէս նորի ծայրեր<sup>17</sup> հատը 3.5 կոպէկով մինչեւ հիմա գնուած է 36242 ծայրեր, որ բոլորն էլ համարեա փոխադրուած է Ոսկանապատ, Մեծ քաղաք եւ Մորթաստան վտանգուած է միայն՝ 1300 հատ մնում է 3780 ծայր ներկայումս ունին 1 մոսին, 22 բերդան, 1 նազանի ատրճանակ, 3 բրաունիկ եւ 2 դաշոյն: Թէ որքան գէնք է գտնուում ժողովրդի ձեռքին՝ տեղեկութիւններ չկան, բայց ժողովուրդը տրամադիր է գինուելու եւ պէտք է անպայման գինել այդ շրջանի հայ ազգաբնակչութեանը ի նկատի ունենալով մի քանի կարեւոր հանգամանքներ:—

Այս շրջանում բացուել է 2 գաղտնի ուսումնարան գրադարան, որ սակայն աղքատ է յեղափոխական գործերի կողմից: Եկեղեցական կալուածների գրաւումը եւ ներկայ պատերազմը<sup>18</sup> սրել է հայ ազգաբնակչութեան յարաբերութիւնը ուսու տարրի հետ, որ պէտք է ի նկատի ունենալ:

Կազմակերպութիւնը այս շրջանում նոր է, անցեալ Դեկտեմբերից եւ հասոյթ ունեցել է մօտ 12000 ուղբլի, բայց երբ առանձին եռանդ ցոյց տրուի կարելի է մուտքը հասցնել մինչեւ 80000ի: Դաշնակցութեան յաջողութեանը նպաստեցին Հնչակեանները իրենց բռնի փող հաւաքելու սխտեմով: Երբ համաձայնելով նրանք լռի մեցին) հարուստներին, վերջիններս նրանց չհաւատաւրով մեզ են տալիս: Հնչակեաններ կան միայն Արմաւիր) եւ այն էլ շատ քիչ թուով:

**Մեծ քաղաք [Թիֆլիս].**— Մեծ քաղաքի կենտ. կոմիտէի ներկայացուցիչը գեկուցեց, որ այդտեղ կենտ. կոմիտէն հագիւ 3 ամիս է, որ կազմակերպուել է եւ դեռ մի առանձին գործունէութիւն չէ ցոյց տուել, մանաւանդ որ Բիւրոն շատ անգամ ինքն է կատարել կենտ. կոմիտէների գործերը: դրամական հաշիւը խոստացւեց առանձին ներկայացնել: Մեծ քաղաքում կայ նաեւ կոմիտէ, որ կառավարում է 80 կազմակերպուած խումբերին: Կայ նաեւ գինուորական մի խումբ մօտ 300 հոգուց կազմուած, որոնց համար վարձուած է մի հմուտ մարզիչ: ընդհանրապէս այս շրջանում գործը լաւ հիմունքների վրայ է դրուած եւ յոյս կայ ապագայում աւելի լաւանալու: կազմակերպել են շրջիկ-պրոպագանդիստներ պատրաստելու համար մի շկոյա<sup>19</sup>, ուր 8-10 միջնակարգ կրթութեան մարդկանց հետ մի ձեռնհաս անձնաւորութիւն պարապում է խօսելով հայ յեղափոխական պատմութեան մասին, ծանօթացնում է սոցիալիզմի, դեմոկրատիայի եւ այլ հասարակական ու գիտական հոսանքների հետ, աւանդում է ֆրանսիական յեղափոխութեան պատմութիւնը եւ տալիս է ընդհանուր եւ հայոց պատմութիւնից կարեւոր տեղեկութիւններ: կանանց խմբեր կան, թէեւ թոյլ են: Այս շրջանում կարմիր խաչի կազմակերպութիւնը այլ հիմքերի վրայ է դրուած: երկու մասի են բաժանուած:— մէկը տեղեկու-

թիւններ է հաւաքում կարօտեալների մասին, իսկ երկրորդը՝ օգնութիւն է մատակարարում: ունի ներկայացուցիչ, որ կապ է պահպանում կենտր. կոմիտէի հետ: ռազմամթերքի հաշիւը առանձին է ներկայացնելու:

**Դեկտեմբերի 12-ի նիստը**

**Նաւահանգիստ [Պաթում].**— Նաւահանգիստի կենտր. կոմիտէի ներկայացուցիչը գեկուցեց հետեւեալը:— Այս շրջանի յեղափոխական-ռազմական գործը եղել է ուղարկուած ռազմամթերքի տեղափոխութիւնը, տեղումը ձեռք բերել ռազմամթերք եւ կազմակերպել գինուորական խումբ, որի թիւը հասնում է 12-ի, խառը տաճկաստանցիներից եւ ուսաստանցիներից: գինուորների թիւը բոլոր խմբերում միասին հասնում է մինչեւ 300 հոգու: Ներկայումս կ'ուսնենան մօտաւորապէս 30000 փամփուշտ նորի, 10 հատ հրացան: Հին մարմինը եղել է բաւականին թոյլ եւ գործը կանոնաւոր չէ կարողացել տանել, հաշիւները անկանոն եւ խառը դրութեան մէջ է եղել, իսկ ներկայումս կանոնաւորուել է: Նաւահանգիստում կայ կենտ. կոմիտէ, որի շրջանը շատ լայնածաւալ է եւ իր մէջ է ամփոփում ամբողջ Սեւ ծովի ուսական մասերը մինչեւ Օդեսա եւ զանազան կէտերում կայ 8 կոմիտէ եւ 5 ենթակոմիտէ: ունին կազմակերպուած 71 խումբ, որոնք բազմամարդ են: 60-70 հոգուց բաղկացած խմբեր կան: Այս տարուայ մուտքը միանուագ վճարների եւ հանգանակութեան հետ հասել է մինչեւ 70000 ուղբլու: եկող տարուայ մուտքը կարելի է սպասել մինչեւ 35000 ուղբլու: Այս շրջանում պրոպագանդը ուժեղ է, ունեն մէկ գաղտնի ուսումնարան 70-80 աշակերտներով: Առանձնապէս աչքի է ընկնում այս շրջանում մերոնց յարաբերութիւնը Հնչակեանների հետ, որոնք ցոյց են տալիս բացարձակապէս իրենց գոյնը: Ուշադրութեան արժանի են հետեւեալ դէպքերը: մի հարուստից, որ Դաշնակցութեան մէջ է եւ խոշոր նուէր է տուել մեզ, Հնչակեանները դիմում են, փող պահանջում են եւ ուժի միջոցով 500 ուղբլի ստանում: Երբ գործը անցնում է կենտ. կոմիտէին՝ պահանջում են Հնչակեաններից փողը վերադարձնել, հակառակ դէպքում փող ստացողի հետ խիստ կը վարուեն:

Սկզբունք ասած բանը չկայ Հնչակեանների մէջ, որոնք կողպտելու նպատակով սպանում են մի հարուստ արթուիցի հայի եւ տանում 2000 ուղբլի: Թէ բարոյապէս որքան ընկած են եւ աւելի թափալակաւորութեան զոհ գնում, քան թէ որոշ դրօշակի ծառայում, հետեւեալ դէպքն է պատմում, որ իրապէս տեղի է ունեցել Նաւահանգիստում եւ մեծ զայրոյթ առաջացրել

17.- Ծայր փամփուշտ իմաստով:  
18.- Խօսքը 1904-ի ուս-ճափոնական պատերազմի մասին է:  
19.- Դպրոց, դասընթացը:

անխտիր բոլոր ազգութիւնների եւ կուսակցութիւնների մէջ: Նախկին Հնչակեաններից մէկը թողնում է սոցիալ-դեմոկրատների բանակը հրաժարուելով իւրայիններից: այս բանը Հնչակեանները համարելով դաւաճանութիւն՝ նրան տեւորի են ենթարկում, որի դէմ բողոքում են սոցիալ-դեմոկրատները: գործը հասնում է Բեբէլին<sup>20</sup>, որն առաջարկում է գործը քննել եւ հրաւիրել քննութեանը մասնակցելու իբրեւ լուրջ եւ հաստատ սկզբունքներ դաւանող դաշնակցական կազմակերպութիւնից մի ներկայացուցիչ եւ երբ քննութիւնը վերջանայ՝ հետեւանքը յայտնեն Բեբէլին, որ նա հրապարակով պաշտօնական բողոք տայ մի յեղափոխական կազմակերպութեան դէմ, որ չի հաւատում գաղափարի ազատութեան եւ բռնանում է մարդկանց համոզմունքների վրայ:

Այս շրջանը, ուր կապիտալիզմը խոշոր քայլեր է արել եւ արդէն առաջ է եկել բանուորական դասակարգ, Երկրի կողմից այն դրութիւնն է ներկայացնում, ինչ որ Ոսկանապատն է, որովհետեւ բանուորութիւնը մեծ մասով Դաշնակցութեան է յարել: առանց վերջինիս մասնակցութեան կամ նոյնիսկ հաւանութեան՝ միւս կուսակցութիւններն անկախ չեն կարողանում գործել եւ միշտ դիմում են մերոնց, երբ պատրաստուում են ցոյցերի: կենտր. կոմիտէն երբեք չէ հակառակել ցոյցերին, միայն արգելել է տաճկահայ բանուորների մասնակցութիւնը, ի նկատի ունենալով, որ կառավարութիւնը առանձնապէս նրանց վրայ վատ աչքով է նայում եւ իւրաքանչիւր մի խլրտում նրանց վերագրում:

Նոյնիսկ մի դէպք է տեղի ունեցել, որ երբ Դաշնակցութիւնը իւր մարդկանց թոյլ չէ տուել մասնակցելու ցոյցին, սոցիալ-դեմոկրատների ձեռնարկը քանդուել է: Դաշնակցութեան ծաւալմանը բանուորական շրջանի մէջ առանձնապէս նպաստել է մի դէպք, որ երբ մեր բանուորները գործադուլի ժամանակ փողի կարիք են զգացել եւ այդ կարիքը մերոնց ձեռքով հոգացուել է փոխարինաբար բանուորներին փող բաժանելով:

Այդ առթիւ շատ Հնչակեան բանուորներից դիմումներ եղան թէ մեզ էլ փող տուէք, կ'անցնինք ձեր բանակը, իսկ սոցիալ-դեմոկրատները իրենց դրամարկղում փող չունէին, այս պայմաններում մեր տուած օգնութիւնը Դաշնակցութեան թէ վարկը եւ թէ բարոյական ազդեցութիւնը զգալի չափերով բարձրացրեց:

Այս շրջանի ժողովուրդը եւս գինուելու տրամադրութիւն է ցոյց տալիս: կատարուել է մի տեւոր միայն, որը որոշուած է եղել Ոսկանապատի կենտ. կոմիտէի կողմից եւ երբ փախչում է այս շրջանը՝ Ոսկանապատի գիտութեամբ սպանել են տալիս՝ խաչագողութեան, խաբբայութեան եւ Դաշնակցութեան անուրը շահագործելու համար: այդ անձնաւորութիւնը եղել է կեղծ արեղայ՝ Տրիֆոն վարդապետը:— Նաւահանգիստի հնչակեանների ֆրակցիան, այն է միութիւն պահանջող-

ները, ցանկանում են միանալ Դաշնակցութեան հետ եւ մօտ օրերումս կը յանձնեն նրանք իրենց դրամական հաշիւները եւ կը մտնեն մեր շարքերը:

**Ապառաժ [Ղարաբաղ եւ Զանգեզուր].**— Ապառաժի շրջանը կապուած է Ոսկանապատի կենտ. կոմիտէի հետ եւ սկսել է աւելի ու աւելի կազմակերպուել եւ ներկայումս կազմակերպութիւնը ընդունել է շատ լայն ծաւալ: ներկայումս քաղաքում<sup>21</sup> կայ 24 խումբ, կայ նաեւ կարմ. խաչի ընկերութիւն 6 խմբով եւ ուրիշ նուիրատու անդամներ: Իւրաքանչիւր խումբ տալիս է 2 գինուոր, որ գործում է տեղական պէտքերի համար, սովորում են գինավարժութիւն: շրջակայ գաւառներում կազմակերպութիւնը աւելի մեծ քայլեր է կատարում: Ձ[անգեզուր]ում, Ղ[արաբաղ]ում, Խ[աչէն]ում եւ Ջ[իւանշիր]ում մինչեւ 240 խումբ կայ: Այս շրջանն ունի 4 ենթակոմիտէ: վերցնում են դատական գործեր եւ իւրաքանչիւր ենթակոմիտէ 3 ամիսը մի անգամ պարտաւոր է իրանց գործերի մասին հաշիւ տալ քաղաքի կոմիտէին: յանցաւորները ենթարկուում են տուգանքի, որը գործադրուում է աղքատ գիւղացիներին գինուոր համար: ժողովուրդը գինման գործում մեծ պահանջներ է անում: միայն Ն. գիւղը քաղաքի կոմիտէի օգնութեամբ իր սեփական միջոցներով ձեռք է բերել մինչեւ 40 բերդան: գէնքի պահանջի քանակը հասնում է մինչեւ 2000-ի: իւրաքանչիւր գիւղում նշանակուած է 2 գինուոր տեղական պէտքերի համար: պրոպագանդան այնքան էլ ուժեղ չէ: հարկաւոր են շրջիկներ: Այս մի տարուայ ընթացքում 53 երեկոյթ է տրուել:

Հաշիւները բերուած չլինելով՝ ելքի-մուտքի մանրամասն հաշիւ անկարող եղաւ ներկայացնել: քաղաքում վաճառականներից ամսական մօտ 300 ուղբլի է ստացւում: Խ[աչէն] եւ Ջ[իւանշիր] գաւառներից՝ 300-340 ուղբլի: Ձ[անգեզուր]ից մինչեւ 500 ուղբլի: ընդհանուր մուտքը մօտաւորապէս 9000 ուղբլու կը հասնի:

Ապառաժում առանձնապէս աչքի է ընկնում հայերի եւ թուրքերի յարաբերութեան լաւանալը, հակառակ ուսու կառավարութեան անցեալ տարուայ գործ դրած ջանքերի: աշխատում են որ թուրքերն էլ կազմակերպուեն, որոնք դէպի հայ յեղափոխութիւնը առանձին համակրանք են ցոյց տալիս: աշխատում են միշտ լաւ յարաբերութեան մէջ լինել թուրքերի հետ, այդ բանը մինչ այն տեղն է հասել, որ երբ Դաշնակցութիւնը մի լեզու տեւորի է ենթարկել, թուրքերը բողոքել են այդ բանի դէմ եւ յայտնել են, որ մեր յանցաւորներին մենք կը պատժենք եւ առաջին քայլն արել են:— մի թուրք մատնիչ ոստիկանին իրանց ձեռքով տեւորի ենթարկեցին:

20.- Աւգաստ Բեբէլ (1840-1913), գերմանացի ընկերակարական յայտնի տեսաբան եւ գործիչ:  
21.- Խօսքը կը վերաբերի Շուշի քաղաքին:

Ձ[անգեղուր]ում տեղացիների ինքնագլուխ կարգադրութեամբ ապօրինի Յ տեռոր է կատարուել. այդպիսի անկանոնութիւնը տեղի չունենալու համար՝ խիստ միջոցներ արդէն ձեռնարկուած են: Այս տարուայ ընթացքում 4 տեռոր է կատարուել. 1-ը հնչակեանների ձեռքով: Հնչակեաններն այստեղ թոյլ են. երկու խումբ միայն ունեն քաղաքում եւ գաւառում՝ Խ[նձորեսկ] գիւղի կէսը. սակայն յոյս կայ, որ նրանք շուտով քայքայուեն. Խ.-նի հնչակեանները բոլորն էլ անցել են Դաշնակցութեան կողմը:

**Վրէժստան [Ատրպատական].**— Վրէժստանի ընկերներից մէկը տեղս գտնուելով թէ եւ իր տեղի ընկերներից պաշտօնական ներկայացուցիչ չէր ընտրուած, բայց մասնակցեց ժողովին ձայնի իրաւունքով, որպէս Վրէժստանի ներկայացուցիչ: Վրէժստանը իբրեւ մէկը մեր սահմանագծային կէտերից առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում: Յեղափոխական-ուսմական գործունէութիւնը գլխաւորապէս կենտրոնացել է գինակիր խմբերի Վասպուրականի շրջանը անցկացնելու գործում: Ապրիլի սկզբին անցել է մի խումբ վեց հոգուց, Վասպուրականի ընդհանուր ներկայացուցիչ Յովհաննէսի<sup>22</sup> առաջնորդութեամբ. ճանապարհին դէպքի է բռնուում խումբը, առաջնորդը սպանուում է. նրա հետ եւ մի գինուոր. միւս 5 հոգին ապահով տեղ են հասնում. խմբի մէջ լինում է մի գինագործ. 18 հատ նոր սիստեմի հրացաններից 8 հատը կորչում է, իսկ 10 հատը 2700 փամփուշտի հետ տեղ հասնում. երկրորդ խումբը անցել է Դումանի<sup>23</sup> խումբը, որի անցնելու մասին նախօրօք տեղեկութիւններ տրուած չլինելու պատճառով պատրաստութիւնները ձգձգուում են. անցնում են 18 հոգով, սահմանի վրայ տաճկաց հողում կռուի են բռնուում. վախճող, որ իր գործի մէջ շատ հմուտ էր եւ միեւնոյն ժամանակ գինուոր՝ սպանուում է, սպանուում է նաեւ երկրորդ գինուորը եւ անաջողութեան հանդիպելով ետ են դառնում: Խոյում պարսից կառավարութեան ձեռքն է ընկնում 3 հրացան, 9000 փամփուշտ եւ դեղորայք մօտ 1000 ուղբու: Երրորդ խումբն անցաւ Սեպտեմբերի 6-ի Գ.-ի գծով, այս խմբի առաջնորդն էր Վարդանը<sup>24</sup>. խմբի մէջ կար մի ինտելիգենտ ուժ, գինուորական կրթութեան տէր մարդ, խումբը հետը տանում էր 6 հրացան 1800 փամփուշտ եւ ապահով տեղ են հասնում:

Չորրորդ անցնող խումբը Փոխիկին<sup>25</sup> էր 15 հոգուց կազմուած, ձիաւոր, որ Երկրից եկած ստիպողական նամակների պատճառով շտապեցինք ռազմամթերքի օգնութիւն հասցնել Երկրի ընկերներին. խումբը կազմուած էր ամենաընտիր եւ մեր լաւ կռուող ընկերներից, սակայն սահմանի վրայ ընդհարուում են տաճկաց եւ քիւրդերի հետ ու հերոսաբար կռուելով՝ մինչեւ վերջին մարդը ընկնում. խումբն ունեցել է 15 հրացան 15000 փամփուշտ: Վրէժստանի մեր ընկերոջ եզրակացութիւ-

նը այս է, որ միշտ ձիաւոր խմբերն աւելի շուտ են վրտանգուում եւ անյաջողութեան հանդիպում, քան հետեւակ խմբերը եւ նա կարծում է որ թեթեւ հետեւակ խումբերը աւելի յաջողութիւն կ'ունենան Երկրի խորքերը մտնելու:

Գ.-ով այս աշնան փոխադրուած է 30000 փամփուշտ, 22-23 հազարը նորի, մնացածը՝ հնի. ներկայումս X-ում ճանապարհի վրայ կայ հնի փամփուշտ 14000 հատ, իսկ Ա-ում՝ 12000 հատ եւ 20 խնձոր<sup>26</sup>. տեղ հասած կռիւների մասին որոշ տեղեկութիւն չկայ:

Վրէժստանում հրացաններ գնուած են իսկական մոսիւնի 7 հատ 200ական ուղբով, 15 բերդան՝ 45ական ուղբով. փամփուշտ նորի՝ 38000, միջին թուով հազարը՝ 28 ուղբի. ներկայումս կ'ունենան մօտաւորապէս 50-60 գէնք: Այս շրջանում տեռոր չէ կատարուել:

Վրէժստանում կոչուողական գործերն ընդհանրապէս մեր ընկերների ձեռքին է գտնուում. յոյս ունեն ժամանակի ընթացքում իրենց ձեռք ձգել բոլոր կրթական հաստատութիւնները ապագայ սերունդը կրթելու նպատակով. պրոպագանդը թոյլ է առաջ գնում, եթէ երկու ոյժ, որ խնդրել էին, մտնէին Վրէժստան՝ նրանց գործը աւելի կ'ուժեղանար. ներկայումս մերոնց ձեռքին է Սալմաստի, Լիլաւայի<sup>27</sup> եւ միւս թաղի դպրոցները: Վրէժստանի միւս շրջաններում յեղափոխական գործին զարկ տալու համար՝ Վրէժստանի ընկերներից մէկը դուրս է գալիս շրջելու, որ եռանդուն գործունէութիւն է ցոյց տուել. կազմակերպել է Գիլանի կոմիտէն. Թեհրանում էլ կազմել է Շահ կոմիտէն. անցել է Շահրութ, Բաքորոշ եւ այլ տեղեր:

Վրէժստանում կազմակերպութիւնը հետեւեալն է.— կենտ. կոմիտէն գտնուում է Վրէժում<sup>28</sup> որ տեղական պայմաններն ի նկատի առնելով ոչ թէ ընտրովի է, այլ նշանակովի. եթէ ընտրական սկզբունքով ղեկավարուելու լինեն՝ արդիւնքի չեն հասնի, որովհետեւ տեղական մարդկանց վրայ ոչ մի յոյս դնելու հնարաւորութիւն չկայ:

Ունին 11 խումբ.— երկուսը օրիորդներից է կազմուած, երկուսը կանանցից, իսկ 9-ը երիտասարդներից. եկամտի աղբիւրներն են ամսավճարները, հանգանակութիւնը եւ «մատիտ» կոչուած դրամարկղները. սրանք գանձանակներ են, որ իւրաքանչիւր դաշնակցական

- 22.- Յլեան Յովհաննէս, ծանօթ Ձոք աղա ծածկանուճով: Մասնակցած է Գ. Շոյի. ժողովին:
- 23.- Նիկոլ Դուման:
- 24.- Խանասորի Վարդանը՝ բուն անուճը՝ Սարգիս Սեիրաբեան:
- 25.- Փոխիկի ֆետայի խմբապետ, Խանասորի արշաւանքին մասնակիցներն. իսկական անուճը՝ Օհան Օհանեան:
- 26.- Ռուսթ, Գոնակ:
- 27.- Լիլաւա՝ Թաւրիզի հայկական թաղամասը:
- 28.- Վրթ, Վրթստան ընդհարապէս Ատրպատականի Կ. Կոմիտէութեան ծածկանուճն է: Այստեղ Վրթը գործածուած է շրջանի կեդրոն: Թաւրիզ թաղաքի համար:

պահում է իր տանը եւ հրաւէրների ու գանազան խումբումների ժամանակ հիւրերը ձգում են իրենց նուէրները: Պատկերների հրատարակութիւնը, երեկոյթներ, ներկայացումներ եւ այլն մուտք լինում է 7500 ուղբի:

Վրէժում կայ նաեւ կոմիտէ տեղացիներից կազմած. Սալմաստի կոմիտէն նշանակովի է:

Գաղթաշէնում<sup>29</sup>, Աւարայրում<sup>29</sup> եւ ուրիշ տեղեր կան դաշնակցական գործիչներ, որովհետեւ Վրէժստանում պայմաններն ազատ են, գինուորական խմբերի կարիք չկայ եւ ամէն անհատ ազատ կարող է զբաղուել գինավարժութեամբ: Հայ ժողովրդի ձեռքին աւելի շատ գէնք կայ քան թէ ուրիշ շրջաններում. կան տներ, որ մինչեւ 9-10 հրացան կ'ունենան:

Այս շրջանում հնչակեանները թոյլ են, Վրէժում ունեն միայն մի խումբ. Սալմաստում էլ մի առանձին ոյժ չեն ներկայացնում. միայն այս տարի մի ինտելիգենտ մարդ անցկացրին Երկիր. աշնանը 50 հոգուց խումբ էին ուղղում մտցնել Երկիր, բայց չյաջողուեց. տարածայնութիւն ծագեց խմբի մէջ, մէկը միւսին սկսեցին սպանել եւ խումբը ցրուելով ստիպուեցին ետ դառնալ:

Թերթերի փոխադրութիւնը անկանոն է կատարուում մարդկանց պակասութեան պատճառով. միայն ստացուում է 400 օրինակ, որից 150 օրինակը վերցնում են Երկիր ուղարկելու եւ իրենց համար, մնացածը Մրգաստանցոյ: Թերթեր փոխադրուում էր նաեւ Ոսկանապատի գծով, բայց ներկայումս այդ գիծը փչացել է: Թերթերի անկանոնութեան պատճառներից մէկն էլ այն է, որ վրէժից իրենք էլ անկանոն են ստանում եւ գործը լաւ չէ տարուում:

\*  
\*\*

**Դեկտեմբեր 14-ի նիստ**

**Կազմակերպական խնդիրներ:**— Մասնախմբերը իրանց տեղեկագրերը դեռ պատրաստած չլինելու պատճառով՝ նախագահը բանալով ժողովը առաջարկեց ժողովին զբաղուել կազմակերպական մի քանի խնդիրներով եւ յայտնեց, որ առհասարակ հաշուետուութիւնը մեզանում անկանոն է կատարուում, չնայելով որ Բիւրոն մի քանի անգամ շեշտել է անցեալ ժողովների վճիռները հաշուետուութեան վերաբերմամբ կենտր. կոմիտէներին եւ պահանջել է նրանցից հաշիւները, սակայն միշտ անկատար են մնացել այդ պահանջները:

Այդ կողմից առանձնապէս աչքի են ընկնում՝ Ոսկանապատը, Քարը եւ Նաւահանգիստը<sup>1</sup>, որոնց վերաբերմամբ էլ ռայոնական ժողովը որոշեց խիստ յանդիմանութիւն կարգաւ եւ յանձնարարեց Բիւրոյին եւ կենտ. կոմիտէների ներկայացուցիչներին, որպէսզի մինչեւ ամսիս վերջը բոլոր հաշիւները ներկայացնեն Բիւրոյին՝

[Դաշնակցութեան] Խորհրդին ներկայացնելու համար:

Ապա Ոսկանապատի ներկայացուցիչն անկարող լինելով մնալ յետագայ ժողովներին յայտնեց իրանց մարմնի կարծիքները միւս խնդիրների վերաբերմամբ յանձնարարելով Մուսլին<sup>30</sup> առանձնապէս պաշտպանել կովկասեան խնդիրը: Հնչակեանների վերաբերմամբ նրանք կարծում են որ պէտք է հրատարակել մի ազդ. թէ՛ այն բոլոր տարրերը, որոնք վնասում են յեղափոխական հմայքին եւ հայ ազգի շահերին՝ կ'ենթարկուեն Հ. Յ. Դաշնակցութեան դատաստանին, ինչ կուսակցութեան էլ որ պատկանելիս լինեն. երրորդ՝ առաջարկուում են ունենալ մի ձեռնհաս ազատ շրջուն մարդ, որ շրջե բոլոր վայրերը թղթակցութիւններ գրելու համար:

Նախագահը յայտնեց, որ մեր գաւառական մարմինների տեղեկագրերից ինչպէս երեւում է մեր կազմակերպութեան մէջ միօրինակութիւն չկայ. մի շրջան տարբեր ներքին կազմ ունի քան միւսը, դրա համար անհրաժեշտ է միօրինակութիւն մտցնել բոլոր դաշնակցական մարմինների մէջ եւ առաջարկեց այսուհետ ղեկավարուել միայն այդ կանոններով, որ մշակել է վերջին Ընդհանուր ժողովը եւ տեղական բոլոր ձեւերը այսուհետ յարմարեցնել այդ կանոններին:

Առանձնապէս խօսակցութեան առարկայ եղաւ գաւառական գիւղական կազմը. (Համայնակա՞ն թէ խումբական): Զրաբերդի ներկայացուցիչը նկարագրելով իրանց շրջանի գիւղական համայնական կազմակերպութիւնները, առաջարկում էր կովկասի միւս գաւառներն էլ գիւղական-համայնական կազմ մտցնել, թուելով դրա առաւելութիւնները.— այն է՝ յեղափոխական) հրմայքի ուժեղացումն, յեղափ. գաղափարի ժողովրդականացնող, ինքնավարութեան վարժեցնող եւ ամենայարմար միջոց՝ հնչակեանների ոտնձգութիւնների դէմ կռուելու համար:

Իսկ Մրգաստանի ներկայացուցիչը պնդում էր բոլոր գիւղերում մտցնել խմբական կազմակերպութիւններ, որովհետեւ դա ունի զտող նշանակութիւն եւ կարգապահութեան ու գաղտնապահութեան տեսակէտից առաւելութիւններ:

Թեր եւ դէմ կարծիքներից յետոյ, ժողովը գտաւ, որ այդ խնդիրը դեռեւս հասունացած չէր, որ համայնական կազմը յեղափ. զարգացման երկրորդ աստիճանն է. որ դա արդէն դուրս է գալիս յեղափ. շրջանից եւ մտնում կառավարչական շրջանը եւ չկարողանալով ճիշտ եւ վերջնական եզրակացութեան յանգել, որոշեց թէ եւ համայնականը գերադասելի է բայց առայժմս եղած բոլոր կազմակերպութիւնները յարմարեցնել Ընդհ. ժողովի կանոններին:

Ապա նախագահը յայտնեց որ կովկասի մի քանի կո-

- 29.- Աւարայրը Խոյի շրջանն է:
- 30.- Մուսլը՝ Մարգար ժամադրեանն է, Դարաբաղէն:

միտէնք հարց են բարձրացրել կենտրոնական լինել: ժլատի ներկայացուցիչը թուելով իրանց շրջանի բացառիկ դրուժիւնը, ընդարձակութիւնը եւ յարաբերութիւնների դանդաղութիւնը եւ որ այդ շրջանում անհրաժեշտ է կենտրոնական գործօն մարմնի գոյութիւնը աւելի խոշոր նիւթական եւ ռազմական ուժ արտադրելու համար, առաջարկում է տալ իրանց կենտ. կոմիտէի բոլոր իրաւունքները: Ժողովի ժամանակ նկատու էին, որ կենտ. կոմիտէների բազմաանալը կովկասում կ'ունենայ մեծ նշանակութիւն այն տեսակէտից, որ Ընդհ. Ժողովում գերակշռող մեծամասնութիւն կազմելով՝ տաճկահայկական դատի վերաբերմամբ կարող է վտանգաւոր հետեւանք ունենալ. միեւնոյն ժամանակ շեշտում էին, որ երբեք ժլատի կոմիտէն այլ կոմիտէներին չի խանգարել, կոմիտէ մնալով զարգացնել իրանց կազմը եւ արտադրել այն՝ ինչ որ կարող են:

Ի նկատի ունենալով, որ ժլատը եւ նման կոմիտէները չեն համապատասխանում վերջին Ընդհ. Ժողովի ընդգծած միտումում պահանջներին, հիմք չգտաւ ժլատի առաջարկը ընդունելու, այլ որոշեց ժլատի առաջարկը իրանց պատճառաբանութեամբ ներկայացնել Խորհրդի բարեհայեցողութեանը: Այս առթիւ քուէարկուեցին հետեւեալ բանաձեւերը:—

1) Նայելով որ ժլատը չի լրացրել Ընդհ. Ժողովի միտումում պահանջների մի քանի կէտերը, այնուամենայնիւ ի նկատի առնելով բացառիկ պայմանները, շրջանի ընդարձակութիւնը եւ յարաբերութիւնների դանդաղութիւնը եւ որ այդ ռայոնը խոստանում է նիւթական եւ ռազմական խոշոր ուժ արտադրել եւ պէտք ունի կենտրոնական գործօն մարմնի, դրա համար իրրեւ բացառութիւն տալ նրանց կենտ. կոմիտէի իրաւունքները եւ առաջարկել Խորհրդին հաստատելու համար. ստացաւ միայն 5 ձայն ընդդէմ 5 ձայնի: Երկուսը ձեռնպահ մնացին:

2) Ժլատը թողնել նոյն դրութեան մէջ: 4 ձայն ընդդէմ 8 ձայնի:

3) Ժլատի առաջարկը իրանց պատճառաբանութեամբ ներկայացնել Խորհրդին, թողնելով նրանց բարեհայեցողութեան. իսկ մինչեւ այդ ժլատը թողնել կոմիտէական իրաւունքների սահմանում. անցաւ միաձայն:

Ժողովականներից մի քանիսը հարց բարձրացրին միւս կենտ. կոմիտէների ցնցըր եւս քննութեան ենթարկել. թէ արդեօք պահանջուած ցնցըր ունին թէ ոչ:

XXV

1904 – 1907 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՆՅՔԵՐՈՒՆ ՇՈՒՐՉ

Հ.Յ.Գ. Երրորդ եւ Զորրորդ Ընդհ. Ժողովներու միջեւ ինկող տարիները՝ 1904-1907 թ.թ.ը կը կազմեն հայոց ժամանակակից պատմութեան մէկ բախտորոշ շրջանը, հարուստ արիւնալի իրադարձութիւններով եւ իրենց ընկերացող ընկերային, տնտեսական եւ գաղափարախօսական տագնապներով, որոնք կը փոթորկեն հայ կեանքը թէ՛ Արեւմտեան եւ թէ՛ Արեւելեան Հայաստանի մէջ, — Մասնոյ ապստամբութիւն, Սուլթան Համիտի մահափորձ, Տարօն-Տուրուքեան եւ Վասպուրական աշխարհներուն մէջ ճգնաժամային մարտնչումներ՝ իրենց աւերիչ եւ մահափիռ հետեւանքներով, հայ-թաթարական արիւնոտ բախումներ ամբողջ Անդրկովկասի տարածքին, — ահա գլխաւորները միայն հայաշխարհը տագնապեցնող իրադարձութիւններուն:

Կը փոթորկի նաեւ Դաշնակցութեան ներքին կեանքը: Համառուսական ընկերային-քաղաքական բնոյթի շարժումներու ստիպողութեան տակ որդեգրուած «Կովկասեան Նախագիծը» պատճառ կը դառնայ ներկուսակցական հակադիր բեւեռներու ստեղծման: Դաշնակցութիւնը միայն «Տաճկահայաստանի»՝ ազատագրութեան համար ստեղծուած էր: Հապա ընկերվարութիւնը, այն, որ հիմնապէս ներկայ էր իր սկզբնական գաղափարախօսութեան, իր ծրագրին մէջ իսկ. եւ այսօր երբ ամբողջ Ռուսաստանը՝ Կովկասն ալ հետը ներգրաւուած են քաղաքական-ընկերային յուզումներու մէջ, Դաշնակցութիւնը կրնա՞ր անմասն մնալ իր շրջապատը յուզող խնդիրներէն: Հարցեր, որոնց հրապարակային ու կրքոտ արժարժումը, արդէն յառաջացուցած էր ծայրայեղ «աջեր» ու «ձախեր», եւ կը սպառնար արմատական երկփեղկումի տանիլ կուսակցութիւնը:

Բոլոր այս հարցերուն պատասխան-յուծումը կը սպասուէր Զորրորդ Ընդհ. Ժողովէն, որուն դիւանը ծանրաբեռնուած կը տեսնէր բազմաթիւ գանգատներով, բողոքներով, տեսակէտ պարզող նամակներով:

Այդ գրութիւններուն կարեւոր մէկ մասը տուած ենք կազմակերպական շրջաններուն յատկացուած գլուխներուն տակ, նայած թէ ո՞ր շրջանին կը պատկանին անոնք: Այստեղ առանձնացուցած են գլխաւորաբար անոնք, որ ընդհանրական բնոյթ ունին եւ կամ մասնաշատուկ հարցերու կը վերաբերին:

\*  
\*\*

1 – Ընդհ. Ժողովին եւ Բիւրոններուն ուղղուած գրութիւններ, որոնց մէջ կը շօշափուին տարբեր բնոյթի հարցեր. ասոնց կարգին՝ հաւանաբար, Ծրագրի վերամշակման համար նախատեսուած «Մեր իրականութիւնը թուրքաց Հայաստանում»ը, Հնչակեան կուսակցութեան Կեդր. Վարչութեան դիմումը՝ երկու կուսակցութեանց միջեւ համերաշխութիւն գոյացնելու առաջարկով, Pro Armenia-ի խմբագիր Քիլյառի, Ն. Դումանի, Մուրատի, Սեպուհի, Ս. Վրացեանի նամակները:

2 – Կովկասեան Նախագիծ, Միհրանական եւ անջատական շարժումներ բաժնին մէջ կը ներկայացուին շարք մը փաստաթուղթեր, քաղուած միշտ Ընդհ. Ժողովի թղթածրարէն եւ Դաշնակցութեան արխիւներուն մէջ պահուած նիւթերէն, ուր կը պարզուին հակադիր կողմերու տեսակէտները:

սակետներն ու դիրքորոշումները պաշտպանում թե՛ մտատրական եւ թե՛ մարտական անցեալ ունեցող ընկերներու կողմէ,- Մար, Յար. Շահրիկեան, Գեորգ Չաուշ, Հաջի եւայլն:

3 - Երրորդ բաժինը յատկացում է Պայքաններու մէջ Անդրանիկի գործունէութեան, որ կը կայանար գլխաւորաբար զէնքերու գնման, ինչպէս նաեւ Պուկարիոյ մէջ Հ.Յ.Դ. Զինուորական ըպրոցի ստեղծման. այս վերջինը Պայքանի Կ. Կոմիտէութեան մէկ նախաձեռնութիւնն էր, որուն նիւթապէս պիտի աջակցէր Ամերիկայի Կ. Կոմիտէն. այսուհանդերձ բանալի դեր վստահաւորապէս ըլլար Անդրանիկին՝ պուկար կառավարական շրջանակներու եւ մակեդոնացի յեղափոխականներուն հետ իր հաստատած կապերուն շնորհիւ: Զինուորական միամտայ դասընթացներուն եւ զինավարժութեան հետեւող շուրջ 50 ուսանողներու, ինչպէս նաեւ պուկար պահեստի սպայից վարժարան ընդունուող 20 հայ երիտասարդներու մարտական պատրաստութիւնը, անկասկած, կարեւոր ներդրում պիտի ըլլար հայ կռուող ուժերու որակի բարելաւման տեսակէտով:

4 - Հայ-քաթարական ընդհարումներու շուրջ: Յատկապէս Կովկասեան Կ. Կոմիտէութեանց (Պաքու, Գանձակ, Ղարաբաղ, Երեւան) տեղեկագիրները եւ ժողովական արձանագրութիւնները ընդարձակ հաղորդումներ ունին այս մասին: Ընդհ. Ժողովը եւս հանգամանօրէն անդրադարձած է հարցին: Տակաւին՝ «Դ-բոշակ»ի եւ 1905-1907 թուականներու կովկասահայ մամուլը լայնօրէն կ'արձագանգէն ցարական վարչակարգին կողմէ Անդրկովկասի մէջ երաւիտեամտ հայերու զինեալ այդ բախումներուն: Արդարեւ՝ Հ.Յ.Դ. արխիւներուն մէջ պահուած են Ժընեւ, Արեւմ. Քիւրոյի ուղարկուած բազմաթիւ փաստաթուղթեր՝ զեկուցագրերու, յօդուածներու եւ հեռագրալուրերու ձեւին տակ, զորս «Դ-բոշակ»ի խմբագրութիւնը օգտագործած է հայ եւ եւրոպական հասարակութիւնը օրը օրին իրազեկ դարձնելու համար անցուդարձերուն:

Այս բոլորը ծանօթ են եւ առատ նիւթ հայթայթած օրուան մամուլին: Այդ մասին ստեղծուած է նաեւ յուշագրական եւ պատմագրական ճոխ գրականութիւն: Հոս, առանձնացուցած ենք արխիւային արժէք ունեցող եւ մեծ մասամբ անտիպ այն փաստաթուղթերը, որոնք յաւելեալ լոյս կը սփռեն ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման եւ ընթացքին վրայ: Ձէնք-զինամթերք ապահովելու կողքին, ուշագրաւ են երեւանեան նահանգին մէջ Նիկոլ Դումանի ղեկավարութեան ներքեւ կազմակերպուած գործերը, հայ մարտիկէն անոր պահանջած երկաթեայ կարգապահութիւնը եւ, մանաւանդ, բարոյական այն բարձր գիտակցութիւնը, զոր պէտք է անհրաժեշտօրէն ցուցաբերէր յեղափոխութեան իրաքանչիւր զինուոր: Բաժնի վերջաւորութեան կու տանք Ղարաբաղի եւ Ղազախի ինքնապաշտպանութիւնը ղեկավարող Խանասարի Վարդանին եւ Սեւքարեցի Մաքոյին զեկուցագիրը Ընդհ. Ժողովին, շահեկան իր խորաբախմանց վերլուծումներով եւ ապագայի նախատեսումներով:

Ե. Փ.

## Ա. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ ԵՒ ԲԻՒՐՈՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդհ. Ժողովի բոլորապէս մէջ գտնուող այս գրութիւնը կը գրուէ մեծադիր (22 x 35 սմ) 13 էջ + 5 տող. գրում է անհայտ, շատ յստակ եւ դիրքոնքոնքի ձեւագրով. տեղ-տեղ եղած են մանր սրբագրութիւններ. կայ նաեւ նկատողութիւն այն իմաստով, որ մանրամասնութիւնները «չեն սազում ծրագրի մէջ»: Արդարեւ առաջին էջին վերը կայ «ծրագրի ձեւագր» մակագրութիւնը: Յայտնապէս Հ.Յ.Դ. ծրագրի նոր խմբագրութեան համար ներկայացուած գրութիւն մըն է իրենց օգտագործուելու համար:

### Ա 1. - ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աշխատաւորական կուսակցութիւնների կռիւը պարզ է տեսնուած անուշադէմ երկրներում, ուր կեանքի որոշ հոսանք է ստեղծուած, ուր միապետական ռեժիմը, աւատական կարգերը եւ կրօնական խտրութիւնները թուլացել են զգալապէս կամ բացակայում են կատարելապէս եւ ուր հետեւաբար կռուի դիւաւոր կամ միակ օբյեկտը (առարկայ) բուրժուական կարգերն են:

Այլ են պայմանները Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան վայրերում: Երբեմն կուլտուրապէս բարձր Փոքր-Ասիայի առաջապահ մասը՝ կիսավայրերի ցեղերի յաղորդական արշաւանքներից ու նրանց տիրապետութիւնից ուժաբաւ, յետ մնաց քաղաքակրթական հոսանքից եւ երկար դարերից յետոյ միայն վերականգնեց իր կապը լուսաւորուած աշխարհի հետ: Կիսակուլտուրական ցեղերի դարեւոր տիրապետութիւնը եւ միւս կողմից՝ քաղաքակրթ հոսանքի նոր ազդեցութիւնը առաջ բերին այն, ուր այնտեղ կարելի է տեսնել այսօր մի սահմանափակ շրջանում կուլտուրայի տարբեր աստիճաններ, բաշխուած ընդհանրապէս ըստ ցեղերի. այնտեղ որոշ դասակարգերը պատկանում են որոշ ազգութիւնների, այնտեղ դեռ մեծ է կրօնի ազդեցութիւնը եւ նա ստորադրում է ազգային բաժանումները: Հասարակական մի դրութիւն դեռ չձեւակերպուած որոշապէս, կողքին հաստատուել է նրա հակամարտ հոսանքը, եւ այդ երկուսի պայքարը դեռ չորոշուած, ծագել է մի երրորդը:

Հասարակական զարգացման այլ եւ այլ ֆազիսների հետ միասին մեր երկրում ստեղծուել եւ պահուել են քաղաքական, ազգային, կրօնական բռնութիւնների բոլոր ձեւերը եւ նրանց հետ կապուած կռուի բոլոր եղանակները:

Այս բոլոր պայմանները առանձնապէս ծանր են մա-

նաւանդ թուրքաց Հայաստանում, ուր Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը, դրա հետեւանօք, կրելու է առանձնապէս բարդ կերպարանք:

Գլխաւոր ազդակը, որ խճրճելով հասարակական յարաբերութիւնները, խանգարում է մեզ առաջ մղելու աշխատաւորական կռիւը իր բոլոր յատկութեամբ, դա կրօնների եւ ազգերի անհաւասարութեան զաղափարն է՝ ամենահինը եւ ամէնից խոր արմատացածը տիրողների հասկացողութեան մէջ:

Թուրքերը Հայաստանին տիրապետելուց յետոյ՝ ձգտել են ստեղծել հպատակ քրիստոնեաներից հլու աշխատողների մի բանակ, որի պարտականութիւնը լինի կերակրել իր վաստակով՝ տիրապետող ռազմիկ տարրը: Արհամարհանքով վերաբերուելով դէպի աշխատանք՝ տիրապետողները խլել են մեզնից սուր, հրացան եւ թողնել են արօրն ու մուրճը: Թափառական նուաճող տարրերը ոչ այնքան քիչ են եղել թուրքով, որպէսզի ձուլուէին հպատակների կուլտուրայի մէջ եւ ոչ այնքան զօրեղ կուլտուրապէս, որպէսզի վերջնականապէս ընկճեցնէին հպատակներին: Ազգաբնակչութիւնը բաժանուած է մնացել երկու անջատ մասերի՝ առանձնաշնորհեալ մուսուլման տարրի՝ որը ձգտել է պահել իր ռազմիկ դիրքը, եւ իրաւագուրկ ու հալածական աշխատաւոր քրիստոնեայ տարրի:

Թէեւ ժամանակի ընթացքում, շնորհիւ նուաճումների այնու ամենայնիւ աճող կուլտուրական կեանքին եւ եւրոպական հասարակական առաջադիմութեան, որը անդրադառնում էր տաճկական կեանքի վրայ, քրիստոնեաների վիճակը որոշ փոփոխութիւններ կրեց, բայց եւ այնպէս նրանք դեռ մինչեւ օրս էլ չեն դադարել «գեւաւոր» եւ «ուայա» լինելուց:

Միեւնոյն ժամանակ, երբ տիրապետող տարրի մէջ առաջ եկաւ դասակարգային շերտաւորում, երբ նրա



միջին գտուեցին արտօնեալ տարրերը եւ մեծամասնութիւնը ստիպուած եղաւ անցնիլ աշխատաւորական կեանքին, երբ այդ մեծամասնութիւնը աւելի ստուարացաւ հալածանքից ելք փնտռող կրօնափոխ քրիստոնեաների բազմութեամբ, առանձնաշնորհումները սկսեցին ծառայել իրապէս միայն արտօնեալ դասերի օգտին, իսկ մահմետական աշխատաւոր ընդհանրութիւնը հետզհետէ սկսեց մօտենալ հպատակ ռայայի տնտեսական վիճակին:

Եւ այժմ իր դրութեանը անգիտակ՝ Հայ յեղափոխական շարժման ամէն մի քայլը ընդդէմ արտօնեալ դասերի, նա նկատում է իբրեւ կռիւ ուղղած ամբողջ քիւրտ կամ տաճիկ ազգաբնակչութեան իրաւունքների եւ միւսիւման կրօնի դէմ:

Հպատակ քրիստոնեայ ազգերի շարժումները մի կողմից, միւս կողմից մահմետական տարրի մէջ շեշտը ուղղաւ զանազանաւորումը (դիֆերենցիացիան) ցեղային հողի վրայ, երեւան հանեցին եւ ազգային խնդիրներ, որոնք չէին նկատուում մահմետական աշխարհի նախկին կրօնական բաժանումների մէջ: Խտրութիւնը տաճիկ եւ արաբի եւ քիւրտի միջեւ, հայի եւ յոյնի, մակեդոնացու եւ յոյնի միջեւ գնալով զարգանում է, եւ այսօր իւրաքանչիւրը նրանցից հրապարակ է գալիս իր յատուկ տեսակէտներով, դժուարացնելով կռիւը ընդդէմ քաղաքական ռեժիմի:

Տաճկաստանի քաղաքական ռեժիմը նոյնպէս մի ձեւակերպուած ամբողջութիւն չի ներկայացնում: Հայ ժողովրդի ստուար մեծամասնութիւնը կառավարում էր սկզբներում դերբէշիների ձեռքով: Կենտրոնական կառավարութեանը հետ դա անմիջական կապ չունէր: Դերբէշիներին էր վճարում իր տուրքերը: նրանց վերաբերմամբ էր կատարում հպատակի բոլոր պարտականութիւնները:

Կենտրոնական իշխանութեան յայտարարած կռիւը դերբէշիութեան դէմ, որին աջողութեան ջերմապէս նրպաստեց հայ, մանաւանդ քաղաքացի տարրը, կիսկատար մնաց: Թէեւ պատերազմներում միշտ յաղթական, բայց կենտրոնական կառավարութիւնը ոյժ չունեցաւ հաստատելու իր կարգերը, վերջ տալով դերբէշիութեան իշխանութեան:

Բացի այդ, յետագայում քրտական զօրութեան պահպանութիւնը անհրաժեշտ նկատուեց քաղաքական տեսակէտից եւ ասպարէզի վրայ մնացած շէյխերը, ցեղապետները հաստատեցին իրենց դիրքը, իւրաքանչիւրը զատ զատ կապուելով կենտրոնական կառավարութեան ներկայացուցիչների հետ: Իւրաքանչիւրը զատ զատ ծանրանալով Հայ աշխատաւոր ժողովրդի վրայ: Այսպիսով, դերբէշիական իշխանութեան կողքին հաստատուեց իր պաշտօնեաներով կենտրոնական կառավարութիւնը: Հայ ժողովուրդը ստիպուած եղաւ ծառայել թէ իր հին եւ թէ նորագոյն տէրերին, վճարել երկու-

սի տուրքերը, հպատակ դառնալ, մի խօսքով, երկու կառավարութիւններին:

Բացի սրանցից, Տաճկաստանի կեանքում խոշոր դեր է խաղում եւ մի ուրիշ գործօն, դարձեալ կառավարական ֆունկցիաներով:— դա եւրոպական պետութիւններն են, երբեմն միացեալ, յաճախ բաժանուած հակամարտ շահերով: Անցեալի կորստաբեր պատերազմների ընթացքում, ծախելով դաշնակիցներին, մատուցած ծառայութեան փոխարէն, իր պետական իրաւունքների մի մասը, Տաճկաստանը ընկել է եւրոպական պետութիւնների խնամակալութեան տակ: Խնամակալները ոչ միայն յաճախ տնօրինում են Տաճկաստանի արտաքին քաղաքականութիւնը, այլ եւ միջամտում են ներքին բոլոր խնդիրների մէջ, երբ այդ պահանջում են իրենց շահերը: Եթէ նրանց միջամտութիւնը երբեմն առաջ է բերում դրական հետեւանք հպատակ ժողովուրդների համար, միեւնոյն ժամանակ նրանց շահերի հակամարտութիւնը թելադրում է այնպիսի քայլեր, որոնցից աւերում է ամբողջ երկիրը, կամ տասնեակ ու հարիւրաւոր հազարներով զոհեր խլում մի ժողովրդից:

Հանրային պարտուց վարչութեան եւ նրան կից ծրիսխտտի մեծավաճառումի հաստատումով միջազգային բուրժուազիան խլեց Սուլթանի կառավարութիւնից անուղղակի հարկերի մեծ մասը եւ սահմանեց երկրում իր սեփական վարչական կարգերը, դրանով նա եւս իր վրայ առաւ կառավարութեան անմիջական ֆունկցիոնները՝ աւելի խորը շօշափող պետական հիմքերը:

Ահա այս խառնակ դրութիւնն է մեր երկրում, ուր ոչ կենտրոնական կառավարութիւնն է վերջ տուել դերբէշիական իշխանութեան մնացորդներին, ոչ եւրոպական միջամտութիւնն է ամբողջովին իր ձեռքն առել երկրի կառավարութիւնը, ուր դժուար է ասել, թէ ո՞ր տեղ է սկսում մէկի իշխանութիւնը, ո՞րտեղ է վերջանում միւսինը:

Այս բազմիշխանութիւնն է, որ կոչւում է Տաճկաստանի քաղաքական ռեժիմ, որի տակ հիւժում են հայ եւ այլ ցեղերը: սա է որ զանազան ձեւերով բարձում է ժողովուրդների վրայ բազմատեսակ հարկեր: Եւ մինչեւ օրս էլ միայն տառապող աշխատաւորների վրայ է շարունակում ծանրանալ հարկերի բեռը: Ինչպէս առաջներում՝ արտօնեալ դասերը այժմ եւս ազատ են նրանից: Ազատ են մանաւանդ հազարներ եւ միլիոններ դիզող առանձնաշնորհեալ օտարահպատակները:

Հարկերը ճնշող են ոչ միայն քանակով ու բազմատեսակութեամբ, այլ եւ հարկահանութեան սխտեմով, որ դուռ է բաց անում անվերջ կամայականութիւնների: Ճնշող են նրանով որ հարկահանութեան հնադարեան սխտեմը պահպանուած՝ գանձում են հնչուն դրամով: Ճնշող են մանաւանդ իրենց չափազանց անհամաչափութեամբ ժողովրդի վճարելու կարողութեան հետ: Մի երկիր ուր տիրողների փոխադարձ մրցման հետեւանք

ընական հարստութիւնների մեծագոյն մասը մնում է առանց շահագործուելու, ուր կեանքի եւ գոյքի անպահովութիւնը սպանում է նախաձեռնութեան ոգին, ուր կառավարողները խեղդում են ամէն մի կուլտուրական առաջադիմութեան փորձ եւ մրցում են իրար մէջ աւելի եւ աւելի մեծ պատառներ կորզելու ասպարէզում, ուր ազգաբնակչութիւնը նուազում է եւ կեղեքումը աճում, այդպիսի մի երկիր չի կարող ընականօրէն ունենալ տնտեսական տանելի վիճակ եւ կարողութիւն՝ վճարելու օրէց օր բազմացող հարկերը:

Այս խեղդիչ մթնոլորտի մէջ իսկ՝ Հայ ժողովրդի կրթած ճնշումները աչքի են ընկնում իրենց բացառիկ ոյժով: ընդհանուր հարկերի հետ միասին նրա վրայ ընկած են յատուկ տուրքեր, որոնցից ազատ են հարեւան մահմետականները: Հարկահաւաքութիւնը կատարում է առանձին անողորթութեամբ: Դատարաններում չկայ հայի համար արդարադատութիւն: վճիռները տրւում են վարչութեան թելադրութեամբ: կանոնաւոր ռոճիկ չստացող պաշտօնեաներին ազատ ասպարէզ է տրուած իրենց սեփական եկամուտը ստեղծելու: Վարչութիւնը ճնշում է նրան հողատիրութեան, տնտեսական կեանքի այլ կարեւոր ճիւղերում: Արգելուած է երթեկութիւնը արտասահմանի հետ: դուրս գնացածների վերադարձը գրեթէ անհնարին է դառնում: Պոլիս եւ այլ քաղաքներ գնալը բացառիկ արտօնութիւն է համարում հայի համար: նոյնիսկ գիւղից գիւղ չի կարելի գրնալ առանց յատուկ թոյլտուութեան:

Խափանուած են կամ սահմանափակուած կուլտուրական առաջադիմութեան բոլոր ճանապարհները: Ոստիկանական ռեժիմի կապանքներում կաշկանդուած են խօսքը, մամուլը, խիղճը: Ամէն մի դժգոհութիւն խեղդում է բանտերով եւ արիւնով: Սարսափը ընդ-

հանրութեան վրայ տարածած պահելու համար չեն խրնայում նաեւ անմեղ ազգաբնակչութիւնը:

Հայ ժողովրդի բողոքի ձայնը իսպառ կտրելու նպատակով էր, որ գործադրեցին 95 եւ 96 թուականների սարսափները:

Սարսափի քաղաքականութիւնը տարածուում է բոլոր նրանց վրայ, որոնք ազատ կարգերի ձգտումներ են արտայայտում՝ առանց կրօնի եւ ցեղի խտրութեան:

Իր տիրապետութիւնը բիրտ ուժով հաստատած լինելով, միայն այդ է գործադրել տաճիկ կառավարութիւնը՝ ազատութեան տենչող հպատակների դէմ, եւ չնայած իր յաջորդական անաջողութիւններին նոյնն է միայն գործադրում եւ այժմ: Ձիւտուրական ոյժերը աճեցնելով նա պէտք է զգում հարկերը աւելացնելու, նոր պարտքեր անելու, ստիպուած է լինում նոր առանձնաշնորհում (կոնսուսիոն) տալու, եկամտի միշտ նորանոր ճիւղեր Հանրային պարտուց վարչութեանը յանձնելու եւ դրանով իր եկամտի աղբիւրները միշտ աւելի կրճատելու:

Այս ճակատագրական ընթացքն է որ հետզհետէ սնանկացնելով կառավարութիւնը, միւս կողմից ոտքի պիտի հանէ այդ վերջինի դէմ կառավարութեան բոլոր խաւերը: Քաղաքական կատաստրոֆը անխուսափելիորէն պատրաստուում է: Գոյութիւն ունեցող կառավարական կարգերի դէմ պիտի կազմակերպուի նորը, որի պրոպագանդի հիմքն է ձգել Տաճկաստանում Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ որի հանդէպ արդէն սկսել են տեղի տալ դերբէշիական իշխանութեան մնացորդները: Պէտք է խորտակել չարիքի արմատը, կենտրոնական միապետական իշխանութիւնը եւ բազմատեսակ կապանքներից ազատել աշխատաւոր ժողովուրդները:

Ա 2.- ԵՐԻՉԱՅԻԻ ԳԻՄՈՒՄԸ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Յարգելի հայրենակից,

Ինչպէս յայտնի է Ձեզ, շուտով պիտի կայանայ Հ. Յ. Դաշնակցութեան համագումարը, որին՝ խնդրում եմ ներկայացնել առաջարկս:

Եղբորս՝ Քեռիի՝ անձնանուէր եւ ողբերգական մահը, որն քաջ յայտնի է ամէն մի իրագրել դաշնակցականի, չի դադարում ինձ տանջելուց, եւ կարծես վրիժառութեան մաքուր զգացումներն պարտք են դնում իմ վերայ՝ շարունակելու հանգուցելոյն փայփայած եւ ձեռնարկած գործը՝ որն անկատար մնաց իւր վաղաժամ վախճանով:

Արդ՝ ես որպէս նրա երիցագոյն եղբայր, եւ հարազատ գաւակ մեր բազմաշարչար ու լկուած տաճկահայկական նուիրական ու պաշտելի սուրբ հողին, ներկայիս կու գամ արտայայտելու եւ առաջադրելու իմ բուռն եւ լիատենչ ցանկութիւնն՝ թելադրուած մարդկայնորէն ապրելու եւ ազնուաբար մեռնելու խոր գիտակցութիւնից, իմովսանն օգնելու Հ. Յ. Դաշնակցութեան ուրուագծած վաղեմի նպատակի իրագործման: Ես, ի հարկէ, ըստ ամենայնի չեմ ատակ եւ կարող իրագործելու իմ եւ Դաշնակցութեան վսեմ ու ազնիւ ցանկութիւններն, սակայն լաւ կը ռադատելով որ իւրաքանչիւր քաղաքացու, մանաւանդ յեղափոխական քաղաքացու պարտականութիւնն է ծառայեցնելու իւր թանկագին հայրենիքին եւ սիրայօժար գոհաբերելու յօգուտ իւր տառապեալ հայրենակիցներին իւր անհատական առանձնայատկութիւններէից, կարողութիւնից ամենագերակշռողը, ուստի այդ համոզմամբ՝ նուաստիս համար էլ տեսնում եմ որ կայ մի կարեւոր գործ, որի յաջողութեան համար զգում եմ իմ մէջ բաւական համապատասխան ոյժ մի անընկճելի կամքով: Ակնարկածս գործը՝ պրոպագանդիստի պաշտօնն է, որից պահանջը լուծ է անդուլ եւ չարքաշ ջանք ու ճիգ, համերաշխ գոր-

ծակցութեան եւ ազատագրական շարժման նպաստաւոր յենակէտներն ստեղծելու Տաճկահայաստանի գաւազան ազգութիւններին, մանաւանդ կիսավայրենի, սակայն ազատասէր եւ ըմբոստ Դերսիմում, ընդդէմ թուրքաց անողոք եւ ճիւղալին ռեժիմին:

Եթէ հաճելի կը համարուի իմ առաջադրութիւնս, ապա ուրեմն պարտ ու պատշաճ տնօրինութեամբ կը տրուի անշուշտ անհրաժեշտ աջակցութիւնը եւ որով միանգամ ընդմիջտ հպատակեցրած եւ երկրպագու արած կը լինի ինձ Հ. Յ. Դաշնակցութեան բոսորային եւ արիւնագանգ սուրբ եւ գեղեցիկ դրօշակին:

Մնամ քո բարի եւ քաջալերող խորհուրդներին յարգող ԵՐԻՉԱՅԻ

Յ.Գ.- Եթէ իմ թեկնածութիւնը՝ իբր Դերսիմի պրոպագանդիստ՝ յարգուի համագումարի բարեհայեցողութիւնից, այն ժամանակ առիթ եւ իրաւունք կ'ունենամ մանրամասն տեղեկութիւններ հաղորդել բանաւոր նոյն տեղույն եւ իմ անհատական համոզումների ու գործելակերպի մասին:

ՆՈՅՆ

1.- Տերսիմի Քեռին է (Ոուրէն Շիշմանեան), որ 90ական թուականներուն Երզնկայի շրջանին մէջ սարսափի մատնած էր թուրք կառավարութիւնը, քանակը եւ քրտական շրջանակները: 1900ին դաւադրութեամբ ձերբակալուեցաւ եւ 1903ին կախաղանի վրայ մահացաւ: Տերսիմի շրջանին մէջ մեծ ճիգեր ի գործ դրած է հայ-քրտական գործակցութիւն առաջացնելու համար:

Ա 3.- ՏՈՔԹ. ԳԼԸՃԵԱՆԻ ԳԻՄՈՒՄԸ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Աղեքսանդրիա, 6 Նոյ. 905

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. Ժողովին

Յարգելի հայրենակիցներ,

Իսկէնտէրուն (Alexandrette) եղած միջոցիս դաշնակցական անհատներու կողմէ գործի տեսակէտով թէեւ առաջարկութիւններ կ'ըլլային, սակայն ինչ-ինչ ձեւերու տակ չէին ուզեր իրաւասութիւն մը կամ պատասխանատուութիւն թողուլ իմ վրաս, զոր կրնայի պաշտօնիս բերումով ամէն յաջողութիւն ցոյց տալ: սակայն եւ այնպէս չէի գլանար այն խորհուրդները զորս պէտքը կը զգացուէր, ինչպէս որ կը զգային այն կողմերը եկող գործիչները:

Հոս տեղն է յիշել որ՝ Աղեքսանդրիա նստող եւ թրդթակցութեան յարաբերութիւնները պահող անձերը, որոնք ինձ համար բոլորովին անծանօթ մնացած են, վրատակութիւն երբեք չէին ներշնչեր:

Այժմ, որ բոլորովին ազատ եմ եւ նկատի ունենալով երկար տարիներու ընթացքին մէջ իրարու յաջորդող գործիչներու աշխատութիւնները, որոնք մասամբ մը ամուլ կը մնային՝ հակառակ իրենց ցոյց տուած ջանքերուն, կ'առաջարկեմ Պատ. Ընդհ. Ժողովիդ, որ նկատի առնէ հետեւեալ ծրագիրը, որուն մասին մանրամասն բացատրութիւններ տալու նաեւ պատրաստ եմ եթէ յարմար տեսնէ:

Ա.- Բացի Ձէյթունէն, Կիլիկիոյ շրջանի կարեւոր կէտերուն մէջ շատ քիչ ժամանակուան մէջ պատրաստել հայերը, ինչպէս Մարաշ, Այնթապ, Ատանա, Չոք-Մարզուան, Սուէտիա, Անտիոք, Հալէպ, Քիլիս եւ Ուրֆա:

Բ.- Ապահով միջոցներով թէ ներս առնել եւ թէ փոխադրել պէտք եղած նիւթերը:

Գ.- Վտանգի եւ վնասի ենթարկել եւրոպական հաստատութիւնները, ինչպէս ամերիկեան եւ ֆրանսական հիւպատոսարանները՝ բոլորովին թուրքերու ձեռքով:

Դ.- Չեռք առնել Հալէպի մէջ բնակող արաբներու չէյիսերը, մեծերը, որոնց քանիներուն հետ ծանօթութիւն ունիմ:

Ե.- Յեղափոխական կամ ապստամբական ունէ շարժումի մը ատեն օգնութիւն առնել վերեւ յիշած արաբներէն եւ տիւրքիւններէն:

Ներկայացնելով այս առաջարկութիւնները, կ'աւելցնեմ նաեւ որ ես ինքս պատրաստակամութիւնը ունիմ ներս մտնելու իբրեւ Անգլիոյ հպատակ անգլիացի, կամ իսլամ լուսանկարիչ, զոր պատրաստած եմ այս մասին պէտք եղած թուղթերը:

Միայն թէ առաջարկութեանս գլխաւոր կէտը սա է որ որոշումը պէտք է տրուի Ընդհ. Ժողովիդ կողմէ եւ պատշաճ պայմաններն ալ օրինաւոր սահմանի մը մէջ հաղորդուին:

Անշուշտ առանձին չէ որ կ'ուզեմ գործի մը գլուխը գտնուել կամ «միս-մինակ» ընելու յաւակնութիւնը ունենալ: Հարկաւ Պատ. Ընդհ. Ժողովդ ուրիշ աւելի յարմար եւ կարող ուժեր իբրեւ ընկեր, իբրեւ աջակից եւ կամ իբրեւ պատասխանատու գործին մարմնոյ մը պէտքը կը տեսնէ եւ ըստ այնմ կ'որոշէ:

Սպասելով Ձեր հաւանութեան եւ որոշումին Ընկերական բարեւներով

Յարգանք՝ Ն. Ս. ԳԼԸՃԵԱՆ

Յ. Գ.- Նկատի ունեցէ՛ք նաեւ որ այն կողմերու խոչոր ուժերը ի մի բերելու ջանքերն ալ կը խոստանամ, որով ներքին կուսակցական արգելքներն ալ կերպով մը կը դադրին եւ այս մասին վստահ կրնաք ըլլալ:

Չմոռնամ յիշելու որ կովկասահայերու աջակցութիւնն ալ անհրաժեշտ է այս աշխատութիւններուն մէջ:

Հասցէս — Schimon Moise Poste Francaise Alexandrie Յանձնել Dr. N. S. Kludjianի

Ա 4.- PRO ARMENIA-Ի ԽՄԲԱԳԻՐ ՔԻՅԱՌԻ ՆԱՄԱԿԸ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Paris, le 26 Janvier 1907

Note Concernant Pro Armenia

Dans les premières années de Pro Armenia, les correspondances étaient nombreuses et précises. Cela avait un double avantage: le public spécial auquel nous adressons, parlementaires, publicistes, historiens est au courant ou à peu près au courant des faits généraux (Traité de Berlin, etc.); mais il a besoin que des détails exacts avec mention de noms, lieux et dates en fassent connaître la condition du peuple. J'en ai eu encore la preuve à Milan au mois d'Octobre; l'auditoire favorable en principe à la cause a été surtout touché par le récit des plus récents massacres.

Mais il ne faut pas seulement présenter les arméniens en qualité de victimes: il faudrait aussi faire connaître leur vie active et laborieuse. Les articles sur les communes rurales et sur les paysans du domaine de la Mer Noire ont été très appréciés. Il faudrait donner de même une statistique des métiers dans les villes, une statistique des écoles et un aperçu sur l'organisation des écoles, aussi bien pour la Turquie que pour la Russie.

Une autre raison qui me fait insister sur la nécessité de donner le plus possible de correspondances locales,

c'est qu'ainsi et ainsi seulement on donne à l'étranger l'impression qu'il existe un parti fortement organisé qui se manifeste, quand il le faut, par l'action directe — et c'est là son œuvre essentielle — mais qui d'autre part est en communication constante avec le peuple et peut en faire connaître non seulement les souffrances et les luttes mais aussi la vie sociale et scientifique.

Ce qui est familier et banal pour nos camarades ne l'est pas pour le public français et européen.

Malheureusement je ne puis lire le russe; mais tous documents allemands ou anglais sont utilisables par moi et je ferai traduire les documents en arménien par le traducteur ordinaire.

P. QUILLARD

Il va de soi que quand dans les correspondances locales la publication des noms peut avoir des inconvénients on les remplacerait par des initiales ainsi qu'il fut fait lors de la publication du rapport du vicaire patril de Seert<sup>2</sup>.

2.- Սղեղը:

Ա 5.- ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

18 Մարտ 1907, Փարիզ

Յարգելի հայրենակիցներ!

Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը, անկեղծ սրտով շնորհակտելով կուսակցութեանդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի գումարումը, սրանով գայիս է Ձեր ուշադրութիւնը հրաւիրելու հետեւեալ կարեւոր խնդիրների վրայ:

1.- Հնչակեանների եւ դաշնակցականների միջեւ տեղի ունեցած մի կարգ ողբալի ընդհարումները եւ սպանութիւնները աւելի էին տուել կուսակցութեանս Հինգերորդ Պատգամաւորական Ժողովին բանակցութեան մէջ մտնելու կուսակցութեանդ Արեւմտեան Բիւրոյին հետ՝ միջկուսակցական բախումների առաջն առնելու նպատակով:

Այդ նկատմամբ երկուստեք եղած հաղորդագրութիւնները, որքան որ լի բարի ցանկութիւններով եւ իղձերով, սակայն, դժբախտաբար, որոշեալ մի արդիւնքի չհասցրին, ու եղբայրասպանութիւնը շարունակուեց գոյութիւն ունենալ:

Իրերի այդ ցաւալի դրութիւնը աչքի առաջ ունենալով կուսակցութեանս Կեդրոնական Վարչութիւնը, N<sup>o</sup> 338 իր նամակով, պարտականութիւն համարեց նորից Արեւմտեան Բիւրոյին ուշադրութիւնը հրաւիրելու կատարուած կուսակցական չարիքների վրայ եւ, ի թիւս այլոց, առաջարկելու «Հնչակեան եւ Դաշնակցական լիազօր անձնաւորութիւններից իրաւախօհական մի Ատեան կազմել, որ իրեն նպատակ ունենար, փոխադարձ համաձայնութեամբ, որոշ տրամադրութիւններ մշակելու եւ անհրաժեշտ յանձնառութիւններ պարտաւորիչ դարձնելու, որպէսզի այլեւս երկու կուսակցութիւնների միջեւ չյառաջանան եղբայրասպանութիւններ եւ զանազան ցաւալի դէպքեր»:

Կուսակցութեանդ Արեւմտեան Բիւրոն՝ N<sup>o</sup> 59 իր պատասխանագրով՝ սկզբունքով մեր առաջարկին դէմ չլինելով, յայտնած էր որ այդ խնդիրը «քննութեան պիտի ենթարկուի յառաջիկայ Ընդհանուր Ժողովում»:

Այժմս՝ երբ Ընդհանուր Ժողովը գումարուած է, Կեդրոնական վարչութիւնս, Հայ Յեղափոխութեան վեհաժողովն աչքի առաջ ունենալով, իր պարտականութիւնն է համարում գրել եւ Ժողովիդ ուշադրութիւնը հրաւիրել այդ խնդրի նկատմամբ:

Լիայոյս ենք, որ Դուք ո՛չ միայն չէք զլանալ միջնորդ դատարանի սկզբունքը ընդունելու եւ պարտաւորիչ դարձնելու Ձեր բոլոր մարմինների համար, այլեւ կը մշակէք կանոնական յատուկ տրամադրութիւններ եւ

ձեռք կ'առնէք առանձին միջոցներ միջնակուսակցական ընդհարումներին եւ եղբայրասպանութիւններին միանգամ ընդմիջտ վերջ տալու:

Այդ նկատմամբ մեր վրայ ընկած պարտականութիւնը մինչեւ ցարդ կատարած ենք եւ պատրաստ ենք կատարելու, նոյնը Ձեզնից յուսալու իրաւունքով:

2.- Աչքի առաջ ունենալով բունութեան լծի տակ հեծող Հայ Ժողովրդի իրաւացի եւ հրամայական պահանջը, աչքի առաջ ունենալով այն դժուար հանգամանքները, որ թուրք բռնապետութիւնը եւ նրա նեցուկ եղողները ստեղծել են Հայկական Դատի համար, աչքի առաջ ունենալով եւ այն տխուր իրողութիւնը թէ ինչպէս մեր մէջ տիրող միջնակուսակցական անտեղի կռիւնները եւ փոխադարձ ընդհարումները թուլացնում, ջլատում եւ վնասում են Հայ Յեղափոխական Գործի յաջողութեանը՝ կուսակցութեանս Կեդրոնական Վարչութիւնը ամենայն պատրաստակամութեամբ ընդունեց ընկեր Մուրատի առաջարկը («Հնչակ», N<sup>o</sup> 9-10, 1906), այն է՝ կազմել մի «Հայ Յեղափոխական Կոնգրէս», որին մասնակցէին Տաճկահայ Դատի լուծմանը աշխատող բոլոր Հայ կուսակցութիւնները:

Քաջայոյս ենք, որ Պատգամաւորական Ժողովը այս առաջարկը եւս խորհրդածութեան առարկայ կը դարձնի եւ իր կողմից էլ հնարաւոր ամէն միջոցներ ձեռք կ'առնի Հայ Յեղափոխութեան այդ կենսական պահանջին շուտափոյթ բաւարարութիւն տալու:

Հաճեցէք ընդունիլ մեր ընկերական ողջոյնները եւ մեր յարգանաց հաւաստիքը:

Ի դիմաց  
ՀԼՁ. ԿՈՒՍ. ԿԵՂ.Ր. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ս. Ազար-Սթրանցի  
Ատենադպիր  
Ս. ՍԱՊԱԿ-ԳԻՒԼԵԱՆՅ  
Ատենապետ  
ՍՈՒՐԱՏ

3.- Ստ. Սապահ-Գիւլեան՝ Գնչակեան կուսակցութեան ղեկավարներէն. «Գնչակ» պաշտօնաթերթի խմբագիր, իրապարակագիր եւ տեսարան:

4.- Մուրատ, բուն անունով Գամբարձում Պոյաճեան՝ հնչակեան յայտնի գործիչ. ղեկավարներէն է Պոլսոյ Գում Գափուի ցոյցին (1890) եւ Սասնայ առաջին ասպետներութեան (1894), որմէ ետք կը ձերբակալուի եւ կ'աքսորուի: Սահմանադրութեան շրջանին եղած է անդամ Օսմանեան խորհրդարանին, ապա զոհուած է 1915ի Սեօ եղեռնին:

Փաստ. 297-18

Ա 6.- ՆԻԿՈՒ ԳՈՒՄԱՆԻ ՆԱՍԱԿԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Միր(ելիթ)

Զգալս ունի իր պատճառները: Մի կողմից հետզհետե մեծանում են ներքին դժգոհությունները գինուորական եւ քաղաքացիական մարմինների մէջ, միւս կողմից էլ քոչուրները ժամանակն է մօտենում եւ անհրաժեշտ է արագորէն վերակազմուել ու պատրաստուել դրա համար: Մմբատի երկար բացակայութիւնը մեխոց ինձ Երեւանում եւ եթէ հիմա գայի Թիֆլիս՝ նա՛ չպիտի կարողանար քաղաքից հեռանալ: Այդպիսով անկարելի էր դառնում այցելել գաւառները, մինչդեռ անհրաժեշտ է դա: Վաղը ես դուրս եմ գալիս պտոյտի եւ առաջին անգամ ուղիղ դէպի Քարաբերդ: Ուրեմն ինձ մնում է յայտնել կարծիքս գրաւոր: Թէ եւ ճիշտ չգիտեմ ինձ կանչելու նպատակը եւ պարզ չեն ա՛յն խնդիրները, որոնք դրուած պէտք է լինին իմ առաջ, այնուամենայնիւ, ենթադրում եմ որ Տաճկահայկական հարցը պիտի լինի այդ: Այդ հարցին վերաբերեալ ուրիշ խնդիրներով ու մանրամասնութիւններով զբաղուելու ժամանակ ու միջոց չունենալով, ես խօսելու եմ միմիայն բռնելիք տակտիկայի մասին, այն էլ խոչոր գծերով:

Դուք գիտէք ամէնքդ, որ անցեալում միշտ ես դէմ եմ եղել ոյժերի կենտրոնացման ո՛չ թէ նրա համար, որ այդ եղանակը համարել եմ աննպատակաշարմար, այլ ա՛յն պատճառով՝ որ դրան գտել եմ բացարձակ անհնարին տիրող պայմանների շնորհիւ: Այդ դժոխային պայմանները դեռ չեն փոխուել, ուրեմն նոյնը պիտի պնդեմ եւ այժմ:

Ես կանգ չեմ առնելու նոյնպէս ցուցական եւ այլ գործողութիւնների վրայ, որովհետեւ նախկին պայմանները ես տեսնում եմ հիմնովին կերպարանափոխւած ու փափկացած, եւ հէնց այդ նոր դրութիւնն է, որ պիտի լինի իմ զբաղման առարկան եւ իսկապէս այդ դրութիւնից էլ պէտք է բխի մեր տակտիկան:

Ռուսաստանի ազատագրական շարժումը չի կարող չազդել հարեւան Տաճկաստանի վրայ, ուր վաղուց ի վեր ետում է ներքին դժգոհութիւնը: Այստեղ ուսական բիւրոկրատիան, իր գոյութիւնը ու դրութիւնը պահպանելու համար, մեծացրեց իր ճնշող ոյժը մութ ոյժերով եւ անբաւարար գտնելով այդքանը, ի վերջոյ ժողովուրդներն ու ազգերը կանգնեցրեց իրարու դէմ: Նոյնը կը լինի ե՛ւ այնտեղ, բայց աւելի վտանգաւոր, աւելի անհեղինակ: որովհետեւ այնտեղ հայի հարեւան ազգերը (քիւրդ եւ տաճիկ) անհամեմատ լաւ են գինուած եւ աւելի քան զօրաւոր: Հետեւապէս հայերն այնտեղ կը տուժեն աւելի, քան այստեղ:

Այստեղ փորձանքը եկաւ ապացուցելու, որ փրկութիւնը գէնքի եւ կազմակերպուելու մէջ է: Ուրեմն գործունէութեան այս եղանակը պէտք է լինի եւ այնտեղ: Բայց նախապէս համոզուած պիտի լինենք, որ այնտեղ, չպիտի կարողանանք հասնել ա՛յն հետեւանքին ինչ որ այստեղ: Որովհետեւ այնտեղ, ինչպէս ասացի, թշնամիները աւելի զօրաւոր են, հայերը անհամեմատ աղքատ, գէնքի աղբիւրները ցամաք, կազմակերպող եւ առաջնորդող ինտելիգենտ ոյժերի չափազանց սակաւութիւն եւ այստեղից նրանց բաւարար չափով օգնութեան գնալը միանգամայն անկարելի (ներկայ պայմանների եւ առհասարակ ընդհանուր դրութեան մասին խօսք լինել չի կարող): Այս դէպքում հայերը ուզեն-չուզեն պէտք է մասնակցեն, [պարտա]ւոր են մասնակցելու: Բայց սա արդէն երջանիկ դրութիւն կը լինէր, ի հարկէ: Գործը տանուլ չտալու համար, մենք պէտք է լինինք պեսսիմիստ՝ եւ խնդրին նայինք վատ կողմերից: Կարող է պատահել, որ մի դաժան ծրագրով, կամ մի դժբախտ պատահարով նորից հայկական ջարդ սարքուի Տաճկաստանում: Ինչպէ՞ս անենք, որ համեմատաբար թեթեւ պրծնենք այս դէպքում: Զինուելու եւ կազմակերպելու մասին խօսել եմ արդէն: Բայց նոյն իսկ եթէ լիովին մեզ յաջողելու էլ լինի այդ, որին դժուարանում եմ հաւատալ (դա՛րձեալ [պայմանների] շնորհիւ): Ինչ էլ լինի, քիչը լաւ է ոչնչից: Այնտեղ անհրաժեշտ է գէնք եւ կազմակերպութիւն: Այնտեղ պէտք է ուղարկել կազմակերպողներ, բայց առանց զգալի վնաս հասցնելու այստեղի ինքնապաշտպանութեան գործին: Տաճկաստանում կազմակերպութիւնը չպէտք է լինի աշկարայ ու աղաղակող եւ միշտ պէտք է խուսափել առիթներ տալուց: Աղաղակող առիթներ կը լինին նոյնպէս մեր գինակիր խմբերը նախկին ձեւով: դրանց պէտք է վերջ տալ անպայման: Զէնքի փոխադրութիւնը պէտք է կատարուի քրդի ու տաճիկի միջոցով, ինչքան հնարաւոր կը լինի այդ: Ոյժ պէտք է տալ տեղում գէնք գնելուն, ինչքան էլ թանկ լինի այդ: Փախստական եւ պարապ հայրուկային խմբեր չպէտք է պահել երկրում: Դրանք անխուսափելի կերպով գործ կը ստեղծեն: Մի խօսքով նախապատրաստութիւնը պէտք է լինի ըստ կարելւոյն խաղաղ:

Ըստ կարելւոյն եմ ասում, որովհետեւ յեղափոխական խաղաղ նախապատրաստութիւնը անգիտակից ժողովրդի համար չափազանց դժուար բան է: Յեղափո-

5.- Բարաքերդը Նախիջեւանի կուսակցական ժածկաւորն է: Սմբատը ասպազայ գօր. Սմբատն է, Բորոյեան (Մախլուսո): 6.- Յոնտան:

խականորէն չհասունացած ժողովրդի մէջ կատարուող գաղտնի գործի պոչը երեւում է միշտ:

Խաղաղ կազմակերպման եւ նախապատրաստութեան այս եղանակը վերաբերում է ո՛չ միայն նախկին կենտրոնացման, այլեւ ցուցական վայրերին, ի հարկէ:

Իսկ այստեղ գործը կը շարունակուի ըստ առաջնոյն եւ ապագայում: Ռուսաստանի ներկայ կարգերի փոփոխումից ու խաղաղութիւնը հաստատուելուց յետոյ, կովկասը կը դառնայ մի ուժեղ ուղեգրով Տաճկահայաստանի համար: Եւ տայ Աստուած, որ մինչ այդ ո՛չ մի շարժում չլինի երկրում: Տաճկական շարժումը երբ էլ սկսելու լինի, հայերը իրանց պէտք է պահեն շա՛տ զգոյշ: Եթէ հայերը անհեռատեսութեամբ մասնակցեն տաճիկների յեղափոխական փոքրամասնութեան շարժումներին, հաւանորէն կը տրորուին պահպանողական մեծամասնութիւնից, որին անշուշտ միացած կը լինի կառավարութիւնը: Ընդհանուր (մեծամասնութեան) շարժումների պայմանները ի նկատի ունենալով, այնուամենայնիւ այդ բոլորը պէտք է կորցնի իր իրական նշանակութիւնը թշնամու ահռելի ոյժի առաջ:

Կայ, սակայն, մի բարեբախտ հանգամանք, որի վրայ պէտք է ծանրանալ, որից պէտք է օգտուել ժամանակին: Դա եւրոպայի հեղինակաւոր միջամտութիւնն է Տաճկաստանի վրայ, որի ձայնին ակամայ միշտ լսում է Բ. Դուռը: Եւ ջարդերի առաջը առնելու նպատակով Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրելու համար՝ մի կողմից հարկաւոր է ամրացնել մեր կապերը Եւրոպայում, իսկ միւս կողմից (վերջինիս իրազեկ պահելու համար) անհրաժեշտ է երկրում ունենալ սրած ականջներ, դիտող աչքեր եւ ճշգրիտ տեղեկութիւնների կանոնաւոր հաղորդագրութիւն, որպէսզի ժամանակին կարելի լինի անել հարկաւոր դիմումները եւ հրաւիրել եւրոպական կառավարութիւնների միջամտութիւնը:

*Գրութիւն*  
ԴՈՒՄԱՆ

Փաստ. 297-61

Ա 7.- ԸՆԾԱՅՐԻ ԵՒ ԿՈՄՍԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ 7

Հայ Յեղափ. Դաշնակ. կազմակերպութեան Երկրի սեկցիային

Միրելի Ընկերներ, .

Նկատելով որ Մենաւորը կը գտնուի Հ. Յ. Դաշն. կազմ. թեան ռազմամթերքի ամենակարեւոր եւ յարմարագոյն տեղը եւ շատ տարիներէ ի վեր օգնում է փոխադրութեան գործին, Վրէժի՞ եւ այլ ընկերները ի նկատի առած են Մենաւորի նիւթական անձկութիւնը, երբեմն օգնած են նիւթապէս:

Նկատելով որ այս մօտիկ տարիները աւելի ու աւելի շատացած են ընկերներու, գինուորներու եւ սուրհանդակներու երթեւեկութիւնը եւ արագացած է փոխադրութեան գործը, եւ բնականաբար՝ այդ առիթը եղած մարդոց եւ ձիերու ուստեսն հոգալու կարողութիւնը չունէր Մենաւորը, հետեւաբար Վրէժի Կենտր. Կոմ. էն հիմնուելով կարեւոր ընկերներու տուած փաստերուն վրայ, գրաւոր խոստացաւ 500 թուման վճարել Մենաւորին, որպէսզի նոր ջրաղացք մը շինէ եւ քէհրից մը հանել տայ եւ կիսատ ուսումն[արան]ը լրացնէ: Ատով վանքի տնտեսութիւնը պիտի բարւոքէր եւ երթեւեկներն չպիտի նեղուէին եւ գործն չէր կաղար: Այն օրէն

սկսեալ այլեւս ո՛չ մի նպաստ չեղաւ:

Նոր խոստումնագիրն ընդունուեցաւ տարի մը յետոյ (1908 Փետր.ին) Շրջանային ժողովէն, եւ որոշուեցաւ վճարել: Իսկ այդ յուսով այնքան սպասելէն յետոյ այս տարուան Մայիսի վերջին պ. Մամսունը՝ տեղս եկաւ եւ Մակուից գոյացած փողէն միայն 200 թուման վճարեց եւ չընդունեց մնացածը վճարել, ի ներկայութեան գանազան ընկերներու առարկելով թէ կազմ. թիւնը փող չունի եւ պահանջեց անպայման խոստումնագիրը վերադարձնել: Երդմամբ ըսաւ, որ «եթէ չընդունիք, կը գրեմ Վրէժ. ո՛չ մի փող չվճարեն, ի՛նչ կ'ընէք ըրէք»: Ես ալ նկատելով որ վանքը մօտաւորապէս երկու տարի նիւթական ամէն նեղութիւն քաշած է եւ հոգացեր է երեթեւեկ բազմաթիւ ընկերներուն, սուրհանդակներուն եւ գինուորներուն ուստեստի պէտքերն, եւ վեցէն աւելի ձիերուն գարին ու խոտ եւ դարմանը:

- 7.- Ընծայր՝ ծածկանունն է Ս. Թաղի (Մենաւոր) յեղափոխական վանահայր Գեորգ Թ. Վրդ. Նալպանտեանի: Կոմսը Վահան Փափագեանն է:
- 8.- Ատրպատականի Դ.Յ.Դ. կազմակերպութիւնը:
- 9.- Սամսոն Թաղեւեան, Քրիստափորի քոջ որդին, որ իր բն. Դաշնակցութեան ներկայացուցիչ կը վարէր Երկիր գէնքի եւ մարդոյժի փոխադրութեան գործը:




Նկատելով որ պ. Սամսոնը Երկրի մէջ հեղինակաւոր ընկեր կը ճանաչուի, եթէ այդպիսի անբարեխիղճ ձեռնարկ մ'ընէ, վանքը մեծ կորուստ կ'ունենայ եւ մենք որ ջրաղացքի եւ քէհրիզի յոյսը ունէինք ի դերեւ կ'ելլէ եւ վանքի տնտեսութիւնը որ պիտի բարւոքէր, կ'ոչնչանայ:

Ուստի ստիպեալ 200 թումանը ստացայ եւ խոստումնազիրը յանձնեցի պ. Սամսոնին, որ ղրկէ Վրէժի կենտր. կոմ.ին միեւնոյն ժամանակ նաեւ յայտնեցի այդ առթիւ իմ տհաճութիւնս կենտ. կոմ.ին: Այնուամենայնիւ երբ ջրաղացքի քարերը գնեցի եւ ջրէն անցուցի Պարսկաստան, ծախսերովը միասին արդէն 200-210 թուման եղաւ, հաշիւը պիտի տամ կենտր. կոմ.ին:

Բացի այն որ 50 գերան գնած եմ, որոնք մնացած են Ապպասպուլազ գիւղը, եւ փոխադրելն անհրաժեշտ է, եւ նոր ջրաղացքի շէնքն շինելը եւ ջրաղացքի գործիքներն — փետտ եւ թաւարայ եւ պընտագ եւայլն անհրաժեշտ է: Նաեւ կազմ.թեան ձիերուն ախոռ հարկաւոր է եւ շինելն ընդունած են պ. Սամսոնը եւ ընկերներն. այս բոլորին համար հարկաւոր է առնուազն 100-150 թուման եւ մեր ձեռքը ոչինչ չկայ, թող որ վանքը 200 թուման պարտք ունի:

Ի միջի այլոց վանքի բարոյական դրութիւնը շատ աննախանձելի է եւ գիտեն Վրէժի ընկերները, որ տեղացիք այնպիսի դրութեան մը մէջ մտած են, որ հոն ապրիլն անկարելի է. հարկաւոր է կազմակերպութեան ազդեցութիւնը ցոյց տալ եւ դիրքը բարձրացնել, որպէսզի մենք ալ կարողանանք մնալ հոն եւ գործին օգտակար լինել:

Ուստի Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ եւ կը խնդրեմ որ հաճիք կարգադրութիւն մ'ընել, որ այդ 500 թում.ի խոստումնազիրն յարգուի եւ մնացած 300 թումանը վճարուի մեզ. որ վանքի տնտեսութիւնն բարւոքենք եւ ո'չ ոքի վրայ այլեւս չծանրանանք: Եւ բարոյապէս մեզ օժանակութիւն տրուի, որ կարողանանք գործին օգտակար լինել. հակառակ պարագային ստիպւած ենք մեր գլխուն ճարը տեսնել. գայս յայտնելով Ձեզ կը մնամ անհամբեր սպասող պատասխանիս. բարեւեւրով

  
ԼՆՄԱՅՐ  
(Մենաւորի վանահայրը)

1906 Օգոստ. 19  
Ի Ս. Էջմիածին

20 VIII 906  
Էջմիածին

\*  
\*\*

Ընկերներ!

Այս հարցի հետ ես ծանօթ եմ: Վանքը այն վանքն է, որը մեծ կայարանն եւ պահեստն է մեր փոխադրութիւնների: Այդ ի նկատի ունենալով Պարսկաստանում եղած միջոցիս Վրէժի ընկերներին առաջարկեցի վանքը բարեկարգել. որոշուեց 500 թուման տալ: Այդ անցեալ տարուայ որոշումը այս տարի այնտեղ կայացած Ռայոնակ. ժողովը հաստատել է եւ ինչպէս տեսնում էք Սամսոնը չգիտեմ ի՞նչ իրաւամբ բաւականացրել է միայն 200 թումանով:

Վանքը մեզ հարկաւոր է, նոյնը եւ վարդապետը: Պիտի գրել Վրէժի կենտր. կոմիտէին եւ բացատրութիւն պահանջել թէ ի՞նչ հիման վրայ Սամսոնը 200 թուման տալով՝ պահանջել է վարդապետից բաւականանալ. առաջարկել մի քննիչ ուղարկել վանք վարդապետի բոլոր հաշիւները եւ նախահաշիւները (թէ ինչի՞ վրայ պիտի ծախսէ ստանալիք միւս 300 թումանը) եւ գեկուցէ մեզ եւ իրենց (Վրէժի կենտր. կոմիտէին): Գրելիս ի նկատի ունեցէք Սամսոնի անձնաւորութիւնը. նա շատ կրքոտ եւ քինախնդիր մարդ է. իմանալով որ վարդապետը բողոքել է իրա վրայ — նա ընդունակ է վեր-վար անելու ամէնքին:

Գրեցէք այնտեղ տալու վարդապետին էլի 100 թուման մինչեւ հաշիւների քննութիւնը: Վարդապետի անձնաւորութիւնը մեզ շատ պէտք է եւ եթէ իմանանք էլ որ նա ուտելու էլ է այդ դրամը — ոչինչ, պիտի վճարել:

Ընկ. բարեւեւրով


  
ԿՈՍՍ

Ա 8.- ՄՈՒՐԱՏԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՍՏՈՄԻՆ

Սիրելի Ռոստոմ

Ստացայ քո նամակը, ներփակ նամակը Մարտիրոսից էր, պահանջում է տղերքին եւ ինձ:

Այդ պահանջումը գումարների մասին ինչպէս երեւում է շատ էք նեղացել, որը ես գրել էի ձեզ. առաջին, պէտք է մտնէք իմ դրութեան մէջ ուր ամէն կողմից ընկերական յարձակումներ կայ, երկրորդ՝ Սարհատի<sup>10</sup> խիստ նամակները, որի թուղցիկներից եւս հասկանալի է. ես ուրախ կը լինէի որ ոչ մի առարկայ չլինէր գործի մասին ձեզ հետ, բայց յիշածներիս պատճառաւ միանգամայն ստիպուած եմ չլռել. գալով որպէս յեղափոխական՝ անկեղծութեան վահանը չենք կարող գցել վարայն 10000 ռուբլին որ հաշուում էք, կարծում եմ մենք դեռ երկրում էինք, նոյնպէս Պոլսոյ 8000 ռուբլին. վերոյիշեալ 10000 ռուբլին որը գրել էք, կարծում եմ հիւպատոսից եւ կամ Զաւրիեւից ստացած պէտք է լինի. խօսքերս այդ մասին չէր. Խորհրդում երբ որոշուեց որ Սարհատը Երկրում մնայ եւ նորա ամբողջ պահանջներին բաւարարութիւն կը տրուի, չէ որ այդ գործը յանձնեցիք ինձ եւ Հայր Աբրահամին որպէսզի մենք հաշուենք եւ կարիքները, իմանանք արդեօք ինչ կարիքներ ունին. ըստ այնմ մենք եւս մօտաւորապէս հաշուեցինք 30000 ռուբլի կարիք կայ, բացի Սարհատից. իսկ մինչեւ այսօր միայն գնացել է 5000 ռուբլի. եթէ նեղանում էք իբրեւ ընկերներ մեր արած նկատողութիւններին, ուրիշ անգամ այլեւս երբեք չենք խօսում որպէսզի ձեզ ցաւ չպատճառենք:

Բարեւեւրով  
  
ՄՈՒՐԱՏ

1906 թիւ  
Նոյեմ. 14ին Ջրաբերդ


Ա 9.- ՍԵՊՈՒՀԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒ. ԲԻՒՐՈՅԻՆ

Արեւելեան Բիւրոյի ընկերներին.

Սիրելիք, Այստեղից մեկնեցի որ անցնէինք Պուլգարիա. սակայն այնպիսի հարցեր եկան անցան [որ] մեր գնալը յետաձգեցինք մի քանի ժամանակով. չեմ ուզում երկար բարակ ծանրանալ պատճառների վերայ. մինակ համառօտ մի տեսութիւն կու տամ: Իսկ մանրամասնութիւնը ընկերներից կը լսէք: Ես էլ պիտի գայի: Տկարութեանս առթիւ մնում եմ այստեղ մինչեւ Երկուշաբթի. այնուհետեւ կու գամ:

Մենք ընկերներով խորհեցինք եւ այս եզրակացութեան եկանք. Առաջիկայ Ընդհանուր ժողովը մի ծանր հարց պիտի վճռէ. դրա համար պէտք է իւր ձեռքի տակ ունենայ ամբողջ դաշնակցական դրօշակի տակ մտնող հայ ժողովուրդի կարծիքները. եւ ի նկատի ունենալով մինչեւ այսօր ընտրուող պատգամաւորները ոչ մէկը իւր շրջանների կանոնաւոր ձայնը չի տանում իւր հետ այնտեղ, որտեղ պիտի վճռուի հայ ժողովուրդի լինել չլինելու հարցը, բարւօք համարեցինք դիմել Բիւրոյի ընկերներին՝ յետաձգել Ընդհանուր ժողովը մի երկու ամիսով. եւ հաւաքել կանոնաւոր տեղեկութիւններ ու ձայներ, ըստ այնմ գնալ այնտեղ մի բան որոշելու: Սա մեր կարծիքն է եւ դիմում ենք ձեզ իսկ դուք էլ խորհեցէք:

Առաջինը այդ. երկրորդ՝ ի նկատի ունենալով կարմիր սուլթանին մերձիմաճ լինելը եւ նրա մահուան հետ Երկրում գուցէ բարեփոխութիւններ առաջ գան, եւ այդ բարեփոխութիւնները առաջ բերելու համար մեզ պէտք է գինուած ապստամբութիւն: Իսկ մենք տեսնում ենք ոչ մի գէնք չկայ մեր ձեռքի տակ սահմանազուլիներում. ուստի խնդրում ենք անմիջապէս միջոցներ ձեռք առնէք Այգեստանի եւ Ապառաժի, Սիւնիքի, Մրգաստանի, Քարի եւ Զակոնի<sup>11</sup> շրջաններում գտնուած դաշնակցական բոլոր ՈՒՂ կոթերը ու ձեռք հաւաքել սահմանազուլիները որքան շուտ այնքան լաւ: Գուցէ ընկերները մտածեն Ապառաժում եւ Այգեստանում թուրք-հայկական վտանգները անցած չեն եւ այնտեղից մեզ պէտք են. ես դրա դէմ կը յայտնեմ որ արդէն ժողովուրդը այնտեղից կանոնաւոր կերպով գինուած է այն գէնքերով. մենք կարող ենք դիմադրել մինչեւ վերջը: Ահա այս նպատակով գալիս են ընկերները: Եւ ի նկատի ունեցէք եթէ գէնքերը չփոխադրուեն սահմանները, բոլորը հողի տակ պիտի փտին եւ մեծամասնութիւնը պիտի վաճառեն: Մոռցայ ասելու. մենակ մենք ուզում ենք Ռ<sup>Օ</sup> առաջինները, 2ը-3ը թող մնայ նորից այնտեղից եթէ վտանգը անցած չէք համարում:

Բարեւեւր  


10 XII 906  
Նաւահանգիստ [Պաթում]

ՍԵՊՈՒՀ

10.- Գեորգ Զաւուշի:  
11.- Այգեստանը Գանձակի շրջանն է, Ապառաժը՝ Ղարաբաղի եւ Զանգեզուրի, Մրգաստանը՝ Երեւանի, Քարը՝ Ալեքսանդրապոլի, իսկ Զակոնը՝ Թիֆլիսի Կեդր. կոմիտեւորեան շրջաններն սէկը:

Ա 10.- Ս. ՎՐԱՅԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒ. ԲԻՒՐՈՅԻՆ

Արեւելեան Բիւրոյին.  
Ընկերներ,

Ձեզանից վաղուց է՝ ոչ մի տեղեկութիւն չունինք — կարծես մեր շրջանը մատնել էք անուշադրութեան, մինչդեռ մենք շատ պէտք ունինք Ձեր աւելի մեծ ուշադրութեանը: Տեղի ունեցաւ տաճկահայ ներկայացուցիչների համաժողովը — ոչ մի խօսք չգրեցիք հետեւանքների մասին, իսկ այդ մեր ամենահրատապ հարցերից էր: Յայտնել էիք, թէ Ընդհանուր ժողովը լինելու էր Դեկտեմբերի սկիզբներին, իսկ այսօր 19 է, բայց դուք դեռ չէք գրել տեղի եւ ժամանակի մասին, չնայած մեր երկու հեռագրին: Մենք խնդրել էինք, որ «Յառաջ»-ի հրատարակութիւններն ուղարկէք պոստով, իսկ դուք ուղարկում էք երկաթուղով, եւ ահա մինչեւ այժմ ժամդարմական վարչութեան մօտ ընկած են Ձեր ուղարկած գրքերն, եւ չունինք միջոց ստանալու:

Սրանով խնդրում ենք, որքան հնարաւոր է, շուտ ուղարկէք:

ա) Տաճկահայերի ժողովի մանրամասնութիւններն ու ռեզոլյուցիաները<sup>12</sup>.

բ) Ընդհանուր ժողովի տեղն ու ժամանակը եւ.

գ) «Յառաջ»-ի հետեւեալ հրատարակութիւնները.

№ № 1, 8, 9, 20, 14, 16, 18, 19 — երեսնական օրինակ,

№ № 4-7, 10, 15, 17, 21-25 — յիսնական օրինակ

Գրքերն ուղարկեցէք անպայման պոստով եւ մաս-

12.- Որոշումները, բանաձեւերը:

13.- Սիգ-ը ծածկանուցներն մէկն է Սիմոն Վրացեանի, որ անդամ էր Նալբանդի 4. Կոմիտէին եւ շրջանի ընտրուած պատգամաւորը Դ. Ընդի. ժողովին: Նալբանդը հիւս. Կովկասի Նոր Նախիջեւանի շրջանն է:

մաս. մէջն անլեզալ ոչինչ չընէք, որովհետեւ փաստ է, որ այդ տեսակ, համեմատաբար, չնչին բաների համար մարդիկ տուժեն, որ մեզանում այժմ սովորական է:

Նաեւ խնդրում ենք ի նկատի առնէք հետեւեալն. անցած օրերն այստեղ բռնել ենք 4 խաչագողներ, որոնք մեր անունով հասարակութիւնից փող էին գծելու: Դրանց մէջ էր նաեւ Սեւքարեցի Սաքոյի քրոջ որդին՝ Սերգէյը, որն այստեղ շրջմոլիկի ե գինտոյի կեանք է վարում: Մի կերպ իմաց տուէք ընկեր Սաքոյին, որ նա հեռացնէ այստեղից իւր քրոջ տղին, հակառակ դէպքում կազմակերպութիւնս ստիպուած կը լինի խիստ միջոցների դիմել: Պէտք է անելացնել, որ Սաքոյի անունն էլ առարկայ է դառնում շահագործման ու արատի:

Վերջացնելով նամակս՝ աւելորդ չենք համարում նրկատել, որ կտրուած լինելով Կովկասից եւ գտնուելով յեղափոխական եւ գործիչների տեսակէտից աւելի աննպաստ պայմաններում, մեզ համար թանգ է Ձեր ամէն մի ջերմ վերաբերմունքը դէպի մեզ, որ, դժբախտաբար, այնքան էլ աչքի չէ ընկնում:

Ընկերական բարեւներով  
ի դիմաց Նալբանդի Կենտրոնական Կոմիտէ

*Սիգ*

Սիգ<sup>13</sup>

1906 թ. Դեկ. 19,  
Կեղեկեան.

1906 թ Դեկ. 19,  
Նալբանդ

Բ.  
ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆԱԽԱԳԻԾ,  
ՄԻՀՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆՁԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Բ 1.- Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ IV ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ  
ԲՈՂՈՔ

Ութ ամիս է որ Կովկասում Հ. Յ. Դ-ի շուրջը բանակուել է որ մղում է, թուղթ է որ սեւանում է, որոնց 85% լի անմիտ եւ անբովանդակ զառանցանքներով:

Այս բոլորի շարժառիթն ու նպատակը եղել է այն որ վարկաբեկ անեն Դաշնակցութիւնը: Այն Դաշնակցութիւնը՝ որ պատկառանք էր ազդում համայն աշխարհին իր անօրինակ հերոսական գործունէութեամբ: Մի մաքուր եւ անկեղծ յեղափոխականի համար մահն աւելի գերադաս է քան տեսնել իր կուսակցութեան, իր պաշտած ուղղութեան վարկաբեկումը:

Մեր համոզմամբ այս բոլորի պատճառը «Կովկաս- [եան] Նախագիծի» գործադրութեան դրուելն է: Մեզ ասում են թէ Հ. Յ. Դ- խորհուրդն է որոշել «Նախագիծի» գործադրութիւնը, հիմնուած Ռայոնական ժողովի որոշման վրայ:

Շատ բարի. բայց արդե՞ք Ռայոնական ժողովը իր որոշումները կայացնելիս հիմնուում էր դաշնակցական մասսայի տրամադրութեան վրայ՝ թէ ղեկավարուած էր մի միայն իր սեփական հայեցողութեամբ:

Մեր ձեռքի տակ եղած փաստերն ու հաւաքած տեղեկութիւնները մեզ ասում են, որ Ռայոնական ժողովին Բաթումի ներկայացուցիչները գնացել էին առանց մասսայի գիտութեան, եւ առանց նրա կարծիքն առնելու. ընկեր Մուրատն՝ ալ թող պատմէ Կարսի Շրջանային ժողովի մասին որ այնտեղ եղած է: Իսկ եթէ այս երկու վայրում այսպէս է, մենք ի՞նչ հիմք ունինք հաւատալու որ ուրիշ վայրերում նոյնը չէ կատարուած:

Ընդհանուր առմամբ Կովկասի մասին այն կ'ասենք, որ եթէ մասսան նախապէս իր կարծիքը տուած լինէր, այսօր այսքան աղմուկ չէր բարձրացնի: Հարկ ենք համարում Ընդհ. ժողովիդ յառաջ դնել մի պատկեր VI<sup>2</sup> շրջանի վերջին Շրջանային ժողովից: Ինը ներկայացուցիչներից միայն մէկը ունէր իրա հետ խմբերի մանդատներ, — մի միայն Նաւահանգիստը. մնացածները առանց բացառութեան եկել էին քով քովի միայն տեղական կոմիտէների մանդատներով: Ես հարց եմ տուել Գաղթավայրից<sup>3</sup> իբր ներկայացուցիչ գնացող անձնաւորութեան, թէ ինչո՞ւ այսպիսի անկանոն գործ էք բռնել. ինձ պատասխանում է թէ հնարաւորութիւն եւ միջոց չունէինք ժողով անելու. այնտեղ գտնուում է 54 խումբ

մինչդեռ իրենք 12 մարդ կարողացած են համոզել խմբապետներից: Ապաստանի<sup>4</sup> ներկայացուցիչը եկել է Շրջ. ժողովի առանց ընտրութեան եւ առանց մանդատների. Կ. Կոմիտէն մատնանիչ է արել երկու անձի վրայ եւ հեռագրած է՝ կամ դու եկուր կամ այսինչը:

Նոր քաղաքի<sup>5</sup> ներկայացուցիչի ձեռքին եղած մի քանի ստորագրութիւնները խաբելով են կորզուած խմբապետներից՝ եւ մենք համոզուած ենք այսպէս է եղած շատ մը տեղեր:

Ներկայումս դաշն. մասսան Կովկասում բաժանուել է երեք մասի: Ամենափոքր մասը՝ «միհրանական», նրանից խոշորը՝ «նախագծական». մեծ մասը մենք՝ զինւորներս եւ միամիտ ժողովուրդը: Մենք շուտաւարժ չգիտենք ո՞ր կողմ յարինք կամ ինչ անենք. երկու կողմն էլ հայրենիքի եւ նահատակների անունից են երդուում:

Բանից դուրս եկաւ որ մի կողմը, որ աւելի շատ եւ բարձր էր խօսում այդ անուններից՝ նրանք դուրս եկան շանտաժիստներ, եւ սկսան խեղճ ու միամիտ ժողովրդից փողեր կորզել եւ իւրացնել իրանց շինած կեղծ կնիքով ստացականներ տալով: Ով որ դիմում էր Միհրանին եւ իւրայիններին՝ ասելու թէ ձեր արածն ապօրինի է, խաչագողութիւն է, իսկոյն խօսքի եւ մամուլի մէջ դրա անունը դուրս էր գալիս՝ կաշառուած, հայրենիքի դաւաճան, սոցիալիստ, եւ այլն:

Եթէ մէկը համարձակուէր միւս հատուածի ղեկավարներին ասել թէ Նախագծի գործադրութիւնը ապօրինի է եւ տաճկահայ դատի համար վնասակար, նրան կնքում էին միհրանական անունով, մեր սրտին խորցաւ պատճառելով, որովհետեւ մեզ համար աւելի գերադաս է մահը տեսնել քան միհրանական կոշուկը:

Իրերի այս կասօսային դրութեան մէջ մեր միակ յոյսը մնում էր Ընդհ. ժողովը, որից ակնկալում էինք՝ որ իր հեղինակաւոր եւ արդարացի որոշումներով վերջ կը

- 1.- Խօսքը կը վերաբերի Սեբաստացի Մուրատին:
- 2.- VI շրջանը Ռուսաստանի (Սարուստան) 10 կոմիտէութիւններէն Պաթումի (Նաւահանգիստ) շրջանն է:
- 3.- Գաղթավայրը Սուխումն է, Արխագոյ այժմու մայրաքաղաքը:
- 4.- Ապաստանը Սոչիին է:
- 5.- Նոր քաղաքը՝ Նովորոսիսկն է:

տար այս դժոխային դրուժեան: Եւ որի որոշումները հեղինակաւոր եւ կեանքից բխած պիտի լինէին նրանով որ ժողովրդից հաւաքած մանդատները վրայ հիմնուած պէտք է լինէր. ափսոս որ այդ տեղից ալ յուսակտուր եղանք, քանի որ մեր գիտցած շրջանի մասսայի իսկական ձայնը չէ որ պիտի ներկայանայ Ընդհ. ժողովիդ: Ահա թէ ինչպէս՝ այն կենտր. Կոմիտէները, որոնք առանց շրջանի կարծիքը հաւաքելու վճռած են Նախագծի գործադրութեան, նոյն մարդիկը ամէն միջոց պիտի ի գործ դնեն եւ իրենց ցանկացած մանդատները դուրս բերեն որպէսզի Ընդհ. ժողովի առաջ պարզ դուրս գան: Գուցէ հարց դրուի՝ միթէ՞ միշտ միեւնոյն մարդիկն են վարչական պաշտօններում: Դրան կը պատասխանեմ՝ Այո՛ VI շրջանի Կ. Կոմիտէի վերաբերմամբ, որովհետեւ ամէն մի նոր ընտրութեան ժամանակ անդամներէր 2-3 միշտ կազմի մէջ են մնացած: Ինձ գուցէ հարցուի՝ հապա տեղիական կոմիտէները միթէ՞ գործի՞ք են. նրան ես կը պատասխանեմ՝ չնորհիւ խնամիութեան գործիք են: Տեղ. կոմիտէները մէջ դրամական եւայլն գեղծումներ են տեղի ունենում իսկ Կ. Կոմիտէն մատնեի արանքից է նայում այդ գեղծումների վրայ: Օրինակ Ջրաչէն<sup>6</sup>, Գաղթավայր<sup>3</sup>, Նոր քաղաքի<sup>5</sup> կոմիտէները մի երկու տարուայ ընթացքում վաճառական են դարձած. յանկարծ ժողովուրդը նկատում է այդ եւ բողոքում կենտր. Կոմիտէին. Կենտր. Կոմիտէն մի անգամ քննիչ ուղարկեց Ջրաչէն. հաշիւների մէջ 800 ուղբի բաց կար, որովհետեւ անդամներից մէկը նոր խանութ էր բացած. այս քանով բաւականացաւ քննիչը՝ որ ամսէ ամիս որոշ գումար ստացուելով պիտի ծածկուէր այդ բացը: Եթէ սա խնամիութիւն չէ ուրիշ ի՞նչ անուն կարելի է տալ: Ջրաչէնում՝ որ ունի ընդամէնը 150 դաշնակցական, 800 ուղբի գեղծում է գործուում. ապա այլ աւելի խոշոր շրջաններ ինչե՞ր կը լինեն: Գաղթավայրում առ ալժամ 700 բաց կայ. իսկ Նոր քաղաքում չափից անց է կացած, ուրիշ վայրեր՝ նոյն աւելի վատ: Ի թիւս այլ պատճառների, խոշոր տեղ են բռնում եւ գեղծումները, որոնք պատճառ են դառնում որ խմբերը անդամավճար չեն տալիս: Այս բոլորը վերաբերում է VI շրջանին. այլ շրջանների մասին թող խօսեն Մուրատն ու Սեպուհը: Ահա ընդհանուր գծերով այն պատճառները որոնց հիման վրայ վերեւում ասացինք թէ Ընդհ. ժողովից էլ յուսակտուր ենք:

Գուցէ այս բոլորը առասպելներ թուին Ընդհ. ժողովիդ. այդ դէպքում թող ժողովը քննիչ ուղարկէ ակնարկաձ ստեղծ եւ ստուգէ. ես հաւատացած եմ որ իմ նկարագրածից աւելին կը գտնէ:

Բոլորիս ակնկալութիւնը Ընդհ. ժողովից է. բայց մի՞թէ Ընդհ. ժողովը՝ գերբնական արարածներից է բաղկացած: Ընդհ. ժողովը կայացնում է որոշումները հիմնուած մասսայից ստացուած մանդատների

6.- Ջրաչէնը՝ Փոքին է:  
7.- Մեծ քաղաքը՝ Թիֆլիսն է:

վրայ: Իսկ մենք արդէն վերեւում ցոյց տուցինք թէ ժողովուրդը որքան տեղեկութիւն ունի այս բոլորէն:

Կովկասում Շրջ. ժողովները վերջնապէս վրայ էին երբ մենք մի քանի ընկերներ ժողով ունեցանք Նաւահանգստում. մեզ հետ էին Մուրատն ու Սեպուհը: Ժողովի նիւթն էր ի թիւս այլ խնդիրների՝ մեզ համար աւելի ծանրակշիռ Կովկ. Նախագիծը. երկու օրուայ ընթացքում ոչ մի եզրակացութեան չեկանք. երրորդ օր բոլորս էլ եկանք այն համոզման թէ Շրջ. ժողովները ոչ մի տեղ օրինաւոր չեն եղած. միաձայն որոշեցինք ինքներս եւ մեզ հետ մէկտեղ վարչական կազմից մի ընկեր՝ հաւաքել ամբողջ դաշնակցական մասսայի կարծիքը. եւ ինչ հետեւանք որ ստանանք, այսինքն մեծամասնութեան կարծիքը ինչ որ լինի, նոյնը ընդունելի լինի եւ մեզ համար: Ընտրեցինք մեր միջից Մուրատին, Տաճատ Վ.ին, Աւետիսին, Առաքելին եւ Սմբատին, որ գնան Մեծ քաղաք՝ եւ մեր որոշումները յայտնեն Արեւելեան) Բիւրոյին. մենք մեծ յոյս ունէինք որ մեր այդ իրաւացի որոշումը ուրախութեամբ պիտի ընդունուի. յանկարծ լսեցինք որ մեր այդ որոշումը մերժուած է. միայն իրաւունք է տրուած, (որ) դժգոհները բողոքեն Ընդհ. ժողովին:

Ասացէք խնդրեմ Սեւ ծովեան ամբողջ շրջան, Ղարաբաղի, Չանգեզուրի, Ալեքսանդրապոլի, Երեւանի, Կարսի, Գանձակի եւ այլ վայրերի ու շրջանների գիւղացի մասսան շատ է իմանում իր իրաւունքներից օգտուելը. նա իմանում է արդեօք բողոքելու ճանապարհ, կամ Ընդհ. ժողովի գումարման վայրը, որ իրանց ձայնը, իրանց իղձերը հասցնեն ուր որ հարկն է. կամ միթէ այնքան յիմարացե՞լ են վարչական պարոնները որ մասսային հասկացնեն իրանց դէմ բողոքելու ճանապարհը: Չէ՞ որ դա ձեռնտու չէ:

Կրկին անգամ խնդրում եմ, վերին աստիճանի կարեւոր է որ Ընդհ. ժողովը քննիչներ նշանակէ եւ լսէ հարազատ աղբիւրից մեր մասսայի իսկական ձայնը, եթէ ուզում է որ յեղափոխական) գործը հիմնուած լինի նոյն այդ տարաբախտ, կեղեքուած ու խաբուած մասսայի վրայ:

Եթէ ուզում էք ճշմարտութիւնը, ժողովուրդի համակրանք դէպի Կովկասեան գործունէութիւն, թէ՛ Կովկասում թէ՛ Ռուսաստանում, տեղականները յետ յառաջ ընդունում են. (խօսքս հարուստների վրայ չէ): Կը մնայ տաճկահայ դաշնակցականներ. հարիւրէն 20 ընդունած է իրենց ռոճիկի կամ օրականի համար, վերջապէս իր շահու համար, մնում է 80% որ բողոքում է: Բայց Բագուի համարի տեղեկութիւն չունեմ:

Հիմա դուք ինչպէս ուզում էք՝ այնպէս արեցէք: Բայց լաւ գիտցէք պատասխանատուութիւնը ծանր է:

Կը մաղթեմ յաջողութիւն  
ՀԱՁԻ

907 Մարտ 8, Բաթում

Բ 2.- ՄԻՀՐԱՆԻ ՆԱՍԱԿԻՑ

Փաստ 251-14

Բ 3.- Ա Ձ Դ

Խմբագրատ Միհրանի նամակից արտատպուած. Հեղինակութիւնը(?) այս է որ դրկած է տեղուս պարոններին:

Սիրելի Սահակ,

Նամակդ ստացայ սիրով. յայտնում էիր թէ իբր տաճկաստանցիներին գործից հանում են. թէ եւ այդպէս բան չկայ բայց դրանից վատ դրութիւն [է] ստեղծուել, ամբողջ ուղևահայ եւ տաճկահայ դժգոհ է գործից, որովհետեւ գործը իր նախկին ուղղութիւնից շեղուած է՝ սոցիալիզմ է քարոզում. այդ պատճառաւ էլ Դաշնակցութեան Մրագիրը խախտուած է առանց Ընդհանուր ժողովի, որի պատասխանատուն է վարչական մասը: Ետևում այդ յանցաւորներին պատժելու համար կը յայտարարենք զինուորական ժամանակաւոր դիկտատորութիւն, եւ ալ ու ձախ կը մաքրենք Դաշնակցութեան հրապարակը ամէն տեսակի սրիկաներից. այս ուղղութեամբ քարոզեցէք եւ թէ խմբերը եւ թէ կոմիտէն պահպանեցէք Դաշնակցութեան Մրագիրը, (որ) մի սրբազան աւանդ է արիւնով սրբագործուած եւ այդ աւանդը վերապահուած է միայն Ընդհանուր ժողովի քննութեան. այդ ժողովից դուրս Մրագիրը անձեռնմըխելի է. հետեւապէս ոչ մի մարմին չէ կարող նրա այս ու այն կէտը փոփոխել, այն ինչ այսօր մենք տեսնում ենք մի Կովկասեան Նախագիծ առանց Ընդհանուր ժողովի, եւ դա է փոթորիկը [?!] է. ամբողջ Դաշնակցութիւնը, շուտով կը բացուի յեղափոխութեան մէջ մի մեծ պայքար [sic], եւ անշուշտ յաղթանակը իսկական ուղղութեանն է. ամբողջ ժողովուրդը եւ զինուորական մասը մի կողմ կանգնած, իսկ վարչական մասը մնում է մենակ. շուտով կը բաժանուի այդ առթիւ թռուցիկներ. արդէն պատրաստ է. միայն մենք աշխատում ենք որ գուցէ մեզ ենթարկեն վարչական մասը, եթէ ոչ արդէն յայտարարելու էինք: Մշակի Օգոստոս 10, 12 համարների մէջ կարդա իմ նամակը եւ այնտեղ ամէն ինչ ակնարկուած է. ես գտնում եմ Տրփիսիւսում, այսօր է գուցէ գնալու եմ Երեւան եւ անմիջապէս վերադառնալու եմ. մի ամիսուկէս է որ անդադար չըջում եմ. նամակդ ինձ ուղարկել էր Յարէթը. ես պիտի գայի նաեւ Եալտա, բայց այս դալմադալները արգելք հանդիսացան:

Բարեւներով ձերդ  
ՄԻՀՐԱՆ

Տիֆլիս, 1906 VIII / 10

Շխալու սպանութեան դէպքի հետ, աւելի եւս սուր կերպարանք ընդունեց այն յուզմունքը, որ վերջին ժամանակներս մի խումբ մարդկանց կողմից առաջ էր բերուած որոշ շրջաններում: Նկատելով, որ այդ յուզմունքը բորբոքում է անգիտակից մասսաներում Դաշնակցութեան դէմ լարելու յատուկ նպատակով, մենք դաշնակցական զինուորական հարիւրապետներս հրաւիրում ենք այդ սպանութեան խնդիրը քննող խմբին, կազմել բոլորովին չէզոք անձնաւորութիւններից մի յանձնաժողով, որը քննէր եւ երեւան հանէր սպանութեան ճիշտ եղելութիւնը:

Եթէ վերոյիշեալ խումբը չհամաձայնուի այս կերպ լուծել խնդիրը, եթէ այս կամ այն ձեւով խափանի քննութիւնը, մենք կ'ամրապնդուենք մեր կասկածի մէջ, որ սպանութիւնը սարքուած էր հէնց այդ խմբի կողմից:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՊԵՏՆԵՐ

8 Հոկտ. 1906

ՄԻՀՐԱՆԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Մեր ընկեր Շխալիի սպանութիւնը եւ նրա վերաբերմամբ ձեր բռնած ընթացքը մեզ ստիպում է բաց անել մի քանի հանգամանքներ եւ դնել դրանց հետեւանք կազմող պահանջները:

Ձեզ բոլորիդ, ինչպէս եւ հայ հասարակութեանը յայտնի է, որ հանգուցեալը մեզ հետ միասին դուրս եկաւ իբրեւ բողոքող «Հ. Յ. Դաշն. Նախագիծ» դէմ, մենք բոլորս սկզբում միասին էինք, բայց փաստերը եկան մեզ ցոյց տալու, որ ձեր վերաբերմունքը այդ հարցում մաքուր չէ եւ ունի յետին ու ստոր նպատակներ: Ձեր մի շարք շահատակութիւնները մեր առաջ բաց արին իրերի իսկական պատկերը եւ մենք հեռացանք ձեզանից:

Մեզ հետ էր եւ Շխալին. նա էլ դժգոհ եւ հիասթափուած ձեզանից, բողոքելով բաժանուեց եւ հեռացաւ:

Այդ դէպքից միայն մի քանի օր յետոյ տեղի ունեցաւ նրա սպանութիւնը:

Դուք ինքնակամ կերպով սկսեցիք այդ գործի քննութիւնը եւ մեր առաջ դրիք ամէն տեսակ արգելքներ, որպէսզի մենք չտեսնուենք ձեր բանտարկած մարդասպանների հետ, չխօսենք նրանց հետ, չիմանանք թէ նրանք ինչո՞ւ եւ ինչպէս են սպանել Շխալիին:

Ինչպէս լսում ենք դուք այդ բանտարկածներին ենթարկել էք ծեծի, բռնութեան, եւ այդ ճանապարհով դուրս էք կորցել իբրեւ թէ ինչ որ ցուցմունքներ. այժմ էլ մտադիր էք նրանց սպանելու երեւի այն նպատակով, որպէսզի հետք անգամ չմնայ, եւ հնար չլինի իսկական աղբիւրից իմանալու սպանութեան հանգամանքները, եւ այդ բոլորի հետ միասին դուք զանազան լուրեր էք տարածում հասարակութեանը մոլորեցնելու համար:

Այդ ամէնը մեզ Շխալիի ընկերներին տեղիք է տալիս կասկածելու, որ դուք էք նրա արեան պատասխանատուն: Եթէ ուզում էք արդարանալ այդ մեղադրանքից, անմիջապէս համաձայնեցէք բոլորովին չէզոք մարդկանց քննութեամբ դուրս բերել իսկական ճշմարտութիւնը, եւ բաց անել իսկական ոճրագործներին:

Մինչեւ այդ դատը, իրաւունք չունէք որեւէ վճիռ կայացնելու այդ բանտարկեալների վերաբերմամբ. նրանք պէտք է կենդանի մնան վկայութիւն տալու համար:

Ահա այս է մեր պահանջը, որ դնում ենք ձեր առաջ: Համաձայնեցէ՛ք, եթէ ձեր խիղճը մաքուր է, եթէ չէ՛ք վախենում իսկական ճշմարտութիւնը բացուելուց:

ՄԻՔԱՅԷԼ  
ԽՆՈՒՍՅԻ ՏԻԳՐԱՆ

8 Հոկտ. 1906

Բ 4.- Ա Ձ Գ

Վերջին օրերս Թիֆլիսում տարածել են «ժամանակաւոր օրէնքներ» անունով մի թուուցիկ, որով մի խումբ մութ անձնաւորութիւններ դաւաճանօրէն իւրացնելով «Հ. Յ. Դաշնակցութեան ժամանակաւոր զինւորական խորհուրդ» անունը, աշխատում են միամիտներին մոլորեցնել, իրանց ստոր ոճրալի քայլերը նախապէս արդարացնել եւ հասարակութեան վրայ որոշ սարսափ տարածել, գրելով «Իւրաքանչիւր հարիւրապետ առանձին առանձին իր տասնապետական խորհուրդով կազմում է զինուորական դատարան՝ դատելու այն չարագործներին, որոնք որ կը համարձակուեն մեր ընկերներից որեւէ մէկի կեանքի դէմ մահափորձեր կատարել, նմանապէս նրանք որ այդ յանցաւոր փորձերի համար հետամուտ են լինում եւ իրենց կասկածելի շարժումներով իրենց վտանգաւոր հետքերը մատնում, այդպիսիները նոյնպէս ենթարկւում են հարիւրակային դատարաններին, եթէ սակայն յանցանքի փաստերը ակներեւ են եւ հաստատուն»:

Այդ առիթով Թիֆլիսի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէն յայտարարում է՝ որ 1) Հ. Յ. Դաշնակցութիւնը չունի «ժամանակաւոր զինուորական խորհուրդ» անունով մարմին, հետեւապէս այդ անուան տակ գործող անձնաւորութիւնները սոսկ սրիկաներ են կամ կուսակցական դաւաճաններ:

2) Դաշնակցական ոչ մի հարիւրապետ կամ տասնապետ իրաւունք չունի որեւէ դատ վարելու, առաւել եւս «զինուորական դատարան» հաստատելու. ուստի այդպիսի քայլեր կատարողները պէտք է հասարակութեան կողմից ճանաչուեն իբրեւ խուլիգաններ:

Ազդարարելով դրա մասին, Թիֆլիսի Կենտրոնական Կոմիտէն առաջարկում է հասարակութեանը դաշնակցական հարիւրապետի եւ տասնապետի անունը սեփական հաշիւների համար այդ ձեւով չահագործողների հետ վարուել ինչպէս հասարակ աւազակների եւ շանտաժիտների հետ:

Հ.Յ.Դ. ԹԻՖԼԻՍԻ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

1906 թ. 16 նոյեմբեր

Փաստ. 1737-3

Փաստ. 693-11

Բ 5.- ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ  
ԸՆԿԵՐ ՉԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Նոր լոյս է ընկել ինչ որ երկու խղճուկ թուուցիկ — մինը՝ «Մեղադրական ակտ» վերնագրով, միւրը՝ «Ձինւորական ժամանակաւոր դիկտատուրա»...

Հեղինակը, կամ փոքրաթիւ հեղինակները (գուցէ հալածուած կուսակցութիւնից), իրանց անուանում են «Հ. Յ. Դաշնակցութեան ժամանակաւոր Ձինւորական խորհուրդ»:

Այդ ինքնակոչ ու անբեւոյթ մարմինը Դաշնակցութեան խորհուրդին եւ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին երեւակայում է պատճառ «մեր ներկայ քաղաքական բարդ ու փոթորկալից կեանքի» եւ յանդուգն համարձակութեամբ յայտարարում է զինուորական դիկտատուրա...

Ուրեմն, մի հոգեկան հիւանդ կամ մի բռնակալ խաբակ երազում է կենտրոնացնել իր ճիրաններում ուսկալար-Դաշնակցութեան բոլոր գործերը եւ հուրն ու սուրը դարձնել ղեկավարող սկզբունք:

Ըստ ինքեան գուարձալի ցնորք է այդ, ի հարկէ՝ բայց դա դառնում է չափազանց վրդովեցուցիչ, երբ այդ նենգամիտ պարոնները, փոխանակ իրանց դժգոհութիւնները բացատրելու ուր հարկն է եւ արդար պահանջներ դնելու (եթ ունին), ձգտում են միահեծան իշխանութեան եւ այդ գարշ նպատակը քողարկում են Դաշնակցութեան շահերով, խօսում են նահատակ-ընկերների անբիծ անունից, յայտարարում են այդ դաւադրութեան իբր մեղսակից դեռ կենդանի ու յարգուած ընկերներին: Եւ այդ բոլորը միամիտ զինուորներին մոլորութեան մէջ ձգելու եւ իրանց ցանցառ շարքերը խտացնելու համար:

Զգուշացէ՛ք, ընկերներ, եւ զգուշացրէ՛ք միամիտ ընկերներին, որ անմեղ զոհ չդառնան ի զուր:

Իսկ դաւաճան պարագլուխները շուտով կը յանձնուեն արտակարգ զինուորական դատարանին, կազմուած Դաշնակցութեան պատշաճ մարմինների կողմից:

ԴՈՒՄԱՆ, ՍԵՊՈՒՀ, ՀԱԶԻ-ՅԱԿՈՐ, ՄԵԻԹԱՐ,  
ԱԽԼԱԹՑԻ ՄՈՒՐԱԴ,  
ՍՄԲԱՏ, ԽԵԶՕ (Դաշնակցական)

Մանօթ.- Յաւում ենք, որ մեր ընկերներից շատերը բացակայ են եւ դեռ ոչինչ չգիտեն այս անախորժ դէպքի մասին:

Բ 6.- ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻ  
ՆԱՍԱԿԸ

Սարուստանի զինուոր ընկերներին.  
Միտելիք

Յաւում ենք արեան մէջ մկրտուած ընկերներ, որ դուք մոռացած Տաճկաստանի ու Կովկասի այս տագնապալի դրութիւնը, մոռացած ձեր ընկեր նահատակների վրէժը, ընկած էք այնպիսի ցնորքների յետեւ, որ կորստաբեր է երկար ու ձիգ տարիների ընթացքում ստեղծուած այն կազմակերպութեան, որի անունն է Դաշնակցութիւն.— ընկերներ. դուք պէտք է գիտնաք, որ ձեզ յաջորդող ընկերները, որ արեան ծովի մէջ լողացող նահատակ հայ ժողովուրդը, ձեր ճակատին պիտի դրոշմեն դաւաճանի սեւ անունը, եթէ դուք այնքան նեղ, այնքան կուսակցական լինիք, որ մոռանաք, կլանւիք միմիայն կովկասեան կամ Տաճկահայ հարցով: Զեզնից կոյր են նրանք, որ չեն ընդունում Տաճկաստանի գործի կարեւորութիւնը եւ Կովկասեան հարցի անհրաժեշտութիւնը.— դա դէմ է յեղափոխութեան, դա կոյր հոսանք է, որ արհամարհում են արեան մէջ խեղդուող ձեր ընկերները.— մեզ թշուառներին, կենդանի նահատակներին հարկաւոր չեն նեղ կուսակցականներ, մեզ պէտք են յեղափոխականներ, որ ըմբռնում են ժամանակի պահանջները, որ մտածում են Տաճկահայ եւ Կովկասահայ ժողովրդեան վրայ հաւասարապէս: Յաջողութիւն ենք մաղթում ազատութեան համար նահատակուող այն զինուոր ընկերներին, որ Դաշնակցութեան դրօշին, սկզբունքներին հաւատարիմ ընկնում են յանուն հայութեան՝ վիշտը իւր կրծքին: Իսկ մեր արիւնդ թող անէ՛ծք լինի այնպիսիներին, որոնք կլանուած միմիայն Տաճկահայ կամ Կովկասահայ դատով, ուզում են քայքայել Դաշնակցութեան հոյակապ կազմակերպութիւնը:

Ի. Ղ. Դուրան-Բարձրաւանդակի  
Կենտ. Կոմիտէի  
ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇ

Դուրան 1906, 17 Հոկտեմբերի

Իսկականը կնքուած է իւր անձնական կնիքով



Բ 7.- «ԱՆՁԱՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԷԿ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ»<sup>8</sup>

Պատճեն

906 XII 28, Բերլին

ցիային «Դաշնակցութեան» մէջ ակտիւ մասնակցութիւն ունեցող մի քանի ընկերների:

Ընկերներ,

Ինչպէս ձեզ յայտնի է Հ. Յ. Դաշնակցութեան մէջ կայ մի հոսանք, որը կողմնակից է այն հայեացքի, որ Տաճկահայ դատը եւ կովկասեան գործունէութիւնը պէտք է բաժանել միմիանցից եւ վարել երկու իրարից անպայման տարբեր կուսակցութիւնների մէջ:

«Դաշնակցութեան» մէջ ներկայումս աշխատող եւ յիշեալ հոսանքին պատկանող Թիֆլիսի ընկերները մի շարք նիստեր ունենալով եւ

1) Ի նկատի ունենալով, որ սոյն Դեկտեմբերի կէսին սկսուած է «Դաշնակցութեան» Ընդհանուր ժողովը, որտեղ շնորհիւ նրա կազմի, կարող է որոշել, որ «Դաշնակցութիւն» չպէտք է շարունակի յիշեալ երկու դատերն ալ միասին վարել:

2) Ի նկատի ունենալով, որ Ընդհանուր ժողովի այդպիսի որոշման հետեւանքը այն կը լինի, որ մեզանից շատերը հեռանալու են «Դաշն»-ից,

3) Ի նկատի ունենալով, որ այդ ընկերների հեռանալը ինքը մի նպատակ չէ եւ հեռանալով նրանց միասին չէ վերջանում, այլ ընդհակառակը ցանկալի է եւ պէտք է աշխատել, որ այդ բաժանուելը կազմակերպուած արտայայտուի, որպէսզի որոշ գործնական նշանակութիւն եւ հետեւանք ունենայ:

— Որոշեց ինիցիատիւ<sup>9</sup> վերցնել Թիֆլիսում մի կոնֆերենցիա<sup>10</sup> գումարելու «Դաշնակցութեան» մէջ գտնուող այն ընկերներից, որոնք

- 1) կողմնակից են անպայման բաժանման եւ
- 2) Ընդունում են աշխատաւորական դասակարգային ըմբռնումը, եւ աշխատաւոր գիւղացիութիւնն ու ինդուստրիալ<sup>11</sup> բանուորութիւնը միացնում է մի կուսակցութեան մէջ:

Ի նկատի ունենալով մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, կոնֆերենցիայի նախաձեռնող ժողովը որոշեց ամէն մի վայրից եւ շրջանից յայտնի թուով ներկայացուցիչներ հրաւիրել, որի համաձայն «կոնֆերենցիային» Բերլինից հրաւիրում է մէկ ներկայացուցիչ:

Անկախ դրանից, ժողովի գործադիր մասնաժողովը իրեն [իրաւունք] վերապահեց հրաւիրելու կոնֆերեն-

կոնֆերենցիան կը բացուի Դեկտեմբերի 20ին:

I կոնֆերենցիայի Օրակարգը

- 1. կոնֆերենցիայի բացումը
- 2. Թիֆլիսի նախաձեռնող մասնաժողովի զեկուցումը
- 3. Զեկուցումներ շրջաններից:

II Օրակարգի հարցերը

- 1. Պատմափոխութիւնայական աշխարհայեցողութիւնը
- 2. կուսակցութեան սոցիալական ծրագիրը-
  - ա) բանուորական-,
  - բ) Ագրարային-,
  - 3. Քաղաքական ծրագիրը-,
  - 4. Ազգային հարցը,
  - 5. Տակտիկա եւ կազմակերպչական սիստեմ.
  - 6. Մեր վերաբերմունքը դէպի Տաճկահայկական դատը.
  - 7. Մեր վերաբերմունքը դէպի Ընդհանուր ժողովը — (Դաշնակցութեան)
  - 8. Այլ հարցեր:

Թիֆլիս, 1906 XII

8.- Սիիրանական — խմբապետական «աջ»ին հակադրուած հատուածը, որ ծանօթ էր «անջատական» անուանով, կ'առաջադրէր ստեղծուող այնպիսի կուսակցութեան մը, որ ունենար առաւելաբար «սոցիալիստական» ուղղութիւն եւ գործունէութիւն կովկասեան եւ համառուսական ընդհանուր շարժումներու շրջանակին մէջ:

Ներկայացուած փաստաթուղթը նմոյշն է այդ հատուածի նախաձեռնութիւնները:

9.- Նախաձեռնութիւն:

10.- հտորհրդաժողով:

11.- Ճարտարարուեստական, արդիւնաբերական:

Բ 8.- ՄԱՐԻ<sup>12</sup> ՆԱՄԱԿԸ Դ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Դ-րդ Ընդհանուր ժողովին

Տաճկահայկական հարցը, որ ճանաչուած է իբրեւ քաղաքական մի կարեւոր խնդիր եւրոպական կառավարութիւնների կողմից, Բերլինի վեհաժողովով եւ 1905ի Մայիսեան ծրագրով, որ սրբագործուած է հարիւր հազարաւոր զոհերով, հայ ժողովրդին ներշնչած տանեակ տարիների յոյսերով ու տենչերով եւ յեղափոխականներին դէպի անձնագոհութիւնը մղող հարիւրաւոր օրինակներով, չի կարող դառնալ ուղեմ-չուղեմի առարկայ: Այդ դատը, իբրեւ ճշդուածների, հարստահարուածների դատ, հաւասարապէս տեղ պիտի գտնի բոլոր հոսանքների, բոլոր ուղղութիւնների մարդկանց սրտերում:

Դաշնակցականների համար տաճկահայկական հարցը աւելի քան մեծ տեղ պիտի բռնի, քանի որ տարիներից ի վեր նրանք են վերցրել իրենց ուսերի վրայ եւ լաւ թէ վատ, աջող թէ անաջող, բայց սիստեմատիկ կերպով առաջ են մղել այն աստիճան, որ ետ դառնալը այլեւս անկարելի է դարձել: Էլ չեմ ծանրանում այն բարոյական պատասխանատուութեան վրայ, որ «Դաշնակցութիւն» ունի դէպի տաճկահայը, որին նա տարիներով ներշնչել է յոյս ու հաւատ, մի լաւագոյն ապագայ եւ նրան մղել է դէպի մի անհաւասար կռիւ, կռիւ, որից մի անգամ երես դարձնողը կորցնելու է իր՝ պահանջատէրի իրաւունքները:

Դաշնակցութիւնը, իբրեւ մի յեղափոխական ամբողջ կազմակերպութիւն, իր գործունէութեան գլխաւոր առարկան պիտի ունենայ տաճկահայ դատը: Այդ է թելադրում թէ տրամաբանութիւնը եւ թէ պարզ պարտականութիւնը: Եւ միակ միջոցը այդ դատը վաստակելու համար, մնում է կրկին շարունակել յեղափոխական շարժումը Հայաստանում, անշուշտ գործելակերպի մէջ մտցնելով մի մեծ փոփոխութիւն, որ համապատասխան լինէր երկրի պահանջներին եւ, որ գլխաւորն է, տանիլ գործը աւելի ուժեղ չափով ու պատրաստութեամբ՝ թշնամուն ամիսներ դիմադրելու աստիճան:

Մանրանալով տաճկահայ դատի վրայ այսչափ երկար, ի հարկէ, իմ միտքս չէ, թէ «Դաշնակցութիւնը» պէտք է չգրադուի կովկասեան կամ, աւելի ճիշտ, ռուսական ընդհանուր շարժման գործով:

Ժամանակը եւ պայմանները մեզ հասցրել են այնպիսի երեւոյթների, որոնց հանդէպ լուռ հանդիսատես մնալը երբեք ներելի չէ: Բայց այնտեղի մեր գործունէութիւնը այնչափ շրջահայեաց կերպով պէտք է տար-

ւի, որ մենք ամբողջովին չկլանուենք նրանով, կամ այնտեղի ընդհանուր շահերին չզոհաբերենք մեր գլխաւոր հարցը — տաճկահայ դատը: Ռուսական շարժման մէջ ունեցած իր մասնակցութեան գործում հայը աւելի տակտիք պիտի ունենայ քան լեհացին, հրեան կամ վրացին, որոնք չունեն իրենց ետեւը մի խնդիր, որպիսին է մեզ համար տաճկահայկականը, որ որոշ չափով ճակատագրորէն եւ անխուսափելիորէն ծանրանում է կովկասահայի վրայ: Դրա համար էլ մեր ջանքը պիտի լինի — ինչ էլ անելու լինենք կովկասում միւս ազգութիւններից ետ չմնալու համար — գործերը տանել այնպէս, որ դրանցով ոչ միայն տաճկահայ դատը չվնասուի, այլ ընդհակառակը կովկասի իւրաքանչիւր մեր քայլը պէտք է լինի յատկապէս այդ դատին նպաստաւոր, թէկուզ հէնց դրանով էլ մի քիչ պակաս արած լինենք կովկասում, քան այն, ինչ պահանջում են մեզանից մեր հակառակորդ կուսակցութիւնները, որոնք ռուսական հարցից դուրս ոչինչ չեն ճանաչում եւ որոնց համար տաճկահայ դատը մի «ուտոպիա է»<sup>13</sup>:

Սոցիալիզմի գաղափարը եղել է մեր ծրագրում իբրեւ հեռաւոր նպատակ Տաճկահայաստանում, հետեւաբար, երբ մենք գործում ենք կովկասում, նրա պրոպագանդը այնտեղ չի կարող համարուել մի նորամուծութիւն մեր կազմակերպութեան մէջ: Դա միայն խօսքից գործի ձեռնարկելն է, որի դէմ ոչ ոք ոչինչ չի ունենալ: Բայց մի բան որ աչքի է ընկնում, դա մեր ուժեղ պրոպագանդն է՝ այդ գաղափարի բոլոր ելեւէջները միանգամից մտցնելու ու մեր ժողովրդի բոլոր խաւերում անխտիր, որ մտաւոր բարձր պաշար չունի ամէն ինչ ըմբռնելու եւ դրա համար էլ այսօր որչափ մեզանից դժգոհ է իրեն ծայրայեղ կարծող հայը, նոյնչափ եւ այն տարրը, որ աւելի չափաւոր հողի վրայ է կանգնած: Այն ինչ այդ գաղափարը պէտք է արծարծուէր մեր ժողովրդի մէջ աստիճանական կերպով՝ ժողովրդի գարգացման եւ ըմբռնման համեմատ:

Էլ չեմ խօսում մեր հարուստ դասակարգի մասին, որ այսօր իրեն գտնում է թշնամական դիրքի մէջ դէպի «Դաշնակցութիւնը» հէնց վերջինիս այն ուժեղ պրոպագանդի պատճառով, որ նա մղում է բանուոր եւ արհեստաւոր դասակարգերի մէջ: Իսկ ամէնքին յայտնի է, որ «Դաշնակցութիւնը» իր նիւթակներ հայթայթում է գլխաւորապէս հարուստ հայերից: Ահա, այս կէտն է, ո-

12.- Միքայէլ Տր Մարտիրոսեան, որ Ընդհ. ժողովի օրերում կը գտնուէր Ժընեւ եւ կը վարէր Դրօշակի խմբագրութիւնը:

13.- Յոսէֆ, երազ, երեսակայական խորհուրդ:

րով քար գայթակղութիւն է դառնում մեր կազմակերպութիւնը մի կողմից հարուստ եւ միւս կողմից աղքատ հայի միջեւ: Ընտրութիւնը այդ երկուսի մէջ արդէն անխուսափելի է դառնում մեր կազմակերպութեան համար: Եթէ չլինէր տաճկահայ դատը, մենք չէինք էլ տատանուի մի ընդհանրացում, թէ որն ենք ընտրելու, բայց մեր ներկայ պայմաններում դա մնում է մի դիլեմա<sup>14</sup>, որը Ընդհ. Ժողովի ուշադրութեան գլխաւոր առարկան պիտի դառնայ:

Գալով սոցիալիզմի պրոպագանդին Տաճկաստանում, ես դրան ոտով-գլխով դէմ եմ: Այդ բանին կողմնակից են այն մարդիկ, որոնք կամ երկրի պայմաններին ծանօթ չեն եւ կամ թէ տարուած են կովկասեան կեանքով: Մի երկիր, ուր ոչ մի գործարան չկայ եւ ոչ էլ պրոլետարիատ<sup>15</sup>, ուր մահու եւ կեանքի տագնապից հարցն է կախուած ամէնքի գլխին հաւասարապէս, այնտեղ ցնորք է խօսել մի վարդապետութեան մասին, որ միայն խաղաղ, կուլտուրական եւ ինդուստրիական<sup>16</sup> աշխարհներում է արծարծւում: Այս արդէն պարզ լոգիկան<sup>17</sup> է թելադրում մեզ, իսկ եթէ քաղաքականօրէն մը տածենք, այդտեղ արդէն հարցը աւելի է լրջանում: Ո՞վ կարող է կասկածել, որ եւրոպական կառավարութիւնները, որոնց վրայ այնչափ յոյսեր ենք դրել, գիտենալով, թէ հայ յեղ. կազմակերպութիւնը սոցիալիզմը դնում է իրբեւ նպատակ Տաճկաստանում, հակառակ չպիտի լինեն մեր ժողովրդի դատին՝ հէնց սոցիալիզմը իր բնում խեղդելու համար միայն: Բերածներս լուրջ հարցեր են, որ դնում եմ Ընդհ. Ժողովի առաջ՝ առանց կարողանալու իմ վերջնական կարծիքները յայտնել, այնքան ծանրակշիռ են դրանք: Այդպիսի հարցերը ձեռքի մի շարժումով չեն լուծւում: Այդ հարցերի աջող կամ անաջող լուծումներից էլ կախուած է «Դաշնակցութեան» կազմակերպութեան ինչ ձեւի վերածուիլը մօտիկ ապագայում եւ նրա գործունէութեան տակտիքը Տաճկահայաստանում ու կովկասում:

Այս խորհրդածութիւններից յետոյ ես անցնում եմ մի քանի առաջարկների, որոնք կարելու են իմ կարծիքով

1) Կովկասեան գործունէութիւնը այլեւս անխուսափելի լինելով կազմակերպութեան համար, բնական է, որ կովկասեան մեր ոյժերը կլանուեն նրանով եւ ակամայից շատ անգամ մոռանան տաճկահայ դատին ընթացք տալու գործը, բայց քանի որ տաճկահայ դատին ոյժ տուողը ինչպէս մինչեւ հիմա նոյնպէս էլ այսուհետեւ պիտի լինի կովկասը, գործերը կանոնաւոր տանելու համար — կովկասում պիտի ունենալ մի մարմին, որ տեղական գործերով բոլորովին չզբաղուի, այլ միայն տաճկահայ խնդրով: Նամակներին շտապ պատասխանել, միջոց, զէնք, փող եւ մարդ հասցնել — ահա նրանց գործը:

2) Տաճկահայ գործունէութեան վայրերից, բարձի թողի չպէտք է անել Լեռնավայրը<sup>18</sup>, որ իր անցեալով, իր

դիրքով, հայ ժողովրդի բաւական հոծ բնակչութեամբ եւ ծովին մօտ գտնուելովը մէկից աւելի յարմարութիւններ է ներկայացնում շարունակել լինել ուշադրութեան առարկայ:

3) Սկզբունքով միանգամ ընդ միշտ պիտի վերացնել տեւորը դրամի խնդրով:

4) Որեւէ կուսակցութեան պատկանող անհատի վերաբերմամբ տեւորը դատապարտել եւ միայն նրա կուսակցութեան միջոցով պատժել տալ յանցաւորին:

5) Մեր գինուորականների բռնութիւններին վերջ տալ:

6) Բարձրագոյն մարմինների անդամների համար պարտաւորեցուցիչ դարձնել իրենց ստանձնած գործը չթողնել որեւէ պատճառով, առանց իրենց ընկերների փոխադարձ համաձայնութեան:

7) Նկատի ունենալով որ «Դաշնակցութեան» դէմ որոշ ժամանակից ի վեր մի խուլ դժգոհութիւն է սկըւած հէնց դաշնակցական մի քանի շրջանների մէջ, թիւրիմացութիւններին վերջ տալու համար, լաւ կը լինի, դժգոհ տարրերից մի ներկայացուցիչ հրաւիրել եւ նրանց առաջարկները լսելի դարձնել Ը. Ժողովին:

8) Կովկասում մեր բոլոր առաջնակարգ ոյժերը հրապարակի վրայ ծանօթ լինելով, ամէն մի խիստ քայլ մեր կողմից կարող էր վտանգել նրանց, եւ հէնց դրա համար էլ, վերջերս, երբ պէտք կար խիստ միջոցների դիմել շանտաժների առաջն առնելու համար, բնականօրէն, մեր ոյժերին չվտանգելու տեսակէտից մեր կազմակերպութիւնը ձեռնպահ դիրք բռնեց:

Ուրիշ ճար չի մնում, եթէ միայն՝ ունենալ մի գինուորական մարմին՝ նման դէպքերում գործի անցնելու համար, եւ որի անդամները բոլորովին անծանօթ դէմքեր պիտի լինեն եւ որի մասին պիտի յայտարարել, թէ նա ինքնազուլու է իր որոշումների մէջ եւ անկախ Արեւելեան Բիւրոյից:

9) Մի խոշոր տեւոր, որի մասին խօսած եմ այստեղ մեր մէջ եւ որը գիտէ խաչատուրը<sup>19</sup>, որին ես խնդրած եմ պաշտպանել այդ քայլի օգտակարութիւնը:

Ընկերական ջերմ բարեւներով՝

  
ՄԱՐ

18 Փետր. 1907 ժընեւ

- 14.- Երկսայրաբանութիւն, դժուար երկընտրանք:
- 15.- Բանուորութիւն:
- 16.- Ճարտարարուեստական:
- 17.- Տրամաբանութիւն:
- 18.- Կիլիկիան:
- 19.- Խաչատուր Մայրուհեան՝ Է. Ակունցի, անդամ Դ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին:

### Ք 9.- ՆԻԹՐԱՅԻ [ՅԱՐ. ՇԱՀՐԻԿԵԱՆ] ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

Արեւմտ(եան) Բ.-ի ընկերներին:

Երէկ Ձեզ ուղարկեցի երկու թուղթիկներ՝ բաց թողած «Երիտասարդ Դաշնակցականների կազմակերպութիւն» ստորագրութեամբ, Մայիսի 1ի ընդհանուր գործադուլի առիթով:

«Դաշնակցութեան կրիզիսը»<sup>20</sup> եւ «Ինչո՞ւ ենք անջատուում»<sup>21</sup> բաւական էին ցոյց տալու միջավայրից հեռու գտնուող ընկերներին՝ թէ այդ պարոնները ինչի՞ են ձգտում եւ իրենց ձգտումի յաջողութեան համար ի՞նչ են կատարում: «Ինչո՞ւ ենք անջատուում» բացորոշ յայտարարում էր այն՝ ինչ բերանացի շատ անգամ յայտնել էին, թէ մինչ իսկ եթէ Դաշնակցութիւնը Տաճկահայոց դատով էլ չզբաղուէր, իրանք դարձեալ պիտի բաժանուեն եւ Ընդհ. Ժ.-ի ո՞չ մի որոշում ու ծրագիր իրանց աչքում արժէք չի կարող ունենալ:

Մասսային հրապուրելու, Դաշնակցութիւն անուան հմայքից օգտուելու համար մի կողմ թողին իրանց նախնական «անջատական» անուանակոչութիւնը ու մկրտուեցին «Երիտասարդ Դաշնակցական» անունով:

Մերժեցին կազմակերպչական զէնքերը տալու, յաւակնութիւն յայտնեցին՝ իրբեւ ժառանգութիւն, կազմակերպութեան ընդհանուր գոյքերից բաժին պահանջելու:

Ինսինուացիաներ<sup>21</sup>, գրպարտութիւններ, սուտեր, կեղծիքներ, խեղաթիւրումներ չմնաց՝ որ ի գործ չդնեն եւ շարունակում են գործ դնելու: Այնտեղ՝ ուր իրանց անջատականութիւնը յայտնել վտանգաւոր կամ վաղաժամ են համարում, այնտեղ օգտուում են իրանց անցեալ դաշնակցականութիւնից ու շահագործելով այդ անունը եւ դաշնակցական պրոպագանդիստի դիմակը՝ աշխատում են կեղծ դաշնակցական մարմիններ կազմել: Ձեռնարկել են էքսպրոպրիացիայի<sup>22</sup> ձեռնարկներ, խայտառակ կերպով օձիքնին ձեռք տուել, գործիքներով, կառքով, մարդկանցով բռնուել են կողոպտուած տան մօտ, կողոպտուողը մատնանիչ է արել իրանց, պնդել է լաւ ճանաչելը, բայց խաբելով այն տեղի (Պահակ — Հայոց Գիւղ) մեր ենթակ(ումիտէ)ի ընկերներին՝ թէ ձեռնարկի են եկել Կեղր. Կ.-ի կարգադրութեամբ եւն., Կեղր. Կ.-ի անունից սպառնալով ոստիկանու-


թեան՝ ազատուում են: Ու ազատուելուց յետոյ էլ Կեղր. Կ.-ի հասցէին ամենախայտառակ ածականներ շարտում են:

Դուժման ենթակ(ումիտէ)ի դատապարտուած նախկին անդամներից մինը՝ որ անջատական է լինում, զոհ է գընում մի ոճրագործութեան. շահագործում են դէպքը եւ յայտարարում են թէ Կեղր. Կ.-ն է սպանել տուել, ու ահազին ցոյցեր են կատարում: Հաստատուում է որ սպանողը ո՞չ միայն դաշնակցական չէ, այլ հայ անգամ չէ, բայց շարունակում են շահագործել: Ու այսպէս անվերջ:

Մի մեծ տարբերութիւն չկայ Միհրանական խուլիգանների ու անջատական Բագուայ մեծամասնութեան վարմունքի մէջ: Եւ դրանք իրանց ամբողջ ուժը կեղրոնացրել են Բագուում: Միհրանական խուլիգանութեան դէմ Ընդ. Ժ.-ը տուել է որոշում, բայց անջատական խուլիգանութեան, անուան շահագործման դէմ ո՞չ մի որոշում չի տրուում, որից Դաշնակցութիւնը աւելի է տուժել ու տուժելու է, որովհետեւ Միհրանականութիւնը ինքնըստինքեան միայն բիրտ ուժ ներկայացնելով մասսան չի հրապուրում, բայց սրանք յանուն խոհալի, սոցիալիզմի հրապուրում են:

Անհրաժեշտ է շտապել եւ միանգամ ընդմիշտ մի որոշում կայացնել ու յայտարարել:

Այս կարծիքի են մեր բոլոր ընկերները այստեղ:

  
ՆԻԹՐԱ

3 / V 1907  
Ոսկանապատ

20.- Տագնապը, ճգնաժամը:  
21.- Չարամիտ ակնարկութիւններ՝ անուղղակի եւ վարկաբեկիչ:  
22.- Բռնագրաւումի:

**Բ 10.- ԻՆՔՆԱԿՈՉ ՁԻՆ. ՄԱՐՄՆԻ ԳԻՄՈՒՄԸ  
ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ՝<sup>23</sup>**

**Դիմումն Հ. Թ. Դաշնակցութեան  
Ընդհանուր Ժողովին**

Յանուն մարդկային արժանապատուութեան ժողովի իւրաքանչիւր ներկայացուցիչ պէտք է ընդունէ որ իր պատգամաւորութիւնը օրինական կարող է համարուել միայն այն դէպքում, երբ նա վայելում է իր շրջանի դաշնակցական համայնքի վստահութիւնը, եւ նամանականդ երբ նա անկեղծ թարգմանն է իր շրջանի ցանկութիւններին:

Նկատելով որ ներկայ ժողովը չէ այն ժողովներէն, ինչ որ էին Դաշնակցութեան անցեալ Ընդհանուր Ժողովները, անհրաժեշտ է մի քանի կարեւոր նշանակութիւն ունեցող հարցերի վրայ ծանրանալ:

1) Ժողովը ընդունո՞ւմ է արդեօք իրբեւ պարտադիր որոշում նախորդ Ընդհանուր Ժողովի կանոնադրութիւնը. եթէ ընդունում է, ապա եւ ուրեմն նոյն կանոնադրութեան 119-երորդ յօդուածը ուժ է ստանում մեղադրելու այն մարմիններին՝ որոնք խախտելով Դաշնակցութեան հիմնական նպատակը՝ առաջ են բերել ծրարագրային արմատական խոշոր փոփոխութիւն. այն ինչ վերոյիշեալ յօդուածը, ծրագրի անխախտիւթիւնը սահմանափակել է նոյնիսկ Ընդհանուր Ժողովի առաջ [sic]:

2) Ժողովը ընդունո՞ւմ է արդեօք որ կովկասի պատգամաւորները գուրկ են վստահութիւնից որովհետեւ Դաշնակցութիւնը այժմս ներկայացնում է երկու հակառակ բանակ.՝ դաշնակցականներ եւ նախագծականներ. առաջինը ստիպողական պայմանների տակ կըզգիանալով գործից գրկուել է վարչական դիրքից, որ եւ դեռ եւս անկարող է նոյնիսկ իր վարչական նոր դեկր պահպանելու: Իսկ երկրորդը՝ վարչական դիրքի եւ բոլոր միջոցների տէր եւ տիրապետող, շատ պարզ է որ յօդուած նախագծի ժողովին իր թեկնածութիւնը անցկացնելու բոլոր յարմարութիւններն է գրաւել:

Այնուամենայնիւ, ժողովը ի նկատի պէտք է ունենայ, որ արհեստական միջոցներով պատգամաւոր ներկայացող նախագծականները, եթէ նոյնիսկ ձայնի առաւելութիւն ներկայացնեն դարձեալ նշանակութիւն չունի, որովհետեւ այստեղ կայ դաշնակցական համայնքի մի ահաւոր բանակ՝ որի սրտի մէջ Դաշնակցութեան անցեալը շատ խորն է ակօսել.՝ արձանագրելով միմիայն մի նպատակ, այն է՝ հաստատութեան միջոցաւ Թիւրքաց Հայաստանում ձեռք բերել քաղաքական եւ տնտեսական ազատութիւն:

Յիշեցնելով ներկայ ժողովին այն անթիւ նահատակութիւնները Դաշնակցութեան նպատակի իրագործման, պահանջում է ժողովից հաւատարիմ մնալ Դաշնակցութեան հիմնական նպատակին ու չդաւաճանել ժողովուրդը եւ նրա փայփայած մեծ դատը:

3) Ժողովը ընդունո՞ւմ է, որ ազատագրական կռիւր Տաճկահայաստանում եւ դասակարգային կռիւր կովկասում, իրանց տարբեր ծրագրով եւ տարբեր պայմաններով, երբեք չեն կարող հաշտուել միմիանց հետ մի կուսակցութեան դրօշի տակ, ինչպէս այդ ապացուցել է կուսակցական մեր ներքին պայքարը:

4) Ժողովը ընդունո՞ւմ է, որ կովկասեան ներկայացուցիչները Ընդհանուր Ժողովում աւելի նախագծականներ են քան դաշնակցականներ. մինչդեռ մենք փաստերով կ'ապացուցենք, որ նախագծականները չունորհիւ իրենց վարչական դիրքի եւ միջոցների, ամէն ներքին եւ աննրբելի միջոցներ գործ են դրել միմիայն իրենց թեկնածուն ընտրելու եւ իրենց նոր դաւանանքը առաջ տանելու:

Եւ այնուհետեւ յիշեցնելով այս բոլորը Ընդհանուր Ժողովին, յայտնում ենք որ Դաշնակցութեան Մրազիւրը չէ որ փոփոխութեան կարօտ է, այլ նրա ներքին տակտիկան եւ գործելակերպը միայն. եւ ահա այստեղ տալիս ենք նրա ամփոփ նկարագիրը:

1. Պահպանել Դաշնակցութեան հիմնական նպատակը, եւ թոյլ չտալ զանազան իդիոլոգիաների, որոնք ժամանակի երեւոյթներին յարմարացնելով իրենց գործը, դաւաճանում են նրա քաղաքական դերը դիպլոմատիական շրջանում: Հակառակ դէպքում կը շարունակուի մեր անկախ գործունէութիւնը եւ կը տարածուի աւելի լայն ասպարէզում:

2. Ոչնչացնել մոնոպոլային տիրապետութիւնը, եւ համաձայն Դաշնակցութեան ապակենտրոնացման լայն սկզբունքների առաջ բերել հասարակական լայն չափերի մասնակցութիւն. որից անպայման կախուած կը լինի ընդհանուր հաւատքն ու վստահութիւնը:

3. Օգտուելով անցեալի դառն փորձերից, հայ ժողովրդի պատմական ծանր վիճակը բարւոքելու եւ մեր դատը առաջ մղելու միակ հնարաւոր միջոցն է առաջ բերել համայնական զինուորութիւն՝ զինուորական ուսումնարանների միջոցաւ. զինուորական ուսուցիչները

23.- Տպագիր թողցիկ ինքզինք «Դ. 3. Դ. Մեծ քաղաքի ժամանակաւոր զին. խորհուրդ» անուանող միտրանակաւ ինքնակոչ մարմին:

միաժամանակ կը վարեն պրոպագանդի մարմնի բաց թողած թուղցիկներից, որը միակ եւ օգտակար միջոցն է դաշնակցական համայնքի միատեսակ զարգացման:

4. Դատ ու դատաստան այն բոլոր բռնութիւնների եւ զեղծումների դէմ, տալով արձագանգ ժողովրդի արդար բողոքներին, որոնք վերջին ժամանակներում արտայայտուել են այնքան ուժեղ, եւ դեռ եւս մնում են անհետեւանք: Մենք կը պահանջէինք Ընդհանուր Ժողովից նշանակուէր քննիչ յանձնախումբ, որոնց գլխաւոր պատասխանատուութիւնը ծանրանալու է Արեւելեան Բիւրոյի վրայ, (եւ) որոնք պատճառ են եղել իրենց ապօրինի գործունէութեամբ՝ ընդհանուր գործը վտանգելու: Այս բոլորից յետոյ ցաւում ենք որ մի շարք անպատեհութիւնների առաջ անկարող ենք գտնուում մեր ներկայացուցիչները ուղարկելու, որոնք անշուշտ աւելի ընդարձակ բացատրութիւններով մանրամասն պիտի պարզէին տիրող անարխիայի պատճառները, բայց որովհետեւ այդ մեզ չի աջողուել մեզանից անկախ պատճառներով, հետեւապէս Ընդհանուր Ժողովի վրայ պարտք ենք դնում, որ նա պարտաւորուի նախ մեզ լրսել, եւ ապա գործի կամ մեր մասին որեւէ որոշում կայացնի:

Մենք պահանջում ենք Դաշնակցութեան ընկած դրօշակի պատիւը. Դաշնակցութիւնը զանազան ժամանակամիջոցներում տուել է հերոսների անթիւ շարքեր. նա սպառել է իւր նիւթական վերջին միջոցը եւ ձեռնուէնայն նստել է ուհակցիայի անողորմ ճիրաններում, բայց նա երբեք չի վհատուել, եւ երբեք վայր չէ ընկել նրա վեհ դրօշը: Բայց մեր ապիկար դեկավարների վերջին մի տարուայ գործունէութիւնը Դաշնակցութեան տարել է դէպի բարոյական անդունդը. եւ դրօշակը Սասնոյ սրբազան բարձունքներից ընկել է Թիֆլիսի յետին փողոցները:

Ձայներ կովկասեան բոլոր շրջաններից եւ մասնաւորապէս Տաճկահայաստանից:

[Կնիք]

**Հ. Թ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԵՍ ԲԱՂԱԲԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՁԻՆ. ԽՈՐՀՈՒՐԴ**

Թիֆլիս, 1907

Ք 11.- Հ. Յ. Դ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՀԱՐԵԿԻՉ ՄԱՐՄՆԻ ԵՐԵՔ ԱԶԳԵՐԸ

Փաստ. 240-6

1 Ա Չ Դ

Ընկերներ եւ քաղաքացիներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովի ուշադրութիւնից վրիպած էին այն բազմատեսակ վրդովիչ կեղեքումները, որոնց ենթակայ էր եւ է տակաւին մասամբ՝ Կարսի շրջանի Հայ գիւղացիութիւնը մի խումբ ինքնակոչ «յեղափոխականներ» կողմից: Դրանց շարքում գտնուում էին նաեւ մի քանի նախկին դաշնակցականներ, որոնք շարունակում էին մուկ անկիւններում շահագործել կուսակցութեան անունը:

Իրերի այս արգահատելի կացութեան մի դարման տանելու նպատակով, Ընդհ. Ժողովը մասնաւորապէս յանձնարարեց Հ. Յ. Դ. Կովկասի Ահաբեկիչ Մարմինն հարկաւոր միջոցները ձեռք առնել՝ մաքրելու Կարսի շրջանը այդ կեղեքիչներէ:

Ահաբեկիչ Մարմինս ի լրումն անցեալ 1907-ի գարնան եւ ամառուան մէջ ձեռք առած արատակարգ միջոցներին՝ որոնք մասամբ միայն կարող էին զգաստացնել այդ շարագործներին, վերջերս դիմեց աւելի կտրուկ միջոցի:

Գրաւոր կերպով պահանջ դրուեց այդ գեղծարարների պարագլուխներէն նշանաւորին՝ Խլաթցի Աւագին (մականունով «Առիւծ») մինչեւ Մայիսի 20 հեռանալ իր խմբով դէպի Բաթում այնտեղ սպասելով Քննիչ Ատեանի հրաւերին:

Հակառակ այն յօժարութեան որ Աւագը կանխաւ յայտնել էր թէ գրաւոր կերպով եւ թէ իր մէկ ազգակաւնի միջոցով ենթարկուելու կազմակերպութեան որոշումներին — նա ո՛չ միայն մերժում է ատեանի հրաւերը, այլ եւ հրապարակաւ նախատալից հայհոյանքներ է թափում յեղափոխական կազմակերպութեան հասցէին:

Ուստի Ահաբեկիչ Մարմինս նկատելով, որ Խլաթցի Աւագը իր գլխին հաւաքելով անգործների մի խմբակ չարաչար կեղեքում է գիւղացիներին Հ. Յ. Դաշնակցութեան լիազօր խմբապետի անունով, որ նա կատարել է բազմաթիւ բռնաբարութիւններ, որ նա կատարել է կամ մեղսակից է եղել անմեղներ սպանութեան,

որ նա իր ներկայութեամբ Կարսի շրջանում քաջալերում է հակայեղափոխական եւ աւազակային տարրերի զարգացումը,

որ նա, հակառակ մինչեւ հիմա իրեն նկատմամբ ցոյց տրուած ներողամտութեան, ոչ միայն չէ ուղղուել, այլ օրից օր եւս աւելի լրբացել ու անբարոյացել, եւ իր շահատակութիւնների անպատիժ մնալովը,

Վնասել Հ. Յ. Դաշնակցութեան հմայքին, Ահաբեկիչ Մարմինը միաձայն որոշեց մահուան պատժի ենթարկել նրան:

Մայիսի 17-ին ահաբեկիչներին խումբը գործադրում է վճիռը հրացանազարկ անելով Աւագին եւ նրա երկու ընկերներին՝ Համբարձումին եւ Մաւրակցի Գրիգորին, որոնք փորձում էին պաշտպանել նրան:

Յայտնելով այս բոլորը ի լուր հասարակութեան, Ահաբեկիչ Մարմինս ներկայիւս պահանջում եւ հրամայում է բոլոր նրա նմաններին, որոնք բոյն են դրել Կարսի շրջանում, անմիջապէս ձգել հեռանալ այդ շրջանից: Հակառակ պարագային, այս առաջին ազդարարութիւնից յետոյ, նրանց անունները պիտի հրատարակուին եւ նրանց նկատմամբ եւս ձեռք պիտի առնուին խստագոյն միջոցները:

Առիթից օգտուում ենք մի անգամ եւս յայտարարելու որ Դաշնակցութիւնը ոչ մի խմբապետի իրաւունք տրուած չէ Կարսի շրջանի գիւղերում նստելով դատ վարելու, տուգանք ստանալու եւ այլն:

Հրաւիրում ենք հասարակութեանը անխնայ հալածել եւ խփել բոլոր նոյն կարգի գեղծարարներին, որոնք գալիս են բռնի պահանջներ անելու, Դաշնակցութեան կամ յեղափոխութեան անունից:

Ժամանակ է վերջապէս որ հասարակութիւնը ինքն էլ կազմակերպուի իր սեփական ուժերով, պաշտպանելու իր գոյքն ու պատիւը ամէն տեսակ խաչագողների եւ դրամաշորթների դէմ — որպէսզի Դաշնակցութեան ձեռք առած միջոցներն էլ պսակուին վերջնական յաջողութեամբ, ունենան տեւուն հանգամանք, վերահաստատելով Կարսի շրջանում նախկին խաղաղութիւնը եւ բեղմնաւոր աշխատանքը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՀԱՐԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

20 Մայիսի 1908 թ.

Փաստ. 240-5

2 Ա Չ Դ

Հայ հասարակութեան ծանօթ է արդէն, որ կարգ մը խաչագողներ վերջերս «Ժամանակաւոր Զինուորական Խորհուրդ» մը կազմակերպել էին, անխղճօրէն շահագործելու համար տաճկահայ դատը իրենց անձնական գժուձ հաշիւներուն համար:

Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհանուր Ժողովը մանրամասնօրէն քննել է ետք այդ չարագործ խմբակին գործունէութիւնը, որոշեց ի սպառ արտաքսել Դաշնակցութեան՝ Միհրանը եւ անոր գործակից անդամները, ինչպէս արդէն յայտարարած է այդ մասին «Դրօշակ» վերջին թուով:

Միեւնոյն ատեն, Ընդհանուր Ժողովը որոշած էր կարգապահական պատիժներու ենթարկել տալ յանցաւորները, յանձնելով այդ խնդիրը Հ. Յ. Դ. Կովկասեան Ահաբեկիչ Մարմինս:

Արդ, Ընդհանուր Ժողովի այդ որոշման համաձայն Ահաբեկիչ Մարմինն ձեռնարկեց գործի եւ կու գայ ծանուցանել հասարակութեան որ երէկ, Արմաւիրի<sup>24</sup> մէջ տեւորի ենթարկել տուաւ Միհրանը, (որ գնացած էր այնտեղ բռնի միջոցներով դրամ շորթելու տեղացիներէն) եւ անոր հետ գտնուող կոփեցի Խեչոն եւ ոմն Վարդապետեան: Եւ այսօր ալ Թիֆլիզի մէջ տեւորի յանձնուեցաւ զազախեցի Վասիլ անունով խաչագողը, անդամ նոյն խմբակին:

Այս ամէնը յայտնելով ի գիտութիւն, Ահաբեկիչ Մարմինն կը փութայ յայտարարել, որ խստիւ արգելւած է համակրանքի ունէլ ցոյց ընել դատապարտեալներու յուղարկաւորութեան առթիւ. մի միայն ծխատէր քահանան կ'արտօնուի եկեղեցական արարողութիւն կատարելու:

Հ. Յ. ԴԱՇ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՀԱՐԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Յունիսի 11-ին:

Փաստ. 240-7

3 Ա Չ Դ

Նկատելով, որ Առիւծ-Աւագի տեւորից ու այդ առթիւ եղած պաշտօնական ազդից յետոյ կան մարդիկ, որ դեռեւս մնում են Ղարսի շրջանում ու շարունակում իրենց շահատակութիւնները Դաշնակցութեան անունով, Կովկասեան Ահաբեկիչ Մարմինը վճռեց յայտնել

- 1) Ագարակ գիւղում ապրող Ոգմեցի պողայ-Մուրադին,
- 2) Մպնիում ապրող Ոգմեցի Սարգսին,
- 3) Ջալալում ապրող Ոգմեցի լպուտչի Մանուկին:
- 4) Տիկորում ապրում խլաթցի Մելքոյին (քոռ), եւ 5) Խարում ապրող խլաթցի Գեւորին (քուրդ), որ պաշտօնական ազդարարութիւն ստանալուց հինգ օրուայ ընթացքում թողնեն Ղարսի շրջանը եւ հեռանան ուրիշ վայրեր: Աքսորելով միասին՝ նոցա արգելում է բնակութիւն հաստատել Ղարսի, Ալեկսանդրապոլի, Երեւանի եւ Բաթումի շրջաններում:

Յանձնարարում ենք յիշեալ շրջանների դաշնակցական մարմիններին, ընկերներին ու ընդհանուր հասարակութեան՝ հսկել այս ազդի ճիշտ գործադրման վրայ ուստի, եթէ այդ հինգ հոգին որոշուած ժամանակին չթողնեն Ղարսի շրջանը կամ ապրեն իրենց արգելուած վայրերում, անմիջապէս պէտք է բռնել, գինաթափ անել ու յայտնել այդ մասին Կովկ. Ահաբեկիչ մարմինների կամ ձեռնհաս ընկերների միջոցաւ:

Միեւնոյն ժամանակ յայտնում ենք որ այդ հինգ հոգուն պատասպարող, թաքցնող կամ պաշտպանող մարդիկ կ'ենթարկուին ամենախիստ պատիւանատուութեան Ահաբեկիչ Մարմնի կողմից:

Հ. Յ. Դ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՀԱՐԵԿԻՉ ՄԱՐՄԻՆ

1908 թ. 20 Յունիսի

24.- Դիւս. Կովկասի Արմաւիր քաղաքն է:



### Գ. ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒ ՄԷՉ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ Հ.Յ.Գ. ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ

1904ի Մասնոյ արհմտոս պայտամբութեան ատարտին, ինչպէս ծանօթ է, մարտիկներու մէկ կարեւոր մասը Անդրամիկի առաջնորդութեամբ շարք մը մարտեր մղելէ ետք Վասպուրականի վրայով նահանջեց Ատրպատական: Եւրոպայի Անդրամիկ անցաւ ժընեւ, ուր մեծագոյն յարգանքով եւ գոյգոյրանքով շրջապատուեցաւ Դրոշակի խմբագրութեան եւ Արեւմտեան Բիւրոյի ընկերներուն կողմէ, որոնք հոգացին նաեւ անոր քայքայուած առողջութեան մասին: Ռոստոմի կարգադրութեամբ մեծամուն հայդուկապետը նախ առաքուեցաւ Փարիզ զինական գնումներ կատարելու նպատակով. ապա Արեւմտեան Բիւրոն զինք գործուղեց Պուլկարիա միւսոյն առաքելութեամբ, ապա նաեւ մակեդոնացի յեղափոխականներու եւ պուլկար պետական շրջանակներու հետ Հ. Յ. Դաշնակցութեան կապերը ամրապնդելու համար: Անդրամիկին վստահուած էր նոյնպէս Պալքանի Կեդր. Կոմիտէի նախաձեռնած Հ.Յ.Գ. Ձինուորական Վարժարանի կազմակերպութեան գործը: Ամերիկայի Կեդր. Կոմիտէի եւ Արեւմտեան Բիւրոյի աջակցութեամբ իրագործուած այդ ձեռնարկը (ուր միամտայ զինուորական կրթութեան տիրացան աւելի քան 50 երիտասարդներ) ու տակաւին Պուլկարիոյ պետական Պահեստի Սպայից Վարժարանը (որուն ընթացաւարտներէն մէկը պիտի ըլլար Գարեգին Նժդեհ) կարեւոր չափով նպաստեցին հայ մարտական ուժի որակաւորման գործին:

Մտաբն փոխանակուած նամակները կը վերաբերին վերեւ մատնանշուած խնդիրներուն:

Փաստ. 1148 - 54

### Գ 1.- ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿԸ ԱԿՆՈՒՆԻՒՆ ՁԵՆՔԵՐՈՒ ԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ


1906 Մայիս 25, Ֆիլիպէ

Սիրելի ընկեր պ. Խաչատուր  
Եկայ տեղս. եկած օրէս մի օր վերջը Վառնայէն Օդեսա[ա] գացող նաւը մեկնեցաւ. չկարողացայ հասնիլ ստիպուեցայ տասնուհինգ օր եւս մնալ, որովհետեւ 15 օրը անգամ մը նաւ կայ Օդեսա[ա] գացող. Արեւելեան Բիւրոն այստեղ հեռագիր տուած էր ըսելով որ չուտով զրկեցէք Թորգոմին եւ Մարտիրոսին: Թորգոմը արդէն գացած էր. ես ալ նաւի պատճառաւ յետ մնացի: Ռուս մանիպիլի ճամբով պիտի գնայի, շատ ծախք կը լինէր, չգացի: Դուն որոշեցիր որ հինգ օրէն աւել չմնամ եւ ծայր առնեմ. բայց ոչ հինգ օրով կը լինի այդ գործը եւ ոչ ալ 15 օրով: Բրիտ այստեղ չէ: Օդեսա[ա] է. նրանց առած ծայրերը դատարկ գիւղիներ<sup>1</sup> են եղած եւ գործածուած. գրեթէ անպէտք են. իսկ լեցուածներ ալ կան կեղծ, գրեթէ երկու անգամ նետուած, յետոյ լեցուցած մէջը քիչ վառօդ եւ վրան դրուած թաղիքի կամ քէչէի կտորներ. ոչ մէկը չեն հասկնար այստեղ գտնուող ընկերներէն ռազմամթերքէն: Այդ ասած դատարկ ծայրերը մօտաւորապէս փոխադրած են 10000ի չափ, բայց ըսի որ երկու անգամ լեցուած եւ նետուած են: Այդ փոխադ-

րած դատարկ գիւղիները փոխադրած են մի մասը Էնգելէն, մի մասը Պուրկազէն Օդեսա[ա]. արդէն մի մասը հասած է Օդեսա[ա]. չեմ գիտեր թէ բանի պէտք պիտի գան: [Կը] կասկածիմ որ հրացանի մէջ չմտնեն:  
Այս բերդանի դատարկ կիւղիների գինը է, դատարկին 1000-ը 35 ֆրանկ. իսկ լեցուածները 1000-ը 75 ֆրանկ. շատ սուղ է. հոգ չէր որ սուղ է. խնդիրը այն է որ կեղծ են. մի քանի անգամ լեցուած եւ կրակուած են:  
Սրանց զօրքի ձեռք գտնուած մանլիխեր հրացանները դրանց այնչափ հեռու չեն ձգեր. բայց լաւ հրացան են. 2400 քայլ կը ձգեն: Զիւլուորների ձեռք գտնուածների ծանրութիւնը 2 քիլո ու կէս, փոքր եւ թեթեւ, աւելուտրիական ապրանք է: Վառնա մի յոյն նաւավար գլխած եմ, որը խոստացած է որ մեզ համար մեծ քանակութեամբ ապրանք փոխադրէ նաւահանգիստ. եւ ունինք երկու տղայ ալ մեր ընկերներէն, որ նոյն նաւի մէջ նստին, ապրանքի հետ երթան նաւահանգիստ. բայց չունինք ոչ մի պատրաստ ապրանք պատրաստի. երկրորդ՝ վստահ չենք նաւահանգիստի ընկերների վրայ,  
1.- Ծայրը փամփուշտն է. գիւղին (կամ կիւղի) դատարկ, առանց վառօդի փամփուշտն է պարկուծ:

թէ կրնան փոխադրուած ապրանքը ապահով դուրս հանել, որ այստեղ գործնականի սկսինք: Ի հարկէ նաւը պիտի վարձատրենք, պէտք է որ առնուազն 2000[?] հրացան եւ 300000 հազար ծայր որ փոխադրենք:  
Քանի օրը կ'ուսումնասիրեմ աւելի լաւ եւ կը մեկնիմ նաւահանգիստ. եթէ դիւրութիւն ունեցան անտեղի ընկերներ ապրանքը դուրս հանելու, այն ժամանակ կամ ես կը վերադառնամ, կամ ռազմամթերքէն հասկացող ընկեր մը կը դրկեմ հոս, բայց դեռ չեմ գիտեր թէ պիտի կարողանամ գտնել մանլիխեր հրացան եւ փամփուշտ. նաեւ բերդանի փամփուշտ կ'ուզենք. տեղս չկայ, կ'ըսեն թէ Սոֆիա են վաճառականները: Այս գէնքերու Փապրիքան Վիեննա է եղեր, պուլկար օֆիցեր մը ըսաւ ինձ. մի քանի հատ ալ մանլիխեր հրացանով խփեցի. լաւ են, վնաս չունին: Ի հարկէ ռուսական մա-

նլիխերին չեն հասնիր. նրանք աւելի ուժեղ են, նրանք 300 քայլ աւելի հեռու կը ձգեն: Ահա իմ ունեցած տեղեկութիւններս. մենք այստեղ մարդ չենք ունեցած. այստեղ շատ դիւրութիւններ կան թէ փոխադրութեան, թէ զինուորներ պատրաստելու, զինավարժութիւն սովորեցնելու, քանի որ տեղի ժողովուրդը հիւրասիրութիւն ցոյց կու տայ դէպի հայերս:  
Աղբալեանցը արդեօք դրկեց իմ զինուորական գրութիւնը. կը յուսամ որ լաւ գիրք մը դուրս պիտի բերէք:  
Ընդունէ ջերմ համբոյրներս. նոյնը յայտնես բոլոր ընկերներին:

(Կ)   
(ա) ՊԱՐՈՅԸ<sup>3</sup>

Փաստ. 1148-58

### Գ 2.- ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Սիրելի ընկեր<sup>4</sup>,  
Ձեր ուշադրութեան կը ներկայացնեմ հետեւեալ իրողութիւնները՝ որոնք մեր կազմակերպութեան եւ յառաջիկայ ձեռնարկներու համար բոլորովին նոր եւ անակնկալ ընթացք մը կը գծեն:  
Մայիս 28ին Սոֆիա հասայ՝ գլխաւորապէս ծայրերու եւ մանլիխերներու խնդիրը մօտէն ուսումնասիրելով, որոշ արդիւնք մը ձեռք բերել եւ մեկնիլ Կովկաս: Սակայն պարագաները անակնկալ հանգամանքներու առջեւ դրին զիս եւ յապաղեցուցին կամ աւելի ճիշտ՝ յետաձգեցին մեկնումս:  
Մեզմէ անկախաբար, Սարաֆոֆ<sup>5</sup> եւ մակեդոնացի բարեկամներէն ոմանք մտածումն յղացած են տեսակցիլ պուլկար կառավարութեան բարձրագոյն շրջանակներու հետ եւ խորհրդակցիլ թէ ինչ միջոցներով կարելի է հայ եւ մակեդոնական յեղափոխութիւնը գործնական ու շօշափելի համեմատելութեան<sup>6</sup> մը մէջ դնել. նոյն այս պարագաներուն է որ երբ ես Սոֆիա կը հասնիմ, Լիւթֆօ<sup>7</sup> ինձմէ գաղտնի լուր կու տայ ներկայութիւնս պատերազմական գործոց նախարար՝ գեներալ Սազովի: Գեներալը մասնաւոր հրաւերով փափաք կը յայտնէ անձամբ տեսակցութիւն մը ունենալ ինձի հետ, ինչ որ կ'ընդունիմ, եւ Մայիս 30ի գիշերը՝ ընկերակցութեամբ Լիւթֆօն եւ Պալք. Կեդր. Կոմիտէի անդամներէն ընկեր Երուսաղէ Ալաճաճեանի՝ կը ներկայանամ իրեն, իր անձնական ապարանքը:  
Սիրալիւր ընդունելութեամբ մը կը պատուասիրէ մեզ

նախարարը եւ կը փութայ տեղեկութիւններ հարցնել ներսը գտնուած մեր ուժերուն նկատմամբ, որուն առանց ուղղակի պատասխան տալու, կը պատմեմ բոլոր այն դժուարութիւնները՝ որոնցմով շրջապատուած է հայ յեղափոխութիւնը իր սպառազինման գործին մէջ, թուելով ռազմամթերքի փոխադրութեան անբաւական պայմանները, մաքսային եւ այլ քաղաքական արգելքներ, եւն եւն:  
Փափաք կը յայտնէ իմանալ թէ ունի՞նք նիւթական միջոցներ: Կը հաւաստեմ թէ ունինք եւ ունենալու դիւրութիւններ չեն պակսիր: Մեր տեսակցութիւնը՝ կեդրոնացած միմիայն սպառազինման եւ յեղափոխական ձեռնարկներու վրայ, տեւեց մօտաւորապէս երեք ժամ,  
2.- Խօսքը կը վերաբերի «Մարտական հրահանգներ»ուն, զոր Անդրամիկ գրի առած էր ժընեւի մէջ եւ որուն խմբագրութիւնը վստահուած՝ Նիկոլ Աղբալեանին: Այդ աշխատանքը ի վերջոյ իր լրումին հասցուց Ռուբէն Զարդարեան:  
3.- Պարոյր կամ (ա) Պարոյր՝ Անդրամիկի ծածկանունը:  
4.- Անդրամիկի թելադրութեամբ գրուած նամակ է ուղղուած՝ Ալմուցիին, որուն հետ Անդրամիկ թղթակցական կապ կը պահէր: Ստորագրութիւնը, ինչպէս նաեւ «յետ գրութեանը» կը պատկանին Անդրամիկի գրչին:  
5.- Բորիս Սարաֆով՝ մակեդոնացի յեղափոխական գործիչ եւ ղեկավար դէմք, ջերմ բարեկամ Գ. Յ. Դաշնակցութեան:  
6.- Դամեթաշխութիւնը կը գործածուէր ընդհանրապէս գործակցութեան իմաստով:  
7.- Լիւթֆօ՝ մակեդոնացի յեղափոխական ղեկավար անձնաւորութիւն:

որուն մանրամասնութիւնները աւելորդ եւ խիստ երկար պիտի ըլլար հոս մէջը բերել: Հետեւաբար կը բաւականանամ հաղորդել քեզի արդիւնքը:

Պուրկար կառավարութիւնը կ'առաջարկէ մեզի տեսակ մը նիզակակցութիւն՝ հետեւեալ կերպով:

ա. կը խոստանայ Վիեննա կամ արտասահման ապրտարներ մեր գէնքերը մաքսատուէն ներս ընդունելի՝ առանց մաքսի եւ ազատօրէն, ու իրրեւ մակեղոնակ. յեղափոխութեան ապրանք, փոխադրել զանոնք մեր կողմէն նշանակուած պուրկարական ունէ մէկ նաւահանգիստը, անկէ ալ ամէն ապահովութեամբ բեռնելու մեր ուզած նաւահանգստին համար: Հետեւաբար, պուրկար բանակին մանրիներ հրացանը՝ Վիեննայէն թէ հոս մեր վրայ պիտի նստի 78-80 Ֆրանքի, իսկ 1,000 փամփուշտը՝ 112-120 Ֆրանքի, մինչ այսօր նոյն ապրանքները հոս ամէնէն ատան հազիւ թէ կարելի ըլլայ գնել՝ հրացանը 101 Ֆրանքով, 1,000 փամփուշտը՝ 180 Ֆր.ով:

բ. Ձինուորական նախարարութիւնը պաշտօնապէս կը թոյլատրէ մեզի՝ այսօրուէն սկսեալ տարին մինչեւ 20 հայ երիտասարդներ ձրիապէս ընդունելի պուրկար «Պահեստի սպաներու վարժարանը», պատրաստելու համար զանոնք սպայութեան:

գ. Ձինուորական նախարարութիւնը պատրաստ է անմիջապէս 400 հայ երիտասարդներ — որոնց թիւը կարող ենք հաւանաբար բարձրացնել շատ աւելի — մարզել զինուորական կրթութեամբ, նշանակելով անոնց համար մասնաւոր սպաներ, նկատի ունենալով հայ տղոց դիւրութիւնները:

դ. Պուրկար կառավարութիւնը ջերմապէս բաղձանք կը յայտնէ համերաշխօրէն եւ աւելի սերտօրէն գործակցութեան մտնել մակեղոնացիներու հետ, ձեռք բերել պայթուցիկներ — որոնց համար ամէն դիւրութիւն պատրաստ է ընձեռել, սովորիլ մասնաւորապէս միթրայոզներու՝ գործածութիւնը՝ խոստանալով վճարական պարագաներու տակ ձրիաբար հայթայթել անոնցմէ մեզի:

Ամէն տարակոյսէ վեր է թէ պուրկար կառավարութիւնը բացարձակապէս կ'օժանդակէ հիմա մակեղոնական յեղափոխութեան՝ թէ դրամապէս, թէ բարոյապէս, անշուշտ ունենալով առանձին առաջադրութիւններ եւ քաղաքական դրդապատճառներ: Նոյն նպատակով կը բաղձայ որ հայ յեղափոխութիւնն ալ ունենայ նոյն ուժը եւ երկու կազմակերպութիւնները համագործակցութեամբ աթանթաներ՝ պատրաստեն Վիշապի, Ադրիանապոլսոյ, Ոսկեհանքի<sup>10</sup> եւ թրքական կարեւոր նաւահանգիստներու մէջ, թրք-պուրկար պատերազմի մը պահուն զբաղեցնելու թուրք իշխանութիւնը եւ անջատելու անոր զինուորական ուժը:

ե. նախարարին բացորոշ յայտարարութիւններէն կարելի էր յայտնապէս հետեւցնել թէ թրք-պուրկարական պատերազմ մը խիստ մօտալուտ է, ոչ աւելի ուշ

քան երկու երեք տարի:

Յետոյ, այն հական ծրագիրը՝ որ նախարարը ներկայացուց, գործադրելու համար զայն պատերազմի պահուն, հետեւեալն է:

Ձինուորական նախարարութիւնը պատրաստ է մինչեւ 10,000 հոգինոց հայ եւ պուրկար խառն բանակ մը սպառազինել եւ զինուորական շտապի մը հետ դնել իմ հրամանատարութեան տակ, որպէսզի առաջին նաւերով կարող ըլլամ գրաւել Սեւ ծովեան թրքական նաւահանգիստներէն մէկը կամ աւելին:

Ինչպէս ըսի, մեր տեսակցութիւնը տեւեց մօտաւորապէս երեք ժամ, եւ երբ հրաժեշտի պահուն շնորհակալութիւն յայտնեցի գեներալին՝ յանուն հայ ժողովուրդին եւ հայ յեղափոխութեան, այն բարեկամական ու սիրալիք ընդունելութեան համար, զոր պուրկար ազգը ցոյց տուած է մեզի, մանաւանդ երբ ցաւակցութիւն յայտնեցի որ հայ թէ պուրկար ազգերը իրենց ազգային դժբախտութեանց պարագային փոխադարձաբար բաւականացել են միայն պղատոնական համակրութեամբ, նախարարը պատասխանեց հետեւեալ բառերով: «Ուրախութիւն կը յայտնեմ որ առիթն ունեցայ ծանօթանալու հայ յեղափոխութեան ամէնէն ականաւոր հերոսին հետ, եւ յանուն պուրկար ինտելիգենցիայի եւ բարձրագոյն շրջանակներու՝ կը խոստանամ ձեռքս եկած ամէն հնարաւոր դիւրութիւն տալ ձեր գործին»: Բնականաբար այս խօսքով՝ նախարարը նրբութեամբ, հասկցնել կ'ուզէր թէ անձնական խոստումներ չէին որ կ'ընէր մեզի, այլ պաշտօնական, ինչ որ երբեք տարակոյս չի վերցնել, որովհետեւ ետքը կողմնակի միջոցներով ստուգեցինք թէ՛ նախարարը նախապէս, իր տեսակցութեանէն առաջ, մասնաւոր խորհրդակցութիւն մը ունեցած էր Իշխանին հետ:

Մեր տեսակցութիւնը այնքան սիրալիք եւ մտերմական եղաւ, որ բաժնուելէ առաջ համարուեցանք:

Այսպէս, սիրելի՛ ընկեր, մեր առջեւ դրուած են ահա լուրջ եւ ծանրակշիռ հարցեր, որոնցմէ օգտուելի միայն կը մնայ մեզի իմաստուն տակտիկով մը: Անկասկած, պուրկար կառավարութիւնը այս դիւրութիւններն ընձեռելով մեզի եւ այս օժանդակութիւնը տալով՝ նկատի ունի առաւելապէս իր ազգային շահերը: Բայց, ես հաւատացած եմ թէ նման նիզակակցութիւն մը եւ համերաշխութիւն մը մեզի այն տեսակ առաւելութիւններ կը տրամադրեն, որոնցմէ օգտուելու համար վայրկեան մը իսկ կորսնցնելու չենք:

Ես առայժմ յետաձգեցի իմ ուղեւորութիւնս, նախ անոր համար որ նախարարը վտանգաւոր կը գտնէ այս պահուն ունէ տեղ անցնել, երկրորդ իմ ներկայութիւնս

8.- Արագահարուած գեներալ:  
9.- Մահափորձեր, դաւադրական արարքներ:  
10.- Վիշապը Կ. Պոլիսն է, Ոսկեհանքը՝ Իզմիրը:

հո'ս անհրաժեշտ է այժմ՝ ընթացք տալու համար սկսած բանակցութեան: «Ես յաւակնութիւն չունիմ խորհուրդ տալու քեզի, բայց բարեկամաբար կը թելադրեմ որ առայժմ Պուրկարիայէն դուրս չելլէք, ձեր անձին ապահովութեան համար»: Ահա բառ առ բառ նախարարին խօսքը:

Հետեւաբար Պալք. Կ. Կոմիտէի հետ խորհրդակցելով որոշեցինք մէկ երկու օրէն ընկեր Երուանդ Այաճաճեանը ճամբայ հանել դէպի Կովկաս, այնտեղի մեր ընկերներուն բերանացի պատմելու այս հարցին բոլոր պարագաները, որպէսզի հարկ եղած ընկերական խորհրդակցութենէ ետք՝ ձեռնարկեն անհրաժեշտ պատրաստութեանց եւ Ռոստոմը փութացնեն հոս:

Իսկ թէ՛ երբ անպայման կարեւոր նկատուի իմ ներկայութիւնս Կովկաս, Երուանդը առաջին առիթով պիտի

տի հեռագրէ որ ճամբայ ելլեմ: Այն պարագային որ Կովկասի ընկերները համաձայն են այս առաջարկութեանց, Մուրատը պիտի ընտրէ մարզանքի համար նշանակելի զինուորները եւ ճամբայ հանէ:

Ուստի, անձկութեամբ կը սպասեմ ձեր անձնական տեսութիւնը բոլոր այս հարցերուն վրայ, եւ կը խնդրեմ որ իմացնէք ինձի թէ դուք ի՞նչ կը խորհէք դէպի Կովկաս մեկնումիս համար:

Կը մնամ ընկերական կարօտագին համբոյրներով ձերդ

*Ազգային*  
ԱՆԴՐԱՆԻԿ

908 Յունիս 2/15  
Ֆիլիպէ

Յետ գրութեան — կ'աւելացնեմ իմ գրքի խնդիրը<sup>2</sup>. արդեօք պ. Աղբալեանը ղրկած է ձեզ. եթէ ղրկած է, շուտով դուրս բերէք<sup>11</sup> եւ 800էն մինչեւ 800 օրինակ ղրկէք այս շրջանը: Երևոյթ ինձ գրէք ձեր կարծիքները: Նոյնպէս այստեղ Մեծ քաղաքէն 3 հեռագիր տուած են, զիս կը կանչեն. ես ալ այս պատճառով յետ մնացի: Անհամբեր կը սպասեմ պատասխանիդ: Այս վերեւ գրուած գաղտնիքները մինակ դուն գիտնաս առ այժմ:

Նոյն  
Յ. Գ. Սարաֆոֆը իմ Սոֆիա հասնելէս երկու օր առաջ մեկնած էր Եւրոպա: Ինձի կը գրէք Պալք. Կ. Կոմիտէի հասցեով:

Նոյն

11.- Ըսել կ'ուզէ հրատարակեցէք:

*Զեք Գ. Կովկասէն. իմ Գրքի Խնդիր. արդեօք պ. Աղբալեանը ղրկած է ձեզ. եթէ ղրկած է, շուտով դուրս բերէք եւ 800 եւ 800 օրինակ ղրկէք այս շրջանը: Երևոյթ ինձ գրէք ձեր կարծիքները: Նոյնպէս այստեղ Մեծ քաղաքէն 3 հեռագիր տուած են, զիս կը կանչեն. ես ալ այս պատճառով յետ մնացի: Անհամբեր կը սպասեմ պատասխանիդ: Այս վերեւ գրուած գաղտնիքները մինակ դուն գիտնաս առ այժմ:*

Նոյն մը Անդրանիկի ձեռագրէն:



Հ Ա Յ Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Մ Ա Կ Ա Ն Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

1890

FÉDÉRATION RÉVOLUTIONNAIRE ARMÉNIENNE

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷ

1906 Յուլի 8 Տիֆլիս

Փաստ. 1148-62

Գ 3.- ՊԱԼՔԱՆԻ Կ. Կ.Ի ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ ՓՈՒԹԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Յ.Դ. Արեւմտեան Բիւրոյին

Սիրելի ընկերներ

Հարկաւ ստացած կ'ըլլաք ընկեր Անդրանիկի տեղեկագիրը, ուր գլխաւոր գծերով նշանակուած են պուլկար պատերազմ. նախարարին հետ ունեցած իր տեսակցութեանց կարեւոր արդիւնքը: Մեր կողմէն բոլորովին աւելորդ կը նկատենք շեշտելու՝ Դաշնակցութեան տարեգրութեան մէջ մինչեւ այսօր անօրինակ այս հարցին անպայման կարեւորութիւնն ու լրջութիւնը: Միայն ինչ որ մեզի հրամայողական պարտականութիւն կը սեպէինք յիշեցնելու ձեզի, այն էր, թէ մեր առջեւ դրուած խնդիրն է ութիւնն անգամ մըն ալ կու գար անխուսափելի դարձնելու Ընդհ. ժողովին գումարումը, ոչ աւելի ուշ քան Յուլիսի կէսը:

Արդէն դէպի կովկաս ճամբայ հանած ենք մեր ընկերներէն Ե. Ալաճաճեան, որուն պաշտօնն է անձամբ տանիլ ընկեր Անդրանիկի տեղեկագիրը եւ բացատրելով հարկ եղած տեղը հարցին մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ անոր հակառակ նշանակութիւնը, խնդրել շուտափոյթ կարգադրութիւն: Այսօր դարձեալ նամակ մը կը ստանանք Լիւբարճէն, որով կը յայտնէ թէ ընկեր Անդրանիկի տեսակցութենէն երկու օր ետքը՝ երկրորդ տեսակցութիւն մըն ալ ունեցած է ինք նախարարին հետ: Գեներալը դարձեալ շեշտած է փութալ՝ հնար եղածին չափ շուտով գործի անցնելու եւ խնդրած է իմանալ ընկեր Անդրանիկին գտնուած վայրը, որպէսզի տեղւոյն իշխանութեան մասնաւոր հրահանգներ տայ՝ հոգ տանելու անոր անձին պաշտպանութեանն ու ապահո-

վութեանը: Պարագանք են ասոնք՝ որ բացայայտօրէն կ'ապացուցանեն թէ պուլկար կառավարութիւնը որքան լրջօրէն տրամադիր է դէպի իր խոստումները եւ որքան կարեւորութիւն կու տայ հարցին: Մենք անհրաժեշտ համարեցինք ընկեր Անդրանիկի ներկայութիւնը հոս՝ նկատի ունենալով գործին պահանջները, նախարարին այս մասին ըրած թերադրութիւնները, մանաւանդ սկսուած բանակցութեան ընթացք տալու հանգամանքը:

Ուստի

Աչքի առջեւ ունենալով կազմակերպական ընդհ. պայմանները, առաւելագէս Տաճկահայաստանի դրութիւնը՝ որ կարօտ է անմիջական հոգածութեան ու յեղափոխական նոր կարգադրութեանց,

Աչքի առջեւ ունենալով այն ընդհանուր լքումն ու յուսահատութիւնը՝ որոնց ենթարկուած է Երկրի ժողովուրդը եւ որոնք կարող են ծանր հակազդեցութիւններ յարամադրութիւններուն նկատմամբ,

Աչքի առջեւ ունենալով արտասահմանի գրեթէ մեր բոլոր մարմիններուն եւ ընկերներուն տրամադրութիւնը եւ այս անստոյգ վիճակին դէմ ունեցած գանգատները,

Աչքի առջեւ ունենալով Ամերիկայի Կեդր. Կոմիտէի Մայիս 12 թուակիր շրջաբերականը՝ որուն լիովին համաձայն ենք եւ որուն կը ձայնակցինք մեր կողմէն,

Աչքի առջեւ ունենալով մանաւանդ ընկեր Անդրանիկի վերջին բանակցութեանց արդիւնքը, որ իր կարեւորութեամբ, ընդարձակութեամբ ու ծանր պատասխանատուութեամբ կը ներկայանայ իբրեւ կազմակերպա-

կան անյետաձգելի հարց,

Կը պահանջենք ստիպողաբար որ ոչ աւելի ուշ քան Յուլիսի կէսը Ընդհ. ժողով գումարուի արտասահմանի յարմարագոյն մէկ վայրը, որովհետեւ Սեպտեմբերին արդէն պէտք է պատրաստ եղած ըլլան շատ մը նախապատրաստութիւններ, ներկայ տարին ալ անօգուտ ու ապերախտ անցած չըլլալու համար Երկրին համար, որովհետեւ ընկեր Անդրանիկի կատարած բանակցութիւնները անյետաձգելի հանգամանք ունին եւ այս մասին ըլլալիք ձեռնարկներն ալ նոյնպէս Սեպտեմբերին հարկ է արդէն գործի փոխել, որովհետեւ վերջագէս անհասկանալի է մեզի թէ ինչ արդարանալի պատճառ կարելի է գտնել ձգձգելու համար Ընդհ. ժողով մը՝ որուն գումարումը ոչ մէկ ատեն այսքան հարկեցուցիչ ու հրամայողական եղած է գուցէ մեր կազմակերպու-

թեան համար: Հաւատացած ենք թէ կովկասի իւրաքանչիւր շրջանէ մէկ մէկ հոգի դուրս գալով՝ այն տեղի օրուան հարցերը ոչ մէկ դժուարութեան կամ անտեղութեանց կը բախէին, հետեւաբար կովկասեան պահանջները երբեք արգելադրութ չէին կրնար ըլլալ Ընդհ. ժողովի մը գումարման:

Խնդրելով որ Ձեր կողմէն հարկ եղածը պիտի չզլանաք՝ օժանդակելու նոյնպէս մեր պահանջներուն եւ ներկայ գրութեան իմաստը ստիպողաբար հաղորդելու Արեւելեան Բիւրոյին ու [Դաշնակցութեան] Խորհուրդին, կը մնանք ընկերական բարեւանքով

Հ.Յ.Դ. ՊԱԼՔԱՆԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷ

Փաստ. 1148-61

Գ 4.- ՊԱԼՔԱՆԻ Կ. Կ.Ի ՆԱՄԱԿԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԵԻՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հ. Յ. Դ. Ամերիկայի Կ. Կոմիտէին

1906, Յուլիս 8 Տիֆլիս

Սիրելի ընկերներ,

Ստացած ենք շնորհակալութեամբ իր ատենին ձեր շրջանական ժողովի արձանագրութեանց ամփոփումը, ինչպէս նաեւ անոր յարակից այն գրութիւնը, որով բաղձանք կը յայտնէիք Պալքանի մէջ հիմնել լապտրաթուարի նման աշխատանոց մը, ուր կարող ըլլային Երկրի համար նշանակուած մեր ընկերները սովորի պայթուցիկներու եւ նման անհրաժեշտութեանց պատրաստութիւնը:

Ներեցէք որ չկրցանք իր ատենին տալ հարցին մեր անհրաժեշտ պատասխանը, որովհետեւ Ընդհ. ժողովի ծանօթ ձգձգումը պատճառ եղաւ որ մեր Երջանական ժողովը իր սովորական թուականէն յետաձգուի մինչեւ Զատիկ:

Արդէն կից ներկայ գրութեան՝ պիտի ստանաք մեր Երջանի նիստերուն արձանագրութիւնը, ուր զինուորական ու մարզական խորագրին տակ նկատի առնուած է լապտրաթուարի ձեր առաջարկը եւ աւելի ընդարձակ սահմանով մը որոշում տրուած զինուորական պատրաստութեան:

Մեր կազմակերպութեան յարաճուն պէտքերը եւ տարիներու փորձառութիւնը հրամայողական կերպով

թելադրական էին, որպէսզի լուրջ հոգածութեան առարկայ դարձնէինք երկրի կռիւը վարող յեղափոխական վարիչներու, խմբապետներու եւ իւրաքանչիւր հասարակ զինուորի գիտնապէս զինուորական պատրաստութիւնն ու դաստիարակութիւնը, տալով անոնց արեւեստին ընդհանուր ծանօթութիւնը՝ յարմարցուած մեր կեանքին ու մեր պայմաններուն: Դժբախտութիւն մըն է, որ մինչեւ հիմա այս վերին աստիճանի կարեւոր հարցը չէ գտած ո՛չ միայն բաւարար լուծում, այլ նոյնիսկ ծանրօրէն չէ՛ գբաղեցուցած մեր ձեռնհաս մարմիններուն միտքը: Զինուորական վարչութիւնը ստիպողական է որ առանձին ու հակառակ մասը գրաւէ մեր կազմակերպութեան մէջ, ունենալով իր անջատ ու անկախ մարմինը, կազմելով տեսակ մը պատերազմական խորհուրդ, որուն նախագրաւութիւնը [sic] պէտք է ըլլայ տարամերժօրէն Երկրին զինուորման խնդրի. ասով յեղափոխութիւնը ունեցած պիտի ըլլայ պաշտօններուն խելացի բաժանում եւ Երկրի սպառազինութեան գործը՝ կեդրոնանալով նպատակին ու արուեստին ատակ անձերէ կազմուած մարմիններու ձեռքը, ուղղակի, կարճ եւ գործնական ճամբով պիտի ծառայէ իր նպատակին:

Ահա այս եւ այլ նոյնքան ուշադրաւ պահանջներու թելադրութեամբ՝ շրջանիս ժողովը որոշեց որ անպայման Պալքանի մէջ Զինուորական Վարժարան մը հիմնէինք, — ուր որոշ թիւով ընկերներ մէկ տարի զինուորական կրթութիւն առնէին՝ պատրաստուելով իբրեւ

սպայ: Այս հաստատութիւնը պիտի ունենայ մօտաւորապէս պուլկարական «Պահեստի սպաներու վարժարան»ին ծրագիրը, ուր բնականաբար տեղ պիտի տրուէր առաւելապէս հայրուկային կուրսերու եւ մեր կեանքին պահանջած պէտքերուն: Նախապատրաստութեանց եւ ծրագրի կազմութեան մէջ էինք յառաջիկայ Սեպտեմբերին գործի սկսելու, երբ անակնկալ պայմաններ՝ աւելի յաջող ու նպատակաւոր մար ձեռնարկի մը առջեւ բերին մեզ, ձեռնարկ, որ նոր գործունէութեան անսպասելի եւ ամէն միջոցառութենէ վեր հեռանկար մը կը պարզէ մեր առջեւ: Առ այժմ անժամանակ ըլլալով այս հարցին մանրամասնութիւնները շօշափել, պարտաւորութիւն կը նկատենք լսելու Ձեզի թէ՛ պուլկար բարձրագոյն շրջանակներէ խոստում առած ենք մինչեւ 20 հայ երիտասարդներ ձրիապէս ընդունիլ տալ «Պուլկար Պահեստի սպաներու վարժարանը» եւ մօտաւորապէս 400 հայ կամաւորներ ալ յանձնել պուլկար զինուորական իշխանութեանց, կրթելու համար գանոնք զինուորական մարզանքով: Ինչպէս ըսինք, այս երկու գլխաւոր կէտերէն գատ՝ մեր բանակցութիւնները կը պարունակեն տակաւին յեղափոխական վերին աստիճանի կարեւոր ու խոստմնալից պարագաներ, որոնք մանրամասնաբար տեղեկագրած ենք Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներուն, յատկապէս մեր ընկերներէն մէկն ալ երեք օր առաջ ճամբայ հանած դէպի Կովկաս՝ անձամբ ներկայանալու Արեւելեան Բիւրոյին եւ բացատրելու հարցին լուրջ նշանակութիւնը: Մասունի ընկեր Անդրանիկը, որ հոս է եւ անձամբ կը վարէ բանակցութիւնները պուլկար բարձրագոյն շրջանակներու հետ, կը բարեւէ ձեզ ամէնքիդ ալ սրտագին, խնդրելով ամէն կարելին ի գործ դնել՝ փութացնելու Ընդհ. Ժողովը, որովհետեւ հարցին էութիւնը՝ իր կարեւորութեամբ ու ստիպողականութեամբ անխուսափելի կը դարձնէ առ առաւելն մինչեւ Օգոստոս գումարել Ընդհ. Ժողով, Սեպտեմբերին արդէն գործի անցած ըլլալու համար:

Ուրախալի զուգադիպութեամբ մը ճիշդ ատենին կու գայ Ձեր Մայիս 12 շրջաբերականը, որմէ առաջ նոյնիմաստ գրութեամբ մը արդէն մենք ալ Արեւմտեան Բիւրոյին բողոքած էինք [Դաշնակցութեան] Խորհուրդի գումարման դէմ, պահանջելով որ Խորհուրդը փութայ անմիջապէս Ընդհ. Ժողովի հրահրագրերը ցրուելու: Այս պահուս մեր առջեւ դրուած հարցը իր կողմէն կու գայ առաւելապէս սրելու մեր պահանջը եւ այլեւս Ընդհ. Ժողովի յետաձգումը անարդարանալի դարձնելու:

Ինչպէս որ մասնաւոր պատուիրակ մը փութացուցած ենք դէպի Կովկաս, նոյնպէս ստիպողական գրութեամբ մը անգամ մըն ալ պիտի դիմենք այսօր Արեւմտեան Բիւրոյին ուժ տալու Ձեր շրջաբերականին եւ կրկնելու Ընդհ. Ժողովին անյետաձգելի անհրաժեշտութիւնը մինչեւ Յուլիի սկիզբները՝ արտասահմանի մէջ:

Երբ վերջապէս մեր ձայնը անլսելի մնայ, ակամայ պարտաւոր պիտի ըլլանք մեր ուժերով գործի սկսիլ, քանի որ ակնարկուած հարցը մեր վրայ անմիջական պարտականութիւն կը դնէ:

Կը յուսանք թէ Ձեր շրջանը ընկերական ամէն աջակցութիւն պիտի չզլանայ մեզի եւ պիտի չթողու որ մինչեւ հիմա մեր յեղափոխական տարեգրութեանց մէջ անօրինակ յաջողութիւն մը — որպիսին է մեր շօշափած ձեռնարկը — վիժի՝ անօգուտ զղջումի, կսկիծի ու նախատինքի տակ ծածկելով Դաշնակցութիւնն ու ամբողջ հայ յեղափոխութիւնը:

Առ այժմ աւելորդ չենք նկատեր Ձեր ուշադրութեան ներկայացնելու թէ դրամական մեծաքանակ ուժի պէտք պիտի ունենանք մեր այսօրուան բանակցութիւնները վաղը գործնական հողի վրայ դնելու ատեն, հետեւաբար այժմէն պարտաւոր ենք նախահոգակ ըլլալ եւ մեր ջանքերը լարել այդ ուղղութեամբ:

Ընկերական սրտագին համակրութեամբ ու բարեւներով

ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. ԿՈՄԻՏԷ

Փաստ. 1148-92

**Գ 5.- ՊԱԼՔԱՆԻ Կ.Կ.Ի ՆԱՍԱԿԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՄԻՏԷԻՆ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ**

1906, Օգոստ. 19, Ֆիլիպէ

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կ. Կոմիտէին Յարգելի ընկերներ,

Ստացած ենք ձեր Յուլիս 27 թուակիրը: Խորհրդակցութեամբ ձեր շրջանէն եկած երկու ընկեր պատգամաւորներու, այս միջոցիս արդէն զբաղուած ենք ծանօթ զինուորական վարժարանի բացման նախապատրաստութեամբ:

Համաձայնութեամբ պուլկար կառավարութեան, որ խոստացած է մէկ կառավարական սպայ եւ վարժարանի յարմար շէնք մը մեր տրամադրութեան տակ դնել, յառաջիկայ ամսուան վերջերը պիտի սկսինք կանոնաւոր դասախօսութիւններուն: Վարժարանին նպատակը պիտի ըլլայ գիտական ծանօթութեամբ եւ զինուորական կրթութեամբ պատրաստուած խմբապետներ եւ դաստիարակ-սպաներ տալ մեր յեղափոխական գործունէութեան: Անհրաժեշտ խոշոր միջոցները խորհուած են, որպէսզի ձեռնարկը մատակարարէ ո՛չ միայն սպայի մը հարկաւոր զինուորական ամէն գիտութիւն, այլ նաեւ մեր յեղափոխական կռիւներուն յատուկ պահանջներուն ալ բազմակողմանի գոհացում:

Իբրեւ ծախս՝ պիտի ունենանք 25-30,000 Փրանքի պիւտճէ մը, որուն վստահ ենք մէկ մասը պիտի ուզէք դուք թիթեւցնել:

Վարժարանը այս տարուան համար պիտի մարզէ եւ դաստիարակէ 40 ընկեր ուսանող, որոնցմէ 20ը բաժին հանած ենք հայրուկային կեանքի վարժ մեր ընկեր Անդրանիկի զինուորներուն, որոնք այս միջոցիս Կովկաս կը գտնուին, 10ը՝ ձեր շրջանին եւ մնացած 10ն ալ մեզի ու եզրիպտոսի: Մեր միջոցներով պատրաստուելիք այս 40 ուսանողներէն գատ, խոստում առած ենք նաեւ պուլկար կառավարութեանէն՝ 20 ուսանողներ ալ մտցնել պուլկար կառավարական զինուորական վարժարանը (Պահեստի սպայից): Քանի որ այս միւս 20 ընտրելիները պէտք է

աւարտած ըլլան անպատճառ գիմնագիական ընթացք մը եւ գիտակ՝ պուլկարներէն կամ առնուազն ուսուցիչներ, ստիպուեցանք գրել Արեւելեան Բիւրոյին՝ որ մատակարարէ գանոնք եւ փութով հասցնէ մեզի, որպէսզի ներկայ ըլլան Սեպտեմբերին սկսելիք դասախօսութեանց:

Գալով մեր ձեռնարկած 40 ուսանողներու հաստատութեան՝ աւելորդ է ըսել թէ հարկաւոր ամէն պէտքերը պիտի հոգանք մենք, ուսանող-ընկերները ազատ ըլլալով նիւթական ամէն մտահոգութենէ: միայն, իբրեւ առաջին պայման անոնք պարտաւոր պիտի ըլլան խոստանալու ճ տարի առնուազն ինքզինքնին կազմակերպութեան (տրամադրութեան) տակ դնել եւ կատարել իրենց ցոյց տրուած պարտականութիւնները:

Ուստի, կը դիմենք ձեր շրջանին, յայտնելով թէ կարող էք մինչեւ 10 ընկեր տրամադրել նոյն վարժարանին, նկատի ունենալով ընդունելութեան հետեւեալ պայմանները:

- 1°.- Տարիքի նուազագոյն չափն է 20, եւ առաւելագոյնը՝ 35:
  - 2°.- Բժշկական տեղեկագրի մը վկայութեամբ՝ ընտրելին ունենալու է կատարեալ առողջութիւն, ուժեղ ու Ֆիզիքական անթերի կազմուածք:
  - 3°.- Ձինուորական կեանքի յարմար խառնուածք, մաքուր բարոյական եւ վստահելի նկարագիր:
  - 4°.- Ունենալու է գէթ տարրական նախակրթարանի մը կրթութեան չափ մտաւոր պատրաստութիւն:
  - 5°.- Վարժարանը կրելով զինուորական բնոյթ՝ ընկեր ուսանողները պիտի գտնուին զինուորական կատարեալ տիպիլինայի տակ:
- Համաձայն ներկայ պայմաններուն՝ կը խնդրենք որքան կարելի է փութով կատարէք ձեր ընտրութիւնները եւ ճամբայ հանէք ընտրելիները, որպէսզի առ առաւելն Սեպտեմբերի վերջը ներկայ գտնուին դասախօսութեանց սկիզբաւորութեան:

Սպասելով ձեր լուրերուն՝ կը մնանք ընկերային յարգալից բարեւներով՝

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱԼՔ. Կ. ԿՈՄԻՏԷ

*Ապագայի իր ատուա՝ իր Քուէք ընտրելիներէն յարգելի*  
*Լ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կ. Կոմիտէին*

[12.- Եւսմակի աւարտին Անդրանիկի ձեռագրով երկտող]:

*Եւս եւ անուշաբայ իմ ընկերներէն զեր ձեռագրով ընտրելիներէն*  
*Եւս եւ անուշաբայ իմ ընկերներէն զեր ձեռագրով ընտրելիներէն*

Նաեւ ընդունեցէք իմ ընկերական ջերմ համբոյրներս եւ բարեւներս:  
 ԱՆԴՐԱՆԻԿ<sup>12</sup>





Փաստ. 1148-111

Գ 6.- ՊԱԼՔԱՆԻ Կ. Կ.Ի ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

1908, Հոկտ. 5/18<sup>13</sup>, Ֆիլիպէ

Հ. Յ. Դաշ. Արեւմտեան Բիւրոյին<sup>14</sup>

Յարգելի ընկերներ,

Կը պատասխանենք ձեր Հոկտ. 4 թուակիրին:

1<sup>0</sup>.- Անդրանիկի բանակցութիւնները դեռ աւարտած չըլլալով ու Անդրանիկը տակաւին հոս վերադարձած չըլլալուն համար, որոշ բան մը չենք կրնար գրել ձեզ այժմ. հետեւաբար ներողամիտ եղէք որ քիչ մը ատեն ալ սպասենք ձեզ՝ մինչեւ բանակցութիւնները վերջնական հանգամանք առնեն:

Բայց առայժմ սա չափ կրնանք ըսել, որ ընդհանրապէս յարաբերութիւնները շատ սիրայլոր եւ խոստումալից եղած են:

2<sup>0</sup>.- Զինավարժական խնդիրը քանի մը օր առաջ պաշտօնական ձեւը առաւ. այսինքն Ձին. նախարարին կողմէ յատկացուեցաւ վանք մը՝ սահմանազուխին մօտիկ, որ պիտի ծառայէ մեր տղոց իբրեւ վարժարան: Համաձայնութեամբ Ամերիկայի Կ. Կոմիտէին, Պալքանը սահմանեց այս նպատակին համար մօտաւորապէս 40-50,000 Փրանքի պիւտճէ մը, որուն կէսը Ամերիկան եւ մնացածն ալ մենք յանձն առած ենք հայթայթել: Տըրամադրելի պիտի ըլլան մինչեւ 40 ուսանողներ՝ երկու ուսուցիչներու առաջնորդութեան տակ եւ շրջանը պիտի տեւէ մօտ 9 ամիս:

Ուսանողները պիտի հաւաքուին Կովկասէն, Ամերիկայէն եւ մեր շրջանէն. գրած ենք Օգիպտոսի Մարմինն ալ որ իր կողմէն գոնէ երեք ուսանողներ ղրկէ: Կովկասէն մաս մը տղաք հասած են, Ամերիկայիները հաւանաբար ճամբան կը գտնուին այս պահուս, իսկ մեր շրջանիները պատրաստ են արդէն: Անդրանիկը, ձեւալեանը եւ Ալաճաճեանը<sup>15</sup> Սոֆիա կը գտնուին՝ մէկ կողմէն

մէկ բանակցութիւնները վարելու, իսկ միւս կողմէն նախապատաստութիւնները գլուխ հանելու: Երբ անոնք վերադառնան՝ մտադիր ենք առաջին տեղեկագիր մը պատրաստել եւ յղել ձեզի:

3) Ձեր հեռագիրը ստանալէն օր մը առաջ արդէն Անդրանիկի կողմ հրատարակուած էր Ռազմիկի մէջ եւ ցրուուած: Չենք կարծեր թէ անոր պարունակութիւնը մեղադրելի կէտեր ունենար թէ՛ իրեն եւ թէ՛ մեզի համար: Բաղձալի էր նաեւ իմանալ ձեր հայեացքը այս մասին:

Ընկերական յարգանքներով  
Հ. Յ. Դ. ՊԱԼՔ. Կ. ԿՈՄԻՏԷ



13.- Գին տոմարով 5, իսկ նոր տոմարով՝ 18 Գոկտեմբեր:  
14.- Կու տանք նամակին միայն առաջին բաժինը, այն որ կապ ունի զինուորական վարժարանին հետ:  
15.- Թովմաս Եւլալեան Ամերիկայէն ընտրուած էր պատգամաւոր Դ. Ընդի. ժողովին համար եւ արդէն կը գտնուէր Պուկարիա մօտէն ծանօթանալու համար զինուորական վարժարանին հետ կապուած հարցերուն: Երուանդ Ալաճաճեան անդամ էր Պալքանի Կեդր. Կոմիտէին:

Փաստ. 1148-121

Գ 7.- ԱՆԳՐԱՆԻԿԻ ՆԱՄԱԿԸ Է. ԱԿՆՈՒՆԻՆ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Սիրելի ընկեր նաչատուր:

Ինչպէս ձեզ գրեցի երկու օր առաջ, թէ հակառակ կուսակցութիւն մը խոչընդոտներ կը հանդիսանան մեր գործին, բայց համաձայնութեան եկանք. նախարարը անձամբ խօսեց այդ մարդկանց. գործերնիս շատ յաջող են. տեղիս նախարարութիւն ամէն զոհողութիւն չի խրնայեր կոր մեր գործին: Ամէն բան պատրաստ է. բոլոր պիտոյքները առնուած է ու փոխադրուած որոշուած տեղը: Տեղիս զինուորական դպրոցի տեսուչին եւ Պօղոս Պօղոսեանին<sup>16</sup> յանձնարարուած է նախարարութեան կողմից, որ մշակեն բացուելիք դպրոցի ծրագիրը. ամսուն 25ին Պօղոս Պօղոսեանը, որ կապիտան է, մեր Ռաչիդը եւ մի ուրիշ պուլկար] օֆիցեր կը փոխադրուին պաշտօնապէս դպրոցը:

Բայց դժբախտաբար մինչեւ օրս տեղս ունինք 12 տղայ հասարակ գրել կարողալ գիտցող: Կովկասէն խոստացան տղայ ղրկել եւ համաձայնեցին մեզ հետ այս խնդրի առթիւ եւ հիմա կը գրեն թէ տղայ չկայ որ ղրկենք: Գրած ատենս շատ յուզուած եմ. օտար կառավարութեան մը առջեւ կ'ուզեն ինձ խայտառակել:

Եթէ չէին կրնար թող չխոստանային ինձ օրօք: Ամերիկայէն 10 տղայ պիտի գար. նրանք ալ չեկան. մեզի պէտք է 50 տղայ:

Կովկասէն հասած նամակները ու լուրերը շատ տրիւրեցուցիչ է. բոլորի պատճառը Արեւելեան Բիւրոն է, որ Ընդհանուր Ժողովը այսպէս ձգձգեցին: Միհրանը մեծ ուժ ունի իրա ետեւից. չէիս Ալիի սպանութիւնը աւելի յուզած է ժողովրդի մտքերը: Առած մը կ'ըսեն. ձին եւ ջորին կը կռուին, էջը մէջտեղ կը կայնի: Լաւ չեն ըներ: Ես այսպէս համոզուած եմ, որ Բիւրոն թէկուզ արդար ալ լինի ինք տեղի պիտի տայ, որ տաճկահայ զինուորները չլիտորեն մէկգամէկ: Վստահ եղիր որ եթէ առաջը

Սոֆիա

չառնէ, լինելու է այս բանը. եւ ռուս կառավարութիւնը բոլոր գաղթականութիւնը պիտի աքսորէ Կովկասէն:

Տեղիս նախարարութեան հետ խօսացածնիս եւ նրա խոստացածները չեմ կարող գրել. ահագին թուղթ պէտք է: Հարցից շեղեցայ: Որչափ յարմարութիւն կը տեսնաս, ես այսպէս կ'ըսեմ որ քու կողմէն հեռագիր տաս Մեծ քաղաք եւ հրաւիրես ընդհանուր Ժողովին Պուկարիա. եթէ չեկան, այս բանը շատ մեծ հաւանականութիւն կայ որ արիւնահեղութիւն կայ: Վստահ եղիր որ այնչափ որ լեցուած են, կարող են պայթել:

Ռոստոմը կը գրէ մեզ թէ Միհրանի դէմ խիստ միջոցներ ձեռք պիտի առնենք. բայց ըրածնին անխճեմութիւն կը լինի եթէ ոեւէ ընդհարման տեղի տան: Եստ շատերից կը լսեմ որ Ընդհանուր Ժողովի այսչափ ձրգձգուելը Արեւելեան Բիւրոյի կողմից նպատակն է Կովկասեան նախագծի համար հող պատրաստեն, յետոյ ժողովը գումարեն. եւ փաստերը ցոյց կու տան, որ այդ ուղղութեամբ արողագանդիստներ կը ղրկուին Կովկասի զանազան շրջաններում: Խնդրում եմ ի սէր այն տանջուած ժողովրդին եւ ի սէր այն թափուած անմեղ արիւններուն, թափես ունեցած ճիգերդ, որ անմեղ թէ մեղաւոր արիւններ չթափին:

Համբոյրներով

ա. ՊԱՐՈՅԻ

Նամակս կարդա Մարին եւ Գալֆային<sup>17</sup>:

16.- Պուկարական բանակի հարիւրապետ՝ կապիտան Պօղոս Պօղոսեան կարգուած էր Դաշնակցութեան զին. վարժարանի տնօրէն:

17.- Յաջորդաբար Միքայէլ Տըր Մարտիրոսեան եւ Յարութիւն Գալֆայեան (Վահրամ):

Գ 8.- ՊԱԼՔԱՆԻ Կ. Կ.Ի ՆԱՄԱԿԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՈՍԻՏԵԻՆ<sup>14</sup>

Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կ. Կոստանտինոպոլիսի Պոսթի

Նոյեմբեր 12/25 Ֆրիլայի

Ընկերներ.

ժամանակին ստացած ենք ձեր 312, 395, 404 եւ 433 թուահամար գրութիւնները ներփակ յանձնագրերով, որոնք Սոֆիա ուղարկուած են ստորագրել տալու եւ այն տեղէն ձեզ վերադարձնելու համար:


Ձինուորական վարժարանի համար ձեր որոշած եւ մեզ տեղեկացուցած ընկերները բոլորն ալ տեղ հասած են: Վարժարանը արդէն ապահովուած եւ իր բոլոր կահ ու կազմուածքով պատրաստ է: Բաւական դժուարութիւններ հարթելէ եւ գործը կիսով լրումի կարգադրելէ յետոյ նոր եւ լուրջ խոչընդոտներ պատահեցան, բայց ուրախ ենք յայտնելու թէ այդ բոլորին կրցած ենք յաղթել շնորհիւ գործին գլուխը եղող ընկերներու ջանքերուն եւ կառավարութեան բարեացակամութեան: Ձինուորական նախարարութիւնը մեր յարմար դատած անձերը, կապիտէն Պօղոսեան եւ Ռաչիտ, վարժարանի ուսուցիչ նշանակուած է, այս վերջինս այդ առթիւ պուլգարականի մէջ ընդունուած է: Կառավարութիւնը պիտի վճարէ այդ ուսուցիչներու ամսականները, բայց մեր վրայ եւս կ' ինչայ տարեկան որոշ ծախք ընել: Գործին համեմատաբար դժուար մասը կարգադրուած է, բայց ինչ որ դիւրին կը խորհէինք, ան կը մնայ անկատար՝ տակաւին պէտք եղած թուով աշակերտներ չունինք եւ մեղք է որ առիթէն չօգտուինք, որքան կարելի է շատ թուով ուսանողներ չգտնենք: Նոյն յարմարութիւնները ամէն տարի ունենալու յոյս չենք կրնար դնել: Կովկասը այդ կէտով մեզ բոլորովին յուսախար ըրաւ. մեր ամէնէն մեծ յոյսը այդ տեղի վրայ էր. իսկ այդ տեղ է որ ամէնէն աւելի թույլ շարժեցաւ: Հազիւ քանի մը աշակերտ ունեցանք Կովկասէն, իսկ եթէ աւելին ունենանք, ատիկա պիտի պարտինք Տաթեւեանի<sup>18</sup>, ձեւալեանի եւ վերջերս հոն գնացող վարդապետի ջանքերուն եւ ոչ թէ մեր պաշտօնական մարմիններուն: Դպրոցը պէտք էր վաղուց բացուած ըլլար, եթէ յարուցուած դժուարութիւնները չըլլային. բայց մէկ կողմէն լաւ է որ ուշացաւ, որովհետեւ տակաւին հիմա հարկ եղած թուով աշակերտ չունինք. իսկ աւելի շուտ եթէ բացուէր, բոլորովին ա-

մօթով պիտի մնայինք կառավարութեան առաջ: Կովկասէն հասնելիք նոր ընկերներով կը յուսանք թէ պարզերես ելնենք կառավարութեան առաջ եւ եղած ձեռնարկէն գոնէ 40 հոգի մը պատրաստելու չափ օգտուինք:

Վարժարանի համար ձեր ուղարկած գումարները ստացուած են, որոնց համար Սոֆիայէն անշուշտ ձեզ գրուած կ'ըլլայ: Այս ձեռնարկի մասին գաղտնապահութիւնը անհրաժեշտ է, սակայն ակամայ տարածախրուած է Կովկասէն եկող զինուորներու այստեղ մնալուն եւ այդ հարցի առթիւ անհրաժեշտը մարմիններուն գրուած չ'ըլլալուն պատճառաւ: Այժմ ձեռնարկի վիժումի մասին խօսք տարածելով եւ գնացող տղոց խումբին ամէն յարաբերութիւն արգիլելով՝ հակազդել կ'ուզենք:

Մեր շրջանի ընկերներէն Մկրտիչ Սանտալաճեան, որ այժմ Նիւ-Յորք կը գտնուի, մեր կարծիքով շատ յարմար է զինուորական վարժարանի աշակերտ նշանակելու համար եւ արդէն այդ բանին ինքն ալ շատ փափաքող է, սակայն անհրաժեշտ ճանապարհածախսը չունի եւ չ'ուզեր ալ ձեզի դիմել շրջանիդ համար նոր ընկեր մը համարուելուն: Չգիտենք ինչ պայմաններով կ'ուղարկէք ձեր որոշած տղաքը. եթէ ճանապարհածախսերը կը հոգաք, պիտի խնդրէինք որ յիշեալ պարունի համար ալ նոյնը ընէիք եւ ուղարկէիք. որովհետեւ սորվելու ընդունակ եւ յարմար տղայ է: Այս խնդրի մասին ընկեր Անդրանիկն ալ գրած է:

Իմացած կ'ըլլաք անշուշտ որ Ընդհանուր Ժողովը վերջապէս որոշուած է Ռուսաստանէ դուրս, արտասահման ընել, սակայն տեղը տակաւին հաստատ չգիտենք: Ընդհ. Ժողովի գրեթէ նախընթաց օրը ինչ անհրաժեշտութիւն կար Կովկասեան նախագծի ընդունելութեան համար առանձին տաճկահայոց ժողով գումարել, եթէ այդ մասին վերջին խօսքը Ընդհ. Ժողովին պէտք է մնայ դարձեալ:

.....  
*Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կ. Կոստանտինոպոլիսի Պոսթի*  


Ընկերական ջերմ բարեւանքով՝  
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՆ

18.- Վահագն Տաթեւեան՝ Թովմաս Եելալեանի հետ Ամերիկայի երկրորդ պատգամաւորը Ընդհ. ժողովին:

Փաստ. 1149-49

Գ 9.- ՊԱԼՔԱՆԻ Կ. Կ.Ի ՆԱՄԱԿԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵԻՆ

1907 Յուլիս 16

Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կոստանտին,

Ընկերներ,

Ստացած ենք ձեր Յուլիս 6 եւ 16 ամսաթիւ նամակները, ինչպէս նաեւ ուղարկուած 5154 Ֆր.ը:

Ձին. վարժարանի շրջանը արդէն աւարտած եւ տղաները ցրուած ենք գրեթէ. այս պահուս Կովկասէն եւ Ամերիկայէն եկող տղոցմէն հազիւ 10-15 հատ կայ, որոնք նոյնպէս մօտ ատենէն կը ցրուին: Գուցէ 15-20 օր մը եւս տեւէր վարժարանը, եթէ նախարարական հրաման մը չհարկադրէր մեզ երեք օրուան մէջ բոլորովին հետքը կորսնցնել վարժարանին, արդիւնք՝ ուսու եւ թուրք կառավարութեանց հետապնդումներուն եւ հետախուզութիւններուն:

Արդէն վարժարանի աշակերտներու կարողութեանց եւ իւրաքանչիւրը ուր դրկուելու մասին ընդարձակ տեղեկագիր մը պատրաստած ենք՝ որուն մէկ պատճէնն ալ քանի մը օրէն ձեզի կը դրկենք: Իսկ յառաջիկային կը պահենք վարժարանի նիւթական թէ բարոյական վիճակին վրայ ընդարձակ եւ քննական տեղեկագիր մը պատրաստել՝ երբ հոս հոն ցրուած հաշիւները կը կեդրոնանան եւ Կեդր. Կոստանտին ի վիճակի կ'ըլլայ այդ աշխատութեան սկսելու: Բայց մինչեւ այդ տեղեկագրերուն ձեզի հասնիլը կը փութանք հաղորդել ձեր շրջանի ընկերներուն վերաբերեալ եղած կարգադրութիւնը:

Ա. Աղեք. Տումանեան եւ Պետրոս Սիրունեան, որոշուած է որ Կովկաս անցնին եւ անկէ Մուշի վրայով Քղի, յարաբերութիւն եւ գիծ հաստատելու համար այդ երկու քաղաքներուն մէջ: Այս երկու ընկերները այս պահուս վառնա են եւ Յուլիս 24ի նաւով պիտի մեկնին:

Բ. Յակոբ Քէրբեանի համար անմիջական գործ մը չկար եւ ետ ալ չուզեց երթալ Կովկաս սպասել եւ գործել: Խոստացուեցաւ զինքը 5-8 ամիսէն կենդանի գործի կանչել, եթէ յանձն առնէ ապրուստ մը հոգալու չափ զբաղում մը գտնել Պուլկարիոյ մէջ եւ սպասել: Իսկ եթէ 5-8 ամիսէն կազմակերպութիւնը չկրնայ գինք գործի կանչել, այդ պարագային դառնայ Ամերիկա: Ընկեր Յակոբ այս պայմանը յանձն առնելով՝ մեկնեցաւ Պուլկազ, ուր չենք գիտեր թէ ո՞րքան պիտի յաջողի գործ ճարել: Հոն ընկերները պիտի վարժեցնէ զինավարժութեան:

Գ. Արմենակ Խանատանեան որոշուած էր Սոֆիայի կառավարական գինարանը մտցելու աշխատիլ. իսկ

եթէ այդ բանը չյաջողեցաւ, մեկնի Կովկաս՝ անցնելու համար Կարնոյ շրջանը: Վերջերս Ֆրիլայէի հայ Մասնաւոր] վարժարանէն բռնուած պոմպաներու խնդիր մը՝ պուլկազ] կառավարութիւնը փափուկ դիրքի մը մէջ դրաւ եւ սկսաւ հալածանք մը՝ մեր դէմ, թէեւ ձեւական: Այս պահուս արդէն մէկ-երկու ընկերներ Պուլկարիայէն դուրս ելած, իսկ ընկեր Զարդարեանին ալ արգիլուած է Ֆրիլայէի մէջ բնակիլ, հետեւաբար գինարանի խնդիրն ալ ջուրը ինկաւ: Ուրեմն Արմէնին կը մընայ երթալ Կովկաս, բայց ինքը աւելի միտք ունի Ամերիկա դառնալու, թէեւ պիտի ընդդիմանանք:

Դ. Կարօ Այվազեան, հարց դրած է Կիրիկիա մտնել, այս մասին գրուած է Արեւմտ. Բիւրոյին, բայց դժուար թէ յաջողի մուտքը. ուստի որոշած է որ դառնայ Ամերիկա հակառակ պարագային. իսկ սկիզբէն ի վեր չուզեց բնաւ երթալ Կովկաս դեգերիլ, իր ներկայութիւնը անձնական թէ կազմակերպական տեսակէտներով Ամերիկայի մէջ աւելի օգտակար նկատելով:

Ե. Օննիկ Ղազարոսեանը որոշուած է որ Իզմիր մըտնէ, եթէ ներկայութիւնը օգտակար պիտի ըլլայ. գրուած է Բիւրոյին եւ Իզմիր, եթէ ներսի ընկերները չհակառակին, 80% հաւանականութիւն կայ որ իր մուտքը յաջողի, հակառակ պարագային նոյնպէս պիտի դառնայ Ամերիկա:

Ահա՛ ձեր տղայոց մասին եղած կարգադրութիւնները Ընդհ. Ժողովէն եկող ընկերներու համաձայնութեամբ եւ որոշմամբ, որոնց համաձայն ալ պիտի շարժինք: Կը գարմանանք թէ ինչո՞ւ այդքան կը խրտչիք երբ մէկ-երկու ընկերներ ալ վերադառնան, որոնք հող ալ իրենց անառարկելի օգուտները պիտի ունենան: Ժամանակ չէ՞ արդեօք որ քիչ մը ընկերներու ամբոխային հակումներն ու մտքերը դաստիարակուին եւ այդ կարգի աննշան երեւոյթները յուզուելու դրութեան վերջ տալու աշխատուի, որ միշտ աղիտաբեր կրնայ ըլլալ:

Ընկերական բարեւանքով  
Հ. Յ. Դ. ՊԱԼՔ. ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՆ  


Գ.

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՇՈՒՐՁ

Հ. Յ. Դաշնակցութեան Խորհուրդը ստեղծուած էր Գ. Ընդհ. Ժողովի որոշումով փոխարինելու համար Հ.Յ.Դ. Կամքը ներկայացնող Մարմինը: Ան կը բաղկանար Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու, Պատասխանատու չորս Կ. Կոմիտէութեանց, Յուցական մարմնի ու Կովկասի (ինքնապաշտպանութեան) պատասխանատու մարմնի ներկայացուցիչներէն, եւ օժտուած էր լայն իրաւասութիւններով: 1905ին, Խորհուրդը իր առաջին նիստերը գումարեց որոշ յապաղումով անդամներու մէկ մասին ժողովուարի հասած չըլլալու հետեւանքով: Խորհուրդի անդամներէն ոմանք՝ Ռոստոմ Չօրեան, Համօ Օհանջանեան, Անդրանիկ, Մռաւ (Մարգար Ժամարեան), Յար. Գալֆայեան 1905 թ. Փետրուարի վերջերուն ժողովուարին արդէն: Նոյն ամսուան սկիզբը՝ 6ին, ծայր առած էին հայ-թաթարական ընդհարումները՝ Պաքոյի բուրքերու հայկական բաղին վրայ կատարած խուժանային յարձակումով եւ անոր յաջորդող կոտորածով: Ժողովուարը հաւաքուած Խորհուրդի վերոյիշեալ ընկերները, Կովկասի մէջ ստեղծուած ծանրակշիռ կացութեան առջեւ եւ առանց սպասելու ժողովականներու մեծամասնութեան (2/3) հաւաքուելուն, հարկ կը տեսնեն կայացնելու՝ ստորեւ տրուած փաստաթուղթով ներկայացուած որոշումները, որոնք առ ի գործադրութիւն յղուած պէտք է ըլլան Մարտ ամսուան առաջին շաբթուան ընթացքին:

Փաստ. 1567ա-45

Գ 1.- Հ.Յ.Դ. ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՌԱՋԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

խորհուրդի համար ժողովուար ընկերները Բաքուի դէպքերի առթիւ, առանց սպասելու «խորհուրդի» պաշտօնական նիստերին, վճռեցին հետեւեալ որոշումները յայտարարել Կովկասի Մարմիններին.

1. Դաշնակցութեան առձեռն ունեցած բոլոր բերդանները ժամանակաւորապէս բաժանել կռուող ուժերին զանազան վայրերում:
2. Մախել կռուող ոյժերին եւ ժողովուրդին Դաշնակցութեան բերդանի փամփուռներէն 50.000 հատ:
3. Կազմել անմիջապէս մի մարմին յատկապէս զէնք մատակարարելու համար: Հրաւիրել նրա մէջ Հայկունուն, Մուսախան, Մաքոյին, Ֆելիքսին եւ Յակոբին: Տալ նրանց իրաւունք գործի համար հրաւիրելու անհրաժեշտ ոյժերը, պարտաւորեցնել դաշնակցական մարմիններին ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալ նրանց: Չէնքի հարցերում տալ նրանց իրաւունք այն մարմիններում, որոնց շրջանում նրանք կը գտնուին: Նոյնպէս ձայնի իրաւունք տալ նրանց ինչպէս Կովկ. Պատ. Կ. Կոմիտէում, այնպէս էլ Կովկ. Ռայոնական Ժողովում: Միայն Կովկասի զինման յատկացնել 60.000 ռուբլի: Այդ դրամը պիտի գտնուի շրջանառութեան մէջ: Չեռք բերուած զէնքերը պէտք է ծախել ժողովուրդին այն պայմանով, որ պահանջ եղած ժամանակ կամ իրենք ներկայանան իրենց զէնքով, կամ զէնքը յանձնեն Դաշնակցութեան՝ փողը յետ ստանալով:
4. Պարտաւորեցնել տեղական դաշնակցական մարմինները գործ դնել ամէն միջոց ժողովուրդը զինելու համար, անկախ վերոյիշեալ ձեռնարկներից:
5. Պարտաւորեցնել բոլոր հայ մաքսանենգներին զէնք

ըր ծախել հայերին միայն՝ ժողովուրդին կամ կազմակերպութեան:

6. Որովհետեւ զինման գործը կարող է ձգձգուել, իսկ թուրք խուժանի յարձակումները կարող են շուտով այլ վայրերում վերսկսուել — որոշուեցաւ հնարաւորին չափ շուտով ոյժ տալ ռուսներին մեծ քանակութեամբ պատրաստելուն: Ռուսների պահեստներ ունենալ բոլոր այն կենտրոններում, ուր կը նախատեսուի վտանգ: Պահեստները պէտք է գտնուեն Պատասխ. Կ. Կոմիտէից նշանակուած մարդկանց ձեռքում: Գործածութեան իրաւունքը վերապահուում է բացառապէս Կովկ. Պատ. Կ. Կոմիտէին: Իւրաքանչիւր մարմին կամ անձնաւորութիւն, որ առանց Կովկ. Պատ. Կ. Կոմիտէի հրահանգի գործ կ'ածի ռուսը, կ'ենթարկուի ամենախիստ պատժի — նոյնիսկ տեւորի—:

7. Աչքի առաջ ունենալով, որ Բաքուի դէպքի առաջ բերած յուզումը կարող է դրդել շատերին ուրիշ տեղերում վրէժխնդրութեան դիմելու եւ որ դորանով թշնամական յարաբերութիւնները հայերի եւ թուրքերի միջեւ աւելի կ'ուժեղանան, մի բան, որին ձգտում է կառավարութիւնը, Դաշնակցութիւնը պարտաւոր է ա. ամէն միջոց գործ դնել զսպելու հայ հասարակութիւնը եւ առանձին անհատներին եւ առհասարակ խուսափել մեր կողմից ոեւէ առիթ տալուց բ. Հողային խնդիրները, խղճի ազատութիւնը եւ այն հիմք առնելով, աշխատել որ կառավարութեան դէմ ուղղած հայերի եւ թուրքերի համերաշխ ձեռնարկներ, թուրքերէն թուրքիկներով, բերանացի քարոզներով հասկացնել կառավարութեան դերը

եւ ներքին թշնամութիւնների հետեւանքը:

8. Դաշնակցութիւնը իւր առաջին յարձակումը պէտք է ուղղի անմիջապէս անմիջապատրաստի դէմ: Այդ ճանապարհով կարելի է երեւան հանել մեր ոյժը եւ ապացուցել թուրք ամբոխին, որ մեր բռնած դիրքը իրեն վերաբերմամբ ոչ թէ մեր թուլութեան, այլ մեր քաղաքական ձգտման հետեւանքն է: Ինչպէս ցոյց են տալիս անցեալ դէպքերը Տաճկաստանը, ադմիխատրացիան եւ թուրք ամբոխը, յարձակման պատրաստութիւնների դէպքում, ամէն կերպ աշխատելու են միամտացնել հայ ժողովուրդին, քնացնել նրան, որպէսզի

Փաստ. 1584-1

Գ 2.- ՁԻՆՈՒՐԱԿԱՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ձինուորական Ռայոնական ժողովում որոշուեց՝

- 1) Մի ընդհանուր հրամանատարութիւն ստեղծել Նուխու, Արէշի, Գէօկչայի եւ Շամախու գաւառների համար:
- 2) Որոշուեց Ղարաբաղում թոյլ չտալ քոչըր<sup>1</sup> անցնելու սարերը. այդ գործի ղեկավարութիւնը ամբողջապէս յանձնուում է Ապառաժի ընդ. հրամանատար Վարդանին<sup>2</sup>:
- 3) Գանձակի գաւառը մի առանձին շրջան — իր հրամանատարով:
- 4) Ղազախի, Շամշաղի, Լոռուայ եւ Բորչալուի շրջանը — մի հրամանատարով:
- 5) Ախալքալաք, Մալկա — մի առանձին շրջան — իր հրամանատարով:
- 6) Մրգաստանի նահանգը<sup>3</sup> — մի շրջան իր ընդհանուր հրամանատարով:
- 7) Ղարսի եւ Ալեքսանդրապոլի շրջանները — իրենց հրամանատարներով:
- 8) Որոշուեց Առաջաձորից մինչեւ էրքեաջը դարձնել մի կոմիտէական շրջան — «Մուս» — կենտրոն ունենալով Թալիշը<sup>4</sup>, որը իր բոլոր գործողութիւնների մէջ ենթարկուում է Ապառաժի Կենտ. Կոմիտէին:
- 9) Մրգաստանի<sup>5</sup> վերաբերմամբ որոշուեց՝ սպասողական եւ ինքնապաշտպանողական դիրք բռնել եւ անցնել յարձակողականի միայն այն ժամանակ, երբ թուրքերը կը սկսին, կամ համախմբման եւ կամ յարձակման պատրաստութիւնների անվիճելի ապացոյցներ կը լինին:

19 III 06, Մեծ քաղաք<sup>5</sup>  
II  
[1906, 3 Փետր.]

յանկարծակի վրայ տան: Գլխաւորապէս ազդելու են հայ ունեւոր դասակարգի վրայ, որը աւելի տրամադիր է լինելու՝ ընդհարումներից խոյս տալու համար՝ հրաւիրել հայերին, զէնքի չդիմել: Այդօրինակ դէպքերի առաջին առնելու համար՝ Դաշնական բոլոր մարմինները պէտք է նախօրօք զինեն իրենց բոլոր կռուող ոյժերը եւ տեղական պայմանների համաձայն դասաւորեն նրանց:

9. Թէ զէնքի բաշխման, թէ ինքնապաշտպանական մարտիկ խմբեր կազմակերպելու կանոնադրութիւնը եւ թէ կռուի տակտիկի յատակագիծ կազմելը առ այժմ վերապահուում է տեղական մարմիններին:

Փաստ. 1584-2

Գ 3.- ԱԲՐ. ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆԻ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նախորդ փաստաթուղթի կողքին, առանձին էջով Ա. Գիւլխանեան կու տայ հետեւեալ ծանօթութիւնները Թիֆլիսի մէջ կայացած «Ձինուորական Ռայոնական Ժողովին» մասին, որուն ինք եւս մասնակցած էր:

Այս ժողովին մասնակցել են միայն զինուորական վարիչները:

- Բիւրոյի կողմէն Արմէն Գարոն
- Երեւանի նահանգի կողմից՝ Դուրմանը
- Շուշուայ շրջանից պիտի գար Վարդանը, բայց չեկաւ:
- Գանձակի շրջանից Ա. Գիւլխանեանեան:
- Դուրմանի հիւանդութեան պատճառով ժողովները տեղի էին ունենում «Սեւեռնիյէ-Նոմերա» հիւրանոցում Դուրմանի մօտ:

Այստեղ չէ արձանագրուած ռազմամթերքի բաշխման ինչպէս եւ մարտիկների մի վայրից միւսը գնալու մասին:

Ա. ԳԻՒԼԽ.

- 1.- Անասուններու մեծ խումբի տեղափոխութիւնը դաշտային շրջաններէն դէպի սարերը եւ հակառակը:
- 2.- Խանասորի վարդանը (Սեիրապեան Սարգիս), որ պիտի ղեկավարէր Ղարաբաղի (Ապառաժ) ինքնապաշտպանութեան մարտերը:
- 3.- Երեւանի ցահանգը:
- 4.- Առաջաձորը Կապանի (Ղափան) շրջանի գիւղերէն էր, էրքեաջը՝ Ղարաբաղի: Նշուած Թալիշը նոյնպէս Ղարաբաղի գիւղերէն է, Մռաւ լեռան ստորոտին:
- 5.- Թիֆլիս:

Փաստ. 1583-1

Դ 4.- ՔԱՐԻ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Սիսիանի Բ. հատորին մէջ (էջ 249-250), Ա. Գիւլստանգանեանի «Հայ-բարբարական կոիւնքը Անդրկովկասում» յոգևածաշարքին (Հայրենիք ամսագիր, 1935 Օգոստոս, թիւ 10) քաղելով տրուած են լայն ամփոփումներ Քարի Ռայոնական այս ժողովի արձանագրութիւններէն:

Պատրիւ տրուածը նայնի ամբողջական բնագիր-փաստաթուղթն է:

Արձանագրութիւն  
Ա. Ժողով, 21 Յունիս, 905 թ.

- Որակարգ.**
- 1) Բազուի առաջարկ.— յարձակողական դիրք բռնել, զինուորական մեծ բանակ կազմել:
  - 2) Քաղաքական ահաբեկումների խնդիր.— սահմանափակում:
  - 3) Զինուորական Մարմնի եւ զինուորական կազմակերպական խնդիրներ:
  - 4) Տնտեսական ահաբեկում եւ այլ խնդիրներ:

Խօսուում է Ա. խնդրի մասին:

**Մեծ քաղաք<sup>5</sup>.**— Գաւառներում մասամբ մեր թուրք-թիւնից, մասամբ ուրիշ յարգելի պատճառներից հարկադրուած՝ չպէտք է նախապարձակ լինենք: Մի շրջան չունինք, որ վստահութեամբ ասէինք թէ յարձակողական մեր կողմը կը լինի: Ամէն տեղ թուրքը լաւ է զինուած եւ մեծ քանակութիւն է կազմում: Կը սկսուի ամէնուրեք կռիւ, եւ Կովկասը կը դառնայ արեան ծով: Սկսուած աղէտի շրջաններում ալ պէտք է իր ժամանակին պաշտպանուել. եւ հակառակ եմ նախապարձակ լինելուն որեւէ տեղ:

**Ապառաժ<sup>2</sup>.**— Նախ քան Ոսկանապատի առաջարկի քննադատութիւնը՝ մենք պէտք է լաւ ծանօթանանք նրա հիմունքների, պատճառաբանութիւնների հետ:

**Բիւրօ.**— Նրանց գլխաւոր հիմքը այն է՝ թէ փոքր խմբերով չենք կարող պաշտպանուել:

**Ապառաժ.**— Թուրքը վերջ ի վերջոյ պիտի դառնայ ռամկավար եւ որպէս հպատակ ազգ հայի հետ միասին պիտի կռուի ընդհանուր թշնամու դէմ: Մենք չպէտք է նախապարձակ լինելով խորացնենք այն անդունդը, որ բացուած է հայի եւ թուրքի միջեւ:

Երկրորդ՝ մենք կուտուրական ազգ ենք. երրորդ՝ կառավարութիւնը ինքը կը սկսի յարձակման դէպքում մեզ հարուածել: Ռուսը այնքան միամիտ չէ, որ մեզ նման ենթադրէ՝ թէ թուրքը լոկ համիլաւութեան գաղափարով վարակուած՝ կոտորած կ'առաջացնի: Աւելի խոր պատճառներ կան. տնտեսական հիմունքներն են,

որ մի տեղ թուրքը ստիպում է հային փախչել արդիւնաբերական կեդրոններից, իսկ մի ուրիշ տեղ աղքատութիւնից դրդուած՝ թալանի է մատնում հայ գիւղերը: Ռուսը այժմ հրճուում է յեղափոխական տարրերը խեղդելով. նա համիլաւութիւնից չի վախենում, որովհետեւ իր ժամանակին նա այդ կը զսպէ: Համաձայն չլինելով նախապարձակ լինելու մտքին՝ ես առաջարկում եմ Բազուում, ուր թուրքի լրբութիւնը ծայրայեղութեան է հասնում եւ ուր նա միշտ առիթներ է որոնում մեզ հետ կռուելու՝ կեդրոնացնել մարտական ոյժերը եւ մի մեծ հարուածով կոտորել թուրքի ամբարտաւանութիւնը, որովհետեւ Բազուն է տոն տալիս կովկասեան բոլոր թուրքերին:

**Ջրաբեր<sup>6</sup>.**— Նախապարձակ լինելը կարող է լաւ եւ վատ հետեւանքներ ունենալ: Եթէ որեւէ տեղ մենք յարձակուեցինք եւ ջարդուեցինք, թուրքը կարող է միւս վայրերում, ուր ինքը լաւ զինուած է եւ մեծամասնութիւն է կազմում՝ ելնել հայերի դէմ եւ ընդհանուր ջարդ կազմակերպել. սակայն հետաքրքրական է թէ մենք ի՞նչ զինուորական մեծութիւն ենք ներկայացնում: Այս հարցի պատասխանը ըստ ինքեան կը վճռի դրած խնդիրը:

ՎԵՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ջրաբերի շրջանում պահեստի զինուորներ 2000, որոնցից 40% հիւանդ են ու արտօնեալ:

**Կազմակերպական գէները**

|                       |                               |       |
|-----------------------|-------------------------------|-------|
| N° 1                  | — 104 հատ — ծայր <sup>7</sup> | 36000 |
| N° 2                  | — 45 հատ — »                  | 27000 |
| 7 մարտկերի ատրճան.    |                               | 400   |
| 45 նագան              | »                             | 2000  |
| 8 բրաուն[ինգ]         | »                             | 700   |
| 25 N° 12              |                               | 8000  |
| խնձորներ <sup>8</sup> |                               | 400   |

6.- Կարս:  
7.- Փամփուշտ:  
8.- Նոնակներ, ձեռնառումբեր:

Ժողովողական գէները

|                   |          |                   |             |
|-------------------|----------|-------------------|-------------|
| N° 1              | — 20 հատ | ծայր <sup>7</sup> | 205         |
| N° 2              | — 86     | »                 | 5600        |
| դափաղ 161 հատ     | »        |                   | 780         |
| այնալու 75        | »        |                   | 3500        |
| զանազան 366 ատրճ. |          |                   | 15000       |
| Քաղաքում 100      | —        |                   | 2500        |
|                   |          |                   | 818 — 28685 |

**Մեծ քաղաք.**— Շամ, Բերդ, Շուլաւեր, Ղազար, Ախալցխա — ամբողջ շրջանը կարող է հանել մօտ 3000 հրացան, որի 50% է միայն պէտքական:  
Խնձոր՝ 300, քաղաքը — 300, ծայրեր 10000

**Քար<sup>9</sup>.**— N° 1 - 2 հատ, 35000 ծայր — կազմակերպական  
N° 2 - 30 » , 27000 » — »

**Քաղաքում** 70 հատ, գիւղերում 500 հատ, 75% դափ[աղ]  
**Ղարաքիլիսա** 40 » առանց փամփուշտի ծայրեր՝ 3000  
**Ախալքալաք** 40 » 300՝ ծայր, խնձոր 50 հատ, ջրով[?] 50 հատ

**Ապառաժ.**— Կազմակերպական —  
N° 1 — 30 հատ — ծայր 1500  
N° 2 — 80 » — » 2000,  
ատրճ. 80 հատ, 2000 ծայր

**Դեղակ.**— 400 կոթ, 10000 ծայր,  
**Չիւանչիք** 191, 3000 ծայր,  
**Վարանդա**՝ 300 կոթ, 5000 ծայր,  
**Չանգեզուր** 150 ծայր,  
**Արախան** 150 կոթ,  
**Հանքեր**՝ 300 [կոթ], 5000 ծայր:

Ոսկանապատ<sup>10</sup>, Գանձակ եւ Մրգաստան<sup>3</sup> ներկայ չէին, ուստի այդ կողմերի զինուորական ոյժը անյայտ է: Ընդամէնը 10000 կոթ, 100000 ծայր:

**Բիւրօ.**— Նախապարձակ լինելը կարող է մեծ կոտորած առաջացնել թուրքիայի եւ Պարսկաստանի փոքրաթիւ հայերի միջեւ: Մեր կուլտուրական կեանքը տասնեակ տարիներով յետ կը մնայ: Մեր նպատակը պիտի լինի հանգցնել կրակը եւ ոչ այս ու այն կողմ կոտորած առաջացնել: Անպատրաստ վայրերում մենք պէտք է ամէն կերպ պահպանենք խաղաղութիւնը ու միաժամանակ պատրաստութիւն տեսնենք ինքնապաշտպա-

նութեան համար: Ճիշտ է Բազունը ջարդեցին, մեր վարկը այնտեղ ընկաւ, բայց կառավարութիւնը այլ բան էր սպասում: Նա չգիտէր, որ թուրքը համիլաւական գաղափարներ ունի: յարձակուելով մենք երեք թշնամու հետ պիտի գործ ունենանք. - Ռուսը, թուրքը եւ մասամբ վրաց ազնուականութիւնը: Անպատակալարմար է բոլոր ոյժերը կեդրոնացնել Բազուն: Մենք պէտք է ոյժերի համաչափութիւն ներմուծենք կազմակերպութեան մէջ: Ես հակառակ եմ Բազուի առաջարկին. դա մեր կողմից անխոհեմութիւն կը լինի:

**Քար.**— Թուրք խաներն ու բէկերը ամէնուրեք ցոյց են տալիս ֆէոդալական տրամադրութիւններ: Թւում է թէ՛ եթէ նոքա համաձայնութեան գային՝ մի ընդհանուր շարժում կը ստեղծուէր: Սակայն եթէ համաձայնութեան չեն գալիս՝ մենք չպէտք է հատուցման (revanche) խնդիր մէջ բերենք, որպէսզի Պարսկաստանի եւ թուրքիայի հայերին չկոտորեն:

**Ապառաժ.**— Բազուն Կովկասի սիրտն է. կապուած է բոլոր վայրերի հետ սերտ կերպով: Այստեղ մեր դրութիւնը եւ մեր պատիւը ցելին է հաւասարուած: Այժմեանից պէտք է ծրագրենք թէ ի՞նչ կերպով ոյժեր կեդրոնացնենք եւ թէ ի՞նչ կերպով ջարդենք թուրքերին:

**Ապառաժ.**— Մենք ոչ մի կարիք չունենք Բազուն ոյժեր կեդրոնացնել: Մարտիկներ միշտ կը գտնուեն այնտեղ. տեղական միջոցներով միայն նրանք այսպէս թէ այնպէս յաղթող հանդիսանան: Ապա թէ ոչ, արդիւնաբերութիւնը կ'անցնի թուրքի ձեռքը եւ Կովկասի հայերը կը զրկուին ահագին հարստութիւնից:

**Եզրակացութիւն.**— Մենք նախապարձակ չենք լինի, բայց եթէ առիթ տան՝ մենք պէտք է անխնայ կոտորենք, վրէժխնդիր լինենք մէկին տասը: Այս է մեր ընդհանուր սկզբունքը. իսկ Բազուն, որտեղ ամէն ըրպէ առիթը պատրաստ է՝ պէտք է մեծ պատրաստութեամբ միանգամ իւր պատիւը վերագտնէ՝ ստակալի ջարդ տալով թուրքերին:

Վճռուեց Ջրաբերից Ապառաժին փամփուշտներ տալ: Քարը նոյնպէս նոր սխտեմի փամփուշտներ պիտի տայ Ապառաժին:

9.- Ալեքսանդրապոլ:  
10.- Պարսի:



Հայ-թրքական ընդհարումներու օրերուն՝ կոմիտէներուն եւ ենթակոմիտէներուն յղուած են այս բնոյթի հարցարաններ տեղեկահաւաքի, ինչպէս նաեւ ժողովուրդի ձեռքը գտնուող զէնք-զինամթերքի ցուցակագրման նպատակով: Ստորեւ տրուածները նմոյշներ են քաղուած Երեւանի նահանգին մէջ կատարուած կազմակերպական աշխատանքներու:

Փաստ. 296-21

Յ Ո Ւ

Ձէնքերի, ռազմամթերքի եւ այլ կարելուք կազմած «.....»

| № №<br>Ըստ կարգի | Գիւղի անունը<br>(Կեղծանուն) | Քանի տուն |           |        |           |        |           |         |           |          |           |                         |    |
|------------------|-----------------------------|-----------|-----------|--------|-----------|--------|-----------|---------|-----------|----------|-----------|-------------------------|----|
|                  |                             | Մութն     | Նրա փամփ. | Մաւզեր | Նրա փամփ. | Բերրան | Նրա փամփ. | Լյճալու | Նրա փամփ. | Դափալու. | Նրա փամփ. | Որսորդական փամփուշտաւոր |    |
| 1.               | Հեղեղատ գիւղ                | 25        | »         | »      | »         | »      | 1         | 20      | »         | »        | 3         | 50                      | »  |
| 2.               | Արմար գիւղ                  | 120       | »         | »      | »         | »      | 8         | 100     | »         | »        | 3         | 52                      | 3  |
| 3.               | Հին քաղաք գ.                | 250       | 1         | 50     | 3         | 200    | 20        | 500     | 2         | 150      | 10        | 200                     | 5  |
| 4.               | Աղջկաբերդ գ.                | 93        | »         | »      | »         | »      | 8         | 325     | »         | »        | 5         | 110                     | 4  |
| 5.               | Քարազուլիս գ.               | 34        | »         | »      | »         | »      | 5         | 97      | »         | »        | »         | »                       | »  |
| 6.               | Թարթառ                      | 120       | »         | »      | 2         | 50     | 16        | 300     | »         | »        | »         | »                       | 5  |
| 7.               | Ագարակ գ.                   | 36        | »         | »      | 3         | 130    | 5         | 100     | »         | »        | »         | »                       | »  |
| 8.               | Մեծ գիւղ                    | 18        | »         | »      | »         | »      | 1         | 6       | »         | »        | »         | »                       | »  |
| 9.               | Խնձոր. գիւղ                 | 36        | »         | »      | »         | »      | 2         | »       | »         | »        | 2         | 15                      | 1  |
| 10.              | Ծաղիկ գիւղ                  | 27        | »         | »      | »         | »      | »         | »       | »         | »        | 1         | 7                       | »  |
|                  | Գումար                      | 760       | 1         | 50     | 8         | 380    | 66        | 1452    | 2         | 150      | 24        | 534                     | 18 |

Դ 5.- ՀԱՐՑԱՐԱՆ ԵՒ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿՆԵՐ

- 1) Ձեր շրջանի թուրք գիւղերի թիւը եւ մօտաւոր ազգաբնակչութիւնը.
- 2) Այդ շրջանի թուրք ազգաբնակչութեան մարտական մօտաւոր ոյժը.
- 3) Ինչպէ՞ս են զինուած թուրքերը համեմատաբար հայերի հետ.
- 4) Ո՞ր թուրք գիւղերից է սպասուում վտանգ.
- 5) Ո՞ր թուրք գիւղերում են կատարուում համախումբումներ.
- 6) Որտեղի՞ց են թուրքերը ստանում զէնք եւ մօտաւորապէս ի՞նչ քանակութեամբ, համեմատելով հայերի հետ.
- 7) Ունին՞ այդ շրջանի թուրքերը յարաբերութիւն Պարսկաստանի եւ Տաճկաստանի հետ, ո՞ր գծերով եւ տարուայ ո՞ր եղանակին.
- 8) Ո՞ր թուրք գիւղերն են գնում եայլադ, ո՞ւր եւ ե՞րբ.
- 9) Ինչպէ՞ս են վերաբերուում ղէպի հայերը եւ թուրքերը տեղական աղմինխորացիան, հետեւակ ու կողակ զօրքերը եւ օտարազգիները առանձին-առանձին.
- 10) Սովորականի հետ համեմատելով՝ որքա՞ն են աշնանացանքս արել ինչպէս հայերը, նոյնպէս եւ թուրքերը.
- 11) Ներկայ շարժումները ինչպէ՞ս են ազդել ինչպէս հայերի, նոյնպէս եւ թուրքերի ոգու վրայ.

Յ Ա Կ

տեղեկութիւնների Մրգաստանի Ա. Դ. II շրջանի .....1905 թ.

| Նրա փամփ. | որսորդական փամփուշտ | Մաւզեր ասործ. | Նրա փամփ. | Վառօր | Արձիւ (գրուածքայով) | Պիստոն | Լցնելու օդոյնք | Զանազան ասործ. | Նրանց փամփ. | Պահեստի զինուոր | Չի | Ծանօթութիւն |
|-----------|---------------------|---------------|-----------|-------|---------------------|--------|----------------|----------------|-------------|-----------------|----|-------------|
| »         | 5                   | »             | »         | »     | »                   | »      | »              | 10             | 100         | 6               | 1  |             |
| 50        | 12                  | »             | »         | »     | »                   | »      | »              | 52             | 520         | 5               | 2  |             |
| 100       | 20                  | 2             | 200       | 3     | 10                  | 100    | »              | 100            | 3000        | 21              | 4  |             |
| 105       | 15                  | 1             | 25        | »     | »                   | »      | »              | 47             | 318         | 17              | 3  |             |
| »         | 4                   | »             | »         | »     | »                   | »      | »              | 14             | 291         | 3               | »  |             |
| 100       | 15                  | 3             | 120       | »     | »                   | »      | 1              | 50             | 500         | 7               | 5  |             |
| »         | 2                   | »             | »         | »     | »                   | »      | »              | 5              | 50          | 4               | 2  |             |
| »         | 2                   | 1             | 50        | »     | »                   | »      | »              | 3              | 20          | 1               | »  |             |
| 12        | 2                   | »             | »         | »     | »                   | »      | »              | 3              | 23          | 2               | 1  |             |
| »         | 3                   | »             | »         | »     | »                   | »      | »              | 3              | 20          | 3               | 1  |             |
| 367       | 80                  | 7             | 395       | 3     | 10                  | 100    | 1              | 287            | 4842        | 69              | 19 |             |

Փաստ. 296-22

Յ Ո Ւ

Ձէնքերի, ռազմամթերքի եւ այլ կարելուր  
Կազմած «.....»

| № ՆՊ<br>Ըստ կարգի | Գիւղի անունը<br>(Կեղծանուն) | Քանի տուն |           |         |           |        |           |         |           |          |           |                            |    |
|-------------------|-----------------------------|-----------|-----------|---------|-----------|--------|-----------|---------|-----------|----------|-----------|----------------------------|----|
|                   |                             | Մուսի     | Նրա փամփ. | Մաուզեր | Նրա փամփ. | Քերդան | Նրա փամփ. | Այնալու | Նրա փամփ. | Դափալու. | Նրա փամփ. | որտրոպական<br>փամփիւշտաւոր |    |
| 1.                | Չէյթուն                     | 35        | »         | »       | 1         | 450    | 3         | 110     | »         | »        | 1         | »                          |    |
| 2.                | Կազրեզ                      | 128       | »         | »       | 1         | 50     | 26        | 780     | »         | »        | »         | »                          |    |
| 3.                | Խաչ-քար                     | 90        | 1         | 10      | »         | »      | 10        | 110     | 1         | 10       | 1         | 20                         |    |
| 4.                | Աարայր                      | 96        | 1         | 50      | 1         | 15     | 15        | 500     | »         | »        | 2         | 15                         |    |
| 5.                | Արմալիք                     | 174       | »         | »       | »         | »      | 31        | 800     | 1         | 50       | 1         | 15                         |    |
| 6.                | Գամիսար                     | 150       | »         | »       | »         | »      | 22        | 238     | »         | »        | 2         | 6                          |    |
| 7.                | Գուրիմի                     | 200       | 1         | 50      | 1         | 5      | 18        | 153     | »         | »        | 10        | 120                        |    |
| 8.                | Անառանց                     | 85        | 2         | 100     | 1         | 110    | 20        | 600     | 1         | 50       | 1         | 15                         |    |
| 9.                | Օվայիս                      | 55        | »         | »       | »         | »      | 25        | 500     | 1         | 30       | »         | »                          |    |
| 10.               | Նաւո [?]                    | 40        | »         | »       | »         | »      | 25        | 600     | »         | »        | 1         | 20                         |    |
| Գումար            |                             | 1053      | 5         | 210     | 5         | 630    | 203       | 4391    | 4         | 140      | 19        | 211                        | 18 |

Փաստ. 296-23

Յ Ո Ւ

Ձէնքերի, ռազմամթերքի եւ այլ կարելուր

| № ՆՊ<br>Ըստ կարգի | Գիւղի անունը<br>(Կեղծանուն) | Քանի տուն |           |         |           |        |           |         |           |          |           |                            |    |
|-------------------|-----------------------------|-----------|-----------|---------|-----------|--------|-----------|---------|-----------|----------|-----------|----------------------------|----|
|                   |                             | Մուսի     | Նրա փամփ. | Մաուզեր | Նրա փամփ. | Քերդան | Նրա փամփ. | Այնալու | Նրա փամփ. | Դափալու. | Նրա փամփ. | որտրոպական<br>փամփիւշտաւոր |    |
| 1.                | Կոռուդաշտ                   | 350       | 2         | 200     | 5         | 400    | 60        | 3000    | 15        | 700      | 10        | 200                        | 8  |
| 2.                | Բանակատեղ                   | 60        | »         | »       | »         | »      | 16        | 400     | 2         | 30       | 8         | 80                         | 6  |
| 3.                | Թոռցիկ                      | 50        | »         | »       | »         | »      | 10        | 300     | »         | »        | »         | »                          | 4  |
| 4.                | Սպա [?]                     | 30        | »         | »       | »         | »      | 3         | 90      | 1         | 70       | 2         | 20                         | 1  |
| 5.                | Միւռնանական                 | 12        | »         | »       | »         | »      | »         | »       | »         | »        | 1         | 25                         | 3  |
| Գումար            |                             | 502       | 2         | 200     | 5         | 400    | 89        | 3790    | 18        | 800      | 21        | 325                        | 21 |

Յ Ա Կ

տեղեկութիւնների Մրգաստանի [անընթեռնելի տեղանուն] շրջանի  
..... 1905 թ.

| Նրա փամփ. | որտրոպական<br>պիստոնով | Մաուզեր ատրճ. | Նրա փամփ. | Վառոյ | Արճիճ<br>(գրուանքայն) | Պիստոն | Լցնելու գործիք | Չանագան ատրճ. | Նրանց փամփ. | Պահեստի<br>գինուր | Չի  | Ծանօթութիւն |
|-----------|------------------------|---------------|-----------|-------|-----------------------|--------|----------------|---------------|-------------|-------------------|-----|-------------|
| »         | 3                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 13            | 100         | 6                 | »   |             |
| 20        | 2                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 50            | 400         | 21                | 35  |             |
| 20        | »                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 10            | 150         | 8                 | 10  |             |
| 20        | »                      | »             | »         | »     | »                     | »      | 1              | 28            | 300         | 15                | 30  |             |
| 20        | »                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 55            | 400         | 35                | 10  |             |
| »         | 3                      | »             | »         | 2     | 3                     | »      | 1              | 40            | 300         | 25                | 7   |             |
| 97        | 6                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 25            | 250         | 28                | 20  |             |
| 20        | 2                      | »             | »         | 3     | 7                     | 1000   | »              | 20            | 200         | 1                 | 15  |             |
| »         | »                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 30            | 300         | 16                | 40  |             |
| 40        | »                      | 2             | 60        | »     | »                     | »      | »              | 25            | 250         | 7                 | 20  |             |
| 237       | 16                     | 2             | 60        | 5     | 10                    | 1000   | 2              | 285           | 2650        | 162               | 183 |             |

Յ Ա Կ

տեղեկութիւնների Մրգաստանի Տրտուն շրջանի

| Նրա փամփ. | որտրոպական<br>պիստոնով | Մաուզեր ատրճ. | Նրա փամփ. | Վառոյ | Արճիճ<br>(գրուանքայն) | Պիստոն | Լցնելու գործիք | Չանագան ատրճ. | Նրանց փամփ. | Պահեստի<br>գինուր | Չի | Ծանօթութիւն |
|-----------|------------------------|---------------|-----------|-------|-----------------------|--------|----------------|---------------|-------------|-------------------|----|-------------|
| 100       | 50                     | 12            | 600       | 40    | 160                   | 30     | 1              | 240           | 6000        | 32                | 10 |             |
| 70        | 20                     | »             | »         | »     | »                     | »      | »              | 25            | 400         | 10                | 2  |             |
| 40        | 5                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 15            | 300         | »                 | 4  |             |
| 10        | »                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 20            | 350         | »                 | 1  |             |
| 30        | 3                      | »             | »         | »     | »                     | »      | »              | 10            | 200         | »                 | »  |             |
| 250       | 78                     | 12            | 600       | 40    | 160                   | 30     | 1              | 310           | 7250        | 42                | 17 |             |

Փաստ. 293-55

### Դ 6.- ԵՐԵՒԱՆԻ Կ. ԿՈՄԻՏԵԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Հայ Յեղ. Դաշնակցութեան Սրգաստանի շրջանի բոլոր կոմիտեներին, ենթակոմիտեներին, գործակալներին, խմբապետներին եւ առհասարակ իրաւասու բոլոր պաշտօնեաներին:

Սրգաստանի Կենտրոնական Կոմիտեն վերջերս՝ իր հետ կապուած շրջաններից ստանում է տեղեկութիւններ, որ մեր մարտական խմբերը զինուած ցոյցեր են անում թուրք ազգաբնակչութեան վրայ, այնուամենայնիւ այժմեան զինուած ցոյցերը մենք գտնում ենք դեռ չկազմակերպուած, բոլորովին անսխտեմ ու միանգամայն վաղաժամ:

Խնդրում ենք բոլոր մարմիններին եւ իրաւասու պաշտօնեաներին անմիջապէս վերջ տալ մարտական շարժումներին, առ այժմ կռուող խմբերը տեղաւորել հայկական վտանգաւոր գիւղերում, հրահանգ տալ միայն ինքնապաշտպանութեան համար եւ ապա շուտափոյթ եւ արագ ձեռնարկել մեր ոյժերի կազմակերպութեան հետեւեալ կերպով.

- 1.- Կատարել կռուող ոյժերի մոբիլիզացիա – այսինքն գէնքի տակ կոչել բոլոր կռուի ընդունակներին, իւրաքանչիւրը իւր շրջանում:
- 2.- Կենտրոնական եւ ապահով գիւղերում թողնելով 6-8 զինավարժ հրացանակիր ժամանակաւոր ինքնապաշտպանութեան համար՝ մնացած շրջանային բոլոր ոյժերը բաժանել խմբակների՝ տեղաւորելով նրանց հայկական այնպիսի գիւղերում, որոնք ենթակայ են անմիջական վտանգի:
- 3.- Տեղում մնացած 6-8 զինակիր խմբակներին անուանել «մնայուն», իսկ միւսներին «թռուցիկ»:
- 4.- «Մնայուն» խմբակները պարտաւոր են միշտ մնալ իրանց տեղերում եւ օգնութեան գնալ հարեւան գիւղերին միայն ծայրայեղ դէպքերում:
- 5.- «Թռուցիկ» խմբակները պարտաւոր են թռչել ամէն կողմ՝ ուր օգնութեան կարիք կայ:
- 6.- Նշանակել ամէն մի խմբակի համար – «մնայուն թռուցիկ» – խմբապետ եւ նրան օգնական, եղած ուժերից ամենահեղինակաւորներին ու հմուտներին, բացի այն խմբերից, որոնք ուղարկուած եւ ուղարկուելու են զինուորական շտաբի կարգադրութեամբ:
- 7.- Իւրաքանչիւր գիւղի բոլոր մուտքերի ամենայնարարաւոր ու բարձր տեղերում հողային դիրքեր շինել:
- 8.- Ստեղծել մշտական հերթապահութիւն եւ տալ նրանց արթուն հսկողութեան խիստ հրահանգներ:
- 9.- Հեռագրի, փոստի եւ յատուկ տուրհանգների միջոցով պահել սերտ կապ եւ արագ յարաբերութիւններ ինչպէս շրջանի բոլոր կէտերի, նոյնպէս եւ զինուորական շտաբի հետ՝ կենտրոնական կոմիտէի միջոցով:
- 10.- Ընդունել եւ ապահով տեղաւորել բոլոր այն խմբերին, որոնք հետզհետեւ կը գան զինուորական շտաբի կողմից:
- 11.- Միշտ տեղեակ լինել, թէ ո՞րտեղ են գտնուում ռուս զօրքերը, որքան են, ինչ տեսակի – ծիւղեր թէ հետեւակ:
- 12.- Միշտ եւ անպայման խուսափել զօրքերից եւ, որ զլխաւորն է, երբեք չընդհարուել, չկռուել նրանց հետ:
- 13.- Այդպէս կազմ եւ պատրաստ սպասողական դիրք բռնել. միայն անհրաժեշտ դէպքում ուժեղ դիմադրութիւն ցոյց տալ մինչեւ Զինուորական Շտաբից կը ստացուի որոշ ծրագիր ու հրահանգ – ակտիւ գործողութեան համար:
- 14.- Զինուորների ընտրութեան մէջ առաւելութիւն տալ աւարտած զինուորներին եւ փորձուած հայդուկներին:
- 15.- Կռուի ժամանակ խնայել մեր զնդակները ապարդիւն ձգելուց, մանաւանդ զիշեր ժամանակ:
- 16.- Ռումբի վարկը չձգելու համար, բնաւ չնետել նրան անտեղի, ապարդիւն:
- 17.- Երբ այս կամ այն թուրք գիւղերը յարձակուին հայ գիւղերի վերայ, հաւաքել շրջանում եղած մեր բոլոր ոյժերը եւ ամբողջ թափով, ամենախիստ եւ անխնայ կերպով պատժել յարձակողներին:
- 18.- Հնարաւորութեան սահմաններում նախիրն ու հօտը արածացնել գիւղերին մօտ, հրացանակիրների հսկողութեան տակ:
- 19.- Եթէ հայերի նախիրները կամ ոչխարները թուրքերը տանելու լինեն, ո՞չ մի քանք չխնայել յետ խլելու: Իսկ եթէ այդ չյաջողուի, փոխարէնը քշել բերել թուրքերից:
- 20.- Անհատական սպանութիւններին պատասխանել կրկնակի սպանութիւններով – մէկի տեղ երկուսը – իսկ եթէ սպանութիւնները պարբերաբար կրկնուեն, յանցաւոր շրջանը ենթարկել ընդհանուր յարձակման:



Հայ Յեղ. Դաշնակցութեան Սրգաստանի Կենտրոնական Կոմիտէի կողմից  
ԱՇՈՒՂ՝

Կովկասեան ժամանակաւոր Զինուորական լիազօր ԴՈՒՄԱՆ

*[Handwritten signature]*

11.- Սահակ Յովնանեան

1905 թիւ, Յունիս 12  
Սրգաստան

Փաստ. 293-23

### Դ 7.- ՆԻԿՈՒ ԴՈՒՄԱՆԻ ՆԱՍԱԿԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ

30/VI 05 Սրգաստան

Սիր(ելի՛ք)՛:

Հիմա ժամանակ ունիմ մի բան գրելու: Հէնց առաջին ռուպէից հրաժարուեցի Նախիջեւանն ու Ազուլիսը ինձ վրայ վերցնելուց – նախ՝ այն պատճառով որ դժբախտ շատ հեռու են եւ ճանապարհների հաղորդակցութիւնը կտրուած եւ երկրորդ՝ որ Ռաշիդն<sup>12</sup> ու Մուրատը<sup>13</sup> ուղարկուած էին արդէն այն կողմերը ու յարաբերութիւնները աւելի դիւրին կը լինէին Զանգեզուրի վրայով: Բայց բանից դուրս եկաւ, որ Ռաշիդը շատ է անփորձ ու անտակտ: Փոխանակ կազմակերպելու եւ գործ անելու՝ դիկտատուրան չմարսած, յանուն դիկտատուրութեան միայն անգործ ցուցամուտութիւններ է անում եւ շարունակ դժգոհութիւններ յարուցանում: Այդ դրութիւնը ապացուցանող տեղեկութիւններ ու նամակներ են հասել ե՛ւ այստեղ: Միւս կողմից էլ՝ Մուրատն է իրան մատնել անյայտութեան: Նրա մինչեւ իսկ ուր լինելու մասին տեղեկութիւններ չունիք ո՛չ դուք, ո՛չ էլ մենք:

Դրութեան այդ վիճակում ստիպուած եմ յարգել Մեծ քաղաքի<sup>10</sup> ու Ոսկանապատի<sup>11</sup> նոյնանման առաջարկը եւ այդ երկու շրջանը գէթ ժամանակաւորապէս վերցնում եմ ինձ վրայ: Ռաշիդին յետ կանչեցի: Հրահանգ տուի, որ Մուրատը իր խմբով միանայ Ռաշիդի խմբի հետ եւ ընդհանուր խմբապետութիւնը վերցնի իր վրայ: Դաշնակցական խաչովն եօթը գինուած հայրուկով ուղարկում եմ նրան օգնական: Այս խմբին երեւի կը միանայ եւ մրգաստանցի կամաւորների մի խմբակ հինգ հոգուց՝ իրանց սեփական զէնքերով: Բացի դրանից, այսօր ուղարկեցի նաեւ մի ինտելիգենտ ոյժ՝ այդ շրջանները կազմակերպելու համաձայն շրջաբերական եւ բերանացի հրահանգների: Կարգադրեցի որ Նախիջեւան քաղաքի կազմակերպական զէնքերը վերցնեն եւ տեղափոխեն գիւղերը: Ես կարմրում եմ մեր զէնքերը Նախիջեւանում թողնելու համար: Կարո՞ղ էք երեւակայել, որ քաղաքը դէպքերի ժամանակ ունեցել է 38 հրացան, հարիւրաւոր ատրճանակներ եւ բաւականաչափ խնձորներ, բոլորն էլ «դիրքերում» անգործադիր: Այստեղ մտքերը եմ առաջարկ, որ Նախիջեւանի կոմիտէն կազմալուծեն եւ ենթարկեն դատի, դէպքի ժամանակ այնտեղ գտնուող հայրուկների հետ միասին, յետոյ հետեւանքը յայտարարեն՝ ի խրատ եւ ի զգուշութիւն այլոց: Առաջարկս առ այժմ զգել են ականջների ետեւը,

բայց ես նոյնը պնդում եմ եւ Ձեր առաջ:

Այժմ Սրգաստանի ընդհանուր պատկերը մարդկային գոհերի թիւը, երեւի, չի անցնի 300-ից, իսկ թուրքերինը անհամեմատ շատ, սպանուած թէ՛ հայերի եւ թէ՛ զօրքերի ձեռքով: Նախիջեւանի 47 գիւղից 20-ը հիմնաւորապէս, 10-ը կիսաւեր: Մնացած շրջաններում հատ ու կտոր թեթեւ նիւթական վնասներ եւ մի քանի անհատական սպանութիւններ: Թուրքերի կողմից մատնուած է հրի ու սրի 18 գիւղ, որոնցից 2-3ը գոհացուցիչ (իմ տեսակէտից), բացի դրանից անհատական սպանութիւններ զանազան շրջաններում: Ընդհանուր դրութիւնը այժմ խաղաղ է, եթէ հաշուի չառնենք շարունակուող անհատական հատ ու կտոր սպանութիւնները երկու կողմից:

Հիմա մեր ընդհանուր վիճակը ինքնապաշտպանութեան տեսակէտից:

Սրգաստանն ունի 27 շրջան: Նախիջեւանի եւ Ազուլիսի մասին վերը ներկայացրի աղքատ տեղեկութիւններս: Մնացած բոլոր շրջանները արդէն մոբիլիզացիայի ենթարկուած-արժած են տեղական մարմինների եւ այստեղից յատուկ ուղարկուած 12 շրջիկների միջոցով: Այդ 25 շրջանից երկուսը դեռ խմբեր չեն ուղարկել չունենալու պատճառով, իսկ մնացածը բաւարար, եթէ դաշտային սկսուող աշխատանքի պատճառով չքայքայւին մոբիլիզացիայով կազմակերպուած տեղական ոյժերը:

Այժմ մենք թղթի վրայ ունինք ամբողջ նահանգի մարտական ոյժերի ընդհանուր ու ճիշտ պատկերը ամենափոքրիկ մանրամասնութիւններով, որի համաձայն հետզհետէ ուժեղացնում ենք թոյլ կէտերն ու կողմերը: Անելիքների համար ոչինչ չեմ կարող ասել դրական, որովհետեւ զինուորական դրութիւնը լուրջ մտածմունքի առարկայ է ինձ համար եւ երկիւղ եմ կրում, որ նախարարական լինելով կառավարութիւնը աշխարայ ու ակտիւ յարի թուրքերին:

Այս առթիւ գրեցէք Ձեր կարծիքը  
ԴՈՒՄԱՆ

Կարդալուց յետոյ նամակս ուղարկեցէք Ոսկանապատ եւ սրա մի օրինակը խմբագրատուն:

- 12.- Աւելի ուշ ուսուցիչ կարգուած Պուկարիոյ Հ.Յ.Դ. Զինուորական վարժարանին:
- 13.- Սերաստացի Մուրատը:

Փաստ. 293-51

Գ 8.- ՆԻԿՈԼ ԳՈՒՄԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ ԻՐ ԶԻՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Սրգաստանի շրջանի Դաշնակցութեան զինուորական մարմիններին, խմբապետներին եւ հայրուկներին:

ԶԻՆԱԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐ

Հիւանդութիւնից ստիպուած Չեզանից առժամանակ բաժանուում եմ ակամայ: Բայց նախքան հեռալալ ուզում եմ մի փոքր խօսել Չեզ հետ:

Հայոց ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը Չեզ բերել է հիւժուող ժողովրդի ծոցը: Եւ այդ անբախտ ծոցը լիքն է գրկանքներով: Աւելի քան ութ ամիս ապրում էր գրկանքներով եւ, ըստ երեւոյթին, դեռ պիտի ապրէ... Գոհացէք եղածով, այդ է տնտեսապէս քայքայուող մեր թշուառ հայրենիքի ունեցածը:

Ժողովրդի մէջ պատահող յանցաւոր թերութիւնները մի պատժք բռնութեամբ: Դարերի ստրկութիւնն ու մշտական հալածանքը հայի մէջ դրել են որոշ պակասութիւններ: Հնուց տիրող եւ այժմ շարունակուող դժոխային պայմանների շնորհիւ այդ պակասութիւնները դարձել են ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՒՄՆ-ԴՈՒԹԻՒՆ: Բայց ո՛չ մի հիւանդութիւն ինչպէս Ֆիզիքական, նոյնպէս եւ բարոյական, չի բժշկուում պատիժներով: Գթոտ հսկողութեամբ վերաբերուեցէք այդ հիւանդութիւններին, քարոզեցէ՛ք, յորդորեցէ՛ք, գիտակցութեան բերէ՛ք ժողովուրդը: Մի՛ մոռանաք, ընկերներ, որ Դուք ո՛չ վարձկան զինուորներ էք, ոչ էլ պատուհաս կոզակներ, այլ հայ ժողովրդի հարազատ գաւակները եւ նրա մարդկային իրաւունքների պաշտպանները:

Յայտնի ճշմարտութիւն է, որ պարապութիւնը չարիքներ է ծնում: Խօսում են շատերը, որ ծնեռը կը մնաք պարապ եւ կը ստեղծէք անախորժութիւններ: Ես դրան չեմ հաւատում եւ յոյս ունիմ, որ յուսախաբ չէք անի ինձ: Նախ եւ առաջ՝ ծնեռուայ ընթացքում գործ շատ ունիք անելու: Կազմակերպեցէ՛ք ժողովրդի մարտական հում ուժերը, վարժեցրէ՛ք նրան զէնքի գործածութեան, սիրոյ յորդորներով աւելացնել տուէք ռազմամթերքը, աւարտեցէ՛ք պաշտպանութեան համար հրահանգած անրութիւնները: Երկրորդ՝ Դուք, որ ազատութեան զինուորներ էք եւ մարդավայել կեանքի ԻԴԵԱԸ հիւսել էք տանջուող ժողովրդի ցաւող վերքերից, - դժուարանում են երեւակայել, որ Չեզ թոյլ կը տաք մեր բարձր ԴՐՕՇԸ իջեցնել միմեզ անախորժութիւն: Ամէնքդ փորձով գիտէք անշուշտ, որ յանցաւոր զինուորը կրում է արժանաւոր պատիժ: Բայց մի՛ մոռանաք, ընկերներ, որ հայրուկը ազատութեան գաղափարի մարմնացումն է եւ ամէն անգամ, երբ տեսնում են այդ վեհ մարմնացումը պատժի ենթակայ, ցաւում են խորապէս:

Իմ բացակայութեան ժամանակ զինուորական մասի ղեկավարութիւնը մնում է Կենտրոնական Կոմիտէի վրայ:

Ժամանակաւոր հրաժեշտի ողջոյններով  
ԴՈՒՄԱՆ

7-ն Դեկտ. 1905 թ.  
Սրգաստան

Փաստ. 250-6

Գ 9.- ՍԵՊՈՒՀԻ ՆԱՄԱԿԸ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

1906 Փետր. 6, Մեծ քաղաք

Սիրելի ընկեր ա. Պարոյր, ժընեւ

Գիտեմ անհամբեր սպասում ես մեր նամակներին. նոյնը մենք. Սեպտեմբեր 20-ի նամակը Վրէժում ստացայ, այնուհետեւ չեմ ստացել եւ ես արդէն պատասխան չտուի. պատճառը՝ պոստային գործադուլները: Մօտաւորապէս երկու ամիս է, Ատրպատականից անցել եմ Կովկաս. այնպէս զբաղուած էի, որ մի բոլոր չէի կարողանում մի տեղ հանգիստ նստել, որպէսզի մի փոքրիկ նամակ գրէի եւ հասցէ տայի. գոնէ դու նամակ գրէիր, դուցէ դու ազատ ժամեր ունենայիր: Վերջապէս այսօր ամէն ինչ մի կողմ շարժեցի, գրիչը ձեռս առի մի փոքրիկ նամակ գրելու քո ազնուութեան եւ հասցէս տալ ձեզ: Թուրք-հայկական ընդհարումները այնպիսի մի դրուժեան մէջ մեզ ձգել են, ամէն ինչ մոռացել ենք եւ մենակ այդ հարցերով ենք զբաղում. եթէ այդ էլ մենակ լինէր, դա ոչինչ, կարող էինք մի կերպ տանել. այո, օր[ինակ] վարչապետ ռուս կառավարութիւնը [sic] այնպիսի դիրք բռնել է, չգիտեմք ինչ անենք: Մի կողմից յայտարարում է՝ պէտք է անխտիր կերպով հայ եւ թուրք ազգաբնակչութիւնը զինաթափ անեմ, իսկ գործնականի ժամանակ բոլորովին առանձին դիրք է բռնում. միակ հայերին է զինաթափ անում. ինչ անենք, որին դիմենք կամ որին բողոքենք այս անարդարութեան դէմ: Հայի օրհասը մօտ է. հայը կրիտիկական վիճակի մէջ է գտնուում: Հային ուզում են միանգամայն ոչնչացնել, այն էլ 20երորդ դարի մէջ. նա էլ այս լուսաւորեալ ժամանակներու: անիծուած հիւսիսային վամբիրը ինչպիսի քաղաքականութիւն է բանեցնում, ոչ ոք չի հասկանում:

Մինչեւ այսօր յաղթութիւնը շարունակ մեր կողմն է եղած. ամէն տեղ մարդկային զոհեր աւելի է տուել թուրքը, բայց այսուհետեւ չգիտեմ ինչպէս կը լինի. եթէ այսպէս շարունակուի քաղաքականութիւնը՝ մեզ զինաթափ անեն թուրքերին չանեն, վերջը կը տուժենք. ամէն միջոց ձեռք առնուած է գէնքերի, պաշտպանութեան համար. տեսնանք վերջը ինչ կը լինի. երկրորդ նամակովս մանրամասն կը գրեմ. դու շուտ պատասխանիր. կ'ուզէի երկար գրել բայց վատա՛ չեմ, որ նամակս քեզ կը հասնի: Կովկասի դրութիւնը շատ վատ է. մանաւանդ Վրաստանում՝ վրացիների վիճակը. համարեա թէ Վրաստանը քարուքանդ եղած է. վախենում ենք նոյն խաղը խաղան մեր գլխին:

Մուրատը, Աւետիսը եւ Առաքել Աղաճանը իրարու մօտ են Ագուլիսում. վերջերս Խոն, (Կորիւնը), Եղիշը,

Բալուն էլ գնացին նրանց մօտ: Մուրատը Աւետիսի հետ պիտի անց կենայ Ջանգեզուրի շրջանը Քեռիի մօտ. (Քեռին), մեր Ֆահրատն է, յատուկէն բարեւում են եւ գրում են ինձ. գրէ Պ. Պարոյրին իւր առողջութեան եւ իւր գործքերի ու վիճակի մասին մեզ տեղեկութիւն հաղորդէ: Նորից գրում են. - գուցէ հոգին սղմէ ուզենայ գալ այս կողմը. չլինի, որ գայ, որովհետեւ ուհակցիան արագ քայլերով առաջ է գնում. անմիջապէս կառավարութիւնը կը հետեւի իւր բոլոր ուժերովը նրան ձերբակալելու, եւ ես էլ նոյն կարծիքին եմ. չլինի անցնես այս կողմը. երբ ժամանակը գայ մենք ինքներս կը դիմենք տեղիս մարմինն եւ կը պահանջենք. մինակ աշխատիր կատարելապէս բժշկուել. մինչեւ ցարդ Երկրից ոչ մի նամակ չենք ստացել. Գէորգ Չաւուշից չգիտեմք դու ստացել ես: Պոնտացի Հայկազը տեղս է. յատուկ բարեւում է ձեզ. ինչ որ նրան խօսացել էիր բոլորը ինձ պատմեց: Այդ տեղաց ընկերներին խօսա, եկածը գարուն է, մի քիչ նպաստ ուղարկէին Երկիր՝ Սասնոյ եւ Մշոյ ժողովուրդին. Տատրակից<sup>14</sup> նամակ կար. Երկրի ժողովուրդի տարտն ու ցաւն էր լայիս, վերին աստիճանի թշուառութեան մէջ է. բացի թշուառութիւնից, արդէն կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները միանգամայն ժողովուրդին յուսահատեցուցեր է եւ եթէ մեր կողմից մի քիչ մեր նիւթական օգնութեամբ չբաջալերենք, Երկիրը մի ժամանակ վերջ ամառի կը տեսնենք. ժողովուրդին ոչ կառավարութիւնը կարող է) Երկրից դատարկել եւ ոչ բռնի ուժը. մենակ սովը, չբաւորութիւնը ամէն բան կ'ընէ. ուրեմն պիտի աշխատինք այդ սովին մի կերպ յաղթել:

Կովկասը արդէն զբաղուած է այնպիսի մի խնդրով. որ լինել չլինելու հարց կայ. ոչ մի բան նրանցից չէինք կարող պահանջել. բացի մեր չպահանջելուց եթէ մենք միջոց ունենանք պէտք չէ խնայենք, որ մի կերպ այստեղ յաղթող հանդիսանանք. թէ որ այստեղ յաղթուինք արդէն մեր ամէն բանը վերջացած համարենք Տաճկաստանում. թէ յաղթեցինք, մեր գործը լուծուած է. ուրեմն այստեղից մեծ դրամներ չեն կարող ուղարկել այնտեղ. մնում է այդ տեղը աշխատէք, այդտեղից մի բան ուղարկել. այսքան.

Բարեւներ  
Սեպուհի

Իմ հասցէն. Երկապէթպոլ. Կնելնի մակագին  
Արշակ Միսկերեանց. յանձնել Սեպուհին

14.- Գեղամ Տէր Կարապետեան, Մշոյ Գեղամ անդամ Տարոն-Սասունի Կեդր. Կոմիտէին:



### Գ 10.- ՌՈՍՏՈՄ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայ-քաղաքական կոիւնքու ընթացքին Ռոստոմ, ինչպէս Ս. Չաւարեան, Խանասարի Վարդան (Մեհրապեան), Յոնան Գալիան եւ մարտական շատ ուրիշ դէմքեր փութացած էին Կովկաս: Ռոստոմ եղած էր նաեւ Ղարաբաղ, ուրիշ հաւանաբար 1905ի Գեկտեմբերին դրկած է, դարձեալ հաւանաբար՝ Արեւմտեան Բիւրոյին ժընեւ, այս հետաքրքրական զեկուցագիրը Ղարաբաղի եւ Չանգեզուրի (Ապառաժ) ներքին կազմակերպութեան մասին:

Գրութիւնը բուական չի կրեր, ոչ ալ ստորագրութիւն, քայց ձեռագիրը վստահաբար իբն է: Հրատարակուած է առաջին անգամ Հ. Տաւնապետեանի խմբագրած «Ռոստոմ - Նամակահի» հատորին մէջ (Պէյրուս 1999, էջ 399-400):

#### ԳԱՒԱՌԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ամէն մի գիւղ ընտրուած է դատական կոչուած մարմին, բաղկացած 3 հոգուց (3 էլ անձնափոխանորդներ): Դատական մարմինը վարում է ոչ միայն գիւղի դատերը, այլ եւ գիւղին վերաբերեալ ընթացիկ վարչական գործերը:

4-8 գիւղից բաղկացած մի շրջանակ ունի մայր դատական մարմին: Նա կազմուած է իւրաքանչիւր գիւղից ընտրուած յատուկ ներկայացուցից: Նա ներկայանում է իբրեւ բարձր դատական ինստանցիա<sup>15</sup> ամբողջ շրջանակի համար: Ամէն մի գիւղացի, որ դժգոհ է իր գիւղի դատական մարմնի վճռից, իր բողոքը ներկայացնում է գիւղի ներկայացուցչին - մայր դատական մարմնի անդամին: Երբ բաւականաչափ գործ է հաւաքուում, ներկայացուցիչները ժողովուում են մի գիւղում եւ կազմում են մայր դատական մարմնի նիստերը, որ տեւում են 1-2 օր: Մայր մարմինը վերջ է տալիս նաեւ շրջանակին վերաբերեալ կնճռոտ վարչական գործերին:

Ամէն մի ներկայացուցիչ ունի իր անձնափոխանորդը:

Բոլոր գիւղերի ներկայացուցիչները իրենց անձնափոխանորդներով միասին ժողով կազմելով ընտրում են շրջանի բարձրագոյն մարմինը, որին տուել են ենթակոմիտէ անունը: Դրա համար ընտրում են 5 անդամ եւ 5 անձնափոխանորդ: Ենթակոմիտէն բարձր ինստանցիա է (դատական եւ վարչական) ամբողջ շրջանի համար:

Ենթակոմիտէն կապ ունի գաւառի կոմիտէի հետ:

Պաշտուած կայ մէկ ենթակոմիտէ, Վարանդալու՝ երեք, Տիզակը ունի կոմիտէ, Չանգեզուրը՝ նոյնպէս: Թիշեալ ենթակոմիտէները եւ կոմիտէները կապուած են Ապառաժի կոմիտէի հետ, որը իրականապէս կատարում է կենտրոնական կոմիտէի դերը: Այս կազմակերպութիւնը չի կարողացել յաջող արմատ ձգել ժողովրդի մէջ շնորհիւ 1) Ինտելիգենտ, գիտակից շրջիկների պակասութեան: 2) Զինուորական դրութեան, որ հետեւանք է հայ-թուրքական ընդհարումներին: Երջիկները, որոնց պարտականութիւնն է կազմակերպել, գումարել ընդհանուր ժողովներ, հսկել գործերի կանոնաւորութեան վրայ, կատարել վերընտրութիւններ եթէ ժողովուրդը դժգոհ է եւայլն, պահել են իրենց լիազօր իրաւունքները եւ մի քանի տեղ ոչընչով չեն զանազանում պրիստաւներին<sup>16</sup>: Այդ տեսակէտից վատ է եղել Վարանդան: Հիմա ձեռնարկուած է հիմնական փոփոխութեան: Խնդիր բարդանում է նրանով, որ «վատ» շրջիկը ընդհանուր առմամբ, ներկայ պարգաներում անհրաժեշտ ուժ է: Մէկը չի կազմակերպում, ամէն ինչ կատարում է բռնի ուժով, բայց վերջ է տալիս գողութիւններին, աւազակութիւններին. շատ է նեղում ժողովրդին, բայց լաւ գինուորական կազմակերպութիւն է մտցնում, կամ լաւ է կուում, եւ այլն...

Միւս խանգարող պատճառը կուրի շրջանն է, ինչպէս սասցի: Կազմակերպութեան ուշադրութիւնը գինուորական կողմի վրայ է եղել դարձրած, եւ այդ տեսակէտից դրութիւնը կարելի է աւելի քան գոհացուցիչ համարել:

Իւրաքանչիւր գիւղ ունի գինուորական խմբեր, կուրի ընդունակ երիտասարդներից կազմուած: Ամէն մի տասնակի հետ կայ պահեստի խումբ, 5 հոգուց բաղկացած: Եթէ տասնակից մէկը սպանուում է, կամ պակասում է որեւէ այլ պատճառով, պահեստի խմբից անմիջապէս մէկը տեղը բռնում է: Կուրի ժամանակ նոյնիսկ, դիրքերում, հրացանակիր գինուորների կողքին լինում են պահեստի ուժեր՝ «խանչալուորներ», որպէսզի հրացանակրի սպանուած դէպքում, անմիջապէս մի ուրիշը հրացանը առնի եւ շարունակի կուրը: Ամէն մի գիւղ ունի գինուորական խորհուրդ ընտրուած գիւղի ընդհանուր ժողովում, 2-5 հոգինոց: Խորհուրդի անդամներին միանում են հաւասար թուով անդամներ դատական մարմնից գինուորական բոլոր գործերը կարգադրելու համար: Զինուորական խորհուրդը (մէջը հաշուած եւ դատական մարմնի անդամներին) պաշտօն ունի 1) Հայթայթիւ ուղղամբը: 2) Կազմել կուրի յատակագիծ: 3) Հսկել խմբապետների վրայ: 4) Վարել գինուորական դատերը: 5) Նախագուշական միջոցներ ձեռք առնել ընդհարումների առաջն առնելու: Խմբապետների ժողովը 1) Որոշում է դիրքերը: 2) Նշանակում է ցերեկապահներ եւ գիշերապահներ: 3) Ընտրում է նշանախօս ամէն մի գիշերուայ համար: 4) Հսկում է գէնքերի մաքրութեան վրայ, ուղղամբութեան քանակութեան վրայ: 5) Վարժեցնում է գինուորներին, շաքաթական երկու անգամ:

Կայ նաեւ սանիտարական խումբ, որի պարտականութիւնն է 1) Հաւաքել վիրաւորներին, կապել վէճերը: 2) Մտունդ եւ ուղղամբութեան հասցնել կուրողներին: 3) Ժողովել նետած փամփուռները:

Ունեն եւ ընդհանուր հրամանատար, օգնականներով: Պաշտի կուրների նկարագրութիւնը կ'ուղարկեմ փոստով:

15.- Ատեան:  
16.- Տեղական ոստիկանութեան պետ:

Փաստ. 404-12

### Գ 11.- ԱՊԱԳԱՅԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Շահեկան զեկուցագիր Վարդանի եւ Սեւ քարեցի Սաքոյի, որոնք հայ-քաղաքական ընդհարումներու տարիներուն կը ղեկավարէին ինքնապաշտպանութեան կոիւնքը, առաջինը Ղարաբաղի իսկ երկրորդը Ղազախի շրջանին մէջ:

«Նիւքեր»ու Բ. հատորին մէջ (էջ 254-255) «Վարդանի եւ Սաքոյի Չեկուցումից Վիեննայի Ընդհ. Ժողովին» խորագրի տակ տրուած է համառօտ գրութիւն մը, որ փաստօրէն մեր ներկայացուցած փաստաթուղթի առաջին երեք էջերու մէկ ամփոփումն է՝ քաղուած Ս. Վրացեանի թղթածրարին մէջ պահուած այդ կարգի թուղթից:

Մինչեւ հայ-թրքական ընդհարումների սկսուելը Դաշնակցութիւնը ոչ մի ուշադրութիւն չէր դարձրել կովկասահայ ազգաբնակչութեան գինման գործի վրայ, որովհետեւ նախ՝ մենք զբաղած ենք եղել բացառապէս թուրքաց Հայաստանի գործով եւ երկրորդ՝ չէինք կարող երեւակայել թէ ուս կառավարութիւնը կարող կը լինէր այդքան յաջողութեամբ հայ-թրքական ընդհարում առաջ բերել:

1905ի Փետր. Բագուրի արիւնահեղութիւնը, եւ Նախիջեւանի կոտորածները Մայիսին, մեզ միանգամայն յանկարծակի բերին. այստեղ միայն Դաշնակցութիւնը ստիպուած եղաւ՝ անցնել ժողովուրդի գինման հրամայողական գործի գլուխը: Իր ձեռքի տակ գտնուած բոլոր փորձուած ուժերը ցրեց զանազան քաղաքներ ու գիւղեր, ժողովուրդը կազմակերպելու եւ գինելու համար:

Բուպէն լուրջ էր ու վստանգաւոր. ուստի անհատեւտ էր՝ օր առաջ ամուր հիմքերի վրայ դնել ինքնապաշտպանութեան գործը - դէպի վերջինը քաշելով նաեւ բոլոր նրանց, որոնք, այսպէս թէ այնպէս, չէին ըմբռնում կամ չէին ուզում ըմբռնել, թէ կացութիւնը կրիտիքական է: Այս դէպքում ի հարկէ բռնութիւններն անխուսափելի էին դառնում: Քանի դեռ սկզբում ժողովուրդի մէջ գիտակցութիւն չկար, այսինքն՝ ժողովուրդը դժուարութեամբ էր հասկանում թրքական յարձակումներ իսկական իմաստը, - մենք ստիպուած էինք լինում զանազան միջոցների դիմելու, որպէսզի գիւղացին, թէկուզ ակամայ, գէնք գնի. ծախել էինք տալիս նրա կովը, տան խալիջաները - գէնքի համար: Հետզհետէ սակայն, ժողովուրդը սկսեց արդէն ինքը մտածել գէնքի մասին, - ետքը տեսաւ որ իսկապէս մի մեծ վտանգի հանդէպ է կանգնած:

Ինքնապաշտպանութեան գաղափարը ժողովուրդի մէջ որոշ չափով արմատացնելով, գինման գործը առաջ ենք տարել հետեւեալ ուղղութեամբ. աշխատել ենք,

1) որ իւրաքանչիւր գիւղացի իր սեփական գէնքն ունենայ (ստիպել ենք ունեւորներին՝ մէկից աւելի գէնք գնելու՝ չեռնկորների (քաջ) տրամադրութեան տակ դնելու համար, իսկ չուսեւորներից՝ մի քանիսին միաց-

րել ենք - մի գէնք ունենալու. բոլորովին չքաւորները կամ ազատ են մնացել գէնք ձեռք բերելու ստիպողականութիւնից, կամ պարտաւորուել են գնել միայն ատուր-ճանակ կամ փամփուռներ ժողովուրդական գէնքերի համար:

2) Որ գիւղացիների մէջ ընդհանուր հանգանակութեան միջոցով գէնք եւ ուղղամբութեան գնուի՝ իբրեւ ամբողջ գիւղի համայնական սեփականութիւն. այդպիսի գէնքերը կոչուում էին «ժողովրդական գէնքեր», որոնք տրուում էին գիւղի մէջ գնուող չուսեւոր քաջ գինուորներին, որպէս ժողովրդական գէնք (որոնց շարքն էին մտնում նաեւ հարուստների գնած աւելորդ գէնքեր):

3) Որ դիւրութիւններ ստեղծուին ժողովուրդի համար՝ հեշտութեամբ գէնք ձեռք բերել կարողանալու կուսակցութեան մարդկանց կամ մաքսանենգների միջոցով: Մաքսանենգները ենթակայ են եղել Դաշնակցութեան՝ հսկողութեան, որպէսզի չհասագործեն ժողովուրդին - վատ տեսակի գէնքեր թանկ թանկ վաճառելով. այսօրինակ չհասագործումներ թէեւ շատ անգամ տեղի են ունեցել՝ կուսակցութեան կոնտրոլից հեռու, բայց կազմակերպութիւնը կարողացել է պատժել յանցաւորներին եւ բաւարարութիւն տալ գիւղացիներին: Այսպիսի միջոցներով, մենք կարողացանք, կարճ ժամանակում բաւական գէնք գնել տալ գիւղացիներին. այս կամ այն գիւղում, ուր առաջ հագիւ 4-5 հրացան միայն կարելի էր գտնել - մեր գործ դրած միջոցներից եւ պրոպագանդայից յետոյ՝ 20-30 հրացան ունեցաւ եւ դեռ էլի նորերը ձեռք բերեց կուրների ընթացքում: Զէնքերի գները առասպելական չափերի հասան, որովհետեւ հայ եւ թուրք, Ռուսաստանի զանազան քաղաքներն ընկած, գէնք գնելու մէջ ահագին մրցումն էին մղում իրար դէմ. բայց եւ այնպէս ոչ ժողովուրդը, ոչ էլ մեր կազմակերպութիւնը՝ կանգ չառաւ ոչ մի արգելքի առաջ: (Կուրների ժամանակ մոսխիւր արժէք մօտ 300 ռ., բերդանը 150 ռ., փամփուռը 20-50 կոպ. հատը):

Այսօր սակայն երբ հայ-թուրքական ընդհարումները դադար են առել, Դաշնակցութիւնը նպատակաւորաբար համարեց ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործը յանձնել իրեն՝ ժողովուրդին:

Սա մեր վաղուցուայ ցանկութիւնն էր, քանի որ ինքնապաշտպանութիւնը ինքնուրուիքեան յեղափոխական ակտ չէ (երեխաներին, կանանց կոտորել), աւելորդ բեռ էր, որ դրուեց մեր մէջքին եւ մենք անկարող եղանք՝ իսկական յեղափոխական գործով զբաղուելու: Չանագան հանգամանքներ էլ եկան աւելի ոյժ տուին մեր վերոյիշեալ ցանկութեանը: Ինքնապաշտպանութեան դադարի հանրամատչելիութեան շնորհիւ, մեր կազմակերպութեան մէջ մտան, իբրեւ զինուորներ, մարդիկ, որոնց արատաւոր գործունէութեան պատճառով՝ Դաշնակցութեան դէմ տեղի եւ անտեղի բողոքներ բարձրացան մամուլի էջերում: — Գործը յանձնեցինք ժողովուրդին, այո՛, բայց միեւնոյն ժամանակ, մենք ի սպառ հեռու չպէտք է մնանք, քանի որ ժողովուրդը դեռ չի կազմակերպուած այն չափով, որպէսզի ընդունակ լինի գործել իր սեփական ոյժերով, առանց որեւէ ղեկավարի: Ղեկավարի կարիքը չէ վերացուել, մանաւանդ քանի դեռ չի կարելի վերջնականապէս անցած համարել ընդհարումների վտանգը: Քանի դեռեւս տիրում է նոյն բռնակալ ռեժիմը: չպէտք է անուշադիր թողնել եւ այն փաստը, որ թուրքերը կազմակերպուած են ուժեղ կերպով, իսկ մենք սկսել ենք կազմալուծուել եւ եթէ նոր կուրսներ տեղի ունենան, մեր ժողովուրդը հագիւ թէ կարողանայ, առանց ղեկավարող մի կազմակերպութեան, յաջողութեամբ դիմադրել թուրքական յարձակումներին:

Զգոյշ լինենք, չհեղինակենք մեր հակառակողների ոյժը: նոքա աւելի զինուորական եւ աւելի տոկոսն են քան մերոնք (ինչպէս կուրսները ցոյց տուին): Հայր լալկան է եւ շուտ յուսահատուող, նոյնիսկ յաջողութեան դէպքերում: Չլինելը Դաշնակցութիւնը ասպարէզի վրայ, ղեկը իրա ձեռքը, թուրքերը հայերին կը ջարդէին:

Մենք ամէն կերպ աշխատելու ենք ընդհարումների առիթ չտալ: ամենաջաղող կուրսները նոյնիսկ մեզ տրուեալ են թուրքին): կուրսերից յետոյ մեր գիւղերը սկսել են դատարկուել աշխատանքի ընդունակ երիտասարդներից, որոնք զանազան քաղաքներն են անցնում ապրուստի միջոց ճարելու համար: Բայց եթէ թուրքերը իրենք սկսեն, մենք պէտք է նախ ինքնապաշտպանողական դիրք բռնենք եւ ապա ծայրայեղ դէպքում յարձակողականի դիմենք: Յարաբերութիւնների լարուած միջոցներին եւ ոչ մի դէպքում չհաւատալ թուրքերի խոստումներին եւ երդմանը, նոքա բոլոր դէպքերում առանց բացառութեան, ամէն տեղ ուխտադրուած են եղած: Լարուած միջոցներին ամէն կերպ աշխատել կառավարութեան հետ բարեկամական կապեր հաստատել եւ թիւրիմացութիւնների առիթ չտալ (գլխաւորապէս աչքի ընկնող պաշտօնեաների հետ — թէ զինուորական թէ քաղաքացի, առանձին ուշադրութիւն դարձնել զինուորների համակրութիւնը ձեռք բերել):

Կրկնում եմ Դաշնակցութիւնը նախքան ասպարէզից

քաշուելը, ինքը իւր ձեռքով դեռ պէտք է հաստատուն հիմքերի վրայ դնի՝ ժողովրդական ինքնապաշտպանութեան գործը: Ներկայումս Դաշնակցութիւնը հետեւեալ անելիքներն ունի:

- 1) Ժողովուրդի գերիշխանութեան սկզբունքը ընդունելով որպէս գործին ղեկավար: — Բոլոր զինուորական մարմինների եւ անհատ պաշտօնեաների ընտրութիւնը թողնել անմիջապէս ժողովուրդին: Ժողովուրդը ինքը պէտք է ընտրի թէ գիւղական փոքր մարմինների անդամներին եւ թէ բարձր պաշտօնեաներին:
- 2) Իւրաքանչիւր գիւղում՝ զինուորական մարմին ընտրել տալ երեք հոգուց բաղկացած: այդ երեքից մէկը լինելու է խմբագետ (ինչպէս առաջներում) միւս երկուսը՝ նորա օգնականները:
- 3) Մի շրջանի (ինչպէս իսպան, Վարանդա) բոլոր գիւղերի ներկայացուցիչ խմբագետները՝ պէտք է ընտրեն իրենց շրջանի համար մի ընդհանուր զինուորական մարմին 5-7 հոգուց բաղկացած: այդ մարմինը վարելու է շրջանակի զինուորական գործերը:
- 4) Քաղաքում կամ գիւղաքաղաքներում ընտրութեամբ հաստատել մի զինուորական մարմին, որը իր մէջն ունենալով եւ շրջանակների — գաւառականների ներկայացուցիչներին, — լինի ամբողջ շրջանի ամենաբարձր ինստանցիան, ղեկավարող կենտրոնը:

Հաստատուելիք մարմինները պարտաւոր են:

- 1) Զէնք գնել տալ բոլոր նրանց, որոնք չեն գնում, թէ եւ միջոց ունեն:
- 2) Թէ մասնաւոր եւ թէ համայնական միջոցներով ձեռք բերել ռազմամթերք՝ փամփուշտ, վառօդ, արձիճ, գիլգեր<sup>17</sup> եւն:
- 3) Ունենալ ամէն գիւղում փամփուշտ լեցնելու գործիքներ:
- 4) Ունենալ զինագործներ՝ իւրաքանչիւր շրջանակում:
- 5) Խիստ կերպով հսկել որ եղած գէնքերը չծախուին, որ վատ գէնքերը փոխարինուին լաւերով: — Կարգադրել որպէսզի մատուցել հրացաններից չգնուեն, քանի որ այդպիսիների փամփուշտները մեծ դժուարութեամբ են ձեռք բերում, իսկ ձեռք բերուածն էլ շատ ուշ: Գնել գլխաւորապէս մոսիններ եւ բերդաններ: Զգոյշ լինել կեղծ մոսիններին վերաբերմամբ, որոնցից շատ են ստացում Պարսկաստանից, — (չինուում են եւ Զանգեզուրի իջ) գիւղում): Զգուշանալ նաեւ մի կարգ հրացաններից որոնց կորուրկան եւ գակուորը թէ եւ մոսին են, բայց քոչը (լիւլան) ոչ: վերջինս այնքան լայն է լինում, որ մոսինի գնդակ հեշտութեամբ ընկնում է մէջը: — Փամփուշտները լեցնելիս, ուշադրութիւն դարձնել որպէսզի գնդակները բարակ չլինեն: իսկ հաստութիւնը որոշելու համար գնդակը հարկաւոր է դնել իսկական

17.- Դատարկ փամփուշտներ, պարկուճներ:

բերդանի խողովակի բերանին (չատ չբանած), եթէ մէջն ընկնի, ուրեմն բարակ է: Պէտք է գիտենալ, որ բարակ գնդակները հեռու տարածութիւն չեն քշում: — Ոսոք չէ կարող լինել ի հարկէ, որ մնացած ռազմամթերքները — վառօդը, գիլգին եւն, պէտք է լաւ տեսակի լինին:

- 6) Ունենալ բոլոր շրջանակներում թնդանօթներ, աւելի կատարելագործուած քան մինչեւ այժմ եղածները: խողովակները պէտք է լինին կամ երկաթեայ կամ պղղնձից ձուլուած, գնդակները պայթուցիկ:
- 7) Ունենալ՝ ռումբ-ձուեաններ[?]: (վառօդով լեցած) — բոլոր շրջանակների համար ունենալ նաեւ վարժութեամբ զինուորական պատանիներից: ռմբաձիգները զինուած պէտք է լինեն մատուցել ատրճանակներով:
- 8) Ունենալ հրթիռներ եւ յատուկ հրթիռաձիգներ (հրթիռներ եւ խարոյկներ գործածել նաեւ՝ իբրեւ ազդանշան վտանգի դէպքերում): Իւղի (դինամիտի) գործածութիւնը աչքաթող չանել:
- 9) Թնդանօթները, ռումբ-ձուեաններ[?] եւ հրթիռները պէտք է պահած լինեն հայ-թրքական սահմաններին մօտ գտնուող ապահով գիւղերում զինուորական մարմին տրամադրութեան տակ:

Համայնական գէնքերն ու ռազմամթերքը պէտք է գտնուին տեղական զինուորական մարմին անմիջական տրամադրութեան տակ:

- 10) Ունենալ հրձիգների առանձին խմբեր ջահելներից կազմուած պէտք եղած բոլոր պարագաներով զինուած:
- 11) Ունենալ իւրաքանչիւր գիւղում առանձնապէս, կամ մի քանի իրար մօտ գիւղերում միասին, փամփուշտ լեցնելու գործարան, աշխատեցնելով հմուտ անձնաւորութեան ղեկավարութեամբ գիւղի 12-15 տարեկան տղաներին ու աղջիկներին:
- 12) Ունենալ մատուցելիստների վարժուած յատուկ խմբեր: այդպիսիները ահագին դեր են խաղում՝ յարձակողական կուրսի ժամանակ: Պարտազանցներին պատժել անպայման (ծանօթութիւն): կարելի է գործադրել եւ մահուան պատիժ, եթէ մեծ յանցանք է գործել, բայց միայն՝ զինուորական մարմին որոշմամբ): Զինավարժութեան գործը յաջող տանելով, սովորեցնելով նոցա այն բոլորը ինչ հարկաւոր է պարտիզանական կուրսների ժամանակ, առանց ձեւականութիւնների մէջ մտնելու, կարճ ժամանակից յետոյ մենք կ'ունենանք բաւականին խոշոր թիւ պատրաստի զինուորների, որոնց կուրսների ժամանակ անհամեմատ հեշտ է ղեկավարել, քան բոլորովին ոչինչ չիմացող գիւղացիներին: Խստիւ արգելել թալանի մատնել թրքական վայրերը: Թալանելն է յաճախ պատճառ եղել մեր կուրսների անյաջող ելքին: Թալանի ենթարկել միայն թշնամու գէնքն ու ռազմամթերքը: — Խստիւ արգելել նաեւ կանանց ու երեխաներին կոտորել: բացառիկ դէպքերում միայն դիպել նորանց — երբ թուրքերն անխնայ կոտորելու լինեն մեր կանանց ու երեխաներին: Երբեք ձեռնամուխ չլինել կանանց պատուին:

ների ժամանակ ահագին ծառայութիւն են մատուցել, սորանց ղեկավարութեամբ հարկաւոր է որ ամէնուրեք սկսել զինավարժական պարապմունքներ:

Իւրաքանչիւր գիւղ իր առանձին տեղը պէտք է ունենայ այդ պարապմունքների համար — մի ընդարձակ սենեակ՝ ուր 15-20 հոգի օրական 3-4 ժամ կարողանան պարապել: Բոլոր 18-40 տարեկանները հարկաւոր են մասնակցել զինավարժական պարապմունքներին: Պարապմունքների գլխաւոր ղեկավար է լինելու շրջանակի զինուորական հսկիչը: Կարեւոր է, որպէսզի այդ հսկիչը բարձր գիտութեան տէր լինի, քանի որ գործը ինքնուրուիքեան առանձին պատրաստութիւն չի պահանջում: նա կարող է լինել՝ պահեստի պարապորչիկ<sup>18</sup>, իսկ իւրաքանչիւր գիւղի համար ունենալ մի ունտեր-օֆիցեր<sup>19</sup>, իֆրեյտոր[?]: Սորանք ամէնքը պէտք է լինեն նըշանակովի, ունենան յատուկ ձեռնարկներ, անհրաժեշտ պարզ գործիքներ, որոնց միջոցով եւ տանելու են պարապմունքները: — Զինավարժական դասընթացները տեւելու են երկու-երեք շաբաթ եւ պէտք է առաջ տարւեն գլխաւորապէս ձմեռուայ ամիսներում, որովհետեւ գիւղացին ձմեռը ազատ է լինում: Միլիցիական գործով զբաղուած գիւղացիների դաշտային եւ այլն աշխատանքները կատարում է ամբողջ համայնքը (համայնական ձեռով են աշխատանքները կատարում երբ դրութիւնը լարուած է կամ արդէն կուրս է սկսուած): Տեղական զինուորական մարմինները պէտք է հսկեն, որպէսզի միլիցիայի բոլոր զինուորները կատարեն իրենց պարտականութիւնները: Պարտազանցներին պատժել անպայման (ծանօթութիւն): կարելի է գործադրել եւ մահուան պատիժ, եթէ մեծ յանցանք է գործել, բայց միայն՝ զինուորական մարմին որոշմամբ): Զինավարժութեան գործը յաջող տանելով, սովորեցնելով նոցա այն բոլորը ինչ հարկաւոր է պարտիզանական կուրսների ժամանակ, առանց ձեւականութիւնների մէջ մտնելու, կարճ ժամանակից յետոյ մենք կ'ունենանք բաւականին խոշոր թիւ պատրաստի զինուորների, որոնց կուրսների ժամանակ անհամեմատ հեշտ է ղեկավարել, քան բոլորովին ոչինչ չիմացող գիւղացիներին: Խստիւ արգելել թալանի մատնել թրքական վայրերը: Թալանելն է յաճախ պատճառ եղել մեր կուրսների անյաջող ելքին: Թալանի ենթարկել միայն թշնամու գէնքն ու ռազմամթերքը: — Խստիւ արգելել նաեւ կանանց ու երեխաներին կոտորել: բացառիկ դէպքերում միայն դիպել նորանց — երբ թուրքերն անխնայ կոտորելու լինեն մեր կանանց ու երեխաներին: Երբեք ձեռնամուխ չլինել կանանց պատուին:

18.- Ստորադաս սպայի աստիճանով զինուորական: 19.- Ենթասպայ:

նեն իրար հետ. այդ նպատակով պէտք է ունենալ յատուկ սուբսանդակներ, որոնք անսխալ տեղեակ լինեն իրենց ամբողջ շրջանի թէ մեծ եւ թէ բոլոր՝ զարտուղի ճանապարհներին: Առանձին ուշադրութիւն դարձնել այն գիւղերի վրայ, որոնք իրենց արգաւանդ հողի շնորհիւ, հացի շտեմարան են ներկայացնում ամբողջ գաւառի համար: Կարելոր է ամէն կերպ անվնաս պահել այդպիսի գիւղերը:

Եթէ կուխներ (կամ անբերրութեան պատճառով) պատճառով հնարաւորութիւն չունենան գիւղացիները շատ ցորեն ցանելու, խորհուրդ տալ նորանց՝ որքան կարելի է շատ կորեկ եւ գետնախնձոր արդիւնաբերեն, որպէսզի նրանց առատ բերքովը կարելի լինի ցորենի պակասութեան առաջն առնել: Կենտրոնական գիւղերում հիմնել հացի շտեմարաններ, որոնց կարիքը զգացւել է արդէն վաղուց (1905-ին մենք այդ ուղղութեամբ փորձեր ենք արել եւ մասամբ յաջողութիւն գտել): Երբ ընդհարումները լայն կերպարանք են ստանում, հայկական վայրերը պէտք է միանգամայն մաքրել թուրքերից, որպէսզի հաղորդակցութիւնը չվտանգենք: Միաժամանակ պէտք է աշխատել՝ դժուարացնել թուրքերի միջեւ հաղորդակցութիւնը:

**Մանօթութիւն.**— Որպէսզի հայկական գաւառները ընդմիջ տ սերտ միանան իրար հետ, հարկաւոր է հողերի փոխանակութեան խնդիր յարուցանել: Թրքական արտագաղթը (հայկական գաւառներից) արագացնելու նպատակով կուխների ժամանակ հարկաւոր է հրդեհել, հիմնովին քանդել թուրքերի գիւղերը: Եւ մեր այդպիսի

աւերիչ յարձակումները պէտք է ուղղել գլխաւորապէս ռազմագիտական տեսակէտից առաջնակարգ նշանակութիւն ունեցող կէտերի դէմ, շարունակ խուսափելով փոքրիկ յարձակումներից ու ընդհարումներից, որոնք մեզանց մեծ թուով փամփուշտ են խլում: Ամենամեծ ուշադրութիւն դարձնել որ փամփուշտ շատ ունենան եւ միշտ խնայող լինեն:

Կուխների ժամանակ երբ գիւղերից օգնութեան են գնում կուռի վայրը, զգուշանալ սահմանագլխի գիւղերից մէկն ու մէկը պարապ թողնելուց կուռող ոյժերից:

Ինքնապաշտպանութեան գործը եւ պատասխանատուութիւնը յանձնելով ժողովուրդին (լաւ հիմքերի վրայ դրուած), Դ[աշնակցութիւն]ը ազատոււմ է այդ ծանր բեռից եւ պարապոււմ է զուտ գաղափարական, գիտակից մարտական խմբեր կազմակերպելով, գինելով դոցա կազմակերպութեան տրամադրութեան տակ գտնուած զէնքերով, ծառայեցնելով յեղափոխական նւթատակներին՝ եթէ այդպիսինը առաջ կը գայ եւ ի հարկին ասպարէզ բերել իւր դրօշակի տակ, եթէ ոչ-ցանկալի հայ-թուրքական ընդհարումները վերսկսուեն:

ՎԱՐԴԱՆ  
ՍԱՔՕ

20/IV 07

XXVI

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

Հ.Յ.Գ. Չորրորդ Ընդհանուր Ժողովի քրթածրարին մէջ ամէնէն ծաւալուն է Սուլթան Համիտի մահափորձի քննութեան համար կազմուածը, որ կ'ընդգրկէ փաստօրէն Գ. Ընդհ. Ժողովի կողմէ ընտրուած Յուցական Մարմնի ամբողջ գործունէութիւնը՝ 1904 թուականէն մինչեւ յաջորդ Ընդհ. Ժողովը ներառեալ: Այս վերջինը, այսինքն Չորրորդը՝ իր գումարումին առաջին օրերէն մինչեւ վերջ (1907 թուի Փետրուարէն Մայիս) բազմիցս առիթը ունեցաւ զբաղելու Սուլթան Համիտի ճախողած մահափորձի բոլոր երեսներով, փաստօրէն գայն վերածելով դատական հարցի ընդդէմ Յուցական մարմնի անդամներուն եւ գլխաւորաբար Մաֆոյի (Մարտիրոս Մարգարեան), որ Քրիստափորի եղերական մահէն ետք դարձած էր նոյն մարմնի ղեկավարը: «Նիւթեր»ու Գ. հատորին մէջ մանրամասնօրէն տրուած են ժողովական այդ քննարկումները, իսկ Գ. հատորին մէջ Քրիստափորի ձեռքով գրուած Յուցական Պատասխանատու մարմնի «Փորձական կանոնագիրը» եւ Մաֆոյի կազմած եւ Ընդհ. ժողովին ներկայացուցած տեղեկագիրը (էջ 195-223):

Այս գլուխին տակ կը ներկայացնենք գրեթէ ամբողջութիւնը այն փաստաթուղթերուն, որոնք տրամադրութեան տակ դրուեցան Ընդհ. Ժողովին կողմէ յառաջացուած «քննիչ յանձնաժողովին» (զանց առնուած են շատ երկրորդական, անհատական բնոյթի սակաւաթիւ գրութիւններ): Աշխատած ենք զանոնք դասաւորել հաշուի առնելով թէ՛ տուեալ հարցերու առընչութիւնը եւ թէ անոնց ժամանակագրական կարգը՝ հետեւեալ հանգրուաններով:—

1.— Սուլթանի ահաբեկման մասին Յուցական Պատասխանատու մարմնի որոշումները եւ գործնական գետնի վրայ առնուած նախապատրաստական քայլերը: Այս հանգրուանը կ'աւարտի յանդուգն այս ձեռնարկի գլխաւոր դարբին Քրիստափոր Միքայէլեանի եւ իր ընկերոջ՝ Վոանշապուհ Քենտիբեանի եղերական վախճանով՝ Սոֆիայի մօտ Վիտոլ լեռան լանջերուն ձեռնառումներու փորձարկման ընթացքին (4/17 Մարտ 1905):

2.— Քրիստափորը փոխարինող Մաֆոյի (Մ. Մարգարեան) զեկուցագրերը օմսբերու փորձարկման եւ ուժանակով լեցուած «դժոխային մեքենայի» մասին: Նախաձեռնութիւն մը, որմով ան կը հրաժարէր մահափորձը ձեռնառումներով իրագործելու ծրագրէն եւ կը կեդրոնանար կառքին «դժոխային մեքենային» վրայ, որ ինչպէս ծանօթ է նոյնպէս վրիպեցաւ Սուլթան Համիտը զգետնելու նպատակէն:

3.— Մաֆոյի դէմ բողոքները եւ վրդովում այն իրողութեան համար, որ վերջ յիշուած զեկուցումներուն եւ նամակներուն մէջ, Մաֆօ ծանրակշիռ ու անուանարկիչ վերագրումներ կատարած էր Քրիստափորի հասցէին, ինչ որ պատճառ դարձած էր որ Դաշնակցութեան Խորհուրդը Թիֆլիսի մէջ դատական քննութիւն բանայ այդ հարցին շուրջ: Դատական այդ քննութիւնը թէեւ որոշ երբ մը չյանգեցաւ, բայց ճամբայ հարթեց հարցին սրումին եւ մօտալուտ Ընդհ. Ժողովին առջեւ իր բոլոր մանրամասնութիւններով եւ ծաւալով պարզուելուն:

4.— Թրթածրարին մէջ գոյութիւն ունի անշուշտ Յուցական մարմնի տեղեկագիրը, որ ինչպէս ըսեցաւ հրապարակուած է արդէն «Նիւթեր»ու Գ. հատորին մէջ. կան նաեւ ժողովական քննարկումները՝ տրուած Գ. հատորով: Այդ բոլորի լոյսին տակ Ընդհ. Ժողովը ամբողջ գործի քննութեան համար ընտրեց «Քննիչ յանձնախումբ» մը (Ե. Թոփչեան, Ա. Վոանեան, Խանասորի Վարդան, Արամ Մանուկեան եւ բժ. Յ. Չարեան): Այս բաժնին մէջ կու տանք այդ յանձնախումբի ներկայացուցած տեղեկագիրը, որ կը բաղկանայ երեք մասերէ՝ 1- տեխնիկական, 2- կազմակերպական, 3- ընկերական յարաբերութիւններու:

5.- Վերջին մասը յատկացուած է Սաֆոյի ինքնապաշտպանութեան, որ տարբեր չափի թերթերու վրայ գրուած իր ձեռագրով կը գրաւէ շուրջ 200 էջ:

Գլուխի վերջաւորութեան կու տանք Ընդի. Ժողովի կողմէ տրուած Հ. Յ. Դաշնակցութենէն Սաֆոյի արտաքսման վճիռը, հիմնուած ոչ այնքան ձեռնարկի տեսնիկական այլ մանաւանդ Յուցական մարմնի գործունէութեան «կազմակերպական եւ ընկերա-բարոյական» կրկնակ տեսակետներուն վրայ:

\*  
\*\*

Յուցական մարմնի գործունէութեան վերաբերող յետագայ փաստաթուղթերուն մէջ յաճախ յիշատակուած անուններու եւ ծածկանուններու մասին օգտակար կը գտնենք տալ կարգ մը ծանօթութիւններ, խուսափելու համար ամէն առթիւ էջատակի ծանօթագրութեանց դիմելու հարկադրանքէն:

Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդի. Ժողովին կողմէ (1904) կեանքի կոչուած Յուցական Պատասխանատու մարմինը ունէր հետեւեալ կազմը.- Էլլէն, Թորգոմ, Աշոտ, Սաֆօ եւ Յոնան:

Էլլէնը Քրիստափոր Միքայէլեանն է: Թորգոմը՝ Պոլսոյ հին գործիչներէն Սերեմնեան Արտաշէտը. Աշոտը՝ Սեւ Աշոտ, Աշոտ Բագրատունի, բուն անունով Կարապետ Եղիկեան, անդամակցած Պոլսոյ Պատասխանատու մարմնին, «Կամք»ին եւ «Փոքորիկ»ին: Սաֆոն՝ Մարտիրոս Մարգարեան, ծանօթ նաեւ Կարմրաթշկ ծածկանունով, Քրիստափորէն ետք պիտի ղեկավարէր Յուցական մարմնի գործունէութիւնը. Յոնանը՝ Յովնան Դաւթեանն է, Դաշնակցութեան ամէնէն հին եւ զաղափարապաշտ գործիչներէն: Այս վերջինի հրաժարելէն եւ Աշոտի մեկուսացուելէն ետք, Յուցական մարմինը իր կազմը պիտի ամբողջացնէր իրեն միացնելով Ռուբինան (Արէշեան), Քրիստափորի (Ֆեներճեան) եւ Վոսադ (Վասմշապուհ Քենտիրեան, ծանօթ նաեւ Էրուարդ ծածկանունով):

Յուցական մարմինը գործի կանչեց նաեւ բազմաթիւ օժանդակ ընկերներ, ինչպէս՝ երկու Լեւոնները (Թիֆլիսէն եւ Պաթումէն), Մարթինը (Մուրատեան), Կարոն (Աստրախանցի - Համբարձում Ախանեան), Մանոյ, Ջահիլ (Գրիգոր Մայեան՝ Ռումանիայէն), Արամ (Եգիպտոսէն). Օր. Էմիլ, տիկին Միշէլ (Պաթումէն), որոնք Ռուբինայի հետ կը կազմէին «կանանց խումբը», ապա նաեւ Կոնստանդին (Համբարձումեան - ռուս բուլղոյ). Գրին (Պոլիս), կառապաններ՝ Չարեհ, Մկրտիչ եւ Երուանդ, օր. Թիթեռ (Սոֆիա Արէշեան, Ռուբինայի քոյրը), Պելճիքացի Ժօռիս, կէս յոյն Միլվիօ Բիչչի, որ նոյն ինքն Պոլսոյ Յուցականի անդամներէն Քրիստն է, գերմանուհի Սոֆի Ռիսա եւ այլն:

«Դրախ» (Պուկարիս) ընկերներ էին Վանայ Մարգիս, Անտոն Գօշ եւ Կարապետ Պիոնեան (Պալքանի Կեդր. Կոմիտէի անդամ):

Վերջապէս Սուլթան Համիտի մահափորձի ձեռնարկին զուգընթաց, Իզմիրի պետական (թուրք) եւ եւրոպական հաստատութիւններու դէմ իրագործելի շարք մը դաւադրական ձեռնարկներու համար կազմուած էր Իզմիրի տեղական կոմիտէն, որուն գլխաւոր անդամներն էին Սուրէն, Մարթին (Մուրատեան) եւ Անդրանիկ (Իզմիրի):

Փաստաթուղթերու մէջ յաճախ կը հանդիպինք հետեւեալ ծածկագրութիւններուն.

- Նժոյզ - Սուլթան Համիտ Բ
- Նժոյզի գործողութիւն - Սուլթանի մահափորձ
- Խնչոր - չեռնառումք
- Ոսկեհանք - Իզմիր կամ Իզմիրի Հ.Յ.Դ կազմակերպութիւն
- Լիս, Տաղիկ, Վիշապ - Կ Պոլիս կամ Պոլսոյ Հ.Յ.Դ կազմակերպութիւն:

Ե. Փ.

### Ա 1.- ՅՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(16 Յուլիս 1904)

Յուցականի թղթածրարին մէջ կը գտնուին Մարմնի նիստերու հինգ արձանագրութիւններ: Ամէնէն կարեւորը 1904 Յուլիս 16ին Աթէնք գումարուած առաջին նիստն է, ուր կը տրուի Սուլթան Համիտ Բ-ը ահաբեկելու որոշումը (Նժոյզի գործ): Գրուած է նամակի սովորական չափի (25x20 սմ.) 14.5 էջերու վրայ՝ Սաֆոյի (Մարտիրոս Մարգարեան) ձեռագրով: Անոր կցուած են երկու յաւելումներ. առաջինը Յուցական մարմնի պաշտօնական բողոքի վրայ (3 էջ) Քրիստափորի ձեռագրով, իսկ երկրորդը, դարձեալ Սաֆոյի ձեռագրով («Ինչ վերաբերում է Վիշապին»), մեծադիր չորս էջերու վրայ: Վերջին երկու թիւերու արձանագրութեանց ձեռագիրները կը պատկանին տարբեր անձերու:

Հ. Յ. Դ. III Ընդհ. Ժողովի կողմից ընտրուած Յուցական Պատասխանատու Մարմինն ն/թ Յուլիսի 16ից գումարուեց Աթէնքում որոշելու իւր ձեռնարկների բնոյթը, նրանց ժամանակը եւ նախապատրաստելու բոլոր այն միջոցները - ընկերներ, ռազմամիտերք, թաքստոցներ, պահեստներ, անցազրեր եւ այլն - որոնք անհրաժեշտ կը նկատուին ձեռնարկների իրագործման համար:

Մի շարք ժողովներ, որոնք տեղի ունեցան Աթէնքում, ներկայութեամբ բոլոր անդամների - բացի մէկից - Թորգոմ (Արտաշէս Մէմերճեան) - որը արդէն մտած էր գործի վայրը, Պատ. Մարմնիս բերին հետեւեալ որոշումներին, որոնք այստեղ կը թուենք համառօտակի, ընդհանուր գծերով:

#### ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՈՍԿԵՀԱՆՔՈՒՄ

Դ[աւադրական] ցոյցեր, ուղղուած կառավարական հիմնարկութիւնների եւ բարձրաստիճան պաշտօնական անձերի դէմ, ըստ կարելոյն խնայելով եւրոպացիների նաեւ տեղական ժողովրդի շահերը, յընթացս ներկայ 904 թուին:

#### ՄԱԿԵԴՈՆԱՑՈՑ ՀԵՏ ՄԵՒԱՑԱՄ

Թէեւ որոշուած էր Ընդհ. Ժողովում ձեռնարկել ներկայ տարուայ ընթացքում մի հայդուկային ցոյցի մակեդոնացոց հետ միացած, բայց այդ որոշումը ղրժբախտաբար չպիտի յաջողուի մեզ գլուխ բերել որոշուած ժամանակում, վերջիններիս դրա համար անպատրաստ լինելու պատճառով, ինչպէս այդ երեւաց Սարաֆովի հետ ունեցած մեր տեսակցութիւնից: Ուստի այդ ձեռնարկի հարցը թողնուեց յարմար ժամանակի, երբ մակեդոնացիք այժմեան սպասողական դրութիւնից գործի անցնին:

#### «ՓՈԹՈՐԻԿԸ»<sup>1</sup>

Կազմակերպուած է եւ գործում է կովկասում, նպատակ ունենալով դրամական միջոցներ հայթայթել Դաշնակցութեան, ամբողջ կազմակերպութեան կենսական ձեռնարկների համար, երբ այդպիսիք դրամական կամաւոր տուրքերի սակաւութեան պատճառով կանգ առնելու վիճակին ենթակայ լինին:

Դիմումներ եղած են կովկասեան հարուստներից մի քանիսին, որոնք արդէն բանակցութեան մէջ են [Դրոշակի] խմբագրութեան հետ վճարելու որոշ գեղչով պահանջուած գումարները: Փոթորկային մի քանի հարցեր լուծուեցին այսպէս.

ա) Պ-ի վերաբերութեամբ, որը պահանջուած 60 հազար ռուբլիի փոխարէն առաջարկել է խմբագրութեանը վճարել 10 հազար Ֆր. միայն, որոշուեց, հիմնուելով անցեալ օրինակների վերայ, որոնք թիւրիմացութեամբ տեղի են ունեցել, ռուբլին] Ֆրանքի վերածելով, ստանալ ոչ պակաս 60 հազար Ֆրանքից:

Այդ խմաստով էլ խմբագրութեան հեռագրական հարցին պատասխանուեց՝ minimum վախճուել հազար Ֆր.:

բ) Հաշիւ եւ տեղեկագիր պահանջել Ոսկանապատի Փոթորիկ խմբից կատարուած դիմումներից, գանձուած կամ գանձուելիք դրամների մասին:

գ) Յայտնել, որ այդ գումարները պիտի մնան անձեռնմխելի մինչեւ [Դաշնակցութեան] Խորհրդի առաջիկայ գումարումը:

դ) Այսուհետեւ նոր դիմումներ անելիս նշանակել պահանջի այն minimum-ը, որից այլեւս ոչ մի կերպ զիջումներ կամ գեղչեր չանել, մի բան, որ մեծապէս վտանգել կարող է Փոթորկի վարկը<sup>2</sup>:

1.- Բոնի հանգամակութեան ձեռնարկ:  
2.- Դ. կտրը բնագործ մէջ ջնջուած է մատիտի շեղակի գիծերով եւ լուսանցքին մէջ, դարձեալ մատիտով, գրուած «պահանջեալ գեղչը երբեք չպիտի տաւի ինչ քան ռուբլին» - ֆրանքի վերածելը: Յայտնենք որ այդ օրերուն ռուբլին կարծր 2.5 ֆրանք:



բ) Առաջարկել Ոսկանապատի Փ[ոթորիկ] խմբին, որ եթէ չէ արել դիմում Ղ-ին, դիմում անէ եւ պահանջել 20 Հազար minimum անել:

**ՎԻՇՆԱՊՈՒՎ**

Ինչ վերաբերում է Վիշապին, որը ստորել թուած պատճառներով հանդիսանում է իբրեւ կենտրոնավայր ցուցական գործունէութեան հետեւապէս եւ Պատ. Մարմնի, այնտեղ կատարելիք գործի վերաբերութեամբ, երկար եւ լուրջ խորհրդակցութիւններից վերջը, խորհրդակցութիւններ, որոնք այստեղ յիշուում են միայն համառօտակի,

**Մարմինս**

Ի նկատի առնելով որ Սուլթանն է, որ ծրագրել եւ ի կատար է ածում ամբողջ հայ ազգը իւր պետ. սահմաններում բնաջինջ անելու դժոխային գործը եւ այդ քահնիցս ապացուցուած է պաշտօնական փաստաթղթերով՝ սկսած ԾԶ թուի Սասունի առաջին կոտորածից մինչեւ ներկայ ԾԶԶ թուականի նոյն Սասունի II կոտորածը: Իսկ այդ երկուսի մէջ մի շարք ուրիշ կոտորածներ Վասպուրական, Կարին, Տրապիզոն, Զէյթուն:

Ի նկատի ունենալով, որ այդքան արեան առաջ Եւրոպան լուռ է, իսկ մենք մենակ անկարող ենք մեր ոյժերով միայն ազատագրուել եթէ Եւրոպան չմիջամտէ, մանաւանդ եթէ խանգարէ մեզ (ինչպէս օր. Ռուսաստանը)

Ի նկատի ունենալով որ Եւրոպ[այի] լուռութեան պատճառներից պիտուորեն են՝

ա) Մայր երկրի եւ այնտեղ կատարուող եղբերգութիւնների Եւրոպ[այի] աչքից հեռու ընկած լինելը,

բ) Այնտեղ եւրոպ. անմիջական շահերի բացակայութիւնը եւ

գ) Մեծ պետութիւնների փոխադարձ անվստահութիւնը եւ վախը՝ Հիւանդ մարդու ժառանգութիւնը բաժանելու հարցի շուրջը:

Ի նկատի ունենալով նաեւ հայ ժողովուրդի արդարացի գայրոյթը՝ Սուլթանի ձեռքով, նրա հրամանով — տանեակ հազար անմեղ զոհերի արեան առաջ. գայրոյթ որ տարիների ընթացքում կուտակուելով այժմ դարձել է մի հաւաքական կոչ, հաւաքական իղձ ամբողջ ազգի —

**ՎՐԷՃ**

Վրէժ Կարմիր Սուլթանին,

Վրէժ Մեծ մարդասպանին. —

Որոշուեց — Սուրբ լինի ժողովուրդի կամքը —

Թափուր դարձնել Եւրոպի գահը ինչ գնով դա լինի եւ այդպիսով միանգամից վերացնել եւրոպ. միջամտութեան վերելում թուած երեք արգելափակներն էլ:

Կուրի տեղը այլեւս Բասէնի, Բուլանդի խուլ անկիւնները չեն լինելու, այլ Արքայանիստ քաղաքը Եւրո-

պայի աչքի առաջ:

Եւրոպայի շահերը կենտրոնացած են թէ քաղաքական եւ թէ տնտեսական, հէնց Բոսֆորի, Դարդանեյի մէջ. այդտեղ են դեսպանութիւնները, կոնցեսիաները<sup>3</sup>, այդտեղ են եւ տաճկ. ռեֆիւից գզուած բոլոր անբաւական տարրերը, որոնք այլեւս կ'արտայայտուին, երբ գահը թափուր դառնայ:

Եւ վերջապէս կամայ-ակամայ, պետութիւնները պիտի թողնեն իրանց փոխադարձ անհամաձայնութիւնը. եւ ճակատագրական անհրաժեշտութեան առաջ կանգնած, ստիպուած պիտի լինին այլեւս խօսելու եւ գրադելու Արեւելեան հարցով եւ այն արնաքամ ազգի վիճակով, որը յուսահատական գզացումով առաջ նետեց Արեւելեան հարցը եւ արագացրեց պատմութեան անխիւր իւր գաւազների արեան գնով:

Ահա այն գործը եւ միակ գործը Վիշապում, որ Պատասխանատու Մարմինս որոշեց իրագործել, առանց տատանումի եւ ոչ մի զոհաբերութեան առաջ կանգ չառնելով իւր կողմից: Մանր եւ միանգամայն դժուարին գործը գիտակից հայ ժողովուրդի վիճակին, նրա տուած անթիւ զոհերին:

Գիտակցելով գործի ծանրութեանը, Մարմինս տուեց հետեւեալ որոշումները, որոնք ուղղուած են նպաստելու, նախապատրաստելու եւ ուժեղացնելու Մարմինս կազմը եւ նրա ռազմական միջոցները:

1) Հրաւիրել օժանդակ ընկերներ, խիստ ընտրութեամբ, որոնք պատրաստ լինին ամէն տեսակ զոհաբերութեան ինչպէս եւ ինքը Պատ. Մարմնի անդամները, համաձայն վերջինիս որոշումներին:

2) Մտցնել նախապէս Վիշապ պայթուցիկ նիւթեր որքան հնարաւոր լինի, մեծ քանակութեամբ — մինչեւ 1000 կիլո:

3) Խնձորներ — մինչեւ 100 հատ:

4) Հրացաններ, ատրճանակներ — մարդկանց թուի համեմատ:

5) Էլեքտրական գործիքներ, պարագաներ պ[այթուցիկ] նիւթերի համար:

6) Նախապէս պատրաստել մի քանի ենթադրական ծրագրեր նպատակի իրագործման հնարաւոր մանրամասնութիւնները նախատեսելով իւր մի անդամի տեղեկութիւնների միջոցաւ, որը արդէն այնտեղ է գտնուում

7) Պատրաստել թաքստոց-բնակարաններ բոլոր ընկերների համար:

8) Կազմել (փորձնական) ներքին կանոնադրութիւն՝

3.- Կոնցեսիա կամ աւելի գործածական capitulation-ը, այն պայմանագրութիւնն էր, որով պետութիւնն օտարներու (պետութիւն կամ ընկերութիւն) կը զիջէր իր երկրի բնական եւ արդիւնաբերական հարստութեանց (հող, հանք, նաւահանգիստ, երկաթուղի եւ այլն) շահագործումը: Նման «գիշուներ» յաճախուէր դարձած էին ԺԹ. դարուն Օսմանեան կայսրութեան մէջ եւ պատճառ դարձած անոր տնտեսական քայքայման:

ընկերների — թէ Պատ[ասխանատու] եւ թէ օժանդակ — փոխադարձ յարաբերութեան, իրաւունքի եւ պարտականութեան սահմանների վերաբերութեամբ, որը սակայն տեղն ու տեղը վերաքննուելով, գործի վայրում կը ստանայ ամէնքի համար պարտաւորեցուցիչ բնաւորութիւն:

9) Պատասխ. Մարմինը իւր ամբողջ կազմով (բացի մէկից — Յ. Դաւթեան — որը մնալու է առժամանակ դուրսը — Յունաստան կամ Բուլղարիա ներսի ընկերների յարաբերութիւնը դուրսի հետ դիւրացնելու նպատակով (ապրանք, դրամ, հեռագրեր, նամակներ, ընկերներ — եթէ հարկաւոր լինին կամ բռնուած) պարտաւոր է գտնուել Վիշապում մինչեւ գործի աւարտը:

10) Ոսկեհանքի ցոյցերի համար ուղարկել բաւականաչափ ռազմական միջոցներ եւ մի ընկեր, Պ. Մարմնի կողմից, որը մտնելու է տեղական գործադիր մարմնի կազմի մէջ հաւասար ձայնով եւ մնալու է այնտեղ եւ գործակցելու տեղական ոյժերին, եւ մէկը Պատ. Մարմնի անդամներից — ժամանակաւոր, մինչեւ տեղացիների հետ անելիքների մասին համաձայնութեան գալը:

**Այս կէտերից**

առաջինը կատարուած է արդէն:

Օժանդակ ընկերներ եւ ընկերուհիներ հրաւիրուած են.  
Լեւոն Գիւլումեան Արամ  
Առաքել Քրիստ  
Լեւոն II Տիկ. Միշէլ  
Կարօ օր. էմիլ (Զէյց Մարիա)  
Ջահել — (Գրիգոր Սայեան) եւ օր. Թիթեռ  
Ջարեհ Մարթին

Մանօթ ա. Հրաւիրուած այս ընկերներից առաջինը, Լեւոն Գիւլումեան, հրաժարած է Յուցական Մարմնից երբ դեռ գործի վայրը չմտած եւ ամբողջ երկու ամիս Վառնայում մնալուց վերջը սկսեց ինչ որ առանձնաարտօնութիւններ պահանջել իւր անձի վերաբերութեամբ եւ վախ արտայայտեց Պոլիս ներս մտնելու դժուարութիւնների առաջ:

Մնացած ընկերների մասին կայացաւ հետեւեալ որոշումները. — բոլորը, բացի մէկից — Մարթինից — մասամբ մտած, մասամբ էլ մտնելու — Վիշապի համար են հրաւիրուած եւ այնտեղ էլ մնալու են մինչեւ գործի վերջնական լուծումը, եթէ միայն կարելու համարուի այդ Մարմնի կողմից, եւ հպատակելու Պ. Մարմնի որոշումներին անպայման, ինչպէս եւ մարմնի իւրաքանչիւր անդամը:

Արամի մասին որոշուեց — նա արդէն ներսն է (յոյնի անցազրով) 500 Փր.ով բանալ մի արհեստանոց դերձակի, որպէսզի կարողանայ միեւնոյն ժամանակ պատուարել եւ

Լեւոնին, որ մտնելու է ամէնից առաջ գաղտնի, իւր սեփական անցազրով (ուսուսահայ գաղթականներից) եւ

պարապելու է Արամի արհեստանոցում իբրեւ աշկերտ դերձակ:

Քրիստ ներսն է եւ ապրում է պանսիոնում իբրեւ յոյն կամ իտալացի: Նա շարունակէ մնալ նոյն դրութեան մէջ առայժմ:

Կարոն (աստրախանցի հայ Համբարձում Ախաճանեան) իւր սեփական անցազրով մտնելու է շուտով եւ ապրելով ազատ մի ուրիշ պանսիոնում. երբ քիչ ծանօթանայ տեղին եւ լեզուին, բանալու է մի փոքրիկ ծխախոտի կրպակ. յատկացուած է մինչեւ 1000 Փր.:

Ջահելը — Գրիգոր Սայեան — բուլղարահայտակ — արդէն ներսն է իբրեւ ռումանացի ռումանական անցազրով: Նա նոյնպէս բաց է անելու մի փոքրիկ կրպակ պատրաստի գնուած 100 ոսկուց՝ համաձայն ընկեր Թորգոմի գրած նամակին.

Տիկին Մարիա Սողոմոնովնա Օնչակովա մտնելու է անցազրով իբրեւ ռուս կին եւ պարապելու է, եթէ յարմար լինի, իւր մասնագիտութիւնով (չփող, մասաժիստակա) իսկ եթէ ոչ — իբրեւ զբօսաշրջիկ:

Ջարեհը մտնելու է նոյնպէս վերջը, երբ կանչուի — գաղտնի, ունենալով մօտը ռուսահայտակար անցազր, պարապելու է կառուպանութեամբ: Նրա համար առնել որոշուած է մի փակ կառք եւ երկու լաւ ձիեր, որի համար եւ յատկացուած է մինչեւ ..... հազար Փր. \*:

Մաֆոն մտնելու է իսկոյն, երբ

Օր Թիթեռը (Սոֆիա Արէշեան) գայ վերջինի հետ միասին հրէական անցազրով իբրեւ ամուսիններ եւ ապրելու է իբրեւ զբօսաշրջիկ կամ, եթէ յարմարութիւն ներկայանայ — ներս մտնելուց վերջը բերել տալ դրսից ուրիշ ապրանք եւ պարապել այդ ապրանքի վաճառումով:

Աշտը մտնելու է գաղտնի իւր սեփական ամբիւրջական անցազրով եւ ապրելու է ազատ, իբրեւ տեղացի եւ կամ

Թորգոմի հետ, որը նոյնպէս տեղացի եւ արդէն ներսն է, բանալու են կաթնարան քաղաքի արուարձաններից մէկում: Կաթը վաճառելու են քաղաքում պարապ ընկերների միջոցաւ — իբրեւ դիմակ վերջինների համար, նաեւ իբրեւ դ[իմամիտ] եւ մ[արդ] տեղափոխելու միջոց: Առնուելու է 2-3 կով իւրաքանչիւրը 25-30 ոսկով:

Էլլէն եւ օր. գնալու են մինչեւ ամսիս ծը Ոսկեհանք այնտեղի գործադիր մարմնի հետ համաձայնութեան գալու կատարելիք ցոյցերի բնոյթի եւ ժամանակի վերաբերութեամբ ղեկավարուելով Պ. Մարմնիս հետեւեալ ընդհանուր որոշումներով:

ա) Ցոյցերը պիտի լինին միայն ուղղուած պաշտօնական հիմնարկութիւնների եւ անձերի դէմ, ըստ կարելու ինչպիսով Եւրոպ. շահերը եւ տեղական ժողովուրդը: Ցոյցերի վերջնական ժամանակը որոշում է Պատ.

\* Այդ կառքը պիտի ծառայէ իբրեւ միջոցներից մէկը Նժդեկի խորտակման:

Մարմինը, յարմարեցնելով այն Վիշապի գործերի ընթացքին՝ առաջ կամ յետ ձգելով այն:

Բացի այդ, էլլէնը արտօնուում է Պատ. Մարմնի կողմից Ոսկեհանքի գործադիր մարմնի դրամական հաշիւները կարգաւորել նախահաշուի սահմաններում եւ տեղական ոյժերին գործի հրահրելով. ամէն զոհողութիւններ անել գործը համերաշխութեամբ տանելու համար\*\*, առանց առանձին նշանակութիւն տալու ձայների բաշխմանը կամ անդամների թուին: Սակայն եթէ մէկը կամ մի մասը կամ ամբողջ խումբը շարունակէ չենթարկուել Ընդհ. Ժողովի որոշումներին եւ չհամակերպի Մարմնիս յիշեալ որոշումներին, այդպիսիներին էլլէնը լիազօր է յայտարարելու հեռացումը ցուցական մարմնի Ոսկեհանքի բաժնի գործերից: Իսկ եթէ թիւը այնքան մեծն է, որ մնացած նուիրուած մասը այլեւս անկարող պիտի լինի գործը անմիջապէս շարունակելու, այդ դէպքում վերցուում են նրանցից ըստ կարելոյն կազմակերպութեան տուած դրամական եւ ռազմական միջոցները եւ էլլէնը հեռանում է այնտեղից թողնելով Ոսկեհանքի գործերի վերաբերութեամբ վերջնական որոշում յայտնելը Պատ. Մարմնին: Յամենայն դէպս էլլէնը պիտի մնայ Ոսկեհանքում կարճ ժամանակով, որտեղից եւ վերադառնալու է իւր աղջկայ հետ Վիշապ, ուր մտնելու է հրէական անցազրով ազատ եւ ապրելու է իբրեւ գրօսաշրջիկ:

Առաջիկա մտնելու է յայտնի բելգիական կամ մի այլ (ո՛չ ռուսական) տեղացի հրեայի անցազրով եւ պարա-

պելու է մանր իրեր՝ ակնեղէններ (ոչ իսկական), մատանիներ, ուլունքներ եւ այլն վաճառելով: Գալու է ուշ:

Ուազմամթերք — 2, 3, 4 ռազմամթերք Վիշապում արդէն մտցուած է մինչեւ օրս 204 կիլո միլիմիթ. ունինք ծովափում մտցնելու համար եւս 2 էլեքտր[ական] մեք[ենայ] իւր բոլոր պարագաներով, 803 կիլո միլիմիթ, 50 հատ ռումբ, իսկ Ռ[ուսիա? Վի Մ[եծ] քաղաք]ում 30 կիլո N 1 էլեք. մեքենայ եւ նրա բոլոր պարագաները, 870 Փ. արժ., որը նոյնպէս մտնելու է Վիշապ ցամաքի գծով:

Ունինք այստեղ Վիշապի համար Ուղարկուած է ներս ..... կիլո դ[ինամիտ], հաղորդիչներ, բռնկելիք, պատրոյգներ: Այսօր ուղարկուեց նաևով ժամացոյցներ օրերի ..... հատ > ժամերի ..... հատ բռնկելիք (կապսիւլ) 4 արկղ պատրոյգ արագավառ նրա բռնկեցնելիքից

զ) Մինչեւ իրանց Լիս մտնելը՝ դրսի ընկերները՝ Գրիւր եւ Աշոտը տալիս են իրանց ձայնը ներսի ընկերներին:

\*\*) Տեղացի ընկերների եւ դրսից գնացած երկուսի մէջ ինչ ինչ անհամաձայնութիւններ երեւացել են վերջերս այնպէս, ինչպէս առաջ էլ Հրաչի ժամանակ եղել են:



ՅՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ա 2.- ԻՐ ԶԱՒԵԼՈՒԱԾ ԱԹԵՆՔԻ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Երրորդ Ընդհ. Ժողովը ներկայ 1904 թուականի տաքտիքը որոշելիս՝ ընդունել է ի միջի այլոց այն մեծ նշանակութիւնը, որ ներկայացնում է կռուի տեսակէտից Վիշապը: Վիշապի այդ նշանակութիւնը՝ հիմնուած մի շարք լուրջ հիմքերի վրայ, որ բերուած են Ընդհ. Ժողովի արձանագրութիւններում, պատճառ եղաւ Ընդհ. Ժողովի համար ընտրել այնտեղ գործելու համար առանձին Յուցական Մարմին՝ տալով նրան նշանաւոր դրամական միջոցներ եւ յանձնարարելով կատարել «մի մեծ, փայլուն գործ»:

Յուցական Մարմինս՝ Ժողովի ցրուելու օրից սկսած ջանալով պարզել այն տարբեր ձեռնարկները, որոնք կարող են ներկայ հանգամանքներում իրագործուել Վիշապում, պարտաւոր էր ուրեմն, համաձայն ժողովի ցանկութեան, ընտրել այդ ձեռնարկներից «ամենամեծը», «ամենափայլունը», որ ասել է՝ ամենաուժեղը իր գործելի տպաւորութիւնով եւ հաւանական հետեւանքներով:

Չինուած այս տեսակէտով Մարմինս բոլոր հնարաւոր ձեռնարկներից կանգ առաւ «Նժոյգի գործի» վրայ: Ահա, ամփոփ կերպով, այն շարժառիթները, որոնցից բխում է այդ վճիռը.

1 — Իբրեւ ձեռնարկ դա ամէնուրեք բոլորի կողմից համարուում է անկարելի, եւ «Դաշնակցութիւնը» յաղթահարելով այդ անկարելիութիւնը, համոզուած ենք պիտի զարմացնէ ամբողջ աշխարհը եւ յարգանք ու ակնածութիւն ներշնչելով դէպի հայ տարրը, մեծապէս պիտի նպաստէ տարաբախտ հայկա(կա)ն դատի զարգացման:

2 — Այն ժամանակ, երբ ուրիշ բնաւորութեան ձեռնարկներ տարիներ տպաւորութիւններ են թողնում այլեւայլ շրջաններում, մանաւանդ Եւրոպայում՝ մի տեղ հաւանութիւն գտնելով, իսկ միւսներում դատապարտւելով, Նժոյգի գործը միանգամայն հասկանալի պիտի լինի ոչ միայն բոլոր տուալտող ժողովուրդների համար, այլեւ բոլոր իշխող դասակարգերին, որոնց պակաս ծանօթ չեն «մեծ մարդասպանի» բոլոր աններելի ոճրագործութիւնները:

3 — Վիշապում ներկայումս տիրող ոստիկանական դժուար պայմաններում գուցէ անկարելի լինէր ծրագրել եւ իրագործել մի շարք իրար հետեւող ուրիշ ձեռնարկներ, որոնք ընդունակ լինէին լուրջ տպաւորութիւն գործել դրսի աշխարհների վրայ, իսկ մի կամ երկու ձեռնարկներ անպատճառ պիտի նմանուէին առաջները (90 թուականից ի վեր) եղածներին: Արդ՝ 97 թուականից ի վեր, ամբողջ եօթ տարուայ մեր լուսութիւնից յետոյ, ձեռքի տակ ունենալով նաեւ նշանաւոր դրամական միջոց-

ներ՝ հնի կրկնութեամբ երեւան գալը, մեզ թուում է, անկարող կը լինէր նկատելի ցնցում առաջ բերել եւ գուցէ աննպաստ գաղափար ներշնչէր դրսի աշխարհին «Դաշնակցութեան» ուժերի եւ ընդհանրապէս հայ տարրի մարտական տրամադրութեան մասին:

4 — Այդ դժուար ծրագրի իրագործումը կրթիչ մեծ նշանակութիւն պիտի ունենայ հայ տարրի եւ աճող սերունդի համար՝ ներշնչելով բոլորովին սուրբ փրկարար հաւատ, որ ամենայն դժուարութիւն չբանում է ամենաթոյլերի իսկ առաջ, երբ դրանք ձգտում են իրենց նպատակին անպայման անձուկորութեամբ եւ անդարձ վրձնողականութեամբ:

5 — Դա կը լինէր ամենաարդար պատիժ մի ոճրագործի համար, որ միակ հեղինակն է հայ ժողովրդին տուած բոլոր անհամար, բոլոր մահաբեր հարուածներին՝ սկսած 94 թ. Սասունի եւ ապա ամբողջ Հայաստանի բոլոր տարածութեան վրայ տեղի ունեցած ահեղ կոտորածներից մինչեւ ներկայ թուականի սոսկալի անցքերը:

6 — Դա — այդպիսի մի հատուցում — կը սրբէր հայ ժողովրդի ճակատից այն արատը, որին նա պիտի մնայ արժանի, եթէ չկարողանայ իր միջից արտադրել այնքան ուժ, որ հանդիսանար արտայայտիչը նրա սրտում կուտակուած անսահման զայրոյթի, ատելութեան եւ վրէժի:

7 — Եւրոպական միջամտութեան տեսակէտից, Նժոյգի գործը համեմատաբար նախապատուելի է ուրիշ ձեռնարկներից: Եւ իրաւ, բացի այն բոլոր ընդհանուր հետեւանքներից, որ կարող է ունենալ այդ գործը ոչ պակաս քան որեւէ ուրիշ ձեռնարկ իբր թուրքիայի սրտում, Եւրոպային մօտիկ ու նրա շահերի հետ կապուած մի վայրում, Նժոյգի գործը՝ հարուածելով ուղղակի պետութեան գլխին, անհրաժեշտաբար տակնուվրայ պիտի անէ Նժոյգի ձեռքով ստեղծուած եւ ներկայումս պահպանւող քաղաքական յարաբերութիւնները մի կողմից թուրքերի եւ միւս կողմից՝ եւրոպական իւրաքանչիւր պետութեան միջեւ: Հետեւաբար այն օրը, երբ չի լինի այդ յարաբերութիւնները ղեկավարող ձեռքը, իւրաքանչիւր պետութիւն՝ առանձնապէս շահագրգռուած ապագայ յարաբերութիւններով, անկարող կը լինի այս կամ այն կերպ չխառնուել, անմասնակից մնալ նոր հաստատուելիք կարգերում:

8 — Համոզուած ենք, որ ներկայ Նժոյգի օրով ոչ միայն որեւէ փոփոխութիւն չի կարող տեղի ունենալ երկրի սոսկալի պայմաններում, այլեւ որ այդ պայման-

4.- Նկատի ունի խանասորի արշաւանքը:

ները աւելի եւս պիտի ծանրանան: Այն ինչ՝ Նժույզից յետոյ նոր կառավարութիւնը՝ Հանդիսանալով ներկայացուցիչ արդի դրութեան հակառակ կուսակցութիւն, ինչպէս եղել է միշտ Թուրքիայում, պիտի ընթանայ փոքր ի շատէ ազատամիտ ուղղութեամբ: Երկրի ներկայ ահաւոր պայմաններում, երբ ճնշումը եւ ջնջումը է հայ ժողովուրդը, մի-երկու տարով անգամ փութացնելով նոր կառավարութեան հաստատուելը, գուցէ մեծապէս նպաստած լինենք հայ ժողովրդի ջնջման գործը կասեցնելուն:

**Ա 3.- ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՎԻՇԱՊԻՆ**

Որը ներկայացնում է շատ պատճառներով իբրեւ գըլխաւոր կենտրոն ցուցական գործունէութեան, այնտեղ կատարուելիք վերաբերութեամբ, մարմինս —

Ի նկատի առնելով, որ Հայաստանի խորքերում, բուն երկրի վերայ թափուած եւ դեռ թափուող արեան գետերը անկարող եղան շարժելու Մեծ պետութիւնների անտարբեր ընթացքը՝ երկրի հեռու ընկած աշխարհագրական դիրքի եւ անմիջական չահերի բացակայութեան պատճառով:

Ի նկատի առնելով, որ Եւրոպայի ուժեղ միջամտութիւնն է, որ պիտի փրկէ մեր գործը վերջնական վիժումից, վիժում, որ մի ամբողջ ժողովրդի վերջնական կորուստը պիտի նշանակէ:

Ի նկատի ունենալով նաեւ որ Պոլսն է այն վայրը, ուր կենտրոնացած են Մեծ պետութիւնների ամբողջ ուշադրութիւնը՝ հոն են դեռ պահանջներ ու սրանց պահպանման մարտանաւերը, հոն է եւրոպական առեւտրի բազմերակը՝ բանկերն ու կոնցեսիաները, այնտեղ են վերջապէս ետում այն յոյսերն ու վայրը, թէ նա, որ պիտի ժառանգէ վերջի վերջոյ արքայանիստ այդ քաղաքը, տէր դառնայ Բոսֆորին ու Դարդանեղին եւ Մարմարայի շքեղ ափերին, հոն է վերջապէս այն մայր անիւը, որի պտոյտով շարժում է տաճկական երկրի դժոխային մեքենան... Հոն է նա, կարմիր Սուլթանը Ելտզում բազմած:

Այնտեղ, մայր երկրում, ուր կատարուել են մեր հայդուկային փառաւոր գործերը, հեռու Եւրոպայի անմիջական տեսութիւնից մենակ ենք եւ թոյլ դիմադրակելու Սուլթանի հրամանով մեր դէմ բարձրացող քիւրտ գազաններին, թուրք քաղցածներին:

Տիրող խաւարն այնտեղ մեծ է, որպէսզի յուսայինք նրան փարատել, մեզ հետ միացնել եւ ազատագրութեան ուղիին բերել մեր դէմ բարձրացող տգէտ ցեղերը: Իսկ այնտեղ ընդհակառակը Պոլսում Եւրոպայի աչքի առաջ եւ ապապէս ասած ափի մէջ, կենտրոնացած են անբաւական բոլոր տարրերը. այնտեղ են երիտասարդ թուրքերը եւ բանտումը փակուած Սուլթան Մուրատը իւրայիններով:

Միւս կողմից ի նկատի առնելով որ Հայ երկիրը սպանդանոց դարձնելու բոլոր հրամանները, սկսած ա. Սասունի, Կարինի, Տրապիզոնի, Վասպուրականի կոտորածներից մինչեւ բ. Սասունը, Մուշը եւ դարձեալ Վասպուրականը միշտ ստացուել են Ելտզի գահից. Ջէյթուն եւ Սասուն եւ դարձեալ Սասուն, Մուշ եւ Բուլանջը, Տարսն եւ Վասպուրական եւ դարձեալ Վասպուրական, Ալաշկերտ, Բասէն, ամէն օր, ամէն տեղ այլ քանի՜ տարի, դա՛ր տարիներ հայի գլխին Սուլթանի սուրն է շողացել, հայի կուրծ-

ք - Արդպիսի մի խոշոր գործ, որ համարձակութեան եւ անձնուիրութեան հետ՝ պահանջում է նաեւ տաքտ ու ընդունակութիւններ, կարծում ենք կարող է այնքան ակնածութիւն ներշնչել տիրող տաճկական բիւրուկրատիային եւ ինտելիկենցիային, որ նրանք՝ բացարձակապէս ուժ տեսնելով հայի մէջ, յարգանքով վերաբերին դէպի հայը եւ չչարունակեն ապագայում արհամարհել նրա դրութիւնը երկրում, հաշուի չառնել նրա հասունացած պահանջները:

Սուլթանի գնդակն է մեխուել:  
Եւ ինչ գարմանք, որ ամբողջ հայ ազգը իբրեւ մի մարդ մի իղձ ունի այսօր սրտում, մի աղաղակ բերանին

Վրէժ  
Վրէժ, Կարմիր Սուլթանին...  
Վրէժ... դեռ կանչում են Պետոն ու Վազգէնը, Բարկէնն ու Կարոն, Արաբոն եւ Վարդանը,  
Տիգրանն ու Աշոտը, Դժոխքն ու Թումանը,  
Վաղարշակն ու Վահանը...  
Դեռ ո՞րքան քաջեր, քանի անուներ կարելի էր այստեղ շարքերով շարել...  
Իսկ վկուած կոյսերը...  
Անպատուած մայրերը...  
Որդեկորոյս ծնողները...  
Իսկ տասնեակ հազար անցնող անօջախ,  
հալածուած, աստանդական գաղթականները...  
Իսկ կախարաններն ու բանտերը նոյն Համիտի ձեռքով լցուած դատարկուած եւ նորից լեցուած...  
Իսկ հայ որբերը...  
Սուլթանի գործերի որ մէկը թուել,  
որ մէկն անուանել...  
Եւ այս բոլորն այսօր Վրէժ է կանչում...  
Հայ ժողովուրդի հաւաքական ձայնն է այդ Եւ Պատ. Մարմինս —  
Սուրբ լինի ժողովրդի կամքը —

**ՈՐՈՇԵՑ**

Թափուր դարձնել Ելտզի գահը  
Եւ թող Ելտզայան տեսնի իւր անտարբերութեան պըտուղը: Թող տեսնի, որ մի ամբողջ ժողովրդի կուտակուած գայրոյթը վերջի վերջոյ կը գտնի իսկական յանցատըր եւ գահի վերայ, որքան էլ նա ամուր թաքնուած լինի: Չոհե՞ր են հարկատր:  
Բայց հային Ելտզայան սովորեցրեց զոհեր տալ, նա տուել է եւ շարունակ տալիս է անթիւ անհամար զոհեր:  
Եւ Ելտզայան այս անգամ կը շարժուի:  
Հիանդ մարդու ժառանգութեան խոշոր հարցն է որ նրա առաջ պիտի դրուի իւր ամբողջ մեծութեամբ:  
Արեւելեան հին հարցը ճակատագրական կերպով օրայի հարց է դառնում...  
Երիտասարդ թուրքերը գլուխները բարձրացնում են... Սուլթան Մուրատի բանտի դռները խորտակուում են եւ դուրս է գալիս Սուլթան Ազիզի սպանողը, նրա գահը խլողը...  
Սուլթանի գնդակն է մեխուել:  
Եւ ինչ գարմանք, որ ամբողջ հայ ազգը իբրեւ մի մարդ մի իղձ ունի այսօր սրտում, մի աղաղակ բերանին

**Ա 4.- ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԻՍՏԵՐԷՆ**

Նիստ 8/13 Նոյեմբեր [1904]

Նոյեմբերի 8ին Յուդեական մարմինը գումարուեցաւ եւ որոշեց իլլէնի<sup>5</sup> մեկնումը եւ իր ընելիքներն արտասահմանի մէջ. — խնձորների փորձեր ընել մեր դրսի ընկերների՝ Կարոյի եւ Սարգսի միջոցաւ եւ իր ղեկավարութեամբ, անցագրեր ձեռք բերել եւ ի պահանջել հարկին՝ կառք յանձնարարել Եւրոպայի մէջ: Ասկէ զատ, իլլէն պիտի երթայ Եւրոպա, մասնագէտներու հետ խորհրդակցելու համար:

Այս նիստին մէջ խնդիր եղաւ Օր. Ռուպինայի իլլէնի հետ ճամբորդելը: Դիտուեցաւ որ օրին իլլէնի հետ արտասահմանում երեւնալը մանաւանդ իլլէնի ծանօթ տեղերում՝ Բոլղարիայում, կրնար վնասել գործին, կանանց գործակցութիւնը եւ հետեւաբար մեր հտակտը՝ մատնել: Իլլէն խոստացաւ որ օրը արտասահմանի մէջ իրեն չընկերանայ, այլ ոտք կոխած թէ չէ արտասահման, նէ երթայ Պերլին՝ իր քրոջ քով՝ մինչեւ իլլէնի վերադարձի վայրկեանը:

Ոսկեհանք. — Այս մասին մեր որոշումն դեռ հաղորդուած չըլլալով, որոշուեցաւ անմիջապէս հաղորդել զայն՝ մի քանի բացատրական դիտողութիւններով: Վերջնականապէս որոշուեցաւ նաեւ գործը շարունակելու համար, նախորդ արձանագրութեան համաձայն, ի պահանջել հարկին ջոկել իրենց համար նախասահմանուած գումարը — իրենց հաւաքած 10.000 Փրանքը մէջն ըլլալով — ամբողջութեամբ, եթէ նոյնիսկ կարելի չըլլայ երրորդ ընկեր մը ղրկել իրենց:

Գալով «վարպետին», Յուդեական մարմինը հաստատեց Ոսկեհանքի գործադիր մարմնի իրաւունքը՝ վարպետն առնելու իրենց հետ, իբր օ[ժանդակ] ընկեր, եթէ հարկ տեսնեն:

- 1.- Եթէ չհամաձայնէինք կորցրած պիտի ըլլայինք մինչեւ հիմա եղած նիւթի եւ դրամի գոհողութիւնները:
- 2.- Գործը սկսուած էր եւ կարելի չէր դադարեցնել առանց վտանգի:
- 3.- Նրանց ցոյց տուած բուռն եռանդը գործելու, որուն ապացոյցը տուին մէկ քանի օրուան մէջ 10.000 Փր. հաւաքելով:

Տիկին Մեշէ. — Իլլէնի մեկնման պահուն Տիկին Միշէլ նուազում մը ունեցած էր: Յուդեական մարմինը նկատելով որ այս առաջին անգամը չէ, եւ թէ ասկէ առաջ ալ, երկու անգամներ, — մէկը շոգեհաւուն մէջ եւ միւսը Աթէնքի մէջ — պատահած էր այս, միաձայնութեամբ որոշեց թոյլ չտալ Տիկին Միշէլին մասնակցիլ նոյն գործին, որպէսզի նոյն դէպքին կրկնուիլը (ինչ որ հաւանական է) չվիժեցնէ գործը: (Իլլէն բացակայ ըլլալով 4 ձայն միայն ներկայ էր): Յուդեական մարմինը, 3 ձայնով, յարմար դատեց առ այժմ ոչինչ չհաղորդել Տիկինին, ինչ ինչ պատճառներով:

**Ա 5.- ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԻՍՏԵՐԷՆ**

Նիստ 5 Դեկտ. 1904

Նիստը գումարուեցաւ երեկոյեան ժամը 4ին, մեր բարեկամ Կրինի տունը: Ներկայ էին. Իլլէն<sup>5</sup>, Մաֆօ, Աշոտ, Թորգոմ եւ Շապուհ: Օրակարգն էր. Ոսկեհանքի խնդիրը եւ իլլէնի խնձորներ ճարելու եւ փորձելու համար Պուլկարիա մեկնումը:

Ոսկեհանքի գործադիր առժամեայ կոմիտէն՝ Մարտին<sup>6</sup> ասկէ առաջ գրուած նամակով (տես Նոյեմբերի նամակները), հաղորդած էր իրեն եւ միւս երեք ընկերներուն, Անդրանիկի եւ Սուրէնի միջեւ տեղի ունեցած անհամաձայնութիւնն եւ ատոր իբր հետեւանք՝ կռիւ եւ բաժանումը:

Յուդեական մարմինը, այն ատեն, արժան դատած էր սպասել հակառակ կողմը ներկայացնող Անդրանիկին եւ Սուրէնին տեղեկագրին, համոզումով տալու համար այդ մասին իր որոշումը: Սպասելով սակայն այդ տեղեկագրին, գրուեցաւ Անդրանիկին եւ Սուրէնին որ իրենց մարմինը, ըստ օրինի, կազմալուծուած ըլլալով, պարտաւոր էին Դաշնակցութեան նիւթերը, դրամն ու գոյքը անձեռնմխելի պահել ցնոր տնօրինութիւն: Միեւնոյն ատեն որոշուեցաւ ղրկել Մարտինին եւ Էսկարին, իրենց խնդրանքին վրայ, 400ական Փրանք եւ զանոնք ազատ նկատել Յուդեական մարմինի մասնակցութենէն, նրանց համար յարմար գործ ի նկատի չունենալով:

Մարտինի վերոյիշեալ նամակէն մէկ քանի օր առաջ Ոսկեհանք ղրկուած էր, առ հաշիւ իրենց յատկացուած գումարին, 2000 Փրանք, գոր, հասցէի սխալման մը հետեւանքով, չէին ստացած ընկերները: Յուդեական մարմինը որոշեց ետ բերել տալ այդ դրամը, եւ առ այդ հարկ եղածը կատարուեցաւ:

Թէ այդ 2000 Փրանքը եւ թէ Անդրանիկին եւ Սուրէնին տեղեկագրերը հասած ըլլալով, Յուդեական մարմինն իր ներկայ նիստին մէջ ցաւով հաստատեց կատարուած իրողութիւններու տգեղութիւնը, որոնցմով գործը կը տուժէր: Եւ որովհետեւ խնդիրը բարդ եւ գործն ու ժամանակը ստիպողական էին, Յուդեական մարմինը չէր կրնար քննութիւններով զբաղիլ եւ այսպէս՝ գործը անորոշ ժամանակի մը համար ձգձգել: Հետեւաբար որոշուեցաւ՝ ցաւ յայտնել տեղի ունեցած պախարակելի արարքներուն համար, արարքներ որոնց պատասխանատուութիւնը աւելի կամ նուազ կերպով կը ծանրանար երկու կողմին վրայ ալ, եւ Անդրանիկն ու Սուրէնը

5.- Չեռագրին մէջ միշտ Գեղեմ ձեռով վերածած ենք Էլլէնի, այնպէս ինչպէս Քրիստափոր կը ստորագրուի:  
6.- Մարտին, աւելի ճիշդ Աշոտ Մարթին, Յուդեական օժանդակ իզմիրի գործադիր կոմիտէի անդամներէն (Նափոլի ծածկանուցով). իսկական անուրը՝ Մարթին Մուրատեան:



Ոսկեհանքի գործադիր կոմիտեի անդամ պահելով, անմիջապես ընտրել եւ ճամբայ հանել երրորդ ընկեր մը, որպէսզի մարմինը ստանայ օրինական կազմ եւ գործը չկաղայ եւ շարունակուի ինչ որ սկսուած էր արդէն:

Այս որոշումին վրայ՝ խորհրդակցութիւն կատարւեցաւ Ոսկեհանքի գործադիր մարմինին Յրդ անդամին ընտրութեան մասին: Ընտրելիներ էին Աշոտ ու Թորգոմը Յուցական մարմինէն՝ եւ Սարգիսն ու Լեւոնը, որոնք առ այժմ Պուլկարիա կը գտնուին: Թեր ու ղէմ կարծիքներու փոխանակութենէն ետքը, որոշուեցաւ նախապատուութիւն տալ Աշոտին կամ Թորգոմին ընտրութեան: Բայց այս հարցը լուծելու համար, առաջարկուեցաւ նախ եւ առաջ Վիշապի գործն եւ անոր պէտք եղած մարդիկն որոշել, տեսնելու համար թէ Աշոտ եւ Թորգոմ հոս ոեւէ գործ պիտի չունենային՝ կատարելիք: Յուցական մարմինը միաձայն հաւանութեամբ անցաւ Վիշապի գործին:

Վիշապի գործին մասին շատոնց արդէն տրուած էր որոշումը, այն է նժոյգի հարցը եւ այս հարցին համար ալ կար երկու լուծում: 1.- Խնձորներու գործածութիւն հիւրանոցէն, 2.- Մէկ կամ երկու կառք նիւթ խնձորներու հետ միաժամանակ պայթեցնել:

Հիւրանոցի համար. — Պուլկարիոյ մէջ կատարուած ձեռքարկութիւններու առթիւ, այս գործին համար անմիջապէս ցանկութիւն յայտնողներէն Քրիսի անունն ու հասցէն վտանգուած ըլլալով, գործի օգտակարութեան համար որոշուեցաւ անոր մասնակցութիւնը յապաւել:

Հիւրանոցի գործին մասնակցելու համար որոշուեցան հետեւեալ վեց ընկերները, իրենց յօժարութեամբ: Ասոնցմէ դուրս են կանայք, որոնց գործը պիտի ըլլայ խնձորները իրենց վրայ կրել եւ զանոնք ներս մտցնել:

- 1. Էլլէն, 2. Սաֆօ, 3. Կարօ, 4. Շապուհ, 5. Մանօլ, 6. Աշոտ:

Այս ընկերներէն Կարոն արտասահման գտնուելով մօտ օրէն տեղս հասնելու է, Շապուհ եւ Աշոտ անցադիր չունենալով՝ նոր անցադիրներ ձեռք բերուելու են անոնց համար, գալով Մանօլի անցադրին, այն ալ ապահով չնկատուելով՝ վերջերս Պուլկարիա բռնուած հասցէներու մէջ անորն ալ գտնուելուն համար՝ պիտի աշխատուի անոր ալ ուրիշ անցադիր մը ճարել, եթէ կարելի ըլլայ:

Յաջողութեան պարագային, վերոյիշեալ վեց ընկերներն ալ պիտի մտնեն հիւրանոց, բայց եթէ ընկերներու մէջ կամքէ անկախ պատճառներով (ձեռքարկութիւն կամ մահ) արգիլուողներ գտնուին, պիտի աշխատուի վեց թիւն ամբողջացնել՝ արգիլուողներու տեղ թէ քաղաքումս եւ թէ արտասահման գտնուող կամաւորներ ընդունելով: Իսկ ամէնէն աննպաստ պարագային, հիւրանոց պիտի մտնեն չորս (4) ընկերներ: Չորսը նուազագոյն թիւ համարուելով, եթէ նախատեսակին՝ չորս

թոյլտուութիւն ունենանք, գնալը պարտաւորիչ պիտի ըլլայ, եւ հետեւեալ օրը որոշեալ ժամանակին, որոշեալ տեղը չեկողը՝ փախուստ տուած պիտի համարուի:

Կիններն այս թիւերէն դուրս ըլլալով, չորսը կամ վեցը անոնցմով ամբողջացած պիտի չհամարուի:

Կանանց հարցը. — Նախորդ նիստի մը մէջ յարուցուած էր կանանց մասնակցութիւնը ընդունելու եւ կամ, նկատելով իբր թարմ ուժեր, նրանց խնայելու հարցը: Խնայելու այս հարցը, նոյնիսկ վիրաւորանք մը նկատուեցաւ կանանց կողմէ, որոնք ամենաբուռն ցանկութիւնով կ'ուզէին մասնակցի ըլլալ եւ զաղափար յայտնած էին զանազան առիթներով որ, հակառակ պարագային, իրենք առանձինն պիտի փութային գործի տեղը:

Յուցական մարմինը, կանանց բացակայութեամբ գումարուած իր նիստին մէջ, միաձայնութեամբ ընդունեց անոնց մասնակցութեան կարեւորութիւնն եւ անգնահատելի օգտակարութիւնը, բայց եւ այնպէս, ոեւէ կերպով բարոյական ճնշում մը բանեցուցած չըլլալու համար իրենց որոշումին վրայ, եւ կամ ուրիշ կերպով, թոյլ տալու համար որ, իրենք իրենց բացարձակ կամքովը վճռեն իրենց ճակատագիրը, ընդունեց ծանօթ բանաձեւը որ եւ առաջարկուեցաւ, մինչեւ յաջորդ (ներկայ) նիստը պայմանաժամ տրուելով իրենց խորհելու:

Յուցական մարմինը ներկայ նիստին մէջ տեղեկացաւ կանանց մասնակցելու որոշումին, ինչ որ արդէն անտարակուսելի էր: Հետեւաբար որոշուեցաւ, որ վերոյիշեալ վեց ընկերներուն գործակցին,

- 1. Տիկ. Միշէլ, 2. Օր. Էմիլ, 3. Օր. Ռուպինա:

Կառքի հարց. — Որոշուեցաւ ունենալ մէկ կառք եւ երեք կառապան պարտաւորիչ կերպով: Կառապաններէն մէկը պիտի ծառայէ իբր պահեստի: Կառապան մը եւ ուրիշ ընկեր մը գործին օրը ներկայ եւ պատրաստ պիտի ըլլան իրենց կառքին քով: Եթէ սակայն կարելի ըլլայ, պիտի աշխատուի ունենալ երկու կառք: Կառապաններն են. 1. Ջարեհ, 2. Երուանդ, 3. Մկրտիչ:

Ջարեհ արդէն սովորած է արհեստը Յունաստանի մէջ, Երուանդը սկսած է գործի, իսկ Մկրտիչի համար որոշուեցաւ դիւրութիւններ տալ անմիջապէս գործի սկսելու համար:

Գործին ապահովութեան համար, կառապաններու իւրաքանչիւրին հետ պիտի ըլլան մէկ մէկ ընկեր:

Ասոնցմէ զատ ընդունուեցաւ առաջարկ մը, վերոյիշեալ գլխաւոր կառքերէն զատ երեք երկրորդական կառքեր ունենալու մասին:

Երկրորդական կառքեր. — Ասոր համար հրապարակի պարզ վարձու կառքեր բաւական պիտի ըլլան: Ընկերները պատիկ ծրարներով պիտի մտնեն այս կառքերը, եւ ղէպի գործի տեղը պիտի երթան, ուր հիւրանոցի առաջին պայթումին անմիջապէս կրակ տալով պատրոյգին, իրենք պիտի հեռանան: Այս ձեռնարկին նպատակն է խուճապը մեծցնել եւ ուժ մը տալ գործին: Ասոր

համար որոշուած են.

- 1. Քրիս, 2. Արամ, 3. Լեւոն:

Առաջին երկուքը արդէն հոս ըլլալով, միայն Լեւոնը Ոսկեհանքէն պիտի բերուի, ուր նա կը սպասէ տրամադրելի:

Գործը պիտի կատարուի հետեւեալ կարգով.

- 1.- Հիւրանոցի խնձորների արձակում:
2.- Գլխաւոր կառքերի անմիջական կրակ, հէնց առաջին խնձորի արձակումին,
3.- Երկրորդական կառքերի պարագային կրակ, հէնց առաջին խնձորի արձակումին:

Այս վերջի կարգադրութիւնը վերջնական չէ. ժամանակի ընթացքում կարգը կրնայ բարեփոխուի:

Վիշապի համար հարկաւոր ընկերներն որոշուած ըլլալով, Ոսկեհանքի համապ ընտրելի կը մնան Պուլկարիա գտնուող Սարգիսն ու Լեւոնը:

Մեր ընկեր էլլէնը արդէն մեկնելու ըլլալով ղէպի Պուլկարիա, հոն պիտի խօսի Սարգիսին եւ Լեւոնին, եւ երկուքէն մէկը անմիջապէս պիտի դրկուի Ոսկեհանք:

Մեր Դեկտ. 4ի նիստին մէջ (որուն համար առանձինն արձանագրութիւն չբռնուեցաւ), ցաւով կարդացուեցաւ Յուլիի մէկ նամակը, որով կը յայտնուէր իր, Կարոյին, Լեւոնին եւ ուրիշ մէկ ընկերոջ ձեռքարկութիւնը՝ փորձերի հետեւանքով: Առաջին երեքը Սարգիսի միջամտութեամբ ազատուած էին, բայց Լեւոն ամէն յանցանք իր վրայ առած ըլլալով, կը մնար բանտը եւ արձակմանը համար կը պահանջուէր Փրանք 3000 իբր երաշխաւորութիւն: Բացի այդ, Յուլիի եւ Լեւոնի վրայէն գտնուած էին Վիշապի եւ Ոսկեհանքի բոլոր հասցէները:

Որոշուեցաւ ուրեմն՝ ի նախազգուշութիւն՝ Քրիսի մօտ գտնուած նիւթերն ուրիշ տեղ փոխադրել եւ իմացընել իրեն որ մի ժամանակ ուրիշ բնակարան ընտրէ. բարեկամ Կրիսին քովի նիւթերը փոխադրուեցան Միշէլի հօր բնակարանը: Այս առթիւ հեռագրուեցաւ ժընեւ, գրուեցաւ Ֆրիլիպէ եւ Ոսկեհանք:

Ասկէ զատ վարձուեցան երկու նոր տուփեր, մին գերմանական փոստան Արամի ձեռքով, եւ միւսը Փրանսական փոստան Սաֆոյի ձեռքով:

Ժամանակը անցած ըլլալով, էլլէնի ճամբորդութեան մասին խորհրդակցութիւնը թողուեցաւ յաջորդ նիստին:

ՇԱՊՈՒՀ ԷԼԼԷՆ
ԱՇՈՏ ՍԱՅՕ ԹՈՐԳՈՄ

Ա 6.- ՅՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄՆԷՆ [ՔՐԻՍՏԱՎՈՐ] ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ՝

Այս բաժնով կու տանք 9 նամակներ, բոլորն ալ վերջուած Յուցականի թղթածրարին: Անոնց հիմար կը պատկանին Քրիստափոր Միքայէլեանի՝ չորսը իր ստորագրութեամբ, իսկ մէկը (Ա 6) Յուցական մարմնի անունով բայց իր ձեռագրով: Բոլորն ալ անտիպ են եւ լոյս կը տեսնեն առաջին անգամ: Ըստ երեւոյթին, Յուցականի յատուկ թղթածրարին մէջ առանձնացուած ըլլալու բերումով, անոնք դուրս մնացած են Հ. Տ.ի խմբագրած «Քրիստափոր Միքայէլեանի նամակները» հաւաքածոյէն (Պէյրուս, 1993): Քրիստափորի նամակները ուղղուած են Արեւմտեան Բիւրոյին ժընեւ, ուր նոյն մարմնի անունով կամ անձնապէս թրեմ կը պատասխանէր Ռոստոմ, որ նոյնպէս գիտակ ըլլալով զԷմբերու եւ պայթուցիկներու ետ կապուած խնդիրներուն՝ մօտէն կ'աջակցէր Քրիստափորին: Յուցականի թղթածրարին մէջ պահպանուածը (տես Ա 8) միայն մէկն է այդ բնոյթի նամակներէն, այլապէս թէ Քրիստափորի եւ թէ Ռոստոմի հրատարակուած ժողովածուներուն մէջ կարելի է գտնել բազմաթիւ օրինակներ, որոնց ծանօթացումը յաւելեալ լոյս պիտի սփռէր անպայման Դաշնակցութեան երկու մեծերուն միջեւ գոյութիւն ունեցող մտերիմ հաղորդակցութեան եւ սերտ գործակցութեան վրայ:

Քրիստափորի նամակները գրուած են առհասարակ նամակի փոքր չափի (12.5x20 սմ.) թուղթերու վրայ: Ոմանց մկանը տեղ տեղ գունաթափած է եւ այդ պատճառաւ գրութիւնը դժուար ընթեռնելի է:

1904 թիւ 1/14 Օգոստ. Աթէնք

Արեւմտեան Բիւրոյին, ժընեւ

Միւրելի ընկերներ, Պատասխանում ենք ձեր վերջին գրութիւններին. Ժակ-Լեւոնի մասին մեր հայեացակէտը պարզել ենք իրեն գրած նամակում, որի պատճէնը ուղարկել ենք եւ ձեզ: Սակայն ձեր նամակը պարունակում է աւելի մանրամասնութիւններ, քան կարելի էր հասկանալ նրա հեռագրից, եւ այդ ամէնը նկատի ունենալով՝ մենք որոշեցինք առ այժմ հրատարակել նրա գործակցութիւնից: Եթէ բանը մնալու է Սեպտեմբերի վերջերին, որ կը նշանակէ Հոկտեմբերին, այն ժամանակ էլ մենք կը մտածենք նրա մասին՝ նայած գործերի ընթացքին եւ մեր կարիքին. իսկ ներկայումս նրա պայմանները մենք չենք

7.- Յուցական մարմնի պաշտօնական թուղթի վրայ գրուած նամակ, ուղղուած Արեւմտեան Բիւրոյին Քրիստափորի ձեռագրով: Յուցականի թղթածրարին մէջ պահպանուած այս փաստաթուղթը, որ գրեթէ ամբողջութեամբ գունաթափած է եւ առաջին ակնարկով՝ անթեռնելի, բարեբախտաբար կարելի եղաւ լրիւ վերծանել: Լոյս կը տեսնէ առաջին անգամ:



կարող ընդունել: Հարցը սրանով ուրեմն թող փակուած համարուի:

Հայաստան գնացող իտալացի պրոֆեսորի մասին՝ ի հարկէ, նախօրօք տեղեկութիւնները հաւաքած կը լինէք վստահելիութեան վերաբերմամբ: Չգիտեմք յայտնի է՞ ձեզ, որ նա միաժամանակ միեւնոյն թղթերով, նամակներով եւ իրեն նպաստելու առաջարկներով դիմել էր Փարիզ (P. A. ին)<sup>8</sup> եւ ուրիշ տեղեր:

Պ. ի մասին (ենթադրեմք, որ դա Պրիտոնովն է) այսօր հեռագրում ենք ձեզ մեր կարծիքը, թէ minimum համարել 80000 ֆր.: Ոչ ոքի համար աւելին Ֆրանքից պակաս չէ գիջուել, իսկ եղել են մեր ուզածի հաւասար (Շուշեցի Թաթոսեան) կամ քիչ պակաս տուողներ (Տէր Յակոբեան): Անկարելի է ուրեմն աւելին Ֆրանկի վերածելուց էլ դէնը գնալ եւ չպէտք է գնալ երբեք:

Շնորհակալութիւն տուած տեղեկութիւնների եւ այն բացատրութիւնների մասին, որոնք պարզում են մի-երկու թիւրիմացութիւններ:

Հիմա գանք մեր ասելիքներին:

1) Մեզ շարունակ հարկաւորուելու են զանազան անցազրեր (ոչ հայերի): Էլլէնը այդտեղ եղած ժամանակ՝ ի միջի այլոց խնդրել էր Միքայէլին<sup>9</sup> Բիւրոյի կողմից ուզել անցազրեր ազատ երկրներում գտնուող մեր կոմիտէներից, եւ Ամերիկայից արդէն պատասխանել էին, որ յոյս ունեն հրէական անցազրեր շատ գտնել (գնում են Ռուսաստանից այնտեղ գաղթած հրեաներից): Խնդրում ենք հետեւել այդ հարցին եւ աշխատել այդտեղ ունենալ անցազրերի մի պաշար, որ պէտք է կամ ուղարկել մեր դրսի անդամին (Յոնանին<sup>10</sup>, որին թողնում ենք դուրսը՝ սահմանակից վայրերից ներսի հետ յարաբերութիւններ պահպանելու համար) եւ կամ ուղղակի մեզ՝ հարկաւոր ժամանակը: Լոնտոնի տղայոց կարելի է դիմել: Անցազրերը կարող են լինել հրէական, ռուսական, վրացու, թուրքի (Պարսկաստ.), արաբի, յոյնի, սիւրիացիների, ռումանացիների, բոլորի եւայլըն, որոնք բացի մեզից կը յատկացուեն ուրիշներին:

2) Էլլէնը Ընդհ. Ժողովից դառնալիս՝ Միւնխէնում թողել էր նկարիչ-ուսանող Հագարապետեանի մօտ (որ ուզում էր մի մեծ նկար ստեղծագործել՝ նուիրուած մեր շարժման) հետեւեալ պատկերները ա) 10 խմբանդակար, բ) մեծ պորտրէտներ մատիտով նկարած, գ) 8 հատ կարճնէտ-պորտրէտներ եւ դ) 18 հատ վիզիտ-պորտրէտներ:

Եթէ պարոնը մինչեւ այժմ չէ վերադարձրել այդ բոլորը, հարկաւոր է յիշեալ ցուցակով յետ ուզել, մանաւանդ որ չար լեզուները հաւատացնում են, որ Հագարապետեանը, չնայելով իր բարի ցանկութիւններին, իսկապէս բան չիւողներէցը չէ եւ մեր նիւթերը նրա մօտ մնալով՝ կարող են միայն կորչել:

Հագարապետեանին կարելի է դիմել Վահաբի<sup>11</sup> քրոջ հասցէով:

3) Լեւոն Գիւլումեանը, որ հրաւիրուած էր մեր մարմնուն աջակցելու, իր անտեղի պահանջների եւ դեր խաղալու տենչի պատճառով, մեզ ստիպեց հրաժարուել իր գործակցութիւնից: Թէեւ նրան տուած է ճանապարհածախս Ռուսաստան վերադառնալու, բայց եւ շարունակում է մնալ Բոլղարիա եւ դէս ու դէն գրաւոր դիմումներ է անում՝ նոր գործ խնդրելով: Մեր մէջ պատահածը յայտնում ենք ձեզ ի գիտութիւն՝ առանձին քննուողութիւն այդ պարոնին ցոյց չտալու համար: Արեւելեան Բիւրոյում երկու տարի սրանից առաջ՝ մի առժամանակ իշխելուց յետոյ, ինչպէս իջնում է, դա կորցրել է չուսուցի մեռի<sup>12</sup> եւ կարող է գլխացաւանք պատճառել այն ընկերներին, որոնց շինքին կը փաթաթուի: Դրան էին վերագրում Բագուայ պարապետի վրայ մաղթանքի ժամանակ նետուած ռումբը, բայց այժմ պարզուել է, որ դա վառել է պատրոյգը եւ յետոյ վախեցել եւ հանգրել է, եւ Մրաւն է (Ժամ.<sup>13</sup>), որ այդ տեսնելով՝ խել է ձեռքից ռումբը եւ նորից վառելով՝ նետել է:

4) Ծանօթանալով մի քանի խնդիրների հետ, որոնք կապուած են Լեւոնավայրի շրջանի հետ, ու տեսնելով, ի միջի այլոց Պատ. մարմնի մէջ մտնելու դեռ խօսք չտրուած, բայց կարգադրութիւններից չհրաժարուող ընկերների ընթացքը, պարտք եմ համարում յայտնել ձեզ պաշտօնապէս, որ մենք կիլ[իկոյ] Պատ. մարմինը կազմակերպուած չենք տեսնում եւ առաջարկում ենք՝ ներկայ հանգամանքներում շրջանի վերաբերմամբ՝ իւրաքանչիւր գործում ի նկատի ունենալ Բիւրոյի պատասխանատուութիւնը<sup>14</sup>:

5) Զանազան ալան-թալանների առաջն առնելու, մեր նախահաշիւները պահպանելու, տակն ու վրայ չանելու եւ մարդկանց որեւէ չափով համոզելու համար, որ իրօք Բիւրոյում պէտք է հաշիւներ պահուեն խնդրում ենք Բիւրոյի ոչ մի մարմնի եւ ոչ մի սանտիմ չբաց թողնել այն բոլոր դէպքերում, երբ չէ նախատեսուած՝ Բիւրոյի համար այդ պարտականութիւնը եւ երաշխիք չունէք, որ ձեր տուածը կը վերադարձուի ճշտութեամբ: Իբրեւ օրինակ յիշում ենք այստեղ Ամերիկա եւ խնդրում ենք պահանջել նրանցից անմիջապէս

- 8.- Pro Armenia-ի խմբագրութիւն:
- 9.- Միքայէլը Ռուստոմ Զօրեանի ծածկանուցներն մէկն է:
- 10.- Յոնան Դաւթեան, անդամ Արեւելեան Բիւրոյի եւ Ցուցական մարմնի. վերջինիս մէջ յետոյ փոխարինուած Վոսաձապուի Զեմտիրեանով:
- 11.- Արշակ Վոսաձաճի:
- 12.- Բնագրին մէջ ռուսատառ. չափի զգացում:
- 13.- Մարգար ժամհարեան, որ տարի մը ետք վաղաիսս մահով պիտի զոհուէր Շուշի ինքնապաշտպանութեան կոիւնտրոն ընթացքին:
- 14.- Բնագրին մէջ թիւ չորս պարբերութիւնը, ցնցուած է նկատի ունենալով, երեւի, որ հոն արժարձուած հարցը առնչութիւն չունի Ցուցական գործունէութեան, որուն քննութեան յատկացած է այն թղթածրարը, ուր կը գտնուի այս նամակը:

Բիւրոյի ուղարկել՝ 1) Սարգսին տուած (Ամերիկա մեկնելիս) 300 ֆր., թէ ոչ աւել: 2) Պարգեւին (Ամերիկայի ներկայացուցիչ) Սոֆիա, Ժընեւ տուած փողերը (300-ից աւել է), ինչպէս եւ Վահաբին տուածները: Թէ ոչ՝ դուրս կը գայ այսպէս բան, որ ամէն մարդ որտեղ ուզի եւ որքան ուզի՝ կարող է մնալ, ապրել, ճանապարհել եւայլն, որովհետեւ եթէ մի մարմնու նրան յատկացրածը չբաւէ, կը գտնուեն միշտ ուրիշ մարմիններ, որոնք նրան միշտ բաւարարութիւն կը տան եւ ոչ ոքի հաշուին կամ այնպէս կը գրեն, որ միայն իրենք կ'իմանան:

Մարմնու կողմից «Փոթորիկի» վերաբերմամբ խնդրեցինք «Փոթորիկի» անունով գործող խմբից:

ա) Ուղարկել մեզ մանրամասն տեղեկագիր մինչեւ մեր նամակը ստանալու օրը բոլոր եղած դիմումների, պահանջների քանակը, ծախսի, մուտքի եւ այլ անցած-դարձածների մասին: Այդ տեղեկագիրը պիտի ստանայ մեր դրսի ընկերը (Յոնանը):

բ) Մինչեւ «Դաշնակցութեան» Խորհրդի կայանալը ոչ ոքի, ոչ մի մարմնու եւ ոչ ալ գործի չտալ եւ ոչ մի սանտիմ, որքան եւ խիստ լինի պահանջը: Սա վճռուած է Ընդհ. Ժողովում:

գ) Կատարել խիստ քննութիւն Բաթումում շարունակուող գանձումների վերաբերմամբ. մեզ մօտ եկած (մի քանի օր է) մեր մի ընկերը յայտնեց մեզ, որ այդ քաղաքը շարունակում է գանձումներ իր անունից եւ որ միայն ինքը, այդ մեր ընկերը, հրաւիրուած լինելով իրենց օգնելու, մեկնելուց մի քանի օր առաջ՝ յանձնեց կոմիտէին իր ստացած 22,000 ռուբլին:

Ձերմ բարեկներով ՑՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

P.S. Վաղը կրկին կը գրենք ձեզ:

Ա 7.- ՔՐԻՍՏԱՓՈՐԵՆ ԱՐԵՒՍՏ. ԲԻՒՐՈՅԻՆ

14 Հոկտ. 904, Ֆիլիպպէ

Սիրելի՛ք,

Համբերութիւններս հատաւ խնձորներին սպասելուց եւ վերջի վերջոյ վիճակուեց ինձ յանձն առնել այս վերին աստիճանի անհաճոյ ճանապարհորդութիւնը գործի վայրից դէպի դուրս: Հետեւաբար, անցեալ օրը այստեղ հասնելով՝ չտեսայ նաեւ մինչեւ այժմ փորձերով զբաղուած ընկերներից ոչ մէկին (նրանք աքսորուել են Բուլղարիայից եւ այժմ երեւի Աթէնք են), այնպէս որ ամէն բան ինքս պէտք է կրկնեմ: Ինչ որ է, ի հարկէ կ'անեմ հարկաւորը, իսկ մինչ այս մինչ այն՝ խնդրում եմ շուտով կարելի անել հետեւեալ առաջարկների վերաբերմամբ:

1) Լիւից խնդրել էինք ձեզ Զիլբեռնշտէյն-ի<sup>15</sup> անունով Պահ դրուած անցագիրը այնտեղ յետ ուղարկել. եթէ դեռ չէք ուղարկել, ուղարկեցէք այստեղ Գօշի հասցէին՝ ինձ տալու:

2) Մեզ հարկաւոր են էլի անցագիրներ (2 ռուսական՝ հրեայի, վրացու, լեհացու եւն) եւ 2 Ֆրանսիական. Ֆրանսիականի համար ես դիմում արել եմ մի երկու տեղ. գուցէ դուք էլ կարողանաք մի բան անել Փարիզ, Բրիւսէլ, Անվերս եւն (Ատոմ-Շահէնը այնտեղ է): Ես յիշում եմ, որ մի ժամանակ Հրաչը մեզինք Ֆրանսիական անցագիր ուզեց եւ խմբագրութիւնից դիմելով Փարիզ Զատիկին, 40-50 Ֆրանքով ձեռք բերինք մի լաւ անցագիր: Դրա համար թէ կարիք լինի դէս-դէն մարդ ուղարկել, այդ էլ մեր հաշուին կարող էք անել: Գուցէ կարելի լինի նոյնիսկ Զուիցերիայում գտնել (Ժընեւ, Լօզան — հայերիս համակրող Ֆրանսական շրջաններում). փորձեցէք: Ինչ վերաբերում է ռուսականին՝ պէտք է դիմել տեղի վրացիներին, ծանօթ լեհերի եւ որ գլխաւորն է՝ սեվեռ ամերիկացիի) ռեւոլիուցիոններին<sup>15ա</sup>, որոնք ունեն հրէականներ: Եթէ «Պոչեմու արմեանի բուճտոյուտ» [«Ինչո՞ւ եմ հայերը ըմբոստանում»]<sup>15</sup> բրոշիւրի հեղինակը Լոնտոն է, նա կարող է հեշտութեամբ այնտեղ էլ գտնել: Ի վերջոյ շուտով պէտք է մի բան անել եւ հետեւանքների մասին հեռագրել: Բառարան չունեմ հետս, այստեղիւր տարել է Սարգիսը: Այդ պատճառով գործ ածէք հեռագրում գլխք խօսքը անցագրի տեղ, իսկ Ֆրանսերէն կամ ռուսերէն գիրք ասելով՝ ես կը հասկանամ այս կամ այն անցագիրը: Անցագրերում տարիքի եւ արտաքին նշանների վրայ առանձին ուշադրութիւն չպէտք է դարձնել. մենք կը յարմարեցնենք այստեղ կամ Լիսում: Ռուսական անցագրերից մէկում եթէ լինի մարդու հետ նաեւ կին — դա շատ լաւ կը լինի:

3) Այդտեղ մենք ունենք մի քանի տուփ Ամերիկայից ուղարկուած թանաք հանելու հեղուկ: Այդ տուփերից

15.- Բնագրին մէջ ռուսատառ. 15 ա.- Բնագրին մէջ ռուսատառ. հիւսիս. ամերիկեան ռեւոլիուցիոնները:

երկուսը կամ առնուազը մէկը իսկոյն այստեղ ուղարկէք Գօշի հասցէով՝ իբր échantillon sans valeur<sup>16</sup>, ի հարկէ, լաւ արկղներում:

4) Մեզ մօտ, այդտեղ, գտնուող զանազան անցագրերի մէջ կան մի քանի հատ «համիտիէ-թեսկերեսի»ներ: Երկու կամ երեք հատը ուղարկէք այստեղ՝ ինձ հասցնելու համար:

5) Մի ժամանակ մենք հետաքրքրուում էինք անձայն հրացաններով, արդեօ՞ք այդ մասին նոր տեղեկութիւններ ունի՞ք: Եթէ դրանցից կարելի է ձեռք բերել, մենք կ'ուզենայինք մի երկու հատ ունենալ հովանոցի կամ ձեռնափայտի ձեռով շինուածներից: Գրէ՛ք, խնդրում եմ, եթէ մի բան գիտէք դրա մասին կամ թէ մի բան կարող էք անել շուտով: Գործարանը Ֆրանսիայում Սէնտ-էտիէն քաղաքումն է եւ մենք ունէինք գործարանի կատարողը:

*Մարտին*  
*Գրեմ*

Համբուրներով  
ձեր էլէկտրոն

Յ.Գ. Ընկերներս, համարեա գինադադարի մէջ, ինձ են սպասում: Կարող էք ուրեմն երեւակայել՝ թէ որքան եմ շտապում շուտ վերջացնել այստեղ գտնելու ինչ հարկաւոր է: Խնդրում եմ ձեր աջակցութիւնը չուշախալու համար:

Ա 8.- ՌՈՍՏՈՍԷՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

10 - XII - 1904

Սիրելիս,

Ստացանք այսօր նամակդ: Մանրամասնը վաղը կը գրենք, այսօր շտապում եմ մի քանի բան ասել:

1.- Գրել ենք Լիս, որ անցնես այստեղ: Բարեկամները խոստացան ամէն տեսակ տեղեկութիւններ իմանալ եւ յայտնել. մասամբ կարելի է թէ եւ գաղափար կազմել եւ թերթերի մէջ լոյս տեսած նկարագրութիւններից:

Անհրաժեշտ է մեր տեսակցութիւնը եւ ուրիշ խնդիրների համար: Եթէ բոլորովին հնարաւորութիւն չունենաս գալու գոնէ 1-2 օրով, մեզանից մէկը կը գայ հանդիպելու Վիեննա կամ Բուդապէշտ, կամ նոյնիսկ այդտեղ: Բարակին(?) էլ հետը կը բերի: Բայց որպէսզի շատ հոգի տեղահան չլինին, աւելի լաւ է ինքդ գաս, expressով, կատարելապէս incognito<sup>17</sup>:

2.- Մ. Գ.<sup>18</sup> հրաւիրում են ժողովը այնտեղ կատարել: Դրանով մեզ դժուար դրութեան մէջ են ձգում: Բայց եթէ մեզանից մէկնում է կը որոշի գնալ, ինչպէս պէտք է անէք դուք կամ լեռնավայրեցիք<sup>19</sup>: Իսկ եթէ 2 Պատասխանատու Մարմինների ներկայացուցիչները բացակայ լինեն, չէ՞ որ Խորհուրդը անվաւեր է համարուելու: Գրիր ուրեմն քո կարծիքը: 1) Կարո՞ղ էք մէկին ուղարկել այստեղ կամ այնտեղ: Յիշեցնում եմ, որ Սարգիսը փափաք է յայտնել իբր «խորհրդատու» մասնակցել: Մայրայեղ դէպքում, եթէ մի ուրիշը հնարաւորութիւն չունենայ, չէ՞ք կարող արդեօք նրան ձայն տալ, քանի որ նա արդէն այսպէս կամ այնպէս ներկայ է լինելու: 2) Ո՞ր է յարմար «Խորհուրդը»: Այս հարցերի մասին ի հարկէ կը գրենք եւ Լիս: Բայց դու էլ քո կարծիքը յայտնիր:

3.- Ձիլբեռնշտյն<sup>20</sup>-ի անցագիրը չգտայ, որքան փնտրեցի. դուք ուղարկել էիք, որքան յիշում եմ Բերլինի անցագիրը: Արդեօ՞ք դո՞ւ ես չփոթել, մենք չենք տեղը գտնում: Գրիր, թէ երբ է եւ ինչպէս է եղել մեզ պահ տրուած:

Առաջժամ այսքան:

*Ռոստոս*

Քր Ռ[ՈՍՏՈՍ]

Ներփակ դնում եմ մեր շրջաբերականները, որ կարդալով յանձնիր տեղդ:

Շատ եմ վախենում, որ հոտ չառնեն այդտեղ քո ներկայութիւնից, թէ բարեկամները եւ թէ չարակամները:

16.- Մաքսային հարկէ ազատ նմոյշ:  
17.- Ծածուկ, ծպտուած, առանց ինքնութիւնը յայտնի դարձնելու:  
18.- Սեօ քաղաք՝ Թիֆլիս, նաեւ Արեւելեան Բիւրօ:  
19.- Կիլիկեցիք:  
20.- Բնագրին մէջ ռուսատառ:

Ա 9.- ՔՐԻՍՏԱՓՈՐԷՆ ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՈՅԻՆ

30 Դեկտ. 904, Փիլիպպոպոլ

Սիրելիք,

Ստացայ ձեր բոլոր գրածները, ինչպէս եւ ներփակ անցագրերը, շրջաբերականը եւն: Շնորհակալութիւն:

Իմ այստեղ գալու մասին պէտք է ասեմ հետեւեալը. նախ՝ Վիշապի ընկերների կողմից, բացի ինձ յանձնարարուած եւ մեր գործերին անմիջապէս վերաբերող խնդիրներից դուրս՝ ես չեմ կարող խօսել թէ ընդհանուր հարցի մասին. չունեմ նրանց կարծիքները. երկրորդ՝ մենք այնքան շտապում ենք, որ այստեղի անելիքներս վերջացնելուց յետոյ՝ չմնայ որեւէ զգալի պակաս, որը հարկաւոր լինի լրացնել Եւրոպայում, իմ այդտեղ գալը դժուար կը լինի արդարացնել, որովհետեւ Վիշապից կը խլի առնուազը մի շաբաթ. 10-12 ինձ սպասող հոգու համար դա զգալի ժամանակամիջոց է՝ ներկայ մեր փափուկ դրութեան մէջ: Այս նկատումներով ես գրեցի Լիս եւ ձեզ. որոշ պատասխան տալու համար սպասում եմ այնտեղի ընկերների կարծիքին ու այստեղ անելիքներիս վախճանին: Յամենայնդէպս, եթէ իմ ձեզ մօտ գալը չաջողուի, Վիեննայում կամ Բուդապէշտում կարող ենք հանդիպել: Վերջնական մի բան ուրեմն կը գրեմ կամ կը հեռագրեմ յետոյ:

«Խորհուրդի» մասին ինձ թւում է, որ քանի դա Ընդհ. ժողովի կողմից մի վճռուած խնդիր է, պէտք է անպատճառ կայացնել — եւ մեր մարմինը, որ ունի կատարեալ կազմ, չպէտք է ո՛չ մի կերպ տեղիք տայ «Խորհուրդի» կազմը անկատար լինելու կամ նոյնիսկ չկայանալուն: Այդ միեւնոյն միտքը ես յայտնել եմ իմ ընկերներին, եւ եթէ մեզանից (ընտրուած պատասխանատուներից) մէկը անկարող լինի ներկայ մեր պարագաներում հեռանալ գործի վայրից (որ համարեա անտարակուսելի է) մենք կ'ուղարկենք մէկին, որը մեր գործերին մօտ է, մեզանից հրաւիրուած է մեզ ընկերակցելու եւ կարող է ցուցականը ներկայացնել: Ինչ վերաբերում է «Խորհուրդը» ուր հրաւիրելու խնդրին՝ ես ձայն կը տայի արտասահմանին, նկատի ունենալով, որ այդտեղ միայն կարելի է կարգին կերպով ստուգել Ընդհ. ժողովի որոշումները, քննել հաշիւները եւ հաշուապահութիւնը ու վերջապէս այդտեղ կայացնելով է, որ դուք չէք ստիպուել ձեր կողմից բաւական նկատելի ժամանակով մարդ հանել Կովկաս ուղարկելու համար. մնացած պայմանները այդտեղի կամ Կովկասի համար եթէ ունին որոշ առաւելութիւններ, ունին նաեւ պակասութիւններ:

Ուղարկեցէք, խնդրում եմ, պատրաստ, ձեր ձեռքի տակ գտնուող անցագրերից պարսկինը եւ ամերիկեան հայերինը. դրանք մեզ կարող են պէտք գալ եւ շատ

շնորհակալ կը լինենք ստանալով:

Անձայն հրացանների մասին գրել եմ նաեւ Թային-եանին<sup>21</sup>. դա մի շատ կարեւոր բան չէ մեզ համար. իմ դուրս գալուց խնդրել էին տեղացի ընկերները ճարել, եթէ կարելի է, հասարակ տեւորական գործողութիւնների համար: Սակայն եթէ կայ, պէտք է գնել: Դժբախտաբար ես չհասկացայ այդ ինչ բան է Ֆլօբերը<sup>22</sup>, որ առաջարկել է գինագործը, եւ ի հարկէ, այդ մասին ոչ այդ, ոչ էլ ոչ չեմ կարող ասել:

Ձիլբեռնշտյն<sup>20</sup>-ի անցագիրը բերած պէտք է լինի Յոնանը<sup>10</sup>, Աթէնքից ուրիշ իրեն յանձնուած թղթերի հետ:

Անվերջ բարեւներս Մինօրին, կարօտալի համբոյրներս ձեզ: Հրէական անցագրեր բաւական է. կարող էք ուղարկել միայն այն դէպքում, երբ աւելի յարմարութիւն ունենան, քան մեզ ուղարկածները. վերջին ինձ ուղարկածում, օրինակ, կան 11 ամսեկան երեխայ. ի հարկէ դրա հասակի երեխաներին չէ կարելի թողնել տանը, երբ ծնողները հեռու տեղ են գնում, որովհետեւ 903 թուից մինչեւ այժմ շատ չէր լինի մեծացած... Ստիպուած պէտք է ամբողջ 3 տող թէ աւելի ջնջել<sup>23</sup>: Եթէ լինի բուն ռուսի անցագիր, նախապատուեցէ՛ք: — Ֆրանսիական declaration-ի մասին կը գրեմ վաղը, այժմ շտապում եմ փոստի հասցնել: Իմ դրութիւնը այստեղ վատ չէ. եկել եւ մտել եմ տիկ. Իւդաբերեանի տունը ու դուրս չեմ գալիս: Փորձերի էլ գնում եմ հեռու տեղ, բոլորը սպայի հետ — անվտանգ:

Նամակս ստանալուն պէս՝ փոխադրեցէ՛ք Գօշի<sup>24</sup> հասցէին 1000 fr. Սարգիսը<sup>25</sup> եկաւ այստեղ երէկ:

Ձեր  
էլէկտրոն

21.- Յովհաննէս Լորիս Մելիքեան, Արեւմտեան Բիւրոյի անդամ եւ Եւրոպայի մէջ Դայ դատի աշխատանքներու պատասխանատու:  
22.- Ռոստոմ 5 Յունուար 1905ի Քրիստափորին ուղղած պատասխան նամակին մէջ (փաստ. 213-48) կու տայ հետեւեալ բացատրութիւնը. «Ֆլօբերը այն փոքրիկ հրացաններն են, որով սեմեակի մէջ նշան առնել են սովորում, պակիփոններում նշանառութեան համար են ծառայում: Մարդ սպանել ի հարկէ չի կարող»:  
23.- Քրիստափորի այս առարկութեան առթիւ Ռոստոմ վերոյիշեալ նամակին մէջ (տես ծանօթ. 22) կը գրէ. «11 ամսեկան երեխայի մասին ի՞նչ շատ ես մտածում. մե՞ղքը է գալիս, ասա մտել է, պրծաւ գնաց, անցագիրը ինչո՞ւ եւ փչացնում»:  
24.- Անտոն Գօշ, Պուլկարիոյ յեղափոխական գործիչներէն. աւելի ուշ՝ ժընեւի Դրօշակի խմբագրատան «պահապան հրեշտակը»:  
25.- Վանայ Սարգիս, Սարգիս Բարսեղեան, իսկական անունը՝ Օտապաշեան Պօղոս. Պուլկարիոյ մէջ պիտի աջակցեր Յուցակաւոր գործին:

Ա 10.- ՍԱՖՈՅԷՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆՆԵՐՆԵՐԸ՝

Ա 11.- ՔՐԻՍՏԱՓՈՐԷՆ ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՈՅԻՆ

4/16 Յունուար 905 Փիլիպպէ

Սիրելի ընկերներ,

Սիրելիք

Ստացանք ձեր նամակը եւ ներփակ շրջաբերակներ՝ առաջիկայ «Խորհրդի» նիւթը կազմող հարցերով:

Նախորդ նամակումս մոռացայ գրել, որ Ֆրանսե-րէն պրոկլամասիոնը լաւ է եւ որ պէտք է արդէն տը-պագրել տալ, պատրաստել:

Թող ներուռի մեզ մի քանի ընկերական դիտողու-թիւններ՝ այդ նամակի չափից դուրս նուրբ ոճի մասին:

Դրամը (1000 fr.) եւ պարսկի անցագիրը ստացայ: Ափսոս, չեղաւ ամերիկականը. դա մեր ընկերներուց մէ-կի համար շատ յարմար էր. անուշը միայն կը փոխէինք հրէականի եւ գործը շատ լաւ շտկուած կը լինէր. եթէ ամերիկական ուրիշը ձեռքներդ ընկնի եւ կամ եթէ կա-րող էք ձեռք ձգել շուտով, կը խնդրենք ջանք չինսայել:

Դուք գրում էք «... ահա Խորհրդի նիւթը կազմող հարցերը. եթէ տրամադիր էք (...՞) պատասխանեցէ՛ք»: Ինքներդ դատեցէ՛ք, ի՞նչ կերպ հասկանալ այդ ու-րոյն ոճը:

Մաղիկից վերադարձած ձեր նամակը ինձ շատ մը-տատանջութիւն պատճառեց: Եթէ կարող էք աւելի մանրամասնութիւններ հաղորդել այդ դէպքի մասին՝ շատ լաւ կը լինի: Հետաքրքիր է իմանալ:

Եթէ նոյն նուրբ դարձուածքով է դիմած Արեւմտ-Բիրոն եւ միւս մարմիններին, ապա գարմանայի չի լի-նի, եթէ Խորհուրդը բացուի մի ձայնով եւ երկու երեք նամակներով միայն:

1- Ի՞նչ հասցէով էր գրուած նամակը — առաջուայ՝ վտանգուած, թէ ձեզ յետոյ տուած այն հասցէով: 2 - պարզ է արդե՞ք թէ փոստն է վերադարձրել այդ նա-մակը: 3 - ո՞վ է «նամակի տէրը», որի մասին գրած էք, թէ «նրան տեսել է եւ ճանաչել մի հրեայ, որը այդ մա-սին պատմել է Ռուսչուքում»: Մեր կողմից հարկաւոր նախագրուչութիւնները ձեռք են առնուած: Զեզ էլ պէտք է խնդրեմ, որ Վիչայ գրելիս երբեք այլեւս ոչինչ չուղարկէք ժընեւից — ուղարկեցէք Անեմասից, Մէն-ժիւլիէնից, Փարիզից կամ չվեցարական ու գերմանա-կան որեւէ քաղաքից:

Միւս կողմից էլլէնը գրում է, որ իրան կանչում էք Խորհրդի ժողովին՝ «անհրաժեշտ» գտնելով նրա ներ-կայութիւնը: Մեզ, խոստովանւում ենք, անհասկանալի է այդ անհրաժեշտութիւնը, երբ Պ[ատասխանատու] Մ[արմ]ինի ուղղուած նամակում այդպիսի անհրաժեշ-տութեան հետքն անգամ չկայ: Եթէ նա կանչուում է իր-րեւ էլլէն, ապա ձեզ քաջ յայտնի է, որ նա զբաղուած է այսօր լուրջ եւ շտապողական գործով, որի ուշանա-լուց՝ թէկուզ մի շաբաթով՝ կարող է վտանգուել ա-ռանց այն էլ ուշացած, շատ ուշացած գործը... Եթէ իր-րեւ Յուլից մարմնի ներկայացուցիչ, բացի նոյն, վերոյիշ-եալ, պատճառից - այդ հրաւէրով չափից աւելի արդէն սիրալի էք գտնւում՝ ձեր վերայ առնելով եւ մեր պար-տականութիւնը:

Եթէ յիշում էք, Թայինեանի<sup>21</sup> մօտ անցեալ տարի իր բիւզժէից աւելի մնացած դրամները Փարիզից իմ անց-նելիս՝ փոխադարձ համաձայնութեամբ, թողինք կրկին իր մօտ՝ մեզ, ըստ պահանջման, փոխադրելու համար: Այդ դրամների մի մասը ժամանակի ընթացքում ստա-ցանք, իսկ միւս մասի — այն է՝ մնացած 9000 fr-ի վերա-բերմամբ՝ նա գրում է այժմ. «Օստաւիտեսա զա վաշ սչետո 9000 fr. եա վնետս վը բետուտետ P. A., տակ-կակ օժիտաեուստետա իզ Բակու ի Ամերիկի 9 տիսետաչ պոլուչենի Բետուո վժենետ»: [Բնագրին մէջ ռուսատառ. «Ձեր հաշուից մնացած 9000 fr. ես մուծել եմ P. A.ի քիւրժի մէջ, որովհետեւ Բաքուից եւ Ամերիկայից սպասուած 9 հազարը ստացուել են Բիւրոյի կողմից ժընեւում»:]

Թող ներուռի մեզ հարցնել, ե՞րբ է լինելու Խորհուրդը եւ ուր, «եթէ տրամադիր էք»:

Խոսքը այն դրամների մասին է, որ ըստ ընդհանուր նախահաշուի Ամերիկան եւ Բաքուն պէտք է տային տարուայ ընթացքում «Արտասահմանեան պրոպագան-դին»: Ես հիմա լաւ չեմ յիշում նախահաշուի այդ թուե-րը եւ ստիպուած եմ հարցնել. կարող ե՞նք ուրեմն Փա-րիզում մնացած մեր 9000-ը հաշուել ձեզ վրայ: Կոստանդինը (Tgon) եկաւ<sup>27</sup>, Թիւֆեքչեւի<sup>28</sup> մօտ եղել է եւ կարելի տեսեր. այստեղ էլ կը մնայ մի փոքր

Իսկ մենք, հասկանալով Խորհրդին մասնակցելը՝ գրաւոր կամ ներկայացուցիչի միջոցաւ, ո՛չ տրամադ-րութեան, այլ պարտականութեան խնդիր, կը մասնակ-ցենք նրան, ըստ չափու կարեաց, այս կամ այն ձեւով:

Ընկերական բարեկեցութիւն  
ՅՈՒՅ. ՄԱՐՄԻՆ

Լիւ, 6 Յուն[ուար] 905ի

26.- Նամակը ստորագրուած է Յուլիան Մարմին, սակայն ձեռագիրը կը պատկանի Սաֆոյի:  
27.- Կոստանդինը ռուսերու պատրաստութեան համար կանչուած վարպետն է (Կոստի Գամբարձումեան):  
28.- Պայթուցիկ նիւթերու վաճառական:

Ա 12.- ՔՐԻՍՏԱՓՈՐԷՆ ԱՐԵՒՄՏ. ԲԻՒՐՈՅԻՆ

19 Փետրուար 905, Փիլիպպէ

Սիրելիք

Ժամանակ մեր սիստեմներին ծանօթանալու եւ, գուցէ, ձուլելու արհեստը սովորելու համար: Կ'աշխատեմ ի գուր չլինի գալը: Geduse-ի<sup>29</sup> վերաբերմամբ, որի մասին Ռոստոմը գրում է թէ փորձը յաջող էր, ես էլի մնում եմ այն կարծիքի, որ դրանից կարելի է օգտուել այն դէպ-քերում, երբ պէտք է շուտով գործածուի: Ես սարսա-փում եմ այն մտքից՝ թէ Ղարսի[?] նման մի դէպք էլի կարող է մեր մէջ տեղի ունենալ, որ եւ կը լինի վերին աստիճանի վրդովեցուցիչ խայտառակութիւն: Ի հարկէ geduse-ը կարող է երբեմն 3 տարի էլ պահուել, բայց եր-բեմն երեք ամիս պահելն էլ վտանգաւոր է. գոնէ այս է ամենահեղինակաւոր քիմիկոսների կարծիքը պոտասա-լին խառնուրդների մասին:

Խնդրեմ նամակս ստանալներուդ [sic] պէս՝ չէքով փոքադէք այստեղ 2000 fr. Ervand Aladjajian-ի հաս-ցէին: Հեռագրով չուզեցի, չնայելով, որ շատ հարկաւոր է, որովհետեւ, ըստ մեր ներքին կանոնադրութեան (Յուլիանի ներքին կանոնադրութեան) մեր մարմնու անհատ-անդամը իրաւունք չունի հեռագրով 1.000 fr. [է] աւելի պահանջելու, եւ եթէ աւելիի պէտք ունի, պար-տաւոր է պատշաճ բացատրութիւններ տալ նամակով: Ահա այդ իմ բացատրութիւնները, որ յուսամ ի նկատի կ'առնէք եւ չէք ուշացնել ուզածս:

Լաւ է ասում Ռոստոմը հրէական անցագրի մէջ յիշ-ւած 11 ամսեկան երեխայի մասին, բայց երանի թէ հա-ւատային մեզ՝ երբ ինչ ուզում ենք՝ ասենք: Երբ յայտ-նես՝ թէ երեխան մեռած է, պահանջում են այդ մասին վկայաթուղթ եւ յամենայն դէպս հիւպատոսի վաւերա-ցումը անցագրի մէջ: Իսկ այս տեսակ պահանջ մի քիչ դժուարացնում է հեշտ պատասխան տուողների դրու-թիւնը: Ուր կարելի է՝ պէտք է խուսափել դժուարու-թիւններից — չէ՞: Հէնց իմ անցագրի հետ պատահեց մի այդպիսի դրութիւն, բայց լաւ պրծայ: Եթէ իմանայի՞ թէ ամէն հանգամանքներում կարելի է «լաւ պրծնել», ի հարկէ բան չէի ասի:

Փորձերս աւարտել եմ ամենազլխաւոր մասերում, բայց առ ժամանակ դեռ պիտի մնամ: Հարկաւոր են ինձ միջոցներ՝

- 1) Այստեղ 2-3 ուրիշ ընկերների փող թողնելու,
- 2) Յուլիանին հարկաւոր բոլոր իրերի համար պատուէրներ տալու,
- 3) մի քանի գնումների եւ նոր փորձերի համար, եւ
- 4) բոլորիս ճանապարհածախսերը եւ պատշաճ պէտ-քերը հոգալու համար:

Գոչի մասին հարցրել էի նրան այդտեղ բերելու հա-մար: Բան չէք գրում. ենթադրում եմ, որ յարմար չէք համարում: Միայնուած եմ արդե՞ք:

Մօտս եղած դրամը, ինչպէս եւ ձեր ուղարկածը, ար-դէն ծախսուել է. ձեռքիս չկան աւել քան 200 fr. հաշիւ-ները առ 1 Յունուար ուղարկել եմ Վիչայ մեր տարե-կանը կազմելու համար:

Tgon nisamex եւն լաւ է չարչարել ձեզ. դա արդար հատուցումն է իմ չարչարանքների փոխարէն, որ գրեցի ձեր ձեռագիրը կարողալիս. մինչեւ այժմ էլ մի խօսք — renatamo — մնում է ինձ համար անյայտ<sup>30</sup>:

Ահա այն բոլորը ինչ կարող եմ անել. իմ առ ժամա-նակ այստեղ դեռ մնալը պայմանաւորուած է մի հան-դիպումով, որ տեղի պիտի ունենայ այստեղ, Ռուսաս-տանից եկող մի զինուորական մասնագէտի հետ: Խնդրեմ այս կէտը ձեր մէջ մնայ գաղտնիք:

Իմ հարցերը տակաւին չվերջացան. փորձերը տա-նում եմ երեք սիստեմով: Սրանց մասին պարտք կը հա-մարեմ ձեզ ուղարկել մի փոքրիկ տեղեկագիր, երբ կ'աւարտեմ ամէն ինչ: Մնում են մեծ փորձերը դրսում, իւրաքանչիւր տեսակից ոչ-պակաս քան հինգը պայթե-ցրնելով: Այն ժամանակ էլ կ'որոշեմ ժընեւ գալ-չգալը: Դուք գիտէք, որքան մեծ հաճոյք, ուրախութիւն կը պատճառի ինձ ձեզ հետ կրկին տեսնուելը, ինչպէս նա-եւ Ռուբիլիս<sup>31</sup> հանդիպելը — եւ ի հարկէ, կը հասկա-նաք, որ միմիայն խիստ պահանջի ստիպմամբ ես կարող կը լինեմ այդտեղ գալուց հրաժարուել:

Մարգիսը<sup>25</sup> կը ճանապարհուի դէպի ձեզ մի քանի օրից յետոյ:

Համբոյրներով՝  
ԷԼԼԷՆ

Կարօտագին համբոյրներով  
Ձեր ԷԼԼԷՆ

Մարգիսը<sup>25</sup> ասում է՝ թէ եթէ «Խորհրդի» ժողովը կայանայ կովկասում՝ ինքը չի գալ:

29.- Պայթուցիկ պատրաստութեան բաղկացուցիչ նիւթ:  
30.- Քրիստափորի յղած իր պատասխան ցամակին մէջ Ռոստոմ կը գրէ. «մեր հեռագրի մէջ renatamo խօսք կամ դրա ցը-ման մի բան չկայ» (փաստ. 213-50):  
31.- Ռուբիլը Քրիստափորի տղան է, 6-7 տարեկան:

Ա 13.- ԿՈՆՍՏԱՆԴԻՆԷՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Սիրելի Քրիստափոր,

Այսօր առաւօտ գրել էի պատասխանը քո տուած հարցերուդ: Մի փոքրիկ աւելացում: Այսօր Վառնայից Բիոնեանը մի հեռագիր ստացաւ, ուր գրուած էր թէ Լիսից մի ծանօթ անձնաւորութիւն, որ ծառայում է նաւում եկել է եւ ուզում է տեղափոխելու նիւթ: Բայց նամակ չբերելուն, Վառնայի ընկերը հեռագրով պատասխան է ուզել, տա՞յ արդեօք նիւթ թէ ոչ: Հեռագիրը ասում էր, որ մարդը ծանօթ է իրեն: Հեռագրուց որ տան: Ես էլ աւելացնեմ:

1) տեղափոխելու հնարաւորութիւն ստեղծուեց արդէն եւ կարելի է ներսը<sup>32</sup> այնտեղով խնձոր ուղարկել ինչպէս առաջ,

2) եւ ներսը իմ դերը պիտի լինի միայն մի 10 հատ խնձոր շինել, նպատակայարմար չէ՞ արդեօք:

3) ի գուր, ծախսեր չանել, գնալու, ձուլարանը հաստատելու, վտանգի չենթարկենք ձեռնարկը եւ միեւնոյն ժամանակը ինձ չուշացնէք գործից եւ այդ ճանապարհով տեղափոխենք:

Բայց եթէ այդ «եթէ» չյաջողի եւ միւս ձեւը դուք չընդունէք (օրիորդ Միշէլ)՝ այն ժամանակ գլխիս վերայ, աչքիս վերայ իսկոյն եւեթ առաջի տողով կը սլանամ, միայն թէ... ինձ մի մաս հանէք, բացի խնձորից մի բան էլ տւ. լ տուէք<sup>33</sup>:

Հաղորդելով Վառնայի գծի վերսկսելու փորձը եւ նրա կարեւորութեան հրաւիրելով քո ուշադրութիւնը, անհամբեր սպասելով դրութեանս որոշման, այս կամ այն կողմ

Մնամ քո  
ԿՈՆՍՏԱՆԴԻՆ<sup>34</sup>

Ա 14.- ԿՈՆՍՏԱՆԴԻՆԷՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ

Սիրելի հայրիկ,

Ստացայ նամակները եւ ճիշտն ասեմ շատ ճնշուած եմ գգում ինձ կարդալուց յետոյ: Այն տպաւորութիւնն է ստացում, թէ դրսից անպատճառ գոռով ուզում է ներս մտնուի եւ ներսից էլ աւելորդ են համարում այդ:

Կարմիր նամակի բոլոր առարկութիւնները ցոյց են տալիս, որ դրութիւնը շատ էլ լաւ չէ թւում նրանց: Բայց աշխատիմ մէկ-մէկ պարզել բոլոր կէտերը, որ վաղը պատասխանատու չլինինք նրանց առաջ, «մենք զգուշացրինք, բայց դուք»... եւ այլն:

1) «Թրըխկ-չրխկոց» ի հարկէ լինելու է, բայց ոչ մեծ սրանք են լինելու:

ա) 15 հարուած մուրճով չուզուներ մանր կտրատելու, փոթայի<sup>35</sup> մէջ մցնելու համար  
բ) Նարտոցի ձայներ, աւելորդ մասերը դրստելու համար  
ց) Բարակ ժեստից մի պզտիկ խողովակ շինելու ձայն<sup>36</sup>:

2) Փուքսի ձայնը ի հարկէ լինելու է, բայց չեմ իմանում պատուհանի եւ հարեւան տան տարածութիւնը, որ կարողանամ դրական մի պատասխան տամ: Այս պատասխանը անորոշութեան մի բաց դուռ է ձգում, բայց պատճառը պարագաները չիմանալս է: Յամենայն դէպս փուքսի ձայնը ամենավերջի գործողութիւնն է եւ տեւելու է միայն 2 ժամ: Մի անգամից կարելի է թափել 3-4 հատ: Ուրեմն եթէ ձեզ հարկաւոր են 10-15, կարող ենք այսպէս անել՝ պատրաստել 10-15 կաղապար եւ սկսել երկաթը հալեցնել: Հալածը ածել եւ տեղը նորից հալել: Ուրեմն ընդամէնը 6-8 ժամ փուքսի գործ կայ: Կարող ենք եւ ընդմիջել գործողութիւնը եւ 1-2 օր միջոց տալով անել: Եթէ փուքսը իմ իմացածը չլինենք ձայնը շատ չպիտի լինի: Կարող ենք յարմարացնել, փուքսի որոշ մասերը գորգով ծածկել, որ ձայնը նուազի, իսկ օճախի վերայ պիտի լինի հողի հաստ ծածկոց՝ ձայնը որոշ չափով կը թուլանայ եւ կը նուազի:

3) Օճախի  
1) լոյսը աննշան է, միայն թէ պատուհանը պէտք է խիտ եւ թանձր կտորով ծածկել, որ լոյսը արտասովոր չլինի: Մի ճրագի լոյսի չափ կը թո-

32.- Ներսը այս պարագային Պոլիսն է:  
33.- Ըսել կ'ուզէ, որ բացի ձեռնառումներու պատրաստութենէն, Սուլթանի ահաբեկման ձեռնարկին մէջ ուրիշ դեր մը եւս վստահուի իրեն:  
34.- Կոնստանդինը կամ այլապէս ծանօթ Կոստի Գամբար-ձումենանը Քրիստափորի կողմէ նկատի առնուած «վարպետ»ն էր, որ Կ. Պոլիս պիտի մտնէր տեղւոյն վրայ ձեռնառումներ պատրաստելու համար: Այս եւ յաջորդ նամակը, դարձեալ Կոնստանդինէն, թուական չունիին:  
35.- Չուզուներ թուճն է կամ թուճէ աման, իսկ փոքան անձա-ճօք կը մնայ մեզի: Կոնայ ըլլալ պօտատ՝ խողովակ իմաստով:  
36.- Դրստել՝ շտկել, ուղղել: Ժեստը՝ թիթեղի բարակ թերթն է:

ղենք: Եթէ գործողութիւնը կատարելու ենք ցերեկը, այդ էլ կարիք չկայ անել:

2) Մուխ կամ մուխ ասուածը ոչինչ բան է եւ գրեթէ բացակայում է, եթէ ածուխը փայտի է: Այս կարեւոր է, որովհետեւ քարածուխը շատ մուխ է հանում:

3) Օճախի մեծութիւնը պիտի լինի 80 սանտիմետր երկայն եւ լայն եւ բարձրթ. 40: Ոչ մի խողովակ:

4) Գալով ընկեր Թ. [ի] կարծիքին, թէ ինքնուրոյնութիւն գործի մէջ անհնարին է ձեռք բերել մի ամսուայ մէջ, շատ ճիշտ է: Բայց կան պարագաներ, երբ մարդ աշխատում է մի ամսուայ մէջ ինքնուրոյնութեան հասնել եւ իր աշխատանքի իմաստը այդ դարձնում, ինքը ա[խ]ն է մինչեւ Ֆ անում իր ձեռքով, որ համոզուի թէ մեծ կարող է, այդ պարագայում ընկեր Թ. կարծիքը կորցնում է իր ոյժը:

Ես թոյլ եմ տալիս ինձ, հանդերձ իմանալով գործի եւ պատասխանիս պատասխանատուութիւնը ասել, որ ինձ կարող եմ գտնում մեր տեսած խնձորների պէս թափել:

Ընկեր Թ. կարծիքը «կիսատ-պատուութեան» մասին նորէն սխալ է: Եթէ խնձորը կիսատ-պատու է, նրան չի կարելի գործածել, նա անպէտք է:

Բայց սիրելի՛ Քրիստափոր ներսը թափելու հնարաւորութիւնը, թէեւ ծայրայեղ զգուշութեամբ, չպէտք է մեզ որոշել տայ, որ անպատճառ ներսը թափուի: Չեմ իմանում, եթէ տեղափոխելը — Յ հատը հեշտ է, այդպէս էլ անենք ու երկար դալմադալից ազատուենք. բայց եթէ անհնարին է այն ժամանակ կասկած չկայ, որ անհրաժեշտութիւն էմ\*. ըժը տեսնել:

Մի առաջարկութիւն՝ ժամանակ չկորցնելու համար: Թոյլ տուէք ինձ իսկոյն եւեթ մտնել Լիս եւ անմիջապէս ձեռնարկել գործիս. եթէ հանգամանքս[եր]ը անհնարին են դարձնում թափելը, զգուշութեան տեսակէտից, ես դուրս կը գամ, եթէ ընկերները ինձ գործ չտան, բայց թէ հնարաւոր կը լինի, կը թափեմ եւ գնալուցս մի շաբաթից յետոյ ամէն ինչ պատրաստ կը լինի, եթէ փուքսը եւ չպիտի չլինեմ: Անյաջող գնալուս պարագայում ծախքը մի կերպ կը վերցնեմ ինձ վերայ, թէեւ զգում եմ, որ բարկանում ես այս խօսքերիս վերայ:

Ես իմ գործիս եմ նայում այստեղ, ի սէր Աստուծոյ շուտ որոշեցէք, սպասելուց մեռայ:

Բարեւներով քո  
ԿՈՆՍՏԱՆԴԻՆ



Բ 1. - ՍԱՖՈՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ՌՈՒՄԲԵՐՈՒ ՓՈՐՉԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Քրիստափորի եղբրական մահէն ետք, երբ Սաֆոն ստանձնեց Յուցական մարմնի ղեկավարութիւնը, պարբերական գեղացագրերով ան տեղեակ կը պահէր Արեւմտեան Բիրոն գործերու ընթացքին մասին, որ առ հասարակ կապուած էր ռումբերու փորձարկման, իսկ աւելի ուշ «դժոխային կառքի» պատրաստութեան: Այս վերջինի վրայ ի վերջոյ կեդրոնացաւ ան Սուլթանի մահափորձին իրագործման համար, երաժարելով իբրև անիրագործելի Քրիստափորի օրերուն նախատեսուած ձեռնառումներ եւս օգտագործելու լրացուցիչ միջոցառումէն:

Ստորեւ այդ գեղացագրերը («Ահա գրեմ փորձերի մանրամասնութիւնները») եւ Սաֆոնի բացատրութիւնը այդ ծրագրէն երաժարելու պատճառներուն մասին («Ահա այդ պատճառները»):

Բաժնի վերջին մասով կու տանք Սաֆոնի կազմած «Յուցական մարմնի արձանագրութիւնների շարունակութիւնը», որ աւելի ընդհանուր տեղեկագիր է քան արձանագրութիւն, բայց վերջին անունով պիտի յիշուի Ընդհ. Ժողովի քննարկումներէն ընթացքին, զանազանելու համար երեւի բուն Տեղեկագրէն Ընդհ. Ժողովի օրերուն իսկ կազմուած, որ ինչպէս յիշած ենք «Նիւթեր»ու Դ. հատորին մէջ (էջ 195-221) տրուած ըլլալով, զանց առած ենք այստեղ:

1905, Մայիս 4/17  
Ֆրիլիպ[պէ]

Ահա գրեմ փորձերի մանրամասնութիւնները: Խնձորների փորձերը յանձնարարած էի Արշակին մինչեւ վերադարձս կատարելու, որոշելու համար կեղեւի գործը, բեկորների մեծութիւնը եւն, այն խնձորների, որոնց նիւթի եւ ձեւի վերայ կանգ էր առել էլլէնը: Արշակը Տիւֆակչեւի<sup>37</sup> հետ, ներկայութեամբ բոլոր գեներալնի Ետաբի սպաների, վերջինների գինուորական հրապարակում փորձել է բոլոր տեսակներն էլ, պատրոյգներով, առանց գլխարկ մեքենաների: Վերջինների մասին բոլոր սպաները, որոնք նոյնպէս գրադուած էին իրանց զօրքի համար ձեռքի խնձորներ մշակելու հարցով, աննպաստ կարծիք են յայտնել, գտնելով այդ մեր գլխարկների գործածութիւնը միանգամայն վտանգաւոր զանազան պատճառներով: Գալով կեղեւի ոյժին եւ բեկորների մեծութեանը, ինչպէս պատմում է Տիւֆակչեւը եւ հաստատում է Պիոնը<sup>38</sup>, փորձերը դարձեալ անյաջող են եղել, բացի մէկ տեսակից, այն է տուել են 2-3 հատ շատ խոշոր, կէս ձեռքի մեծութեան բեկորներ, մնացածները խիստ մանր, կոտորակների չափ եւ անոյժ ի հարկէ: Միայն մէկը այն մեծ եւ ծանր տեսակը, չըջանակի կեղեւով, ներսինը հաւասար մասերից կազմած. նա է, որ տուել է բաւարար հետեւանք բեկորների չափի եւ հաւասարութեան կողմից, կտորների ոյժը համարել է բաւական անպաշտպան մարդու համար, բայց ոչ բաւարար — եթէ մարդը պաշտպանուած է ունէ առարկայով... գրահով, օրինակ, կառքով:

Տիւֆակչեւի պատրաստած խնձորները (պողպատ մերինից բարակ եւ թեթեւ, պատրոյգաւոր, նրա ստեղծ

50 կտոր աւելի է տուել, քան մեր լաւ տեսակը եւ նոյնպէս հաւասար: Նա այժմ պատրաստել է տալիս մի նոր ձեւի խնձոր, որը 250 հաւասար եւ իւր ստեղծով, ուժեղ բեկորներ պիտի տայ: Սպայակոյտը խոստացել է փորձել, բայց ըստ երեւոյթին խոշոր տեսակի խնձոր է, չափերին նայելով:

Վերջապէս այդ խնձորների (կեղեւաւոր) փորձերից եւ մասնագէտների կարծիքներից եկայ այն եզրակացութեան, որ իսկ որ մեզ համար անհրաժեշտ է օդի վերայ հիմնել մեր գործը, փոխանակ բեկորների բազմազան պատահականութիւնների, կապրիզի վերայ: Եւ այդ ուղղութեամբ էլ պատրաստեցի փորձերը, որոնք թուով երեք էին եւ հաշուած էին միայն օդի ոյժի վերայ:


Առաջին փորձը.— Հասարակ, սպիտակ թիթեղեայ մանի մէջ, համարեա խորանարդ՝ 20x20x23 խ.ս. [խորանարդ սմ.] ծաւալով որը ուղիղ 10 կիլո ջուր կը տանի. լցրի միլին[իտ] լաւ մանրած, մաղից անցկացրած եւ աստիճանաբար սկսեցի սեղմել որքան որ ոյժ ունէի հաւասար կերպով (մեր բոլոր հին փորձերը, ըստ Տիւֆակչեւի, միշտ եղել են թոյլ լցուած, թեթեւ կերպով որքան հնարաւոր է թեթեւ) տեղաւորուեց այդ արկղի մէջ 14 կիլո (պէտք էր իսկապէս հաշուով տեղաւորուէր 15 կիլո — ուրեմն աւելի ուժեղ պիտի սեղմած լինէի որեւէ մի գործիքով:

Կենտրոնում տեղաւորեցի 5 հատ խոշոր կապսիւլներից իւրաքանչիւրը 4 գրամնոց, ուրեմն 20 գրամ սնդիկ:

37.- Պայթուցիկ նիւթեր վաճառող անձը, որմէ գնուած միլի-նիտը խարդախուած դուրս եկաւ:  
38.- Կարապետ Պիոնեան, անդամ Դ.Յ.Դ. Պալքանի Կեդր. Կոմիտէին:

Փորձի ենթական էր մի ձի (կոյր): Դիրքը ընտրեցի մօտաւորապէս համապատասխան Նժոյզի դիրքի. այն է թեք մակարդակ — սարալանջի ծալուածի ստորոտում, որի լայնքսի հատուածը ունէր այս ձեւը, իսկ երկայնքսինը՝ այսպիսի կոր:

Պայթ. արկղը ներքեւում, ոչ գետնի, այլ տախտակներից կապուած պատանդանի վերայ, երկրի մակերեւոյթից 0.5 մետր բարձր, սեղանի վերայ պարզ կերպով դրուած: Արկղը պինդ կապուած պարանով դրուած է ա կէտում, ձին բ. կէտում




ձորակը ներքեւում մերկ է. նոյնպէս եւ լանջերը մինչեւ 5-8 մետր, իսկ աւելի բարձր՝ լանջերը ծածկուած են տերեւախիտ թփերով: Պայթումը իսկապէս սոսկալի էր, չլսուած, գոնէ ես չէի լսած: Որքան էլ որ ականջներս բռնած էի, եւ սպասում էի նրան, բայց եւ այնպէս դղրդացրեց սար ու ձոր եւ ցնցեց ինձ: 150 մետրի վերայից հովիւր, որ եկաւ պատմեց, զգացել է օդի ուժեղ հոսանքի հարուած: Մենք փոսի մէջ էինք, այդ հարուածը չզգացինք:

1) Ձին փուռուած էր գետնին, փորը լայն վէրք, աղիքները դուրս թափուած, շլինքը լայն — ձեռքի լայնութեան եւ երկարութեան անցնող [մէկ կողմէն միւս կողմը ճեղքող-անցնող]<sup>39</sup> վէրք արեան լճի մէջ ու 5 բոպէ չանցած սատկեց: Քթից արիւն:

2) Լանջի թուփերը 15-20 մետր տարածութեան վերայ կարծես մկրատով խուզուած, տերեւագուրկ, իսկ առաջին 5-8 շարքերում եւ ճիւղազարդ:

Ներքորդ փորձ.— Նոյնպիսի ամանի մէջ, փորք, գլանաձեւ 4 կիլո միլին[իտ] լցուած: Ենթական ձիու դիակն էր գետնի փուռուած: Այս անգամ պ[այթուցիկ] արկղը դրինք ենթակայից բարձր. երկու մետր հեռաւորութեան:



Առաջին փորձից ես կասկածներ ունէի, թէ միայն օդը չէ որ աղպիսի վէրքեր է բացել, գուցէ, որքան էլ որ բարձր էր արկղը գետնից. արկղը պայթելիս, այն ահագին խրամատից բարձր է դուրս նետել եւ քարերն են այդ վէրքերի պատճառողները: Այս երկրորդ փորձը կատարելապէս ապացուցեց, որ միայն օդն էր, որ կարող էր ձիու ահագին դիակը մէկ մետր հեռու նետել եւ շուռ տալ: Քարը կարող է ծակել, վիրաւորել եւ ոչ ամբողջ դիակին նետել մի կողմ:

Այդ համոզմունքը օդի ոյժի վերայ աւելի եւս հաստատուեց երրորդ փորձին:

Ներքորդ փորձ.— Նոյնպիսի սպիտակ թիթեղից գլանաձեւ փորք արկղ, աւելի փորք, նիւթի քանակութիւնը նոյնպէս 4 կիլո (աւելի պինդ էի սեղմած):

Ենթական էր գառը\*: Այս անգամ գետնի փորուածքներից դուրս եկող քարերի պատահական հարուածների կասկածը ի սպառ վերացնելու նպատակով, փորձը տեղափոխեցի կանաչոտ արօտատեղիի վերայ, ուր չկար եւ ոչ մի քարի հետք: Արկղի եւ գառան փոխադարձ դրութիւնները նոյնն էին ինչ եւ առաջին փորձինը, այն է՝ արկղը ներքեւը, ենթական վերեւը (երկրի մակերեւոյթը դարձեալ բնական թեքուած ունէր): Տարածութիւնը երեք մետր



Գառը մի ակնթարթում ընկաւ: Փորոտիքը դուրս թափուած. աւելի շատ քան ձիուներ. բայց համարեա

\*) Կարծում եմ, որ գառը իբրեւ փորք, թեթեւ եւ շատ ճկուն կենդանի աւելի յարմարութիւն ունի դիմա-նալու պայթումի հոսանքին, քան մեծ եւ ծանր առարկան. օրինակ էլը, ձին կամ արջառը, եթէ լինէին գառի տեղը, աւելի եւս շուռ կը սպանուէին:

39.- Բնագրին մէջ ուսեւրէն:

նոյն տեղը, աղիքները, ստամոքսը եւ լեարդը կախուած դուրս. առաջին մէկ ոտքը վզին մօտ ի սպառ կտրուած ոսկորով, կաշուով, միայն յետեւի կաշուց քարշ ընկած: Գլուխը խսկոյն կտրեցինք, որ չտանջուի, ուստի եւ չեմ կարող ասել թէ քանի ընկած կարող էր դեռ շնչել: Արկղը դրուած էր ուղղակի խոտերի վերայ: Տակի խրամատը կէս մետր տրամագիծ ունէր եւ համարեա կէս մետր խորութիւն:

**Նորակացուքիւն**

Որ 4 կիլո միլը անպայման մահացու է 3 մետր շառաւիղով եւ

14 կիլոն 10 մետր շառաւիղով առանց բեկորների միմիայն օդի ոյժով:

Երեւակայութիւն հրաժարուում է պատկերացնել այն ինչ կարող է լինել, երբ 150-200 կիլո լինի պայթողը եւ ենթական Նժոյզը...

Դժոխք, դրախտ... երկուսը միասին...

**ՍԱՅՑ**

Թ. Գ. Տղերքը Լիսից մի քանի նամակով խնդրում են, համոզում, աղաչում, որ ձեռք բերենք... ուսուցաց նիւթից 40-50 կիլո: Չգիտեմ ստացել են նամակս փորձերի մասին թէ դեռ ոչ. կարծում եմ վերջինը: Յամենայն դէպս գրեցի, որ այդ նիւթից, որքան ինձ յայտնի է, առաջին՝ ոչ մի տեղ չի վաճառում, երկրորդ՝ գտնել մասնագէտներ, շինել տալ, ստանալ եւայլն — հինգ տարի կը քաշէ եւ երկու հատ էլ նոր գոհ, մինչեւ այդ նոր նիւթի հետ ծանօթանալը: Կարծում եմ թէ սխալուած չեմ, որ նա չի վաճառում: Ընկերները կասկածում են, թէ Տիւֆակչեւը մեզ խաբած լինի, վատ ապրանք տուած լինի եւ կամ ապրանքը խոնաւացած լինի (յատակների տակ էին (պահուած) եւ հետեւապէս չպայթի: Գրեցի որ այդ կասկածը փարատելու համար անմիջապէս ուղարկեն ինձ պոստով մէկ կամ կէս կիլո ծրարներով, որ այստեղ փորձեմ: Սպասում եմ այդ վերջինին:

Ռուբինայի մասին շարունակութիւնը երկրորդ ծրարով:

**ԵՐԿՐՈՐԴ ԸՍՐՔ ՓՈՐՉԵՐԻ**

Առաջին փորձերը լրացնելու համար մէկ կողմից, միւս կողմից ստուգելու նպատակով առաջինների յաջող հետեւանքները: Մայիսի 12ին, ներկայութեամբ նոյն անձինքների (Լեապով, Տիւֆակչեւ) այս անգամ նաեւ օր. էմիլի, կատարուեցին հետեւեալ փորձերը:

Նպատակ դնելով՝

1) Ստուգելու լեցուածքի տարբերութեան ազդեցութիւնը (թոյլ լցուածք — 1 կիլոն 730-750 խորան. սանտ. տարածութիւն — ըստ Տիւֆակչեւի, որին եւ հետեւած ենք եղել մեր նախկին փորձերի ժամանակ եւ պինդ — լցուածք — 1 կ. միլիմետր 630 -850 խ. ս. — ըստ Ռուբինայի<sup>40</sup>:

2) Արտացայտուող ուժի տարբերութիւնը, կախուած ամանի պատերի ամրութիւնից

3) Ռուս. յեղափ. (Ս. Ռ.) գործածած ձեւի խնձորների փորձը լցուած մեր նիւթով, — նրանք քանակութեանը 5 ֆունտի տեղ 2 կիլո որ համարեա նոյնն է:

4) Պատերի նիւթի տարբերութիւնը՝ փայտ, թիթեղ (բարակ երկաթ) չուգուն<sup>35</sup>:

5) Մեծ փորձ 30 կիլո միլիմետրի, որոշելու համար, թէ ինչ տարածութեան վերայ իրական հարուած կարող է տալ:

Այս բոլոր փորձերից վերջինը դժբախտաբար չաջողուեց գլուխ բերել. յորդառատ անձրեւից նիւթը եւ թէ կապսիւլները թրջուեցին եւ այդպիսով զրկուեցինք մեծ փորձի հետեւանքներից:

Այդ նպատակով Ֆիլիպպէից — ժամանակ վաստակելու համար — նամակով պատուիրել էի, որ պատրաստ լինի իմ գալուն հետեւեալ ամանները (Տեղացի ընկերները փորձերը Ֆիլիպպէ կատարելուն հակառակ էին ուստի. պատճառով):

Երկու փայտէ արկղեր միեւնոյն ծաւալի (15x15x14 սանտ.) բայց տարբեր ամրութեան. մէկը պինդ ու հաստ փայտից, միւսը թոյլ, բարակ տախտակ. առաջինի հաստութիւնը 3.5 սանտ. երկրորդը միայն 0.5, իւրաքանչիւրի մէջ հինգական կիլո հաւասար ամրութեամբ լցնելու համար:

2) Երկու թիթեղեայ արկղեր — տարբեր մեծութեան (մէկը 11x11x10 ս. միւսը 12x12x11 ս.) իւրաքանչիւրի մէջ երկ-երկու կիլո լցնելու համար տարբեր ամրութեան. առաջինի մէջ ի հարկէ պինդ սեղմած, երկրորդինը — թոյլ լեցուած:

3) Մի տակառ գարեջրի՝ չոր բոլորովին եւ պինդ 30 կիլո նիւթի ծաւալով:

40.- Ազգութեամբ լեռնաբան պայթուցիկ ցիւքերու. Սաֆօ անոր մասնագիտական կարծիքը առնելու համար տեսնուած էր հետը Փարիզի մէջ:

Ենթականներն էին երկու ձի: Երկուսը, որպէսզի մէկը միւսի յետեւը տարբեր հեռաւորութեան կանգնեցնելով, կարելի լինի տեսնել, թէ ի՞նչ չափով առաջինը պիտի խանգարէ կամ պաշտպանէ իւր մարմնով երկրորդին, բայց ինչպէս ասացի, տանը արդէն լցուած տակառը փորձերի ժամանակ, երբ կապսիւլներն էլ դրած էինք արդէն, ենթարկուեց չորս ժամ անընդհատ տեւող անձրեւի. տակառը գոյացած հեղեղների մէջ լողում էր. լինելով հին եւ չոր — բոլորովին թրջուեց եւ այդպիսով փճացրեց փորձերից ամենագլխաւորը: Հազիւ յաջողուեց մեզ միւս փորձերը քիչ թէ շատ պահպանել կարկուտախառն անձրեւից. իսկ տակառը ահագին ծանրութեան եւ մեծ՝ անկարող եղանք ազատելու ջրերից: Այնուամենայնիւ, որքան էլ որ գիտէինք, թէ փորձը չէ յաջողուելու լիովին, ամէնից առաջ պայթեցրինք տակառը, որից Թ մետր հեռու կապուած էր թփից մէկ ձին, իսկ երկրորդը՝ 20 մետրի վերայ տակառից: Վերջին ձին մի հասարակ վէրք միայն ստացաւ, մնաց տեղումը կանգնած: Առաջին ձին երկու մետրի չափ նետուեց կանգնած տեղից եւ իսկոյն հոգին փչեց, չնայած, որ վէրքերի նշաններ չէին երեւում վերան... Թէ ձայնից, թէ գետնի վերայ թողած փոսից եւ թէ դէս ու դէն թափուած չալայթած միլիմետրի դեղին փոշուց պարզ էր, որ պայթել է միայն նիւթի ներքին, չոր մասը, որ արտաքին կեղեւի մի շերտ որոշ հաստութեան լինելով թրջուած՝ չէ պայթել, ինչպէս եւ չեն պայթել լրացուցիչ 7 կապսիւլները, բացի մէկից, որը էլեքտրական լինելով, չէր կարող թրջուել (փակուած է հերմետիկ) բոլորիս էլ կարծիքով պայթած պիտի լինի 1/3 — 1/2 -ը, ոչ աւելի: Միւս փորձերը տուին հետեւեալը:

Կենդանի մնացած ձին 5 կիլո փայտեայ արկղից գետին զլորուեց 4 մետրի վերայ եւ 20 րոպէից սասկեց:

Երկու կիլո պարունակող թիթեղեայ արկղերը 1.5 մետր հեռու դրուած երկու ձիերի դիակներից, փոքրը (ուրեմն ամուր լցուածը) սոսկալի վէրքեր պատճառեց ձիուն, անպայման մահացուցիչ՝ ձիու փորը բացուած, բոլոր, բոլոր աղիքները դուրս լեցուած-կէս մետրի երկարութիւն ունէր փորի բացուածքը, ոտը ոսկորով կտրուած՝ կարծես դաշոյնով եւ ուրիշ շատ լուրջ վէրքեր:

Այն ինչ նոյն երկու կիլոյի մեծ արկղը (թոյլ լցուած) տուեց համեմատաբար թեթեւ վէրքեր թէ եւ նոյնպէս մահացու: Պարզուեց այս փորձերից մի բան, որ թիթեղը (բարակ երկաթ) բաժանուում է շատ սրաշուրթ մասերի, բաւականին խոշոր եւ այդ մասերն են, որ դաշոյնի

պէս կտրում են եւ պատառում. նոյնիսկ ոտքի հաստ ոսկորը կացնի պէս կտրում: Պարզուեց, որ Պլեւէի եւ Սերգէյի գլուխների կտրուած լինելու գաղտնիքը պատկանում է թիթեղի կտորներին միայն, եւ ոչ նիւթին<sup>41</sup>:

Չերկարելու համար, գրեմ ընդհանուր եզրակացութիւնները կատարուած փորձերի՝ առաջին եւ երկրորդ շարքի փորձերինը միացրած:

Ա) Թաց միլիմետր չի պայթի, ինչպէս եւ կապսիւլը:

Բ) Կեղեւի ամրութիւնը ունի իւր դերը, եթէ քանակութիւնը քիչ թէ շատ մեծ է: Ամուր կեղեւը աւելի հետեւանք կը տայ, քան թոյլը: Որքան մեծ է նիւթի քանակութիւնը, այնքան ամուր պէտք է լինի ամանը, կարծես թէ հնարաւորութիւն տալու համար ամբողջ նիւթին գազանալու առաջ քան կեղեւի պատուելը: Եթէ խիստ թոյլ է ամանը, իսկ նիւթը շատ, ըստ երեւոյթին, ամանի արագ պատուելուց, նիւթի դրսի մասերը ժամանակ չեն ունենում պայթելու, այլ ցրում են փոշու դրութեան:

Այդ երեւաց նրանից, որ ամուր արկղի գետնի վերայ թողած ծագարը<sup>42</sup> միեւնոյն պայմանների մէջ աւելի լայն էր եւ խորը, քան թոյլ կեղեւ արկղինը:

Գ) Լցնել պէտք է ամուր, որքան կարելի է եւ հաւասար ամրութեան: Սակայն ամուր սեղմուած միլիմետր պահանջում է պայթելու համար աւելի շատ սնդիկ, քան թոյլ լցուածը: Իբրեւ չափ կարելի է վերցնել իւրաքանչիւր կիլոյին (ամուր լցուած) 1 հատ 4 գր. կապսիւլ:

Դ) Կապսիւլը հարկաւոր է տեղաւորել նիւթի կենտրոնում. (Տիւֆակչեւ) շարունակ կատարում է այդ սխալը. վերցնում է յարմարութեան համար ոչ թէ իսկական կենտրոն, այլ մակերեւոյթի կենտրոն) ա. եւ ոչ բ., որ անպայման անհրաժեշտ է:

Ե) Թիթեղեայ ամանը մանաւանդ մօտ տարածութեան վերայ աւելի գերադասելի է, քան փայտեայ նոյնիսկ չուգունէ ամանը: Երկրորդը ոչ մի ազդեցութիւն չի թողնում իր կեղեւով. փայտը ուղղակի թեփ է դառնում. վերջինը (չուգունի ամանը) ծակող վէրքեր է պատճառում, այնինչ առաջինը՝ թիթեղիցը ահարկու դաշոյնի վէրքեր՝ գլուխ ոտք կտրել, փոր ճեղքել, աղիքներ թափել եւայլն, եւ վէրքեր այլանդակ եւ սոսկալի:

41.- Ակնարկութիւնը Ռուսիոյ ցերքին գործոց ամենագործախարար տիւրախոչակ Պլեւէի ահաբեկման պարագաներուն է:

42.- Պէտք է ըլլայ ձագարը, այսինքն բացուած փոսը:

ԵՐՐՈՐԿ ԸՄՔ ՓՈՐՉԵՐԻ

Բուկրեշտ, 3 Յունիսի [1905]

Խնձորների փորձերը — Վերջին փորձերը վերաբերում էին միմիայն խնձորների զանազան տեսակներին և նրանց գլխարկ-մեքենաներին: Փորձերը տեղի ունեցան բոլոր սպառնալից թնդանթածիգների հրապարակում, ներկայութեամբ և մասնակցութեամբ գեներալտարի 7 օֆիցերների և Տիւֆակչեւի:

Փորձի ենթարկուեցին զանազան տեսակի 10 խնձորներ, որոնցից երեքը մեր տեսակի (կլոր և ձուլածու) չուգունէ պատերով 8-12 միլիմ. պատերի հաստութեամբ ու ծանրութիւնը 1 կիլո 900 գր-ից մինչև 2 կիլո 500 գրամ և 3 կիլո: Նիւթի քանակութիւնը 200 գր — մինչև 350 գրամ: Երեք հատ խնձոր Տիւֆակչեւի բոլոր [արական] զօրքի համար պատուիրուած նոր ձեւի (խորանարդ, ներսի պատերը խազուած 340 կտորների ամէն մի կտորը 1/4 խոր. սանտի-մետրի մեծութեան, մնացած չորսը իրանց սպաներինը — գնդաձեւ նոյն մեծութեան:

Կրակ տալու ձեւերը երեք տեսակի էին. 1) Մեր տեսակը («էլլէնի») աւտոմատ գլխարկները, որը մի քիչ փոփոխութեան էի ենթարկել, թողնելով ընդհանուրը անփոփոխ — ապահով տեղափոխութեան համար աւելացրել էի տուել [պրոպոլտանիտ] 43, պատահական հարուածները): Մէկ տեսակն էլ, դարձեալ նոյն ձեւի գլխարկներից — այն փոփոխութեամբ, որ շնիկը իջնում է ձգողից քիչ հեռու 1-2 մետր, նայելով թելի երկարութեանը, որի քաշելով դուրս է պրծնում շնիկը պահող ասեղը և իջնում է շնիկը և կրակ առաջացնում:

Մնացած տեսակները բոլորը. սպաներին պատուիրած խնձորներն էին, որոնք ինչպէս ասացի, գնդաձեւ էին և Տիւֆակչեւի խորանարդ ձեւերը ունէին, միապաղաղ թափուած, դրսից հարթ բայց ոչ ներսից, այլ խոր ակօսներով:

Նրանց վառելիքը շատ պարզ տեսակից է, խորանարդի գլխին մի այսպիսի վիտ — Ա: Օ ծակից դուրս է գալիս պատրոյգը և Ա. վիտը ա -բ ծակերից, որոնք մինչև միւս կողմը չեն հասնում. բանալով հագցւում են խնձորին, ծայրը ձեղքւած և մէջը հագցուած: Այսքանը միայն: Ուրեմն պարզ պատրոյգը վառուում է գլանիկով կամ ուրիշ դեղնազոյն պատրոյգով, որը գինտորը ձեւին է ունենում վառուած: Այդ այն պատրոյգն է, որը լինում է լուցկիի ամաններին կից — քաթանից հիւսած և դանդաղ է վառուում:

Փորձերը կատարուեցին տախտակներով չորս կողմը պատած մի հրապարակում որի շառաւիղը երկու մետր էր:

Դեռ փորձերը չսկսած, սպաները գտան մեր աւտոմատ մեքենաները անապահով և անգործնական:

Նրանց կարծիքով, որը և վերջն ապացուցուեց փորձերով, այդպիսի աւտոմատ գլխարկները կրում են իրանց մէջ երեք տեսակի խոշոր պակասութիւններ.

- 1) Բուրդ են և թանգ, համեմատած իրանց ձեւին,
- 2) անապահով են թէ անպատճառ պիտի կրակ առնէ պատրոյգը, այսինքն կարող է և կրակ առաջ չգալ զանազան պատճառներով, շնորհիւ մեքենայի անկատարութեանը կամ փճանալուն:

և 3) կարող է կրակ առնել ժամանակից առաջ, դեռ խնձորը ձեւքի մէջ, շնորհիւ նրան, որ եթէ վերցնես նոյնիսկ ոչ այնքան «անհնարին կարծ» (նրանց ոճն է), ինչպիսին է 2 կամ 2.5 սմ. պատրոյգով էլ կարող է նոյն դժբախտութիւնը կրկնուել շնորհիւ այն հանգամանքի, որ կապսիւլը լինելով շատ մօտ, նոյնիսկ անմիջապէս մօտ խնձորի վերեւի պատին, քանի որ կապսիւլը բաւականին երկար է և երբ պատրոյգն էլ կարծ է — նա դիպչում է տախտակին, որի վերայ բռնկում է սպիտակ փոշին (բերտոյիտեան աղ և շաքար) և իւր բռնկումից արտադրում է բաւականին մեծ տաքութիւն, որը առանց պատրոյգի էլ կարող է թէ իւր սպիտ. փոշու ցնցումով պայթելու ժամանակ և թէ առաջացրած տաքութիւնով, բռնկեցնել գլխաւոր կապսիւլը — անկախ պատրոյգից, ուրեմն — անմիջապէս, մանաւանդ եթէ սպ. փոշին մի քիչ շատ է լցուած և գլխարկ կապարիչն էլ ամուր և լաւ է փակուած խնձորի վերայ: Վերջին դէպքում սպիտ. փոշու պայթումը և նրա առաջացրած ահագին ջերմութիւնը աւելի և և մեծացնում են ձեւքի մէջ պայթելու վտանգը:

Գանջ այժմ փորձերին. Առաջին խնձորը մի աւտոմատ գլխարկով, որը նետեցի ես, չպայթեց... դա մի սարսափելի հարուած էր ինձ համար: Մեխը շատ լաւ դուրս եկաւ, որ ուզում էր ձգել — ընկաւ բայց... սպասի՛ր որ պայթի... (ձ սանտ. էր պատրոյգը): 2-ը պայթեց:

Բանից դուրս եկաւ, որ այն փոքրիկ գլխարկը, որը հագցւում է աւտոմատին և որի վերայ ամրանում է փոքրիկ կապսիւլը կամ ապակեայ ամանի մէջ ծծմբաթթուն, նետուելու թափից դուրս է պրծնել և ուրեմն հարուածը իջել է դատարկ տեղը, ուր ոչինչ չէ եղել այդ մոմենտին...

Երկրորդ խնձորը, դարձեալ աւտոմատ գլխարկով, նորից «փրտտ» անցաւ [outցկա] 43ա Մեծ էր խայտառակութիւնը... Այդ դէպքում էլ պատճառը այլ էր — փոքրիկ պայթում առաջ եկաւ, բայց մեծ կապսիւլը չբռնկեց և ոչ էլ պատրոյգը. և խնձորը մնաց ի հարկէ ամբողջ:

43.- Բնագրին մէջ ուսերդն, ատրճանակի փակաւք: 43ա.- Բնագրին մէջ ուսերդն՝ փըստ տալ:

Մէկի կարծիքով, պատրոյգի ձեղքուածքի միջի վառողափոշին է թերեւս ընկած, ուստի և պատրոյգը չէ բռնկել, միւսի կարծիքով խոնաւութիւն է առած, քանի որ մի օր առաջ էր պատրաստուած: Այսպէս թէ այնպէս խայտառակութիւնը կատարեալ էր:

Յետոյ փորձուեցին միւս տեսակի խնձորները, պարզ տեսակի, առանց գլխարկի: Բոլորն էլ պայթեցին:

Տիւֆակչեւի խնձորները, ներսից ակօսաւոր, 350 կտորի փոխարէն տուին մօտ 580 կտոր: Գնդաձեւ կտորները՝ աւելի քիչ, 400-450: Բայց նկատելի էր մի երեւոյթ, որ մտաւ Շտաբի արձանագրութիւնների մէջ իբրև բացասական կողմ փորձերի, որ համարեա բոլոր խնձորները տալիս էին շատ քմահաճ հետեւանք: Կային տախտակներ, որոնք ծակոտուած էին մաղի նման. Կարելի է ասել սաղ տեղ չկար և ընդհակառակը տախտակներ (խկապէս — տախտակներից կազմուած դռներ — 3-4 տախտակ իրարու ամրացուած կազմում են մի դուռը) կային դռներ, որոնց վերայ քիչ էին ծակերը և կային այնպիսիներ, որոնց վերայ - բոլորովին ոչինչ կամ 1-2 ծակ: «Օսկրլի ռազմիպայուտսեա ԸՆ ռաւնոմեոն» [Բնագրին մէջ ռուսատառ. «բեկորները կը թափուեն ոչ հաւասարապէս»]:

Այսպէս՝ ծակերի գումարները իւրաքանչիւր դրան վերայ (8 դուռ) տատանում էին 100-ի և 2ի նոյնիսկ Օ- [գերո]ի մէջ:

Եզրակացութիւններ

- 1) Խորանարդ խնձորները տուին աւելի փոքր «տրածեկտորիաներ» 44, այսինքն ծակերի մեծ մասը գալիս էր դռների ներքեւի մասերին — ոտներին, իսկ գնդաձեւ խնձորներինը, ընդհակառակը, դռների վերեւի մասերին, աւելի ուրեմն մեծ կորութիւններ:
- 2) Երկու տեսակի խնձորներն էլ անհաւասար են ցրուում իրանց բեկորները, այսպէս ասած փուռներով և ոչ հաւասար ճառագայթներով.

և այդ փնջերն էլ ի հարկէ շատ անձեւ: Դրա բացատրութիւնը մասնագէտ սպաները գտնում են խնձորների ոչ այնքան անհաւասար ձուլուածքի, այլ անհաւասար լցուածքի մէջ, փոշու լցուածքի: Որովհետեւ խնձորը լցնելու համար մի փոքրիկ ծակ կայ միայն, այդ ծակից անհնարին է հաւասար պնդութեամբ սեղմել փոշին խնձորի մէջ՝ տեղ տեղ լաւ սեղմուած կը լինի, տեղ-տեղ թոյլ: Եւ այդ պատճառով էլ անկանոն շառաւիղներ կը տան բեկորները:

3) Ամբոխային գործածութեան համար շատ յարմար են առանց գլխարկի ձեւերը. առանց գլխարկ-աւտոմատի: Պատրոյգների երկարութիւնը ոչ պակաս — 5 սանտ. ծայրայեղ դէպքում միայն կարելի է իջնել մինչև 4, եթէ պատրոյգը լաւ փորձուած պատրոյգ է, հաւասար վառուող և նետողներն էլ վարժ նետողներ են. գոնէ 1-2 անդամ նետած իսկական խնձորներ:

4) Միեւնոյն պատրոյգը (Վիեննայից հետո ունիւմ լաւ վարկենաչափ, որը ցոյց է տալիս նոյնիսկ 0.5 վայրկեանները) վառուում է տարբեր արագութեամբ սենեակում և դաշտում: Սենեակում աւելի արագ, քան դաշտում: Եւ դաշտում էլ չոր եղանակին — 10 սանտիմետր պատրոյգը վառուում է 12 վայրկեանում, խոնաւ օդի մէջ — 14-18 վայրկեանում: Յետոյ՝

5) Կապսիւլի մէջ դրուած պատրոյգը 0.5-1 վայրկեան աւելի շուտ է վառուում, քան բաց պատրոյգը, առանց կապսիւլի... Այդ ըստ երեւոյթին անհասկանալի երեւոյթը առաջ է գալիս նրանից, ինչպէս նոյնը հաստատեց և մասնագէտ սպան, որ պատրոյգը վառելիս բաւականին մեծ տաքութիւն է առաջ բերում, վառուում է նրա խճ-ժապատ կեղեւը և մխում: Ահա այդ տաքութիւնը պինդ սեղմած կապսիւլի պատերին, անցնում է կապսիւլի պղնձեայ պատերի միջոցաւ սնդիկին և նրան կապսիւլի նում աւելի առաջ, քան կրակի հասնելը սնդիկին: Եւ որովհետեւ 4-5 սանտ. պատրոյգի գոնէ 2-2.5 սանտիմի առաջացրած տաքութիւնը, տաքացնում է կապսիւլի պղնձեայ կեղեւը և դեռ 1/2 կամ 1/4 սանտ. չհասած — ուրեմն 0.5-1 վայրկեան առաջ պայթեցնում է: Կատարեցի հետեւեալ փորձը. Սպիտակ թիթեղից շինել տուի խողովակ պատրոյգի հաստութեան, 10 սանտ. երկարութեան մէկ կողմից փակած: Դրա մէջ դրի պատրոյգը և երբ վառեցի, բաց բերանը իսկոյն փակեցի: Թիթեղը այնքան տաքացաւ, որ մինչև վերջը ձեւքիս ոյժը պահել չկարողացայ: Վայր ձգի: Երբ պատրոյգը այրուեց վերջացաւ, դեռ մի 20-25 վայրկեան չէր կարելի բռնել խողովակը, ձեւքը կ'այրէր: Ահա այդքան ջերմութիւնը արդէն սնդիկի համար բաւական է պայթելու և առանց կայծի: Այդ փորձը արի հետեւեալ կերպով: Նոյն թիթեղեայ խողովակի մէջ դրուած պատրոյգը վառելուն պէս, թիթեղի վերայ, դրսից ցանցի երկարութեամբ շատ փոքր քանակութեամբ սնդիկ: (Մնդիկը ձեւք բերի կապսիւլի միջից. նախապէս կապսիւլը թրջեցի ջրով և պարունակութիւնը զգուշութեամբ հանցի և ապա չորացրի) երբ պատրոյգը վառեցի, խողովակի վերայ ածած սնդիկը պայթեց ճարճատիւնով:

Սրանից պարզուում է այն, որ 1 կամ 1.5 սանտ. միջտ պէտք է դէն ձգել պատրոյգի երկարութեան] համեմատ ժամանակը որոշելիս. գոնէ վերջին մի սանտիմետրը չպէտք է հաշուել:

Այժմ պարզուում է մեր մեծ աղէտի պատճառը, երբ պատրոյգի ամբողջ երկարութիւնը եղել է 2.5 սանտ., այսինքն համարեա ամբողջ պատրոյգը եղել է կապսիւլի մէջ զետեղուած և նրա ծայրը միայն 1/2 - 1/4 սանտիմետր դուրսն է եղել: Անշուշտ պայթումը պիտի առաջ գար 0.5-1 վայրկեանում և հետեւապէս ձեւքի մէջ պիտի

43բ.- Բնագրին մէջ ուսերդն: 44.- (Ուսերդ) շաւիղներ, ուղղութիւններ:




պայթելը,- չէ ո՞ր ձեռքը պէտք է առաջ քան նետելը, աղեղնաձեւ շարժում գործէ խնձորին թափ տալու համար, որ նետուի: Որքան էլ որ մարդ վարժ լինի եւ արագաշարժ, մի վայրկենից շուտ չի կարող ազատուել խնձորից: Իսկ եթէ դրա վերայ աւելացնենք նաեւ սպիտակ փոշու պայթոււմը, նրա ցնցումն ու տուած ջերմութիւնը, այդ դէպքում արդէն մի վայրկեանը կը փոքրանայ աւելի եւ կը դառնայ միաժամանակ պայթում:

Այսպէս ուրեմն

1) Այնտեղ, ուր հնարաւոր է գլանիկ ունենալ ձեռին վառուած եւ կամ արեթ, գերադասելի է խնձորների պարզագոյն ձեւը, առանց գլխարկի, առանց երկրորդ կեղեւի (փշաւոր կամ ծծաւոր խնձորներ) այլ գնդաձեւ կամ խորանարդ, պատրոյգաւոր:

2) Պատրոյգի երկարութիւնը 7-4 սանտիմետր: Ոչ պակաս 4-ից: Պատրոյգի ծայրը նախապէս ճեղքուած եւ մէջը սեւ դիւրավառ թղթից դրուած: Եւ որպէսզի այդ թուղթը ճանապարհին վայրը չընկնի եւ ամուր մնայ իւր տեղում, ուստի նա կարճ խողովակ չըջնէ պատրոյգի եւ թղթի միացման տեղը, թղթի ծայրը 2-4 միլիմետր դուրսը թողած, այսպէս



պատրոյգի ճեղքի մէջ, ուստի նա տակն է:

Ահա բոլորը Շտաբի ընդունած ամբողջ բունկելիքը (զգապալը):

Անհատի համար անպայման գերադասելի է «Ս. Ռ.»-ների սխտեմը, բայց ոչ բունկելիքի, այլ կեղեւի թիթեղեայ լինելը, որի շնորհիւ կարելի է դառնում նիւթի մեծ քանակութիւն գործածել, թողնելով խնձորի ծաւալը նոյնը: Եւ եթէ նրանք իրանց նիւթով եւ իրանց չափերով թիթեղեայ ամանին յարմարեցնեն այդ պարզ զգապալը, աւելի ազատ կարող են նետել եւ աւելի հեռուն եւ մեծ թափով քան կարելի է այդ անել նրանց բարդ եւ քնքոյշ ապակեայ զգապալով եւ որ գլխաւորն է, «դըժբախտ» դէպքեր այնքան չեն ունենալ:

Աւտոմատ գլխարկները, այն ձեւով ինչպէս մերիններն են, անապահով են եւ վտանգաւոր: 1. Կարող են [օսնչկա]44ա տալ 2. Կարող են ժամանակից առաջ պայթել, կարելի է դրանց գործածել, եթէ բարեփոխուեն, որպիսին եւ կարելի է:

Միայն այդ փորձերի վերայ հիմնուած չէ որ այդ ատում եմ, այլ բազմաթիւ փորձեր առանց փոշու [խալաստոյ]44ա արել եմ դրանից առաջ եւ յետոյ սենեակումս, դաշտում: 10 անգամից 2ը-3ը «փրատ է» գալիս եւ կամ վաղաժամ է պայթում: Մի անգամ բամբակն է հաւաքուում, ոլորում մեքենայի վինտը պտտցնելիս իւր գոգի մէջ, միւս անգամ- կապսիւլն է վայր ընկնում, եր-

րորդին — փոշին է շատ լինում ու միանգամից բռնկում է եւ կամ զսպանակը յետ քաշելիս, ձեռից դա պոկ է գալիս եւ անսպասելի իջնում եւ պայթեցնում: Մի անգամ սենեակումս այդ կերպ պայթեց կապսիւլը... Շատ վախեցայ թէ բոլոր սենեակներից պիտի թափուեն հարցնելու պայթիւնի պատճառը. բայց բարեբախտաբար, ճաշի ժամանակ լինելով, դրացիները դուրս էին: Մահճակալիս տակը յատակը ծակուեց. բարեբախտաբար ինձ ոչինչ չարեց:

Բայց իմ փորձերը թողած մի կողմ, մենք ունենք անմոռանալի մտայլ ապացոյց մասնագէտ սպաների (նըրանցից մէկը սովորել է եւ աշխատել կրոնշտատի արտելերական45 բաժնում) յայտնած բացասական կարծիքներն ապացուցանող՝ [օսնչկա]44ա եւ վաղաժամ պայթումը: Ադէտի օրը երկու ուղմբ է նետուած, երկուսն էլ «փայլուն» ապացոյցներ են՝ մէկը «փրատ» գալու, [տոլչկի]-ի44բ միւսը «վաղաժամ» բռնկումի: Յայտնի է, որ էդուարդին առաջին անգամ նետածը չէ պայթել, երկրորդ նետածը պայթել է «վաղաժամ»:

Հետեւապէս այդպիսի աւտոմատներին անապահով լինելու ապացոյցները աւել քան շատ են ուրեմն եւ մեր ձեռնարկի համար անպէտք այն ձեւով, ինչ ձեւով որ կան այժմ:

Բայց այդ չի խանգարէ, շարունակելով փորձերը, նոյնիսկ գործարարութիւններ անելով թիթեւ ձեռնարկների մէջ, աստիճանաբար կատարելագործել այդ սխտեմը, հասցնելով նրան ցանկալի դրութեան. այն է, որ [օսնչկա]-ն44ա վերանայ եւ վերանայ վաղաժամ պայթումը: Այն ժամանակ միայն նա կը ստանայ ահագին նշանակութիւն: Իսկ այդ, ի հարկէ, մեր սպասելու կարողութիւնից դուրս է:

Դա ուրիշների գործ է, Բալկ. Կ. Կոմ.-ի գործը, որը յարմարութիւն ունի շարունակելու փորձերը եւ ընդ- [հանուր] կազմակերպութեան՝ պէտքերի համար մշակել մի անվրէպ ձեւ:

Այդ նպատակով Յ. մ[արմն]ի կողմից 200 Ֆր. տրուեց Անտոնին շարունակելու մշակել նոր կանոնաւորումներ. նա արդէն շատ առաջ է գնացել եւ մի նմուշ աւտոմատ հասցրեց իմ դուրս գալուն, որը հներից շատ լաւ է, աւելի մշակուած եւ աւելի մաքուր: Ի հարկէ մենք սպասելու չենք այդ բարենորոգումներին. դրանք ընդհանուր պէտքերի համար թող շարունակեն մշակել:

44ա.- ԲՈՒԱՊԻՆ մէջ ռուսերէն՝ պարապ, փրատ տալ:  
44բ.- ԲՈՒԱՊԻՆ մէջ ռուսերէն՝ քոնկում:  
45.- Գրետամիի (թմրամոքածի):

Բ 2.- ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Յուցականի քրթածարին մէջ գտնուող այս գրութիւնը Մաֆայի ձեռագրով, շունի խորագիր, բուսական եւ ստորագրութիւն, հաւանաբար մաւ պակասաւոր է. քերես քերթ մը կամ աւելի կորսուած ըլլալ: Գրուած է Քրիստափորի մահէն ետք, կար Յուց. մարմնի գլուխ անցաւ Մաֆոն: Դատելով բովանդակութիւնէն, որ բացատրութիւն մըն է, թէ ինչու իրաժարած են Մուլթանին մահափորձը ձեռնառումներով իրագործելու ծրագրէն եւ կեղոնացած միայն «դժոխային կտորին» վրայ, կ'ենթադրենք թէ ան մաս կը կազմէ Մաֆայի կողմէ Արեւմտեան Բիւրոյին դրկուած գեկուցագրերուն: Ըստ այնմ ալ, յարձաքը հոս՝ ռումբերու փորձարկման աւարտին տեղադրել զայն:

Ահա այդ պատճառները՝

1) Երկուսի իրարու ներդաշնակելու դժուարութիւնը, նոյնիսկ անհնարին լինելը:

2) Խնձորաւորների ապացուցուած անվստահելի լինելը:

3) Խնձորաւորների թուի եւ որակի պակաս կողմերը:

4) Դրամարկղի մեծ ոյժը, ուղղակի հսկայական, 3-400 խնձորի ոյժ ներկայացնելը ստիպեցին կանգ առնել վերջինի վրայ միայն եւ հեռացնել ձեռնարկի այն բարդ կողմերը, որոնք կարող են այս կամ այն կերպ խանգարել գլխաւոր գործօնին, դրամարկղին: Գայով դրամարկղին, մեծ հոգս էր պատճառում մեզ նրան կրակ տալու ձեւը:

Պատրոյգների գործածութիւնը, պատրոյգի բունկեցնելու անապահով մեքենաները, նրա ծուխը, ձայնը եւ եթէ արագավառ պատրոյգ դնելու լինինք, նրա աւելի եւս դժուար կրակ առնելը, հարկաւոր է նրա գլխին դանդաղավառ պատրոյգ կապել, ապա թէ ոչ ինքը մեծակ շատ դժուարութեամբ է կրակ առնում եւ դժուար է պատրոյգի չափը վստահօրէն վայրկեանների չափին յարմարեցնել՝ միեւնոյն պատրոյգը, նայելով նոյնիսկ եղանակին, նոյն արագութեամբ չի վառուում: Փորձերը ցոյց տուին, որ նոյն պատրոյգի հատուածները 10 սանտիմետր վառուում է երբեմն 8 վայրկեանում երբեմն 14 վայրկեանում... Իսկ մեզ վայրկեաններ են պէտք. 5-8 վայրկեան ուշանալը կամ առաջ անցնելը աղիտաբեր կարող է լինել: Միւս կողմից էլլէն-Ռուբինայի գտած գլխարկ-մեքենաները, որոնք այժմ աւելի կատարելագործուած ունինք, չեն հասած դարձեալ անվրէպութեան, թէ ծծմային թթուատով եւ թէ փոքրիկ կապսիւլներով. երբեմն երբեմն դարձեալ կարող են ճանապարհին, դեռ ժամանակից առաջ կրակ տալ...

Ահա այդ ծանր, խիստ ծանր դրութիւնից հանեց մեզ եւ ազատ շունչ քաշել տուեց երբ վերջապէս յաջողուեց դէն քցել եւ դաւաճան մեքենայ-գլխարկները եւ կապ-


րիզ պատրոյգները, շնորհիւ երկտրական հոսանքի, որը խաբել չգիտէ եւ որը մի վայրկեան էլ սուտ չի իջուի: Այդ գիւտին պարտական ենք մենք ուղեղի ճակատագրական լարման մեծ գործի դիմաց, երբ գգոււմ է մարդ պակաս կողմը եւ ընկղմուում է այդ պակասը լրացնելու ծանր հոգսերի մէջ: Հոգսի ծանրութիւնն էր, որ ուժեղացրեց մտածելու ոյժը եւ ել[ը]-ճանապարհ ցոյց տուեց46:

Ահա թէ ինչպէս է կատարուելու գործը: Դրամարկղը կողքի տակ ունի արկղ, մասնաւոր պատուիրուած վիեննայում, 13 կիլո նիւթ: Իջեցնում ենք երկաթէ արկղ, որի առաջին (ձիերի կողմի) եւ աջ պատերը 3 միլիմետր հաստութեան երկաթից է, իսկ միւս կողմերինը 5 միլիմետր, որպէսզի ոյժը ուղղութիւն ստանայ դէպի թոյլ պատերի կողմը, դէպի Նժոյգը: Բացի այդ պատերից, առաջին երկու պատերին քիփ, նրանց երեսին շարում ենք երկաթեայ տափակ ձողեր մէկ կողմից ահօսներ ունեցող: Ձողերի լայնութիւնը 2 սանտիմետր, ահօսներն էլ իրարից 2 սանտ. հեռու, այնպէս որ կտորուելիս կը ստանանք 850 երկաթի կտորներ իւրաքանչիւրը չորս քառակուսի սանտ. մակերեսովով եւ 3 միլիմետր հաստութեան: Այդ ձողերը կանգնած դրութեամբ պահելու համար անմիջապէս իջեցնում ենք ուղղահայեայ մէկ-երկու թերթ թիթեղ (ժեստ) եւ ապա լցնում նիւթը: Թէ սնտուկի երկաթէ պատերը, որոնք կը տան առնուազն 340 խոշոր բեկորներ, թէ ձողերը — 100 կտոր — կ'ունենանք 1000-1200 ուժեղ կտորներ Նժոյգի ուղղութեամբ: Բացի այդ, դրամարկղից դուրս, կառապանի ոտների տակ, ձիերի գարու տոպրակների մէջ կը դնենք 5-8 խնձորներ հներից, փշաւոր, մէջերը նիւթ լցրած եւ կապսիւլներ դրուած, որոնք նոյնպէս կը նետուին եւ կը պայթին...

46.- Ընդգծուած պարբերութիւնը ջնջուած է ձեռագրին մէջ:



Իսկ նիւթի ոյժը 120-130 կիլո: Ահա մեր գէնքը, որը կարծում ենք աւելի քան բաւական է ներգործելու 15-25-30 մետրի վերայ: Յաջող դէպքում կարող է լինել եւ 10 մետր միայն մինչեւ Նժոյգը: Արկղը լցնելու ենք խիստ պինդ եւ ուղիղ կենտրոնում դնելու ենք բարակ թիթեղեայ արկղի մէջ (չորս կողմից — բացի վերեւից — ծակածակուած) հազար գրամ սնդիկ (կապսիւլներ 388 հատ) իւրաքանչիւրը 2-3-4 գրամուց: Այդ զապալը պիտի ունենայ ճիշդ դրամարկղի մանրանկարը եւ ոչ կլոր կամ գլանաձեւ, որպէսզի հասած լինինք իսկական կենտրոնում տեղաւորելու նպատակին — այսպէս եթէ դրամարկղը ասենք մօտաւորապէս այս ձեւն ունի, զապալն էլ կ'ունենայ



նոյն ձեւը, ի հարկէ փոքր չափով, օր. այսպէս ներսի ամբողջ արկղը կը լցուի 388 կապսիւլ եւ նրանց մէջը երկու ելեկտրական կապսիւլներ, որի ծայրերը կը միանայ մէկ կողմից վայրկենաչափի, միւս կողմից 2-3 ուժեղ Փիլերի (էլեմենտ չոր) հետ, որոնք կը տեղաւորուեն դրամարկղի յետեւը, նստողի կշտին ծածկուած: Բաւական է սեղմել վայրկենաչափի գլխարկը, սլաքը կը սկսէ շարժուիլ եւ ճանապարհին հասնիլ ջրտապերչով(?) անջատուած պղնձէ մեխին, որը զետեղուած է 1 ռոպէ 50 վայրկ-ի վերայ, որը կարելի է դնել եւ մէկ (եթէ հարկաւոր է վայրկենական պայթում) եւ 2, 3 եւայլն մինչեւ 55, 58 — ոչ աւելի — վայրկեան հեռաւորութեան վերայ. առաջ կը գայ այն ինչ որ լինելու է եւ վրիպում — երբեք, ժամանակից առաջ — նոյնպէս ոչ մի դէպքում: Փորձերը եւ ոչ մի շեղում չեն տուել թէեւ սենեակում բազմիցս կրկնած ենք, երկու անգամ էլ դուրսը:

[Տեսնել շրջանակի մէջ առնուած պատկերը]

Այդ եթէ ենթադրենք մի ռոպէ թէ յաղթել ենք բոլոր դժուարութիւնները եւ երկու խնձորաւորներ իրանց տեղը կանգնեցրել, մնում է մի անլուծելի հարց, ինչպէ՞ս ներդաշնակել խնձորի եւ դրամարկղի գործելու վայրկենաները. — միաժամանակ, մաթեմատիք միաժամանակ կատարելը անհնարին է. անպայման մէկը միւսին պէտք է կանխէ մի քանի վայրկեանով, թերեւս եւ ամբողջ ռոպէով:

Խնձորը դրամարկղից վերջ լինել չի կարող, որովհետեւ դրամարկղը կը սրբէ եւ մեր խնձորաւորին իւր ստակալի հրեղէն փոթորիկով. ուրեմն ինքնստինքեան հասկանալի է, որ խնձորը պիտի կանխէ դրամարկղը. այդ դէպքում մենք վտանգած կը լինենք մեր ոյժի գլխաւոր աղբիւրը, դրամարկղը.


ա) Կարող են ձիւրը խրտնել խնձորի ձայնից եւ մի կողմ նետուել, գլորել դրամարկղը եւայլն:

բ) Կարող է պատահաբար վիրաւորուել կառապանը կամ .....<sup>47</sup> եւ այդպիսով զոհ գնալ գլխաւորը երկրորդականին:

գ) Նոյն խնձորի ձայնից, եթէ Նժոյգը չընկաւ եւ դրամարկղը ուշացաւ, արաբական ձիւրը խրտնած երկու թուրիչով կ'անցնին մեր հարուածի հորիզոնից (քանի որ վերադարձին ենք կատարելու):

Եւ վերջապէս մի խոշոր կէտ եւս, որը աւելի եւս թէական է դարձնում երկուսի լծորդութիւնը, այդ այն է, որ բացի Փիլիքապէս անհնարին լինելուց ճիշդ միաժամանակ կատարել երկու գործը, որոնք՝ այսինքն խնձորաւորն ու գանձապահը գտնուելու են իրարից հեռու, կարող են իրարու չտեսնել: Անպատճառ իրարու տեսնելու դիրք բռնելը անհնարին է, դա կախուած է մի շարք անկախ եւ անյաղթելի պատճառներից: Այդպիսի

վայրկենաչափի թուատախտակը ի հարկէ 60 վայրկեանների է բաժանուած եւ մի շրջանը 60 վայրկեանից աւելի չի կարող լինել. իսկ մեզ չէ որ 1 ռ. 53 վայրկեան է պէտք. ուստի վայրկենաչափը տուինք ժամագործին շինելու եւ նա շինեց այնպէս, որ մի շրջանը հաւասար է ուղիղ երկու ռոպէի, 120 վայրկեանի, իսկ մեզ պէտք էր միայն 110 վայրկ.: Ուրեմն մեխը դնում ենք մենք 10 վայրկեան առաջ, այսպէս. երբ Բ զապանակը սեղմենք կը սկսէ վայրկենա-



չափը աշխատել եւ երբ 0 սլաքի ծայրը հասնի ա վինտի ու ծայրին առաջ կը գայ մի .....<sup>47</sup> վինտը ջրտապերչի(?) խողովակի մէջ է գետեղուած:

Սլաքը կը հասնի մեխին ուղիղ մի ռոպէ 50 վայրկեան վերջը, քանի որ ամբողջ շրջանը երկու ռոպէ է անում:

դրութեան նրանք ճիշտ նոյն վայրկենին գործել չեն կարող: Եթէ, ասենք, վերցրած լինին երկու միատեսակ, ստուգուած ժամացոյցներ ու պայմանաւորուած, այսինքն որոշ վայրկենի գործել, այդ վայրկեանը կարող է

47.- Անղնթեմնի քառ

բոլորովին անձեռնտու վայրկեան լինել, կարող է Նժոյգը այդ վայրկեանին լինել իւր տանը կամ հեռուն, կամ անցած իւր ախոռը եւայլն:

Յետոյ եւս մի խոշոր կէտ, որ մենք սկզբից չէինք աչքի առաջ ունեցել՝ «Թողնել մանրամասնութիւնները ապագային» ասելով եւ դրամարկղի վերայ իբրեւ լիւքսի նայելով, այդ այն է, որ առաջուց չենք կարող երաշխաւորել, թէ դրամարկղը այս ինչ օրը պիտի կարողանայ արդեօ՞ք իւր որոշած դիրքը բռնել: Փորձերը եւ հետախուզութիւնները ցոյց տուին, որ ամէն անգամ չի կարելի դրամարկղը կանգնեցնել մեր ցանկացած տեղում: Դրանից պարզ է, որ այդ դէպքում ստիպուած ենք վերադառնալու տուն, յետաձգելով գործը հետեւեալ շաբթուայ: Իսկ ի՞նչ անէ այդ դէպքում, որը աւելի քան հաւանական է, խնձորաւորը: Նոքա էլ պիտի ի հարկէ վերադառնան: Բայց այդ նշանակում է, թէ այլեւս նրանք անպէտքացան պաւիլիոնի համար. երկու անգամ միեւնոյն մարդիկ պարզ է որ չեն ստանալ թոյլտուութիւն այնտեղ գնալու եւ այն էլ իսկոյն հետեւեալ շաբթ:

ա) Համարեա՞նք անհաշտ պայմաններ, անկարելի անցկացնելու համար տասնեակ աչքերից, որոնց գործն է եւ մասնագիտութիւնը որսկանի դեր կատարել (նոյնիսկ հովանոց կամ ձեռնափայտ ձեռիցը վերցնում են), ուրեմն պէտք է նա աննկատելի լինի բոլորովին կամ գրպանում, կամ ուսնոցի տակ եւ կամ կանանց շորերի մէջ եւ միեւնոյն ժամանակ դիւրութիւն ունենաս ուզած վայրկենիդ ձեռքիդ եւ հետեւեալ ակնթարթին արդէն օդի մէջ լինելու պայմանաւ:

բ) Հարկաւոր է, որ նա աւտոմատ բռնկելիք ունենայ, որը անվրէպ լինի:

գ) Որ միեւնոյն ժամանակ այնքան դիւրաբեկ կամ դիւրագորգիւ չլինի, որ երկար եւ խորտուբորտ ճանապահին (պարտաւորեցուցիչ կառքով) ցնցումներից պայթի եւ կամ ձեռքի թափից — (10-15 քայլ նետելու թափ):

եւ դ) Այնքան ուժեղ բեկորներ տայ եւ հաւասար չորս կողմը, որ չվիպի նպատակից, եւ դիպչելիս էլ կարողանայ յաղթել ուժեղ դիմադրութիւններ, լինելով ինքը փոքր ծաւալի, հետեւապէս եւ քիչ նիւթով: Այդ պայմաններից վերջինին, կարելի է ասել, արդէն հասած [ենք]: Սակայն դժբախտաբար ամենաէական առաջին պայմանը, որ «իբրստ» գալ չունենայ, դեռ կարելի չեղաւ հասնել: 5-10 փորձից 1-2 փրստ է գալիս, երբեմն եւ աւելին (օրինակ իմ փորձերից տասից 3-4ր):

Յետոյ ապացուցուեց բազմիցս, որ եթէ պատրոյգը երկար եւ վերցնում, խնձորը ընկնելուց վերջը դեռ 3-4 վայրկեան ծխում է եւ առանց պայթելու, հետեւապէս ժամանակ է տալիս իրանից խոյս տալու: Իսկ կարճացրածները ունեցան աղիտալի հետեւանք, ձեռքի մէջ պայթելով:

48.- Յայտնաբար պակտող թերթ մը կայ, որովհետեւ վերը կը խօսուէր կառքի պայթումն ու ունեւորութիւնը միաժամանակ կատարելու անհնարութեան մասին, մինչդեռ մեր թերթով սկսող էջին մէջ կը թուէ ձեռնառութեղ գործողութեան վայրը փոխադրելու դժուարութիւններուն մասին: Յամենայն դէպս մէկն միւսին անցումը բնական չի թուիր:

### Ք 3. – ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ՍԿՍԱԾ ԴԵԿՏԵՄԲ 1ԻՑ 1904 ԹԻԻ

Դրսի մեր ընկերների (Սարգիս, Կարո, Լեւոն) կատարած փորձերը երբ դրական հետեւանքի չհասան, իսկ ամիսներն անցնում էին այդ սպասողութեան մէջ (Սեպտեմբերի կէսից սկսած), որոշուեց ուղարկել մեզանից մէկին ա) դեկավարելու եւ շտապեցնելու փորձերը, բ) մասնագէտներին հետ խորհրդակցելու «դրամարկդի» (կառքի) մասին — նրա ոյժի, լցնելու ձեւի մասին եւ այլն եւ գ) եթէ տեղումս դրամարկդ չաջողուի ձեռք բերել, Պարիզում կամ Վիեննայում մասնաւոր յարմար դրամարկդ պատուիրել: Այդ նպատակով ընտրուեց էլլէնը, իբրեւ Ֆրանսերէն խօսող եւ բարեկամների լայն շրջան ունեցող եւ նա նոյն ամսի (Դեկտեմբեր) Աին ուղեւորւեց իւր «աղջկայ», Ռուբինայի հետ Բոլղարիա:

էլլէնի դուրս գալու նախընթաց օրը լուր առինք, որ դրսի մեր ընկերները Վառնայում բանտարկուել են: Բոլղարիայից Աթէնք Տրիեստի վերայով: էլլէնը դեռ ճանապարհից նամակով յետ է կանչում իրա մօտ Սարգիսին, որը իսկոյն վերադառնում է Ֆրիլպպէ եւ այնտեղ միասին շարունակում են փորձերը: էլլէնը, Ռուբինան, Սարգիսը, խիստ ժրջան աջակցութեամբ Անտոն Գօշի, որը, չպէտք է մոռանալ ասելու, որ Յուլց. մարմնի դրսի պատրաստութիւնների եւ փորձերի եւ պատէշների օգնական է եղել եւ ժրջան ու մտահոգ օժանդակ ընկեր:

Աթէնքից Կարոն մեր հրաւերով վերջապէս մտնում է Լիս Յունուարի վերջերին 905 թ., Լեւոն Գիւլումեանը մեր որոշման համաձայն անցնում է Ոսկեհանք իբրեւ գործադիր մարմնի անդամ իսկ Լեւոն II-ը ազատ է կացուցւում Յուլց. մարմնի գործերից եւ ցաւ ի սիրտ վերադառնում է Կովկաս: Վերջինի հեռացնելու ուրիշ պատճառ չենք ունեցել, քան այն, որ արդէն գործի համար անհրաժեշտ համարուած թուով ընկերներ ունէինք Լիսում եւ Լեւոնը, որքան էլ վստահ էինք նրա պատրաստականութեանը, եւ քաջութեանը, շնորհիւ լեզու չիմանալուն եւ անլեզալ լինելուն, չէր կարող խնձորաւոր լինել, իսկ դրամարկդի համար կառապան արդէն ունէինք Ջարեհը, որը Լիսում էր գտնուում:

էլլէնը, Ռուբինան եւ Սարգիսը, ժրջան օգնու-

թեամբ Ա. Գօշի եւ բոլղ. Կ. Կոմ. միւս ընկերների (Պիոն, Երուանդ եւ այլն) սկսեցին խնձորների փորձերի: Այստեղ պէտք է ասած փակագծի մէջ, որ էլլէնը դրժեց իւր տուած խօսքը Ռուբինայի վերաբերութեամբ: Բանը նրանումն է, որ Յուլց. մարմնի վերջին նիստում, երբ որոշուեց էլլէնի գնալը, ընկերները հակառակ էին Ռուբինայի գնալուն այն մտքով, թէ Բոլղարիայում կարող է նրա հետ միասին նկատուել Ռուբինան եւ այդպիսով էլ բացուի մեր մարմնի մէջ կանանց մասնակցութիւն ունենալը, կանանց, որոնք ծածկուելու եւ աչքի չընկնելու կողմից մեծապէս մեզ նպաստել են եւ դեռ մեծ դեր ունին կատարելու ապագայում: էլլէնը համաձայնութեամբ այդ պատճառաբանութեան հետ, խոստացաւ սակայն որ Ռուբինային Ֆրիլպպէ չի պահի, այլ ուղղակի Բերլին կ'ուղարկէ նրա քրոջ մօտ եւ միայն երբ վերադառնալու լինի կը կանչէ միասին Լիս մտնելու: Բայց իրականապէս Ռուբինային նա պահել է մինչեւ վերջը իւր մօտ: Նա մասնակցել է նաեւ փորձերին:

Որպէսզի հասկանալի լինի թէ ի՞նչ փորձեր էր պէտք մեզ կատարելու եւ ինչ նպատակի էինք ձգտում, հարկաւոր է ի նկատի առնել այն պայմանները, որի մէջ պէտք էր մեզ կատարել մեր «գործը»:

Նոյնմբերին միայն վերջապէս ձեռք քաշեցինք «տարեկան»ից եւ կանգ առանք վերջնականապէս շաբաթականի վերայ<sup>49</sup>: Շաբաթականը որոշուած էր կատարել երկու գործօններով՝ խնձորներ Յից մինչեւ 4 — ծայրայեղ դէպքում միայն: Յամենայնդէպս չորսից ոչ պակաս:

Իբրեւ գլխաւոր դերակատար եւ կառք — իբրեւ երկրորդական գործօն, որի վերայ նայողներ կային իբրեւ շուքի, «լիւքս»ի վերայ: Խնձորաւորները պէտք է անցնէին մի շարք հսկող աչքերի առաջից պաւլիտոն դեսպանութիւնների երաշխաւորութեամբ եւ վերջինների կաւազների առաջնորդութեամբ: Կանգնած տեղում էլ առաջից եւ յետեւից ունենալով աչալուրջ հսկողներ, պարզ է, որ այդպիսի բացառիկ պայմանների մէջ հար-

49. «Տարեկանը» եւ «շաբաթականը» Սուլթան Գամիտի դէմ ծրագրուած մահափորձին երկու տարբեր ընտրանքներուն Յուլցականի կողմէ տրուած ամուլներն են: Տարեկանը կը վերաբերուի տարին անգամ մը՝ Ոսմատանի տօնին, Սուլթանին թոփ Գափուի Սերայը այցելութեան ընթացքին մահափորձը գործադրելուն, իսկ Շաբաթականը ամէն Ուրբաթ կէսօրին աղօթելու համար Սուլթանին պալատական սզկիթ երթալուն, այլ խօսքով՝ Սելամըքի արարողութեան ժամանակ:

կաւոր էր ունենալ բացառիկ ապահով խնձորներ՝

- ա) Փոքր, բայց ուժեղ:
  - բ) Անվրէպ անպայման, այսինքն «փրստ» չգալող:
  - գ) Ապահովուած վաղաժամ պայթումից ճանապարհին կամ նետելիս:
  - դ) Անպայման աւտոմատ կրակատու, որովհետեւ այնտեղ չի կարելի ծխել կամ լուցկի վառել:
- Ահա թէ փորձերը ինչ ուղղութեամբ պէտք է տարւէին: էլլէնը եւ Ռուբինան երկար աշխատելուց, նախապատրաստութիւններից վերջը կատարում են առաջին փորձերը Ֆրիլպպէից երկու ժամ երկաթուղով թաթարաբազարչիկ գիւղում եւ ըստ երեւոյթին բաւարար հետեւանքի չեն հասնում: Այդ փորձերին զանազան տեսակների խնձորներ փորձում են եւ պայթեցնում 14 հատ: «փրստ»եր եղել են 2-3 հատ: Միայն առաջին կէտի վերաբերութեամբ, այն է բեկորների խիստ մանրութեան պատճառով:

Երկրորդ փորձերը, որոնք այնքան աղէտալի վերջացան, տեղի են ունեցել Սոֆիայի արուարձան Կնեստեւից քիչ հեռու, Այվազեանի լուացարանի գործարանից 1 կիլոմետր բարձր սարալանջում: Այդ վերջին փորձերը պարզապէս ապացուցեցին թէ գոնէ վաղաժամ պայթելու կողմից դեռ չենք հասած ցանկացած ապահովութեան: Բայց առաջ քան այդ չարագուշակ եւ խորհրդաւոր փորձերին գալը, որին գոհ գնացին Վառնայում եւ էլլէնը, հարկաւոր է այստեղ յիշել, որ մինչ Ֆրիլպպէում էլլէնը եւ Լիսում մնացած ընկերները անհամբեր սպասում էինք փորձերի վախճանին, որպէսզի գործի ձեռնարկենք, երեւեցաւ Լիսում թժ. Զ.ն<sup>50</sup> իւր մասնաւոր առաքելութեամբ որը աղաչում պաղատում էր, թէ առանց ամչնալու մասնագէտի հետ խորհրդակցելու գործի չձեռնարկել: Նա շուտով վերադարձաւ Պետերբուրգ] եւ խոստացաւ ուղարկել այնտեղից մի մասնագէտ: Մենք գրեցինք էլլէնին, որ հարկաւոր է սպասել այդ մասնագէտներին, քանի որ մենք բոլորս էլ տգէտներ ենք այդ հարցերում: Նա սկզբից հակառակուեց, աւելորդ գտաւ, բայց վերջը համաձայնուեց սպասել մասնագէտին, որից լուր ունէինք, որ նա գտնուած է արդէն եւ շուտով պիտի գայ: Բայց նա եկաւ, երբ արդէն աղէտը տեղի էր ունեցել եւ մեր երկու ընկերները թաղուել էին Սոֆիայում:

Հարկաւոր է յիշել այստեղ, որ այդ մասնագէտը ինչպէս ցոյց տուին հարց ու փորձերը, դուրս եկաւ բոլորովին անտեղեակ մեզ զբաղեցնող գործի նրբութիւններից: Բաւական է յիշել, որ նրա կարծիքով պայթող սնդիկ գտնելու համար ուրիշ ճար չկայ, քան առնել մի քանի հազար փոքրիկ կապսուլներ, հրացանների համար եւ նրանց միջից «զգուշութեամբ» դանակի ծայրով դուրս տալ սնդիկը եւ գործածել:

Դրանից միայն կարելի է եզրակացնել, թէ ինչ տեսակ «մասնագէտ» է եղել այդ մեր սպասածը, թէ եւ [Ապու-

խովսկի]<sup>51</sup> գործարանի քիմիկոս պաշտօնեայի վկայագիրն ունէր: Սակայն դրամականի հարցում — [փողային]<sup>51</sup> — պահանջելու կողմից կարելի էր ասել, որ մասնագէտ էր: Մէկ խօսքով այնքան վատ տպաւորութիւն թողեց, որ անկարելի էր հաւատալ, թէ սա այն մարդն է, որի մասին թժ. Զ.ն այնքան վստահութեամբ էր գրում: Նա պահանջեց եւ ստացաւ մեզանից 300 Փր. վերադարձի համար, թէ եւ ստացած էր 500 Փր. էլ սկզբից, փոխադրած էինք այստեղից Պետերբ.: 150 ռուբ. էլ միջնորդից էր ստացել Զ.-ի եղբորից, Դ.-ից էր վերցրել մօտ հազար Փր. նորից եւ 0.5 ժամ միայն տեսնուելուց վերջը վերադարձաւ «Պարիզի» վրայով համարելով իւր դերը վերջացրած:

Մինչ այս մինչ այն, ստացանք հրաւեր ներկայացուցիչ ուղարկելու առաջիկայ «Խորհրդին»: էլլէնից եւ Ժրնեից ստացանք նամակներ որոնցով առաջարկուում էր ուղարկել իբրեւ ներկայացուցիչ Սարգիսին: Այդ առաջարկները մերժուեցին. նոյն առաջարկը կրկնուեց էլլէնի կողմից եւ նորից Յուլց. մարմնի չորս անդամները նորից մերժեցին Սարգիսին ներկայացուցչի դեր տալ, քանի որ նրա հայեացքները ընդհանուր գործի վերաբերութեամբ բոլորովին հակառակ էին Յուլց. ընկերների ունեցած կարծիքներին: Վերջը այդպէս էլ դուրս եկաւ: Որոշեցինք գրաւոր ուղարկել մեր կարծիքը, երբ Սաֆոն, որը ընտրուեց մասնակցելու Խորհրդի նիստերին, հրաժարուեց գնալու Ժրնե: Բայց այնտեղից նամակներով եւ հեռագրերով խնդրում եւ պահանջում էին անպատճառ ներկայացուցիչ ուղարկել: «Հակառակ դէպքում — գրում էին — Խորհուրդը չի կարող տեղի ունենալ անդամների օրինաւոր թիւը չլինելու պատճառով»: Այդպիսի դրութեան առաջ որոշուեց իբրեւ ներկայացուցիչ ուղարկել ընկեր Շապուհը գրաւոր մեր տեղեկագրի հետ միասին:

Դեռ Շապուհը չէր գնացել, երբ տեղի ունեցան մի քանի բնորոշ միջադէպեր:

Նախկին որոշումների համաձայն, խնձորաւորների մէջ պէտք է գտնուէր նաեւ էլլէնը: Ունէինք մտքած «զանազան անակնկալների» համար եւս մի կէտ արձանագրութեան մէջ, այն է, որ բոլորը յիշեալ խնձորաւորներից եթէ ոեւէ մէկը չգտնուի որոշ ժամին, որոշ օրը իւր պաշտօնի գլուխը, նա պիտի համարուի գործից փախած, ինչ պատճառ էլ որ նա վերջը առաջ կը բերէ, բացի երկու հետեւեալ պատճառներից — մահ կամ բանտարկութիւն: Ինչ ինչ պատճառներով այդ յաւելուածը անհրաժեշտ էր նկատուել մտցնելու արձանագրութեան մէջ:

Թէ ինչպէս պատահեց, որ մեր այդ արձանագրութեան եւ էլլէնին խնձորաւորների մէջ նշանակուած լի-

50.- Թժ. Յակոբ Զաւրեան:  
51.- Բնագրին մէջ ռուսատառ:

նելու լուրը, հասել էր դրսի ընկեր Սարգիսին, երբ նա դեռ Աթէնք էր, ստացանք նրանից առաջարկ, թէ նա Սարգիսը ցանկութիւն է յայտնում էլլէնին փոխարինելու վերջին օրը: Մենք նրան պատասխանեցինք, թէ այդ էլլէնի գործն է, թող նրա հետ համաձայնութեան գայ անձամբ, մենք ոչինչ չունենք, եւ մեզ իրաւունք չենք համարում բացակայ ընկերոջ գործին մասնակցելու հարցը անկախ իւր ցանկութիւնից որոշելու: Սարգիսը արդէն Ֆրիլպպէ էր, էլլէնի վերադառնալու օրերը մօտենում էին: Ահա նորից ստացանք նամակ, այս անգամ ակելի երկար, որով նա աշխատում էր ապացուցանել, թէ էլլէնի պէս հոգեւոր բազուկները, ուժեղ անձնաւորութիւնները չպիտի տանել մահուան, թէ նրան պէտք է խնայել այն, եւ նա առաջարկում էր մեզ պաշտօնապէս գրել էլլէնին եւ պահանջել, որ նա չմասնակցէ, որ մենք նրան ազատ ենք կացուցանում այդ գործին վերջին վճարողական օրը մասնակցելուց եւ թէ թող մի ուրիշը նրան փոխարինէ: Նամակի վերջում Սարգիսը ակելացրել էր, թէ ինքը իրան ակելի ընդունակ եւ օգտակար է գտնում Շամիր՝ շրջանի համար:

Այդպիսով, նամակի սկզբում վճարողական կերպով յայտնելով թէ ինքը ուզում է փոխարինել էլլէնին, նամակի կիսում առաջարկելով մեզ էլլէնին ուղարկել պաշտօնական գրութիւն, «օգնել իրան համոզելու էլլէնին», ինչպէս է նրա իսկական ոճը, որպէս էլլէնը համաձայնի յետ կենալ իւր դերը տալով... մի ուրիշին (եւ ոչ Սարգիսին):

Իսկ նամակի վերջում, Սարգիսը չի մոռանում յիշելու որ ինքը՝ Սարգիսը իրան յարմար եւ օգտակար է համարում Երկրի համար, Շամիր համար: Նամակի այդպիսի միտք վերջապահութիւնը այն ժամանակ մեզ խիստ զարմացրեց եւ հանելուկ էր թւում: Մէկ կողմից ասել թէ եւ ուզում եմ էլլէնին փոխարինել, միեւնոյն նամակում յայտնել թէ եւ ինձ օգտակար եմ համարում Շամիր համար: Այդ հանելուկը պարզուեց քիչ վերջը: Այսպէս թէ այնպէս նրան տրուեց դարձեալ մերժողական պատասխան, յայտնելով, որ մենք չենք կարող նրան ուրիշ կերպ օգնել այդ հարցում, բացի այն, որ թողնում ենք իրան ու էլլէնին բոլորովին ազատ համաձայնութեան գալու եւ թէ մենք անհատի դերի վրայ պատմութեան մէջ քիչ ուրիշ կերպ ենք նայում քան ինքը, թէ մենք յեղափոխութիւնը չենք նկատում կանգնած կէտ ձկան վերայ, սիւների սկզբունքը տեսնում ենք ժողովրդի մէջ եւ ոչ նրա այս կամ այն գաւազի մէջ եւ թէ այդ վերջինն էլ է ծնունդ նոյն ժողովրդի: Գարիբալդիներ, Սոֆիա Պերովսկաներ վտանգաւոր ձեռնարկներից յետ պահելով չէ որ պատմութիւն է ստեղծւում եւ նոր հերոսներ տալիս, այլ ընդհակառակը եւայլն: Այդ նամակը կազմուած էր միասին, բայց մաքուր արտագրուեց Շապուհի ձեռքով եւ ուղարկուեց հասցէին: Փակագծի մէջ ասած էլլէնը կարդացել է այդ նամակը բայց ոչ ամբողջը, ինչ-

պէս վկայում է Ռուբինան: Մի քանի օրից վերջը ստացանք էլլէնից մի նամակ, որով նա առաջարկում էր իւր հետ բերել մի նոր ընկեր (Կոնստանդին) որը ձուլել գիտէ խնձոր եւ թէ տեղն ու տեղը կարող է ձուլել «նոյնիսկ պարզ սենեակում» — այնքան հեշտ է ձուլելը: Այդ մեզ զարմացրեց քանի որ էլլէնին լաւ յայտնի էր տեղիս խիստ պայմանները, վտանգը եւայլն:

Գրեցինք որ դա անգործնական է, ակելորդ ընկերոջ կարիք չունենք, ինչպէս ինքը այդ գիտէ, իսկ խնձորներ աշատեղ ձուլելը գտնում ենք բոլորովին վտանգաւոր եւ անգործնական: Իսկ Բոլդար(իս) ձուլուած խնձորները ինչպէս նախապէս որոշած էինք, շատ հեշտութեամբ ներս կը մտնէին մեր երեք կանայք իրանց շորերի տակ Յ հատ: էլլէնը նորից կրկնեց իւր առաջարկի մասին, նեղացած էր երեւում մեր մերժումից եւ առաջարկում էր այս անգամ համաձայնուել բերել իւր հետ Կոնստանդինին թէկուզ մի շաբաթով գոնէ, փորձի համար «հակառակ դէպքում ինչպէս կ'ուզէք արէք, կանայք կ'ուղարկէք, ինչ որ անելու էք ինքներդ արէք. եւ չեմ խառնուում»... գրում է վիրաւորուած: Չցանկանալով նրան վիրաւորել, մանաւանդ որ իբրեւ փորձ էր առաջարկւում, միւս կողմից էլ զարմացած, թէ ինչո՞ւ է այդքան պնդում էլլէնը այդ մեզ անծանօթ տղի ներս բերելուն վերայ, — գրեցինք որ չլաւ, թող գայ, միայն չ'ուտ. թող գայ եւ իւր աչքով տեսնի թէ այստեղ սենեակը արհեստանոց դարձնելը որքան դժուար եւ վտանգաւոր է:

Բայց չէր վիճակուած Լիս մտնելու ո՛չ էլլէնին եւ ոչ էլ Կոնստանդինին, որը, ինչպէս վերջերս պարզուեց բուն ցանկութիւն է ունեցել գալու Լիս, էլլէնին փոխարինելու վճարողական ցանկութեամբ:

Այսպիսով պարզուեց Սարգիսի նամակի տարօրինակ վերջաբանը, թէ ինքը իրան վանի համար յարմար է գտնում, ուրեմն փոխարինողը պէտք է լինէր Կոնստանդինը:

Այսպէս թէ այնպէս չի կարելի չգովել Սարգիսի ընկերասիրական ձգտումները ըստ հոլթեան, սակայն նոյնը չի կարելի ասել դժբախտաբար այդ ցանկութիւնը իրականացնելու ձեւի վերաբերութեամբ: Հարկաւոր էր Կոնստանդինին թեկնածութիւնը դնել պարզապէս իբրեւ էլլէնին փոխարինողի եւ ոչ իբրեւ գուտ ձուլիչ արհեստաւորի:

Երկրորդ միջադէպը որը տեղի ունեցաւ Լիսում օժանդակ ընկերների շրջանում այն էր, որ երբ Բոլդարիայի փորձերը ուշացան, ընկերների մէջ սկսեց մի տեսակ «չարժում»... Կարոն, Տիկին Միշէլը եւ Ջահելը առաջարկում էին իրանց մէկ երկու ամսով կամ ըստ առաջիկայ պահանջման թոյլ տալ Հայրենիք վերադառնալու: Սկզբից թոյլ, գնալով այդ հարցը պահանջի ձեւ

52.- Վասպուրականի:

առաւ եւ մենք, որպէսզի բոլորովին չտարածուի այդ «չարժումը» եւ միւս ընկերների վերայ՝ Արամ, Զարեհ, Քրիս եւայլն, ստիպուած էինք նրանցից մէկին՝ Ջահելին արձակուրդ տալ՝ ըստ առաջին հրահրի վերադառնալու պայմանով:


Հարկաւոր է արձանագրել, որ Տիկին Միշէլին ենք պարտական այդ շարժման ծագումը. նա էր որ լաւ գործերի արժանի եռանդով քանիցս աշխատել է մտքեր պղտորել, ինտրիկներ լարել օժանդ. ընկերների մէջ դեռ Աթէնքից սկսած: Ամէնից ակելի աններելի էր արձակուրդի մասին խօսք բանալ Կարոյին, որը ամէնից վերջն էր ներս մտած, դեռ երկու ամիս հազիւ էր անցկացրել Լիսում, մինչդեռ միւսները, օրինակ Ջահելը 8 ամիս, Տիկինը 6 ամիս եւայլն, այն ինչ Կարոն ամէնից շատ էր արձակուրդ խնդրում: Կարոյին մերժուեց արձակուրդը, Ջահելին տրուեց արձակուրդ, ինչպէս ասացինք, իսկ Տիկինի հարցը, քանի որ նրա տանն էր պահած ապրանքը եւ նրա գնալով ապրանքը տեղափոխելու վտանգաւոր հարցն էր զարթնելու, անուշալ դրութեան մէջ էր գտնուում, երբ հեռագիրը ցնցեց ամէնքիս Սոֆիայի մեծ աղէտի լուրը բերելով: Նոյն օրը որոշուեց շտապել Սոֆիա աղէտին տեղը Սաֆոյին իւր «կնոջ» է-միլի հետ

ա) ծանօթանալու աղէտի մանրամասնութեան հետ, նրանից գալիք հետեւանքների հետ, բ) փոխարինելու ընկածներին թէ փորձերի տեսակէտից եւ թէ Խորհրդին մասնակցելու համար: Հետեւեալ օրը Սաֆոն ճանապարհն ընկաւ, բայց առաջ քան դուրս գալը, երբ հաւաքուած էինք բոլորս Սաֆոյի բնակարանում այնտեղ էին եւ Կարոն եւ Տիկին Միշէլը, բոլորիս համաձայնութեամբ առաջարկուեց «արձակուրդ» խնդրող ընկերներին, որ եթէ ուզում են գնալ, թող այս ընկալիս յայտնեն ու ընդմիջտ հեռանան, իսկ եթէ մնալու են, թէկուզ Սաֆոյի վերադարձը, փորձերը մի տարի էլ տեւէ, նրանք ձայն ծպտուն պիտի չհանեն եւ անվրդով պիտի սպասեն թէկուզ եւս մի ամբողջ տարի: Երկուսն էլ «ազնիւ խօսք տուին» այլեւս եւ ոչ մի բառ արձակուրդի մասին առաջ չբերել: Որպէսզի վերջացրած լինինք այս հարցի մասին, մնում է ակելացնել, որ նրանք իրանց խօսքը չպահեցին եւ մի ամիս հազիւ էր անցել, երբ երկուսն էլ «արձակուրդ ստացան» եւ հայրենիք վերադարձան: Այդ «արձակուրդի» շնորհիւ կատարուեց մի վերին «աստիճանի» վտանգաւոր եւ դատապարտելի գործ. ապրանքը տեղափոխուեց Գրինի բնակարանը, այն Գրինի, որի անցազրով անցել էր Շապուհը, որի անունով նա սպանուել էր փորձերի ժամանակ եւ որի անունով թաղուել էր: Բոլդարիայի եւ օտար թերթերի մէջ Գրինի խկական անուն ազգանունը քանիցս կրկնուում էր: Սոֆիայի տաճկ. հիւպատոսը հարցապնդում էր անում բոլորը. կառ[ավարութեան] իմանալու համար սպանւածների իսկական ու, որտեղացի լինելները եւն: Լի-

սում, այն հիմնարկութեան մէջ, ուր Գրինն է ծառայում, բոլոր ծառայակիցները, սկսած դիրեկտորից, բոլորն էլ կասկածում էին որ Շապուհի Լիսից դուրս գալը Գրինի ձեռքով է սարքուած (նոյն հիմնարկութեան մէջ էր ծառայում եւ Շապուհը եւ ամէնքին յայտնի էր նրանց խիստ մտերմութիւնը). ահա այդպիսի վտանգաւոր ընկալիս երբ ամէն օր սպասելու էր Գրինի բանտարկութիւնը, մի այդպիսի ժամանակ մեր ապրանքները տեղափոխուում են Աշոտի եւ Տիկին Միշէլի ցանկութեան համաձայն բոլորովին ապահով տեղից Գրինի բնակարանը: Այն հանգամանքը, որ ինչ որ հրաշքով թէ տաճ. կառ[ավարութեան] ագենտների անհասկանալի ապշուած շնորհիւ մինչեւ այժմս չեն խուզարկած Գրինին՝ ոչ մի չափով չի կարող արդարացնել կատարուած այդ քստմանի փոխադրութիւնը: (Այժմ ապրանքը փոխադրուած է Գրինի մօտից ուրիշ տեղ. Գրինի բնակարանը մաքուր է այժմ):

Գանք այժմ Սոֆիայի մէջ տեղի ունեցած աղէտին մանրամասնութեանը: Շապուհը ճանապարհին (գնում էր Խորհրդին մասնակցելու) հանդիպում է էլլէնին Սոֆիայում: Թէեւ շատ շտապում էր ժրնեւ, ժրնեցիք անհամբեր սպասում էին մեր ներկայացուցչին, որ նիստերն սկսեն — մի ամսի չափ այնտեղ հաւաքուած պատգամաւորները սպասում էին, ինչպէս ասացինք արդէն իրեն:

էլլէնը Շապուհին պահում է Սոֆիայում երկու օր, որպէսզի մասնակից անել տայ իւր երկրորդ փորձերին: Փորձերը, որի հետեւանքները արդէն յայտնի են, տեղի են ունենում կենսաօրով մի այնպիսի տեղում, որի ուրուագիծը այստեղ առաջ ենք բերում



Խնձոր նետողը՝ Շապուհը, կանգնած է ա կէտում ծառի ճիւղերից բռնած: Նա մի ձեռքով բռնած է ճիւղերից, որպէսզի ներքեւ չգործուի. ձորակը թեք է, միւս ձեռքով (աջով) բռնած է խնձորը. էլլէնը, Ռուբինան, Լիպպով, Կոնստ. եւ 8-10 հոգի ուրիշներ. ձորակի ստորոտում բ. բ) կէտերում նստած պառկած են: Ձորակի խորութիւնը [ուղիղ գծով] 7 (եթէ մետր է) դ - բ = 7 մետր ուղղահայեաց գծով բ - գ = 5 մետր: Շապուհը նետում է առաջին խնձորը, «կիտտ» է տալիս, չի տրաքում:



Վերցնում են նոյն խնձորը երկար պատրոյգով եւ դնում են շրջանի մէջ եւ վառում: Դարձեալ ամէնքը ներքեւում, ձորակի ստորոտում են լինում, բացի Շապուհից եւ Լեապովից, որոնք բարձրը, ծառի մօտ են նստում: Մի քանի հողակոյտեր դիպչում են Շապուհի թեւին եւ Լեապովին: Երկրորդ խնձորը լցուած է. Շապուհն է դարձեալ նետողը: Խնձորը ծծմբաթթուատի սրուակով է. պատրոյգի երկարութիւնը 2.5 [ս.] մետր (կէս [ս.] մետրը կոնստանդինն է կլէնից ծածուկ ակելացնում. կլէնը 2 սանտիմետր է պահանջում որ լինի):

Մեքենան, որը պիտի կրակ տայ պատրոյգին, լցուած է եւ Բերթոլտիանը. աղ-շաքար սպիտակ փոշով եւ դիւրավառ բամբակով եւ վառօդաթղթով առատապէս: Շապուհին պատուիրուած է, որ բլթակը իջեցնելուց, առաջ քան «խշոց» լսելը չնետէ խնձորը: Խշոցը առաջ է գալիս սպիտակ փոշու պայթելուց. բլթակը իջնում է մատի սեղմելով, նա փչում է ծծմբաթուատի սրուակը, որը անմիջապէս բռնկեցնում է սպիտակ փոշին, բամբակը, վառօդաթուղթը: Շապուհը բոլորովին անփորձ է. կեանքի մէջ առաջին անգամն է ձեռքին խնձոր վերցնում: Այս անգամ Լեապովի եւ ուրիշների պահանջով հիւրերը հեռանում են ք» կէտը: Մնում է ձորակում միայն կլէնը իւր նախկին տեղում . բ. Շապուհը դարձեալ ծառի ճիւղերից բռնած... Լսում է պայթում...: Ռուբը պայթում է Շապուհի ձեռքում: Աջ ձեռքի թաթից բարձր կտրուած, գլխի աջ կողմը փչրուած, նա նետում է ձորակը եւ խրում ձեռքի մէջ գլխի վայր: Կլէնը ձորակի ստորոտում մնում է պակած դեռ 10-15 վայրկեան<sup>53</sup> կենդանի: Կլէնի վերքերը՝ վզին մի փոքր անվտանգ վէրք, մի վէրք էլ ազդրին նոյնպէս անվտանգ. մահացու վէրքը եղել է մի այնպիսի փոքր բեկորից, սրտից քիչ բարձր ասորտային<sup>54</sup> կպած արեան ներս հոսալուց:

Աղէտի պատճառը ինքն ըստ ինքեան պարզ է, ակելի քան պարզ, կարելի է միայն գարմանալ թէ ինչպէս հնարաւոր է եղել մի այդպիսի խնձոր տալ ձգելու մանաւանդ մի բոլորովին խամ եւ անփորձ մարդու:

Բոլոր մասնագէտների կարծիքով (բոլորակաւ գեներալի շտաբի օֆիցերներ, Տիւֆակչեւ գործնական մասնագէտ եւ ամէնքը — որոնք ներկայ են եղել այդ փորձերին — կոնստանդին, Լեապով եւ ուրիշները եւ մենք որ շատ փորձեր ենք արած եւ գիտենք պատրոյգին վառուելու արագութիւնը, ամէնից առաջ գտնում են որ՝

1. Պատրոյգը 2-2.5 սանտիմետր եղել է անհնարին կարճ: (Մասնագէտները ոչ մի դէպքում 5 սանտիմետր պակաս չեն անում: (10 սանտիմետրը վառուում է 12 վայրկեանում, երբեմն եւ 10 եւ 8 վայր.):

2. Լեցուածքը՝ բերթոլտիան աղ-շաքար՝ միեւնոյն ժամանակ եւ բամբակ դիւրավառ եւ վառօդաթուղթ, ակելի քան առատ է եղել եւ երբքը միասին փակուած մեքենայի մէջ, առանց պատրոյգի էլ կը պայթեցնէին

կապսիւլը մի ակնթարթում, ձեռքի մէջ, իրանց մեծ ցնցումով եւ առաջացրած տաքութիւնով:

3. Կապսիւլը 4 գրամնոց պայթ[ուցիկ] սնդիկ պարունակող լայն եւ մեծ իսկ պատրոյգը բարակ 1 գրամնոցի չափով, բայց մնացած տեղը միայն թղթով ծածկուած... դա էլ մի անհասկանալի «անհոգութիւն»... գըլխարկի առաջացրած բոցերին չէր կարող դիմադրել ի հարկէ թուղթը: Այսպէս թէ այնպէս «սխալները» եղել են բազմատեսակ եւ անհասկանալի քիչ թէ շատ փորձուած մարդու կողմից, ինչպիսին էր կլէնը: Մի բացատրութիւն միայն քիչ հասկանալի է դարձնում այդ բոլոր սխալները, այն է, որ բոլորի ասելով՝ Լեապով, կոնստանդին, Ռուբինա, Այվազեան եւ այլն, կլէնը վերջին օրերը, Շապուհի եկած օրից եղել է խիստ նեարդային դրութեան մէջ, մանաւանդ նկատելի է եղել նա նեարդային դրութիւնը փորձի օրը: Ռուբինան ասում է ուրախութիւնից, Շապուհի ներկայութեան ուրախութիւնից, միւսների ասելով՝ Լեապով, Այվազեան, Անտոն Գօշ — եղել է նա մուսլ, չգիջող, վիրաւորող այդ օրը, որը բոլորին զարմացրել է, քանի որ բոլորն էլ սովոր են նրան տեսնել միշտ բարի, զիջող, հեզահամբոյր: Արձանագրելով այս իրողութիւնները, մենք դրանով էլ վերջացնում ենք<sup>55</sup>, առանց ներս թափանցելու, թէ ինչն է պատճառը կլէնի (փորձերի ղեկավարողի) այդ օրուայ խիստ ջղային դրութեանը, դրութիւնը, որով միայն կարելի է բացատրել փորձի անհաջող կողմերը, որոնցից ամէնից ակելի մեծ սխալն է եղել պատուիրել Շապուհին, որ առաջ քան «խշոց» լսելը խնձորը չնետէ<sup>56</sup>:

Սաֆոնն էմիլի հետ Սոֆիա հասան երբ թաղումը արդէն կատարուած էր նախընթաց օրը:

Որովհետեւ Սաֆոնին յանձնարարուած էր բացի վերելում յիշուածներից գտնել նաեւ ընկած ընկերների փոխարէն երկու նոր ընկերներ եւ մատնանիչ էր արած իբրեւ այդպիսիք Սարգիսի եւ Աբրահամեան Գէորգի վերայ, ուստի Սաֆոն Սոֆիայում առաջարկում է հանդիսաւոր նիստում (Մալումեան, Զօրեան, բժ. Համօ, Ռուբինա) Սարգիսին ընկերանալ Յուց. մարմինն եւ փոխարինել կլէնին: Սարգիսը անմիջապէս տալիս է իւր համաձայնութիւնը:

Այդ նոյն նիստում կոնստանդինը, որը ինչպէս յիշուած է վերելում, պէտք է Լիս մտնէր խնձորներ ձուլելու տեղն ու տեղը, Լիսում, այժմ պարզապէս յայտնում է, թէ ինքը Լիս պիտի մտնէր ոչ այնքան խնձորներ ձուլելու, այլ գլխաւորապէս կլէնին փոխարինելու համար

53.- Այսինքն երկվայրկեան՝ արեւմտահայերէնի իմաստով:  
54.- Սայր երակին:  
55.- Չճշուած մասը որ սակայն յստակ ընթեռնելի է. «թողնելով վարագոյրը ծածկուած այդ անբացատրելի աղէտի վերայ, առանց ներս թափանցելու քաջութիւնը զգալու, թէ ի՞նչ էին զգում երկու այդ օրուայ փորձերին երկու գոհերը»:  
56.- Եղապիր շարուածները յետոյ ակելցուած:

վճռողական օրը, «ինչպէս մենք պայմանաւորուած էինք Սարգիսի հետ» — ակելցրեց նա: Սարգիսը ներկայ էր եւ լուռ: Բայց որովհետեւ կլէնն այլեւս չկայ, ուստի նրա Լիս մտնելու գլխաւոր պատճառը վերանում է. մընում է երկրորդական պատճառը՝ խնձորներ ձուլելը, որը, յարեց նա, այնքան էլ հեշտ չէ Լիսի պայմանների մէջ... թէ եւ ընդունուած է եղել իբրեւ շատ վարպետ: Այդպիսով պարզուեց, թէ ինչն է եղել կոնստանդինին ներս բերելու գլխաւոր շարժառիթը եւ թէ գոյութիւն է ունեցել կլէնին փրկելու նպատակով կազմուած մի խմբակ՝ Սարգիս — Ռուբինա եւ կոնստանդին որին վերջերը յարել է եւ ժընեւը... վերջինը բազմիցս թախանձել է կլէնին հանդիպել ժընեւ, յետոյ Վիեննա, բայց կլէնը չէ գնացել քանի որ նրանց հրաւէրների մէջ պարզ չէ եղել, թէ ի՞նչ նպատակով կամ պատճառով են կանչում իրան. սակայն վերջին օրերին նա վերջապէս համաձայնուած է գնալ Ռուբինայի հետ: Եւ պատրաստը եւն աղէտի օրը Շապուհի հետ միասին կլէնն ու Ռուբինան դուրս գնալ Վիեննա, ուր պիտի գալին «տեսակցութեան եւ հարկաւոր գործի» համար ժընեւից Ստեփանը՝ կամ ընկերներից<sup>57</sup>: Ահա այդ հարկաւոր գործը ինչպէս պարզուեց, եղել է գլխաւորապէս այն, որ ժընեւցիք որոշած են եղել ամէն կերպ աշխատել փրկելու կլէնի կեանքը: Բայց ինչպէս տեսանք, վտանգը եկաւ այն տեղից, որտեղից ոչ ոք նրան չէր սպասում, եւ այդպիսով փակուեց այդ մտերիմների խմբակի իրանց ընկերական զգացմունքներին միայն պատիւ բերող ոչ պաշտօնական աշխատանքը:

Որովհետեւ Ոսկեհանքից պահանջում էին մի նոր ընկեր ֆրանսախոս — ուստի ի նկատի ունենալով կոնստանդինի [ինի] Լիս գալու տրամադրութեանը բացակայութիւնը, միւս կողմից անգլ[երէն] գիտենալը, առաջարկուեց նրան գնալ Ոսկեհանք իբրեւ ընկեր-անդամ գործ[ադիր] կոմիտէի:

Խորհուրդի նիստերը, որոնք տեղի ունեցան ժընեւում ամբողջ 10-12 օր յետացան Գապոնի<sup>58</sup> հրաւէրով կազմուած Համառուսական կոնֆերանսի շնորհիւ — այդպիսով Սաֆոն վերադարձաւ ժընեւից Բոլորիս փորձերը շարունակելու, ստիպուած լինելով կորցնելու ժընեւում 20-25 օր Խորհուրդի առիթով եւ կոնֆերանսի պատճառով:

Սարգիսը ժընեւում յայտնեց բերանացի իւր հրաժարականը Յուց. Մարմնի կազմից ասելով, թէ իրան քաշում է Երկիր անցնելը դէպի Շամ:

Գէորգ Աբրահամեանն էլ ցանկութիւն ցոյց չտուեց Յուց. մարմնի մէջ մտնելու: Այդպիսով մարմինն մնաց երեք անդամներով:

Սաֆոնի փորձերի մանրամասնութիւնները առանձին գրուած են [Դրօշակի] խմբագրութեան մանրամասնաբար: Այստեղ կարելի է յիշել, որ շնորհիւ ժընեւի եւ Պարիզի մասնագէտների հետ նրա խորհրդակցելուն

կարելի եղաւ դրամարկղի հարցը ակելի լաւ ուսումնասիրել: միւս կողմից հեղինակաւոր մասնագէտների կարծիքները լսել մեր գործածելիք խնձորների մասին (հաստ կեղեւ չուզուէն<sup>60</sup> խնձորներ):

Ահա նրանց կարծիքների ամփոփումը որը եւ փորձերով ստացուեցին Սոֆիայում:

1) Անհատի վերայ գնալ չի կարելի խնձորների բեկորների յուսով, այլ հարկաւոր է վստահ լինել նիւթի ոյժի վերայ, անկախ նրա կեղեւից:

2) Լցնել պէտք է միլիմետր որքան կարելի է ամուր եւ հաւասար ամուր (մինչ այդ մենք բոլորը մեր «մասնագէտի» խորհրդով միշտ թող էինք լցնում նիւթը). միեւնոյն համոզմունքին բերել են, այն է ամուր լցնելը նաեւ կլէն — Ռուբինայի մի շարք փորձերը:

3) Եթէ կարողանանք հալել նիւթը (80-100% ջերմութեան մէջ ջրի վերայ) մ[իլիմետր] մ[իլիմետր] կ'ուժեղանայ 30% եւ կը մօտենայ Ս.Ռ.-ի [Սոցիալ ուելուցիտներին] գործածածին:

4) Իւրաքանչիւր կիլո նիւթին 2-3 գրամ փնազն[?] թացան բաւ է իբրեւ բռնկեցնող:

5) Խնձորների պատրոյգը ամենաքիչը 5 սանտ. պէտք է լինի, ոչ պակաս, հակառակ դէպքում վտանգը մեծ է եւ եթէ 4 ս-ից պակաս լինի — անխուսափելի:

6) Մեծաքանակ նիւթի համար ամանը պէտք է ամուր լինի, որպէսզի ամբողջ նիւթը ժամանակ ունենայ բռնկելու պայթելու եւ պայթումը մասնակի չլինի:

7) Մ[իլիմետր] խոնաւութիւնից թուլանում է եւ եթէ շատ է խոնաւ — չի պայթի:

8) Նոյնը ակելի եւս պայթող սնդիկը (կապսիւլների միջինը):

9) Մասնագէտների կարծիքով [(Ուլբանովիչ)]<sup>40</sup> Պարիզում եւ Ս. Ռ.-երի մասնագէտ Մ. Մ. (չենք յիշում ազգանունը)

Երեսուն մետր շառաւիղ տարածութեան վերայ ամէն ինչ ոչնչացնում է 20 կիլո նիւթը (Ռուբանովիչ) 100 կիլոն — մինչեւ 50 մետր. Ս. Ռ.-ի կարծիքով 100 կիլոն կը քանդէ մեր ամբողջ խմբագրութեան շինութիւնը եթէ նա դրուած լինի սնտոկի մէջ այգում տնից մօտ 30 մետր հեռու: Եւ յարկանի տունը Roseaie, 29 տնում<sup>61</sup>:

Սաֆոն կատարեց այդ ցուցմունքներով Սոֆիայում երեք շարք փորձեր իսկական ձիւրի եւ գառների վերայ եւ ստացաւ հետեւեալ թուերը:

1) 2 կիլոն պինդ լցուած հասարակ[ակ] սպիտ. թիթեղ-

57.- Ստեփանը՝ Ռոստոմ Զօրեանն է:  
58.- Բնագրին մէջ շեղագիր շարուած չորս տողերը ջնջուած են, բայց կը մնան յստակ եւ ընթեռնելի:  
59.- Գէորգի Գապոն, ռուս յայտնի յեղափոխական, նախկին քահանայ, որ նախածեռնող հանդիսացաւ հակացարական ճակատի կազմաւորման:  
60.- Թուճ:  
61.- Դրօշակի հասցէն, ժընեւի մէջ:



եայ արկղի մէջ — մահացու վէրքեր տուեց ձիուն: 1-5 մետրի վերայ

2) 4 կիլոն նոյն կերպ — երկու մետրի վերայ

3) 4 կիլոն նոյն կերպ — երեք մետրի վերայ

4) 5 կիլոն > > — չորս եւ երեք [4.3] մետրի վերայ

5) 14 կիլոն > > — տասը մետրի վերայ

6) 30 կիլոն լաւ թրջուած անձրեւից՝ տուեց աւելի պակաս հետեւանք, քան 14 կիլոն, սպանելով ձիուն 6-8 մետրի վերայ միայն:

7) Կապսիւլները երկու օր ծոցի գրպանում մնացած, մարմնի խոնաւութիւնից չպայթեցին:

8) Խնձորների փորձերը՝ էլլէն — Ռուբինայի չտուին ցանկալի հետեւանքներ, այն է

ապահովութիւն ժամանակից առաջ չպայթելու եւ ուժեղ եւ հաւասար տարածուելու:

Իբրեւ ապացոյց Մայիսի աղէտը:

Կոնստանդինի փորձերը բոլոր գեներալին շտաբի սպանների հետ — նոյնպէս:

Մաֆոյի փորձերը նոյն սպայակոյտի հետ միասին նոյնպէս չտուին ցանկալի հետեւանքներ. բացի վերոյիշեալից նաեւ ապացուցեց վրիպումներ տալը, այսինքն չպայթելը, փրստ գալը:

Մի բան որ առաջին փորձերի ժամանակ էլ է տեղի ունեցել կապսիւլներով (փոքրիկ կապսիւլներ փոխանակ սպիտակ փոշու եւ ծծմբաթթուատի):

Այդպիսով անկարելի եղաւ հասնել խնձորների վերաբերութեամբ հետեւեալ անհրաժեշտ պայմանների՝

ա) ոյժ եւ հաւասար ցրուումն բեկորների միացած նրա փոքրութեան հետ (ոչ աւելի 300-400 գրամից):

բ) Անվիրտութիւն, փրստ գալ չունենալ<sup>63</sup>:

գ) Ապահովութեան որոշ մոմենտի պայթելու, ոչ շուտ եւ ոչ էլ ուշ:

Որոնց հասնելը մեր գործի անհրաժեշտ պայմանն է ներկայացնում շնորհիւ նրա եզակի պայմանների: Սակայն անհնարին չէ ժամանակի ընթացքում մի շարք փորձերով աստիճան առ աստիճան հասնելու յիշեալ պայմաններին, բայց դրա համար հարկաւոր էր երկար ժամանակ, իսկ մենք, առանց այն էլ շատ ուշացած, միշտ բացուելու վտանգին ենթակայ, պարտաւոր էինք շտապեցնել գործը:

Միւս կողմից թէեւ նախկին արձանագրութիւններով, երբ դեռ չունէինք ներկայի փորձառութիւնը ոչ էլ գործի ծրագրին մանրամասն ուսումնասիրութիւնը, որոշած էինք միաժամանակ ի գործ դնել մէկ կողմից խնձորներ 6, ամենաքիչը 4, միւս կողմից «դրամարկղը»: Եւ վերջինի, դրամարկղի վերայ, իբրեւ չփորձուած նորաձեւութեան վերայ, շատերը թերահաւատ աչքով էին նայում. յամենայն դէպս դրամարկղը իբրեւ երկրորդական զէնք էր նկատուում, իբրեւ «լիւքս»: Սակայն, փորձերից վերջը եւ հարցի գործնական մանրամասնութիւնները ուսումնասիրելուց վերջը (առաջին

արձանագրութիւնների մէջ յիշուած է՝ «մանրամասնութիւնները թողնելով ապագային») միաժամն եկանք այն եզրակացութեան, որ մեր գլխաւոր զէնքը դրամարկղն է կազմելու, իսկ խնձորները, ընդհակառակը — երկրորդական:

Միեւնոյն ժամանակ ի նկատի ունենալով, որ ա) այդ երկրորդական զէնքերի (խնձորների) գործածութիւնը դրամարկղի հետ միասին անհնարին է, բայց այն որ աւելի մեծ թուով զոհեր է պահանջում, զոհեր, որպիսիք լինելու համար բաւական չէ միայն զոհուելու պատրաստականութիւնը, այլ բացի այդ անհրաժեշտ են մի շարք ուրիշ արտաքին յարմարութիւններ — լեզու իմանալ լաւ, անցագիր վստահելի, տուրիստի բոլոր նիստ ու կացը ձեւացնել եւայլն եւայլն:

Ի նկատի ունենալով, որ մեր երկու ընկերների զոհուելուց վերջը, Գէորգ Աբրահամեանի, Սարգիսի հրաժարուելուց վերջը նախկին որոշման մինիմումի թիւը կազմելու էլ հնարաւորութիւնը չունինք:

բ) Որ, շնորհիւ ամառուայ եղանակին կանանց շորերի տարազը այլեւս չի կարող ներկայացնել բաւարար ծածկոց խնձորներն անցկացնելու համար, իսկ առանց կանանց — աւելի եւս դժուար պիտի լինի այդ եւ վտանգաւոր, քանի որ մի շարք հսկող աչքերի առաջից պէտք է անցնիլ եւ նոյնպիսի աչքերի առաջ կանգնել եւ գործել:

գ) Ի նկատի ունենալով, որ դրամարկղի գործի օրը նախապէս որոշել անհնարին է. եթէ այս «Կիւրակին» չաջողուեց յարմար դիրքի վերայ կանգնել, ստիպուած ենք վերադառնալ հետեւեալ «Կիւրակի» բախտերս փորձելու համար, իսկ խնձորաւորները այդ դէպքում այլեւս անպէտքանում են, քանի որ երկու անգամ իրարու յետեւից միեւնոյն անձեր չեն կարող թոյլտուութիւն ստանալ պաշտօնի գնալու:

դ) Որ ամէնից գլխաւորն է, ինչպէս ասացինք վերելում, անհնարին է ներդաշնակել երկու հարուածների մոմենտները այնպէս, որ մէկը միւսին չխանգարէ: Այսպէս, եթէ խնձորաւորները առաջ նետեն թէկուզ 2-3 վայրկեան, դրամարկղի գործը կը վտանգուի — խնձորների ձայնից կարող են եւ անպատճառ խրտնել կառքի ձիերը եւ կառքը մի կողմ նետել եւ կամ կարող է պատահամբ վիրաւորուել կառապանը կամ ուղեկիցը եւ այդպիսով գլխաւորը զոհած պիտի լինինք երկրորդականին, որի վերայ վստահութիւն չենք կարող ունենալ (բաւական է յիշել բացի մեր փորձերից վերջին երկու տարուայ մէջ կատարուած խնձորների դէպքերը Ռուսաստանում եւ Եւրոպայում 10-15 աւելի. որոնցից յաջող վերջացածները հազիւ 7-8-ը լինի — 50% ուրեմն, նրանց անաջողները կարող են կրկնուել, իսկ մերը կըրկնուել չի կարող, ուրեմն անուղղելի է: (Իսկ եթէ դրամարկղը առաջ պայթէ, պաշտօնին մէջ ամէնքին կը

63.- Չեռագրին մտք ջնջուած է այս տողը:

սրբէ, ուրեմն եւ մեր խնձորաւորներին):

Իսկ միաժամանակ, ճիշտ միաժամանակ կատարելու մասին խօսք չի կարող լինել — անհնարին է այդ ֆիզիքապէս երկու իրարից անջատուած եւ իրարու չտեսնող անձերի մէջ, երբ գործը վայրկեանների ճշտութեամբ է կատարուելու: Ահա այս մանրամասնութիւններն էր, որ իբրեւ դժուար լուծելի հարցեր, թողել էինք ապագային, տակից դուրս գալ չկարողանալով Դեկտեմբերին: Իսկ երբ ապագան ներկայի փոխուեց եւ երբ ստիպուեցանք այսպէս թէ այնպէս մի որոշ եզրակացութեան գալ — որոշուեց միաժամն թողնել խնձորները բոլորովին մի կողմ եւ կենտրոնացնել բոլոր ուշադրութիւնը դրամարկղի վերայ: Հարկաւոր է այստեղ յիշել որ բռնել կարելի է Նժոյգին իւրաքանչիւր ութնեակում երկու մոմենտում՝ գալիս եւ վերադառնալիս: Գալու ժամանակը ստացած ենք 12 անգամ եւ միշտ ստացել ենք նոյն թիւը՝ 8 անգամ՝ 2 ր. 18 վայրկ., 4 անգամ՝ 2 րոպ. 20 վ., 2 [անգամ]՝ 2 ր. 21 վ.: Տարբերութիւնը եղել է ուրեմն ամենամեծը 3 վայրկեանի: Միջին թիւը կ'անէ 2 րոպ. 19 վայրկ.:

Վերադարձինը՝ 1 րոպէ 55 վայրկ., 1 ր. 50 եւ մէկ րոպէ 49 վայրկ.: Այդ տարբերութիւնները սակայն հետեւանք են գլխաւորապէս չափողի քիչ կամ շուտ սեղմելուն կամ շտապելուն, քան թէ Նժոյգի շարժումից, քանի որ նա տասնեակ տարիներ հազար անգամ միեւնոյնը կատարած ունակութիւն է դարձրած անվրէպ ճիշտ նոյն չափերով շարժուելու, աղօթելու, դուրս գալու: Չափի սկիզբը վերցուում է նշանափողի հնչելը որը յայտնում է Նժոյգի դուրս գալու մասին եւ այդ վայրկեանից մինչեւ նրա երեւալը եւ ամենամօտ կէտի հասնելը վայրկեանաչափը ցոյց է տալիս 1 ր. 53 վայրկ.: միջին թուով:

Այդ թուերը ստուգուած լինելով բազմիցս համարեա բոլոր ընկերների ձեռքով այն վայրկեանաչափերով, որոնք եւ գործի օրն են լինելու, եկանք այն եզրակացութեան, որ ոչ մի տարբերութիւն յօգուտ գործի չունի դրամարկղի վայրկեանական դարձնելը, քանի որ փորձերը ցոյց տուին, որ երկու ժամացոյցներով երկու տարբեր մարդիկ պայմանաւորուած լինելով միասին միեւնոյն վայրկեանին սեղմել զսպանակը, երբ ասենք այն ինչ կէտին է հասած Նժոյգ եւ կամ փողի ձայնն է լսուում, ոչ մի անգամ չեղաւ որ միաժամանակ կատարել կարողանային այդ գործողութիւնը — 1-2-3 վայրկեան մէկը միւսից առաջ կամ յետ է ընկնում զանազան պատճառներով անկախ վայրկեանաչափերից. ուրեմն քանի որ մեր չափերի մէջ եղած տարբերութիւնը նոյնպէս 2-3 վայրկեանից աւելի չի եղել, ուստի միտք չունի չօգտուել գնացողների համար այդ ժամը — թէկուզ կարճ ժամանակամիջոցից: Ի հարկէ, եթէ ոեւէ պատճառով օգտուելը նկատուի աւելորդ, պէտք է դարձնել դրամարկղի պայթումը վայրկեանական, օդը բարձրանալու պատուով:

Չոհեր — անհրաժեշտ է իսկապէս միայն մէկը կա-


ռապանը, որը ուրիշ ոչինչ չունի անելու, քան սեղմել վայրկեանաչափի զսպանակը եւ օգտուելով 1-2 րոպէից, հեռանալ որքան կարող է: Բայց ապահովութեան համար եւ իբրեւ բարոյապէս կառապանին խրախուսելու համար, որոշուեց կառքի մէջ լինել մեզանից մէկը եւս, ուրեմն 2 հոգի: Գուցէ կառապանին այդ րոպէին մի բան պատահեց, թուլացաւ կամ բռնուեց եւայլն, որպէսզի ուղեկիցը իսկոյն սեղմէ զսպանակը: Կանգ առանք երկու մոմենտներից՝ գալ եւ վերադառնալ — վերջինի վերայ, թէեւ դրանով 20 վայրկեանի չափ պակասեցնում էինք զոհերի փրկութեան առանց այն էլ կարճ ժամանակը: Դրա պատճառներից գլխաւորն այն է, որ վերադարձին հնարաւոր է դրամարկղը մօտեցնել Նժոյգին 20 քայլ աւելի ուրեմն կանգնել 30-40 քայլի վերայ, այնինչ գալու ժամանակ տարածութիւնը 60 քայլի է հասնում: Երկրորդ պատճառը կողմնակի զոհերի թիւը պակաս կը լինի, հանդիսատեսներից շատերը հեռացած կը լինին, ուրեմն անմեղ զոհեր քիչ կ'ունենանք: Թէեւ միեւնոյն ժամանակ մեր զոհերի ազատելու պայմանները բացի ժամանակի կարճանալուց եւ այն բացասական կողմն ունի՝ վերադարձի վերայ կանգ առնելը, որ գործերի մի մասը արդէն շարժուելով իրանց տեղերից, լցնում են մօտակայ ճանապարհները եւ մնում է միայն մի գիծ փախուստի: Բայց այդ բոլոր բացասական կողմերը քանի որ միայն մեզ են վերաբերում, փրկութեան տեսակէտից, որը աւելի քան թէական է, իսկ դրական կողմը Նժոյգին 20 քայլ մօտենալու հնարաւորութիւնն է, ուրեմն ապահովացնում է 20 քայլի շառաւիղով գործի յաջողութիւնը. պարզ է, որ նախադասելի է վերջինը, այսինքն գործի յաջողութիւնը: Երբ ուսումնասիրութիւնները համարեա բաւարար չափով կատարուած [էին], զուգահեռաբար առաջ էր տարուում կառքը իւր դերին յարմարեցնելու գործը, որի մասին արժէ մի քանի խօսք ասել: Կառքը մասնաւոր պատրաստուած վիճակում բաց կառք է, անխնայ ռեզիւնով պատած, որպէսզի զի լցուած դրութեամբ քարքարուտ ճանապարհներին ապահովէ «զապալը»<sup>64</sup> ցնցումների վտանգից — ունի կառապանի նստած տեղում արկղ, որի ծաւալը հաշուած է 130 կիլո նիւթի համար: Այդ արկղը բացուած է միայն վերեւից: Արկղի ճիշտ չափերով եւ ձեւով պատրաստել տուինք այստեղ երկաթեայ մի արկղ որքան կարելի էր ամուր եւ այդ երկաթեայ արկղը մտնում է կառքի արկղի մէջ: Արկղի պատերի հաստութիւնը (երկաթից) 3 միլիմետր բոլոր կողմերից, բացի յետեւի կողմից. վերջինը վերցրինք հաստ — 5 միլիմետր, որպէսզի դրանով կարելի լինի որքան հնարաւոր է ուղղութիւն տալ պայթումին դէպի առաջ:

Երկաթ[եայ] անտուկի առաջին պատին յենուում են երկաթեայ ձողեր արկղի ամբողջ բարձրութեամբ. ձո-

64.- Բոնկեցուցիչ, զսպանակ:

դերի լայնութիւնը 2 սանտիմետր եւ մէկ կողմից ակռաներով, իւրաքանչիւրը դարձեալ երկ-երկու սանտիմետր իրարից հեռու, այնպէս որ փշրուելիս պիտի ստացուին 4 քառ. սանտ. բեկորներ — մանրամասնութիւնները տես թերթ Ա. 2-3 երեսներում:—

Ա. թերթի շարունակութիւն.— Ապահովութեան համար դնելու ենք զապալի մեծ արկղի մէջ չորս ելեքտրական կապսիւլներ, միւս 380 կապսիւլների մէջ եւ այդ չորս կապսիւլները զոյգ զոյգ միացնելու ենք երկու ժամացոյցի հետ, որպէսզի երբ ոեւէ անակնկալով ժամացոյցներից մէկը կանգնի կամ մի փորձանք պատահի, միւս վայրկենաչափը լրացնէ գործը: Ի հարկէ գործի ծանր կողմը զապալը դնելը եւ թելերի միացնելը է ամենայն նախագգուշութիւններով, որպէսզի կոնտակտ առաջ չգայ, վաղաժամ միացում չլինի: Զգուշութեան համար թելերից մէկը կտրոււմ ենք եւ ծայրերը այսպիսի պղնձեայ արու եւ հզ մեխերի կապում, մեխերի արտաքին կողմը ռեզինէ խողովակի մէջ, հարկաւոր ռոպէին բնական է միացնել, մէկը միւսի մէջ անցկացնել եւ ապա ժամացոյցը սեղմել:



Վերադառնանք յետ. Սաֆոյի վերադառնալուց վերջը, իրանց հերթին էին սպասում լուծելու դուրս գնացած օժ. ընկերների յետ կանչելու հարցերը: Ի նկատի ունենալով, որ ներսի ընկերներս բաւական ենք գործի համար մէկ կողմից, միւս կողմից այն, որ «արձակուրդ» ստացած ընկերները իրանց այդ «արձակուրդի» պահանջը դնելով մի տեսակ ճնշում գործ էին դրած մարմնիս վերայ եւ դրանով ապացուցել էին իրանց յամենայն դէպս շատ ամուր կապուած չլինելը գործի հետ, որոշուել նրանց՝ Զահել, Տիկին Միշէլ եւ Կարո յետ չկանչել այլեւս եւ գրել իրանց, որ ազատ են ծուց. մարմնի գործերից: Իսկ միւս կողմից ի նկատի ունենալով որ օր. Ռուբինան նրանց թուին չէր պատկանում, որոնք «արձակուրդի» հարց առաջ բերին, այլ ընդհակառակը նա դուրս էր գնացել էլլէնի հետ եւ ամբողջ ժամանակը նրա աջ բազուկին է հանդիսացել եւ այժմ էլ բուռն ցանկութիւն ունի ներս մտնելու եւ գործին ակտիւ մասնակցութիւն ունենալու, որոշուեց նրան միայն կանչել: Երկրորդ հարցը Պատ. մարմնի կազմը լրացնելը էր: Նկատի ունենալով որ երկու ընկերներ կորսնցնելով, Մարմնիս անդամներ մնացինք երեք հոգի միայն, որոնցից մէկը արդէն վտանգուած էր համարուում (Աշտուր), նկատի ունենալով, որ եթէ նա արտաքսուելու կամ բանտարկուելու լինի, պիտի պաշտօնապէս լուծուած համարուի Մարմինս եւ վերակազմելը ժամանակ խլէ մեզանից, ընտրուեցին ձայների 2/3-ի մեծամասնութեամբ նոր անդամներ Պատ. Մարմնի օժ[անդակ] ըն-

կեր Գրիսը, որը մեծ ծառայութիւն է մատուցել ծուց. մարմնիս նրա նախապատրաստական շրջանում, երբ դեռ Մարմինը դուրսն էր եւ նոյնիսկ կազմուած չէր. մեր այժմեան ամբողջ ռազմամթերքը նրա ձեռքով է ներս ընդունուել եւ ապահովուել եւ Օր. Ռուբինան որի գործին նուիրուած լինելը իւր ամբողջ հուժեքով ոչ մի կասկածի ենթակայ չէ:

Վերջապէս ժամանակը հասաւ որոշելու թէ ում ինչ դեր է ստանձնելու եւ թէ քանի մարդ է անհրաժեշտ գործի մէջ: Նախապէս որոշուեց, որ աւելորդ ընկերները օր առաջ դուրս գան Լիսից ապահով վայրեր՝ Բուդարիա, Աթէնք, Աղեքսանդրիա: Գործի համար անհրաժեշտ նկատուեց.

- 1) Կառապան
- 2) Կառքը նստող
- 3) Ընդհանրապէս գործի օրը կամ գործից վերջը անհրաժեշտ նկատուած գործողութիւնները կատարելի դեսպանութիւններին գրաւոր զեկուցումներ ուղարկել. գործից վերջը գիտակ պահել ըստ կարելուց Լիսում տեղի ունենալիք դէպքերին աղէտներին եւ թաքստոց պահել ազատուող ընկերների համար, այլեւ անակնկալ անյաջողութեան դէպքում, եթէ կառքը ստիպուած լինի վերադառնալ հետեւեալ Ուրբաթ նորից գնալու համար, մէկը լինի, որ կարողանայ իւր խորհուրդներով օգնել գործը շարունակելու:

Այստեղ անհրաժեշտ է յիշել, որ ի նկատի ունենալով, որ հարուածի առաջին վայրկեանին երբ հազարի չափ զօրքը գէնքի տակ է, եթէ իսկոյն յայտնուել ում կողմից է իջել հարուածը, հարուած որի գոհերը հաշուելու է հարուածը, հարուած որի գոհերը հաշուելու է հարուածը, անպայման կոտորած կարող է առաջ գալ մեծ չափերով, միւս կողմից ուրիշ ոչ մի միջոց չունենալով ինքնապաշտպանութեան մէջ դնելու անգէն հայ ժողովուրդը, որոշեցինք երկրորդ կամ երրորդ օրը միայն ցրուել դեսպաններին մեր դիմումը, երբ հանգստացած կը լինի գոնէ մի փոքր կատաղած զօրքը եւ ամբոխը ու միջոցներ ձեռք կ'առնը. են ժամանակաւոր կառավարութեան ձեռքով կոտորածի առաջ: Միւս կողմից եկանք այն եզրակացութեան, որ նոյն օրը անկարելի պիտի լինի հեռագիր տալ մեր մարմիններին եթէ դէպքից առաջ մի ժամ օրինակ, համոզուած չենք թէ արդեօք պիտի կատարուի այդ օրը. մի գուցէ ստիպուած լինենք այստեղ յետաձգելու. իսկ այնտեղ Եւրոպայում արդէն հարայը ձգեն եւ այդպիսով գործին վնասեն:

Իսկ հարուածից վերջը ոչ ոք կարող է երաշխաւորել, թէ հնարաւոր պիտի լինի փողոց դուրս գալ, հեռագրատուն գնալ եւն: Մանաւանդ որ դէպքի մասին եւրոպական պաշտօնական թերթերը աւելի շուտ գիտակ պիտի դառնան շնորհիւ իրանց դեսպանութիւններին, որոնք վախ չունին կոտորածի ենթարկուելու, քան մեր մաս-

նաւոր հեռագրի տեղ հասնիլը, բացուել եւ տպագրուելու: Այդ իսկ պատճառով անգործնական է դառնում նաեւ հեռագրի տալը:

Գանք այժմ գործողների ջոկելու: Առաջին դերը (կառապան) պատկանում էր Զարեհին, որին ամիսներ առաջ քրէհով<sup>65</sup> կառք էինք վերցրած մէկ ամսով օրական մէկ ոսկի վճարով եւ կառապանութիւն էր սովորած Մկրտիչից: Մկրտիչը մեր օժ. ընկերներից է, կաթողիկ, որը ինքը սովորեց կառապանութիւն եւ սովորեցրեց նոյն Զարեհին: Պէտք է այստեղ յիշած, որ Կ. Պոլսում կառապան լինելը, մի դժուար արհեստ է շնորհիւ փողոցների նեղութեանը, ձիաքարչի շատ փոքր չափով տարածուած լինելուն եւ այդ պատճառով կառքերի շատութեանը: Նեղ եւ երբեմն խիստ թեք զառիվար փողոցներով ուր չկայ մայթ եւ հետեւակներն էլ փողոցի մէջտեղով են անցնում, բեռնակրերն էլ, կառքերն էլ, զինուորներն էլ, կառապանութիւնը ուղղակի մասնագիտութիւն է եւ դժուար: Մեր կառքերը երկու անգամ ճանապարհին վնասուեցին եւ նորոգուեցին: Այդ իսկ պատճառով կառապանի դերը պատկանում էր Զարեհին, որը եւ նախապէս տուած էր իւր համաձայնութիւնը այդ դերի համար: Երրորդ դերի համար ընտրուեց Սաֆոն, իւր ցանկութեամբ եւ իբրեւ համեմատաբար աւելի յարմարութիւններ ունեցող լեզու ռուսերէն, անցագիր եւ «կին»:

Կառքի մէջ նստողը ընտրելու համար եղան առաջարկներ՝ ա) Ընտրել յարմարագոյնը բ) Ընտրել վիճակով ցանկութիւն յայտնողների միջից: գ) Ռուբինան առաջարկեց եւ շատ թախանձագին — ուշագնաց լինելու չափ թախանձագին — իրան տալ այդ դերը առանց վիճակի, առանց ընտրութեան: Մերժուեց միաձայն Ռուբինայի առաջարկը: Մերժուեց եւ ընտրելու առաջարկը իբրեւ անգործնական, քանի որ «յարմարագոյն» համարել մէկին կամ միւսին մի դերի համար, որը չի պահանջում ոչ մի այլ յարմարութիւն, բացի անվախութիւն, զսպանակը սեղմելու քաջութիւն — դժուար էր մանաւանդ որ ընտրողներին պիտի դնէր կեղծ դրութեան մէջ, իւրաքանչիւրը իրան էր համարում յարմարագոյնը եւ սկսուեց մի տեսակ մրցում: Այդպիսով կարճատեւ փորձից վերջը ընտրելու ձեւը թողնուեց եւ ընդունուեց վիճակի ձեւը — կամաւոր ցանկութիւն յայտնողների մէջ:

Վիճակին մասնակցեցին իրանց ցանկութեամբ հետեւեալ անձինք.

Օր. Ռուբինա, Սաֆո, Թորգոմ, Գրիս եւ Արամ\* : Աշտուրի մասին նախապէս որոշուած էր որ նա չպիտի մասնակցէ վիճակին եւ առհասարակ վճռողական օրը մասնակցութիւն չպիտի ունենայ, քանի որ վերջին ամիսներում, ինչպէս ինքը յայտնել էր մեզ քանիցս, ինքը վտանգուած է, իրան պտրուում են, տեսել են եւ այլն: Ուս-

տի, իբրեւ կասկածուած մարդ, չէինք կարող թոյլ տալ որ եթէ վիճակը նրան ընկնի, իր մասնակցութիւնով թերեւս վնասուի գործը: Այդ նիստին նա նոյնպէս յայտնեց, թէ ցանկանում է մասնակցել վիճակահանութեանը, բայց միաձայն մերժում ստացաւ:

Օր. Էմիլը նոյնպէս ցանկութիւն յայտնեց մասնակցելու, բայց մերժում ստացաւ այն պատճառով, որ իբրեւ գերմանուհի, կարող էր գործին, եթէ վիճակը նրան ընկնէր, զուտ հայկական բնաւորութիւնից հեռացնել եւ անիշխանական գոյն տալ:

Վիճակը, որի հանդէս էր Գրիսը, ընկաւ Արամին: Բացակայ Արամը երբ եկաւ եւ յայտնուեց նրան որ իրան է վիճակուել կառքի նստողի պատիւը, ընդունեց: Ռուբինան աղաչեց նրան իրան էլ հետը վերցնէ, բայց այդ առաջարկին Պ. մարմինը հակառակուեց եւ յայտնեց, որ ոչ մի դէպքում նա չի կարող համաձայնուել աւելորդ տեղը գոհերի թիւը աւելացնել եւ յայտնեց Արամին, որ նրանից է կախուած զիջել իւր վիճակը օրիորդին կամ ոչ, բայց իւր հետ վերցնելու նրան իրաւունք չունի:

Արամը այն ժամանակ առաջարկեց օրիորդին իբրեւ պատասխան վերջինի թախանձանքին իրան զիջանէ այդ դերը, վիճակ հանել երկուսի մէջ, որին որ ընկնի նա գրնայ: Վիճակը դարձեալ ընկաւ Արամին:

Մարմինը գլխաւոր վիճակը հանելուց վերջը համարուում էր հարցը փակուած եւ յետագայ վիճակը օրիորդի թախանձանքին եւ Արամի ընդունել կամ չընդունելը յայտարարեց մասնաւոր իրանց գործը: Մի քանի օր վերջը Արամը յայտնեց, որ եթէ Պ. Մ-ը իր զիջանելը չնկատէ դատապարտելի, նա իւր դերը կը տայ օրիորդին. եւ լսելով պատասխան, թէ այդ իւր գործն է եւ թէ Պ. Մ-ը յամենայն դէպս աւելի քան վստահում է Ռուբինայի ոյժի վերայ, գործի տեսակէտից ոչ մի արգելք չի տեսնում մասնաւոր այդ համաձայնութեանը իրակաւանալուն, ուստի եւ գործի շահի տեսակէտից դատապարտելի չի նկատի Արամի զիջողութիւնը:

Այդպիսով որոշուեցին մնացողներ՝ Զարեհ, Ռուբինա, Սաֆո եւ Էմիլ: Իբրեւ Սաֆոյի կինը: Վերջինը ինքը ցանկութիւն յայտնեց մնալու. նրա մնալը անհրաժեշտութիւն չէր ներկայացնում, թէ եւ տալիս էր դիւրութիւն Սաֆոյին եւ միւս ընկերներին: Բացի վերելում յիշածներից, մնալու է Գրիսը եւ Երուանդը<sup>66</sup> (ձիերին նայող):

Գործից առաջ մի քանի օր դուրս են գալու՝ Աշտուր, Թորգոմը, Գրիսը, Արամը, Մկրտիչը՝ Զարեհին կառապանութիւն սովորեցնող: Դուրս է գնալու նաեւ Գրիսի կինը եւ սպասելու է

\*) Արամը այդ նիստին բացակայ էր, բայց նա իր համաձայնութիւնը յայտնել էր Աշտուրի միջոցաւ:

65.- Վարձքով, վարձու:  
66.- Երուանդի համար մատուցող գրուած «օժանդակ ընկեր, պոլսեցի»:

մինչև գործի վախճանը Ֆրիլպպեում:

Գրինը, որ նոյնպէս մտածում էր դուրս գալ կնոջ հետ եւ նուիրուել դրսում ամբողջովին հայկական գործին, համաձայնուեց մնալու Լիսոն, երբ նրան բացատրուեց, թէ հայկական դատին նա աւելի եւս օգտակար կարող է լինել մնալով Լիսոն եւ ապագայ գործողներին դիւրութիւն տալով, ինչպէս տուել է նա մեզ, քան դրսում, Կովկասում, օրինակ:

Սակայն, ի նկատի ունենալով Գրինի մեզ տուած աշակցութիւնը եւ օգնութիւնը — հասցէներ, ապրանքը իւր տանը պահել, ժողովներ անտեղ կատարել, Ֆայնի եւ Ռուբինայի իւր տանը ընդունել — այդ բոլորի համար պարտական ենք մենք մեր թանկագին ընկեր Շապուհին, որը այնքան հարկաւոր էր մեզ եւ այնքան շուտ վերջացրեց իւր յեղափոխական ուղին:

Նա դեռ շատ ճանապարհ ունէր գնալու եւ հեռու կը գնար շնորհիւ իւր կամքի եւ համոզմունքի ոյժի, իւր շրջահայեցողութեան եւ վճռողական տեմպերամենտի:

Գալով Գրինին — որոշուեց տալ նրա կնոջ դուրս գալու եւ դրսում (Ֆրիլպպեում) սպասելու համար 200 Ֆր. եւ այնտեղ ապրելու ծախսը մեր վերայ վերցնել: Իսկ եթէ Գրինը կարմիր օրերին գոհ գնաց եւ կորցրեց այդպիսով իւր տան բոլոր կահ-կարասիքը, վճարել այրիին 1000 Ֆր. իւր շարժական ինչքի արժէքը եւ աշխատել Բոլղարիայում նրան մի գործ գտնել (կար ու ձեւի արհեստ ունի): Իսկ Գրինը եթէ ողջ մնայ, ուրեմն կինը կը վերադառնայ ամուսնու մօտ եւ մեզանից ոչինչ չեն պահանջում նրանք: Եթէ Գրինին կասկածելով դուրս հանեն իւր պաշտօնից, որպէսզի դիւրութիւն տալ նրան Պոլիսը չթողնելու եւ շարունակելով ապրել, մեր ապագայ գործողներին եւս օգտակար դառնալ կարողանայ, խոստացել ենք նպաստել — քարիւղի ագենտ դարձնել, այսինքն կրեւորը բաց անել Բաթումի կամ Բագուի ֆիրմաներից մէկի կողմից մի որոշ գումարի ապրանք բաց թողնել նրան:

Արամի համար ճանապարհածախս որոշուեց մինչև Ադեքանդրիա եւ այնտեղ էլ մի ամսուայ ապրուստ — 270 Ֆր. Մկրտիչի համար — 300 Ֆր.:

Նա մէկն է մեր օժանդակ ընկերներից որը մինչև վերջը, բացի վերջին երկու ամսից որ կառուպանի դեր է կատարել, ոչ մի նիւթական ծանրութիւն չէ եղել Մարմնիս վերայ, թէեւ ծառայել է գործին գովելի կարգապահութեամբ:

Որպէսզի նրա մնալով նա չվտանգուի եւ իւր վտանգը ընկնելով կապեր չբացուին, որոշուեց նրան դուրս հանել օր առաջ կամ դէպի Բոլղարիա եւ կամ հայրենիք — Սեբաստիա (կաթոլիկ է կրօնով եւ այդ պատճառով է որ նա կարողացել է մինչև օրս անվտանգ ապրել իբրեւ հայ):

Թաքստոցի համար գործից առաջ եւ գործից վերջը վարձած ունիւք մէկ առանձին բնակարան Գրինի տանը մօտ, որից կարելի է յարաբերութեան մէջ մտնել թաքստոցի հետ թոկից շինուած սանդուղով, որը կարելի է իջնել Գրինի տանից գիշերը դէպի Թաքստոց բնա-

կարանը, որի մէջ ապրում է Սաֆոն, էմիլը եւ Ռուբինան: Առաջինները իբրեւ ամուսիններ, վերջինը իբրեւ սենեակ վարձու վերցրած: Երեք սենեակ Անգլ. հիւպատոսարանի մօտ, ուր ապրում էր Սաֆոն վերջին օրերը եւ որտեղից, ամառանոց գնալու պատրուակով տեղափոխուեց գլխաւոր բնակարանը, վճարելով սենեակների արժէքը մինչև Օգոստ. 1ը: Գրինի բնակարանը իբրեւ իսկապէս վտանգուած մարդու չի կարելի իբրեւ թաքստոց նկատել:

Թէեւ սկզբից մտածուում էր, որ ընկերներին ազատելու դերը յանձնել Օր. էմիլին իբրեւ կնոջ, բայց քանի որ Արամի փոխարէն Ռուբինան է գնալու, ուստի այլեւս մի աւելորդ կնոջ կարիք չկայ ճանապարհին կառքով սպասելու: Այդ դերը ստանձնում է Երուանդը որը գործի օրը մասնաւոր կառք նստած իբրեւ սպասաւոր պիտի սպասէ 100 քայլի վերայ Ջարեհին եւ Ռուբինային իբրեւ իրա պարոններին եւ իսկոյն ճանապարհ պիտի ընկնին հեռանալով կառքից: Նրանք մի ըրպէ 50 վայրկեանում, եթէ պատահարի չգան, անպայման ազատ կը լինին քանի որ ոչ ոք պիտի կարողանայ վկայել թէ որ կառքն էր եւ ով էր այնտեղ նստած — բոլոր վկաները փոռած կը լինեն գետին:

Մտածուած է, որ մի որոշ տեղ հեռանալուց վերջը, կառքը բաց կը թողնեն եւ Ջարեհը եւ Ռուբինան կը գան Սաֆոյի մօտ պատասպարուելու, իսկ Երուանդը մաքսանենգ յոյնի մօտ, որը եւ վերջը նրան դուրս կը հանէ: Ջարեհին դուրս հանելու պիտի աշխատի Ռուբինան իսկ Սաֆոն — էմիլի հետ: Այդ բոլորը ի հարկէ գուտ ենթադրութիւններ են քիչ թէ շատ հաւանական: Գալոց օրերը ով գիտէ ինչ անակնկալներ են բերելու:



Յուց. Մարմնի անդամներ  
ՍԱՅՑ ԱՇՈՏ ՔՐԻՍ  
ԹՈՐԳՈՄ ՌՈՒԲԻՆԱ

Յուցական մարմնի ներկայ արձանագրութիւնները գրուած Լիսոն մահափորձի «նախօրեկին» ուղարկուած է պահեստի ժընեւ խմբագրութեան արխիւ: Նոյն արխիւին են ուղարկուած եւ նախկին ու վերջին արձանագրութիւնները:

Ներկայ արձանագրութիւնը բաղկացած է քսանութր թր թուղթերէ: Իւրաքանչիւր ետեւի էջ նշանակուած է ջնջուածների քանակը:

Գ. Լ. Ժ. Գ.  
[Գ. Ընդհ. ժողովի դիւան]

Բ 4.- ՍԱՅՑԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ

Նամակը առանց բուականի է եւ ստորագրութիւն չի կրեր, բայց ստուգապէս Սաֆոյի ձեռագիրն է: Գրութեան բուականը հաւանաբար 1905 թ. Մայիս-Յունիս ամիսն է, որովհետեւ Դաշնակցութեան Խորհուրդի նիստերուն ներկայ ըլլալէ ետք Սաֆո մեկնեցաւ Փարիզ՝ պայքուցիկ նիւթերու քիմիագէտ փրոֆ. Ռուբանովիչի մասնագիտական կարծիքը ունենալու համար:

Արեւմտեան Բիւրոյին

Սիրելիք

Գալուս չփոշմանեցի: Վաղը դուրս եմ գալիս ուղղակի Վիեննա: Միտք չունի ժընեւ մտնել 1-2 օր նորից կորցնել: Մասնագէտի հետ երկու անգամ տեսակցութիւն ունեցայ: Նրա տուած տեղեկութիւնները խիստ հետաքրքիր են եւ մանրամասն: Թուերը, Ֆորմուլաները, գրքեր եւ դասախօսութիւններ ձեռքին նա տուեց մեզ համար հետաքրքիր տեղեկութիւններ: Այնքան բարեխիղճ վերաբերուեց, որ առաջին տեսակցութեանս նա միայն լսեց հարցերս եւ խնդրեց 3 օր ժամանակ պատասխանելու հարցերիս հաւաստի կերպով: Երբ նկատեց, որ շտապում եմ, 3 օր չեմ կարող մնալ, աւելացրեց, թէ կարող եմ եւ վաղը պատասխանել եւ այս ըրպէիս, բայց այդ կը լինի հիմնուած միայն յիշողութեան վերայ: Երէկ վերջապէս գնացի եւ լսեցի հետեւեալը, որը աւելորդ չեմ համարում եւ ձեզ գրել, պէտք կը գայ:

1) 30 մետր շառաւիղով մի տարածութեան համար ([շառաւիղը 30 մետր է])<sup>67</sup> բաւական է ... տասը (10) կիլո միլիմիտ բայց հալեցրածը:

2) Նոբելի<sup>68</sup> դինամիտ, 75%օի նոյնպէս 10 կիլո բաւական է: Միլիմիտը (20%օի չափ) ի հարկէ հալածից այն տարբերութեամբ, որ դինամիտի ոյժը աւելի շատ ներքեւ է մղուում, քան միլիմիտինը:

3) Փոշի միլիմիտը, եթէ լաւ տեսակի է, պակաս է իւր ոյժով հալեցրած միջ մինչև 30-35%:

Մանօթ.- Վատ պատրաստուած փոշի միլիմիտը կարելի է ճանաչել հարուածով: Եթէ հարուածից (ուժեղ) պայթեց — վատն է:

4) Որպէսզի փոշի մ-ով 30 մետր տարածութիւն ջնջել [ուղղուի], հարկաւոր է ապահովութեան համար վերցնել լաւ փոշուց ոչ թէ 30-35%, այլ կրկնակի — 20 կիլո ուրեմն:

20 կիլոյի պայթումի ուժը բաւական է 30 մետր տարածութեան վերայ ոչնչացնել ամէն ինչ:

Եւ երբ ես հարցրի թէ նա կարող է երաշխաւորել այդ տարածութեան վերայ ոչինչ կենդանի չի մնալ եթէ պայթէ ոչ թէ 20, այլ 100 կիլո — Օ... կարելի է վստահութեամբ երաշխաւորել ու ես երաշխաւորում եմ այդ ոչ միայն 30, այլ 50 մետրի վերածել: Յետոյ պատմեց ինչպէս հալել, եթէ հալածն ենք գործածելու, կամ չորացրնել, եթէ փոշին: Պէտք է գիտցած, որ խոնաւութիւնից վախենում է մ[իլիմիտ]ն եւ պէտք է նա չոր լինի: Չօրա-

ցընել կարելի է մինչև 100 աստիճան չոր տաքութեան մէջ մէկ երկու ժամ թողնելով:

Որպէսզի իմանալ, թէ փոշին չոր է թէ խոնաւած, խորհուրդ է տալիս ամենապարզ միջոցը, այն է զգալու կշիռի միջոցաւ լցնել մի ապակեայ սրուակի մէջ մի քիչ փոշի կշռել: Ապա երկու ժամ չորացնելուց վերջը, նորից կշռել եւ կ'իմացուի կշռի տարբերութիւնից խոնաւութեան չափը:

Երկար կը լինի միւս մանրամասնութիւնները գրել: Խնձորների մասին նա ասաց նոյնը, որ պատերի վերայ յոյս դնելը սխալ է: Գլխաւոր գործը նիւթի գազային ոյժն է, իսկ պատերի բեկորների գործը բոլորովին պատահական է եւ այդ պատահականութեան վերայ երբեք չէ պէտք յոյս դնել: Նոյնը եւ 20 կիլոյի մասին, որ պատերը նշանակութիւն չունի. բաւական է, որ տրուած քանակութիւնը որքան կարելի է սեղմուած եւ ամփոփ լինի, որովհետեւ ոյժը հակադիր յարաբերական է նրա, նիւթի բռնած տարածութեանը: Այսինքն 1 կիլո միլիմիտն եթէ տեղաւորես օրինակ մի ամանի մէջ, որի տարածութիւնը 500 Ե.Ե. է, նա կ'արտադրէ ասանք X ոյժ: Եթէ 1 կիլոն սեղմես 250 Ե.Ե տարածութիւն ունեցող ամանի մէջ, նրա արտադրած ոյժը կը լինի համարեա երկու անգամ աւելի: Հալեցրած եւ սառեցրած միլիմիտը դա ացիդ պիկրիկն է, պայթեցիկ նիւթերի մէջ ամենաուժեղն է: Ուրեմն, ինչպէս տեսնում էք, կարող ենք վստահ լինել, թէ մօտ է օրը:

Ապակիները չինել տուի իսկական չափին, բայց միայն 10-12 հատ կարողացայ մի կերպ վերցնել գործարանի ծառայողից: Սկզբից ընդունեցին պատուէրը 40 հատ[?], բայց երկրորդ օրը դիրեկտորը պահանջել էր գրաւոր նամակ եւ ոստիկանական անքետի<sup>69</sup> հարց: Քիչ մնաց խայտառակութիւն դուրս գար: Կասկածել էին:

Կառքի գործը ինչպէս երեւաց հաւաքած տեղեկութիւններից, այստեղից անյարմար է դէպի Լիս ուղարկել: Հեռու է. ճանապարհածախսը խիստ մեծ է ուստի եւ կասկածելի: Միայն Վիեննայում պէտք է առնեմ եւ կամ որ աւելի հաւանական է — տեղումը:

67.- Բնագրին մէջ ռուսերէն:  
68.- Ալֆրետ Նոպեյն (1833-1896), շուէտացի յայտնի գիտնական եւ ուժանակի հնարիչը եւ միեւնոյն ժամանակ հիմնադիրը գրական, գիտական եւ մարդասիրական հանրածանօթ (որ անունը կրող) մրցանակին:  
69.- Բնութեան, խուզարկութեան հարց:



**Բ 5.- ՍԱՖՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ**

Սիրելիք,

Դրամը շատ ուշացրիք, մանաւանդ Լիսինը: Այնտեղից ինձ հայհոյում են, գանազան յիմար ենթադրութիւններ են անում — «դրամ է, ի հարկէ»... սայլով(?) «դժուար է դրամ ուղարկելը»... եւայլն: Այնտեղի ծախսերը շատ են եւ անյապաղ, ուստի անմիջապէս փոխադրեցէք եւս հինգ հազար, Պարիզի վերայով եւ կամ ուղարկեցէք Ֆիլիպպէ, այնտեղից ես կը փոխադրեմ: Ստացածս 5711 կրոնից (8000 ֆր.) 3000ը փոխադրեցի Լիս:

Պատուէրս պատրաստ է արդէն, այսօր տեսայ — լաւ է: Վաղը ճանապարհ կը ձգեմ եւ վաղը ինքս էլ ճանապարհ կ'ընկնեմ էմիլի հետ Ֆիլիպպէ: Ուրեմն հասցէս — Ֆիլիպպէ Պրոնին — Սաֆոյի համար:

Անցագիրս, ինչպէս որ կայ թէ իմ ուղարկած թերթիկներով եւ թէ մաքրածներով նոյնպէս շատ շուտով ուղարկեցէք Ֆիլիպպէ: Ուրիշ անուն կրել ինձ դժուար է, պաշտօնական եւ ոչ պաշտօնական տասնեակ եթէ ոչ աւելի մարդիկ ճանաչում են ինձ եւ էմիլին իբրեւ ՄՄ — անխոհեմութիւն է արել անունով երեւալը: Նորոգելու կամ բաժանելու միտքը թողի, որպէսզի մի շաբաթն էլ այդ չխլէ մեզանից:

Ստեփանի<sup>70</sup> գալը անհրաժեշտ չէր միայն խորհրդակցութեան համար: Ուրիշ բան է, եթէ գալս լինէր յատուկ գործերով: Այլեւս ուշ է: Ֆիլիպպէի ընկերներից մէկի տրամադրութեանը առանձին գումար թողնելու համամիտ եմ: Կը գնամ այնտեղ, կը գրեմ ո՛ւմ, ո՛րքան: 1500 ֆր. հաշիւը անձամբ կը տեսնեմ եւ կը վճարեմ, եթէ մօտս այդքան մնայ:

Մեր նամակների ծրարների վերայ կը գրենք սրանից վերջը դրսից — «Մադիկից» — իսկ ներսից — արդէն ծրարներից եւ դրոշմանիչերից կ'երեւայ, որ Լիսից է խնդրում եմ այդպիսիք չթողնել սեղանի վերայ խմբագրատուն օրերով... ներողութիւն:

Բացուած եւ չկարդացուած նամակը, որի համար աւելորդ վկայութիւններ է բերում Ստեփան, ուղարկում եմ կարգալու եւ արխիւը դնելու, ինչպէս եւ Լեոնի նամակը:

Մնդիկի Ռուբինայի հետ ուղարկելը լաւ է, բայց Ռուբինայի գալու հարցը ինքն ըստ ինքեան դեռ թէական է: Նա չի կարող գալ եւ պասսիւ դեր կատարել [պաշտպանել եւ ո՛ւմ]<sup>71</sup>:

Այդ նրա բնաւորութեան հակառակ է. գիտեմ, իսկ ակտիւ գործ նրան յանձնել, ի նկատի ունենալով նրա ջղայնութիւնը — այդ էլ վերջին ծայր անխոհեմութիւն կը լինէր մեր կողմից, գործի տեսակէտից: Ի հարկէ նա

անպայման լաւ ոյժ է եւ անվախ եւ անձնուէր, բայց մի անսպասելի ձայն, մի աննախատեսելի հանգամանք կարող է ակամայից ցնցել նրան եւ ուշագնաց անել է՛ն կրիտիքական վայրկեանին: Յամենայն դէպս, դժուար հարց է նրա գալն էլ, չգալն էլ, եւ ես դեռեւս վերջնական իմ կարծիք թողնում եմ մօտ ապագային գրելու իրան, երբ կը վերջացնեմ Ֆիլիպպէի փորձերը:

Բարեւներով՝ ՍԱՖՈ

**Բ 6.- ՍԱՖՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՐՈՅԻՆ**

Արեւմտեան Բիւրոյին, Սիրելիք,

Փորձերը վերջացան կատարեալ յաջողութեամբ: Այժմ կարող եմ ձեզ վստահօրէն ասել, որ Նժոյգի սմբակը միայն պիտի մնայ: Մանրամասնութիւնները վերջը կը գրեմ:

- 1) Սպասում եմ Pune-ի անցագրին. շտապեցէ՛ք խնդրում եմ:
- 2) Շտապեցէ՛ք նոյնպէս փոխադրել Երուսաղէմի անւանը, Ֆիլիպպէ, տասն եւ հինգ հազար, որից 5-ը անմիջապէս հարկաւոր է Լիսում:
- 3) Լիսի հասցէներից ոչնչացրէ՛ք Poste Francaise N 6 B Butner-ի հասցէն: Ոչինչ առանձին չէ պատահել, զգուշութեան համար է, քանի որ Վիեննայում պատուիրածս «դրամարկղը» ուղարկուած է այդ հասցէով: Լիսի համար հասցէ, մինչեւ նորի ստացուելը, առայժմ կարող էք օգտուել Poste Allemande Caisse (համար պէտք չէ) M<sup>me</sup> Anna Nelens Pera

Դրամարկղը վաղը կամ միւս օր կը լինի Լիս: Սպասում եմ անհամբեր նամակի:

Բարեւներով ՍԱՖՈ

Այսօր հեռագրեցի ձեզ անցագրի եւ դրամի մասին:

Ֆիլիպպէ, 12 Մայիսի [1905]

70.- Ռուտոմի:

**Բ 7.- ՍԱՖՈՅԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՍՏՈՄԻՆ**

Սիրելի Ստեփան,

Ռուբինայի կանչելու հարցը որքան էլ որ չբողոք խնդրում էք, շատ դժուար հարց է մնում ըստ էութեան: Ոչ ոք չի կասկածում նրա ցանկութիւնների օրինաւորութեանը, նրա անվեհերութեանը եւ ոյժերի բարձրութեանը. բայց եւ այնպէս, ախր, ինչպէ՛ս յանձնել մի վերին աստիճանի ծանր եւ փափուկ գործ, այն էլ ակտիւ դեր այդ գործի մէջ, երբ անուրանալի է, թէ նա իւր նեարդների տէրը չէ: Թէ անկախ իւր ցանկութիւնից, կամքից, հակառակ նրանց, կարող է մի ձայն, մի մտապատկեր յանկարծակի ցնցել թուլացած եւ զգայուն ջղերը: Միթէ՞ նա չէ՞ր ցանկանում Ահարոնեանի պատմութիւնը մինչեւ վերջը լսել Բագուի անցքերի մասին, բայց հակառակ իւր բուռն ցանկութեանը, կէսին՝ ուշագնաց եղաւ: Միթէ՞ իրանից անկախ էր, որ ուշագնաց եղաւ, երբ ես Յուլիանի մասին էի պատմում... եւայլն, եւայլն տասնեակ դէպքեր: Տիկինը [Միշէլ] երկու երեք անգամ յրնթացս մի ամբողջ տարուայ ուշագնաց եղաւ: Վերջին անգամը նոյն երեկոյին, երբ Լիսից ճանապարհ ձգեցինք էլլէնին եւ Ռուբինային: Հետեւեալ օրը բոլորս միաձայն պաշտօնապէս որոշեցինք ի նկատի ունենալով այդ դէպքը, Տիկինը ոչ մի դէպքում թոյլ չտալ վերջին օրը ունէ ակտիւ մասնակցութիւն հարսանիքին: Իսկ օրիորդը այժմ չէ՞ որ աւելի եւս զգայուն է եւ դիւրաւ ուշագնաց է լինում, քան տիկինը: Ինչպէ՞ս ուրեմն օրիորդի մասին այլ որոշում տալ: Այդ որոշումը դեռ ուղարկած չենք ձեզ: Լիսի թղթերի մէջ էլ ուղարկուի:

Գիտեմ թէ ո՛րքան ծանր է օրիորդի դրութիւնը եւ ո՛րքան նա աւելի իրաւունքներ ունի տիկնոջ հետ համեմատելով, եթէ այստեղ յարմար է իրաւունք բառը գոր-

ծածել, բայց եւ այնպէս, հակառակ առողջ դատողութեան, հակառակ երկու բժիշկների էլ միաձայն կարծիքին, լսել միայն սրտին, փափկասրտութիւնը հասցնել մինչեւ այնտեղ, որ մի այսպիսի գործի մէջ ակտիւ դեր տալ նեարդներով հիւանդ մարդու, աշկարա հիւանդ մարդու, այդ կը լինէր յանցանք, կարծում եմ: Տասնեակն օրուայ առողջութիւնը միթէ՞ կարող է գրաւական լինել յետագայ օրերի: Օրեր, որոնցից իւրաքանչիւրը լիք պիտի լինի էլլէնին յիշելու տասնեակ առիթներով, սուր կերպով յիշելու: Իսկ թէ իւրաքանչիւր այդպիսի յիշողութիւն ինչով է վերջանում, մենք այդ այժմեանից գիտենք:

Գիտե՛ս ինչ, չկարծես թէ հեշտութեամբ եմ գրում այս բոլորը: Երկար մտածել, տանջել է ինձ այդ հարցը եւ դեռ չեմ կարողացել վերջին խօսքն ասել: Ուստի խնդրում եմ, շատ եմ խնդրում մի քանի օր էլ թող համբերէ (այսքան համբերել է): Ինքն էլ նոյն կարծիքին էր, նրա գալը աւելի շուտ չպիտի լինի, քան հարսանիքից միայն մի շաբաթ առաջ... Իսկ մինչեւ հարսանիքը դեռ կայ... մի քանի շաբաթներ... Ուրեմն շտապելու ոչինչ չկայ դեռ:

Այսքան ասեմ քեզ եւ իրան, Ռուբինային, որ Աշոտի ներկայութիւնը զնալով վտանգ է սպառնում մեզ ամբողջ գործին, վատ նշաններ են երեւում... Այդ մարդու դուրս գալը Լիսից մեծ բարեբարութիւն կը լինէր գործի համար... Եւ գործի ամենատաք օրերին ստիպուած ենք մեր սեփական ախոռը մաքրելու հարցով զբաղուել... Դժբախտութիւն է սա եւ մեծ... Այսօր ստացայ թորոգումից մի նամակ, որից երեւում է որ նա սկսել է եւ շարունակում է խաղեր խաղալ... Մախա՛ւ՛ս<sup>71</sup>...

ՍԱՖՈ

71.- Վերջապէ՛ս, ինչեւից:



**Բ 8.- ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ**

Նիստ Յուլիսի 16-ին [1905]

Միաձայն որոշուեց՝

1) Քրիստափորի եւ Շապուհի թաղման բոլոր ծախսերը գրել Արեւմտեան Բիւրոյին անցկացնել Յուլիսի մարմնիս հաշուին:

2) Շապուհի ծնողներին աջակցութիւն տալ կարմիր խաչից 1000 Ֆր. իսկ մինչ ախտեղից ստացուելը ժամանակաւորապէս վճարել Յուլիսի մ.նիս հաշուից:

3) Ինչ վերաբերում է Քրիստափորի որդու եւ այլ ընկերակցի ապահովելու հարցին, մանաւանդ առաջինին՝ իբրեւ խոշոր դրամագլուխի կարօտ հարց, խնդրել առաջիկայ Ընդ. Ժողովից, իբրեւ թոյլ նշան ուշադրութեան դէպի վաղաժամ ընկած՝ ամբողջ Դաշնակցութեան մեծ երախտիք ունեցող աւագ ընկերը, միջոց գտնել այդ հարցը դրականապէս լուծելու:

4) Մրանից մի ամիս առաջ Աշոտը հարց դրեց իւր ընտանիքը ապահովելու. ի նկատի ունենալով որ իրան սկզբից էլլէնի միջոցաւ ուղարկուած 2000 Ֆր-ը եւ 500 էլ վերջը - ընդամէնը 2500 Ֆր-ը չի բաւեր ընտանիքին, քանի որ գործը ուշացաւ տարուց աւելի: Մարմինս ի նկատի ունենալով որ այն 2500 էլ որ վճարուել է, թէեւ Յուլիսի մարմնի հաշուից, բայց ոչ ի պաշտօնէ, ապագային կարմիր խաչից ստանալու պայմանով, թէեւ չէ իրագործուած այդ. ի նկատի ունենալով, որ կազմ. կանոններին մէջ ընտանիք ապահովելու հարցը օտար է մանա-

ւանդ երբ ընտանիքի տէրը դեռ կենդանի է եւ նրա կեանքին ոչ մի վտանգ չի սպառնում առաջմ եւ չի էլ նախատեսուում, որոշեց՝ մերժել այդ խնդիրը իբրեւ մի խնդիր, որը իրաւունք չունինք նոյնիսկ քննութեան ենթարկելու:

5) Որոշուեց թէ իբրեւ ճանապարհածախս եւ թէ միերկու ամսուայ ապրուստ, վճարել Լիսից գործից առաջ դուրս գալող ընկերներին՝

- Ջարեհին իբրեւ պահեստի գումար - 1180 Ֆր.
- Արամին - 250
- Մկրտիչին - Ամերիկա գնալու համար - 600, բացի դուրս հանելու ծախսը (տե՛ս հաշիւը Քրիստի)
- Աշոտին - 89 [?]
- Թորգոմին - 800
- Քրիստին - 500
- Տիկ. Ժորիսին - 240
- Երուանդին - 500+40 շորի
- Գրիսին - 300 բացի կնոջ յետ գալու ծախսը

Դուրս գալող ընկերները՝ Թորգոմ, Աշոտ, Քրիստի լիազօրութիւն են տալիս մնացող երկու ընկերներին՝ Ռուբինա եւ Սաֆօ - դեկավարելու գործը արդէն որոշուած սահմաններում, մինչեւ նրա աւարտը, որը երկու օր յետոյ սպասուում է լինելու. անակնկալ դէպքերում նրանք նոյնպէս լիազօր են ի պահանջել հարկին այս կամ այն որոշում[ը] տալ գործը գլուխ բերելու նկատմամբ եւ իրագործեն այդ որոշումը:

**ՔՐԻՍՏ ԹՈՐԳՈՄ**  
**ՌՈՒԲԻՆԱ ԱԱՅՕ**

**Գ 1.- ՍԱՖՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻՆ**

Արեւելեան Բիւրոյին

Մրանով խնդրում եմ եւ պահանջում պատշաճաւոր մարմնի դատաստանին ենթարկել Յուլիսի մ[արմ]նի անդամներից Սաֆոյին, որպէսզի պարզուի իսկական արժէքը այն անուանարկութիւնների, յեղաթիւրումների<sup>72</sup> եւ զրպարտութիւնների, որոնք շշուկների ձեւով տարածուում են ականջից ականջ «ազնիւ բարեկամներին» կողմից:

ԱԱՅՕ

20 Մայիսի 1906 թիւ  
Բագու

**Գ 2.- ԻՄ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐԸ**

Լսելով որ պն. Սաֆոն իր գրած տեղեկագրի մէջ

1) առաջ է բերել իմ անունը եւ իր ցանկութեան համեմատ խեղաթիւրել ու սխալ մեկնաբանել իմ խօսքերը, ընկերներ Քրիստափորի եւ Էդուարդի մահուան մանրամասնութիւնների վերաբերմամբ, այնպէս որ

2) անձնական նկատումներով այդ իմ խօսքերից հանել է հրէշաւոր ու ոճրագործ եզրակացութիւններ, կարդալով այդ տեղեկագիրը, պարտքս եմ համարում ուղղել այդ կէտերը, հնարաւորութիւն տալու համար ընկերներին հասկանալ պն. Սաֆոյի հոգին:

Ընկեր Էդուարդը, ժրնեւ անցնելիս կանգ առաւ Քրիստափորի մօտ, լսեց ուսմբերի պատրաստութեան մանրամասնութիւնները եւ պահանջեց մինչեւ «Խորհուրդին» գնալը խնձորի փորձ անել, որպէսզի

1) «Խորհուրդում իմ սեփական կարծիքն ալ ունենամ պատրաստութիւնների մասին»

2) անձամ[ը] նետելը սովորած լինելու համար: Որովհետեւ ժամանակը կարճ էր, եւ փորձեր անելու անյարմարութիւններ կային, Քրիստափորը հնարաւոր էր գտնում յետաձգել: Բայց Էդուարդը պնդում էր, որ դժուար բան չկայ եւ եռանդուն կերպով ինձ հետ միասին տեսաւ անհրաժեշտ պատրաստութիւնները (նիւթերը հաւաքել, կարտէզ, .....<sup>73</sup>, թուղթ տախտակների համար եւայլն): Փորձի օրը ձիւն էր գալիս, մակեղոնացիներ, ես եւ Էդուարդը գտանք որ անյարմարութիւնը այնքան էլ մեծ չէ, որ փորձը յետաձգենք: Առաւել եւս, որ արդէն կարեւոր փորձը արել էինք Թաթար-Բագարչիկ, մի հեշտ եւ պարզ կրկնութիւն պիտի լինէր:

Գնացինք փորձի, ուսմբեր լեցրինք, խօսք եղաւ

կապսիւլի եւ ֆիտիլի<sup>74</sup> մասին: Նախկին փորձերի ժամանակ պատրոյգի երկարութիւնը 4-4.5-5 սանտիմ է եղել, բայց որովհետեւ ուսմբը ընկնելուց երկար ժամանակ չէր պայթում, ուստի Քրիստափորը առաջարկեց կարճացնել մինչեւ 3 սանտիմետր: Իսկ ես որ հակառակ էի փորձի ժամանակ այդչափ կրճատելուն, կտրելու ժամանակ աւելացրի եւս 0.5 սանտիմետր - ընդամէնը 3.5 սանտիմետր:

Չեմ իմանում ի՞նչ հասկանալի «թիւրիմացութեամբ» պարոն Սաֆոյի յիշողութեան մէջ այդ 3.5 սանտիմետրը կրճատուել է մինչեւ 2.5ի

Բարձրացանք լեռը եւ թեթեւ վիճաբանութիւններից յետոյ կանգ առինք դէպքի տեղը: Չորակի լանջքի առուն 3.5-4 մետր էր, այդ կը վկայի ընկեր Երուանդը, որ տեսել է տեղը եւ այստեղ է հիմա:

Քրիստափորի եւ Էդուարդի մէջ տեղի տարածութիւնը հազիւ 1.5 մետր էր: Պարոն Սաֆոն նրա երկարութիւնը հասցնում է 4 մետրի, Քրիստափորին ազատելու հնարաւորութիւն տալու համար:

Երկրորդ ուսմբը պայթելուց առաջ, երբ Լիպպովի առաջարկութեամբ «գնանք հեռուից դիտենք պայթումի էֆեկտը<sup>75</sup>», գրեթէ բոլորս հեռանում էինք ձորակից, Քրիստափորը խորհուրդ էր տալիս մեզ չհեռանալ, չնայել պայթելու ժամանակ, աղաչում էր մնալ ձորա-

72- Պէտք է ըլլայ խեղաթիւրումների:  
73.- Բնագրին մէջ ուսեթե՛ն: Աճընթե՛նՅե՛լի բառ:  
74.- Պատրոյգի:  
75.- Արդիւնքը, տպաւորութիւնը:

կում «ամենապահով» տեղում, որովհետև այնտեղ կարող է կտոր հասնել: «Եթէ ձեզ հետ մի վատ բան պատահի, ես հստակից տուն չեմ գնալու», կրկնում էր նա մեզ ձորակում պահել աշխատելով, (երեւի բոլոր 12 հոգու էլ կոտորելու — նպատակով!?):

Հակառակ նրա ցանկութեան մենք առարկելով ձիւնը, ջուրը, թրջուած ոտքերը եւ այլն բարձրացանք բլուրը:

Էդուարդը պայթելուց առաջ պահանջում էր Քրիստափորից տալ իրեն նետելու ռումբը: Վերջինս կրկնում էր «սպասի՛ր, գէթ մի հատը քցեմ, տե՛ս, սովորիր, յետոյ էլ դու կը քցես»: Բայց յամառ կերպով էդուարդը պատասխանում էր — «ի՛նչ բան է որ, սանկ մէկ, վերջը նետիր, պարզ գործողութիւն մը, ես պիտ նետեմ»:

Ձիջելով նրա թախանձանքին, առաւել եւս, որ էդուարդը վշտանում էր, Քրիստափորը տհաճութեամբ սուլաւ նրան ռումբը:

Ես թողեցի նրանց կանգնած դիրքերում, էդուարդը կանգնած, ծառի ճիւղից բռնած, Քրիստափորը 1.5 մետր հեռաւորութեան վերայ մինչև ծունկերը ձիւնի մէջ թաղուած:

Ահա այն կէտերը որոնց վերաբերմամբ պարոն Սաֆոն թոյլ է տուել դիտաւորեալ մեկնութիւններ անել:

- 1) պատրոյգի երկարութիւնը
- 2) Քրիստափորի եւ էդուարդի մէջ տեղի տարածութիւնը:
- 3) էդուարդի բռնուցանկութիւնը կատարել փորձերը:
- 4) Քրիստափորը չէ տուել ռումբը էդուարդին, այլ վերջինս գրեթէ զօռով է առել նրանից:

\*\*\*

Գալով այն հրէշաւոր ստոր մտածողութեան, թէ «հայրիկը» դիտմամբ ուզեցել է սպանել էդուարդին եւ ազատել իրեն, յիշելով երկուսի փոխադարձ յարաբերութիւնները, այն հայրական գուրգուրանքը, այն ընկերական բուռն սէրը, որով շրջապատել էր Քրիստափորը էդուարդին, այն սքանչացած ուշադրութիւնը, որով նա լսում էր էդուարդի ձայնին, նրա ոգեւորուած յոյսերին եւ միւս կողմից այն անկեղծ ու անբիծ որդիական-ընկերական վերաբերմունքը էդուարդի կողմից, — յիշելով այս բոլորը չեմ կարող գարշանքս չյայտնել մարդկային ստոր մտածողութեան մի այդպիսի արտայայտութեան, որ վիրաւորում է երկու նահատակ ընկերների յիշատակը:

*Կարանտին Լամբարդիան*

ԿՈՆՍԱԿԵՆԻՆ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆՑ

Թիֆլիս, 21ին Յունիսի

**Գ 3.— ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՔՐԻՍՏԻ ՆԱՍԱԿԻՑ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ԹՈՐԳՈՍԻՆ**

Դաշնակցութեան Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներու՝ Պոլսոյ Յուց. Մարմնի անդամներէն Սաֆոն դատի ենթարկուելուն առթիւ Քրիստի Ֆիլիպպէէն ինձ գրած (1906 Յունիս 17) թիւի մի նամակի մէջ յիշեալ դատի վերաբերութեամբ գրուածները:

..... Գալով մեր դատի մասին, արդէն երէկ Սաֆոնէն ալ նամակ մը առի որ կը յայտնէր թէ Թիֆլիզ կ'երթայ դատուելու. ես հիմա չեմ գիտեր թէ մինչեւ այս նամակս ստանալը արդեօք դատը սկսած են թէ ոչ. ես անպատճառ կը պահանջեմ եթէ միջոց կայ, իմ նամակս ստանալու հետագրով զիս կանչելու՝ ներկայ լինել այդ դատին, քանի մեր գործի շուրջը կը դառնայ. եւ ես արդէն Սաֆոնէն Օդեսսա ստացած մէկ նամակիս պատասխանած էի որ ես կը ցանկամ լինել այդ դատին, սակայն այն ժամանակ երբ լինելը յայտնի չէր: Եթէ մեղադրանք եւ դատապարտութիւն կայ մեզ ամէնուս ալ պէտք է լինի, քանի մենք որոշ չափով հաւատացած ենք եւ համոզում գոյացուցած Քրիստափորի դէպքի համար: Եւ ինչ իրաւունքով միայն Սաֆոնի պիտի դատապարտեն քանի այդ ամէն գրուածը Մարմնի կողմէ եւ նրա հաւանութեամբ եղած է, ուրիշ է որ ես չեմ յիշեր Քրիստափորի մասին գրուածը կարդացած լինեմ: Բայց ես շատ լաւ կը յիշեմ Սոֆիայի դէպքերու նկարագրութիւնը:

Վերջապէս ես կը ցանկամ եւ կը պահանջեմ եթէ հնարաւորութիւն կայ զիս ալ կանչել ապա թէ ոչ ես երբեք չպիտի ընդունիմ տրուած որոշումները: Ինձ համար բացարձակապէս վատութիւն է այսպիսի կենսական վայրկեանին թողնել որ միայն Սաֆոնի վրայ ծանրանայ ամէն բան. դա կը լինի անբացատրելի նամերդութիւն մեր կողմէն, մենք որ միատեղ ենք մտածած. ես նորէն կ'ըսեմ եթէ ժամանակ կայ ինձ հետագրով անպատճառ կանչէ որ գամ. ես Սաֆոնին ալ պիտի գրեմ:

Թէ եւ ես այդ դրամաներու ժամանակ կազմի մէջ չեմ եղած այսուհանդերձ լսած եմ, եւ վերջն ալ Լեապովը ժընեւ Քաֆէ Լիդիկի մէջ ինձ խօսած է որ — մենք ամէնքս ալ կը գուշակէինք որ անպատճառ հոն գէշ բան մը պիտի պատահի եւ ինքը Լեապովը, որպէսզի Վաւրը չհասկնայ, Քրիստափորի հետ ռուսերէն խօսած է որ ետ կենայ այդ փորձէն: Սակայն Քրիստափորը իբրեւ վախկոտ մարդ ընդունելով Լեապովին հետագուցած է. Լեապովը այնքան եղած է՝ իր խօսքին նայելով, որ ինքը ուզած է այդ խնձորը նետել սակայն Քրիստափորը չէ ձգած. յետոյ Անտոնը ժընեւ ինձ խօսեցաւ ի հարկէ առանց հասկնալու իմ հարցնելու նպատակս որ մինչեւ այն ատեն բոլոր եղած փորձերը Ֆիթիլը Յ սանթիմետրէն պակաս չէ եղած:

Վերջապէս պէտք է ամէն նկատում ու հաշիւ մէկդի թողուլ եւ խօսել իբրեւ ճշմարիտ մարդ. մենք հիմա ոչ թէ Սաֆոնին անձին համար է որ պէտք է ամէն բան իր իսկական գոյնով պարզենք, այլ անոր համար որ մենք ալ հաւատացած ենք եւ պարտաւոր ենք ըսել իբրեւ գաղափարական մարդ:

ԹՈՐԳՈՍ

**Գ 4.— ԹՈՐԳՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՐԵՒ. ԲԻՒՐՈՅԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ**

Ընկեր Թորգոմին

Արեւելեան Բիւրոն խնդրում է պատասխանել հետեւեալ երկու հարցերին.

- 1) Կարդացել էք արդեօ՞ք այդ (Յուցակ. մարմնի) տեղեկագիրը ստորագրելիս:
- 2) Եթէ կարդացած էլ չէք, բայց հիմա բովանդակութեան հետ ծանօթանալուց յետոյ կը ստորագրէի՞ք այդ տեղեկագիրը թէ ոչ:

Ի դիմ[աց] Արեւել. Բիւրոյի Մշեր<sup>76</sup>

Մ. Ք. 26 VII 06

Սոֆիայի մէջ Քրիստափորի եւ էտուարի պատահած դէպքը լսելիս, սկիզբը մենք կասկածի մէջ էինք թէ մի գուցէ այդ դէպքը դիպուածի կամ չնախատեսուած սխալ հաշիւի մը հետեւանք չլինի:

Սաֆոն Պուլկարիայէն Պոլիս վերադառնալուն այդ դէպքի մասին այնպիսի վկայութիւններ բերաւ հայ եւ պուլկար ակնատեսների կողմից որ մեզ մեր կասկածներուն մէջ հաստատեց. եւ մենք բաւական սեպեցինք այդ վկայութիւնները, մեր կասկածները մեր տեղեկագիրին մէջ արձանագրելու:

ԹՈՐԳՈՍ

**Գ 5.— ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՀՐԻԿԵԱՆԻ ՆԱՍԱԿԸ ԱՐԵՒ. ԲԻՒՐՈՅԻՆ**

Արեւել. Բ.- ընկերներին!

Ստանալով Վիշապի մարմնի արձանագրութեան քաղուածքի պատճէնը, մեր երէկուայ, ամսիս 29ի նիստի մէջ ուշադրութեան առնուեց:

Համաձայն այդ արձանագրութեան, հետեւեալ կէտերը իբր փաստացի ամբաստանութիւններ ուղղուած են հանգուցեալ էլլէնի դէմ:

1) Որ հակառակ մարմնի որոշման, եւ էլլէնի իւր տուած խոստմանը՝ հանգուցեալը պահել է Ռուբինային իւր մօտը Բոլղարիայում:

2) Չնայելով որ որոշուել եւ արձանագրութեան մէջ մտցուել է եղել թէ՛ բացի բանտարկութեան եւ մահաւան պատճառներից, որոշուած ժամանակին որեւէ պատճառով Վիշապում ներկայ չլինելու ընկերներից ո՛չ ոք իրաւունք չունի, նախ Սարգիսը՝ իւր գրած նամակներով — այն էլ խաբուսիկ, հակասական ձեւերով — որից տեղեկութիւն է ունեցել հանգուցեալը, իրան փոխարինող թեկնածու առաջարկելով, աշխատել է էլլէնին ազատել ձեռնարկութեան հաւանական վտանգներից: Յետոյ, էլլէնը՝ ինքը առաջարկելով մի ուրիշ ընկերով մուտքը Վիշապում իբրեւ արհեստաւոր, մտադրութիւն է ունեցել նրան փոխարինել տալ իրեն<sup>77</sup>:

3) Հակառակ խորհրդի անդամների երկար ժամանակ սպասելուն, հակառակ Արեւմ. Բ.-ի ստիպողական պահանջներին, իրանց կողմից խորհրդին մասնակցելու համար ուղարկուած ընկեր Շապուհին պահել է «էլլէնը իւր մօտ կատարելիք փորձին ակնատես» լինելու համար, եւ այն այլ էլ նոյնիսկ ...<sup>78</sup> նրան զցել տալով ու ամենավտանգաւոր կերպով պատրաստելով եւ հրահանգելով:

Այս արձանագրութեան ընթեռնելի կերպով գծուած տողերի պարզ ու որոշ ասուածը՝ թէ փաստերը ներկայացնում են առանց ջողը յետ առնելու, աւելի եւս խորհրդաւորութեամբ է վարագորում ամբաստանութիւնները:

Իսկ այն տեղեկութիւնը՝ թէ այս արձանագրութիւնը չի համապատասխանում ստորագրողների համաձայնած սեւագրութեանը եւ արձանագրութիւնը ստորագրել տալով վստահութեան զեղծում է գործուած, հակառակ պարագայում գոնեա՛ Ռուբինան իւր էութեան

76.- Միտըր Արեւելեան Բիւրոյի անդամ բժ. Գամօ Օհանջանեանի ծածկանունն է:  
 77.- Ակնարկութիւնը կը վերաբերի Կոնստանդինոս (Գամբարձումեան):  
 78.- Կախման կետը պէտք է ամբողջացնել «ձեռնառում» բառով:

դէմ եղող արձանագրութեան տակ չէր ստորագրի, աւելի եւս բնորոշում է արձանագրութեան տենդենցիան<sup>79</sup>:

էլլէնը՝ որ եղել է մեր խոչալների մարմնացնող էակը, որ առաջին հիմնադիրներէ մինը, գուցէ եւ ամենաառաջինը եղել է կազմակերպութեան, որ իւր ամբողջ էութիւնը դրել է Հ.Յ.Դ.-եան համար, որով միայն նա ապրել է, որի հոգիի բարոյութիւնն ու մաքրութիւնը պատկառանք է ազդել նոյնիսկ օտարներին ու հակառակորդներին, որի նահատակութիւնը ընդհանուր ողբ է առաջացրել, անպայման չափազանց բարձր ու հեռու է Սաֆոյի, մեզ նման մահկանացուների քննադատութիւնից եւ ամբաստանութիւններից: Էլլէնը չէր կարող վատանալ եւ խոյս տալ իւր իսկ ծրագրի իրագործումից, չէր կարող ո՛չ միայն իւր ընկերոջ՝ այլ եւ իւր թշնամիի մահուան պատճառ լինել, չէր կարող իւր սեփական միտումներին նախադասել, յագուրդ տալ ի վնաս ընդհանուր գործին:

Հակառակ մտքերի ենթադրութիւններն անգամ մենք համարում ենք յանցանք ու սրբապղծութիւն, եւ զարմանում ենք թէ ի՞նչպէս Ք-ի ընկերներ թոյլ տուեցին մի այդպիսի յանցաւոր ենթադրութիւնների կամ ամբաստանութիւնների քննութեան ենթարկուելու հաւանութիւն են յայտնած [sic]:

Էլլէնի անբիծ յիշատակն ու Սաֆոն դէմ առ դէմ, իբրեւ հաւասարութիւններ, կանգնած պիտի դատուին ուրեմն:

Մենք մեզ վիրաւորուած ենք զգում այդ վարմունքով:

Երէկուայ մեր նիստին ներկայ եղող բոլոր ընկերները միաձայնութեամբ որոշեցին դադարեցնել ո՛րեւէ ընկերական յարաբերութիւն Սաֆոյի հետ՝ մեր զայրոյթն ու գարշանքը յայտնել նրան, եւ առաջարկել մեր շրջանի ընկերներին ձայնակցել մեր այդ որոշման, եթէ, ի հարկէ, իրանք էլ մեր համոզմունքից են:

Ի դիմաց Հ.Յ.Դ. IV կեդր. կ.-ի ՆԻՒԹՐԱ

30 /VIII/ 908

Ոսկանապատ

Մանօթ.- Այս որոշումը յայտնուած չէ իւր ժամանակին Սաֆոյին — վերջինի բացակայութեան պատճառով: Այդ հիման վրայ՝ յայտնուած չէ եւ շրջանի մարմիններին ու ընկերներին:

Ռ. ԶՈՓՈՒՌԵԱՆ<sup>80</sup>

79.- Միտումը, նպատակը:  
80.- Ռ. Զոփուրեանը Լեւոն Թադևոսեանն է, Քրիստափորի քոջոք որդին, ծանօթ նաեւ Պապաշա ծածկանունով: Զորորող Ընդի. ժողովին մասնակցած է իբր պատգամաւոր Ոսկանապատի (Պաքո):  
81.- Արշակ Ղազարոսեանի (Սեպուհ) կենսագրութիւնը տեսնել «Դրօշակ»ի 1906 թ. (XVI տարի) Սեպտեմբերի (N° 9) թիւին մէջ, էջ 140-141:

Գ 6.- ՊԱՏՃԵՆ ՎԻՇԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆԱՍԱԿԻՆ

Կ. Պոլիս 31/13 Օգոստոս 1908

Վիշապի Վրէժ կոմիտէի

Հ.Յ.Դաշ. Պալք. Կ. Կոմիտէին

Ի Ֆիլիպէ

Ընկերներ,

1905 Յուլիս 21ի մահափորձի առիթով Վիշապի տեղական վարիչ ընկերներու մեծագոյն մասը վտանգուելով արտասահման ելաւ:

Օգոստ. 3ին վտանգուելով Պոլսէն մեկնեցաւ Յովակիմ Յովակիմեան (վասալուրականցի): Վանեցի, 25 տարեկան, ապահովագրութեան ընկերութեան մը մէջ գրագիր. զարգացեալ, քաջամտ Ֆր[անսերէն] անգլ[երէն] թրք[երէն] լեզուներու. այժմ կը գտնուի Նիւ-Եորք: Իր սեփական դրամով մեկնեցաւ: 1898էն ի վեր կը գտնուի Հ. Յ. Դաշնակցութեան մէջ:

Օգոստոս 6ին վտանգուելով Պոլսէն մեկնեցաւ Գարեգին Արմէնեան (Սուրէն Կամսարական). Պոլսեցի, 27 տարեկան, Կայս. անասնաբուժական վարժարանէն շրջանաւարտ, զարգացեալ, հմուտ թուրք., հայ եւ տեղեակ ֆրանսերէնի. 1898էն ի վեր Հ. Յ. Դաշ. մէջ:

Օգոստոս 6ին Սուրէնի հետ վտանգուելով Պոլսէն հեռացաւ Արշակ Թաշճեան (Շաւարշ). կարնեցի, 35 տարեկան, արհեստով կօշկակար. 1890էն ի վեր Հ. Յ. Դ. ի մէջ: Այս վերջին երկուքը տեղական ընկերներու օժանդակութեամբ եւ իրենց անձնական դրամով ու Պոլսոյ վերակազմեալ հնչակեան կուսակցութեան արձուած 825 դրուշի շնորհիւ յաջողեցան մեկնիլ: Այժմ կը գտնուին Ֆիլիպէ:

Սեպտ. 4ին ձերբակալուեցաւ Արշակ Ղազարոսեան, վանեցի (Սեպուհ). 25 տարեկան, Կայս. բժշկական վարժարանի ուսանողներէն. հմուտ ֆր. ի, հայ եւ թրք. ի: Նահատակուեցաւ սարսափելի տանջանքներու տակ Զափտիէի մէջ (մեր այս անձնուէր ընկերոջ կենսագրութիւնը պիտի ստանանք Ֆիլիպէ գտնուող մեր ընկերներէն<sup>81</sup>): 1898էն ի վեր Հ. Յ. Դ. ի մէջ էր:

Հոկտ. 10ին վտանգուելով մեկնեցաւ Պոլսէն Երևանդ Պէյլերեան (Նորայր), վանեցի, 24 տարեկան, ուսանող Կայս. բժշկական վարժարանի, հմուտ թուրք., ֆր. եւ անգլ. ի, 1901էն ի վեր Հ. Յ. Դ. ի մէջ:

Հոկտ. 10ին վտանգուելով մեկնեցաւ Նորայրի հետ միասին Կարապետ Գաբրիէլեան (Բաբգէն). պոլսեցի, 25 տարեկան, իշխմէճի, 1898էն ի վեր Հ. Յ. Դ. ի մէջ:

Այս վերջին երկուքը Վիշապի տեղական մարմնոյն դրամական ու բարոյական օժանդակութեամբ յաջողեցան արտասահման ելնել. այժմ կը գտնուին Եգիպտոս:

Հոկտ. 27ին ձերբակալուեցաւ Յարութիւն Աբգար-

եան (Հայկազն), պոլսեցի, 26 տարեկան, ոսկերիչ: Իբրեւ մարդ փախցնող ամբաստանուելով դատապարտուեցաւ 3 տարի բանտարկութեան: Կետր. բանտն է այժմ: 1896էն ի վեր Հ. Յ. Դ. ի մէջ:

1906 Յունուար 28ին ստիպուեցանք արտասահման իր ամուսնոյն քով դրկել մեր ընկերուհիներէն Տիկին Գաստաւել Թաշճեան: Պոլսեցի, 28 տարեկան, այժմ կը գտնուի Ֆիլիպէ. 1895էն ի վեր կը գտնուի Հ. Յ. Դ. ի մէջ: Տեղական մարմնի դրամական ու բարոյական օժանդակութեամբ մեկնեցաւ:

Վերոյիշեալները ուղղակի մահափորձի առիթով վտանգուած էին: Հարկ չենք տեսներ լիչել այն միւս ընկերները՝ որք մահափորձի առիթիւ ձերբակալուելով, այժմ կը գտնուին կեդր. բանտին մէջ եւ որք արդէն ձեզ ծանօթ են:

1908 Ապրիլ 18ին վտանգուելով մեկնեցաւ Պոլսէն Ներսէս Շահագեան (Ն. Շահնուր), վանեցի, 23 տարեկան, Կայս. բժշկ. վարժ. ի ուսանող, հմուտ թուրք. ֆրանս. հայ. եւ տեղեակ անգլ.: Տեղական եւ անձնական դրամով մեկնեցաւ. այժմ կը գտնուի Ֆիլիպէ: 1902էն ի վեր Հ. Յ. Դ. ի մէջ:

Ապրիլ 30ին վտանգուելով մեկնեցաւ Պոլսէն Գէորգ Թագուրեան (Հրատ-Հերակ), օրտուցի, 23 տարեկան, Կայս. բժշկ. վարժ. ի ուսանող, հմուտ թուրք., հայ, ֆր.: Մեկնեցաւ տեղական կազմ. դրամով եւ այժմ կը գտնուի Ամերիկա. 1902էն ի վեր Հ. Յ. Դ. ի մէջ:

Այս ընկերներու մեկնումէն կամ ձերբակալումէն յետոյ Կոմիտէի ներկայ անդամներու մնաց Վիշապի գործերուն ղեկավարութիւնը: Մեր առաջին գործը եղաւ՝ արտասահման եղած ընկերներէն գլխաւորաբար Ն. Շահնուրի, Սուրէնի եւ Շաւարշի խորհրդատու նամակներէն առաջնորդուած եւ մեր ծանօթութիւններով խոհանութեամբ տեղական ցրուած ուժերը ամփոփել, ընկերները խրախուսել, անոնց հետ ապահով կապ հաստատել, զանոնք ինքնազարգացման մղել եւ յեղափոխական գաղափարը տարածել: Ասոնք մեր ամենակարեւոր եւ հիմնական գործերը եղան:

Նաեւ ջանացինք եւ յաջողեցանք Կեդր. բանտի եւս ապահով հաղորդակցութիւն ստանալ՝ բանտարկեալ մի քանի ընկերներէն նամակներ եւ տեղեկագիր ստանալ իրենց եւ առ հասարակ բանտային վիճակի մասին, տեղական միջոցներով նիւթապէս եւ բարոյապէս օգնել անոնց, դրամ, հանդերձեղէն եւ քաջախրական գրութիւններ հասցնելով: Սակայն տեղական դրամը խիստ անբաւական դիմեցինք ձեզ, Պալք. Կ. Կոմիտէիդ, ուրկէ ստացանք Յուլիս 4ին 200 ֆր., որը ամբողջովին դրկեցինք կեդր. բանտ: Բաշխումի տեղեկագիրը արդէն ձեզ դրկեցինք:

Բանտի հետ մեր ունեցած յարաբերութիւնը կը կատարուի Հայկազնի միջոցաւ. միւս բանտարկեալներու հետ ուղղակի յարաբերութիւն պահել ոչ կարելի է եւ ո՛չ ալ հարկաւոր, քանի որ Հայկազնը մեր ամենավստահելի եւ անձնուէր ընկերներէն է եւ ասոր հետ արդէն

ապահով կապ ունեցած ենք:

Մեր կարեւոր գրադուամներէն մին ալ եղած է Նիկոմիտիոյ շրջանի մէջ գտնուող ուժերը կազմակերպելու գործը, զոր յանձնած ենք Հրայրի (Շնորհք Տէրմէնճեանի) որ գիւղերը կը շրջի առ այժմ իր սեփական դրամով ու միջոցներով:

Չոնկուլտաքի կազմակերպական գործերը կը վարէ Նիկախ (Հրանտ Փանոսեան) որ տարուոյն մէջ շատ անգամ առեւտրական գործով հոն կ'երթայ կու գայ:

Պարտք կը համարենք Վիշապի ներկայ ուժերը ամփոփ կերպով տեղեկագրել:

Կազմութիւն Վրէժ կոմիտէի

Կոմիտէն ընտրուած է տեղական կարող ընկերներու եւ արտասահման եղող ընկերներու համաձայն ընտրութեամբ: Կազմուած է 5 անդամներէ,

1) Արուսեակ Փանոսեան (Յոյակ) շրջանաւարտ Պոլսոյ ամերիկեան արղկանց գոլէճէն, զարգացած, քաջահմուտ անգլ. հմուտ՝ ֆրանս., հայ., գերմ., յունարէն: 21 տարեկան եւ պոլսեցի, ուսուցչութեամբ պիտի զբաղի:

2) Արմենակ Գարակէօզեան (Չալէն) 24 տարեկան, շապին գարահիսարցի, զարգացած, հմուտ ֆրանս., անգլ., թուրք., վաճառականի գրագիր:

3) Հրանտ Փանոսեան (Նիկախ) 23 տարեկան, պոլսեցի, Պէրպէրեան վարժարանէն շրջանաւարտ, զարգացած, հմուտ ֆրանս., անգլ., թուրք. եւ տեղեակ յունարէնի. վաճառական:

4) Եզնիկ Քաջունի (Հրուշան), 23 տարեկան, արաբկիրցի, Պէրպէրեան վարժ. է շրջանաւարտ, զարգացած, հմուտ ֆրանս., թուրք., գերմ. վաճառականի գրագիր:

5) Շնորհք Տէրմէնճեան (Հրայր) 28 տարեկան, կէյ-վեցի, Պէրպէրեանէ շրջանաւարտ, զարգացած, հմուտ ֆրանս., անգլ., թրք., վաճառական:

Կոմիտէի անդամներս 3-4 տարիներէ ի վեր Հ. Յ. Դ. ի անդամակից ենք:

Պոլսոյ մէջ գտնուած ընկերներ

Ամբողջ ընկերներ ընդհանրապէս արհեստաւորներ, վաճառատան պաշտօնեաներ եւ ուսուցիչներ են: Թուով 100էն աւելի են հաշուի առնելով բացի Պոլսէն շրջակայ ընկերներն ալ, ինչպէս Նիկոմիտիոյ, Կէյվէի, Գրճըլարի, Չոնկուլտաքի եւայլն: Ասոնց թիւը հետզհետէ ալ կը բազմապատկուի:

Ընկերներու մէկ մասով խումբեր կազմուած են, իսկ մնացեալները խումբերու վերածել առ այժմ կարելի չենք գտնել, որովհետեւ խումբ մը կազմուելու համար մասնակցող ընկերները պէտք է որ իրարու ներդաշնակ շատ մը յարմարութիւններ ունենան: Հետեւաբար ասոնք անհատապէս կապուած են կազմակերպութեան հետ:

Վիշապի մէջ գտնուող ընկերները առհասարակ նիւթական ոչ նախանձելի վիճակի մէջ գտնուելուն պատճառաւ դրամական օժանդակութիւն չենք կրնար ստանալ իւրաքանչիւրէն: Կան նուիրատու ընկերներ ալ:

# Գ. - 1904 - 1906 ՅՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆՈՂ ՅԱՆՉՆԱԽՄԲԻ ԿՈՂՄԵ

(ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԾ Դ ԸՆԴՀ ԺՈՂՈՎԻՆ)

Յուրացական մարմնի տեղեկագրի քննարկումն («Նիւթեր»-ու Գ. հատոր, էջ 195-221) և Ընդհ. Ժողովի մէջ անոր առաջին քննարկումն ետք, կազմուած էր Քննիչ յանձնախումբ՝ Մուլքանի ահաբեկման վիժած գործի քննութեան և պատասխանատուութիւններու ճշդումին համար: Ստորեւ այդ յանձնախումբի տեղեկագիրը, որ կը բաղկանայ հետեւեալ երեք բաժիններէն.-

ա.- «Տեխնիկական մաս», որ ամփոփուած է գարգոսալի մտաւարական տեսութիւններու մը 22 էջերու մէջ. կազմուած է,

ձեռագրէն դատելով, յանձնախումբի անդամներէն Արամ Մանուկեան:

բ.- «Կազմակերպական մաս», որ կը գրուէ նոյն չափի տեսութիւններու մը 48 էջերը. գրուած է Արշակ Վռամեանի կողմէ:

գ.- «Ընկերական յարաբերութիւններ» եզրափակիչ մասը գրուած է մեծադիր (21x34 սմ.) երկերթ բաղկերու 10 էջերու վրայ: Մանրատու ձեռագիրը կը պատկանի Եղիշ Քոփչեանի:

## Գ 1.- Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր N<sup>o</sup> 1

(Տեխնիկական մասը)

Ինչ կը վերաբերի մահափորձի պլանի և գործադրութեան ձևերի և բոլոր նախապատրաստութիւններին խնդրին, յանձնաժողովը վճռել է կանգ առնել հետեւեալ գլխաւոր կէտերի վրայ.

- I Խնձորների միջոցով մահափորձի ծրագիր
- II Կառքի միջոցով ծրագիր
- III Չուտ տեխնիկական պայմաններ
- և IV Ինչպէս է կատարուել մահափորձը:

Ամէն մի մասի մանրամասն քննութեան ժամանակ, առաջ եկան շատ հարցեր, որոնք ըստ էութեան կարելի է բաժանել 3 կարգի:

Ա. Հարցեր, որոնց մասին յանձնաժողովը այսպէս կամ այնպէս միայն ձեռքի տակ եղած նիւթերի մէջ կարող էր գտնել մի որեւէ պատասխան:

Բ. Հարցեր, որոնց մասին չի կարելի պատասխանել մինչեւ Մարմնի մնացած ընկերները ներկայ չլինեն, մինչեւ իսկ օժանդակ ընկերները:

Գ. Հարցեր, զուտ գիտական կամ տեխնիկական, որոնք կարող են լուծուել միայն մասնագէտների ձեռքով:

Վերջին երկու կարգի հարցերի մասին յանձնաժողովը ի հարկէ չէր կարող պատասխան տալ, և դրանց նա առանձնացրել է:

### ԱՄԱՆ Ա

Մահափորձի ծրագրի մասին. եթէ հաշուի չառնենք «Տարեկանը», որից «Ցուցականը» շուտով ձեռք բերւած, մշակուած էր միայն մի ծրագիր. կատարել մահափորձը Սելամլըքի օրը, այսինքն «չարաթականը»<sup>85</sup>:

Ձգելով պաւլիտից Սուլթանի կառքին մէջ խնձորներ, և պայթեցնել մէկ կամ մի քանի կառքեր մէծիտի<sup>82</sup> շուրջը: Էլլէնի և Վռամի մահից յետոյ, Սաֆոն կատարել է փորձերը Պուլկարիայում. և այդ նպատակաւոր մար է գտել միայն կանգ առնել կառքի պայթումի վրայ տեղաւորելով վերջինը մարգարանի հրապարակը: Յ. Մ. ը համաձայնեց նրա հետ և մահափորձը կատարուեց Յուլիս 8ին<sup>83</sup>:

Այս խնդրի շուրջը յանձնաժողովը դրել է մի շարք հարցեր.

Ուսումնասիրուած էր մի շարք խիստ պայմաններ, որոնց պէտք էր համապատասխանէին խնձորները:

Էլլէնը և իր օգնականները մօտ 3 ամիս աշխատել են այս առթիւ Պուլկարիայում:

Արձանագրութիւններից երեւում էր որ առաջին կառքի և խնձորների պայթումը պէտք է նպաստէին մահափորձի յաջողութեան և փոխադարձաբար միմեանց պիտի լրացնէին:

Իսկ մնացած կառքերի պայթումը պէտք է նպաստէր աւելի մեծ խուճապ ձգելուն:

Ըստ երեւոյթին այն ժամանակ Մարմնի գլխաւոր ուղղորդութիւնը դարձած էր խնձորների շուրջը: Իսկ կառքի մասին առ այժմ քիչ էր հոգացուում. այլապէս դոգումներն են<sup>84</sup> յայտնի չէ, որ կառքի պայթումի մասին լուրջ ուսումնասիրութիւն է արուած:

82.- Սզկիթից:  
 83.- Յուլիս 8-ը հիմ տոմարով է: Նոր տոմարով պէտք է ըլլայ 21ին:  
 84.- Փաստաթուղթերէն:

Յանձնախումբը նկատել է որ խնձորների միջոցով մահափորձի ծրագիրը Յ. Մ. ի կողմից ուսումնասիրուած էր բաւական մանրամասնօրէն:

Այս բոլորից յետոյ յանձնաժողովը անցել է հարցերի հետեւեալ կարգին:

I Ինչո՞ւ Յ. Մ. ը ձեռք է քաշել խնձորների միջոցի մահափորձից և կանգ առել միայն կառքի վրայ:

II Բաւական հիմնական էի՞ն խնձորների աննպատակաւորութիւնը այս ձեռնարկի մէջ գործադրութեան համար:

Այդ խնդրի մասին կան մի քանի նիւթեր նամակներում և արձանագրութեան մէջ:

Կան Սաֆոյի երկու նամակները գրուած Պուլկարիայից, ուր մանրամասն հաշիւ էր տալիս խնձորների փորձերի մասին. նոյնիսկ եզրակացութիւններ խնձորների պայթումի և կազմի, թէ որիայի և պրակտիկայի վերաբերեալ<sup>85</sup>:

Այդտեղ Սաֆոն ինքը գրում է, որ յոյս կայ այդ ուղղութեամբ խնձորները կատարելագործել: Որ արդէն Անտոն Գոչը մի քանի յուսալի նորութիւններ է մտցրել:

Յամենայն դէպս նա աւելացնում է որ այդ կատարելագործուած խնձորը հարկաւոր կը լինի կուսակցութեան այլ ձեռնարկների համար, և ոչ իրանց: Որովհետեւ իրանք ժամանակ չունին սպասելու: Այսպիսով հէնց Սաֆոյի խօսքերի հիման վրայ, կարելի է եզրակացնել, որ եթէ Յ. Մ. ը չչտապէր, այն ժամանակ ըստ երեւոյթին պէտք է ձեռք բերուէր նպատակաւոր մարտի խնձորներ: Այսպիսի հարց է ծագում, պէ՞տք է սպասուէր այդ ժամանակին, թէ թոյլատրելի՞ էր այդպիսի գործի յաջողութեան համար շտապելը, որի անյաջողութիւնը սպառնում էր մի նոր կոտորած:

Այս հարցերի պատասխանը յանձնաժողովը թողնում է Ընդհ. Ժողովին անելու և հրահանգելու՝ ապագայում նոյնանման դէպքերից խուսափելու համար:

Գալով կառքի միջոցով մահափորձին, այսինքն՝ քիչ ու շատ հեռաւոր կէտից պայթուցիկ նիւթի մեծ քանակութեան միջոցով՝ յանձնաժողովը ձգտել է պարզել հետեւեալ պայմանները:

- 1- Տեղի տոպոգրաֆիայի<sup>86</sup> պայմանները արդեօ՞ք ճշդութեամբ ուսումնասիրուած էին.
- 2- Կառքի համար ընտրուած էր արդեօ՞ք ամենանըպատակաւոր մար վայր, պայթած գազի գործողութեան կամ ազդելու համար:
- 3- Ուսումնասիրուած էր ամենաճիշտ հեռաւորութիւնը կառքի կանգնած տեղից մինչեւ Սուլթանը:
- 4- Ինչո՞ւ էր առաջնորդուել Յ. Մ. ը երբ ընտրել էր պայթումի որոշուած մոմենտը:
- 5- Ինչո՞ւ էր դժոխային մեքենային առաւելութիւն տրուել մարդուց: Եւ սա համապատասխանո՞ւմ էր գործի նիւթական և էթիկական<sup>87</sup> մասին:
- 6- Արդեօ՞ք ընդունելի է Յ. Մ. ի այն վստահութիւնը, որով նա կարծում է, թէ Սուլթանի շարժումները մեքե-

նայական են, ամէն անգամ համապատասխան և ամէն անգամ նոյնաժամանակ:

7- Քանի՞ անգամ էր ուսումնասիրուած Սուլթանի վերադարձի ժամանակը ջամիլից:

Այս հարցերը ամենակարտինալներն<sup>88</sup> են, և դժբախտաբար նրանց մասին կամ տեղեկութիւնները մակերեւութային են, կամ բոլորովին պակասում են:

Արձանագրութեան և նամակների մէջ չի խօսուում կառքի կանգնած տեղի և Սուլթանի միջեւ եղած տարածութեան տոպոգրաֆիայի մասին: Եթէ այդ հարցի մասին մարմինը հարկաւոր ուղղորդութիւն դարձնէր, այս էլ նկարագրուած և նկատուած կը լինէր, նոյնպիսի մանրամասնութեամբ ինչպէս միլիտարի արկղը, փորձերի ժամանակ ձիւղ դիակը, ժամացոյցը եւ այլն:

Ցուցական մարմնի անդամները ի վիճակի չեն եղել երեւակայելու թէ Մարգարանից մինչեւ ջամին գտնուում է նոյն հարթ տարածութեան վրայ և կամ եթէ նոյն հարթակութեան վրայ չէ, այլ զառիվեր, նա չի տա՞կ կ'երթայ, թէ ճանապարհին կայ մի որեւէ շինութիւն, պատ, խրամատ և վերջինները ի՞նչ բարձրութեան են, ինչ լայնութեան եւ այլն:

Հնարաւորութիւնը չկայ հասկանալու, թէ Սուլթանի ջամիի բակով անցնելուց ինչո՞ւ չի կարելի իրեն կամ կառքը տեսնել: Այն պատճառով որ մարդիկ կան առջեւ կանգնած, թէ օտարին է արգելուում: Այս բոլորը ահագին և գրեթէ ամենակարեւոր նշանակութիւնը ունին մահափորձի նիւթի հեռուից պայթելու միջոցին, հասկանալու համար մահափորձի յաջողութեան կամ անյաջողութեան կարելիութիւնը կամ հաւանականութիւնը:

Իսկ մինչ այդ Ջաւէն Արշակունու<sup>89</sup> կարծիքից երեւում էր, որ մարգարանի առաջ, խորունկ ընկած փողոցի դիմաց բարձրանում է չորս մետր բարձրութեամբ և երկաթեայ վանդակներով, իսկ ջամիի բակի դռան ներքեւ կանգնած է աշտարակը:

Եթէ այդ բոլորը ճիշտ է, ուրեմն Պ. Մ. ի ծրագրի նպատակաւորութիւնը կարող է լուրջ քննադատութեան ենթարկուել:

Տեղեկագրին<sup>90</sup> նայելով կառքի կանգնելու տեղը համարուել է ամենամօտիկ կէտը մինչեւ Սուլթանը. դժուար էր որեւէ բան հակադրել, եթէ չլինէին վերոյիշեալ կասկածները տեղի տոպոգրաֆիայի մասին: Այս պատճառով տեղեկագրի մէջ բերած այն կէտը թէ կառքի տեղը փողոցից մարգարան տեղափոխելը շահում է օդի մի քանի սմ. խորանարդ ոտաչափ, կարող է կորցրել իր ամբողջ արժէքը, եթէ կառքից մի քանի մետր ա-

85.- Տեսականի և գործնականի մասին:  
 86.- Տեղագրութեան, տեղագրական:  
 87.- Բարոյական:  
 88.- Ամեն գլխաւորները:  
 89.- Լուսանցքին մէջ Ջաւէն Արշակունիի դիմաց գրուած է Լիպակով:  
 90.- Ցուցական մարմնի տեղեկագիրը. տեսնել «Նիւթեր»-ու Գ. հատոր, էջ 195-221:



ուղ բարձրանում է) բաւականաչափ բարձր մի հողա-  
թումբ, որը կարող է պայթումն աւելի չէզոքացնելու  
վրայ ազդել:

— Յանձնաժողովի համար չպարզուեց եւ կառքի  
կանգնած տեղից մինչեւ Սուլթանի միջեւ եղած տարա-  
ժուկեան չափը:

Տեղեկագրի մէջ ասուած է որ ընդամէնը 20-25 քալ  
է. այսինքն մօտաւորապէս 15 մետր. իսկ մինչ այդ Յ.  
Մ-ի արձանագրութեան մէջ այդ մասին ասածուած է  
30-35 քալ է:

Յանձնաժողովը զարմանում է թէ ինչպէ՞ս է որ եր-  
կու պաշտօնական դոկումենտներու մէջ այդպիսի մեծ  
հակասութիւն կայ այս հարցի մասին:

Մինչեւ այդ Զաւէնի տեղեկութիւններու մէջ ասած-  
ուած է, որ հողաթումբի վանդակադռնից մինչեւ Զամի  
դուռը 15 մետր է: Եթէ սրա վրայ աւելացնենք եւ փողո-  
ցի լայնութիւնը, մարզարանի պատի լայնութիւնը, ձի-  
բի կանգնած տեղի լայնութիւնը եւայլն, այս տարածու-  
թիւնը կարող է շատ զգալի կերպով փոխուել:

Ոչ տեղեկագրից եւ ոչ արձանագրութիւնից, յանձ-  
նաժողովը չկարողացաւ պարզել Յ. Մ-ը, որ մոմենտում  
է որոշել պայթում առաջ բերել:

Ինչքան ժամանակ պէտք է դրուել տեւորիստներին  
պայթումը առաջ բերելու համար. եւ արդեօ՞ք ժամա-  
նակը այնքան քիչ էր, որ գործադրողը չէր կարող սղմել  
զսպանակը. եւ իրօք հարկաւոր էր) մարդը փոխարի-  
նել դժոխային մեքենայով:

\*\*\*

Անցնելով գործի տեխնիկական կողմին յանձնաժո-  
ղովը ձգտել է պարզել.

ա - Ի՞նչ հաստատուն հիմքեր է ունեցել Յ. Մ-ը վստա-  
հանալ մեծաքանակ նիւթի պայթման յաջող հետեւանք-  
ներին, որոշ տարածութեան վրայ:

բ - Յ. Մ-ը ունեցել է տեղեկութիւն այն մասին, որ  
այդպիսի պայթումը ոչ ամէն անգամ տալիս է բաւա-  
րար հետեւանքներ<sup>91</sup>:

գ - Արդեօ՞ք Յ. Մ-ը կազմել է արձանագրական որո-  
շում այն մասին, թէ ի՞նչ եղանակով պէտք է կատարուի  
պայթումը:

Ինչ պայմանների պիտի համապատասխանի մեխիտը:  
Պայթած նիւթի գազերը ի՞նչ խոչընդոտներ պէտք է  
յաղթահարեն:

Ի՞նչ տեսակ տեղեկութիւններ պէտք է հարցուէր  
մասնագէտ մարդկանցից:

Ի՞նչ երաշխիքների եւ միջոցների էր դիմած լաւ յատ-  
կութեան պայթուցիկ նիւթ ձեռք բերելու համար:

Արձանագրութեան եւ տեղեկագրի մէջ որեւէ օրա-  
կարգի որոշում այս կարգի հարցերի մասին: Այս շատ  
խոր կերպով աչքի է ընկնում, եթէ սրա հետ համեմա-  
տենք մասնաւոր նոյն մարմնի խնձորներով անելիք  
մահափորձերի կարգադրութիւնների հետ:

Այս խնդիրների շուրջը կայ Սաֆոյի մի նամակը,

Ռուբանովիչին հետ ունեցած խօսակցութեան մասին:

Այդտեղ կան Ռուբանովիչի կարծիքները մեխիտի  
եւ դինամիտի ուժերի տարբերութեան մասին: Եւ ինչ-  
պէս հեշտութեամբ մեխիտի ուժը 30% աւելանում է,  
վերջինի հալեցնելովը: Ինչպէս հասկանալ նրա լաւ յատ-  
կութիւնը եւայլն:

Բայց ինչպէս երեւում է գործից, Յ. Մ-ը քիչ է օգտը-  
ւել այդ ցուցմունքներից: Մինչդեռ այդ ցուցմունքների  
գործադրութիւնը կարող էր մեծապէս ուժեղացնել  
փորձի յաջողութիւնը:

Յանձնաժողովը դնում է հետեւեալ փաստերը.

Այն ըրպէից յետոյ երբ Յ. Մ-ը ինքն իսկ սկսել էր  
կասկածել մեխիտի անխարդախ լինելու յատկութեան  
մասին եւ ենթադրում էր որ ծախող վաճառականը խա-  
բել է իրանց եւ այս մասին գրուած էր Սաֆոյի — ընկեր-  
ները կասկածում են, թէ Տիւֆակչեւը մեզ խաբած լինի,  
վատ ապրանք տուած լինի — բայց եւ այնպէս նա չեն-  
թարկեց քիմիական անալիզի:

Այսպիսով Յ. Մ-ը ձեռնարկել է մահափորձին հէնց  
կասկած ունենալով նիւթի հարազատութեան մասին:

Այսպէս յանձնաժողովը չի հասկանում ի՞նչ հիմքով  
Յ. Մ-ը գանգատում է, որ մահափորձը չի յաջողուել,  
նիւթի մէջ խաբուած լինելու հետեւանքով:

Յանձնաժողովը Ընդհ. Ժողովի) առանձին ուշադ-  
րութիւնն է հրաւիրում այդ բանի վրայ, որ տեղեկագրի  
մէջ բերուած նիւթի անալիզը կատարուած է մահափոր-  
ձից յետոյ: Այսինքն միայն այն ժամանակ, երբ Յ. Մ-ը  
պէտք է ձգտէր իրանից հեռացնել անյաջողութեան պա-  
տասխանատուութիւնը:

Ամբողջական գաղափար տալու համար յանձնաժո-  
ղովը պարտք է համարում ծանօթացնել մի ուրիշ անա-  
լիզի հետ, որը թէ «հեղինակաւոր է» եւ թէ «պաշտօնա-  
կան», այսինքն Պոլսոյ արտելերիական (թնդանօթա-  
ձիգ) լաբորատորիայում կատարուածը: Այս մասին ըՄ-  
տամբող թերթում 1906 թ. Դեկտեմբեր, գրուած է) որ  
այդ անալիզի հետեւանքով, գտել են որ այդ նիւթը ոչ  
թէ մեխիտ է այլ streit — ստրիտ է, որի մասին ասուած  
է, որ եթէ ուժեղ չէ մեխիտից, յամենայն դէպս նրանից  
էլ թոյլ չէ:

Յանձնաժողովը իրան ձեռնհաս չի համարում այս  
հակասութեան մասին իր կարծիքը յայտնելու, եւ են-  
թադրում է, որ հարցը տրուելու է մասնագէտի:

1) Յանձնախումբը նոյնպէս ձեռնհաս չէ համարում  
իրեն որոշել, որքան արկղի պատերը համապատասխան  
էին իր նպատակին:

2) Որքա՞ն նպատակայարմար է պայթուցիկ կապ-  
սիւնների միայն կենտրոնում դնելը, երբ պէտք է պայ-  
թեցնել մեծ քանակութեամբ մեխիտը:

3) Որքա՞ն նպատակայարմար էր աւելացնել 3-4 թե-  
րեւս աւելի անգամ պայթուցիկ սնդիկի քանակութիւ-  
նը, որը տեղաւորուած է արկղով, մեխիտի մէջ:

91.- Լուսանցքին մէջ «իսկ ինքը չուճի». Սարգիս»:

Չէ՞ր կարող այդպիսի քանակութեամբ պայթումը  
այնքան ուժեղ լինել, որ նպաստէր արկղի աւելի շուտ  
քանդուելուն մինչեւ մեխիտի ամբողջական գազանալը:

Ծի էութիւնը պարզելուն:

Ահա այդ փորձերը. ամբողջապէս եօթ անգամ է.

4) Կարելի էր  
Ռուբանովիչի ա-  
սած (պրիումնե-  
րով) ձեւերով ի-  
րականապէս աւե-  
լացնել ձեռքի  
տակ եղած նիւթի  
պայթուցիկ ուժը  
եւ որքանո՞վ:

| ա. փորձ | մի անգամ    | 2 կիլոգրամ   | մեխիտ | 1.5 մետր | հեռու կենդանուց |
|---------|-------------|--------------|-------|----------|-----------------|
| բ. »    | պինդ լեցրած | 2 »          | »     | »        | »               |
| գ. »    | »           | 4 »          | »     | 2 »      | »               |
| դ. »    | »           | 4 »          | »     | 3 »      | »               |
| ե. »    | »           | 5 »          | »     | 4 »      | »               |
| զ. »    | »           | 14 »         | »     | 10 »     | »               |
| է. »    | »           | 30 «տակառով» | »     | 6-20 »   | »               |

5) Ի՞նչ ազդե-  
ցութիւն կարող էր ունենալ տեղի տոպոգրաֆիան գա-  
զի խորտակիչ ուժի տարածողութեան վրայ: Եւ Ռուբա-  
նովիչի հետ խօսակցութեան ժամանակ յայտնուած էր  
այդ տոպոգրաֆիայի մասին: Ի հարկէ գործի գաղտնի-  
քը չտալով:

Սաֆոյի երկու նամակներից յայտնի է, որ նա փոր-  
ձերը կատարել է տարբեր քանակութեամբ մեխիտի  
պայթումով: Եւ դիտել է նրա ազդեցութիւնը կենդանի  
եւ սատկած ձիերի ու գառան վրայ: Նա — ըստ տեղե-  
կագրի — ի նկատի է ունեցել ստուգելու այն, որ պայ-  
թումին ուժը կախուած է գազի պայթումից առաջ եկած  
օդի շարժումից:

Յանձնաժողովը կարծում է, որ Սաֆոն ի հարկէ կա-  
րող էր իր փորձերով հասնել այն բանին, որ արդէն  
պարզ է ամէնքի համար:

Յամենայնդէպս յանձնաժողովը այս հիման վրայ  
չէր կասկածում, որ կը գտնի եւ այնպիսի փորձերի նկա-  
րագրութիւն, որը կ'ապացուցանէին գործի աւելի կա-  
րելու կողմերը գոր օրինակ, Զամի շուրջը եղած տո-  
պոգրաֆիական պայմանները, ի՞նչ ազդեցութիւն կա-  
րող էին ունենալ պայթած նիւթի գազերի հոսանքի  
վրայ. եւ ի՞նչ քանակութեամբ նիւթեր էին հարկաւոր  
այդպիսի տոպոգրաֆիական տեղի վրայ եղած գործի  
յաջողութեան համար:

Ամէն ժամանակ մեծ քանակութեամբ պայթեցուած  
նիւթը միեւնոյն էֆէկտն է թողնում:  
Եւ անվրէժ պ ամէն անգամ է՞ ազդում միեւնոյն տա-  
րածութեան վրայ, ինչպէս ասել են այդ մասին Ռուբա-  
նովիչ եւ միւս մասնագէտը:

Յանձնաժողովը նոյնպէս աշխատել է գտնել Սաֆոյի  
թղթերի մէջ ուեւէ ցուցմունք այն մասին, արդեօ՞ք գիտէ  
նա, որ պայթումից առաջ եկած մրրկի ուղղութիւնը ու-  
սումնասիրուած չէ եւ յաճախ անակնկալներ է լինում,  
որոնք բոլորովին այլափոխում են ազդեցութեան հետե-  
ւանքները:

Այս բոլոր հարցերի պատասխանը, այն փորձերին,  
որ արել է Սաֆոն: Ուրիշ փորձերի մասին ո՛չ մի տեղ  
խօսք չկայ եւ հաւանօրէն չի էլ եղել: Յանձնաժողովը  
այստեղ դնում է այդ բոլոր փորձերը, որ ինքը ժողովը  
հասկանայ, թէ դրանք որքա՞ն կարող են նպաստել գոր-

Վերջին փորձը անյաջող է եղել. տեղեկագրողի խօս-  
քով նիւթը խոնաւացել է, եւ պայթել է 1/3 մինչեւ 1/2  
նիւթի. այսինքն 10-15 կիլոգրամ. ձին որ կանգնած է  
եղել 20 մետրի վրայ ստացել է ոչ լուրջ վէրք: Եթէ վեր-  
ջինք Ռուբանովիչի խօսքերը, որ ասում է «15 կիլոյի  
պայթումից 30 մետր շառաւիղով ոչինչ կենդանի չի  
մնայ», այն ժամանակ ձիու ստացած աննշան վէրքը,  
ըստ յանձնաժողովիս, այնպիսի փորձ է, որի վրայ  
պէտք է դառնայ Ընդհանուր Ժողովի խնամքոտ ու-  
շադրութիւնը:

Գազերի կապրիզոտ լինելու մասին, կա՛յ մի ցուց-  
մունք ո՛չ Սաֆոյի կողմից, այլ օժանդակ ընկեր Սարգսի  
նամակում: Նա հաղորդում է, որ դեռ Աթէնքի ժողո-  
վում, մեր ձեռքում գտնուած մի մասնագիտական  
գրքում («Ֆրանսերէն»)- ձեռնարկի մէջ պարզ ասած-  
ուած էր, 40.000 քիլո դինամիտ, (թէ չեմ սխալ՝ Բարսելո-  
նում) պայթել էր նաւի մէջ եւ 150-300 մետր տարածու-  
թեան վրայ գտնուող մարդիկ ազատուել են, այն ինչ  
հակառակ կողմը, մի քանի հազար մետրի վրայ, պա-  
տուհաններ էին փչրուել եւ նաւի տախտակներ գըտ-  
նուել): Յամենայնդէպս այս փաստը ըստ երեւոյթին  
Սաֆոյի վրայ չի ունեցել հարկաւոր տպաւորութիւնը:  
Այդպէս նա շարունակել է հաւատալ միայն կառքի  
պայթումի նպատակայարմարութեան:

Յանձնաժողովը կանգ է առել եւ նրա վրայ, թէ ինչ-  
պէս էր կատարուել մահափորձը:

Յ. Մ-ը այս մասին ո՛չ մի արձանագրութիւն չունի.  
միակ աղբիւրը ժողովին տրուած տեղեկագիրն է: Այս-  
տեղ նա այնքան գրոյցի եւ պատմուածքի ձեւ ունի, այն-  
քան է աղքատ իրական փաստերից, որ յանձնաժողովը  
չկարողացաւ շատ ծանրանալ նրա վրայ:

Տեղեկագրի մէջ ասուած է, որ արկղում տեղադրած  
էր 120 քիլո մեխիտ, այնինչ ժօրիւր պնդում է դատա-  
րանում որ ամբողջապէս 80 քիլո է:

Յանձնաժողովը ի վիճակի չէ հասկանալու, թէ որ  
կողմն է սխալուում:

Կառքի կանգնած տեղի մասին տեղեկագրի մէջ յիշ-  
ւած է, որ Ռուբինան ասել է կանգնել ենք ձիւտ որոշ-  
ւած տեղը, համարեա դռան մէջ:

Այս մասին տաճկական առաջին պաշտօնական հա-

դրողագրութիւնը ասում է, որ ջամիլից 100 մետր հեռաւորութեան վրայ պայթում է տեղի ունեցել:

Յանձնաժողովս ի վիճակի չէ պարզելու եւ այս թիւրմացութիւնը:

Տեղեկագրի մէջ զսպանակի սեղմելու ժամանակի մասին հետեւեալ գրոյցը կայ.

Սաֆօ — ճիշտ ժամանակին սեղմեցի՞ք:

Ռուբինա — լաւ էր, մի քիչ շուտ, շատ քիչ:

Սաֆօ՝ վախեցած — շուտ ինչո՞ւ:

Ռուբինա — Օ՛ մի վախենաք, հազիւ 5-10 քայլ էին արած, փողը հնչեց:

Յանձնաժողովս չհասկցաւ թէ Ռուբինան ինչո՞ւ ժամանակից քիչ շուտ է սեղմել եւ ի՞նչ նկատումներով է արել այդ բանը նա. այսքանը միայն կասկածից դուրս է, որ սա կարող էր լուրջ ազդեցութիւն ունենալ գործի հետեւանքի վրայ...

\*\*\*  
I

Այս բոլորը ամփոփելով յանձնաժողովս գտնում է, Որ հետեւեալ հարցերը.

ա - Նիւթի յատկութեան մասին

բ - Արկղում տեղաւորուած նիւթի քանակութեան չափը

գ - Պայթող սնդիկի օգտակար քանակը ըստ նիւթի քանակութեան

դ - Կապսիւլների մեկինիտի արկղում տեղաւորեցնելու ձեւի

ե - Կառքում եղած նիւթի պայթման պրոցեսի ընթացքի մասին, որը ձեռքի տակ կար մահափորձի օրը:

զ - Պայթուցիկ գազի դետոնացիա<sup>92</sup> եւ նրա հնարաւոր ազդեցութեան մասին՝ պաւլիտիոնում եղած խնձորների վրայ:

է - Չամիւի եւ մարգարանի տոպոգրաֆիական պայմանների ազդեցութիւնը՝ պայթումից առաջ եկած օդի եւ գազերի ալիքների հոսանքի վրայ:

ը - Սաֆոյի փորձերը ո՞րչափ համոզեցուցիչ էին մահափորձի յաջողութեան համար:

թ - Ի՞նչ տեսակի համեմատութիւն կար նպատակի հեռաւորութեան եւ նիւթի քանակութեան մէջ:

ժ - Ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ արկղի պատերի հաստութիւնը:

Կ - Եւ այլ նման հարցերը պէտք է դրուի մասնագէտների քննութեան:

II

Բացատրելու համար՝

ա - Ո՛ր էր կանգնած Յուլիս Յին կառքը եւ ուր պիտի կանգնէր:

բ - Մ՛րք էր զսպանակը սեղմուել:

գ - Ինչո՞ւ Յ. Մ. ը գերապատուութիւն է տուել մեքենային:

դ - Ի՞նչ մոմենտում էր որոշուած պայթեցնելու կառքը եւ այսպիսի մի շարք գործնական հարցեր կը լուծուեն այն ժամանակ, երբ կը հարցուեն Յ. Մ. ի բոլոր անդամներին եւ օժանդակ ընկերներին:

III

Դոգումենտների հետ ծանօթանալով յանձնաժողովի համար պարզուեց հետեւեալները.

ա - Յ. Մ. ը շտապել է գլուխ բերել մահափորձը: Նրանց առաջ բերած փաստերը շտապեցնելու համար բաւարար համոզեցուցիչ եւ հիմնաւորուած պատճառների տպաւորութիւն չեն թողնում:

Այդ մեծ եւ լուրջ գործի ճակատագիրը չպիտի կապուէր շտապեցնելու հետ եւ հաւանօրէն Յ. Մ. ը իրեն ոչ բոլորովին պատրաստ է համարել մահափորձին, այլապէս նա չէր աշխատի արձանագրութեան մէջ ինքզինքը արդարացնել, թէ հարկաւոր է շտապել:

բ - Յ. Մ. ը անտես է արել այն հիմնական օրէնքը, որ անհրաժեշտ է կոնտրոլի ենթարկելու վաճառականի տուած նիւթի անխարդախ լինելը:

Եթէ իսկապէս ճիշտ է որ նիւթը խարդախուած է եղել, ինչպէս Յ. Մ. ը ապացուցանում է իր տեղեկագրի մէջ, այն ժամանակ անյաջողութեան լուրջ պատճառները կարող են ծանրանալ նիւթի խարդախուած լինելու վրայ:

Այդպիսի դէպքում որքան մեծ պատասխանատուութիւն է ընկնում Յ. Մ. ի վրայ, որ ձեռնարկել է մահափորձը կասկածելի նիւթով:

գ - Յ. Մ. ը չի ուսումնասիրել գործողութեան վայրի տոպոգրաֆիան, իսկ նրա ներկայացուցիչ Սաֆոն՝ Ռուբանովիչի հետ ունեցած խօսակցութեան մէջ, չի բերել այդ վայրի իսկական տոպոգրաֆիան: Յամենայն դէպս տեղեկագրից եւ նիւթերից այդ յայտնի չէ:

դ - Յ. Մ. ը չի աւելացրել մեկինիտի ուժը Ռուբանովիչի ասած ձեւով: Մինչդեռ ըստ Սաֆոյի, այդ ձեւի ուժը 30% եւս կ'աւելանայ:

Այս բոլորի հիման վրայ յանձնաժողովը գտնում է, որ Յ. Մ. ը ձեռնարկի տեխնիկական նախապատրաստութիւնների նկատմամբ անփոյթ է գտնուել եւ կանգնած չի եղել իր կոչման բարձրութեան վրայ:

92.- Պայթումին առաջացուցած դրոյիւնը:

Գ 2.- Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր N<sup>o</sup> 2

(Կազմակերպական մասը)

Յանձնաժողովի վրայ դրուած երկրորդ գլխաւոր գործն էր, ինչպէս կը հետեւի հրահանգներէն, ջանալ ճշդել թէ Յուլ. մարմինը բարոյական պատասխանատուութեան տեսակէտէն որքան համապատասխան գտնուեցաւ իր ստանձնած գործին բարձրութեանը մասնաւորապէս եւ յեղափոխականի բարոյական մակարդակին ընդհանրապէս:

Իրեն յանձնուած տոքիւմաներու մանրակրկիտ քննութեան մէջ, յանձնաժողովը կանգ առաւ հետեւեալ կէտերու վրայ.

1 - Ի՞նչ հանգամանք ունէր ձեռնարկը եւ որքան կը գիտակցէին անոր կարեւորութեանը Յուլ. ի անդամները:

2 - Ձեռնարկին մեծութեան համապատասխան միջոցներ տրուեցա՞ն Յ. Մ. ին:

3 - Յուլ. Մ. ի անդամներու գործողութիւնները որքան համապատասխան էին ձեռնարկի իրագործման հաւանականութեանը:

4 - Յուլ. մարմինը որքան հետեւողական գտնուեցաւ իր որոշումներու գործադրութեան մէջ:

5 - Յուլ. Մ. ը իր գործողութիւններու մէջ ո՞ր աստիճան երեւան բերաւ յեղափոխական բարոյական անըսգիւտ ոգի մը:

\*  
\*\*

Հետեւինք քայլ առ քայլ Յ. Մ. ի գործերուն, սկսելով անոր կազմութենէն (առաջին ատենագրութիւն Յուլիս 18, 1904) մինչեւ վերջին տեղեկագիրը, որ ներկայացուեցաւ ժողովին:

Աթէնք գումարուած առաջին ժողովին՝ արդէն բացայայտ դրուած էր ձեռնարկը մարմնի առջեւ: Թէ որքան գիտակից էին գործին պատասխանատու եւ միանգամայն կարեւոր հանգամանքին, կը բաւէ կարդալ ատենագրութենէն զատ ձեռնարկի պատճառաբանութիւնները, որ զատ զատ գրուած են Քրիստափորի) եւ Սաֆոյի ձեռքով (կարդալ Ք. ի եւ Ս. ի պատճառաբանութիւններէն գծուած կտորները. եւ յատկապէս Ս. ի Հքնարականը):

«Ահա այն գործը եւ միակ գործը Վիշապում որ Յուլ. Մ. ը որոշել է իրագործել, առանց տատանումի եւ ոչ մի զոհաբերութեան առջեւ կանգ չառնելով իր կողմից»:

Այդ ծանր որոշումին հետեւանքն է եւ այն ներքին կանոնագրութիւնը, խմբագրուած Ք. ի ձեռքով, որ գործադրութեան պիտի դրուէր, երբ Մարմինը Վիշապ մտնելէ ետք եւ տեղական պարագաներուն ծանօթանալէ ետք՝ վաւերացնէր: Մեր կանոնագրութեան համաձայն «հասալիք» պիտի հռչակուին այն բոլոր ընկերները, որոնք տրուած պահուն չգտնուին իրենց գործին վրայ. միայն մահը կամ բանտարկութիւնը բացառութիւն կրնար ստեղծել: Մեր կանոնագրով Յուլ. Մ. ը կը պարտաւորուէր իր ամբողջ կազմով «գտնուիլ Վիշապում մինչեւ գործի աւարտը» (յօդ. 9):

Մահ Սուլթանին, սուրբ լինի ժողովրդի անունը, բացառանչութիւնով կը կնքուի ձեռնարկի որոշումը եւ մարմինը գործի կը սկսի:

Յուլ. Մ. ը մարմինը լրիւ է արդէն Աթէնքի ժողովին — Քր., Ս., Թ., Ա., Յոն. — յետոյ Յ(ոնան)ի հեռացումով՝ Շապուհ (Վ. Ք.), ժամանակ մը ետք Ռուբինա եւ Քրիս կը լրացնեն պակաս անդամները, ամէն պարագայի մէջ, Ընդհ. ժողովի ընտրած 2/3 կը մնայ մինչեւ ձեռնարկի օրը: Իսկ օժանդակ ընկերներն ալ միասին հաշուելով Տեղեկագիրը մինչեւ 20 կը հաշուէ գործին մասնակցի փափաքող եւ եկած ընկերներու թիւը, Դաշ(նակցութեան) գրեթէ բոլոր շրջաններէն անխտիր:

Ընկերական-բարոյական այդ գործակցութեան համապատասխան եւ աւելի էր կազմակերպութեան նիւթական աջակցութիւնը: Նախահաշուին մէջ Յ. Մ. ի համար որոշուած էր 150.000 Փրանք. ինչպէս կ'երեւի հաշուէն, Մարմինը գումար մըն ալ դեռ աւելցուցած է<sup>93</sup>: Ձեռնարկէն ետք տեղի ունեցած խուզարկութիւններու հետեւանքով գրաւուած նիւթերը եւ պարագաները ցոյց կու տան որ Մարմինը առատութեամբ ունէր իր տրամադրութեան, իր ձեռնարկին յատուկ պարագաները, բացառութեամբ մը, որու մասին քիչ յետոյ պիտի խօսուի:

93.- Լուսանցքի մէջ կապոյտ մատիտով գրուած է. «150.000 + 50.000 = 200000, աւելցած է 100 հազարի չափ»:

Ապահովարար կարելի է ըսել, ոչ մէկ Դաշ. Մարմին, կազմակերպութեան գոյութեան ամբողջ ընթացքին մէջ այդքան նպաստաւոր պարագաներու մէջ գործի սկսած չէ:

Ձեռնարկը գլուխ բերելու համար տակաւին սկզբէն երկու խորհուրդ եղած է — Մարգարի տեղեկագրէն կ'երեւի որ Քր[իստափոր] իր գլխաւոր յոյսը դրած էր ռուս-բերուն վրայ. նոյնը կը հաստատէ նաեւ Ժօռիս իր հարցաքննութեան մէջ: Նոյնը կ'ընդունի նաեւ Պոլսի Դեկտ. 1904 տեղեկագիրը, որ կը կրէ Յուլ. Մ.ի կնիքը. հող ըսած է որ Ք[րիստափոր] պերճանքի, «իւրաքանչիւր տեղ կ'ընդունէր կառքը:

Բացառապէս կառք գործածելու խորհուրդը կը պատկանի Սաֆոյին, նոյն Մարգարի եւ Ժօռիսի վկայութեամբ:

Յ. Մ.ը Աթէնքի մէջ ծրագիր չի կազմեր, այլ ընդհանուր գծերը միայն կ'որոշէ ձեռնարկին, թողնելով վերջնական որոշումը տեղին վրայ տալու: Եւ արդարեւ այդպէս ալ տեղի կ'ունենայ. Յ. Մ.ը 1904 Դեկտ. 5ին իր նիստին մէջ, Վիչապ, բոլոր ընկերներու ներկայութեամբ կ'որոշէ

- 1 — Խնձորներ նետել հիւրանոցէն.
- 2 — Ունենալ մէկ կամ երկու կառք մ[ելինիտով] լեցուն, որ պիտի պայթեցնէին առաջին խնձորին պայթումէն անմիջապէս ետք.
- 3 — Քանի մը վարձու կառքեր ունենալ գործին մօտակայքը, պատրուակաւոր ռուսներով, խուճապ առաջ բերելու համար:

Այս որոշումը գրուած է Շապուհի ձեռքով. ստորագրած են բոլորը — Քր., Շապուհ, Սաֆօ, Թորգոմ, Աշոտ:

Նոյն ժողովին մէջ կ'որոշուին ռաբաժիզները, իրենց հաւանութեամբ — Քր., Շապ., Սաֆօ, Կարօ, Աշոտ, Թորգոմ: Այդ վեցէն զատ իրենց հաւանութիւնը կու տան նաեւ երեք կիները:

Այս որոշումին համաձայն գոհերու թիւը մօտաւորապէս կը հաշուէին 7: Յ հողի ռաբաժիզներ, 1-ը կառապան՝ ռուս-կառքի վրայ: Միւս վարձու կառքերու մէջ նստող ընկերները ապահով կը նկատուին, քանի որ անոնք հեռանալու էին պատրոյզները վառելէ ետք:

Դեկտ. 5ի որոշումին համաձայն կը ձեռնարկուի անմիջապէս պատրաստութիւններու: Ք.ը Թ.ի հետ կ'անցնի Պոլս[կարիա] ռուսներու փորձերու ձեռնարկելու եւ ապահով տեղ մը գտնելու, հիւրանոցէն ռաբաժիզութեան համար:

Այդ փորձերն ապարդիւն չեն անցնիր. տեղեկագրի ըսելով, Ք. «մի վերին աստիճանի տաղանդաւոր գիւտ» մը կ'ընէ, կափարիչով ռուսներ չի ներկայ, այդ գիւտը կը մնայ կիսկատար. անակնկալ աղէտ մը եկաւ ջախջախելու ամէն բան — երկու թանկագին ընկերներու կորուստը խոստմնալից գլուխը կը գոցէ Պոլսի Մեծ ձեռնարկի

պատմութեան:

Ք. եւ Շապուհի մահէն ետք Ս. կը մեկնի արտասահման, ռուսներ փորձեր շարունակելու, մասնագէտներու հետ խորհրդակցելու եւ ըստ տեղեկագր[ի]ն կառքը ապրուարելու:

Այս ճամբորդութիւնը իբր հետեւանք ունեցաւ ամբողջ ծրագրին փոփոխումը: Սաֆօ Պոլս կը վերադառնայ, ապացուցանելու

1) Թէ խնձորներով ապահով արդիւնք կարելի չէ ձեռք բերել, 2) Թէ ռուս-կառքը 50 մեթր շառաւիղի վրայ ոչինչ կենդանի պիտի չթողու, քանդելով ժամացոյցի աշտարակ, հիւրանոց, մզկիթի առաջին մաս. «Նժոյզի սմբակը միայն պիտի մնայ»:

Ատենագրութիւնը եւ տեղեկագիրը երկարօրէն կը պատճառաբանեն մեզ թէ ինչպէս այդ տեղեկութիւններու հիման վրայ, նկատի ունենալով նաեւ կարգ մը ուրիշ պարագաներ, վերջնապէս կ'որոշուի հիւրանոցէն ռաբաժիզութեան խորհուրդը վերցնել ու ձեռնարկը կեդրոնացնել միմիայն կառք-ռուսներ վրայ:

Այդ պատճառաբանութիւնները համոզիչ չեն թուիր մեզի: Տեխնիկական քննութեան մէջ արդէն ըսուած է մեր կարծիքը այս մասին, թէ որքան անբաւարար էին Սաֆոյի փորձերը կառք-ռուսներ ուժը փորձելու մասին, կատարուած Սոֆիա, փորձերը բոլորովին անհամապատասխան թէ մասնագէտներու հաղորդած տեղեկութիւններուն, թէ մեծ պայթիւններու մասին ծանօթ դէպքերուն եւ թէ ձեռնարկի տեղագրութեան:

Իսկ ռուսներու նկատմամբ շարունակուած փորձերը թէ Սաֆոյի եւ թէ Ա. Գօշի կողմէն, ընդհակառակը զգալի կատարելագործում մը ցոյց տուած էին:

Հիմա գանձ այն կարգ մը պատճառներուն, որոնք առաջ կը բերուին արդարացնելու համար առաջին յատակագծի կամ խորհուրդին խափանումը եւ երկրորդին վերջնական ընդունումը:

1) Թէ «Ձոհուելու արտաքին յարմարութիւններ» չունին խնձորաւորները եւ սակայն 1904 Դեկտ. 5ին որոշուած վեց անձերէն միայն երկու հողի պակասած էին — էլլէնը եւ Շապուհը: Կը մնար ուրեմն այդ երկուքը լրացնել, քանի որ կիներէն երկուքը՝ էմիլ եւ Ռուբինա միշտ տրամադրելի էին իբրեւ օգնական ծառայելու:

Ատենագրութիւնը կը յիշէ որ այդ միջոցին Սարգիս եւ Աբրահամեան կը հրաժարին իբրեւ խնձորաւոր գալու, բայց չի խօսիր թէ Յ. Մ.ը միջոցներ ձեռք առած լրաց «զոհուելու արտաքին յարմարութիւն» ունեցող ուրիշ մարդիկ գտնելու համար, այնքան բազմաթիւ կամաւորներու մէջէն կամ դրսէն:

2) Երրորդ պատճառ մը կը բերուի թէ կանանց հագուստին տակ պիտի տարուին այդ ռուսները. օրերը տաքած լլլալուն՝ կարելի չէր որ կիները երկար վերարկուներ եւ կարենային հագնիլ — հետեւաբար դժուարացած էր:

Այս փաստը կրնար ծառայել գործը փութացնելու համար, եթէ միայն վերը յիշուածը միակ բացառիկ ու տարամբժ միջոցը լլլար ռուսները ներս մտցնելու: Սակայն խնդիրը հոն է որ այդ փաստը կը գործածուի ռաբաժիզութեան հրաժարելու համար: Արդ միթէ՞ ուրիշ հնար չկար ռուս տանելու հիւրանոցը: Պոլս այցելող ընկեր մը ուրիշ հնար մը առաջարկած էր, բայց ատոր խօսքն անգամ չեն ընել որ տեղեկագիրը՝ եւ ոչ ալ կնիքով ատենագրութիւնը:

3) Թէ հիւրանոցի հետ կապելով կառքին պայթիւնը՝ դժուարութիւններ կրնան եղեր առաջ գալ: Թէ կարելի չէ միաժամանակ ապահովել խնձորին պայթիւնը եւ կառքը:

Այն փաստաբանութիւնը թէ ձիերը խրտչելով կրնան կառքը տեղէն շարժել — հակառակ արդիւնքն ալ կրնան ունենալ. ճիշդ այդպիսի խառնակութիւնէ օգտուելով, պատեհութիւնները կ'աւելնան ձիերը առաջ քշելու — եւ աւելի մօտ կ'տ մը ընտրել, օգտուելով ընդհանուր խուճապէն: Եւ այդ պատեհութիւնները կրնային դեռ աւելնալ, եթէ մէկի տեղ երկու կառք ունենային, ինչպէս որոշուած էր Դեկտ. 5, 1904ի նիստին մէջ:

Պոլսի ատենագրութիւնը կը կռթնի երկու գլխաւոր կէտերու վրայ. 1.- թէ աճապարելու ստիպուած էին, որովհետեւ խստութիւններ սկսած էին եւ 2.- կառքի պայթիւնով ամէն բան ջնջող թէրոնը<sup>94</sup>:

Տեղեկագիրը կու գայ քիչ մը տարբեր լուսաբանութիւն տալու գործին: Կրկնելով Ատենագրութեան մէջ յիշուած պատճառները, կ'աւելցնէ նորերը:

1.- Խստութիւնները շատցած են: Ապացուցանելու համար՝ առաջ կը բերուին երկու կարգի դիտողութիւններ. ա - Արամ[ի], Լեւոնի, Կարոյի ձեռքագրութիւնները, բ - կարգ մը նիւթերու մ[ելինիտ] եւ պատար[իա?] գրաւուիլը մաքսանենգներու ձեռքէն:

Արդ՝ ապրանքներու գրաւումը կառ[ավարութեան] կողմէ տեղի ունեցած էր Յուլ.ի ներս<sup>95</sup> մտնելէն առաջ, ինչ որ արգելք եղած չէր որ իրենք երթան տեղաւորւին: Իսկ Արամ, Լեւոնի եւ Կարոյի ձեռքագրութիւնը տեղի ունեցած էր էլլէնի Պոլսէն դուրս ելլելէն առաջ, 1904 Նոյեմբերին(?):

Եւ այդ դէպքն ալ արգելք եղած չէր որ մեծաքանակ մ[ելինիտ] եւ ուրիշ պարագաներ ներս փոխադրեն եւ իրենք տասնեակ անգամներ Սելամլըք երթան:

2 - Երկրորդ կարգի փաստերը՝ Սոֆիայի աղէտի մասին:

«Սոֆիայի աղէտը, մեր երկու ընկերների հայ լինելը, նրանց անուն ազգանունը լրագրութեան նիւթ դառնալը, Քրիստափորի լուսանկարի այդ օրերին Դրօշակի մէջ լոյս տեսնելը, Քրիստափորի որը ապրել էր Պոլսում, հիւրանոցում, եւ ապա ամբողջ ամիսներ Ժօռիսի տանը, միւս պատճառների հետ միացած եկան լրացրին տաճիկ կառավարութեան անհանգստութեան չա-

փը եւ գաղտնի ու յայտնի ուստիկանութեան ամբողջ ոտքի ելլելը» (երես 18, Տեղ.):

Այդ փաստը մեզ համար շատ ծանրակշիռ չի թուիր: Քրիստափորի պատկերը հրատարակուած էր Դրօշակի մէջ եւ ոչ Պոլսի կամ արտասահմանի օտար լրագրութեան մէջ եւ տաճիկ ուստիկանութեան ծանօթ կրնար լլլալ Քրիստափորի այն պատկերը, որ P.A.ի<sup>96</sup> մէջ հրատարակուեցաւ, իսկ այդ պատկերը բաւական հին լլլալով կը տարբերի Ք.ի 1905ի դիմագծերէն: Երկրորդ՝ Ք.ը Սամ[ուէլ] Ֆայն անունով ծանօթ էր միայն եւ իբրեւ հրեայ:

Ս. Ֆայնի Գրինի տանը ապրելը երեւան եկաւ մահափորձի դատաւարութեան ատեն միայն, եւ ո'չ անկէ առաջ:

Իսկ եթէ իրենք հաւատարի էին թէ այդ ամէնը ծանօթ էր ուստիկանութեան, մինչեւ անգամ Ք.ի բնակիլը Գրինի բնակարանին մէջ, ինչպէ՞ս միջոցներ ձեռք չառին ա/ Գրինը անմիջապէս հեռացնելու Պոլսէն, թ' ինչպէ՞ս վստահեցան ներս առնելու, միասին ապրելու եւ դեռ վերջին գործն ալ անոնց յանձնելու:

Թէ՞ որ մինչեւ այն օրը գաղտնի ուստիկանութիւնը կրնար հետամուտ եղած լլլալ նաեւ Ռուբինային եւ ձեռքագրել Ռ.ը, գործը ամօթալի վախճանով մի վիժեցնել: Խստութիւններ անտարակոյս եղած են, եւ միշտ կան ու կը կատարուին Պոլսի մէջ ջղաձգական կերպով, ամէն անգամ երբ Եւրոպայի մէջ մահափորձ մը տեղի կ'ունենայ վեհապետի մը կամ կառ. պաշտօնեայի մը դէմ, եւ կամ ոեւէ հայ կամ մակեդ[ոնական] գործի լուրը կը շրջի:

Բայց այդ խստութիւնները ինչ կապ ունին իրենց ձեռնարկին հետ: Սուլթանի անձին դէմ դաւադրութիւն մը երբեք մտքերնուն անցած չէ ուստիկանութեան կողմէ:

Տեղեկագր[ի]ն կ'երեւի դեռ որ այդ դէպքէն ետք, Սաֆոյի Պոլսկարիա գտնուելու պահուն, նոր եւ նպաստաւոր պատեհութիւն մը ստեղծուել էր, կառքը աւելի մօտեցնելու, քան առաջ կարելի էր, գործերու դասաւորութիւնը փոխուելով:

Պատճառներէն մէկն ալ, Թորգոմի ընկերոջ ձեռքակալուիլը եւ անոր մասին հարցուփորձ կատարուելն է: Եւ այդ միայն բաւական կը համարուի Թորգոմը վտանգաւոր ցուցնելու:

Աշոտի կասկածուած լլլալն ալ, իբրեւ փաստ կը բերւի՝ շտապելու մասին, մինչդեռ նոյն իրողութեան հեզնութեամբ կը վերաբերի Յ. Մ.ը եւ Աշոտի դէմ իր ամբաստանագրին հրդ կէտը կը դնէ անոր դատապարտութեան վճարարին մէջ:

94.- Տեսութիւնը:  
 95.- Ներսը գործողութեան վայրն է, այսինքն Պոլս:  
 96.- Pro Armenia:



3) Տեղեկագիրը քանի մը անգամ կը ծանրանայ թէ մարդիկ չունին եւ չեն տուած: Տպաւորութիւնը այն է որ դրսի ընկերները, Բիւրոյի անդամներ, խոյս տուած են գործակցելու այդ վտանգաւոր ձեռնարկին:

«Դրսից մարդիկ խնդրեցինք, չտրուեց (երես 20): Քրիստը եւ Ռուբինան Պատ. Մ. ընտրելու առթիւ նորէն կը կրկնեն նոյնը, «քանի որ դրսից նոր ուժեր գտնել չկարողացանք» եւ այլն:

Իբր թէ [Դաշնակցութեան] Խորհրդի մէջ եւս առաջարկել է ինքը. «լուրջութիւն եղաւ այդ պահանջի պատասխանը (իրար երես էին նայում)... (Չնջուած մասը)»:

Ճիշտ էր այդ «ողորբական» մերժումը եւ անկեղծ է այդ ամբաստանութիւնը:

Պոլսի ատենագրութեան մէջ երես 19 մենք կը կարդանք որ Սարգիս եւ Աբրահամեան երբ կը հրաժարին ներս մտնելէ, անձամբ Սաֆոյին, Խորհրդի ժողովի ատենը [կը յայտնեն]:

Այդ ատենագրութեան մէջ, ինչպէս նաեւ Յ. Մ. ի կողմէ [Դրոշակի] խմբ[ագրութեան] ուղղուած նամակներու մէջ ո՛րեւէ Հետք չկայ ո՛չ միայն այդ դառնութեան, այլ ծանր ամբաստանութեան, այլ դրսէն ընկերներ ուզած եւ մերժուած ըլլալու իրողութիւնն իսկ արձանագրուած չէ:

Ընդհակառակը Յ. Մ. կը մերժէ ընդունիլ գործակցութիւնը ճիշտ այն կարգի մարդոց, որոնք «զոհուելու արտաքին յարմարութիւնը ունէին», կը մերժէ ընկեր Արշակունիի<sup>99</sup> մակեդ[ոնացի] ստիպողական առաջարկը մասնակցելու գործին:

«Ներսի ընկերներս բաւական են գործի համար»- այս է Պոլսի ատենագրութեան վճիռը, ու դեռ ուրիշ ներս գտնուած ընկերներ ալ Հետզհետէ դուրս կը հանեն Պոլսէն:

Դրսէն ընկերներ չդրկելու ամբաստանութիւնը անտեղի կը գտնէ յանձնախումբը, հիմնուելով վերի փաստերուն վրայ:

Այդ համոզումը կը լրանայ երբ նկատի կ'առնենք նոյն տեղ[եկագրի] ուրիշ մէկ պատճառաբանութիւնը ումբաձգութիւնը մերժելու մասին՝ երբ Տեղեկագիրը խնձորաւորներու թուին պակասը առաջելէ ետք կ'աւելցնէ. «եթէ անհրաժեշտութիւն եւ հնարաւորութիւն տեսնէինք, մի հոգի էլ լինէր, այնուամենայնիւ կը գնար (երես 17):»

Արդ՝ եթէ «անհրաժեշտութիւն» եւ «հնարաւորութիւն» չկար, ո՛չ երեք ընկերներու պէտք ունէին, ո՛չ կրնային պնդած ըլլալ, ոչ ալ տեղի կար Տ[եղեկագրին] մէջ այդ ձրի ամբաստանութիւնը կատարելու:

Աւելորդ կը համարենք կանգ առնել Տեղ. ի նոր մէկ պատճառին վրայ — թէ Աթէնքի կանոն[ագրի] յօդուածով պէտք էր որ ձեռնարկը տեղի ունենար .....

Աւելորդ է, քանի որ ինքը Սաֆոն կ'ընդունի Սոֆիայէն իր Մայիս 1905 նամակով թէ «մեռած տառ» է մնա-

ցած անոր ամէն մէկ որոշումը եւ չէ վաւերացուած»:

Այդ կանոնագիրը այլ կարգի որոշումներ ալ ըրած էր, որ նկատի չառաւ Յուլ. Մ. ը, ինչպէս կը տեսնենք վերջը, Հետեւաբար իբրեւ փաստ գործածելը առնուազն միամտութիւն է:

Տեղեկագիրը թուելէ ետք բոլոր այս պատճառները, բերդապահի մը առակին օրինակովը լուսաբանել կը փորձէ խնդիրը, թէ բոլոր այդ պատճառներուն մէջ ամէնէն էականը ան էր որ ուումը չունէին:

Այդ տեղեկագիրը եւ տղբիւմանները այդպիսի հազձեպ ու վճռողական եզրակացութեան մը յանգեցու չեն արտօսեր մեզ:

Տեղ. կը խոստովանի թէ որքան «վերին աստիճանի տաղանդաւոր գիւտ» էր էլլէնի տիպը ուումբին, թէ ինչպէս կատարելագործել հնար եղաւ Սաֆոյի ձեռքով երկու շաբթուան փորձերու միջոցին, թէ ինչպէս Անտոն Գօշ աւելի կատարելագործուած տիպ մը յաջողած էր ձեռք բերել:

Ինչո՞ւ էլլէն կրնար ամիսներ նուիրել այդ ուումբերու կատարելագործումին համար, եւ Սաֆոյին չի յանձնարարուիր աւելի երկար մնալ քան երկու շաբաթ, այդ փորձերը ընելու, որոնք աւելի կարեւոր էին, քան օղի պայթիւնին ուժը փորձելը, որ անտարակուսելի իրողութիւն մըն էր ինքնին:

Կը տեսնենք ուրեմն որ Տեղ. ի նոր պատճառաբանութիւնները խախտու են եւ բան մը չեն գար աւելցնել, լուսաբանելու համար սա կէտը թէ ինչո՞ւ նախորդ ծրագիրը կը թողուի, եւ կը կառչին միայն կառքին:

Ուշագրաւ է միայն, որ մինչդեռ Ատենագրութիւնը գլխաւոր պատճառը կը դնէ այն ենթադրութիւնը թէ կառքը պիտի սրբէր ամէն բան իր շուրջը, Հետեւաբար ուումբ եւ ումբաձիգ, Տեղեկագիրը կը ծանրանայ իր բերած առակովը անոր վրայ՝ թէ յարմար ուումբ չունէին:

Մեկնաբանութեան մէջ այս տարբերութիւնը հոգեբանական պատճառ մը ունի — պատասխան մը ուղղուած անոնց, ինչպէս պիտի տեսնենք յետոյ, որոնք կը մեղադրեն եղբ. Յ. մարմինը, որ այդ ծրագրէն հրաժարած է, պարզապէս անձուկորութիւն չունենալուն:

Այս մասը վերջացնելէ առաջ, յիշատակենք Տեղեկագրին այն ակնարկը (երես 7) թէ էլլէնը դիւրին չի նկատեր եղբ. արդէն հիւրանոցի գործը: Այս ակնարկը եթէ դրուած է Յ. Մ. ի ծրագրին փոփոխումը արդարացնելու նպատակով՝ սխալ է: էլլէնի անցեալ եւ այս ամիսներով գբադուիրը Պուլկարիոյ մէջ ուումբի փորձերով, կառքը ապսպրելու ետեւէ չըլլալը, թէ եւ այդ ալ յանձ-

97.- Սաֆոյի կազմած տեղեկագրին մէջ գոյութիւն ունի ջնջուած մասեր: Ընդհ. ժողովի կողմէ ընտրուած յանձնաժողովի ուշադրութիւնը գրաւած էր այն իրողութիւնը, որ իբր թէ ջնջուած այդ մասերը յստակ կերպով ընթերցելի ըլլալով՝ կարգ մը անձերու նկատմամբ կը պարունակէին ոչ անպայման բարեմիտ վերագրումներ:

նարարուած էր իրեն, եւ Պոլսի այն մասը, ուր «լիւքս» ի (պերճանքի) գաղափարը էլլէնին կը վերագրուի կ'ապացուցանեն որ անոր անունը իբր Հեղինակութիւն պէտք էր լինել ծրագրի փոփոխումը արդարացնելու համար:

\*  
\*\*

Անցնինք հիմա փոփոխուած ծրագրին իրագործումին:

Տեղեկագրէն կ'իմանանք որ վերջապէս կ'որոշուի կառքը պայթեցնել Սելամլըքի օրը Ս[ուլթան]ի մզկիթէն վերադարձին: Կ'որոշուի վայրկենաչափերը լարել եւ բանեցնել այն պահուն երբ կը լսուի փողը, որ կ'ազդարարէ Ս[ուլթան]ին մզկիթէն ելլելը: Կառքը պիտի պայթէր 1 ը[ոպտ] 53 վայրկեանէն, ճիշտ այն պահուն, երբ Ս. ի կառքը պիտի մօտենար մզկիթի դուռներուն:

Այդ ձեռնարկին եւ յարակից պարագաներուն համար երեք հոգի կ'որոշուի Յ. Մ. ի կողմէն, ըստ Տեղեկագրին (երես 19):

Նախ կառապանը, որ պիտի լարէր վայրկենաչափը: Արդէն կանխաւ այդ դերը Զարեհը ընդունած էր ու պատրաստուած կառապանութեան:

Կառքին մէջ նստելու դերը վիճակի բախտին կը ձեռքէ: Արամը կը ստանայ վիճակը, որ թէ եւ բացակայ էր այդ յիշատակելի ժողովին, կ'ընդունի յօժարութեամբ: Ժողովին մէջ սակայն ուշագրաւ միջադէպ մը տեղի կ'ունենայ. Տեղեկագրին ըսելով, «Ռուբինան որ սաստիկ ցանկանում էր ինքը գնալու, ճշաց, ուշագնաց եղաւ»: Ռուբինան ի վերջոյ կը համոզէ Արամը իրեն գիջելու դերը: Յ. Մ. կը համաձայնի, «Պ. Մ. ը յամենայն դէպս աւելի քան վստահ է Ռուբինայի ոյժի վրայ, գործի տեսակէտից ո՛չ մի արգելք չի տեսնում մասնաւոր այդ համաձայնութեանը իրականանալուն, ուստի եւ գործի շահի տեսակէտից դատապարտելի չի նկատի Արամի գիջողութիւնը» (Ատ. երես 21):

Կառքի մէջ նստողի դերը այսպէս կը բնորոշէ (նոյն Ատ., երես 21) «մի դերի համար, որը չի պահանջում ո՛չ մի այլ յարմարութիւն, բացի անվախութիւն, զսպանակը սեղմելու քաջութիւն»: Սակայն կարծուածին չափ ալ հասարակ «յարմարութիւն» չէր պահանջեր այդ գործը\*: Ամէն պարագայի մէջ կ'ընդունին այդ դերը այնքան վտանգաւոր, որ թոյլ չեն տար Ռուբինային՝ ընկերակցիլ Արամին «աւելորդ տեղը զոհերի թիւը աւելացնել» չուզելով<sup>98</sup>:

Ինչով «յարմարագոյն» էր Ռուբինան այդ դերին համար — այս հարցին բացասական պատասխանը միայն կը գտնենք տղբիւմաններու մէջ: Յ. Մ. ը գիտէ որ Ռուբինան յանախ ուշագնաց կ'ըլլայ, նոյն այդ թերութեան պատճառով Տիկին Միշէլի անունը հանց խնձորաւորներու ցանկէն, որոնք որոշած էին երթալ հիւրա-

նոցը: Տեղեկագիրը կը բացատրէ. (երես 20) «Ռուբինայի մասին մենք բոլորովին հակառակ էինք նրան ներս կանչել, պէտք չէինք գգալ, եթէ պէտք էլ ունենայինք, նրա հիւանդոտ դրութիւնը մեզ համար վտանգաւոր էր նկատուում գործի տեսակէտից», բայց որովհետեւ Ռուբինան եւ ժընեւի ընկերները կամ Ռոստոմը կը պնդեն՝ ուստի տեղի կու տան:

Այս բայցը Տեղեկագրին մէջ միայն երեւան կու գայ, երկու տարի ետք, իսկ Պոլսի ատենագրութեան մէջ առանց այլեւայլի կ'ընդունին Ռուբինայի առաջարկը, թէ եւ Յ. Մ. ը ամբողջ թէորիա (տեսութիւն) ունի բացատրելու համար թէ ինչպէս մարդիկ շատ բան կրնան անկեղծօրէն կատարել ուզել, քաջութիւն ալ ունենալ, սակայն ջղերը միշտ չեն հպատակիր: Ինչ երաշխաւորութիւն ունին թէ հիւանդ ընկերուհին կը դրկեն այդ պատասխանատու գործին, առանց հետը ուրիշ ընկեր մը տալու: Ու դեռ չմոռնանք այն հանգամանքը, որ Ռուբինան Սոֆիայի աղէտէն ետք, կրնար լրտեսուած ըլլալ...

Գանք հիմա բերորդ դերին, որ Տեղեկագիրը սապէս կը յատկանշէ, «գործին հետեւելու, մինչեւ վերջը, դեսպանութիւններին թղթերը բաժանելու եւ առհասարակ գործին ընթացք տալու»:

Պոլսի ատենագրութիւնը աւելի բացայայտ է եւ այդ բերորդ դերի եւ անոր դերակատարի անձնաւորութեան մասին. «ընդհանրապէս գործի օրը կամ գործի վերջը անհրաժեշտ նկատուած գործողութիւնները կատարել, դեսպանութիւններին գրաւոր գեկուցումներ ուղարկել, գործին վերջը գիտակ պահել ըստ կարելոյն Լիսում տեղի ունենալիք դէպքերի, աղէտներին եւ թաքստոց պահել ազատուող ընկերների համար», կամ փորձը եթէ չյաջողի որոշուած Ուրբաթ օրը, յետաձգել յաջորդին եւ այլն: Ատենագրութիւնը քիչ մը վարը կ'աւելցնէ. «բերորդ դերի համար ընտրուեց Սաֆոն իւր ցանկութեամբ եւ իբրեւ համեմատաբար աւելի յարմարութիւն ունեցող, լեզու (ուսուերէն), անցագիր եւ կին»:

Ատենագրութեան յաջորդ երեսներու մէջ (22) կ'իմանանք որ «էմիլի մնալը անհրաժեշտութիւն չէր ներկայացնում», Հետեւաբար «կին» ունենալը առաւելութիւն մը չէր Սաֆոյին:

\* Պոլսի Ատ.-ը կ'ընդունի թէ «ի հարկէ, ո՛րեւէ պատճառով օգտուելը նկատուի աւելորդ՝ պէտք է դարձնել դրամարկղի պայթիւնը վայրկենական, օղը բարձրանալու նպատակով: Իսկ Տեղեկագիրը պաշտպանելու համար իր անդամները անձուկորութեան մէջ, կը յայտարարէ «անպայման մահը ակներեւ» է:

98.- Արամին է որ թոյլ չի տրուիր ընկերակցելու Ռուբինային: Անշուշտ ծաղրանք, սուր հեգնանք կայ գործածուած ոճին մէջ:



Ջարմանայի էր որ եթէ այդքան կարեւոր էր այդ դե-  
րը, որ հարկ եղաւ կանխաւ որոշել, Ջարեհին ընկերացո-  
ղը որոշելէ առաջ, ալ ինչո՞ւ Սաֆօ իր անունն ալ վիճա-  
կի մէջ դրաւ: Չէ՞ որ եթէ մինչեւ իսկ վիճակը իրեն իյ-  
նար, չկար մէկ ուրիշը որ ունենէն գիտնար, անցագիր  
եւ կին ունենար, եւ հետեւաբար այդ կարեւոր դերը  
պարագ կրնար մնալ:

Հետեւինք հիմա քայլ առ քայլ դերակատարներուն:  
Ջարեհ եւ Ռուբինա կ'երթան իրենց ստանձնած գործը  
կատարելու: 1905 Յուլիս 21ին կէսօրէն ետք տեղի կ'ու-  
նենայ մահափորձը: Տեղեկագիրը ոչինչ չունի բուն  
տրամի մասին, որ պէտք էր որ կազմէր ամէնէն կարե-  
ւոր մասերէն մէկը: Ամբողջ այդ հաստատալ տետրակին  
մէջ, ուր ամէնէն չնչին ու աննշան դէպքերը մանրազը-  
նին ու խնամոտ նկարագրութեան կ'արժանանան, հա-  
զիւ չորս տող կայ, եւ ան ալ այնպիսի մթութեամբ քո-  
ղարկուած, որ անպարտաճանաչութեան, եթէ կ'ուզէք  
դասալքութեան ծանր կասկածներ միայն կրնան հրա-  
ւիրել մահափորձը կատարող երկու ընկերներուն վրայ:

1- Ի՞նչ տեղում էիք, կը հարցնէ Ռուբինայի Սաֆօն-  
պատ - Այո՛, համարեա ուղիղ դռան մէջ:

2- Ճիշտ ժամանակին սեղմեցի՞ք:  
պատ - Լաւ էր, մի քիչ շուտ, շատ քիչ:

3- Որքա՛ն շուտ, ինչո՞ւ, հարցնում է Սաֆօն  
վախեցած,  
պատ - Օ՛, մի վախենաք, հազիւ 5-10 քայլ էին արած,  
որ փողը հնչեց...

Ուրեմն ընկերները չէին սպասած որ փողը հնչէր,  
որմէ միայն պիտի իմանային Սուլթանին մզկիթէն  
դուրս ելլելը եւ կառք նստիլը:

Դժուար չէ եզրակացնել, որ այս պատմութեան նա-  
յելով, կառքը կանուխ պայթեցուցած են, Սուլթանին  
կառքը իր տեղը չհասած...

Տեղեկագիրը բազմակէտ մը ունի եւ ո՛չ մէկ ուրիշ  
բացատրութիւն: Հանելուկը ոչ միայն լուծուած չէ, այ-  
լեւ լուռ եւ ծանրածանր ամբաստանութիւն մը կը ծան-  
րանայ Ջարեհի եւ Ռուբինայի վրայ, որ արժանի է մաս-  
նաւոր քննութեան:

Գանձ երրորդ դերակատարին:

Պոլսի ատենագրութեան մէջ արձանագրուած է հե-  
տեւեալ որոշումը:

«Ի նկատի ունենալով որ հարուածի առաջին վայր-  
կենին, երբ հազարի չափ գործը զէնքի տակ է, երբ իս-  
կոյն յայտնուի ում կողմից է եղել հարուածը — հար-  
ւած, որի գոհերը հաշուելու է հարիւրներով եւ գին-  
ւորներից եւ ամբողջ — բացի նրանից ում համար  
պատրաստուած է հարուածը, անպայման կոտորած  
կարող է առաջ գալ մեծ չափերով, միւս կողմից ուրիշ  
ոչ մի միջոց չունենալով ինքնապաշտպանութեան մէջ  
դնելու անզէն հայ ժողովուրդը, որոշեցինք երկրորդ  
կամ երրորդ օրը միայն ցրուել դեպքաններին մեր դի-

մուճը, երբ հանգստացած կը լինին, գոնէ մի փոքր, կա-  
տաղած գործը եւ ամբողջը եւ միջոցներ ձեռք կ'առնուին  
ժամանակաւոր կառավարութեան ձեռքով կոտորածի  
առաջ» (երես 19):

Այդ միտքը վերջին անգամ շեշտուած է Սաֆօյի  
գրած մէկ նամակէն՝ Դրօշակի խմբագրութեան» ուղ-  
ղուած, Յուլիս 18ին, մահափորձէն միայն 5 օր առաջ:

«Ձեզ չենք հեռագրի եւ մի շտապէք իսկոյն բանալ  
կարտերը: Տեղիս ազգաբնակչութեանը շատ սուղի կը  
նստի իսկոյն եւեթ լուրի հեղինակ ազգի ճանաչուած լի-  
նելը: 1-2 օր ուշ՝ տասնեակ հազարների կեանքը կարող  
է փրկել»:

Իրականութիւնը շատ տխուր հակապատկերը կը բե-  
րէ այդ նախազգուշութիւններուն:

Տեղեկագրին ըսելով, Սաֆօ դեպքաններուն ուղղը-  
ւած նամակները փոսթան կը ձգէ ոչ թէ երրորդ կամ  
երկրորդ օրը, այլ չի սպասեր նոյնիսկ Ռուբինայի վե-  
րադարձին: Երբ կը լսէ «.....»<sup>99</sup> գոռոց» անմիջապէս  
կ'աճապարէ փոսթան, պայթիւնէն քառորդ ժամ ետք»:

«1/4 ժամ վերջը արդէն դեպքանական թղթերը նետ-  
ւած են իւրաքանչիւր պետութեան պոստը»: Մէկ քա-  
ռորդ ժամուան մէջ «իւրաքանչիւր» պետութեան փոս-  
թը նամակ ձգել՝ ահաբեի աճապարանք մը կ'ենթադրէ  
ինքնին: Ե՛րբ ժամանակ ունեցաւ այդքան փոստաները  
պատելու 1/4 ժամուան մէջ:

Այս աճապարանքը կ'արդարացնէ անով թէ միեւնոյն  
է փոսթան կէսօրէն ետք ստացած նամակները հետեւ-  
եալ օրը միայն կը յանձնէ դեպքանատներուն: Այս տե-  
ղեկութիւնը ենթադրական է բոլորովին, եթէ փոստ  
ըսելով նամակատուն պէտք է հասկնալ. եւրոպական  
դեպքաններու դաւազները կամ գործակատարները օրը  
քանի մը անգամ կը հանդիպին իրենց պետութիւններու  
նամակատունը: Իսկ եթէ բոլորը միասին մէկ նամակա-  
տուն մը ձգուի, անկարելի է որ ամբողջ 24 ժամ պահուի  
հոն. նամակատունը անմիջապէս իր ցրուիչներուն ձեռ-  
քով, երբեմն յատուկ պատուիրակով մը յանձնել կը  
փութայ այդ թղթերը, մանաւանդ որ տեղական նա-  
մակներուն ցրուումը արգիւտուած ըլլալուն, այդ կարգի,  
պաշտօնական անձերու ուղղուած թղթերը կասկած կը  
յարուցանեն իսկոյն: Իսկ եթէ փոտարկը ձգեր են, քիչ  
մը մուտք է «իւրաքանչիւր պետութեան» խօսքը:

Ընդունինք սակայն, որ իրենց ենթադրութիւնը  
ճիշտ եղած ըլլար, թէ դեպքանները հետեւեալ օրը միայն  
պիտի կրնային իմանալ գործի հեղինակներուն ազգու-

99.- Անընթեռնելի բառ. ձեռագիրը ունի «թոյլ գոռոց». թոյլ-  
ին վրայ բաց կապոյտ մատիտով գրուած բառը յստակ չէ: Իսկ  
բուճ աղբիւրը՝ Սաֆօյի ձեռքով գրուած տեղեկագիրը, ուրկէ  
քաղուած պէտք է ըլլայ չակերտեալ մտքերուն, կ'ըստ. «... յան-  
կարծ լուռ է մի դրոշակ» կարծես հեռաւոր անպի գոռոց,  
կովնուող, երկարող» եւայլն:

թիւնը: Սակայն ի՞նչ երաշխաւորութիւն ունէր Սաֆօն  
թէ գործը յաջողած էր: Չէ՞ որ կրնար ոեւէ արկածի մը  
չնորհիւ վաղաժամ պայթիլ: Վերջապէս չէ՞ որ կրնար ըլ-  
լալ, որ մահափորձը կիսատ յաջողէր, եւ Սուլթանը  
միայն վիրաւորուէր:

Միթէ՞ Յ. Մ. ը (չէր) խորհած, որ Սուլթանը իր վիրա-  
ւոր ընկած մահճի վրայէն իմանալով մահափորձի հեղի-  
նակներու հայ ըլլալը, նոր դժբախտութիւններու թուա-  
կանը կրնար բանալ, որուն միջամտելու անզօր ըլլային  
պետութիւնները:

Բայց այս մտահոգութիւնները քիչ կամ բնաւ տեղ  
չեն բռներ երրորդ դերակատարի մտքին մէջ:

Նախկին որոշումները՝ մնալ Պոլիս, գործի վերջը  
«գիտակ պահել Պոլիս տեղի ունենալիք աղէտներին»,  
թաքստոց պահել ազատուող ընկերների համար, դես-  
պաններուն «գրաւոր գեկուցումներ ուղարկել» — ու-  
րեմն նոր պատահելիք գործերու մասին գեկուցում պի-  
տի տային դեպքաններուն — ասոնք բոլորը կը մոռցը-  
րին:

Բայց ասոնց փոխարէն երրորդ դերակատարը շատ  
հիանալի կերպով գիտէ որ նոյն օրը քանի՛ նաւ կար մեկ-  
նող Պոլսէն եւ ո՛ր ժամուն, ինչ որ կ'ապացուցանէ թէ  
քանի մը օր մնալու եւ լրացուցիչ գործ կատարելու  
մտադրութիւն բնաւ չկայ. կանխաւ պատրաստուած են  
հեռանալու:

Սակայն այդ ամէնուն պաշտօնական ձեւ մը տալու  
համար, «գինուորական խորհուրդ» անունը կը տրուի  
երկու վտանգուած ընկերներու հետ՝ պն. Սաֆօյի եւ է-  
միլի խորհրդակցութեանը: Եւ որոշումը կը տրուի երեք  
մեծամասնութեամբ մէկի դէմ:

Որքան տխուր է կարողալ բուն իսկ տեղեկագրին  
խօսքերով իրենց վախկոտութիւնը դուրս չելլելու մա-  
սին, հակառակ այն հաստատումին թէ ջարդի նշաններ  
չեն երեւիր, մինչդեռ ժողով, իրենց դրացին, կու գայ իր  
տունը, դուրս կ'ելլէ, եւ իրենք չեն համաձայնիր անոր  
տունն երթալու, ու դեռ կ'ակնկալեն որ ան գայ իրենց  
այցելութեան եւ լուր բերէ դրսի մասին:

Օսմանեան Պանքի եւ Սամաթիոյ կռիւներու օրե-  
րուն ո՛չ մէկ ընկեր օտարահպատակ չըլլալով հանդերձ  
ունեցաւ այդ անըմբռնելի զգուշաւորութիւնը, թէ եւ  
ջարդը սկսած էր Պանքի գրաւումէն քանի մը ժամ ետք,  
իրենց աչքերուն առջեւ:

Վտանգուածները կը մեկնին՝ Ռուբինա եւ Ջարեհ —  
անոնց հետ Սաֆօ եւ բնականաբար նաեւ էմիլ, որ անոր  
կինը արձանագրուած էր: Բնորոշ է տեղեկագրին սա  
խօսքերը. «Այլեւս ոչինչ չի կապում մեզ Պոլսի հետ»: Ի-  
րաւ ոչինչ չէր կապեր Յ. Մ. ը Պոլսի հետ:

Պէտք չունէին վայրկեան մը իրենց ետին նայելու եւ  
տեսնելու, — որ եթէ իրենք «հետքեր շատ ունեն, կը բռնը-  
ւեն», «թէ 10-15 օրում մեզ (իրենց) անպատճառ կը գտ-  
նեն», կային ուրիշներ որ իրենցմէ առաջ կրնային

բռնուիլ:  
Մենք քիչ մը առաջ կարդացինք Տեղեկագրին այն  
մասերը, ուր այնքան ցայտուն կերպով նկարագրուած  
էր ժողովի անուան յայտնուիլը ոստիկանութեան  
եւայլն: Այդ համոզումը Ատենագրութեան մէջ արտա-  
յայտուած է նաեւ ուրիշ առթիւ մը, երբ Տիկին Միշէլի  
բնակարանէն կարգ մը ապրանքներ կը փոխադրուին  
ժողովի տունը. «Այդ արձակուրդի շնորհիւ (այսինքն  
Տիկին Միշէլի եւ կարոյի մեկնելով) կատարուեց մի վե-  
րին աստիճանի վտանգաւոր եւ դատապարտելի գործ,  
ապրանքը տեղափոխուեց Գրինի բնակարանը» եւ քիչ  
ետք «Այն հանգամանքը որ ինչ որ հրաշքով թէ տաճիկ  
կառավարութեան» ազենտների անհասկնալի ապշու-  
թեան շնորհիւ միայն մինչեւ այժմս չեն խուզարկած  
Գրինին ոչ մի չափով չի կարող արդարացնել կատար-  
ւած այս քստմանի փոխադրութիւնը»:

Պոլսի ատենագրութիւնը կ'արձանագրէ որ Գրինի  
պաշտօնակիցները սկսած դիրեկտորից բոլորն էլ կաս-  
կածում էին որ Շապուհի Լիսից դուրս գալը Գրինի  
ձեռքով է սարքուած:

Այդ փոխադրութիւնը քստմանի էր. լաւ, իսկ ի՞նչ ա-  
նուն տալու է Յ. Մ. ին, երբ հետեւեալ որոշումը կ'արձա-  
նագրուի անոր ձեռքով. երես 22: (Պոլսի Ատ.) —

«Գրինը նոյնպէս մտածում էր դուրս գալ կնոջ հետ  
եւ նուիրուիլ դրսում ամբողջովին հայկական գործին,  
համաձայնուեց մնալու Լիսում, երբ նրան բացատրուեց  
թէ հայկական դատին աւելի օգտակար կարող է լինել  
մնալով Լիսում եւ ապագայ գործողներին դիւրութիւն  
տալով, ինչպէս տուել է նա մեզ, քան դրսում, կովկա-  
սում օրինակ»: Եւ անմիջապէս կ'ընդունին թէ «առ հա-  
սարակ ենթարկուել է մեզանից ոչ-պակաս բոլոր  
վտանգներին»:

Փոքր Ահմետի<sup>100</sup> եղբրական մահը արդարացնելու  
համար ըսուած է թէ «անհրաժեշտ զոհ է որ պահանջում  
է մեծ դատը, ցեղի, ամբողջ ազգի դատը»: Հետաքրքիր  
էր իմանալ թէ ի՞նչ արդեօք կը պահանջէր ժողովի զոհ-  
ւիլը:

Եւ այդ եղեւնական վերաբերումը ժողովին հանդէպ  
տասնապատիկ կերպով ծանրացաւ նոյն ցեղի դատին  
վրայ:

Յ. Մ. ը Աթէնքէն սկսած խորհած է թաքստոցներու  
մասին, երրորդ դերը ստանձնողին պարտականութիւն  
տուած է ընկերներու թաքստոցի մասին խորհիլ — այն  
ինչ ամենադոյզ մտահոգութիւն չի տեսնուիր սակայն,  
որ Յ. Մ. ը ունենար միւս ընկերներու նկատմամբ, որոնց  
իւրաքանչիւրը իր ուժերուն համեմատ բաժին մը բերած  
էր այդ գործին եւ որոնցմէ շատերը անձնուիրաբար

100.- Սիմետը 14 տարեկան թուրք տղան էր, որ իբր պաիա-  
պան ձիերուն մնացած էր կառքի վրայ պայթիւնի ժամանակ  
եւ այրպէս զոհուած:

տարիներէ ի վեր Պոլսի կազմակերպութեան մէջ պատասխանատու դերեր ունեցած էին:

Կարդացէք մահափորձի դատավարութիւնը ծայրէ ծայր ու պիտի տեսնէք որ ժողովի ձեռքակալումէն կը սկսի ամբողջ շարքը միանալով:

Ժողովի մօտ գտնուած թղթի մը շնորհիւ կը բռնուին Մանուկ Իւմիւտեան. Մանուկէն՝ իշխման Երուանդ, Յովհաննէս եւ Յովսէփ Ղարիպեան, սրճարար Նշան: Սրճարար Նշանէն՝ Բաղէշցի Փրօ Պաղտոյեան, Ֆրոյշէն՝ Սերբլ տ'Օրիանի սպասաւորները՝ երկու Մանուկներ, Պօղոս եւ Խաչիկ եւ ամբողջ պահեստը:

Քրիսի ծանօթ Մարի Փասթալ կնոջ միջոցով՝ երեւան կու գայ սերաստացի Առաքել Նահապետեան, որուն քով կը գտնուէր ուրիշ գլխաւոր պահեստ մը: Առաքելի թուղթերուն մէջ կը գտնուի Հաճի Նշանի անունը, նախկին հնչակեան, որ ինքնասպան կ'ըլլայ բանտին մէջ, խորհրդաւոր պարագաներու տակ:

Ձերբակալուած եւ դատապարտուածներէն Յ Հոգի ժողովի ձեռքակալումով տեղի ունեցան, եւ երկուքը՝ Առաքել եւ ինքնասպան Հաճի Նշան, Քրիսի կապերու շնորհիւ, բայց գործի որոշ չափով բացումէն ետք, երբ սկսան փնտուել պահուած մ[իջոցով] պահեստը գտնելու:

Ու այսպէս Յ. Մ. ի անդամները, որոնք մոռցած չէին իրենց անձնական պաշտպանութեան համար ռեվոլվերներ առնել, թաքստոց պատրաստել, նոյնիսկ հաւեր գնել պաշարումի պարագան նախատեսելով — տարրական ընկերական պարտականութեան զգացումէ թերացան, ապահովութեան մասին խորհելու այն մարդոց, որ իրենց ընկերներն էին, եւ որոնք անհունորէն անպաշտպան վիճակ մը ունէին, իբրեւ տեղացիներ ու գաւառացիներ:

Եւ ամէնէն ետք, նկատի ունենալու է, որ Իզմիրի գործերուն վտանգումը սկիզբն առաւ Պոլսէն, երբ Cr[édit] Lyonnais-ի<sup>101</sup> մէջ կատարուած քննութիւններէն երեւան եկաւ, որ Լիփա Ռիփա (Սաֆօ), որ կառք ստացած էր, 140 ոսկի դրկած է Իզմիր՝ Տիգրան Նալբանտեանի, որ ձեռքակալուեցաւ իր եղբոր հետ. «անոնց խոստովանութենէն հասկցուեցաւ թէ քոմիթաճիները Այտրնի նահանգին մէջ խել մը եղեռնական արարքներ գործելու մտադիր են»: Այդ գործը բացաւ Իզմիրի ոստիկանութեան աչքը. խուզարկութիւնները բազմապատկուեցան, եւ վիրաւորումի հասարակ դէպք մը, որ ուրիշ ատեն կրնայ անուշադիր անցնիլ, կծիկը բացաւ բոլոր պատրաստութիւններուն, վիժումի դատապարտելով ամիսներու քրտնաջան աշխատութիւն, ահագին գումարներ արժող հսկայ գործ մը, որ թեթեւամտութեան ամբաստանութիւնը դրոշմեց ամբողջ այդ ձեռնարկին վրայ:

Այս ահարկու ձախողութեան ետք, որ կազմակերպական տեսակէտէ վիժուածք մը ըլլալէ զատ, ազգային

անօրինակ աղէտ մը կրնար թափել մեր գլխուն Սուլթանի կենդանի մնալովը — եւ տակաւին ո՛վ գիտէ թէ վտանգն անցած է թէ ոչ — Յ. Մ. ը, կը ցաւինք ըսել, գիտակցութիւնը չի ցուցներ իր պարտագանցութեան, եւ կը ներկայանայ հոգեկան այնպիսի տրամադրութեամբ մը, որը որակելէ կը հրաժարինք մենք, թողնելով որ փաստերը խօսին:

Յ. Մ. ը, այսինքն աւելի ճիշտ, Տեղեկագիրը ներկայացնողները անհարկի թեթեւամտութիւն մը կը ցուցնեն, իրենց արժէքը բարձրացնելու համար 1904ի Ընդհ. ժողովը անտուանարկել, պատմութեամբ մը յորինել, թէ ինչպէս այդ Ընդհ. ժողովին մէջ իբր թէ երկրի մարմիններու համար գործիչներ չգտնուեցան, բայց «չուտով գտնուեցին հինգ կամաւորներ ստանձնելու Յուլիոսի դժուարին գործը»:

Հոս տեղը չհամարելով ճշդել խեղաթիւրուած այդ իրողութիւնները եւ այն վիրաւորիչ խօսքերը ուղղուած ներկայ ժողովին, կ'անցնինք յիշեցնելու ժողովին, թէ որքան մեծ խանդավառութեամբ, անհուն յոյսերով, վճռական որոշումով ս[ուրբ] ձեռնարկը ընդունուեցաւ Աթէնքի մէջ, եւ այդ իմաստով ուռուցիկ ոճով յայտարարութիւն մը ստորագրեց նոյն ինքն Սաֆօն: Ոչ մէկ գոհի առջեւ կանգ չպիտի առնուեն, «թող սուրբ լինի ժողովրդի կամքը»:

- Վրէժ,
- Վրէժ կարմիր սուլթանին,
- Վրէժ դեռ կանչում են Պետոն ու Վազգէնը,
- Բաբկէնն ու Կարոն, Արաբոն ու Վարդան,
- Տիգրանն ու Աշոտ, Դժոխքն ու Թուման
- Վաղարշակն ու Վահան.

Ու ինչ տեսանք: Աթէնքի հոյակապ ծրագիրը, Ք. ի շունչով ստեղծուած, հետզհետէ մանրացաւ. խնձորաւորներն անհետացան, կառքերն անհետացան, մնաց կառք մը միայն եւ ան ալ վայրկեանաչափի մը անձնուրութեան վստահուած:

«Մէջ մի գոհի առջեւ կանգ չառնել» երդողները միջոցներ ձեռք առան ոչ մէկ գոհ չտալու համար իրենցմէ, բայց միայն իրենցմէ...

Տեղեկագիրը ներկայացնողները<sup>102</sup> կը յաւանդին պնդել իսկ թէ հիւրանոցէն ուսմբ ձգողները (թուով վեց հոգի) նուազ վտանգի պիտի ենթարկուէին, քան կառքի պայթիւնը կատարողները:

Մահն աչք առած եւ ս. մահը երդուած այդ պարոնները կու գան յայտնելու մեզ, թէ վստահ չեն իրենց ջղե-

101.- Ֆրանսական հանրածանօթ դրամատան Իզմիրի մասնաճիւղը:

102.- Առ ի լուսաբանութիւն, ըսենք որ յիշատակուած տեղեկագիրը ստորագրած են Յ. Մ. ի անդամներն Սաֆօ, Թորոս եւ Քրիս, բայց ոչ՝ Արամը եւ մանաւանդ Ռուբինան, որ ճիշդ է քիչ մը ուշ, բայց ներկայ էր Ընդհ. ժողովին:

րուն վրայ, «բայց մարդիկ, որոնք փորձուած լինէին կախաղան բարձրանալու մէջ կամ դժոխային մեքենային վրայ օդը ցնցելու մէջ, այդպիսիք մեզ պակասում էին դժբախտաբար, ուստի եւ հարկաւոր էր գնացողին տալ գոնէ մի քանի վայրկեան, այդ մեքենայից հեռանալու, առանց վնասելու գործի յաջողութեանը»:

Նո՞յն պատճառաբանութիւնը պիտի չընէին եթէ տունը վարձէին Սուլթանի անցած ճամբուն վրայ, տունը, որը կ'ուզէին օդը հանել: Նոյն պատճառաբանութիւնը ինչու չընել նաեւ ռմբաձիգներու համար, եթէ երբեք իրենց թուած բազմաթիւ պատճառները պահ մը գոյութիւն չունենային իրենց համար ալ: Չէ՞ որ օդը ցնցող դաւադիրներ եւ ռմբաձիգներ ալ չունէին իրենց մէջ: Հապա ի՞նչ ունէին, ի՞նչ անձնուէրներու մասին է որ կը խօսին:

Կը փորձեն մխիթարել իրենք զիրենք Քրիստոսիչներու ժելիապոններու անունով<sup>103</sup>, թէ անոնք ալ «պատրանք» (illusion) կը համարէին ուսմբը: Սակայն տեղեկագիրը կը մոռնայ, որ անոնք չբամահրեցին այդ պատրանքը գործածել գուզութեամբ արականներուն, եւ Աղեք. Բ. ուսմբին է որ գոհ գնաց, այսինքն այդ իրական «պատրանքին»: Մինչդեռ իրենք այնքան զգուշ եղան ձեռքերնին ուսմբ առնելու:

Յ. Մարմնի ամբողջ գործունէութեան մէջ, Ք. ի եւ Ե. ի մահէն ետք — մէկ մտահոգութիւն մը կ'երեւի կարմիր գծով անցած — ո՛չ թէ միջոցներ ձեռք առնել, գոհողներու թիւն աւելցնել, Ս[ուլթան]ի մահը անվրէպ կատարելու համար, — այլ թէրոր մը ստեղծել քանի մը հարիւր քիլոյով ամենաջինջ քանդումի մը, որպէսզի քիթ մը չարիւնի իրենցմէ: Սուլթանի մահը անխուսափելի դարձնելու մասին չեն խօսիր, որքան փախուստի ելք փնտուելու, իրենց գոհերու թիւը պակասեցնելու...

Տեղեկագիրը հեզութեամբ մը կը յայտարարէ թէ այդ գործը «մնում է եւ սպասում է իր երջանիկ կատարողներին, որոնք անշուշտ աւելի ձեռնհաս, աւելի անձնուէր, աւելի զգուշաւոր կը լինեն եւ կ'իրագործեն ցեղի իղձը»:

Այդ տողերն ստորագրողները իրենց կեանքի ամէնէն մեծ յեղափոխական գործը կատարած պիտի ըլլային եթէ կանուխէն զգային, թէ իրենք պահանջուածին չափով ոչ ձեռնհաս, ոչ անձնուէր եւ ոչ զգուշաւոր են այդպիսի մեծ ու պատասխանատու գործի մը համար եւ հրաժարէին գործէն:

Եւ ինչ որ կարելի չէ առանց խորունկ տխրութեան դիտել չտալ այն իրողութիւնը, որ Ընդհ. ժողովէն ընտրուած Պատ. մարմնի մը անդամներէն եւ ո՛չ մէկը քաջութիւնը կ'ունենայ զոհաբերութեան դեր մը ըստանձնելու, ամէնէն վտանգաւոր դերերը ձգելով ուրիշներու ուսերուն վրայ այդ գործին մէջ նորօրինակ եւ անբարոյ[ացուցիչ] յիշատակ մը ձգելով Դաշ[նակցութեան] պատմութեան մէջ:

Ամփոփելով մեր ըսածները, կ'եզրակացնենք.

1 — Յ. Մ. ը իր արդի կազմին մէջ եւ մասնաւորապէս Ընդհ. ժողովէն ընտրուածները, յեղափոխական անձնուրութեան ողբալի ու դատապարտելի բացակայութիւն մը ցուցադրած է իր գործողութեան մէջ:

2 — Յ. Մ. ը, իրենց անձերը փրկելու մտահոգութեամբ զբաղած, ոչ միայն չէ կատարած իր ստանձնած գործը լիովին, այլ վարուած են այնպիսի անփութութեամբ եւ թեթեւամտութեամբ, որ Ս[ուլթան]ի վիրաւորման պարագային կրնար նոր աղէտ մը բերել տաճկահայ ժողովրդի գլխուն:

3 — Յ. Մ. ի այդ անդամները աններելի ընթացք մը ունեցած են համոզելով որ ժողով մնայ Պոլիս, եւ պատճառ եղած են այնքան բազմաթիւ ընկերներու ձեռքակալումին եւ դատապարտութեան:

4 — Յ. Մ. ը կանխաւոր անհրաժեշտ զգուշութիւնները առած չըլլալուն, վտանգած է նաեւ Իզմիրի գործը:

103.- Աղեքսանդր Բ. ցարին դէմ 1879ին անցաող մահափորձը գործադրած ռուս ահաբեկիչներ:

Պ 3.— Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Ր N<sup>0</sup> 3

(Ընկերական յարաբերութիւններ)

Ընկերական թիրախացութիւններ

Յեղափոխական իւրաքանչիւր ձեռնարկի մէջ ահազին նշանակութիւն ունի ղեկավարների փոխադարձ հաւատն ու վստահութիւնը: Առանց այդ հաւատի շատ բան կարող է այլակերպուած ձեւանալ, շատ բան՝ գործօն ոյթերի եռանդն ու ուղղութիւնը նոյնիսկ շեղել, արատաւոր ելեւէջների ենթարկել:

Դժբախտաբար ընկերական այդպիսի թիրախացութիւնների եւ անվստահութեան արատից գերծ չէ եղել Կ. Պոլսի Յուցական մարմինը:

Մասնաժողովս նպատակ չէ ունեցել, ի հարկէ, մանրագնին քննութեան ենթարկել այդ մարմնի անդամների յարաբերութիւնների հարցը: Սակայն նա անկարող էր տեղեկագիրները, արձանագրութիւններն ու նամակագրութիւնները քննել եւ անտես առնել այն ամէնը, ինչ որ վերաբերում է ցոյցի ձեռնարկին կամ նրա ղեկավար ընկերների յեղափոխական պատուին:

Այդ տեսակէտից առանձին ուղղութեան արժանի են հետեւեալ երկու հանգամանքը.

I «Աշոտ անվստահելի ընկեր է»: Ինչպէս յայտնի է անցեալ Ընդհանուր ժողովը Յուցական մարմնի անդամ էր ընտրել Ծ հոգու, որոնց շարքումն էր եւ Աշոտը (Եղիկեան): Եւ մենք տեսնում ենք նրա մասնակցութիւնը սուլթանասպանութեան ձեռնարկի ամբողջ ընթացքում: Բայց յանկարծ, դէպքի հէնց նախընթաց օրը ընկերները նրան հեռացնում են Կ. Պոլսից եւ թոյլ չեն տալիս արձանագրութեան մէջ յիշուած վիճակահանութեանը մասնակցելու:

Բնորոշն այն է, որ Աշոտը անվստահելի է ճանաչուած ոչ միայն վճռական օրուայ համար, այլ եւ դրանից շատ առաջ, ընդհանրապէս:

— «Յուցական պատասխանատու մարմինս, ասած է արձանագրութեան» մէջ (Տես առանձին թերթիկով արձանագրութիւն, ամսաթիւ չկայ) իր ստանձնած գործի ընթացքում մօտից ծանօթանալով նոր մարմնի անդամ Աշոտ Բագրատունու հետ եւ ակնատես լինելով նրա բռնած ընթացքին դէպի գործը, միաձայն որոշեց հեռացնել նրան մարմնի կողմից ինչպէս վստահութիւն չներշնչող անդամի»:

Այդպիսով մի մարդ, որ տարիներ շարունակ եղել է կուսակցութեան մէջ եւ նրա Ընդհանուր ժողովի վրատահութեան քուէին է արժանացել մի պատասխանատու գործի համար, յանկարծ անվստահելի է յայտարարուում եւ այս՝ առանց ընկերական դատի ու քննութեան:

— «Բայց որովհետեւ գործի տաք ժամանակն էր, շարունակում է արձանագրութիւնը, եւ այս որոշումը իրան յայտնելը թերեւս ոչ ցանկալի բարդութիւններ առաջ բերէր, ուստի ստիպուած էինք նրանից գաղտնի պահել որոշումը մինչեւ գործի աւարտը»:

Այդպէս էլ արուում է, թէ եւ այդ «անվստահելի ընկերը» շարունակում է իր գործօն մասնակցութիւնը ձեռնարկի մէջ — (կառքի պարագաները չինել տալը եւ այլն) — եւ միայն վերջի օրն է «օտարոտի ձեւով» ինչպէս խոստովանում է Յուց. մարմնի արձանագրութիւնը, հեռացում Կ. Պոլսից:

Սակայն միայն դրանով չեն բաւականանում ընկերները: Նրանք գլխաւոր կերպով «կտակ եւ յայտարարութիւն» են ուղղում դրսի ընկերներին, թէ Աշոտ չլուրջ եւ պատասխանատու յեղափոխական գործերի մէջ բոլորովին անվստահելի ընկեր է...»:

Այդ բոլորից յետոյ մասնաժողովս միանգամայն իրաւացի է գտնում, որ Աշոտը միայն յետոյ — Եգիպտոսում տեղեկանալով իր հասցէին բարդուած ծանր մեղադրանքի մասին, մի շարք նամակներով կոչ է անում Արեւմտեան Բիւրոյի եւ Ընդհանուր ժողովի արդարամտութեանը, պահանջելով քննութիւն կատարել այդ հարցի առթիւ:

Բացի դրանից հարկաւոր է փաստացի բացատրութեամբ պարզել, թէ որքան ճիշտ է Յուց. մարմնի մեղադրանքը Տիկ. Միշէլի հասցէին, որ իբր թէ նա «միայն ինտրիզներով է զբաղուած է եղել: Նաեւ այս կասկածաւոր եւ վիրաւորական վերաբերմունքը, որ նոյն մարմինը ցոյց է տալիս դէպի միւս օժանդակ ընկերները՝ Սարգիս, Կարօ»:

II էլլէնի վարմունքը: Վերոյիշեալի համեմատութեամբ աւելի եւս բնորոշ եւ ուշագրաւ է Յուցական մարմնի չորս անդամների չափազանց կասկածաւոր եւ

միտումնաւոր վերաբերմունքը դէպի մի այնպիսի ընկեր, որպիսին էլլէնն է:

Յուց. մարմնի արձանագրութեան մէջ (Դեկտ. 1905), որ ուղարկուած է Արեւմտեան Բիւրոյին եւ որը ապագայում նիւթ պէտք է ծառայէ մեր յեղափոխութեան պատմութեան համար, այդ անունը այնպէս սեւ, մոռյլ գոյներով է պատկերացրած, որ անծանօթ, գործից անտեղեակ ընթերցողի վրայ միայն սարսուռ կարող է ազդել: Սարսուռ ու գարշանք:

էլլէնը այդ արձանագրութեան մէջ ներկայանում է իբրեւ մի անձնաւորութիւն, որ յեղափոխական ամենապատասխանատու մի ձեռնարկի ընթացքում գործում է երկչոտութեամբ, մութ միջոցներով, որ ինչ որ եսական ձգտումներից դրդուած կանգ չէ առնում ամենադատապարտելի քայլերի առաջ անգամ:

Ահա փաստերը ըստ յիշեալ արձանագրութեան.

— Ա. — Յուց մարմինը վճռում է, որ էլլէնը գնայ Բուրդարիա, Վիեննա՝ կառքի եւ խնձորների մասին տեղեկութիւններ հաւաքելու եւ փորձեր կատարելու: Անյարմար է համարուում Ռուբինայի ուղեկցութիւնը իրա հետ, «որովհետեւ Բուրդարիայում կարող է նրա հետ նկատուել Ռուբինան եւ այդպիսով կը բացուի մեր մարմնի մէջ կանանց մասնակցութիւնը» (Տես արձանագրութիւն, թերթ 2.):

էլլէնը խոստանում է «Ռուբինային Ֆրիլպպէ չպահել, այլ ուղղակի Բերլին ուղարկել՝ քրոջ մօտ... բայց իրականապէս նա պահել է Ռուբինային մինչեւ վերջը իր մօտ եւ նա մասնակցել է փորձերին...»:

— «էլլէնը դրժեց իր խօսքը...» շեշտում է արձանագրութիւնը:

Մասնաժողովս անկարող է ի հարկէ ասել, թէ որքան ճիշտ է այդ ամէնը: Միայն բնորոշն այն է, որ երբ դրանից յետոյ Սաֆոն է գնում Բուրդարիա՝ իմիլի հետ — այդ ժամանակ ոչ մի խօսք չի լինում յիշեալ զգուշութեան եւ «կանանց մասնակցութիւնը բացուելու մասին»: Արձանագրութիւնը միայն թուողիկ կերպով յիշատակում է այդ ուղեւորութիւնը իբրեւ մի բնական երեւոյթ:

— Բ. — Յուց. Մարմնի որոշումների համաձայն խնձորաւորների մէջ պէտք է գտնուէր նաեւ էլլէնը: Ունէինք մտցրած «զանազան անակնկալների» համար եւս մի կէտ արձանագրութեան մէջ, այն է, որ բոլոր յիշեալ խնձորաւորներից եթէ մէկը չգտնուի որոշ ժամին, որոշ օրը իր պաշտօնի գլուխը, նա պիտի համարուի գործից փախած, ինչ պատճառ էլ որ նա վերջը առաջ բերէր բացի երկու հետեւեալ պատճառներից. մահ կամ բնատարկութիւն: Ինչ-ինչ պատճառներով այդ յաւելուածը անհրաժեշտ էր նկատուել մտցնել արձանագրութեան մէջ» (Արձանագրութիւն թերթ 4):

Բայց այդ որոշումից յետոյ հրապարակ են գալիս այսպիսի հանգամանքներ: «Թէ ինչպէս պատահեց, որ

այդ լուրը հասել էր դրսի ընկերներ Սարգսին — չգիտենք, ասուած է արձանագրութեան մէջ, բայց երբ նա Աթէնքումն էր ստացանք նրանից առաջարկ՝ փոխարինելու էլլէնին վերջին օրը»...

Այդ առաջարկը նորից կրկնում է մի «հանելուկային» ձեւով: Սարգիսը գրում է, թէ ինքը յարմար է] զգում իրան Վանի համար, բայց միեւնոյն ժամանակ ուզում է փոխարինել էլլէնին: Առաջարկը նորից մերժուում է Յուց. մարմնի կողմից: Եւ հանելուկն էլ լուծուում:

էլլէնը իր կողմից առաջարկում է Լիս մտցնել մի նոր ընկեր՝ Կոնստանդինին, որը կարող է տեղն ու տեղը խնձորներ ձուլել: Մարմինը մերժում է, զարմանալով որ էլլէնը ծանօթ լինելով Լիսի դժուար պայմաններին մի այդպիսի առաջարկ է անում: Սակայն էլլէնը նորից պնդում է «անծանօթ տղին ներս բերելու» մասին եւ մերժումից յետոյ էլ զայրացած գրում է. «Ինքներդ արէք ինչ անելու էք. ես չեմ խառնուում...»:

Բանից դուրս է գալիս, որ Կոնստանդինը Լիս մտնել ուզեցել է «էլլէնին փոխարինելու վճռական ցանկութեամբ»:

— Հարկաւոր էր Կոնստանդինի թեկնածութիւնը դնել պարզապէս իբրեւ էլլէնին փոխարինողի եւ ոչ իբրեւ զուտ ձուլիչ արհեստաւորի «եզրակացնում է արձանագրութիւնը (թերթ Ծրդ):

Այդ ամբողջ պատմութիւնը ընթերցողին բերում է մի ակամայ եզրակացութեան, թէ էլլէնը երկչոտութեամբ ուզեցել է խուսափել իր ստանձնած վտանգաւոր դերից — (խնձորաւոր) — եւ այդ նպատակով դիմել է անուղղակի միջոցների — մի վարմունք, որ երբեք պատիւ չի բերում յեղափոխական անուանը:

Մասնաժողովս գտնում է, որ անհնարին է այդպիսի վարկաբեկող ակնարկները ծածկուած թողնել մի կուսակցական փաստաթղթի մէջ — որպիսին է Յուց. մարմնի արձանագրութիւն-տեղեկագիրը: Պէտք է խիստ քննութեամբ բաց անել ճշմարտութիւնը եւ դրանով մաքրել մի ընկած ընկերով արատաւորուած յիշատակը (Այդ առթիւ յայտնել ժողովին Սաֆոյի P.S. նամակի մասին եւ բացատրութեամբ շեշտել նոյնը, համոզեցուցիչ չհամարելով նամակը):

Գ. — Վերոյիշեալ երկու փաստերից աւելի քստմնելի է այս աղէտի նկարագրութիւնը եւ պատճառների բնորոշումը, որոնց գոհ գնացին երկու ընկերներ՝ էլլէն եւ էդլարդ:

Ահա թէ այդ մասին ինչպիսի պատկեր է ստացուում արձանագրութիւնից:

— Նկարագրելով խնձորի տեխնիկական բոլոր թերութիւնները եւ առանձնապէս շեշտելով այն հանգամանքը, թէ «ինչպէս հնարաւոր է եղել մի այդպիսի խնձոր տալ ձգելու մասնաւանդ մի բոլորովին խամ եւ



անփորձ մարդու», որպիսին էդուարդն էր, արձանագրուած թիւերը եզրակացնում է:

— «... Միայն եղել են բազմատեսակ եւ անհասկանալի քիչ թէ շատ փորձուած մարդու կողմից, ինչպիսին էր էլլէնը: Մի բացատրութիւն միայն քիչ հասկանալի է դարձնում այդ բոլոր սխալները: այն է, որ բոլորի ասելով՝ Լեապով, Կոնստանդին, Ռուբինա, Այվագեան եւ այլն, էլլէնը վերջին օրերը՝ Շապուհի գալու օրից եղել է խիստ նեարդային դրութեան մէջ. մանաւանդ նկատելի է եղել նրա նեարդային դրութիւնը փորձի օրը: Ռուբինան ասում է՝ ուրախութիւնից. միւսների — (Լեապով, Այվագեան, Անտոն Գօշ) — ասելով նա եղել է մուսլ, չգիջող, վիրաւորող, որ բոլորովին զարմացրել է բոլորին. քանի որ բոլորն էլ սովոր են նրան տեսնել միշտ բարի, գիջող, հեզահամբոյր: Արձանագրելով այս իրողութիւնները, մենք դրանով էլ վերջացնում ենք, թողնելով վարագոյրը ծածկուած այդ անբացատրելի աղէտի վրայ. առանց ներս թափանցելու քաջութիւնը զգալու թէ ի՞նչ էին զգում երկու՝ այդ օրուայ փորձերի երկու զոհերը: Թէ ինչ էր պատճառը էլլէնի՝ փորձերի ղեկավարողի այդ օրուայ խիստ ջղային դրութեան — դրութիւն որով միայն կարելի է բացատրել փորձի անհեթեթ կողմերը, որոնցից ամէնից ակելի մեծ սխալն է եղել՝ պատուիրել Շապուհին որ առաջ քան «խշոց» լսելը խնձոր չնետէ...»:

Ընդգծուած տողերը արձանագրութեան մէջ ջնջուած են, բայց այնպէս, որ դիւրութեամբ կարդացւում է: Առ հասարակ Յուց. մարմինը զարմանալի սովորութիւն ունի որոշ տողեր այնպէս ջնջել, որ կարդացուի. օրինակ տեղեկագրի մէջ եւս: Մենք ակնորդ ենք համարում առաջ բերել արձանագրութեան ուրիշ կտորներ, որոնք միայն ակնայնակ կարող են էլլէնի անլան հետ կապուած ստորամիտ պատմութեան սեւ գոյները: Կարծում ենք վերոյիշեալն էլ բաւական է ցոյց տալու համար թէ Յուցական մարմինը ինչ է ուզեցել վերագրել էլլէնին:

Երեւում է այդ անուան վերաբերմամբ Յուցական մարմնի կասկածամիտ ձգտումը այնքան ուժեղ է եղել, որ նոյնիսկ եղբորական մահուան ցաւոտ հանգամանքը անզօր է գտնուում սանձահարելու նրան: Ընդհակառակը Յ. մարմինը իր արձանագրութեամբ մանրամասն նկարագրում է աղէտը եւ չափազանց միտումնաւոր ու խորհրդաւոր դարձուածքներ սփռելով, ծածկուած վարագոյրի ու երկու զոհերի վերջին ընկալի զգացմունքների մասին ակնարկելով, կարծես ուզում է աղէտը իբրեւ մի ստոր ոճիւր պատկերացնել, իսկ էլլէնին՝ նրա հեղինակ:

Այդպէս է պաշտօնական արձանագրութեան թողած տպաւորութիւնը:

Պարզ է, որ այդ բոլորից յետոյ մի դառն հեզանք է

դառնում նոյն մարմնի առաջարկը՝ ընկեր էլլէնի յիշատակը յարգելու համար նրա որդուն Հ.Յ.Գ. սան դարձրնելու եւ կնոջը նիւթապէս ապահովելու մասին:

Թէ եւ ամբողջ տարիներ են անցել այդ արձանագրութեան կազմելուց յետոյ, բայց այժմ էլ պարզ է նրա միջի «խորհրդաւոր դարձուածքներն ու ակնարկները»:

Նրա միջի «խորհրդաւոր դարձուածքներն ու ակնարկները» պատահական բնոյթ չեն կրում այլ գործ են անուած գիտակցօրէն, որոշ, կանխամտածուած նպատակով:

Դրա ամենաթարմ ապացոյցները մէկը Յուցական մարմնի անդամ պ. Սաֆոյի նամակն է մասնաժողովին ուղղած, որով նա «պարտք է համարում ներկայացնել արձանագրութիւնների էն փափուկ կէտերի իսկական բանալին...» (Սաֆոյի նամակը 1907 թ. Մարտի 21):

Եւ նա հոգեբանական զարմանալի հմտութեամբ աշխատում է բաց անել այն խորհրդաւոր վարագոյրը, որի մասին յիշուած է արձանագրութեան մէջ:

— Մարդիկ եւ հանգամանքները ստիպում են մեզ, ասում է նա, բանալ այդ վարագոյրը, որովհետեւ իրա տակ ուզում են տեսնել անսահման ակելի (նոյն նամակ) քստմնելի բան, քան այն, ինչ մեզ ներկայացել է, որը քաջութիւն չունեցանք ասելու եւ ջնջելով էլ այդ տողերը ակելի եւս շեշտեցինք վարագոյրի յետեւը նայելու ցանկութիւն չունենալը...:

Ուրեմն պ. Սաֆոն այժմ էլ չէ հերքում որ «վարագոյրի տակ ինչ որ քստմնելի բան է կատարուած»: Նա զայրացած է, որ ուրիշները ուզում են անսահման ակելի քստմնելի բան տեսնել: Այսինքն տարբերութիւնը քստմնելիութեան աստիճանի մէջ է եւ ոչ հուժեան:

«Ստիպուած ենք, ասում է նա, բոլորովին բանալու այդ վարագոյրը եւ առաջ բերելու այդ տողերը առանց ջնջելու»:

«էլլէնը, եթէ հոգեկան անդորր վիճակի մէջ լինէր, նրա ուշադրութիւնից չէին վրիպի տեղի անյարմարութիւնը, թղթի անապահովութիւնը, խշոցի այս դէպքում ակելորդ լինելը եւ որ գլխաւորն է՝ չէր թողնէ Վուամին նետելու այդպիսի վերջնական ուժը, իբրեւ մի անփորձ մարդու, առաջ քան նրան վարժեցնելը 7, 8, 4, 3 սանտիմ, համեմատաբար երկար պարոյգներով, ինչպէս ինքն էր վարժուել Ֆիլիպպէսում»:

Բայց նա, ինչպէս ասացինք կորցրած շրջահայեցողութիւնը մէկ կողմից, միւս կողմից համարելով Վուամին «հոսհոս», մեծ-մեծ խօսող միայն, հաւատացած էր, որ նա, Վուամը կը վախի, չի նետէ, pardon կը խնդրէ եւ այդպիսով կը կոտորուի:

Ահա այդ ժամանակ նա, էլլէնը ինքը կը վերցնէ նոյն ուժամբ եւ կը նետէ, դառնալով դէպի փոքրացած Վուամը — (արտասանած կամ լռելեայն միեւնոյն է) — «հապա մեծ-մեծ խօսել գիտէ՞ք... Գարիբալդիներից, պատմութիւնից ... ինչո՞ւ... քրտնեցիք»:

Իսկ Վուամը չուզեցնալով պատկնալ այնտեղ ներկայ եղող յեղափոխական կանանց եւ հիւրերի առաջ, զգալով էլլէնի միտքը կը խօսեմ եւ կը նետեմ. ի՞նչ էք կարծում» — ասաց եւ նետեց: Ահա թէ ի՞նչ էին զգում այդ օրուայ երկու զոհերը...» (քաղուածք Սաֆոյի նամակից, 1907 թ. Մարտի 21-ին):

Ինչպէս տեսնում էք, պ. Սաֆոն բաց է անում «խորհրդաւոր վարագոյրը», բայց դարձեալ առանց հերքելու քստմնելի պատկերը:

Ընդհակառակը նա հոգեբանական զարմանալի ճիշդ է գործ դնում տարածութեան ու ժամանակի արգելքները յաղթելու եւ շեշտակի կերպով գուշակում է, թէ ի՞նչ էին զգում եւ լռելեայն խօսում աղէտի երկու զոհերը՝ էլլէնը եւ Վուամը:

Այդպիսով դուրս է գալիս, որ էլլէնը զայրացած է եղել Պոլսի մարմնի վրայ, որովհետեւ վերջինս մերժել է Սարգսի առաջարկը՝ Պոլսի մտցուելու եւ Քրիստափորին փոխարինելու վերաբերմամբ եւ մի նամակ է գրել անհատի դերի մասին (ակնարկը Քրիստափորի մասին է եղել) — պատմութեան մէջ, յիշել է Գարիբալդիների անունները եւ շեշտելով, որ անհատները ոչնչութիւն են ժողովրդական շարժման մէջ: Այո՛, էլլէնը բարկացած է եղել այդ ամէնից, սրտում պահել է ոխը եւ ահա երբ մարմնի անդամներից մէկը՝ Վուամը ձեռքն է ընկել — այն անդամը, որի ձեռքով գրուած է նամակը — նրա գլխին է թափում իր ամբողջ զայրոյթը, ենթարկելով այդքան վտանգաւոր մի փորձի: Այսինքն նա ցոյց է տրուել իսկական յեղափոխականի մաքուր կոչմանը անվայել եւ դատապարելի մի վարմունք:

Ուրեմն թէ պաշտօնական արձանագրութեան մէջ եւ թէ Սաֆոյի վերջին նամակով Վիտոյի ողբալի աղէտը ներկայանում է մեր առաջ ո՛չ իբրեւ սոսկ աղէտ, այլ իբրեւ մի «քստմնելի բան», որի յանցաւոր հեղինակը էլլէնն է:

Անպատասխան թողնել մի այդպիսի մեղադրանք — կը նշանակէ արժանաւայել յարգանքից զրկել այն ընկերը յիշատակը, որի անձնագոհ եւ անբիծ գործունէութիւնը Հ.Յ.Գ. գոյութեան ամբողջ ընթացքում յայտնի է մեզ բոլորիս եւ այնքան թանկ ու արգասաւոր: Ահա այդ իսկ պատճառով մասնաժողովս կարծում է, որ ներկայ ժողովը պէտք է իր խօսքը ասի այդ հարցի մասին եւ համապատասխան գնահատութեան արժանացնէ զրպարտութեան հեղինակներին:

\*  
\*\*

Ամփոփելով մասնաժողովիս զեկուցման բոլոր երեք մասերը, մենք տեսնում ենք, որ Յուցական մարմինը ստանձնելով մի ամբողջ ժողովրդի բախտի վրայ ազդող ձեռնարկի իրականացումը, իր տրամադրութեան տակ ունենալով կուսակցութեան լայն միջոցները եւ գիտակցելով հանդերձ փորձի անաջողութեան կորստաբեր հետեւանքները, չափազանց թեթեւ ու անպարտաճանաչ վերաբերմունք է ցոյց տուել, այսինքն՝

1) Բաւարար ու անհրաժեշտ չափով չէ ուսումնասիրել պատասխանատու ձեռնարկի տեխնիկական կողմը, որի մանրամասնութիւնները շեշտեցինք զեկուցման Ա. մասում:

2) Մեծ եռանդով խուսափել է անձնագոհութիւնից, սուլթանասպանութեան փորձի իրականացումը մեքենայականի վերածելով եւ սեփական ապահովութեան համար բոլոր հնարաւոր միջոցները գործ դնելով հանդերձ, բախտի բերմունքին է թողել ձեռնարկին օժանդակող մի շարք ընկերների, որոնց մեծ մասը մահուան, կախաղանի ու տաժանակիր բանտերի զոհ դարձան:

3) Աններելի ակնարկներով արատաւորել է աշխատել յեղափոխական մաքուր ճանապարհի կէսին զոհուած մի ընկերը յիշատակը:

Այդ բոլորի հիման վրայ մասնաժողովս անհրաժեշտ է գտնում

- 1) Յուցական մարմինը պատասխանատուութեան ենթարկել դատական յատուկ մասնախմբի միջոցով:
- 2) Այդ դատական մասնախումբը ընտրել հէնց այստեղ՝ Ընդհանուր ժողովի կողմից, լիազօր իրաւունքներով:
- 3) Անմիջապէս յանձնել այդ մասնախմբի գործին վերաբերեալ բոլոր փաստաթղթերը:
- 4) Մինչեւ դատական մասնախմբի եզրակացութիւնը եւ վճիռը, որը պէտք է համարուի անբեկանելի, Յուցական մարմնի բոլոր անդամներին հեռացուած համարել կազմակերպութեան բոլոր գործերից:
- 5) Բանտարկեալ ժողովին՝ ընտանիքին միջոցով յայտնել Ընդհանուր ժողովի յարգանքները՝ նրա ցոյց տուած անձնագոհութեան համար:
- 6) Յոտընկայս յայտնել յարգանքներ դէպի Յուցական ձեռնարկի պատճառով բանտարկուած ընկերները եւ ընկած զոհերի յիշատակը:



Գ 4.- ԻՆՉՈ՞Ւ ԶՅԱԶՈՂՈՒԹԵՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՒ ՄԱՀԱՓՈՐՉԸ

Մուրաճ Համրտի մահափորձին մասին այս վկայության հեղինակը մակեդոնացի յեղափոխական գործիչ և Դաշնակցության քարեկամ Լեապովն է, որ կը գործածեր Չալեն Արշակունի ծածկանունը: Նամակը գրուած է ռուսերէն մտաւարդապէս 6 փոքրագիր էջերու վրայ: Կու տանք քարգանձարար:

Սուլթանը դուրս է գալիս A կէտից եւ մտնում է C կէտը՝ ABC գծով:

Նախապէս ենթադրուում էր Սուլթանի՝ պալատից B շրջադարձին մօտենալու ժամանակ կառքը կանգնեցնել F կէտում, ձիերին ուժեղ հարուածել ու միւրճուել զինւորների շարքերի մէջ եւ իրականացնել պայթիւնը:

Իրականում կառքը կանգնեցուած է եղել հրապարակի K կէտում [տեղում], պայթիւնի ժամանակ Սուլթանը գտնուել է միջետրի<sup>104</sup> աստիճանների վրայ եւ որեւէ ֆիզիկ[ական] ցնցում չի գգացել: Սակայն տեղում սպանուել եւ վիրաւորուել է մօտ 180 մարդ, ջախջախուել են բազմաթիւ կառքեր, բայց այդուամենայնիւ ճաղաչարին մօտ կանգնած զինուորներից ոչ ոք չի սպանուել պայթիւնի ուժից, իսկ մի քանիսը սպանուել են աշտարակի գազաթից պոկուած քարերից:

Անյաջողութեան պատճառները.

1. F տեղի՝ առանց պատճառի, յանցաւոր փոխարինումը K տեղով: Բացատրութիւնը, թէ KC գիծը կարճ է FB գծից, քննադատութեան չի դիմանում, որովհետեւ մինչեւ պայթիւնը ձիերին մտրակով թեթեւ հարուածելու դէպքում նրանք կ'ընթանային առաջ, որտեղ էլ վայրկենապէս տեղի կ'ունենար պայթիւնը: Այդ ժամանակ EB տարածութիւնը KC տարածութիւնից փոքր կը լինէր:

2. Միջետրի այդու մակերեւոյթը K հրապարակ մակերեւոյթից բարձր է 3½ մետր: գետնի այդ կախովի կտրուածքում էլ գտնուում է ճաղաչարը, իսկ զառիթափից մինչեւ միջետրի դուռը մօտ 15 մետր է: Հետեւաբար տեղի փոփոխութիւնը կատարեալ արտուրդ էր եւ Սուլթանի կեանքի ապահովագրում: Որովհետեւ ֆիզիկայի մասին նուազագոյն պատկերացում ունեցող երեխան անգամ չի կարող շահարկել այն փաստը, որ պայթիւնի ուժը պէտք է գլխաւորապէս հարուածի 15 մետր երկարութեամբ եւ 3½ մետր բարձրութեամբ պատնէշին,

պայթիւնը վերնամասում էր կարող աւերուել, այլ միայն չէզոքացնում է պայթիւնի ուժը միջետրի ուղղութեամբ:

3. Նման գործում անգամ մէկ գոհ չտալու Սաֆոյի ցանկութիւնը առաւել քան տարօրինակ է:

4. Տեղի փոփոխութիւնը այն հիմնաւորմամբ, թէ իբր կը սպանուեն եւրոպացիներ, առաւել քան ոչ յեղափոխական է:

5. Նոյնիսկ որպէս խորհրդատուի ինձ կոստանդնուպոլիս չթողնելու ցանկութիւնը, չնայած այն բանին, որ ես ամենագիտակն էի այդ գործում, ոչ մի բանով չեմ կարող բացատրել, եթէ ոչ պատուախնդրութեամբ:

6. Մեյիսիտը իսկապէս մաքուր չէր, բայց ինչպէս ցոյց տուեցին Սոֆիայում իմ ու Սաֆոյի կատարած փորձերը, նոյնիսկ այդ մեյիսիտով մենք կարող էինք հասնել արդիւնքի, եթէ մահափորձը իրականացուէր նախատեսուած տեղում: Իսկ այն տեղում (K), ուր կատարուեց, ոչ թէ մաքուր, այլեւ գերմաքուր մեյիսիտով էլ թեքութեան պատճառով ոչ մի բանի չէինք հասնի:

Այս բացատրութեան պատճառն այն է, որ հայ ընկերներից շատերը ծանօթ չեն գործին այնպէս, ինչպէս եղել է, ուստի հայ ընկերներին ներկայացնելով մեր անյաջողութեան յստակ պատճառները՝ յոյս ունեմ, որ այս կոնգրեսը չի գլանայ դատ բացել մեղաւորների նկատմամբ:

ԶԱԻՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Ընկեր Չալեն Արշակունու խնդրանքով գրեց Ռաշիդը:

104.- Սզկիթի:

Ե.- ՍԱՖՈՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆԸ

Այստեղէն կը սկսի Սաֆոյի երկարապատում, բայց եւ յուզիչ ու տրամաքիք պաշտպանողականը: Գրուած է տարբեր չափի՝ փոքրագիր, միջակ եւ մեծագիր թերթերու վրայ, որոնց ընդհանուրին գումարը կ'անցնի 200 էջերու սահմանը: Սաֆոյի ձեռագիրը դժուար ընթեռնելի չէ, եթէ չըլլային գրեթէ ամէն էջի վրայ ջնջուած ու սրբագրուած մասեր, լուսանցքային եւ տողամէջի յաւելումներ, որոնց ընթերցումն ու վերծանումը կը պահանջէ յաճախ տաժանք պատճառող լարում եւ ուշադրութեան ծայրայեղ կեդրոնացում:

Դժգոհութեան եւ բողոքի առաջին արայայտութիւններէ ետք, որոնցմէ մէկ քանին բերանացի արդէն կատարած էր ժողովի ընթացքին (տես «Նիւթեր»-ու Գ. հատորի մէջ Ընդ. Ժողովի ատենագրութիւնները), կու գայ բուն պատասխան-ինքնապաշտպանութիւնը՝ Քննիչ յանձնախումբի բազմաբնոյթ մեղադրանքներուն դէմ:

Ինչպէս Յուցական մարմնի տեղեկագիրը, նոյնպէս նաեւ իր պաշտպանողականը Սաֆոն գրեց Ընդ. Ժողովի օրերուն: Սկզբնապէս իրեն տրուած էր չորս օր պայմանաժամ (75րդ նիստ, 9 Ապրիլ 1907), որ սակայն երկարաձգուեցաւ: Ինքնապաշտպանութեան պատրաստ՝ առաջին բաժինը Սաֆոն ներկայացուց 94րդ նիստին (20 Ապրիլ), վերջին բաժինը 103րդ նիստին (28 Ապրիլ), իսկ քննարկումը վերջացաւ եւ Ընդ. Ժողովը իր եզրակացութիւնը հանց 114րդ նիստին (30 Ապրիլ):

Ե 1.- Հ. 3. Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՑՈՒՑ. ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՍԱՖՈՅԻՑ

Ներկայ Ընդ. Ժողովի մէջ տիրող շիտակութեան բացակայութիւնը, բազմատեսակ հակաօրինական դարձուածքները, ժողովի բացման օրից սկսած, որոնք օր օրի վերայ արտայայտուեցին այստեղ առհասարակ եւ առանձնապէս խտացան Յուցականի շուրջը, տխուր մըտքեր զարթեցրին մեր մէջ ժողովիդ, իբրեւ այդպիսին, իւր ծանր կոչման բարձրութեան վերայ կանգնած լինելու նկատմամբ, մի բան որ բանաւոր ճառերով էլ այստեղ բազմիցս չեշտուեցին մի շարք պատգամաւորների կողմից:

Իբրեւ պատգամաւոր եւ իբրեւ անհատ՝ խորը վշտացած՝ 18 արեան տարիներ հաշուող կուսակցութեանս ներկայ բարոյական վիճակից, վիճակ, որից, դժբախտաբար, չպիտի յաջողին փրկել ներկայ եղող սակաւաթիւ իսկական յեղափոխականներ, ներկայիս յայտնում եմ այդ ժողովից ի սպառ հեռանալս եւ Յուց. մարմնի պատգամաւորի ձայնից հրաժարուելս, ժողովի զբաղմունքների մէջ մնալով լուկ համարատու եւ պատասխանատու ցուցական գործի (մահափորձի) համար, իբրեւ ներկայացուցիչ Յուցական մարմնի:

Յուցական Պ. Մ.ի պատգամաւոր ՍԱՅՕ

Յ.Գ.- Թող յիշատակուած մնան այստեղ բազմաթիւ փաստերից գոնէ երկուսը, երեքը:

1) Առաջին նիստերից մէկում դեռ դիւանը նոյն վայրկենին կազմուած, օրակարգը դեռ Հաստատուած, Հաստատուած իսկ օրակարգի (Արեւմտեան Բիւրոյի) առաջին տեղում ունենալով նշանակուած ընթերցումն Սասունի, ապա Վասպուրականի տեղեկագրերի, միտումնաւոր կերպով սահելով առաջինների վերայից, հարկ է դրուում իսկոյն եւեթ, անմիջապէս սկսել Յուցականի տեղեկագրից, չնայած նրան, որ Յ-ի Պ-ը յայտնում է, թէ իւր տեղեկագիրը պատրաստ չէ եւ չի կարող նա պատրաստ լինել, մինչեւ Բիւրոյից Յ-ի արձանագրութիւնների ստացուելը, թէ երկու անգամ, դեռ երկու ամիս առաջ, Յ-ը գրաւոր դիմել ու խնդրել է Բիւրոյից, արխիւում պահ դրուած իւր արձանագրութիւնները, տեղեկագիր կազմելու համար, բայց մինչեւ այդ օրը նա դեռեւս չէ կարողացել ստանալ ամբողջութեամբ: Չնայած դրան, քուէարկութեան է դրուում հարց, մի այսպիսի հարց՝ պահանջելու եւ պարտաւորեցնելու Յ-ին անմիջապէս կարգաւ տեղեկագիրը՝ թէկուզ կիսատ: Եւ քուէարկուում է մի այդպիսի հարց...

2) Առանձին յանձնաժողով է կազմուում Յուց-ի տեղեկագրի համար զեկուցում ներկայացնելու ժողովին (մինչ այդ, միւս տեղեկագրերի առթիւ առաջ եկած

հարցերի պատասխանները ժողովի մէջ էին տրուում ինչպէս եղել է միշտ եւ միւս Ընդ-ժողովներում եւ պատասխաններ ստացուում): Թոյլ է տրուում պատգամաւորներին առանձինն, ժողովից դուրս, ընտրուած յանձնարարին նոր հարցեր տալու, ցուցմունքներ անելու հակառակ Յ-ի պատխախտանաւորութիւնը բողոքներին, թէ հարցերը ժողովի մէջ պէտք է դրուին, որ ամէնքը իմանան, ինչպէս եւ ինքը, թէ ինչ հարցեր են դրուում:

Բայց որ ամէնից աւելի բնորոշն է եւ ապշեցնող միանգամայն, այն է, որ հակառակ Յ. Պ.-ի նախապէս յայտարարութեան, թէ յանձնարարութիւնը թեկնածութիւնից թող ազնուութիւն ունենան հրաժարուելու ամէն անոնք, որոնք անձնական հաշիւներ, ընդհարումներ են ունեցած Յ-ի այս կամ այն անդամի հետ, մի բան, որ ինքնըստինքնեան այդ եւ բենն է տարրական էթիքայի, եւ յիշեցնելն իսկ վիրաւորական, հակառակ այդ բոլորի, այդպիսիներից միայն մէկը Ռ[ուբէն] Ջ[արդարեան]ն է հրաժարուում: Մինչ Երեւ[անի] պատգ. բժ. Ջ[աւրիեւ]-ը ընտրուում է եւ ընդունում այդ պաշտօնը քննիչի դեր Յուց. մարմնի արձանագրութիւններին վերաբերութեամբ, արձանագրութիւններին, ուր շատ խիստ եւ վիրաւորական տողեր կան իւր քրոջ կամ քրոջ աղջկայ նկատմամբ... Եւ այդպիսով եղբայրը կամ քեռին հանդիսանալու է մի տեսակ դատաւորի դերի մէջ իւր քրոջը վիրաւորողների նկատմամբ: Սա գլուխ գործոցն է տարրական հասկացողութիւնների բարելոնական խառնակութեան: Եթէ մի ընդհանրութեամբ թէ ընտրուողը կարող էր այդ չգիտենալ (թէ եւ մի այդպիսի ենթադրութիւն անելու իրաւունքը չունինք), երկու Բիւրոների ներկայացուցիչները խօսմ անպայման գիտէին այդ, եւ նրանք չբողոքեցին դրա դէմ, այլ, ընդհա-

կառակը, հաստատեցին այդ ընտրութիւնը (Արեւմտ. Բիւրոյի ներկայացուցիչը նախագահում էր ժողովին)... եւ եթէ, ինչպէս մի ընդհանրութեամբ, թէ ինքը, ընտրուողը, այդ չգիտէր թերեւս նոյն ընդհանրութեամբ, այսօր, այդ գիտէ, կարողացել է եւ... շարունակում է մնալ քննիչի դերում... Բարձր, ո՛րքան պարզացել էք...

Քեռին դատաւոր իւր եկեանի վիրաւորողին վերայ: Բայց նա, անաչառ մարդ է, անշուշտ, ի՞նչ անենք որ քեռի է...

Այսքանս բաւական է պատմութեան համար: Նա կ'արձանագրէ սա անշուշտ եւ ըստ արժանաւորի կ'որակէ նրան:

**ՆՈՅՆ**

3) Մանդատները չեն ենթարկուում քննութեան ըստ էութեան եւ ոչ իսկ ըստ ձեւի: Տարբեր արշիւններ՝ տարբեր մարմինների, տարբեր մարդկանց վերաբերութեամբ: Ոսկեհանքը, ունենալով հանդերձ կանոնաւոր մանդատ, գրկուում է ձայնի իրաւունքից, բեկանում է ընտրութիւնը, առանց օրինական պատճառների, իսկ Արեւմտ. Բիւրոյի, օրինակ պատգամաւորը, առանց մանդատի, առանց կնիքի եւ ստորագրութեան, ընդունում է պատգամաւոր, եւ հարց անգամ չի դրուում այդ մասին, թէ եւ կանոնադրութեան համաձայն նա կազմալուծուած է նկատուում, մի ընտրուած անդամ միայն մնացած լինելով նրա կազմի մէջ: Եւ այդ մէկը ընդունում է իբրեւ պատգամաւոր եւ ընտրուում է դիւանի մէջ նախագահ առանց մանդատի:

**Ե 2.- ՍԱՖՈՅԻ ՆԱՄԱԿԸ ՔՆՆԻՉ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔԻՆ**

Յուցականի յանձնարարին,

Սպասում էինք, թէ յանձնարարութեամբ Յ-ի գործերի հետ ծանօթանալուն զուգընթաց, կարիք պիտի ունենար Յ-ի բացատրութիւններին՝ լուսաբանելու արձանագրութիւնների մուտք կէտերը: Ինչպէս տեսնում ենք, յանձնարարութեամբ այլ կերպ է մտածում:

Շարունակեցէ՛ք ուրեմն ինչպէս գիտէք, միայն թէ շուտ արէք, ինչ որ անելու էք:

Որպէսզի մեր կողմից նպաստած լինինք շուտ վերջանալուն, պարտք ենք համարում ներկայացնել սրանով արձանագրութիւնների էն փափուկ կէտերի իսկական բանալին, յայտնելով միանգամ ընդ միշտ, որ ձեր ձեռքում ունեցածը — սպանութիւն, եղեռն — կեղծ բանալի է:

Որքան էլ որ փորձիք այդ կեղծ բանալին, տաշէք, տաշտէք մէկ կողմից միայն եկող բացատրութիւններով, դուք պիտի անհրաժեշտօրէն հանդիպիք մի շարք հակասութիւնների, մուտք կէտերի, որոնք չեն կարող բացուիլ այդ ո՛չ իսկական բանալիով, առանց փճացնելու եւ կտրելու փականքը: Բանալիները երբեմն շատ նման են լինում իրար արտաքին տեսքով, այնքան նման, որ առաջին հայեացքից կարծուում է թէ հէնց ինքն է: Բայց նրանց մէջ, ուշադրութեամբ նայելուց վերջը, երեւան են գալիս այնպիսի տարբեր գծեր, երբեմն շատ փոքր, որոնք արդէն բաւական են, որ այդ բանալին ոչ մի կերպ չէ յարմարուելու եւ բանալու տրուած փականքը:

Մի ընդհանրութեամբ միայն դէն ձգեցէք ձեզանից այդ ոչ հարազատ բանալին եւ փորձեցէ՛ք վերցնել եւ փականքներին մօտեցնել այն, որ մենք տալու ենք այստեղ, եւ կը տեսնէք, թէ ինչպէս մէկը միւսի յետեւից պիտի բացուին բոլոր հակասութիւնները, մուտք կէտերը:

Անկախ նրանից, թէ ընկերների իւրաքանչիւրը առանձին, մի քանիսը միասին ինչեր են մտքից անցկացրել Սոֆիայի աղէտի շուրջը, ասել կամ խօսել այդ առթիւ միմեանց հետ, սա է փաստը, որ նա, Սոֆիայի աղէտը յանգել է վերջ ի վերջոյ պատկերի, որի իսկական բանալին հետեւեալն է.

- 1) Փորձերի աղէտալի վախճանը հետեւանք է ի հարկէ սխալների — մի շարք:
- 2) Միայնները հետեւանք են փորձի ղեկավարողի հոգեկան դրութեան՝ շրջահայեցողութեան պակասելուն, կենտրոնանալ չկարենալուն, բարկացած, վրդովուած լինելուն:
- 3) Էլլէնը մի շարք լուրջ առիթներ ունէր բարկացած լինելու ներսի ընկերների, նրանց թուում եւ վաւեր վերայ: Բարկացած, վրդովուած մարդը կորցնում է շրջահայեցողութիւնը, զգուշութեան զգացմունքը: Նա չի կարող կենտրոնանալ:

Բարկութիւնը վատ ընկեր է վտանգաւոր փորձերի ժամանակ, երբ անհրաժեշտ է հանդարտ, մեթոտիկ, կենտրոնացած ուշադրութիւն փորձի իւրաքանչիւր մանրամասնի վերայ: Իսկ այդ յատկութիւնները հէնց բացակայում են վրդովուած մարդուն:

Բաժակը լիքը ջրով մի սենեակից միւսը տանելը մի դժուարին գործ չէ հանգիստ, անդորր դրութեան մէջ: Բայց տուէք նոյն բաժակը վրդովուած մարդու ձեռքը, նա դժուարութեամբ պիտի նրան տեղ հասցնէ, առանց թափթփելու: Իսկ եթէ շատ է բարկացած, կէսն էլ տեղ չի հասցնէ, թերեւս բաժակն էլ ընկնի ձեռքից եւ փշրուի:

Եւ այդ, ի հարկէ, անկախ նրա ցանկութիւնից, կամքից, հակառակ նրա կամքին:

Ահա այդպիսի պայմաններում հարկաւոր է եղել Սոֆիայում կատարել վերջին, գեներային<sup>1</sup> փորձերը, պատասխանատու փորձ. ամենակարճ պատրոյգով, որպիսին երբեւիցէ մինչեւ այդ կատարուած է եղել — 2.5 ս-ով: Այդպիսի մի փորձի ժամանակ ամենաանհրաժեշտ պայմանն է կատարեալ անդորրութիւն հոգեկան, լուրջ կենտրոնացումն փորձի մանրամասների վերայ, իսկ այդ անդորրութիւնը հէնց պակասում է ղեկավարին եւ իբրեւ հետեւանք դրան, վրիպում են ուշադրութիւնից այնպիսի դետայլներ<sup>2</sup>, որոնք եւ միասին հաւաքուած տալիս են այն, ինչ պատմութեանն է արդէն պատկանում... միանգամից երկու թանկագին բաժակներ:

Եթէ էլլէնը լինէր հանդարտ եւ անդորր, նրա ուշադրութիւնից չէր կարող վրիպել, թէ թղթով փաթաթելը լայն կապսիւլի բաց տեղը բաւարար ապահովութիւն չի կարելի նկատել:

Եթէ նա կենտրոնանալ կարողանար, կը հասկանար խշշոցի պատուէրի ամբողջ անհեթեթութիւնը գեներային փորձի ժամանակ, որը պիտի վերարտադրէր իսկական կատարուելիքը պաւլիլիոնում, ուր սեղմելն ու նետելը պէտք է լինի: Այնտեղ լսել ես խշշոց թէ ոչ, պէտք է նետես, երբ ձեռքը բարձրացրած ես ուումբով:

Խշշոցը՝ որը ունի իւր միտքը — երկար պատրոյգի ժամանակ 3-7 ս. — ժամանակի տնտեսութեան տեսակէտից միայն, որ մէկ էլ չգնաս չպայթած ումբի յետեւից, պտրես, գտնես եւ վերադառնաս, նորից փորձելու համար, որը եւ գործադրուել է Ֆիլիպպէում իւր կատարած փորձերի ժամանակ, անհեթեթութիւն է պաւլիլոնի համար, որի ընկերների<sup>3</sup> էր կատարուում Սոֆիայում:

Բայց նա եղել է ցրուած ու վրիպել է ուշադրութիւնից մի այդպիսի նշանաւոր կէտ:

1.- Գլխաւոր:  
2.- Սանրամասնութիւններ:  
3.- Փորձ, կրկնութիւն, փորձի կրկնութիւն:

Սոքա անպայման սխալներ են եւ սխալներ չակերտների մէջ: Ոչ այնպիսի սխալներից որոնք նորմալ պայմաններում տեղի են ունենում, վրիպում են ուշադրութիւնից իրանց շատ բարակ, աննկատելի լինելովը, այլ սխալներ են խոշոր եւ ուրոյն տեսակի, հոգեկան խոռվութիւնից առաջացած, կենտրոնանալ չկարողանալուց ուշադրութիւնից վրիպած:

Թերեւս սխալ ենք հասկանում մենք, բայց այն կարծիքի ենք, որ

«Սպիտակ» չակերտների մէջ, չի նշանակում անպատճառ սեւ: Նա կարող է նշանակել, նայած տեղին, եւ գորշ եւ մոխրագոյն եւ դեղին մինչեւ սեւը բոլոր նիւանսներով<sup>4</sup>:

Նոյնը եւ «անհոգութեան» մասին: Այդ այն անհոգութիւնը չէ, սովորական, թուչնային, եթէ կարելի է այսպէս ասել, անհոգութիւն: «Անհոգութիւն» վրդովւած մարդու դէպի վտանգը, դէպի հետեւանքը եւ իւրաքիչների համար էլ հաւասարապէս: «է՛հ [զրոյի տանի]»<sup>5</sup> Հոգեկան դրութեան արտայայտութեանը համապատասխան անհոգութիւն:

Բայց ինչ է նշանակում խորհրդաւոր բառը եւ ինչն էր, որ քաջութիւնը չունէինք ներս թափանցելու «թողնելով վարագոյրը ծածկուած այդ անբացատրելի աղէտի վերայ, թէ ինչ էր պատճառը էլլէնի, այդ օրուայ փորձերի դեկավարի այդ օրուայ խիստ ջղային դրութեանը, դրութիւն, որով միայն կարելի է բացատրել փորձի անհեթեթ կողմերը»:

Մի՞թէ ոեւէ կասկածի տեղիք թողնում են, թէ ինչ է դրանով ասում արձանագրութիւնը՝ «դրութիւն որով միայն կարելի է բացատրել փորձի անհեթեթ կողմերը»:

Իսկ վարագոյրի տա՛կ: Ահա թէ ինչ է պատկերացել մեզ վարագոյրի տակ ծածկուած:

Մարդիկ եւ հանգամանքները ստիպում են մեզ բանալու այդ վարագոյրը, որովհետեւ նրա տակ ուզում են տեսնել անսահման աւելի քստմանի բան, քան այն, ինչ մեզ ներկայացել է որը քաջութիւնը չունեցանք ասելու եւ ջնջելով էլ այդ տողերը, աւելի եւս շեշտեցինք վարագոյրի յետեւը նայելու ցանկութիւնը չունենալը: Բայց մարդիկ ելան խուզարկութեան եւ ջնջումների տակ պեղումներ կատարելով, այնպիսի քստմանի հետեւողութիւններ դուրս բերին, որ ստիպուած ենք բոլորովին բանալու այդ վարագոյրը եւ առաջ բերելու այդ տողերը առանց ջնջելու:

էլլէնը, եթէ հոգեկան անդորր վիճակի մէջ լինէր, ինչպէս ասացինք արդէն, նրա ուշադրութիւնից չէին վրիպի տեղի անյարմարութիւնը, թղթի անապահովութիւնը, «խշռոցի» այս դէպքում աւելորդ լինելը, եւ որ գլխաւորն է, չէր թողնէ Վուամին նետելու այդպիսի վերջնական ուղւմբ, իբրեւ բոլորովին անփորձ մարդու, առաջ քան նրան վարժեցնելը 7,8, 4, 3 սանտ. համեմատ

տաբար երկար պատրոյգներով, ինչպէս ինքն էր վարժել Ֆիլիպպէում:

Բայց նա, ինչպէս ասացինք, կորցրած շրջահայեցողութիւնը մէկ կողմից, միւս կողմից համարելով Վուամին «հոսահոս», մեծ-մեծ խօսող միայն, հաւատացած էր, որ նա, Վուամը կը վախի, չի նետէ, pardon կը խնդրէ եւ այդպիսով կը կոտորի: Ահա այն ժամանակ նա, էլլէնը ինքը կը վերցնէ նոյն ուղւմբը եւ կը նետէ, դառնալով դէպի փոքրացած Վուամը (արտասանուած կամ լռելեայն — միեւնոյնն է):

«Հապա մեծ-մեծ խօսել գիտէ՛ք... Գարիբալդիներից, պատմութիւնից եւ ինչո՛ւ... քրտնեցիք»:

Իսկ Վուամը չուզեցալով պատկնալ այնտեղ ներկայ եղող յեղափոխական կանանց եւ հիւրերի առաջ, զգալով էլլէնի միտքը —

«Կը խօսիմ եւ կը նետեմ, ի՛նչ էք կարծում» ասաց սրտում եւ նետեց:

Ահա թէ ինչ էին զգում այդ օրուայ երկու զոհերը: Ահա թէ ինչու մնացին նոքա երկուսն էլ մեր արձանագրութիւնների մէջ «ընկերներ», «զոհեր», մեր ընկերներ եւայլն:

Ահա թէ ինչու նա անուանւում է միշտ աղէտ առանց չակերտների եւ ոչ եղեռն: Ահա թէ ինչու, առանց խելագարներ լինելու, պարտք համարեցինք հոգալ երկու մեր ընկերների ընտանիքի մասին, ապահովելու մէկի ծնողները միայն 1000 Փր. եւ այն էլ Կարմի Խաչից, իսկ միւսի տասնեակ հազարներով այրիին եւ որդուն, Դաշնակցութեան սան անուանելու պատուաւոր անունով, համաչափ զոհերի նշանակութեանը Հ.Յ.Դ. պատմութեան մէջ, համաձայն նրանց ունեցած դերին:

Այս է ահա Սոֆիայի մեծ աղէտի իսկական բանալին, որքան նա մեզ գործին եւ անձերին մօտից ծանօթ, երկուսի էլ յարաբերութիւններին եւ ներքին անցուղարձերին տեղեակ մարդկանց պատկերացել է:

Մենք թողնում ենք հարցին այն կողմը, թէ որքան ընկերական վարմունք կարելի էր համարել այդ արձանագրութիւններից — կազմուած Պոլսի պայմաններում — այդքան առատապէս օգտուելը, փոխանակ ուղղակի տեսնելու գրողին, բացատրութիւն պահանջելու, պարզելու մոլթ եւ անյարմար կէտերը կամ նոյնիսկ խնդրելու յետ վերցնել այն իրա ժամանակին, քանի դեռ ոչ ոք չէր կարողացել:

Մենք թողնում ենք նաեւ այն, թէ որչափով Քրիստափորի յիշատակը մաքուր պահելու ցանկութեան համապատասխանեցին այդ արձանագրութիւնների մի մասի միայն տասնեակ մարդոց կարողալու տալը, նրա պատճէններ հանելը:

Մենք, Քրիստափորի անունը իբր արատաւորող-

4.- Նրբերանգնորով: 5.- Բնագրին մէջ ուղւմբով:

ներս, մի խնդիր միայն ունինք յանձնաժողովիդ չորս անդամներից (պրն. Զաւրեանից ոչինչ ունինք խնդրելու), պաշտպանել Քրիստափորի յիշատակը ոչ միայն այդ մեր վզին գոռով փաթաթուած մեղադրանքից, այլեւ չափից դուրս եռանդով պաշտպանողներից, թոյլ չտալով որ երկար քաջքուռի նրա անունը:

Այս բոլորը ստիպուեցանք գրելու, որպէսզի շտապի յանձնաժողովը — վեր[ջ] տալ Յուզակների խնդրին:

Մենք պատրաստ են խմելու բաժակը մինչեւ վերջը, որքան էլ որ դառն լինի նա, միայն թէ շուտ լինի, ինչ որ լինելու է:

Մեծ բան չէ — կարծում ենք, մեր խնդրածը:

Յ. Պ. Մ. կողմից ՍԱՅՕ

Վիեննա Մարտ<sup>8</sup>

Յ. Գ.— Մի ուրիշ կէտ:

Սարգսի առաջարկների ու մեր՝ Վուամի ձեռքով գրուած նրա պատասխանի առթիւ գրուած տողերը, ուշադրութեամբ կարդացէք, կը տեսնէք, որ որքան էլ որ խառն ու շփոթ կերպով է նա արտայայտուած տեղական պայմանների շնորհիւ, այնուամենայնիւ դժուար չէ հասկնալը, որ այդ ամբողջը վերաբերում է եւ ուղղուած է Սարգսին եւ ոչ էլլէնին:

Սարգսին եւ միայն Սարգսին եւ ոչ էլլէնին են վերաբերում նոյնպէս եւ այն տողերը, թէ հարկաւոր էր Կոստանդինի թեկնածութիւնը ղնել ուղղակի «էլլէնին փոխարինողի» ( եւ ոչ «իրան»): Եթէ էլլէնին վերաբերէր — պէտք է լինէր՝ «իրան փոխարինողի»:

Իրաւ է թէ Կոստանդինին իբրեւ ձուլող առաջարկողը էլլէնն է եղել, բայց այդ ոչինչ չի նշանակում, քանի որ պարզ է արձանագրութիւնից, որ գոյութիւն է ունեցել մի խմբակ Սարգսի — Ռուբինա — Կոստանդին, որոնք «դաւ-ելով» էլլէնին փրկել, ներս մտցնելով էլլէնին փոխարինելու համար Կոստանդինին, մտածել են խորամանկութիւն, էլլէնին հաւատացնել, թէ Կոստանդինը միայն ձուլելու համար է որ ցանկանում է ներս մտնել: Ապա առաջարկ անողները իսկապէս այդ երեքն են եղել, էլլէնի միջոցաւ:

Ահա թէ ինչու նոյն խօսքերը վերաբերում են ամբողջովին իսկական առաջարկողներից Սարգսին եւ ոչ միջնորդին, որից ծածկուած էին իրանց միտքը եւ նա կարող էր եւ չիմանալ այդ: Կարող էր եւ գուշակել մասամբ, բայց մտածել, թէ այդ դեռ հարց է, թէ թոյլ կը տամ եւ Կոստանդինին ինձ փոխարինելու, բայց իբրեւ առաջարկ, քանի որ Կոստանդինը ձուլել սովորել է, վատ միտք չէ տեղն ու տեղը ձուլել ուղւմբերը:

Ե 3.— Հ.Յ.Դ. ԸՆԴ. ԺՈՂ. ԳԻՒԱՆԻՆ

30 Մարտի 907 թ.

Ըստ երեւոյթի մաղը չպիտի կարողանամ վերջացրել:

Երբ վերջացնելու մօտենամ, մի օր առաջ կը տեղեկագրեմ: Յայտնում եմ ի գիտութիւն Ընդ. Ժողովի, որ ինձ ուղարկուած 18 կտորը թղթերի մէջ չգիտեմ ինչ պատճառով (երեւի մոռացուած են) չկան հետեւեալները՝

- 1) Լեպպովի առանձին կարծիքը
2) Աշոտի նամակը ուղղուած Ընդ. Ժող.
3) Տաճկական թերթի «անայիզը»
4) Սաֆոյի նամակը նիւթի մասին ունեցած իբր կասկածների:
5) Աթէնքում կազմուած տեղեկագիրը Քրիստափորի ձեռքով եւ այն բոլորը, առհասարակ, ինչ յանձնախմբին ծառայել է իբրեւ աղբիւր քննութեանց եթէ կան, խնդրեմ ուղարկել այսօր:

Յ. Մ. ն ՍԱՅՕ

Ե 4.— Հ. Յ. Դ. IV Ը. Ժ. ԳԻՒԱՆԻՆ

Հակառակ կամքիս, չպիտի կարողանամ վաղը վերջացնել: Խնդրում եմ երկու օր ժամանակամիջոց, մինչեւ 19ի առաւօտը:

Եօթնասուն թերթերէ կազմուած մեղադրական ակտի 700[ի] չափ հարցերուն պատասխանելու համար երկար չէ ժամանակը: Յանձնախումբը 5 օրուայ որոշման դէմ՝ 20 օրէն հինգ հոգով հազիւ լմնցուց: Ես մենակ եմ պատասխանելու այդ 5 հոգու 20 օրուայ «գործին»:

Եթէ ժողովը չյարգէ խնդիրս, ուրեմն կը կայացնէ իւր որոշումը:

Յ. Պ. Մ. նի ն[երկայացուցիչ] ՍԱՅՕ

18 Ապրիլի 907ի Վիեննա

6.- Թուակահին տակ գրուած է «1907 թ. Մարտ 21» եւ ստորագրուած՝ Արամ, որ Ընդ. Ժողովի կողմէ ընտրուած ԲԶԳի յանձնախումբի անդամ Արամ Մանուկեանն է:

Ե 5.- ՅՈՒՑԱԿԱՆԸ ՍՐԱՆՈՎ ԳԱԼԻՍ Է ՅԱՅՏՆԵԼՈՒ

Յուցականի բորածրարին մէջ կը գտնուի Սաֆոյի ձեռագրով հետեւեալ հակիրճ գրութիւնը առանձին բերրով մը: Յիշեցնենք որ նշուած Սարգիսը Վանայ Սարգիսն է, բուն անունը Պողոս Օտապաշեան, որ մինչև Քրիստոսափորի դժբախտ մահը Յուցականի «դրսի» ընկերն էր Պուկարիոյ մէջ: Ապա, հրաժարելով Յուցականի գործէն անցաւ Կովկաս՝ հայ-քաթարական ընդհարումներու օրերուն, ապա Վան, ուր անդամ էր Վասպուրականի Կ. Կոմիտէին (տեսնել այս մասին ներկայ հատորի կազմակերպական շրջաններու յաւելումական գլուխի Վան-Վասպուրականի եւ Ապառաժ-Ղարաբաղի բաժիններուն մէջ (էջ 289-298 եւ 302-310): Բարսեղեան անունով ան ներկայ էր Ընդ. Ժողովին իբրև պատգամաւոր Ապառաժ-Ղարաբաղի:

Յուցականը սրանով գալիս է յայտնելու

1) Որ նա ունի իւր մէջ գիտակցութիւնը իւր կատարած մահափորձի, որը նա կատարել է ամենայն բարեխղճութեամբ եւ նրա այդ անյաջող իսկ փորձը՝ բարձր է այսպիսի քննադատութիւններէն:

2) Որ այդ մահափորձը, իբրև արքայասպանութեան անդրանիկ ժեստ, ոչ միայն ամօթի կամ անպատուութեան աղբիւր չէ կարող ներկայանալ, այլ է եւ կը մնայ՝ մինչեւ Սուլթանի սպանութեան յաջող օրը, իբրև մի քայլ դէպի յառաջ Հ. Յ. Դ. յեղափոխ. ձեռնարկների աստիճանական զարգացման մէջ:

Դրան ապացոյցները բազմաթիւ են, բայց մենք այստեղ կը յիշենք միայն՝

1) Վանի տեղեկագիրը — Վա՛նի, ուր Սարգիս կայ — կատարի հակառակորդ Յուցականի — եւ այնուամենայնիւ նրանց տեղեկագիրը քանիցս յիշում է մահափորձի բարեբար ազդեցութիւնը՝ Վասպուրականի կա-

ռավար. խաւերի դէպի հայ տարրը փափկացած լինելու նկատմամբ ի շարս այլ պատճառներէի:

2) Պոլսի նորակազմ դ[աշնակցական] Քրիստ խմբի տեղեկագրի վերջին մասը, ուղղուած Բալկ. Կ. Կոմիտէին, ուր բացայայտ ասուում է թէ մահափորձը մեզ շատ ոգեւորեց եւ այն օրուանից սկսել են կազմակերպւել եւ եռանդով գործել:

3) Ամբողջ Բալկանի ոգեւորութիւնը մահափորձին նուիրուած Պոլսի թերթերով [եւ] լրագրական լուրերով, նոյնիսկ այնպիսի փտած հարուստների, որոնք մինչ այդ սառն էին դէպի հայկ. դատը եւ անտարբեր:

4) Վերջապէս ամբողջ Եւր. եւ Երիտ. թուրք. մամուլի նուիրուած ուշադրութիւնը, ջերմ յօդուածները եւայլն: Եւ եթէ մեր խմբ[ագրութիւնը] ժամանակին լրութիւն պահպանելը չնախընտրէր՝ այդ ոգեւորութիւնը շատ աւելի մեծ եւ ուժեղ կը լինէր եւ այդ մահափորձը շատ աւելի մեծ չափերով պիտի շահագործուած լինէր: Սոքա մի մի իրողութիւններ են:

Ե 6.- ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Անիրաւութիւններով սկսուեց այս ժողովը, Յուցականի վերաբերութեամբ, գոնէ: Մենք հրաժարուելով մասնակցել այս ժողովին իբրև պատգ[ամաւոր], հետեւապէս իրաւունք չենք համարում մեզ խօսելու Յուցականից դուրս՝

1) Ապօրինութիւն, ոչ պաշտօնական, թէեւ, բայց եւ այնպէս բնորոշ. ամբողջ 10 օր դեռ ժող[ովը] չբացուած, նախապատրաստական ժողովներ տեղի ունեցան, ուր մշակուում էին ներքին կանոնակար[գ] ն[որ] Ընդ. Ժողովի: Եւ այդ ժողովներին ոչ միայն չկանչուեց Յ. Ի ներկայացուցիչը, այլ ամէն կերպ գաղտնի պահուեց նրանից նոյնիսկ ժող[ովի] տեղը, հասցէն, չնայած, որ մենք քանիցս հարցրած ենք պրն. Մալումեանին եւ միւսներին:

Զգիտենք, չենք յիշում եւայլն, եղել է պատասխանը ոչինչ չենք կատարում. այնպէս խօսում ենք: Սա բնորոշ նախերգանքն էր միայն, խոստմնալի նախերգանքը:

2) Ժողովը վերջապէս բացուեց. դեռ նոր ընտրուեց Դիւանը, դեռ օրակարգը չէ հաստատուած ժողովից, դեռ Բիւրոյի օրակարգով իսկ Յուցականի տեղեկագրի ընթերցումը երրորդ տեղն է բռնում, դեռ Սասուն-Վասպուրական կայ — ժողովը, յանձինս նորընտիր նախագահ պրն. Վաւանի, դեռ նոր նախագահ[ական] սեղանին բազմած, փորձեց բռնանալ ստիպելու Յուցականի տեղեկագիրը հերթից դուրս եւ անմիջապէս սկսելու: Հաշիւը պարզ էր՝ կարդալ, հողը պատրաստ է՝ դատի ենթարկել եւ իբրև այդպիսին, գոհել ժողովին մասնակցելուց: Կը գտնուէր այստեղ մէկը, որ համարձակ[ւի] ասել, թէ սա այսպէս չէ:

Ոչինչ չօգնեց կանգնեցնելու այդ չտեսնուած բարբարոսութիւնը: Ոչ բողոք՝ թէ օրակարգը հաստատուած չէ, ոչ այն՝ որ հերթը Յուցականին չէ, եւ ոչ այն, որ Յ. Ի տեղ[եկագիրը] պատր[աստ] չէ դեռ՝ ոչ իւր՝ Յուցականի յանցանքով: Քուէի դրուեց հարցը: Եւ ժողովը, եւ ժողովը... Ի՞նչ էք կարծում, քուէարկեց... այդ հարցը ստիպելու Յուց-ին, կարդալ հերթից դուրս կիսատ տեղեկագիրը:

Եւ Յուց-ը այդ տեսնելով հեռացաւ ժողովից եւ հրաժարուեց մասնակցել այլեւս այդտեղի ժողովներին, իւր հրաժարականի մէջ բերելով այդ յետագայ անկանոնութիւններից եւ ապօրինութիւններից եւս իբր փաստեր: Փա՞ստ է սա թէ ոչ:

Յուց-ը այլեւս չի խանգարում «ժողովին». նա սպասում է՝ համար ու հաշիւ տալու» իր հերթին: Երկար է սպասում: Վերջապէս դիւանը բարեհաճում է լսել Յուց-ի տեղեկագիրը: Լսում է եւ առանց հարցեր տա-

լու, թոյլ չտալով պատասխանելու՝ նոյնիսկ տրուած հարցերին, ինչ որ սովորաբար կատարուել է բոլոր միւս տեղեկագրերի նկատմամբ. մասնախումբ է ընտրուում իսկոյն ծանօթանալու Յ. Ի տեղեկագրի եւ արձ[անագրութիւնների] հետ, համեմատելու իրարու հետ եւ հարցեր մշակելու, որոնք առաջարկուելու են Յ. Ի-ին: Այդ կատարում է իբր ժամանակ տնտեսելու համար:

Սկսում է յանձնախումբը իր գործը: 20 օր նա ըզբաղւում է Յ. Ի թղթերով եւ փոխանակ հարցեր մշակելու, բերում է ժողովի առաջ մեղադրական ակտ, կազմւում են բրեք հատորներից: Եւ այդ, իւր իրաւունքներից դուրս գալով, որովհետեւ ժողովի մէջ ոչ ոք չէ հարց դրել մեղադրական մտքով, ոչ ոք չէ յանձնարարել յանձնախմբին դատական քննութիւն կատարել: Նա ինք իւր վերայ է առել այդ դերը եւ դրանով աւելացրել է ապօրինութիւնների թիւը: Յանձնախումբը եթէ ուզեւար իւր իրաւունքների սահմաններից դուրս չգալ, ամենաչատր ինչ որ նա ունէր կատարել՝ պէտք է անէր մօտաւորապէս այս՝

Ծանօթանալով Յ. Ի տեղեկ. Ի եւ արձ[եան] հետ, յանձնախումբը գտնում է անհրաժեշտ տալ Յուց-[ին] հետեւեալ հարցերը՝ եւ ամենաչատր, որ նա կարող էր անել, այն է թէ, տեղ. եւ արձ.[եան] մէջ նկատուում են հետեւեալ հակասութիւնները, թուել նրանց եւ պահանջել պատասխան: Եւ ստանալով Յ. Ի բացատրութիւններն ու պատասխանները, այն ժամանակ միայն ժողովին էր մնում գոհացուցիչ գտնել այդպիսիք եւ հարցը սպառուած, թէ դատի հարց բանալ: Չմոռանանք յիշելու, թէ Յ. Ի-ն է, որ դատ է պահանջել իւր պաշտ[օնական] նամակով, Արեւմ. Բիւրոյին երկու անգամ ուղղած նամակով ժողովից 2 ամիս առաջ, խնդր[ելով] օրակ[արգի] մէջ մտց[նել]: Բայց այդ էլ չէ եղել կատարւած: Իսկ յանձնախումբը, հարցեր մշակող եւ փաստաթուղթ ստուգող յանձնախումբը, դրա փոխարէն, սեփականացրել է իրան դատական քննիչ յանձնախմբի դերը եւ երեք հատոր մեղադրական ակտ է ներկայացրել ժողովին: Եւ այդ ապօրինութեան մէջ թոյլ է տուել երկու նոր, չստուած ապօրինութիւն էլ, այն է՝

1) Իւր կազմի մէջ, դատական քննիչի դերին մէջ պահել է մի անդամի, որին պարզապէս չհաջողութեամբ կողմ անկարելի է չհամարել եւ որի դէմ Յ. Ի նախապէս բողոքել է: 2) Մեղադրական երեք ծանր կէտեր ու պատժական առաջարկ ժողովի առաջ բերելով, բաւականացել է միայն Յ. Ի տեղ. եւ արձ. ով, առանց հարցաքննութեան կանչելու, առանց բացատրութիւններ պահանջելու Յ. Ի-ից կամ հարցնելու, թէ չունի Յուցականը ունէ այլ



փաստաթղթեր այս կամ այն հարցի նկատմամբ:

Այդ բոլորը տեղի ունեցաւ Դաշնակցութեան IV Ընդհ. ժողովում 1907 թ.՝ Վիեննայում:

Բայց որովհետեւ Յուլի համար բոլորովին միեւնոյն է ջրով թէ իւղով տապակած լինել, քանի որ որոշած ենք բաժակը մինչեւ վերջը խմել, ուստի եւ գնում ենք դիմաւորելու պատրաստուած կաթսան, որպէսզի երգուի կարապի երգը եւ կատարուի ինչ որ կատարուելու է:

Մենք այժմ անցնում ենք ցոյց տալու թէ այդքան ապօրինութիւններու վերջը հարցեր մշակող յանձնախումբը դառնալով դատական քննիչ յանձնախումբ, ինչպէս է կատարել այդ իւր դերը, որքան լուրջ եւ անաչառ:

Երես 8 — Թոյլատրելի է՞ր այդպիսի գործի յաջողութեան համար շտապելը, որի անյաջողութիւնը սպառնում էր մի նոր կոտորած:

Յանձնախումբը հարց է բերում. ներքին է կամ որչափ արդարացուցիչ մի այդպիսի գործում, ինչպէս՝ Ս[ուլթան] Համ[իտի] մահափորձը — շտապել: Եւ թէ մեր շտապելու համար առաջ բերած պատճառները կարելի՞ է բաւարար նկատել (մենք բերում ենք հարցի ընդհանուր) միտքը:

Մարդ չգիտէ ինչ ասել, մի այդպիսի տարօրինակ հարցին ի՞նչ պատասխանել:

Ձեզ եմ հարցնում պր.ներ, սա ի՞նչ հարց է. միթէ դաւադրական գործը արքայազանութեան մի դաւադրական գործ օտար հողի վերայ, ուր էլ որ լինի ինքնատիւնքան չի պարունակում իր մէջ շտապելու պայմանը: Կարելի՞ է չշտապել, երբ ամէն մի անցկացրած օր, շաբաթ, ապահով անցկացրած — ինքնին տրամադրում է ասելու փառք Ա[ստուծո]ւ այս շաբաթ էլ անցաւ ապահով: Երբ ամէն օր Դամոկլեսի սուրը կախուած է ամբողջ ձեռնարկի վերայ. մի պատահական դէպք, մի նամակի բռնուիլ, մի ծանօթի պատահել: 20 հոգի մեծ մասամբ ծպտուած իբրեւ հրեայ, իբրեւ ռումանացի կամ ռուս, միթէ առանձին պատճառներ էլ պէտք է որ մարդ շտապէր: Այդ բոլորի վերայ աւելացրէք Ս[ուլթանի] կառ[ավարութեան] արդարացի կասկածները Հ.Յ.Դ.ի վերայ, կասկածներ որոնք այնքան հիմքեր ունեն Սոֆ[իա] 3 ամիս տեւող Ընդհ. ժող[ովի] մէջ, մեր երկու անդ[ամների] բռնուելու մէջ: Տաճկ[ական] թերթերում գրուում է բացարձակ այդ մասին, թէ Ֆիլիպ[պէ] այնինչի ձուլարանում, [Էւոն Ֆեներճեանի] խանութում, այսինչ փող[ոց], այսինչ տուն, ռումբեր են ձուլում, ո՞ւմ համար են: Եւ իսկապէս այդ [Էւոն Ֆեներճեանը] մեր ուրախութիւն է եւ իսկապէս այնտեղ ռումբեր են ձուլում, մեր ուրախութիւնը: Եւ դեռ հարցնում են կարելի՞ է շտապել. պէ՞տք էր շտապել: Թէ «Ռուս» [Նովկոն] մէջ կարդացինք թէ Սուլթանի անձի դէմ դաւադր[ութիւն] է կազմած Սոֆիայի աղէտից յետոյ: Նրկատեցէք. այն բոլորը ինչ որ ասացինք նոր էլ որ ասում

ենք. յանձնախումբը այս բոլորը գիտէ մեր տեղեկագրից, մեր այն նամակներից: Բոլորը այնտեղ գրուած է: Նա կարողում է այդ բոլորը եւ նրա գուճաւոր կարմիր մատիտը այդ տեղերի վերայից անցնում է, առանց կանգ առնելու. նրա հոգեբանութեանը ձեռնարու էլ դրանք նկատել. դուք աչքէ անցկացրէք մեր թղթերը, միայն աչքէ անցկացրէք եւ առանց մեր կողմից մի խօսք անգամ ասելու, դուք ակներեւ կը տեսնէք, թէ այդ թղթերի որ տողերն են արժանացել յանձնախումբի գուճաւոր մատիտների նշաններին: Ակներեւ է ցերեկի պէս, թէ ինչ են նրանք այնտեղ պտուղ:

Եւ այդ բոլորից յետոյ մարդու ջղերը քայքայուած են, արիւնը գլուխը խփում եւ ամէն ինչ մթնում, երբ այդպիսի պարզ հարցերն էլ, ինքնատիւնքան պարզ եւ պարզաբանուած տասնեակ տողերով յանձնախումբին ոչինչ չի ասում. ահա այս նամակը Ս[արգսի] ձեռքով գրուած Պոլսից ժրնեւ Բ[իւրոյ]ին [Դաշնակցութեան] խորհրդի կանչելու մասին — սա տողերը անշուշտ կարդացել է մասնախումբը, բայց ոչինչ: Ահա այս նամակի այս տողերը: Ահա ներքին կանոնագր[ութիւն]: Ո՞րքան կ'ուզէք փաստեր — թէ շտապում էինք եւ շատ շատ շտապում, որ չլինի թէ բացուի: Մի դաւադրական գործ, որի ամբողջ յաջողութիւնը կախուած է միայն եւ միայն գաղտնիք մնալուն — 15 դրսեցիներ լցուեցին Պոլիս — տները, ծոցերը լի դաւադրական թղթերով, նիւթերով — հազարաւոր լրտեսների մէջ — հարցոււմ է թէ ո՞րքան իրաւունք ունէին շտապելու: Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ — կարելի է արգահատանք միայն զգալ այդ օրիորդին, նա մեզ արադարացնելու խօս գիտէք, իսկի տրամադիր չէ, մեծ ուրախութեամբ կը խեղդէ Սաֆոյին, մի բաժակ ջրում, այնքան նա սիրում է Սաֆոյին — ինչո՞ւ, այդ իրա գործն է, թող Աստուած ներէ նրան այդ: Հարցրէք օր. Ռուբ[ինային], նա չի կարող չլինել, թէ ի՞նչ դժուարութիւնով, ինչ աղմուկներով հնարաւոր է եղել ինձ մի շաբաթ յետաձգել մահափորձը, միայն մի շաբաթ, որպէսզի կառքի այս կամ այն թերութիւնները նորից ստուգուեն: Ինչպէ՞ս կարելի է յետաձգել: Երաշխաւորում էք որ չի բացուի, ապա եթէ բացուեց, ապա եթէ մի փորձ[անք] եկաւ, ինչո՞ւ կարող էք երաշխաւորել ասում էր եւ պնդում, որ անպատճառ այն շաբաթ անենք: Չոքով, զոքով եմ յետաձգել, յայտնելով թէ իրաւունք չունինք առանց այս կամ այն կէտն ստուգելու, սնտուկը աւելի ամրացնելու գործի գնալ: Այսքան դիմացել ենք, չէ բացուել, մի շաբաթ էլ Աստուած ողորմած է չի բացուի, զգոյշ կը մնանք, կը կրկնապատկենք զգուշութիւնը: Իսկ յանձնախումբը հարցնում է — կարելի՞ էր շտապել: Ոսկեհանքն էլ աւելի [sic]:

7.- Չեռագրին մէջ 1905, որ անշուշտ սխալ է:  
8.- Չեռագրին մէջ ռուսատառ:

Պաւլիտի թողնելը, միայն կառքի վերայ կանգ առնելը:

Հարց է դրոււմ, արդեօք Յուլի պատճառաբանութիւնները որքան բանաւոր են պաւլիտից՝ ձեռք քաշելու նկատմամբ:

Ի՞նչ պատասխանել. պատասխանել կը նշանակէ կրկնել այստեղ տեղեկագրի եւ արձ. 4-5 թերթի մէջ թրուած տասից աւելի պատճառները:

Նախ մի տրամաբանական հակասութիւն: Ինքը քրննադատը դնում է իւր քննադատ[ական] գործի վերջում՝ մասնագէտի դիմելու անհրաժեշտութիւնը եւ այս հարցի աւթիւր դետոնացիայի՞ վերաբերութեամբ: Երեւակայեցէ՞ք մի ըրալէ, որ մասնագէտը բաժանեց մեր կարծիքը, թէ արդարեւ դետոնացիայի՞ օրէնքով այդ տարածութեան վրայ պայթած սնդիկը ռուսներ մէջ ինքնաբռնկման կ'ենթարկուէր: Ուրեմն միայն այդ պատասխանը բաւական էր այս հարցը անպէտք դարձնելու: Ինչո՞ւ էր պէտք ուրեմն այդ հարցը:

Բայց թողնենք տրամաբանութիւնը մի կողմ. նա ինքնաներշնչման ենթարկուած մտքերի մէջ ազատ մուտք չունի:

Մեր տեղեկագրի մէջ թուած են այն պատճառները, որոնք ստիպեցին մեզ վազ գալ պաւլիտից: Այնքան շատ են նրանք. — մենք նորից կը կարդանք այստեղ — թող ժողովը ինքը անդրադառնայ այդ պատճառների վերայ, եթէ կարող է եւ սառը կը շնորհակարար:

Այստեղ դուք կը տեսնէք, ի շարս երկրորդական, տասնորդական պատճառներ, մի քանիսը այդպիսիններից, որոնցից ամէն մէկը առանձին վերցուած, բոլորովին առանձին, մէն մենակ, արդէն բաւական են պատասխանելու՝ այդ հարցին եւ պատասխանը կարող է լինել միայն դրական:

Այո՛, իրաւունք եւ նոյնիսկ, նոյնիսկ պարտականութիւն ունէր Յ-ը այդ բոլորից յետոյ թողնել պաւլիտները:

Վերցնենք այդ պատճառներից՝ օր[ինակ]

1) Սուլթանական ռումբ չունենալներս, զուգընթաց՝ մեր շտապելու եւ անպայման շտապելու հետ եւ մի շաբաթ յետաձգելը նոյնիսկ կորստաբեր նկատելու հետ:

Ի՞նչ կարելի է պատասխանել — չկայ, չունինք, չկարողացանք ունենալ: Երկու ընկեր զոհ տուինք, 3 ամիս չարչարուեցինք եւ չկարողացանք ունենալ: Մա՞ր համար դեռ հարց կարող է մնալ: Մենք մեր փորձերի վրայ հիմնուած յայտնում ենք, որ պայթուցիկ սնդիկը եթէ խփես քարին, քիչ թէ շատ ուժեղ հարուած տաս՝ կը պայթի: Ուրեմն 124 կիլոյի հարուածը, որը պիտի սրբէ, չի կարող աւելի պակաս հարուածել:

ա.- Կառքը պէտք է անհրաժեշտաբար նախընթանայ պաւլիտին, զօրքերի տեղափոխ[ման] պատճառով: Այդ պարզ է:

բ.- Կառքը անպայման կը սրբէ պաւլիտը: Դա մեր

համոզմունքն էր:

Եզրակացութիւնը ինքնին պարզ է: Սոխի գլուխներ չէին, որ այնպէս քէֆի համար ուղարկէինք: Զոհեր տալու անհրաժեշտութեան էթիքան մենք չենք դաւանում: Այդպէս գոհուելը հաւասար է ելնել այս լուսամտուից նետուել ցածր եւ անձնագոհութիւն անուանել:

գ.- Այստեղ այս երրորդ կէտի մէջ ինքնին կարող էր լինել միայն մի հարց. որքա՞ն լուրջ էր Յ-ի վստահութիւնը, թէ կառքը պիտի սրբէր պաւլիտը:

Եթէ այդ կէտը դրական պատասխան ստանայ, ուրեմն ամբողջ հարցը, նոյն պատասխանը՝ միայն կարող է ստանալ:

Լուծենք ուրեմն այդ կէտը, որը տեխնիքական հատորի մէջ իբրեւ առանձին հարց է առաջ բերուած: Այդ հարցի պատասխանը, կը նշանակէ կարգաւ մեր տեղեկագրի համապատասխան երեսները, ամբողջ երեսները:

Թէ ինչ հասկացողութիւն, աւելի ճիշտ է տրամաբանութիւն է տիրում յանձնախումբի անդամների մէջ, դրա ամենաթափառ եւ բնորոշ պատկերը չէր կարելի չտեսնել այստեղ երէկ, երբ յանձնախումբի երկու անդամները պահանջում էին ժողովից իրանց յանձնել նախապէս ծանօթանալու համար Յ-ի մեղադր[ական] ակտի պատասխանը, որպէսզի կարողանանք՝ ասում են նոքա, պատրաստուել նրան պատասխանելու, ժամ[անակի] տնտեսութեան համար: Բնորոշ է այս պատրաստուել «պատասխանելու»: Միթէ յանձնախումբը իր դերը չի՞ վերջացրել, հարցեր չէ առաջ բերել մեղադրական կէտերով: Ինչո՞ւ է նա կարծում, թէ անպատճառ պէտք է պատասխանել ինձ: Դա չի նշանակում, որ յանձնախումբը իրան այժմ էլ դրել է դատախազի դերի մէջ, մի դեր, որը նրան չէ տրուած ժողովից: Ժողովը լսեց նրա երեք հատորը, կը լսէ մեր պատասխանը կամ բացատրութիւնները եւ ինքը նոր հարցեր միայն կարող է տալ եւ նոր հարցերի պատասխանները լսել: Ինչու է շտապում յանձնախումբը: Ընդդիմախօսելու ոչ պէտք կայ եւ ոչ էլ տեղն է: Երբ դատ կը սկսի, ահա այնտեղ կը լինի դատախազը եւ այնտեղ միայն: Ուրեմն յանձնախումբը ըստ երեւոյթին պատրաստ է երրորդ մետամորֆոզայի՞ ենթարկուել:

Հարցեր մշակող յանձնախումբից՝ դարձաւ դատական քննութիւն կատարող:

Դատ[ական] քննիչի դերը վերջացնելով, այժմ էլ դատախազի դերին է ձգտում:

Մնում է չորրորդը, — դատաւորների դերը:

Տիրող տրամադրութիւնների այս մթնոլորտում, մենք չենք զարմանալ, եթէ այդ եւս տեղի ունենայ:

9.- Պայթուցիկ առաջացած շտապում, որոտում:  
10.- Կերպարանափոխութեան:

Ե 7.- ՍԱՖՈՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՑՈՒՑԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԻՆ

(Տեխնիքական մաս)

Շտապելու հարց

Եւ այս հարցը դրուում է լուրջ տոնով եւ մենք ստիպւած ենք պատասխանել սրան:

Պարոններ,

«Վէրքեր էլ կան, վէրքեր էլ»

Եթէ ասեղով ծակում են մէկի մատը, նա ճշում է, բղաւում, եթէ գնդակը անցնում է նրա կուրծքը պատուելով, նա չի ճշում եւ ոչ էլ ձայն ծպտուն հանում, հագիւ մի հառաչ լսէք նրա բերանից: Եթէ մէկին մի վիրաւորական խօսք են ասում — նա ահագին աղմուկ է հանում — «պատիւս, պատիւս եմ պահանջում» — կանչում է: Իսկ եթէ նոյն մարդու գլխին դազանակով խփէք, արիւնլուայ անէք գետին տապալէք եւ նրա աչքերի առաջ բռնաբարուի քոյրը, անարգուի ծնողը — նա շշմած է, քարացած, նա ձեռք ոչինչ չի ասի — նա կը դադարի նոյնիսկ զգալէ: Կան վէրքեր, որոնք զգալու համար, չի բաւում մարդուս զգացողութեան ամբողջ չափը: Բաւերը չեն օգնի, ճի՛ջերը նոյնպէս:

Անօգուտ են նրանք:

Ահա նոյն դրութեան է այսօր եւ Յուդ. մարմինը: Բայց...

Խօսելն անօգուտ է, եարաները չեն սաղանայ. խորն են նոքա: Հա՛հոյել կը նշանակէ՝ պրոֆոնացիայի ենթարկել<sup>11</sup>: Ի՞նչ անել ուրեմն: Լուել, լուել: Եւ մենք կը լուէինք, եթէ միայն այս լսարանը լինէր, սրա առաջ խօսելը, սրա առաջ արդարանալը: Արդարանա՞լ... Ի՞նչ բանի համար, ո՛ւմ առաջ — այդ էր պակաս: Դուք պէտք է մեր առաջ արդարանաք, Արեւմտեան Բիւրոն, պրն. Ռոստոմը, պրն. Մալուսեանը, Միք. Յովհաննիսեանը<sup>12</sup> — ահա թէ ովքեր պէտք է արդարանալին մեր առաջ իրանց յանցաւոր լուութեան, գլուխը կորցրած, ինչ անելները չիմանալու համար Զուլիցարիայում, այդ ազատ երկրում այն օրերին երբ հարկաւոր էր տէր դառնալու քաղութիւնն ունենալ սուլթանասպանութեան մահափորձին, այն օրերին երբ հարկաւոր էր շահագործել կատարուած փաստը: Բայց այդ մասին մենք կը խօսինք

վերջը: Մենք կը լուէինք եւ մեր արհամարհանքը միայն կը լինէր պատասխանը, եթէ չտեսնէինք ձեզանից հեռուն, ձեզանից բարձրը — պատմութեան անաչառ դէմքը — նրան ենք մենք ուղղում մեր խօսքերը: Նրան ենք մենք պատասխան տալիս եւ յայտնում մեր գանգատները, տեղի ունեցած անծայր անարդարութեան, մույլ հիպոթիզ<sup>13</sup> եւ Քրիստափորի անուան եւ յիշատակի շահագործման համար, անձնական հաշիւներ մաքրելու նպատակով:

Վիրաւորուած, ապտակուած եսեր, կծկուած Քրիստափորի լայն ծիրանու տակ, այդ ապահով եւ «թաբու»<sup>14</sup> դիրքից թունաւոր սլաքներ են արձակում ու հաւար կանչում Քրիստափորի յիշատակը, յանուն Քրիստափորի յիշատակին:

Եւ այդ կոչը լսում է ամէն կողմից, գունդագունդ գալիս են լեզուները պաշտպանելու Ք-ի յիշատակը: Խեղճ-անմեղ<sup>15</sup>:

Հետեւինք ուրեմն նրա [յանձնախմբի] քննադատութեանը քայլ առ քայլ ու տեսնենք, արդեօք նոյն տեղն է մեզ բերելու նա, ուր հասել է յանձնախումբը: արդեօք նա կարողացել է բազմակողմանի կերպով լուսաբանել բոլոր հարցերը: ունեցե՞լ է հնարաւորութիւն այդ անելու: Իւր ձեռքի տակ եղել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը եւ թէ եղած թղթերի էլ բուն իմաստը չէ՞ ծածկուել բոլորովին հոգեբանական այն օրէնքի տակ, որը անուանում է կանխակալ կարծիք, լուրերի հիպոթիզ, այսպէս անուանում հաւաստի եւ վստահելի «աղբիւրների» ուժեղ ազդեցութիւնը՝ մարդու մտածելու եղանակի վերայ, ընդունելով այդ մարդուն ի հարկէ

11.- Պոժել, անարգել:  
12.- Միք. Վարանդեան:  
13.- Քնախտի: Ներշնչումով առաջ եկած քուճ, հիպոստոսում:  
14.- Նախապաշարում, արգելք, նաեւ՝ կախարդանք:  
15.- Չեռագրի այս երեք էջերը համարակալուած են ա, բ, գ. շարունակութիւնը կը սկսի էջ 1ով, որ, ի դէպ, Մոթագրութեան քննութիւնը եւ մեծ մասը ջնջուած է:

բոլորովին անաչառ, շիտակ մարդ:

Մենք այդպէս էլ նայում ենք երեք անջատ քննադատութիւնների երկուսի վերայ: Այդ միանգամայն ընդմիջտ պէտք է ասել այստեղ: Եւ այդպէս նայելով հանդերձ մենք պիտի ապացուցանենք այստեղ, թէ ի՞նչ աստիճանի այդ երեք հատոր քննադատութիւններն էլ, տարբեր չափերով արտայայտում են իրանց մէջ ամենայն մերկութեամբ կանխակալ կարծիքի բացարձակ կնիքը: Թէ որքան հեռու են նոքա քննադատութիւն անուանուելու իրականութիւնից եւ թէ որքան միակողմանի եւ թոյլ են իբրեւ այդպիսին:

Որպէսզի հեռու չգնանք այդ տեսակէտէ հիմնաւորելու հիպոթիզ ազդեցութիւնը հասարակական բնոյթ ունեցող հարցերում իսկ, մենք կը բաւականանանք յիշեցնելու այստեղ առանց օրինակներ բերելու ամէնքիդ յայտնի Միխայիլովսկու այդ շարքի փաստերն՝ հաւաստի ազդեցութիւնը՝ մարդու վերայ ուժեղ նոյնիսկ Ֆիզիոլոգիական փոփոխութիւններն առաջ բերելու չափ, արեան հոսանք, օրինակ, վէրքերի գոյացում մարմնի այս կամ այն տեղերում, այլեւ հասարակական-հաւաքական պահիպող<sup>16</sup> երեւոյթները զանազան դարերում, հետեւանք մտքի միակողմանի սեւեւման եւ այդ երեւոյթը ոչ թէ յատուկ է միայն ամբոխին, այլ ազատ չեն նրանից մտքի եւ սրտի հսկաներն իսկ, ամբողջ մարդկութիւնը այս կամ այն չափով: Նոյն Միխայիլովսկին, իւր «Ի՞նչ է յառաջադիմութիւնը» գրուածքում, այդ բանը ապացուցանում է գեղեցիկ կերպով, երբ մատնանիչ է անում, թէ ինչպէս երկու գիտնականներ՝ լուրջ եւ բարեխիղճ գիտութեան մարդիկ, նայելով նոյն խոշորացոյցի տակ գետեղուած միեւնոյն պրեպարատիումի<sup>17</sup> վերայ նոյն բզէզը գննելու, իւրաքանչիւրը նրանցից տարբեր բաներ են տեսնում այնտեղ, այնքան տարբեր, որքան տարբեր են նրանց հաւատալիքները՝ նիւթի ծագման կամ զարգացման մասին եւ իւրաքանչիւրը, թւում է նրան, թէ տեսնում է ճիշտ իւր կանխակալ կարծիքը ապացուցանող երեւոյթը խոշորացոյցի տակ, երբ միւս գիտնականը՝ բոլորովին հակառակն է նկատում, ինչ կանխակալ կարծիք կամ տեսութիւն ինքն է դաւանում: Այդքան ուժեղ է եւ ընդհանուր այդ երեւոյթը, որ ժողովրդական իսկ առածի է փոխուել, այն յայտնի առածի, որ երեք կոյրեր փղի զանազան մասերը շոշափած լինելով մէկի կարծիքով փիղը չորս սիւներ է ուրիշ ոչինչ — նա որ միայն ոտներն է շոշափել: միւսի կարծիքով, փիղը հաստ պարան է եւ փափուկ — նա, որ կնճիթն է շոշափել, երրորդի կարծիքով՝ փիղը մի պատ է, նա՛ որ կողքն է շոշափել:

Եթէ կոյրերի շոշափելու տեղ դնենք նրա իսկական նշանակութիւնը, կանխակալ կարծիքը, կը ստանանք կեանքին իրական պատկերներին մէկը, որին ականատես էք այստեղ շատերը, բոլորը, Դ. Ընդ. ժողովը: Այստեղ ներկայ են մարդիկ, որոնք իբրեւ մասնա-

գէտներ, յոյս ունենք ներողամիտ պիտի գտնուեն մեզ, իբրեւ պրոֆանի<sup>18</sup> այս, իրանց պատկանող, գիտական հոգեբանութեան շրջանները մտնելու փորձի համար, սակայն, կարծում ենք, չպիտի գլանան հաստատելու նոյնը:

Մենք կանգ կ'առնենք այստեղ մեզ աւելի մօտ եւ մեր դժբախտութիւնը կազմող, Յուդական հարցի շուրջը պտտող երեւոյթների վերայ, այնպէս ինչպէս նրանք կան այսօր, նոյն միտքը, հիանալի միտքը աւելի կենդանի կերպով երեւան հանելու համար բոլորիս առաջ:

Ի՞նչ ենք տեսնում մենք այստեղ: Մի վերին աստիճան բնորոշ եւ խրատական երեւոյթ:

Ո՞վ չէ ունեցել կամ չունի ձեզանից ընկերներ: Ամէնքիդ համար պարզ է ուրեմն, թէ ո՛րքան ուժեղ կապ է այդ ընկերական կապը եւ ո՛րքան փորձանքների եւ հարուածների է նա դիմադրում, առաջ քան քանդուելը, խզուելը, ոչ սակաւ հասնում է ընկերական կապերի ամբողջութեանը մինչեւ իսկ անձնագոհութեան՝ ընկերոջ համար, ինքնուրացութեան զանազան ձեւերի:

Եւ ահա այստեղ ձեր աչքերի առաջին դուք տեսնում էք մի մարդու, որը այս վայրկեանիս խօսում է եւ մարդիկ, որոնք նրան լսում են, լսում են նրան իբրեւ օտարներ՝ սառը, կասկածոտ, անտարբեր... նոյնիսկ թշնամաբար: Այդ լսողներից մեծագոյն մասը քիչ առաջ ընկերներ էին, մի մասը նոյնիսկ շատ մօտ ընկերներ: Բայց նա, ընկերական կապը այլեւս չկայ. նա ենթարկուել է ուրեմն ամենամեծ հարուածի: Ինչպէ՛ս այդ կատարուեց: Զէ՞ որ նրանք փղի ոտն են շոշափած կամ կնճիթը: միայն մի կողմին են լսել, չէ որ նրանք այսօր է որ ինձ լսում են ու չեն ձեռնուել ինձ հետ ու խօսել եւ բացատրուել: ոչ մի բառ ոչ մի բացատրութիւն:

Միայն չհասկանաք մեզ խնդրեմ, մենք չենք այստեղ գանգատուում, ոչ էլ նպատակ ունենք ընկերական ըզգացմունք մուրալու. արհամարհում եմ ես այդ: Ես ինձ բարձր եմ համարում իմ մենակութեան մէջ այս ըոպէտիս. այդ լա՛ւ իմացէք\*:

Միայն իբրեւ լուսաբանութիւն եմ առաջ բերում, յիշեցնելու համար, թէ յանձնախումբը որի մէջ կային այդ յիշեալ նախկին ընկերները, լինելով բոլորովին ուղղա-

\*) Մենք ունենք մեր մէջ գիտակցութիւնը ամբողջ բարախոյճութեամբ կատարուած մի պատմ[ական] գործի նոյնիսկ իւր չափողուած ձեւով, աւելի մեծ պատկառանք ներշնչող Սուլթան Համիտին, քան մեր շատ ու շատ երգուած գործերը:

16.- Գոգեկան հիւանդագին վիճակ. հոգեկան հիւանդութիւն:  
17.- Տարրալուծական քննարկման եւ ուսումնասիրութեան նպատակով պատրաստուած բուսական, կենդանական կամ քիմիական ցիւք. պատրաստուել:  
18.- Գանձակ, անգետ:

միտ եւ անաչառ, թւում է նրան, յանձնախմբին, թէ նա այդ սոսկալի եզրակացութիւններին որոնց եկել է իր գեկուցման միայն ու միայն այն թղթերի հիման վերայ, որոնք ունեցել է նա իւր ձեռքի տակ եւ աչքի առաջ: Թւում է նրան այդ, բայց դժուար չէ նրան ապացուցանել որ նա այդպէս մտածելով ինքն իրան խաբում է — հարկաւոր է միայն յիշեցնել, թէ նախ քան այդ թղթերը, թող նրանցից իւրաքանչիւրը կենտրոնանայ մի ընդհանուր հոգով խորքերը, նա կը տեսնէ այնտեղ որ նախ քան այդ թղթերը այնտեղ, ներսը, եղել է արդէն որոշ կանխակալ կարծիք որոշ տիկիչք [ասաղըք]<sup>19</sup> մնացած — այսպէս անուանուած «Հաւաստի աղբիւրներէր»: Մէկ կողմի ակնոցներէ գոյնը արդէն դրել է իւր կնիքը այնտեղ եւ այդ է միայն պատճառը, որ երբ ընկերներ նախ քան այս տեղեկագրի ընթացումը, դժբախտ թղթերի հետ ծանօթանալը, երկար ժամանակ իրար չտեսած, պատահեցին եւ փոխանակ գրկախառնուելու, սառը, պաշտօնական բարեւոյ փոխանակուեցին: Կարելի է ուրանալ այդ: Ո՛չ, ի հարկէ: Ապացոյցներ... այնքան կան, այնքան են նրանք շատ, որ աւելորդ ենք համարում այս կէտի վերայ աւելի երկարել: Եթէ կանխակալ կարծիքի ոյժը այդքան զօրեղ է, նոյնիսկ ընկերական կապերը քանդելը, այլեւ ի՞նչ կարելի էր պահանջել այն օտար պարոններէր, որոնք առաջին անգամն է այստեղ են, առաջին անգամ է տեսնում են խօսողին, բայց, կարծես, նրանք մեզ վաղուց ճանաչել են եւ ճանաչել են այն կողմից որ անկարող են ծածկելու նոյնիսկ բացարձակ թրջնամական վերաբերութիւնը դէպի Յուդայականը:

Ահա այդպիսի փաստ եղող մթնոլորտի մէջ մեզ վիճակուած է խօսելու, եւ աշխատել գոնէ լսելի դարձնել մի քանի այնպիսի տարրական ճշմարտութիւններ, որոնց կողքից անցնելը արդէն մեծագոյն անարդարութիւնը պիտի լինի:

Ապարդիւն ջանք, մենք այդ գիտենք, եւ այս ժողովի համար չէ, որ աշխատանք յանձն առանք պատասխանելու Յուդայականի վերայ ծանրացած սար մեղքերին:

Պատմութիւն կա՛յ. բացի այս ժողովից նրա համար է որ մենք խօսում ենք: Պատմութիւն, որը ազատ է հիպոթիզի ոյժից:—

Այս բոլորն ասելուց յետոյ գանք այժմ փաստերին, այնպէս ինչպէս նա պատկերացրել է իւր գունաւոր ակնոցներով յանձնախումբը:

Նոքա ինչպէս գիտէք երեք մասերից են կազմուած՝ եւ մշակուած յանձնաժողովի երեք անդամներէր՝ տեխնիկական մաս — Արամ, ընկերական թիւրիմացութիւններ — Թոփճեան եւ կազմակերպական պ. Վրամեան:

Մենք այժմ ցոյց կը տանք այստեղ թէ ի՞նչ չափով ուժեղ դերակատարներէր մէկն է եղել այս քննադատութեան մէջ հիպոթիզ, կանխակալ կարծիքը: Թէ որքան թոյլ եւ մակերեւութային են դրուած հարցերը եւ թէ ինչ չափով անյաջող փորձեր է կատարուել:

Մենք այստեղ ցոյց կը տանք այս թէ որ աստիճան մակերեւութային են շօշափուած հարցերը եւ ինչ չափով ձեռնհաս է եղել յանձնախումբը քննադատի դերին մէջ մահափորձի վերաբերութեամբ առ հասարակ — իսկ հիպոթիզ, կանխակալ կարծիքը, արդէն աւերիչ դեր է ունեցել փաստերի եւ հարցերի լուսաբանութեան մէջ ամէն մի քայլափոխի: Մենք կը սկսենք տեխնիկական մասից, ապա կ'անցնինք — այսպէս անուանուած «ընկերականին», որը նոյնպէս թերութիւններէր գերծ չէ, թէ-եւ նիւթը խիստ երախտաւոր: Ամէնից վերջը մեր խօսքը կ'ուղղենք կազմակերպական մասին: Նա արդէն ինքնին այնպիսի մի գոհար է իրա տեսակի, որ բնաւ չի կարելի շփոթել առաջին երկու մասերի հետ:

Ինչպէս տեսաք՝ Մեր քննադատները՝ երեք մասի են բաժանել քննադատութիւնները, երեք հատոր քննադատութիւն: Սուլթ. Համիտի 905 թ. Յուլ. 21ի մահափորձը: Ի՞նչ բան է այդ մահափորձը, աշխատինք սիստեմատիկ կերպով մեզ պատկերացնել՝

Անց(եալ) Ը. Ժ[ողովում] ընտրուած 5 ընկերներ, որոնք են մի հոյակապ ցոյց Պոլսում՝ փորձել սպանել Կարմիր Սուլթանին: Փորձը տեղի է ունեցել 905ի Յուլիսի 8ին [հին տոմարով]: Սպանուել են եւ վիրաւորուել 100ից աւելի մարդիկ, զինուորներ, փշրուել են կառքեր, բայց Սուլթանը մնացել է ողջ:

Ինչպէ՛ս է կատարուել փորձը: Մի հսկայական ուումը՝ 400 ուումբի ոյժ պարունակող՝ 124 կիլո մելինիտ պայթեցրել են 25 քայլի վերայ: Նրանք առաջ որոշած են եղել միաժամանակ գործել եւ ձեռքի ումբեր ու այդ մեծ ուումբով կառքի մէջ գետեղած, բայց 1 1/2 տարի անցել է, նրանց չէ յաջողուել ձեռքի ուումբեր ճարել, բացի այդ եւ 10ն էլ ուրիշ պատճառներ, ստիպել են կանգ առնել միայն մէկի վերայ, մեծ ումբի վերայ որովհետեւ համարել են այդ մէկն էլ անպայման մահացու: Ի՞նչ հիմունքներ ունէին նրանք այդպէս հաւատալու:

**Երեք ամենամեծ հիմունքները**

- 1 — Մի մասնագէտ քիմիկոս Ժըննե
- 2 — Մի մասնագէտ քիմիկոս Պարիզ
- 3 — Իրանց փորձերը ձիւրի վրայ:

Եւ նրանք այդ երեք հիմունքների վերայ վստահ — կատարել են, բայց չէ յաջողուել: Ահա ամբողջ Յուդայական գործը սխեմատիկ<sup>20</sup> կերպով:

Իրողութիւն են ունէ կասկածից դուրս այդ երեք հի-

19.- Չեռագրին մէջ ռուսերէն: Տիկիքը՝ յատակի աղբախում ակնոցութն է, տականց:  
20.- Պարզացուած ձեւով, համառոտակի:

մունքներն<sup>21</sup>: Որովհետեւ... նիւթը այն չէ եղել, որով փորձեր են կատարել: Ո՛վ է յանցաւորը: Ի հարկէ Յուդայական մարմինը, որը հեռատեսութիւն չէ ունեցել նիւթը վերլուծել նախ քան փորձը:

Ինչո՞ւ չէ վերլուծել, որովհետեւ հաւատացած է եղել թէ մելինիտ է: Եւ մէկ էլ այնպիսի ձեւով է փորձել, ինչպէս մելինիտն է փորձում. եւ որովհետեւ նիւթը եղել է ոչ մելինիտ, այլ մի ուրիշ նիւթ, փորձը հետեւանք չէ տուել: Ահա ամբողջ գործը: Եւ այդ գործին նուիրուած է երեք հատոր քննադատութիւն, երեք հատոր: Սկսենք. Մենք բոլորովին ոչինչ չէինք ունենալ ասելու, եթէ յանձնախումբը պատասխաններ մեզանից պահանջէր հետեւեալ 4-5 հական հարցերին, որոնք ամբողջ ձեռնարկի ծովն ու ուղեղն են կազմում՝

- Ա) Որչափ վստահութիւն ներշնչող են այդ երեք հիմունքները սուլթանասպանութեան փորձի անպայման յաջողութեանը նկատմամբ. այդ պայմաններում
- Բ) Յուդայականը պէտք է շտապէր թէ ոչ:
- Գ) Ընդունելի են թէ ոչ մարդը վարկենաչափով փոխարինելու պատճառաբանութիւնները, որ Յուդայականը առաջ է բերել իւր տեղ(եկագրի) եւ արձանագրութեան մէջ:
- Դ) Որքան է եղել տարածութիւնը կառքը Սուլթանից բաժանող եւ ինչ արգելքներ եղել են այդ երկուսի մէջ. 100 մետր թէ 20-30 քայլ:

Որքա՛ն է եղել նիւթի քանակը:

Ահա այն հարցերը, մեր խօսքը տեխնիքապէս, որոնք ամէն ինչ պարունակում են իրանց մէջ եւ որոնցից դուրս տասնեակներով հարցեր շարելը միայն մթագնացնում է ամբողջ գործի լուսաբանութիւնը:

Եւ մենք, որքան էլ որ ծանր էր մեզ իջնել պատասխանելու այդպիսի յամենայն դէպս վստահութեան պակասութիւն շեշտող հարցերին, կը պատասխանէինք, վերցնելով այդ պատասխանները մեր արձ. եւ տեղեկագրից, տասը թուական եւ կը մնար ժողովին գնահատելու մեր առաջ բերած հիմունքները:

Դրանով էլ կը վերջանար գործի տեխնիքական մասը:

Բայց յանձնախումբը չէ բաւականացել այդ իսկական կարդինալ հարցերով, նա շարել է հարցերի ամբողջ շարքեր, ոչ մի նշանակութիւն չունեցող, միայն հարցը խճճող ու բարդացնող կարծես հարցերի առատութեան մէջն է կայանում հարցի լուսաբանութիւնը եւ ոչ նրան հուստեան մէջ:

Բայց քանի որ հարցերը շարուած են, մենք ստիպուած ենք քայլ առ քայլ հետեւելու նրանց, որքան էլ որ դա մեզ հեռունները տանէր:

Հետեւինք ուրեմն քննադատութեան առաջին հատորին:

«Արդէն ուսումնասիրուած էր, որ Սուլթանը՝ եր-

կու անգամ «արագութեամբ» անցնում էր մի քանի քայլ պաւիլիոնից, ասում է Տեխն. մասի քննադատը: Ո՞րտեղից է վերցրել այդ արագութեամբ բառը: Մենք չկարողացանք մեր թղթերի մէջ գտնել մի այդպիսի բառ, որովհետեւ այդպիսի բան չկայ իրականութեան մէջ. շտապով չի անցնում նա — «բաւականին դանդաղ» այլ հանդարտ քայլերով: Ասում է տեղեկագրի երես<sup>22</sup>: Յետոյ տեսէք 15-17 քայլը մի քանի քայլ է յիշուած: Մի քանի քայլ երբ ասում է, մարդիկ սովորաբար հասկանում են 4-5-6-7 քայլ եւ ոչ 17 քայլ որ տարբեր մեծութիւն է այսպիսի հարցերում: Պաւիլիոն, պաւիլիոն — ահա սրա հոգեբանութիւնը: Պաւիլիոնը եթէ լինէր ամէն բան յաջողուած էր, եւ մօտ էր եւ լաւ մի քանի քայլ միայն...» եւ այլն երես<sup>22</sup> — «առ առաւելը 10 հոգի. դարձեալ պաւիլիոնի մասին է հարցը, այնտեղ մտնողներին, չհաշուելով կանանց»: Ո՞րտեղից է վերցուած այդ տասը թիւը:

Ձեկուցողը անշուշտ չպիտի կարողանայ մեզ ցոյց տալ, որովհետեւ այդպիսի բան չկայ: Առ առաւելը առ հասարակ չունէինք որոշած — արձ. համ. նուազագոյն չափը 8+3 — իննը հաշուելով կանանց էլ մէջը: 9 հաշուելով եւ ոչ 10 չհաշուելով:

Սրանք միայն թուցիկ նկատողութիւններ են գուտ հոգեբանական շարքի:

Բոլորովին ճիշտ է (երես 4)ում նկատուածը, որ ասում է, խօսելով խնձորների եւ կառքի մասին, թէ ըստ երեւոյթին, այն ժամանակ (պէտք է հասկանալ մինչեւ Սոֆ[իայի] աղէտը) գլխաւոր ուղադրութիւնը դարձուած էր խնձորների շուրջը:

Իսկ կառքի մասին առայժմ քիչ էր հոգացուած, բայց սխալ է, անպայման եւ հետեւանք նոյն պատճառի, երբ մի քանի տող վերջը մոռանալով այն ժամանակ եւ առայժմ սահմանափակող մտքերը ընդհանուր միտք է արտայայտուած կառքի մասին, թէ նա, այսինքն կառքը, տոկոմենտներից չի երեւում թէ լուրջ ուսումնասիրութեան նիւթ է դարձած:

Նախ դոկումենտները գիտական սպառող տրակտատներ չեն, այնտեղ շատ բան չէ տեղ գտել, շատ բան պարագայական բնոյթ ունեն, դոկումենտներից երեւցածը խնձորների մասին այն է, որ, եթէ չհաշուենք նախ էլլէնեան շրջանի փորձերը՝ Սարգիս-Լեւոն-Կարոյի, որոնք անպայման անյաջողութիւններ միայն տուին,

21.- Լուսացքին մէջ շատ մանր տատերով սղագիր Գոթագրութիւն, գոր կարելի է կարդալ մօտաւորապէս հետեւեալ ձեւով. «Այո՛: Ժըննեի մասնագ[ետները] Յուդայականի վկայում են Ո. 73. Պարիզից... Գաճակը, բժ. Լորիս [Մելիքեան] եւ ինքը Ուրբ[անովի] փորձերի վկայները: ... Գաճակներ Լեւայով, Տիւֆլիսից արկը»: Յղումը՝ որոշ կերպով կը վերաբերի Փարիզի մէջ Սաֆոյի ունեցած խորհրդակցութեան մասնագետ քիմիագետի հետ եւ Պուկարիոյ մէջ կատարուած ռուսի փորձերուն:  
22.- Եջաթիւր Գշուած չէ. պէտք է ըլլայ 3:



էլլէնը իւր ղեկավարութեամբ երկու անգամ փորձեր է արել: Առաջին անգամը — 2 օր — 8 ռումբ է նետուել, 2րդ անգամը 2 ռումբ՝ աղէտաբեր ումբերը:

Մնացած ուսումնասիրութիւնները եղել են պատրոյգի արագավառութեան եւ ռումբի գլխարկի սարքերը, խնձորի պատերի բաղադրութեամբ անելու ջանքերը, որոնք ճշմարիտ է, անշուշտ ահագին աշխատանք եւ միտք են խել, բայց միթէ մեր թղթերից չեն երեւում կառքի մասին եղած աշխատանքները — արձանագրութեան, տեղեկագրի եւ նամակների մէջ ամբողջ թերթեր են ներկայ. բայց այդ այդպէս լինելով հանդերձ, փաստ է, որ փորձեր, եթէ չհաշուենք աղէտաւորը, միայն մի անգամ է եղել թաթար Բագարձիկում, երկու օր տեւել եւ պայթեցուել է 8 ռումբ:

Այժմ տեսնենք կառքի մասին արդեօք աւելի քիչ է հոգացուել: Ինքը զեկուցողը 18երորդ երեսում արձանագրութիւններից քաշուած հաշուում է նրանց մէկ մէկ եւ նշանակում է 7 փորձ 2 կիլո, 2 կիլո, 4, 4, 5, 14 եւ 30 կիլո. 1/2, 1 1/2, 2, 3, 4, 10 եւ 8-20 մետր հեռաւորութեան վերայ: Մենք չենք հաշուում մասնագէտների դիմելը եւ նրանց հետ խորհրդակցելը որը մեր աչքում հաւասար է 100 սիրողային փորձերի, որպիսիք անհրաժեշտաբար պիտի լինէին մեր փորձերը:

Այդպէս ուրեմն փաստաթղթերը տալիս են խնձորների ուսումնասիրութեան) 8 փորձ, կառքի մասին 7-ը եւ երկու մասնագէտների կարծիքները, իսկ այլ մանրամասների՝ կառք, երկաթ, արկղ, վայրկենաչափ, էլեկտրակ. պիտ(ոյք), կառքի փորձեր, ամբողջ ամիսների գործ:

Որտեղից է ուրեմն եզրակացնում զեկուցանողը այդ պնդումը, մնում է նորից հարց: Իսկ այդ հարցի պատասխանը — մենք արդէն տուինք սկզբից — հիպոթոզ: Հիպոթոզ — թէ այն ամէնը ինչ էլլէնն է արել եւ լաւ է եւ շատ եւ լուրջ: Ինչ Սաֆոն՝ եւ քիչ եւ վատ: Կրկնում եմ եւ խնդրում հաւատալ, որ վիրաւորելու նպատակ իսկի չունեմ մանաւանդ տեխնիք. մասին. ինչ վիրաւորելու գլուխ ունի ամբողջովին վիրաւորուած մարդը:

Շարունակենք սակայն հետեւի տեխ. զեկուցողի մտքերի յաջորդութեանը եւ ստուգելու փաստերի հետ:

«Գալով կառքի միջոցով մահափորձին, ասում է քննադատը, յանձնախումբս ձգտել է պարզել հետեւեալ պայմանները.

- 1) Տեղի տուպոզ(աֆիսայական) պայմանները՝ արդեօք ճշտութեամբ ուսումնասիրուած էր:
- 2) Կառքի համար ընտր(ուած) էր արդեօք ամենանպատակաւարմար վայր, պայթող գազի գործողութեան կամ ազդելու համար:
- 3) Ուսումնասիրուած էր ամենաճիշտ հեռաւորութիւնը կառքի կանգնած տեղից մինչեւ Սուլթանը:
- 4) Ինչո՞վ է առաջնորդուել Յ. մարմինը, երբ ընտրել է պայթումի որոշուած մոմենտը:

5) Ինչու է դժոխային մեքենայի առաւելութիւն տրւել մարդուց (?): Եւ սա համապատասխանում է գործի նիւթական եւ էթիքական մասին:

6) Արդեօք ընդունելի է Յ. Մ. ի այն վստահութիւնը, որով նա կարծում է թէ Սուլթանի շարժումները մեքենայական են ամէն անգամ համապատասխան եւ ամէն անգամ նոյն ժամանակ:

7) Քանի անգամ էր ուսումնասիրած Սուլթանի վերադարձի ժամանակը «մզկիթից»:

Ահա այն հարցերը որոնք դասաւորուած են զեկուցման մէջ եւ մենք նպատակով մի առ մի առաջ բերինք այստեղ, քանի որ ինչպէս զեկուցողն է ասում՝ դրանք «այն ամենակարգիւնալ հարցերն են», որոնց մասին տեղեկութիւնները «մակերեւութային են կամ բոլորովին պակասում են» (եր. 7):

Մօտենանք այժմ այդ ամենակարգիւնալ հարցերին եւ տեսնենք ի՞նչ չափով համապատասխանում է փաստերին յանձնախումբի վերեւում բերած վերջաբանը, թէ այդ հարցերի մասին կամ բոլորովին տեղեկութիւններ չկան մեր խնդրի մէջ եւ կամ եղածներն էլ մակերեւութային են:

Ափսոս որ, չեն բաժանուած այդտեղ այն հարցերը, որոնց մասին տեղեկութիւններ բոլորովին պակասում են, որպէսզի զի կարողանայինք ջոկել մակերեւութայինները. բայց բաւականանանք նրանով ինչ ունինք մեր ձեռքին:

Սկսենք առաջին ամենակարգիւնալ հարցից՝ Հ. — Տեղի տուպոզ(աֆիսայական) արդեօք ճշտութեամբ ուսումնասիրուած էր:

Պ. — Այնքան ճշտութեամբ, որքան այդ կարելի էր նկատել մեր ներկայացրած երկու ուրուագծական յատկագծերից. լրացուած այստեղ բերանացի տրուած բացատրութիւններով: Նոյնքան բաւարար, որքան կարող է ուսումնասիրել մի հրապարակ 20 անգամ այնտեղ յատուկ դրա համար գնացած մարդը, ուսումնասիրելու եւ դիտելու եւ չափելու: Եւ այդ յիշատակուած է եւ արձանագրութիւնների մէջ եւ տեղեկագրի եւ յատկագծի կարծում ենք բաւարար չափով:

Արդեօք չէ՞ հարց տուել յանձնախումբը ինք իրան այդ վերոյիշեալ հարցերը շարելիս, թէ ի՞նչ է նա ուզում տեսնել, այդ արձանագրութիւնների մէջ, գիտական շարադրութիւն, երկրաչափական հետազօտութիւններ, ի՞նչ է. թէ մի գրական-գիտական աշխատանք, որ բոլոր գարթնող հարցերի պատասխանը պարունակէր այդ շարադրութեան) մէջ:

Կարծում ենք այդպիսի պահանջ դնելու իրաւունքը չի համապատասխանում գործի ոչ բնոյթին, ոչ նրա պայմաններին, ոչ տեղին եւ ոչ նպատակին:

Բայց այս փակագծի մէջ: Այսուամենայնիւ շարունակենք իւրաքանչիւր հարցին պատասխանել:

2. — Հարց. Կառքի համար ընտրուած էր արդեօք ամենանպատակաւարմար վայր պայթող գազի գործողութեան համար:

Բաց եմ անում 18/2 երեսը եւ կարդում, «այդպիսով կանգ առանք երկու մոմենտներից վերադարձի վերայ — դրա գլխաւոր պատճառն այն է, որ վերադարձին հրնարաւոր է դրամարկղը մօտեցնել Նժոյգին 20 քայլ աւելի, ուրեմն կանգնել 30-40 քայլի վերայ, այնինչ գալու ժամանակ տարածութիւնը 80 քայլի է հասնում այլեւ «այդպիսով գործի յաջողութիւնը 20 քայլի շարաւիղով ապահովացնում է»: Այս քայլերը հաշուողը անշուշտ չէր կարող առանց տեղը որոշելու ասել այդ բոլորը: Պակասում է այդտեղ, որ իսկոյն եւեթ այդ տողերին հետեւէին տեղի յատակագիծը, նրա տուպոզ(աֆիսային), գուցէ եւ մաշտաբը: Ահա թէ ինչու մակերեւութային է գտնում յանձնախումբը մեր արձանագրութիւնը:

3) «Ուսումնասիրուած էր ամենաճիշտ հեռաւորութիւնը կառքից մինչեւ Սուլթանը»:

Ի՞նչ կարելի է հասկանալ այստեղ «ուսումնասիրուած» խոշոր բառի տակ ապա թէ ոչ հաշուել քանի քայլ է կամ մետր է: Ուրիշ ի՞նչ ուսումնասիրութիւն է պահանջում տարածութեան որոշելը: Եւ այդ մասին արձանագրութեան մէջ՝ երես 18/2, ասուած է 30-40 քայլ: Թերթ Ա 3 երես. նոյն տարածութեան մասին դարձեալ ասուած է 15-25-30 մետր, իսկ տեղեկագրի մէջ 20-25 քայլ:

Հետեւապէս նուազագոյն տարածութիւնը 15ից մինչեւ առաւելագոյնը 40 քայլ: Ահա մեր թուերը:

«Ինչու որոշ թիւ չէ նշանակուած այլ նա նուազագոյն — minimum եւ maximumներ ունի»:

Դա այնքան պարզ է, որ մենք միայն մեր զարմանքն կարող ենք արտայայտել այստեղ, որ յանձնախումբը ունենալով ձեռքի տակ գործի թղթերը, լսելով մեր այստեղ բացատրութիւնները, ինքը չկարողացաւ տալ դրա պատասխանը, այն է որ ուրեմն քառասուն կամ 20 քայլ չափելու դժուարութիւնը չէր, որ մի րոպէ(ի) գործն է: Որքան էլ որ անձայր բացասական է յանձնախումբի վերաբերութիւնը դէպի Յուցականը, որքան էլ որ մի լոյսի նշոյլ չի երեւում Յ-ի գործերում յանձնախումբի հագած ակնոցներից, բայց եւ այնպէս հեռու գնալ այդ ուղղութեամբ, որ ենթադրել, թէ 5 մարդ չեն կարողացել 40 քայլ տեղ ոտքով չափել եւ այդ չափը գրի անցկացնել: Ուրեմն պէտք է այստեղ լինի մի ուրիշ պատճառ... Բանը նրանումն է, որ արձանագրութիւնները կազմուել եւ ուղարկուել են ոչ վերջին օրը, այլ փորձից առնուազը երկու շաբաթ առաջ, բայց ուսումնասիրութիւնները դրանով չեն դադարել, շարունակուել են նոքա մինչեւ վերջին օրը: Պէտք է եւ այս իմացած, որ միշտ եւ ամէն Ուրբաթ չի կարելի հնարաւոր համարել գրաւել անպայման նուազագոյն կէտը. այդ կախուած է այն

դասաւորութիւնից կառքերի կամ լրտեսների, որ այդ օրը ձեզ կը հանդիպի: Մի լրտես կամ ոստիկան կամ մի մեծատան կամ նախարարի կառք կարող է թեզ այդ օրը արգիլել կանգնել 20 քայլի վերայ ու դու ստիպուած պիտի կանգնիս 25 քայլի, թերեւս 30 քայլի վերայ: Ամենաճախող պարագային, վերջապէս 40 քայլի վերայ: Ահա թէ ինչու դրուած են այնտեղ նուազագոյն եւ առաւելագոյն թուերը: Եւ ահա թէ ինչու տեղեկագրի մէջ յիշուած է (ցոյց է տրուած) 25 քայլ տարածութիւն կառքի կանգնած տեղից եւ ոչ 30-40, քանի որ Զարեհի եւ օրիորդի ասելով, արդէն յայտնուեց թէ ուր են կանգնել — ուղիղ դրան մօտ, համարեա մէջը, որտեղից մինչեւ Սուլթանի ուղիղ գիծը մօտաւորապէս 25 քայլ է:

Ի հարկէ մենք ամէն կերպ պիտի աշխատէինք հասնել ամենամօտ կէտին, բայց եթէ այդ անկախ մեր ցանկութիւնից չաջողուէր, պիտի հարուածը տայինք նաեւ 30 մինչեւ 40 քայլից: Հակառակ դէպքում, վերադառնալու էինք եւ յետաձգելու հետեւեալ Ուրբաթի: Գուցէ հարց լինի, թէ ինչո՞ւ չէիք որոշել վերադառնալ եւ յետաձգել օրինակ նուազագոյն կէտից, եթէ չաջողուէր այն. չէ՞ որ ահագին նշանակութիւն ունի 10 քայլ հեռու, 10 քայլ մօտ: Այո՛, անշուշտ, բայց նախ — մեր ոյժը, մենք համոզուած էինք, թէ ինչո՞ւ այդ հարցին կը գան — համոզուած էինք եւ այսօր էլ համոզուած ենք, որ ապահովապէս բաւական էր եւ 30ի եւ 40ի, հետեւապէս կրակ բանալ հրացանաւորի համար 300 թէ 600 քայլից, գնդակի ոյժի տեսակէտից նշանակութիւն չունի: Մէկ էլ որ, վերադարձը լիքը կառքով մեր օրերի պայմաններով այնքան էլ հեշտ չէր, մի ամբողջ 8 օր կառքը լեցուած պահել, գործը յետաձգել, կապիւլները խոնաւութեան վտանգին ենթարկելը, ուրեմն արձանագրութեան) չափերը ենթադրական չափեր են, իսկ տեղեկագրիւնը — արդէն կատարուածը:

4) Ինչով է առաջնորդուել Յ. Մ-ը երբ ընտրել է պայթումի որոշուած մոմենտը: Ի՞նչ է ուզում ասել յանձնախումբը ուղղութիւնը դարձրէք խնդրում ենք այդ հարցի ներքին իմաստին. արդեօք ընդունելի է Յուցական մարմնի վստահութիւնը, որով նա կարծում է, թէ Սուլթանի շարժումները մեքենայական են, միաժամանակ:

Այս հարցը պէտք էր դրուէր այս կերպ. արդեօք ընդունելի է, որ վայրկենաչափը վայրկեանները ճիշտ է ցոյց տալիս, բայց որովհետեւ այդպիսի հարց տալ չի կարելի եւ այդ չէ, որ ուզում է ասել յանձնախումբը, ուստի պէտք է հասկանալ այդ հարցը այսպէս. արդեօք Յուց. մարմինը ճիշտ է ցոյց տալիս վայրկեանների չափերը. այսինքն նա մեզ խաբելու համար չէ գրել այդ թուերը: Եթէ մենք գուշակեցինք ճիշտ, այս հարցը վերադարձնում ենք յանձնախումբին, առանց պատասխանելու:



ներու նրան: Միայն ասելով այսքանս, թէ կարող էք հաւատացած լինել, որ այս հարցը տուող յանձնախմբի շարժումներն էլ բացառութիւն չեն կազմում, նոքա էլ մեքենայական են, եթէ վերածուեն այդ շարժումները անվերջ մանրացման:

Ե) Ապա տալիս է մի այսպիսի հարց: Ինչո՞ւ է դժոխային մեքենային առաւելութիւն տրուել մարդուց:

Եւ սա համապատասխանում է գործի նիւթական եւ էթիքական մասին:

Նախ եւ առաջ չենք հասկանում թէ այստեղ նիւթական հարցը ինչ գործ ունի: Դրամով խօսմ մարդ մեքենայ չեն ծախում եւ եթէ ծախում են, այն ժամանակ այդ գնուած մարդու հետ էթիքան ինչ գործ ունի:

Օրինակներ՝

Ճաշի տեւողութիւնը սովորական պայմաններում x-ի համար 1-1¼ ժամ է, մի բաժակ սուրճ խմելունը 4-5 ր.: Իսկ գոյալը բերան տանելը 1¼ վայրկեան իսկ աչքի թերթելը — մի վայրկեանում որ եւ գործածում է համարում, իբրեւ տեւողութեան չափ:

Առհասարակ պարզ չէ խմբագրուած այդ հարցը եւ մենք այդ հարցը հասկանալով այն մտքով, թէ ինչու վայրկեանական չեն արել, այլ վայրկեանաչափով, միայն մեր գարմանքն ենք յայտնում, թէ միթէ այդ մասին էլ ոչինչ չէ գտել յանձնախումբը ոչ մեր տեղեկագրում եւ ոչ էլ մեր արձանագրութիւնների մէջ:

Բաց եմ անում երես 22ը տեղեկագրի եւ կարողում ամբողջ 1½ երես: Արձանագրութիւններն եմ բաց անում երես 18 եւ կարողում ½ երես էլ այստեղ: Արդեօք յանձնախումբը բաւարար չգտնելով այդ 2 երես բաց[ատրութիւնները] նոր բացատրութիւնների կարիք է զգում:

Քանի՞ անգամ էր ուսումնասիրուած Սուլթանի վերադարձի ժամանակը, հարցնում է յանձնախումբը:

Բայց ինչո՞ւ է նա հարցնում: Մենք մեզ գարմանքով հարց ենք տալիս, երբ երես 15/2 արձան[ագրութեան] 5-10 տողերը պատմում են այդ մասին 3 անգամ, ինչ եւ արձանագրութիւնները: Սա ո՞ր տեսակից է մակերեւութային թէ պակասում է պատ: Պատ[ասխան], ինչպէս տեսնում ենք, կայ, ուրեմն մակերեւութային է վայրկեանաչափ երեւցած:

Ահա այն «ամենակարգիւնալ» հարցերը, որոնք առաջ են բերուած յանձնաժողովի տեխնիկական մասի կողմից:

Այդ հարցերով էլ մենք կարող էինք եզրափակել մեր ասելիքը եւ անցնել միւս երկու զեկուցումների մեղադրականներին, թողնելով միւս երկրորդական հարցերը:

Բայց հարցերը այստեղ այնքան են խառնուած իրարու եւ այնքան անվերջ երկար, երբեմն այնքան բնորոշ իրանց ձեւերով, որ չի կարելի առաջ չբերել դրանցից մի քանիսը, գաղափար տալու համար, թէ յանձնախումբը ինչպիսի հարցերի պատասխաններ է պտրում եւ դրանց չգտնելը որպիսի յանցագործ փաստ է առաջ բերում Ընդ. Ժողովի առաջ եւ այդ փաստերի հիման վերայ այնպիսի կտրուկ առաջարկներ անում, ինչպէս հետագային Դաշնակցութեան բոլոր գործերից բոլոր չորս անդամներին եւայլն<sup>23</sup>:

Ահա ձեզ, օրինակ, յանձնախումբը գարմանում է, որ «արձանագրութիւնների եւ նամակների մէջ չի խօսուում կառքի կանգնած տեղից մինչեւ Սուլթանի մէջ եղած տարածութեան տոպոգրաֆիայի մասին»: Եւ եզրակացնում է դրանից որ արձան. եւ նամակների մէջ տոպոգրաֆիան չէ նկարագրուած, հետեւապէս Յ. Մ. ի անդամները ի վիճակի չեն եղել երեւակայելու թէ մարգարանից մինչեւ մզկիթը գտնւում է նո՞յն հարթ տարածութեան վերայ. ինչպէս սակայն անել կարողացաւ յանձնախումբը այդ գարմանալի յայտնութիւնը, թէ Յուցական մարմինը ի վիճակի չէ եղել երեւակայելու աչքի առաջ փոռուած փողոցի հրապարակի դիրքը տեսնելու (երեւակայել պէտք է եղել). տեսէ՛ք թէ ինչ ճանապարհով է հասել յանձնախումբը այդ իսկապէս ապշեցրող յատնութեան. այս հարցի մասին Մարմինը հարկաւոր ուշադրութիւնը դարձնէր, այս էլ նկարագրուած եւ նկարուած կը լինէր, նոյնպիսի մանրամասնութեամբ ինչպէս միլիոնիտի արկղը, փորձերի ժամանակ ձիւլ դիակը, ժամացոյցը եւայլն...

Սրանից պարզ է ուրեմն, որ Յ. Մ. ը ի վիճակը չի եղել տեսնել եւ երեւակայել եւ այն. մէկ էլ որ չէինք կարող երեւակայել, որ յանձնախմբին պիտի հետաքրքրէ մզկիթի եւ մարգարանի տոպոգրաֆիան, հէնց պատի հաստութիւնը, բարձրութիւնը:

Մի բան էլ կայ, որ չէինք կարող գուշակել եւ յանձնախմբի գոյութիւնը[?] առնելու եւ Ընդ. Ժողովի գումարուիլը եւ այսքան եռանդով Յուցականին փարուիլը: Ուրիշ տոպոգրաֆիայով էինք զբաղուած այն օրերին, դրա համար էլ չենք նկարագրած: Իսկ տեսնելու եւ երեւակայելու, տեսել ենք, կարող էք հաւատացած լինել, դրան թոյլ ապացոյցը այն յիշողութեամբ կազմած յատակագիրը, որը այստեղ, Վիեննայում գծեցի, տեսածիս յիշողութեան վերայ հիմնուած:

Դարձեալ գալիս են տարօրինակ գանգատներ, յանձնաժողովի կողմից, թէ նրանք հնարաւորութիւն չունեցան արձանագր. տեսնելու եւ հասկանալու, թէ Սուլթանին ինչու չէր կարելի տեսնել կամ աւելի ճիշտ է կարելի էր եւ չտեսնել կառքի վերայից, երբ նա վերադառնում է մզկիթից:

23.- Ընդգծուած տողերը ցնջուած են ձեռագրից մէջ:

Եթէ յանձնախումբը բաւականանար նրանով միայն, որ թուէր, թէ

Ուրեմն կասկածի տակ է արդեօք գնացել ենք այստեղ, կամ գուցէ մի անգամ եղել եւ անցել, աչքերս գոցել: Այդ գարմանալի յայտնութեան սխալ լինելը հեշտ է ապացուցանել այստեղ իսկ անձնական փորձով Յուց. ի ներկայացուցչի աչքերի վերայ: Լաւ է որ այստեղ կան դաշնակց. երեւի բժիշկներ, ինչ երեւակայելուն է վերաբերում դրա ապացոյցը, քիչ դժուար է ի հարկէ, բայց կարող ենք վստահեցնել, դրան իսկ կարիք էլ չկայ տեսնելու համար թէ այս հրապարակը այս հրապարակից բարձր է կամ ցածր: Այդքան էլ անվստահութիւն...

Այդ արդէն չափազանց է, համաձայնութեցէք:

Յետոյ շարունակում է յանձնախումբը՝ եւ կամ եթէ նոյն հարթութեան վրայ չէ, այլ գառիվեր, նա շիտա՞կ կ'երթայ, թէ ճանապարհին կայ մի որեւէ շինութիւն, պատ, խրամատ, վերջինը ինչ բարձրութեան վերայ է, ինչ լայնութեան, ինչ հաստութեան եւայլն:

Եւ այդ եւայլնով վերջանում է այս երկար հարցը, մէկը տասնեակ նման հարցերից, որոնցով լեցուն է ամբողջ զեկուցումը եւ որոնց եզրակացութիւնը չեշտակի է. ո՞չ. կայծակի պէս — հեռացնել Դաշնակցութիւնից<sup>23</sup>:

Այդպէս ուրեմն, ապացուցուած կարելի է համարել, որ Յ. մարմինը ի վիճակի չէ եղել տեսնելու շիտակ է եղել ճանապարհը, թէ գառիվար, շինութիւն կա՞յ ճանապարհի վերայ կամ պատ, (պատն էլ չէ տեսել) Աստուած ողորմի այդ Յուց. մարմինն, խրամատ կա՞յ, պատերի լայնութիւնը որքան է, բարձրութիւնը որքան, եւայլն: Եւ այդ Յուցականի ապուշութեան պարզ ապացոյցը յանձնախմբի ձեռքն է: Ահա նա. եթէ տեսած լինէր եւ նկատած, կը նկատէր եւ կը նկարագրէր, ինչպէս օրին. Յուցականի մեքենան է նկարագրուած:

Բայց... որովհետեւ մեծ է յարգանքս յանձնախմբի տեխն. մասի զեկուցին, ստիպուած եմ լրջօրէն փարատելու այդ կասկածը, յայտնելով, թէ չնկարագրուած եւ չնկատուած լինելը դեռ ոչինչ չի ապացուցում եւ նկարուած են ըստ մեծի մասի միայն այնպիսի բաները, որոնք անհետանալու են օդը ցնդելով եւ կամ նկարուած են իբրեւ փորձերի հետեւանքներ — իբրեւ նիւթ յետագայ փորձերին: Իսկ մզկիթի պատը կամ մարգ[արանի] հրապարակը կայ եւ դեռ երկար կը մնայ իրա համար, միշտ էլ կարելի է նրան նկարել:

Այս, այս ու այս ինչ հարցերի պատասխաններ թղթերի մէջ չգտանք: Ուրեմն պէտք էր հարցնել, հարցապնդում անել եւ ստանալ բացատրութիւն արձ. կամ տեղ. մէջ տեղ չգտած հարցերի:

Յանձնախումբը չէ կարող չիմանալ, որ տեղեկագիրը յանձնախմբի համար չէ եղել գրուած, մանաւանդ արձանագրութիւնը: Որ նրանք մի մի գրական աշխատանքներ չեն եւ չեն էլ կարող լինել, որպէսզի այնտեղ ամէն մի հարց որ կարող է մէկին կամ միւսին հե-

տաքրքրել, նախատեսուած եւ արձանագրուած լինէր. դա մի, կրկնում ենք, գիտնական տրակտատ<sup>24</sup> չէ, որի մէջ այս կամ այն հարցի սպառողուած<sup>25</sup> մանրամասնութիւնները կ'ուզէ տեսնել յանձնախումբը եւ որի չգտնելը թղթերի մէջ, դուռում է արդէն իբրեւ մի ճիւղնուս, մի պակաս եւ ոչ միայն պակաս, այլ եւ այդ բացից արդէն եզրակացութիւններ է անում, եւ ինչպիսի եզրակացութիւն, թուում էր, թէ յանձնախումբը, որի միակ ցանկութիւնը պիտի լինի լուսաբանել՝ բացուելով, հարցնելով, Յ. ի ներկ.ից այս կամ այն բացը իրան հետաքրքրող հարցի մասին եւ ստանալով պատասխան, ապա թէ իրաւունք համարէր ասելու, թէ տրուած բացատրութիւնը խիստ մուլ է կամ ոչ գոհացուցիչ, այս ու այն հիման վերայ, ուստի եւայլն... Նա առանց հարցնելու, միայն այն պատճառով, որ նամակների եւ արձան. մէջ չէ նկարուած մզկիթը կամ աշտարակը, կամ այսինչ փողոցը, իսկ նկարուած է վայրկեանաչափը, եզրակացնում է ուրեմն նրանք ի վիճակի չեն եղել տեսնելու եւ երեւակայելու թէ փողոցը ծուռն էր թէ շիտակ: Համաձայնութեցէ՛ք, որ այս տեսակ վերաբերութիւն, առնուազը խիստ անկանոն է եւ բռնազբօսիկ ոչ մի տարրական իսկ քննադատութեան չդիմացող:

Բայց դա ունի իւր հոգեբանական գաղտնիքը. այդ գաղտնիքը ուրիշ ոչինչ է ապա թէ ոչ ան հիպնոզը, որի մասին սկզբում խօսեցինք: Նա, մտքի այդ հիպնոզը ակամայից իրան արտայայտում է իւրաքանչիւր հարցում, իւրաքանչիւր կէտում: Յանձ. ասում է, թէ կան հարցեր, որոնց պատասխանը տալ չի կարելի, առաջ քան Յ. Մ. ի ոչ միայն ներկ.ի այլեւ միւս ընկերներին այդ մասին հարցնելը: Ծատ լաւ: Կանգ առնենք մի րոպէ այդ շատ ճիշտ կերպով դրուած հարցի վերայ:

Այդպիսի հարցերից են հետեւապէս Սուլթանը կառքից բաժանող տեղի դիրքը: Այդպիսի հարցերից են, թէ ինչու Սուլթ[անը] չի կարելի տեսնել, թէ խրամատ կա՞յ, պատ կայ թէ ոչ. ինչ հաստ[ութեան], ինչ բարձրութեան են նոքա եւայլն: Հետեւողական լինելու համար, ուրեմն պէտք էր այդ հարցերը շարել եւ առաջարկել Յ. նին կամ, եթէ նրա ցուցմունքները վստահութիւն չեն ներշնչում յանձնախմբին, միւս ընկերներին, ապա թէ այս կամ այն եզրակաց. գալ: Բայց հիպնոզը, բայց կանխակալ կարծիքը չի թոյլ տալիս կանգնել այդ միակ ստրիք<sup>26</sup> կէտի վերայ: Մի քանի տողից վերջը նոյն այդ հարցերը դնողները արդէն պատասխանում են եւ եզրակացութիւն տալիս, թէ չկայ այդ հարցի պատասխանը, կը նշանակէ չի էլ կարող լինել: Եթէ գիտենային կ'ասէին: Չեն ասել, ուրեմն չգիտեն<sup>27</sup>: Սա ի՞նչ է, ի՞նչ տե-

24.- Գիտական ուսումնասիրութիւն:  
25.- Պէտք է ըլլայ սպառիչ:  
26.- Հաւանաբար ստրիկտ՝ ճշգրիտ իմաստով:  
27.- Ընդգծուած բաժինը ցնջուած է ձեռագրից մէջ:

սակ քննադատութիւն է:

Նոյն այդ տեսակ թուիչքն է գործ դրուում եւ Լեապովի առանձին նամակը իբրեւ ապացոյց բերուում եւ հակադրուում Պ. մարմնի ամբողջ կազմի, նրա արձ. եւ տեղեկագրերի մի ամբողջ մեծ ձեռնարկի դիմաց, թէ 3 մետր բարձրութեան) պատ է կանգնած կառքի դիմաց: Եւ այդ Լեապովի կարծիքը, 10 տարի առաջ Պոլսից եկած հեռացածի, որը երբեք չէ դիտել մզկիթը սուլթանասպանի աչքերով, առաջ է բերուում իբրեւ մի ծանրակշիռ յայտնութիւն ամբողջ Մարմնի ասածները կասկածի ենթարկելու:

«Տեղեկագրի նայելով» ասում է յանձ.ը, կառքի կանգնելու տեղը համարուել է ամենամօտիկ կէտը մինչեւ Սուլթանը: Գոռար էր ունէ բան հակադրել, եթէ չլինէին վերոյիշեալ կասկածները տեղի տուողը փախչի մասին:

Իսկ գիտէ՞ք թէ ինչ են այդ վերոյիշեալ կասկածները: Ահա նրանք, որ բերում ենք այստեղ բառացի՝

«Իսկ մինչ այդ Լեապովի առանձին կարծիքից երեւում է, որ մարգարանի առաջ, խորունկ ընկած փողոցի դիմաց բարձրանում է հողաթումբ 3 (3.5) մետր բարձրութեամբ երկաթեայ վանդակներով:

Իսկ ջամիի բակի դրան ներքեւ կանգնած է աշտարակը»:

Ահա այն կասկածները, այն ծանրակշիռ կարծիքը Լեապով մակեդոնացի մեր բարեկամի, որը իր 10 տարուայ թարմութիւն ունեցող յիշողութիւնները ներկայացրել է իբրեւ մի հեղինակաւոր կարծիք, որը եղել է Պոլսում եւ եթէ ինքը տեսել է այդ պատը իբրեւ զբօսաշրջիկ եւ ոչ իբրեւ Սուլթանին սպանելու գնացող, հաշուել է այդքան ճիշտ, պատի բարձրութիւնը 3 - 3½ մետր հաշուելով այն, իսկ մենք ամբողջ տարի ու կէս 7-8 ընկերներով միայն ու միայն այդ պատը քանդելու նպատակով գնացած եւ այդ աշխատանքը եւ նրա յետեւից անցնողն ու շուրջը գտնուողները, մենք ի վիճակի չենք եղել «երեւակայելու» տեղի դիրքը, պատի բարձրութիւնը:

Ուրեմն կառքը կանգ. 3.5 մետր պատի տակ եւ ըստ տաճկ. հեռագրի 100 մետրի վրայ...

Բայց ի՞նչ իրաւունք ունէր յանձ.ը, հարցնում ենք, այդ մի կարծիքի հիման վերայ առանց պարտք գզալու հարցնել եւ քննել, եթէ միայն դա այդքան ծանրակշիռ կարծիք է, առանց հարցնելու Յ. Մ. ին, կասկածի ստուեր ձգելու իւր քննադատութեան մէջ Ընդ. Ժողովից ընտրուած Պ(ատասխանատու) Մ(արմնի) անդամների ամբողջ գործի վերայ, ի՞նչ արդարութիւն է այս օտարոտի ձեւը: Ողորմե՛ս մեզ Տէ՛ր, որքան ուժեղ է եւ խորտակիչ նախապաշարմունքը, կանխակալ կարծիքը, այդ սոսկալի հիպնոզը: Ամէն ինչ, ամէն ինչ նա խորտակում է եւ ընկեր(ական) զգացմունք ու առողջ դատողութիւն... բոլորովին մաքուր:

Ի՞նչ է սա: Մի՞թէ աւելի պերճախօս ապացոյց պէտք է այլեւս գզալու համար, որ գուր է մեր կողմից ամէն մի ջանք վերականգնելու ճշմարտութիւնը: Նա ընկած է, նա ընկնում է ոտքի տակ ինչպէս լերան գագաթից գլորուող քարը: Եւ ոչինչ պիտի կարողանայ կանգնեցրել նրան, ոչինչ: Չո՛ւր է, գուր, նա պիտի տրորուի նոյնիսկ այն մարդկանց ոտներով, որոնք կանչուած են եւ եկել ճշմարտութիւններ պտրելու: Այդպէս է գլորուող քարի ֆիզիքական ոյժի հաւատարիմ ընտրանքը, այդպէս է եւ հոգեկան երեւոյթների գուգադիր ընթացքը:<sup>28</sup>

Բայց պէտք է խօսել: Պէտք է դառնութեան բաժակը մինչեւ վերջը խմել:

Եւ ովքեր են այդ մարդիկ, այդ սրիկաները, ներողութիւն այս բառիս համար, որոնք տարել են դժոխային մեքենան դէմ տուել երեք մետր պատի, պատի, որը հողաթումբ ունի յետեւին՝ անվերջ լեցուած եւ այն էլ 100 մետր հեռաւորութիւնից:

Սաֆոն, Թորգոմը, Ռուբինան... ներողութիւն... Ռուբինան առանձին տեղ ունի, նա ուրիշ է. այո՛, գիտենք եւ մենք նրան չենք խառնում, բայց այս հարցում, գոնէ այս հարցում, կառքի կանգնած տեղի միայն մասին, թէ նա երեք մետր պատի առաջ ենք որոշել կանգնեցնել — եւ նա 100 մետր, 150 քայլի վերայ է պայթել, թերեւս այս հարցում նա չցանկանայ բաժանուել Սաֆոյից, Թորգոմից, Քրիսից:

Ոչ միայն դրանք այդ դէպքում սրիկաներ, այլեւ անպայման դաւաճաններ են եւ իբրեւ այդպիսիք էլ ես պահանջում եմ, պէտք է դատուեն եւ մա՛հ... Հանա՛ք էք անում ինչ է: Մենք, այժմ հասկանում եմ յանձ. [նախըմբի] անդամ պ. Թոփճեանի խօսքերը՝ թէ յանձնախումբը շատ զիջող եւ ներողամիտ է եղել իւր գնահատութեան եւ եզրակացութեան մէջ... Օ՛, եթէ այդ է եղել նրա սածը, անշուշտ, եւ չափազանց նոյնիսկ աններելի ներողամիտ: Այդպիսի ներողամտութիւնը ինքնին ոճիր է: Ահա թէ մենք ինչ կ'ասենք:

Ի հարկէ, եթէ ամբողջ Դաշն(ակցութեան) Պատ. Մարմնի դիմաց հաւասարակշռող իբրեւ կարծիք Լեապովի եւ տաճկական հեռագրի լուրը հնարաւոր է դնել եւ առանց ստուգելու, առանց քննութեան հարցնելու գործողներից մի եթէ դնել, եթէ ճիշտ է այդ բոլորը այն ժամանակ... Ի հարկէ քիչ է ասելը թէ այն ժամանակ կէտը, թէ կառքի տեղը փողոցից Մարգարան տեղափոխելը եւ մի քանի հազար խորանարդ վաստակելը կորցրուում է իւր ամբողջ նշանակութիւնը:

Քիչ է ասել այդ այն ժամանակ, այլ պէտք է զինուորական դատով դատել եւ զնդակահարել բոլոր անհատներին, բայց ոչ, ոչ բոլորին — Սաֆոյին միայն: Թէ ինչու միայն Սաֆոյին: Դրան կը պատասխանէ Վանի

28.- Շեղագիր քաժիճը ջնջուած է ձեռագրից մէջ:

Սարգիսը, իւր նամակով: Ոչ Արամը:

Սարսափելի են այս երազները, բայց Մեծ է Տէրը: Սարսափելի է կարծում էք գնդակահարելու մասին է խօսքս, Օ՛, ո՛չ — բոլորովին ոչ: Սարսափելի է այս բոլորը եւ այս գեկուցում մեղադրականները եւ պատճառաբանութիւնները եւ ճշմարտութիւնների այստեղից փախչելը եւ նրա տեղ թագաւորող անծայր հիպնոզը...

Այն, որը հնարաւոր է դարձրել մի այդպիսի հրէշաւոր կասկած մտցնել պաշտօնական քննութեան մէջ առանց մի բառ անգամ հարցնելու այդ մարդկանց, լոկ միայն այն պատճառով, որ թղթերի մէջ տուողը փախկան կարտեր չկան — նրա համար, որ այդ կարտերի չլինելը հնարաւոր է դարձնում ասելու, թէ օրին մարդիկ աչքերը խփած են եղել տարի ու կէս եւ գնացել 100 մետր հեռաւորութիւնից փստացրել փախել են:

Ահա թէ ինչ է սարսափելի, այսպէս վերաբերուելու ստեղծող պայմաններն են սարսափելի:

Սակայն մօտենանք այդ մահացու հարցերին, որոնք մեր ծիծաղն են միայն շարժում, այնքան ողորմելի են նոքա:

Մենք չենք խօսի այստեղ թէ 100 մետրի վերայ էր կանգնած կառքը թէ 20: Այդտեղ կ'ասէ ինքը օր. Ռուբինան: Մենք կը կրկնենք միայն այն, ինչ ասացինք այստեղ, այս ժողովում (տեղեկագրի ընթերցանութեան ժամանակ՝ Անդրանիկի ցոյց տուած հեռաւոր կէտի նկատմամբ), թէ մենք չենք հաւատում, որ Ռուբինան կանգնէր այդքան հեռու: Այժմ նոյնն ենք բացակաւ չու: Դա անկարելի է. ես, Սաֆոն, գոնէ չեմ կարող հաւատալ թէ կողմ Ջարեհը այստեղ իմ առաջ էլ կրկնէ նոյնը: Նա չէր կարող այդպէս բան անել, չկանգնել որոշուած տեղը: Մնացածը թողնում ենք իրան պատմելու եւ բացատրելու: Յամենայն դէպս Ջարեհի կանչելը գոտնում ենք այդ հարցի վերջնական պարզաբանութեան համար ուղղակի անհրաժեշտ, որովհետեւ Ջարեհն ու Ռուբինան են, որոնք պիտի կարողանան այստեղ պարզել, թէ կանգնած են եղել որոշուած տեղը, այն է մարգարանի առաջին դրան տակը, որքան կարելի է մօտ, թէ՛ հակառակ որոշման երկրորդ դրան ինչպէս Անդրանիկին է պատմել Ջարեհը եւ Անդրանիկին էլ այստեղ, այս ժողովի առաջ պատմեց: Թէ 100 մետրի վերայ, ինչպէս՝ ինչ որ տաճկական աղբիւրի առաջին հեռագիրն է ասում, յանձնախմբի գեկուցման համաձայն:

Այսքանս կարող ենք մենք ասել որ եթէ, բան է, ճշտուի թէ՛ ոչ թէ 100 մետր հեռու այլ երկրորդ դրան յետեւն է եղել կանգնած կառքը, մի բան որին ես չեմ կարող եւ չեմ ուզում հաւատալ, իրաւացի կը լինի յանձնախմբի յայտնած կարծիքը, թէ այդ դէպքում բոլորովին կը կորցնէ արժէքը թէ մի քանի քայլ մօտ կամ հեռու է կանգնած. միայն այդ դէպքում մենք կը գտնենք, որ յանձնախումբը ոչ միայն կատարելապէս իրաւացի է եղել, այլեւ աններելի զիջող եւ մեղմ իւր եզրակացու-

թիւնների մէջ:

Ուրեմն ինչպէս տեսնում էք մեզ համար եւս ինչպէս եւ յանձնախմբի համար, էն նշանաւոր եւ կենսական կէտը կառքի տեղն է, որը ստուգել պէտք էր Ռուբինային եւ Ջարեհին լսելով: Եւ երբ նրանք ցոյց տան, թէ կանգնել են ճիշտ այն տեղ, ուր մեր որոշումն է եղել, ամենավերջին որոշումը, այսինքն Լ դրան կշտին, ապա կը մնայ ժողովի գնահատելու եւ ասելու թէ որին պէտք է հաւատալ — Ռուբինա - Ջարեհին, թէ տաճկական հեռագրին, Լեապովին:

Լեապովի յատակագծի քննադատութիւնը:

Մենք մեր տեղեկագրի մէջ արդէն ասել ենք, որ կառքը, ինչպէս ասացին Ռուբինան եւ Ջարեհը թէ եւ քիչ դժուարութեամբ, կաշառելով ոստիկանին մի չարեկ արծաթով<sup>28</sup> մօտեցրել են որոշուած տեղին: Ուրեմն այդ մասին աւելի ոչինչ ասել չենք կարող:

Ինչ վերաբերում է Լեապովի առանձին կարծիքին, որը դժբախտաբար առաջ է բերուած յանձնախմբի գեկուցման մէջ եւ որ մեզ, դժբախտաբար չէ յանձնած, թէ 3 մետր բարձրութեան պատով է շրջապատուած մզկիթի հրապարակը:<sup>29</sup>

Այդ մենք յայտարարում ենք այստեղ սխալ հիմնովին, որչափ դա վերաբերում է այն պատին, որը մեզ համար այստեղ դեր ունի:

Մզկիթի պատը, որը կոթնած է մզկիթի հրապարակին մինչեւ վերը հողայի եւ որը բաժանում է վերջինը մարգարանի հրապարակից մի նեղ փողոցով 4-12 քայլ լայնութեամբ, կանգնած է ոչ հորիզոնական մակարդակի վերայ, այլ շեղ իջնում է վերեւից ներքեւ եւ հետեւապէս քանի գնում բարձրանում է պատը, որքան աւելի փողոցը ցածրանում է: Նրա վերեւի մասը, Լ դրան դիմաց հագիւ մարդու մինչեւ կուրծքը հասնի. սանտիմետրով չենք չափած: Աւելի վերեւ - աւելի ցածր է, քանի փողոցը բարձրանում է եւ միանում է Սուլթանի իջնելու լայն փողոցի հետ, իսկ դէպի ներքեւ՝ գնալով բարձրանում է եւ ուղիղ մզկիթի տակը հասնում է - մինչեւ երեք մետրի, իսկ աւելի ցածր եւ 3 մետրից էլ աւելի:

Այսպէս ուրեմն, եթէ կառքը կանգնած լինէր, մի ըստ էն թաղերենք, Անդրանիկի ցոյց տրուած տեղը — մզկիթի դէմ առ դէմը երկրորդ դրանից էլ ցածր, ահա այն ժամանակ Լեապովի ասածը լինելով հանդերձ սխալ ամբողջ պատի վերաբերութեամբ, արդարացի կը լինէր կառքի վերաբերութեամբ:

28.- Քառորդ արծաթ, այստեղ՝ դրամ, քառորդ, մէկ չորրորդ մեծիտի:  
29.- Շեղագիր շարուած պարբերութիւնը ջնջուած է ձեռագրից մէջ:

Եւ ի հարկէ, այդ վերջին ենթադրական դէպքում, եթէ նիւթը լինէր ամենաուժեղ տեսակից էլ, ոչ մի կասկած չլինէր նրա մեկնիտ լինելուն, այնուամենայնիւ 124 կիլոն չէր կարող մի այդպիսի արգելք յաղթահարել երեք կէս մետր բարձրութեան թանձր եւ խուլ պատ, կռօնած ուղղակի բլուրի վերայ:

Ենթադրել թէ մարդիկ այնտեղ հաւաքուած, 7-8 հոգի, կարող էին ի վիճակի չլինել, նկատելու մի այդպիսի աբսուրդ դրուժիւն. նոքա, որոնք այդքան ձեր ջանքերին դիպչող թուրքի տղան չմոռացան գոհել, ինչ է կառքը մի քայլ չհեռանայ տեղից: Նոքա, որոնք ի վիճակի էին մտածելու, թէ մենակ կառապանին թողնելը վտանգաւոր է, չնայած նրան, որ Ջարեհ կառապանը բողոքում էր եւ կուռում, թէ ինչի համար է պէտք երկրորդ մարդը, միթէ ինքը մենակ բաւական չէ զսպանակը սեղմելու, չնայած որ իսկապէս նա բաւական էր, բայց եւ այնպէս զգուշութեան համար կրկնակի էլեքտրական սիստեմի բարդութիւններն են յաղթում, կրկնակի վայրկեանաչափեր դնում եւ մի մարդ էլ աւելացնելու միտքը իրագործում, մարդ-գոհ- թէեւ ոչ անպայման անհրաժեշտ — նոյն մարդիկ, մի ամբողջ տարի չեն կարողացել տեսնել թէ փողոցը ծուռն է թէ շիտակ, դէմը պատ կայ թէ չկայ, խրամատ կայ թէ չկայ, տանել եւ խուլ պատի դէմ տալ կառքը .....

Ճշմարիտ, ճշմարիտ, սարսափել միայն կարելի է այսպիսի ենթադրութիւններից իսկ:

Չէ՛, Ջարեհը պէտք է կանչուի, բոլորը պիտի կանչել: Յանձնաժողովը զարմանում է թէ ինչպէս է որ երկու պաշտօնական տոկոսմենտների մէջ կառքից մինչեւ Սուլթանը եղած տարածութեան մասին տարբեր թուեր են նշանակուած:

Այն է արձանագրութեան մէջ ասուած է 30-35 քայլ, իսկ տեղեկագրի մէջ՝ 20-25 քայլ:

Արժէ այստեղ կանգ առնել բնորոշելու համար յանձնախմբի գործելու եղանակը եւ նրա հոգեբանութիւնը:

Մենք չենք կասկածում յանձնախմբի կողմից այստեղ յայտնուած պ. Թոփճեանի մտքին, թէ նոքա իրանք շատ են ցանկանում, նրա, յանձնախմբի ցանկութիւնն է, որ Յուց. Մ-ը կարողանայ արդարանալ բոլոր իւր վերայ ծանրացող հարցերից:

Որքան աւելի գործնական կը լինէր այդ ցանկութիւնը, եթէ յանձնախումբը այդ եւ նման հարցեր, առաջ քան զարմացական հարցի տակ Ընդ. Ժողովի առաջ բերել, 20 օր իւր տրամադրութեան տակ եղած ժամանակամիջոցում մէկ անգամ գոնէ հարցրած լինէր Յուցականին այդ եւ նման մի շարք նման հարցերի բացատրութիւնները եւ եթէ վերջինները անբաւարար գտնէր ապա թէ մեծ իրաւունքով Ընդ. Ժողովի առաջ հանէր այն եւ որքան ժամանակ նա խնայած կը լինէր այդ հարցերը բերելու եւ մենք էլ նրանց պատասխանելու: Սա-

կայն մենք այդպիսի բան չէինք սպասում յանձնախումբից, գիտենալով թէ ինչպիսի տրամադրութիւնների միջոցով է տիրում Յուցականի շուրջը, միջոցով թանձր եւ գրգռիչ, անշուշտ չէր կարող չանդրադառնալ եւ յանձնախմբի գործերի վերայ:

Դառնալով այդ զարմանքին, մենք այդ հարցին պատասխանել ենք արդէն սկզբներում մանրամասն- այստեղ կ'աւելացնենք միայն այդ զարմանքի առթիւ մեր զարմանքը, միթէ յանձնախումբը չէր կարող այսքան պարզ հարց ինքը լուծել, եթէ նա քիչ էլ զբաղուէր հարցեր լուծելով եւ ոչ միայն հարցեր պտրելով եւ պատահած հարցը, առանց կանգ առնելու, իսկոյն հրապարակ հանելով:

Ե՛րբ է գրուած արձանագրութիւնը: Պ.- Մահափորձից առաջ:

Ե՛րբ է գրուած տեղեկագիրը: Մահափորձից վերջը, երբ նա արդէն կատարուած փաստ է:

Տեսնո՞ւմ էք, որքան մեծ տարբերութիւն կայ երկու պաշտօնական տոկոսմենտների մէջ:

Մէկը ուրեմն բերում է թիւ եւ չափ ենթադրական — թէ պէտք է կանգնել այստեղ կամ այստեղ եւ կամ այստեղ, միւսը — խօսում է կատարուած փաստի մասին, թէ կանգնեցինք այստեղ եւ ոչ այս կամ այն տեղ:

Բաց եմ անում արձանագրութեան Ա. Թ. 3 երեսը, որը երեւի վրիպել է յանձնախմբի ուղղութիւնից, եւ կարդում:

«Ահա մեր գէնքը (խօսքը դժոխային) մեքենայի մասին է) որը աւելի քան բաւական է 15-25-30 մետրի վերայ: Յաջող դէպքում կարող է լինել եւ 10 մետր միայն մինչեւ Նոյնգը»:

Ո՛ր է ուրեմն հակասութիւնը:

Կարող էինք զանազան պայմաններում կանգնել եւ 15 եւ 25-30, յաջող դէպքում եւ 10 մետրի վերայ այսինքն 15 քայլի: Իսկ իրականութեան մէջ այդ տարածութեան մէջ կանգնել է կառքը 25 քայլի վերայ:

Բայց այստեղ նորից երեւում է մակեդոնացին, Լեապովը եւ նորից ահա յանձնախմբի արդարադատութեան կշռի թաթերն սկսում են տատանուել: Վերջինի առանձին կարծիքով, չգիտենք որքան այս հարցում հեղինակաւոր:

Մզկիթի պատից մինչեւ մզկիթի դուռը 15 մետր է (նրա թուերը շատ կտրուկ են, երեւի պալատի պաշտօնական յատակագիծն ունի ձեռին), որի վերայ եթէ աւելացնենք, ասում է յանձնախումբը, փողոցի լայնութիւնը, մարզարանի պատի լայնութիւնը, ձիերի կանգնած տեղի երկարութիւնը եւ այլն, այս տարածութիւնը կարող է շատ զգալի կերպով փոխուել:


Գեղեցիկ է այստեղ «եւ այլն»ը: Եւ այլն կը նշանակէ էլի գոնէ մի բան, թէկուզ մի քայլ տեղ ենթադրելի է: Այնինչ ինչպէս տեսնում էք մի բթաչափ էլ բաց տեղ չէ

թողնուած ջամիլի դռնից մինչեւ վանդակապատը. յետոյ փողոցի լայնութիւն, փողոցի պատի հաստութիւնը, երկարութիւնը, ձիերը, իսկ ձիերից յետոյ չէ որ անմիջապէս գալիս է մեքենան: Ձիերի պոչերը համարեա մեքենային են հասնում. ձիերի եւ մեքենայի մէջ միայն տեղաւորում Ջարեհի ոտները: Իսկ որ ձիերի եւ մեքենայի մէջ տեղաւորում էին Ջարեհի ոտները, ուրեմն նոյնը. Դ. ոտներն էլ:

Սակայն հարցը Ջարեհի ոտների մէջ չէ, այլ մզկիթից միայն մզկիթի վանդակապատի տարածութիւնը, որը Լեապովի ասելով 15 մետր է: Դժբախտաբար մենք ձեռքի տակ չունինք Լեապովի այդ առանձին կարծիքը, որպէսզի կարողանայինք մեզ համար պարզել, թէ ո՞ր տարածութիւնն է նա չափում: Դարձեալ նոյն թիւրիմացութիւններն ենք մենք գուշակում, կամ, այն է որ խօսուում է այստեղ տարբեր տարածութիւնների մասին, ինչպէս քիչ առաջ պատի բարձրութեան մասին էր: Իսկ յանձնախմբի մեղադրական ակտի մէջ չակերտներ չկայ, ուստի ստիպուած ենք բառացի ընդունելու այնպէս ինչպէս յիշուած է գեկուցման մէջ, որն է մզկիթի դռնից մինչեւ վանդակապատը, ինքնուստինքեան հասկանալի է ուղղահայեաց դէպի վերջինը: Բայց այդ գիծը մեր ինչի՞ն է պէտք: Թերեւս մզկիթի դռնից մինչեւ վանդակապատը 15 մետր է (թէեւ խիստ կասկածում ենք այդքան լինելը) լա՛ւ, դրանից ինչ: Միթէ մեր կառքը մզկիթի յետե՛ն է կանգնած կամ կանգնելու: Մեր 25 քայլը մօտաւոր թիւն է մարզարանի առաջին դռնից ուղղահայեաց մինչեւ մզկիթի դրան գծի շարունակութիւնը Սուլթանի ճանապարհով — աշտարակի մօտերը:

Պէտք է խիտ նկատած, որ անկանոն ձեւ է ներկայացնում մզկիթի հրապարակը. ինչպէս պատը ամէն տեղ հաւասար բարձրութեան չէ երկրի մակերեւոյթից, այնպէս էլ այդ պատը գուզընթաց չէ մզկիթի պատին. նա — մզկիթի հրապարակը ուղղանկիւն քառակուսի չէ որ ներկայացնում է — գնալով բարձրանում է ուղղահայեաց մակարդակով եւ գնալով կորանում:

Այդ թուերի մասին աւելի ճշգրիտ տեղեկութիւն կարող էր տալ յանձնախմբի օր Ռուբինան, որը, կարծում ենք, կը հաստատէ տեղեկագրի առաջ բերած թի-



ւր, որ 25 քայլից աւելի չէր լինի ուղղահայեաց: Կարող է այդ հարցում նոյնպէս պր. Ռոստոմը օգնել, քանի որ նա անձամբ դեռ թարմ տպաւորութեան տակ հարցրել է եւ օր. Ռոբինային եւ օր. Էմիլին: Նա եւս այդ տարածութիւնը 25 քայլից աւելի չի կարող հասցնել:

Միանգամ ընդմիջտ խնդրում ենք ժողովի ուղղութիւնը հետեւեալ բացատրութեան վերայ, որպէսզի բազմիցս եւ զանազան վարեանտներով կրկնուող տարածութիւնների, տոպոգրաֆիայի մասին առաջադրուած հարցերին կրկին եւ կրկին չդառնանք եւ ստիպուած չլինենք այդպիսով յոգնեցնելու ժողովի ուղղութիւնը, որ եղել ենք Պ. մարմնի անդամներս ինչպէս եւ օժ. ընկերներից շատերը պալատի շրջանում աւելի քան 20 անգամ, երբեմն մենակ, երբեմն զոյգ զոյգ: Եթէ զոյգերն էլ հաշուենք աւելի քան քառասուն անգամ: Որ հնարաւորութիւն ունէինք չափելու եւ չափչափելու — ի հարկէ ոչ մետրով, այլ քայլերով — եւ մարզարանի հրապարակը եւ ձիւն, փողոցները պաւլիտոնի պատից մինչեւ մզկիթի սրահի վանդակապատը (վերջինը ուրիշների քայլերով: Եւ մզկիթի սրահի դռնից մինչեւ մարզարանի պատը եւ ուղղահայեաց այս փողոցը, եւ այդ կատարել եմ ոչ միայն ես այլեւ միւս ընկերները եւ գրած էլ ունէի, այժմ չունիմ, կորցրել եմ: Ոչ գծել ենք ոչ էլ նկարել — կարեւոր չենք համարել այդ մեզ համար, ուրիշների համար էլ չենք մտածել, քանի որ նա կայ տեղումը կանգնած եւ անշարժ:

Արդէն յանձնախումբը մեր նկարած դժոխային) մեքենայից, վայրկեանաչափներից կարող էր տեսնել, թէ որքան շնորհք ունիմ գծելու: Ոչ մի շնորհք: Իսկ դրանք գծուած են իբրեւ ոչնչանալու ենթակայ նոր բաներ գոնէ Դաշնակցութեան) համար, ենթադրելով թէ թերեւս օգտակար լինին ապագայում:

Մեզ համար միայն անմատչելի էր չափելու տեսակէտից մզկիթի սրահի ներքը — վանդակապատից մինչեւ Սուլթանի գիծը — բայց այդ մենք տեսնում էինք աչքերով եւ աչքի չափով հաշուում էինք ոչ աւելի յամենայն դէպս 10 քայլից, որի վերայ աւելցնելով 12 քայլ էլ փողոցի լայնութիւնը 22 քայլ. երեք քայլ էլ ձիերը — 25 քայլ մօտաւորապէս: Եթէ դա լինէր 20-30, մեզ այդ չէր վախեցնի, որովհետեւ մեր նիւթի ոյժը բաւական էր եւ 50 քայլի համար եւ աւելի:

Երբ 50 քայլի վերայ վստահութիւն ունիս քո ոյժի վերայ, իսկ տարածութիւնը տեսնում ես պարզ, որ յամենայն դէպս եւ ոչ մի դէպքում յիտուն չէ, 40 էլ չէ, այլեւս նա 30 է թէ 25, 20 է թէ 23, դառնում է անտարբեր հարց: Այն մտքով անտարբեր, որ հնար (չկար) մտածել իսկական որոշելու 23 է թէ 25 - այդ մտքով անտարբեր, եւ ոչ գծելու եւ ոչ էլ նկարելու կարիքը չես գգում:

Երեւակայեցէք ձեզ, որ թատրոն ես գնում տոմս առնելու մի ուղղութիւնով: Ծանապարհին միտք է ընկնում, թէ արդեօք մի ուղղութիւն ունի՞մ, հանում ես քաակը եւ սկսում հաշուել մանր դրամները վախեցած, թէ արդեօք մի ուղղութիւն պիտի դուրս գայ: Յանկարծ մանր փողերի տակից դուրս է գալիս 3 ուղղութիւնով թղթադրամ - եւ դուք ձգում էք այլեւս մանր դրամների հաշիւը եւ քսակը տեղը դնում, համարձակ դէպի թատրոն ուղղում:



քայլերդ, գիտէ՞ք որ աւելին ունիք: Իսկ ո՞րքան, քանի կոպեկ, դա ներկայացնում է թատրոնին համար պարապ հետաքրքրութիւն:

Երես 10 — Դարձեալ յանձնաժողովը շարունակում է գանգատուել, թէ նա չկարողացաւ ոչ տեղ(եկագրից) եւ ոչ էլ արձ. (ից) պարզել, թէ ո՞ր մոմենտում է որոշուել պայթումը: Ինչքան ժամանակ պէտք է տրուէր տեղոր(ական) պայթ. առաջ բերելով(?) եւ արդեօք ժամ(անակը) այնքան քիչ էր, որ գործադրողը չէր կարող սղմել գապալը եւ իրօք հարկաւոր էր մարդը փոխարինել դժ. մեքենայով:

Այս մի հարցը ամբողջ չորս հարց է պարունակում եւ չորսի էլ պատասխանը կայ թէ արձ. եւ թէ տեղեկագրի մէջ: Երես 10 1' 25. 1' 30 արձ.

Երես 22 վայրկեանականի պատճառաբ. տեղ. 22-ը բանալ եւ կարդալ: 1 ր. 25-30 վայրկեան նոյն մոմենտում եթէ սուլթանը հասնէր ուղղահայեաց կէտին:

Այո՛, իրօք հարկաւոր էր:

Այժմ սկսւում է Տեխնիկական մասի քննադատութիւնը:

Որպէսզի միանգամայն պարզ լինի ժողովիդ համար յանձնաժողովի ամբողջ գործելակերպը, թէ ինչպէս նա սահել անցել է թղթերի վերայից առանց մի վայրկեան անգամ կանգ առնելու տեղեկագրի եւ արձանագրութիւնների այն տողերի վերայ, որոնք ամէն մի անախապաշար մարդու համար բաւական էին լի ու լի լուսաբանելու հարցը եւ թէ ինչպէս նա որոնելիս է եղել միայն եւ միայն հարցեր, անվերջ հարցեր, եւ թէ ինչպէս այդպիսի միակողմանի ձգտման շնորհիւ նա ինքը ընկել է հակասութիւնների մէջ, բազմաթիւ հարցերից մենք կը վերցնենք նմուշի համար:

Կարդալ երես 11ի հարցերը:

ա) Ի՞նչ հաստատուն հիմքեր է ունեցել Յ. Մ. ը վստահանալով նիւթի պայթման յաջողութեան հետեւանքներին որոշ տարածութեան վերայ:

Այս հարցը տալ կարող էր միայն նա, ով կամ բոլորովին չէ կարողացել ոչ տեղեկագիրը եւ ոչ էլ արձանագրութիւնները եւ կամ կարդալիս բոլորովին միտքը ուրիշ հարցերով է եղել զբաղուած:

Զմոռանանք, որ մի անգամ էլ այստեղ բոլորիդ ներկայութեան ես եմ կարողացել տեղեկագիրը: Եւ այնուամենայնիւ այս հարցը դրուած է ահա այստեղ եւ որ ամէնից աւելի զարմանքի արժանին է, ներքեւում էլ աւելացուած է թէ արձան. եւ տեղ. մէջ չկայ ոեւէ օրակարգի որոշում այս կարգի հարցերի մասին:

Ի՞նչ է նշանակում օրակարգի որոշում արձ. եւ տեղ(եկագրի), բացի ուրիշ ինչ օրակարգի մասին կարող է խօսել: Բաց եմ անում արձանագ. եւ ապա տեղեկագիրը եւ այստեղ համարձակ կարող ենք ասել, որ ոչ մի հար-

ցի վերայ այնքան երկար չէ կանգ առած որքան այն հիմունքների մասին, որոնք ուղղակի այդ հարցին են վերաբերում, ուղղակի այդ հարցին:

Կարդալ տեղ. եր. 12, 13, 14, 15 երես: արձ. 12, 13 երես:

Երեւի բաւական չի համարել յանձնախումբը այսքան հիմունքները: Բայց ինչ հաստատուն հիմքեր էիք պահանջում մեզանից, աւելի հաստատուն, քան նոքա են:

Մենք դժուարանում են հասկանալ: Երկու հեղինակաւոր մասնագէտների կարծիք հարցնել Պարիզում եւ ժընևում, չբաւականանալ այդ մասն(ագէտների) կարծիքով եւ սեփական փորձեր անել, 6-7 փորձ — 85 կիլո մեյլինիտ միայն փորձերի վերայ ծախսել — այդ գտնում էք քիչ:

Իսկ ուղմբերի՞նը: Միեւնոյն ժամանակ ուղմբերի փորձերը եւ տեխնիքական մասին մշակելը գտնում էք բաւարար. ուղմբերի, որոնց մասին յամենայն դէպս բոլոր մասնագէտներից աւելի հեռուն չենք կարողացել գնալ եւ որոնց փորձերի անյաջողութիւնների % եղել է մեզանում աւելի շատ:

Ուրիշ ի՞նչ ապացոյցներ էիք ուզում: Բայց մենք կը տանք ձեզ մի ապացոյց եւս այն լեզուով, որի առաջ անգոր է ամենապարզ հիպոթոզ, այդ թուերի եւ թուանը-շանների լեզուն է: Բայց մի քիչ սպասենք:

Ապա գալիս են մէկը միւսի յետեւից հարցեր, մենք չենք ընտրում, առաջ ենք բերում այն կարգով, ինչպէս նրանք շարուած են առանց ընտրութեան՝

բ) Յ. Մ. ունեցե՞լ է տեղեկութիւն այն մասին որ այդպիսի պայթումը ոչ ամէն անգամ տալիս է բաւարար հետեւանք:

— Չէ՛, չէ ունեցել: Յետո՞յ:

Իսկ յանձնախումբը ունի՞ տեղեկութիւն այդ մասին եւ հաստատ. համոզուած էր որ ոչ ամէն անգամ պայթումը յաջող հետեւանքներ կ'ունենայ, եթէ պայմանները նոյն են:

Մենք այդ մասին տեղեկ(ութիւն) չենք ունեցել թէ ուրիշ կերպ է եւ շատ կը ցանկանայինք, որ յանձնախումբը իւր այդ մասին ունեցած տեղեկութիւնները մեզ եւս սովորեցնէր. թէ ինչ կերպ է նա հասել մեզ համար բոլորովին նոր այդպիսի յայտնութեան:

Մենք առանց մասնագէտ լինելու մինչեւ օրս էլ կարծում ենք, թէ նոյն նիւթը միեւնոյն պայմանների մէջ, միեւնոյն քանակութեամբ՝ միշտ եւ ամէն անգամ միեւնոյն էֆեկտը պիտի տայ:

Եթէ սխալուում ենք, շնորհակալ կը լինէինք եթէ յանձնախումբը մեր այդ սխալը փարատէր:

Շատ կասկածում ենք, թող ներուհի մեզ այդ ասելու, թէ յանձնախումբիդ այդ հետաքրքիր կէտի վերաբերութեամբ ունեցած տեղեկութեան աղբիւրը պիտի Ռոս-

տումն է, ներողութիւն ենք խնդրում կանխաւ եթէ սրխալուած ենք, թէ պայթ(ուցիկ) նիւթը առհասարակ «կապրիզոտ»<sup>30</sup> է եղել: Այդ մեր կասկածը հիմնուած է այն բանի վերայ, որ վերջին օրերս այդպիսի մի կարծիք նոյն աղբիւրից լսեցինք Քրիսի միջոցաւ:

Եթէ այդ է միակ աղբիւրը, կարող ենք ձեզ վստահեցնել, որ զուր ժամանակ էք կորցրել այդպիսի թուուցիկ կարծիք այդքան ապլոմբով<sup>31</sup> դրել իբրեւ լուրջ հարց եւ տակն էլ աւելացրել, թէ այդ կարգի հարցերի մասին ոեւէ օրակարգի որոշում արձ. եւ տեղեկագրի մէջ չկայ եւ այս՝ շատ սուր կերպով աչքի է ընկնում: Ի՞նչ է այդ սուր կերպով աչքի ընկածը, պակասը, որ օրակարգի որոշում չկայ մեր տեղ. եւ արձ. մէջ, թէ տեղեկութիւն ունի՞նք արդեօք, թէ պ[այթուցիկ] նիւթը ոչ ամէն անգամ տալիս է բանաւոր հետեւանք:

«Արդեօք Յ. Մ. կազմե՞լ է արձանագրական որոշում այն մասին, թէ ինչ եղանակով պէտք է կատարուի պայթումը»: Շարունակում է հարցնել մեզ յանձնախումբը, խորասուզուած «խրթին» հարցերի մէջ:

— Արդեօք կարդացել է յանձնախումբը, հարցնում ենք մենք, մեր արձանագրութեան՝ Ատ. 2 երեսը եւ տեղեկագրի 21 թերթը:

Կարդալ:

Վերջապէս սա ի՞նչ վերաբերութիւն է, հարցնում ենք մենք. ի՞նչ է նշանակում ներշնչամբ հարցեր դնել, առանց կարդալու այն թղթերը, որոնք 20 օր ձեր ձեռքի տակ էին եւ այդ 20 անգամ կարդալ:

Եւ այդպէս վերաբերուելով դէպի իւր ստանձնած գործը ելնել եւ այդպիսի հարցեր, ամբողջ տասնեակներ շարել ու եզրակացութիւններ հանել եւ առաջարկներ բերել Ընդ. Ժողովին:

Եւ ի՞նչ առաջարկներ. Յ. ամբողջ մարմինը դատի ենթ(արկել) եւ հեռացնել Դաշնակցութիւնից: Եւ շարունակուում են այդ հարցերը, անվերջ շարունակուում են: Եւ երբ կարդում է մարդ հարցերի այդ շարքերը գլխի ցաւը բռնում է, աչքում եւ որոնք վերջ չունին, որոնց առնուազը կէսը կարելի էր չգրել առանց վնասելու խնդրի պարզուելուն<sup>32</sup>:

Որքան նպատակայարմար գործ կատարած կը լինէր յանձնախումբը եթէ տեխնիքական մասի հարցերին ինքը ձեռք չտար, յանձնէր մասնագէտներին, բայց դրուած են նոքա — պարտաւոր ենք առաջ բերելու ու կամայ ակամայ — պատասխանելու: Հանաք բան չէ. մեզ սպառնում է յանդիմանութիւն, թերեւս արտաքսում առ նուազը: Ինչպէս Վանի ձայնն է ասում, ուրեմն շարունակենք մի առ մի պատասխանել բոլոր հարցերին:

Բայց մենք երկու օրէ հազիւ կէսն ենք եղել. գրում ենք եւ պատասխանում այդ հարցերին: Ի՞նչ արած, ճարերս ի՞նչ է՞<sup>32</sup>:

Բայց կ'աշխատենք այլեւս կարճ կտրել. Հարց երես 11

«Ի՞նչ պայմանների պիտի համապատասխանի մելի-նիտը»: Պատ.- Սուլթանին սպանելու 20-30 մետրի վերայ:

Հ.- Պայթուց. նիւթի գագերը ի՞նչ խոչընդոտներ պիտի յաղթահարեն:

Պ.- Սուլթանին իւր կառքով, շրջապատուած վեզիր վիզիրներով օդը բարձրացնեն կամ գետին գլորեն անցնելով մզկիթի սրահի վանդակապատի վրայով ու միջով, խորտակեն աշտարակը, ամալացնեն պաւլիտի ըլոր հիւրերին, մէկ խօսքով 30 մետր շառաւիղով ամէն ինչ ոչնչացնեն աշտարակն էլ հետը<sup>32</sup>:

Հարց.- «Ի՞նչ փորձերի պիտի դիմուէր մահափորձի յաղթանակի համար»:

Պատ.- Այն փորձերին, ինչ որ մենք կատարել ենք եւ որ ամէնից գլխաւորն է մասնագէտների պէտք էր հարցնել, որովհետեւ սեփական փորձերով տասը տարի դուք չէք կարող, չլինելով մասնագէտ օրէնքներ մշակել:

Հ.- Ինչ տեսակ տեղեկ(ութիւն) պէտք է հարցուէր մասնագէտ մարդկանցից:

Պ.- Այն, ինչ մենք հարցրել ենք նոյնը դուք կարողացած պէտք է լինէիք եւ եթէ կարողացել էք, մտքերդ պահէիք, որ նորից կարդալու ստիպուած չլինէիք<sup>32</sup>:

Հ.- Ի՞նչ երաշխիքի եւ միջոցի էր դիմուած լաւ յատկութեան նիւթ ձեռք բերելու համար:

Պ.- Անցեալ Ընդ. Ժողովի մասնակցողներից հարցընէիք, նրանցից մէկը այս հարցերը տուող յանձնախումբի մէջ է՝ պ. Վոսմեանին, նա կ'ասէր: Սարաֆովի յանձնարարած Տիւֆակչեւ — գործ(ակատար) մասնագէտից ենք վերցրել. նա փորձեր է արել Ընդ. Ժող. առաջ եւ յայտնել թէ սա դիմամիտից 1.5 անգամ ուժեղ է, մենք էլ հաւատացել ենք:

Սոֆ(իա) փորձերն են եղել Տիւֆ. վաճառողի ձեռքով կատարուած Ընդ. Ժողով(ի) պատգ(ամաւորների) առաջ: Մենք էլ բացի դիմամիտից ուրիշ նիւթ տեսած էլ չէինք: Դիմամիտի էլ սեւը սիպտակից ջոկել չգիտէինք: Տեսանք, որ ժայռեր է փլցնում Տիւֆակչեւի այդ մելի-նիտը, երկաթներ փչրում, ծաւեր խորտակում, մեր ականջներն էլ ծակացրեց եւ գետին գլորեց պր. Վոսմեանին էլ հետներս<sup>33</sup>:

30.- Բնայթուց: 31.- Դամարձակութեամբ, ինքնավստահութեամբ: 32.- Շեղագիր սասերը քննուած են ձեռագրին մէջ: 33.- Խօսքը կը վերաբերի 1904ին Սոֆիա կայացած Գ.Յ. Երրորդ Ընդ. Ժողովին, ուր ներկայ էին ք. Սաֆոն եւ ք. Ա. Վոսմեանը, առաջինը իրեւ պատգամաւոր Ոսկանապատի (Պաքո), իսկ երկրորդը՝ Ամերիկայի: Յիշեցնենք, որ Ա. Վոսմեան անդամներն էլ մէկն էր Ընդ. Ժողովին կողմ ընտրուած Ցուցակահի գործը քննող յանձնախումբին:



Տեսանք ուրախացանք եւ շատ հաւանեցինք եւ առանք նրանից 10000 Ֆր. ի չափ այդ ապրանքից:

Էլլէնին, Ընդ. Ժող. ի վերջը, մինչեւ Աթէնք գումարելներս պատուիրել էինք Պարիզում տեսնուել մասնագէտներին հետ, հարց ու փորձ անել նիւթի մասին, նրա ոյժի եւայլն, նոր նիւթ, ամենաուժեղը եղածներից գրտնել ու աշխատել: Նա էլ չէր կարողացել մասնագէտի պատահել, չէր էլ նա առանձին հաւատ ընծայում առհասարակ մասնագէտներին: Չենք յիշում ինչ միջոցաւ կամ ումից բերել էր իւր հետ Աթէնք մի տեսակ հեղուկ նոր նիւթ, բայց ոչ մէկը մեզանից չիմանալով նրա քիմիական կազմը, այնպէս էլ չգիտէինք ինչ անել: Սկսեց հոտել, գարշելի հոտ տարածուեց Աթէնքի հիւրանոցում: Հիւրանոցի տէրը անհանգիստ եղաւ այդ հոտից, մենք էլ ծովը թափեցինք եւ այդպիսով փակուեց նոր նիւթի հարցը: Դիմումներ Աթէնքում կարելի էր ազատ կերպով որքան ուզենայինք ձեռք բերել, բայց քանի որ մենք ունէինք մելինիտ 1 1/2 անգամ նրանից, մեր կարծիքով, ուժեղ, ուստի եւ կարծում էինք, թէ մեր ձեռքին ունինք գոյութիւն ունեցող նիւթերից ամենանոր եւ ամենաուժեղ տեսակը:

Եթէ էլլէնին ժընեւից յայտնուել է թէ մեր մելինիտը ցածր տեսակի ապրանք է, այդ մեզ միայն զարմանք է պատճառում, որ էլլէնը պատասխանած լինի թէ մեր գործին բաւական է: Դա մենք հրաժարում ենք հասկանալ անգամ: Մեր գործը խաղալիք գործ չէր համարում էլլէնը, որ այդպիսի պատասխան տար: Իսկ թէ Տիւֆակչեւը, ինչպէս պ. Ռոստոմն է ասում, իբր թէ մեզ եւս ասած լինի թէ իւր մելինիտը չէ եւ թէ ցածր տեսակ ապրանք է, դա այնպիսի մի բացարձակ ապտակ է ճշմարտութեան հասցրած, որ մենք հրաժարում ենք խսկական անուժեղ անուանել այստեղ:

Որովհետեւ այս հարցը մեր աչքում լուրջ հարց է ներկայացնում, ուստի եւ պարտք ենք համարում այսքան երկար կանգ առնել սրա վերայ:

Անց(եալ) Ընդ. Ժող(ովի) պատգամ(աւորներ)-ից համարեա թէ բոլորս էլ անծանօթ էինք պայթ. նիւթերի ունէ տեսակի հետ: Քչերս տեսած էինք եւ շօշափած միայն դիմամիտ եւ վառուած սպ(իտակ) փոշին եւ աւելի եւս քչերս՝ հագիւ երկու երեք մարդ պայթեցրած դիմամիտի շատ փոքր քանակութիւն:

Առաջին անգամն է որ այնտեղ մեր ամէնքի առաջ երեւան ելաւ այդ դեղին փոշին մելինիտ անուան տակ եւ Տիւֆակչեւ] մի շարք փորձեր կատարեց 1, 2, 5 կիլո — ամենամեծ քանակութիւնն էր 8-ը եւ մի ահագին ժայռ պոկեց այդ հինգ կիլոն եւ ձորը նետեց:

Բոլորս էլ հիացած էինք, առաջին անգամը աչքերովս տեսնելով ոյժի այդպիսի հսկայական արտայայտութիւն: Եւ նա իբրեւ մակ(եղոնացի) յեղ(ափոխական) մեզ դասախօսում էր եւ սովորեցնում ինչպէս վարուել նիւթի հետ, ինչպէս լցնել, ինչպէս պայթեցնել: Մենք

լսում էինք նրան իբրեւ ուսուցչի նոր աշակերտներին յատուկ յարգանքով: Եւ եթէ նա յայտնում էր թէ այս 1/4 կիլոն այս ծառը կը կտրէ արմատից, եւ ծառը կտրուում էր իսկապէս:

Այ, այս 1/4 կիլոն այս երկաթուղու ըէլը<sup>34</sup> փշուրփշուր կ'անէ եւ ըէլը փշուրփշուր էր լինում: Մենք հիացած էինք: Եւ եթէ նա խօսում էր թէ այս նիւթը նոր նիւթ է, ոչ ոք չի կարող ազատ գտնել, իսկ ինքը կարող է ստանալ Պարիզից, իբրեւ բոլոր կառ. մատակարար եւ թէ այս նիւթը դիմամիտից 1 1/2 անգամ ուժեղ է — մենք նոյնպէս հաւատում էինք, ինչպէս աշակերտը ուսուցչի խօսքերին: Մի բանում միայն մեզ զգուշացրել է Սարաֆովը, թէ զգուշ եղիք, չարչի մարդ է արժէքների մէջ, որովհետեւ գալիս էր մեզ հետ փորձերի սաղ օրերով չարչարում ի հարկէ առանց վարձատրութեան, միայն պայթեցրած նիւթի դրամն էինք ուղարկում իրան. ուստի իբրեւ շնորհակալութեան եւ յարգանքի նշան — էլլէնի հետ միասին Ընդ. Ժող(ովի) ցրուելու օրերին առանք մի ոսկեայ շղթայ Հ.Յ.Դ. տառերը փորագրելով բրելովի<sup>35</sup> վերան, նրան ընծայեցինք:

Ահա այդպ(իսի) յարաբեր(ութեան) մէջ, որքան էլ որ Սար(աֆով), Լեապ(ով) ասում էին թէ զգուշ եղիք արժէքի մէջ շատ չխաբուիք — չարչի մարդ է — դժուար էր այլեւս սակարկութեան մէջ մտնել արժէքների մասին, մանաւանդ որ չգիտէինք էլ համեմատական ուրիշ արժէք չունենալով. ինչ արժէք որ ինքն էր նշանակում եւ հաշիւ ուղարկում, նոյն արժէքն էլ վճարում էինք — 8 Ֆր. կիլոյին:

(Այն ինչ, ասում են, վերջերս Պարիզում յայտնուել է, որ իսկ(ական) տեղում 3 Ֆր. են ծախում):

Եւ այդ այդպէս լինելով երեւակայն անգամ չէինք կարող թէ կարող է մի յեղ. մարդ, մեր ուսուցիչը, խաբել մեզ եւ նիւթի խառնուրդի եւ նիւթի համեմատ(ական) ոյժի մասին սխալ տեղեկութիւններ տալով:

-----  
-----<sup>36</sup>

Ապա տալիս են հարցեր՝ ինչո՞ւ չէ աւելացրել նիւթը Ռուբ(անովիչի) ցոյց տուած ձեւով.

2) Ինչո՞ւ առաջուց անալիզի չէ ենթարկել նիւթը, երբ կասկած է ունեցել նիւթի խարդախուած լինելու մասին:

3) Ինչ քանակութեամբ նիւթ է եղել մեքենայի մէջ, 80, ինչպէս Ժօռիսն է ասել, թէ 124:

34.- Երկաթուղագծի:  
35.- Ոչ թանկարժէք գոհարեղէն:  
36.- Երկու տք. ձեռագրի 70 եւ 71ը, կը պակսին:

- 4) Ինչ հեռաւորութեան վերայ է կատարուել փորձը:  
5) Ի՞նչ երաշխաւորութիւն որ այդ հեռաւորութեան վերայ աւելի քան բաւական էր այդ քանակութիւնը:  
6) Շտապելո՞ւ էինք թէ ոչ:

Ահա այս 6 հարցի մէջ ամէն ինչ ասուած է, ահա խսկական կարդինալ հարցերը:

Եւ մէկ էլ, թէ բաւականին բանաւոր են եղել Յ-ի առաջ բերած պատճառները պ(աւելի)ոնից՝ ձեռք քաշելու վերաբերութեամբ:

Այս վերջին հարցը մենք չենք համարում կարդինալ ինքնուրոյն կերպով վերցուած, քանի որ սա մտնում է ճորդ հարցի մէջ, թէ ի՞նչ երաշխաւորութիւն որ դժ. մեքենան այդ հեռաւորութեան վերայ աւելի քան բաւական էր նպատակը իրագործելու:

Եթէ դուրս եկաւ որ այո՛, իրաւունք ունէին այդպէս կարծելու եւ երաշխաւորելու, ապա ուրեմն իրաւունք ունէին թէկուզ հէնց այդ իսկ պատճառով պաւելիոնից ձեռք քաշելու:

Բայց մենք դրանով չենք հրաժարում եւ այդ հարցին պատասխանելու, թէ եւ պատասխանած ենք արդէն տեղեկագրով ամբողջ 5 երեսների վերայ աւելի քան մանրամասն:

Սկսենք առաջին հարցից.

Ինչո՞ւ Յ-ը չէ օգտուել Ռուբան(ովիչի) յայտնած միտքից՝ թէ մելինիտը եթէ հալուած լինի, ժէլէանման<sup>37</sup> — 30% կ'աւելանայ նրա ոյժը:

Մենք այս հարցը մտցրինք հիմնական հարցերի մէջ, ոչ թէ նրա համար, որ նա իսկապէս լուրջ հարց է ըստ էութեան եւ մեր գործի պայմանների, այլ այն պատճառով, որ ըստ ձեւի եւ այժմէականութեան, հնչիւն եւ ազդեցիկ միտք ունի:

Հալել՝ եւ 30% յանկարծ աւելացաւ: Թուում է այնքան պարզ եւ ազդու, ի՞նչ կայ — հալիւր եւ ահա 30% ոյժ եւ ստանում: Այդպէս է թւում նա պարզ եւ ուժեղ եւ ահա թէ ինչու մենք սրան կը պատասխանենք հանգամանօրէն՝ Պ.ներ, կարելի է, ձեզ եմ հարցնում, առանց մասնագէտ լինելու, առանց լաբորատորիա ունենալու, լինելով բոլորովին պրոֆան<sup>18</sup> քիմիայի մէջ առհասարակ, իսկ պայթուցիկ նիւթերի բաղադրութիւնների վերլուծման եւ հաւաքման օրէնքների մէջ՝ մասնաւորապէս, վերցնել մի անծանօթ պայթուցիկ նիւթ, Պոլսի պայմաններում հալեցնել, մի նիւթ, որը այնքան դժուարութեամբ ենք ներմուծել, որի վերայ ահագին յոյսեր ենք դրած, ահագին գործ ենք սպասում նրանից, վերցնել եւ հալել: Փոշին ժէլէ դարձնել, մելինիտը մի ուրիշ նիւթ: Իսկ եթէ փճացրինք, եթէ մի բան մոռացանք կամ չիմացանք եւ բռնկեց, եթէ յօնքը չիմելու տեղ աչքն էլ հանեցինք:

Պ.ներ, կարելի է, ձեզ եմ հարցնում, առանց մասնագէտ լինելու, առանց լաբորատորիա ունենալու, լինելով բոլորովին պրոֆան<sup>18</sup> քիմիայի մէջ առհասարակ, իսկ պայթուցիկ նիւթերի բաղադրութիւնների վերլուծման եւ հաւաքման օրէնքների մէջ՝ մասնաւորապէս, վերցնել մի անծանօթ պայթուցիկ նիւթ, Պոլսի պայմաններում հալեցնել, մի նիւթ, որը այնքան դժուարութեամբ ենք ներմուծել, որի վերայ ահագին յոյսեր ենք դրած, ահագին գործ ենք սպասում նրանից, վերցնել եւ հալել: Փոշին ժէլէ դարձնել, մելինիտը մի ուրիշ նիւթ: Իսկ եթէ փճացրինք, եթէ մի բան մոռացանք կամ չիմացանք եւ բռնկեց, եթէ յօնքը չիմելու տեղ աչքն էլ հանեցինք:

Ինչու անալիզի չէ եղել ենթարկուած առաջ, այլ այժմս՝ իմանալու համար նիւթի որակը:

Յաճախ է կրկնում Յ-ը թէ այս ինչ հարցը արձ. մէջ չէ շօշափուած, այն ինչ հարցը արձանագրութեան մէջ չկայ: Եւ մենք մի անգամ եւս ստիպուած ենք բացականչելու. ի՞նչ էք կարծում դուք, 28 թե՛րթ կը լինէին արձանագրութիւնները եթէ 1.5 տարուայ բոլոր հարցերն ու խնդիրները, բոլոր կատարուած ու տեղի ունեցած դէպքերն ու անցքերը, մտածմունքներն ու կարծիքները

Միթէ՞ լուրջ կերպով կարելի է հարց առաջարկել, թէ ինչո՞ւ տասնեակ հարցերի մասին մի ժամ մասնագէտի

հետ խօսելով եւ այդ խօսակցութեան ընթացքում ի միջի այլոց յայտնած հալեցնելու ձեւի մասին մի քանի խօսքերը՝ բաւարար տեղեկութիւն համարել, ձեռնարկելու համար մելինիտ հալեցնելու:

Կարծում ենք — ո՛չ: Ոչ, չի կարելի եւ չէր կարելի:

Սա այնքան պարզ, դիւրամբունելի միտք է իւրաքանչիւրի համար, որ միայն կարելի է զարմանալ յանձնախմբի հարցասիրութեան վերայ:

Մանաւանդ այդ հալեցնելու անծանօթ գործը մեզ համար կորցնում էր իւր բոլոր արժէքը այն պարզ պատճառով, որ նրա մեզ տուած նիւթի քանակը՝ 30 մետրի վերայ՝ այն տարածութեան որ մեր հեռաւորութեան մաքսիմումն էր՝ 10-15 կիլո բաւական է ասելը, երբ 30% ուժ աւելացնելու լինէինք 20 կիլո պիտի նշանակէր փոշիանմանի, իսկ մենք 124 կիլո ունինք դնելու 20ի տեղ, այլեւս չէր դարձնում այդ հարցը այնքան էլ անհրաժեշտ:

Այդ միեւնոյնը կը լինէր, եթէ յանձնախումբը մեր տեղեկագրի մէջ յայտնած այդ խօսքերի հիման վերայ, առնէր մելինիտը եւ սկսէր հալեցնել: Մենք դրած ենք այնտեղ այնքան, որքան մեզ ասել է մասնագէտը, այդ մի քանի զոյգ նախադասութեան պաշարը բաւական կարելի է համարել ձեռնարկել(ու) մի այդպիսի պատասխանատու գործի, ինչպիսին է պայթուցիկ նիւթը քիմիական նոր ձեւի փոխել: Ոչ միայն այդ, այլ եթէ ամիսներով էլ զբաղուէինք գրականութիւն ձեռք բերել, այս կամ այն կողմ ընկնել — դարձեալ ի վիճակի չպիտի լինէինք մի այդպիսի էկսպերիմենտ անելու: Մի մոռանաք, որ մեր նիւթը արդէն ներսն էր, ներսը պիտի կատարուէր այդ բոլորը եւ մենք մեր տրամադրութեան տակ ամիսներ, տարիներ չունէինք, շտապել պէտք էր:

Թէ ինչո՞ւ էինք շտապում կամ ունէինք իրաւունք շտապելու, այդ մասին վերջը:

Դեռ այդ հարցի մասին շատ բան ունինք ասելու, ապացուցանելու համար, թէ ո՞րքան մակերեւութային են յանձնաժողովի նոյն իսկ կարդինալ հարցերը:

Ի՞նչ է կարծել Յ(անձնախումբ)ը, այդպիսի հարցերի քանակո՞վ պիտի կարողանայ խեղդել Յ. Մ.ինը մի բաժակ ջրում, Մ.ի, որ այդ հարցերով ամբողջ տարի ու կէս է տանջուել<sup>32</sup>:

Ինչու անալիզի չէ եղել ենթարկուած առաջ, այլ այժմս՝ իմանալու համար նիւթի որակը:

Յաճախ է կրկնում Յ-ը թէ այս ինչ հարցը արձ. մէջ չէ շօշափուած, այն ինչ հարցը արձանագրութեան մէջ չկայ: Եւ մենք մի անգամ եւս ստիպուած ենք բացականչելու. ի՞նչ էք կարծում դուք, 28 թե՛րթ կը լինէին արձանագրութիւնները եթէ 1.5 տարուայ բոլոր հարցերն ու խնդիրները, բոլոր կատարուած ու տեղի ունեցած դէպքերն ու անցքերը, մտածմունքներն ու կարծիքները

37.- Թանձրացած հիւրի նման:

այնտեղ տեղ գտնվելին: 20 օրուայ մէջ այդ 28-30 թերթ արձանագրութիւնների մասին դուք 3 հատոր 70 թերթ քննադատութիւն էք գրել, ապա քանի հարիւր թերթ մենք պիտի գրէինք 500 օրուայ ընթացքում 15 հոգով բոլոր տեղի ունեցածը եթէ գրի անցկացնէինք: Քանի՞ բիւր թերթ: Գրելու համար էինք այնտեղ հաւաքուած, ինչ է: Շատ եւ շատ բաներ կայ, որ տեղ չէ գտել մեր գրութիւնների մէջ, ինչպէս տեղ չէ գտել եւ այն, որ Ռուբանովիչի խօսքերի համաձայն, թէ մելիտի մէջ եթէ օտար խառնուրդ լինի, նա հարուածից կը պայթի: Մենք փորձել ենք այդ Սոփիայում, Թագուր Յակոբեանի տանը եւ նա չէ պայթել: Այդ չէ մտցուած մեր թող-թերի մէջ ինչպէս եւ շատ ու շատ ուրիշ փորձեր, եւ դէպքեր, դուրսը եւ ներսը կատարուած եւ պատահած:

Մեր գրութեան մէջ այժմ գրել եւ աւելացնել «ոեւէ փաստ անյարմար է — պոստֆակտում»<sup>38</sup>, բայց մենք արհամարհում ենք այդ հանգամանքը, եթէ ոեւէ կասկած է գարթեցնելու մեր խօսքերը կասկածներով արդէն խմորուած ուղեղներում:

Միւս կողմից դժուար չէ ստուգելը Ռուբանովիչից կամ աւելի մօտ այստեղ գտնուող մասնագէտից, որ հետու չգնաք, թէ արդարեւ փորձով կարելի է ստուգել մելիտի մէջ օտար խառնուրդի ներկայութիւնը: Կարծում ենք, պէտք է ասեն, այո՛, որովհետեւ Ռուբանովիչը մեզ այդպէս ասաց: Իսկ եթէ փորձել եմ թէ ոչ, քանի որ պոստֆակտում է ասածս, առաջարկում եմ վերցնել մեր այսպէս անուանած մելիտիսը եւ հարուածել, նա չի պայթի<sup>39</sup>:

Սրանից ի՞նչ եզրակացութիւն, որ մեր մելիտիսը խարդախուած չէ՞ ուրեմն, ո՛չ, որովհետեւ մերը՝ մելիտիս չէ եւ այդ իմ կատարածս փորձը մերի(նի) վերաբերութեամբ ոչինչ չի ապացուցանէ: Յամենայն դէպս, այս հարցերի լուծումը մենք կը ստանանք մասնագէտներից, ուրեմն աւելորդ ժամավաճառութիւն չանենք այստեղ դրա մասին:

Մենք օգտուել ենք նաեւ Ռուբանովիչի խոնաւութեան մասին յայտնած մտքերից եւ որովհետեւ միտք է ծագել Պոլսից Աշոտի կարծեօք գրուած նամակից թէ նիւթը թերեւս խարդախուած է, թերեւս խոնաւացած, բերել ուսուց մի նոր գիւտ նիւթից եւայլն:

Խարդախուած լինելը մենք ի սպառ մերժել ենք նոյնիսկ հաւատալ, գտնելով այդ ամբողջ նամակը կասկածոտ. Գուցէ ես սխալուած եմ եւ իմ կասկածներս՝ անտեղի եւ անարդար. բայց այդ այդպէս է եղել: Ապացոյց ահա ձեզ իմ նամակը ժընեւ գրուած, որտեղ խօսուած է միայն խոնաւութեան մասին. կասկածելու աւելի առիթ տուին եւ ուրիշ նամակներ Աշոտի կողմից, թէ իրան տեսել են, պտրուած են եւայլն: Հարցը այստեղ Աշոտի մասին չէ այլ, թէ ո՞վ էր կասկած յայտնողը նիւթի խարդախուած լինելու մասին:

Ամբողջ մի տարի Պոլսում ենք, նիւթը այնտեղ է ար-

դէն հազար ու մի դժուարութիւններով ներս մտցուած: Մեծ գործի օրերը մօտեցել են. ամէն ինչ շտապում է՝ եւ ինքը գործը ինքնին եւ Սոփի(այի) աղէտը եւ ներսի ընկերներին .....<sup>40</sup> ձանձրացել են, ճնշուել — ամէն ռուպէ վախենում ես թէ հա՛ պիտի բացուի գործը — եւ ահա ոչինչ փորձ չարած, ոչինչ նոր բան չեղած, վեր կենալ եւ գրել թէ մեր նիւթը գուցէ խարդախուած է, գուցէ խոնաւ է, ուսուց ինչ որ նիւթից ձեռք բերել: Ի՞նչ նիւթ, ո՞րտեղից ձեռք բերել՝ ինչպէս կարելի էր լուրջ նշանակութիւն տալ այդ կասկածելի մոտիւններով<sup>41</sup> գրուած նամակին:

Սակայն, այնուամենայնիւ գրեցի Պոլիս, որ մեր նիւթից ուղարկեն պոստով խոնաւութիւնը փորձելու համար: Եւ փորձեցի, ինչպէս գրուած է արձ. եւ կարծ(եմ) տեղեկագրի մէջ եւ գտայ որ խոնաւ չէ:

Դրան ապացոյց եւ այս նամակը .....

Արդեօք յանձնախումբը ստանալով այդ իմ նամակը ժընեւ գրուած<sup>42</sup>, թէ ընկերները կասկած են յայտնում թէ չլինի թէ նիւթը խարդախուած է եւայլն, նոյն արխիւում չգտնուե՞ց եւ իմ պատասխանը Պոլիս ընկերներին այդ նամակի պատասխանը: Ես չեմ պնդում թէ նա անպատճառ արխիւում պէտք է լինի: Գուցէ լինի, գուցէ Պոլսի թղթերի հետ այդ նամակս էլ ուղարկուած լինի: Եւ եթէ կայ, խնդրում եմ առնել եւ կարդալ եւ դուք պիտի տեսնէք նրանից թէ ինչ եմ ես պատասխանած:

Գալով խարդախուած լինելու կասկածին (եւ միտքն եմ գրում ի հարկէ յիշողութեամբ), այդպիսի կասկածը բոլորովին անհիմն է, ոչ մի միտք չունի: Լա՛ւ, որքան էլ որ չարչի է այդ մարդը, բայց չէ որ ոեւէ նպատակ պիտի ունենայ չարչիութիւնը: Դրա՛մ վաստակել շա՛տ: Բայց չէ՞ որ մենք նրան վճարում ենք առանց սակարկելու, այնքան, որքան ինքն է որոշում...


Ուրեմն այլեւս ի՞նչ միտք պիտի ունենայ մի այդպիսի հրէշաւոր յանցանք էլ գործել մի մարդու, որը այսպէս թէ այնպէս Մակ. Յեղ. հետ կապուած է, ինքն էլ յեղ. Սարաֆովի յանձ(նարարածը) եւայլն:

Նա շատ լաւ գիտէ, որ իւրաքանչիւր կիրոյին եթէ մի ոսկի էլ պահանջէր, մենք չէ չէինք ասել: Այս դէպքում այլեւս ձեռ կասկածները բոլորովին կորցնում է հողը: Այդպէս էի մտածում եւ այդպէս էլ գրած եմ: Եթէ նա-

38.- եղելուքնէն ետք, յետին թուով. ժողովրդական լեզուով բանը բանէն անցնելու ետք:  
39.- Չեռագրին մէջ ջնջուած այս նախադասութեան ետք, էջին տակ Սաֆոյի ձեռագրով բայց կարմիր մելամով գրուած է. «Կարդալ այդ նամակի կտորը»: Ապա, յաջորդ էջի լուսանցքին վրայ աւելցուած «Այս կտորը գրել էի արդէն յիշողութեամբ երբ կարդալով Ռուբ(անովիչի) նամակը մենք հանդիպեցինք հե՛նց այդ կտորին» (ձեռագրին մէջ էջ 78-79):  
40.- Անընթեռնելի բառ:  
41.- Դրդապատճառներով:  
42.- ժընեւ ուղարկուած Սաֆոյի նամակը տուած ենք Գ. Բաժնին մէջ: Տես էջ 437:

մակը չկայ, Թորգոմ կայ, Աշոտ կայ, նրանք չեն կարող չլիչել իմ պատասխանը:

Բացի այդ բոլորը, չպէտք է երբեք մոռանալ, թէ ի՞նչ կարող էինք հասկանալ քիմիական վերլուծումից իսկ, եթէ վերլուծել տայինք օր. բոլ. լաբորատ(որիայում) եւ ստանայինք թէ այս ձեռ նիւթը կազմուած է՝



այդ անալիզը ի՞նչ պիտի ասէր մեզ — ոչինչ եւ ոչինչ: Ինչի՞ց գիտէինք եւ այժմս էլ դեռ չգիտենք, թէ իսկական մելիտիսի կա՞զն քանի KC է կամ AC:

Ոչ միայն KC մենք չգիտէինք առաջին անգամը, իսկ այդ մելիտիս բառը կը լսէինք 904 թուականին այլ եւ մեր ձեռքերած գրականութեան եւ պ[այթուցիկ] նիւթերի ձեռնարկների մէջ էլ, իբրեւ նոր նիւթ չկարողացանք գտնել մելիտիսը:

Մեր միակ աղբիւրը այդ նիւթի վերաբերութեամբ Տիւֆակչեւն էր. նա էր մեզ սովորեցնում եւ ուսուցանում, նա էլ մեզ վաճառում էր եւ մեր փորձերին մասնակցում:

Այս բոլորից արդեօք բաւականի՞ն պարզուեց, թէ ինչու չհալեցինք մելիտիսը 30% վաստակելու համար, որովհետեւ շատ հաւանական էր թւում 30 վաստակելու տեղը 70ն էլ կորսնցնել, ամբողջ 100ն էլ: Եւ, տեսէ՛ք, թէ այժմ ինքներդ պիտի տեսնէք, որ լաւ է որ չենք հետեւած յանձ. ի թեթեւ վերաբերմունքին դէպի լուրջ հարցերը:

Երեւակայեցէ՛ք, թէ այն գիտական պաշարով ինչ մերն էր, եւ մտածելով այնքան մակերեւութային, ինչպէս յանձն. է արել, վեր առնէինք հալելու մեր «մելիտիսը»: Եւ որովհետեւ նա բոլորովին մելիտիս չէ, այլ strait, իսկ Ռուբ(անովիչի) ասածը մելիտիսին է վերաբերում, ուստի ինչ պիտի դուրս գար՝ չգիտենք ինչ, բայց յամենայն դէպս 100՞ տաք(ութեան) վերայ թերեւս սա պայթէր, թերեւս բոլորովին փճանար, իսկ պիկրին<sup>43</sup> դառնալ եւ այլն էլ քիչ[?] է դեռ քանի որ պիկրինի հետք անգամ չկայ: Մենք չգիտենք թէ ինչ պիտի դառնար, գուցէ յանձնախումբը գիտէր, որ բերթ[ուխտեան] աղն էլ 100՞ ջերմ. տակ ժէլէ կը դառնայ:

Եւ այդպիսով պիտի խայտառակուէինք աւելի եւ կամ աւելացնէինք մեր օրագրութեան մէջ մի նոր աղէտ: Եւ լաւ է եթէ աղէտը վերջ դնէր մասնակցողներին: Իսկ եթէ դժբախտ մի պատահարով այդ նոր էքսպերիմենտի<sup>44</sup> հեղինակը ինքը կենդանի մնար եւ, գործը վիժուած, բոլոր ընկերներին կորցրած, ու ինքը այստեղ, այս ժողովին առաջ, դժբախտութիւնը՝ ունենար ներկայանալու եւ լսելու այս յանձնախումբի մեղադրականը: Միթէ առաջին հարցը լինելու չէր այն, թէ ինչ իրաւունքով կարելի է առանց մասնագէտ լինելու, լոկ մի քանի խօսքերի հիման վերայ, մի քանի կտոր բրոշիւրներ կարդացած, քիմիական այդ տեսակ փորձեր

կատարել: Եւ միթէ՞ հարկաւոր էր այդ. չէ՞ որ Ռուբ(անովիչ) ինքն ասաց թէ 20 կիրոն բաւական է խստիւ հալելով, իսկ դուք 20ի տեղ 120 ունէիք: Միթէ հնարաւոր է ամբողջ գործի բախտը վտանգել այդ տեսակ թերուս փորձերով:

Կարծում ենք այսքանը բաւ է այդ երկու հարցերի մասին<sup>45</sup>:

Նիւթի քանակը

Ո՛րքան է եղել կառքի մէջ 124 կիրո, թէ 80, ինչպէս ժորիսն է ասում: Սա մի այնպիսի հարց է, որի համար երկար խօսել չարժէ. 124 եւ ոչ 80: Դա այնքան հեշտ է ապացուցանելը եւ այնքան պարզ եւ անհերքելի, որ ես այստեղ ձեռ աչքերի առաջ այդ կը դարձնեմ անհերքելի իսկոյն այս իսկ ժողովում: Նախ եւ առաջ, ժորիսի մասին: Նա այդ չէր կարող իմանալ, նա չգիտէր

(Վերցրէ՛ք կառքի սնտուկի տարածութիւնը, որքան յիշում ենք «Կարմիր մարդ[ասպանի] դէմ» գրքում պէտք է լինի չափել

Երկար[ութիւն] — 75  
Լայնութ. — 1 մետր 33, 40  
Խորութիւն — 2,5  
» II — 40)

Յետոյ վերցրէ՛ք մէկ կիրո մելիտիսի ծաւալը, որը շատ թոյլ լցուած — 750 խ.ս.  
ամուր լցուած — 700 խ.ս.  
Շատ ամուր լցուած — 600 խ.ս.

Եւ հաշուեցէ՛ք: 124 կիրոն կը տեղաւորուի մի արկղում, որի ծաւալը պէտք է լինի 124x 600= 74,400 խ.ս. — դա կը նշանակէ 0,07 խ. մետր միայն:

Այլ կերպ ասած՝ մի արկղ որի կողմերը 44 սանտիմետրի է հաւասար: 44 սանտիմետրի մելիտիսի կշիռը եւ

43.- Acide picrique, մելիտիսի առեւտրական անունը:  
44.- Գիտական փորձ. ընդհանրապէս՝ փորձարկութիւն:  
45.- Չարմանալի է որ Սաֆո իր այս պաշտպանողական ընթացքին բացայայտօրէն չ'ընդունիր որ գործածուած մելիտիսը խարդախուած էր, երբ ընդ. ժողովին ներկայացուցած իր ընդարձակ տեղեկագրին մէջ, «Սահափորձի անյաջողութեան պատճառները» գլուխին տակ, որոշ կերպով կը գրէ. «Մեր պայթուցիկ ցիւքը խարդախուած էր: Այո, խարդախուած. ահա այն սարսափելի ծակատագրական սխալը, որ մենք արինք, հաւատալով, մտքերիցս անգամ չանցկացնելով մի այդպիսի խարդաւանք, որը դժբախտաբար իրականութիւն է այսօր: Մի մեծ գործ գոհ գնաց այդպիսով խարդախանքի» (էջ 27ա): Քիչ մը անդին  
«Բայց այժմ մեզ համար պարզուած է որ դժբախտութիւնը բոլորովին ուրիշ պատճառներից է եկել, որ չարչի վաճառակաւը [Տիւֆակչեւ], մի քանի հազար ֆրանք մեզանից աւելի վաստակելու համար, տուել է մեզ ամենացածր տեսակի մելիտիս, եթէ միայն դրան մելիտիս անունը կարելի է տալ: Փորձերի ժամանակ (միշտ միասին ենք արել դժբախտաբար) գործածելով մաքուրը, նա վաճառել է մեզ խարդախուած մելիտիս, ամենացածր տեսակի: Այդ այլեւս փաստ է եւ անհերքելի» (էջ 27բ):

ծաւալի չափը կարող էք իմանալ ահա այս 87 չափով: Մեկինիս ունիք ձեր ձեռքին:

Ապա գալիս է հեռաւորութեան հարցը: Այդ մասին արդէն իրա տեղում խօսեցինք, թէ այն երկու կէտերը, առաջին դրան աջ կամ ձախ կողմերում ուր որոշուած եւ պատուիրուած էր կանգնել: Միասին եղել ենք այնտեղ եւ Ռուբինայի ու Ջարեհի հետ ընտրել եւ մատնանշել տեղերը: այդ կէտից մինչեւ ուղղահայեացի գագաթը ոչ աւելի է քան 20 քայլ եւ եթէ նա բռնուէր ոչ գագաթին, որ ամենակարճ շառաւիղն է ի հարկէ այլ 6-7 քայլ յետ կամ առաջ — կը ստացուէր 25 քայլ: Իսկ թէ իրականապէս մահափորձի օրը ուր է եղել կանգնած կառքը, այդ մասին կ'ասէ ինքը, կանգնողը: Հաւատալ նրան թէ Լեապովին, կամ տաճկ. աղբիւրներին, այդ ճաշակի խնդիր է. մենք հաւատում ենք Ջարեհին եւ Ռուբինային մինչեւ որ անհերքելի փաստեր չներկայացուէ:

Յամենայն դէպս կանգնել 100 մետրի վերայ, ինչպէս յանձնախումբն է կասկածում չէին կարող, չէին անի ոչ մէկը եւ ոչ միւսը, դա կը լինէր ոճիր, նմանը չլսուած:

Ի՞նչ երաշխաւորութիւն, հարցնում է յանձնախ. թէ այդ տարածութեան վերայ մեր ունեցած զէնքը բաւական կարելի էր սեպել:

Արդէն մենք աւելի քան մանրամասն պատասխանած ենք այդ հարցին տեղեկագրի մէջ՝ թերթ 12, 13, 14, 15, ամբողջ չորս թերթ խօսում է այդ երաշխաւորութեան մասին եւ դարձեալ նոյն հարցը դրւում է:

Կարդալ յիշեալ երեսները:

Համառօտել՝ Մ[ոցիսալ] Ռ[եւոլյուցիոներն]երի յայտնի մասնագէտը Պարիզի մասնագէտ Ռուբանովիչը, եւ մեր անձնական փորձերը:

Բայց առաջ քան այդ փորձերին անցնելը մենք կը կարդանք ձեզ այստեղ մի նամակ, բաւականին ընդարձակ նամակ, գրուած Խոյից Վանի մարմնի անդամ Սարգիսի կողմից: Մեծ քաջութիւն է պահանջում մեզանից կարդալու այս նամակը, աւելի եւս մեծ, քանի որ դէպի նա տածել ենք որոշ ընկերական զգացմունքներ, բայց թող կատարուի եւ այս վերջին փորձութիւնը որպէսզի բաժակը լիքը լինի մինչեւ բերանը, պակաս տեղ չմնայ:

Թէ նա անձնական հաշիւ չէ ունեցել դէպի Սաֆոն եւ Յուլիանի) միւս անդամները: Եւ թէ միւս անգամ թող աւելի զգոյշ լինի եւ մի երեսի մէջ 150 մետրը միւս երեսի մէջ 300 մետր չդարձնէ. այդ արդէն բոլորովին անյարմար է, աչքի է զարնում:

Իսկ հայհոյանքները՝ այդպիսիք Սաֆոն չի վերադարձնում Սարգիսին, որովհետեւ նրան արժանի չի համարում դրանց, այլ թողնում է նամակի մէջ մնալ մինչեւ Դաշնակցութեան պատմութեան դատաստանը:

Այս նամակից դուք կը տեսնէք, որ արշաւանք է սկսուած մի մարդու դէմ եւ գալիս են կամաւորները Խոյից, Վանից եւ Ամերիկայից՝ Յորդանանի այս կամ այն ակերից զինուած զրահաւորուած Քրիստափորի մեծ հեղինակութեամբ, յանուն նրա յիշատակը մաքրելու, նրա ծիրանու տակ պլլուած<sup>32</sup>:

Այս նամակից դուք աւելի լաւ պիտի ճանաչէք թէ ով է Սաֆոն, եթէ մինչեւ այժմս չէիք ճանաչում:

Նա — խեղճ ողորմելի է:  
Նա — խեղկատակ է եւ ստոր,  
Ստոր է եւ

Սրիկայ է եւ մարդկութեան թափթփով եւ վերջապէս ամենավերջին սրիկան է Աշոտի հետ միասին: Լա՛ւ զոյգ է, չէ՞, Սաֆոն եւ Աշոտը: Սաֆոն որ հեռացրել է Աշոտին Մարմնից<sup>46</sup>:

Այս նամակը կարդալուց վերջ է միայն ես հասկացայ պ. Թոփեանի ասածների ամբողջ ճշմարտութիւնը, թէ յանձնախումբը շատ մեղմ է վերաբերուել դէպի մեզ եւ թէ իրականութիւնը շատ աւելի մուսլ է, քան նոքա ներկայացրել են: Իրականութիւնը, երեւի Սարգսի այս նամակն է պատկերացնում, որը ահա կարդում եմ:

Կարդալ:  
Այսպէս ուրեմն, այս նամակը կարդալով, յետ ենք դարձնում յանձնախումբին նրա մեծահոգութիւնը դէպի Յուլիանը:

Կարծում ենք մուսլութեան իսկական պատկերը տալիս է այս նամակը, որից քաղուածքներ կան եւ յանձնախումբի գեկուցման տեխնիքական մասի մէջ:

Արդե՞ք կարող է յանձնախումբը մեզ հաւաստիացնել, թէ այս նամակով վերականգնուած է իրականութիւնը իւր իսկական գոյնով: Եւ թէ նա ոչինչ մուսլ իրականութիւն չի մնում պարտք Յին ի հաշիւ նրանց մեծահոգութեան: Ոչինչ չունէր նա աւելի ասելու, եթէ չցանկանար ներողամիտ լինել: Մենք սպասում ենք յանձնախումբի պատասխանին:

Նոյն հարցով մենք դիմում ենք ժողովին: Արդեօք ո՞ւր է մէկը չունի ոչինչ աւելացնելու սրա վերայ:

Ո՛չ:  
Իսկ օր. Ռուբինա՞ն:  
Այժմ դառնանք այս... նամակին:  
Սարսափելի է... բայց պէտք է դառնալ — ճարերս ինչ է: Ընկել ենք, պէտք է քաշենք:  
Աշխատինք լինել սառնասիրտ, չհետեւինք նամակի

46.- Արդարեւ, Քրիստափորի եղբորական մահէն ետք, Յուլիանի մնացեալ անդամները, գլխաւորութեամբ Սաֆոյի, կ'որոշեն դադարեցնել իրքեւ անվստահելի Աշոտը (Աշոտ Բագրատունի, եղիկեան) առանց սակայն ենթակային տեղեկացնելու այդ մասին: Յուլիանի թղթաժողովին մէջ կը գտնուին Աշոտի կողմէ Արեւմտեան Բիւրոյից եւ Ընդի. ժողովին ուղղուած շարք մը բողոքի ցանկներ այս անօրինակ եւ անարդար դադարեցման, աւելի ճիշդ մեկուսացման դէմ:

օրինակին:

Ինչ է ներկայացնում այս նամակը: Մի նոր եւ մերկապարանոց մեղադրական ակտ: Ածականները, յեղափոխական բառարանի ամբողջ ածականները հաւաքենք նախ եւ առաջ մի կողմ եւ յետ դարձնենք Սարգսին, ո՛չ: Նա մեղաւոր չէ:

Թող մնան սոքա առ այժմ այս նամակում, մինչեւ տէրը ինքը գայ տանի:

Բացի ածականներից կան այստեղ թուեր, թուերն են գլխաւորը: Ածականները այդ թուական փաստերի հետեւանքներն են: Եւ այլ են գործածուած նրանք, շատ թուեր տեսակներից են, ի՞նչ արած, արմատն է գլխաւորը: փաստերը, ածականների առատութիւնը երկրորդական է:

Ի՞նչ է ասում այս նամակագիրը. թէ Յուլ. մարմինը, գլխաւորապէս Սաֆոն, եւ Աշոտը, մնացածները կամ միամիտներ են եղել կամ անբարեխիղճ ստոր արարածներ: Թողնենք մի կողմ այդ միամիտներին, ինչպէս եւ Աշոտին, թող մնայ Սաֆոն մենակ: Սաֆոն, ուրեմն գիտակից յանցաւոր է մահափորձի անյաջողութեանը: Ի՞նչ է նշանակում այս: Թէ Սաֆոն, գիտենալով հանդերձ որ պիտի չսպանուի Սուլթանը, բայց կոտորած պիտի լինի (նամակում նա այդ էլ է ասում) այդ անխուսափելի է, այնպիսի մի ձեւի տակ է արել, որ ինքը կենդանի մնայ, իսկ փորձը՝ փոյթ չէ թէ չյաջողուի:

Նամակագրի թեզաները հետեւեալներն են՝

- 1) Սաֆոն գիտէր որ փորձը չպիտի յաջողուի «Գիտակից յանցաւոր մահափորձի վիժման»:
- 2) Սաֆոն գիտէր, որ եթէ չաջողուի — բիւրաւորների արեան գնով կոտորած պիտի լինի հայերի: (Սորհրդում եմ ասել այդ):
- 3) Սաֆոն այնուամենայնիւ կատարել է այդ փորձը: Ինչպէս տեսնում էք, մեղադրանքը խիստ է ծանր: Նոյնքան հին, որքան ինքը դ-ն է հին, մի հին, հին դաշնակցական այս ժողովի էն հերից, մեղադրուում է ոչ աւելի ոչ պակաս, դաւաճանութեան մէջ, ո՛չ, յայնկոյս դաւաճանութեան, իւր փառասիրութեան եւ առատադրամ գուարճութեան, վայելքների, բիւրաւորների արեան գնով:

Սա ոչ թէ ընկերասպանութիւն է, այլ ժողովրդասպանութիւն:

Եւ թէ չենք սխալուած նամակի մէջ արտայայտուած մեղադրանքի բնոյթը այդ կերպ որոշելով, դրան ապացոյց նրա առաջարկած պատժի չափը, ամենալաւ դէպքում — արտաքսել Դաշնակցութիւնից: Ամենամեղմն է այդ: Իսկ վերջում — սպառնալիքը՝ կը գտնուի մի խենթ, որը իր ձեռքով կը կատարէ մաքրման այդ գործը:

Ողորմի՛ր մեզ Տէ՛ր:  
Եւ նկատեցէ՛ք նա Սաֆոյին անծանօթ չէ, բարեկամներ են եղել, նոյնիսկ ընկերներ:  
Ուրեմն պէտք է որ շատ լուրջ լինին ու ծանրակշիռ,

անհերքելի այն փաստերը, թուերը, որոնք ծնունդ են տուել մի այդպիսի մեղադրանքի:

Տեսնենք ինչ են ասում այդ սարսափելի թուական փաստերը: Թուեր, ի՞նչ աւելի ամուր բան կայ անխորտակելի 2+2 էլ 4 կ'անի: Ինչպէս հերքել այդ չորսը:

Մենք սոսկում ենք զգում, մօտենալով այդ թուերին...

Սարգիսի տեղ ենք սոսկում մենք:

Երեւակայեցէ՛ք մի վայրկեան, որ մի այդպիսի ծանր մեղադրանքով այդքան պաթոսով<sup>47</sup> առաջ նետուած մարդը, որը թուերով զինուած մա՛հ, մա՛հ է աղաղակում, լաւագոյն դէպքում դո՛ւրս Դաշնակցութիւնից — կանչում, իբրեւ ապացոյց առաջ է բերել 7x7=707: Կամ

Երեւակայեցէ՛ք ձեզ մի ըրալէ մի այդպիսի դրութիւն, եւ դուք եթէ զգայուն մարդ էք, պիտի սոսկաք եւ սարսափիք... մեղադրողի փոխանակ եւ կարմրի՛ք:

Ես յայտնում եմ նախապէս, որ հարիւր անգամ փառք եմ տալիս Նախախնամութեանը, որ այս ըրալէս ես եմ մեղադրուողը, չէի ցանկանալ Սարգսի տեղը լինել: Ես հպարտ եմ այստեղ մենակ լինելուս զգացմունքովը, մէ՛ն մենակ... այսպիսի մեղադրութեան առաջ, իմացած եղիք:

Դէհ լսեցէ՛ք եւ զարմացէ՛ք մարդկային հոգու խորշերի հարստութեանը, ինչե՛ր նրանք չեն թաքցնում եւ ինչեր չեն արտահանում իբրեւ ճշմարտութիւններ:

Ո՛րքան ստրիկ[տ] ու զգոյշ պէտք է լինի մարդ իւր ասածների մէջ, իւրաքանչիւր բառի, փաստի մէջ, երբ հարցը վերաբերում է մի մարդու վերայ այդպիսի ծանր յանցանք բարդելուն:

Առաջ քան այդ զարմանալի թուերին անցնելը, անցողակի կերպով ցոյց տանք, թէ որքան ստրիկ է նամակագիրը, որքան ճշմարտութիւններ պտորոզ իւր այս գլուխ գործոց մեղադրականում: Բանահիւսութիւն չէ դա, Արամ Չարբի «Վիտոզի բագէն»<sup>48</sup> չէ, որ ներուր այնտեղ լցնել վագրերով, առիւծներով ու արծիւներով, երբ նապաստակ ու հաւ էլ չկայ այնտեղ, դա մի մեղադրական ակտ է. համարձակ եւ առնական ժեստով հրապարակ եկած, յանուն մաքուր գաղափարի, յանուն ճշմարտութեան:

Ուրեմն ճշմարտութիւնների դէմ եւ ոչ մի տող եւ [մի] բառ այդ նամակում տեղ չպէտք է ունենայ:

«Ինչո՞վ էք քացատրում այս բոլորը», ասում է նամակագիրը (այսինքն, որ գիտակցօրէն վիժեցրին գործը, դաւաճանել են գաղափարին):

«Ինձ համար պարզ է, փողը առատ է եղել»:

47.- Խանդավառութեամբ, ներշնչումով:  
48.- «Վիտոզի բագէն» Քրիստափորի եւ Էդուարդի (Վռամ-չապուի Քենտրիեան) նուիրուած բանաստեղծական պոեմ է, որմէ հատուածներ՝ անոնց մահուան առաջին տարեկիցն տալուած են «Պոչակ»ի 1906 տարուան Մարտի թիւին մէջ: Դեղինակը՝ Վտարանդի ստորագրութեամբ՝ Արամ Չարբի է:



Մի ուրիշ տեղ՝

«Ոչ միայն յեղափոխական անձը, յետին գձուձ վաշխառու, վերջին սրիկան անգամ այդպիսի առատ դրամ ստանալուց վերջը կը գնայ գործի»: Այդ ո՞ւմ մասին է: յետին գձուձ վաշխառու, վերջին սրիկան — կը գնայ գործի երբ այդքան դրամ կայ:

Սաֆոյի, իմ մասին:

Ճշմարտութիւնը չեմ ասում, ճշմարտութեան հետք, մի նշոյլ անգամ կա՞յ այս ամբողջ պարբերութեան մէջ, իմ վերաբերութեամբ, հարցնում եմ ես այստեղ իմ նախկին ճանաչողներին:

Մեղադրող պոն-ին քաջ յայտնի է եւ հաշիւներներն էլ այստեղ են, որ այդ գուարճալի պայմանների մէջ իմ անձնական ծախսը չէ եղել աւելի 250-300 Ֆրանկից: Իսկ տանը ստանում էի ես 400 Ֆր. ուձիկ: Նրան քաջ յայտնի է, որ Սաֆոն գնացել է գործի ոչ միայն դրամի առատ ժամանակ, այլեւ բոլորովին աղքատ ժամանակ, երբ 5000 ու. էր Դաշնակցութեան տարեկան ամբողջ բիւջէն: Նրան քաջ յայտնի է, որ Սաֆոն գնացել է գործի եւ այն ժամանակ, երբ Դաշնակցութիւնը բիւջէ էլ չէ ունեցել եւ Դաշնակցութիւն բառն էլ դեռ չէր ծընւել...

Սա, այս կտորը միայն, բաւական է որ ես կարմրեմ Սարգսի տեղ եւ սարսափիմ նրա հոգեկան ոչ ստրիկ<sup>28</sup> դրուձիւնից այդպիսի մի նամակ գրելիս:

Բայց նա չարաչար մեղանշում է այդ հարցում եւ գիտակցորէն ճշմարտութեանը հարուածում, երբ նրան քաջ յայտնի է, որ ոչ միայն սրիկաներ եւ գձուձ վաշխառուներ այդպիսիք չկային Դաշնակցութեան մէջ, այլեւ յեղափոխական շատ անձեր չցանկացան վայելել սուլթանասպանութեան գուարճութիւնները Պոլսում:

Նրան նոյնպէս քաջ յայտնի է, որ դրամի առատութեան այդ վայրից մեծ եռանդով հեռանալ, արձակուրդ ստանալ էին խնդրում ոչ թէ սրիկաներ կամ վաշխառուներ, այլ մաքուր անցեալով յեղափոխականներ, եւ հեռացան:

Խօսելով էլլէնի մասին նա պատմում է, թէ ինչպէս է ազդել նրա վերայ Սուլթանի հիւանդութեան լուրը: մըռայացել է եւ անհամբեր լուրի, ապա նոր հեռագրի սպասել անհանգիստ թափառելով սենեակում, վախենալով, թէ չլինի իւր մահով մեռնի: Բայց նոյն Սարգսի չունեցաւ իւր բառերով ասած՝ պարզ քաղաքացու քաջութիւնը ասելու, թէ ի՞նչպէս ազդեց նոյն լուրը, Սուլթանի հիւանդութեան լուրը, մի ուրիշ մարդու վերայ էլ, ժընեւում, — Սաֆոյի վերայ: Սարգսի ժընեւում էր, նա չէր կարող չտեսնել այդ: Տեսաւ, բայց...

Եթէ նա լուց, գուցէ պոն. Ռոստոմը խօսի այդ մասին — եթէ կամենայ խօսել եւ մտաբերել թէ ինչպէս ազդեց այդ հեռագրական լուրը Սաֆոյի վերայ եւ ինչպէս օր[ինակ] բժ. Լորիսի վերայ:

Այս միջանկեալ նկատողութիւններն անելուց վերջը,

ցոյց տալու համար մեղադրողի անաչառութեան չափը եւ այդքան ազատ վերաբերութիւնը դէպի ակնյայտնի ճշմարտութիւնները, փաստերը, որոնք ամենայն դիւրութեամբ կարելի է ստուգել հէնց այս ժողովում, այստեղ ներկայ եղող պատգամաւորների միջոցաւ, անցնինք նրա թուերին: Տեսնենք թէ այդ ինչ 40,000 կիլոյի պայթում են տեղի ունեցած եթէ չի սխալուում նամակագիրը — Բարսելոնում: Նկատեցէք, այստեղ մի վերին աստիճանի բնորոշ կէտ կայ այս եթէ չեմ սխալուում «միջանկեալ նախադասութեան» մէջ: Տեսէ՛ք, որքան է նա լուրջ եւ զգուշաւոր փաստերին հետ, որ հարկաւոր է համարում նոյնիսկ քաղաքի անունը յիշելիս, աւելացնել, եթէ չեմ սխալուում յաւելուածը: Թուում է թէ ի՞նչ նշանակութիւն ունի Բարս[ելոնում] թէ Մատրիտում է տեղի ունեցել յիշեալ դէպքը: դա միեւնոյնն է, բայց անաչառ գրողը լաւ չի յիշում քաղաքի անունը դրա համար էլ չի ուզում որ ոեւէ թէկուզ աննշան սխալ լինի իւր գրուածքի մէջ, այդքան նա մաքուր եւ լուրջ է վերաբերուել ուրեմն:

Լա՛ւ: Արձանագրենք այս:

Ուրեմն 40,000 կիլոն, նիւթի քանակը, կասկածից դուրս է, նա այդ լաւ է յիշում որ 40,000 է եղել: Ստիպւած եմ հիասթափեցնել ժողովիդ եւ այս կէտի նկատմամբ:

Բաց եմ անում յիշատակարանս, եւ կարող եմ ապշում եւ սարսափում նոյն թիւը Սարգսի առաջին մեղադրական նամակում, չէ՞ որ սա երկրորդն է, ինչպէս ինքն է գրում, սրանից առաջ նա մէկն էլ ճիշտ նոյն բովանդակութեամբ գրել էր Տիխիսի Խորհրդին, եւ այդ նամակը հրապարակ էր եկել Տիխիսի դատին: Բաց եմ անում յիշատետրս եւ կարող եմ

38000 կիլո պայթած, Բարսելոնում...

Մի քանի ամիս վերայից անցնելով — 38000ը 40000 է դարձել... 4000 կիլո աւելացել...

Այն նամակում գրուած էր՝ «38000 կիլո, հասկանո՞ւմ էք, 38000 կիլո»

Այստեղ՝ 40000 կիլո, հասկանո՞ւմ էք:

Ի՞նչ է նշանակում 40000 կիլո բացականչում է անաչառ դատաւորը: Մնում է ինձ բացականչել:

Հասկանո՞ւմ եմ, այո՛, հասկանում, ինչ է նշանակում:

Այս փաստի, 4000 վերադիր է նշանակում 4 ամսուայ մէջ, տիտուր փաստի վկաներն են՝ Տիխիսում հինգ դատաւորները՝ Ա. Յ. Ք. Ար. Թ...: Այստեղ՝ այս ժողովում՝ Բժ. Հ., Բ. Չ., Ռոստո.:

Սարգսի, ինչպէս տեսնում էք այս նամակից, չափից դուրս շահագրուած է Վիշապի հարցով. նա չէր կարող բնականաբար չհետաքրքրուել Տիխիսի դատով եւ նրա վախճանով: Բնականաբար ընկերները չէին կարող նրան չգրել, թէ ինչպիսի գնահատութեան արժանացաւ

նրա 38000ը, հասկանո՞ւմ էք 38000ը Սաֆոյի եւ դատաւորների կողմից: Այժմ նա, փորձում է գործը ուղղել մի փոքրիկ յաւելուածով — 4000 կիլոյի յաւելուածով:

Տգիտութի՛ւն: Այդ 4000 էլ նրան չի օգնելու ինչպէս կը տեսնենք իսկոյն: Եթէ աւելացնէր եւս 10000 կիլո, 50000 դարձնէր 38000ը — դարձեալ դուրս էր գալու՝ 7x7=707 եւ ոչ 49:

այս անգամ 7x7 — 700 է դուրս գալիս:

Անցնինք այդ նրա թուերին:

Մեծահոգի լինենք, վերցնենք նրա յաւելեալ նոր թիւը — 40000 կիլո:

Ի՞նչ է Սարգիսի ապացուցանել ցանկացածը. այս թուերով նա ասում է, որ Սաֆոն քանի որ կարողացել էր այս դէպքը, թէ 40000 կիլոն պայթելով ներգործել է մէկ կողմում ճիշտ է շատ հեռու՝ մէկ երկու հազար մետրի վերայ, բայց միւս կողմում մինչեւ 150 մետրի վերայ միայն, ուստի նա, Սաֆոն, իրաւունք չունէր վստահելու իւր կառքի վերայ, 300 կիլոյի վերայ:

Նախ եւ առաջ կառքի մէջ այդքան շատ էլ չէ եղել: 124 կիլո է միայն:

Այդ ուղղումը 300 կիլոն 124 եմ դարձնում, դարձեալ յօգուտ մեղադրողի է այդ սրբագրութիւնը ինչպէս եւ 38000 40000 ընդունելը:

Յայտնի է որ գործարաններում պայթուցիկ նիւթերը դինամիտ, պիրակսիլին[?] եւայլն դարսուում են շատ զգուշ կերպով, իրարից բաժանուած, առանձին դարակների վերայ, որպէսզի մեծաքանակ մի մասսայի ճնշման տակ ներքեւի շերտերը չենթարկուին ինքնապայթիւնի վտանգին: Նիւթը դարսուում է ըստ կարելոյն նօսր ջոկ ջոկ դարակներում, առանձին պատուանդանների վերայ:

Նոյն կերպ եւ նաւերում. փախուստի ժամանակ պայթում է մի այդպիսի գործարան կամ նաւ. ի՞նչ է նշանակում դա, թէ դարակներից մէկը կամ մի քանիսը այս կամ այն պատճառով ինքնապայթիւնի ենթարկուելով, դետոնացիայի շնորհիւ պայթեցնում են եւ միւս հարեւան պարագաները մէկը միւսին յետեւից ամենակարճ մանրերկրորդներում<sup>49</sup> եւ ստացւում է մի հսկայական պայթում գործարանի:

Դա, այդ պայթումը կարելի է նմանեցնել հազարաւոր հրացանների համազարկին — ստացւում է մի ընդհանուր ձայն պայթման, բայց գնդակները ի մի չեն ձուլուած, մաթեմաթիկ[ական] միաժամանակ չեն:

Ուրիշ բան է երբ պայթեցնում են իրանք, այդ դէպքում ամբողջ պայթուցիկ[ն] նիւթը կենտրոնացնում են, ըստ կարելոյն միացնում, նոյնիսկ ձուլում իրարու:

Հետեւանք առաջինի եւ երկրորդի ահագին կը լինի, ի հարկէ, ճիշտ այնքան տարբեր, որքան տարբեր կը լինի հազար հրացանի համազարկը մի պատի վերայ եւ այն 1000ի նիւթից կազմուած եւ միացած ոյժի թնդանութի հարուածը նոյն պատի վերայ:

Գործարանը կամ նաւը միեւնոյնն է, որը շինուած չէ ի հարկէ պայթելու համար, եւ նրա մէջ դարսուած նիւթը ի հարկէ չունենայ անհրաժեշտորէն ոչ կլոր կամ խորանարդ ձեւի կենտրոնացում, այլ անպատճառ ընդհակառակը, ցրուած, երկարաւուն: Ահա թէ ինչից կարող էր առաջ գալ հաւանականաբար նիւթի ներգործութեան տարբեր չափերը՝ մէկ կողմից մի քանի հազար, միւս կողմում միայն 150-300 մետր. եւ սա անուանուում է կապրի՛զ:

Եթէ տեղադրական պայմանները 150ից 300 մէկ կողմից — միջին թիւը կ'անէ 225 այդ մէկ կողմից, միւս կողմից մի քանի հազար: Վերացնում եմ միայն մի հազար. պարզ է որ ոյժի գլխաւոր մասը ուղղուել է դէպի այդ մի քանի հազար մետրի կողմը: Եթէ այդ ոյժը կենտրոնացած լինէր բոլորը մի տեղում մենք իրաւունք կ'ունենայինք սպասելու որ այդ 1000 մետրից մի կողմի վերայ ազդուած պէտք է աւելացնէր հակառակ կողմի էլ ազդեցութեան չափը, եւ պակասեցնէր այդ կողմինը: Եթէ 1000ի եւ 225 միջին թիւը վերցնենք կ'անէ 812: Ուրեմն եթէ նիւթը ճանապարհ տանելու համար չլինէր դարսուած, այլ պայթեցնելու, այսինքն կենտրոնացած կերպով, կարելի էր սպասել որ նրա ոյժի ազդեցութիւնը բոլոր կողմերում 812 մետրի հասնէր:

Բայց չէ որ 40 հազ. է, 40՝ հազար: Այո՛, գիտենք: Բայց մեր բարութիւնը մենք աւելի հեռուն ենք ուզում տանել եւ այդ 812 մետր խորտակման ենթակ[այ] տարածութիւնը նորից պակասեցնում ենք, կէս ենք անում, 312, 300 ենք վերջապէս ընդունում:

Միայն երեք հարիւր մետր որպէսզի անպայման վըստահելի դառնայ այդ եւ խնդիրը փակուում:

Այժմ լուծենք այդ խնդիրը ձեր առաջ՝ Ահա նա

Եթէ 40000 կիլոն վստահելի է 300 մետրի վերայ Քանի՞ կիլոն 25 ք[այլին] վերայ:

Ընդունենք 30 քայլ այն է 20 մետր: Կազմում ենք հաւասարութիւն:

Բայց առաջ քան այդ յայտնի է որ պայթող նիւթը ներգործում է ամէն կողմի վերայ: Վերցնենք 300 մետր շառաւիղի .....<sup>50</sup>

որ 4π R² x 1/3 R Ֆորմուլայով R²= 300ի — կը ստանանք — 113,040,000

նոյնը 20 մետրի — 35,188

Առաջինը 113 միլիոն իւ. մետր երկրորդը՝ մերը այսինքն — 35,188

Ահա թէ որ թուերի յարաբերութիւնն էր որ պէտք է վերցնել. 35 հազարի 113 միլիոնի մէկ կողմից 124 կիլոյի եւ 40000ինը միւս կողմից:

49.- Երկվայրկեաններում:  
50.- Անընթեռնելի բառ:



Այժմ կազմենք հաւասարութիւն

x : 40000 = 35000 : 113,000,000

x = 40000 x 35000 / 113,000000

x = 40 x 35 / 113 = 12,3 կիլո

Ուրեմն մեր տարածութեան համար 20 մետր — 30 քայլ ինչպէս տեսնում էք բաւական էր անպայման 12,3 կիլո ... իսկ մենք 12ի տեղ 124 ունէինք:

Այժմ տեսնում էք, որ թէ ինչ տեսակի փաստ է ներկայացնում մեղադրողը ամենաէական, ամենաուժեղ փաստը...

40,000 կիլո, բացականչում է նա, Սաֆոն ինքն իւր աչքով կարողաց այդ: Այո՛ Սաֆոն կարողաց այդ 38 հազարը, որը 40 է դարձել, կարողաց այդ Սարգիսն էլ, բայց Սաֆոն կարողացաւ հասկանալ որ մարմինները երեք չափ ունին, իսկ Սարգիսի համար, նրանք նոյնպէս մէկ պարզ չափ, ինչպէս երկարող — գիծը՝ շիփ-շիտակ: Ահա նրա հաշուի շիտակ ձեւը՝

40,000 — 300 մետր է ներգ[ործում] x 30 x = 40000 = 30 : 300 x = 40000 x 30 = 4000 կիլո 300

4000 կիլո ուրեմն պէտք է այդ հաշուով, որ 30 մետրի վերայ ոչինչ չմնայ

4000 կիլո

Ահա թէ ինչու նա բացականչում է 40000 կիլո, հասկանում էք ինչ է նշանակում, 4000 կիլո:

Այդպիսի անհեթեթ գէնքով է գինուել եւ արշաւանք սկսել Յուդայական ղէմ, ո՛չ ներողութիւն, Սաֆոնի, միայն Սաֆոնի դէմ: Դժբախտութիւն ենք ունեցել նրա էլ ոտը կոխելու նո՛յն այս չարաբախտ արձանագրութեան մէջ: Ի՛նչ արած: Եւ նա հաւա՛ր է կանչում եւ յեղափոխական հայհոյանքների դոյլեր թափում իրան յատուկ տեմպերամենտով եւ լի պաթոսով<sup>51</sup> գրուած մեղադրական նամակում:

Եւ ինքն ալ գգալով որ այդ բոլորից անձնական կրքի հոտը արդէն չափազանց է բուրոմ, նամակի վերջում փորձում է դրա առաջը առնել, «թէ գրուածքիս մէջ նկատել խիստ դարձուածքներ, չկարծէք, թէ ես որեւէ անձնական հաշիւ ունեմ այդ պարոնների դէմ»: Մի միայն գործի սէրն է, որ ինձ ստիպում է լինել խիստ եւ պահանջկոտ:

Այդպէս էլ կը գրենք, որ Սարգիսը ոչ մի անձնական հաշիւ չունի Սաֆոնի հետ:

Թողնենք այդ, շարունակենք պեղումները այդ

կուրիոզներով<sup>51</sup> լի նամակում, որոնք ծիծաղելի կը լինէին, եթէ տխուր չլինէին, այդքան շատ տխուր իրա՛ գրողի համար, որին մենք այնուամենայնիւ ճանաչում ենք շատ լաւ կողմերից, բայց այս աստիճանի կրքի զոհ գնալով կրքի արտադրներ<sup>52</sup> գրել չէինք սպասում:

Նայեցէ՛ք այս կտորը «Թերեւս Ս[աֆոն]ն գտաւ մի նոր նիւթ, որը ամենակարող էր եւ հարիւրին հարիւր ապահով՝ այդ էլ ոչ, որովհետեւ նոյն նիւթն էր, այն տարբերութեամբ որ մի մասնագէտ ասել էլ, որ 150 մետրի վերայ 300 կիլո կ'ոչընչացնէ ամէն բան՝ այն ինչ այդ նոյն մասնագէտի մօտ ունէինք եւ բոլոր մասնագէտը, որը գիտէր մեր ձեւ[նարկի] կարել[որութիւնը] եւ բացասեց, եւ ունէինք իրական փաստ, կատարուած դէպք

40000 կիլո պայթումը, Հասկանո՞ւմ էք — 40000 կիլո եւայլն»: Այս այսպէս գրելուց վերջը, նոյն նամակի միւս երեսում ահա թէ ինչպէս է շարունակում զարգացնել նոյն միտքը:

«Եւ ահա Սաֆոն ծնում է մի հանճարեղ միտք, ոչ մի զոհ չտալ, քանի որ Ֆրանսիացի մասնագէտը 300 մետրի վերայ ամէն բան կը սրբէ: (կ'ըսէ)

Այժմ այս երկու կտորները միեւնոյն նամակի իրար հետ համեմատելով դուք կարող էք չզարմանալ որ Յ ամսուայ ընթացքում 36ը 40 հազ[ար] է դարձել, երբ այստեղ մի այսպիսի նամակում, 2[րդ] երեսի վերայի իբր 150 մետրը՝ մասնագէտի, 4րդ երեսի վերայ կրկնապատկուել 300 մետր է դարձել... Այժմ աւելի քան պարզ է, որ միմիայն գործի սիրուն համար է այդչափ զբաղուած, անձնական հաշիւ չունի:

Այս քաղուածքի մէջ միայն այդ թուերի հետ անզգոյշ խաղալը չէ, որ կը մատնէ գրողի ներքին հոգեկան գրգռու, այստեղ շատ զուարճալի բաներ կան:

Նամակի ոճից, ամէն մի տողից պարզ է ամէնքիդ համար, որ նա գրում է իբրեւ մէկը, որը շատ եւ շատ մօտ ծանօթ է մեր գործերին, այսպէս ասած նրա ամբողջ աստառը գիտէ:

Բայց նա իրականապէս, գիտէ մինչեւ [Դաշնակցութեան] «Խորհուրդը»: Գիտէ եւ Խորհրդի մէջ մեր տեսակցութիւնը Ս. Ռ-երի մասնագէտի հետ եւ նրա յայտնած կարծիքը, նա այնտեղ էր, խմբագրատանը:

Գիտէ նա, որ Ս. Ռ-երի յայտնի մասնագէտը շատ դրականապէս յայտնեց, որ 100 կիլոն 30 մետրի վերայ ոչ միայն մարդուն այլեւ շինութիւնը, տունը կը քանդէ:

Բայց նա այդ մասին լռում է, անաչառ Սարգիսը եւ ոչ մի բառ: Խօսում է Ֆրանսիացի մասնագէտին մասին միայն, իսկ Տիխիսի Խորհրդին ուղարկած նման նամա-

51.- Գետաքրքրաշարժ, զարմանք պատճառող նորութիւններով: 52.- Աճեթթութիւններ:

կում, ընդհակառակը ոչ մի խօսք Ֆր[անսացի] մասնագէտի մասին. այնտեղ էլ յիշում էր միայն մի մասնագէտի խօսքի վերայ հիմնուած, Ս. Ռ-երի մասնագէտի: Ինչո՞ւ այսքան յամառութեամբ կամ մէկն է բաց թողնում կամ՝ միւսը ու միշտ մէկ մասնագէտ է դուրս գալիս: Օ՛, դա այնքան պարզ է. զուր է Սարգիսի խորամանկութիւնը. որովհետեւ մէկի դէմ նա ունի մէկը, բոլորապէս մասնագէտը: Եթէ Սաֆոնի կողմը երկու լինէր եւ այն էլ Պարիզի պրոֆ[եսորներ] մէկը, միւսը Ս. Ռ-երի մասնագէտը, կ'չիւր կը ծռուէր Սաֆոնի կողմը, մի բան որ նրան իսկի հաճելի չէ, այդ արդարութիւն[իւն] կանչող քրննադատին:

Այդպէս ուրեմն նա չի կարող երկու մասնագէտ արտասանել — դա նրա հաշուին չի գայ եւ նա փաստի վերայից ցատքում է առանց տատանուելու եւ մտածելու, թէ դէմինն էլ մարդ է, գոնէ իրա չափ մտածել եւ տեսնել գիտէ:

Դարձեալ եւ դարձեալ մի նոր կուրիոզ<sup>51</sup> այդ երկու զոյգ տողերի մէջ գրուած, ինչպէս ասացինք խիստ հեղինակաւոր լաւատեղեակի ոճով:

Ահա թէ ինչ է ասում նա, մեր գործերին լաւատեղեակ Սարգիսը:

Որ մի մասնագէտ ասել էր, որ 150 մետրի վրայ 300 կիլոն կը ոչնչացնէ ամէն բան:

Սա ծայրէ ծայր մտացածին է, «սխալ է» փափուկ ոճով ասած:

Ոչ մի մասնագէտ այդպիսի բան մեզ չէ ասել: Այդպէս ասողը արդէն մասնագէտ չի կարող լինել: Մեր հարցրած երկու մասնագէտներն էլ 30 մետրի մասին են խօսել եւ ոչ 150 կամ 300:

Յանձնաժողովը քրքրեց մեր բոլոր թղթերը եւ նա կարող է ասել որ ոչ մի այդպիսի բան չկայ այնտեղ եւ չի էլ կարող լինել: Եւ դրանից յետոյ այլեւս նրա ասած բոլոր մասնագէտի բացասելը շատ հասկանալի է:

Եթէ այդպիսի հարց են դրել բոլոր մասնագէտի, թէ 150 մետրի վերայ 300 կիլոն արդեօք կը ներգործէ, ի հարկէ նա պէտք է ասէ — ոչ եւ նոյնիսկ ծիծաղի այդպիսի հարց տուողի վերայ:

Ահա այն բոլոր մասնագէտի ցուցմունքը, որ պ. Ս-ի խօսքերով բացասել է իրանց արած այդպիսի հարցին եւ այդ նա բերում է հակադրելու մի մասնագէտի ասածներին եւ նրա ասածներն էլ այդչափ աղաւաղելով 30 մետրը 150 մետր դարձնելով, բայց այդ 150ն էլ մի երես վերջը 300 մետր: Այսպէս է կազմուած ահա այս նշանաւոր դոկումենտը, որի վերայ մենք ստիպուած էինք այսքան երկար կանգ առնել: Մենք չսպառեցինք այդ նամակի բոլոր կուրիոզները. բայց բաւականա՛նաք մի նմուշ էլ թերթի տրամաբանական, մատեմատիքական նրա գիտութեան աստիճանին, իբրեւ զուգընթացին՝ նրա իրաւական եւ իրաւաբանական հասկացողութիւնների, որքան այդպիսիք արտայայտուել

են այդ վերջին ծայր կրքոտ եւ ոչ ստրիկ[տ] գրուածքում:

Պէտք է վաշտել, պրծաւ գնաց: «Հարկաւոր չեն ձեւական կողմերը ամբողջ Մարմինն հաւասար յանցաւոր համարելու»:

Պարզ է, պ. Սարգիսի համար, գլխաւոր յանցաւորները Սաֆոն է, ապա Աշոտը: — Հիանալի է ուղղակի այդ՝ «ձեւական կողմերը հարկաւոր չէ»... եւ արդարեւ ի՞նչ հարկաւոր է... «Քանի որ պարզ է, թէ ով է յանցաւորը: եւ ի՞նչ պատիժ, ինչ էք կարծում — «ամենալաւ դէպքում — վաշտել Դաշնակցութիւնից» — Ո՛ւմ... վաշտել:

Եւ որպէսզի աւելի ազդու լինի իւր արդարադատութեան նմուշ կողմ «ձեւական կողմերը թողէ՛ք», «իրա համար պարզ է» նա, Սարգիսը, որը խօսում է իւր սիրոյ մասին դէպի կազմակերպ[ութեան] ապագան, նրա մաքրութիւնը, վերջացնում է նամակը սպառնալիքով:

Կը գտնուի, ասում է, մի խնթի ու մաքուր անձնաւոր[ութիւն], որը կ'ըմբոստանայ անդիսցիպլին կազմակերպութեան դէմ, եւ ինքը իւր ձեւքով կը կատարէ մաքրման գործը...

Շատ ազդու է այս կտորը մանաւանդ, մեծ սիրոյ նշան է սա արտայայտում դէպի Դաշնակցութեանը՝ ապագան եւ նրա մաքրութիւնը, եթէ այդ մաքրողը ինքն է որոշողը առանց ձեւականութիւնների, թէ ով է զձուձ վաշխառուն, ով մաքուրը, ով արժանին եւ ով անարժանը:

Այդպէս ահա ստեղծուած են Միհրաններ եւ Միհրանականութիւն յանուն ամէնքը իւր տեսակէտի մաքրութեան եւ մաքրելու:

Մենք վերջացնում ենք:

Հետաքրքիր է, ինչ պիտի ասէր պ. Սարգիսը, եթէ մի ուրիշ հորիզոնի տակ մի ուրիշ խնթի, դարձեալ յանուն մաքրման գործի դուրս գար եւ առանց ձեւականութեան սկսէր մաքրելու գործը միւս ծայրից:

Սա է ահա գրողի իրաւական հասկացողութիւնների ամբողջ պաշարը:

Մենք վերջացնում ենք: Աշխատեցինք լինել, որքան յաջողուեց մեզ այդ, չգիտենք, լինել զսպուած, քանի որ գրողը ներկայ չէ այստեղ:

Եւ որովհետեւ մենք պատիւ պիտի չունենանք նրան անձամբ գրելու իւր նամակի պատասխանը, ուրախ ենք որ Վանի երկու ներկայացուցիչները այստեղ ներկայ են<sup>53</sup>. նրանք թող պատմեն իրան մեր պատասխանը: Եւ կը յիշեցնեն նրան, որ թուերի հետ պէտք է զգոյշ լինել, որ Յ ամսի մէջ 4000 կիլո աւելացնելը վատ գրաւական է նրա յիշողութեան, որ 30 մետրը 300 մետր դարձնելը [չ]ծառայեց յօգուտ իւր ցանկացած փաստերի, այլ յօնքը շինելու տեղը աչքն էլ հանեց: Թող յիշեցնեն նրան —

53.- Դ. Ընդի. ժողովին վան-Վասպուրականէն Գերկայ էին Արամ Մամուկեան եւ Իշխան (Սիկոլ Օտապաշեան):

որ 40000ի փաստն էլ մագալու<sup>54</sup> փաստ դուրս եկաւ եւ դարձեալ իրան հարուածեց եւ Սաֆոյի ապացոյցները միայն աւելացրեց:

Վերջապէս թող ասեն նրան, որ ժողովի մէջ գտնուեցին մարդիկ, որոնք փոքր ինչ տատամսեցին հաւատալ:

Այժմ դառնանք: Ի՞նչ երաշխաւորութիւն, հարցնում է մեզ յանձնախումբը ունէր Յ. Մ.-նը, թէ այդ տարածութեան վերայ հարուածը մահացու պէտք է լինէր: Այդ հարցին տեղեկագիրը տալիս է լիուլի պատասխան: Եւ մենք (12, 13, 14, 15 թերթ) արդէն կարդացինք:

Յանձնախումբը զուր էփորձում ստուեր ձգել փորձերի նշանակութեան վերայ, առաջ բերելով վերջին չափողութեան փորձը, որի մասին ինքներս ենք գրած թէ երկու ժամ յորդառատ անձրեւի տակ մնալով, ջրերի մէջ լողում էր չոր տակառը եւ ինքներս է որ չենք հաշտում այդ փորձը իբրեւ փորձ, ենթադրաբար ասելով, թէ հագիւ կէսը պայթեց, միւս թրջութեամբ մասը չպայթեց իբրեւ թրջութեամբ: Բայց յանձնախումբը անցնելով յաջող մի շարք փորձերի վերայից, մասնանշում է այդ վերջին փորձը իբրեւ անյաջող: Բայց եթէ վերցնենք նոյնիսկ այդ անյաջող փորձը, այն է 15 կիլոն թեթեւ վէրք հասցրեց ձիուն — ոչ մահացու: Նկատեցէք, այդ ոչ մահացու եւ թեթեւ վէրք մենք անուանել ենք այն որ ձիու ոտը կոտորուեց:

Եւ հաշուենք ի՞նչ կը ստանանք — 15 կիլոն — ձիու ոտը կտրել է 20 մետրի վերայ փայտէ տակառի մէջ. հարց՝ ինչ կ'անէր նա ձիուն 124 կիլո երկ[աթէ] արկղի մէջ:

Այս հարցը տուե՞ց իրան յանձնախումբը, թէ 15-20 մետրի վերայ փայտեայ սնտուկի մէջ երբ ձիու ոտն է կոտորում, նոյն տարածութեան վերայ երկաթէ սնտուկի մէջ — հազարաւոր երկաթի կտորներով հարիւր քուսան եւ չորս կիլոն ի՞նչ կ'անէր Նժոյզին:

Մենք երբեք այդքան միամիտ չենք եղել, որ մեր փորձերով, մի շարքաթուայ կամ թէկուզ մի տարուայ, ամբողջ տարուայ — լսում է՞ք, փորձերով յաւանութիւն ունենայինք մտածելու, թէ պէտք է հնարաւոր լինի ֆորմուլաներ կազմել, պայթման օրէնքներն ուսումնասիրել՝ չլինելով, նկատեցէ՞ք, մասնագէտ թէորետիկ<sup>55</sup>: Օրէնքներն ու ֆորմուլաները ամիսների ընթացքում չէ որ կազմւում են եւ ոչ տարիների եւ ոչ էլ մէկ նոյնիսկ մասնագէտի ամբողջ կեանքի ընթացքում — դրանք տասնեակ տարիների կարիներտային<sup>56</sup> գիտական աշխատանքի, հազարաւոր, տասնեակ հազարաւոր փորձերի արդիւնք են: Եւ ահա այդ պատրաստի գիտական շտեմարանի երկու քուրմերից, Պարիզի պր. Ռուբանովիցից եւ Ս. Ռ. Ն. Ն. մասնագէտից ստացել էինք այն կարծիքները, որոնք իրանց գլխից չեն ծնած, այլ վերցուած են կուտակուած 1000աւոր փորձերի գիտական շտեմարանից: Եւ մենք լի հաւատով վերաբերուեցինք նրանց տուած պատասխաններին եւ իրաւունք էլ

չունէինք չվերաբերուելու եւ յանձնախումբը գիտենալով այդ բոլորը նորից հարցնում է, ի՞նչ երաշխաւորութիւն ունէիք եւ այլ: Ուրիշ ի՞նչ երաշխաւորութիւն կարող էինք ունենալ հարցնում ենք մենք:

Ի՞նչ էիք պահանջում, ի՞նչպիսի երաշխաւորութիւն:

Մեզ համար աւելի մեծ երաշխաւորութիւն չէր կարող տալ ոչինչ եւ ոչ ոք, քան Մեծ իշխան Սերգէյի գլորող մասնագէտը, Պլեէին տապալող մասնագէտը, երբ նա մեզ ասում է 100 կիլոն — հասարակ սնտուկի էլ մէջ անկախ — բեկորներից, միայն օդի ցնցումով ոչ միայն մարդը այլեւ եռյարկանի տուէր օդը կը հանէ 30 մետրի վերայ... Աւելի ի՞նչ երաշխաւորութիւն էր յանձնախումբը ցանկանում, մենք հրաժարուում ենք հասկանալ:

Թող խօսի պ. Ռոստոմը, թող ասէ օր. Ռուբինան, ճիշտ է, որ մենք էլլէնի հետ քանիցս վիճել ենք մասնագէտների մասին, դէպի որոնք նա առհասարակ թերահաւատութեամբ էր վերաբերում, պտրել գտնելու: Իսկ մի ուրիշը, Եր(եւանի) պատգ(ամաւոր) պ. Չաւրի-եւը, հանդիպելով մեզ Պոլսում եւ լսելով որ մասնագէտներ չունինք, ընդհակառակը՝ զարմացած բացականչեց՝ «ինչպէս կարելի է առանց մասնագէտի գործել, ինչ իրաւունք ունիք, ի՞նչ գիտէք, ի՞նչ էք հասկանում ասում էր եւ բողոքում եւ խոստացաւ մասնագէտ գտնել եւ ուղարկել Հիւսիսակերտից<sup>57</sup> Բոլղարիա, էլլէնի մօտ, նրա հետ խօսելու: Էլլէնին դժուարութեամբ համաձայնեցրինք սպասել մասնագէտին, որը եկաւ, բայց արդէն Սոֆ(իայի) աղէտը տեղի էր ունեցել 2 օր առաջ:

Թող խօսի վերջապէս պ. Ռ(ոստոմ)ը:

Ճիշտ է, որ Ս. Ռ.-երի մասնագէտի հետ խօսելուց վերջը, նա դէմ էր Պարիզ գնալու, նոր մասնագէտ գտնելու նկատմամբ, դէմ էր ասելով, թէ դժուար է այնտեղ գտնել, ո՞վ կայ եւ ի՞նչ պիտի ասի: Չնայած ուրեմն հեղինակաւոր ընկերների բացասական հայեացքին դէպի մասնագէտների հարցը, հայեացք, որ չէր կարող ազդեցութիւն չունենալ եւ մեր վերայ, մենք այս մասին յիշում ենք այն մտքով, որ եթէ բաւականանայինք իսկ միայն այդ մասնագէտի կարծիքով, բարոյապէս իրաւունք կ'ունենայինք, քանի որ մեզ հետ համակարծիք կը լինէր եւ էլլէնը, որը առհասարակ դէպի մասնագէտները սկեպտիկ<sup>58</sup> էր եւ պ. Ռոստոմը, որը գտնում էր մեր Պարիզ գնալը եւ նոր մասնագէտ գտնելը — աւելորդ եւ դժուար գլուխ եկող եւ նոր ծախսերի ու ժամանակի զուր կորուստ: (Բառերը մերն են), նրանք, իմաստն են միայն բացատրում պ. Ռ.-ի դէմ լինելուն):

54.- Տարօրինակ, ծիծաղելի:  
55.- Տեսարան:  
56.- Գիտական աշխատանքի յատուկ առանձնատեսակ:  
57.- Գիտական կարգի Պետերսբուրգի կուսակցական ծածկաճուճն է:  
58.- Թերահաւատ, կասկածոտ:

Չնայած դրան, մենք զգալով պատասխանատուութեան մեծութիւնը, երկրորդ մասնագէտ էլ գտանք եւ դարձեալ խիստ յստակ եւ խիստ վճռողական դրական պատասխան ստացանք: Կառքի գործը երաշխաւորող 20 կիլոյով 30 մետրի վերայ: Եւ երբ 20ի տեղ 120 ենք դնում, եւ մեզ դարձեալ հարցնում են թէ ի՞նչ երաշխաւորութիւն ունէիք թէ պիտի յաջողէր անպայման, այդ է որ մեզ ուղղակի ապացնում է հարցնողների հոգեբանութեան նկատմամբ. ի՞նչ էիք ցանկանում պր.ներ, ինչպիսի երաշխաւորութիւն, ասացէք, լսենք:

Այդպիսի անհասկանալի պահանջներն են, որոնք ակնբերել են դարձնում իրանց ծագումը, որը, ծագումը, ոչինչ առնչութիւն չունի գործի լուրջ քննադատութեան հետ:

Բայց ինչպէս գիտէք մենք դեռ աւելին ենք արել, 65 կիլո մեկինիտ ենք պայթեցրել, մի շարք փորձեր կատարել եւ այդ փորձերի բոլորն էլ մի մի գրաւական են եւ երաշխաւորում են կառքի անպայման մահացու լինելուն:

Եթէ դուք ներկայ լինէիք եւ ձեր աչքերով տեսնէիք, թէ ինչպէս կենդանի ձին կապուած ծառին, իսկ 15 քայլ հեռու 10 կիլո նիւթը դրուած տախտակէ պատուանդանի վերայ, որից գնացող էլեկտրական հաղորդիչները 100 մետր փոսի մէջ մեր ձեռին միացնում ենք էլ(եկտրական) մեքենային եւ քաշում թելը՝ սար ու ձոր սասանում է թնդում, դուրս եմ վազում փոսից դէպի ձին — ձի չկայ:

Ուր է նա: Ուրախութեան աղաղակներով հասնում եմ ձիու կապուած տեղը, ի՞նչ է ներկայացնում, ձին պառկած է ամբողջովին, արեան մէջ լողում, փորը ճեղքւած, աղիքները թափուած, վիզը լայն բացուած անչնչանում է. եթէ այս բոլորը դուք տեսնէիք ձեր աչքով, այլեւ չէիք հարցնել, թէ ի՞նչ երաշխաւորութիւն ունէինք վստահելու 124 կիլո նիւթի վերայ, 1500 երկաթի կտորների վերայ 20 մետր տարածութեան, 2Մ մետր:

Բայց այդ միակ փորձը չէ, այդպիսի փորձեր, տարբեր ձեւերով եւ տարբեր հեռաւորութիւնների վերայ վերցր-եթեւ ենք կատարել... 65 կիլո նիւթ ծախսել, 3 ձի 1 գառը սպանել եւ դեռ հարցնում են. ի՞նչ երաշխաւորութիւն:

Փորձեր կատարել ենք 1 մետրի վերայ, 2, 4, 5, 10 եւ 20 մետրի վերայ, բոլորն էլ յաջող մեր խնդրի նկատմամբ, բոլորն էլ երաշխաւորող եւ վստահութիւն ներշնչող, երկու մասնագէտների ենք դիմել, յայտնի մասնագէտների եւ երկուսն էլ երաշխաւորել են մեր ձեռնարկը ոչ թէ այնպէս ինչպէս կատարուել է 20-25 քայլի վերայ, այլ երաշխաւորել են 50-80 քայլի վերայ — եւ առանց բեկորների, միայն օդի ցնցումով, եւ դարձեալ մեզ հարցնում են — ի՞նչ երաշխաւորութիւն: Ուրիշ ի՞նչ տեսակ երաշխաւորութիւն էք ուզում:

Իսկ եթէ խնձորներ լինէին — մենք կը հարցնենք ձեզ — ի՞նչ երաշխաւորութիւն՝ ի՞նչ երաշխաւորութիւն խնձորների յաջողութեանը:

Մեր նախ-էլլէնեան փորձերը, որոնք անվերջ անյաջողութիւնների շարքեր էին:

Էլլէնի փորձերը արդեօք, որոնք վերջացան մեծագոյն անյաջողութիւնով, որպիսին Դաշնակցութիւնը տեսած էր, աղէտով —

Ռուսաստանի փորձերը, 100ից 80ը անյաջող, ինչ երաշխաւորութիւն այն մանր, խաղալիք ուղմբերից, որոնք կրկնակի անյաջող էին թէ պայթելու ապահովութեան տեսակէտից, որ ձեռքում պայթեցին դեռ չնետած, եւ նոյնպէս ոյժի տեսակէտից: Վրամի ձեռքին պայթեց եւ նրա միայն ձեռքի կէսը տարաւ իսկ էլլէնին հասցրած վէրքերից կարելի է գաղափար կազմել թէ ինչ ոյժի ուղմբ էին մեր ունենալիքները — սրտին դիպչելն էր փոքրիկ ոսպաչափ բեկորներից մէկը — որ աղէտը մեծցուց, կրկնակի դարձրեց:

Որպէսզի մեր այդ ուղմբերը Սուլթան գլորել կարողանային, յաղթել կառքին, որ բլենդէ<sup>59</sup> է, խօսուում է, եւ ինքը գրահաւոր, անպատճառ կառքի մէջ, Սուլթանի ձեռքում կամ գիրկը պիտի պայթէին: Բայց մենք հեռացանք հարցից: Դրա հերթը կը գայ, կը խօսենք իրա տեղը: Դեռ չա՛տ բան ունինք ասելու:

Այսպէս ուրեմն, այդ բոլորը բաւարար չէ թուացել յանձնախմբին, ո՛չ մասնագէտների խօսքերը, գիտութիւնը, ոչ մեր փորձերը եւ նա հարց է տալիս երաշխաւորութեան մեր վստահութեան աղբիւրը ո՞րն է եղել, հարցնում է:

Որպէսզի փորձերի ոյժը նսեմացնի, մի վերին աստիճանի կուրիոզ հարց է դրուած, թէ արդեօք յայտնի է եղել Յ. Մ.-ին, որ պ(աւելի)ոն(ի) պայթումից առաջացող օդի հոսանքի օրէնքը դեռ ուսումնասիրուած չէ, որ նա, այդ հոսանքը, կապրիզոտ<sup>30</sup> է, մէկ վնասում է, մէկ ոչ, ուղղակի կապրիզներ ունի: Մենք այդ, խոստովանում ենք, առաջին անգամն ենք լսում:

Մեզ համար դա մի մեծ նորութիւն է:

Աւելին կ'ասենք՝ մենք թոյլ ենք տալիս մեզ նոյն իսկ կասկածելու, որ այդպիսի բան կայ եղել: Աւելի եւս կասկածում ենք, որ յանձնախումբը այդ մասին ոեւէ արժանահաւատ աղբիւր ունենայ իւր ձեռին:

Բայց նայելով դրուած հարցի կազմին, ակնբերել է, որ յանձնախումբը ինչ որ մի բան ունի այդ հարցին վերաբերեալ:

Եթէ Ս. Ռ.-երի մասնագէտի խօսքերն են հիմունք տրւել, պէտք է այստեղ յիշեցնել, թէ ինչ է նա մեզ ասել եւ թէ այդ խօսքերին կարելի է կապրիզի հարց յաջողել, երբ նա տուեց արդէն յայտնի իւր պատասխանը թէ 30

59.- Կապարի, ոռմքի կամ որեւէ պայթուցիկ ցիւփի դեմ պաշտպանուած:

մետրի վերայ ոչ միայն մարդը այլ այս ձեռք խմբագրութիւնն էլ օդը կ'ելնէ եւ երբ մենք նորից շեշտում ենք՝ «ամէն ինչ», ամէն ինչ, նկատի ունենալով եւ կառք եւ ձիաւոր եւ գինուորներ, այն ամէնը՝ ինչ որ մեր կառքի եւ Սուլթանի մէջ պէտք է լինէր:

Նա ասաց, որ չի կարելի այդպէս ասել՝ ամէն ինչ ոչնչացնել, նայած առարկային, նրա յատկութեանը:

30 մետրի վերայ ձեռք խմբ[ագրատուներ] եւ մարդը օդը կը հանէ, բայց այստեղ 10 քայլի վերայ կարող է ոչինչ անել եթէ օրինակ բարձր է (փետուրէ) բարձ լինի — (Բն-րիւնի)<sup>60</sup>: Ահա նրա ասածը, որին ներկայ էր եւ պ. Հ. Յով. եւ պ. Ռ.-ը: Կրկնում ենք, եթէ այս է ծառայում իբրեւ հիմունք, այստեղ ոչ մի կապրիզի հարց չկայ: Եւ առանձին ուսումնասիրութեան էլ կարօտ չէ, եւ այդ մի նորութիւն չէր, որ «ասաց» հաստատման կաղնին արմատից պոկող փոթորիկը, ոչ մի վնաս չի հասցնում նրանից քիչ հեռու վարդի ոստին, կամ մարգագետնի խոտերին, շնորհիւ նրանց ճկունութեանը: Դրանից չի հետեւի թէ փոթորիկը կապրիզներ ունի: Ինչ բան է կապրիզը: Բնութեան մէջ կապրիզներ չկան, հասարակ ատրոմանակը, մի գեղացու ձեռքին, որը նրա գլուխն ու ոտը չգիտէ, կապրիզոտ է. «անզգոյշ կը քայլ շնիկը, կը դիպնի մատով բլթակին — եւ կը պայթի ատրոմանակը եւ գիւղացին զարմացած՝ ինչ խարաչի<sup>61</sup> բան է այս ատրոմանակ ասուածը: Բայց նոյն ատրոմանակն էլ:

Անցեալ Ընդ. Ժողովը] այսօրուայ պէս յիշում ենք, երբ հարց դրուեց՝ ինչպիսի գէնքերի առաւելութիւն տալ Դ. համար: Եւ երբ մէկը պնդում էր մատուցել ատրոմանակի վերայ, որոնք փոքր են եւ Տաճ[կաստան] անցկացնելու] համար նպատակաշարժար եւ հեռու խր-փող եւ իբր ատրոմ. եւ իբր հր[ացան] գործածուելու յարմ[արութիւն] ունեցող եւայլն: Պարս[կաստանի] ներկ. Չոփուր<sup>62</sup> յայտնեց, որ անպէտք բաներ են, շատ կապրիզոտ են, փամփոռուող մէկ էլ տեսար մնաց արանքում, ոչ դուրս ոչ ներս:

Այժմ մենք գիտենք, թէ ինչից է առաջ գալիս այդ գէնքի հետ անծանօթ լինելուց, խամութիւնից: Այժմ այդ ատրոմանակները թողել են իրանց կապրիզները:

Այժմ գանք պայթ[ուցիկ] նիւթի կապրիզի մասին. եթէ Բարսել[ոնայի] հուշակաւոր նաւի պայթումը մէկ կողմից հազարաւոր մետրերի վերայ է ներգործել, միւս կողմից 150-300, դրան կապրիզ կ'անուանէ միայն նա, ով մակերեւութային կերպով կը վերցնէ միայն փաստը առանց աշխատելու մտնել հարցի էութեան մէջ:

Թէ ինչ կերպ է եղել դարսուած դիմամիտը նաւի մէջ — երկարաւուն շերտերով, խորանարդային կենտրոնացումով, կլոր թէ միաձեւ:

Ահա դարսուածքի համեմատ եւ կարող է ստացուել այլազան արտայայտութիւններ պայթուցիկ ոյժը. բացի դարսուածքի ձեւից, արդեօք շրջակայքը միատեսակ

տեղագրական պայմաններ են ներկայացրել — այդ ձեռք սիրած տոպոգրաֆիան ահա թէ որտեղ նոյնպէս դեր ունի: Մենք, յենուելով մեր 1.5-2 տարուայ տանջուած փորձերի, կարդացած գրքերի եւ մասնագէտների եւ կիսամասնագէտների հարց եւ փորձերի վերայ, համար-ձակութիւն ենք առնում այստեղ պնդելու, որ պայթ. նիւթերի գազանալու օրէնքները, հաւատարիմ առհասարակ ոյժի տարածման օրէնքներին, միատեսակ պայմաններում, միատեսակ են տարուում կենտրոնից դէպի ծայրերը ամէն կողմ:

Մենք ամիսների ընթացքում մանրակրկիտ կերպով, որքան թոյլ են տուել մեր ուժերը, առաջ քան գործի գնալը, Վառնայում եւ Աթէնքում ուսումնասիրել ենք մեր հարցերին վերաբերեալ գրքեր — եթէ չենք սխալուում — [Դիպիոնի միմաս վայնա]<sup>60</sup> — Սեւաստապոլի հրակայական ստորերկրեայ կռիւր եւ [Տատլերն]<sup>60</sup>-ի եւ Անգլիացոց: [Պայթուցիկ նիւթեր եւ նրանց գործածութիւնը]<sup>60</sup> — չենք յիշում հեղինակը եւ մի շարք այլ ձեռնարկների, որոնցից մի քանիսը թողինք Պոլիս, միւսները ուղարկել ենք խմբագրատուն:

Մենք այդ մեր կարդացածների հիման վերայ այսօր էլ պնդում ենք, որ [զապալ]<sup>60</sup>ները (բռնկցնողները) պէտք է դրուին ուղիղ կենտրոնում եւ ոչ զանազան տեղերում, եթէ պայթող նիւթը կենտրոնացած է եւ ոչ երկարաւուն: Եթէ պայթեցնելու էք աղիքի նման երկար տարածութեան վերայ փոս բանալու կամ այլ նպատակով բռնկցնող [զապալ]<sup>60</sup> — դրուում է ծայրին, մէկ ծայրին, ի հարկէ մօտակայ:

Չանազան տեղեր դրուած [զապալ]<sup>60</sup>ները, չեն յանձնարարուում, այն պարզ պատճառով, որ առաջ են բերում պայթող նիւթի մէջ մի քանի բռնկող կենտրոններ, որոնց (կենտրոնների) լայնացման ոյժը՝ լինելով տարբեր բռնկող մայր նիւթից, կը խանգարէ լայնացման միատեսակ եւ կանոնաւոր՝ կենտրոնից դէպի ծայրերը հրուելու հոսանքին եւ այդպիսով կը չէզոքացնէ ոյժի մի որոշ քանակութիւն հանդիպող հոսանքների շնորհիւ:

Այսպէս, եթէ խաղաղ ջրի մէջ մի քար ձգենք, քարի ընկած կէտից, իբրեւ կենտրոնից՝ կանոնաւոր, միակենտրոն շրջաններով կը նկատէք ալիքների լայնացումը հաւասար ամէն կողմը: Իսկ եթէ միաժամանակ նետէք ջուրը, օրինակ մի բուռը քար, այդ կանոնաւորութիւնը կը խանգարուի եւ անհասարակ ալիքներ կը ստեղծուին, տարակենտրոն ալիքների շրջաններ մի քանի կենտրոններից, որոնք իրար հանդիպելով, կը չէզոքացնեն, կը խանգարեն միմեանց:

Այսքանս բաւ է այս մասին: Թողնում ենք յանձնախմբի խղճին, թէ ի՞նչ հեղ[ինակաւոր] աղբիւրներից

60.- Բնագրին մէջ ուսատառ:  
61.- Դարաչի (թրքերէն) անգամ:  
62.- Բուն անուանով Լեւոն Թադէոսեան (Պապաշա):

է քաղել նա իր այդ մեզ համար անհասկանալի նորութիւնը բռնկելիքի կենտրոնացման] նկատմամբ]:

Այսպէս ենք մենք հասկացել եւ այս հասկացողութեամբ էլ գործել: Եթէ յանձնախումբը, աւելի հեղինակաւոր տեխնիկ. հարցերում, գտնուում է որ մենք սխալուած ենք եղել, մնում է մեզ ցաւել մեր տգիտութեան համար եւ խնդրել մեզ էլ հասկացնել եւ լուսաւորել: Բոլորիդ էլ յայտնի է, որ մենք միայն սիրողներ ենք եղել, այն էլ ժամանակաւոր սիրողներ... էլեկտրական] եւ պայթ[ուցիկ] նիւթերի... բայց ոչ յեղափոխութեան: Այս մենք յայտնում ենք ի գիտութիւն մասնաւորապէս Երեւանի պրն. պատգամաւորին<sup>63</sup>: Կը խնդրէինք նրանից չչփոթել այս երկու տարբեր հասկացողութիւնները: Անց[եալ] նիւտերից մէկում պրն. պատգ[ամաւորը]<sup>63</sup> շատ ուրախացաւ, լսելով մեր բերանից սիրող բառը, շտապով առաջարկեց արձանագր[ութեան] մէջ մտցնել այդ բառը, անմահացնելու համար նրան: Այդ արաւ երիտասարդ, դեռ երէկ մտած, երկրորդ տարեկան յեղափոխականը] 17 [տարի] յեղափոխութեան] մէջ ծերացած մի մարդու նկատմամբ: Մենք թողնում ենք իրան զգալու իւր վարմունքի ինչ անուան արժանի լին[ելը]:

Եթէ մի առ մի պատմէինք ձեզ, բոլորը ինչ կատարել է, դուք կը տեսնէիք, որ կատարուածը այնքան էլ հեշտ չէ եղել, այնքան էլ փոքր բան չէ եղել: Այդ մեքենան մի օրուայ ծնունդ չէ եւ ոչ էլ մի ամսի: Ամիսներ է նուիրուել նրա ամէն մի մանրամասնը ուսումնասիրելու, պարզելու, ստուգելու, կրկին եւ կրկին ստուգելու: Նա մեր տանջուած ծնունդն է եւ դուք այստեղ այնքան թեթեւ սրտով մի քանի ժամեր նամակներ կարդալով քննադատեցիք եւ գտաք, գտաք որ նա վատ է եղել կազմուած, ծուռն է, չիտակ չէ, դժուար... Դուք կը ցանկանայիք, որ մենք պատմէինք ձեզ մի առ մի թէ ինչ ենք արել, ո՞րքան ենք տանջուել... Բայց մենք չենք ցանկանում ձեզ հետ այդ մասին խօսել... մենք արհամարհում ենք ձեր քննադատութիւնը եւ ձեր իրաւունքները իբրեւ քննադատների:

Ո՞վքեր են մեր քննադատները, բացի մէկից եւ միայն մէկից, բացի Սարգիսից, ոչ մէկը ձեզանից չպիտի առնէր իւր վերայ մի այդպիսի իրան չսազող դեր, ոչ մէկը... Իսկ Սարգիսն էլ պէտք է լինէր մի քիչ աւելի համեստ չչփոթելու համար այնպիսի հարցեր — տեխնիկական, որոնց մէջ ինքը ձեռնհաս է աւելի պակաս քան Յուցականը:

Թող մեզ քննադատելու դուրս գայ Վարդանը, Սարգիսը, Անդրանիկը, Մուրատը — մենք հասկանում ենք — իսկ յանձնախմբի միւս երեք անդամներին կ'ասենք այդ ձեզ չի սազի... (Հանել ծոցատետրը)

Եթէ 38000 կ. ներգործել է 300 մետր շառ. 113,40000 — մեր 124 կ. պէտք է ներգործ. 45 մ.

87.5 ք[ալլ] 389,418

Եթէ 36000 — 200  
124 — 3005  
48 ք[ալլ]

Իսկ եթէ նոյնիսկ 38000-ը ներգործել է 150 մ. 89 կիլոն բաւական էր 30 քայլի համար:

Ըստ Ռուբանովիի՝ 20 կ. — 30 մետր  
45 քայլ

124 կիլո — 55  
82.5 քայլ

Իմ փորձերս՝ 14 կիլոն — 15 քայլ 124 կիլոն — 31 քայլ

Թուաքանութիւն

Յայտնի է որ պայթող նիւթերը ուղիղ գծով չէ որ տարածում են իրանց ալիքները, այլ ամէն կողմ՝ եւ ներքեւ եւ վերեւ եւ աջ եւ ձախ — ամէն կողմ:

Վերցնենք զեկուցագրի մէջ Սարգսի հուշակաւոր նամակից քաղուած այդ մագալու<sup>64</sup> 40000-ը նախկին (38000)ը եւ գտնենք 300 մետր շառաւիղի խորանարդ չափը:

Ֆորմուլայով նա հաւասար է 11304000 խոր. մետրի: Իսկ մեր շառաւիղը 30 քայլի նոյն ֆորմուլայով — հաւասար է, ինչպէս կը տեսնէք այստեղ վերեւում առաջ բերուած հաշուեցոյցից, 35,168 խ.մ.:

Մեզ յայտնի է ուրեմն, որ 40000 կիլոն Բարսելոնում նաւի մէջ պայթող, ներգործել է միջին շառաւիղով միայն 300 մետրի վերայ, արդ ո՞րքան կիլո է պէտք այդ հաշուով որ նա ներգործէ 30 քայլի (20 մ.ի վերայ): Ահա հարցը: Մենք կազմում ենք հաւասարութիւն երկու յարաբերութիւններից՝ 40000 եւ X անյայտի մէկ կողմից, միւս կողմից ոչ թէ 30ի եւ 300ի որ անհեթեթութիւն կը լինի եւ արեւուդ, մի բան որ ըստ երեւոյթին արել է այդ նամակ գրող եւ 40000 — բացականչողը, այլ այդ թուերի խորանարդների միւս կողմից: Մենք շարունակենք հաշուել եւ

40000 — 113  
x — 35000

Կազմում ենք այդ չորս թուերից յարաբերութիւն եւ գտնում

x : 40000 = 35000 : 113,00000  
որտեղից x = 12,3 կիլոյին

63.- Բժ. Յ. Չալիքի:



Եթէ նոյնիսկ վերցնենք ոչ թէ 300 մետր, որ իրաւունք ունինք լիովին, ի նկատի առնելով պայթման միւս կողմի ոյժի մի քանի հազար մետրի շառաւիղը, այլ միայն 200 մետր եւ նոյն ձեւով հաշուենք դարձեալ կը ստանանք՝

որ մեզ համար, մեր տարածութեան համար բաւական էր՝

x : 40000 = 35168 : 33489180

x = 41 կիլոյի միայն:

Իսկ եթէ վերցնենք նոյնիսկ

150 մետր միայն:

Ամենանուագազոյնը նուագազոյն կողմի

x = 99 կիլոյի միայն:

Գանք այժմ մեր կատարած փորձերին, որոնք առաջ են բերուած Ընդ. Ժող.ի առաջ, որպէսզի նա ինքը տեսնի, թէ որքան համոզեցուցիչ են նրա: Սակայն այդ չորս թուերը ի՛նչ պիտի ասեն ժողովին: Ոչինչ: Հետաքրքիր է, ի՛նչ են ասել դրանք յանձնախումբիդ, որը 20 օր իւր ձեռքին ունէր նրանց: Ըստ երեւոյթին նոյնպէս ոչինչ: Յանձնախումբը 6-7 փորձերից կանգ է առել միայն մի փորձի վերայ, անյաջող անուանուած փորձի վերայ, որին մենք ինքներս իբրեւ անյաջող ենք ներկայացրել եւ կանգնած միայն այդ փորձի վերայ, փորձում է ապացուցանել, թէ այդ անյաջող փորձը ինքնին ապացոյց է, թէ ի՛նչ, ինչ բան է ապացուցանում... որ Ռուբանովիչի տուած ֆորմուլային չի համապատասխանում... Օ՛, որքա՛ն սրամտութիւն էր հարկաւոր արդեօք այդ տեսնել: Բայց մենք ցոյց կը տանք ձեզ այստեղ նոյն թուերի ասածը լեզուով, միակ անհրճելի լեզուով որին միայն հիպնոզը անգոր է դիպչելու, մենք ցոյց կը տանք այստեղ եւ այս ըոպէիս, թէ յանձնախումբն է, որ չէ եղել կանգնած իւր քննադատական կոչման բարձրութեան վերայ եւ ոչ Յուլիանի Մարմինը:

Յանձնախումբն է, որ դրակոնեան<sup>64</sup> եզրակացութիւններ անելու շտապելով կանխակալ կարծիքներին զուհ, ձանձրոյթ չէ քաշել առաջ քան վերջակէտ դնելը վեր առնել մատիտը եւ մի փոքր թուաբանութեամբ պարապէր, տեսնելու համար թէ ինչ է ասում նոյնիսկ այդ անյաջող փորձը թրջուած, ժամեր անձրեւի տակ մնացած եւ թրջուած նիւթի փորձը:

Ստիպուած ենք ինքներս կատարելու յանձնախումբի պարտականութիւնը: Ի՛նչ է ասում յանձնախումբը, որ ձին 30 քայլի վերայ պայթած 10-15 կիլո նիւթից ստացել է միայն ոչ լուրջ վէրք: Նկատեցէք՝

30 քայլ — եւ 10-15 կիլո:

Այստեղ մատիտ էլ իսկ պէտք չէ. ցերեկի պէս պարզ է, որ եթէ փայտեայ պայթած տակաուի մէջ թրջուած մելինիտի 10-15 կիլոն — 30 քայլի վերայ ձիուհ հասցրել է այնուամենայնիւ վէրք, ոչ լուրջ, նոյն 30 քայլի վերայ, նոյն 10-15 կիլոն եթէ լինէր երկաթէ սնտուկի մէջ 1500 երկաթէ բեկորներով — լուրջ թէ ոչ լուրջ վէրք կը

հասցնէր:

Իսկ եթէ նոյն 30 քայլ տարածութեան վերայ երկաթէ սնտուկի մէջ 10-15 կ.ի փոխանակ 124 կիլո նիւթ լինէր դրուած, ինչ որ եղել է մահափորձին, ձիու արդեօք ո՛ր մասը կը մնար այնտեղ, քանի՛ ոտը: Եւ այդ ոչ լուրջ վէրքը, նկատեցէ՛ք ոտը կոտորուելուն ենք մենք անուանել ոչ լուրջ վէրք:

10 կ.ի տեղ եթէ 120 լինէր, 12 անգամ աւելի, քանի՞ ոտը պիտի կոտորուէր, այդ հաշուով հէնց ձիու 12 ոտը:

Ի՛նչ կը մնար ուրեմն ձիուց, եթէ 12 ոտ կոտորուէր, եթէ ոչ սմբակը միայն, բայց նկատեցէ՛ք, որ յանձնախումբը մեր կատարած փորձերը թուելով կանգ է առել միայն թրջուածի եւ անյաջող մեր անուանուածի վերայ, նա լուել է 14 կիլոյով 10 մետրի վերայ ձիու սոսկալի խորտակման փորձը:

Նա լուել է եւ ոչ մի բառով չէ անդրադարձել եւ հաշուել, թէ արդեօք միայն այս փորձը բաւական չէր վստահեցնելու իրանց, ինչպէս վստահեցրել է Սաֆոյին եւ Լեապովին, այն Լեապովին, որի ցուցմունքները իբրեւ մի նշանակալի ցուցմունք առաջ են բերում այն տեղերում, ուր նա խօսում է իրան բոլորովին անծանօթ տեղագրութեան մասին այնքան հեղինակաւոր կերպով, առաջ են բերում, քանի որ ժխտողական բնոյթ են կրում: Իսկ այնտեղ ուր նա համաձայն է Ս[աֆոյ]ի հետ եւ այդ հէնց վերաբերում է փորձերին, յանձնախումբը բարւօք է համարում լուել եւ ոչ մի բառ...

Ահա յանձնախումբի իւր բարձր կոչման ոչ վայել քրննութեան ձեւի պարզ ապացոյցը: Բայց դառնանք փորձերին եւ դարձեալ թուաբանութեանը, տեսնենք ինչ են ասում թուերի անկաշառ լեզուն:

14 կիլո — 15 քայլի վերայ ջարդ ու փշուր արաւ ձին:

Հարց, ո՛րքան է, որքան պէտք, որպէսզի 25 քայլի վերայ խորտակուի Նժոյգը:

Կազմում ենք խորանարդների չափով հաւասարութիւն եւ ստանում

14 — 14,325 խ. ք.

x — 62,800 խ. ք.

Որտեղից x =  $\frac{62800 \times 14}{14,325} = 61$  կիլոյի

Ուրեմն այդ փորձը կատարուած պարզ թիթեղեայ իսկ ամանի մէջ, առանց երկաթէ սնտուկի, առանց բեկորների — ցոյց է տալիս, որ մենք 61 կիլոյի վերայ ալ իրաւունք ունէինք յոյս դնելու, իսկ մենք 124 ենք դրել, երկու անգամից էլ աւելի, երկաթի սնտուկն էլ վերան աւելի, 1500 երկաթի կտորներ վերան աւելի:

Եւ այնուամենայնիւ մեզ հարցնում են — ի՛նչ երաշխաւորութիւն ունէիք...

— Ինչ երաշխաւորութիւն կ'ուզէիք, ասացէ՛ք:

64.- Վայրագ, կտրուկ:

Յուլիանը անտես է արած եղել այն հիմնական օրէնքը, որ անհրաժեշտ է կոտորուի ենթարկել եւ վաճառականի տուած նիւթի անխարդախ լինելը:

Նիւթի անալիզը

Այդպիսի օրէնք կայ եղել եւ այն էլ հիմնական օրէնք, որ մենք չենք կատարել, «անտես» ենք արել եւ ահա թէ ինչու յանցաւոր ենք, այդ հիմնական օրէնքի դէմ մեղանշած ենք եղել...

Եւ սա անուանում է քննադատութի՛ւն...

Եւ այսպիսի թաթարի թխուած<sup>65</sup> «օրէնքներ» հիմնական օրէնքներ, յանձնախումբը կարգելով, եկել է եզրակացութիւններ անելու եւ ինչպիսի եզրակացութիւններ. որ Յ.ը իւր կազմ. բարձ. վերայ չէ գտնուել:

«Եւ այդ դէպքում ո՛րքան մեծ պատասխանատուութիւն է ընկում Յ.ի վերայ, որ ձեռնարկել է մահափորձի կասկածելի նիւթով», բացականում է յանձնախումբը:

Ինչե՛ր չէ կատարել Յուլիանը որ պէտք է կատարէր, «Յուլ. չի ուսումնասիրել ասում է գեկուցումը, գործ[ողութեան] վայրը, տոպոգրաֆիան, (դարձեալ տոպոգրաֆիա), իսկ նրա ներկ. Սաֆոն Ռուբանովիչի հետ ունեցած խօսակցութեան մէջ, չի բերել այդ վայրի իսկական տոպոգրաֆիան: Յամենայն դէպս տեղեկագրից այդ յայտնի չէ»:

Կարողում է մարդ այս տեխնիկական քննադատութիւնը եւ մնում է ապշած...

Ի՛նչ ասել կարելի է այսպիսի քննադատութեան:

Շատ եւ շատ մակերեւութային եւ թեթեւ պէտք է վերաբերուած լինի մարդ, որպէսզի թոյլ տայ մի այսպիսի պատասխանատու գործում, ինչպիսին է քննադատութիւն յեղ. ընկերների գործերի, ասելու թէ նրանք աչքերը խփած են գործել, չեն տեսել եւ այն փողոց ուր գործելու են գնացել. չեն «երեւակայել» գեկուցումի լեզուով խօսած, այն տոպոգրաֆիան, որը

նրանք տեսնելու եւ քննելու են գնացել: Եւ կամ այդ ասելու համար հարկաւոր է լինել կատարելապէս ենթակայ ամենագոր հիպնոզի ազդեցութեան: Մենք վերջինն ենք ենթադրում:

Եւ նկատեցէ՛ք, այդ միայն այն պատճառով, որ մեր արձանագրութեան մէջ նկարուած չէ տեղագրութիւնը: Միայն եւ միայն այդ պատճառաւ, իսկ վայրկենաչափը եւ դժոխային մեքենան նկարուած է: Եթէ, փողոցի չիտակութիւնն ու ծուռ լինելը երեւակայած լինէինք — անշուշտ այն եւս կը նկարէինք: Եւ սա անուանում է իւր կոչման բարձ. վրայ կանգնած յանձնախումբը եւ այս բոլորը իբրեւ լուրջ քննադատութիւն առաջ է բերուած, առանց հարցնելու, առանց լսելու Յ.ի ներկայացուցչին, ընկերներին:

Որպէսզի աւելի գունաւոր կերպով պարզուի թէ յանձնախումբը ինչ աստիճանի ձեռնհաս է եղել քննադատելու Յուլիանի մահափորձը, ուշադրութիւն դարձրէք այս կուրիոզի վերայ, որը լուրջ տոնով դրուելու է մասնագէտների քննութեանը:

Ի շարս այն հարցերի որոնք յանձնախումբը որոշել է տալ մասնագէտների քննութեանը —

«Բ — արկղում տեղաւորուած նիւթի քանակը որոշելու հարցը»:

Մի ըոպէ կանգ առէք եւ մտածեցէք այս հարցի ամբողջ միամտութիւնը: Այդ ինչ մասնագէտ է լինելու նիւթի քանակի որոշողը: Քիմիկո՛ս, թէ մաթեմատիք: Քիմիկոսը ինչ գործ ունի դրա հետ: Ով էլ որ լինի մասնագէտը «նախ եւ առաջ հարցնելու է» արկղի չափերը: Է՛, եթէ գիտէք չափերը, այլեւս ի՛նչ մասնագիտութեան հարց կայ այդտեղ, վերցնել նկարը եւ հաշուել: Այդ մենք կ'անենք այստեղ ձեր առաջ, մասնագէտի այդ անելիքը, որպէսզի ծիծաղելի չդառնայ յանձնախումբը մասնագէտի առաջ՝ չափի եւ ծաւալի հարցերով:

65.- Թաթարի թխուած կիսեփ, բերի:



\*  
\*\*

Այժմ գալիս է մեղադրական ակտի երրորդ հատորը, պր. Վռամեանի ձեռքով գրուած<sup>66</sup>: Դուք լսեցիք նրան: Մենք նոյնպէս լսեցինք, թէ եւ դրա համար հարկաւոր եղաւ՝ գերագոյն ճիգեր՝ զսպելու համար այն զգացմունքի արտայայտութիւնը, որը հետեւում է անմիջապէս՝ ձեռնհարային նիւթի առատ ներմուծման օրգանիզմի մէջ, որը ժողովրդ(ական) բառով «սրտի խառնել» է անուանուում:

Այսպիսի գրուածքներին չէ ընդունուած պատասխանել: Ո՛չ:

Բայց մենք ստիպուած ենք: Հասկանո՞ւմ էք, ի՞նչ է նշանակում, ստիպուած լինել պատասխանել մի գրութեան, որի միակ արժանի պատասխանը լուրջեան արհամարհանքը պէտք է լինէր:

Սկսենք ապերախտ գործը, նախապէս յայտնելով, որ մենք չենք համարում պատասխանատու սրա համար երկու միւս հեղինակներին: Եթէ յանձնախումբը ցանկանում է ընդունել իւր վերայ եւս այս գրուածքի բարոյական պատասխանատուութիւնը, աւելի վատ իւր համար իբրեւ ամբողջութեան: Յամենայն դէպս մենք չէինք ցանկանայ, որ առաջին երկու հատորները, որքան էլ որ տենդենցիոզ<sup>67</sup> եւ միակողմանի են, չփոթել այս գլուխ գործոցի հետ, որը ծայրէ ծայր ամբողջ 48 թերթի մէջ, լեցուն է, գաւառաբարբառով ասած՝ «լեաֆ ու կեաֆով», որին ամերիկացիք, եթէ չեմ սխալուում, «բլրֆ» են անուանում:

Ամբողջ 48 թերթը բլրֆների հաւաքածոյ է, փաստերի եւ դոկումենտների խեղաթիւրման ակնյայտի նմուշներով այնքան բացայայտ, այնքան մերկապարանոց, որ ակամայից մարդու վերայ սարսուռ են բերում հեղինակի բարոյական պատկերի նկատմամբ:

Դուք այնտեղ չէք գտնի նմուշի համար եւ ոչ մի թերթ, որը կամ անուանարկութեան, կամ զրպարտութեան եւ կամ ձեռնածուրթեան պարզ կնիքը չկրէր իւր վերայ: Եւ ո՛չ մի թերթ, նկատեցէ՛ք: Այդ մենք յայտարարում ենք այստեղ բարձրաձայն, մեր վերայ առնելով ամբողջ պատասխանատուութիւնը այս ծանր մեղադրանքի եւ պատրաստ՝ անմիջապէս ապացուցանելու: Մենք կը բերենք միայն օրինակներ այդ գրուածքից, ցոյց տալու համար, թէ ի՞նչ չափով նոքա հեռու են այսպիսի մի գրուածքից պահանջուող՝ տարրական իսկ զգուշաւորութիւնից դէպի փաստերը ու դոկումենտները (Չէ՛ որ սա մեղադրական ակտ է եւ ոչ լրագրական ֆելետոն<sup>68</sup>):

Ելլե՛ք I (երես 3)  
Երես երրորդից սկսում են բլրֆների շարքերը:  
«Յուցական Մ-ը լրիւ է արդէն Աթէնքի ժողովի մէջ» կ'ըսէ պրն. Վ-ը՝ եւ թւում է անուանելը՝ «Բր., Ս., Թ., Ա., Յ. Դ.» (երես 3):

Կարդում ենք եւ աչքերին չենք հաւատում: Թորգոմը... Որտեղի՞ց Թորգոմը Աթէնքը ընկաւ: Նա բոլորովին Աթէնքում չէ եղել: Ո՛ր մեր թղթերից է քաղել նա այս նիւթը:

Ճիշտ է, այսպէս ասել, թէ Մարմինը արդէն լրիւ էր, աւելի կ'ըր եւ ազդու կը լինի ասելու համար մի քանի տող վերջը ինչ որ ասելու է, բայց կարելի՞ է ոճը կ'ըրցընելու համար վերցնել անդամներից մէկին Պոլսից Աթէնք տեղափոխել:

Բայց այդ դեռ ոչինչ: Ի՞նչ է այդ. մի համեմատաբար փոքրիկ խաղ գրչի: Չարժէր սրա վերայ կանգ առնել նոյնիսկ, եթէ սա լրագր. ֆելետոն լինէր, բայց չէ՞ որ պատմական նիւթերի քննադատութեան յաւակնութիւնն ունի սա եւ իբրեւ այդպիսի, վստահութիւն է պահանջում ժողովից դէպի ինքը:

Անցնինք:  
«Որքան խորանաս անտառը, ասում է ու(ոսական) առածը, այնքիսան փայտը կ'առատանայ»:

Եւ այս բլրֆների անտառում, դեռ մի քայլ ետ չարած, նոյն 3 երեսում պրն. ը խօսելով, թէ այդ Աթէնքի լրիւ ժողովում — տեսանք որ նա լրիւ չէր — որոշուում է Ս(ոլթան) Հ(ամ)իտի գործը, շարունակում է այսպէս իւր

Բլրֆ II-ը. «Այդ ծանր որոշումին հետեւանքն է եւ այն ներքին կանոնադրութիւնը, խմբագրուած Բ-ի ձեռքով, որ գործադրութեան պիտի դրուէր, երբ մարմինը Վիշապ մտնելէ եւ տեղ. պարագաներու ծանօթանալէ ետք՝ վաւերացնէր. «Այդ կանոնադրութեան համաձայն դասալիք պիտի հռչակուին այն բոլոր ընկերները, որոնք տրուած պահուն չգտնուին իրենց գործի վրայ. (լսեցէ՛ք) բացառութիւն մահը կամ բանտարկութիւնը կ'ընար ստեղծել»:

Տեսնենք այժմ, թէ ո՛րքան բարեխիղճ պատմագիր կարող է լինել պրն. ը:

Բաց ենք անում այդ ներքին կանոնագիրը Աթէնքում, Բ-ի ձեռքով գրուած եւ յանձնում պր. քննադատին, առաջարկելով ցոյց տալ այդ կանոնադրութեան մէջ «բացառութիւն մահը կամ բանտարկութիւնը կ'ընան ստեղծել» ամբողջ իմաստալի նախադասութիւնը:

66.- Սաֆոյի կողմ «երրորդ հատոր» կոչուածը, այն որ Ա. Վռամեանի ձեռագրով է, իրականին մէջ քննիչ յանձնախումբի կազմած երկրորդ տեղեկագիրն է, տեսարակի կողքին «1904-1906, Յուցական մարմնի գործերը, քննող յանձնախումբի կողմէ Տեղեկագիր N° 2 — Կազմակերպական մասը (Տեղեկայացուած Դ. Ընդի. ժողովին)» մակագրութեամբ: Սաֆոյի կատարած յետագայ մտքերումնեղը եւս կը համապատասխանեն թիւ 2 տեղեկագրին:

67.- Դիտումնաւոր, կանխակալ միտում, նպատակ հետապնդող:

68.- Թերթոն:

Նա ի հարկէ չպիտի կարողանայ այդ անել այն պարզ պատճառով, որ այնտեղ չկայ այդպիսի բան: Ո՛րտեղից է վերցրել նա այդ նշանակալի բառերը:

— Մի բոլորովին ուրիշ թղթից, Վռամի ձեռքով ամիսներ վերջը, բոլորովին ուրիշ առիթով գրուած արձանագրութեան կտոր է, որ առանց տատանուելու բերել փակցրել է Աթէնքի ներք. կանոնագրի վերայ, Բ-ի ձեռքով գրուած, խտացնելու համար այդ կանոնադրութեան ծանր կողմերը. չէ՞ որ նա ասաց թէ ծանր որոշման համաձայն է եղել Բ-ի ձեռքով գրուած կանոնագրութիւնը Աթէնքում: Եւ ահա այդ նպատակով՝ ոչ միայն Թորգոմն է Պ(ոլս)ից Աթէնք տեղափոխուում քննադատի ազատ կամքով կազմը լրիւ անուանելու համար այլեւ Պոլսում Վռամի ձեռքով գրուածի մի կտորը Աթէնքի ներք. կանոն. փակցնում նրան առանձին ծանրութիւն տալու համար:

Ի՞նչ անուն ունին այս ձեւի «գործերը» կեանքի մէջ, հարցնում ենք ժողովից:

Ի՞նչպէս են անուանուում այս տեսակի խաղերը փաստերի եւ թղթերի հետ: Մենք հրաժարուում ենք նրան անուանել:

Ով թուղթ խաղացել է, գիտէ սրա անունը:

Բայց այդպիսիների հետ այլեւս թուղթ չեն խաղում... Իսկ մենք ստիպուած ենք շարունակելու:

— Անհերքելի փաստ է, որ Բ(րիստափոք)ի եւ Վ(ռամ)ի ընկնելու լուրն առած Յ. Մ-ը ի շարս այլ յանձնարարութիւնների, որոշել է ընկածներին փոխարինող նոր ընկերներ գտնել դրսէն:

Անհերքելի փաստ է, որ Ս(աֆոն) դիմել է Սարգսին, Կոնստանդինին, Աբրահամեանին — Բողաբարայում եւ նոյն հարցը դրել է եւ (Դաշնակցութեան) Խորհրդի նիստի մէջ, բայց բաւարարութիւն չէ ստացել: Այդ մասին յիշուած է մեր արձանագր. եւ տեղեկագրի մէջ եւ ասուած լուրթիւն եղաւ մեր պատասխանը:

Մի մոռանաք խնդրեմ միանգամ ընդ միշտ, որ ինչպէս պրն. Թոփի(եանը) իբրեւ նախաբան յանձն(ախրմբի) 3 հատոր մեղադր(ականում) յայտնեց այստեղ ձեռ առաջ, թէ նրանք ոչ ոքի հարցապնդում չեն արած, կատարել են իրանց քննադատութիւն — մեղադրական գործը լոկ միայն մեր թղթերի՝ արձանագր(ութիւնը) տեղ(եկագիրը) եւ նամակները իբր նիւթ ունենալով: Այս կէտը մի մոռանաք: Սա փակագծի մէջ:

Պրն. Վ-ը իւր ֆելետոնի մէջ — ուրիշ անուն չենք կարող տալ — անուանում է վերոյիշեալ մեր խօսքերը՝ «ձրի ամբաստանութիւն»:

Ինչո՞ւ: Ի՞նչ հիմունքներով: Տեսէ՛ք թէ ինչո՞ւ:

Որովհետեւ մեր թղթերի մէջ ասուած է, թէ նոր մարդու կարիք չունինք, եղածներն էլ աւելորդ են: Բայց նա գիտակցօրէն լուրջեան է տալիս ժամանակի վերաբերեալ տարբերութիւնը թէ ե՞րբ:

Երբ ենք մարդ խնդրել — Մայիսին, Ապրիլին:

Երբ ենք գրել թէ մարդու այլեւս կարիք չունինք: Յուսիսին, Յուլիսին:

Նա կարդացել է մեր թղթերը, նա շատ լաւ գիտէ, որ մարդու կարիք այլեւս չենք ունեցել, երբ ծրագիրը կ'ըրձատել ենք, պաւլիտոնի հարցը թողել: Իսկ մարդ պահանջել ենք այն ժամանակ, երբ դեռ նախկին ծրագրի վրայ էինք: Նա չէր կարող այդ չտեսնել: Ահա այս նամակից:

Եւ այդ գիտենալով հանդերձ, ելնել ձեռնածուրթիւն կատարել, գիտակցօրէն փաստերը խեղաթիւրել եւ սպիտակը սեւացնելու եւ ասելու

«Եթէ ահրաժեշտութիւն եւ հնար չկար, ոչ երեք նոր ընկերներու (երկու ոչ երեք) պէտք ունէին ոչ կ'ընային պնդած լրլալ (ուզածը ջնջուած է) ոչ ալ տեղի կար տեղեկագրի մէջ այդ ձրի ամբաստանութիւնը գետեղելու (երես 19)»:

Ի՞նչ անուն կարելի է տալ այս տեսակի — ներողութիւն — քննադատութեան:

Եւ սրանից յետոյ եղէք սառնասիրտ, կարդացէ՛ք այսպիսի բացականչութիւններ:

Նոր բլրֆ

«Որքան տխուր է կարգալ բուն իսկ տեղեկագրի խօսքերով իրենց վախկոտութիւնը դուրս չելնելու, մինչդեռ ժորիս, իրենց դրացին, կու գար իւր տուն, դուրս կ'ելնէր, մինչդեռ իրանք չեն համարձակուիր անոր տունն երթալու»... (եր. 38):

Ուրեմն բուն իսկ տեղեկ. խօսքերով յայտնուած է թէ մենք վախեցել ենք դուրս գալ տանից եւայլն եւայլն: Ահա ձեզ տեղ(եկագիրը). ցոյց տուէ՛ք խնդրենք. ի հարկէ չէք կարող. դարձեալ բլրֆ:

Ի՞նչ անուն կարելի է տալ, ձեզ ենք դիմում, պր.ներ, ի՞նչ անուն կարելի է տալ այդ պրն.ին, եթէ գիտենայիք, թէ այդ պատետիք եւ համարձակ բացականչութիւնը, սկզբից մինչեւ վերջը բլրֆ է, բացարձակ սուտ:

Եւ մենք ահա յայտարարում ենք այդ այստեղ եւ թողնում, որ ժողովը յարմար անուն գտնի որոշելու այդպիսի քննադ. գործերը: Մենք այդ պատուից հրաժարուում ենք:

Բաց ենք անում, տեղեկագիրը երես 25/2-26:

Ապա պրն. ը (երեւի նոյնպէս մեր թղթերի միջից) շարունակում է այդ մեր տխուր վախկոտութեան առթիւ, յիշեցնել սամաթիացիների՝ ընկերներու օրերը, որ ոչ մէկ ընկեր, չլրլալով հանդերձ օտարահպատակ, ունեցաւ այդ անըմբռնելի զգուշաւորութիւնը:

Թողէ՛ք հանգիստ սամաթիացիներին քաջ, պրն., եւ մի տխրիք Յուց-ի անըմբռնելի զգուշաւորութիւնից, հանդարտեցրէ՛ք ջղերդ:

Դուք մէկ ցոյց տուէ՛ք թէ տեղեկագրի ո՞ր երեսում, կարդացել էք «բուն իսկ տեղեկագրի բառերով» թէ

Յուզականը վախեցել է, տանից դուրս չէ եկել, դուք այդ ցոյց տուէ՛ք, իսկ մենք ձեզ կ'ասենք, որ Յուզ-ը այդ օրը երգում էր եւ նուագում, որ այդ մեր մեծ օրը նա տանից դուրս է եկել չորս անգամ, այսինքն այնքան անգամ, որքան հասարակ օրերը համարեա, որ նա գնացել է եւ փողոց եւ նաւահանգիստ եւ հիւպատոսարան եւ կառքերի յետեւից եւ գնացել է նաեւ ժորիսի տունը եւ տեսել, որ նա եկել ճաշել, գնացել է, այնտեղ տոմս է թողել ժորիսին, որ մենք դուրս ենք գալիս, որ ինքն էլ եթէ կասկածում է դուրս գալ եւայլն:

Իսկ թէ այդ մասին չէ յիշուած տեղեկագրի մէջ... Օ՛, շատ բան այնտեղ չէ յիշուած, պըն, շատ բան, որոնք եթէ յիշուած լինէին — թերեւս մի փոքր աւելի համետու թելադրէին քննադատին դէպի Յուզ-ի անդամները, մի փոքր գոնէ...

Եւ այսպէս, մէկը միւսի յետեւից շարուած են հարցեր եւ այդ հարցերին պըն. Վ-ը առանց մեզանից գեռ մի բառ չհարցրած, առանց տատանուելու, սեւով սպիտակի վերայ գրուած, տալիս է պատասխաններ, եւ այդ հարցերը՝ նենգաւոր մէկը միւսից աւելի, իսկ պատասխանները՝ անվերջ զրպարտութիւններ, ինսինուացիա<sup>69</sup> — խեղաթիւրումն, իսկ ճշմարտութեան, պատմական ճշմարտութեան եւ անաչառութեան եւ ոչ մի նշոյլ:

«Յ. Պ. Մ-ի անդամները, կ'ըսէ պ. քնն-ը, աններելի ընթացք մը ունեցած են, համոզելով որ ժորիս մնայ Պոլիս եւ պատճառ եղած են այնքան բազմաթիւ ընկերներու ձեռքակալումին եւ դատապարտութեանը՝ (48 երես) ապա կը շարունակէ՝

«Փոքր Ահմէտի եղբրական մահը, «արդարացնելու» համար, ըսուած է թէ անհրաժեշտ զոհ է, որ պահանջում է մեծ դատը: Հետաքրքիր է իմանալ, հարցնում է նենգամիտ պըն-ը, ի՞նչ բան արդեօք կը պահանջէր ժորիսի գոհուելը»: ... «Եւ այդ եղեռնական վերաբերումը ժորիսի հանդէպ տասնապատիկ կերպով ծանրացաւ նոյն ցեղի դատի վրայ»: Այս կերպ կը վերջացնէ պըն Վ-ը այս ծայրէ ծայր զրպարտիչ տողերը, ժորիսին ներկայացնելով իբրեւ զոհ Ահմէտի նման եւ այս զրպարտութիւնը, կ'ասենք մենք, հարիւրապատիկ կերպով պիտի ծանրանայ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան վերայ, կատարուած պըն Վեամեանի ձեռքով:

Պըն-ը շատ լաւ գիտէ, որ ժորիսը չէ եղել որոշուած իբրեւ զոհ, որ նա չէ մասնակցել նոյնիսկ վիճակահանութեանը, որ նա ոչ ինքն է առաջարկել, ոչ էլ թոյլ կը տրուէր նրան եթէ ցանկանար իսկ, մասնակցել մեր գործի վտանգաւոր մոմենտներին, ինչպէս թոյլ չտրուեց նաեւ օր. Էմիլին: Պըն-ը շատ լաւ պիտի հասկանար մեր արձանագրութեան 22 եւ 22/2 - 23 երեսներից, թէ ինչպիսի զոհի մասին է այստեղ խօսքը. «կարմիր օրերի» զոհ, այսինքն ընդհանուր կոտորածի պատահական զոհ եւ ոչ բռնուելու, մահուան դատապարտուելու:

— Պըն-ը գիտէ  
Որ ամենաշատը, որ նախատեսուել է, այդ՝ կասկած-ւել եւ իբրեւ կասկածուած մարդ գործից զրկուել եւ կամ Պոլսից դուրս քշուել: Եւ այդ երկու դէպքերին համար էլ մանրամասն պայմանաւորուած ենք եղել ապահովել նրան գործով Պոլսում կամ դուրսը, նոյնիսկ նախատեսուած է եղել, որ եթէ ստիպուած լինի շտապով դուրս գալ եւ այդպիսով զրկուել իւր բնակարանի կահ կարասիքից, ժամանակ չունենայ վաճառել կամ հետը դուրս հանելու՝ վճարենք մենք նրան դրանց արժէքը առանձին կազմուած ցուցակով՝ իւր նշանակած գներով:

Հետեւապէս, զրպարտութիւն է, թէ մենք իբրեւ զոհ ժորիսին համոզել ենք մնալու, զոհել ենք կառքի ապահովութեանը:

Սխալուած ենք, որ ասել ենք, թէ նա աւելի օգտակար կը լինի մեր գործին Պոլսում քան Կովկասում:

Ուրեմն մենք այդ ասել ենք, որպէսզի ժորիսը բանտի եւ մահուան դատապարտուի, զոհուի: Եւ այդ մենք ասել ենք, որպէսզի նա մնայ եւ դուք թոյլ էք տալիս մեզանից հարցնելու թէ ինչ բանի համար էր պահանջում այդ զոհը... ձերբակալուի՞ եւ խոստովանի՞: Սա ի՞նչ անուն ունի պըն-եր, այսպիսի վերաբերութիւնը — սա չէ որ ինսինուացիա<sup>69</sup> է անուանուում. խաբուի տաճիկ ոստիկանութեան խոստումներից եւ պատմէ բոլորը, ինչ եղել է եւ այն, ինչ չէ եղել (օրինակ իբրեւ Ուրբաթ առաւօտեան մեզ մօտ մտած տեսած է, որ մենք տատանուում ենք եւ նա մեզ խրախուսել է եւ ասել: «Եթէ չգնաք, ես կը գնամ»: Այս բոլորը նոյնքան ճիշտ է, որքան ձեզանից մէկը եկած մեզ մօտ խրախուսած լինէր այդ օրը: Բանտի մէջ երեւակայել է եւ այնպէս ասել է Ֆարսի համար: Եւ երբ նա չխոստովանուէր եւ մնար սկզբնական իւր ցուցմունքների վրայ, նա յամենայն դէպս, ամենաշատը, իբրեւ լեզալ եւրոպացի, կ'աքսորուէր Պոլսից:

Եւ եթէ պատահել է, որ ժորիսը խոստովանուել է եւ անուանել Քրիսի ծանօթ կնոջ, կամ Մանուկին, այդ կնոջ մօտ էլ գտել են կամ Մանուկի մօտ գտել են Նշանի անունը: Նշանի մօտից էլ Յովսէփի Ղարիբեանի եւ սրճարար Նշանի, դրանից էլ անցել են երկու ուրիշներին, այդ բոլորի յանցանքը ուրեմն Յուզ-Մ-ի վերայ է ծանրանում կամ Սաֆոյի, որ չէ նախատեսել թէ ժորիսը պիտի խոստովանուի կամ չպիտի կարողանայ կասկած-ւելը նկատուելու պէս դուրս գալ Պոլսից կամ ծածկուել տասնեակ եւրոպացի) բարեկամների մօտ, իւր մօտ բարեկամ բելթ. հիւպատոսի քարտուղարի մօտ: Եթէ այդ կերպ դատուել լինենք, ո՞ր կը տանի մեզ այդ սոփեստաձեւ հիւսուածքը, post factum<sup>70</sup> առաջ բերուած: Այն

69.- Անուղղակի ակնարկութիւն, անուանարկութիւն:  
70.- Post factum՝ լատիներէն ասացուածք, յետից բուով, բանը բանէն անցնել ետք:

ժամանակ դուրս կը գայ, որ ամենամեծ յանցաւորները Դաշն. մէջ Անդրանիկներն ու Վարդաններն են, որոնց «պատճառով» սպանուած եւ վիրաւորուած մարդկանց անունները մի ամսում չպիտի կարողանանք թուել միայն: Եթէ այդ կերպ դատուել լինենք, դո՛ւ, Սիմէոն, պ. Ռոստոմ] եւ ինքը Ք-ը ո՞ր պիտի դնէք ձեր հոգիները, որ «թեթեւամտօրէն» եւ «յանցաւոր անհոգութեամբ» — քննադատի բառերն են —, ուղարկեցիք այնքան խմբեր, այնքան խմբեր, որոնք այլեւս չկան այսօր, գնացին, ջնջուեցին, տեղ չհասան եւ երկիրը աւերակ դարձաւ, Հայաստանը անհայացաւ:

Արդ, ներելի՞ ընթացք է խօսել յետին թուով, ճրի մեղադրանքներ շարել, որովհետեւ այնպէս չէ եղել ինչպէս կարծուել է թէ պիտի լինէր: Ամբողջ Դաշնակցութեան 17 տարուայ բոլոր ձեռնարկները այնպէս չէ եղել, ինչպէս կարծուել է թէ պիտի լինէր: Յետո՞յ ինչ դուրս եկաւ դրանից: Այդ է, որ անուանուում է ճրի եւ գրոշանոց քննադատութիւն եւ կ'աւելացնենք այս դէպքում եւ անբարեխիղճ քննադատութիւն եւ զրպարտութիւն, քանի որ մեր թղթերի մէջ դուք չէք կարող ցոյց տալ, թէ ժորիսը որոշուել է թողնել Պոլսում իբրեւ զոհ: Այլ ընդհակառակը, ապագայի գործողներին դիւրութիւն տալու համար:

Յետոյ այդ Ահմէդը  
Եթէ աշխատում ես ըստ կարելոյն զոհերի թիւը կրճատել, այնպիսի տեղեր, որտեղ գտնուում ես որ նա օգտակար չէ, ոչ միայն օգտակար չէ, այլ նոյնիսկ վնասակար — օր. վայրկենականի դէպքում, պաւլիսիոնի դէպքում — մեծահնչիւն իզիտ բացականչութիւններ, նիսիա<sup>71</sup> հերոսութիւն՝

Փոխանակ միջոցներ գտնելու զոհերի թիւը աւելացնելու, որ փորձը յաջողուի, այնպէս ենք դասաւորել եւ ինչ որ թէորիա հնարել, որ ոչ ոքի քիթը չարիւնի (զըրպարտութիւն, բացականչում ենք մենք — առնուազը, ա՛ռնուազը, երկու զոհեր ունէինք — Ռուբինան եւ Զարեհը, եւ եթէ նրանք այսօր կենդանի են — Անդրանիկն է կենդանի, Վարդանն էլ, Սուլթանն էլ է կենդանի, այդ նշանակում է թէ Սուլթանը իբրեւ զոհ չէ՞ր նկատուած):

Բայց երբ զոհը անհրաժեշտ է նկատուել եւ այդ զոհը, Ս. Գործը ապահովելու համար, անհրաժեշտ է նրկատուել, որ անգիտակ լինի...

Եւ այդ զոհը ընտրուել է եւ զոհուել:

Օ՛, սարսափ, ինչպէ՞ս, մի անմեղ զոհ, մի անգիտակից զոհ, բացականչում են այս ու այն կողմից: Եւ մարդ մնում է ապշած: Ի՞նչ են ուզում մարդիկ:

Եթէ զոհ է պահանջուել եւ զոհուել է. բացականչում են, ինչպէ՞ս կարելի է, անմեղ, անգիտակից զոհ: Իսկ եթէ զոհեր չես ունեցել, պատահաբար ազատուել են նոքա, ինչպէս առանց զոհերի մի այդպիսի գործ կարելի է կատարել:

Որն է մեր յանցանքը, մէկ հասկացրէ՛ք այն, որ զոհը թուրք է եղել, թէ այն, որ նա անգիտակ է եղել:

Մենք բթացել ենք, չենք կարող ձեզ հասկանալ: Կառքի անշարժ մնալը իւր որոշուած տեղում եւ որ գլխաւորն է, չպայթելու դէպքում նրան ապահով յետ բերելը, միով բանիւ Սուլթ. գործի ապահովութիւնը պահանջում էր, որ կառքի հետ միասին մէկը զոհուի, բայց անպատճառ եւ անպայման նա լինի անգիտակ: Եթէ գիտեցաւ իւր զոհուելը, այդպիսին չի ապահովում ոչ պայթելը, ոչ էլ որոշ մոմենտում յետ գալը:

Եւ այդ անգիտակ զոհի համար մենք ընտրել ենք տաճիկը եւ ոչ հայը:

Ինչո՞ւմն է այստեղ յանցանքը, կրկնում ենք, անգիտակցութեան, թէ հայ չլինելու մէջ:

Բայց ինչո՞ւ անպատճառ հայ պէտք է լինէր: Ինչո՞ւ այն ցեղից որ տասնեակ հազար զոհեր տուել է, ինչո՞ւ հայ պէտք է լինէր եւ երրորդ զոհը, զոհը անպայման, երբ երկուքը արդէն տրուած էին, մէկի փոխարէն՝ Ռուբ[ինան] եւ Զարեհը: Ինչո՞ւ հայ — երբ կէս ժամ յետոյ պէտք է հարիւրաւոր հայեր զոհուէին, գուցէ հազարաւորներ: Ինչու այդ տուրքը աղքատի կաշուից պէտք էր հանել եւ ոչ հարստից, թուրքից: Այդ մենք հասկանալ չենք կարող:

Իսկ եթէ բողոքը անգիտակցութեան մէջ է, այդ կը նշանակէ ականջները եւ աչքերը փակել հասկանալու համար, ինչ քանիցս կրկնուեց այստեղ վայրկենական եւ ոչ վայրկենականի նկատմամբ: Սխալ է թէ ուղիղ, այդ եթէ կարող էք, քննեցէ՛ք, բայց մեզ պողպատ մեքենան աւելի ամուր եւ վստահելի էր քան նեարդ մեքենան: Այդ մասին մենք խօսել ենք երկար, տեխնիք. մասում:

Իսկ նոյն այդ հարցը նորից զարթեցնող պըն. Վ-ի հեղեղական բացականչութեանը, թէ մի այդպիսի գործ վայրկենաչափի անձուերութեանը վստահեցաւ, կ'ասենք միայն, որ դա յիշեցնում է մեզ մտքերի զուգորդութեամբ պըն. Վարդոյի բացականչութիւնը Շար-ժումի<sup>72</sup> մէջ, որ այդ գործում ամէնէն անձուէրներն եղել են Հասան աղի ձիերը: Տեսնո՞ւմ էք, մենք ունեցել ենք այդպիսով երկու ձիեր եւ երկու վայրկենաչափեր եւ մէկ տաճիկ տղայ (պ. Վարդոն երեւի չգիտէր Ահմէդի անձուերութիւնը) ամբողջ հինգ անձուէրներ:

Իսկ մենք գիտենք չորս թագաւորասպանութեան փորձեր, որտեղ անձուէրը եղել է միայն մէկը — ելեկ-

71.- Նիսիա՝ տաճկերէն բառ ապառիկ իմաստով: Նիսիա հերոսութիւն կը նշանակէ խօսքով, ենթացողական հերոսութիւն:  
72.- Վարդօ, Վարդ-Պատրիկեան, Վառնայի «Շարժում» քերթի խմբագիրը, որ բարոյական սայթաքումներու եւ դրամական իւրացումի յանցանքով Պալքաճի Կ. Կոմիտէին կողմէ արտաքսուեցաւ Գ. Յ. Դ. շարքերէն, իսկ Չորրորդ Ընդի. ժողովի որոշումով նոյն տարին, 1907ին, ահաբեկման ենթարկուեցաւ:

տրրական հաղորդիչի ծայրից ցայտող կայծր միայն: Եւ այդ Կորագեւի խանութի վրայ, Աղեքսանդրովա կայա-  
րանի մօտ Մոսկուայի գծի վրայ Աղեքսանդր] 11-ի փոր-  
ձերի ժամանակ:

Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ .....<sup>73</sup> փողոցի տակ  
միայն 1 փ. 20ֆ. էր դրուած քանակը եւ ոչ 1. 30, կամ 2  
փուլ, կամ 10 փուլ: Կարծո՞ւմ էք չեն ունեցել 1.20[ից]  
աւելի: Կարողացէ՞ք եւ կը տեսնէք, որ այն ամբողջ գլխով  
մեզանից բարձր հեղինակները նոյնպէս ունեցել են մեր  
մտածելու եղանակը, ճաշակող գոհեր չտալու... Հաս-  
կանո՞ւմ էք այդ...:

Պէտք է եղել ջանք գործ դնել գոհերի թիւը շատացնել  
ապահովութեան) համար: Իսկ երբ նա ապահով է ա-  
ռանց շատ գոհերի, դարձեա՞լ շատացնել, որ էֆֆեկտ]  
ուսննայ ի՞նչ: Կիրառելի՞նք<sup>74</sup> հաշուել է, որ 1 փ. 20-ը ֆ-ը  
բաւական է Աղեքսանդր] 11ին անպայման տապալելու,  
իսկ եթէ 2 փուլ լինի կամ աւելի փողոցի տների մէջ էլ  
գոհեր կը լինին: Հետեւապէս եւ իրանց խանութի մէջ  
իսկ նա չէ ուզեցել աւելորդ գոհեր տալ: Եւ եթէ բան է Ա-  
ը այդ գծով անցնէր եւ մի պատահարով, ուշանալու  
կամ շտապելու անվնաս մնար: Ո՞րքան առատ նիւթ է-  
ժանագին քննադատութեան — ինչո՞ւ 10 փուլ չէ դրել,  
եթէ դրած լինէր, անպայման կ'աջողուէր:

Միթէ այդպիսի մի գործի համար ներքի էր գոհերի  
թուի մասին մտածել թէ քիչ լինեն, փոխանակ միջոցներ  
ձեռք առնելու, որ շատ լինեն գոհերը, միայն թէ փորձը  
ապահովուէր: Պարզ է, որ չեն ուզեցել նոքա գոհել խա-  
նութի մէջ, անձնագոհ մարդիկ չեն ունեցել եւայլն:  
Այդպէս պիտի խօսէր անձնագոհութեան անուսից ճա-  
ռող պր. Վ-ը եւ անունը պիտի դրուէր քննադատու-  
թիւն:

Եթէ այդ կերպ քննադատելու եղանք մի ժամ, միայն  
մի ժամ, գիտէ՞ք որ մեր 17 տարուայ փայլուն գործերից  
իսկ քար քարի վերայ չի մնայ, գրոշանոց գործեր դուրս  
բերելուց վերջը դեռ մի բան էլ պարտք կը մնային Վար-  
դանները, Նիկոլները, Գարոնները իսկ, մեր երգերի նիւթ  
Խանասորն ու Բանկ Օտտոմանը այդպիսի քննադատա-  
կան բարեխղճութեան չափի տակ, մի մի ծաղրելի եւ վը-  
նասակար եւ դատապարտելի գործեր կարելի էր դուրս  
բերել եւ այդ՝ ամենայն հեշտութեամբ, առանց փաստե-  
րի խեղաթիւրման, առանց մեծ դժուարութեան: Անհա-  
մեմատ աւելի հեշտ, քան այդ ձեզ յաջողուի մահափոր-  
ձի նկատմամբ 3 հատորի:

Բայց այդպիսի քննադատութիւնների իսկական  
անունը խժբժանք կը լինէր եւ ոչ քննադատութիւն: Իս-  
կական քննադատութեան առանձնայատկութիւնը  
հէնց նրանումն է, որ այդպիսին ամէնից առաջ — հա-  
մեստութեան չափը չի կորցնում, ձեռնհաս կը լինի  
մտնելու ժամանակին եւ տեղի իրականութիւնը կազ-  
մող պայմանների մէջ փոխանակ post factum<sup>70</sup> անպա-

տասխանատու ենթադրութիւններ անելու, եթէ այդ-  
պէս չլինէր — այդպէս չէր լինէ, եթէ այսպէս լինէր —  
այսպէս դա դուրս կը գար: Մի եթէ դնել եւ մի կարող էր  
եւ կարծել թէ հարց լուծուեց — դա է որ քննադատու-  
թեան վայելող ձեւ անուանելի հեռու է: Իսկ երբ այդ-  
պիսի քննադատութիւնը բացի թեթեւ վերաբերմունքից  
կրում է իւր մէջ եւ այնպիսի գոհարներ բլլլլֆներ —  
փաստերի գիտակցորէն խեղաթիւրութիւնների եւ զրո-  
պարտութիւնների որոնց նմոշներն այստեղ առաջ բե-  
րինք եւ որոնք դժբախտաբար վերջ չունին, ուրիշ կա-  
տեգորիայի գործ է:

Մենք ստիպուած ենք համառօտել եւ կարճ պատաս-  
խանել ժամանակ վաստակելու համար: 2 ժամը կը վեր-  
ջանայ, վախենում ենք զրկել ժողովը մի քանի նոր  
նմոշների ականատես լինելուց, վերջնականապէս գը-  
նահատելու համար մեղադրական ակտի այս բացառիկ  
հատորը:

Մեզ վերայ ծանրանում է մի սոսկալի յանցանք, այն  
է, որ դեսպանատան թղթերը յանձնել ենք այն հաշուով,  
որ երկրորդ օրը լինի դեսպանների ձեռքին: Կրն-ը կաս-  
կածում է: Իսկ արձանագրութեան մէջ ասուած է, թէ  
երկրորդ կամ երրորդ օրը:

Ուրեմն կամ երրորդը թողել ենք: Եւ այդ առթիւ մի  
շարք բացականչութիւններ:

Մենք մեղադրում ենք — այսինքն երրորդ դերակա-  
տարը — որ նամակները նետուած են փոստարկերը իւ-  
րաքանչիւր պետութեան 1/4 ժամում:

Դրանից եզրակացնում է պրն. քննադատը, թէ այդ-  
քան կարճ ժամ. թէ յաջողուել է ինձ այդ կատարել (նա  
ուղղակի կասկած է յայտնում, իբրեւ հեղինակաւոր  
նախկ. պոստ. ծառայող թէ 1/4 ժամում կարելի լինի այդ  
գործողութիւնը կատարել) որքան այդ ինքնին ենթադ-  
րում է չափազանց հապճեպութիւն: Բայց նա լուում է,  
որ մենակ չեմ եղել, օր. էմիլի հետ եմ եղել, հետեւապէս  
չի էլ ցանկացել մի րոպէ մտածել, թէ երեւի նամակների  
կէսը ինքն է նետել, կէսն էլ օրիորդը — որպէսզի այդ-  
քան հապճեպ չլինի:

Տեղ. մէջ պարզ ասուած է, 1/4 ժամի մէջ նամակներն  
արդէն ձգուած էին իւրաքանչիւր պետ. պոստարկերը եւ  
մենք էմիլի հետ վերադարձ[անք] տուն:

Ենթադրենք նոյնիսկ մի րոպէ, թէ մենակ լինէի եւ  
հապճեպ կատարած լինէի այդ գործողութիւնը: Մի  
մարդ, որ ամենաուշը 1/2 ժամից սպասում է քաղաքում  
կոտորած, կեանքը պիտի դադարի եւ սֆֆթաների եւ ե-  
նիչարիների սրածութիւնը պիտի սկսուի, Բանկ Օտ. օ-  
րերի — ի՞նչ տեսակէտէ դատապարտելի պիտի նկատ-  
ւէր եթէ շտապով նոյնիսկ կատարել [է] այդ գործողու-

73.- Բնագրին մէջ ուսատառ, փողոցի մը անընթեռնելի ա-  
նուը:

74.- Աղեքսանդր Բ. ցարի դէմ գործուած ահաբեկչական  
փորձի մասնակիցներն:

թիւնը: Երեւի պրն.ը եթէ լինէր տուն չէր դառնայ, այլ  
սրճարան կ'երթար նորէն: Երեւի հարկաւոր է եղել կա-  
տարել ոչ 1/4 ժամ, այլ 1/2 ժամում եւ շուտ տուն չգնալ,  
ուր պայմանաւորուած էինք սպասել Ռուբ. եւ Զարե-  
հին:

Մենք գործից առաջ մտածում էինք, տեղացիներին  
յայտնած կարծիքների համաձայն՝ Թորգ., Աշոտ, Քր.,  
Վռամ., Ժորիս եւայլն — թէ ինչպէս Բ[անկ] Օտտոմա-  
նի], նոյնը եւ աւել եւս Սուլթ. սպ[անութիւնից] վերջը —  
1/2 ժամ չանցած, կը սկսուի անարխիան — կոտորածը եւ  
կը տեւէ նա օրեր: Երթեւեկութիւնը կը դադարի: Մտա-  
ծում էինք, որ եթէ ոեւէ հրաշքով ազատուեն մեր երկու  
գոհերը, միեւնոյն է դարձեալ — ուսկից ազատուելը ան-  
երեւակայելի է, քանի որ իսկոյն եւեթ դուրս գալ անկա-  
րող պիտի լինինք չորսս էլ, քաղաքը անարխիայի, երթե-  
ւեկութիւնը՝ դադարած լինելու պատճառով մի քանի  
օրերի ընթացքում: Եւ որովհետեւ այդ օրերի մէջ  
դժուար է ենթադրել, որ մեր տասնեակ հետքերից մէկն  
ու մէկը չբացուի ուստի փրկութիւնը աւելի քան երկբա-  
յելի էինք գտնում եւ մտածում էինք պաշարման դրու-  
թեան պայմաններն ապահովել որքան հնարաւոր է հա-  
ցով, ջրով, կենդանի հաւերով (միայն կը հոտի): Հաւերը  
չէ մոռացել քննադատ պրն.ը: Մենք ենթադրում էինք  
թէ 10-15 օր[ից] գուցէ խաղաղի, անարխիան վերանայ  
եւ եթէ բան է այդքան օրուայ մէջ մեր հետքերը չգը-  
տան, թերեւս կարելի լինի դուրս գալ Պոլսից: Ամբողջ  
մեր պատրաստութիւնը դուրս գալու համար եղել է  
այն, որ նախընթաց օրը մեր անցագրերը վիզա ենք արել  
տուել ու[ուսական] հիւլ[ատոսարանից], ուրիշ ոչինչ՝  
«յամենայն դէպս»: Մնացած մեր բոլոր հոգսերը, ընդ-  
հակառակը եղել են պաշարման այսպէս ասած դրու-  
թիւնը ապահովել ուստի յեղէնով, ջրով եւ փամփուշտնե-  
րի առատութեամբ: Այլեւս ուրիշ հոգս չենք ունեցած:

Մենք նախընթաց օրը ճանապարհ ենք դրել Թորգ.,  
Քրիսին, երկու օր առաջ Աշոտին, երեք օր առաջ Մը-  
կըրտիչին, Արամին: Երուանդի ձիւն դարմանի համար  
ապահովել ենք թաքստոց յոյն մաքսանենգի մօտ որ  
նրան պահէ եւ դուրս հանէ, ինչ որ նա կատարել է: Ա-  
մէն դուրս գնացողին որոշուած գումարները տրուել է:  
Ժորիսին հետ վերջին հրաժեշտն ենք տուել նախընթաց  
օրուայ երեկոյան տալով եւ նրան, ոեւէ ղիպուածով  
իսկոյն դուրս գալու գումար [եւ յայտնել որ] կարող  
ենք այլեւս իրար չկարենալ տեսնել:

Նա յայտնել է թէ գուցէ փակուած մնան գինգերի  
գրասենեակում<sup>75</sup>, ինչպէս պատահել է Բ[անկ] Օտտ[ոմա-  
նի] օրերին:

«Եւ ամէնէն ետք, նկատի ունենալով [է], որ իզմիրի  
գործերուն վտանգումը սկիզբն առաւ Պոլսին, երբ  
Cr[édit] Lyonnais-ի մէջ կատարուած քննութիւններէն ե-  
րեւան եկաւ, որ Հիպա Ռիպա որ կառք ստացած էր, 140  
ոսկի դրկած է իզմիր: Այսպէս կը գրէ մեր պատմաբանը:

Բայց, պրն պատմաբան, գոնէ մի տող գրէք, որ մէ-  
ջը բլրլֆ չլինէր — դա ի՞նչ վատ սովորութիւն է — չի-  
տակ մի տող էլ չկարենալ գրել:

Հիպա Ռիպա (ձեր խ[ոնարհ] ծառան) կառք չէ ստա-  
ցած: Ռիպի Սիվին է կառք ստացողը, ինչո՞ւ էք աղաւա-  
ղում: Հիպա Ռիպը փող է փոխադրել Իզմիր, ինչո՞ւմն  
է յանցանքը: Զփոխադրէ՞ր: Եւ եթէ Տաճ. ուստ. խու-  
զարկ. է կատարել Cr. Lyon[nais] եւ եթէ իզմիրում ձեր-  
բակալուել է Նալբանդեան, բարեխիղճ եղէ՞ք պրն նորից  
յիշելու, որ Նալբանդեան արդէն բանտարկուած է եղել  
չատ առաջ եւ ուրիշ գործով: Յիշեցէ՞ք գոնէ, որ իզմի-  
րի գործը բացուել է Պոլսից ամբողջ 15-20 օր վերջը  
միայն, որ Սուրէնի ձեռքին պայթած հրացանի հարց  
կայ մէջը Սեդրակի ձեռքով — Սուրէնի վերաբերեալ Իզ-  
միրի գործող անդամների ձեռքը նրան կասկածելով:  
Սուրէնը դուրս է փախել փողոցը, որին կը փնտռէ եղբր  
կառավարութիւնը: Փողոցում ժողովուրդը տեսել է  
այդ թէ ինչ տան մէջ կատարուել, այն տան մէջ, ուր  
ապրանքն է եղել պահուած, գլխաւոր պահեստը: Որ  
մենք 20 օր առաջ, որն է մահափորձի հետեւեալ օրը  
գրել ենք] իզմիրի ընկերներին մահափորձի մասին, որ  
առաջարկել ենք, որ հերթը իրանցն է: Գրուած է եւ Ֆի-  
լիպէից մեր նամակի համաձայն եւ գգուչացուած Նալ-  
բանդեանի մասին: Իսկ եթէ նրանք Բիւրոյի միջամտու-  
թեան եւ յորդորների շնորհիւ յետաձգել են եւ այդպի-  
սով վիժել է գործը — Յուց մարմիլ<sup>76</sup> յն է յանցաւորը  
(Թորգոմի եւ Քրիսի նամակը Աթէնքից, երբ լսեցին յե-  
տաձգելը):

Քննադատը խոհեմութեամբ լուում է, թէ ի՞նչ գգու-  
չութիւններ են, որ ձեռք չեն եղել առնուած: Նա լուում  
է, որ մենք ժրնեւում բողոքել ենք իզմիրի գործը յե-  
տաձգելու համար, յայտնել ենք թէ չի կարող չզբաղ-  
ւել, բայց Բիւրոն պնդել է եւ մեզ ներկայացրել իզմիր-  
ցոց նամակը, թէ իրանք կարող են սպասել, ապահով են  
եւայլն:

Եւ սպասեցին 20-25 օր ամբողջ եւ բացուեց գործը եւ  
վիժուեց միայն եւ միայն Արեւմ. Բիւրոյի ապօրինի մի-  
ջամտութեան պատճառով: Իսկ քննադատ պրն.ը Յու-  
ցականին է վերագրում բացուելու պատճառը, իսկ Բիւ-  
րոն լուում է, չի բողոքում այդպիսի անարդար մե-  
ղադրանքի դէմ ոչ հասցէին ուղղուած:

Այսպէս է ահա գրուում պատմութիւնը:

«Այլ առակ լուարուք»:  
Եւ ի՞նչ տեսանք — ասում է պրն. Վ-ը — Աթէնքի հո-  
յակապ ծրագիրը, Քրիստափորի շնչով ստեղծուած,  
հետզհետէ մանրացաւ, մանրացաւ, խնձորաւորները

75.- Ժորիս պաշտօնեայ էր Զինգեր մակնիշը կրող կարի մե-  
քենաներու հանրաժանօք ընկերութեան Պոլսոյ մասնաճիւղին  
մէջ:



անհետացան, կառքերն անհետացան, մնաց կառք մը միայն եւ ան ալ վայրկենաչափի մը անձնուիրութեան վստահուեց»:

Խնձորաւորներն անհետացան, այո՛, թէ ինչու արդէն ասացինք տեխնիքականի մէջ. կ'ուզէք որ նորի՛ց կրկնենք, իսկ կառքերը, ո՞ր կառքերը — խուճապը շատացնելով՝ կառքերը որ դուք ձեր աչքերով կարողացիք Վուամի ձեռքով: Գլխաւոր կառքը մէկն է, դուք այդ գիտէք: Եթէ Հնարաւոր լինի երկուսը — այդ բառն է, որ կը շահագործէք:

Գիտէ՞ք որ Հնարաւոր էր եւ չարի՞նք երկու կառք: Մի քիչ ակնածանք, պրն-եր, մի քիչ գոնէ, այդքան հեռուն գնալ արդէն առնուազը անհամեստութիւն է. սա՛՛ եւայլը, պրն. Վ-ն, երբ կը շարէիք հետեւեալ տողերը թէ Պ. Մ-ի անդամներէն եւ ոչ մէկը քաջութիւն կ'ունենայ գոհաբերութեան դեր մը ստանձնելու այդ գործին մէջ — ամէնէն վտանգաւոր դերերը ձգելով ուրիշներու ուսերուն վրայ — նորօրինակ եւ անբարոյիչ եւայլն (խի՞ղճ) յիշատակ մը՝ ձգելով Դաշն. Պատմ. մէջ» — Այսպէս բացականութիւնով կը վերջացնէ պ. քննադատը իւր նորօրինակ այս անբարտաւանութեան նմուշը իսկապէս անբարոյակ[ան] յիշատակ մը ձգելով Դաշն. Պատմութ. քննադատութեան մէջ:

«Ուրիշներու ուսերու վրայ ենք ձգել ամէնէն վտանգաւոր դերերը»:

Ովքե՞ր են այդ ուրիշները, պրն. քննադատ. օր. Ռուբինան, թէ Ջարեհը: Ջարեհը իբրեւ կառապան, նա գիտէ, որ ոչ ոք կարող է նրան փոխարինել. օր. ինչո՞ւ է «ուրիշ» անուանուած պրն. պատմաբան, երբ նա հաւասար եւ լիազօր մեր ընկերն էր, համաձայն կանոնադրութեան ընտրուած: Ինչո՞ւ է նա ուրիշ անուանուած Հարցնում ենք մենք:

Այստեղ, այս բոլորին մէջ դուք չէի՞ք, որ Հարցնում էիք, ինչու Ռ[ուբինան] չէ ստորագրած մանդատը, չէ որ նա հաւասար անդամ է: Այո՛, եղաւ պատասխանը, հաւասար:

Ի՞նչպէս այժմ նա ուրիշ դարձաւ: Նա գիտէ, շատ լաւ գիտէ, որ մենք չենք նրա ուսերի վրայ ձգել, նա գիտէ, որ վիճակով է որոշուել: Նա շատ լաւ գիտէ, որ վիճակի բախտին չէ եղել թողուած, այլ անկարելի է եղել առանց վիճակի ընտրել մէկին, քանի որ այդ ամէնէն վտանգաւոր գործին գնալու ցանկացողներ եղել են եւ Ընդ. Ժող[ովից] ընտրուած անդամները, որ նրանք խոյս չեն տուել այլ ընդհակառակը մասնակցել են վիճակահանութեանը: Այդ բոլորը նա գիտէ:

Ապա ինչ անուն տալ նրա այս քննադատական վիժմունքին: Նա կարողացել է արձանագրութեան 20/2 երեսը, նա կարողացել է այնտեղ, որ ոչ ոք — չորս մասնակցողներէց չուզեց գիջել այդ դերը ուրիշին, ամէնքը իրան յարմարագոյնն էր նկատում ուստի եւ ստիպուած էինք վիճակի դիմել: Այստեղից պարզ է, թէ ինչպիսի վիճակի

մասին է խօսքը, բայց բարեխղճութեան բոլոր Հնարաւոր չափերը անցած պրն-ը գիտենալով այդ բոլորը, այնուամենայնիւ սեւով սպիտակի վերայ գրում է Համբերատար թղթի վրայ՝

«Կառքի մէջ նստելու դերը վիճակի բախտին կը ձգեն»։ 24 երես:

Սա ի՞նչ անուն ունի, ձեզ եմ հարցնում, այսպիսի վարմունքը:

Յիշո՞ւմ էք այն կտորը՝ «Աթէնքի Հոյակապ Ծրագիրը, Ք-ի շնչով ստեղծուած, որը գնալով մանրացել է եւայլն (Երես 43):

Բայց քննադատը շատ լաւ գիտէ, որ Աթէնքում ծրագիր չունէինք կազմուած: Այդ նա գիտէ եւ ասում եմ, չի կարող ուրանալ: Գիտէ եւ այնուամենայնիւ գրում է գիտակցօրէն սուտ: Ապացո՞յց, որ գիտէ եւ գիտակցօրէն ստում է այստեղ: Ահա նա, մեր ձեռքն է:

Ահա ձեզ նոյն գրչից արտագրուած նրա այդ քննադատ. 5 երեսում 10րդ տողից սկսած կարդում ենք՝

«Յուց. մարմինը Աթէնքի մէջ ծարագիր չի կազմեր, այլ ընդհանուր գծերը միայն կ'որոշէ եւայլն»: Սոքա պրն. Վ-ի իսկական բառերն են, նոյն գրչով, նոյն թանաքով գրուած, ինչպէս եւ Աթէնքի Հոյակապ Ծրագիրը, Ք-ի շնչով ստեղծուած:

Մըն է դրանցից սուտը պրն. քննադատ. Հոյակապ Ծրագիրը, թէ ծրագիր չէ կազմուած այլ միայն ընդ. գծերը:

Շարունակել թուել: Բայց միթէ՞ բաւական չէ այսքանս: Ազատեցէք մեզ այս տխուր աշխատանքից: 48 երեսի վերայ, ո՞ր տողը վերցնէք, որ կտորի վերայ կանգնել ուզէք, ամէն տեղ, ամէնուրեք՝

ԲըլըՖ, զրպարտութիւն, անուանարկութիւն, ձեռնածութիւն, գիտակցօրէն ստութիւն, աղաւաղումն — ոչ մի տեղ չկայ, որ մարդ կարողանայ կանգ առնել եւ ասել, այս տողերը ահա ազատ են կրքից, անբարեխղճութիւնից: Ոչ մի կտոր: Տասից աւելի այդպիսի գոհարներ մենք թողնում ենք, խնայելով ժողովրդ, թողնում ենք

Անուանարկ[ութիւն] N 100րդ, երես 28

Ռուբինայի մասին —

«Բայց որովհետեւ ինքը Ռուբ. եւ Ժընելի ընկերն[երը] կը պնդեն», Յ. Մ. տեղի կու տայ: «Այս բայցը տեղեկագրի մէջ երեւան կու գայ երկու տարի ետք: Իսկ արձ. [եւ] տեղ. մէջ առանց այլեւայլի կ'ընդունուի Ռուբ[ի-նայի] առաջարկը»:

Իսկ այս նամակնե՞րը. N 10 Սաֆոյի գրած Արեւմ. Բիւրոյին: Չէ որ կարողացել է պրն-ը սրանք ե՞րբ են գրուած, ի՞նչ են վկայում սոքա: Սոքա վկայում են, որ պրն-ը գիտակցօրէն ստում է եւ զրպարտում:

Քրիստ[ափորի] պատկերը Պոլսի թերթ[երում] խօս չէր: Մեր շտապելու պաճառները հեզնում են:

Փախուստի ճան. շատ լաւ ենք եղել ուսումնասիրած, այդ երեւում է նրանից, որ իմացել ենք որ ժամին, որ նաւն է գնում:

Պրն-ը ախր շատ լաւ գիտէ, որ դա ուսումնասիրութեան կարօտ չէ, ամէն օր իւրաքանչիւր թերթում գրուած է այդ: Ստամբոլ թերթը նոյն վայրկեն[ին] կարդալն է ապացոյցը մեր փախ[ուստի] ճան[ապարհները] լաւ ուսումնասիրած ըլլալուն:

Իսկ ամենածանր մեղադրանքը, նոյն կատեգորիայի, ինչ որ բոլոր միւսներն են, թէ մենք իբրեւ չենք հոգացել ընկերների ազատելու մասին, թէ մենք չտապել ենք դուրս գալ Պոլսից, փախուստի մասին ենք միայն մտածել, որովհետեւ այլեւս մեզ ոչինչ չէր կապում Պոլսի հետ:

Արդարեւ ոչինչ չէր կապում, հարցնում է պրն-ը եւ թուում թէ քանի ընկերներ այնտեղ թողած ենք մենք բանտի եւ կախաղանի առաջ:

Արդ, ձեզ արդէն մենք յիշեցինք, թէ այդ ովքեր են, թէ մենք ոչ մէկին դրանցից չենք ճանաչում եւ չենք տեսած եւ նրանք մեզ հետ ոչ մի կապ կամ մասնակց[ութիւն] չեն ունեցած մահափորձի [հետ]: Հետեւապէս եւ ոչինչ կարող էինք անել նրանց համար, եթէ մի ամիս էլ մնայինք այնտեղ: Թող որ պրն-ը շատ լաւ գիտէ, որ ոչ թէ մի ամիս այլ մի շաբաթ եթէ դանդաղէինք եւ վախենայինք դուրս գալ — արդէն բոլոր չորսս էլ բռնուած էինք:

Օ՛, երբ մտածում եմ այդ մասին, որքա՛ն երանի եմ տալիս բռնուածներին, Ժորիսին, որքա՛ն մեծ դժբախտութիւնից ազատուած կը լինէինք, գոնէ այսպիսի քննադատութիւններ կարողալու, լսելու դժբախտութիւնից:

Ի՞նչ մնաց այս ներող[ամիտ] քննադատութիւնից: Դատարկ տեղ միայն եւ այդ դատարկութեան մէջ մի տկիչք<sup>76</sup>, որի անունը չէ ընդունուած անուանել:

Եւ այդ յիշեալ մեր ենթադրական անտարբերութիւնը, որը արդէն տեսանք, թէ որքան հիմնաւոր էր, յանձնախմբի աչքում աւելի ծանրակշիւ հանգամանք է ստանում, երբ նա զուգընթաց համեմատութեան է դնում սեփական ապահովութեան բոլոր Հնարաւոր միջոցները գործ դնելով: Բախտի բերմունքին է թողել այդ միջոցները: Մենք կարող ենք բոլորովին անպատասխան թողնել մեղադրական հարցի այդ երկրորդ կէտը, քանի որ տեսանք, թէ առաջին կէտը հաւասար է իրականութեան մէջ գերոյի: Իսկ գերոն յայտնի է համեմատու-

թեան համար վերցուելու անյարմար թիւ է: Զերոյից անսահման մեծ է ամէն մի թիւ նոյն իսկ ամենամանր կոտորակը: Եւ իրօք մեր սեփական փրկութեան համար յանձն. առաջ է բերում այդպիսի մի կոտորակ. ի՞նչ է եղել մեր ձեռք առած միջոցները ապահովութեան՝ ատրոմանակներ ենք ունեցել եւ նաւի երթ ու գալն իմացել. այն է որ մենք շատ գեղեցիկ կերպով ուսումնասիրած ենք եղել թէ ո՞ր ժամին ինչ նաւ ուր է գնում: Եթէ ասէր այս բանը մի բժ. Զաւր. եւ մի Սարգ[իս] կամ Թոփճեան — այսինքն մի մարդ, որ պոլսեցի չէ, Պոլսի հետ ծանօթ չէ — թերեւս ներելի լինէր: Բայց պրն. Վրուամեանին այդ աններելի է, որովհետեւ նա լաւ գիտէ, թէ նաւերի շրջանառութիւնը իմանալու համար ոչ ուսումնասիրութիւն է հարկաւոր եւ ոչ էլ իսկ աշխատանք մի ամսուայ, մի օրուայ եւ ոչ իսկ մի ժամի եւ ոչ էլ իսկ մի 10 րոպէի, այլ միայն եւ միայն 1/2 վայրկեանի, այն է կարդալ Ստամբոլ թերթի երեք չորս տողը, որի մէջ միշտ յայտարարում է ամէն օրուայ նաւերի երթ ու գալը: Ահա թէ որքան բարդ գործ է եղել Ստամբոլ թերթի մի կտոր կարդալը: Իսկ եթէ իմանաք, թէ այդ էլ կատարել է օր. էմիլը եւ այն էլ այն ժամանակ, մահափորձի վերջը, երբ որոշեցինք փորձել բախտերս նոյն օրն էլ դուրս գալու: Եւ եթէ որոշէինք դուրս չգալ — այդ Ժորիսին օգնելու համար չէր, որ պիտի մնայինք, Մանուկին կամ Նշանին գտնելու համար չէր որ պիտի մնայինք այլ ընդհակառակը միայն եւ միայն մեր փորկութիւնը ապահովելու համար, ուրիշ ոչ մի բան այլեւս չունէինք անելու:

Ուրեմն մեր փրկութ. մասին բոլոր միջոցները առած լինելը ուրիշ ոչինչ է եղել ապա թէ ոչ Ստամբոլ թերթը դուրս գալուց առաջ աչքէ անցկացնել եւ անցագրերի վիզաները արած լինելը, եւ ատրոմանակներ ունենալը:

Որպէսզի ասել մարդկանց, դուք թողի՞ք ձեր ընկերներին մահուան, կախաղանի առաջ, ոչինչ չարիք նրանց ազատելու համար. այդպիսի ծանր, ծա՛նր մեղադրանք բարդելուց առաջ պարտակա՞ն չէր յանձնախումբը խիստ զգուշաւոր կերպով ստուգելու այդ իրողութիւնը: Թէ արդեօք այդպիսի բան տեղի ունեցե՞լ է, թողել են ընկերներին անօգնական ու իրանք իրանց գլուխը փրկել: Ամէնից առաջ ընկերներ փրկելու համար հարկաւոր է որ այդ ընկերները գոյուլթիւն ունենան:

76.- Յատակին մնացած աղբ, աղբախառն տակաճառ:



Ապա, եթէ այդ ստուգուեց անպայման, գալիս է երկրորդ հարց. արդեօք Յ-ը գիտէր, որ նրանց կախադանի կամ բանտի վտանգ է սպառնում: Եթէ այդ էլ ապացուցուեց, ապա հարկաւոր է տեղի եւ ժամանակի պայմաններում այդպիսիների փրկութեան համար ստուգել, թէ արդեօք Յ-ը ունէր միջոց նրանց օգնելու, որ չէ արուած: Եւ եթէ ունէր, ինչո՞ւ չէ կատարել: արդեօք ունեցել է ժամանակ, ստուգենք այս էլ. ապացուցի՞ր անհերքելի կերպով, դեռ բոլորը ունեցել է հնարաւորութիւն: Ահա թէ որքան աստիճանաւորում ունի մի այդպիսի մեղադրանքը առաջ քան բարեխիղճ քննադատութիւնը, եզրակացութիւնը հանելը, թէ եթէ ընկերներ եղել են օգնութեան կարօտ: Եւ այս բոլոր հարցերին դրական եւ ստուգուած պատասխան տալուց վերջն է, որ պիտի այս կամ այն եզրակացութիւնը հանէր, չմոռանալով նաեւ այսպէս անուանուած «մեղմացուցիչ դէպք յանցանացը»: Եթէ Յ-ը կարող էր այս կամ այն անել նրանց համար, ինչո՞ւ չէ արել, ի՞նչ դրդապատճառներով՝ արդեօք այն է, թէ իւր գլուխը պրծացնելու մասին միայն հոգալուց, արդեօք այն է, թէ ժամանակ եւ հնարաւորութիւն չէ ունեցել, թէ այն է, չէ նախատեսել

վտանգ այդպիսիների նկատմամբ: Բայց այդ հարցերին պատասխան տալու համար պարզ է, որ հարկաւոր էր մանրամասն հարց ու փորձ, քննութիւն, ուսումնասիրութիւն: բոլորին պատասխանելուց վերջը միայն, կարելի էր գալ այս կամ այն եզրակացութեան: Ատարե՞լ է յանձնախումբը. նա ինքն է պատասխանում որ ոչ. նա միայն մեր թղթերն է կարդացել, միայն կարդացել Յ. Մ-ի վերաբերեալ թղթերը, ոչ ոքի չի հարցրել, ոչ մի ուսումնասիրութիւն, ոչ մի քննութիւն կամ հետապնդում: Բայց եւ այնպէս բերել է ձեր առաջ մի այդպիսի ծանր մեղադրանքը<sup>77</sup>:

77.- Հարկ կը տեսնենք մատնանշել, որ անողջ այս պարբերութիւնը խճճուած է Սաֆոյի ձեռագրին մէջ հեղինակին յատուկ սովորական ջնջումներով, սղագրութիւններով եւ յաճախակի տողամէջի եւ լուսանցքային յաւելումներով, որոնք կազմուած են երբեմն երկար ու դարձարձիկ ճախատասութիւններ: Այս բոլորը վերծանելու՝ հաւատարիմ ու հարազատ մնալով բնագրին, կը պահանջէր բնականաբար մեծ ծիգ ու երբեմն տաժանելի աշխատանք: Նշենք, որ մնաց ղժուարութիւններու կարելի է հանդիպիլ Սաֆոյի ձեռագրին իւրաքանչիւր էջի պարագային:

*Handwritten Armenian text, likely a transcription or commentary on the printed text above. It contains dense script with some corrections and annotations.*

Սաֆոյի ձեռագրէն մտոյշ մը

Սրանից պարզ է, որ առանց իսկ պատմելու իրականութիւնը, կարելի է նախօրօք ասել, որ յանձ-ը չէ եղել կանգնած իւր դերի բարձրութեան վրայ:

Ի՞նչ են ասում մեզ փաստերը սակայն, որ այդպիսի ընկերներ Յուց-ը չէ էլ ունեցել: Նախ եւ առաջ այն, որ ժողովուրդը մնացել է այն համոզմունքով, որ իրան սպանացող վտանգի ամենամեծ չափը կարող է լինել գրկուել պաշտօնից կամ արտաքսուել դուրս Պոլսից: Նոյն համոզմունքն եղել է եւ մերը: Եթէ չհաշուենք կարմիր օրերի գոհ գնալը այսինքն պատահական զոհ ընդ. կոտորածի օրերին, որից ոչ ոք էր ապահովուած, ոչ մի հայ մարդ, որոնք անգիտակ թէ ինչ է կատարուել կամ սպասուում, ամէնքը դուրսը, խաղաղ, աւելի շուտ կարող էին ենթարկուել այդ պատահարներին, քան ժողովուրդը, որը գիտէր կատարուածը, հետեւապէս բոլոր հաստատ գողուցիչները ձեռքից չէր թողնէ. կը քաշուէր Ջինգերի գրասենեակում ծառայակիցների հետ մինչեւ խաղաղիւր, ինչպէս եղել է Բ[անկ] Օտ[տոմանի] օրերին. նա այդ գիտէր եւ մտածում էր այդպէս էլ անել:

Մի մոռանաք մի խոշոր հանգամանք, որ ժողովուրդը չէր որ մեզանից օգնութիւն պիտի սպասէր մեզ մօտ պահուելու կամ մեր միջոցով փախուստի ճանապարհ գտնելու, այլ բոլորովին ընդհակառակը, մենք էինք որ նրանից պիտի սպասէինք այդ օգնութիւնը, իբրեւ լեզալ եւրոպացուց, տեղացուց:

Հետեւապէս, եթէ նա վտանգի էլ ենթակայ էր, յամենայն դէպս անհամեմատ աւելի քիչ, քան մենք չորսս: Եւ մենք դուրս գալով Պոլսից առանց նրա աջակցութեանը նրա բեռը թեթեւացրել ենք նրանով, որ իրանից այլեւս աջակցութիւն եւ օգնութիւն սպասող չէինք: Մնացել էր հոգալ միայն իւր ապահովութեան մասին կամ դուրս գալ անմիջապէս, ինչպէս մենք արինք, առաջին օրուայ սպասուող ամենաթունդ հսկողութեանը ընդառաջ գնալով կամ թէ ծածկուել իւր բազմաթիւ բարեկամների մօտ, թէկուզ բելթ. հիւպատոսի քարտուղար իւր մօտ բարեկամի մօտ: Բայց նա վստահ իւր եւրոպ. լեզալ դրութեանը, դուրս չէ եկել եւ չէ ծածկուել եւ խուզարկուել է, եւ խոստովանուել... այդտեղ Յուց-ը նոյնքան է պատասխանատու, որքան Անդրանիկը իրանից վերջը Մուշի մէջ կատարուած բանտարկութիւնների համար, որքան Վարդանը, Խանասորի նահանջի ժամանակ կորցրած իւր զինուորների համար:

Իսկ միւս 8-10 ընկերները, որոնք այսօր բանտում են եւ մահուան դատապարտուած, հարցնում է մեզ յանձնախումբը:

Իսկ 400 մշեցիները, որոնք այսօր Մուշի բանտում են եւ մահուան կամ 101 տարուայ բերդ[արգելութեան]

են սպասում, կը հարցնենք Անդրանիկից: Ինչո՞ւ նա այդ մշեցիներին չգողուցացրեց եւ իւր հետ դուրս չբերեց: Բայց ճանաչո՞ւմ էր նրանց Անդրանիկը, գիտէր նրանց գոյութեան մասին, կը հարցնենք մենք: Մենք ոչ միայն ոչ մի յարաբերութիւն չենք ունեցած դրանց եւ ոչ մէկի հետ, այլ չենք էլ ճանաչել, չենք էլ տեսած, գաղափար անգամ չունէինք նրանց գոյութեան մասին:

Ինչպէ՞ս ուրեմն կարող էինք հոգալ նրանց ապահովութեան մասին, որոնք մեզ համար գոյութիւն չեն ունեցել, բացարձակ եւ անպայման գոյութիւն չեն ունեցել: Հետեւապէս ինքն իրան ընկնում է եւ աքսուորդ դառնում օրից կախուած այդ մեղադրանքը Նշանի, Մանուկի, Օհանի եւ այլ այսօր բանտարկ[ուածների] մասին մեր հոգ տարած չլինելու մեղադրանքը: Ընդհակառակը, բոլոր անոնք որոնք մեզ հետ ունէ կապ ունեցել են, նոյնիսկ հեռուորդ կապ, Մկրտիչը, Արամը, նոյնիսկ ձիւղ դարման[ող] Երուանդը — բոլորն էլ մեզանից առաջ հոգացել, դուրս ենք հանել Պոլսից, ինչպէս եւ դուրս են եկել Աշոտ, Թորգ[ոմ], Քրիս. եւ մենք մնացել ենք չորս ընկերներ մէն մենակ: Ժողովուրդի հետ նոյնպէս Հինգաբերդի երեկոյանից մաքրել վճարել ենք նրան բաւարար գումար դուրս գալու համար:

Մենք այս ժողովից միայն մի որոշում կ'ընդունէինք զլիարաց եւ ամենայն ակնածութեամբ, եթէ ժողովը ասէր մօտաւորապէս հետեւեալը:

Ի նկատի ունենալով, որ Սուլթ. Համիտը դեռ ապրում է, հետեւապէս Յ. Մ-ը չկարողացաւ իրագործել իւր վերայ առած պարտականութիւնը, ժողովս որոշեց, հեռացնել բոլոր անդամներին, կամ եթէ կ'ուզէք միայն Սաֆոյին, Դաշակցութեան շարքերից, համաձայն կանոնադրութեան 1 յօդուածի:

Կամ վահանով կամ վահանի վրայ: Թէ եւ այդ յօդուածը դեռ գոյութիւն չունի, բայց նա պէտք է լինի, նա անհրաժեշտ է եւ գորութեամբ հասկացուում է: Ի՞նչ աւելի մեծ ուրախութիւն եւ մխիթարանք կուսակցութեան ապագայի վերաբերութեամբ: Որքան այդպիսի յօդուած թող մեզանից սկսուէր, հոգ չէ, յուսատու եւ խոստմնալի ոգի պիտի լինէր մեզ: Կազմակերպութեան լայն խաւերում եւ իսկական յեղափոխական ուղիի վերայ պիտի դնէր մեզ:

Ահա այդ դէպքում եւ միայն այդ դէպքում երկիւղած ակնածութեամբ մի ողորմութիւն պիտի խնդրէինք ժողովից, այն է՝

Թոյլ տալ երկրորդ անգամ, գնալու փորձելու ուղղել մեր առաջին անյաջողութիւնը եւ վերադառնալու վահանով կամ վահանի վերայ:

Բայց ո՞ւր է նա, այդ ոգին:

Ե 8.- ԸՆԴ. ԺՈՂՈՎԻՆ

Մրանով յայտնում ենք մեր բողոքը Ընդ. Ժողովի բարձր գաղափարին, իւր ներկայ կազմի դէպի Յուցական գործը ցոյց տուած վերաբերմունքի նկատմամբ:

- 1) Յուցականի ամիսներ առաջ պահանջած դատը չիրականացաւ.
- 2) Յանձնախմբի դատի առաջարկը նոյնպէս.
- 3) Յուցականի ցոյց տուած վկաները չկանչուեցին եւ հարց ու փորձի չենթարկուեցին.
- 4) Ըստ էութեան հարցը չենթարկուեց քննութեան բոլորովին, նոյնիսկ Յուց. Պ. Մ. նի անդամ Բրիսը, Վիեննայում գտնուած, չկանչուեց եւ հարց ու փորձի չենթարկուեց:

Բաւական եղաւ էլլէն բառը եւ այդ անուան հետ կապուած ահագին հեղինակութիւնը՝ ծածկելու համար գործի մանրամասն քննութեան անհրաժեշտութիւնը:  
 Եւ այդ կերպ պիտի տրուի որոշում, որի բնոյթը դժուար չէ գուշակել եւ այդ որոշումը պիտի անուանուի ճշմարտութեան վերականգնումն:  
 Մենք յայտնում ենք նախապէս մեր բողոքը այդպիսի ձեւի դէմ: Բողոքում ենք Ընդ. Ժողովի գաղափարին, Ընդ. Ժողովի դէմ:  
 Այս երկտողն էլ թող մնայ կից մեր նախկին բողոքներին:

Յուց. Մ. ի անդամներ՝

*[Handwritten signatures]*  
 ԲՐԻՍ      ՍԱՅՑ      ԲՈՐԳՈՍ

Վիեննա, 2 Մայիսի [1907]

Ե 9.- ՈՐՈՇՈՒՄԸ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

121րդ նիստով (4 Մայիս 1907) փակուեցաւ Զորքող Ընդ. Ժողովը, որ նոր ընդունուած Հ. Յ. Դ. ծրագրի, կազմակերպական կանոններու եւ շարք մը որոշումներու վերջնական խմբագրութեան համար ընտրած էր «Իննի Յանձնաժողովը» հետեւեալ կազմով. Խաչատուր Մալումեան (Վիեննի), Համօ Օհանջանեան, Եղիշ Թոփչեան, Ռոստոմ, Յ. Զաւարեան, Արշակ Վառմեան, Մարգիս Միմասեան, Մա.

Տէր Սկրաչեան (Գազիկ) եւ Անտիք Եանխարունեան կանգնուած փոխ-անդամ ընտրուած էին Բարսեղեան, Ա. Ա. Խարոնեան եւ Զոփուեան (Լեւոն Թաղէսեան): Իննի Յանձնաժողովը իրեն վստահուած գործը աւարտեց 1907 Մայիսի 20ին:  
 Մտորես Յուցականի մասին որոշումը (տեսնել նաեւ «Նիւսթ»-ու Գ. հատոր էջ 296-297):

Ժողովը նկատի առնելով Յուցական Մարմնի տեղեկագիրը, Քննիչ Յանձնախումբի գեկուցագիրը, իր բոլոր յարակից տղիւմաններով, ինչպէս նաեւ Սաֆոյի պատասխան-գեկուցումը Յանձնախումբի եզրակացութիւններուն, եւ նոյն Մարմնի երեք անդամներու՝ Սաֆոյի, Թորգոմի եւ Ռուբինայի բերանացի յայտարարութիւնները, որոշեց՝  
 Զօնարանալով «Չեռնարկին» արհեստագիտական (տեխնիքական) կողմի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ, քննութեան առնել Յուցական Մարմնի գործունէութիւնը՝ կազմակերպական եւ ընկերական-բարոյական կրկնակ տեսակետներով. ուստի

- 1.- Նկատելով որ Յուցական մարմնի անդամները էլլէնի մահէն ետք, «Չեռնարկի» պատրաստութեան վերաբերեալ իրենց բոլոր խորհուրդներու եւ անոնց կիռարութեան մէջ, փոխանակ ամէն հնարաւոր միջոց ձեռք առնելու, «Չեռնարկին» յաջողութեան հաւանականութիւնները բազմապատկելու, ընդհակառակն, տարամերժ մտահոգութիւնը ունեցած են՝ ամէն բանէ առաջ, իրենց անձերու փրկութիւնը ապահովել, խուսափելով իրենց ստանձնած մեծ պատասխանատուութենէն.
- 2.- Նկատելով որ լոկ իրենց գլուխն ազատելու այդ սեւեռուն գաղափարէն մղուած, Յուցական մարմնի անդամները գիտակից անհոգութեամբ մը թերացել են ուշադրութեան առնելու եւ ըստ այնմ կանխել կամ մեղմել փորձելու այն վտանգները, որոնք կը սպառնային նաեւ նոյն վայրը գործող օժանդակ ընկերներուն, ընկերներ, որոնք դատապարտուեցան մահուան ու երկարատեւ բանտարկութեան պատիժներու.
- 3.- Նկատելով որ Յուցական մարմինը իր ընկերական յարաբերութիւններուն մէջ ընդհանրապէս այլանդակ վարմունք մը ցուցադրած է, եւ ինչ որ մասնաւորապէս եզական է դաշնակցական տարեգրութիւններուն մէջ՝ այն վրդովիչ ընթացքն է, որով այդ մարմինը հետամուտ եղած է, թէ գրաւոր կերպով (Պոլսի ատենագրութեան մէջ) եւ թէ բերանացի տարածայնութիւններով, արատաւորել թանկագին յիշատակը պարտականութեան դաշտին վրայ ինկած մեր անմոռանալի ընկ. էլլէնին, Սոֆիայի դժբախտ արկածը ներկայացնելով իբր դաւ մը նիւթուած էլլէնի կողմէ Շապուիի դէմ.

Այս բոլոր նկատումներուն վրայ, ժողովը լուսաբանուած համարեց Յուցական մարմնի ծանր թերացումը ընկերական պարտականութիւններու մէջ եւ անոր պատասխանատուութիւնը «Չեռնարկի» անյաջողութեան մէջ, այն չափով որ այդ արդիւնք էր այդ մարմնի անդամներու անձնուիրութեան պակասին, ու պէտք չտեսաւ անդրագոյն քննութեան եւ դատի:

Միեւնոյն ատեն, ժողովը աներկդիմի կերպով ապացուցուած գտնելով որ Սաֆոն եղած է ղեկավարը, էլլէնի մահէն ետք, Յուցական մարմնի գործերուն, պատրաստողը՝ այդ մարմնի անունով կազմած տղիւմաններուն, հեղինակը՝ էլլէնի եւ Շապուիի մահուան շուրջը կուտակուած կասկածներուն եւ զրպարտութեանց, եւ գլխաւոր ստեղծիչը այդ մարմնի շուրջը տիրող անբարոյական հեղձուցիչ մթնոլորտին, որոշեց նկատել վերոյիշեալ Սաֆոն իբր գլխաւոր պատասխանատուն եւ յանցաւորը Յուցական մարմնի գործունէութեան մէջ, եւ ըստ այնմ՝

- 1.- Յուցական մարմնի անդամ Սաֆոն ի սպառ արտաքսել Հ. Յ. Դաշնակցութենէն եւ այդ մասին յայտարարել պաշտօնական օրգանին մէջ:
- 2.- Յուցական մարմնի անդամ Աշոտ, Թորգոմ եւ Քրիս հեռացած նկատել կազմակերպութենէն, յայտնելով այդ մասին կազմակերպական ճամբով դաշնակցական բոլոր մարմիններուն, եւ տալ անոնց իրաւունք ներկայացնել Դաշն. Խորհուրդին մեղմացուցիչ բացատրութիւններ եւ իրենց անկեղծ զղջման ապացոյցները: Խորհուրդին լիազօրութիւն կը տրուի ըստ այնմ փոխել այդ որոշումը՝ եթէ հնարաւոր տեսնէ:
- 3.- Յուցական մարմնի անդամ Ռուբինային գալով, ժողովը չգտաւ որեւէ հիմք նոյն պատասխանատուութեան ենթարկելու, առաւել եւս որ Ռուբինան արդէն իսկ իր պարտաճանաչութեան բարձրութեան վրայ գտնուած էր:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Արգարեան Յարուսթին (Հայկազն) — 444-445:  
 Արրահաման Գէորգ — 430-432, 452, 454, 505:  
 Արրամովիչ — Տես Գիւլիանդանեան Արրահամ:  
 Ազնաւորեան Վահագն — 233-234:  
 Ալաճաճեան Երուանդ — 369, 371-372, 376, 413, 426, 441:  
 Ալամդար — 41-44:  
 Ալեքսիս — 85-86:  
 Ալի Բէկ — 170, 175:  
 Ալոյեան Գալուստ — Տես Դարովիչ:  
 Ախաճանեան Համբարձում — Տես Կարօ (Թուլցական):  
 Ակնուլի Է. (Մալումեան խաչատուր) — 74, 110, 362, 368-369, 377, 430, 471, 474, 515:  
 Ակոբ (Մուրատեան Եաղուպ) — 215-216:  
 Ահարոնեան Աւետիս (Ղարիբ) — 109, 150, 160-161, 174-175, 439, 515:  
 Ահմեդ — 457, 506-507:  
 Աղամարեան Տ. (Մուշեղ) — 2, 3:  
 Աղաջանեան Գրիգոր — 2, 3:  
 Աղբալեան Նիկոլ (Ն. Հանգոյց) — Գ, 138-139, 220, 226, 238, 241, 243-246, 248, 250, 255, 260, 369:  
 Աղեքսանդր Բ. — 459, 508:  
 Անդրանիկ (Իզմիրի) — 97-107, 405:  
 Անդրանիկ (Պարոյր, Օզանեան) — Բ, Գ, 150, 234, 260, 279, 286, 294, 342, 368-369, 371-372, 374-378, 380, 391, 483, 501, 507, 513:  
 Անտոն Գօշ — 410-411, 422, 426, 430, 442, 447, 452, 454, 462:  
 Աշմար — Տես Մարթին (Մուրատեան):  
 Աշոտ Երկաթ (Լեւոնեան Արմենակ) — 181, 331:  
 Աշոտ Լեւոն (Լեւոնավայր) — 182, 193, 201, 210, 214, 218:  
 Աշուղ (Օհանեան Սահակ) — 67, 90, 388:  
 Առիւծ (Աւագ) — 152, 366-367:  
 Առստամեան Եգոր — Տես Մենակ:  
 Ասլան — Տես Զարդարեան Ռուբէն:  
 Ասլան (Ջրաբերդ) — 152-153:  
 Արամ (Թուլցական) — 398, 407, 429, 435-436, 440, 453, 455, 458, 483, 509, 513:  
 Արամայիս (Տէր Դանիէլեան Միսաք) — 308:  
 Արամեան Ա. — 145-147, 155-156:  
 Արէշեան Ռուբինա — Տես Ռուբինա:  
 Արէշեան Սոֆիա (Թիթեո) — 398, 401:  
 Արթինեան Մինաս — 108, 112, 117:  
 Արմէն Գարօ (Փաստրմաճեան Գարեգին) — Գ, 49, 60, 108, 111, 201, 381:  
 Արմէնեան Գարեգին (Սուրէն Կամարական) — 444-445:  
 Արսէն — 15, 17, 19, 21, 23, 25-27, 29-32, 34, 37:  
 Արսէն (Մրգաստան) — 85-86:  
 Աւագակ — 196-197:  
 Աւետիս (Ջրաբերդ) — 122, 356:  
 Արփիարեան Արփիար — 243:

Բարեկէն Սիւնի — 404:  
 Բարսեղեան — Տես Վանայ Սարգիս:  
 Բերէլ Աւգուստ — 337:

Բեզադէ — 68, 76-78:  
 Բիճա (Սվազցի Յարուսթին) — 132, 138, 148, 153:  
 Բորիս — Տես խաչատրեան Բորիս:  
 Բրինդար (Մեղրոնեան Արտաշէս) — 313, 318:  
 Գարրիէլեան Սեդրակ — 234, 254:  
 Գագիկ (Քարի շրջան) — 57, 59-60:  
 Գալֆայեան Յարուսթին — Տես Վահագն:  
 Գասպ — 145, 147, 156:  
 Գասպարեան Բալթաէգ — 10, 48:  
 Գատրիլ (Քեթեմեան Միրզա) — 218-219:  
 Գարեգին խաժակ (Բարայեան) — 1, 41, 44, 95, 226-7:  
 Գարեգին Նժդեհ — 368:  
 Գերասիմ (Բալայեան) — 311-2, 314:  
 Գէորգ Չաւուշ (Սարհատ) — 286, 289, 341, 353, 359, 391:  
 Գիւլիանդանեան Արրահամ — 1, 2, 3, 381-2:  
 Գիւլումեան Լեւոն — 103-104, 401, 407-8, 426:  
 Գոստի (Լեւոնավայր) — 220-221:  
 Գուլթանեան (Տէր Թովմասեան) — 2-3:  
 Գուրգէն — 19, 31, 32, 41, 44:  
 Գրին (Կրին) — 398, 405, 407, 429, 435-6, 440, 453, 457:  
 Դարովիչ (Ալոյեան Գալուստ) — 63, 65, 78-9, 85, 89:  
 Դաւթեան Թոնան — 173, 392, 398, 401, 408-9, 411, 451, 504:  
 Դերձակեան Պետրոս — 108, 112, 117:  
 Դուլման — Տես Նիկոլ Դուլման:  
 Դրօ (Կանայեան Դրաստամատ) — 68:

Եաղուպեան Տիգրան — 234, 255, 259:  
 Եարմեան Մանուկ — 232, 234, 247:  
 Եղիկեան Կարապետ — Տես Սեւ Աշոտ:  
 Եպիսկոպոսեան — 308:  
 Եսայեան Ստեփան — 255, 259-60:  
 Երիզացի — 346:  
 Երուանդ (Կառապան) — 398, 406, 435-6, 440, 509, 513:  
 Եփրեմեան Մկրտիչ — 255, 259:

Զալեան Միք. — 1:  
 Զարմայր (Ջրաբերդ) — 132, 136, 138-9:  
 Զարդարեան Ռուբէն (Ասլան) — 106, 181, 193, 236, 250, 369, 379, 466:  
 Զարեհ (Կառապան) — 401, 406, 426, 429, 435-6, 440, 455-7, 479, 483-5, 492, 507, 509-10:  
 Զարուհի (Տէրոյեան) — 246:  
 Զաւարեան Սիմոն (Անտոն, Սմբատ Օհանեան) — Գ, 49, 173, 176, 178-9, 204-7, 210, 212-5, 217, 220, 236, 244-5, 248, 249, 392, 506, 515:  
 Զաւրեան Յակոբ — 64-5, 353, 397, 427, 466, 469, 494, 498, 501, 511:

Էլլէն — Տես Քրիստափոր Միքայէլեան:  
 Էմիլ (Օրիորդ) — 398, 401, 406, 418, 429, 430, 435-6, 452, 455, 457, 461, 485, 506, 511:  
 Էմմանուէլ — 85, 89:

Ընծայր (Նալպանտեան Գէորգ Ժ. վարդապետ) — 351-2:

Թաղէ — 57, 59-60:  
 Թաղէոսեան Լեւոն — Տես Զոփուռեան:  
 Թաղէոսեան Սամսոն (Գարեգին) — 282:  
 Թաթուլ (Լեւոնավայր) — 218-222:  
 Թալինեան (Յ. Լորիս Մեղրեան) — 411-2, 477, 494:  
 Թաշեան Արշակ — 444-5:  
 Թաշեան Գաստաւել — 445:  
 Թափառիկ (Տոքթ. Փաշայեան Կարապետ) — 204, 206, 226-7, 229, 231-2, 234-6, 244, 247-8, 255, 257:  
 Թիրեաքեան Հայկ — Տես Հրաչ:  
 Թորգոմ (Մերեմճեան Արտաշէս) — 368, 398-9, 401, 405, 407, 435-6, 440, 442-3, 452-3, 458, 482, 491, 504-5, 509, 513-5:  
 Թորգոմ (Տեղորիկեան Թէոս) — 277, 284, 288:  
 Թորգոմ (Քարի շրջան) — 57, 59-60:  
 Թորոս — 14-5, 17-9, 21, 23-4, 26-32, 34, 37:  
 Թումեանց Թուման (Թորգոմ) — 53, 123, 137, 331:  
 Թոփիչեան Եղիշէ — 261-2, 397, 446, 476, 484, 492, 505, 511, 515:

Ժամհարեան Մարգար — Տես Մուս:  
 Ժորիս — 452-3, 457-9, 463, 491, 505, 509, 513:

Իշխան (Վանայ, Օտապաշեան Նիկոլ) — 261, 277-8, 289-93, 295-6, 298, 497:  
 Իսահակեան Աւետիք (Հայ-Գուսան) — Գ, 49, 56-7, 60, 125, 127-8, 132:  
 Իսկոս — 41, 44:

Լազեան Գարրիէլ — 255:  
 Լեապով — 369, 372, 418, 429, 430, 441-2, 447-8, 454, 462, 464, 477, 482-5, 488, 492:  
 Լեւոն (Ոսկեհանք) — 401, 407, 453, 477:  
 Լեւոնեան Արմենակ — Տես Աշոտ Երկաթ:  
 Լեւոնիկ (Ոսկանապատ) — 15, 17-19, 21, 23-4, 26, 29, 30, 34, 38:

Սան (Թիրեաքեան Բարսեղ) — 122, 134:  
 Սանգաղէ — 70, 145, 156:  
 Սաչատրեան Աստուածատուր — 111:  
 Սաչատուրեան Մինաս — 254:  
 Սաչատրեան Սմբատ (Բորիս) — 84, 209:  
 Սենթ (Ոսկեհանք) — 96, 101, 103:  
 Սենթ (Ջրաբերդի շրջան) — 132-3:  
 Սեչօ (Դաշնակցական) — 63, 359, 389:

Սեչօ (Մածուն Սեչօ, Միրզարէկեան Գրիգոր) — 308, 311-2:  
 Սեչօ (Քարի շրջան) — 60-1:  
 Սիգախ (Փանոսեան Հրանտ) — 95, 98-103, 445:  
 Սնուպի Տիգրան — 358:

Կաթակ Առաքել — 63, 115:  
 Կապարճ — 137-8:  
 Կարէն — Տես Յակոբեան Արամ:  
 Կարօ (Ախաճանեան Համբարձում) — 398, 401, 405-7, 426, 428-9, 434, 452-3, 460, 477:  
 Կիլիկեան (Մկրեան Զաքարիա) — 182, 192:  
 Կոմս (Փափաղեան Վահան) — 68, 74, 79, 277, 351-2:  
 Կոստի, Կոստանդին — Տես Համբարձումեան Կոստի:  
 Կոստի (Ջրաբերդ) — 121, 123:  
 Կոստյի Հաճի — 63, 69:  
 Կորիւն (Իսօ) — 63, 309, 311, 391:  
 Կոօ (Տէր Յակոբեան) — 63, 94:  
 Կրին — Տես Գրին:

Համբարձումեան Կոստի — 103, 105, 107, 412, 414-5, 428-431, 442-3, 461-2, 469, 505:  
 Համիտ Սուլթան (Նժդեղ) — Գ, 51, 95, 255, 341, 353, 397-515:  
 Հայ-Գուսան — Տես Իսահակեան Աւետիք:  
 Հայ Թափառական — 57, 59, 60:  
 Հայկ — 59, 60:  
 Հայր Արրահամ (Սահակեան Աւետիք) — 353:  
 Հայրուլ — 312, 314-5, 317:  
 Հանգոյց Ն. — Տես Աղբալեան Նիկոլ:  
 Հաջի (Նաւահանգիստի շրջան) — 341, 356:  
 Հատիկեան Մկրտիչ — Տես Պոնտացի:  
 Հիլմի (Լեւոնավայրի շրջան) — 216:  
 Հրայր (Քարի շրջան) — 57, 59-60:  
 Հրաչ (Թիրեաքեան Հայկ) — 95, 98, 178, 180-2, 201, 226-7, 402, 409:

Ղարիբ — Տես Ահարոնեան Աւետիս:  
 Ղարիբեան Յովսէփ — 458, 506:  
 Ղարիբ-Երկաթ — 164, 174:  
 Ղափրան — 41, 44:  
 Ղումրիկեան Կարապետ — 108:

Ճակատ (Ոսկեհանք) — 96-7, 100, 103:  
 Ճեղալեան Թովմաս — 376, 378:

Մալումեան խաչատուր — Տես Ակնուլի Է.:  
 Մաթէ — 57, 59-60:  
 Մալխաս (Յովսէփեան Արտաշէս) — 289, 290, 292-3, 295-6, 298:  
 Մաճկալ (Ոսկանապատի շրջան) — 19, 21:  
 Մամիկոնեան Արա — 232, 234-5:  
 Մալիլ — 216, 225:  
 Մանաւեան Հրանտ — 231-3, 236:

Մանուլ — 398, 406:  
 Մանուկեան Արամ — 125, 261, 277-8, 289-93, 295-6, 298, 397, 446, 469, 476, 497:  
 Մար — (Տէր Մարտիրոսեան Միքայէլ) — 178, 180-1, 206, 227, 234, 257, 341, 361-2, 377:  
 Մարադեցի (Ոսկանապատի շրջան) — 41, 43-4:  
 Մարգարեան Մարտիրոս — Տես Սաֆօ:  
 Մարթին (Մուրատեան Աշոտ, Աշմար) — 95, 178, 180-1, 206, 212, 216, 218, 220-2, 225, 227, 232, 234, 257, 341, 361-2, 377, 398, 401, 405:  
 Մարտիկեան Ղազար — 108, 112, 177:  
 Մելիք (Ոսկանապատի շրջան) — 15-7, 19, 21, 23, 25-27:  
 Մելիք-Մուրադ (Չանգեղուրի շրջան) — 309, 314-5, 317:  
 Մելիք-Փարսաղանեանց Միքայէլ (Նժդեհ) — 123, 129:  
 Մելոյան Ղեկուն (Վաթան) — 277, 289-92, 295-6, 298:  
 Մեհրաբեան Սարգիս — Տես Վարդան (Խանասորի):  
 Մենակ (Առստամեանց Եգոր) — 123, 129:  
 Միհրան, Միհրանական շարժում — Բ, Գ, 8, 68-9, 76, 88, 150, 341, 355, 357, 363, 367, 377:  
 Մինասեան Սարգիս — 515:  
 Միշէլ (Տիկին) — 398, 401, 405-7, 414, 428-9, 434, 439, 455, 457, 460:  
 Միրազեաններ — 114, 116:  
 Միքայէլ (Ոսկանապատի շրջան) — 15, 17, 19, 21:  
 Մխիթար — Տես Օհանջանեան Բր.:  
 Մհեր, Մհերեան — Տես Օհանջանեան Համօ:  
 Մկրեան Զաքարիա — Տես Կիլիկեան:  
 Մկրտիչ (Կառապան) — 398, 406, 435-6, 440, 509, 513:  
 Մուրատ (Ջրաբերդի շրջան) — 122, 125:  
 Մուրատ — Տես Պոյաճեան Համարձում:  
 Մուրատ (Սեբաստացի) — 63, 68, 89, 126, 130, 153, 155, 309, 341, 352, 355-6, 371, 389, 391, 501:  
 Մուսա (Ժամհարեան Մարգար) — 303-4, 339, 380, 408:  
 Մսլայ — 241-2:  
 Մտրակ — 132, 145:

Թակոբեան Արամ (Կարէն) — 160-1:  
 Թարուսի (Վան) — 278, 292:  
 Թոնան — Տես Դաւթեան Թոնան:  
 Թովսէփեան Արտաշէս — Տես Մալխաս:  
 Թօշան (Պաղտոյեան Ներսէս) — 193-4, 198, 201-2, 207, 213:

Նալպանտեան Ծ. վրդ. Գէորգ — Տես Ընծայր:  
 Նալպանտեան Տիգրան — 96, 458, 509:  
 Նահապետ (Ոսկեհանք) — 95, 102:  
 Նաւասարդեան Վահան — 255:  
 Ներսէսեան Արշակ — Տես Սեպուհ:  
 Նժդեհ — Տես Համիտ Սուլթան:  
 Նիգեցի-Չաւէն — 85-6:  
 Նիթրա — Տես Շահրիկեան Թարուսի:  
 Նիկոլ Դուրման — Գ, 1, 3, 30, 63, 69-71, 74-5, 77-9, 84-6, 294, 341, 350-1, 359, 381, 388-390:  
 Նորել Ալֆրեդ — 10, 437:

Շահաթունեան Աւետիք — 515:  
 Շահրիկեան Թարուսի (Նիթրա) — 1, 2, 3, 14, 21, 23-5, 27-8, 31-4, 36-7, 176, 341, 363, 443:  
 Շանթ — 41, 44:  
 Շատիկ — 325, 328:  
 Շիշմանեան Ռուբէն — Տես Քեռի (Տերսիմի):  
 Շխալի — 89, 357-8, 377:

Չոլաքեան Թակոբ — 199:  
 Չոփուռեան (Թաղէոսեան Լեւոն) — 1-3, 11, 13-5, 17, 25-7, 29, 34, 45, 444, 500, 515:

Պալլադեան Սեդրակ — 241, 255, 259-60:  
 Պաղտոյեան Ներսէս — Տես Թօշան:  
 Պարթեւ — 41, 44:  
 Պարոյր (ա) — Տես Անդրանիկ (Օզանեան):  
 Պետրոսեան Նորհատ — 231-2:  
 Պետո (Պետրոսեան Աղեքսանդր) — 277, 404:  
 Պիոնեան Կարապետ — 414, 416, 426, 438:  
 Պլեւէ — 419, 498:  
 Պոյաճեան Հաճի Արսէն — 231-2, 235-6:  
 Պոյաճեան Երուանդ — 238-9:  
 Պոյաճեան Միրական — 214, 218, 220, 242:  
 Պոյաճեան Համարձում (Մուրատ) — 349:  
 Պոնտացի (Հատիկեան Մկրտիչ) — 178, 180-1:  
 Պօղոսեան Պօղոս — 377-8

Ջահիլ (Սայեան Գրիգոր) — 398, 401, 428-9, 434:  
 Ջրաբերդի — 41, 44:

Ռահվեր (Վարդանեան Միսաք) — 178, 180-2, 184, 195, 201, 202-3, 209, 214, 222:  
 Ռաշիդ — 57, 59-60, 377-8, 389, 464:  
 Ռաֆ (Ռաֆայէլ) — 299, 301:  
 Ռոստոմ (Չօրեան) — Գ, 60, 88, 294, 377, 380, 392, 407-8, 410-3, 430-1, 438-9, 455, 474, 485-6, 488, 494, 498, 500, 515:  
 Ռուբանովիչ — 418, 431, 437, 439-40, 448-50, 477, 489-92, 498, 503:  
 Ռուբէն (Տէր Մինասեան) — 123, 278, 289-90, 292:  
 Ռուբինա (Արէշեան) — 398, 401, 405-6, 418, 426-31, 434-6, 438-9, 443, 449-458, 461-2, 469, 472, 479, 482-3, 485, 492, 498, 507, 509-10, 515:  
 Ռուշտի (Լեւոնավայր) — 221, 225:

Սազով — 369, 372:  
 Սալման (Բաղէշցեան Համազասպ) — 289-90, 292-3, 295-6:  
 Սահակ (Ոսկանապատ) — 15, 17, 19, 21:  
 Սահակ (Քարի շրջան) — 59-60:  
 Սամսոն (Թաղէոսեան) — 351-2:  
 Սայեան Գրիգոր — Տես Ջահիլ:  
 Սամուէլ (Լեւոնավայր) — 182, 197:  
 Սապահ-Գիւլեան — 349:

Սարաֆով Բորիս — 103, 369, 371, 407, 426, 487-8, 490:  
 Սարգիս Վանայ (Բարսեղեան, Օտապաշեան Պօղոս) — 289-90, 292-3, 295-6, 298, 302-3, 310, 312-3, 317, 398, 402, 405, 407, 411, 413, 426-8, 430-2, 448-9, 452, 454, 460-1, 469-70, 472, 477, 483, 487, 492-7, 501, 505, 511, 515:  
 Սարհատ — Տես Գէորգ Զաւուր:  
 Սարհատ — (Ոսկեհանք եւ Լեւոնավայր) — 107, 178, 182, 203, 212, 214-5, 221, 236, 242, 244, 254:  
 Սաֆօ (Մարգարեան Մարտիրոս) — Գ, 397-9, 401, 405-7, 412, 416, 418, 423, 427, 429-32, 434-444, 446-7, 449-52, 454-8, 461-5, 467, 469-70, 472, 477-8, 482-3, 488, 490-498, 503-6, 509-10, 512-515:  
 Սեւ Աշոտ (Աշոտ, Եղիկեան Կարապետ) — 213, 398, 401-2, 405-7, 429, 435-6, 439-40, 452-3-460, 490-3, 497, 509, 513, 515:  
 Սեւբարեցի Սաքօ (Մովսիսեան) — Գ, 63, 85, 342, 354, 380, 393, 396:  
 Սերեմեան Արտաշէս — Տես Թորգոմ:  
 Սեպուհ (Ներսէսեան Արշակ) — Գ, 63, 68-9, 130, 173, 341, 353, 356, 391:  
 Սեպուհ — Տես Հրաչ (Թիրեաքեան Հայկ):  
 Սէյտօ Պօղոս — 63:  
 Սերգէյ — Տես Մանուկեան Արամ:  
 Սթարա — 75, 85:  
 Սիլվիօ Բիչչի — Տես Քրիս (Ֆենեքեան):  
 Սիսակ (Ոսկեհանքի շրջան) — 103-5:  
 Սլաք (Օխիկեան Արմենակ) — 57, 131:  
 Սմբատ (Բորոյեան) — 88, 350, 356, 359:  
 Սուսան — 97, 101:  
 Սուրէն (Ոսկեհանքի շրջան) — 95, 103-4, 107, 405, 509:  
 Սվաճեան Արշակ — 255, 259-60:  
 Սրմաքէշխանյան Երուանդ — 239:  
 Սրուանձտեան Համազասպ — 304, 308:

Վազգէն (Ոսկեհանք) — 97-102, 107:  
 Վազգէն (Տէրոյեան) — 246, 278, 404:  
 Վաթան — Տես Մելոյեան Ղեկուն:  
 Վահան — 15, 17:  
 Վահայ — Տես Վաւանեան Արշակ:  
 Վահէ — 10-11, 17:  
 Վահրամ (Գալֆայեան Թարուսի) — 178, 181-2, 185, 193, 202, 226, 377, 380:  
 Վարանդեան Միքայէլ — 157, 173, 474, 500:  
 Վարդան (Խանասորի, Մեհրաբեան Սարգիս) — Գ, Դ, 85, 178-9, 204-7, 212-5, 220, 222, 294, 304, 311-3, 338, 342, 381, 393, 396-7, 501, 507, 513:  
 Վարդանեան Միսաք — Տես Ռահվեր:  
 Վարդան Շահպազ — 289-90, 293:  
 Վարդօ (Պատրիկեան) — Գ, 103, 105, 507:  
 Վրամ (Ոսկեհանք) — 96, 101, 103:  
 Վրամեան Արշակ (Վահայ) — 397, 408-9, 446, 471, 476, 487-8, 504-7, 515:  
 Վտարանդի (Արամ Զարրք) — 493:  
 Վրացեան Սիմոն (Սիդ) — 341, 354, 393:

Տանուտէր — 100-102:  
 Տաշրեան, Տաշրացի — 63, 65:  
 Տասնապետեան Հրաչ — Ա, Ե, 204, 207, 329, 392, 407:  
 Տատրակ (Տէր Կարապետեան Գեղամ) — 289, 391:  
 Տէր Մարտիրոսեան Միքայէլ — Տես Մար:  
 Տէր Մինասեան Երուանդ — 131:  
 Տէր Մինասեան Ռուբէն — Տես Ռուբէն:  
 Տէր Սկրտչեան Ստեփան (Գաղիկ) — 1, 515:  
 Տիգրան (Կողբեցի) — 278, 289-93, 295-6, 298:  
 Տիգրանեան — 49, 62:  
 Տիւֆալիչեւ — 212, 412, 416, 418-21, 430, 448, 477, 487-8, 491:  
 Տուրրախ (Կիրակոսեան Թար.) — 130, 132, 134, 138-9, 152:

Փամպուքեան Երուանդ — Գ, Ե, 2, 49, 63, 108, 119, 157, 176, 179, 180, 185, 226, 261, 342, 398:  
 Փանոսեան Հրանտ — Տես Խիզախ:  
 Փաշայեան Կարապետ — Տես Թափառիկ:  
 Փաստրմաճեան Գարեգին — Տես Արմէն Գարօ:  
 Փափազեան Պետրոս — 231-2:  
 Փափազեան Վահան — Տես Կոմս:

Քենտրեան Վրամշապուհ (նաեւ՝ Էդուարդ, Շապուհ, Վրամ) — 397-8, 405-7, 427-31, 436, 440-3, 446, 451-2, 457, 459, 461-3, 467-9, 493, 499, 505, 509, 515:  
 Քեռի (Տերսիմի, Շիշմանեան Ռուբէն) — 108, 183, 346:  
 Քեռի (Գալֆայեան Արշակ) — 63, 130, 311, 391:  
 Քիյառ — 341, 348:  
 Քլիտ — 121, 125:  
 Քոթանջեան Կորիւն քհն. — 133-4:  
 Քոյր (Ոսկեհանք) — 97, 101:  
 Քրիս (Ֆենեքեան) — 398, 401-2, 407, 429, 434-6, 440, 442, 451, 453, 458, 482, 487, 506, 509, 513-15:  
 Քրիստափոր (Միքայէլեան, Էլլէն) — Գ, 65, 244, 397-8, 401-2, 405-7, 409-416, 420, 423, 426-31, 434, 436, 439-444, 446, 451-2, 454-5, 459-63, 467-9, 474, 478, 488, 492-4, 498-9, 504-5, 509-10, 514-15:

Օհանեան Սահակ — Տես Աշուր:  
 Օհանեան Սմբատ — Տես Զաւարեան Սիմոն:  
 Օհանեան Քրիստափոր (Մխիթար) — 1-3:  
 Օհանջանեան Համօ (Մհեր, Մհերեան) — 131, 173, 380, 430, 443, 494, 515:  
 Օհանջանեան Սարգիս — Տես Ֆար-Հատ:  
 Օտապաշեան Նիկոլ — Տես Իշխան (Վանայ):  
 Օտապաշեան Պօղոս — Տես Սարգիս (Վանայ):  
 Օխիկեան Արմենակ — Տես Սլաք:  
 Օտար — 41, 44:

Փայն Սամուէլ — Տես Քրիստափոր (Միքայէլեան):  
 Փար-Հատ (Օհանջանեան Սարգիս) — 65, 79, 85, 89:  
 Փելիքս — 61, 236, 380:  
 Փենեքեան Քրիս — Տես Քրիս:



ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբարան – 55, 69:  
 Ագատ Դաշտ – 68, 73, 75:  
 Աթերք – 308:  
 Աթէնք – 212, 215, 234, 236, 244, 246-247, 399, 403, 407, 409, 411, 426, 428-9, 449, 451-2, 454, 457-8, 461, 488, 500, 504-5, 509-510:  
 Ալագան (Ոսկանապատի շրջան) – 13, 29:  
 Ալեքսանդրապոլ – Տես Քար:  
 Ախալքալաք – Տես Թմրուկ:  
 Ախալցխա – 264, 275-6:  
 Ակն – 112, 117:  
 Աղղամ – 306, 308:  
 Աղեքսանդրիա – 101, 107, 180-1, 194, 197, 202, 206, 214, 217, 220, 226-260, 347, 436-7:  
 Աղոտ (Կողք) – 118, 124:  
 Աղջաղալի – 323, 326:  
 Ամանոս (Կեաւուր տաղ) – 185, 188, 190-1, 193, 197, 208:  
 Ամարանոց (Պաթուժ-Նաւահանգիստի շրջան) – 158-9, 166, 172, 174:  
 Ամարաս – 307:  
 Այգեստան (Գանձակ) – Գ, Ե, 1, 164, 261, 276, 309, 321-328, 329, 342, 353, 356, 381, 383:  
 Այնթապ – Տես Հովիտ:  
 Անապատ (Արտահան) – 118, 124, 126-128, 132, 152, 276, 330:  
 Անարատ (Ոսկանապատի շրջան) – 12, 14:  
 Անդրապատ – 12-14, 19-20, 24, 41-44:  
 Անտառ (Տոււպուկ) – 158, 160:  
 Անտառապատ (Մեծ Ղարաքիլիսա) – 49-50, 58-59, 61, 335, 383:  
 Անտիրոք (Հեղեղատ, Կարմիր լեռ, Մուսա լեռ) – Տես Սուէտիա:  
 Ապաստան (Սոչի, Ատլեր) – 158-9, 161-2, 165-167, 172, 174, 355:  
 Անտիժան – 3, 12:  
 Առաջաձոր – 308:  
 Ապառաժ (Ղարաբաղ, Շուշի) – Գ, Դ, Ե, 1, 9, 14, 55, 105, 164, 261, 276, 302-320, 329, 337, 342, 353, 356, 381-383, 392-393, 470:  
 Ասի (գետ) – 198-200:  
 Ասխաբադ – 3, 5:  
 Ասկերան – 306-8:  
 Ատանա – Տես Խոր Վիրապ:  
 Ատեաման – 193, 209:  
 Ատրպատական – Տես Վրէժ, Վրէժստան:  
 Արարատ (Մրգաստանի շրջան) – 68, 70, 73-74:  
 Արդուին – Տես Զորահոր, Զորաբերդ:  
 Արծուաբերդ (Չէյթուն) – 170, 180, 182-185, 188, 190, 194, 195, 201-2, 204, 206, 208-11, 214-6, 218, 220, 223, 347, 400, 404:  
 Արէշ – 3, 276, 307, 381:  
 Արմեանակ – 160:  
 Աւազ (Ոսկանապատի շրջան) – 42-43:  
 Աւար-Աւեր – Տես Խարաբերդ:

Աւդալ – 306-7:  
 Բագու, Պաքու – Տես Ոսկանապատ:  
 Բալխանի – 3, 5: 7, 11-2, 46:  
 Բամբակ (Ոսկանապատի շրջան) – 13-4, 20, 41, 44:  
 Բանանց – 261, 323:  
 Բասէն – 118, 121, 124, 146, 400, 404:  
 Բարձրաբերդ (Կարին, Էրզրում) – Դ, Ե, 108-112, 289, 293, 400, 404:  
 Բարձրաւանդակ (Սասուն) – 63, 118, 120, 168, 210, 285-6, 341, 400, 403-4, 465, 471:  
 Բարձր Տեղ – 68-9, 75:  
 Բերդակ – 112-3:  
 Բերդակ (Չորք Մարզուան) – 180, 182, 184-5, 193-7, 208-9, 211, 214-5, 218, 347:  
 Բիրի Էյրաթ – 3, 5, 7, 12:  
 Բլուր (Ջրաբերդի շրջան) – 146, 154:  
 Բորչալու – 264, 267, 275-6, 381:  
 Բուդապէշտ – 410, 411:  
 Գահիրէ – 226, 260:  
 Գաղատիա – 193-5:  
 Գաղթապալր (Սուխում) – 158-9, 161, 165-7, 172, 276, 355-356:  
 Գանձակ – Տես Այգեստան:  
 Գետաբէկ – 261, 321, 323, 326:  
 Գետաշէն – 261, 322-3, 326:  
 Գերմանիկ (Մարաշ) – Տես Սահմանաբերդ:  
 Գէօկչայ – 3, 5: 12, 276, 381:  
 Գիլան – 9, 338:  
 Գիւլաֆլու – 306-7:  
 Գիւմրի – Տես Քար:  
 Գորի (Վրաստան) – 263-4, 273, 275-6:  
 Գորիս – 153, 305:  
 Դաղստան – 3, 276:  
 Դաշտ (Հալէպ) – 178, 180-1, 183, 189, 193-5, 200, 202, 204, 207-10, 214-5, 217-20, 222, 225, 243, 347:  
 Դաշտ (Սիմֆերապոլ) – 158, 160-1, 166, 172, 174:  
 Դարալագեազ – 88-9, 276:  
 Դերբենտ – 3, 5, 12:  
 Դերջան – 112-3:  
 Դիզակ – 302-4, 309-10, 314-5, 318, 383, 392:  
 Դիլիջան – Տես Շամուտ:  
 Դուման (Ենթակոմիտէ) – 10-12, 15, 17-21, 24, 26, 30-1:  
 Դուչէթ – 264, 273, 276:  
 Դուրան – Տես Տարօն:  
 Եգիպոս – Բ, Ե, 103-7, 212-3, 226, 260:  
 Եդեսիա – Տես Ուրֆա:  
 Եոզղատ – 248, 250, 260:  
 Երեւան – Տես Մրգաստան:

Զանգեզուր (Նաեւ Սիւնիք) – 1, 153, 164, 261, 276, 302-6, 308-10, 313-4, 318-9, 337-8, 353, 356, 383, 391-2, 394:  
 Զարիշատ – 137:  
 Զաքաթալա – 3, 12, 276:  
 Զէյթուն – Տես Արծուաբերդ:  
 Զղարթա – 203:  
 Էլիզավէթպոլ – Տես Այգեստան (Գանձակ):  
 Էլլէնդորֆ – 323, 325:  
 Էյպէզ – 200, 208:  
 Էմգարիա – 203:  
 Էնֆա – 203:  
 Էջմիածին – 55-6, 68, 79, 140, 276, 331, 352:  
 Էտեմիշ – 95, 105:  
 Թաթար-Բագարչիք – 427, 441, 478:  
 Թախտ (Ջրաբերդի շրջան) – 121, 124, 126-8, 132-3, 136, 138, 140, 331:  
 Թելաւ – 264, 275-6:  
 Թիֆլիս (Մեծ քաղաք) – Բ, Ե, 79, 134, 261-276, 329, 336, 356, 358, 364-5, 377, 381-3, 389, 410, 442, 494:  
 Թմրուկ (Ախալքալաք) – 50, 53, 55, 261-2, 264, 269, 273-6, 381, 383:  
 Թուրան – 2, 41-44:  
 Ժրնեւ – Բ, 108, 207, 243, 368, 380, 391, 407, 412, 427, 429, 431, 441, 455, 472, 490, 509-10:  
 Ժլատ (Հիւս. Կովկաս) – 9, 132, 329, 335-6, 340, 367:  
 Իզմիր (Չմիւռնիա) – Տես Ոսկեհանք:  
 Իսկենտերուն – Տես Կարաւան:  
 Իւզպէկստան – 1, 14, 41:  
 Լաթաքիա – 193:  
 Լան-Մաղ (Ոսկանապատ) – 13-4, 41-4:  
 Լեոնադաշտ (Ոսկեհանքի շրջան) – 97-8, 100-2:  
 Լեոնապար – 261, 277-301:  
 Լեոնապալր (Կիլիկիա) – Բ, Ե, 33, 102, 105, 178-226, 232, 236, 244, 254, 293, 347, 362, 408:  
 Լիբանան, Լեոնալիբանան – 178, 182, 198, 203, 207, 215:  
 Լիւաւա – 338:  
 Լիս – Տես Պոլիս:  
 Լոռի – 55, 264, 271, 275, 381:  
 Լորէնս (Ամերիկա) – 108, 112:  
 Խանաբադ – 308:  
 Խանքենդ (Ստեփանակերտ) – 307-9:  
 Խարաբերդ (Աւար-Աւեր) – 112, 116, 178, 180, 182, 193-5, 293:  
 Խարպին – 111:  
 Խաստուր – 120:  
 Խաչէն – 302, 304, 308, 310-5, 318, 337, 392, 394:

Խճաբերդ – 309:  
 Խնածախ – 308:  
 Խնձորեակ – 305, 308:  
 Խոզնապար – 309:  
 Խոյթալ – 160:  
 Խոջալու – 308:  
 Խորաձոր – Տես Քղի:  
 Խորշ (Քիլիս) – 180, 190, 209, 214-6, 218, 220-2, 347:  
 Խոր Վիրապ (Ատանա) – 170, 180, 182-3, 188, 193-5, 204, 207-10, 214, 216-7, 225, 347:  
 Խրիմ – 157:  
 Մաղիկ – Տես Պոլիս:  
 Մաղկաձոր (Ոսկանապատի շրջան) – 12, 14, 16, 19, 24:  
 Մաղկաձոր (Քուլթալիս) – 158-60, 162, 166-7, 172, 174, 276:  
 Մառաստան (Ոսկանապատի շրջան) – 13-4, 20, 41-4:  
 Մովսիս (Տրապիզոն) – Դ, Ե, 110, 176-7, 293, 400, 404:  
 Մոց (Պէյրուկ) – Ա, 178-180, 182-3, 195, 202-4, 206, 210, 214-5, 218, 220, 223, 236, 243, 407:  
 Կախեթիա – 264:  
 Կակրա – 160:  
 Կաղզուան – Տես Պարտիզաւան:  
 Կաթ (Օտեսա) – 157-8, 160-2, 166-7, 172, 174, 213, 336, 368, 442:  
 Կարաւան (Իսկենտերուն) – 178, 180-3, 188, 192-3, 195, 197, 204, 207-8, 218, 347:  
 Կարին-Էրզրում – Տես Բարձրաբերդ:  
 Կարմիր Ժալ (Ոսկանապատի շրջան) – 14, 45:  
 Կարմիր Լեռ – Տես Սուէտիա:  
 Կարմիր (Ղրիմակ) – 158-9:  
 Կարմիր ջուր (Ոսկանապատի շրջան) – 13-4, 17-20, 41-4:  
 Կարս – Տես Զորաբերդ:  
 Կեմերէկ – 191:  
 Կասիոս լեռ – 185:  
 Կեաւուր Տաղ – Տես Ամանոս:  
 Կեսարիա – 178, 193, 248, 256:  
 Կերշ – 160:  
 Կիլիկիա – Տես Լեոնապալր:  
 Կիւրոս (Կղզի) – 180, 194-5:  
 Կիրասոն – 176-7:  
 Կիւրին (Քարձոր) – 180, 189, 191, 193:  
 Կլորիկ (Թէոտոսիա) – 158, 160-2, 165-7, 172, 174-5:  
 Կղզի – Տես Կիւրոս:  
 Կրասնովոդսկ – 3, 5, 12:  
 Հալէպ – Տես Դաշտ:  
 Հաճըն – Տես Միջնաբերդ:  
 Հանք (Օլթի) – 118, 124, 126-7, 132, 152:  
 Հասան Պէյլիկ – 197, 208:  
 Հեթում, Հեթումեան (Ոսկանապատի շրջան) – 13-4, 16-8, 20-1, 24, 41-44:  
 Հեղեղատ – Տես Սուէտիա:

Հովիտ (Այնթապ) – 178, 180-3, 188, 193-5, 200-2, 204, 208-10, 214-8, 220-4:  
Հովիտ (Մրգաստանի շրջան) – 63, 94:  
Հուր Երկաթ (Մանիսա) – 95, 97-8, 100, 102:  
Հսկայ բերդ (Լեռնավայրի շրջան) – 180, 183, 193, 195:  
Հրուանդան (Ատլեր) – Տես Ապաստան:

Զորաբերդ, Զորափոր (Արդուին) – 158-9, 161-2, 165, 167, 172, 174-5, 276:

Հազախ – 55, 264, 267, 273, 275-6, 342, 381, 383, 393:  
Համարյու (Արտաշատ) – 332:  
Հարաքիլիսա (Մեծ) – Տես Անտառապատ:  
Հարաբաղ – Տես Ապառաժ:  
Հափան – 50, 303, 310, 383:  
Հզրլ Արվատ – 3, 12:  
Հրիմակ – Տես Կարմիր:

Ճամբորդ (Նախջալան) – 124, 140, 331:  
Ճիպէլ (Լիբանան) – 203:

Մալաթիա – 178, 185, 193-4:  
Մալիբէկլու – 307-8:  
Մանիսա – Տես Հուր Երկաթ:  
Մարաշ – Տես Սահմանաբերդ:  
Մեծկերտ – 113-4:  
Մեծ քաղաք – Տես Թիֆլիս:  
Մենաւոր (Ս. Թաղէ) – 351-2:  
Մերսին – Տես Զրվէժ:  
Մերվ – 3, 5, 12:  
Մինարէթ (Սալմաստ) – 282, 338:  
Միջնաբերդ (Հանըն) – 180, 183-5, 188-195, 207-8, 210, 214, 216, 223-5:  
Մուսա լեռ – Տես Սուէտիա:  
Մրգաստան (Երեւան եւ շրջան) – Բ, Դ, 21, 49, 55, 61, 63-94, 118, 132, 138, 164, 276, 304, 306, 329, 331, 336, 339, 342, 353, 356, 360, 381, 383, 390, 446:

Թունաստան – 103, 191, 213, 222, 234, 236, 401:

Նալբանդ (Նոր Նախիջեւան) – Դ, 9, 329, 354:  
Նախիջեւան (Քարաբերդ) – 55, 63, 68, 74, 79, 86, 88-9, 124, 276, 304, 350, 389, 393:  
Նաւահանգիստ (Պաթում) – Բ, Դ, Ե, 21, 74, 88, 118, 125, 157-175, 213, 261, 276, 329, 336, 339, 353, 355-6, 409:  
Նովորոսիսկ (Նոր քաղաք) – 158, 160-2, 165-7, 172, 175, 355:  
Նոր Արմաւիր – Տես Ժլատ:  
Նոր Բայազէտ – 276, 332:  
Նոր Մարգեղան – 3, 13:  
Նոր քաղաք – Տես Նովորոսիսկ:  
Նուխի – 3, 5, 276, 381:

Շամ – Տես Վան-Վասպուրական:  
Շամախի – 3, 5, 12, 276, 381:  
Շամշադին – 267, 275, 381:  
Շամուտ (Դիլիջան) – 50, 59, 112-3, 335:  
Շարա (Շորազեալ) – 118, 122, 124, 126-8, 132-3, 137-8, 140, 331:  
Շիկահեր (Սարիղամիշ) – 118, 124, 128, 132, 152, 330:  
Շիրակ – 50, 121:  
Շուլաւեր – 264, 383:  
Շուշի – Տես Ապառաժ:

Ոսկանապատ (Պաքու, Բագու) – Բ, Դ, 1-3, 5-6, 9, 11, 13, 14, 21-2, 25, 41-5, 47-8, 55, 132, 164, 276, 306, 313, 329, 332, 336, 339, 342, 356, 363, 380, 382-3, 389, 391, 393, 400, 408, 439, 441, 482:  
Ոսկեհանք (Բզմիր, Չմիւռնիա) – Դ, 95-107, 110, 182, 226, 236, 294, 370, 401-2, 405-7, 426, 431, 458-9, 472, 509:  
Ոսկեմայր (Ոսկանապատի շրջան) – 13-4, 41-44:  
Ուրֆա (Եդեսիա) – 178, 193, 209, 218, 347:  
Ունիա (Զէյթուն) – Տես Արծուաբերդ:

Չարսանճաք – 112-3, 116:  
Չինաստան – 2-3:  
Չմշկածագ – 112-3:  
Չորք Մարզուան – Տես Բերդակ:

Պաթում – Տես Նաւահանգիստ:  
Պաթրուն – 203:  
Պահակ (Ոսկանապատի շրջան) – 12, 14, 17-9, 24, 26-7, 29-32:  
Պաշարուած քաղաք (Ոսկանապատի շրջան) – 14, 41-2, 44:  
Պարտիզաւան (Կաղզուան) – 118, 124, 126-8, 132-4, 138-9, 146, 148, 152, 276, 330:  
Պաքու – Տես Ոսկանապատ:  
Պեհեսնի – Տես Փորձանք:  
Պեսարապիա – 157, 160:  
Պէլլան – 193-5, 197, 208, 218:  
Պէլլութ – Տես Մոց:  
Պիթիաս (Բէյթազ) – 208-9:  
Պոլիս (Վիշապ, Մաղիկ, Լիս) – Ե, 97, 99, 103-4, 107, 109, 213, 244, 285, 294, 370, 400-4, 407, 409-14, 418, 426-31, 434-6, 438-41, 443-5, 448, 451-5, 457-61, 463, 468, 470, 472, 482, 490, 494, 498, 500, 504-7, 509-11, 513:  
Պոսթըն – Գ, 2, 63, 118, 157, 204, 220, 302, 329, 378:  
Պոտրում – 233:  
Պուլկարիա-Բուլղարիա – Բ, 75, 103, 212, 234-5, 248, 260, 368, 371, 377, 401, 405-9, 426, 428-9, 431, 434, 443, 446-7, 452-4, 461, 470, 477, 498, 505:

Ջանդի-Թափա – 54-5:  
Ջարջու (Ոսկանապատի շրջան) – 3, 13:  
Ջիրապիլ – 276, 302:  
Ջիւանշիր – 276, 302-4, 306, 308, 310-12, 314-5, 318, 337, 383:

Ջրաբերդ (Կարս) – Բ, Դ, Ե, 21, 49, 53-4, 63, 88, 109-10, 118-156, 159, 276, 278, 329-30, 339, 359, 366, 381-3:  
Ջրաշէն (Փոթի) – 158-9, 161, 165-7, 172, 174, 356:  
Ջրվէժ (Մերսին) – 178, 180, 183-4, 188, 193, 204, 207-8, 249:

Սարմաստ – Տես Մինարէթ:  
Սախոյ ձոր (Բաղէշ, Պիթլիս) – 289, 293:  
Սահմանաբերդ (Մարաշ) – 178, 180, 182-3, 185, 189-193, 195, 200, 202, 204, 207-210, 214-5, 218, 223-4, 347:  
Սահմանաբերդ (Ոսկանապատի շրջան) – 14, 41-4:  
Սամարղանդ – 3, 12:  
Սամսոն – 176-7:  
Սանասարեան (վարժարան) – 110-11:  
Սասուն – Տես Բարձրաւանդակ:  
Սարիղամիշ – Տես Շիկահեր:  
Սարուստան (Ռուսիա, Ռուսաստան) – 1, 88, 143-4, 157, 280-81:  
Սեբաստիա (Սվազ) – 178, 193-5, 226, 248, 256, 260, 436:  
Սեւաստապոլ – Տես Զրաշէն:  
Սեւ ու Սպիտակ քաղաքներ – 3, 5, 7, 12, 45:  
Սիմֆերոպոլ – Տես Դաշտ:  
Սիւ – 188, 192-3, 211:  
Սիսիան – 153, 309, 383:  
Սիւնիք – Տես Չանգեզուր:  
Սղնախ – 263-4, 275-6:  
Սոչի – Տես Ապաստան:  
Սուէտիա (Հեղեղատ, Կարմիր լեռ, Անտիոք, Մուսա տաղ) – 178, 180, 184, 191, 193-5, 198-9, 200, 214, 222, 225, 347:  
Սուխում – Տես Գաղթավայր:  
Սուրմալու – 55, 63, 88, 276:  
Սոֆիա – 212, 369, 371, 376, 378, 397, 427, 429-31, 442-3, 452-5, 464, 467-8, 472, 487-8, 490, 498, 515:  
Սրբավայր – Տես էջմիածին:

Վալոց ձոր – 71, 79:  
Վան-Վասպուրական (Շամ) – Բ, Ե, 53, 105, 210, 212-3, 246, 261, 277-301, 338, 341, 400, 404, 428, 431, 461, 465, 470-1:  
Վանք – 306, 308:  
Վառնա – 95, 105, 260, 368, 401, 414, 426, 500:  
Վարազաբոյն – 306-7:  
Վարանդա – 14, 19, 302-4, 306-8, 310-15, 317-8, 318, 383, 392, 394:  
Վերին շէն – 323, 326:  
Վիեննա – Դ, Ե, 63, 105, 69-70, 410-1, 411, 421, 423, 426, 431, 433, 437-8, 461, 469, 472, 480, 514:

Վիշապ – Տես Պոլիս:  
Վիշապաձոր – Տես Տիգրանակերտ, Տիարակքիր:  
Վրէժ, Վրէժստան (Ատրպատական) – 9, 69, 118, 278, 282, 285, 287, 290, 329, 331, 338, 351-2:

Տաշկենտ – 3, 12:  
Տարօն (Դուրան, Մուշ) – 63, 118, 168, 286, 288, 293, 341, 359, 404:  
Տելթա – Տես Աղեքսանդրիա:  
Տերսիմ – Ե, 108, 112-117, 181, 223, 288, 293:  
Տիգրանակերտ-Տիարակքիր (Վիշապաձոր) – 286, 289, 293:  
Տուլապսէ – Տես Անտառ:  
Տրապիզոն – Տես Մովսիս:  
Տրիպոլի (Լիբանան) – 203, 233:

Ծաքուտ – 319-20:

Փախտա (Ոսկանապատի շրջան) – 14, 17, 41-44:  
Փորձանք (Պեհեսնի) – 180, 182, 193, 196:  
Փոթի – Տես Զրաշէն:

Քանդուած քաղաք (Ոսկանապատի շրջան) – 13-4, 16-8, 20-1, 32, 42-3:  
Քար (Ալեքսանդրապոլ) – Դ, 49-62, 88, 126-8, 130, 138, 152, 164, 261, 274, 276, 329, 333-5, 339, 353, 356, 381-83:  
Քարաբերդ – Տես Նախիջեւան:  
Քարածալա – Տես Տերսիմ:  
Քարձոր – Տես Կիւրին:  
Քեսապ – 178, 185, 191, 198-9, 208, 218:  
Քիլիս – Տես Սորլ:  
Քղի (Սորաձոր) – 108, 116, 293:  
Քուլթախ – Տես Մաղկաձոր:

Օլթի – Տես Հանք:  
Օչամչիր – Տես Գաղթավայր:  
Օտեսա – Տես Կայծ:

Ֆիլիպպէ – 260, 368, 371-3, 375-6, 378, 407, 409, 411-3, 416, 418, 426-8, 436, 438, 442, 444-5, 461-2, 467-8, 472, 509:  
Ֆուսուզ – 190:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒՆԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ..... Ա

ՆԻՔԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԹՂԹԱԾՐԱԲԵՆ ..... Դ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՍԱՐՄԻՆՆԵՐ

XIV ՈՍԿԱՆԱՊԱՏ – ՊԱՔՈՒԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ ..... 1

Ա 1.– Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցության Չորրորդ Կենտ. Կոմիտեի (1904-1906) ..... 3

Ա 2.– Արձանագրություններ Ոսկանապատի IV Կենտ. Կոմիտեի շրջանի Երջանային Ժողովի ..... 14

Ա 3.– Հ. Յ. Դ. Ոսկանապատի Կենտ. Կոմիտեին ..... 40

Բ 1.– Արձանագրություն Թուրանի Երջանային Ժողովի ..... 41

Բ 2.– Մեւ եւ Սպիտակ քաղաքների 16 ներկայացուցիչների բանաձեւը ..... 45

Բ 3.– Լիանոզովի գործարանի դաշն. բանուորներու բանաձեւը ..... 45

Բ 4.– Տեղեկագիր Կարմիր Ժայռի ..... 45

Բ 5.– Կարմիր Ժայռի կարծիքը ..... 45

Բ 6.– Բալխանիի 42 Բանուորական խումբերու բանաձեւը ..... 46

Բ 7.– Հ. Յ. Դաշնակցության Ոսկանապատի 2րդ Կոմիտեի որամական խմբերի ցուցակ ..... 46

Գ 1.– Երջաբերական (Ոսկանապատի Կ. Կ.ի) ..... 47

Գ 2.– » » » ..... 48

Գ 3.– Երջաբերական նամակ (« ») ..... 48

XV ՔԱՐ - ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ ..... 49

Ա 1.– Քարի Կենտ. Կոմիտեի տեղեկագիրը (1904-1906) ..... 50

Ա 2.– Քարի բանաձեւը ..... 57

Ա 3.– Քարի 1906 Դեկտեմբերի Երջանային Ժողովը ..... 57

Ա 4.– Նամակ Արեւելեան Բիւրոյին ..... 60

Ա 5.– Տեղեկագիր 1907 թ. .... 61

XVI ՍՐԳԱՍՏԱՆ - ԵՐԵՎԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ ..... 63

Ա 1.– Մրգաստանի շրջանի Ռայոնական Ժողովի բանաձեւեր ..... 64

Ա 2.– Նամակ ընկ. Յակոբին ..... 65

Բ 1.– Երջաբերական ..... 66

Բ 2.– Մրգաստանի Կենտ. Կոմիտեի Երջանային Ժողով ..... 68

Գ 1.– Հ. Յ. Դ. Մրգաստանի շրջանի բոլոր կոմիտեներին ..... 79

Գ 2.– Արձանագրություն ..... 80

Գ 3.– Հ. Յ. Դաշնակցության Մրգաստանի Ռայոնական Ժողովի որոշումները ..... 83

Գ 4.– Նիկոլ Դումանի նամակը Արեւելեան Բիւրոյին ..... 84

Գ 5.– Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյին ..... 85

Գ 6.– Նամակ Արեւելեան Բիւրոյին ..... 85

Գ 7.– Նամակ Արեւելեան Բիւրոյին ..... 86

Գ 8.– Հ. Յ. Դ. Ար. Բիւրոյի ընկեր ներկայացուցիչին ..... 86

Գ 9.– Երջաբերական ..... 87

Գ 10.– Նամակ Արեւելեան Բիւրոյին ..... 87

Դ 1.– Երջաբերական ..... 89

Դ 2.– Երջաբերական ..... 90

Դ 3.– Յայտարարություն ..... 90

Դ 4.– Յայտարարություն ..... 90

Դ 5.– Հասարակության ..... 91

Ե 1.– 1907 թ.ի Երջանային ժողովները ..... 92

Ե 2.– Հովտի շրջանի խորհրդածողովը ..... 94

XVII ՈՍԿԵՀԱՆՔ – ԻԶՄԻՐԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ ..... 95

Ա 1.– Տեղեկագիր Ոսկեհանքի ..... 96

Ա 2.– Կոստի Համբարձումեանի նամակը ..... 103

Ա 3.– «Դրօշակ»ի խմբագրության ..... 105

Ա 4.– Ոսկեհանքի ժամանակաւոր մարմնի նամակը ..... 106

Ա 5.– Հ. Յ. Դաշն. 4րդ պատգամատրական Ընդհ. Ժողովին ..... 107

XVIII ԲԱՐՉՐԱԲԵՐԴ - ԿԱՐԻՆ - ԷՐԶՐՈՒՄԻ ԵՒ ՏԵՐՍԻՄԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ ..... 108

Ա.– Տեղեկություններ Էրզրումի մասին ..... 109

Բ 1.– Հ. Յ. Դաշնակցության 4րդ Պատգամատրական Ժողովին ..... 112

Բ 2.– Տեղեկագրություն Տերսիմի ..... 112

XIX ՋՐԱԲԵՐԴ - ԿԱՐՍԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ ..... 118

Ա 1.– Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցության II (Ջրաբերդ) Կ. Կոմիտեի ..... 120

Բ 1.– Արձանագրություն Ջրաբերդի Երջանական Ժողովների (1904) ..... 127

Բ 2.– Արձանագրություն (հաշուետեսներու) ..... 131

Բ 3.– Երջաբերական նամակ N°1 ..... 131

Գ 1.– 1905 Օգոստոս 17ի Երջանային Ժողովի գործերը ..... 132

Գ 2.– Տեղեկագիր Ջրաբերդ քաղաքի կոմիտեի ..... 132

Գ 3.– Պարտիզաւան ..... 133

Գ 4.– Տեղեկություններ Պարտիզաւանի 5 գիւղերի (մասին) ..... 135

Գ 5.– Արձանագրություն (Թախտի շրջանի) ..... 136

Գ 6.– Եւրոպայի Չորրորդ շրջանի Տեսչությանց տեղեկագիրը ..... 137

Գ 7.– Արձանագրություն Հ. Յ. Դ. Ջրաբերդի Երջանային Ժողովի ..... 138

Գ 8.– Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյին Ջրաբերդի II Կ. Կոմիտեից ..... 140

Գ 9.– Բանաձեւեր ..... 141

Դ 1.– Տեղեկագիր Հ. Յ. Դաշնակցության II Կ. Կոմիտեի գործունեության (1906 թ.) ..... 143

Դ 2.– Արձանագրություններ (Երջ. Ժողովի) ..... 146

Դ 3.– Արձանագրություն (Օլթի ժողովի) ..... 148

Ե.– Ջրաբերդի շրջանն նամակներ ..... 148

Ե 1.– Հ. Յ. Դաշնակցության պատկառելի Ընդհ. Ժողովին ..... 149

Ե 2.– Հ. Յ. Դաշնակցության Արեւելեան Բիւրոյին ..... 152

Ե 3.– Կարծիքներ Հ. Յ. Դ. Ջրաբերդի շրջանի Ղախալի գիւղի բնիկ հասարակությունից ..... 153

Ե 4.– Հարցաքննություն Հ. Յ. Դ. Ջրաբերդի շրջանի Ծառաստան գիւղի բնիկ հասարակությունից ..... 154

Ե 5.– Տեղեկագիր Բլուր գիւղի դաշնակցական հասարակությունից ..... 154

Ձ.– Ջրաբերդի Կ. Կ.ի նամակներ Արեւելեան Բիւրոյին ..... 155

Ձ 1.– Արեւելեան Բիւրոյին ..... 155

Ձ 2.– Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյին ..... 156

XX ՆԱԽԱՀԱՆՔԻՍ – ՊԱԹՈՒՄԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ ..... 157

Ա 1.– Արձանագրություն VI Կ. Կոմիտեի Երջանային Ժողովի ..... 158

Բ 1.– Հ. Յ. Դ. III Երջանային Ժողովի VI Կենտրոնական շրջանի ..... 161

Բ 2.– Ընդհ. Ժողովի պարապմունքների ցուցակ ..... 165

Բ 3.– Նամակ Արեւելեան Բիւրոյին ..... 174

Գ.– Համառօտ տեղեկագիր Նաւահանգիստի շրջանի ..... 174

XXI ԾՈՎԱՓ – ՏՐԱՊԻՉՈՆԻ ԿԵԴՐ. ԿՈՍԻՏԵՈՒԹԻՒՆ ..... 176

Տեղեկագիր Ծովափի Կեդրոնական Կոմիտեի ..... 176

**XXII ԼԵՆՆԱՎԱՅՐԻ – ԿԻԼԻԿՈՅ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ** .....178

Ա 1.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. Լեոնավայրի Պատասխանատու Կեդր. Կոմիտեի (1898-1903) .....180

Ա 2.– Տեղեկագիր .....185

Ա 3.– Տեղեկագիր .....188

Ա 4.– Լեոնավայրի գործունեության հիմնական տակտիկը .....190

Ա 5.– Համառոտ տեղեկագիր Լեոնավայրի ներկայ եւ ապագայ կացության վրայ .....193

Ա 6.– Տեղեկագիր Կարաւանի եւ շրջականերու .....196

Ա 7.– Յօշանի տեղեկագիր-նամակը Վարազդատին .....198

Ա 8.– Ռահվերի նամակը Մեպուհին .....201

Ա 9.– Տեղեկագիր Լիբանանի գծով զենք փոխադրելու մասին .....202

Բ 1.– Ամերիկայի Կեդր. Կոմիտեին .....204

Բ 2.– Արեւմտեան Բիւրոյին կամ Դաշնակցության Խորհուրդին .....206

Բ 3.– Ամփոփ տեղեկագիր Կիլիկիայի շրջանի Հ.Յ.Դ. հերթական Խորհրդին .....207

Գ 1.– Տեղեկագիր Լեոնավայրի շրջանէն՝ Հովիտ, Դաշտ, Խորշ եւ Արծուաբերդի .....214

Գ 2.– Տեղեկագիր Դաշտի Հ.Յ.Դ. կազմակերպության եւ շրջանի .....217

Գ 3.– Տեղեկագիր Դաշտի շրջանի .....220

**XXIII ԵԳԻՊՏՈՍ**

Ա.– Տեղեկագիր Եգիպտոսի .....227

Բ 1.– Նամակ Արեւմտեան Բիւրոյին .....231

Բ 2.– Նամակ Արեւմտեան Բիւրոյին .....234

Բ 3.– Նամակ Արեւմտեան Բիւրոյին .....236

Բ 4.– Հ. Յ. Դաշնակցության Արեւմտեան Բիւրոյին .....237

Բ 5.– Աղեքսանդրիոյ ընկերներու Ընդհ. Ժողովը .....238

Բ 6.– Քաղուածք Հ.Յ.Դ. Ընդհ. Ժողովի առեւտրային .....241

Բ 7.– Հ. Յ. Դաշնակցության Ընդհ. Ժողովին .....242

Գ 1.– Արեւմտեան Բիւրոյին .....243

Գ 2.– » » .....245

Գ 3.– » » .....246

Գ 4.– » » .....248

Գ 5.– Երդում .....251

Գ 6.– Տեղեկագիր Եգիպտոսի շրջանի .....252

Դ 1.– Եգիպտոսի հինգ ընկերներու առաջարկը .....255

Դ 2.– Դաշնակցության Խորհուրդին ժընեւում .....256

Դ 3.– Անդրանիկի նամակը Արեւմտեան Բիւրոյին .....260

**XXIV ՅԱՒԵԼՈՒԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ**

**Ա.– ՄԵՑ ՔԱՂԱՔ – ԹԻՖԼԻՍԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Ա 1.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. Թիֆլիսի Կենտ. Կոմիտեի .....262

Ա 2.– Շրջանային Ժողովի Ա. նիստ .....273

Ա 3.– Տեղեկագիր Թմբուկի շրջանի մարմինների .....274

Ա 4.– Յայտարարութիւն Հ.Յ.Դ. Թիֆլիսի շրջանի ընկերների .....275

Ա 5.– Վիճակագրութիւն .....276

**Բ.– ՇԱՄ – ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ ԼԵՆՆԱՊԱՐԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

Բ 1.– Վասպուրականի Կ. Կոմիտեի տեղեկագիրը Ընդհ. Ժողովին .....277

Բ 2.– Արձանագրութիւն Հ.Յ.Դ. Վասպուրականի III Ռայոնական Ժողովի .....289

Բ 3.– Արձանագրութիւն Շամի եւ Լեոնապարի Դ. » » .....293

Բ 4.– Հ. Յ. Դաշնակցության Ընդհ. Ժողովին .....299

**Գ.– ԱՊԱՌԱՄ – ՂԱՐԱՔԱՂԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Գ 1.– Համառոտ տեղեկագիր Ապառաժի Կ. Կ.ի շրջանի (1904 – 1907) .....302

Գ 2.– Տեղեկագիր Հ.Յ.Դ. Ապառաժի մի տարուայ գործունեության (1906 – 1907) .....311

Գ 3.– Հ. Յ. Դ. Շրջաբերական նամակ .....319

**Դ.– ԱՅԳԵՍՏԱՆ – ԳԱՆՉԱԿԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵՆՈՒԹԻՒՆ**

Տեղեկագիր Հ.Յ.Դ. Այգեստանի շրջանի գործի մասին .....321

Ե.– Արձանագրութիւն Զորքող Ռայոնական Ժողովների .....329

**XXV 1904 – 1907 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՆՅՔԵՐՈՒՆ ՇՈՒՐՁ** .....341

**Ա.– ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ ԵՒ ԲԻՒՐՈՆԵՐՈՒՆ ՈՒՂՂՈՒԱՑ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ** .....343

Ա 1.– Մեր իրականութիւնը Թուրքաց Հայաստանում .....343

Ա 2.– Երիզագիի դիմումը Ընդհ. Ժողովին .....346

Ա 3.– Տոքթ. Գլըճեանի դիմումը Ընդհ. Ժողովին .....347

Ա 4.– Pro Armenia-ի խմբագիր Քիյանի նամակը Ընդհ. Ժողովին .....348

Ա 5.– Հ.Յ.Դ. Ընդհ. Պատգամատրական Ժողովին .....349

Ա 6.– Նիկոլ Դումանի նամակը Արեւելեան Բիւրոյին .....350

Ա 7.– Ընծայրի եւ Կոմսի նամակները .....351

Ա 8.– Մուրատի նամակը Ռոստոմին .....353

Ա 9.– Մեպուհի նամակը Արեւելեան Բիւրոյին .....353

Ա 10.– Ս. Վրացեանի նամակը Արեւելեան Բիւրոյին .....354

**Բ.– ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆԱԽԱԳԻՃ, ՄԻՀՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆՋԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ** .....355

Բ 1.– Հ.Յ.Դ. IV ԸՆԴՀ. Ժողովին – Բողոք .....355

Բ 2.– Միհրանի նամակից .....357

Բ 3.– Ազդ – Միհրանին եւ ընկերներին .....357

Բ 4.– Ազդ .....358

Բ 5.– Դաշնակցական ընկեր զինուորներին .....359

Բ 6.– Գեորգ Զաւուշի նամակը .....359

Բ 7.– Անջատականներու մէկ նախաձեռնութիւնը .....360

Բ 8.– Մարի նամակը Դ. Ընդհ. Ժողովին .....361

Բ 9.– Նիքորայի (Յ. Շահրիկեան) նամակը Արեւմ. Բիւրոյին .....363

Բ 10.– Ինքնակոչ Չին. Մարմնի դիմումը Ընդհ. Ժողովին .....364

Բ 11.– Հ.Յ.Դ. Կովկասեան Ահաբեկիչ Մարմնի 3 ազդերը .....366

**Գ.– ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒ ՄԵՋ ԵՒ Հ.Յ.Դ. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ** .....368

Գ 1.– Անդրանիկի նամակը Ակնունիին .....368

Գ 2.– » » Արեւմ. Բիւրոյին .....369

Գ 3.– Պալքանի Կ. Կ.ի նամակը Արեւմ. Բիւրոյին .....372

Գ 4.– » » » Ամերիկայի Կ. Կ.ին .....373

Գ 5.– » » » » .....375

Գ 6.– » » » Արեւմ. Բիւրոյին .....376

Գ 7.– Անդրանիկի նամակը Է. Ակնունիին .....377

Գ 8.– Պալքանի Կ. Կ.ի նամակը Ամերիկայի Կ. Կ.ին .....378

Գ 9.– » » » » .....379

**Դ.– ՀԱՅ – ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՇՈՒՐՁ** .....380

Դ 1.– Հ.Յ.Դ. Խորհուրդի առաջին որոշումները .....380

Դ 2.– Չինուորական Ռայոնական Ժողովը .....381

Դ 3.– Աբր. Գիլիսանդանեանի ծանօթագրութիւնը .....381

Դ 4.– Քարի Ռայոնական Ժողովը .....382

Դ 5.– Հարցարան եւ վիճակագրական տախտակներ .....384

Դ 6.– Երեւանի Կ. Կ.ի Չին. հրահանգները – Շրջաբերական .....388

Դ 7.– Ն. Դումանի նամակը Արեւելեան Բիւրոյին .....389



Դ 8.- Ն. Դումանի պատգամը իր զինակիցներուն – Շրջաբերական .....390  
 Դ 9.- Սեպուիի նամակը Անդրանիկին .....391  
 Դ 10.- Ռոստոմ Ղարաբաղի ներքին կազմակերպութեան մասին .....392  
 Դ 11.- Ապագայի ինքնապաշտպանութեան գործը Կովկասում .....393

**XXVI ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄԵԻ** .....397

Ա 1.- Ցուցական մարմնի որոշումները .....399  
 Ա 2.- Իբր յանելուած Արեւի ժողովի ատենագրութեան .....402  
 Ա 3.- Ինչ վերաբերում է Վիշապին .....404  
 Ա 4.- Ցուցական մարմնի նիստերէն .....405  
 Ա 5.- » » » .....405  
 Ա 6.- Ցուցական մարմնէն (Քրիստափոր) Արեւմ. Բիրոյին .....407  
 Ա 7.- Քրիստափորէն Արեւմ. Բիրոյին .....409  
 Ա 8.- Ռոստոմէն Քրիստափորին .....410  
 Ա 9.- Քրիստափորէն Արեւմ. Բիրոյին .....411  
 Ա 10.- Սաֆոյէն » » .....412  
 Ա 11.- Քրիստափորէն » » .....412  
 Ա 12.- » » » .....413  
 Ա 13.- Կոնստանդինէն Քրիստափորին .....414  
 Ա 14.- » » .....414  
 Բ 1.- Սաֆոյի տեղեկագիրը ռումբերու փորձարկման մասին .....416  
 Բ 2.- Շարունակութիւն .....423  
 Բ 3.- Ցուցական մարմնի արձանագրութիւնների շարունակութիւնը .....426  
 Բ 4.- Սաֆոյի նամակը Արեւմտեան Բիրոյին.....437  
 Բ 5.- Սաֆոյի նամակը Արեւմտեան Բիրոյին.....438  
 Բ 6.- Սաֆոյի նամակը Արեւմտեան Բիրոյին.....438  
 Բ 7.- » » Ռոստոմին .....439  
 Բ 8.- Արձանագրութիւնների շարունակութիւնը .....440  
 Գ 1.- Սաֆոյի նամակը Արեւելեան Բիրոյին .....441  
 Գ 2.- Իմ ցուցմունքները .....441  
 Գ 3.- Հատուածներ Քրիստի նամակից ուղղուած Թորգոմին .....442  
 Գ 4.- Թորգոմի պատասխանը Արեւմ. Բիրոյի հարցումներուն .....443  
 Գ 5.- Յար. Շահրիկեանի նամակը Արեւմ. Բիրոյին .....443  
 Գ 6.- Պատճէն Վիշապի Կոմիտէի տեղեկագիր-նամակին .....444  
 Դ.- Ցուցական մարմնի գործերը քննող յանձնախումբի կողմէ .....446  
 Դ 1.- Տեղեկագիր N° 1 (Տեխնիկական մասը) .....446  
 Դ 2.- Տեղեկագիր N° 2 (Կազմակերպական մասը) .....451  
 Դ 3.- Տեղեկագիր N° 3 (Ընկերական յարաբերութիւնները) .....460  
 Դ 4.- Ինչո՞ւ չյաջողուեց Կոստանդնուպոլսի մահափորձը .....464  
 Ե.- Սաֆոյի պաշտպանողականը .....465  
 Ե 1.- Հ.Յ.Դ. Ընդհ. Ժողովին Ցուց. մարմնի ներկայացուցիչ Սաֆոյից .....465  
 Ե 2.- Սաֆոյի նամակը քննիչ յանձնախումբին .....467  
 Ե 3.- Հ.Յ.Դ. Ընդհ. Ժողովի դիւանին .....469  
 Ե 4.- Հ.Յ.Դ. IV Ը. Ժ.ի դիւանին .....469  
 Ե 5.- Ցուցականը սրանով գալիս է յայտնելու .....470  
 Ե 6.- Առաջաբանի տեղ .....471  
 Ե 7.- Սաֆոյի պատասխանը Ցուցականի յանձնախումբին .....474  
 Ե 8.- Ընդհ. Ժողովին .....514  
 Ե 9.- Որոշումը Ցուցական մարմնի մասին .....515

**ԱՆՉԱՆՈՒՆՆԵՐ** .....516

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ**.....520

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ**

**Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ  
ԵՐՈՒԱՆԻ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ:**

**Համակարգչային շարուածք եւ էջադրում  
ԹԱՄԱՐ ՄՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ:**

**Կեդրոնատեղի**

---

**HAMAZKAYIN LIBRARY**

**P.O.BOX 80 - 1096**

**BOURJ HAMMOUD - LEBANON**

**Tel.: 00961 - 1 - 241263 / 4**

**Fax: 00961 - 1 - 260329**

**E-mail: [imphamaz@inco.com.lb](mailto:imphamaz@inco.com.lb)**

**[www.hamazkayin-bookstore.com](http://www.hamazkayin-bookstore.com)**



**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ**